Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՅԵՐԿԵՐԻ ԼՈՒԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

III

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

МИКАЭЛ НАЛБАНДЯН

ПОЛНОЕ СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

ТОМ ТРЕТИЙ

ИЗДАТЕЛЬСТВО АрмФАН-а
ЕРЕВАН
1940

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՄՏՈՒՎԱԾ Է 1961 Թ.

ՅԵՐԿԵՐԻ
ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ՅԵՐՐՈՐԴ

Ա. ՐՄՖԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940

Տպագրվում է ՀՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի
Հայկական Ֆիլիալի Նախագահության որոշմամբ

Խմբագրությամբ՝
ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆԻ (գլխ. խմբ.)
ԹՈՐԵՆ ՄԱՐԳՍՅԱՆԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ

Ձեռրորդ հատորի տեքստը տպագրության պատրաստեցին՝
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԿՐՏՉՅԱՆ, ՆՇԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ՑՆԼԻՇԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վերջնական ստուգումը կատարեց ՆՇԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի անցյալի կուլտուրական ժառանգության մշակման ու մասսայականացման ասպարեզում կատարվում է մի նշանակալից էտյլ ևս: Հրատարակվում է մեծ հեղափոխական դեմոկրատ Միխայել Նալբանդյանի յերկերի լիակատար ժողովածուն:

Նալբանդյանը անցյալ դարի վաթսունական թվականներին նոր պատմաշրջան բացեց հայ ժողովրդի հասարակական մտքի պատմության մեջ, հասցնելով այն ռուսական դեմոկրատական առաջավոր մտքի բարձրությանը:

Նալբանդյանը հայ ժողովրդի բազմադարյան պատմական անցյալի մեծագույն մարդկանցից մեկն է ու նրա ստեղծագործությունը մի հոյակապ ներդրում է ժողովրդի հոգևոր կուլտուրայի գանձարանում:

Ներկա հրատարակությունը հնարավորություն կտա ժողովրդական լայն մասսաներին լիովին ծանոթանալու և ուսումնասիրելու Նալբանդյան բանաստեղծին, արձակագրին, հրապարակախոսին, գրական ֆենադատին, պատմաբանին, լեզվագետին, տնտեսագետին, փիլիսոփային, անցյալ դարում ցարիզմի, սուլթանիզմի և հայ ռեակցիոն ուժերի դեմ ժողովրդի ազատագրական պայքարը հրահրողին ու կազմակերպողին:

Չնայած Նալբանդյանի ժառանգության այդ բացառիկ նշանակությանը, այնուամենայնիվ մինչև այժմ նրա յերկերը վոչ միայն լրիվ չեն հրապարակվել, այլև առանձին գործերի հրատարակությունները յեղել են բերի, յերբեմն աղավաղված: Խորհրդային շրջանում նույնպես Նալբանդյանից հրատարակվել են միայն առանձին յերկեր, և այն էլ բերություններով ու սխալ մեկնաբանումներով: Այսպիսով, առաջին անգամն է, վոր Նալբանդյանը հրատարակվում է ամբողջական, նշված տեքստերով, մարքսիստական գիտական լուսաբանությամբ:

Ըստ ինստիտուտի պլանի, Նալբանդյանի յերկերի լիակատար ժողովածուն հրատարակվում է հինգ հատորով: Առաջին հատորն ընդգրկում է Նալբանդյանի պոեզիան և գեղարվեստական արձակը, ներառյալ նաև «Հիշատակարաններ»-ը, յերկրորդ հատորը՝ «Հյուսիսափայլ»-ի շրջանի հրապարակախոսությունը, յերրորդ հատորը՝ արտասահմանյան ուղևորության ժամանակ և բանտում գրած գրականագիտական, հրապարակախոսական և գիտական աշխատությունները, չորրորդ հատորը՝ նամակագրություն, դիվանագիտական թղթեր և այլն, իսկ վերջին հատորը՝ նրա կատարած թարգմանությունները և լրացուցիչ նյութեր:

Առաջին հերթին հրատարակվում է Նալբանդյանի յերկերի յերրորդ հատորը:

Յերրորդ հատորը Նալբանդյանի ժառանգության պսակն է: Այս հատո-

րում են գեղեցված բոցաշունչ դեմոկրատի, հեղափոխական գիտնականի լավագույն գործերը՝ «Յերկու տող», «Յերկրագործություն», «Կրիտիկա», «Վազար Փարպեցու Թուղթը», «Նկատողություններ», «Հեգելը և նորա ժամանակը» և այլն:

Այս յերկերի մեջ է, վոր Նալբանդյանը ֆոյերբախյան մատերիալիզմի միջոցով հասնում է մինչմարքսյան գիտական-հեղափոխական մտքի բարձրությանը, Չերնիշևսկու ու Գերցենի նման հանգում գյուղացիական հեղափոխության գաղափարին, անխնա մերկացնում հայ ռեակցիոն հոսանքները և հայ ժողովրդի ազատագրության հեռանկարները կապում ռուս մեծ ժողովրդի ազատության պայքարին:

Նկատի ունենալով նյութերի բազմազանությունը, հատորին չի տրվում հատուկ վերլուծական առաջաբան: Սակայն, յերկերի կոմենտարներն իրենց բնույթով, զգալի չափով, առաջաբանի դեր են կատարում: Կոմենտարների մեջ տրված է վոչ միայն տվյալ յերկի մտահղացման, գրության, տպագրության, նրա շուրջը յեղած արձագանքների պատմությունը, այլ և ընդհանուր գծերով լուսաբանվում է այդ յերկի հասարակական գիտական նշանակությունը:

Նալբանդյանի կենսագրությունը և նրան բնութագրող ընդհանուր ուսումնասիրությունը կտրվի առաջին հատորում, վոր պետք է հրատարակվի անմիջապես յերրորդ հատորից հետո:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

7-ը մարտի 1940 թ.
Յերևան:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Մ. Նալբանդյանի հրապարակի վրա լեղած հրատարակությունները չափազանց հեռու լեն դիտական համարվելուց: Դրանցից մի քանիսը նույնիսկ անճանաչելիության չափ աղճատում են հեղինակի տեքստերը: Յարական գրաքննության պատճառով նրա խոչորագույն գործերը՝ «Յերկրագործությունը, որպես ուղիղ ճանապարհ», «Աչխարհաբարի քերականության» հատվածները և այլն տպագրվել կամ արտատպվել են կրճատումներով և աղավաղումներով: Պակաս դեր չի խաղացել նաև հրատարակիչների անպատասխանատվությունը կամ անգիտությունը, որոնց հասցրած վնասը, որոշ դեպքերում, դժբախտարար, անուղղելի է, քանի որ Նալբանդյանի ձեռագրերի մի զգալի մասը մեզ չի հասել:

Յերբ մենք, ձեռագրերի կորած լինելու պատճառով, զրկ ենք ունեցել մեր ունեցած յերկու տարբեր հրատարակությունների հետ, միշտ, սակավ բացառությամբ, հիմք ենք ընդունել առաջին հրատարակությունը, այն համարժեք համարելով հեղինակի ձեռագրերին: Ա.յդպիսիների թիվը, յավոք սրտի, քիչ չէ, ուստի և ամեն մի կոնկրետ դեպքում հանդես և բերված որոշակի մոտեցում, որին ավելի մանրամասն ընթերցողը կծանոթանա ա.յդ զրկի կոմենտարում:

Ձեռագրերի հիման վրա հրատարակած տեքստերի մեջ տողատակի ստորանիշ ծանոթություններում վերականգնված են հեղինակի բոլոր և ամեն տեսակի ջնջումները: Ա.յն դեպքերում, յերբ հեղինակի տողատակի ծանոթությունների մեջ և այդպիսի նշումների կարիք զգացվել, դրանք տպել են քառակուսի փակագծերի մեջ: Գրաբար, ռուսերեն և այլ լեզուներով տեքստերը թողել ենք առանց թարգմանելու:

Մշակության հիմնական նպատակն և յեղել տալ Նալբանդյանի տեքստերն այնպես, ինչպես նրանք կան, այն է՝ վերականգնել բոլոր և ամեն տեսակ բացթողումները և ազատել նորամուծ սխալներից: Պահպանված են (նոր ուղղագրության սահմաններում) հեղինակի լեզվական առանձնահատկությունները, ընդգծումները և, ըստ կարելույն, նաև կետադրությունը: Վերջին կետի վերաբերյալ մանավանդ վերապահում ե արված այն նկատառումով, որ Նալբանդյանի որոշ ձեռագրերը, չտպագ կամ անբարենպաստ պայմաններում գրված լինելու պատճառով, զերծ չեն այնպիսի մանր թերություններից, որոնց պահպանումը կլիներ ավելորդ մանրանկատություն և կհակասեր հրատարակության ոգուն: Հավատարիմ մնալով Նալբանդյանի միանգամայն ինքնատիպ կետադրությանը, մենք փոփոխություններ ենք մտցրել բացառիկ դեպքերում, սակայն, այնուամենայնիվ, մտցրել ենք, յելնելով լեզվի հանրահայտ օրենքներից:

Նալբանդյանը վոչ միայն նոր, աչխարհիկ գրական լեզվի առաջնորդավոր սլրոպագանդիստներից և, այլև նրա դիտականորեն հիմնավորողը և մշա-

կողը: Նորապես դիտակցելով այս և նկատի ունենալով Նալբանդյանի լեզվական էվոլյուցիան, Մխիթարյանն աշխատել է կարելություն չափ արտացոլել այդ պրոցեսը: Այսպես որինակ՝ սկզբնական շրջանում Նալբանդյանն անխտիր դրում է՝ մեք, նորա, վերա և այլն. վերջին գործերում արդեն, մասնավորապես «Աչխարհարարի քերականության» մեջ, նա դրում է՝ մենք, նրա, վրա, բառախորհում յերբեմն, հենց միևնույն գործում, հանդիպում ենք յերկու ձևին էլ. այդ նպատակով էլ մենք պահպանել ենք հարազատ ձևը հեղինակի դրած ձևը:

Միակ շեղումն այս կանոնից արված է այն բառերի նկատմամբ, վորոնք նա սկզբնական շրջանում դրում է անջատ, ինչպես դեպ ի. քաց ի, քե և, մի և նույն և այլն, իսկ վերջում՝ միացած: Յելնելով դյուրընթեռնելիությունից, մենք միացրել ենք այդ և հետևյալ բառերը. վորպես զի, այս տեղ, այն տեղ, վոր տեղ, առ հասարակ, հետ զհետե, մինչ դեռ, բան զի, մեջ տեղ, վոր չափ, այնու ամենայնիվ, վոր և իցե, ուր և իցե, որ ըստ որե (այս վերաբերում և միայն Նալբանդյանի ձեռքով դրածին. նրա կատարած մեջբերումները թողնված են անփոփոխ): Ընդհակառակը, անջատել ենք ժամանակ բայերը, վոր նա դիտակցաբար միասին է դրում (տե՛ս «Սոս և Վարդիթեր»-ի կրիտիկական հատվածը):

Լրագրերի անունները Նալբանդյանը վոչ բոլոր դեպքերում է առնում չակերտների մեջ: Հետևելով «Ցերկրագործության» և «Ցերկու տող»-ի որինակին, մենք ընդհանրապես չեղատառով ենք տվել պարբերականների և գրքերի անունները ու վերնագրերը, անկախ նրանից, չակերտների մեջ են առնված դրանք, թե վոչ: Փոքրատառով ենք տվել պարոն, աստված, ուրիշ-վրիշ և նման բառերը: Շատ տեղ դեպքերում Մխիթարյանս կողմից ավելացրած բառերն առնված են քառակուսի փակագծերի մեջ. մխիթարական փակագծերի մեջ են առնված նաև կրճատված անունների կամ բառերի լրացված մասերը—Հյուսիս[ական], Գրան[ովսկի] և այլն: Ոտանավորի բառերի կամ արտահայտությունների բացատրությունը տրված է նույն էջում աստղանիշ (*) ծանոթագրությամբ:

Նալբանդյանի կատարած մեջբերումները մեզ համար հավատարժան են յեղել նախնական տեքստերի: Բոլոր մեջբերումները և քաղվածքները, չնչին բացառությամբ, համեմատված և ճշտված են սկզբնաղբյուրների հետ. աչքի ընկնող շեղումների պատկերն ընթերցողը կտեսնի հարակից ծանոթագրությունների մեջ: Դրանք ընդհանրապես մենք ավել ենք կոմնտարներից հետո, արաբական թվանշաններով. միակ շեղումն այս կանոնից կատարված է «Ղազար Փարպեցու Թղթի» վերաբերյալ: Քանի վոր Նալբանդյանի՝ «Թուղթ»-ին կցած նկատողությունները, վորոնք Մխիթարյան համար տեքստի արժեք ունեն, հեղինակի կողմից համարակալված են արաբական թվանշաններով, ուստի և, կրկնակի համարակալումից խուսափելու համար, բուն «Թուղթ»-ի մեր ծանոթագրությունները ավել ենք՝ նշելով էջերը և ծանոթագրվող բառը կամ ֆրազը, ինչպես ընդունված է նորագույն գիտական չատ հրատարակություններում:

Ինչ վերաբերում է գիտական ապարատին, այն է՝ կոմենտարներին, ծանոթագրություններին և անվանական բառարանին ընդհանրապես, պետք է ասել հետևյալը. Հիմք ընդունելով ռուսական նորագույն գիտական հրատարակություններում ընդունված ձևը, Մխիթարյանս աշխատել է կատարել մեկնաբանությունը, կցելով նաև քննադատական ակնարկ: Ծանոթագրությունների մեջ, հասկանալի պատճառներով, մենք հանրահայտ փաս-

տերի կամ անձնավորությունների մասին խոսելիս ժլատ ենք եղել, մանավանդ եթե պրանք վերաբերել են եվրոպական կամ ռուսական իրականության և, ընդհակառակը, աշխատել ենք ծանրաբեռ անհայտ, էմեկնաբանված, կամ թե սխալ մեկնաբանված փաստերի վրա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոմենտարներն ու ծանոթագրությունները խոշոր չափով պղտորում են պատմական անձնավորության թե՛ առանձին տեսլիների և ակնարկների, և՛ թե նրա աշխարհայացքի, գրական-քաղաքական կապերի, կուլտուրայի ու այլ հարցերի լուսաբանմանը: Ամբողջությունս հարկ է համարում առանձնապես նշել այդ աշխատանքի ամբողջ պատասխանատվությունն ու դժվարությունը: Նալբանդյանը կապված է իր ժամանակի հետ բազմաթելով կապերով. գրանց փաստացի հաստատումը և մեկնաբանումը դարձել է դժվարին խնդիր է: Թե ինչպես է կատարված այդ, ցույց կտա քննադատությունը:

ՅԵՐԿԵՐ

ՅԵՐԿՈՒ ՏՈՂ

Ճշմարտությունը կրոն է,
Նորան միայն խնդրեցեք,
Իսկ նորանից վոչինչ։

Robert Owen

Ազատությո՛ւն, գոչեցի, բո՛ղ վորոտա իմ գլխին,
Փայլակ, կայծակ, հուր, յերկաթ, **բոզ** դավ դնե՛ք շշնամին.
Ցես մինչ ի մահ, կախաղան, մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտա, կրկնեմ, անդադար, ազատությո՛ւն։

ԿՈՄՍ ԵՄՄԱՆՈՒԵԼ.

Հայկական դպրության ասպարեզը իջանելուց հետո, քանի մի անգամ հանդիպեցավ մեզ, յերես առ յերես պատահել անմոռի վաստության։ Յեվ վո՛չ անգամ վշտացանք և վո՛չ անգամ վիրավորվեցանք այդ հարձակմունքներից, այլ մանավանդ յավելցանք հարձակվողների վերա. վորովհետև բարոյական հիվանդությունը մինչև ի մահ տիրելով նոցա վերա, պատճառ եր յեղել այդ ցնցողական և անպիտակից շարժողություններին։

Մենք, վաղ ուրեմն, գուցե շատ հառաջ, քան թե գրիչ առինք ու հրապարակ իջանք, գիտեյինք, վոր խավար շրջապատի մեջ բանդարկվածների համար շատ յավելցուցիչ և ազատ լույսը, թերևս աչքերի նկատմամբ, գիտեյինք, վոր հին խելքերը յերբեք համաձայնելու չեյին խաղաղությամբ տեղի տալ նոր գաղափարներին, գիտեյինք, վոր նորը պատերազմով պիտի կանգնեցներ իր դրոշակը հնության ավերակների վերա։

Այս գիտություններից հետևեցավ այն, վոր այդ հարձակմունքը, թերևս շատ անգամ մեր անձին վերա, փոխանակ մեր գաղափարների, վո՛չ յերբեք կարողացան, և վո՛չ նաև մի՛ մազի չափ, խոտորեցնել մեզ մեր ուխտյալ ճանապարհից։

Այսօր, վերստին հանդեպ և յելանում մեզ խավար ոգիությունը, յուր սոփեստական մեծ վայելչությամբ։ Նա զարդարված և այսօր փիլիսոփայի և աստվածաբանի անուններով. այս անգամ յերևում և նա պ. Զամուռճյանի կերպարանքով...* Յերթե վաստությունը, ձեռնածուների արկղի մուռճյանի կերպարանքով...* Յերթե վաստությունը, ձեռնածուների արկղի նման, յերկու հատակ չունի, ապա ուրեմն պ. Զամուռճյանը հասել և մինչև վաստության հատակը։

Յերևակի վերոգրյալ տեսորակը մեզ ուղարկողը գրում եր, թե Պոլիս ամեն տեսակ մարդերից յուրտ ընդունելություն և. գտել այդ գրվածքը. իսկ

1861, 1 հունվարի

* Տես Յերևակ, թիվ 87, 1860, 1 ոգոստոսի, հին վճռով, զոր տնօրինեն և հոբինեն պ. Հովհաննես Տեր-կարապետյան Տերոյենց Զամուռճյան Պրուսոցի։

մեր վերա այդչափ ևս տպավորություն չգործեց, և չեմն այսօր, այդ մասին մի չերկու տող գրելու պիջանք, այդ պ. Զամուռճյանին պատասխանելու համար չե, այլ ընթերցող հասարակությունը հարցելու։ Պարոնի վայր ի վերո աղճատաբանությունքը ատոր են ամենայն տեսակ քննութենից և Մեղուին և պ. Այվազյանին մեր շնորհակալությունը հայտնելով, չենք կարող, միևնույն ժամանակ, չհայտնել մեր առ ի սրտե կարեկցությունը պ. Զամուռճյանի գրվածքին պատասխանելու խորհրդով կորուսած ժամանակի վերա։

Ինքնակոչ փիլիսոփայի գրվածքը ծայր ի ծայր կարդալով, չերկու շարժառիթ տեսանք, վոր կարապետել են պարոնին դեպի այդ վիճը։

Առաջին, չերբ մեր փոքրությունը վոտք կոխեց Պոլիս, ազգային լրագրներնը մի չերկու տող գրեցին մեր մասին, մանավանդ արևելյան միանգամայն և նահապետական հյուրասիրությենից* շարժված, քան թե պարտականութենից դեպի մեր արժանավորությունը, վոր բնավ պահանջողության հանդգնություն չունի։

Այդ հրատարակությունքը, անշուշտ, ազգի մեծագույն մասին վերա բնավ ազդեցություն չգործելով, չերևում և թե նեսի նման ծակել են չհասուսովանված փիլիսոփայի անձնասիրությունը։

Մեր սրտի խորքից ցավում ենք, վոր մեր անունը, թերևս առանց մեր կամքի և գիտության, մի այդպիսի վիշտ և պատճառել պարոնին. մյուս կողմից չափավորվում և մեր սրտի ցավը, տեսանելով վոր պարոնը փարատել և, կամ գեթ աշխատել և փարատել, յուր սրտի ցավը խոշոր և դեղջուկ հայհոյությամբ։

Ինչ վոր մեզ և վերաբերվում, այդ հայհոյությունների ընդդեմ, ուրիշ բան չունինք ասելու, բացի այն խոսքերից, վոր հռչակավոր Ֆոքսը գրեց մի անգլիական Լորդի, վոր գրել եր նորան հայհոյությամբ լցված մի նամակ։

«Sir, ձեր նամակը, այսինչ թվականից, առացա։ Այդ նամակը «առաջևս և այժմ, քառորդ ժամից հետո կըվիճնի քամակումս, վորի մասին «չնորհ ունիմ տեղեկություն տալ ձեզ. անձնանվեր

Չ. Ֆոքս»։

Յերկրորդ և ավելի բթամիտ շարժառիթը, պաշտպանել չարագործ Պողոսը և պահպանել նորա խայտառակված ճակատի վերա յեկեղեցական անունը։ Վորչափ ևս գրվածքի սկզբում գործ դնե պ. Զամուռճյանը յուր նվիրական վեռացյալ և բանձրացյալ բառերը, անշուշտ, կամելով վարա-

---

* Մեք չենք կարող բառ դառնել, Պոլսի ազգայիններին մեզ ցույց տված համակրության մասին, մեր առ ի սրտե անկեղծ շնորհակալությունը հայտնելու։ Լռում ենք, վոր մեր սիրտը զրա և յուր լեզվով խոսե, այլ պիտի ղեկավածներում նորա խոսքը թե և ուրիշին անլսելի, բայց, ըստ ինքյան ավելի վսեմ և քան թե մարդկեղեն բարբառը։ Մեզ յեղած հյուրասիրությամբ մեք ավելի յերջանիկ ենք քան թե այն արկածախնդիրը կրոնավորը յերբ Բոսֆորի վերա դանված մի տան դասիկոնից, հավաքում եր չոգենավի մեջ, դնալու միջոցին, արմենուհու հրաժարական ժպիտները և ողջույն համբույրները և սիրուց թաղցր հիշատակներով ամրապնդված ուղղվում եր դեպի Տավրիկ...[5]։

գուրել գրելու շարժառիթը, այնուամենայնիվ, այսօր արևի պես հայտնի չե, վոր գրվածքի հոգին, բոլորովին քննականից դուրս, պատկերացնում է մի կատարվի ինամութիւն, յերկրորդ, վոր գրվածքի հետևութիւնն է Պողոսը պաշտպանել։

Ինչ վոր մեր ամբաստանված նամակի մեջ ասել ենք[6], նույնը կրկնում ենք այսօր և վճռաբար հայտնում ենք, վոր մի քայլափոխ ևս հետ կոխելու կամք չունինք, վոչ միայն պ. Զամուռճյանի շաղփաղփելուց և յուր խորին փիլիսոփայութեան շոշափելի չքավորութիւնը հայտնելուց, այլև յեթե նորանից հրավիրված Կրոնական ժողովը՝ դիմե դեպի նզովքը, այդ խավար դարերի խավար մնացորդը, ջաղջախ յեղեգը, վոր շատ անգամ գավազան են կարծում վողորմելի՝ մարդիկ։

Սկզբունքների համար մեզ տրված սոցիալիստ, կարմիր հասարակապետական, ժ. ժ. Ռուսսոյի դրութիւնը ընդունող, և այլն և այլն և այլն ածականների վերա միորինակ ժպտում ենք և շտապում ենք հայտնել, վոր չենք ընդունում վոչինչ հեղինակութիւն (autorite') և մեր ամբաստանված նամակի մեջ և վոչ անգամ մի բառ կա ժ. ժ. Ռուսսոյից։ Բայց յեթե յերկու անգամ յերկուքը չորս և ինչպես ժ. ժ. Ռուսսոյի համար, նույնպես և իմ համար, այդպիսի դիպվածում ժ. ժ. Ռուսսոյի դրութեան հետևող չեղանք, այլ ճշմարտութեան. իսկ ճշմարտութիւնը մի մարդու սեպհականութիւն չե, թեև պ. Զամուռճյանը այդ մասին ևս հայտնե յուր յերեխայամիտ, անդատաստան պահանջողութիւնքը։

Հարգել և պատվել հանճարը և բանականութիւնը ուսած լինելով վաղուց, անունից յերկյուղ չունինք, վո՛չ Ռուսսոյի և վոչ Վոլթեռի, այո՛, պարտական իսկ ենք մեծարել և հարգել հանճարը և բանականութիւնը, այն աստվածային քուրանները, վորոնցից առաջին անգամ դուրս թռան ազատութեան կայծերը։

Այո՛, գիտենք հարգել վոչ միայն Ռուենը, Պրուդոնը, Ֆուրիեն և Ֆոհթը, այլև Շիլլերը, Գյոթեն, Ֆիխտեն, Քանթը և Հեգելը, ճնշված մարդկութեան այն անմահ բարեկամքը և անտարակույս, պ. Զամուռճյանի աչքում հերետիկոսները և հերձվածողները։ Բայց յերջանկութիւն և փառք կըհամարինք մեզ, միասին մնալ այդ բոլորի հետ և միասին անհավատ և հերետիկոս կոչվիլ, քան թե բաց աչքով մեր մարդկութիւնը, մեր մարդկային ազատութիւնը և իրավունքը ուրանալով, պ. Զամուռճյանի հետ բռնվիլ բարոյական հարինքից և ճոճալ մի տղայամտութենից դեպի մյուս սոփհստութիւնը, մի սխոլաստիկականութենից դեպի մյուս աբեղայամտութիւնը։

Յերջանիկ կըհամարինք մեզ, հռչակելով մարդկային ազատութիւնը, իրավունքների հավասարութիւնը, վորոնք ստրկացած են կամ բռնակալների կամ դարավոր ավանդութիւնների (tradition) վորևե խաժամուժ ամբոխի (և այս կերպով մարդադիր որենքը շեղված բնականից, վոչ Մովսիսի տախտակներից[8], այլ այն շավղից, վոր բացում եր մարդկային բանա-

Ա 28775

կանոնքյունը) բամբասվիլ և հայհոյվիլ, քան թե կրոնական ժողովի որհնութիւնը վայելել պ. Զամուռճյանի շնորհակալության հետ, Պողոս չարագործը յեկեղեցական ճանաչելով, հարատահարության կողմնակից լինելու վնասությամբ։

Քա՛վ լիցի մեզ. վո՛չ յերբեք։ Պարտավորվածը քահանա ճանաչելով՝ պիտի արհամարհենք քահանայությունը, կամք չունինք. մատնելով չարագործը քաղաքական կառավարության ձեռքը, միմիայն պաշտպանում ենք հասարակաց իրավունքը։

Յեթե պ. Զամուռճյանը յերկար տարիներով, հարակցություն ունենալով յեզվիտների հետ և շատ անգամ գործիք լինելով նոցա ձեռքում, ամենայն քաղաքական իրավազատության մեջ տեսանում է ինկվիզիցիո, հանցանքը մերը չե, այլ յուր ոգիությանը, վոր չե կարողացել մինչև այժմ ուսանել յեվրոպացիների փորը և շատ աղատ որենսդրությունքը։

Անգլիական պառլամենտները խավար դոմինիկյանների ժողովները չեն, անգլիական որենսդրությամբ մարդու անձնավորությունը պաշտպանված և ամենայն կերպ, առավել քան թե Յեվրոպայի մեջ, բայց կան հանցանքներ, վոր մահով և պատժում այդ ազատ կառավարությունը։

Իսկ մեք Պողոսի համար մահապարտության խոսք արած չեյինք, և վատությունը միայն հարկադրել եր պ. Զամուռճյանին քաշքաշելով մեր ասածը, ինկվիզիցիոն հանդես հանել։

Թող ընթերցող հասարակությունը վերսին կարդա Պողոսի չարագործությունքը[10] Մեղուի մեջ և թող կարդա վոչ վորպես սոսկ լուր, վոր վերաբերություն չուներ ընթերցողներին, այլ վորպես մարդ և մարդկային զգացողությամբ։

Աղջկա կուսությունը խախտել, հետո ամուսնացնել նորան յուր մանուկ փոքրավորի հետ, սակվելով առևանդյալ ինոջ բաղդքելուց, ամուսնությունը լուծել և վերսին պսակ դնել մի այլ մարդու հետ։

Մի ուրիշի ամուսնության հինդ հարյուր ղուռուշի համար լուծել և վերսին այլ մարդու հետ ամուսնացնել։

Հղի կինը կապել և այնքան ծեծել, վոր հղացած զավակը վիժե և այլն և այլն և այլն։

Մեք սարսափում ենք այս տողերը գրելով, վորովհետև արյամբ չափ հարկում ենք մարդկային ազատությունը և իրավունքը, իսկ պ. Զամուռճյանը, այս հանցանքների մոտից թեթևությամբ քերվելով, ինկվիզիցիոնական և համարում Պողոսը դատաստանի մատնելը և մտածում է թե այդ անտեղի ու գեղջուկ բացագանչությամբ սիրտ կարողանա բռնաբարել՝ ապատությունը. խե՛ղճ մարդ։

Մեք, մեր ամբաստանված նամակով, այդ չափազանցությունների համար, մեր կարծիքը Պողոսի մասին հայտնեցինք այնպես, վոր ավելի ասելու չեյինք, յեթե այն բռնաբարված աղջիկը լիներ մեր քույրը, յեթե այն

ծնված կինը լիներ մեր ամուսինը. բայց կարծում ենք, թե պ. Զամուռճյանը այնպես խոսելու չեր, ինչպես այժմ խոսեցավ, երբե Պողոսի շարաշարժության չենթակա չեղած լիներ յուր քույրը կամ կինը:

Ինչի՞ համար և այս խորությունը, ի՞նչ բանով ավելի իրավունք ունի պ. Զամուռճյանի պատվելի դուստրը կամ ամուսինը, քան թե մի վանցի ակված և բռնաբարված անմեղ աղջիկ, քան թե մի նահատակված կին, քան թե մի զավակ, որը, դեռ հրապարակի լույսը չտեսած, սպանվում և պ. Զամուռճյանի վարդապետի ձեռքով և մոր արգանդից տեղափոխվում և դեպի դերեզման:

Յեվ այս տեսակ անտանելի և անլսելի վոճիրների համար, չարագործը յեկեղեցական կամ քրիստոնյա չճանաչելը հանցա՞նք և կամ անօրենություն՞ն, ինչպես կամի հավատացնել մեզ պարոնը յուր տիտղոսական փիլիսոփայությամբ:

Յեվ ո՞վ և այն մարդը, որը պիտի փակե մեր բերանը, այս անօրենությունների ընդդեմ բողոքելուց, ո՛վ պիտի համարձակի բռնանալ մեր ազատ խղճմտանքի վերա և հարկադրել յեկեղեցական ճանաչել մի պիղծ եյակ, որը կորուսանում և յուր սուրբ մարդ կոչվելու իրավունքը անգամ. պ. Զամուռճյա՞նը, յուր փտած ու վաճառված դրիշով, թե՞ Կրոնական ժողովը յուր մտացածին իրավասությամբ:

Ի՞նչ ունի մեզ ասելու Կրոնական ժողովը, յերբե ասենք նորան, թե Կրոնական ժողովի գործը և պաշտոնը և քննել և դատել հոգևորների այն գործերը միայն, որը ուղղակի վերաբերություն ունին դավանաբանական խնդիրների:

Վո՞ր աշխարհի մեջ տեսված և, որը յեկեղեցականը, քաղաքական կամ քրեական հանցանքների համար դատվի կրոնական ատենի առաջև:

Մենք բողոքում ենք, մինչև այժմ հայոց մեջ յեղած այս անկարգության ընդդեմ: Մեր հոգը չե, յերբե այդ կտորը սխալմամբ անցած ևս և Սահմանադրության մեջ*. դորա հակառակ դարձըցանում ենք ազդի ուշադրությունը այս բանի վերա և խնդրում ենք սրբագրել, յերբե հիրավի առանց բացատրության ասված և, թե յեկեղեցականների դատը պատկանում և Կրոնական ժողովի տեսչության: Յեկեղեցականը, քաղաքական և քրեական գործերի պատճառով պիտի դատվի քաղաքական և քրեական ատյանների առաջև, միայն Կրոնական ժողովի կողմից մի պատգամավորի ներկայությամբ, որը հարկ դիպվածում պաշտպանե պարտավորվածի իրավունքը, յերբե քաղաքական կամ քրեական ատյանները հակին դեպի անարդարություն:

Յեվ մի՞թե յեկեղեցականը, դողության, անառակության և սպանության

---

* Այս տողերը գրելու ժամանակ մենք ձեռքում չունեցինք Սահմանադրությունը և մեր հիշողությունը զլացավ մեզ սղնել, քան վերում Պոլիս, Հանդեպարձի վերա, մի անգամ ևս կարդացինք այդ վերկարար կանոնադրությունը:

համար պիտի հանդիման լինի կրոնական ատենի առաջև, մի՞թե այդ կրոնական ատյանը գողությունը, անառակությունը և սպանությունը պիտի համարե կրոնական խնդիրներ, ուրեմն և Կրոնական ժողովի դատաստանին յենթակա. մի՞թե այդ հանցանքները գործող յեկեղեցականը նույն պատիժը կրելու չե, ինչ վոր պիտի կրեր մի աշխարհական: Այդպիսի դիպվածում, յեկեղեցականությունը չե՞ դառնում արդյոք մի ապաստարան, ուր կարելի յեր ամենայն անօրենություն գործել անպատիժ: Յեվ յեթե այդպես պատահի, ձախողակի, այնուհետև այդ յեկեղեցականությունը պիտի դատավո՞ր նատի ուրիշի խղճմտանքին, պիտի հանդգնի բերա՞ն բանալ, մա՞րդ խրատել, իրավասությո՞ւն բանեցնել: Վողորմելի՜ յե այն մարդը, վոր պիտի ընդունե այդպիսի յեկեղեցականությունը:

Մեր համար, որենքի և իրավունքի առաջև, վոչ յեկեղեցական կա, ծայրացյալ իրավունքներով և վոչ անհագագ սորուկ զրկված աշխենայն իրավունքից և արտոնություններից. յերկու դիպվածում ևս տեսանում ենք լոկ մարդ, բոլոր մարդկային կատարելություններով և թերություններով: Ուստի, մինի միստիկական իրավունքը և պատիվը յերկրորդի սորուկ համարվելու սուտ փաստի հետ միասին մեր կողմից պ. Ջամուռճյանին ընծայելով, շտապում ենք ասել, վոր որենքի և իրավունքի առաջև քննվում է և դատվում է նախ գործը և ապա գործողը: Գործը դնահատելով կարելի յե վարձատրել մի առաքինություն և դարձյալ, պատժել և պատուհասել մի չարագործություն: Բայց չարագործը յեկեղեցական է, մեր փույթը չե. մենք կըդատապարտենք նորան պատմության առաջև, իսկ պ. Ջամուռճյանը յեթե կամի խունկ և զմուռս ծխել այնպիսուն, ազա՜տ է:

Մի գործ կամ մի մարդ պաշտպանելու կամ դատապարտելու ժամանակ մենք հիմնվում ենք միմիայն այն անխախտելի հիմքերի վերա, վոր ազատ իրավունքը և առողջ բանականությունը թելադրում է. հետևաբար վոչինչ կանխակալ կարծիք, վոչինչ սրբացուցած ավանդություն չե կարող արգելք լինել մեզ:

Աշխարհի պատահական կոչումները և պատվանունները չեն կարող որենքի և իրավունքի առաջև միջնորդն լինել հանցանքի և հատուցումի մեջ, վորովհետև այս հատուցումը, վերստին կրկնում ենք, մի լոկ վրեժխնդրություն չե, այլ հասարակաց իրավունքի պաշտպանություն:

Հոգևորականությունը, որենքի և իրավադատության առաջև չունի այն միստիկական խորհուրդը, ինչ վոր ունեցած տեսանում ենք պ. Ջամուռճյանի համար:

Հոգևորականք նախ և հառաջ քաղաքացի յեն և ապա հոգևորական, ուրեմն, վորպես կցորդ քաղաքական իրավունքների, պատասխանատու հասարակաց որենքի առաջև:

Մարդկության գլխից անցածը ուսուցել է մեզ, վոր ամենայն յուր մեջ միայն փակված և կենդրոնացած կացություն, սկսած Յեգիպտոսի քուրմերից մինչև Պիոս յոթերորդի ձեռքով վերականգնյալ պ. Ջամուռճյանի

հոգեհարազատը[11] վնաս տվեցին մարդկության։ Այդ կացութիւնքը, կտրված բաժանված հասարակաց մարմնից, վոգեվորված պժոխային չնասկանությամբ բռնաբարեցին ուրիշները և հափշտակելով նոցա ազատությունը զորացուցին յուրյանց չարաչար գործադրությունը ազատության։

Այնուհետև մարդիկ ընկան բարոյական գերության մեջ, այն և, մտքի և բանականության գերության մեջ, ուր մարդը համարձակություն չունի ինքնուրույնաբար մտածելու, այլ դատապարտված է հետևիլ յուր դահիճների թելադրության. նա ստիպված է գնալ այն ճանապարհը վոր ոգտակար է միմիայն այդ կացութեններին։

Այո՛, շատ դարեր գնացին մարդիկ այդ ճանապարհը, բայց ի վերջո, յերբ յերես առ յերես հանդիպեցան և զարկվեցան անանցանելի պատին, վոր խաչաձև կտրում էր նոցա ճանապարհը, կանգ առին և սկսան մտածել։ Թե վո՛րչափ փոխված է այժմ այդ խավար ճանապարհը, կամ թե վո՛րչափ մարդիկ դեռ ևս առ թարթափ գնում են նորանով, շատ անգամ առաջնորդված պ. Ջամուռճյանի նման մի աղոտ լուսով լապտերի, այդ խնդիրը այս տեղիս վերաբերություն չունի։

Բայց այս է բանը, թե պ. Ջամուռճյանը, ի՛նչ նկատմամբ արդյոք յեկեղեցականների դասը աշխարհականներին անմերձենալի քարոզելով, բարձրացնում և մինչև փուրմերի և յեպիսկոպոսների կացութիւնքը։

Վոչ բնավ պիտի ընդունինք այս դրությունը, քանի վոր մեր յեկեղեցականք ժողովրդի ընտրությամբ և հավանությամբ լինում են յեկեղեցական, քանի վոր մեր յեկեղեցու կառավարությունը սահմանադրական է, քանի վոր մեր յեկեղեցականներին դեռևս շատ բան պակաս է յեգիպտական քուրմ կամ յեպիսկոպոս լինելու համար։

Այս դրությունը մերժելով վերստին կրկնում ենք, թե յեկեղեցին ազգն է, իսկ հոգևորականությունը սպասավոր այդ յեկեղեցուն։ Ազգը, ամենայն որ իրավունք ունի, այդ հոգևորներից մինը յուր լավության համար պատվելու և սիրելու, իսկ մյուսը, յուր վատթարության համար, դատապարտելու և պատժելու։

Մեր փույթը չե, յեթե, վոտքից մինչև գլուխ միստիկականությամբ խմորված, պ. Ջամուռճյանը նայում է հոգևորների վերա, վորպես անմերձենալի մարդերի վերա. մեր փույթը չե, յեթե մյուս կողմից Կրոնական ժողովը յուր տեսչության սեպհական համարում է հոգևորների դատապարտանը, մենք կրկնում ենք, թե հոգևոր անձինք, վորպես մարդ և վորպես անդամ յեկեղեցու ազատ չեն հասարակաց ազգի անկողոպտելի իրավասություններից և հասարակաց ձայնը, հասարակաց բողոքը, մի հոգևորի անարեն գործերից, լիակատար զորություն ունի մարդապանը, գողը, պոռնիկը, շունը, հարստահարողը, վեսը, ամբարտավանը, ազգատյացը և այլն և այլն յեկեղեցու բեմի վերայից չքացնելու համար։

Թող չվախենա պ. Ջամուռճյանը, այս դատապարտության հետ վոչ յերբեք հարակից և այն թատրոնական գործողությունը, զգեստավորելով և մերկացնելով յուր քահանայական զգեստներից պարտավորվածը։

Այդ դատապարտության մեջ, իրոպես նաև դատավճիռը կատարելու մեջ, պաշտոնակատար և միմիայն խղճմտանքը և իրավապատասխանությունը:

Այս խոսքերը ասելուց հետո ամենայն իրավունք տալիս ենք պ. Զամուռճյանին, կամեցածի չափ, մաշտոցի կամ սուրբ գրքի խոսքերը քաշքաշելու:

Մյուս կողմից, Կրոնական ժողովը, յեթե սուտ լինի, և վոչ իրոպես խորվիլակ*, կա մի այդպիսի ժողով, ապա ուրեմն նա կազմված չե հոգևորների անարժանությունները քողարկելով ժողովրդի գայթակղությունը զորացնելու համար, նա կազմված չե անիրավությունը պաշտպանելով, հարստահարված ազգին թշվառության մրտրը մինչև տակը խմեցնելու համար, այլ այդի ապականող ազվեսները բռնելու և հոտը դիշատող գայլերը ջնջելու համար:

Ազգը չե հոգևորների համար, ուրեմն և վոչ Կրոնական ժողովի համար, այդ գաղափարը թող հանեն միանգամ յուրյանց մտքից, այլ հոգևորը և Կրոնական ժողովը յեղած են և կան ազգի համար, և նոցա հարուցանողը, պահողը և դարմանողը ազգն և դարձյալ:

Անցան այն ժամանակները, յերբ մարդիկ վոգևորվում եյին վերացական և միստիկական բաներով, անողոքելի իրական աշխարհը, յերկաթի գավազանը ձեռքում, պահանջում և յուր արդարացի հարկը: Մարդկությունը կապված և յերկրագունդի հետ. փորձերը ուսուցին նորան, յուր յերջանկության և թշվառության պատճառները գտանել յերկրագունդի վերա:

Անցան և անդառնալի անցան այն խավար որերը, յերբ մարդիկ յերջանիկ եյին համբուրելով մի սևագլխի քղանց կամ շատ անգամ զոշաքղությամբ և պոռնկությամբ ապականված մի ձեռք:

Վո՛ւ, ինչ սարսափելի վիհ կա այն անցած որերի և այժմուս մեջ: Այս բոպեյիս այդ մարդիկը քաջ գիտելով, վոր արժանավորությամբ չեն կարող շահիլ ազգի համակրությունը, փորձ են փորձում բռնանալու նոցա վերա, կոպիտ ուժի ոգնությամբ, կամ յուրյանց խավար ատամոսֆերի մեջ նղովքի փայլակներ փայլատակեցնելով:

Յերանի՜ այն մարդուն, վոր յուր անձը և գրիչը կընվիրե դոցա անբնական իշխանությունը ազգի վերա պահելու համար, յերանի՜, վոր կաշխատի ճնշյալ ժողովրդի իրավունքը խափան վտանգի տակ առնելու համար:

Վա՛յ մեզ, վոր վոչ յերբեք պիտի արժանանանք այս յերանության:

Փա՜ռք, ի խոնարհ, հյուսկյուտար[12], պ. Զամուռճյանին...

Պ. Զամուռճյանի և մեր դրվածներից պարզ յերևում է, վոր մեր յերկուքի ճանապարհը այլ է բոլորովին, և սոքա այնպիսի ճանապարհներ են, վոր վոչ բնավ հանդիպում են միմյանց:

---

* Այս խոսքի վերա դարձնում ենք պ. Զամուռճյանի մանավոր ուշադրությունը և չասպում ենք ասել, վոր չկամեցինք խորտակիլակ ասել, վորպես առաջին անգամ չկամեցինք խրտվիլակ ասել, թեև պարոնը այն տղայքական սխալը մատին փաթեթ եր չինել:

Մեր նվիրական պարտականությունն է, վորչափ մեր ույժը կրտանի, սպասավորել մարդկության, քանի վոր միասին ապրում ենք յերկրագունդի վերա. խոստովանում ենք մեր տկարությունը, վոր չենք կարող բաժանվիլ յերկրագունդի մակերևույթից։

Պ. Զամուռճյանը, գտանվելով յերկրագունդի վերա, ապրում է շատ հեռի նորա մակերևույթից. յերկիրը փոքր է նորա մեծությանը տանելու համար։ Շեկսպիրը, Համլետի բերանով, բանդ է անվանում յերկիրը[13] և մնում է դարձյալ յերկրի վերա, իսկ պ. Զամուռճյանը թռչում է նաև Որիոնից բարձր...

Գիտենք, դարձյալ պիտի պար գա Հերոդիադան[14], դարձյալ պիտի աշխատություն հանձն առնու պ. Զամուռճյանը յուր պատավական հերետիկոս և անճաշակ խոսքերը մեր համար գրելու. այդ նորա միակ ապրուստն է, հասարակաց խոստովանությամբ սեպհականված։

Այդ ճշմարիտ է, մինչև մեզ հասանելը փշրվող և, ուստի և կարող մի միայն մեր հեգնական ժպիտը շարժելու. մյուս կողմից շատ ավելորդ չե հայտնել, թե կուրության և բռնակալության մեջ, այո՛, հավատ չունինք, հավատալով վոր աստված ազատ է և առաջին լույս. ուստի և ամենայն հավատ դեպի նա ազատ խղճմտանքով և դիտակից ազատությամբ։

Կարկատած աբեղայական խոսքեր, հավատացնում ենք, վոր ժանդոտ փարայի արժեք չունին մեր աչքում։

Ահավասիկ մեք կանգնած ենք այժմ, բայց հրապարակի վերա և, իշնամիների ճնշքերից անխոցելի մնալու ակնկալությամբ, պատնեշ չենք կանգնեցնում մեր առաջև դանազան աստ սկզբունքներ, սոփեստական գաղափարներ, վորոնց չենք հավատում, վոր չենք ընդունում և վոր մերժում ենք միահամուռ։ Մեք խոսում ենք պարզ, այնպես, ինչպես առանց կարմրելու կարող եյինք մեր բանականության հաշիվ ու համար տալ մեր ասածների համար։ Բայց և այսպես վոչ յերբեք պատրաստիվ ենք պ. Զամուռճյանին, որը յոթը ճանապարհ կատարել Բիլուարի աստվածաբանությունից դեպի Թեսալրոսի փիլիսոփայությունը, և այս վերջինից դեպի առաջինը։

Մեք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու։ Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյանց արծաթի լիումբերի տակ միշտ անխոցելի յեն, նաև բռնակալների իշխանության մեջ։

Բայց այն խեղճ հայը, այն հարստահարված, վնղորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը, վոչ միայն ճնշված ոտարներից և բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորներից և, կիսագրագետ, ուսումնական կամ փիլիսոփա աստվածներից, ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և վայրկենական յերկմտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը։

Պաշտպանել այն հայի առաքուր կոխված իրավունքը և մեր կյանքի

քուն, խորհուրդը և նպատակը։ Ցեվ այս նպատակին հասանելու համար չե պիտո ընկրկինք վոչ բանտի և վոչ աքսորի առաջև, վոչ միայն բանիվ և գրչով այլ և զենքով և արյունով, յեթե մի որ արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով։

Ահավասիկ մեր դավանությունը, վորի մեջ տեսանում ենք աղգի փրկությունը։

Քթթրելով մեր անբաղդացած աղգի թշվառությունների տարեգիրքը, ինչ ենք տեսանում։

Վո՛րտեղ մի գայթակղություն, վորի պատճառը չեր յեկեղեցական, վո՛րտեղ հարստահարություն, վորի հեղինակը չեր յեկեղեցական, վո՛րտեղ խռովություն, վորի խմորը չեր յեկեղեցական։

Այո՛, ժամանակը լցված է, ուստի և հրապարակի առաջև ասում ենք. տերությենական լրտես— յեկեղեցական, աղգը մատնող և դավաճանող— յեկեղեցական, փառքի և պատվանշանի համար, թողունք նյութական հոգսպատուը... կաթողիկոս թոնավորող— յեկեղեցական, յեկեղեցի կողոպտող — յեկեղեցական, չարաչար արբեցության համար պատուհասվելուց փախչելով, յուր յեկեղեցուն դրժող և դեպի պապականություն դիմող— յեկեղեցական, կաթողիկոս ընտրվելու համար հավատն ուրացող— յեկեղեցական, հրապարակյալ ճակաճանության մասին դատաստանից խուսափվող— յեկեղեցական, կրոնավորական կարգը ուրացող և մինչև յուր անասնական կյանքի վերջը բոզի հետ կենակից— յեկեղեցական, դպրոցների գումարը անհետացնող— յեկեղեցական, ի վերջո ամեն բան, յեկեղեցական. վասն զի ճանճրալի չե մի ըստ մյուսջ թվել[15]։

Իրավունք չունե՞ր արդյոք Հյուսիսափայլը հայոց յեկեղեցու վոտքից մինչև գլուխ ռեֆորմը պահանջելու։

Այո՛, մի տեսակ մարդիկ, կարծելով, թե Հյուսիսափայլի խնդրած վերանորոգությունը վերաբերվում է դավանաբանության, թե առին ու թռան, վո՛հ, վո՛հ, Հյուսիսափայլը բողոքականություն է խնդրում դուշելով։

Հյուսիսափայլը կրոնական որագիր չե և դավանաբանության հետ բնավ վերաբերություն չունի։ Նորան հերի՛ք է, և յուր պարտքը լի կշռով կատարած պիտի համարի յեթե կարողանա յերկրայինը միայն քարոզել, աստղերից վեր չկա Հյուսիսափայլ։ Ուր թողունք վոր Հյուսիսափայլը ասած ենք թե հարկավոր է վոր այս ռեֆորմը կատարվի ինքնուրույնաբար, հեռի մնալով պապական և բողոքական յեկեղեցիներից։

Կրոնական հավատալիքը, վերացական բաներ լինելով, այլ և խղճմտանքի սահմանի մեջ ամփոփված, պիտի վերանորոգվին կամ հնանան յուրաքանչյուր անձին սրտի և հոգու մեջ լրացյալ ազատությամբ։ Վոչ վոք իրավունք չունի բռնաբարել ուրիշի խղճմտանքը և սրտի ազատ խոստովանությունը և Հյուսիսափայլը, համարձակվում ենք այսօր ասել, ազատա-

մտութեան կողմից վերջին որոշիրը չլինելով, վոչ յերբեք ներած և ինքյան և վոչ բնաւ պիտի ներե ուղղել յուր հայացքը մի այնպիսի կետի վերա, ուր մի ուրիշի ազատութիւնը բռնաբարել կամ գեթ սահմանափակել կեն-թադրվեր։

Հյուսիսափայլի խնդրած րեֆորմը վերաբերվում եր յեկեղեցական կառավարչութեան, րեֆորմ, վորով պիտի սանձահարվեին վոչ միայն Պողոսը և Նիկողոսը, վորոնց մասին Հյուսիսափայլը բողոքած և ժամանակ առ ժամանակ, այլև շատերը.... այլև Յերուսաղեմի միաբանութիւնը*[16]։

Պ. Ջամուռճյանի կարկատած աստվածաբանութեամբ յեկեղեցականների գործերը պահվում են Կրոնական ժողովին, այսինքն, նույն իսկ յեկեղեցականներին, և ազգը իրավունք չունի այդ բանների մեջ խառնվելու, վորովհետև յեկեղեցին կազմողը և ազգը, վորովհետև յեկեղեցին ազգինն է. հրաշալի լոգիկա։

Վո՛չ յերբեք, վո՛չ բնաւ։

Մինչ իսպառ բողոքելով, մինչև այժմ յեղած հոգևորական չարաչար կառավարութենից և Հյուսիսափայլի խնդրած րեֆորմը հետ չառնելով կրկնում ենք այսոր նույն պահանջողութիւնքը[16ա]։

Այո՛, րեֆորմ խնդրում ենք այն սկզբունքների մեջ, վորոնցից կախված են հոգևոր մարդերի վորևե պաշտոն ստանալը։

Րեֆորմ պահանջում ենք յեկեղեցու տնտեսական կառավարութեան մեջ, վորպեսզի այսուհետև գեթ յեկեղեցական դանձերը չհափշտակվին, չդողացվին և յեկեղեցական վոսկի և արծաթի սպասքը հրեա վոսկերիչների քուրաների մեջ չհալվին....

Րեֆորմ պահանջում ենք հոգևոր իշխանների և առհասարակ յեկեղեցականների դեպի ազգը ունեցած հարաբերութեան մեջ։ Պարտական՛ են նոքա ուղղել յուրյանց ընթացքը. մինչև այժմ, վարձկան պորտաբույծ և վոչ հովիվ հոտաբույծ, մինչև այժմ նոցա համար բողոքել և մարգարեն. «Ո՛հ հովիւք, որք զանձինս արածէք և ոչ զխաշինս»[19]։

Րեֆորմ պահանջում ենք յեկեղեցականների կրթութեան և դաստիարակութեան մեջ։ Քահանա ունինք, վոր կարդալ չգիտե. քահանա ունինք, վոր հայերեն չե կարող խոսել։

Րեֆորմ պահանջում ենք յեկեղեցականների ձեռնադրութեան պայմանների մեջ, մինչև այժմ «Առ մեզ անպէտ առ ամենայն կացութիւն մարդ,

---

* Լսում ենք, թե Յերուսաղեմի միաբանութիւնը մի տեսրակ[17] և հրաժարակել Մեղրի (Պոլսի) և Մյունատիի ընդդեմ։ Դուցե այսուհետև դժվար լինի այդ որագրերի աբո-ղո հրատարակողներին, յուրյանց որագրի մեջ, պահպանել յուրյանց որի վկայութիւնը, խիթարով Կրոնական ժողովի հարձակմունքից։ Այդպիսի վատաբաղդ դիպվածում Հյուսիսափայլի էջերը բաց են նոցա համար. ո՛ւր մնաց վոր Լոնդոնում ևս դրված և արդեն հայկական ազատ տպագրութեան համար մի մամուլ։ Լսում ենք թե փարիզ[18] լրագիրը մանրամասն տեղեկութիւն սիրած տա այդ տպարանի մասին, վոր մի նոր առհասարակ չե ազդի հառաջադիմութեան թեթևս անդլացոց ձեռքով։

պիտանացու դատի առ հոգևորականութիւն*, մինչև այժմ սիմոնականությունը[21] վերջին տեղը չունի....

Ռեֆորմ պահանջում ենք առհասարակ յեկեղեցական կառավարության մեջ, վոր խառն ի խուռն և անկարգությամբ հառաջանալով, մեծ մասով պատճառ է յեղել աղքի դարավոր թշվառության:

Այս վերջին պարբերության ընդդեմ, մասնավորապես, պիտի յեռ գան դարձյալ ախտերը, պիտի դարձյալ կրկնեն նույն բանը, ինչ վոր վաղուց արդեն լսում ենք դանազան հոգևորներից, թե նոցա արդյունքն է վոր հայոց ազգը ապրում է մինչև այժմ աշխարհի յերեսին:

Յեթե կան մի տեսակ մարդիկ, վոր ընդունում են այս սնոտի պարծանքը յեկեղեցականների, վոչ միայն չկատարած այլ և յերազում անգամ չտեսած, գործի մասին, մեր փույթը չե. մենք մեր կողմից հոգու ամենայն զորությամբ մերժում ենք յեկեղեցականների այդ մատացածին արդյունքը և խնդրում ենք գործ ցուցանել մեզ:

Ի՞նչով պահեցին ազգը, դպրոցներո՞վ, մատենագրությա՞մբ, քարոզությա՞մբ, ընկերություններո՞վ, ո՞ւր են ապա այդ բանները, ուրեմն ի՞նչով... և վերստին, ի՞նչով:

Այս բոլորի հակառակը ապացուցանելու համար փաստերը մեր ձեռքում կանգնած ենք և այսուհետև հայի պարտականությունն է անխնա հանդիպել հոգևորներին. վորովհետև հետախաղացության և ռեակցիոյի անպարծանք դրոշները նոցա գլխի վերա յեն փողփողում մասնավորապես:

Մեր դրոշը հայտնի չե արդեն.....

Յեթե հայոց ազգը յուր կրոնը պահելով մնաց աշխարհի յերեսին, այդ մասին շնորհակալություն մահմետականության. սա բացառաբար պահպանեց հայերի կրոնը: Ազգը վորչափ ևս թագված լիներ խավար տգիտության մեջ, այնուամենայնիվ, յեթե մի մասը գիտակցությամբ, մյուս և ավելի մեծ մասը, ֆանատիկոսությամբ հեռի մնալով մահմետականությունից, պահեց յուր կրոնը, հետևաբար և ազգությունը:

Թո՛ղ հայոց ազգը, իր թագավորության կործանման որից, սարսափանար վորևե քրիստոնյա կառավարության, այն ժամանակ կտեսանեյինք.... բայց ի՞նչպես պիտի տեսանեյինք. վասնզի մենք ևս ծնելու չեյինք վորպես հայ:

Անի քաղաքի կործանվելուց հետո հայերը Լեհաստան գաղթեցին առհասարակ բազմությամբ, յեթե նոցանից մի մասը փրկվեցավ և այսոր հայության անունը կրում է յուր ճակատի վերա, շնորհակալություն Ղրիմի թաթարներին: Իսկ մյուս և ավելի մեծ մասը, վոր մնաց Լեհաստանում, ո՛ւր և, յուրյան յեպիսկոպոսներով և քահանաներով: Լեհաստանի մեջ մեր ճանապարհորդության միջոցին (1859) շատ անգամ պատահեցավ մեզ

---

* Ի նամակէ մերմէ առ Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց, որ ի 11 էն փետր. 1860 ամի, ի Ս. Պետերբուրգ քաղաքէ[20]:

տեսանել հոյակապ, բայց այժմ ամայի, հայկական յեկեղեցիք, իսկ հայ և վո՛չ մի հատ, ի՞նչ յեղան, ո՞ւր գնացին[22]։

Հոգևորականությունը յուր տղայական խնդիրներով, յեզվիտների ձեռքում գործիք դառնալով, ճղակատը հանեց ազգը, անդարձ կորուց նորան, հետևաբար և ամենայն արդարությամբ ինքը ևս կորավ ու չքացավ Լեհաստանից։

Յեթե հոգևորք ընդունակ եյին ազգը պահելու, ի՞նչու չպահեցին այս դաղթականությունը Յեվրոպայի մեջ, ուր ավելի հնար կար լուսավորության։ Ո՞վ հանեց այն ազգակործան կռիվները, Մեղո՞ւն, Մյունսատի՞ն, Նալբանդյանցը, Մովսես, Մելքիսեթ և Յեղիազար կաթողիկոսների կամ կիսասիրտ կամ թե ասել յերկդիմի գործերը և ընթացքը, մյուս հոգևորների վասակությունը, վորոնց մեջ մեհրուժանյան պսակով փայլում է Նիկոլ, չիք յեպիսկոպոսը, սոքա ամենը միասին, վոմանք կամքով և գիտությամբ իսկ վոմանք ակամա և տգիտությամբ գործակից յեղան չվառ գաղթականությունը կորուստի անդունդը գլորելու։

Ո՛վ հայոց ազգը յուր շահատացության և պատվամոլության համար յերկրից յերկիր գաղթեցնելով մի կեսին պատճառ յեղավ մահի, ոդի և կյանքի հանգամանքներին անսովորութենից, իսկ մյուս կեսին աղքատության և ստրկության սանդուխքի ամենաբարձր աստիճանին վերա վոտք կոխելու[23]....

Այս բոլորը պատմական ֆակտեր լինելուց հետո, դեռ ևս հոգևորականությունը պիտի պարծի թե ա՞զգ պահեց։

Մեր այս խոսքերը, հոգևորների ընդդեմ, չեն վերաբերվում մեր տոնելի թարգմանիչներին կամ նոցա հետևող վոքրագույն մասին[24]։

Ինքյանք, այդ սուրբ թարգմանիչքը, աքսորվեցան և հալածվեցան մինչև ի մահ ընդհանուր հոգևորականության ձեռքով։

Խնկելի Խորենացին, այն հրեշտակ ծերունին չարաչար հալածվեցավ, վորին ի վերջո Բագրեւանդի յեպիսկոպոսությունը, վորպես մահադեղ տալով, անհանգիստ հալածանքով վախճանեցուցին և վոր, յուր վախճանի ժամանակ, ահավոր նզովք դրեց հայոց կաթողիկոսի վերա։

Հայոց յեկեղեցականությունը և մահով չհաշտվեցավ այն պատկառելի ծերունու հետ. նորա վոսկերքը փորեց հանեց գերեզմանից ու գետը թափեց։

Ղազար Փարպեցուն վոտքը բոբիկ քշեցին վանքից, վոր, Մամիկոնյանց Տիրոջ վահանի հանձնարարությամբ բարեկարգել եր, յուր սեպհական ունեցած չունեցածը ծախելով։ Վանքից հալածելու ժամանակ, նորա բոլոր ինչքը հափշտակեցին, նաև հունարեն գիրքերը, թե և մարդ չկար վանքում հունարեն կարդացող։

Խոսրովիկը, դեռ ևս Հայաստան չմտած, յերբ լսեցին թե գալիս է, փրփրեցան նախանձով և վառեցին բորբոքեցին յուրյանց հալածանքը, մինչև վոր հայրենիքի անձուկով այրված տոջորված յերիտասարդը, վոր

աշխարհից աշխարհ գնացել եր բան ուսանելու, ազգը լուսավորելու համար, լսելով այս մահաձայն աղեղների դռնչյունքը աղոթեց առ տեր և վճարեց յուր կյանքը, վորի և վոսկերքը ոտարք և վոչ մեք արժանի յեղանք ընդունելու։

Խորենացու տգիտահալած մատյանները փարաղիկես անունով հոչակեցին, իսկ Ղազար Փարպեցին աղաղավոր։

Փարպեցին, այս բոլորը մանրամասն պատմելուց հետո* գեղեցիկ նկարագրում և հայոց յեկեղեցականությունը, նաև հինգերորդ դարում, յերբ բան և լուսավորության մասին։

«Առ դառնաշունչ նախանձու իւրեանց, որ բունեալ է ի նոսա... պատատեալ և քողարկեալ երեսօք նատին, որպէս առ հոտեալ դիական, պատպանձեալ իբրև զհամր դնա։

Այս տխուր պատմություններից հետո, մեր գեմքը դարձնում ենք դեպի կրոնական ժողովը և իբրև անդամ ազգի և յեկեղեցու առաջարկում ենք նախ, հասկանալ և ընդունիլ, վոր հոգևորականությունը մի տեսակ արհեստ չե նյութական կյանքի պիտույքը հայթայթելու համար և թե կամի նա խորհուրդ ունենալ, ապա ուրեմն պարտակա՛ն և սպասավորել ազգի հառաջադիմության։

Յերկրորդ, նույնը հասկացնել յուր իրավասության տակ յեղած յեկեղեցականներին, վորպեսզի յուրյանց ընթացքը հարմարեցնեն այս գաղափարին։

Յերրորդ, սաստիկ պատվեր տալ բոլոր յեկեղեցականներին, առանց աստիճանի և պաշտոնի խտրության, չհամարձակվիլ ձեռք վերցնել կամ գավազան բարձրացնել հայոց ազգի զավակները դաստիարծելու և գիշատելու համար (տես Մեղու p. 127) այդ հոգևորականության չի այլ անարգ դահճություն**։

---

* Թուղթ Ղազարայ Փարպեցւոյ, առ Վահան Տէրն Մամիկոնէից, տպեալ ի Մոսկուա, 1853. աշխատությամբ և ջննությամբ պ. Էմինի։ Ցավում ենք վոր մեր հետ չունինք այդ գիրքը, վորպեսզի մի յերկու ևշ կարողանայինք արտագրել այստեղ պ. Զամուռճյանի և յեկեղեցականների հոգևոր մխիթարության համար։

** Մեք այդ ժպիրհ ընթացքը հոգևորների նկատեցինք նաև ԵՀմիածնի մեջ (1860. հոկտեմբեր) 25։ Մի առավոտ, սենեկիս առաջևը բարձրացած աստիճի աղմուկից և աղաղակից ստիպված դուրս յեկա պատճառը իմանալու համար։ Յամբելով տեսա, վոր յերկու ծախսարար արհեստյք ձնձել են տալիս մի քանի հայ մշակների, այն պատճառով, վոր այդ մարդիկը առանց կերակրի մնալու պայմանով չկամեցին աշխատիլ։ Ես ևս անպաշտպան հայերի մեջբին բռնական վարա եջուցանելուց հետո, յերևի թե այս հայկական ինկվիզիտորների կերբը չեր նստել, վորովհետև նոցանից մինը կարապետ անուն, անպատասխանելես և մեռնգամայն կատաղած ինքը սկսեց աքացի և բռնցք ջարդել, արդեն գիշատվածներից, մի խեղճ պատանի։ Բիթը բերանը արյունոտթաթախ, մազապուրծ վախած դահճ ձեռքից վողորմելի պատանին և վազելով այուենհոդոսի անդամ, արբանյան Գեղիսաղոս եպիսկոպոսի մոտ բողոքեց յեղած անիրավություններից։ Գեղիսկոպոսը, անձամբ անձին տեսանելով վողորմելու վիրավոր կերպարանքը յուր հետ առավ այս արյունաշաղ մկրտվածը, (վորին, կարապետը յեղել եր և մկրտիչ) և գնաց վեհափառ կաթողիկոսի առաջև վիա-

Այս առաջարկությունը առնելուց հետո, կապահենք Կրոնական ժողովի շրջաբերական հրամանին, հատկապես այս բովանդակությամբ, որ յեկեղեցականք չհամարձակվին որևիցե դիպվածում, մարմնավոր պատիժ գործ դնել ազգի անդամների վերա։

Յեթե այս շրջաբերականը դուրս չգա, այն ժամանակ (այժմեն հայտնում ենք հրապարակով), որ մեք կըհանենք մի շրջաբերական, բայց բոլորովին հակառակ բովանդակությամբ։ Նորանից ծագելու հետևանքը, հանցանքը և մեղքը, այս որից, դնելով Կրոնական ժողովի պանցառության վերա։

Այս խոսքերը ասում ենք ամենայն լրջությամբ և ծանրությամբ։ Կրոնական ժողովը լոկ սպառնալիք չըհամարե կամ բոպեյական վաղանցուկ կրքի ծնունդ, վո՛չ, վո՛չ։ Այժմ և միշտ մեր դերեզմանի ափը վրեժխնդիր և նախանձավոր ենք հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու և այս խորհրդով ամենայն բանի ընդունակ։

Կրոնական ժողովը կըկարդա մեր շրջաբերականը, յեթե պանցառության դժբաղդության հանդիպի. մեք, յուր ժամանակին, առանձին ծրարի մեջ կուղարկենք նորան մի որինակ։

Վո՛հ, ի՜նչ ցավալի պաշտոններ, ի՜նչ տխուր առարկաներ նյութ են այսոր մեր խոսքին։

Ա՛յս եր մեր գործը։

Արյուն և կաթում մեր սրտից, յերբ նայում ենք ազգի ամայի և ամուլ կյանքի վերա. աղեխարշ սրտմտում ենք դարձյալ, տեսանելով, որ այս անգործության, ծայրացյալ թշվառության և կարելի յեղածի չափ սարկության մեջ, հայերը դատապարտված են ոտարի դավազանի հետ յենթարկվիլ նաև յուր յեկեղեցականների հարստահարության։

Բայց մինչև վո՛ր աստիճան բարձրանում և այս անախորժ զգացողությունը, մինչ հայ մարդիկ, դարձյալ, հանդես են գալիս յեկեղեցականների մատացածին իրավունքը չատագովելու և ազգի սարկության ժամանակը հատատևել տալու համար. մինչև վո՛ր աստիճան... մեք հրաժարվում ենք սահմանել։

Ազատությունը, այն վսեմակա՞ն աքսորականը, վերստին և վերստին սրբված արյունով, հրաբորբոք տառերով գրվում և պայծառ ճակատների վերա, իսկ հայը և այսոր չե կարող կատարելապես դուրս հանել յուր ճակատը սև վերարկուի տակից, ուր դարերով ահա վորջացել են պարկյանք[26], ազատության բողբոջները մկրատելու համար։

Մինչև այժմ վերացականությամբ ապրեցանք, վոր, ուրիշ խոսքերով, ասել և մեռանք, մի՞թե պետք չեր մի փոքր կյանքի վերա ևս մտածել.....

յելու այս անօրենության։ Զախողակի, նորին վեհափառության Չիլվանդ լինելով, հեռավարար չկարողանալով մարդ ընդունել, յեպիսկոպոսը հարկադրվեցավ, վորպես այսուհետև անդամ, պաշտոնական թղթով պրոկուրորին բողոքել և խնդրել արժանի անօրենության, վոր վանականք չհամարձակվին դիմել դեպի այսպիսի հնարքներ։ Թե ինչ հետևանք ունեցավ այդ բողոքը, դեռ ևս չունինք տեղեկություն։

Տարինները վազում են վայրկեան շուտութեամբ, որերը թռչում են, վորպես մի վայրկեան։ Վախենում ենք և իրաւունք ունինք վախենալու, թե մի՛ գուցե, մինչև հայը կշտանա յուր մահանման քնից, լուսինը անդնդասույզ գնա հորիզոնից ներքև.....

Շատ ազգեր պատահեցան անբաղդութեան, բայց այդ չեղաւ նոցա համար հաւիտենական մեռելութիւն։

Աքսորվեցան, կախվեցան, գլխատվեցան և այրվեցան, բայց նոցա հոգին կենդանի մնաց, յուրյանց ամայացած հայրենիքի վլատակների մեջ։

Հայրենիքի ոդը, սարերը և անտառները, խոր դիշերի լռութեան մեջ, դարերով շշնջեցին այդ նահատակների վերջին բոպեյում արած բողոքների արձագանքը։

Յեղո՜վ ձեղ, Հայաստանի սարեր, Հայաստանի ձորեր և Հայաստանի նվիրակա՜ն անտառներ։ Այրարատից մինչև Տորոս, ստիպված եք դուք հնչեցնել միայն, հեկեկանքը և հոնդյունքը Հայաստանի վորբ զավակների, հարատահարողների և յեկեղեցականների դավադանի տակից։

Ուրիշ ազգերի նահատակների ուրվականքը հալածեցին հարատահարողների կյանքը, մինչև մի ժամանակ, իսկ յերբ մինչև բերանը լցված եր փորձութեան բաժակը, այնուհետև նոցա սպազդեստ ժառանգների վերարկուների տակից դուրս շողացին պողովատիկները։

Նոքա ապրենցան և քրանեցան ընդհանուրի ոգտի համար, լավ հասկացած լինելով, թե սո՛ւտ և մասնավորի քաջաբաղդութիւնը, առանց ընդհանուրի յերջանկութեան։

Նոքա չկաշառվեցան ոտարներից... նոքա չնենգեցին յուրյանց ազգին, նոքա չվաճառեցին յուրյանց գրիչը.... նոքա արհամարհեցին ոտարի տված պատիվը և աշխատեցան դժպհի պատվանշանների տեղ կրել յուրյանց ազգութեան անունը, այլ և վերքերի սպիք, վորոնց արժանացել եյին մարտիրոսաբար, ազգի ազատութեան անունով։

Ի՛նչ մնաց մեզ մեր անցած որերից, ի՛նչ վիճակի մեջ ենք ներկայումս, ի՛նչ ճանապարհ և մեր գնացածը և ո՛ւր և դորա յելքը։

Սոքա յեն ահա խնդիրքը, վոր ամենայն բանական հայ պարտակա՛ն է լուսափայլ կացուցանել ազգի ընդհանրութեան առաջև։

Լռութիւն... Պատվելի Այվազովսքին մեր մինչև այժմ գրածների համար ևս պատրաստվում է հերետիկոս անունով մեզ վերստին մկրտելու։

Բայց վորովհետև, մեք յերկյուղ չունինք անունից, ուստի և ընդունում ենք նաև պ. Այվազովսքիի սպառնալիքը, Մասյաց Աղավնու[27] մեջ, քննութեան տակ ձգել Հյուսիսափայլը, սկզբից մինչև նորա վերջը* և հանդիմանել նորա հերետիկոսականութիւնը։

---

* Հյուսիսափայլը, դուցե պ. Այվազովսքիի յերևակայութեան մեջ լավանված, չպրունակվում է այսորչ։

Հրամիրում ենք, վոր ասպարեզ իջանե, բայց յեթե բանը կրոնի և սրտի վկայության վերա անհաստատության գա, կարծում ենք թե ավելի ծանր լինի յուր պատասխանատվությունը. մանավանդ յեթե գտանվին մարդիկ, վոր հանձն առնուն հրատարակել պ. Այվազովսքիի ընթացքի և գործերի պատմությունը** այն րոպեիից, ուր դադարում է Վ. Հայր Սարգսի Մուրատյան վարժարանի պատմության[32] յերկրորդ հատորը, վոր դուցե մինչև այս տարու վերջը հրատարակվի: Վո՛ւ, ինչ պատմություն...*

---

* Այս հրավերը առնում ենք պ. Այվազովսքիին, մինչ արդեն նախընթաց տարիներում քանի անգամ ամբաստանվեցանք նորանիս Ռուսսիո նկարչին գործոց մինիատյրե առաջնվ, վորպես անկրոն, վորպես անբարոյական, վորպես ապստամբ և խռովեցուցիչ ժողովրդյան: Պ. Այվազովսքին առաջարկում եր քաջափայլ մինիատյրին, Հյուսիսափայլ վճռական որագիրը դադարեցնել և մեզ ձգել սաստիկ պատժի տակ, որենքի բովանդակ խստությամբ: Դուցե պ. Այվազովսքին, հայրական հոդոդությամբ պատրաստել եր մեզ տեղի բնակության նկրչնակ կամ կրատնոյարսկ...[28] Մեր ջերմությունը մի փոքր բարեխառնելու համար Սիբիրի սառնամանիքը... (բուն առողջապահական խորհրդով): Պ. Այվազովսքին չե կարող ուրանալ այս իրողությունքը. ըստ վորում յերկար քննություն և դրպրություն յեղան մինիատրերի և ցենզուրյան ժողովի մեջ, այլև առաջարկվեցան հարցմունքներ...

Զնայելով այս տխուր անցածի վերա, չնայելով, վոր պ. Այվազովսքին յուր Մասյաց Աղավնու մեջ ազատ և ամենայն բան դրելու, նաև դրպարտելու... նաև հայհոյելու, ըստ վորում նորա դրվածքը չեն քննվում ցենզուրյան ժողովի մեջ[29], մյուս կողմից մեր բոլոր դրվածքը քննվում են և մանավանդ խիստ, յեթե հարաբերություն ունին պ. Այվազովսքիին (ասպացույցները մեր ձեռքում պակաս չեն), չնայելով ասում ենք այս բոլորի վերա հրավիրում ենք, վոր պ. Այվազովսքին խոսքը բռնե ու հրապարակ իջանե:

** Այդ հրապարակվելու պատմությունից, առայժմ, մի փոքր ճաշակ տալու համար ընթերցող հասարակության, դնում ենք այստեղ պ. Այվազովսքիի վեց նամակների պատճենը, վորոնց բնագիրը դտանվում է Վենետիկ, Ղազարու վանքը[30]:

Անշուշտ, այս նամակները մի նոր լույս սփռի ծավալեն պ. Այվազովսքիի խիստ բարոյականության վերա, մանավանդ յեթե հիշենք յուր ասածները, ի Հայտարարություն ընդդեմ Մուրատյան վարժարանին[31] թե Հ. Սարգիսը յուր վերա չարժեց վանքի բարեկությունը, պ. Այվազովսքին պաշտպան կալով, Հռոմի և վանքին ընդդեմ: Պ. Այվազովսքիի ոտպատրության անբաստանելի հռչակված Հ. Սարգիսը, մինչդեռ պատերազմում եր պ. Այվազովսքիի ոգու համար, սա դրում եր Աբրահամին հետևյալ նամակները, վորոնց մեջ բայի քրիստոնեականից, բարոյականից և մարդասիրականից ուրիշ սկզբունք չդտանք:

ԱՌ ԱԲԲԱՅՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ի ՎԵՆԵՏԻԿ

Փարիզ, 18 Նոյեմբերի, 1848

Աստուածասատիւ Հոգևոր Տէր·

...Վ. Ստեփանոս արդ հասեալ խակ ի մեզ այլը, զի ըստ դրելոյ իւրոյ առ Հ. Ցովհաննէս յ8 սորին ամսոյ մեկնելոց էր նա ի Լիվոռնօյէ: Ի նմանէ տեղեկացեալ իցէ տէրդ և բազում ինչ իրաց վարժարանիս և խելամուտ լեալ, թէ ո՞րչափ վայրապար դանդխահաց ժողովս մեր երկիցս անդամ յընդունելոյ գիրաժեշտ թարմատար տհաչին, (Հ. Սարգսին Թեոդորեան) և ո՛րպես յանօգուտս, մանավանդ թէ իվնաս ևս իրաց վարժարանիս, յանձն արարի նա ընդ տեսչութեանն և զանուն մատակարարութեան դրամոց: Եւ սկզբ եթէ զեղեալսն չիցէ խոհեմութիւն փութանալ, առանց կարևոր ինչ պատճառաց, սակայն թուի ինձ, թէ զարժանն պատասխանի առ դրեալսն ի նմանէ (զորս ընթերցաւ ինձ) պարտ է հշռել աներկիւղ և անպատրուակ բանիւք և անժխտելի վաստիւք...

Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՑՎԱԶՈՎՍԿԻ

Ավելի դյուրին պիտի լիներ պ. Այվազովսքիին Հյուսիսափայլի մի ուրիշ բանի վերա հարձակվիլ, քան թե դատապարտել նորան վորպես կրոնադրուժ։

Յեվ ո՛վ է այս դատապարտողը, վոր արդեն յերկու անգամ փոխել է յուր կրո՞նը, վո՛ր տպագրությամբ հրատարակել է «Կաթոլիկ ծնած եմ և կաթոլիկ պիտի մեռանիմ», վոր Տատյան Պողոս բեյին համար տեսրակ դրելով ներկայացել է Փարիզի արքեպիսկոպոսին, հայոց յեկեղեցին հռովմեական խոստովանելու համա՞ր, վոր հանդամանքներից և հույսերից բռնադատված վազել է դեպի հայոց յեկեղեցու, վոչ յերբեք փակված, դիրկը՞ և վոր, ավելին ասեմ, լուսավորչական հայերի առաջնորդ կարգվելուց հետո հրատարակել է, հայոց յեկեղեցու հակառակ Վարդապետարա՞ն քրիստոնեական հավատո*։

Այս Վարդապետարանի վերա եր դրել պ. եմինը յուր ռուսերեն քննությունը, վոր պ. Այվազովսքին Մասյաց Սղավնու մեջ հիշատակում է, թե մի ռուսերեն ձեռագիր տեսրակ, յուր ընդդեմ դրված, ման է գալիս ժողովրդի մեջ։

Փարիզ, 17 Դեկտեմբերի, 1848։

...Մի ինչ միայն Գնը. Տէր, որ փոքր մի տաղնապ ղմխաս իմ, այն է, դի ոտ հարկի այժմու հանդամանաց Վարժարանիս, ինձ անկ է ուղղակի պատասխանատու լինել առաջի մխարանութեանս ոչ միայն ղպատասխարակութենէ և զհրահանգաց մանկուացն, այլ դրեա՛ թէ և ղընթացից վարժարանիս ոտ հաւարակ. ուր եթէ կայր որ Տեսուչ արդեամբ և ոչ տնուտեամբ լոկով որպես զարդիս (Հ. Սարգիսն) իմ պատասխանատուութիւն ընդ նորա ձեռն լինէր և զհանրական տեսչութենէ վարժարանիս նա տայր պատասխանի... Սմին իրի և զամենայն հոգս սկսողից մանկուացն, զկերակրոց ասեմ և զդեստուց և զդրոց և որ այլն ևս, իմ յանձին կալեալ է, թէպէտ և զդրամոց մատակարարութիւն լի բովանդակ է ձեռս վ. Հ. Ցովհաննու կայ։ Զայսոսիկ հարկ համարեցայ զգեուցանել վեհիդ, զի ի փորձոյ ուսեալ կարծեմ, թէ ոչ աւուրաւուր տեսուչն է վարժարանիս պատեհատես խնդրէ անմեղադիր առնելոյ զնորա անգործութիւն, և զանկարողութիւն դմեօք սրտիւք և զձեօք մանուանդ սրկանելով զամենայն զվնասս սահուս զղջացմամբ վարժարանիս, (ըստ իւրոցն խոստից)։

Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԵԼ ԱՑՎԱԶՈՎՍԿԻ։

---

* Այս Վարդապետարանը, ինչպես վկայում է պ. Այվազովսքին, Պոլսի նախկին պատրիարք սրբազան Հակոբոս արքեպիսկոպոսի և կրոնական ժողովի հրամանով է տպված։ Յեթե սուտ է այս, ապա ուրեմն կրոնական ժողովն անընդունակ է նաև դավանաբանական խնդիրները վճռելու, վոր մի փոքր հառաջ նորան եյինը վերադրում։ Բայց մի բան տարակուսանքում է մնում։ Պ. Այվազովսքին հրատարակից յուր չորքերակնյան մեջ, թե հայոց յեկեղեցու ընդդեմ տպված լուր կտրները տպագրության սխալանք են, ասել է թե պ. Ճանիկ Արամյանը յուրյանից է շարադրել այն բոլորը։ Պատճառ, տպագրության սխալ կարող է լինել տառի կամ շատ-շատ մի բառի մեջ, իսկ դրաչարը, վորչափ ևս անփորձ լինի յուր դործին, այնուամենայնիվ, չէ կարող յուրանից շարադրել և՛ջեր, շարել և տպել։ Այս յեթե մի մերկ ղեղաբառություն է, թո՛ղ պ. Ճանիկ Արամյանը հոդա և բողոքե, մենք այս մասին վուչի չունինք, լայց այժմյան պարտական ենք ասել ճշմարտության համար, վոր յեթե դերքը դատապարտելուց հետո խոստովանեցավ նորա սխալականությունը, ո՞ւր եր նորա ուշը, յերբ տպված առանում եր Փարիզից և տալիս եր դպրոցի աշակերտների ձեռք։ Չկարդա՞ց, չտեսա՞վ։ Յեվ հայոց յեկեղեցու հրատարակյալ անհարաշատաբ Հյուսիսափայլի դրչչները սլիտի կրոնադրո՞ւժ քարոզե։ Հերիաթ, մինչև ի կատակ բարձրանում և սորա ծայրը։

Այս վարդապետարանն եր, վոր Ռուսիո ներքին գործոց քաջափայլ մինիստրի ձեռքով դատապարտվեցավ։ Պ. Այվազովսքին չե կարող հակառակը պնդել, ըստ վորում յուր սեպհական ձեռնադրով, պ. մինիստրի հրա-

---

Փարիզ, 19 Յունուարի, 1849

Վ. Հ. Սարգիս մեծաւ անհամբերութեամբ թուի սպասել այսի թղթոյ, յորմէ իմանամք, թէ աւուրըք յառաջ դրեալ է առ Ձեզ անչուշտ նամակ ըստ ոճոյ առաջնոց նամակացն իցէ և այդ, որպէս դուշակեմ, իմ տննջ այն է, զի մի բնաւ խռովեսջիք այլ խոհական խորհրդով և աղդու պատճառաբանութեամբ կշռիցէք նմա զպատասխանին, ըստ իմաստութեան Ձերում։

Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՑՎԱԶՈՎՍԿԻ։

Ց. Գ. Արդ իսկ կոչեցայ ի Վ. Հ. Յովհաննէ ի սենեակ Վ. Հ. Սարգսի և տարեալ և ցուցեալ էր սորա նմա զմանրամասն հաշիւ ամենայն ելից և մտից վարժարանիս, հանդերձ առանձին բովանդակութեամբն և կշռով և ընդունելութեան մուրհակօք։ Վ. Հ. Յովհաննէս ընթերցաւ և բացատրեաց մի առ մի զկարևորագոյնս ի հատուածոցն, և ապա ասէր— Ահա և հաշուեմատեանն ողջոյն, տեսէք, քննեցէք և ըստ ամենայնի դրեցէք առ Գնդ. Սրբ. և յղեցէք զբովանդակութիւնդ։ Վ. Հ. Սարգիս հաւանեցաւ և եթ սկսն արկեալ ի մատեանն ասէ, զայդ առ քեզ ելոյծիլ և զհատուածութիւնն տուր ինձ զի յղեցից ի Վանս։ Ցաւել Վ. Հ. Յովհաննէս. բայց կամիմ դիտել, թէ ո՛ կալցի զհաշիւս այսր նորոյ տարւոյս. զի ես ոչ ևս կարեմ վարել զպաշտօն, զոր հասարակութիւնն առեալ է յինէն. իմ պաշտօն այսուհետև խոստովանահայրութիւն և եթ է։ Ասէ Վ. Հ. Սարգիսն, ո՛չ, ո՛չ. կալ դու զհաշիւն զարձեալ, որպէս յառաջ, մինչև տեսից թէ զինչ պատասխանի եկեսցէ ի վանից առ Թուղթան իմ։ Եւ Վ. Հ. Յովհաննէս ևս ընդ իս ի սենեկին նեղասրտեալ ընդ մեղմեխ գնացքս առնն։ Իսկ հաշուեմատեանն զոր տեսի, ամենայն մանր մանր տեղեկութեամբ հանդերձ գրեալ է, որպէսի ոչ զկանացն տեսեալ է իմ և ոչ Ռաֆայէլեան վարժարանին, զի օրինակ իմն և անուանք իւրաքանչիւր մասինից գնելոց, մի առ մի դրօշմեալ են ի նմա, որպէս և այլ պաշարք և նիւթք լիպրէիւքն և չափովք և թուովք ըստ մուրհակացն ընդունելութեան նշանակեալ միւսոյ մխոյէ։ Տեսուցի եթէ Վ. Հ. Սարգիս ասացէ՞ նոյնպէս (եթէ ի ձեռս նորա մնասցէ հաշուեմատեանն) որպէս յոխորտայ ի լինել խօսից...

Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՑՎԱԶՈՎՍԿԻ։

Փարիզ, 29 Յունուարի, 1849

Չհնարհեալն ի վահէդ ի 17 ամսոյս՝ ընկալաւ յերեկն հանդերձ օրինակաւ Քղթոյն (Հ. Սարգսին), որս իմաստաք ոչինչ անծանօթ էին մեզ... Գտեալ զայն անձնական և անարժան կրիւ անիմանալի խառնախօսութեամբ և յանդուգն ասացուածովք։ Զոմանս յառաջարկութեանց նորա, որ իրաւացի թուին և մեզ դիտեմք, զի և միաբանութիւնս ճղնի տակաւրդիւնացուցանել ըստ կարի և ըստ ներելոյ ժամանակիս, և զոմանս, յորոց մի է և յանձն առնել պահպանութիւն վարժարանիս ի ձեռս զաղղիացւոյ ուրուք, ոչ միայն համարիմք ի նախատինս ուխտիս, որպէս ասէ նա, այլ և ի վնաս մեծ վարժարանիս և ազգային կրթութեան, զորոյ զօրինակն ունիմք և ի վերայ դպրոցին Լազարենց, սմին իրի և անդրադարձի սմիններին։—Իսկ թէ զի՛նչ պատասխանի արժան իցէ զրել առ նա, մեր կարծիք այս են...խոյտառակել միանգամայն զգնացս նորա յիրս վարժարանիս, ոչ միայն յերկուց ամաց ետէ, այլև անդստին յամէն, յորում կարգեցաւ նա ուղղիչ Ռաֆայէլեան վարժարանիս և ապա այսմ ի պատուիրօն։ Բայց ճանգի այր է սա անխիղճ և կատաղի, լաւ ևս քուլ զրել Ձեզ առ նա պատասխանի զգուշաւոր բանիւք... (թէ) բարւոք քուեցաւ մեզ և ժողովոյս զի որովհետև ինձ անմարթ է վասն հանգամանաց ժամանակիս զալ այսր, վերապատուութիւնդ ի մեղմանալ օդոյ փութասցի անյապաղ գալ այսր ի Վենետիկ...եթէ յանձն առնուցու նա զալ, բարւո՛ք է, զի և վարժարանիս զերծանի միանգամ ի տարտամ տեսչութենէ աստի որով սա զանուն և եթ տեսչի ունելով զամենայն պատասխանատուութիւն յանձնէ ի

մանին համաձայն, առաջարկութիւն գրեց Թեմական ատենին, վոր սա շրջաբերական հրամաններ տարածե բոլոր վաճառված վարդապետարանքը հետ առնելու և յուրյան հասուցանելու համար, բան վորում այսպես եր քաջափայլ մինիստրի հրամանը:

Այս Վարդապետարանն եր, վորի վերա մեր դրած բազմիցյան քննութիյունը ընդհանուր հայոց վեհափառ կաթողիկոսը ընդունելով, շնորհեց մեզ յուր որհնութիյան կոնդակը, վորի մեջ «խարդախամիտ գրված, մոլորական բան և հավետ գայթակղեցուցիչ պարզամտաց» անվանում և պ. Այվազովսքիի Վարդապետարանը*:

բաց քեզ, որպէս մշտան և միանգամայն ըշնամութեան աչօք հայելով միշտ և յանպատաս ընթացս վարժարանիս. և անդադար հակառակութեամբ ընդ վանացն ջլասէկ գծեռս վասակաւորաց: Իսկ եթէ յայտնելով գրուն (որպէս հաւանական թուի) չկամիցի երանել ասել, դէթ չկարէ այլևս յայտնապէս ընդմիջել ոչ ասս մեզ և ոչ ասս Ձեզ...

Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ:

Փարիզ, 19 Մարտի, 1849.

... Չարդեցութիւն գրոյն Ձերոյ առ նա չկարեմք հաւատասել զուշակել, գայթ անհանգիստ և խռանամբ, դի ուրախ է նա հավելի ևս քան զասվորականն, և պատրաստակ դարձեալ պատասխանի, որպէս ընդունիցէք ընդ մեզ: աչինչ անդիտանալով զանհանգարտ և գիտուսաէր բանս ընորա և գրատուրկպատրաս շատախոսութիւն: Բարւոք յայտ և խռատութեամբ գրեալ էր Ձեր գիտուքին բան ամենայն մասանցն. բայց պարզապէս յայտ, թե ընդէ՞ր ոչ իշխեաց և ոչ կամեցաւ արդյ ժողովն երկարել ինչ ի՛շատակ առնել ի Քրիստին դհանձնելոյ նորին գործել գամենայն գործ և գմատակարարութիւն վարժարանիս ի ձեռս Վ. Հ. Յովհաննու, և գրաժարական բանիցն գրոյ ատէպ կրկնել նա ի թուղթս իւր: Գիտեմք իսկ դի վրիպակ մեծ էր գոր գործեաց ժողովդ մեր, տալովն ի ձեռս Հայր Սարգսի գամենայն իշխանութիւն տեսչութեան և գործակալութեան, ընդդեմ խոսքի իւրոյ և նանաչման իրացն, գիտելով չափ գոդմութեի անկարողութիւն և գխոտորար բոլոր անգործ առնն բայց քանզի նա հրաժարեաց կամակար ի յանձնառութենէ պարծայն, ժողովդ ի՞մ լուիցէ...: Ցայսմ ամենայնի մխիթարութիւն մեզ է դի այս կրկին և խոտորութիւնք (որ թուի թէ ոչ դադարեացին իսկ մինչև խոպան այսպիսի հնարքի) աչինչ բնաւ ամենևին խափան լինին ներքին բարեկարգութեան և յառաջադիմութեան վարժարանիս գրելոյն...

Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ:

...Վ. Հ. Սարգիս թուի թէ չև ևս աւարտեալ է գերկոսին թուղթս իւր բազմիցնանս, գրոյ անձամբագրի համբերութենամբ դրէ, որպես կարծեմ, յայտուկ մինչև գրենդերկոս. դի յետ վերծանութեան լրագրոյ, զաւրութիւն մեծ թուի նմա և գործ կարևոր վիճաբանել ընդ մեծի և ընդ փոքու գհնոսի խնդրոց և զանցեալց առաջ կամ անդառի վարկածից. բայց ընդ մեզ (դէթ աս երևաս) բաւուք վարի...

Ն. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ:

---

* Ձերբ 1860 թվականի հոկտեմբերի մէջ, ազգային գործերով գտնվում էինք Եջմիածին, վեհափառ հայրապետը, վերտուն ընդհանրով մեզ յուր որհնութիյունը, հայտնեց, թե պ. Այվազովսքին, յուր վարչ Յիսուսի մասին գրքի թարգմանութեան մէջ, հակառակ և խոտոր հայոց եկեղեցու վարդապետութեան, ուսմանի և նորին վեհափառութիյունը քննում է և նշանակում և ասացյալ գրքի այն սեռերը:

Գ. Այվազովսքիի դեմ հայոց եկեղեցին ունեցած հարաբերութիյունը, վեհափառ կաթողիկոսը, պաշտոնական թղթով հայտնած և Ռուսաստ տերութեան: Ձեռն պ. Այվազովսքիի դեմ քննութեան պատասխանելու հարկին հանդիպելնք, դէթ առիթ կունենանք այդ թղթերը և այլ կոնդակներ հանդես հանելու...

Այս վարդապետարանն եր դարձյալ, վոր, առանց նորա դատապարտությունը, քաջափայլ մինիստրի կողմից, հիշելու, պ. Այվազովսքին, աղավնեական պարզամտությամբ, ուղարկեց վեհափառ կաթողիկոսին, վերստին տպելու հրաման խնդրելով: Պատճառում եր յուր նամակի մեջ, թե բոլոր տպվածքը վաճառված լինելով կարոտություն կա վերստին տպելու: Հույս ուներ նա, վոր վեհափառ կաթողիկոսը, թերևս առանց կարդալու, հրաման կըտա և ինքը հետո, կաթողիկոսական ստորագրությամբ, կարող կըլինի դատապարտվածը վորպես արդարացած վերստին հրատարակելու:

Բայց այլապես յեղավ բանի վախճանը: Վեհափառ կաթողիկոսը ընթերցավ, քննեց և, գտանելով սխալական և հայոց յեկեղեցու վարդապետության հակառակ, արգելեց: Այս իրողության մասին մեզ պատմել և նույն ինքը ամենայն հայոց վեհափառ կաթողիկոսը[33]:

Ահավասիկ մեր լինելուց քննիչը, ահավասիկ պ. Այվազովսքին, ըստ մասին: Յեվ մի՞թե այս անարատ մարդը (վորի բարոյականության և մինչև այժմ ունեցած ընթացքի վերա վոչ վոք համարձակություն չունի արատ շփել), իրավունք չունի, յուր անսխալական քննությամբ, յուր հակառակորդը դատապարտել, մանավանդ յերբ նորա հայացքը ոգտակար չեյին ինքյան: Թող Հ. Սարգսի համար Աբբային գրած նամակները վկայեն....

Թեև մարդարե չենք, բայց ընթերցող հասարակության, այժմեն գուշակում ենք պ. Այվազովսքիի ասելիքը այս նամակների մասին: Այն ժամանակ նա չե ճանաչում յեղած Հ. Սարգսին և հետո, ճանաչելով, ի Յայատարարութեան անցից Մուրատեան վարժարանին, հռչակել և նորա իրավունքը:

— Յեվ այսպես.

«Պ. Այվազովսքին Ոսմանյան պատմության[34] մեջ հայոց ազգը հերձվածող և դանչում»:

— Այդտեղ նա մեղավոր չե. առանց նորա կամքին, վանքը հավելացուցել և այդ եջերը*:

«Պ. Այվազովսքին ինչի՞ համար ընդունեց»:

— Ո՛վ և այդ հարցանողը:

(Պ. Այվազովսքին պատասխանում ե) «Մի հերետիկոս»:

— Քրիստոնեական հավատո վարդապետարանի մեջ, պ. Այվազովսքին հակառակում և բուն հայոց յեկեղեցու վարդապետության:

---

* Պատմություն վերադարձի եջից վարդապետաց:

«Տպագրության սխալանք են. դրաշարը շարադրել և այն բոլոր կատները»*:

— Վո՛չ, պարոն, հեղինակի ձեռագիրը, վոր կա տպարանի մեջ վկայում է, թե դրաշարը և վոչ անգամ մի տառ փոխած է. ուստի տպագրության վերա հանցանք դնելը դրպարտություն է:

«Ո՛վ է այդ հետախույզը»:

(Պ. Այվազովսքին պատասխանում է)— Մի անհավատ:

«Վ. Հ. Սարգիսը յուր պաշտոնից ձգելու համար, պ. Այվազովսքին գրում է Աբբայինի լրտեսական նամակներ»:

— Այդ նամակները գրելու ժամանակ նա չեր ճանաչում Հ. Սարգսի արժանավորությունը**:

«Անարժանությունը ի՛նչպես եր ճանաչել»:

— Ո՛վ է այդ քննիչը:

(Պ. Այվազովսքին պատասխանում է) «Մի անբարոյական մարդ»:

— Պ. Այվազովսքին յուր դպրոցի կանոնների մեջ (§ 34)[35] դնում է, «թե վոր մեկը պատիժ կընդունի, առաջ պիտի կատարե գայն և հետո, թե վոր ասելիք մը ունի, տեսչին հասկցնե»:

«Պատիժը կրելուց հետո արդարանալու ոգուտը ի՛նչ է»:

— Այդ կանոնը կատարվելու համար գրված չե, ուստի և վոչ կիրառական***:

«Չկատարվելու կանոնը ի՛նչ պատճառով և տպվում»:

— Ո՛վ է այդ իրավաբանը:

(Պ. Այվազովսքին պատասխանում է) «Մի ապստամբ մարդ»:

«Իրավունք թողո՞ւց պ. Այվազովսքին այսուհետև յուր գործերին կամ գրածին հավատալու....»

— Անտարակո՛ւս:

«Ի՞նչպես թե անտարակուս. հունվարի սասծից հրաժարվում և վերադրվարին, մի տարի հառաջ գրված բանից հրաժարվում և ներկայումս»:

— Խե՛ղճ մարդ, վոր դեռ չգիտես, թե ճշմարտությունը որացույցի պես, տարին մի անգամ փոխվում է. հարկ դիպվածներում և ամիսը մի անգամ:

«Հասկացա, և ո՞րը քանի մի անգամ»:

— Այո՛, վո՛րքան շատ, ա՛յնքան լավ. նորա բարոյապես աճեցնում են մարդու հասկացողությունը....

(Անհևույթ սատանան) «կեցցե՛ հոգևոր վարժությունը[36]. կեցցե՛ Լոյոլան»:

---

* Պ. Այվազովսքին չրջաբերականի մեջ:

** Պ. Այվազովսքիի տալու պատասխանը:

*** Պ. Այվազովսքիի բարեկամներէ մեկ նամակագիրը դնում է պ. Այվազովսքիի բուն խոսքերը:

Առ այժմ միջոց չունինք ուրիշ բան ասելու. առ այժմ հերիքանում ենք յերկու տողով: Բայց մեր տեսածը և լսածը մեր հետ գերեզման չտանելու խոստումը տանում ենք հրապարակով: Ընթերցող հասարակությունը կարող և հավատ ընծայել մեր խոստմունքին, մանավանդ յեթե հիշե, վոր վոչ յերբեք զանցառու յեղանք մինչև այժմ կարելի հրատարակությունների մասին:

Թող պ. Ջամուռճյանը քարոզե, թե հոգևորներից դուրս փրկություն չկա, թող պ. Այվազովսքին յուր սպառնացած քննությունը սկսանե (վո՛հ, ի՞նչ սարսափ մեր համար), Հյուսիսափայլը կրկշռե նոցա արժանի պատասխանը: (sic!)*

---

* Sic! այսպե՛ս (լատ.): Խմբ.:

ՅԵՐԿԱՐԱՓՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՈՒՊԻՊ ՃԱՆԱՊԱՐՀ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ

ՋԵՐՄ ՍԻՐՈՎ,

ՆՎԻՐՈՒՄ Է

ՀԵՂԻՆԱԿԸ

ԻՄ ՔԱՂՑՐ ՅԵՂԲԱՐՔ

Կենդանության նվիրված այս փոքրիկ գործի ճակատը կենդանի մարդերի անունով ցանկացա պսակել, և այս խորհուրդով ձեզ ընծայեցի։

Մեր ազգի անցածը տխուր է, այն որերի պատմական հիշատակարաններից արտասուք է հոսում։ Մեր ազգի ներկան թշվառ է, սարկությունը և աղքատությունը բարձրաձայն խոսում են այստեղ։ Յեթե հույս ունինք ապագայի վերա, նորա յերևեցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան և ձեր վերա չի միակ հույսը։ Ի՛նչ չափով պիտի արդարացնեք այդ հույսը, դորա վկան և չափողը պիտի լինի ձեր գործը։

Մի՛ մոռնաք, վոր ձեր ապագան պիտի դատաստան կատարե ձեր ներեզմանի վերա, ինչպես դուք դատում եք այսոր ձեր նախահարց վոսկերքը։ Բայց, այն որերից բռնած վորչափ հառաջ, այնքան ծանր պիտի լինի այդ դատաստանը. աշխատեցե՛ք պայծառ հիշատակներ կտակել ձեր ժառանգներին։

Կանխահայել կարծիքները, վորպեսզի ավելի չասենք, պիտի պատերազմին ձեզ հետ, այս բնական է. բայց ատիթ կա և նոցանից ոգուտ քաղելու, ույժը չե կարելի զգալ, յեթե չկա դիմադրություն, և մրցանակը, զրժվարության չափով հարդ ունի։

Թողե՛ք մեռելներին թաղել յուրյանց մեռելները, նոցա արևը մտած է. իսկ դուք կենդանի յեք և ապագայի արշալույսը ձեր գլխի վերա չե բայվում։ Ձեր սակավաթիվ լինելը, համեմատելով պահքերի շատության, թո՛ղ չվհատեցնե ձեզ, այն մարդը, վոր զգում է յուր անձը կենդանի, պիտի հարի ձեզ, վորովհետև կյանքի հոսանքը միայն մի ընթացք ունի—դեպի հառաջ։

Հառա՛ջ... այնտեղ միայն կարող ենք հանդիպել մեր ազգի կենսանորոգ և վորոտընդոստ հարության....

Կենդանություն։

Միշտ ձեր
Սիմեոն Մաճիկյան

26 մարտի, 1862

«Իմ աշխատության գաղափարքը միայն յեզրակացություններ են, վաստերի հետևանք, նորա բանիների գաղափարք չեն, այլ կերպարանած, կենդանի կամ պատմական իրողություններ»:

Ֆեյերբախ

Հյուսիսային Ամերիկան հարավային Ամերիկայի միջից սորկությունը վերցնելու համար, ուրեմն ազատության անունով, պատերազմ բացեց հարավային մասի դեմ. քանզի այս մասը չե հոժարում վերցնել յուր միջից մարդկության նախատինքը, մարդավաճառ սորկությունը: Այն վո՛ր սիրտն և, վոր համակրություն չունի դեպի հյուսիսային Ամերիկայի այս դյուցազնական անձնազոհությունը, վո՛ր խղճմտանքն և, վոր հաշտ կարող և մնալ հարավային Ամերիկայի մինչև այժմ բռնած ընթացքի հետ:

Բայց, չնայելով այս բոլորի վերա, քիչ մնաց, վոր Անգլիան պատերազմ հայտնե հյուսիսային Ամերիկային. և թե չհայտնեց, ապա ուրեմն ակամա, քանզի հաղթությունքը, վոր տանում են այժմ հյուսիսայինք հարավայնոց վերա, շատ և շատ ծանրանում են Անգլիո սրտին:

Անգլիան ուրախ եր, մինչ, սորանից միքանի ամիս հառաջ, հարված հարվածի քամակից ընդունում եր հյուսիսային Ամերիկան:

Այս ի՛նչ բաբելոնյան խառնակություն և, կարող և մտածել մի մարդ: Անգլիան, այն ազատ յերկիրը, վորի և պսակյալ գլուխը չե կարող ժխտել վերջին սոսկականին, նորա անձնավոր ազատությունը և իրավունքը, կարելի՞ բան և, վոր համակրություն ունենա դեպի հարավային Ամերիկան, ուրախանա նորա հաղթություններով և տրտմի, յերբ հաղթահարված եր սորկություն քարոզողը, մարդը իբրև անասուն գործածողը:

«Այո՛, այո՛, այդ ազատ Անգլիան: Բայց այս չե բղխում կառավարության հաճույքից. նա սոխակված և...»

Ամերիկան պատերազմ ունի յուր մեջ, չե կարող բամբակ տալ Անգլիային, նորա բամբակեղեն ապրանքի գործարանքը վակվում են, գործարանատերքը անանկանում և անգործ մնացած բյուրավոր գործավորքը ծարանատերքը անանկանում և անգործ մնացած բյուրավոր գործավորքը սրտիկան հացի կարոտ և վերջին հուսահատության մեջ: Այսքան վնաս հա-

առաջացավ միմիայն պատերազմի պատճառով, ժամանակավորապես բամբակ չգալուց, ապա յերեն հարավային Ամերիկայի միջից ստրկությունը վերնա և բամբակի, և այլ բուսականների մշակությունը ընկնի, այն ժամանակ ի՞նչ պիտի լինին անգլիական գործարանների և գործավորների վիճակը։ Իրավո՞ւնք և այս, կամ ստրկությունը վերնալով, հիրավի պիտի ընկնին այդ մշակությո՞ւնքը, ինչպես կամին հավատացնել հարավայինք, այդտեղ չե մեր խնդիրը։ Ներկա պատերազմի այսորվա հետևանքը, մեք ընդունում ենք վորպես իրողություն։

Մեր աչքի առջև են բյուրավոր անգործ գործավորք, վոր տանջվում են սովից և վերջին ճիգն են բռնում, պատերազմելով մի ծայրացյալ ազգության հետ։

Յերևակայեցե՛ք բյուրավոր ընտանիք, վորոնց մի անդամը գործելով մի գործարանի մեջ և ստանալով շաբաթը միքանի շիլլինգ, ապրում եյին վորպես և իցե. այժմ այն գործավորը դարձած յուր չքավոր ընտանյաց մեջ չե կարող և այն միքանի շիլլինգը ճարել ընտանիքը ապրեցնելու համար։

Անգլիո մեջ վորևիցե մի ձեռնագործի ընկնելու կամ ընթացքից ղրկվելու հետ կապակից և բյուրավոր անհատների թշվառությունը։ Մի տեսակ ժապավեն, վոր առաջ գործածական եր, դուրս ընկավ սովորութենից և ժողովուրդը դադարեցավ գնելուց. սորանից ավելի ի՛նչ հասարակ բան կարող և լինել։ Բայց յեկեք նայի՛նք այս հասարակ բանի հետևանքին։ Հազարավոր խանութներ, հարյուրավոր գործարանք և բյուրավոր գործավորք մըներացին դարձյալ անգործ, անհաց, անտուն և անտեր։

Բողոք բողոքի քամակից, վորի՞ ընդդեմ, ո՛վ ինչ կարող և առնել։ Ժողովքներով վճռվեցավ, վոր յուրաքանչյուր պատվավոր կին հոժարակամ դնե այդ ժապավենից միքանի գազ ամենևին պիտանաբար, մի միայն թշվառ գործավորներին ոգնելու խորհրդով։ Ստորագրություն բացվեցան, այո՛, և շատ դումար հավաքվեցավ, բայց այդ շատը, համեմատելով աղքատ և սոված բազմության հետ, շատ աննշան եր և չնչին. թերևս յերեք հնար լիներ յուրաքանչյուրին տալ վոչ միայն միքանի շիլլինգ, այլ տասնավոր լիբրեներ, այսուամենայնիվ, փրկություն չեր։

Ծառի տերևի վերա ջուր թափելը արմատի չորության չե ոգնում. տերևքը ստանում են մի րոպեյական զովություն և այնչափ միայն։

Այսպես և այն խեղճ գործավորքը, իբրև շնորհք, ստանալով միքանի շիլլինգ մի անգամ, մինչ դեռ հարցը և ապրուստը հարկավոր և ամեն անգամ։

Ֆրանսայի մեջ, Լիոն քաղաքում, նույնպես փակվեցան միքանի գործարանք. գործավորներին հանդիպեցավ դրեթե նույն ճակատագիրը, ինչ վոր Լոնդոնում. ամենայն տեղ ստորագրություն ստորագրության քամակից, այդ աղքատներուն ոգնելու համար. նույնիսկ Գառիբալդին առաջարկեց Իտալիո մեջ մի հանգանակություն։

Այս տեսակ աղքատություն, որ ուրիշ աշխարհի մեջ ներևս այնքան զարմանալի չէ, բաների վերա վեր ի վերո նայողների և միայն արտաքին կեղևը քննողների համար. իսկ Անգլիո և Ֆրանսիո մեջ զարմանալի: Բայց որ սովորել և խնդիրը քննել, քրքրելով նորա բոլոր ծնուցիչ պատճառքը, նա տեսնում է, որ միմիայն Անգլիո մեջ և ըստ մասին Ֆրանսիո մեջ կարելի չէ այդպիսի աղքատություն:

«Անգլիան հարուստ է, վոչինչ տերություն այնքան արծաթ և վոսկի չունի, ամենին փոխ է տալիս, ինքը բնավ նեղություն չունի, և այլն, և այլն»: Հազարավոր գովեստներ, բյուրավոր յերանիներ լսած ենք հարյուրավոր անգամ. նույնը գրեթե և Ֆրանսիո վերաբերությամբ: Բայց հարկավոր է իմանալ, որ տերությունքը ազգ չեն, և տերությանց շահը, ազգի շահի հետ բնավ վերաբերություն չունի, քանի որ տերությանց կազմությունը այնպես է, ինչպես որ կան այսոր:

Թե ի՛նչ է տերությունը, այդ մասին մի ուրիշ ժամանակ. առ այժմ այսչափ միայն, որ անգլիական ազգը ամեն ազգից աղքատ է և ամեն ազգից ավելի վատանգի յենթակա:

— Ի՞նչպես,— կըհարցնեն մեզ ընթերցողք: «Շատ հասարակ կերպով», կըպատասխանենք մեք: «Ազգ ասելով պիտի իմանալ հասարակ ժողովուրդը և վո՛չ նորա միջից, նորա քրտինքով և նորա արյունով հառաջացած միքանի մեծատունք: Բրիտանիո, Իրլանդիո և Սկովտիո մեջ գտնվում է 29,307,199 հոգի բնակիչ, վորոնց մեջ հարյուր հիսունի չե հասնում հին ազնվական, այսպես անվանված, անգլո-սաքսական տուների թիվը, միլիոնավոր չեն վաճառական տուների թիվը. ասել է թե այն միլիոնները բաղկացնողը և հասարակ ժողովուրդը, ուրեմն և ազգի թե բարոյական և թե նյութական կարողության յերևեցույչը: Յերթե ասենք, թե Անգլիան հարուստ է, և Անգլիա ասելով հասկնանք կառավարությունը և ազնվականությունը, այդ մի այլ խնդիր է և այն ժամանակ վերագրյալ հարստությունը չե վերաբերվում անգլիական ազգին, այլ կառավարության և ազնվականության, վոր Անգլիա չեն, վորովհետև մինը անգլիական կառավարություն է, իսկ մյուսը անգլիական ազնվականություն: Այն ժամանակ միայն, ասուգապես, կարող ենք ասել, թե Անգլիան հարուստ է, յերբ այն միլիոնները բաղկացնող անհատների մոտ տեսնինք վորևիցե նյութական կարողության նշմարանք: Ի՛նչ աղբյուրներից կարող է հանել հասարակ ժողովուրդը յուր, չասենք հարստությունը, այլ ապրուստը. և ապրուստ հավաստի, մշտնջենական և վոչ առորյա: Հասարակ ժողովուրդի համար, ուղղակի, և մնացած մասին համար անուղղակի, բայց և այնպես անհրաժեշտ, ինչպես ջուրը ձուկի համար, միակ աղբյուր ապրուստի և հարստության է յերկրագործությունը: Յերբ վոր մի ազգ կազմող անհատների մեծագույն մասը պարապի յերկրագործությամբ և առհասարակ գյուղական տնտեսությամբ, այն ժամանակ, այդ ազգի ընդհանրությունը հարուստ է և ապահովյալ. վորովհետև նորա հիմքը դրված է բնականապես և բնության վերա: Յեվ

այս պատճառով, փոքրագույն մասը, որ չէ պարապում ձեռքրագործությամբ, կարող է հավասար լինել, որ հազիվ պիտի կարողանա մշակել, շինել, գործել և վաճառել այն, ինչ որ դուրս է բերում գետնից նորա մեծագույն մասը։ Ազգի մեծագույն մասը ձեռքրագործությամբ ապահովյալ է. և անհնար է թե նեղության պատահի, ապրուստի կողմից։ Փոքրագույն մասը, որ բաղկանում է վաճառականներից, չէ կարող անգործ մնալ, քանի որ մեծագույն մասի արդյունքը սպասում է նորա կամ մշակության, կամ վաճառականության, և որևիցե մի դժբախտ դիպվածում այդ փոքրագույն մասից ամենափոքրագույն մի մասը միայն կարող է ենթարկվիլ առորյա և անցողական նեղության, քանզի ազգի հիմքը դրված է ձեռքի մակերևույթի վերա և կախված չէ ոդի մեջ։ Չկա մարդ, որ չխոստովանի այս ճշմարտությունը և նույնիսկ Անգլիո մեջ. բայց այստեղ է խնդիրը, ձեռքրագործի համար ձեռնիր է հարկավոր գործելու, որ Անգլիո մեջ չունի հասարակ ժողովուրդը։

Անգլիական ձեռնիրները ազնվականների մասնավոր սեպհականություն են. հասարակ ժողովուրդը մի հատ ցից գարկելու հող չունի։ Լոնդոնի, այն հսկա քաղաք-աշխարհի հողը յոթն ազնվական տան սեպհականություն է, որոնց առաջինն և թագավորական տունը։ Հասարակ ժողովուրդը յուր ձեռքից ավելի բան չունի. նա բնակվում է ազնվականների հողի վերա և վարձ է վճարում հողի տիրոջ։ Հասարակ ժողովուրդը հող չունենալով չէ կարող ձեռքրագործությամբ պարապիլ. այն միլիոններըը, որ բնակվում են Անգլիո մեջ, որական աշխատող, վարձկան մշակներ են, ծառա և գործավոր։ Այդ միլիոնավոր բազմության միջից այն մարդիկը, որ դրամագլուխ ունին, վարձում են մի որևիցե ազնվականի հողը, վարձում են հազարավոր մշակներ և գործում են ձեռքիրը. ահա են ֆեռմեր ասացյալքը։ Վարձկան-ձեռքրագործ մշակները կախված են յուրյանց ֆերմերից, քանզի ձեթե սա գլանա գործ տալ նոցա, մշակը պիտի սովամահ մեռնի. ո՞ւր գնա և ի՞նչ գործե. իսկ ֆերմերքը յուրյանց կարգով, կախված են այն ազնվականներից, որոնց հողը ունին յուրյանց ձեռքում, թեև վարձու։ Ազնվականը, այսոր ձեթե կամենա, կարող է ասել ֆերմերին, «այսչափ ժամանակ գործեցիր և մշակեցիր իմ հողը, ինձ հասուցիր այսքան վարձ, շնորհակալ եմ, այսուհետև չեմ կարող իմ հողը տալ քեզ, ինձ հարկավոր է, մի ուրիշ տեղ ճարիր քո համար»։ Յեվ ֆերմերը և նորա հազարավոր մշակները, որ այնչափ տարի ապրում եյին այն հողի վերա, վոչինչ ունին ասելու ազնվական պարոնին. ընտրություն չկա, պիտի հնազանդվիլ ճակատագրին։ Այս պատճառով, շատ հող ունեցող ազնվականը ունի յոթ քամակում շատ ֆերմեր, հետևաբար և շատ ժողովուրդ։ Ո՞վ չգիտե հողի մեծ պաշտոնը նաև մինիստրերի ընտրության ժամանակ։ Այսինչ ազնվականի հողի վերա բնակվում է այսքան մարդ, և մինիստրի ընտրություն կա մեջտեղում. այդ ազնվականի հողը մշակող բազմությունը

յեթե այն ազնվականի անունը չկոտա, վաղը հող չունի, վոր հավասար և ասելու, վաղը հաց չունի։ Անգլիո տնտեսական դերությունը, մանավանդ բաղդատելով նորա, այլ ճյուղերում ունեցած, ազատ որենսդրությանց հետ, զարհուրելի չե։

Յերբ տերությունը պետք ունի, յերբ պատերազմ ունի, շատ անգամ յուր մասնավոր հաճույքի կամ մինիստրի անձնական հարաբերության պատճառով հառաջացուցած, վորից հասարակ ժողովրդի— ազգի համար չկա վոչ ջերմություն և վոչ սառնություն, տերությունը դառնում է դեպի ազգը, ազնվականը դիմում է դեպի յուր հողի վերա բնակվողները, կարդում է ճառեր, բորբոքեցուցիչ հորդորներ, «ա՛զգ, զինվոր տո՛ւր, ա՛զգ, դրամ տո՛ւր, ա՛զգ, կյանքդ տո՛ւր քո հայրենիքը պահպանելու և նորա պատիվը տեղը բերելու կամ առավել ևս փառավորելու համար»։ Յեվ խեղճ ազգը կրում է ծանր հարկեր, զոհում է յուր առույգ զավակները թշնամին վանելու համար. վոգևորվում է հաղթությամբք, տաղեր է յերգում, և գործը ավարտելուց հետո ուրախ-ուրախ վերադառնում է յուր տեղը, կարծելով և հավատալով, թե մեծ գործ կատարեց, հայրենիքը փրկեց, հողը փրկեց և պատիվը պահեց։ Սորանից ավելի կոպիտ և խաղոր հեգնություն մեք չենք կարող յերևակայել։ Հասարակ ժողովուրդը դառնում է յուր բնակարանը և դարձյալ պիտի հարկ տա ազնվականին այն հողի համար, վոր գործում և և վոր ազատելու համար գնաց արյուն թափեց, խեղացավ, ջարդվեցավ, վորդին, յերբայրը կամ հայրը զոհեց։ Ազնվականը հայրենիքի հողից բաժին ունի բյուրավոր մղոններ, իսկ հասարակ ժողովուրդը չունի մի վոտնաչափ տեղ։ Այս պայմանների վերա կարելի՞ չե, վոր յերկրագործությունը դառնա անգլիական կյանքի հիմքը։

Անգլիական ազգի այդչափ սարսափելի մեծությամբ վաճառականությունքը, ձեռագործությունքը, մեքենաները, վոր այսոր գրեթե դարձել են նորա բնավորության հատկությունքը, ամենևին պատահական չեն, այլ հառաջանում են նորանից, վոր հասարակ ժողովուրդը հող չունի։ Վորովհետև բնականը չկա, հարկը ստիպում է արհեստականով լցնել նորա պակասը։ Անգլիական ազգի այն ահավոր գաղթականությունքը, Ամերիկա, Ավստրալիա, Հնդկաստան, զանազան կղզիներ, բնականապես և գլխավոր աբար, հառաջանում են դարձյալ Բրիտանիո մեջ հասարակ ժողովրդի հող չունենալուց։

Բայց այժմ, բյուրավոր գործավորների այս ներկա թշվառության մեջ, ավելի սաստկանում է գաղթելու կարոտությունը. և պիտի գաղթե նա, վոր չկամի սովամահ մեռնիլ և մեռցնել յուր ընտանիքը։ Մի գործունյա մարդ, անդամ վորևիցե ստրկացած ազգի, թող այսոր առաջարկե Անգլիո մեջ վորևիցե ստրկացած ազգի, թող այսոր առաջարկե Անգլիո մեջ անգործ և հուսահատ գործավորներին և ասե, «Յեղբա՛րք, աճապարեցեք յերկրագործելի այս ինչ կետի վերա յես ունեցի յերբեմն հող և ազատություն, վոր հետո ավազակները կողոպտեցին ինձանից, յեկե՛ք գնանք այնտեղ

հետևյալ պայմանով։ Ձեզանից յուրաքանչյուր գնացող սիտի ղենք ունենա յուր ձեռքում և հարկ դիպվածում պատերազմ սիտի մղե, իմ հետ հավասար, յերկիրը ավազակի ձեռքից ազատելու համար. այս պահանջում եմ ձեզանից։ Իսկ սորա փոխանակ, յես իմ ազգի անունով խոստանում եմ ձեզանից յուրաքանչյուր ղենքով գնացող անհատին այնչափ հող, վորչափ վոր ինձ կամ իմ ազգի յուրաքանչյուր անհատին սիտի բաժին ընկնի։ Խոստանում եմ ձեզ, վոր դուք հավիտյանս հավիտենից կարո՛ղ եք մշակել և գործել ձեր բաժին ընկած հողը, առանց վաճառելու կամ գրավ դնելու իրավունք ունենալու. քանզի յես և իմ ազգի յուրաքանչյուր անհատը նույնպես չսիտի ունենա գրավ դնելու կամ վաճառելու իրավունքը»։ Մի այսպիսի գործունյա մարդ, այսպիսի առաջարկությամբ, կարող և հազարավոր կամավոր զինվորք դտնել Անգլիո մեջ, և այն ինչպե՛ս զինվորք։ Զինվորք, վոր քաջ տեղյակ են յերկրագործության, գյուղական տնտեսության և այլ ամենայն տեսակ ձեռագործական արվեստների, վորչափ վոր մինչև այժմ մարդկային բանականությունը հառաջացուցել և Յեվրոպիո մեջ։ Այս լոկ խոսք չե, այլ ամենայն ուշադրության և ընդունելության արժանի։

Յեվ վաճառելու կամ գրավ դնելու իրավունք չունենալը բնավ չե կարող վշտացնել նորան կամ հետ կացնել գործից, յեթե կերպարանագործես նորան պայմանիդ խորհուրդը։ Յեվ այսպես, դնենք թե խոսում ենք մի այդպիսի դժբախտ գործավորի կամ անհող յերկրագործի հետ։

— Կըգամ,— ասում է նա,— և ղեն ի ձեռին, քեզ հետ, քո թշնամու ընդդեմ կըպատերազմիմ...

«Յեվ իմ հավասար իրավունք և արտոնություն կունենաս այն հողի վերա, վոր պիտի ազատենք», ընդհատում եմ յես նորա խոսքը։

— Բայց դու պայման դրեցիր, վոր գրավ դնելու կամ վաճառելու իրավունք չպիտի ունենանք։

«Այո՛, մեր ոգուտը պահանջում է այդ»։

— Ի՞նչպես։

«Լսի՛ր. յեթե կամենում ես գեղի մեջ բնակվիլ, ապա ուրեմն մյուս գեղացիների չափով կստանաս քո բնակության, առունին պարտիզի, անասնոց գոմի և այլ կարևոր բաների հարկավոր յեղածի չափ հողի քանակություն, վորի վերա կշինես քո բնակությունը, վերասաց պարագաներով։ Իսկ թե քաղաքում կամենում ես բնակվիլ, նույնպես, մյուս բոլոր քաղաքացիների չափով հող կստանաս տուն և բնակության հասատատելու համար։ Յեվ այս յերկու դիպվածում, այսինքն, թե գեղում և թե քաղաքում, քեզ տրված հողը, վորի վերա շինություն թե արել ես և թե վոչ, ազատ ես, կամեցածիդ պես, գրավ դնել, վաճառել, ընծայել, ի վերջո, դու նորա անսպայման տերն ես, և դորա վերա խոսելիք չկա։ Իսկ խոսելիքը վերաբերվում է դաշտային հողին, ուր պիտի ընթանա յերկրագործությունը։ Պիտի իմանաս, վոր գեղի և քաղաքի

յուրաքանչյուր անդամը հավասար չափով իրավունք պիտի ունենա մի վոլոշյալ քանակության հողի մշակելու և գործելու։ Յեվ այս իրավունքը պիտի տևե այնքան, վորքան նա, կամ նորա սերունդը պիտի բնակվի այն հողի վերա։ Յուրաքանչյուր քաղաք, յուրաքանչյուր գեղ պիտի ունենա յուր հատուկ հողը, վոր պիտի սեպհական մնա քաղաքի կամ գեղի հասարակության։ Քաղաքի կամ գեղի բնակիչքը հավասար իրավունքով ազատ են յուրյանց բաժինը գործել և մշակել, քանի վոր գտնվում են այն գեղում կամ այն քաղաքում։ Յեվ յեթե դու, լինելով քաղաքացի, զբաղված լինելով վաճառականությամբ կամ այլ գործերով, չկամիս կամ ձեռնհաս չես քո բաժին ընկած հողը մշակելու, կամ մարդիկ վարձելով մշակել տալու, այդպիսի դիպվածում կարող ես վարձու տալ և այդ կերպով ոգուտ քաղել քո հողից։ Յեթե հող վաճառելու սկզբունքը ընդ այլ արվի, այն ժամանակ աղքատության և թշվառության սկզբունքը կընդունվի։

Կարող է պատահել, վոր վոմանք մարդիկ կամ ժառանգաբար, կամ յուրյանց աշխատությամբ, ավելի հարուստ լինելով, իսկ վոմանք մարդիկ կամ յուրյանց ծուլության պատճառով կամ մի դժբախտությամբ, աղքատ լինելով, աղքատը կվաճառե հարուստին յուր հողը, կմնա անհող և կզրկե յուր սերունդը ևս այն հողի վերա իրավունք ունենալուց։ Ապա յեթե մի գեղի մեջ, 100 տարու միջոցում, հողերը, աղքատից հարուստին վաճառվելով, գեղի հասարակության սեպհական նշանակված հողի քանակությունը անցնե քսան մարդու ձեռք, ասել է թե բովանդակ գեղացիք պիտի վարձ վճարեն այն քսանին, հողը մշակելու և գործելու իրավունքը ձեռք բերելու համար, քանզի ինքյանք վաճառած լինելով, հարկ է վոր և գնեն։ Իսկ յեթե 200 տարու միջոցում այդ քսան տերը դառնա յերկու կամ մի, այդպիսի դիպվածում դարձյալ նույն թշվառությունը չե՞, ինչ վոր այժմ ունինք Անգլիո մեջ, նույն մոնոպոլեոնը չե և հետևանքը հողատիրոջ տարապայման հարստության, իսկ անհող շինականաց տարապայման աղքատության չե՞ լինելու։ Այո՛, փորձերը ուսուցին ի վերջո, և առորյա ապրուստի կարոտությունը ստիպում է մի փոքր խելացի լինել։ Հողը պատկանում է հասարակության, վորի ամեն մի անդամ հավասար իրավունք ունի հավասար քանակության վերա, հավիտյանս ժամանակների. և մի կողմից վաճառելու իրավունք չունենալով, իսկ, մյուս կողմից, առանց արգելքի հողը գործելու և արդյունավորելու իրավունքը անկողոպտելի պահելով, այդ հասարակության անդամը և նորա սերունդը հաստատում է յուր կյանքը մի ամուր և ապահով հիմքի վերա. և անհնա՞ր է, վոր նա կամ աղքատության հանդիպի կամ իսպառ կարոտ մնա»[4]։

Մեք վկայում ենք, վոր այս պայմանը ծնրադրությամբ կընդունին, քանզի ստ՛ըբ է, քանզի մարդկայի՛ն է, քանզի արդա՛ր է։

Այժմ հարցնում ենք, հարո՞ւստ է անգլիական ազգը, յեթե միքանի գործարան փակվելով, կամ մի ժապավեն գործածությենից դուրս ընկնելով

բյուրավոր մարդիկ և բյուրավոր դերդաստանք, դառն աղքատության հետ պատերազմելով, կարող են սովամահ կորսվիլ։ Հարո՞ւստ և ֆրանսիական ժողովուրդը, յեթե մի քաղաքում միքանի դործարանք փակվելով, մի ահագին բազմություն դործավորների կդատապարտվի դեպի մուրացկանություն.... Չե՛, հարուստ չե, ասում ենք, և այն, դրականապես։ Վորևիցե աղքատ համարված ազգ, յեթե ունի մի կտոր հող, ապահովել և յուր կյանքը. մինչդեռ անգլիական դործավորը, վոր ապրում և այսոր, չգիտե թե վաղը պիտի հնար ունենա՞ ապրելու թե վոչ. քանդի չգիտե, թե պիտի շարունակե՞ դործարանը յուր դործը, վոր և նա աշխատելով ստանա միքանի շիլլինդ և հոգա յուր ընտանիքը։

Ի՞նչ հարկավոր և մեզ աղնվականների անհուն հարստության տեր լինելը, ի՞նչ հարկավոր և մեզ անգլիական դրամանոցի հսկայությունը, ի՞նչ հարկավոր և անգլիական կառավարության դրամի կարոտ չլինելը, կամ ուրիշներին փոխ տալը*, մինչդեռ միլիոնավոր ժողովուրդի կյանքը կախվում և բամբակից և ժապավենից։ Համաձայնեցե՛ք, վոր այդ յերկուքը ևս չունին այն հարատև ուժը, վոր կարողանան պահել և դիմանալ միլիոնավոր դերդաստանների ծանրության։ Յեվ մինչ, բնականաբար կորվում են, և ահա վողբ, աղաղակ, տառապանք, սով և մահ։ Վաճառականությունը և արվեստը անհրաժեշտ են և մեծապես պատճառ ազգի հարստության, բարորության և յերջանկության, յեթե ազգի փոքրագույն մասը պարապում և նորանով, յեթե մյուս մեծագույն մասը ամուր նստած և հողի վերա և գործում և նորան։

Այն ազգը, վոր չունի հող և յերկիր, յերբեք չհուսա, վոր պիտի հարըստանա. այդ անբնական մի բան և և դորան հուսալը խելագարություն։ Թո՛ղ բնավ չհուսա, վոր առաջ հարստանա և հետո յերկիր ձեռք բերե. այդ լինելու չե։ Նախ, վոր հարստությունը, վոր յեթե կա այդ ազգի մասնավորների ձեռքում, կամ վաճառականությունը, վոր յեթե վաճառականություն և... հիմք չունի, այլ, իբրև պատահական մի բան, յենթակա յե պատահարների ազդեցության։ Յերկրորդ, վոր հող և յերկիր ուրեքար ձեռք բերելու նպատակը և խորհուրդը փառք չե, պատիվ չե, դոքա յերեխայական դաղափարներ են, այլ հնար դտնել յուր կյանքը և գոյությունը ապահովելու համար։ Յեվ հավատացե՛ք, վոր վաճառականությունը և արվեստը վորչափ վոր ծաղկին, թե և առանց յերկրագործության չկա և վաճառականություն**, վորչափ վոր մասնավոր մարդիկ միլիոններ դիզեն, այսուամենայնիվ յենթակա յեն բամբակի և ժապավենի ազդեցության։ Մի մրրիկ, մի փոթորիկ, և.... գնա՛ տխրադեմ ցնցել դատարկ քսակները, վորոնց մեջ լցված եյին յերբեմն վոսկին և արծաթը։

---

* Անգլիական կառավարության պարտքը, Եվրոպական Անգլիո անունով, դուրս ված թղթերով, մինչև 1860, մարտի 1.—802·190,295 լիրբե սահլինդ։ Հնդկաստանի պարտքը նույնպիսի թղթերով, Հնդկաստանի և Անգլիո մեջ 80,453,765 լ· ս.։

** «Յեվ առանց ազատ հողի չկա յերկրագործություն»։ (Հեղինակին ականջն լ վայլ անհրևույթ սատանան)։

Տնտեսական խնդիրը միակ խնդիր է մարդու կյանքը և գոյությունը ապահովելու համար. և վորշափ ծանր արժեք ունի այս խնդիրը, վորշափ մարդը անքակտելի կապված է նորա հետ, այնքան դժբախտ է յեղել այդ խնդրի ճակատագիրը: Նա դարձել է մի քար, վորի վերա մարդը քանի՛ և քանի՛ անգամ գայթակղեցավ:

Վերջին անգամ գոռաց նա, «կեցցե՛ ազատություն, կեցցե՛ հավասարություն, կեցցե՛ յեղբայրություն»:

— Կեցցե՛, կեցցե՛,— հնչեցին ամեն կողմից բյուրավոր արձագանք:

Պատնեշներ շինեցին, փողոցների սալահատակները կողոպտեցին, աղաղակ, խռովություն:

«Ի՛նչ բանի վերա յեք»:

— Չես տեսնում. ազատություն, հավասարություն, յեղբայրություն, կեցցե՛:

«Կեցցե՛, կեցցե՛»:

— Թո՛ղ կենան, թո՛ղ ապրին ողի մեջ,— ասաց մինը, վորի աչքերը ավելի հեռատես եյին:

«Ի՞նչպես, թշվառական դու... վայրկյանի մի... և շան սատակ կլինիս հարվածիս տակ, յերթե կեցցեներ չգոռաս»:

— Կեցցե՛, կեցցե՛:

«Այո, այդպես. կոպիտ... անկիրթ... Մինչև այժմ չե՞ս հասկացել, վոր աշխարհը լուսավորել և և չե կարող այլևս բռնության տանել...»

— Մի՛ բարկանար, աղաչում եմ, մի հարցմունք...

«Այժմ կեցցեյից ավելի ուրիշ բան չե կարելի խոսել. կեցցե՛»:

— Կեցցե՛— ասաց խեղճ մարդը և հեռացավ հրապարակից:

Տարին չորս յեղանակ ունի, իսկ մարդկային կյանքը բյուրավոր չորսեր: Այն որերը լոկ կեցցեյի յեղանակ եր, և ուրիշ բանի վերա խոսողը մահի պարտավոր:

Մի քանի որից հետո, յերբ արդեն ազատությունը, հավասարությունը և յեղբայրությունը նստել եյին արքայական գահի վերա, յերբ բոլոր փողոցները և տունները, մինչև անգամ այս անբան գույությունքը, կարմիր ներկերով և խաղող տառերով, անբարբառ, գոռացել եյին բյուրավոր կեցցեներ, յերկու մարդ հանդիպեցան միմյանց մի անկյունում:

«Վողջույն»:

— Վողջույն:

«Քանի ժամանակ է, քեզ տեսած չեյի, բայց ասես թե խելք կա՞ր գլուխներս, վոր միմյանց պատահեյինք, քանի վոր յերեսի վերա մնացած ազգը փրկելու և գերությենից ազատելու հետ եյինք զբաղած: Բայց — ազգը փրկելու և գերությենից ազատելու հետ եյինք զբաղած: Բայց — ինքնաբավական կերպով հառաջ տարավ խոսքը,— պիտի իրավունք տալ ինքնաբավական կերպով հառաջ տարավ խոսքը,— պիտի իրավունք տալ մեզ, վոր կորիճի պես գործ կատարեցինք և մեր դարավոր ցանկության, վերջապես, հասանք»:

— Ի՞նչ շինեցինք։

«Ավելի ի՞նչ կամիս», և տհաճությամբ կրկնեց այն ճակատագրական յերեք խոսքերը։

— Ա՛յդչափ միայն։

Խոսակիցը զարմանում եր սորա բթամտության վերա, և դրեթե ատելության աչքով նայում եր դեպ հոդիլ նորա աչքերի մեջ։

«Ինչո՞ւ այդպես շփոթում և և խոսվում ե՞ք խաղաղությունը իմ պարզ հարցմունքս և կամենում ես բռնակալ հայացքով պապանձեցնել լեզուս, մինչդեռ ասում ես, թե ձեռք բերածներիս միևը ևս ազատություն ե։ Թո՛ղ, դեթ խոսքով ոգուտ քաղեմ այդ արտոնութենից»։

Խոսակիցը վայրկյան մի շփոթեցավ և, իրավը պետք և ասել, խղճի խայթ ևս զգաց, ազնվաբար, վոր հին ժամանակների վերա գնալով և մոռնալով ազատության բագավոր նպատակը, վամեցավ, մի ակնթարթ, բռնանալ խոսողի կարծիքի վերա։

— Ասա՛, յեղբայր, ասա՛, ինչու չե. յես պատրաստ եմ քեզ լսելու։

«Ուրեմն, ազատություն, հավասարություն և յեղբայրություն, այնպես չե՞, բուն իսկ բարոյական և բնական սկզբունք»։

— Ճիշտ այդպես, ինչպես յերկու անգամ յերկուքը չորս։

«Շատ բարի. բայց, ասա՛ խնդրեմ, ազա՞տ եմ յես, միմիայն որենքով, քաղաքականապես ազատ կոչվելով, ազա՞տ եմ յես, քանի վոր նյութական կարոտությունը ստիպում է ինձ, կամա ակամա, մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ծառայությամբ հաց ճարել իմ ընտանիքի համար։ Ազա՞տ եմ յես, յեթե տեր ունիմ, վորին յեթե իմ ազատությունը հայտնեմ բացարձակապես, պիտի զրկեմ ապրուստից և ինձ և իմ ընտանիքս, ծառա լինելուց դադարելով, և այս բոլորից հետո ազա՞տ եմ յես... յերևակայությա՞ն մեջ, թե՞ ոդի մեջ»։

— Այդ ի՞նչ վտանգ է, աշխարհը ինչպես կարող է կառավարվիլ, յեթե չինի նյութի և աշխատության փոխադարձ հատուցում։

«Բայց յես մոռացում եմ, վոր կարող է և մանավանդ յերջանիկ, յեթե աշխատությունը բռնադատական չե, այլ կամայական, յեթե նա աշխատություն է և վոչ ծառայություն, յեթե մարդկային իրավունքները անխտիր հավասարաչափ են և վոչ մինինը ավելի, իսկ մյուսինը պակաս»։

— Պարոն, հավասարությո՞ւն, մոռցա՞ր...

«Չեմ մոռցել, բայց չկա»։

— Ինչպես թե չկա։

«Շատ հասարակ կերպով։ Յես և դու հավասար իրավունք ունինք, իբրև հայրենիքի հավասար վորդիք, այնպես չե՞»։

— Այո՛, ամենևին այդպես։

«Ուրեմն արդարություն չկա։ Յեվ դուք պիտի համաձայնիք, վոր կա՛մ հավասարություն չկա, կա՛մ արդարություն, վոր իրավունք առնե մեր հա-

վասարության իրականացնես, քանի վոր հավասարությունը, իբրև լոկ խոսք, հնչում է միայն ողի մեջ և քանի վոր իրական անհավասարության հետևանքը շինում է ինձ ազատ-ստրուկ»։

— Չեմ հասկանում։

«Կհասկնաս, և, այս րոպեիս։ Վո՛րքան հող ունես դու»։

— Հարյուր հազար քառակուսի գազ...

«Ե՞ս վորչափ ունեմ»։

— Չգիտե՞ս վոր չունես։

«Հըմ. դու հայրենիքի վորդի՞ չես»։

— Այո՛։

«Ե՞ս»։

— Նույնպես։

«Հայրենիքի բարիքը և ծանրությունը հավասարաչա՞փ պատկանում են մեզ»։

— Այո՛։

«Ուրեմն, ի՛նչպես հավասարություն է այս. դու ունես այսչափ հող, իսկ չես վոչինչ, քո բաժին միայնակ վայելում ես հայրենիքի բարին, իսկ չես քո հավասար կրում եմ միայն ծանրությունը։ Բաժի՛ն տուր ինձ քո հողից, մեք մի հայրենիքի վորդիք ենք, յեղբայր ենք։ Ինչպես քեզ հարկավոր է ապրուստ, նույնպես և ինձ, ինչպես դու կրում ես հայրենիքի բեռը, նույնպես կրում եմ չես։ Բաժի՛ն տուր ինձ քո հողից, այն ժամանակ չես չեմ աշխատելու բռնի. չես կդգամ ինձ ազատ, մեր իրավունքները կհավասարվին, և ճշգրիտ յեղբայրությունը չերևան կելնե»[5]։

— Հողը իմ սեպհականությունս է...

Խոսքը բերանը մնաց։ Այն կողմից կտրիճի մինը, չերկաթի տրամաբանությամբ, հարվածը իջեցուց նորա գլխին։

«Սեպհականությունը գողությո՛ւն է»[6], ասաց նա այրական ծանրությամբ և կանգնեցավ։

Սեպհականությունը այն բանի, վոր, առանց մեր աշխատության, բնությունը դնում է մեր առջև, գողություն է, ավազակություն և հափշտակություն, յերեք մինը առնու հարյուրավոր, հազարավոր, իսկ մյուսը ամենևին վոչինչ։ Այլ խնդիր է աշխատությամբ ձեռ բերված այն բանը, վոր բնությունը չի պահում յուր գոգում, վոր բնությունը չի պատրաստում, անմիջապես, վոր մարդը արվեստական ճանապարհով և պատրաստել և ի վերջո վորի արժեքը պայմանական է, մի խոսքով դրամը, վոր մարդը վաստկել է։ Բայց հողը նա չէ վաստկել, հողը նա չէ շինել, հողը բնությանն է։

— Պարոն, չափդ ճանաչիր, չես գող չեմ, չես հողը չեմ հափշտակել, չես ձրի չեմ առել, դրամով է գնել իմ հայրս, իմ պապս։

«Ինձ ի՛նչ փույթ։ Բռնակալությունը, վոր նույնն է թե ավազակություն, վաճառել է քեզ հասարակաց ազգի սեպհականությունը։ Վոչ նա իրավունք

ուներ վաճառելու և վոչ դու իրավունք ունեիր գնելու. նա՛ դող և և դու գողակից, վորովհետև յերկրագունդը անհատի սեպհականություն չե, նորա վերա ապրում են և պիտի ապրին բոլոր նորա վորդիքը անխտիր»։

— Բայց, յեթե յես իմ հողը կիսեմ քո հետ, յես կքանդվիմ, յես մինչ ցարդ ապրում եմ նորանով. ի՛նչ կլինի հետո իմ ժառանգների և իմ սերունդի վիճակը, յերբ իմ հողի քանակությունը փոքրացրել եյի։

«Դու մտածում ես քո ապրուստի համար, աչքիդ առջև ունիս քո ժառանգների և քո սերունդի ապագան, իսկ յես, վոր վոչինչ ունիմ, ինձ ապրուստ պետք չե՞. իմ ժառանգները և իմ սերունդը, վոր ինձանից հետո վոչինչ ստանալու չեն ինձանից, ապրելու չե՞ն։ Բայց դու կքանդվիս, այսինքն, քո ավելորդը կչափավորվի, վորի հաշվով իմ պակասորդը կլցվի, սակայն մի՛ մոռնար, վոր քո ցեղը մինչ ցարդ վայելել և այդ հողը, իսկ իմ ցեղը միշտ զուրկ և մնացել նորանից։ Այսօր դու կքանդվիս, բայց վաղը մեր յերկուքի սերունդը կհավասարվին. այսօր քո կարողությունը կչափավորվի, բայց, դորա փոխանակ, իմ ամբողջ սերունդը չե պիտո այլևս մահու և կյանքի մեջ տատանի, մի վոտնաչափ հող չունենալով»։

Մարդը հառաջացավ մինչև այստեղ և կարծում եյիր, թե ահա շոշափում և նա յուրյան հարկավոր առարկան.... կստանա նորան.... բայց չե. ստանալը այնպես դյուրին չե, վորովհետև մարդը դեռևս տղա յե։ Գայթակղեցավ նա այս գայթակղության քարի վերա և դեպի ձախ, շրջան հառաջ, ծռեց պատմությունը յուր ուղիղ ճանապարհից։

Ազատությունը, հավասարությունը և յեղբայրությունը յուրյանց հիշատակը թողեցին միքանի վոսկիների վերա. պատերի վերայի կարմիր գրերը դատապարտվեցան մնալ մի սպիտակ ներկի տակ։

— Կեցցե՛ մահ։

Այս եր վերջին խոսքը, վոր լսվեցավ։ Յեվ խեղճ մարդը, վարատական և անհող, հարկադրվեցավ դարձյալ յուր որական հացը ճարել տոլկանալով ուրիշին։

Բռնակալությունը, յեթե նորա յերևեցույիչը մի անհատ և, թո՛ղ լինի այն անհատը Ներոն, Կալիգուլա կամ Նոցատ աշակերտ մի պոլիտիկական ավազակ՝, բնավ սարսափելի չե. քանզի այն անհատի հետ գերեզմանը կիջնե։ Բռնությունը, յեթե նորա յերևեցույիչը մի ժողով և, մի ծերակուտ, մի հրեական սինեդրիոն, նույնպես, զարհուրելի չե. ցրվեցիր ժողովը, կործանեցիր նորա տաճարը, և ահա ամենայն բան կընթանա, ինչպես յուղած ճախարակ։ Բռնությունը աննկարագրելի և անթարգմանելի կերպով կատաղի յե, կամակոր և յերկարատև, յեթե աղքերանում և հասարակ ժողովրդի ընդունած սկզբունքից։ Մի հարատև բռնակալ կառավարություն, մի ազգի մեջ, ուրիշ բան չե, յեթե վոչ այդ ազգի հոգու յերևեցույիչը։ Շատ անգամ ինքը ազգը զգում և բռնության ծանրությունը և առանց արմատը քննելու, այսինքն, առանց յուր անձը քննելու, ասպարեզ և դուրս գալիս այն չար-

չարող բռնության ընդդեմ, պլխատում և, աքսորում և, ի վերջո, չքացնում և բռնության յերևեցուցիչը:

Ուրախացավ, կարծեց, թե ազատվեցավ բռնութենից, չգիտե, թե ինքն և, յուր մեջ և այն բռնության և անորենության տարրը: Կարծեց, վոր յեթե մի մարդու տեղ քսան հոգի նստի, բոլոր բանը կփոխվի. մոռցավ, վոր քանի յուր հասկացողությունը նույնն և, ինչպես եր հառաջ այն մինի ժամանակ, այն քսանը պիտի գնա նույն ճանապարհով, վորով գնում եր պատժված մինը: Մանավոր ուշադրության արժանի չե մարդկային կյանքի և այս յերևույթը, վոր յերբ մի արտաքին ույժ դադարում և ճնշել վորևիցե մի հասարակություն, ինքը այդ հասարակությունը սկսում և բռնանալ յուր վերա և նորա բռնակալական ձգտողությունքը բնավ իսկ պակաս չեն արտաքին բռնության ձգտողություններից: Սորա շոշափելի որինակը տեսանելի չե Անգլիո մեջ:

Ամեն մարդ գիտե, վոր գրատպությունը ազատ և այնտեղ, և կառավարության և որենքի կողմից ամենայն հարձակմունք անհնարին: Բայց, նայելով սորա վերա, Ստյուարտ Միլը հարկադրվեցավ հրատարակել յուր գիրքը— «On liвerty»*: Ստյուարտ Միլը այս գրքի մեջ բնական պատճառներով աշխատում և համոզել, վոր տպագրությունը ազատ մնա ամենայն հարձակմունքից: Հարձակմո՞ւնք, տպագրության ընդդե՞մ, և մի աշխարհում, ուր ամենայն բան տպվում և առանց արդելքի, վորի՞ կողմից արդյոք, մինչ կառավարությունը և որենքը ազդեցություն չունին այս խնդրի վերա: Ստյուարտ Միլը խոսում և հասարակության հետ, նա բողոքում և նորա ընդդեմ, և նորա ընդդեմ դարձյալ պաշտպանում և և քարոզում և տպագրության անպայման ազատությունը: Հասարակությունը, նորա կանխակալ կարծիքները, նորա ավանդությունքը, վոր դարերով նստել են նորա ուղեղի վերա, արմատացել են նորա վոսկերքի մեջ, շատ անգամ չե կարող հաշտ աչքով նայել ազատ հրապարակախոսության յերեսին: Նա հալածում և նորան վոչ թե որենքով կամ վորևիցե կառավարչական ուժով կամ արդելքով, վո՛չ, նա լավ գիտե, վոր սոքա անհնարին բաներ են Անգլիո մեջ, նա հալածում և մանր հնարներով և ազատատ ճանապարհներով, վորոնց մեջ վերջին տեղը չունին, անձնական վնաս հասցնել, վատաբանել, կասկածներ հարուցանել հեղինակի վերա, պարզամիտների միտքը և ատելությունը գրգռել նորա ընդդեմ: Այս բոլորը սարսափներով տեսավ Ստյուարտ Միլը տեսավ և գոչեց, «Մեք սուզանում ենք»[8]:

Կեմբրիջի համալսարանի յերկրագիտության վարդապետների գրվածքը, մի պարզ բնագիտական և յերկրագիտական տեսություն, ահ ու սարսափ բերեց հասարակության վերա: Հասարակությունը տեսավ, վոր այդ գրվածքը հիմն ի վեր տապալում և այնպիսի հասկացողություն, այնպիսի սկզբունք, վոր վաղուց արդեն սրբազանել և ինքը, հասարակությունը, վոր

* «Ազատության մասին» (անգլ.): ԽՄԲ.:

դարձել է նորա հոգին, նորա պաշտական գաղափարը. տեսավ այս և խաչակիր արշավանք քարոզեց այն իմաստուն ուսուցիչների ընդդեմ: Բանական հնարքները, հերքողությունքը, վեճը և ի վերջո անբարոյական պարսավանքը թույլ չերևեցան նորա աչքում. նորա վշտացած հասկացողությունը թելադրում եր նորան վրեժ, նորա միակ ցանկությունը եր, որ ուսուցիչք կորուսանեն յուրյանց ամբիոնը:

Վա՛յ այն ծառին, վա՛յ այն բուսականին, որի արմատը անընդունակ է յուր հատակից ընդունելու և պատրաստելու յուր հյութը, յուրյան բարմունքյունը պահող կենսական ույժը և զորությունը: Վա՛յ այն ծառին և բուսականին, որի հույսը դրված է միմիայն, գիշերային և առավոտյան, բարձրից գալու ցողի վերա: Ցողը դեռ հազիվ հազ նստում է նորա տերևների վերա, հազիվ հազ սկսանում է զովացնել նորա ծարավը, դալարացնել նորա խորշակահար տեսիլը և ահա... արևը ծագեցավ: Ցողի կաթիլները, հետզհետե գոլորշանալով ցնդեցան, գնացին. իսկ տերևքը մնացին այրող ճառագայթների ազդեցության յենթակա:

Մարդուն համար վերևից յեկած ազատությունը այն ցողից ավելի չե, յերթե մարդը նախ ինքը յուր միջ ազատ չե, և յերկրորդ, յերթե ինքը այնուհետև պիտի բռնանա յուր ընկերի վերա: Յեվ քանի որ տնտեսական խընդիրը— այն բազմակնճիռ Գորդիասի կապը լուծված չե, հասարակությունը յուր ընկերական և ընտանեական հարաբերությանց մեջ ազատ չե, ցող քառասուն անգամ, յերթե կամենան, փոփոխեն կառավարության ձևը, բայց քանի որ հասարակության մի մասը տիրապետել և հողին, իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այնտեղ թագավորում է բռնությունը:

Նույն այս տնտեսական խնդրի առաջև կանգնած է այսոր ռուսական կառավարությունը և ազնվականը: Այս խնդիրը մահու և կյանքի խնդիր է. «to be, or, not to be»!* Քսան յերեք միլիոն** ստրուկ, որ մինչև ցարդ նստած հայրենիքի հողի վերա ծառայում եր և հարկ եր տալիս յուր պարոնին, վաղո՞ւց և վաղուց ազատված կլիներ ստրկությենից, յերթե կարելի լիներ կառավարության, կամ ազնվականին, ասել ստրուկներին.— Մանկո՛ւնք, այս որից հետո ազատ եք կատարելապես և ձեր ստրկական հարաբերությունը, դեպի ձեր պարոնները, վերջացած է. գնացե՛ք ուր կամիք և ապրեցե՛ք, ինչպես կամիք:

Բայց կառավարությունը և ազնվականությունը պարզ տեսնում եյին այս տեսակ ազատության անհնարավորությունը: Ո՛ւր յերթա 23 միլիոն ժողովուրդ անհող և անկայան, ի՛նչ գործե, ի՛նչպես ապրի: Նույն հողը, որի վերա բնակվում եր և որ գործում եր, այժմ, ազատվելուց հետո, պիտի վարձու առնուր յուր պարոնից. ի՛նչ ազատություն եր այս, վո՞չ ա-

---

* Համլետի հայտնի խոսքը՝ «Լինել, թե չլինել»: Խմբ.:

** 1858—59 թվականների աշխարհագրության նայելով, Ռուսիա մեջ յեղած ստրուկների թիվը հասանում եր մինչև 23,069,631, որոնցից 11,244,913 արու, իսկ մնացած 11,824,718՝ եգ: Ս. Հ.

պաքեն և առաջ նույնն եր գործում, միայն այս տարբերությամբ, վոր արված դրամը կամ անձնական աշխատությունը փոխանակ դրամի՝ համարվում եր ևարկ, իսկ այժմ նույնը պիտի անվանվեր վճար: Բայց շինականին ի՛նչ մխիթարություն անվանափոխության մեջ, քանի վոր գործը նույնն եւ: Պիտի ասեն, վոր այդ տեսակ ազատությենից շինականը յերեք տնտեսական մասնում ավելի վնաս ունի քան թե ոգուտ, գո՛նե կազատվի տուրքերենից և պարոնի իշխանության և լուծի տակից: Այստեղ ևս մխիթարական բան չկար շինականին. այո՛, պիտի ազատվեր պարոնից, բայց դրա փոխանակ պիտի ընկներ կառավարության աստիճանավորների ձեռքը, այսինքն, անձրևի յերեսից ծովը:

Տեսավ կառավարությունը, վոր այս տեսակ ազատություն չե կարելի տալ. գուշակեց նա գալոց փոթորիկը: Տեսավ ազնվականը և համոզվեցավ, վոր այս տեսակ ազատություն տալը, ազնվականության մահու դատակնիքը ստորագրել եւ: Ուստի և՛ կառավարությունը, և՛ ազնվականը, վախենալով բարձրացնել այս ճակատագրական վարագույրը, վորի քամակում կանգնած և Ռուսիո սոսկավիթխար ապագան, լուռ կացին և առանց միմյանց հետ խոսելու, միմյանց միտքը և դրությունը լավ հասկնալով, վորոշեցին լուռ մնալ և քարշ ածել այս գործը, վորշափ վոր կարելի յե դիմանալ:

Յեկավ արևելյան պատերազմը[9], կառավարությունը ընկավ պարտքի մեջ, ժողովուրդը կրեց անտանելի ծանրություն և, ի վերա այսր ամենայնի, յերբ Սեբաստուպոլսի պարիսպքը խոնարհեցան դաշնակից զինվորության առջև, Նիկողայոսը մեռավ: Մեռավ նորա հետ և նորա համակարգությունը: Ինչ կամիս, արա՛, բայց ժամանակը յուրյանը կառնու: Նոր կառավարությունը տեսավ այս բոլորը, հասկցավ, վոր անցյալը չե կարելի շարունակել, լարերը շատ ձգված են, ուստի մի փոքր թուլացրեց ժողովրդյան սանձը: Մինչ այս մինչ այն, տնտեսական խնդիրը, մի աներևույթ զորությամբ, ընկավ մեջտեղը. հարկը ստիպում եր լուծել նորան այս անգամ:

Յեվ ահա ժողով ժողովի քամակից, խորհուրդ խորհուրդի քամակից, ի՛նչպես լուծել, վոր ազնվականությունը զոհ չերթե յերկիրը, բայց ի՛նչպես լուծել, առանց հող տալու շինականին: Յերկիր չտալ նոցա, ասել և 23 միլիոն ժողովուրդ որական հացի կարոտ ձգել, ասել և, այդ ազատության մյուս որը պատերազմ ունենալ 23 միլիոն բազմության հետ, վոր սովամահ լինելու յերկյուղից և հուսահատությենից, պիտի պատերազմի սարսափելի զորությամբ: Յերկիր տալ նոցա, ասել և բովանդակ ազնվականությունը հարստացնել կառավարության ընդդեմ. բայց չտալ չե կարելի: Վերջի վերջո, վորոշվեցավ չափավոր քանակություն հողի տալ ստրուկներին, այսինքն, յուրաքանչյուր գյուղական հասարակության և ընկերության, համեմատ նոցա թվին. այնպես, վոր այդ հասարակությունքը, մինչև մի նշանակյալ ժամանակ, ամ ըստ ամե վճարեն յուրյանց պարոններին այն հողի գինը, մինչև վճարը ավարտվի:

Բայց յերբ 1861, փետրվարի 19 ի հրովարտակը դուրս յեկավ, վորի մեջ կայսրը ասում եր, թե ստրուկները ազատ են և յուրյանց հողը պիտի ստանան հրովարտակի թվյալ որից յերկու տարուց հետո, իսկ մինչև այն յերկու տարու վերջը պիտի մնան նույն հարաբերության մեջ դեպի յուրյանց պարոնները, ինչպես հառաջ, ստրուկները և լսել չկամեցան։

—Հրատարակեցիր մեզ ազատ, հանդերձ մեր հողով, և ահա վերջացած է ամեն բան։ Մեք չկամինք մնալ այսուհետև այն հարաբերության մեջ, ուր մաշեցան մեր նախնյաց և մեր վռակերքը։ Դարավոր սպիներով ծածկված է մեր մեջքը, անզուսպ բարբարոսությունը յուր ույժը մաշեց մեր կուրծքի վերա։ Մեր մատաղահաս դստերքը զոհ գնացին անխնա մեր պարոնների բռնաբարության. կանանց մասին այլ խոսք չե մնում։ Մեր վորդիքը նոքա փոխեցին շունի հետ։ Չե՛, անհնար է, վոր այլևս մնանք նույն հարաբերության մեջ։

Ջանազան գավառներում դուրս յերևեցան զանազան ընդդիմություններ և ապստամբություններ, յերեք իրավունք պահանջելը, վսեմ վոճով, կարելի չե ապստամբություն անվանել[10]։ Կառավարությունը զենք գործ դրեց նոցա վերա, բայց սպանվածների արյունը վխոռեց և աճեցուց ընդդիմության տունկը։ Յեվ այսոր, ամենայն բոպե, հեռանում են միմյանցից ազգը և կառավարությունը։ Ազնվականությունը յերևեցնում է յերկու միմյանց ներհակ կուսակցություններ, հառաջընթաց և հետընթաց։ Հառաջընթաց կուսակցությունը միացած է ազգի եյական ոգուն, այսինքն ստրուկների հետ։ Նա ներգործում է և հետընթաց կուսակցության և կառավարության հակառակ։ Յեվ այս, հայտնի, դրավոր և որ ու ցերեկով։ Իհարկե շատերը թռան դեպի Սիբիր, շատերը մաշվում են բանտերի և ամրոցների մեջ։ Այս տողերը գրելու միջոցին հասած պաշտոնական լուրը իմաց տվեց, թե Տվերի հառաջընթաց կուսակցությենից տասն և յերեք հոգի մատնվել են ծերակուտի հինգերորդ բաժնի ձեռք[11], այսինքն, քրեական ատենի ձեռք, վորովհետև ստորագրությամբ գրած են գավառական ատենին, թե չեն վարող և չպիտի ներգործեն 1861 փետրվարի 19 հրովարտակի համեմատ, քանզի ընդդեմ և այն հրովարտակը ազգի եյական շահին։ Այսքանով չե գոհացել ազնվականությունը և փետրվար 2 ից տվել և կայսեր մի մեծախորհուրդ խնդիր*։

---

* Դնում ենք այստեղ այն խնդրի հարազատ պատճենը և մի քանի պարբերություն, մեր նամակագրի մեզ տված տեղեկություններից. պահելով նորա թե ոճը և թե ուղղագրությունը։

Ձեր կայսերական Մեծություն

Ամենաողորմ Թագավոր

1861 փետրվարի 19 ի որոնագրությունը հրատարակվելեն յետքը, Թվերի ազնվականությունը, առջի անգամ դումարվելով, կբարևե Ձեռնաց Թագավորը, վոր ձեռք զարկավ ստրուկները ազատելու և Ռուսիո հողի վրա յեղած ամեն անիրավություն արմատախիլ ընելու։ Թվերի ազնվականությունը կհավատան հրատարակավ, վոր ինքը սրտանց ղոչայակից և Ձ. Կ. Մեծության բարի ակզբնավորության և պատրաստ է հետևելու Ձեզ այն ճամբով,

Հետընթաց կուսակցությունը մնացել է ազգի և կառավարության մեջ տեղը, յերկու կողմից էս դժգոհ, յերկու կողմին էլ թշնամի. և ընդդեմ կամելով ներգործել ազգին, ներգործում է ընդդեմ հառաջընթաց կուսակցության և վատրեն միանում է կառավարության հետընթաց մասին հետ:

վոր կտանի է բարօրություն Ռուսաց ազգին: Մեր պատրաստականությունը և Զ. Կ. Մեծության անձին վրա ունեցած կատարյալ հավատը ապացուցանելու համար, մենք կհամարձակինք առաջարկել, Ձեր բարի դիտողության, մեր մտածության անկեղծ զծագրությունը, առանց ամենևին ստության, կամ բան մը ծածկելու:

Փետրվարի 19 ի հրովարտակը, ազգին ազատություն հայտնելով, բարվոքեց քիչ մը սորուկներուն նյութական բարեկեցությունը, բայց չազատեց զանոնք սորկական կախողությունեն, և սորկական իրավունքեն ծնած բոլոր անօրենությունները չվերնչացուց: Ազգի առողջ բանականությունը չկրնար համաձայնեցնել Զ. Մեծության հայտնած ազատությունը, նկրիա, առ իրենց պարոններըը, հարկադրական հարաբերությանց հետ և կացության արվեստական բաժանարարության հետ:

Ազգը կտեսնե, վոր ինքը, յերբեմն ժամանակի, պիտի կրնա ազատել մխիթարյան հարկադրական աշխատությենե, բայց հավիտյան հարկատու պիտի մնա, հանձնված նույն պարոններուն իշխանությանը, վորոնք այժմ խաղաղության միջնորդք կանվանվին:

Թագավո՛ր, հայտնի կխոստովանինք, վոր մենք ալ չենք հասկընար այս դրությունը: Առանկ ահագին անհասկացողությունը զբոլոր հասարակությունը կրնե անեղանելի և տերության կորուստ սպառնացող վիճակի մը մեջ:

Ի՛նչ բան արգելք կըլլա զանի հեռացնելու:

Հողը, պարտավորապես, սորուկներուն սեպհականությունը դարձնելու մեջ, մենք վոչ միայն չենք տեսներ մեր իրավանց ավերում մը, այլ, միակ միջոց կըճանչենք զանի, մեր աշխարհի խաղաղությունը և մեր սեպհական նյութական ոգուտները ապահովելու համար:

Մենք կխնդրենք, վոր այս միջոցը ի գործ դրվի և տերության ընդհանուր զորությամբ անի ի կատար հանվի, առանց բոլոր ծանրությունը միմիայն սորուկներու վրան դնելու, վորոնք ամեն ուրիշեն քիչ մեղք ունին, սորկական իրավունքի դրության մեջ:

Ազնվականությունը, իբրեն կացության արատնության զորությամբը, մինչև ցայսոր ազատ ձեր հասարակաց դիվանը պարտքերը կատարելեն: Թագավո՛ր, մենք արյան մեղք կհամարինք ապրիլ և ոգուտ քաղել հասարակաց կարգի ազնվություններեն, ուրիշ կացության հաշվով: Անիրա՛վ է այն կարգը, ուր խեղճը մեկ ռուբլի կվճարե, իսկ հարուստը և վոչ քարեկ մը: Ամեկա կարելի չեր ընդունվիլ, քանի վոր սորկական իրավունքը կտեսնվեր, բայց այժմ, անի՝ ոտարականներու և իր հայրենիքին բոլորովին անոգուտ մարդոց կարգը կրնե դեմդ:

Մենք չենք ցանկար ոգուտ քաղել ասանկ անարդ արատնությենե մը, և անոր տեհասած հարատևությունը չենք տեսներ մեր պատասխանատվությանը տակ: Մենք ամենահպատակորեն կխնդրենք Զ. Մեծությենեն հրաման տալ մեզ, մեր վրա ընդունիլ տերության հարկերուն և պարտքերուն մեկ մասը, ամեն մեկին կարողության համեմատ:

Նյութական արատնություններեն զատ, մեզ միայն ամեծ և նաև զգազը կառավարելու մարդիկը ընտրելու և կարգելու իրավունքը: Այս որվան որս, անօրենությունն կհամարինք մենք, այն իրավունքը բացարձակապես մեզ պահել, և կպահչենք, վոր անի ուրիշ կատյությանց վրա ալ տարածվի:

Ամենողորմ Թագավոր, մենք հաստատ հավատացած ենք, վոր Դուք սրտանց կցանկաք Ռուսիո ազեկության, այս պատճառավ սուրբ պարտք կհամարինք հայտնի ընել, վոր մեր և Զ. Մեծության կառավարությանը մեջ տարբանելի անհամաձայնություն մը կա, վոր արգելք կըլլա Ձեր բարի դիտավորությունները կատարել: Տերության պաշտոնյաքը, վատխանակ խոստացված ազատությունը տուղտալես իգործ դնելու առ ժամանակյա հարկադրական դրություն մը հնարեցին, վոր Ձեր սորուկներուն և Ձեր պարոններուն համար

Ռուսական ազգը, վորի աչքի առջև հանդիսանում է այս դրամատիկական թատերգը, կուսակից է սորուկներին և հառաջընթաց ազնիվ կուսակցության: Նորա մեջ նույնպես խմորվում է մի վոգի, և այսոր յերկու յերեք միմյանց հակառակ տարերք դնում են միևնույն ճանապարհը:

անտանելի յե: Փոխանակ մեկ անգամ սորուկները ազատ և պատասխանատու հողի տեր ընելու, անոնք՝ հոժարակամ համաձայնության այնպիսի կարգ մը հնարեցին, վոր թե սորուկները և թե պարոնները վերջին աստիճան աղքատության հասցնել կսպառնար: Այժմ, անոնք դարձյալ հարկավոր կդտանեն ազնվական սրտոնության պահպանությունը, մինչդեռ մենք, վոր ամենեն ավելի այս դործին մեջ ոգուտ ունինք, անոնց վերնալուն կցանկանք:

Այս ընդհանուր անհամաձայնությունը, երբև ազնիվ ազատության կծառայե անոր, թե անհրաժեշտ հարկ յեղած փոփոխությունները դրադրական (bureaucratique) ճամբով չըպիտի կրնան կատարվիլ: Մենք ալ՝ հանձնառու չենք բոլոր ազգի փոխանակ խոսել, չնայելով, վոր ավելի մոտ կանգնած ենք անոր. և հաստատ հավատացած ենք, թե մի միայն բարեմտության բավական չե վոչ միայն դոհացնելու, այլ մինչև անգամ և ազդային կարիքը ցցունելու համար:

Մենք հավատացած ենք, թե բոլոր փոփոխությունները հառաջ չերթալուն պատճառը այն է, վոր առանց ազգի կամքը հարցնելու կըլլան: Բոլոր ռուսական հողեն ընտրված յերեսփոխանները դամարկիլը միակ միջոց կերևա դոհացուցիչ կերպով այն խնդիրները լուծելու, վոր դարձեցան, բայց չվճռվեցան փետրվար 19 ի դրության:

Ձեր Մեծության դիտողությանը ներկայացնելով յերկրական ժողով դումարելու ամենահպատակական աղաչանքը, մենք կհուսանք, վոր ընդհանուրի ազնվության սրտանց վստաքը, վորով վոչնչով և Թվերի ազնվականության, հակառակ մեկնաբանության յենթակա չըլլար:

Մորին յերկյուղածության դգացմունքով, յերջանկություն կհամարինք անվանվիլ

Ձ. կ. Մեծության ամենահպատակէ

2 փետրվարի 1862. Թվեր:

(112 սորադրություններ)

«...Ազնվականներուն այս ազնիվ խնդիրը տեղը հասնելեն յետքը (չարունակում է նամակագիրը) զորապետ Անենքոֆը, քանի մը դնդապետներով և խումբ մը ժանտարմով Թվեր կերթկվի: Կառավարությունը մինչև այսոր կկարծեր, թե սորուկները կեսկատար ազատելով գործը պիտի լմննա: Ազնվականությունը, իր սրտոնություններեն հրաժարվելով, համաձայնություն կպահանջե, յերեսփոխանական ժողով կպահանջե, ուրիշ խոսքով, սահմանադրություն կպոռա: Միայն Թվերի ազնվականությունը չե, այլ շատ դավառներ նույն ճամբան կհետևին և փետրվարի 19 ի որենքը կատարել հրաժարակավ կհրաժարին: Թամպով դավառի ազնվականությունը միևնույն լուսնդակությամբ խնդիրը մը ավելը և կպահանջ. միայն սա՛ տարբերությամբ, վոր հոն ազնվականաց հետ սորադրերը են բոլոր վաճառականք և սորուկները: (Ոչինչը տակավին ձեռքս չհասավ, վոր ջիղ խրկեյի):

«Կառավարությունը Թվերի գործեն սարսափ մը կպղտա և ուզելով խորամանկություն գանեցնել, հասարակ ժողովրդի մեջ ճայն կտարածե, թե ազնվականությունը՝ կայսեր աված խնդիրքին մեջ՝ դեմ է սորուկներու ազատության, վորպեսզի սորուկները այն ազնիվ կացության դեմ հարուցանե, վորմե ինքը կվախնա: Ազնվականությունը կվախնա

Ցեղ կառավարությունը, յուր կարգով, մնացել է այս բոլորի մեջտեղը։ Բայց այս ջերմախտական և լարյալ վիճակը անհնար է վոր լինի յերկարատև։ Ցեղին, վաղորդ, խելք դործ չդրվի, ստրուկը յուր հողով հանդերձ կատարելապես ազատ չդարդվի, և այս կերպով այն կնճիռը չլուծվի, ստրուկը կացինով կվճռե դործը[18]։

Ժամանակը շատ մոտեցած է և կարծվանից ավելի մոտեցած....

Ազատությունը ըստ ինքյան լոկ խոսք է և իրողապես չի կարող մարմնանալ, առանց տնտեսական խնդրի լուծվելուն։ Վոչ մի ազատ կառավարություն, վոչ մի ազատ որենսդրություն չեն կարող փրկել մարդը ստրկությենից, մինչև վոր այդ մարդը հողի վերա իրավունք ունեցող չխոստովանվի։ Ցեվ մինչև այս, ընդհանրական ազքատությունը չերթալով պիտի զորանա և հասնի հսկայական աստիճաններվի։

Թողունք պղինձը, այսչափ վոսկու և արծաթի հանք, վոր ամենայն տարի անդադար վոսկի և արծաթ են թափում զանազան տերությանց դանձարանների մեջ, դրեթե ազդեցություն չունին դրամական խնդրի վերա։ Ցեվ հասարակ ժողովուրդը այնչափ ավելի կարոտում է դրամի, այնչափ սաստ-

---

այս դավաճանությունը և իր ամեն խնդիրը, ամեն քաղաք, ամեն դեղ հասարակ ժողովուրդի մեջ՝ կսկսի կարդալ և հասկցնել, վորով վո՛չ միայն հասարակ ժողովուրդին մխիթը կթժվվի, վո՛չ միայն կառավարության խարդախությունը յերևան կե՛լլե, հապա՛, ժողովուրդը կկապվի աղնվականության հետ և սահմանադրություն բառը կարտասանե։

«Տասներեք հոգի աղնվական յերիտասարդք, վոր իրրև ազատության առաքյալք, իրենց վրա առած վերադրյալ սուրբ և վսեմական պաշտոնը, ժողովուրդին՝ ճշմարտության կքարոզելին և կառավարության մոլորեցուցիչ խարդախությունը յերևան կհանեյին, կառավարության պաշտոնյաներեն ձերբակալ կըլլան և կրանտարկվին։

«Ասոնց մեջեն յերեք հոգի իրրև գլխավորք, յերկու յեղբայրք Նեքոլա և Ալեքսանդր Պոդունին (ասոնք այն յերեքեն Մ. Ա. Պաքունինին յեղբայրներն են, վոր իրրև առաջնորդ պետմանական ապստամբության (1848) բռնվեցավ Տրեզաենի մեջ և ութը տարի բանտ մնալեն և չորս տարի Սիբերիա աքսոր կրելեն յետքը, հրաշքով մը ազատություն գտնելով, ձարեռնի և Ամերիկայի վրայով Լոնդրա հասավ) և Լազարեվի անվամբ ուրիշ աղնվական մը, Բեզերսպուրկի Սուրբ Պետրոսի և Պողոսի ամրոցը կխրկվին։ Բայց ո՛չ, աղնվականը և ժողովուրդը կապվեցան իրարու հետ...

«Հյուսիսային կոթողը կշարժի՛...

«Ցեվ ինչպես մեծ չինվածք մը կրմնդնելու համար, շատ նյութեր կմտնեն անոր կազմվածքի մեջ, այնպես ալ՝ անոր կործանումեն յետքը՝ շատ նյութեր կստացվին զոր շինվածնելու համար։ Ռուսիո մեջ խմորված ազատությունը համարձակ կարելի չե մարդկային ազատություն անվանել, վասնզի ազատությունը հողի վրա կհիմնվի, քանզի վո՛չ միայն ինքը ռուսը կուզե իր ազատությունը, այլ՝ կքարոզե թե Լեհաստան, Ֆինլանտիա, Փոքր Ռուսիա (15 միլիոն ժողովուրդ), Կովկաս, Վրաստան և Հայաստան պետք են վոր ազատ և անկախ ըլլան, Մեծ Ռուսիայեն, վորպեսզի ինքը 48 միլիոն զուտ ռուսական ազգով, ստուգապես ազատվի, ամեն տրիության և ամեն բռնատիրության սկզբունք մերժելով և իր բարոյական ու նյութական ուժը և զորությունը միմիայն իր մեջը ամփոփելով, վորպեսզի յերջանկություն ճաշակե, հաղարամյա դերությենեն յետքը և հասնի քաղաքակրթության մեջ։ Ռուսիո ազատությունը, ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ, մեծ խորհուրդ ունի... և այլն»[19]։ Մ. Հ։

կանում է դրամի պակասությունը, վորչափ վոր ամեն կողմից վոսկի և արծաթ է դուրս բերվում յերկրագունդից։ Անտարակույս է, վոր մետալյա դրամը ամենայն տարի շատանում է, ի՛նչ է ուրեմն պատճառը, վոր ժողովուրդը չէ տեսնում նորա յերեսը, և ո՞ւր են այն վոսկիքը։ Մի՞թե տերությանց մոտ։ Մեր առջև դրած է բոլոր տերությանց յեկամուտի և ծախքի ցուցակները։ Ահավասիկ ամենահարուստ համարված Անգլիո 1860 թվականի յեկամուտի և ծախքի ցուցակը։

Յեկամուտ	70,283,674	}
Ծախք	72,842 059	} լիբրե ստերլինգ[15]։
Պակասորդ	2,540,385	}

Վո՞րտեղ ուրեմն հարկավոր է վորոնել վոսկին և արծաթը։ Նախ, միքանի յերևելի մոնոպոլիստ սեղանավորների մոտ, վոր աշխարհը խեղդում են պարտքի մեջ, և յերկրորդ, հողատերերի մոտ։ Վոսկին և արծաթը չէ մնում տերությանց և հասարակության մոտ և չէ կարող մնալ, քանի վոր տերությանց ծախքերը, որ ըստ որե բարձրանալով, լեռնանում են, և քանի վոր ժողովուրդը հող չունի և ուր վոր ունի, չկամի գործել։ Նա թողում է դաշտը և գնում է քաղաք կամ մայրաքաղաք, նշանակում է, թե որ ըստ որե պակասում է յերկրագործների թիվը, հետևաբար ընկնում է դուգակշիռը։ Դիցուք հազար հոգի շինական յերկիր էին գործում, վորոնք յերկրագործությենից հառաջացած արդյունքը վաճառելով, անշուշտ, պիտի ներս բերեին դուրսից յուրյանց մեջ վորևիցե քանակություն վոսկու և արծաթի։ Այժմ այդ հազար հոգին, թողնելով յերկրագործությունը, թե կամա և թե ակամա, և յերթալով և բնակվելով քաղաքի մեջ, վոչ միայն փոքրացնում է յերկրագործների թիվը, այսինքն, դուրսից հատարակ ժողովուրդի մեջ վոսկի և արծաթ բերողի թիվը, այլև շատացնում է յերկրագործության արդյունքի կարոտողների թիվը։ Յեվ փոխանակ վոր ինքը պիտի դրամ ստանար դուրսից, այժմ ինքը պիտի տա։ Այո՛, այն մարդը վոր թողնց յերկրագործությունը և գնաց քաղաք, վաստակ է առնում դարձյալ, բայց յերկրագործության և այն վաստակի մեջ կա մեծ տարբերություն։ Յերկրագործը ունի հիմք, նա ունի հող, նորա ձեռքում կա նյութ, վոր ասել է ույժ և կարողություն դրամի համաղոր, բայց յերբ նա թողնց յերկիրը և գնաց քաղաք, այնտեղ վոչ հողը կա և վոչ նյութը. նա տարավ յուր հետ միմիայն աշխատությունը, այսինքն, յուր յերկու ձեռքը։ Աշխատությունը առանց նյութի և առանց հիմքի, հասարակաց վերաբերությամբ, չունի՛ այն ույժը և զորությունը, ինչ վոր ունի աշխատությունը, յերբ նորա հետ զուգընթաց է նյութը, յերբ այդ բոլորը հաստատած է հիմքի վերա։ Հավելացո՛ւր սորա վերա և քաղաքային ծախքը, վոր ոտում է և մաշում է բոլոր, ինչ վոր մարդը յուր աշխատությամբ վաստակել էր։ Նա հազիվ հազ ծայրը ծայրին է հասուցանում յուր յեկամուտը և ծախքը. նա վարձկան է, իսկ վարձկանի աշխատությունը յուր համար չէ, վարձկանի հառաջ բերած արդյունքը վայելում է նորա տերը։ Ո՞վ է նորա տերը։ Վաճառականը կամ գործարանատերը։ Ուրեմն, շահը վաճառա-

կանի կամ գործարանատիրոջ մո՞տ ե։ Վաճառականների մի մասը ուղղակի վարձկան ե գործարանատերերին, իսկ մյուս մասը, գործարանատերերի հետ միասին, վարձկան այն վերասած մոնոպոլիստների, որոնց մոտ կենդրոնացած ե դրամական ուժը։ Ուր որ ե դրական զորությունը, այնտեղ ե և դրական շահը։ Մյուս բոլորը, որ ինքյանք զորություն չունենալով պիտի ուրիշ զորությամբ շարժին, վարձկան են այդ զորության։ Նոցա շահը այն ե, որ հազիվ հազ ապրում են, բայց նոցա կյանքը զոհված ե զորության շահին։

— Կա՛ց,— ասում ե մինը, որ չե սիրում ուրիշի, մանավանդ մի նոր կարծիքի հավանություն տա՛լ։— Յեվ դու կարծեցիր թե խելքիս նստեցուցի՞ր ասածներդ...

«Ի՛նչ կա»։

— Դու ասացիր, որ դրամի պակասությունը հետևանք ե յերկրագործության ընկնելուն, որից դուրս ես բերում զուգակշռի ընկնելը և դրամական կենդրոնացությունք (centralisation)։ Այդ սխալ տեսություն ե. քանզի դրամի պակասությունը յերևութական ե, որովհետև այսոր ամեն մարդու մոտ ավելի դրամ կա, քան թե սորանից տասն տարի առաջ։ Դրամը պակասել չե, այլ զորություն չունի, որովհետև թանգությունը յերթալով զորանում ե։ Մի մարդ, որ սորանից տասն տարի առաջ հարյուր վոսկի ունենալով, հանգիստ կարող եր ապրիլ մի տարի, այժմ նույն մարդը յերկու հարյուր ունի, բայց ապրում ե նեղությամբ, քանզի այժմյան յերկու հարյուրը անցած ժամանակների հարյուրի զորությունը չունի, որովհետև ապրուստը թանգ ե։

«Ի՛նչ ե այդ թանգության պատճառը և ի՛նչ ասել ե թանգություն»։

— Յեթե մինչև այժմ չգիտես թե ինչ ե թանգությունը, ինչ ասացիր ու դրիչ առիր ձեռքդ։ Թանգության պատճառն ես հարցանում ինձանից, պատճառը վո՞րն ե։ Ապրանքը իմը չե՞, յերեկ վաճառում եյի տասնի, այսոր քսանից պակաս չեմ տալիս, կարո՞ղ ես բռնի հափշտակել։ Այն տունը, ուր յես բնակվում եմ, սորանից տասն տարի հառաջ վաճառում եյի հիսուն վոսկու, այժմ տան տերը չկամի տալ հիսունի և պահանջում ե հարյուր, ի՛նչ կարող ես ասել։— Յեթե դու չտաս հարյուր, ուրիշ տվող կա,— ասում ե նա, և յեթե յես նորան չտամ հարյուր, ուրիշ տեղ ես պակաս գնով չե պիտո գտանեմ, ուստի և հարկադրված վճարում եմ այժմ հարյուր։ Ի՛նչ հարկավոր ե տան վերա խոսիլ, վո՞ր բանը այսպես չե։ Այսքան տարի ապրել եմ և միշտ կոշիկ եմ հագել, և միշտ մի զույգ կոշկի համար վճարել եմ կես վոսկի, այժմ, այն նզովից արմատ կոշկակարը ասում ե, թե չե կարող մի վոսկուց պակաս կարել։ Խոսելիք ունի՞ս, յեթե չվճարես վոսկին, առանց կոշիկի կմնաս։ Կարո՞ղ ես բռնի կարել տալ։ Վո՞ր մինը ասեմ, դերձակը ևս նույն յերգն ե յերգում, մինչև անգամ ջրկիրը կրկնապատկել ե դույլ ջրի գինը։

«Ճշմարիտ ե այդ բոլորը, բայց ի՞նչ ե պատճառը, որ բոլորը ևս միացել են և կրկնապատկել են յուրյանց ապրանքի գինը»։

— Ների՛ր, պարո՛ն, հասատպլուխ ես յեղած, վոր մինչև այժմ չհասկըցար։ Ապրանքը նոցա ապրանքը չե՞...

— «Հերիք է. լսիր։ Քո բոլոր ասածներից մի բան միայն ուղիղ է, այսինքն, դրամի զորություն չունենալը, իսկ պատճառը, վոր կարծում ես թե հառաջանում է տանը տիրոջ, վաշխակարի, դերձակի ու ջրկիրի կամքից կամ դավաղրութենից, բոլորովին անխելք և տղայական։ Դրամի արժեքը պայմանական մի բան է, նորա զորությունը, կամ անզորությունը, նորա բարձրանալը կամ ցածնալը կապված է այն նյութերի շատության կամ սակավության, վորոնց հետ կենթադրվեր փոխանակել դրամը։ Թանդությունը և դրամի արժեքի ընկնելը համարձակ կարելի չե թարգմանել պակասություն և կարոտություն այն նյութերի, վորոնց հետ պիտի փոխվի դրամը. այստեղ կամքը կամ հաճույքը հանդես չունի։ Ձերը վոր յերկրագործությունը, դրամի հետ փոխվելու նյութերի մշակությունը, ընկնի, յերբ այդ նյութերը սակավանան, այն ժամանակ, նախ, դրամի արժեքն է ընկնում, յերկրորդը՝ դրամը կենդրոնանում է, վորովհետև հասարակ ժողովուրդը չունի այն բանը, վոր փոխանակել կարող եր դրամի հետ, ուրեմն և դրամի շրջանառությունը դարձնել յուր մեջ։ Յեվ այսպիսի դիպվածում ավելի դառն է հասարակ ժողովուրդի վիճակը. դրամը կենդրոնացած է, և ժողովուրդը պիտի քարշ նորան այդ կենդրոնից, ինչո՞վ, միմիայն յուր աշխատությամբ և այդ մեքենական աշխատությամբ ստացած դրամը չունի զորություն։ Ապա յեթե յերկրագործությունը ծաղկի, դրամի հետ փոխվելու նյութերը առատանան, դրամը չե կարող կենդրոնանալ զանազան ձեռքերում, հասարակ ժողովուրդը, յուր պատրաստած նյութերի զորությամբ, կգրվի նորան, վորով վոչ միայն դրամի շրջանառությունը կմտանե ժողովրդի մեջ, այլ դրամի արժեքը կա կբարձրանա նյութերի շատության չափով։

Այն աշխարհներում, ուր հասարակ ժողովուրդը հող չունի, ուր չե կարող յերկրագործությամբ ապրիլ, նա կենդրոնանում է քաղաքներում և մայրաքաղաքներում, և այս կենդրոնացության չափով ատատանում է և թանդությունը, ուրեմն և աղքատությունը։ Անգլիո մեջ, Լոնդոնի և այլ դավառական քաղաքներում բնակիչը դրեթե հարյուրին տասն և հինգ շատանում են ամենայն տարի։ Թողո՛ւնք ուրիշ քաղաքները, միմիայն Լոնդոնի մեջ տասն տարու միջոցում հավելացել է դրեթե հինգ հարյուր հազար հոգի։ 1851 թվականում Լոնդոնը ուներ բնակիչ 2,362,236, իսկ 1861 ին՝ 2,803,034։ Տարակույս չկա վոր Ամերիկայի պատերազմի պատճառով այսոր Լոնդոնի մեջ կա 3 միլիոն բնակիչ։ Այսպիսի վիճակում, մինչ միլիոնավոր հոգի սիտի ապրի յուր մեքենական աշխատության վարձով, մինչ և այն ամեն ժամանակ չե կարող գտանել, կարե՞լի չե հարստություն, հնարավո՞ր է ապրուստ*։ Յեվ յեթե այսպես է հասարակ ժողովուրդի վիճակը մի այնպիսի

---

* Վերջին վիճակագրական տեղեկությանց նայելով, Լոնդոնի մեջ, ուրիշի ողնությամբ, այսինքն վաղորմությամբ ապրող աղքատների թիվը հասանում է մինչև 800·000 հոգի։

աշխարհում, վոր բոլոր յերկրագունդին բաժանում է յուր ձեռագործքը, վոր պետք ունի միլիոնավոր ձեռքերի, ի՛նչպես ուրեմն կլինի այն աշխարհների վիճակը, ուր անգլիական արվեստի և ձեռագործության և հազարերորդ մասը չկա, և յերեք այն աշխարհների հաստարակ ժողովուրդը Թողու յուր հողը և յերթա մայրաքաղաք կամ այլ գավառական քաղաքներ: Ասել հարկավոր չե, քանզի մինչև այստեղ ասածներիցս հետևցնելը շատ հեշտ է:

Բայց մինչև այստեղ մեք մեր առջև դրած բուն խնդրին չդպանք. մինչև այստեղ աշխատեցանք միմիայն մերկացնել նորան: Ի՞նչ է մեր խնդիրը: Վո՛չ Ամերիկայի պատերազմը, վո՛չ Անգլիո տնտեսականության որենքը, վո՛չ ողային ազատությունը, վո՛չ Ռուսաստո ներկա վիճակը, վո՛չ մինը և վո՛չ մյուսը: Ի՞նչ է ուրեմն: Մեր խնդիրը... ինչ վոր ավելի իրավունք ունի գրավելու մեր ուշադրությունը, ինչ վոր մոտ է մեզ, վորի հետ անքակտելի կապերով կապված ենք,— մեր խնդիրը և մեր ի՛ր ազգի թշվառությունը: Այս տողերից սկսած, մեր ընթերցողների ուշադրությունը հրավիրում ենք դեպի Թյուրքիա, վորի կազմության մեջ մտնում և Հայաստանի և հայոց ազգի մեծագույն մասը: Բայց և այնտեղ տնտեսական խնդրի սահմանից չե պիտո դուրս դանք այս անգամ:

Ամեն մարդ կարող է վկայել, վոր 1860 ին ավելի լավ եր Թյուրքիայի դրամական վիճակը, քան թե 1861—62 ին. տարակույս չկա, ժողովուրդի վերաբերությամբ, քանզի ինքը կառավարությունը մինչև այժմ ապրել է արտաքին և ներքին պարտքերով: Ահա՛ այդ համեմատական լավ տարու, Թյուրքիայի յեկամուտի և ծախքի յուցակը.

Յեկամուտ	286,100,615	ֆրանկ
Ծախք	335,225,300	
Պակասուրդ	49,124,685	

Ահավասիկ Թյուրքիայի և, թե արտաքին և թե ներքին, պարտքի հաշիվը... 32,849,220 լիբրե սաերլինգ կամ 828,810,344 ֆրանկ կամ, ավելի պարզ, յուրյան իսկ առատ հաշվով 4,106,152,500 դուրուշ: Տարակույս չկա, Թյուրքիո վոսկին հարյուր դուրուշ հաշվելով: Մինչև 1861, արտաքին և ներքին,— Պոլսի մեջ պարտքերով,— այստեղ է հասած: Այժմ կամենում է բարվոքել յուր դրամական վիճակը. ի՛նչպես. մի կողմից արտաքին նոր պարտքով (յերեք տան), իսկ մյուս կողմից, Պոլսի պարտքը տեղափոխելով գավառների մեջ, այսինքն, յուր անվանաբեկ Քայիմեն, յուր սնանկության դրոշակը տարածելով գավառական քաղաքներում և գեղերում (յերեք ընդունին) և այն տեղերի նշխարյալ վոսկին և արծաթը բերելով Պոլիս: Այս է նորա միակ հնարը, վորով կամենում է դեմ դնել Պոլսի դրամական հոգևարությանը: Թյուրքիո կառավարությունը ձեռք զարկելով այս հնարին, մոռանում է յուրյան պաշտպան և, յուր սեպհական շահին համար, Թյուրքիո բարեկամ՝ անգլիական տերության մինիստրի տված խրատը, ուր ասում եր նա, թե

«պարտքով ապրիլը նմանում է ծակ տակառի մեջ ջուր լցնելուն»*։ Մոռանում է, դարձյալ, վոր գավառները կրեսոսի առասպելյալ դանձարանը չեն։ Ջուր տեղը վորոնում է նա յուր արծաթը և վոսկին յուր գավառներում. ի՞նչ դորութիյուն ունեյին այդ գավառները, վոր կարողացած լինեյին նորանով յուրյանց մեջ դարձնել դրամի շրջանառութիյունը։ Գավառներից գալու մեծ տալյա դրամը չպիտի կարողանա, մի տարի միայն, ծածկել Թյուրքիո պարտքերի շահը և տարեկան ծախքի պակասորդը։ Ի՞նչ պիտի լինի ուրեմն այս հնարների ուղղակի հետեւանքը։ Այն, վոր պարտքը պիտի կրկնապատկվի. այն, վոր գավառները էս պիտի հասանեն Պոլսի որը, այն, վոր մի դեղեցիկ առավոտ թե Պոլսի և թե գավառների մեջ մարդիկ չպիտի կարողանան հայց ճարել, ապրատութիյունը և սուվը պիտի հարկադրե նորանց դեպի հափշտակութիյուն և կողոպուտ, մի խոսքով, բաբելոնյան խառնակութիյուն։ Բայց չե պիտո մոռանալ, վոր մի այսպիսի վատաբաղդ դիպվածում առաջ քրիստոնյայք կկողոպտվին, կմերկանան և կմեռանին, իսկ հետո Թյուրքը, կառավարչական ուժը, գոնե, այդտեղ գեթ պիտի ցերեկի, վոր յուր վնասմանի տորուկներից ավելի ապրի մի քանի որ, և այն, սպանվածների հաշվով։ Այս ապագայի սովերական և Բուլղարիո որինակը Պոլսի մեջ ցերեկյավ 1861 թվականի վերջերում, բայց կգա որ, ցերը այն սովերականը ի լույս կճըշմարտվի, և Բուլղեր ասպետը, հինգ հարյուր հայ բաժանելով, չե կարողանալու դարման տանել վերահաս վտանգին։

Բայց Թյուրքիո կառավարութիյունը չե սոսկում յուր պարտքերից։ Նա մխիթարվում է տեսաներով, վոր ավելի շատ են այլ տերութիյանց պարտքերը։ Նա զարմանում է միայն, թե ինչպես այն ավելի շատ պարտական տերութիյունքը, վոր պետք է և ավելի շատ նեղութիյան մեջ լինեյին քան թե ինքը, ծիծաղում են Թյուրքիո դուրուշների ցերեկն ի վեր և ցերկու ցերեք անգամ կարող են բարձրացնել յուրյանց վոսկիների գինը։ Մեղքը Մոհամմեդի վիզը, վոր սորա պատճառը չե գրել Կուրանի մեջ։ Ուրիշ տերութիյանց պարտքը անհատուցանելի չե, պարտքի գումարը վատնված չե, պարտքի հանդեպ, և շատ տեղ, կրկին անգամ ավելի արժողութիյամբ, վա գործ. և պարտը այսպիսի դիպվածում սնանկութիյուն չե։ Նորա ունին ցերկաթուղիք, ունին հսկա նավատորմ, զինարան, զորք, բանակ և այլ հազար ու մի քաղաքական կամ զինվորական պատրաստութիյունք։ Իսկ Թյուրքիան յուր պարտքերի հանդեպ վոչինչ ունի ցույց տալու։ Ցերեք ու կես նավ, քանի ծուլագնացութենից ուրիշ ամեն բանի պիտանի, մի քանի հազար քաղցած և մերկ զինվոր, վոր տարիներով չեն տեսնում ռոճկի ցերես, ներս մտանող ապրանքների մաքսը աննշան, յուր մեջ պատրաստված ապրանքի վերա ավելի ծանր հարկ, վո՛չ ցերկրագործութիյուն, վո՛չ ճանապարհ, վո՛չ հաղորդակցութիյուն,

* Մենք չենք կարող հավատալ, թե ամենի լորդը այս խոսքը տալու ժամանակ ուրիշ հարձիք ունեցած լինի Թյուրքիայի վերա ղրամական խնդրի վերաբերութիյամբ, բայց այդ հարձիքից և ավանդութենից, վոր ուներ դյուցազնական աշխարհը Դանիվրի ծակ կարասի վերա[16]։

վո՛չ դիտութիւն և վո՛չ արուեստ։ Տերութեան կառավարիչը յուրաքանչիւր անձնական շահին պաշտօնեայ, տերութեան գանձը հասարակ ժողովրդի արդիւնքն է, քրտինքի հետ միասին լափ լիզող։ Այստեղ անհատականութեանը չկ՚ պարտքը, այստեղ բարձրաձայն խոսում է անանկութիւնը։ Այո՛, վոսկին, իբրև մի ազնիվ մետալ, չէ կարող մնալ մի այնպիսի խառնակ տեղում,— նա բարձրանում է։ Մնում է անարդ թուղթը և չէ վախենում։ Նա վստահ է, վոր մարդիկ չեթե դադարին նորան իբրև դրամ գործ դնելուց թերևս չէ պիտո իսպառ մերժվի, հարմար լինելով այլ պիտուութեան։ Բարի ճանապա՛րհ։

Յեթե կառավարութեան կողմից չկա մի խելացի, մի արմատական հնարի գործադրութեան, քաղաքական տնտեսութիւնը կարգի դնելու և դուրս տված և ներս ընդունած ապրանքի կամ դրամի մեջ դուզակշիռը պահելու ձգտողութիւն, յերբ հասարակաց ծանրաչափը ակներև դուշակում է նորա կյանքի համար մի մահաբեր մրրիկ, այն ժամանակ ինքը, այդ հասարակութիւնը պարտակա՛ն է կողմնակի և յուր ձեռքից յեկած հնարները գործ դնելով աշխատիլ, ազատվելու համար այն սոսկալի պատահարից, վորին անուարակուսա, յեթե վոչ այսորը, վաղը կամ մյուս որ սիտի հանդիպի յերես առ յերես։

Ի՛նչ հնար կարող է գործ դնել հասարակութիւնը այդ վտանգից ազատվելու համար։ Նա ինքը ևս աղքատ է և վոչինչ ունի, ի՛նչպես ուրեմն կարող է ոգնել ուրիշին։

Խնդիրը նույնիսկ այնտեղ է, վոր նա աղքատ է և պիտի առավել ապաստանա, յեթե ճգնի յուր մինչև այժմ բռնած ճանապարհը շարունակելու։ Նա աղքատ է, բայց այդ աղքատութիւնը միայն կարող է լարել նորա ջլերը, նորա գործունեութիւնը, աղքատութիւնը միայն կարող է աթաիլեցնել նորան յուր թմրութենից, վորպեսզի նշմարե յուր մինչև այժմ բռնած ճանապարհի ուղղութիւնը և փոխե նորան, հառաջ քան թե հասել եր մինչև նորա կորստական յելքը։ Յեթե հարուստ լիներ հասարակութիւնը, կարոտութիւն չկար հնար մտածելու, ճանապարհ փոխելու. նորա աղքատ լինելը, միևնույն ժամանակ, կարող է լինել նորա փրկութիւնը։

Պոլսի մեջ, նորա շրջակայքում կամ այլ քաղաքներում բնակվելու և ձուկի նման տապակ տապակ լինելու ախորժակը անհասկանալի չէ մեզ։ Վաճառականութիւն առնել մի աշխարհում, ուր դրամի գինը մի որվա մեջ այնքան փոխվում է, վոր վո՛չ առնողը գիտե նորա բուսեյական արժեքը և վո՛չ տվողը, վաճառականութիւն առնել մի տեղում, ուր վոչինչ հաստատ բան չկա, ուր շատ անգամ կհարկադրվիս այսորվա հազար ղուրուշ պարտքիդ փոխանակ վաղը յերկու հազար կամ ավելի վճարել, վաճառականութիւն առնել մի տեղում, ուր գործի սկսված որից յերևում է անանկութեան դալուկը, այսպիսի մի վաճառականութիւն մեզ միշտ անհասկանալի կմնա։ Հայոց ազգը Պոլսի մեջ կամ այլ գավառական քաղաքներում, յեթե դուրս հանենք արհեստավորքը և հայաստանցի բեռնակիրքը, մնացածը առհասարակ վաճա-

ական է. ի՞նչ վաճառական, կարելի չի ասել յուր անունով, ուրիշի գործակատար: Մեծագույն մասը այս տեսակ վաճառականների հաղիվ հազ կարողանում են ապրիլ, բավական բազմաթիվ մասը զոհ դնաց Թյուրքիայի դրամական անկարգության: Ամենափոքրագույն և շատ ամենափոքրագույն մասը գուցե տևում է դիարդ և իցե. բայց վոչ ավելի, քան թե դիարդ և իցե, վորովհետև այն պայմանների տակ անհնար է ուրիշ կերպ: Արհեստավորը և բեռնակիրը, վոր չունի և այս վաճառականների ունեցած շատ կամ սակավ նյութական ուժը, ապաստան է յուր յերկու ձեռքի աշխատության:

Բայց, չնայելով այս բոլորի վերա, ազգը որ ըստ որե թողնում է յուր յերկիրները և կենդրոնանում է քաղաքներում: Աղքատությունը ստիպում է նորան թողուլ յուր տունը, յուր ընտանիքը, յուր ամուսինը, յուր զավակները և գնալ Պոլիս կամ այլ քաղաք, աղքատությունից ազատվելու համար: Բայց այդ տեղերում էս նորան հանդիպ է դուրս գալիս նույն աղքատությունը, գուցե մի փոքր քաղաքային ամոք կերպարանքով: Դիցուք գեղում ստանում եր նա որական հինգ ղուրուշ, իսկ քաղաքում ստանում է ութ կամ տասն, բայց ինչ օգուտ այն յերեք կամ հինգ ղուրուշ հավելվածից, մինչ չե մնում նորա ձեռքում: Քաղաքի մեջ, համեմատությամբ շինական կյանքին յեթե վոչ ավելի գեթ հարյուրին քառասուն առավել է և ծախքը: Յեթե մարդը հինգ ստանալով աղքատ եր գեղում, աղքատ կլինի Պոլսի մեջ կամ այլ քաղաքներում, ութն կամ տասն ստանալով:

Բացի սրանից, ընտանեկան կյանքից զրկվիլը, դժոխային աշխատությունը, վորով պիտի շահի նա այն միքանի հավելյալ ղուրուշները, անտուն, վարատական և անմաքուր կյանքը, վոր պիտի անցուցանե նա զանազան իջևաններում: Յերեկոյան պիտի դա վաստակյալ, ուժաթափ, շատ անգամ և վնասված անդամներով, իսկ լուսաբացին, նույն յեդիպտական ծառայությունը, վոր սպասում է նորան: Չկա այն՝ ընտանեկան մխիթարությունը, ամուսնու և զավակների մտերմական, գողտրիկ և անմեղ հայացքը, վոր առանց ձայնի, առանց խոսելու, կարող են ամոքել ճակատագրի դառնությունը, և այս բոլորը անխորհուրդ, առանց հիմնական հաշվի և չհամեղոց, արմատական կերպով դարման տանել յուր աղքատության: Յեվ այսպես, իբրև պրատա, իբրև մեքենա ծառայելով արտասվելի ոտարության մեջ տասն-քսան տարի, կամ մեռանում է այնտեղ, թողնելով յուր ընտանիքը ծայրացյալ թշվառության մեջ, կամ վերադառնում է դեպի յուր յերկիրը: Վերադառնո՞ւմ է... բայց վոչ այնպես առույգ և զվարթ, ինչպես դուրս եր յեկել այնտեղից, այլ հասակն առած, ուժաթափ և թոշնած: Վերադառնո՞ւմ է յուր տունը... բայց ի՞նչ գտնի արդյոք այն լքյալ տունի և ընտանիքի վիճակը նորա բացակայության ժամանակ: Վերադառնում է յուր տունը, յերբ կորուսել եր աշխատելու ընդունակությունը և հարմարությունը: Ուրեմն, վերադառնում է նա միմիայն

յուր ներկայությամբ, յուր ապքաո և կարոտ ընտանյաց թիվը հավելցնելու համար։

Յեվ ահա նորա տասն և ութն կամ քսան տարեկան վորդին, վոր աճել և զորացել եր իբրև մի ծաղիկ յուր սեպհական հողի վերա, առնում է ձեռքը յուր հոր պանդխտական գավազանը և գնում է...

— Ո՞ւր բարով։

— «Պոլիս, Տրապիզոն, և այլն և այլն»։

— Ինչի՞ համար։

— «Աշխատելու և ընտանյաց ոգնելու»։

— Աշխատելու և ընտանյաց ոգնելու— կրկնում է խոսակիցը անհնարին տխրությամբ։

Անցնում է սորա վերայով մի քանի տարի, հանկարծ այս նորեկը լուր է առնում, վոր յուր ծերունի հայրը վախճանել է, մայրը հիվանդ է։ Մի փոքր ժամանակից և մայրը մեռնում է։

— Լաց, պանդուխտ, բնական զգացողությամբ չե՞ս կարող լաց չինել, բայց վոչ վոք մեղավոր չե, բացի քո հորից, բացի քեզանից, բացի այն սխալ և վնասակար ավանդություններից, վոր քեզ այդ որը ձգեց։

Պանդխտակիցքը գալիս են նորան մխիթարելու։

Մի յերկու քաժակ գինի... մի քահանա, մի «Հոգվոց» և պանդուխտի սիրտը պաղում է։ Բայց, նորա սիրտը պաղում է այն աշխարհից, ուր ծնել եր նա... ի՞նչ բանի համար վերադառնա։ Նա գտանելու չե յուր տունը, յուր ծնողքը, նորա աչքին պիտի հանդիպին յերկու գերեզման և մի ամայի բնակարան, յեթե և այն չե անցել ոտարի ձեռք։ Նա վորոշում է մնալ պանդղխտության մեջ և այս վորոշումով հոժարում է մինչև տակը խմել թշվառության բաժակը։ Այո, մնում է նա, բայց տունը մարեցավ։ Մի գերդաստան ընկավ հասարակաց խումբից։

Աղդյոք վո՞րքան գերդաստանք ընկնում են այսպես։

Սոցա վիճակից ավելի քաղցր չե այն մանր վաճառականների վիճակը, վոր նույնպես, լքանելով յուրյանց յերկիրը, ձեռք են զարկում վաճառականության, պանդխտանալով ոտար աշխարհում։ Նոցա Կյանքի շավիղի վերա ևս շատ ծաղիկներ և վարդեր, ամենայն քայլափոխ փո՞ւշ և տատա՞սկ։ Յեվ այնտեղ, ուր մարդը պատերազմ ունի չքավորության հետ, վոր չգիտե թե վաղը ինչո՞վ պիտի կերակրվի կամ ի՞նչպես պիտի դարմանե յուր ընտանիքը, ո՞ւր կմնա վերհամբարձ հասկացողությանց և բարոյական կատարելության հասնելու ձգտողությունքը։

Նա, բոլորովին մեքենայացած, մանում է յուր կյանքի թիլը, նորան չե պղտում մի հրապուրիչ հույս, նա չե տեսնում յուր ապագայի հորիզոնի վերա մի յերջանկության աստղ, նորա ներկան և ապագան խավար է։ Նա տանում է յուր կյանքի ծանր խաչը, մինչև վոր մի նյութեղեն խաչ տնկվի նորա գերեզմանի վերա։

— Իսկ նորա ընտանի՞քը։

«Այժմ կենդանի մարդիկ չկամին հոգալ և արմատականապես բարվոքել յուրյանց կյանքը, յուրյանց ընտանիքի ապագան, մեռա՞ծը պիտի հոգա»։

Նորա ընտանիքին սպասում է նույն թշվառությունը, ինչ որ վերևում ասացինք։ Նորա պատանի կամ մանուկ որդին, շատ անգամ տասներկու տասնհինգ տարեկան, հարկադրվում է թողուլ դպրոցը և գնալ ծառայության, որ միքանի ժամանակից հետո ոգնություն կարողանա հասուցանել յուր մորը կամ յուր քույրերին։

— Քույրե՞ր ևս ունի։

«Այո՛, յերկու կամ յերեք հատ»։

Մենք հրաժարվում ենք այս թշվառությանց պատկերները նկարագրելուց։ Նոցա ահարկու կերպարանքը սարսափ են բերում մեր վերա։ Այն մարդը, որի մեջ կա մի թարմ սիրտ, մի մարդկային կենդանի զգացողություն, ինքը կարող է զգալ մնացածը, իսկ չորաբեկ և թաբացած սրտերի համար բանականության ձայնը՝ հողմոց հնչյունք։ Ահա և այս տունը մարեցավ, սա ևս դուրս ընկավ հասարակաց շինվածքից։

Ի՞նչ կլինի այն շինվածքի վիճակը, յերեք նորան կազմող մասերը որ ըստ որե ընկնին, և մնացողը ևս առ վաղիվ հարատևելու չկարողանա յերաշխավորել։

Այն, ինչ որ պատկերացնում է այժմ մեր խեղճ աղգի վիճակը։ Ի՞նչ տեղ, ուրեմն, կարող ենք փրկության հնարը, ո՞րն է այս ցավերից ազատվելու ճանապարհը, որպեսզի աղգը չմեռանի և մանավանդ ազատվի, յերբ հասանե Թյուրքիայի դրամական կյանքի վճռական վախճանը։

✓ Աղգը, լավ ու վատ, փորձեց մինչև այժմ վաճառականությունը, նա փորձեց և վարձկանությունը և մշակությունը. սոցանից հետևեցավ նորա կյանքի ավերանքը, որի տակ այսոր ճնշվում է միջաբեկ։

Հիմնական և խելացի հնարը փրկության, ուրիշ բան չե կարող լինել, յերեք վոչ դառնալ յուր նախկին կացութեանը։ Հողը և յերկրագործությունը կարող է նորան փրկել։

— Ուրեմն բոլոր աղգը յերթա յերկրագո՞րծ դառնա, այդ անհնարին մի բան է և չհատարվելու յանկություն։

✓ «Չենք ասում բոլորը, բայց պիտի որ աղգի մեծագույն մասը յերկրագործ լինի, իսկ փոքրագույնը՝ յերկրագործի դուրս բերած արդյունքը մշակող և վաճառող, որ զուգակշիռը պահվի և աղքատությունը տարապիր դնա»։

— Բայց, դուք մոռանում եք, որ Թյուրքիան Յեվրոպա չե։ Նա չունի վոչինչ ճանապարհ, վոչինչ հաղորդակցություններ, որ անհրաժեշտ են մի յերկրագործին յուր բերքը տանելու մի տեղ, և մի վաճառականին յուր վաճառքը դուրս արձակելու համար։

«Այո՛, ընդունում ենք այդ, բայց դարձյալ կարելի չե գործ կատարել։ Մի՛թե սակա՞վ տեղեր կան մեծ և փոքր Հայաստանի մեջ, վոր մոտ են Սև ծովին և Միջերկրականին յերկու, յերեք, չորս կամ հինգ որվա ճանապարհով»։

Մենք չենք ասում թե հայը յերբեա սկսանեն յուր յերկրագործությունը Բաբելոնի սահմաններում։

Այն ժողովուրդը, վոր դուրս չե յեկել յուր պատմական աշխարհից, թող և չշարժի, մենք ընդդեմ ենք գաղթականության և գաղթականության չե մեր քարոզածը. իսկ այն մասը, վոր դուրս ե յուր աշխարհից, ասել ե թե գտնվում ե գաղթականության և պանդխտության մեջ, նորան հրավիրում ենք վերադառնալ, մանավանդ փոքր Ասիա, վոր ավելի հրապուրիչ և յուր ծովեզրյա դրությամբ։

Հերիք ե, վոր մի յերկու գլխավոր և հարմարավոր տեղերում սկսանի յերկրագործությունը, մյուս մասերում, վոր թերևս հեռի յեն ծովից, նույնպես կզարթի։

Վաճառականությունը կլրացնի պակասը։

Ո՛վ արդեսաւոիթ և հայոց ժողովրդին, վոր նա չքնաղի վերասաց տեղերում. և ի՛նչ տեղեր, ուր պարարտ հողը բուսուցանում և գրեթե ինքն ըստ ինքյան, քանդի յերկրագործական դիտությունքը դեռ վոտք չեն կոխել այն կողմերում։

Յեվ փո՞քր գործ կարելի չե տեսնել մի հողի վերա, ուր աճում և և բազմանում ե ամենայն ընտանի անասուն և պրաստ, ուր բուսանում ե բամբակ, ցորյան, բրինձ, վարսակ, դարի, տորոն,սուսամ, շաքար-յեղեգն, ճակնդեղ և այլ, հազար բուսական և ընդեղեն և ուր շերամաղարմանությունը և մետաքսագործությունը կարող են ծաղկիլ ու բարգավաճիլ։

Այս անվանված բերքերից գեթ յերկուքը կամ յերեքը բավական են հարստացնել մի բազմություն, վոր արիաջան փութով պարապում եր այն նվիրական գործով։ Ո՛ւր արդյոք կարող են անվաճառ մնալ և վնաս տալ յերկրագործին բամբակը, մետաքսը, շաքարը, ցորյանը և այլն։ Մենք չենք կարող թույլ տալ, թե հայոց աղգը չգիտե այս։ Բայց, միանգամ սովորություն և յեղել նորան այն ճանապարհը, վորով գնում և և այժմ ծանր և շարժում դեպի մի այլ ուղղություն։ Ահագին տերության ամպ ծանրանում և մեր գլխի վերա, յերբ մտածում ենք, թե անդլիացին գնում և Կանատա, Ավստրալիա, Հնդկաստան. ֆրանսիացին թողնում և յուր միշտ անհոգ, միշտ ուրախ և միշտ զվարթ Փարիզը և գնում և Ալիմիկեյի դժոխային գետինների տակ մի կտոր հող ճանկելու և նորա մշակությամբ յուր ապագան ապահովելու, մեր սիրելի հայը և վոչ անգամ կամի մտածել յուր ապագայի վերա, նա թողնում և յուր յերկիրները և վենդրոնանում և քաղաքներում։ Գուցե մանր մունր վաճառականությունը, միջնորդությունը, բեռնակրությունը ավելի արժեք ունին նորա աչքում։ Շատ դառն և մեզ ասել այս խոսքը,

բայց ծածկել այն, ինչ վոր ղպում ենք, համարում ենք վոչ միայն կեղծավորություն, այլ և վատություն։

Միքանի տարի կա, վոր լսում ենք հանապազ մեր վաճառականներից մի կարծիք, թե հարկավոր է աշխատիլ վաճառականության վերա, վորպեսզի ազգը հարստանա։

Ցերանի՞ թե, ասում ենք մեք. քանզի այն տեսակ վաճառականության մեջ չենք տեսնում ազգային հարստության սերմը։ Ցեվ մի՞թե կարծում են մեր պատվելի վաճառականք, թե Մենչեստրի, Մարսելլի կամ այլ յեվրոպական քաղաքների հետ առուտուր՝ ունենալը կարելի չե անվանել ազգային վաճառականություն միմիայն այն պատճառով, վոր ինքյանք հայ եյին։ Նոցա վաճառականությունը ազգային չի՛ և ազգի ընդհանուրի շահի հետ չունի վորևիցե վերաբերություն։ Այն ժամանակ միայն կարող է յերևել ազգային վաճառականությունը, յերբ նա, գլխավորապես, հայի առաջ բերած նյութը և արդյունքը վաճառե, այն ժամանակ միայն ազգը ոգուտ կքաղե մեր վաճառականների գործառնություններից, յերբ սոքա միջնորդ լինին հայոց ընդհանրության և Յեվրոպիո մեջ, այն ժամանակ ազգային և վաճառականությունը, յերբ նորա խարխափը դրված է ազգի հիմքի վերա։

Ցեվ մինչև այս թող հայ վաճառականը հազար տարի ապրանք բերե Յեվրոպայից ու վաճառե, կամ վոր նույն է, ոտարի ապրանքը ուղարկե Յեվրոպա, ազգին վո՛չ շահ կա և վո՛չ վնաս, վորպես նաև վո՛չ ազգային վաճառականություն. վաճառականը թերևս ինքը շահվի, դարձյալ ազգին բան չկա։ Ի՞նչ կոգնե սորա անհատական հարստությունը միլիոնավոր ազքատների ընդհանուր կարոտության։

Կանգնեցուր, յերեն կամիս, նոր սյուներ, բայց յերեն հիմքը ույժ չունի, շինվածքը ի՞նչպես կարող է կանգուն մնալ։

Հարկավոր է հիմքը նորոգել, կենդանություն տալ նորան, ույժ և զորություն դնել նորա մեջ, վորպեսզի կարողանա հաստատ պահել յուր վերա լինելոց շինությունը։

Ինչո՛վ պիտի նորոգենք այս հիմքը. լուսավորությո՞ւն տարածելով։ Ո՞ւր են մեր հնարքը, վոր կարողանայինք գործ դնել այս խորհրդով։

Հինգ, տասն հոգի ազգասեր, թերևս կարողության տեր մարդիկ, դնենք թե կամենային զոհել յուրյանց ստացվածքը ազգի ոգտին, բայց հինգ, տասն ույժը ի՞նչ կարող է ոգնել, ի՞նչպես կարող է դեմ դնել միլիոնավոր ժողովրդի կարոտության։ Ցեվ մի՞թե կարող է արտաքին հոգաբարձությունը լուսավորել և կրթել մի ահագին բազմություն, յերեն այդ բազմությունը ինքը չեր դիմում դեպի լուսավորության արևը։ Ցեվ այդ ահագին բազմությունը, վոր առավոտը զարթնելով պիտի մտածե, թե ի՞նչպես անանի կամ ի՞նչպես անուցանե յուր ընտանիքը, վորպես թե կարող եր մտածել լուսի կամ խավարի վերա։

Մեք չենք հավատում։ Սարկության մեջ, ազքատության մեջ չկա և չե կարող լինել լուսավորություն։

Թողնենք այս, մտահայաց փիլիսոփայությունը արժեք չունի մեր որեբում։ Այն փիլիսոփայությունը, որ անմիջապես չի բղխում մարդկային կյանքից և որ չի դադարում դարձյալ մարդկային կյանքի վերա, քանի որ մարդը ապրում է և ոդի և շնչում, մենք հրաժարակում ենք նորան իմաստականության և խաբեյության։ Մարդն է փիլիսոփայության և՛ հեղինակը, և՛ առարկան։ Անցան այն ժամանակները, յերբ մի տեսակ յերկարաբղանդ, խորամանկությամբ տիրելով մարդկային բանականության, յեգիպտական առեղծվածներով պատգամ էին տալիս նորան, անցան այն ժամանակները, յերբ մտածում էին պարզամիտ մարդիկ, թե ոդի անչափելի բարձրության մեջ դրած է փիլիսոփայության աթոռը։ Սո՛ւտ. փիլիսոփայությունը յերկրագունդի վերա չէ, մարդն է նորա աթոռը, մարդն է նորա և՛ քննողը, և՛ քննելին։ Բայց մարդը, հառաջ քան թե պիտի գոյանա, հառաջ քան թե դոյանալուց հետո պիտի ապրի, հառաջ, քան թե պիտի քննե և իմաստասիրե յուր անձը, յուր կյանքը, յուր անցածը, յուր ներկան, և հառաջ քան թե պիտի մտածե և հոգաբարձու լինի յուր ապագայի մասին, այս բոլորից առաջ մարդը կարոտ է նյութի։ Անցա՛ն այն ժամանակները, յերբ մշուշով պատած մարդկային յերևակայությունը վոչնչից տիեզերք էր ստեղծում։ «Ex nihilo, nihil fit!»*/Վերջին մանուկը կրկնում է այսոր մեր հետ։

«Ոդի, մարմին և ոսկերս ոչ ունի»— ասում է աստվածամարդը, իսկ մարդը մարմին և վոսկերք ունի, և այս բանձրությունը վկա չէ բերում Նա։ Առանց մարմնի չկա շոշափելի կենդանություն, իսկ մարմինը նյութ է և մարմնի և մարդու կյանքը նյութերի անդադար փոխանակություն։ Այսպես խոսելով, չենք մերժում մարդկային կյանքի բարոյական կողմը, թեև մեր ճանաչած բարոյականությունը մարդկային համերաշխություններից կբղխի և Սինայի հետ վերաբերություն չունի, այլ, կամենում ենք ասել, թե մարդը նախ և առաջ կենդանի չէ և ապա բարոյական եյակ։ Նորածին մանուկի համար, ինչ հարկավոր է նորածին մանուկը առնուլ մեզ որինակ, պատանու համար մինչև նորա խելահասությունը չկա բարոյական խնդիր. բայց մարդը մինչև այդ աստիճան հասանելը կարոտ է նյութի։ Նյութական խնդիրը միշտ կա։ Առաջին շոնչի հետ մարդը առնում է ոդի բթվածինը. և յերբ վերջին անգամ դուրս արձակում և յուր թոքերից ածխաթթուն, առանց վերստին բթվածինը ներս ընդունելու, նա կենդանի չէ այլևս։

Տնտեսական խնդիրը մահու և կյանքի խնդիր է, կլուծում ենք դարձյալ։ Ցավ անկարելի է հայոց ազգի հիմքը նորոգել, ույժ և զորություն դնել նորա մեջ, քանի վոր ազգը, հասարակ ժողովուրդը, կարոտ է տրակտատ հացի, քանի վոր նորա տնտեսական խնդիրը կարգի չէ դրվում։

Հայոց հասարակ ժողովուրդը աղքատ է և չունենալով վոչինչ կարողություն հաղիվ հազ սերմանում է և հնձում է այնքան, վորքանը նորա տարեկան ապրուստը, դիարդ և իցե, պիտի կարողանար ապահովել։ Նա չե կա-

* Վոչնչից վոչինչ կառեղծվի։ Խմբ.

ծող ավելի ցանել, վորովհետև ույժ չունի, և յեթե ունենար ևս, դարձյալ ընդունայն, քանդի բնակակից լինելով մի պաթվածահար ժողովրդի, վորպիսի և Թյուրքը, վորի մեջ չկա և հավիտյան չպիտի լինի վոչինչ գործունեություն, յերկրագործի ապրանքը կարող եր մնալ նորա ձեռքում, վորովհետև չկա այդ ապրանքի վաճառականությունը, չկա մինը, վոր ապրանք խնդրե նորանից, ապրանք ապսպարե նորան և յեղածը առնու արծաթ վճարելով փոխարեն: Ապա յեթե հայ շինականի ձեռքը մի փոքր դրամ անցնե, յեթե նա հույս ունենա, վոր յուր աշխատությունը պիտի գնահատվի, յեթե նա տեսնե յուր մշակության պտուղը, վո՞չ ապաքեն կրկնապատիկ կսկսի ցանել կրկնապատիկ հնձել: Վո՞չ ապաքեն դաշտերը կմշակվին և ժողովուրդը մի փոքր աղատ շունչ կառնու:

Բայց խնդիրը այստեղ է, թե ո՞վ տա յերկրագործին այն դրամը, վոր հարկավոր է նորա լքյալ բազումները ղորացնելու համար:

Վաճառականը կամ փոքրիշատե կարողության տեր մարդը, պատասխանում ենք մենք: Վաճառականը վո՞չ ապաքեն դրամ է տալիս յուր վաճառելի ապրանքը ձեռք բերելու համար: Վո՞չ ապաքեն ունի մի քանի փարա, վորի շրջանառությամբ ապրում է նա և նորա ընտանիքը: Կարողության տեր մարդը վո՞չ ապաքեն յուր արծաթը դնում է սեղանավորի մոտ կամ տալիս է մանավոր մարդերի տոկոս առանալու ակնկալությամբ: Վաճառականը, փոխանակ Յեվրոպայի ձեռագործքը գնելու և փոխանակ պատահարների ձեռքում խաղալիկ դառնալու, կարող է ամենայն վստահությամբ հում նյութեր առնուլ հայ յերկրագործից, ապրանք ապսպրել նորան, մանր մունր գոմարներ տալ հառաջուց այս և այն շինականին և հունձից հետո, ապրանք ստանալ փոխարեն: Կարողության տեր մարդը նույն այս ճանապարհով կարող է աճեցնել յուր գոմարը: Յեվ յեթե չկամի նա ապրանքը պահել յուր ձեռքում, մի րոպեի մեջ կամեցավ և ահա պատրաստ են վաճառականք գնել նորա ապրանքը:

Այս ճանապարհով միայն դրամի շրջանառությունը կմտնե ազգի մեջ, այս ճանապարհով միայն ազգը կարող է բարվոքել յուր տնտեսական վիճակը, այս ճանապարհով նյութական ույժը կանցնե ազգի ձեռքը. ազգը կղորանա, և յերկրագո՛րծը և վաճառակա՛նը և կարողության տեր մա՛րդը որ ըստ որե կհարստանան: Զուգահեռաբար սորա հետ կվայելնեա և նոցա գործունեության ասպարեզը: Յեվ վորքան ասպարեզը լայնանա, այնքան շահը և հարստությունը կվայելնեա, և վորքան շահը և գործունեությունը աճի, այնքան և ասպարեզը կտարածվի:

Մինչև այժմ հայոց ազգի մեջ խախուտ և անհիմն վաճառականության խորհրդով հիմնվեցան մեծ կամ փոքր ընկերություններ, նորանցից վոմանք ընկան դեպքերի հարվածի տակ, վոմանք տևում են կիսամեռ, բայց մինչև այժմ չերևեցավ և վո՛չ մի ընկերություն, վոր պարապեր յերկրագործության և յերկրագործական բերքերի մշակության, մինչև այժմ չերևեցավ մի ընկերություն ազգային վաճառականության: Հետաքրքրո՞ւն համարեցան ին-

քյանց. բայց մեզ թվում է միայն մի լոկ սովորություն, վոր հայկական վաճառականք մշակ դարձան յեվրոպացոց:

Վորևիցե ձեռագործ ապրանքով վաճառականություն առնողի շահին հակառակ է, յեթե նույն ապրանքով վաճառականք բազմանան նորա չորս կողմում. իսկ բնական բերքերի համար այս վտանգը ևս չկա, վո՛րքան կամիս, այնքան կարես: Ձեռագործ ապրանքների մեծագույն մասը կյանքի եյական պիտույքներ չեն և նորա մանր վաճառականը պիտի վաճառե յուր ապրանքը հասարակ ժողովրդին: Ժողովուրդը շատ անգամ շռայլանում է, այո՛, բայց և շատ անգամ նորա մեծագույն մասը հարկադրվում է միմիայն կյանքի եյական պիտույքը հոգալ, կարելի յեղածին չափ տնտեսություն գործ դնելով ձեռագործ բաների մեջ:

Բացի սորանից, մեր հայ վաճառականների համար, սակայն տարբերություն կա ձեռագործ ապրանքով և յերկրագործության բերքերով վաճառականություն առնելու մեջ: Թողնենք տակավին այն, որ ձեռագործի վաճառականությունը չե դարձնում դեպի մեր ազգը դրամի շրջանառությունը, հերի՛ք է միայն ցույց տալ, վոր ձեռագործի վաճառականը առողջ դրամ պիտի վճարե Յեվրոպայից ստացած ապրանքի փոխարեն, իսկ ինքը պիտի վաճառե Թյուրքիո մեջ ո՛վ գիտե թե ինչ կերպ կամ ինչ դրամով:

Սորա հակառակ, հում նյութերի, յերկրագործության բերքերի վաճառականը պիտի գնե յուր ապրանքը Թյուրքիո մեջ և պիտի վաճառե յեվրոպացոց, ասել է թե, փոխանակ տալու ինքը, պիտի ստանա առողջ դրամը:

Ձեռագործի վաճառականը յուր սովորական չափից ավելի (թեև ունենար ավելի դրամական ույժ) չե կարող ապրանք բերել Յեվրոպայից, վորովհետև սովորական չափով բերածը ևս ապաստան և հանդամանքներին և շատ անդամ մնում է անվաճառ, կամ, սովորութենից դուրս յեկած լինելով կամ մի այլ պատճառով, մինչդեռ հում նյութերի համար չկա վորևիցե սահման: Յեվրոպան, յուր ներկա վիճակի մեջ, նայելով նորա յերկրագործության պայմաններին, նայելով նորա ձեռագործության աստիճանին, նայելով միլիոնավոր բազմությանց անհող վարձկանության, միշտ և միշտ կարող է թե հակառակ ապրատի վերաբերյալ հում նյութերի և թե գործելի կամ մշակելի նյութերի, վորոնց վերա հիմնվում են նորա ձեռագործությունքը, նորա դրծարանքը և նորա մեքենաները:

Ասացինք վերևում, թե մեր վաճառականք յեվրոպական ձեռագործի առևտուրը սովորություն են արել ինքյանց: Այո՛, սովորություն է այս, բայց այն աստիճանի կամակոր, վոր գրեթե դառնում է այսո՛ր-մի ազգային ավանդություն: Յեթե քննության տակ դնենք այն սովորությունը, անհնարին է լինում չափել այն սարսափելի վիհի խորությունը, վոր բացվում է մեր առջև: Գրեթե ազգովին սովորություն առնել ապրանք գնել Յեվրոպայից, մինչ ինքյանք կրկին անգամ ավելի պիտի կարողանային վաճառել նորան, դրամ ուղարկել Յեվրոպա մի այնպիսի տեղից, ուր վոսկին և արծաթը դարձել է մի առասպել, և ուր ինքը տերությունը չգիտե թե ինչ ճանապարհով

առնու Յովհաննէսից, մեր կարողութենից վե՛ր և այս տովորութեան հետ հաշտվիլ։

Յերբ վաճառականը, մի շփոթյալ և աղմկյալ տեղում, կյանքի հոսանքի մեջ ընկած, նայում և մասնավորապես յուր գործին, և յերբ ժամանակ չունի կամ չկամի քննել յուր գործը, յուր ընթացքի ուղղությունը, այնտեղ չե յերեվում այն վիհը, վորի մասին խոսեցանք։ Իսկ յերբ ամենայն սառնութեամբ քննեն յուրյանց բռնած ճանապարհը և այս քննությունը հառաջ տանին մինչև գործի տարրական պարզությունը, այնտեղ ճեղքվում է վարագույրը, և ահա վիհը տեսնողի առջև է։ Կամայական անձնախաբեությամբ վիհը չքննելով, արդյոք փրկվա՞ծ է ձեռագործի վաճառականը։ Մեք թողնում ենք համեմատական բաղդատությունը վաճառականության յերկու մեծ ճյուղերի, այսինքն, ձեռագործի և յերկրագործական բերքերի. հետևինք միայն ձեռագործի վաճառականին, ըստ ինքյան։

Ձեռագործ ապրանքի մանր վաճառականը ույժ չունի, նա խաղալիկ է յուրյան ապրանք տվող մեծ վաճառականի, կամ գործարանատիրոջ և կամ միջնորդի ձեռքում։ Ջորությունը նոցա մոտ է, վորովհետև նոցա մոտ է վաճառականի պարտքի մատյանը կամ մուրհակը։ Մյուս փոքրից խաղալիկ է բյուր հանգամանքների ձեռքում։ Նորա ապրանքը, ինչպես ասացինք, չունի այն ույժը, այն կարևորությունը, վոր մարդը առանց նորան չկարողանա ապրել։ Ապրանքը մնում է անվաճառ, կամ վաճառվածի դրամը անհնար է ձեռք բերել, գնողը չե վճարում, մյուս կողմից վաճառականի հատուցումի նզովյալ ժամանակը մոտենում է և մոտենում է անխնա։ Վաճառականը շվարել է, շատերն են շվարել նորա նման. մնում է առանց վաստակի վաճառել ապրանքը, վորպեսզի պարտքը կարողանա վճարել։ Յերեք գործ չդնե այս հնարը, հարկավորապես, պիտի շահով պարտք առնու և այնպես վճարե. չվճարել յուր ժամանակին չե կարող, առանց գործերը դադարեցնելու։ Բայց այն տոկոսը, վոր պիտի վճարե յուր նոր պարտքի համար, կտանի նորա ապրանքի վաստակը, թեև սկզբում ծանր թվեցավ նորան ապրանքը առանց վաստակի վաճառել և պարտքը վճարել։ Ուստի իջեցնում է նա ապրանքի գինը հարյուրին միքանի տասանորդ։ Մյուս վաճառականը ի՛նչպես կարող է պահել նույն ապրանքի նախկին արժեքը, իջեցնում է և նա։ Կեսմեռ, կես-Վենդան անցնում են միքանի որ։ Բայց վճարի ժամանակը ավելի մոտեցավ, ի՛նչ ճար։ «Այս առաջին հատուցումը ձեռք բերելու համար», վճռում է նա յուր մեջ, «հարկավոր է վնասով ևս վաճառել այս անգամ, հետո, կբարձրացնեմ գինը, և կլրանա պակասորդը»։

Կլրանա... Մյուս կողմից այն մարդիկը, վոր պարտական եյին նորան, չեն վճարում յուրյանց պարտքը, առևտուրը ընկած է, վոսկին կրկին արժեքի բարձրացած, և ահա յերկրորդ, յերրորդ և մյուս վճարները հետզհետե, մահի պես։ Ի՛նչ յեղավ հետևանքը։ Մանր վաճառականը բոլոր ժամանակ աշխատեցավ յուրյան ապրանք տվողի ոգտի համար. և վոչ միայն այսչափ, այլ առևտուր սկսելու ժամանակ նորա մեջ բերած գումարը ևս հալեցավ,

բոլոր ձեռքի ապրանքը պարտքի վրայանակ տալուց հետո, դեռևս պարտական մնաց. և առանց ամենայն հնարի, վոր անհրաժեշտ և ապրուստի համար։

Ո՛վ դնա այժմ այն վաճառականը, ի՛նչ գործե։ Հավատարմությունը ընկած է, վոչվոք ապրանք կամ դրամ չե տալիս նորան, և չեթե տային էլ, հարյուրին իննսուն անոգուտ. քանզի նույն գործողությունը, ինչ վոր անցավ առաջին անգամ, պիտի կրկնվի անշուշտ, վորովհետև նույն հանգամանքների ազդեցության տակ է նա, և գործը հիմք չունի։ Ի՛նչ գործե, ուրեմն, այդ վաճառականը։ Մնում է նորան իբրև վարձական ծառայել ուրիշի մոտ, բայց այս հեշտ բան չե. նա ևս մարդ է, զգացմունք ունի։ Նա, մինչդեռ ինքը ուներ մի փոքր գործ, յուր անձը զգում էր ազատ, գո՛նե վորևիցե պարոնի անմիջական հրամաններից, թեև կատարելապես անկախ չէր, և նա չերբեք չե մտածել այդ մասին, վորովհետև գիտեր, թե վորոնց վոր պարտք ունի, կախվում է նոցանից, և թե մի անհաջող վայրկենում կարող են նոքա ճմլել նորան։ Բայց, չնայելով այս բոլորի վերա, կախողությունը ամենայն ժամանակ զգալի չէր, մանավանդ, չեթե գործերը մի փոքր հաջող եյին. իսկ այժմ, դրամական կամ առևտրական նավաբեկությունից հետո, հարկը ստիպում է նորան չերթալ չենթակայանալ մի կոպիտ հարաբերության, վոր լինում է պարոնի և ծառայի մեջ, տանել այն բոլոր անախորժությանց և հանդիմանությանց, արհամարհոտ և խեթ հայացքների, վորոնցով առատորեն վարձատրվում է մի խեղճ ծառա մի անտաշ և տմարդի պարոնի մոտ։

Թերևս, չեթե վաճառականին հանդիպեցավ այս կատաստրոֆը չերիտասարդության ժամանակ, դնենք թե ատամները սեղմելով, սև ճակատագրին հնազանդվելով ընդունեց այս խաչը. բայց այն հիսուն-վաթսուն տարեկան մարդը, ընտանիքի և պավակների տեր, վորոնց դաստիարակելու համար վոչ մի պարոն չե կարող տալ նորան բավական վարձ, թողունք և այս, ի՞նչպես չերթա նոր ինորո ծառա դառնա այդ հասակում։

Բայց այստեղ ընտրություն չկա և հրաժեշտ չե կարելի տալ, քանզի աղքատություն կա մեջտեղում, քանզի պետք կա, քանզի հացի խնդիրը ամեն րոպե բաղխում է նորա դուռը։ Յեվ մի այդպիսի վատաբախտ մարդու համար հեշտ չե նաև գտնել մի պարոն, վոր հոժարեր ընդունել նորան յուր մոտ։ Հիսուն-վաթսուն տարեկան մարդու առաջարկյալ ծառայությունը պարոնների համար չե կարող լինել մի հրապուրիչ բան։

Մեզ կարողեն ասել, թե մեք նկարագրում ենք այս կացութիւնների միայն տխուր և սև կողմերը։

Վորովհետև, պատասխանում ենք, այն միխիթարիչ և լուսափայլ կողմերը, վոր այդպես հրապուրում են և յուրյանց են քարշում հետզհետե գրեթե բոլոր հայոց ազգը, վորի համար դարձել են նոքա կատարելություն— ide'al, վոչ միայն լոկ բացատրություն են, այլև տեսաբանական խաբեություն,— illusion optique! Բացատրությունը չե կարող իբրև որենք քննվիլ, ուրեմն և չե կարող որինակ դառնալ ընդհանուրին։

Այսօր ամեն մարդ աշխատում է վաճառական դառնալ, նա հավատում է, թե վաճառականությունը կարող է նորան փրկել. բայց չկամի մտածել, թե ունե՞ր արդյոք յուր ձեռքում այն պայմանները, որոնցով միայն հնարավոր է վաճառականությունը: Այն, ինչ որ նոքա անվանում են վաճառականություն, թո՛ղ ներվի մեզ հրատարակել, լոկ միջնորդություն, ուրիշի ծառայություն և առավել ուրիշին հաճ թե յուրյան ոգտակար: Վաճառականության մեջ շահը և ոգուտը, վո՛րքան ընթացք ևս կատարե, վո՛րքան զանազան շրջաններ առնու, իվերջո, եակաևապես, փինդրոնանում է այնտեղ, վորտեղից դուրս չելավ այն ապրանքը կամ դումարը: Զորությունը և ուժը այնտեղ է, կրկնում ենք, ուր որ վոր դրամագլուխը կամ ապրանքը կա: Առնողը տկար է, քան թե տվողը, առնողը կարոտ է, քանզի վոչինչ ունի: Նա միայն հույս ունի, թե ահա կառնու ապրանքը, կվաճառե, նորանից կվճարե ապրանքի տիրոջ յուր պարտքը և ավելորդ շահով ինքը կապրի կամ դանձ կդիզե: Յեվ այս տեսակ վաճառականությամբ թերևս, յեթե հայը միջնորդ կամ գործակատար լիներ յերկու համազոր աշխարհների մեջ, դուցե կարողանար ապահով յեղանակով ապրիլ, թեև միմիայն յուր համար, այսինքն առանց ազգի ընդհանրության մի ոգուտ բերելու. բայց, Յեվրոպիո և Թյուրքիո մեջ և վոչ անգամ յերազելի չե այն ապահովությունը, քանի վոր Թյուրքիան հարաբերում է Յեվրոպային, իբրև բացասական մեծություն, դրական մեծության: Մեզ ուրիշ վկայության հարկավոր չե, մեր առածը ապացուցանելու համար, ազգի վիճակը առնում ենք իբրև փորձություն, և նորան դարձյալ իբրև վկա դնում ենք ազգի առջև: Այսքան տարիներ դնում է ազգը այս ճանապարհը և այս վերջին որերում, խուռն հոր ձանքով, բայց այս վաճառականների ընդհանրությունը— միջին թիվը, հազիվ հաղ ապրում է, և աղքատությունը որե որ տարածում է յուր սև վարագույրը ազգի վերա: Զարհուրելի չե մեզ յերևակայել միլիոնավոր մարդիկ (հարկավոր ևս չե յերևակայել, վորովհետև իրականապես կան), ոդին ապատան արած յուրյանց կյանքը: Նոքա գալիս են և դնում են, «որպէս ճողմ որ շնչէ, որ ոչ գիտէ ուստի՛ գայ կամ, յո՛ երթայ»[17]: Չե՛, այս անբնական մի գործ է, և ազգի կաթվածահարության աղբյուրը բղխում է այստեղից: Մինչև ազգը չկորուե այս ուղղությունը, մինչև վոր նա չկատարե մի անտեսական հեղափոխություն, յուր մինչև այսոր բռնած ընթացքի մեջ, և մինչև չդիմե դեպի բնության դաշտը, հառաջադիմությունը աներևակայելի չե: Թո՛ղ հազարավոր դառնա հարուստ անհատների թիվը, թո՛ղ հարյուրավոր լինի յեվրոպական դպրոցների մեջ կրթություն ստացողների թիվը, ի վերա այսր ամենայնի, ազգի ընդհանրությունը կմնա անշարժ և անդամալուծյալ: Այն որից պիտի թվենք ազգային նորոգության դարագլուխը, յերբ ազգը դիմե դեպի բնությունը, վոր վոչ միայն կարող է փրկել և ազատել ազգը աղքատությենից, այլև, մեծ զարկ տալ նորան հառաջադեմ ուղղության մեջ:

Բնության մեջ չկան այն վտանգները, ինչ վոր կան մեքենական վաճառականության մեջ. այնտեղ մարդը ապահովյալ է բնության որենքներով:

Այն մարդը, վոր բնության հետ գործ ունի, վոր անմիջապես հողի՛ց ստանում է բնության բերքերը, և նոքա չեն նորա նյութական ուժը և կարողությունը, հաստա՛տ է յուր վոտքի վերա. նա կարոտ չէ ուրիշին, դորա փոխանակ, ուրիշը կարոտ է նորան: Մանր վաճառականը, յուր ընթացքի մեջ, կարոտ է մեծ վաճառականին, զանազան միջնորդական տունների, գործարանների և ի վերջո դրամագլխի տեր մարդոց. իսկ այն որից, յերբ նա թողնց նորանց և դեմքը դարձուց դեպի բնության հյուրընկալ գիրկը, հարաբերությունքը փոխվում են, և՛ միջնորդը, և՛ մեծ վաճառականը, և՛ գործարանը, և՛ մյուսը, և՛ մյուսը կարոտ կլինին նորան: Ուժը կանցնի նորա ձեռք, թո՛ղ, վորշափ կամի, փոքր լինի նորա ապրանքը— ուժը, այնուամենայնիվ դրական դորություն և. քանզի ապրանքի փոխարեն պիտի ստանա զուտ արծաթ:

— Մի՛թե այս վաճառականություն չե՞, մի՛թե այդտեղ չե՞ կարելի վնասի հանդիպել, և այլ հարյուրավոր հարցական միրևներ լսվում են այստեղ:

«Վնաս, վնասից տարբեր է: Անհիմն վաճառականության մեջ հարյուրին իննսուն հավանականություն կա վնասի հանդիպելու, իսկ բնականի մեջ, նույնքան հավանականություն նորան չհանդիպելու: Այլ խնդիր է ջուրը մտնել, թույլ տալով խեղդվելու կարելություն, և այլ խնդիր է մտնել, հաստատ դիտելով, վոր պիտի խեղդվի»:

Հայոց ազգը, քանի վոր չունի յուր սեպհական յերկրագործությունը, բոլոր նորա ճյուղերով, նորա վաճառականությունը ե՛ և կլինի յեվրոպացոց համար ծառայություն: Իսկ այն որից, յերբ ազգը կսկսի մշակել հողը, յերբ մարդիկ կդառնան յուրյանց հայրենի, բարեբեր յերկիրները, վոր այսոր դրեթե ամայի և խոպան են, այն որից կկենդանանա և հայոց վաճառականությունը:

Յեվ այն որի վաճառականը վոչ միայն կազատվի յեվրոպացոց համար ահ ու վախով և բյուր նեղությամբ գործ կատարելուց, վոչ միայն ինքնուրույնաբար կկանգնի յուր վոտքի վերա, այլ և յեվրոպական արծաթը և վոսկին ներս կհոսեցնե ազգի մեջ, և ինքը կշահվի տասնապատիկ ավելի և մեծ ու մեծ շահ կբերե ազգի ընդհանրության, վոր է ազգի հիմքը, լծակը, շարժարանը: Ընդհանրությունը կապահովվի, քանզի գորությունը կգրավե յուր կողմը, քանզի Յեվրոպան կարոտ է նորան, քանզի, յերկրի բերքերը դուրս տալով, յուր մեջ պիտի դարձնե գրամի շրջանառությունը:

Յեվ միայն հում բերքերը չեն, վոր կարող են գրավել հայ վաճառականի գործունեությունը. այդ բերքերի մշակությունը, մի լա՛յն հանդես, մի բնակա՛ն ասպարեզ այն ժրաջան և գործունյա մարդերի համար, վոր ստուդապես կամին պարապել վաճառականության: Նույն այն գործարանքը, նույն այն մեքենաները, վոր կարող են ներգործել Յեվրոպայի մեջ, ծանր պայմանների տակ, կարող են ներգործել և Ասիո մեջ, ուր կյանքի պիտույքը, պարզությունը և այլ բնական հանգամանքները ավելի դյուրություն կարող են տալ այսպիսի ձեռնարկությանց:

Շատ մեքենայք, որ Եվրոպայի մեջ ներգործում են կրակի և շոգու զորությամբ, Ասիո պարզության մեջ կարո՛ղ են ներգործել սարերից կատաղաբար վազած ջրերով, որի համար հարկավոր չե վառնել այն գրամը, ինչ որ եվրոպացին վառնում է ածուխի կամ փայտի համար։ Եվ այն ապրանքը, որի հում նյութը, շատ անգամ Ասիայից ելրթալով Եվրոպա և պատրաստվելով այնտեղ, հասնում է դարձյալ Ասիա, անցնելով միքանի ձեռքերից, նույնը, ավելի արժան, և նույն վաճառականությամբ, կարող է պատրաստվիլ Ասիո մեջ։ Աշխարհագրական անվանականությունքը չեն պատճառ, որ Եվրոպան, Եվրոպա չե դարձել, իսկ Ասիան, Ասիա ու հետ է մնացել։ Այո՛, կլիմաները կարող են շատ բան պատճառել, բայց Եվրոպայի և միջը Ասիո ելեղանակները դրեթե մեծ տարբերություն չունին, և ասիականը, ելթե ավելի հարմար, ավելի ձեռնտու և ավելի ախորժելի չե, գո՛նե քնավ պակաս չե Եվրոպայից։

Նորա կախարդական թովչությունը վոչ նորա աշխարհագրական անունի մեջ է և վոչ նորա կլիմայի մեջ։ Նորա գործունեությունն է, որ այսոր պատգամ է տալիս բոլոր ելերկրագունդին։ Շվեյցիայի սառնամանյաց մեջ, նա, արվեստով և բյուր հոգաբարձությամբ հառաջ է բերում այն, ինչ որ առանց աշխատության բնությունը ինքը կարող է մեզ տալ Ասիայում, ելթե միայն լինի մեր մեջ ստանալու ձգտողությունը։ Եվրոպական հողը, անդադար ներգործելով, կարող է այժմ արվեստական հնարների, բուսաբեր և արգավանդ լինելու համար, մինչդեռ ասիական հողը մնացել է մինչև այժմ յուր կուսական վիճակի մեջ անձեռնամերձ, անարատ։ Ո՛ր թողունք այն բերքերը, որ վոչ արվեստը և վոչ գիտությունը կարող են հառաջ բերել Եվրոպիո մեջ, և որ այնպես առատորեն պարգևել է բնությունը Ասիային։

Անգլիո ելերկրագետքը և անտեսականքը, հաշվի տակ դնելով յուրյանց հողի մեջ ելեղած բոլոր ածուխի հանքերը, նույանիկ դուրս ելեկած ածուխը, և Անգլիո տարեկան ածուխի պետքը և գտանելով, որ հարյուր ելերեսուն տարուց հետո Անգլիան չպիտի ածուխ գտնե յուր հողի մեջ, ահա այս ելերկու տարի ե, որ «Ցերեմիայի վողբ» են կարդում յուրյանց գլխին. Իսկ Ասիան մոռանում է միշտ ելերեկը. այսոր և նորա ատովածը, որ պաշտում է, վաղը ի՛նչ կամի թող լինի, ո՛վի բան ու գործը կարվել է, որ վաղվա համար մտածե։ Մեք կարծում ենք թե, ավելի շուտով, այս բնավորությանց մեջ է Եվրոպիո և Ասիո տարբերությունքը։ Այո՛, գործունեությունը, շարժողության հետևանք է, և առանց շարժողության չկա գործունեություն։ Ուր չկա գործունեություն, ասել է չկա շարժողություն, իսկ ուր շարժողություն չկա, այնտեղ կյանք չկա, այնտեղ թագավորում է մահը։ Այսպիսի դիպվածում անունը հանցանք չունի։ Եվրոպայի մի վոտնաչափ հողը ևս հաշված է, իսկ Ասիո մեջ կարծեմ գտնվին տեղեր, ուր տասն տարին մի անգամ, և այն դիպվածով, հազիվ վոտք է կոխում մի մարդ։

Եվրոպան ուշ ծնեցավ, բայց շատ արագ ծերանում է։ Մի քանի դարու մեջ նա անցավ պատմության շատ կերպարանքներ— phase, փոփոխեց և փոփոխում է դեռևս կառավարության ձևերը, բայց ցարդ չհասավ յուր նպատակին, վորովհետև միշտ աշխատեցավ ճանապարհը լայնացնել, ուղղել, հարթել, մոռնալով, վոր յուր նեղությունը ճանապարհից չե այնքան, վորքան վոտքի կոշկից, վոր սեղմում է և չե թողնում մեն դալ։ Այսպիսի դժբախտության մեջ ի՛նչ կոգնե ճանապարհի լայնությունը, քանի վոր կոշիկը նեղ է։ Այո՛, Եվրոպան կանգնած է այսոր մի դժվար լուծանելի խընդրի առջև, այդ տնտեսական խնդիրն է, մարդը և հացը։ Եվ այդ խնդիրը, կանուխ թե ուշ, բևև սոսկալի փոթորիկներով, պիտի լուծվի։ Վոչինչ բրոնություն, վոչինչ պահպանողական համակարգություն, վոչինչ ընդդիմադրություն, վորևիցե կողմից, չե պիտո կարողանա փակել նորա առաջքը, թևև այսոր հալածակա՛ն և աքսորակա՛ն են այդ ապագայի մարգարեքը և առաքյալքը։

Եվ ինչպես միջին դարերում, Ասիո անկյուններից խուռն բարբարոսներ իջան ու հեղեղեցին Եվրոպա, այնպես էլ մարդու և հացի խնդիրը լուծվելուց հետո, եվրոպական մարդը պիտի իջանե Ասիա։ Պիտի գա որ, յերբ այն պառավ Ասիան պիտի մանկանա, և ասիական ազգերը այն վայրկենից պիտի սկսանին յուրյանց պատմությունը, յեթե ընդունակ լինին իբրև ազգ ապրելու. իսկ յեթե վոչ, որ ըստ որե կանհետանան, վորպես մի կաթիլ համատարած ծովի մեջ։ Ամերիկան, Ավստրալիան, այլ յերկիրներ և կղզիք կենդանի վկայք են մեր խոսքին։ Ասիո ապագան ավելի մեծ է, ավելի լայն և տնտեսական խնդրի վերաբերությամբ, քան թե Եվրոպիո ապագան։ Հայերին մնում է վաղորոք ոգուտ քաղել յուրյանց դրութենից։

Կարող են, դարձյալ, դիմադրել, վոր յեթե մեր հայացքով, միայն մարդ ու հաց կա աշխարհի յերեսին, յեթե մեք մի կտոր հողի վերա քրոջում ենք հավասար իրավունք, ուրեմն, ազգության խնդիրը և ուշադրության արժանի բան չե. մարդը, ապրել է հայի անունով, թե մի այլ անունով, դարձյալ միևնույն մարդն է, և այլն

Այո՛, յեթե հավասար իրավունքը այսոր խոստովանվի բոլոր յերկրագունդի վերա, յեթե ներկա յեղած պետական համակարգությունքը այսոր վոչնչանան, վաղը վոչ միայն չե մնում ազգության խնդիրը, այլ հարկավոր էլ չե։ Բայց այս է բանը, վոր դորան հասնելը ժամանակի չե կարոտ. և մինչև այն ժամանակ «արքայությիւն աստուծոյ բռնաբարի, և բռունք յափշտակեն զնա». մինչև այն ժամանակ, «սահմանք քաջաց, զենք իւրեանց»— ասում է մեր իմաստուն Ծերունին[18]։

Մեք ուրախ չենք, վոր այսպես է լինում, մեք ուրախ չենք, վոր մի ազգ ճնշում է, հարստահարում է մյուս ազգը, և յուր զենքով սահման է դնում նորա հողի վերա, բայց վորովհետև մեր տրտմությունը վոչինչ է,

համեմատելով այն մինչև այժմ չեղած կարգի հետ, ուստի մեր կարողությունքը ուղղում ենք մեր ազգությունը պաշտպանելու համար: Յեվ մեր ամենից պարտքն է մինչև այն ժամանակ մնալ ազգության դրոշի տակ, վորքան ուրիշը կրում է յուր սեպհական ազգության դրոշը: Բայց, այս ասելով, կամք չունինք ազգությունը կույր ֆանատիկոսություն դարձնել: Հերիք է, վորչափ կույր և ֆանատիկական ազգությունը ունի յուր չեսական կողմերը. հերի՛ք է, ասում ենք, վոր մի ազգություն յուր մի շամփուր խորովածի համար մորթում է մյուս ազգության չեզը...

— Այս ինչ հակառակախոս դրուբյունք են,— մտածում է մեր ընթերցողների միջից նեղսիրտ մարդը:— Յերկու տող հառաջ ազգություն է քարոզում, հետո ազգության մեջ նշմարում է չեսականություն և թուլացնում է առաջին տպավորությունը:

Մեր պարտքն է, ուրեմն, հառաջուց պարզել մեր հայացքը, և այս ծանրակշիռ խնդրի համար մի յերկու քայլ խոտորիլ մեր ուղիղ ճանապարհից: Այս պատճառով, մեջտեղ դնում ենք խնդիրը— ի՛նչ է ազգությունը:

Ազգությունը իբրև պատմական իրողություն, իբրև հավատի յերևույթ, ընդհանուր մարդկության կյանքի մեջ, չի կարելի մերժել, թեև բանականությունը յերբեք չի կարող արդարացնել նորան: Մարդը մինչև այժմ չի հասել այնտեղ, վոր առանց յերկրորդական և պաշտոնական անունի հանդես գա, միայն մարդու բնական անունով. մինչև այժմ մարդը չկա աշխարհի յերեսին, մինչև այժմ ազգեր կան:

— Խայտառակ դրուբյուն,— շարունակում է մտածել մեր նեղսիրտը:— Ազգերը մարդերից չե՞ն բաղկանում. և ինչպես կարելի չե բաղկացյալը ընդունել, իսկ բաղկացնողը մերժել և ուրանալ:

«Յերբ մարդը, յերևելով այս կամ այն ազգության մեջ, այլևս չի կոչում ինքը յուրյան մարդու անունով, յերբ նա անվանվում է անգլիացի, գերմանացի և այլն, և այլն, և ընդհանուր մարդկության շահը վոտքի տակ կոխելով, անքուն հսկում է միայն յուր ազգի շահի համար, յերբ մարդիկ հասանում են մինչև այնտեղ, վոր վոչ միայն մարդը չեն ճանաչում մարդու անունով, այլ շատ անգամ միլիոնավոր բազմությանց գոյությունքը ուրանում են, չնայելով վոր այդ բազմությունքը ներկա չեն. յերբ թթվածինը և ջրածինը միանալով, կորուսանում են յուրյանց տարրական հատկությունը և յերևում են վորպես ջուր, վորի հատկությունը տարբեր է և՛ թթվածնի և՛ ջրածնի հատկություններից, մեզ մնում է ընդունել այս յերևույթը վորպես իրողություն:

Մարդերի բազմությունը ազգ ճանաչելով, շատ անգամ ուրանում են նոցա սերունդի գոյությունը: Փյունիկեցիք չկան, կամ այնինչ հին ազգը մեռավ: Միթե այդ ազգերը բաղկացնող անհատները ամենեքի՞ն մեռան, ամենեքի՞ն կոտորվեցան, և բնա՞վ սերունդ չթողեցին, վոր այսոր յերևեր և կենդանի մարդերի միլիոնավոր բազմությունը մեռելոց կարգը չանցներ: Ամաղեկացոց համար միայն վկայում է սուրբ գիրքը, թե Յեհովան կոտո-

րել տվեց և չխոցեց և վոչ մի ամաղեկացի. իսկ մյուս ազգերի համար խոսք չկա, վոչ սուրբ և վոչ անսուրբ գրքերում: Դնենք, թե հին ազգերը մեռան և հաջորդը չխոցեցին, բայց նոր ազգերը, վոր հիների որերում չկային, նո՞ր ստեղծվեցան, յեթե՞ գետնից բուսան: Յեթե մարդը կա, յեթե մենք տեսնում ենք նորան, յեթե շատ անգամ դիտենք նաև նորա ծագումը, ի՛նչպես ապա ուրանում ենք նորա լինելությունը:

— Մենք ուրանում ենք ազգի լինելությունը. մարդը կա, բայց ազգը չկա:

«Ազգը յեղած ժամանակ, դարձյալ, այդպիսի մարդերից չե՞ր բաղկացած: Այս ի՛նչ բաբելոնյան խառնակություն է»:

Բայց չե՛. սխալը այստեղ չե: Սխալը փորձական սխալ չե, սխալը սկզբունքի մեջ է: Յերբ տեսական ըմբռնումը սխալ է, թյուր կլինի նորա փորձական հետևությունը և կերևեցնե մի բաբելոնյան խառնակություն: Յեթե փյունիկեցիք յուրյանց վերա կրած չլինեյին փյունիկեցի հատուկ անունը, յեթե նորա ապրած լինեյին մարդու անունով, նորա չափից վերջանայիր, վորովհետև մարդը կա: Բայց, վորովհետև նորա իբրև փյունիկեցի յերևեցան, ուստի և իբրև փյունիկեցի վերջացան: «Ազգ գայ և ազգ երթայ»— ասում է բանաստեղծ-թագավորը[10]: «Իսկ մարդը հավիտյան կա»— կցորդում ենք մենք:

Չքացած ազգը ապրում է յուր ժառանգների մեջ, հառաջացած նոր ազգը վաղո՛ւց ապրում եր յուր նախահարց մեջ: Ազգի մահը անհատի մահի պես չե, ազգը չե մեռնում ֆիզիկապես: Ազգը մեռնում է, բայց նորան կազմող անհատները կենդանի յեն, նորա չեն կորչում, չեն չքանում և մարդերի թիվը չե սակավանում, թեև մեռներ մի ահագին ազգ: Ի՛նչ է ուրեմն չքացողը, մեռնողը. ի՛նչ է հառաջացողը, և ի՛նչ դորությունն է այն, վոր յերբ չքանում է, կենդանի մարդերի միլիոնավոր բազմությունն որ ուղեկով համարվում է չքացած, և յերբ հառաջանում է, վաղուց արդեն ապրող մի բազմության կազմում է նոր դարագլուխ կյանքի և գոյության:

Ազգությունը միայն, կարող է պատասխանել սորան:

Ազգությունը և ազգի անձնավորությունը, ազգի դեմքը: Միլիոնավոր մարդիկ կորուսանում են յուրյանց անհատական ինքնուրույնությունը, այդ անձնավորության ոգուն համար. նորա չեն յերևում վորպես մարդ, այլ վորպես անդամ այս կամ այն հավաքական անձնավորության: Յեվ այդ անձնավորությունը բարոյապես ապրում է և ինքնուրույնաբար. ունի յուր սեպհական կյանքը, յուր լեզուն, յուր սովորությունքը, յուր ավանդությունքը...

Նորա ամեն մի սեպհականը սուրբ է նորան, և վա՛յ մյուսին, վոր ձեռք բարձրացնե նորա, այս կամ այն, սեպհական սրբության վերա: Յեվ ինչպես, սովորական կյանքի մեջ, մասնավոր մարդը աշխատում է յուր անձնական ոգուն և յուր անձնական ապահովության համար, ինչպես շատ տեղ վնասում է նա մի ուրիշ անհատի անձին և ոգուն, այնպես էլ մարդերի հա-

վաքական անձնավորությունը,— ազգությունը, պահում է և պաշտպանում է յուր ոգուտը և վտանգի տակ է կոխում ուրիշ յուր պես անձնավորության շահը: Ազգը, այսինքն, կենդանի մարդերի մի ահագին բազմություն, համարվում է կենդանի, եթե կա և չե մեռած նորա հավաքական անձնավորությունը—նորա ազգությունը. համարվում է դարձյալ մեռած, դատապարտված և իրավունքից ղրկված, եթե չկա այլևս նորա ազգությունը:

Վերևում ասացինք, վոր ազգի մահը անհատի մահի պես չե՛, ասացինք, վոր ազգը չե մեռնում ֆիզիկապես. ի՛նչպես, ուրեմն, մեռնում և ազգությունը: Մահը անհասկանալի չե, եթե չգիտենք կյանքը, ուրեմն հատաջ կյանքը:

Ի՛նչ է կյանքը:

Կյանքը է անդադար շարժողություն, նյութերի անդադար վոխանակություն և անձնապահություն: Արտաքին ուժերը ներգործում են եակի վերա (սովորական վոճով խոսելով) ավերողապես, եակը անդադար շարժում է, ընդունում է նյութեր, դուրս է տալիս նյութեր և քանի վոր կարող է շարժիլ և այս գործողությունը կատարել, նա ունի յուր ներսում ուժ և զորություն, վոր դեմ է դնում արտաքին ավերիչ ուժերի ազդեցության և քանի վոր կարողանում է նոցա դեմ դնել, պահպանում է յուր անձը,— ապրում է: Բայց յերբ եակի ներքին և արտաքին ավերիչ ուժերի մեջ ընկնում է հավասարակշիռը, յերբ եակը չե կարող յուր ուժով դեմ դնել արտաքին ազդեցությանց, նա չե կարող պահպանել յուր անձը և այն րոպեին մեռնում է: Արտաքին ուժերը հաղթահարում են նորան և լուծում են նորա կազմվածքը:

Ազգությունը ապրում է, եթե նորա մեջ կա, արտաքին, ավերիչ ուժերի հավասարակշիռ զորություն. թե ի՛նչ է այդ զորությունը, մեք հետո կխոսինք, այժմ այսչափ միայն հարկավոր է ասել, վոր եթե չկա այդ զորությունը, արտաքին ուժերը հաղթահարելով ազգությունը, լուծում են նորա կազմվածքը: Յեվ ինչպես բնական եակները կորուսանելով յուրյանց ուժը, հաղթահարվելով արտաքին ուժերից մեռնում են, և ինչպես նոցա կազմվածքի մեջ մտած նյութերը, լուծվելով կազմվածքից, շարունակում են յուրյանց կյանքը, կազմելով մի այլ եակ, կամ իբրև նյութ, պիտոյանալով այլ կազմվածքի, այնպես և ազգությունը մեռնելուց հետո նորան բաղկացնող անհատները ընդունում են այլ բարոյական կերպարանք, կազմելով մի առանձին ազգություն, ա՛յլ պայմանների տակ. կամ մտանում են ուրիշ ազգությանց կազմվածքի մեջ:

Բնությունը կորուստ չունի:

Մարդիկ յուրյանց գոյությունը և ներկայությունը ապացուցանում են յուրյանց ազգությամբ: Կենդանի չեմ յես և խոսում եմ առջևս կանգնած մարդու հետ, բայց նա չե ընդունում, թե յես կենդանի չեմ: Նա ասում է ինձ, վորովհետև քո ազգությունը մեռած է, ուստի և դու կենդանի չես, վորպես հայ:

— Ձեղքայր, ի՞նչպես կենդանի չեմ, չես խոսում եմ քո հետ. մեռելներ վազուց արդեն լողել են խոսակցությունը:

«Ինձ ի՛նչ փույթ, դու կենդանի չես»— կրկնում է նա ամենայն սառնությամբ:

Ցեվ վոշ միայն այսչափ. ուրանալով իմ կենդանությունը, ժխտում է ինձ իմ կենդանությունը պահելու համար պետք չեղած կարիքը կամ նորանց լցնելու հնարները:

— Ցեվ այստե՞ղ հանեցիր տնտեսական խնդիրը....

«Ցեվ չկամենալով բռնաբարության կերպարանք տալ այս ժխտողության, տակավին իրավունքի անունով խոսում է իմ հետ.— ի՛նչ ես ասել, վոր չես համակրություն ցույց տամ ինձ, վոր չես խոստովանիմ ինձ կենդանի:

Այս կոպիտ հեգնություն է և սարկության շղթայի ամենածանր ողի մինը: Հերիք չէ նորան իմ կենդանությունը, նա չկամի նորան ընդունել վորպես իրողություն. նա ակամա պիտի հոժարի ընդունել այն ժամանակ, յերբ ցույց տամ իմ իրավունքը: Ա՛յս ևս հերիք չէ. նա իմ կենդանությունը պիտի խոստովանի միայն այն ժամանակ, յերբ ստուգե, թե զորություն ունիմ իմ իրավունքը պաշտպանելու:

Այս տողերը գրելու միջոցին Թեյմսը հրատարակեց Լեհաստանի ընդդեմ, մեր նոտր գրով տպածը, գրեթե բառ առ բառ: Ցեվ մի՛թե շա՞տ ժամանակ անցավ այն որից, յերբ ընդհանրական և մասնավորապես ավստրիական բռնակալության ջերմեռանդ քուրմը հրատարակեց, թե «Իտալիան լոկ աշխարհագրական անուն է»[*20]:

---

* Իսկ Ամաթրիան, այդ պոլիտիկական ուրվականը, դյուցազանական առասպել է, առում ենք մենք. ազատ սերմարդի փեսաներներով զարդարված: Այն հոգևերի վերա, ուր անդանապիղծ ձեռքով անկված է ավստրիական անպատծանք դրոշը, 1857. հոկտեմբերի 1 ի

Պարզամիտ մարդիկ կարող են հավատալ այս կամ այն կառավարության.... կարող են հավատալ, որ յեթե հիրավի՛, Լեհաստանը արժանի լիներ անգլիական համակրության* և ահա լրացած եր ամենայն բան։

— Այսոր չե, վաղը— ասում ենք մենք։

To-morrow morning!** ասում և հեգնող Անգլիացին։ Քանի որ իմ կյանքի խոստովանելը կապված չե նորա շահի հետ, նա խոստովանելու չե։ Ուր Թողունք, որ մի ազգության գիտության սպանում և մյուս ազգությունը յուր սեպհական շահի համար. ճնշվածի իրավունքը խոստովանե՞ն և մնացած։

Անհնարին տհաճությամբ լսեցինք մենք անգլիական պառլամենդի մեջ լորդ Ջոհն Ռըսսելի խոսքերը ամերիկյան խնդրի վերաբերությամբ.

«Չե կարելի բուռն զորությամբ վերացնել ստրկությունը Հարավային «Ամերիկայի միջից։ (Այսինքն հյուսիսայնոց պահանջողությունը և պա«տերազմը, զուր ե). Հարավայնոց ատելությունը դեպի հյուսիսայինքը, ան«նկարագրելի խոր և և սաստիկ։ Խաղաղությունը չե պիտո տիրե այնտեղ, «մինչև այդ յերկու կողմերը չկազմեն առանձին առանձին տերություններ։ «Յեվ այն ժամանակ միայն Անգլիան կհասնի յուր դարավոր նպատակին, «վորի մեջ ե նորա հակառ շաները»[22]։

Այսպես և յեղել ազգությանց ընթացքը մարդկության ասպարիզում։ Մինչև այժմ այն ազգությունը, վոր ույժ ունի, վոր ինքը ապրելով չկամի ուրիշի կյանքի վերա մտածել, ավելի կամ պակաս չե մասնավոր անձնապաշտից, վորի փույթը չե, յեթե նորա ընկերը նորա աչքի առջև ընկնում և սովամահ։

Բայց մասնավոր ուշադրության արժանին ի՛նչ ե. նույն ինքը այդ հզոր ազգությունը ոգուտ չունի յուր անունին վերագրված շահերից։ Այդ ազգությունը յուր կառավարության հետ գրե՛թե նույն հարաբերության մեջ ե, ինչ հարաբերության մեջ են դեպի ինքը չխոստովանված ազգությունքը։ Տարբերությունը եական խնդրի մեջ չե. տնտեսական խնդրի դուռը և

---

* Ի՛նչ ասել և համակրություն. ուրիշը իրավունք ունի յերկրագունդի վերա ապրելու, լեհացին չունի՞։ Սա երբև վոզորմությո՞ւն պիտի աստնա ուրիշից այն, ինչ վոր ուրիշը ունի, նույն իրավունքներով, վոր ամեն մարդու պիտի տրվի, վոր ամեն մարդու հավասա՛ր ե։ Յեվ միայն անգլիական մա՞րդոպիտի աղրի, ուրիշը թող մեռնի՞։ Բայց որանից, ի՛նչ պիտի արած լինեը Լեհաստանը, վոր արժանի լինեը, հարցնում ենք մենք, Անգլիա համակրության։ 12 միլիոն ժողովրդի կենդանությունը բավական իրավունք և բավական արժանավորություն չի՞։ 12 միլիոն ժողովրդի յերևնամյա բողոքը և արյունաթաթախ մարտիրոսությունը բավական չե՞ մի սերա ունեցող ակնառուների համակրությունը շարժելու։ Բայց սերա.... ո՛ւր ենք մենք։ Անգլիա մեջ միայն գնայուն մեքենաներ կան, և թեև ուրիշ ամենայն բան դանակի տչտեղ, մարդկային սերա... շատ հազիվ։ Վկա՛ յենք կանչում լորդ Բայրընի տավերը։ Ցերը Յերուսաղեմա Մեծի առաջարկությամբ Լեհաստանը հոշոտելով Ռուսիա, Պրուսիա և Ավստրիա մեջ, Անգլիան լուռ մնաց և ընդունեց։ Այսոր, յուր հին լուության մեղքը ծածկելու համար, իրավունք և արժանավորության հարցնում և նա արյունլվա նահատակից[21]։

** Վաղը՝ առավոտ (անգլ.)։ ՄՄՌ.։

նորա համար փակված է։ Նորա ազատությունը անվանական է, նա չէ կերակրվում նյութով, նորա կառավարությունը ներկում է նորա աչքը յուր դրոշի փառքով, յուր զենքի հաղթությամբ, յուր սահմանների որ ըստ որէ լայնությամբ։ Դնենք թէ այն մարդիկը, վորոնց ազգությունը խոստովանված չէ, պաշտոնական կերպով չեն համարվում կենդանի. այո՛, նոքա ստրուկ են ուրիշներին, բայց և այն մարդիկը, վորոնց ազգությունը դոզացնում է յերկրագունդը բևեռից մինչև բևեռ, ստրուկ են յուրյանց կառավարության ձեռքում։ Կառավարությունքը նկատելով, վոր այդ ազգերը ինքյանք յուրյանց մեջ ազատ չեն տակավին, նկատելով վոր անոտի նախապաշարմունքներ, փտած սկզբունքներ և առհասարակ գըլխիվայր հասկացողություն պաշտելի չեն նոցա, խորամանկությամբ ոգուտ են քաղում նոցա թուլութենից, տիրում են նոցա վերա և նոցա անունով ներգործում են, միմիայն յուրյանց անձնապահության համար։

Մարդը դեռևս թուլված է, կառավարությանց բժժանքը դեռևս ազդում են նորա վրա։ Նա տանում է աղքատության ծանր լուծը, առանց հաշիվ տալու ինքը ինքյան, թե ի՛նչ բանի համար են այն զրկանքը, վոր հանձն է առնում։ Ի՛նչ կառնու յուր դրոշի փառքից, յեթե այդ փառքը չե բերում նորան յերջանկություն և հանգիստ կյանք, յեթե ամեն մինը այդ յեղջերվաքաղ փառքերից գնվում են սոսկալի հարկերի և սարսափելի պարտքերի ծանրությամբ, վորոնց՝ եակաևապես ժողովուրդն է յենթակա։ Կառավարության դրամ է հարկավոր յուր վորևիցե խորհուրդը հառաջ քշելու համար, ներքին պարտք և հրատարակում նա, և ամեն մարդ առանց յերկբայության, իբրև մի ապահով տեղ դնում է յուր ունեցածը։ Յեվ ինչի՞ պիտի վախենա, քանի վոր կառավարությունը յերաշխավոր է։

— Կառավարությո՞ւնը... ո՛վ է կառավարությունը, ազգը չե՞։

«Չե՛, կառավարությունը կառավարություն է, ազգը ա՛յլ, կառավարությունը ա՛յլ»։

— Ուրեմն կառավարություն ասելով պիտի իմանալ վորևե աշխարհի պաշտոնյա՞յքը կամ նոցա գահերե՞ը։

«Ճի՛շդ»։

— Ինչո՞վ ապահովում է կառավարությունը այն պարտքը, վոր առնում է ժողովուրդից։

«Ի՛նչպես թե ինչով, տերության հողով, գանձով և այլն և այլն»։

— Տերության հողը, գանձը, և այլն և այլն կառավարության սեպհականությո՞ւնն է, վոր գրավ է դնում։

«Տարակույս չկա, դոքա պատկանելիք են կառավարության»։

— Ապա ազգը՞։

«Ազգը ինչ վերաբերություն ունի տերության հողին կամ գանձին հետ։ Ազգը ազգ է, ինչպես կառավարությունը կառավարություն է։ Ազգը ա՛յլ, կառավարությունը ա՛յլ»։

— Դրոշի փառքը՞....

«Ազգի՛նն է»։

— Ցնծա՛, ազգ։ Բերանդ հովին բացած, նայի՛ր այն կտոր լաթին, վոր կախված է ձողի վերա։

«Բայց նա ինձ կերակուր չի տալիս»— ասում է ազգը։

— Յեվ ի՛նչ հարկավոր է քեղ կերակուր, յերբ դու ապրում ես այդ փառքով։

Չնայելով այս բոլորի վերա, այդ ազգությունքը հետևում են տակավին յուրյանց կառավարության, ուրիշ աշխարհների տիրելու, ուրիշ ազգություն ապանելու և յուրյանց դրոշի փառքին նորանց ևս մասնակից առնելու։

Մինչև այժմ բռնակալ աշխարհակալությունքը մի սուտ փաստ ունեին յուրյանց ձեռքում, վոր այսոր չի կարող արդարանալ և մարդկային բանականության դիմանալ։ Ի՛նչ եր այդ փաստը։ Այն, թե հզոր կառավարությունքը տիրում են զանազան աշխարհների, զանազան ազգերի, միմիայն վայրենությունը քաղաքակրթելու համար։ Անձնական շահը չի՛, վո՛չ, քա՛վ լիցի, մարդկության սերն է, վոր ստիպում է նորանց ստրկացնել զանազան ազգեր, վորովհետև այդ ազգերը հետ են մնում և չեն քաղաքակրթվում։

— Ա՛յսպես, ուրեմն. Անգլիան Հնդկաստանի մեջ մի վաճառական կշիռ ափիոն գնում է ժողովրդից 25 լիբրե ստերլինգի, իսկ ինքը նույն կշիռը վաճառում է 250 լիբրեյի, և կառավարությենից ավելի վո՛չ վո՛ք իրավունք ունի շինականից գնելու, նույնպես և շինականը իրավունք չունի ուրիշի վաճառելու։

«Քաղաքակրթություն և տարածում»։

— Անգլիան ամիսը յերեք շոգենավ ափիոն բռնությամբ ներս է տանում Չինաստան, թունավորում է մարդկությունը և այդ թույնի փոխարեն ամիսը յերեք շոգենավ արծաթ է ստանում. այս անբարոյականություն է։

«Քաղաքակրթություն և տարածում»։

— Իրլանդիան, յուր աշխարհագրական դրությամբ, յուր բնական սահմաններով, յուր կրոնքով, սովորությամբ և ավանդությամբ բոլորովին հեռի յե Անգլիայից, քանքարավոր մարդերով ավելի ճո՛խ է, քան թե ինքը Անգլիան, բայց Անգլիան հակառակ նորա կամքին, պահում է նորան յուր ձեռքի մեջ, և Թեյմսը շատ ժամանակ չե վոր հրատարակեց, թե Իրլանդիո անկախության աշխատողքը իրեև տերության ընդդեմ ապստամբք, կարո՛ղ են դատապարտվիլ դեպի թիարան....

«Քաղաքակրթություն և տարածում»։

— Պապը «իմ թագավորությունը այս աշխարհից չի՛» ասողին յերեսփոխան քարոզելով յուր անձը, հակառակ յուր վարդապետի հրամանին, բրոնացել է այս աշխարհի վերաբերյալ հողի վերա, վոր պատկանում է Իտալիային, և յերբ խնդիրները սկսում են սաստիկ հուզվիլ, յերբ առաջարկությունք առաջարկությանց քամակից հասնում են նորան, թողուլ այս աշխարհի թագավորությունը, նա չե հոժարում և հիվանդանալով մահիճ է ընկնում....

«Քաղաքակրթություն և տարածում»։

— Ամսարիան, յուր 8 միլիոն ձկնալյուն ամսորիացիներով բռնացել է

Լոմբարդիո վերա և չե կամենում վիճետիկը ձեռքից թողուլ։

«Քաղաքակրթություն և տարածում»։

— Մորթել և Հունգարիան, խեղդել և Գալիցիան, Դալմատիան, Բոհեմիան և այլ գավառներ ու ազգեր։

«Քաղաքակրթություն և տարածում»։

— Պրուսսիան, Լեհաստանի մահվան առաջին պատճառը, հափշտակել և նորա Պողնայնի դքսությունը և խեղդում է...

«Քաղաքակրթություն և տարածում»։

— Ռուսական բանդերը լցվեցան լեհացիներով. կարծեմ շուտով Սիբիրի մեջ ավելի շատ պիտի լինի լեհացի, քան թե Լեհաստան. Վարշավի հրապարակների վերա արյունը մինչև ծունկն է հասնում, զինվորները անզեն մարդոց վերա հարձակվելով սպանում են առանց խնայելու հասակի և սեռի, Ռուսիո գերմանաթաթար կառավարությունը իբրև մի վամպիր ծծում է Լեհաստանի արյունը, փակում է նորա լեկևղեցիքը, դպրոցները, և հրամայում է քար կամ փայտ դառնալ։

«Քաղաքակրթություն և տարածում»։

— Փոքր Ռուսիան, (15 միլիոն ժողովուրդ) յուր լեզվով, յուր պատմական ավանդությամբ, յուր կյանքի կերպերով և սովորությամբ, վոչինչ հարաբերություն չունի Մեծ Ռուսիային, և վոչ միայն այսչափ, այլև սաստիկ թշնամի չե նորան, խնդրում է յուր անկախությունը, բայց Ռուսիո կառավարությունը շղթաներով կապում է նորան և ազատության մարդարեներին պատասխանում է բանդով, կնուտով և աքսորով։

«Քաղաքակրթություն և տարածում»։

— Հափշտակել է և ստրկացրել է Ֆինլանդիան։

«Քաղաքակրթություն և տարածում»։

— Խաբանոք ճանկել է Վրաստանը և Հայաստանի մի մասը և ճնշում է նորանց յուր ծանրության տակ։

«Քաղաքակրթություն և տարածում»[23]։

— Ձեվրոպական տերությունքը անդադար ողնություն են տալիս Թյուրքիային, վոր նա դիմանա և չկործանվի։

«Վորպեսզի Թյուրքիո ստրկացած հայ, սկլավոն և հույն ժողովուրդը քաղաքակրթիչ հոգաբարձվից չզրկվի»։

— Կուրանով Ավետարանի վորդի՞ք քաղաքակրթել։

«Այդ քաղաքակրթությունը ավելի փրկարար է։ Ավետարանից թերևս ազատություն կարող է ծագել, իսկ Կուրանից և այդ յերկյուղը չկա»։

Սոքա ամենքը, իբրև բռնի վարժապետ, քաղաքակրթություն են տարածում, և վոչ վոք չե հարցնում աշակերտի կամքը, կամի՞ արդյոք ուսանել թե վոչ։ Սակայն չե պիտո աչքից հեռացնել նոցա քաղաքակրթության տարբերությունը մեր հասկացած քաղաքակրթությենից։ Բանդերը են նոցա դպրոցները, պոլիցականք և ժանդարմը՝ դաստիարակները, շղթան՝ հրահանգիչ գիրքը, աքսորը՝ բարոյականությունը վերին աստիճանի կազդուրելու

մարզարան, կախաղանը և դիմապարտության խայտառակ սյունը՝ տրուած նշմարիտ որ տանի ի կեանս հավիտենականս»[24]...

Կեցցե՛ կառոն, վոր յուր փորի համար մուկ և բռնում։

Յերբ ինքյանք կառավարությունքը տեսան այս, յերբ նշմարեցին յուրյանց փառատի վոչնչությունը, յեվրոպական հավասարակշիռը հանեցին մեջտեղ։ Յեվ այսոր ամեն կառավարություն յուր կշռով կշռում և այս հավասարությունը։ Մարդկությունը, այո՛, ավելի չե, քան թե վոչխարը, վոր ըսպանդապետի դանակին և կշեռքին և հանձնված։ Մինչև այսոր ամեն հարձակում և ամեն պաշտպանություն այս հավասարակշռի անունով հառաջացավ։

— Բայց կշռի արդարության քննի՛չը։

«Քեզ ի՞նչ փույթ»։

Յեվ այն որից, յերբ կառավարությունքը յուրյանց ընթացքը արդարացնելու համար և յուրյանց բռնած ճանապարհը ամբոխի աչքից ծածկելու խորամանկությամբ, դրեցին յուրյանց դրոշակի վերա հավասարակշիռը և իրավունքը, այն րոպեյից, ասում ենք, ազգությունը դարձավ կառավարությանց հալածող ուրվականը։ Յերե հավասարակշիռ և իրավունք կա տերությանց մեջ, ուրեմն նույն կշիռը և նույն իրավունքը պիտի լինի տերությանց և նոցա սարկացած ազգերի մեջ։ Դու կամենում ես քո հավասարակշիռը պահել, և այն, իրավունքի անունով, բայց ինձ, վոր բնավին ոտար եմ քեզ և ամենևին վերաբերություն չունիմ քո հետ, ի՛նչ պատճառով, հակառակ իմ կամքին, առնում ես և բռնությամբ դնում ես քո կշռի թաթի մեջ։ Ուրիշ տերությանց հետ խոսում ես իրավունքի անունով, իսկ իմ վերաբերությամբ ինչի՞ համար վոտքի տակ ես կոխում նորան և անիրավում ես չարաչար։

Այսոր, ճնշված մարդերի համար, ազգությունն է նոցա միակ դրոշը, վոր կարող է բացվիլ բռնակալության ընդդեմ։ Ազգությունն է միակ ճնարը դեմ դնելու նաև լուսավոր բռնակալության, յերե միայն բռնակալությունը կարող է լուսավորվիլ կամ լուսավորվելուց հետո հարատևել իբրև բռնակալություն,— կրկնում ենք, մեր դարու յերևելի մտածողներից մինի հետ։

Դանք այժմ պարզելու մեր ունեցած հայացքը ազգության վերա, վորպեսզի հակառակախոս չերևինք մեր նեղսիրտի առջև։

Վնասակար և անիրավ է այնպիսի ազգությունը, վոր ամեն ուրիշ զոհում է յուր կյանքին. ազգություն չե այն, այլ կույր ֆանատիկոսություն, վոր հիմք չունի և կիրքի բնավորությամբ յերևում է մարդու մեջ։

Այդպիսի ազգությունը վորչափ ևս կատաղի լինի, վորչափ ևս մոլեգնի, ի վերա այսր ամենայն ժամանակը կմաշե նորան, վորովհետև մի կիրք կարող է տեղի տալ մյուս կիրքերի, վոր հանգամանքը կարող են ծնուցանել։ Ազգությունը հարկավոր է և ոգտակար այն ժամանակ, յերբ նա չե բորբոքվում իբրև մի րոպեական կայծ, իբրև պատահական և հանգամանքներից կախված մի բան, այլ, յերբ վորպես հետևանք հասուն գիտակցության, հանդես է գալիս այրական հաստատամտությամբ, պահանջում է ուրիշների հավասար իրավունք և վոչինչ չե խնդրում ավելի։ Ազգությունը

ոգտակար է և հարկավոր այն ժամանակ, երբ զգալի չէ վոչ վորպես մի բարոյական շռայլություն, այլ վորպես կարիք, վորպես իրավունք, վորպես բողոք յերկրագունդի վերա մի կտոր հող ձեռք բերելու համար, վորպեսզի այդ ազգության անդամքը ապահովեն յուրյանց ապրուստը, վորպեսզի գերի և ստրուկ չլինին ուրիշին: Ազգությունը անմեղադրելի չէ և ամենայն ընդունելության արժանի, յեթե նա խոստովանի մյուս ուրիշ ազգություններք անխտիր, նույնպիսի իրավանց ժառանգ, վորպիսի ստացել է ինքը: Ազգությունը անմեղադրելի չէ և տոնելի իսկ, յեթե նա ընդհանուր մարդկության գործը թեթևացնել աշխատի յուր հավաքական անձնավորության անունով իրավունք ձեռք բերելով և նույն իրավունքը և արտոնությունքը, հավասարապես, յուր անդամներին բաշխելով:

Յեթե ազգության ներքին և եական խորհուրդը չե տնտեսական խնդիրը, անհիմն է այդ ազգությունը, սո՛ւտ է այդ ազգությունը, և նա կկործանվի: Տնտեսական խնդիրն է այն զորությունը, վոր մի փոքր հառաջ խոստացանք անվանել, նա չե այն միակ և հաստատ ուժը, վոր ազգի անձնավորության մեջ ներգործելով, հավասարակշիռ է պահում արտաքին ուժերի ընդդեմ, վորով և ազգությունը ապրում է: Դու հազար տարի քարոզն ինձ քո վերացական ազգությունը, յես միշտ չպիտի հասկնամ: Դու ինձ ասում ես, պահենք մեր ազգությունը, մեր լեզուն, մեր ավանդությունքը և այլն, և այլն, շա՛տ բարի, պատասխանում եմ յես, բայց, ասա՛ խնդրեմ, ի՛նչ բանի համար պահենք, ի՛նչ է պահելու ոգուտը և ի՛նչ է կորուսանելու վնասը: Վերացական ազգությունը, վոր մինչև այժմ փոքր ի շատե քարոզվել է հայոց ազգի մեջ, չե կարող պատասխանել սորան: Յեվ այս է պատճառը, վոր ծանր է այդ առաքելության ընթացքը: Զոր-չոր ազգություն քարոզել առանց մեկնելու քո քարոզության պատճառները, վոչ այլ ինչ է, յեթե վոչ ֆանատիկոսություն, և այդ տեսակ քարոզությունը յերբեք չե կարող արմատ արձակել մի ժողովուրդի մեջ, վոր, վերացականից հառաջ, ամենայն բանե զարկվում է իրական կարիքների հետ: Իսկ յերբ դու ասես ինձ, պահի՛ր քո ազգությունը, հաստա՛տ կացիր քո սիրու մեջ դեպի քո աշխարհը, սիրի՛ր քո յեղբարքը, պահի՛ր քո լեզուն, վոր և քո ազգության դրոշը և այդ բոլորը քեզ իրավունք կտան մի կտոր հող ձեռք բերելու, վորով կազատվիս ստրկությենից և աղքատությենից, այն ժամանակ յես կհամակնամ քո խոսքը, և ընդհանուրի շահի մեջ և իմ սեպհական շահը տեսնելով կաշխատիմ ամենայն զորությամբ: Այն ժամանակ յես կհետևիմ քո ձայնին, վորովհետև նա ավետարանում է ինձ փրկություն, ազգության անունով:

Յեվ քաղաքական նավաբեկությենից ապրած մարդիկ, յեթե հասկանում են ազգությունը մի ամբողջություն, վոր յերբեմն կար, և վորի դարավոր փոշով ծածկված հիշատակարանների վերա բաբախում է նոցա կուրծքը, յեթե նոցա, ազգության հասկացողությունը, յուր ակիզբը առնում է անցածի խաթրաճամուկ ավանդություններից և չե հիմնվում ոզղակի ներկա սեռության և ներկա պայմանների վերա, յեթե նոքա մտածում են յերևեցնել

յուրյանց ազգութիւնը այն շրջանակի մէջ, ինչպես եր հառաջ, այն ժամանակ, այդ ազգութիւնը կմնա միշտ իբրև մի ամուր գաղափար, վոր հետ չե մնում բարոյական Զինաստանից:

Ժամանակը մի անգամ և անցնում, և նա, վոր ընթացակից չե նորան, հետ և մնում: Մեք կարող ենք բռնել ժամանակի այն ակնթարթը միայն, վոր անցնում է մեր առջևից. իսկ յերբ նա անցել և, անոգուտ և այլևս: Նա, իբրև որմնակ, միայն, իբրև խրատ, կարող և յերևել մեզ հետևից. ներկա կյանքը նորա հետ վերաբերութիւն չունի, ըստ վորում անցածը չե ապրում այլևս:

Այսոր, յեթե մի ժողովուրդ ստրուկ և, յեթե նա հող չունի և յեթե հաջողի նորան հող ձեռք բերել, իրավունքը և ժամանակը պահանջում են տնօրինել այնպես, ինչպես ցույց և տալիս ներկա հարկը, ինչպես ցույց և տալիս բանականութիւնը, և վոչ այնպես, ինչպես հին որերից մնացած, ավանդական կառավարութիւնքը տնօրինել են մինչև այժմ, այսինքն, տերութեան կամ աղնվականութեան սեպհականելով հողը և հասարակ ժողովուրդը զրկելով իրավունքից: Վերջին դիպվածում ազգութիւնը ազատութիւն չե ժողովըրդին. նա փոխում և միայն նորա լուծը. մեք դրականապես ՝ֆշնամի՛ չենք այդպիսի ազգութեան, ինչպես ՝ֆշնամի չենք բռնակալութեան, ո՛ւր կամ ինչ կերպով վոր հայտնվի: Դիտենք, կան մարդիկ, և մեր իսկ սիրելի բարեկամների մեջ, վոր պիտի ասեն՝ Թո՛ղ միանգամ ձեռք բերվի հողը, թո՛ղ ինչպես կամի լինի սկզբնական կառավարութիւնը և տնօրենութիւնը, հետո կուղղվի, կնորոգվի և այլն և այլն:

Չե՛, այս տղայութիւն է. այս տեսակ ուղղագործութիւնքը և վերանորոգութիւնքը հեշտ բաներ չեն, և, համարձակ կարելի չե ասել, նոր ի նորս ձեռք բերելուց ավելի դժվար: Ուրիշների փորձերից, վոր փորձողներին արժում են արյան ծովեր և վոր բոլորովին ձրի ներկայանում են մեզ, իբրև որինակ, հարկ է վոր խրատվինք և չերթանք այն ծուռ ճանապարհը, վորից և գնացողը կամի հետ դառնալ, բայց վոտքը սայթաքում է: Յեվ ի՛նչ խելք է, կատարելութիւնը տեսնելուց հետո, անկատարին հետևիլ, միմիայն այն պատճառով, վոր անկատարը ժամանակով հառաջ է, քան թե կատարյալը:

Այս որենքը չունի վոչինչ ամրութիւն, չունի հետևականութիւն: Այս որենքով, մի մարդ, վոր կամեր պարապիլ վորևիցե արվեստի, չպիտի ուղղակի գործե այն, ուր հասած եր արվեստի ներկա վիճակը, այլ, ինչ վոր դարերով հառաջ: Նոր դիր ուսանող մարդը թո՛ղ չհամարձակի ուրեմն թղթի վերա գրել, այլ թո՛ղ գրե ծառի տերևի կամ կեղևի վերա, հետո, անասնոց մորթի վերա, հետո, չգիտեմ ինչի վերա, վոր կարգը հասնի թղթին, ըստ վորում նոր է սկսանում և հարկ է, վոր հառաջ անկատարը ձեռք բերե:

Յեթե մինչև այժմ մեր խոսածներից հասկացավ մեր ներսիրտ ընթերցողը ազգութեան վերա մեր ունեցած գաղափարը, յեթե համոզվեցավ կամ գոհացավ, մեք մեր շնորհակալութիւնը կանխիկ հայտնում ենք նորան: Իսկ ընդհակառակը, յեթե ավելի նեղսրտեցավ, չենք վհատում: Մեք, ուրիշ անգամ, դարձյալ կխոսենք նորա հետ այս խնդիրների վերա և մեր ամեն ճի-

դը կթափենք ավելի մշակել և ավելի կերպարանագործել մեր գաղափարը։

Այժմ դառնում ենք դեպի այն կետը, վորտեղից խոտորեցանք և դեպի այնտեղ հրավիրում ենք դարձյալ մեր ընթերցողների ուշադրությունը։

Վորչափ շոշափելի և հասկնալի չե տնտեսական խնդրի ճշմարտությունը, վոր մեք, այս նեղ սահմանի մեջ, աշխատեցանք կերպարանագործել, ի վերա այսր ամենայնի, անհուսալի չե, թե գտանվին մարդիկ, վոր ասեն մեր համար. «Այս ի՛նչ Մովսես և, վոր ճանապարհ և ցույց տալիս ազդին դեպի մի յերկիր»։

— Մովսես չենք, և Մովսիսի խոստմունքը չենք խոստանում հայոց ազդին։ Մովսեսը իսրայելյան ազդին խոստանում եր մի յերկիր, վոր պիտի բղխեր կաթն և մեղր, մեր քարոզությունը ավելի պարկեշտ և։ Մեք ցույց ենք տալիս մի յերկիր, վոր բուսուցանում և բամբակ, մետաքս, շաքար, ցորյան, բրինձ, սուսամ, տորոն և այլ ընդեղենք։ Մեք ցույց ենք տալիս մի յերկիր, ուր ամենայն ընտանի դրաստ աճում և, ապրում և և բազմանում և, հետևաբար նոցա բերքը ևս, այսինքն բուրդը, մորթը, միսը, կաթը և այլն, վոր նույնպես արժանի յեն ուշադրության և մշակության։ Մեք ցույց ենք տալիս մի յերկիր, վորի հանքերը մեծապես կարոտ են մշակության և վորոնք, մինչև այսօր, մնացած են մարդկության համար «որպէս աղբիւր փակեալ և դուռն կնքեալ, ընդ որ ոչ ոք էանց»[25]։

Հողհոդը Իսրայելը, մարքով Յեգիպտոս դարձող Իսրայելը, միայն մի կույր հավատով կարող եր հետևել Մովսիսին, դեպի կաթն և մեղր բղխող յերկիրը, ըստ վորում անծանոթ եր նորան ավետյաց աշխարհը, մեք ընթերցողներից և առհասարակ հայոց ազդից չենք պահանջում և այն կույր հավատը դեպի մեր քարոզությունը։ Յերկիրը և բերքերը քաջ ծանոթ են նոցա, և անծանոթների համար պատրաստ են յուրյանց գոյությամբ վկայելու մեր ասածին։

Մեր քարոզության նպատակը և մեր աշխատության խորհուրդը այն և միայն, վոր ազգը մտածե յուր ապագան և ազատե յուր անձը սարսափելի նեղությենից և աղքատությենից, վոր յեկել վոչ այսոր, վաղը պիտի թագավորե բոլոր Թյուրքիո մեջ, չնայելով այն նոր պարտքին, վոր առնում և նա Անգլիայից։ Այդ լիբրեները շատ կարճ ժամանակի մեջ կցնդին, մեջ տեղում կմնա պարտքի մուրհակը և նորանից հետո գալու հոգևարի ժամանակ, ոսմանյան լիբրեն կբարձրանա մինչև 1000 դուրուշ։

Մեր բարձրացուցած խնդիրը մի վերացական և անբնական փիլիսոփայություն չե, վոր ազգը նեղության հանդիպի հասկնալու համար։ Աշխարհիս յերեսին մարդ չկա, վոր յուր ապրուստի համար կարոտ չլինի նյութի և չհասկնա նացի խնդիրը. և մեք խոսեցանք միայն այն խնդրի վերա, քանդի նորանով միայն կարող է պահպանել մարդը յուր նյութական գոյությունը։

Բայց այն վոքրիշատե կարողության տեր մարդը, վոր ունի արդեն բավական ապրուստ, վոր կազմել և յուրյան մի ճանապարհ, վորով ապրել է և կապրի դեռևս, այդպիսի մարդը, բնականապես և ծանր նստած յուր տեղում, կես մի թթվեցնում է դեմքը, տհաճություն զգալով մեր խոսքերի

մոայլոտ կերպարանքից, կես մի այլապես և մտածում, քան թե մտածում ենք մեք, քան թե աշխատեցանք մեք նորա առջև կերպարանել մեր միտքը։

Ի՛նչ է արդյոք նորա մտածությունը։ Ավելորդ հարցմունք է այս։ Նա մտածում է, «թե չես վաճառականությամբ, սեղանավորությամբ, միջնորդությամբ կամ մի այլ ճանապարհով վաստակեա այսչափ դրամ. մեռնելուց հետո թողնում եմ իմ ընտանիքին նույնը, այլև միքանի տուն և այլն և այլն, ուրեմն, ինչպես իմ կյանքը ապահով եր, նույնպես և իմ ժառանգները ապահովված են»։

Նորա մտածությունը ավելի չե տարածվում, քան թե յուր անմիջական գավակները։ Մեք այդ փոքրիշատե կարողության տեր մարդոմ ասում ենք.— շատ լավ, դու ունիս բավական դրամ, ունիս տուներ և այլն և նորանով կարծում ես թե քո ժառանգները ապահով են, իսկ մեք ասում ենք, վոր այդ կարծեցյալ ապահովությունը անհիմն է։

— Ի՛նչպես,— հարցնում է նա մեզ։

«Այսոր դու յես քո բոլոր ստացվածքի տերը, վորպես նաև քո բոլոր ընտանիքի տերը և այս պատճառով քո ունեցած կարողությունը հերի՛ք է այսոր մի ընտանիքի. բայց, վաղը քո ստացվածքը պիտի բաժնվին քո գավակների մեջ, վորոնց յուրաքանչյուրին բաժին պիտի հասնի քո ունեցածի կեսը, կամ հառորդը, կամ ավելի մի փոքր մասը, յերե շատ են քո գավակները։ Յեվ ահա կարողությունը, ույժը դեռևս առաջին աղբում (պորտ) կիսվեցավ, քառորդվեցավ, կամ ավելի փոքր մասերի բաժնվեցավ. բայց մի մոռնար, վոր այն յուրաքանչյուր մասերի տերերը առանձին-առանձին պիտի կազմեն քո նման դերդաստան։ Յուր կարգով, նոցա քեզնից ստացած բաժինը պիտի բաժնվին նոցա գավակների մեջ, վոր ասել է թե քո թոռներին, քո ունեցածից հավիվ պիտի հասնի հարյուրին 5—6 տասնորդ։ Իսկ թոռներիդ վորդիքը դարձյալ պիտի մտանեն այն աղքատ ընդհանրության մեջ, վորից դուրս յեկար դու, և աղատ կարծեցիր այնուհետև նրա վիճակակցությենից քո սերունդը, քանի վոր ինքնիշխան տեր եյիր քո բոլոր ստացվածքին։ Այն մարդը, վոր յուր հարստությամբ կամ վորևիցե առիթով դուրս կբարձրանա հասարակաց աղքի մակերևույթից, բոլոր նորա սերունդը չե կարող մնալ այն բարձրության մեջ։ Կանուխ թե ուշ, նա պիտի դառնա դարձյալ դեպի այն ընկերությունը, վորից կյանք եր ստացել սերունդի նահապետը։ Ծովի ջուրը գոլորշանալով բարձրանում է մինչև ամպերը, բայց յերկար չե մնում այնտեղ։ Մի փոքր սառնություն, մի փոքր ոդի ճնշողություն և, ահա այն թռուցիկ շոգիները, վոր թողել եյին ծովի հորիզոնական մակերևույթը, իբրև անձրև կամ իբրև կարկտատ անհնարին քանությամբ գահավիժում են, յուրյանց հպարտ բարձրությենից, դարձյալ դեպի ծով։ Այս, բնության որենք է, որենք, վոր մի մուզի չափ չե շեղում յուր ղուգակշիռը»։

Փոքրիշատե կարողության տեր մարդը, մեր ասածին, պատասխանում է այսպես։— Յես իմ հորից վոչինչ ստացա, ինքնին, առանց մի բան ունենալու այսչափ վաստակեցա միմիայն իմ աշխատությամբ։ Իմ վորդիքը ավելի լավ վիճակի մեջ պիտի սկսանեն յուրյանց ասպարեզը, քան թե յես. քանզի

յես վոչինչ ունեյի, իսկ վորդոց յուրաքանչյուրը պիտի ստանա իմ կայքի կեսը, կամ քառորդը, կամ, ի վերջո, մի մաս: Ո՛ղ նորա այն հիմքի վերա աշխատին, և նոցանից յուրաքանչյուրը կհասնի իմ կարողության չափին. այնպես և նոցա վորդիքը և այլն և այլն:

«Յեթե հանգամանքները մեզ հնազանդվեյին, յեթե մեք ամեն բան մեր կամեցածի պես կարողանայինք շինել, յեթե տեսական հաշիվը միշտ ուղիղ դար կյանքի գործնական կողմերի հետ, այն ժամանակ գուցե ուղիղ լիներ քո ասածը, գուցե քո վորդիքը կամ նոցա սերունդը ապահով լինեյին: Բացի սրանից, ուր չկա դուրս արտադրող զորություն, վոր յուր կարգով դեպի ներս պիտի դրավեր դուրսի հարստությունը, այնտեղ մի ընկերության անդամ ուրիշ կերպ չե կարող հարստանալ, յեթե վոչ նույն ընկերության մյուս անդամների հաշվով: Յեվ այդ հարստություն չե, այլ պատահական հակումն հարստության կշռի յերբեմն դեպի այս և յերբեմն դեպի այն կողմը: Այսոր դու յես հարուստ, վաղը յես կլինիմ, և այն ժամանակ քո հարստությունը անպատճառ պիտի նվազի»:

— Ինչպես,— բացագանչում է նա:

«Ավելի հասկանալի շինելու համար առարկան, բացատրենք քեզ մեծը և ընդհանուրը փոքրի և մասնավորի կերպարանքով: Դնենք, թե քսան հոգի, մեք ապրում ենք մի տեղում և վաճառականություն ենք առնում մեր մեջ: Մեք ամենքս գործում ենք առանձին-առանձին, յուրաքանչյուր մարդ յուր ոգտի համար, և մեզնից յուրաքանչյուրը տարբեր կարողություն ունի, մինը շատ, մյուսը փոքր և այլն, և մեր բոլորի ունեցած կարողությունքը իրար վերա բարդելով, դնենք թե ստանում ենք հազար վոսկու մի ղրամագլուխ: Ապրդ, հարցնում ենք, յերբ վոր մեր բոլորի գործողությունը այն հազար վոսկու վերա չե, յերբ մեր ձեռքում չկա մի ույժ, վոր կարող լիներ մեր, քսանից դուրս յեղած արծաթը ներս բերել մեր մեջ, մեզնից մինը կարո՞ղ է հարստանալ, առանց քսանի շահին դպչելու: Վո՞չ ապաքեն յեթե մեզնից մինը յուր ունեցածից ավելի մի հարյուր ստանա, մեզնից մյուս մինը պիտի տուժե այդ հարյուրը: Յեվ այս հարյուր վոսկին յերևութական և առժամանակյա մի վաստակ է, քանզի ընդհանրությունը չունի հարստություն և շահվողը ընդհանուրի հաշվով շահվեցավ, քանզի, նորա արծաթը չմտավ ընդհանրության մեջ, այլ մինից անցավ դեպի մյուսը, վոր վաղը կանցանե դարձյալ դեպի մի այլ մյուսը»:

«Յեթե այսպես չլիներ բանի զորությունը, յեթե փոքրիշատե կարողության տեր մարդու ժառանգները նույնպես հարստանային, ինչպես հարբուսացել եր նոցա Հայրը, այն ժամանակ բյուրավոր պիտի լինեյին հարուստների թիվը, փո՛քր է այս, աղքատ ասած բանը բնավ չպիտի լիներ աշխարհի վերա: Բայց ավա՜ղ, հարստությունը վոչ թե չե հարատևում ժառանգների մեջ, այլ շատ անգամ նույն ինքը, յերբեմն հարյուր հազարներ յուր ձեռքի մեջ շարժողը, դառն աղքատությամբ կնքում և յուր կյանքը, ո՛ւր մնացին նորա ժառանգները:

—Բայց, դուրս փոխանակ, և աղքատների ժառանգներ հարստանում են։

«Այնպես, ինչպես ընկնող հարուստը, և նույն պայմաններով, ուրեմն և նույն ճանապարհի վերա և նա յուր կարգով պիտի հավասարի ընդհանուր մակերևութին։ Յեվ յեթե մի ընկած հարուստի փոխանակ հարստանա մի աղքատ, հետևանքը հառաջադիմություն չե. քանզի դրականը բացասականին վերա, տալիս և դրս։ Այո՛, բնության որենքները կատարվում են ճիշտ մաթեմաթիկական հաշվով, և մարդը, որպես անդամ բնության, և մարդկային կյանքը, որպես յերևույթ բնության, յենթակա յեն այս որենքին և այս հաշվին»։

Կարող են ասել, որ յեթե մարդը և նորա կյանքը դրվի ճիշտ մաթեմաթիկական հաշվի տակ, մարդը կդառնա մի մեքենա և նորա կյանքը մի ձանձրալի ժամանակամիջոց։ Այն ժամանակ նա կկորուսանե այն բանաստեղծական (poe'tique) գույնը, առանց որի անպատատ և մարդու կյանքը։

Մի՞թե մեք հակառակն ենք կարծում։ Բնության պարզության մեջ միայն կարող և փայլիլ մարդու բանաստեղծական գույնը, և ճիշտ մաթեմաթիկական հաշիվը, տանելով մարդկային ընկերությունը դեպի համերաշխություն, կարող և աղատել նորան մեքենա դառնալուց։ Մարդը առուգապես մեքենա յե այն ժամանակ, յերբ հաշիվ չկա, այսինքն դիտակցություն չկա։ Հույսը ուրիշ բան չե, յեթե վոչ առույգ հաշվից բղխելու հետևանք։ Քանի վոր հույսը չե հիմնվում առույգ հաշվի վերա, հո՛ւյս չե, այլ անձնախաբեություն։ Առանց սերմանելու հունձ չկա։

— Գուցե՛ լինի, շատ կարելի յե վոր լինի. և վերջը մեզ սիրելի յե լինելը։

«Ա՛յս և հույսը»։

Բայց մարդը, այս բոլորը քննելու ժամանակ, անշուշտ պիտի լեզի խառնե յուր կյանքի մեջ, նորան սիրելի չե այս, նա չե քննում, նա թողնում և առորյա տեսածով ապրում և այսօր, վաղը ինչ կամի թող լինի։ Նորան ավելի թեթև և թվում վաղվա գալիքը, քան թե այսորվա քննությունը, քանզի ապագան ծածկված է վարագուրով, վորի վերա մարդը խոշոր տառերով գրել և հույս։ Ապագան ծածկված է լոկ կարճատես աչքերի համար։ Ապագան ներկայի ժառանգն է, և յեթե մարդը քննե ներկան, այն ժամանակ իսկույն կճեղքվի նորա առջև ապագայի կարծեցյալ վարագույրը։

— Չե՛, փոքրիշատե կարողության տեր մարդ, չե՛, իմ պարոն, համաձայնիր, վոր առանց հաշվի չե քո հույսը, թե քո վորդիքը նույնպես պիտի տիրանան այն կարողության, վորին հաջողել և քեզ հասնել։ Դարձուր աչքդ դեպի այն որերը, յերբ դու մանուկ եյիր, կենդանացուր քո հիշողության առջև այն շրջապատը, վորի մեջ ապրեցար. ի՞նչպես են, կա՞ն այն հարուստները, վոր տեսել եյիր։ Այնպես չե՞, վոր այն տաան քան տունից, վոր դու ճանաչում եյիր, այսօր կան և տևում են միայն յերկու տուն։ Համաատա՛, վոր այսորվա մանուկը, յերբ յուր կարգով հասնի քո հասակին և քո պես աչքը հետ դարձնե դեպի յուր անցած ճանապարհը, պիտի տեսանե՞ւ ինչպիսի ավերակներ, ինչպիսի նավաքերության մնացորդք, վոր այսոր

յերևում են քեզ։ Մինչդեռ ընդհանուրը ապահովված չե, մասնավորի յերջանկությունը մի վազանցուկ յերա՛զ է։ Այսօր յերևում է նա, այո՛, բայց վաղը կցնդի. քանզի լոկ տեսաբանական խաբեություն է, կրկնում ենք վերստին։

Մեր մինչև այստեղ խոսածից յերևում է, վոր մեք, մարդուն համար, իբրև առաջին խնդիր առնում ենք տնտեսական խնդիրը և անվանում ենք նորան «մաճու և կյանքի խնդիր»։ Այս բավական է, վոր մի տեսակ մարդիկ, վորոնց բոլոր հասկացողությունը հիմնվում է յերկվության վերա— dualisme, պարզամտությամբ կամ հավատարիմ մնալով յուրյանց յերկճղի սկզբունքին, մեր քարոզությունը անվանեն նյութականություն, կամ, ո՛վ գիտե, դեռևս ինչ ուրյուն։

Մեք չենք կարող նոցանից ամեն մինին պատասխան տալ. վոչ թե ասելիք չունինք, այլ վորովհետև շատ ականջներ մարմաջում են, և իրական ճշմարտությունը, վո՜հ, շատ մերկ է։ Յեվ ավելորդ է պատասխան տալ այնտեղ, ուր խոսում են հեղինակության անունով, վոր մեք չենք ընդունում։ Մեք նորա առջև պիտի դնենք գործ, նա մեր առջև պիտի դնե հրաման։ Գործը ցույց տալով պիտի խոսինք համոզման անունով, նա հրամանը մեջ բերելով պիտի պահանջե հնազանդություն։

Հնազանդությո՜ւն.... վորի մեջ խորամանկությամբ դրված է բովանդակ ստրկության սերմը։ Ուրացի՛ր, ասում է նա, քո դատողությունը, քո բանականությունը, քո խելքը և հնազանդվի՛ր ինձ։ Դու մեքենա յես, և յես եմ քեզ շարժող զորությունը։ Մեր բառարանի մեջ հնազանդություն խոսքը չկա, վորովհետև հրամայական և հնազանդական առնչության մեջ ազատություն չկա։ Մեք համոզում գիտենք, վոր հնազանդության պես կույր չե, վոր հրամանի պես չե բռնաբարում քո հասկացողությունը, այլ աղբերանում է փաստերը և պատճառները գիտակցությամբ քննելուց։

Այո՛, մարդն է մեր կատարելությունը— ide'al և նորա եական և իրական պետքերից ավելի, ուրիշ բանի հետ վերաբերություն չունինք։ Եական և իրական պետքերի մեջ տեսնում ենք նորա կյանքը, կյանքի պայմանները։ Պայմանների մեջ տեսնում ենք տնտեսական խնդիրը, տեսնում ենք մարդկային համերաշխությունը, վոր դավանում ենք աղբյուր, անկեղծ և հաշվատու բարոյականության և վորի առջև միայն խոնարհեցնում ենք մեր ծունրը։

Մարդը չե գողանում, բայց յեթե նա չե գողանում նորա համար, վոր օրենքը արգելում է գողանալ, նա գո՛ղ է և ավազակ։ Մարդը չե սպանում, յեթե այն պատճառով միայն, վոր սպանությունը արգելված է, ի վերջո, այն բոլոր հանցանքները, վոր նա չե գործում, յեթե չե գործում իբրև ստրուկ, հնազանդվելով մի վերադույն հեղինակության հրամանի, մարդը սպանող է և անբարոյական։

Մարդը բարոյական է այն ժամանակ, յեթե այդ հանցանքները չե գործում վոչ թե յուր վերա յեղած հեղինակությենից վախենալով, այլ յեթե գիտակցությունը և համերաշխությունը դրել է նորան այն կետի վերա, վոր նա և հղանալ չե կարող այդ հանցանքները։ Յերբ հանցանքը հղանում է

մարդը, գործել և այնուհետև, թե չե գործել, մեր համար անբարոյական և, վորովհետև չեթե որենքը չարգելուր, պիտի գործեր։ Յեվ չգործեց վոչ թե հասկանալով, վոր չեթե գործեր, յուր նման մի ուրիշին պիտի զրկանք, վիշտ կամ մահ պատճառեր, այլ վորովհետև մեղք է, վորովհետև հանցանքի փոխարեն պատիժ կա։ Ասել է, այնպիսին չեթե յուր անձը վտանգելու չլիներ, ինքը ուրիշի անձերը պիտի վտանգեր։ Այստեղ բարոյականություն չկա, այս բարոյականությունը պաշտոնական է։ Յեթե այս կետից նայելու լինինք բարոյականության վերա, վանդակի մեջ փակված վագրը բարոյական է, վորովհետև մարդ չի փառատում։ Յեվ ի՞նչ տարբերություն կա, մինը (վագրը) ստիպված է չգործել, յերկաթեե վանդակից, իսկ մյուսը (մարդը) ստիպված է հնղինակության հրամանից։

«Ով հայիցի ի կին մարդ, առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա, ի սրտի իւրում»— ասում է Քրիստոսը[26]։ Մեզ հասկանալի չե այս։

Սոցա հակառակ, մարդը վողորմություն է տալիս, այսինքն, ոգնում է կարոտելոց, չեթե նա գործում է այն միմիայն այն պատճառով, վոր հավատում է թե փոխարեն պիտի առանա.... մեք չենք ընդունում նորան վորպես բարոյական, վորովհետև չեթե չհավատար, թե փոխարեն պիտի առանա, չպիտի գործեր։ Մարդը ուխտում է, չեթե չես այս-ինչ բան առանամ, կամ այն-ինչ բանի հասնիմ, այս-ինչ բարեգործությունը գործեմ. բարոյականության և հո՛տը անդամ չկա՛ այստեղ, վորովհետև չեթե յուր ցանկացածին չհասնի, չպիտի գործե։ Այս առևտուր է, պիտի առ առանալու ակնկալությամբ, բարի պիտի գործե առանալուց հետո։ Յեվ այս բոլորը, հեթանոսական և հրեական առմամբ, ղոհի անունով։ Մարդկային համերաշխությունը ղոհ չգիտե, այնտեղ յուրաքանչյուր անհատ միայն պարտ ուճի։ Մեր բախտն է, վոր անշունչ բնությունը մարդ չե. ապա թե վոչ, ի՛նչ վոխարեն պիտի տայինք արևին, վոր մեզ լուսավորեր։

Ղոհի սկզբունքը անարդում է մարդկային արժանավորությունը։ Այստեղ դարձյալ չերևում է բռնակալական վոգին, այստեղ դարձյալ կույտ կերպով նշանվում է մինի ուժը, իսկ մյուսի տկարությունը։ Մի մարդ, տեսանելով վոր մյուսը մեռնում է սովից, վորպես թե ասեր նորան,— տե՛ս, ահա մեռնում ես, քո կյանքը կախվում է այժմ ինձանից, այսինքն իմ քեզ հաց տալուց կամ չտալուց. բայց չես ղոհում եմ քեզ այս կտոր հացը, քո կյանքը հարատևել տալու համար։ Դորա վոխանակ դու պիտի դդաս, վոր չես եմ քո ազատիչը....

Թշվա՛ռ.... հասաջ քան թե փրկեցիր նորա կյանքը վոտքիդ տակ կոխեցիր նորա իրավունքը և նորա մարդկային արժանավորությունը։ Դո՛ւ դարեցար մարդ լինելուց վորովհետև ինչ վոր ուղղակի քո մարդկային պարտքն եր, այն ղոհի անունով գործեցիր, վշտացուցիր քո ընկերի ամենասուրբ և նվիրական զգացողությունքը, վորովհետև քո անձը տեր քարոզեցիր նորա կյանքին։

Հազար կյանք փրկե դու այդ ճանապարհով, թող պաշտոնական բարոյականի կնդրուկ ծխեն քեզ, մեր աչքում դու ամբարիշտ ես։

Յեվ ի՞նչպես չդառնաս դարձյալ դեպի տնտեսական խնդիրը, վոր յեթե կարդի դրված լիներ, այս խեղճ մարդը յուր կյանքը իբրև շնորհք չպիտի ստանար բռնակալ-բարերարից։

Միստիկները չկամին այս տեսնել, նոքա վերացականություն են խընդրում, նոքա այնքան բարձր կանդնած են, վոր մարդը հող և մոխիր ե նոցա առջև*։

Բռնակալները սեպհականություն են պահանջում, նոքա կենդրոնացած են յուրյանց մեջ. յուրյանց գոյությունը քարոզում են ուրիշներին իբրև հավատալիք, իսկ այդ ուրիշների գոյության վերա թքում են լրբաբար։

— Ի՞նչ ե մնում այն մարդերին, վոր վոչ միստիկ են և վոչ բռնակալ։ Ի՞նչ ե մնում մեզ։

Քարոզել տնտեսական խնդիրը, քարոզել մարդը, քարոզել ազգությունը, միստիկներին գայթակղություն և բռնակալներին սահմանադրություն, իսկ հասարակ ժողովրդին փրկություն։

* Արդյոք մարդուքենից չլսած չե՞ն. . Ծ. Հ.

ԱԶԳԱՅԻՆ
ԹԵՎԱՌՈՒԹՅՈՒՆ

Շատ հին ժամանակներից սկսած, հայոց ազգային և ներքին գործերի կառավարությունը, Տաճկաստանի մեջ, միշտ հայոց ձեռքում եր թեև, բայց այդ կառավարության ղեկավարքը լոկ մի քանի հոգի բռնակալ մարդիկ լինելով, բնականաբար, կառավարությունը հանդիսացնում եր մի այնպիսի անկարգություն և խառնափնդորություն, վոր հաղիվ կարելի չե յերազում յերեվակայել: Ինչպես ասացինք, մի քանի այդ կարգի և տեսակի վատթար մարդիկ, կղերի հետ միացած, յուրյանց ձեռքը ձգելով ազգային ջարդ ու փշուր լաստի ղեկը, առանց որինավոր հոգաբարձության, առանց մաքուր խղճմտանքի և միմիայն յուրյանց անձնական շահին, ախտերին և կրքերին ծառայելով, վոչ միայն հառաջ չեյին մղում այդ կիսակործան և ալետանջ լաստը, վոչ միայն փույթ չունեյին, գո՛նե, մի խաղաղ ծովածոցի կամ նավահանգստի մեջ նորան ապահովելու, այլև քակում եյին և խլում եյին այդ լաստից այսոր այս փայտը, վաղը այն յերկաթը, յերրորդ որը մյուս չվանը և յուրյանց չար որինակներով և գործերով ուրիշներին ևս տեղիք տալիս և հրավիրում նույնը գործելու ազգի իսպառ կործանության համար[1]:

Կրոնական ճեղքվածքը, վոր կան այսոր մեր ազգի մեջ, յերբեք հառաջած չեն բուն դավանության բանական խնդիրներից, այլ պատրաստված և արդյունացած ազգային ներքին և կրոնական գործերի չարաչար կառավարությենից: Այս բանը նոր ապացուցության կարոտ չե. ամենին հայտնի յե, ապացույց խնդրողն և այսոր կարող ե մեր ասածի վկայությունքը տեսանել այն կենդանի և տակավին թարմ իրողությանց մեջ, վոր ամեն որ գործվում են մեր աչքի առաջև:

Մենք սարսափում ենք, յերբ աչք ենք ձգում այն անշքացած, անապատացած աշխարհի վերա, ուր յերբեմն փողփողում եր Արշակունյաց հաղթակիր դրոշակը, ուր այժմ մեր խեղճ, անտեր և անոգնական ժողովուրդը միլիոնավոր բազմությամբ թշվառության, հարստահարության և հուսահատության մինչև հնարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արյուն և քամում աչքերից, յերբ լաց ե լինում, և ուր, դարձյալ, հայակերպ և գիշերադեմ վամպիրները տակավին չեն կշտանում անմեղ զոհի— խե՛ղճ ժողովրդի— արյունը ծծելուց:

Ծանր և համրաշարժ եր ազգային լուսավորության ընթացքը Տաճկաստանի մեջ և այդ ընթացքն ևս անհիմն և սայթաքելի. հայտնի յե թե այն թշվառ հանգամանաց մեջ ուրիշ կերպ չեր ևս կարող լինել: Դարեր անցան, շատ ու շատ սերունդներ ահ ու հոգ քաշելով յեկան գնացին, շատ իրավունք վատնակոխ յեղան, շատ գանձեր հափշտակվեցան, շատ տուներ քարուքանդ

յեղան, մինչև վոր սորանից մի քանի տարի հառաջ «Սահմանադրություն» բառը մեր ազգայինք արտասանեցին։

Սահմանադրությո՜ւն, կրկնեց հարստահարված և կիսաշունչ ժողովուրդը. Սահմանադրությո՜ւն, լսվեցավ յեգիպտական բուրգերից մինչև Վարագա սարը[2]. Սահմանադրությո՜ւն, ազաղակեցին և հրճվեցան կենդանի յերիտասարդները։

Այն միջոցին մինչև այնտեղ եր հասած ազգային կառավարության գերածայրյալ անպիտանությունը, վոր նորա[3] իակ, վոր միակ պատճառ եյին այն չարաչար և դատապարտելի կառավարության, չհամարձակվեցան բերան բանալ ընդդեմ խոսելու. պատճառ, վորից մինչև գլուխ ապականված եյին ազատելի գործերով, և հասարակաց ազգի բողոքը նոցա և նոցա նմանների ընդդեմ, վաղուց և վաղուց ծանուցած, մինչև յերկինք եր հասանում։

Սահմանը դրվեցավ։

«Կեցցե՜ Սահմանադրություն».

Տակավին լավում եր այս խոսքը հաղարավոր բազմության բերանից. տակավին Հյունքար—ակելեսի[4] դաշտավայրը յուր մեջ ուներ այն որհնեղու բազմությունը, մյուս կողմում նորա, վոր կորուսել եյին յուրյանց ժառանգական կողոպուտը, յուրյանց մշանջենական վորսը, յուրյանց լուռ և անխոս զոհը, վորո արյունով ներկել եյին յուրյանց քիթ ու պռունկը, սթափեցան առաջին հարվածի պատճառած ապշությենից, զարթեցան և սկսան այնուհետև դուրս սողալ յուրյանց խավարային վորջերից և վազել Պեշիկթա՜շ[5]։

«Սահմանադրությո՜ւն. ի՞նչ ասել և Սահմանադրություն. տերության մեջ տերություն կանգնեցնե՞լ. տերությունը վավերացուցած չե (թեև ինքյանք ստորագրած եյին), մեք չենք ընդունում Սահմանադրություն, մեք չենք ճանաչում Սահմանադրություն, վոր լոկ յերկու նպատակով և հառաջացած, նախ՝ ազգը սալք աճաճավատ ընելու, յերկրորդ, տերության դեմ ապստամբեցնելու»։

Այս մի վասակյան մատնություն եր, մի մեհրուժանյան սուր, վոր շատ անգամ մերկացած լինելովնաև տասն և վեց դար անցանելուց հետո վերըստին քարշեցին ազգի ընդդեմ։ Հայտնի յե, թե տերությունը առիթ ստացավ ներս մտանելու մեր ազգային ներքին գործերի մեջ. նորա ցանկությունն ևս այդ եր, իակ խռովարարների և ազգի դավաճանների համար ամեն հնար սուրբ եր և շուն կարելի յեր մատաղ առնել, միայն թե Սահմանադրությունը կործանվեր։ Այնուհետև յերեվեցավ մի սոսկալի ճեղք, մի սարսափելի խռովություն, վոր միմիայն Տաճկաստանի առհասարակ խառնափնդոր կառավարության մեջ կարող եր աննշմարելի կամ վոչ այնքան զգալի լինել, թեև այնտեղ ևս չմարսվեցավ, և յեվրոպական որագիրքը շատ անգամ եջեր լցուցին այդ մասին։ Յերեվեցան կուսակցությունք, Սահմանադրության պաշտպանք և թշնամիք, հառաջընթացք և հետընթացք, լուսավորյալ և խավարյալ[6]։

Յետ վորովհետև բնականաբար «Ոչ գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք»[7], ուստի միացան այդ բոլոր գիշակերքը և յուրյանց կեռ կտուցները և սուր մագիլները առավել ևս սրեցին անպատասպար և աղավներամ ժողովրդի ընդդեմ, վոր վոչ պեյ եր, վոչ եֆենտի և վոչ փաշաների առաջև ծունկ չոքելով մեջքի ողը կոտրած, հետևաբար և առավել տկար, տկար ասում ենք, բռնությունը հասկանալով մի կոպիտ ույժ։

Սահմանադրության բարեկամների միակ զենքն եր ճշմարտությունը, վոր լուսափայլ եյին կացուցանում հայկական խոսքի միջնորդությամբ, պրիչը ձեռքին անձանձիր ճգնելով և վորովհետև ճշմարտությունը չունի մասն, չունի վարձ, ուստի և ոտարոտի չեր, յերբ վոմանք ճանապարհի կիսից հետ դարձան, յերբ մյուսները լավորդիկեցի դարձան, յերբ մի քանի ուրիշներ անգլիական արիմմերության որինակը ցույց տվեցին։

Աղաղակեց հասարակ ժողովուրդը, հեղեղի պես վազեց նորա հոսանքը դեպի պատրիարքարան, ուր հակառակ ազգի կամքին և ընդդեմ Սահմանադրության, ազգի իշվառության պարտավորքը վերստին հավաքվել եյին յուրյանց սովորական խաղը խաղալու և ազգն ևս խաղալիք շինելու, ազգը ցըրվեց այդ ավազակաց ժողովը[8] և «զաթոռս աղաւնեվաճառացն և զսեղանս հատուավաճառացն կործանեաց»[9]։ Այդ միջոցին արյուն քրտնեցան արի յերիտասարդները, այդ խորհրդավոր միջոցին վերջին ճիգը թափեց հայկական խոսքը և Արիստոտելի դիտությունը։

Տերությունը մի քննիչ ժողով կազմեց, յերկու կողմի մարդերից, վոր պիտի քննեյին Սահմանադրությունը, պիտի սրբագրեյին նորան և ներկայացնեյին տերության։

Հյուսիսափայլը քաջ գիտե «տալ որում զհարկ, զհարկ, որում զպատիւ, զպատիւ». ուստի և ամենևին միտք չունի դատապարտել այն պարոնայքը, վոր նստած եյին այնտեղ վորպես սահմանադրասեր։ Հյուսիսափայլը անարդարություն է համարում ուրանալ պ. Սերվիչենի աշխատությունը. Հյուսիսափայլը մինչև անգամ հակամիտ է կարծել, վոր, առանց այդ արդ պարոնին, Սահմանադրության վտանգը կարող եր գուցե ավելի ծանրանալ. բայց Հյուսիսափայլը չե կարող գովել այն թույլտվությունքը և զիջողությունքը, վոր արդ պարոնը շնորհում եր խավարյալների կողմին. Հյուսիսափայլը չե կարող ուրախությամբ հիշել, յերբ պ. Սերվիչենը, վորպես միակ հույս սահմանադրասիրաց, չիմաներ գործ դնել յուր բոլոր ազդեցությունը լիամասն կերպով։

Արդ պարոնը, վորպես ըստ Սահմանադրության ընտրված նախագահ ընդհանուր ժողովին, քանի վոր հրապարակով հանձն եր առել այդ պաշտոնը, բնականաբար չեր կարող չպաշտպանել Սահմանադրությունը. բայց այդ փոքր եր, յեթե պիտի լիներ թերի. նա կարող եր դեմ կենալ մի քանի բռնակալ առաջարկությանց վոր առնում եյին խավարյալք, կարող եր, ասում ենք, քայց ընկավ հասարակաց հոսանքի մեջ։ Այնուհետև, մի կողմ թողած Սահմանադրության գործը, այդ քննիչ ժողովի առաջին տնորենու-

բյունն յեղավ հայկական խոսքը ճնշել, տպագրության ազատությունը բռնաբարել։ Պ. Սերվիչենը կամակից եր այս բանին և մեք առ ի սրտե ցավում ենք, վորովհետև նորան ճանաչում ենք սուրգապես ազգասեր և սուրգապես մի ճարպիկ մարդ։

Այո՛, Հյուսիսափայլը շատ է պահանջում արդո Սերվիչենից, բայց Հյուսիսափայլը ցույց է տալիս սորանով, թե շատ է հարգում նորան, վորովհետև գործը գործունյա մարդից են պահանջում։

Ջիարդ և իցե, իրողությունը այս է, վոր այդ ժողովակի կազմվելուց հետո, բոլոր ազգային կառավարությունը կենդրոնացավ նորա մեջ. ուրիշ կառավարություն չմնաց վոչ սահմանադրական և վոչ արտասահման։ Բայց այս միջոցին տարիներ անցան, ազգի տարտամ վիճակը շարունակվեցավ և ազգային կառավարությունը, մնալով անպող և անգլուխ, մեծապես պատճառ դարձավ գավառների անկարգությանց զորանալուն, վորոնք մորմոքեցուցիչ և աղեկեզ տեսարաններ ներկայացուցին աչք ունեցողի առաջև։

Սուրբ Հակոբի վանքը մնաց ավազակների ձեռք[10]. ազգը արյուն թափել սոիպվեցավ, Հայաստանի հողը վերստին սկսավ հայոց արյունով և դիակներով պարարտանալ. ազգային կառավարության հանձնառուքը հող չտարան։ Ի վերջո, իշվառության բաժակի տակ բան չմնաց, սրածություն, գաղթականություն, հակամարտին կրոնափոխություն, ավեր, հափշտակություն, շնորհավաճառություն, և այլն և այլն, յուրյանց բոլոր դժոխային արբանյակներով թափվեցան ազգի վերա....

« Եղեվ պատարագս»....

Այսոր, գրե՛թե մի տարի չե, վոր Սահմանադրությունը վավերացավ տերության հրովարտակով[11]. ատույգ և, իլպատված, ատո՛ւյգ և այս և այն մասնով խեղացած, այնուամենայնիվ մի Սահմանադրություն, վոր ազգի կառավարությունը տալիս և հասարակաց ազգի ձեռքը, ազատելով նորան մի քանի բռնակալ իշվառականների լծից։

Հյուսիսափայլը հանդիսաբար հայտնում է յուր առ ի սրտե շնորհակալությունը Սահմանադրության ոգու համար հայտնի և անհայտ կերպով աշխատողներին (Հյուսիսափայլին թվում է, թե անհայտ աշխատողը վոչ պակաս գտնվեցան յուրյանց արդյունավորությամբ, քան թե հայտնիքը), Հյուսիսափայլը շնորհակալ և լինում ազգի ընդհանրության առաջև մեծարու Սերվիչենից։

Յերեսփոխանք ընտրվեցան, Ընդհանուր ժողովը կազմվեցավ, Պատրիարքը ընտրվեցավ, Քաղաքական ժողովը կազմվեցավ, Թողունք մյուս խորհուրդները, վոր այլպես կազմվեցան[12]։

Ազգային վարչության անիվը սկսավ կատարել յուր շրջանը։

Բայց, այդ վարչությունը աչքը ձգե՞ց արդյոք, վոր տեսաներ, թե ի՞նչ վիճակի մեջ է ազգի կացությունը գավառներում։ Ականջը բացե՞ց արդյոք լսելու համար ազգի աղեխորով բողոքները, յուր ներքին հալածողների և հարստահարողների ընդդեմ....

— Ծո՛, Մեղուն[16] բավական չեր պխոնուա, սա Հյուսիսափայլն ել ուրկե՞ յելավ... կեցի՛ք հելէ, մեյ մը ինք գինքնիս գտնանք.... Տակավին չե՞ք գտած. վախենում ենք, մի՛ գուցե յերբեք չգտանեք. յերանի՞ թե սխալվելինք։

Դիմակ պետք չե՞։

Ըստ Սահմանադրության կազմված ազգային վարչությունը ազգային բարեկարգությունը սկսում է այսոր բռնությամբ....

«Գեշը գեշով դեֆ կըլլա». բարով խերով Մեչուխեչան[14] չնորոգեր այդ վարդապետությունը։

Կանչեցե՛ք որագիր հրատարակողները, ճնշեցե՛ք, խե՛ղդ դրեք, ձեռագի՛ր առեք, վոր բան չգրեն, լռեն, համրանան, պապանձվին, կուրանան, չտեսնեն, չլսեն, խլանան, մի խոսքով, քար և փայտ դառնան (վորովհետև անասունն անգամ տեսնում է, ինչ վոր նորա աչքի առաջև է գործվում), որագիր հրատարակողք են ազգը տակ ու վեր բերողքը....

Յերիտասարդները և Մեղուն, վոր մահու չափ ճգնեցան Սահմանադրությունը պաշտպանելու, պիտի տեսնեն այսոր, վոր նոցա պաշտպանած Սահմանադրության գործադիրքը Սահմանադրության թշնամիների վաղեմի ցանկությունը կատարելու համար, առտասահման բռնակալությամբ վարվում են Մեղուի հետ, վոր և յերիտասարդների և կենդանի ժողովրդի մտքուր բերաքը, ազգի ցավերի և ուրախության ճշմարտապես հայտարարքը։

Ըստ Սահմանադրության կազմված վարչությունը արդեն սկսավ արտակարգ հնարներով և դատապարտելի ճանապարհներով յուր բոլոր ուժը Մեղուի ընդդեմ համաժողովել, և մինչև այն աստիճան անպատվեց յուր անձը, վոր սիրտ բռնեց ազգային բազմարդյուն որագրի ընդդեմ բողոքել[15]։ Ամ.....

Այդ սուրբ Սահակ Պարթևն եր հարցնում, իսկ Սուրմակները ուրիշ կերպով մտածում։ Այսոր չկան այլևս Սահակ Պարթևներ։ «Յաթոռն Մովսիսի նստան դպիրք և վարսեցիք»[16]։ Այսոր առատ ենք, զեղում, թաթաղում, շարժուն. ինչո՞վ. անտարակույս, Սուրմակներով, Բրքիշոններով, Այսահակներով, վոր մի սահմանադրապես կազմված վարչության վերա ազդեցություն ունին, թեև չե պիտո ունենային «ըստ Սահմանադրության»։

Ազգը վերստին հրավիրեց մեծարու Սերվիչեն եֆենտին, վոր նստի ընդհանուր ժողովի առաջին աթոռը։ Ընդհանուր ժողովի ատենադպիր ընտրված է հոյակապ Ո. Գրիգոր եֆենտին։

Գավառների դրությունը նկարագրեց Մեղուն, վասպուրականի անայցել Գալատների դրությունը նկարագրեց[17] Մեղուն, Իգնատիոսի դիմակը վերայից հանեց Մեղուն, Տորոսի խռովությունքը պատմեց[18] Մեղուն, արժ. Խրիմյան Մկրտիչ վարդապետին պաշտպանեց Մեղուն, նորա վերա, գիշերային լռության մեջ, հրացան դատարկողների ընդդեմ բողոքեց Մեղուն. գավառ չթողեց, քաղաք չթողեց, գեղ չթողեց, թաղ չթողեց, ամեն ծակ ու ծուկ մտավ յելավ Մեղուն. թո՛ղ մեռնի Մեղուն։

Կոտրեցե՛ք այդ հայելին, վոր իմ ճիվաղադեմ կերպարանքը ամեն որ ինձ ցույց և տալիս[19], փշրեցե՛ք նորան... թո՛ղ վանեցի Պողոսները փառա-

վորվին, Բո՛ղ տիրացու Հովսեփեի Արությունը վոտքերը ջուրը դնե, վրկվի. Բո՛ղ Աշալույսի[20] գերապատիվ կրոնադրուժը, այժմ Հալեպ գտնվող Նիկողոսը, ցնծա՛ և պարե՛, Բո՛ղ Իգնատիոսի պաշտպանության համար հոդմաթած նամակներ պրեն Մեղուին, Բո՛ղ Ջաթարյան Կարնի մեջ, Սահմանադրությունը նաև տերության հրովարտակով հաստատվելուց հետո, յերբ արժ. Արըմյանը հորդորում եր ժողովուրդը, սիրով և միաբանությամբ գործ գնել Սահմանադրությունը, քարոզե, թե ինքն Ավետարանից ուրիշ Սահմանադրություն չե ճանաչում, Բո՛ղ նույնը և ժողովրդին ուսուցանե..... Բո՛ղ վերջապես ազգը մեռնի ու գերեզման դրվի, միայն.... միա՜յն..... Միայն թե մեր բանին չխառնվին, մեր մասին չգրեն, մեզ չդատապարտեն, մեր կամքը իրեվ Մովսիսի պատգամ ընդունեն. «մեր ըրածին կամ ընելիքին վրա չխոսին»....

Իսկ ձեր «ըրածին և ընելիքին վրա» կարելի՜ չե խոսել, սքանչելի՛ զեկավարք ազգային վարչության. «Անիկա ալ մեր գիտենալու բանն է.... Փա՛ռք աստուծու, ի՜նչ է յեղեր, որե որ ազգերնիս կհառաջադիմե կոր (գիտենք, կդիմե, բայց դեպի կործանումն), քիչ մը պակասություն կան յեղեր.... ո՜ւր տեղ չկա, անոնք ալ կամաց կամաց կշտկվին..... հիմակու հիմա աս չափով գոհ ըլլալու չե, խոհեմությունը անանկ կպահանջե. ամենը մեկեն հոփ տեյի կըլլել չըլլար... քիչ, քիչ...— Ազգերնիս կըհառաջադիմե կոր....»

Ազգի զավակները սրիկաների մատնված, սրախողխող են լինում յուրյանց մահիճների մեջ, Իգնատիոս յեզ ծախելու շահավետ առևտրով և պարտպում, նորա արբանյակը շինականի վերջին յեզնը առաջ ձգած դեպի Իգնատիոսի ագարակն և գնում: Քաղաքական ժողովը Մեղուի քամակից ընկած, միջոց չունի այն արյունաշաղախ տեսարանների վերա մի րոպե յուր աչքը ձգելու, «ազգերնիս կըհառաջադիմե կոր»:

Ազգի ազջիկները և կանայքը կրտտռապին և կըբռնաբարվին անորինակ և անլուր ժպրհությամբ[21]. «ազգերնիս կըհառաջադիմե կոր». մի քանի վրին, մի քանի ազջիկ «կըտտռապին յեզեր.... ի՜նչ կըլլա յեզեր... ատին ալ մխիթարական տեսարանք պակա՞ս են մի. Շողեր հանըմը, Դորոթիա տուտուն թուղին ու թավլուն առջևնին առած իրենք զվարճանալնեն զատ, ուրիշներուն ալ դաս կուտան»....

Ազգային վարչության անդամքը այս զվարճալի «փետելու և փետվելու» տեսարանը թողած, հիմա՞ր են, վոր ականջները բանան հայկական ընդարձուց մաքրասիրության և պարկեշտության արտաշարժ բողոքները լսելու. մանավանդ վոր Իգնատիոսը նոցա խիղճը հանգստացրել և «բոլորը մեծ ըրած և սո՛ւտ բաներ են» պրելով: Ազգերնիս կըհառաջադիմե՜ կոր:

Այ՛ո, ատում է Մեղուն, մշեցոց կարավանը հառաջ է գնում:

Այո՛, ատում է Մեղուն, թշվառության և հարստահարության յերեսից ստիպվելով, գաղթական այրին հաց չունի յուր լացող վորդկին տալու և արտլին է յերանի տալիս, վոր նորա ձագերը կուշտ են.

«Մայմի՛կ, պատառ մի հա՛ց...
— Հոգյա՛, հի՛նչ տեղից քեզ հացիկ ճարեմ....
Մերիկդ թաղես, վա՛հ, անօրի յես...
Արդի՛լ, հորի՛ն դիեւերդ թափ տվիր,
Հորի՛ն գիմ Մոսոն քնից դարթ տվիր.
Արդի՛լ, քու ձագեր կուշտ են ու հանգիստ.
Մոսոն հաց կուզե. չկա՛... կքաղվի՛ հոգիս·
Մի՛ լար, Մո՛սո, քո՛ւն չեղիր լա՛վո.
Դեռ գիշեր մութն է, քնի՛ր առվրառուն.

Ո՛, Բոսո՛, հերիք մեզ թողնես մահրամ,
Հերի՛ք քաշես զեզ զարիպութիւն.
Քու ողուլ չոճուլ հերերից խեղճ են.
Ես ի՛նչ դառն որ ա, մեռնելու մեջ են
Ջքեզի կըկանչեն»:

— Ասացին լացին, լացին ասացին... վեր կացին յերեսներին խաչակնքեցին. աստվա՛ծ կանչեցին, ձեռք ձեռքի բռնեցին, սկսան քալել կարավանի ճամբով (Մեղու, թիվ 226)[22]:

«Ազգերնիս կըհառաջադիմե կոր»:

Բայց ի՛նչ լա յուր գլուխը ազգային վարչութիւնը. կարո՞ղ է բովանդակ ազգին հաց տալ: Հյուսիսափայլի ասածը այդ չե, Հյուսիսափայլը յերևութների ընդդեմ հնար քարոզող չե, վոր միշտ անհիմն է լինում, բայց Հյուսիսափայլը հրավիրում է պատճառի ընդդեմ հնար գործ դնել: «Ի բառնիլ պատճառին, բառնի և գործն»: Ազգային վարչութիւնը վոչ միայն խնամք չուճառին, բառնի և գործն»: Ազգային վարչութիւնը վոչ միայն խնամք չուներ այդ պատճառների հիմքը փորելու, այլև հալածում է նորանց, վոր ցույց են տալիս ազգին նոցա բուն թշնամիքը: «Սուրբ բռնութիւն», այսոր այս խոսքն ենք մորմոքվելով տեսանում ազգային վարչութեան դրոշի վերա: «Ազգերնիս կըհառաջադիմե կոր»...

Շարունակե՛նք դեռևս, արդո՛ վարչութիւնդ ազգի. վո՛հ, ծա՛նր է մեզ հիշել անգամ այդ վարչութեան դատապարտելի զանցառութիւնքը և իշխանութեան չարաչար գործադրութիւնը, թո՛ղ թե մանրամասն դրել. բայց գիտենք, ըստ վորում լույս ցերեկով գործված են այդ բոլոր իրողութիւնքը:

Մեղուի վերա Դրանը դանգատելուց հառաջ, Քաղաքական ժողովը կանչել եր բոլոր որագրապետներին և ստորագրութիւն եր պահանջել, վոր այս և այն բանը չգրեն[24]:

Այն մարդիկը, վորոնք վոչ ազգային վարչութեան, վոչ յուրյանց և վոչ տալու ստորագրութեան հարգը և կշիռն էին ճանաչում, իսկույն փութացան տալ պահանջված ձեռագիրը, վորովհետև հավատացած էին, թե այդ բնավ արգելք լինելու չեր յուրյանց սովորական կերպով. սորա և նորա բարոյականութեան վերա մուր քսելու, վորովհետև գիտեին, թե ինքյանք կանչված

հին միմիայն պատշաճի համար և կանչողների խորհուրդը և դիտավորությունը եապես ուրիշ մարդոց վերա յեր բևեռված։

Մեղուն չեր կարող նոցա նման թեթևաբար վարվիլ. Մեղուն գիտեր, վոր այն ստորագրությունը ապագայում մի խայտառակության արձանագրություն պիտի դառնա ազգային վարչության համար. Մեղուն չեր կարող ցանկանալ, վոր ինքը ձեռնտու յեղած լիներ այդ իրողության։ Մեղուն գիտեր, վոր մի բարոյական մարդ վոչ թե դրավոր, ձեռագրով, այլ յերեն և լոկ խոսքով խոստանում և այս կամ այն բանը, իրավացի թե անիրավացի, այնուամենայնիվ պարտ և յուր խոսքին հավատարիմ մնալ և հողմացույցի պաշտոն չվարել. Մեղուն չտվեց պահանջված ստորագրությունը և յուր առաջիկա թերթում հիմնավոր փաստերով ապացուցեց, թե ի՛նչքան ծաղրելի յեր այդ պահանջողությունը։ Մնաց վոր, Սահմանադրության մեջ այդպիսի բան չնիևելով, յերեսփոխանաց ընդհանուր ժողովի վճռով այդ բանը հառաջացած չլինելով և Քաղաքական Ժողովը բնավ իրավունք չուներ այդ տեսակ արտականոն պահանջողության։

Քաղաքական ժողովի պատասխանը, յերեվի, այն մեծադիր գանգատագիրն եր, վոր տեսել և Մեղուն վոստիկանատան մեջ և վորո մասին հիշում է յուր 226 համարում[25]։

Ճշմարիտը ասելով, մենք ամաչում ենք վոխանակ Քաղաքական ժողովին։

Վորքան մենք հիշում ենք, հետևյալ բաներիս մասին եր պահանջված ստորագրությունը, ուստի և յերբեք չհրաժարեցավ Մեղուն։

1) Կրոնի ընդդեմ չգրել. 2) Սահմանադրության ընդդեմ չգրել. (բայց Սահմանադրության ընդդեմ գործել ներելի յե Քաղաքական ժողովին). 3) Ազգային վարչության «ըրածին կամ ընելիքին վրա» չգրել և 4) անձնական պատվի չդիպչել[26]։

Մեղուն, կրոնը և Սահմանադրությունը միշտ պաշտպանած լինելով նաև այն ալեկոծյալ ժամանակներում, յերբ մի քանի հայկատակ մարդիկ ամենայն կերպով թշնամանում եյին յերկրորդը, և գաղտնի դավաճանությամբ փորում եյին առաջնի հիմքը, նաև այն փոթորկալից միջոցներում, յերբ վոմանք այժմյան ազգային վարչության անդամներից, ընտրած լինելով Սահմանադրության հիմամբ, մահու չափ թշնամի եյին Սահմանադրության,— Մեղուն ի՞նչ պատճառով պիտի ստորագրություն տար, թե կրոնի և Սահմանադրության ընդդեմ չե գրելու, յերբ վոչ թե միայն այդ հոգով գրիչ շարժած չեր, այլ դորա հակառակ, ինչպես ասացինք, միշտ պաշտպանած եր և՛ կրոնը և՛ Սահմանադրությունը, և մինչև այն աստիճան, վոր Սահմանադրությունը և հասարակաց ազգի անկողոպտելի իրավունքը պաշտպանելու համար արժանի յեղավ վերոհիշյալ հայկատակների մատնությամբ Դուռը կանչվելու և հանդիմանվելու[27]։

Մեղուն իբրև անտի Սահմանադրության պաշտպան և Սահմանադրական վարչության ջատագով լինելով, չեր կարող յերբեք ընդդեմ վարվիլ բուն Սահմանադրության, ապօրինի առաջարկված թղթեր ստորագրելով. «ազգա-

յին վարչության ըրածին կամ ընելիքին» վրա չքրելու պատվերը, Սահմանադրության ընդդեմ մի ձեռնարկություն եր, ուստի և Մեղուն իշխանություն ուներ ձեռագիր չտալ։

Բովանդակ աշխարհի յերեսին յեղած սահմանադրական կառավարությանց մեջ բացարձակ ուժը մեծագույն մասի ձեռքումն է. բայց գիտելի յե, վոր սահմանադրության մեջ մի այսպիսի իրավունք մեծագույն մասի ձեռքում, և մի անփախչելի չար և վոչ դրական բարի. յենթադրվում է, թե մեծագույն մասն ավելի շուտով կարող է լինել ամբողջ ընկերության կամ֊ֆի հայտարարը, քան թե փոքրագույն մասը։ Բայց պիտո չե մոռանալ, վոր բազմությունը Սահմանադրության տված իրավունքով հառաջ մղելով յուր կամքը, շատ անգամ ճնշում է փոքրագույն մասին վոչ միայն կամքը, այլ յերբեմն և իրավունքը։

Ազգային Սահմանադրության մեջ հիմնական կանոն է մեծագույն մասը, բայց փոքրագույն մասը կամ թերևս լոկ մի յերեսփոխան, լոկ մի անգամ այս կամ այն ժողովի, ունի՞ իրավունք, հրապարակ հանել յուր դատողությունը ընդդեմ մեծագույն մասի արած անօրենության, թե՞ վոչ։

Խնդիրը այնտեղ չե, թե վո՞ր կողմումն է ճշմարտությունը, այլ թե այդ միայնակ յերեսփոխանը կարո՞ղ է հասարակության դատաստանին ներկայացնել յուր կարծիքը և մեծագույն մասին վճիռը, թե՞ վոչ։

Յերե բացասաբար պիտի պատասխանեն այս հարցմունքին, ապա ուրեմն ի՛նչ հրատարակեն, թե արդի Սահմանադրությունը ուրիշ բան չե, յերե վոչ մեռած տառ. իսկ յերե գո՛նե ամաչելուց պիտի խոստովանին, թե կա այդ աղատությունը, այն ժամանակ յերկրորդ խնդիրն ենք հառաջ բերում։ Մի յերեսփոխան, կամ մի անդամ ժողովից դուրս, յուր անձնական կարծիքի վերաբերությամբ, վո՞ր իրավունքով ավելի արտոնություն ունի քան թե անդամ և յերեսփոխան չեղողը. յերե մեծագույն մասը մերժելով նորա կարծիքը, յուր կամքն և հառաջ տարել մի վորոշյալ խնդրի մեջ, այդ խնդրի վերաբերությամբ հաղթահարված փոքրագույն մասը կամ մի անդամը ի՞նչ բանով ավելի յե քան թե յերեսփոխան կամ անդամ չեղողը։ Հայտնի յե, թե համորեն ազգը բաղկացնող յուրաքանչյուր անձը հավասար իրավունք ունի ազգային խնդիրների մեջ. հայտնի յե, թե մեծագույն մասի ձեռքով մի խնդիր լուծվելուց հետո, փոքրագույն մասը նույն խնդրի վերաբերությամբ քնավ ավելի ուժ չունի, քան թե անդամ չեղողը. արդ յերե նա իրավունք ունի այն խնդրի վերա խոսել (ինչպես և պիտի ունենա), վո՞ր որենքով զրկվում է հասարակաց ազգի ունեցած իրավունքից։

Ազգային վարչությունը փակել կամելով որագիրների բերանը, կասկածանքի տակ է ձգում յուր անձը հասարակաց ազգի դատաստանի առաջև. պատճառ, ով վոր բռնություն է գործ դնում, նա յերկյուղ ունի, իսկ վոր վախենում է, նա մաքուր չե. նա լռելյայն խոստովանում է յուր դատապարտելի անօրենությունը, վոր ամեն որագրական խոսքից ազդու յե և ժո-

դովրդին զգալի։ Մեղ թվում է, թե այսքանս պարտական էին դիտենալ նորա, վոր ձեռք են ձգում ազգային դեկը կառավարելու։

Ինչ վոր վերաբերվում է անձնական պատվի չդիպչելու մասին, ևս առավել անտեղի չե, յեթե քաղաքական ժողովը պահանջում է ձեռագիր։ Այն մարդը միայն կարող է բողոքել, վոր պատիվը վշտացրել և արատավորել էին հանիրավի, բայց վոչ մի դատաստանատուն կամ ատյան առանց բողոքի դատ սկսելու իրավունք չունի։ Մեղուն, հանիրավի մարդու պատիվ արատավորած չե, և յեթե արատավորած էլ լիներ, այն ժամանակ դատախաղը պիտի մասնավոր կերպով դատ բանար Մեղուի ընդդեմ։ Վորևիցե կառավարություն կարող է որենք դնել այս կամ այն բանի մասին և զանյատուն դատապարտել, բայց վոչ մի կառավարություն չե պահանջում, վոր ազգը ստորագրություն տա այս և այն որենքը պահելու, վորովհետև, յեթե պահանջեր, պիտի ծաղր արած լիներ յուր որենքը, ցույց տալով, թե ույժը որենքի մեջ չե, այլ ստորագրողի ձեռագրի մեջ և այդ դիպվածում նա կարող եր դատապարտվիլ վոչ վորպես որինազանց, այլ իբրև ուխատգուժ։ Բացի սորանից, անձնական պատիվ և նմանապիսի բաների վերաբերյալ դատաստանը ազգային ներքին գործ չլինելով, այո՛, և քաղաքական վարչութենից դուրս, ինչպես Մեղուն, նույնպես և մի այլ մարդ կարող է անպատվել յուր ընկերը, բայց դորա համար կա տերության դատաստան և որենք, վոր առանին Սահմանադրութենից մի վորը տարբեր է, կարծենք։ Յեվ մեղ թվում է, թե նաև տաճիկ ատյանը ավելի լայնասիրտ է, քան թե ազգային վարչությունը, ըստ վորում Մեղուի հրատարակողը, քաղաքական ժողովի մեծագիր գանգատներից հետո, Դուռը յերթալով և այնտեղ «մարդասիրական քաղցր ընդունելության հանդիպելով», վերադառնում է խաղաղությամբ յուր տունը. իսկ թե Մեղուն արգելված չե, դորա ապացույց կարող է լինել նույնիսկ Մեղուի թերթը, ուր այս անցքերի պատմությունը գրած է ընթերցողի առաջև։

Մենք միշտ էլ դատապարտել ենք, յերբ մի մարդ վորոնում է ոտարի պաշտպանություն, բայց նույնպես դատապարտել ենք և դեռևս պիտի դատապարտենք ազգային անպիտան գործակալքը, վոր յուրյանց լուծը ոտարի լծից շատ առավել ծանրացնելով, ստիպում են խեղճ ազգը ոտար լծի վրա նայիլ, վորպես մի յերանացուցիչ քաղցր բեռի վերա։ Մեր ազգի բոլոր թշվառության աղբյուրը այս բանի մեջ է ահա։ Անտառը ջարդող կացնի կոթը անտառի փայտիցն է լինում միշտ։

Լավ կընթանար վարչությունը, յեթե յուր ուշադրությունը դարձներ մարդոց պատիվը ստուգապես վշտացողների վերա, և վոչ այնպիսի տեղում, վոր բնավ «ավազակների այր» չե և վորո պատիվը ապաստան է այսոր վարչության ժրագլխությանը։

Վարչությունը չե՞ր լսում, յերբ Այտահակը[28] Յոակիմոտարի բեմերն եր ընդհեցնում, ազնիվ Մյուճատիու[29] ընդդեմ յոփաբանելով. «Իրենք պիտի տան յեղեր պատիժը, տերությունն է տվեր»։ Մորո՛ս զրեց Մյուճատիու և վոչ

կոշիկների խրացը արժանի չես լուծանել: Մյունատին կարող չե նոր ի նոր ընծայվելու ազգին, նա կարող չե և ընծայության թղթերի, նաև ազնիվ մարդերի կողմից, բող թե մի շաղղակեր ագռավից: Մյունատին «զբարւոք պատերազմն պատերազմեցաւ, զհաւատսն պահեաց». իսկ ո՞վ է Այսահակը, արժանահիշատակ Բաղիշատյանցի կնքած չեզի ճակատը: Վո՜հ, պիտո չե Արաբիա գնալ նորա պատմությունը իմանալու համար. Զեղդայի քարերը լեզո՞ւ ունին... և Յերուսաղեմի նվիրակ Սահակ վարդապետի վերջին՝ րոպեների պատմությունը քաջ գիտեն.... որ ընթեռնում, ի միտ առցէ:

Յեվ այդպիսի մի մարդ.... ողո՞րմիմ քեզ, եկեղեցի՛ Հայաստանեայց. մեր գրիչը չե կամենում գրել այն պաշտոնի անունը, վոր նա ունի այսօր:

Այս ասելով, բնավ դեպի բռնություն չենք հրավիրում վարչությունը, այլ վոր տեսչության հավատացած մի սուրբ տեղի պատիվը պահե և յուր սորագրած սահակին խրատ տա, վոր Մյունատիու ընդդեմ թե ասելիք ունի, այնտեղ չասե, այլ որագիրների մեջ, և վոչ յուր սատուրնական խընճույքներում[30]. սարին տասներկու ամիս աբեղաթողի տոն և նոցա համար, ուստի և միշտ կարող և մոլիլ:

Բայց բուն «անձնական պատվի չդպչելու» խնդիրը քննելով, տեսնում ենք, վոր դա մի խայծ ե, վարչության բռնակալության կարթի ծայրը անցուցած և տղայական ու ծիծաղաշարժ մի խայծ. պատճառ, անձնական պատվի չդպչել հասկացել են և պիտի հասկանան, յերբ մի որագիր հրապարակ և հանում այս կամ այն պաշտոնական անձին ըստ պաշտոնի չարագործությունք. ապա թե վոչ, արդյոք վորո՞ւ պատիվը վշտացուցին: Վոչ վոք կարող և մարդու պատիվը արատավորել. «Ոչ ոք վնասի, եթէ ոչ յուրմէ»[31]. իսկ արդ, յեթե մարդը ինքը յուր գործերով ապատավորել և յուր պաշտոնատարությունը, յուր անձը. ասենք միանգամայն, յեթե այնուամենայնիվ վոչ միայն հանցավոր չե նա, այլև վարչության հարգությանը արժանի, այդ գործերը հականն և հանվանն հրապարակի առաջեվ դնո՞ղն և պատժի և դատապարտության արժանին: Վո՞ր որենքով, ի՞նչ արդարությամբ:— Հը՜մ.....

«Եւ օրէնս արդարութեան բռնութիւն մեր եղիցի... զարանակաւ լիցուք «արդարոյն, զի դժպհի եղև մեզ և հակառակ կայ գործոց մերոց, և նա«խատինս դնէ մեզ զհանցանս օրինացն և բամբասէ.... ծանր է մեզ և տե«սանելն զնա, զի աննման են այլոց կեանք նորա և այլազգի շաւիղք նո«ցա: Ի դարշութիւն համարեցաք նմա, և խորշի ի ճանապարհաց մերոց, «իբրեւ ի պղծութեանց.... Մահո՛ւ խայտառակութեան դատեսցուք զնա»...[32]

Հիանալի՜.....

Այս բոլոր գրվածը կատարելուց հետո, Մեղուի թաղմանից վերադառնալով, «խահվե մըն ալ առե՛ք», գուցե այն ժամանակ «ինք զինքներդ գրտնաք» և ազգի խնամածության վերա դարձնեք գո՛նե քառորդը այն զգաստու արթուն ուշադրության, վոր ունիք Մեղուի վերա:

Բայց, խրատ մի տամ ձեզ, զգո՛ւշ կացեք, վոր Մեղուից փախչելով,

յեգիպտական շանաճանճից չբռնվիք, վոր Մեղուի նման մեղր և մոմ չտա-
լուց հետո, կարող ե և առ ի մահ խայթել։ Վո՛չ ցայն չափ պիտի վշտա-
նայիք, յեթե տերության առթիվով յերեսի վերա մնային աղդի գործերը։ Վո՛չ
այնքան զայրանայիք, յեթե կառավարութենից հալածվեր տպագրության
աղատությունը. բայց մինչև ի մահ տրտում ենք, յերբ լույս ցերեկով տե-
սանում ենք, վոր աղդի ցավերին դարման տանելու խորհրդով ընտրած
պարոնները յուրյանց մատով հանում են աղդի աչքը. դառն արտասուք են
թափվում մեր աչքից, տեսանելով վոր այդ պարոնները, այո՛, կառավարու-
թյան մտքից ևս չանցած բռնություններ են հնարում ընդդեմ աղդին, վո-
խանակ արդե՛ն յեղածի դառնությունը ամոքելու։

«Ո՞ տայր զդլուխս իմ ՚ի ջուր և զաչս յաղբիւրս արտասուաց և ճատեալ՝
լայի զթշվառութիւն աղդիս»[32]։

Ողբա՛մ զքեզ, հայոց աշխարհ, ողբա՛մ զքեզ, հանո՛ւրդ հիւսիսականաց
վեհագոյն։

Ողորմի՛մ քեզ, եկեղեցի Հայաստանեայց[33]....

Մի քանի հետաքննաց որագիրք[34] տակավին ուսած չլինելով, թե ճըշ-
մարտության չափը բարեկամության կամ թշնամության չե, թե յերկու
մարդ կարող են միմյանց ներհակ կարծիք ունենալ, առանց միմյանց թըշ-
նամի լինելու, առանց միմյանց դլխին անեծք կարդալու, թե առին ու թո-
ռան, վորպեսզի ավելի վորոշ կերպով ցույց տան աղդի վողջամիտ մասին
յուրյանց վորպիտությունը և ընտրած ճանապարհների ուղղությունը։

Ս.ըշալույս. 14 դեկտեմբեր. 1863. թիվ 716. Զմյուռնիա։

«Մեղու հանդիսին խմբագիրը քաղաքական ժողովոյն ազգասիրական
«տնօրինությանցը հնազանդիլ չուզելով, նույն ազգային մեծարգո ժողովը
«հատուկ հայտարրով մը խնդրեց Բարձրագույն Դռնեն, վոր հրաման տա
«առժամանակյա կերպիվ դադրեցնելու հիշյալ հանդիսի հրատարակու-
«թյունը»։

Յերազդ դեպի բարին, Ս.ըշալույս։

Վո՞ւյք են, և ի՞նչ են քաղաքական ժողովի ազգասիրական տնօրինու-
թյունքը, վորոց չե կամեցել հնազանդիլ Մեղուն. յե՞րբ և ո՞ւր։ Մեք կար-
ծում ենք, թե մաքուր խղճմտանքը պիտի լինի մի որագիր հրատարակողի
ուղեցույց և վոչ թշնամական ախտերը և բորբոսած դաժանությունքը։ Մի՞թե
կարող եյին պատիվ բերել Ս.ըշալուսին նորա անհիմն խոսքերը, վոր մեք
մեջ բերեցինք. մի՞թե ստուգապես հավատում և Ս.ըշալույսը, թե կարգացո-
ղը չե հասկանալու, թե ի՞նչ հոդուց եյին բղխած այն տողերը։

Ահա՛ և Մասիսի[35] 617 համարի մեջ Մեղուի մասին հրատարակածը.

«Մեղու հանդեսին խմբագիրը Քաղաքական ժողովեն քանիցս անգամ
«ժողովի ներկայանալու հրավեր ընդունելով մտիկ չընելուն և չներկա-
«յանալուն համար, Քաղաքական ժողովը հատուկ հայտարրով մը հիշյալ
«թերթին առժամանակյա դադարումը խնդրեց Բարձր. Դռնեն»։

Մասի՛ս, յեթե քեզ մի փորձանք պատահեր և ստուգապես դադարեյիր,

Հյուսիսափայլը յերաշխավոր ե, վոր Մեղուն չեր լինելու քո դժբախտության փողահարը, ո՛ւր մնաց, վոր չեղած հրավերներ հնարել և մի խոսքով մի ամբողջ վիպասանություն (յերես 226)։

Ստույգ յեղելությունը պատմեց Մեղուն համաչով և, թո՛ղ այս, նոքա, վոր ձեր շրջակայքումն են, այլև նոքա, վոր այս հեռավոր հյուսիսումս, յերբ համեմատեցին ստույգ իրողության ստույգ պատմությունը ձեր տված տեղեկության հետ, հասկացան բանի զորությունը և չկարողացան ձեզ գովել։

Ինչո՞ւ այդ տեսակ գործերով անպատվում եք առհասարակ որագիրքը, տեղիք տալով ամբոխին կարծել— ըստ վորում խելացի մարդիկ կարող չեն առաջնորդի— վորպես թե որագրի պաշտոնն ե յուր ախտերին ծառայելով, ամենայն նվաստություն հանձն առնուլ.....

ԿՐԻՏԻԿԱ
ՍՈՍ ԱՎԱՐԴՈՒԹԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ
Պ. ՊԵՐՃԻ ՊՈՒՇՑԱՆՑ, 1860. ԹԻՖԼԻՍ

(ՍԻՐԱԿԱՆ ՅԵՂԲՈՐ, Խ. Պ. ՈՏ... ԻՆ ՆՎԵՐ)[1]

Մեթէ ոը ննջեցէն այլ ո՞չ ևս յաւելուցու յառնելշ...
Սաղմոս Դավթի
Խ. համար 9

Ազգային սեփական դպրութիւնը եւսպես հիմնվում է ազգային բանաստեղծութեան վրա և այնպիսի աշխատութեանց, վոր Հայկական հոգու բղխվածք լինելով հայ ազգին եյին վերաբերվում. դարձյալ: Ընդհանուր մարդկային գիտութեան վերաբերյալ գրքերը, թեև այո՛, մեծ պատիվ են բերում մի ազգի, յեթե սա հպարտ եր այդպիսիներով, այնուամենայնիվ այդ գիտութիւնքը մի վորևիցե ազգի սեփականութիւնք չեն, այլ բովանդակ մարդկութեան, թեև նոցա մշակողքը միայն մի քանի առաջադեմ ազգեր յեղած լինեյին: Ազգերի սեփական դպրութեան մեջ, այսինքն նոցա բանաստեղծական գործերի մեջ յերևում է նոցա հոգին, նոցա վարք ու բարքը և այլ այնպիսի բարակ և քնքուշ բաներ, վորի համար պատմութիւնը տկար է և կարոտ բանաստեղծութեան ոգնութեան:

Թե ինչպես և յեղել մեր ազգի շատ հին ժամանակների բանաստեղծութիւնը մենք թեև վոչինչ գիտենք դրական, բայց և այնպես ընդհանուր պատմութեան և ընդհանուր դպրութեան պատմութեան տված լուսով*,— վոչ միայն հավանական է, այլ և մեզ հասած հնագույն ազգերի բանաստեղծութեանց նմանութիւնից հետևանք է, վոր մեր հեթանոսական ժամանակ, վոր մեր հայերիս կյանքը, վոչ թե առասպելից և պատմական կյանքի, իսկ մեր հայերիս կյանքը, վոչ թե առասպելների ժամանակ, այլ նաև շատ հետո, յերբեք չե ունեցել մի կանոնավոր և լուսիկական աճելութիւն և կերպարա[նա]գործութիւն,— դժար չե հասկանալ, յեթե միայն չկամենայինք անձնախաբեյութեամբ և կամավոր կուրութեամբ յերևակայել յերբեք չունեցած պարծանքներ, վոր թե պատմութեան Հայոց ժամանակներում, յերբ քիչ շատ ձեռք ու վոտք ուներ Հայաստանը, մենք չենք ունեցել մի որինավոր, յեվրոպական հասկացողութեամբ, բանաստեղծութիւն, այն առասպելական ժամանակների յեղածները պիտի լինեյին

---

* Ջնջված՝ հասատատ գիտենք, վոր... ԽՄԲ.:

շատ հասարակ և խեղճ բաններ*։ Ծողնելով այն պարոններին, վորոնց սիրելի չի այդպիսի բաների պարապմունքը, մեր հին, վորպիսի և իցե, կամ քիչ թե բնավ չեղած բանաստեղծությանց ուսումնասիրությունը[3],— մենք պարտականություն ունինք հրատարակել, քիչ պ. Աբովյանցի «Վերք Հայաստանին» և Սոս և Վարդիթերը հիմք դրին արդյան ազգային վիպասանության**։ Այո՛, արդարությունը նույնպես պարտք և դնում մեր վրա բարձրաբարբառ հռչակել պ. Գաբրիել Տեր-Հովհաննիսյանցի «Տեր Սարգիս» մակագրով վիպասանությունը, վոր տպվում եր 1861 թվականի Հյուսիսափայլի մեջ, և վոր ափսո՜ս և հազա՜ր ափսո՜ս, հեղինակից կամ Հյուսիսափայլից կախում չունեցող պատճառներով ընդհատվեցավ։ Մեր կարծիքով այդ գործին ավելի պատշաճ եր «Քաղցկեղ Հայաստանի» անուն ունենալ, քան թե կապվիլ մի պարեգոտավորի անունի հետ, վոր շատ կարելի չե թե անաջողությանե ել պատճառ դարձավ։ Յերթե յերբ և լինի այդ կիսատ մնացած գործը ավարտվի, միևնույն հոգով և հմտությամբ շարունակվելով, այն ժամանակ մեր նոր դպրության մեջ այդ գործն այն տեղը կունենա, ինչ տեղ ունա դպրության մեջ ստացել և «Մեռած անձինքը»։ Թող կանխիկ ընդունի մեր սրտա՛նց շնորհակալությունը Հայկական Դպրոցը, վորին մաղթում ենք մի փայլուն գալոց։

Մենք մի ուրիշ աշխատության ել գիտենք, հայ հեղինակի, հայոց կյանքից բղխած, մի շատ կենդանի և շատ սրտաշարժ գործ, բայց, ձախողակի, հայ գրով թեև այլև և այնպես տաճկերեն գրած։ Մենք խոսում ենք «Ագապի» մակագրով ազգային վիպասանության մասին[5]։ Խրթին տաճկաբանությամբ գրած և մեր փոքր ի շատե տաճկագիտությունը տկա՛ր և այդ գիրքը թարգմանելու համար. (այնտեղ շատ արաբական կամ պարսիկ բառեր կան, վոր մենք չենք հասկանում) բայց և այնպես, գործի սկզբից մինչև վերջը*** մեր զմայլանքը աճելով աճում եր, յերբ կարդում եյինք այն հոգեշարժ, սրտաշարժ և տխուր անցքի պատմությունը. ուր ազնիվ որիորդը—Ագապին զոհ և գնում դիշերագե՜մ մարդոց դժոխային կրոնամոլության և դավաճանության, վորին կարող եր նախանձել և ինքը Լոյոլան. ուր ազնիվ սիրահարը— Հակոբ ազան— նույնպես զոհվում և մի ջլային տենդի, վոր առաջացել եր Ագապի որիորդի սպառվի վախճանի պատճառած հարվածից։ Բնակությունը և արվեստը իրար հետ լծորդված են այդ գործի մեջ։ Վերք Հայաստանին չունի

---

* Ցնծված՝ Մենք վոչ թե այս խնդիրը լուծելու համար չասացինք այս մի քանի խոսքը (մենք վոչ ժամանակ ունինք և վոչ ցանկություն այդպիսի մեռած բաներին հետ պարապելու) այլ մանավանդ ցույց տալու համար... ԽՄԲ.։

** Ջենք մուտացած «Նահապետ» առաջադրությամբ Հ. Դևոնդ Ալիշանյանց արժանավոր վերդապետի հրատարակած հոյակապ քերթվածքը[4].— «Գլուխն Ավարայրի», «Հայոց աշխարհին» և մյուս բոլոր աշխարհաբար վտանավորքը, բայց այստեղ չհիշեցինք, վորովհետև սրճակ բանաստեղծության վրա յեր մեր խոսքը. ապա թե վոչ, չասիաթքարհան քերթվածոց մեջ, արժանավոր վարդապետը անոյան չունի. յերթե մենք լուենք, Ավարայրի բլրուլը կխոսի։ ...«Ջանչե՛ գլխուլին, կանչե՛ հոդևճայն. արդյոք դուխա մահուն աւերբ հիշե՞ Վարդան»...

*** Ցնծված՝ յերբ կարդում ենք նորան... ԽՄԲ.։

այնքան արվեստ. Սոս և Վարդիթերը վերջ Հայաստանում էլ քիչ ունի, թեև ունին բնականություն: Ազապին, արվեստի կողմից կարող է դիմանալ խիստ քննության: Բնականության կողմից և հոգեբանական հարաբաստության մասին շատ բարձր է եվրոպական ամենալավ վիպասանություններից: Մենք ցավում ենք և ցավելով չենք կարող չհեղադրել մեր պոլսեցի եղբայրակիցը, վոր մինչև այժմ հայերեն չթարգմանեցին այդ գործը*: Թե ի՞նչ պատճառով տանկերեն և գրել դորա հեղինակը, կամ թե ո՞վ է այդ ազնիվ հեղինակը, մեզ հայտնի չե. գիրքը տպած է անանուն: Յերանի՞ թե մեկ որ հայերեն կարդայինք այդ հոյակապ և ազնիվ գործը: Ավելորդ է ասել, վոր միայն Տաճկաստանի առաջնակարգ հայ գրագետի բան է նորան թարգմանելը. չլինի թե ուսիացի հայերը փորձ փորձեն:

Բայց մենք հեռացանք մեր ուղիղ ճանապարհից. մեր գրության խորհուրդը և Սոս և Վարդիթերի քննությունը: Մենք քանի՛ ու քանի՛ անգամ կարդացինք այս գործը և ուշադրությամբ. դալիս ենք այժմ անաչառապես հրապարակելու մեր կարծիքը այդ աշխատության մասին: Յեվ իրա՛վ վոր, հարկ չկա կողմնապահության. այնքան զուտ և անհակառակելի արժանավորություն կա Սոս և Վարդիթերի մեջ, վորի այս ու այն տեղ, այս ու այն կողմից բյուն կա Սոս և Վարդիթերի մեջ, վորի այս ու այն տեղ, այս ու այն կողմից երևացած թերությունքը, հեղինակի անուշադրությունքը մի փոքր էլ հեղինակին շրջապատող աշխարհի ազդացքը, չեթե նաև ամենայն խստությամբ կին դրվին անդամահատական դանակի տակ, այնուամենայնիվ, գործի ընդհանրական ամբողջությունը և էական արժանավորությունը կմնա և կմնա: Յեվ վորովհետև այս կողմից չկերկյուղ չկա, վորովհետև մեր անաչառ քննությունը պատճառով մենք հաստատ վորոշում ենք ամեն նորա արժանավորությունը խոստովանելով, տեղ-տեղ երևացած անհարթությունքը չմոռնալ: Հաստատ հավատացած ենք և հույս ունինք, վոր մեր անկեղծ ու արդարադատ, թեև խիստ և անկաշառ քննությունը, չեթե համբուրելի հեղինակին ոգուտ չբերե, վնաս վոչ կերբեք:

Համարձակ կարող ենք ասել, վոր արդո հեղինակը իր նկարագրած կյանքի վերաբերությամբ, վոչ ավելի և վոչ պակաս, մի անխարդախ հայելի կե, ուր ցոլանում են բնության ճառագայթքը: Մենք նայեցանք այդ հայելու մեջ և տեսանք ինչ վոր ցույց եր տալիս նա. և ծանոթ լինելով մեզ նորա ցույց տված բնությունը, վկայում ենք հայելու արժանավորությունը: Պ. Պառչյանցը պրծավ իր պարտքից. այժմ մերն է կարգը նորա համար հայելի դառնալ և ցոլացնել հեղինակին նորա սեփական գործը. այս իր տեսակի «ճառագայթների կրկին բեկրեկումն» է: Հույս ունինք, վոր մեր ապակու կերևը նույնպես հարթ լինի և նորա թանձրությունը զուգահեռաբար հավասար. Հույս ունինք, վոր վոչինչ չկարողանա դավաճանել ճշմարտության: Մեր

* Ալեքսանդր Դյումայի «Դոքտորի մատուռն» են թարգմանում. արդարև «Մարդաբեն իր դավառի մեջ պատիվ չունի». ինչ ասեր:

հատվածը նույնպես շատ չունի, ինչպես մեր քննության առարկան— Սոս և Վարդիթերը։

Շատ կարդալ հարկավոր չէ Սոս և Վարդիթերը, իմանալու համար, թե ի՛նչ տեսակ հեղինակի հետ և կարդացողի գործը. նորա հոգու վոսկեդարյան անմեղությունը փայլում է ամեն տողի մեջ։ Այդ մի շատ բնական գործ է և իր պարզությամբ ավելի նմանում է այն փարելի բնական աղբյուրներին, վորոնց ջուրը առանց մարդկային ճարտարության, առանց ջրմուղների, առանց մարմարոնյան շատրվանների և հռովմեյական ապուպանների վազում է սարի լանջով և իր գնացքի մեջ, իր դիպած ամեն մի խոտի, ամեն մի թփի տերևները պատում է ադամանդյա կաթիլներով. և առանց մի նեղ նահմանի մեջ փակվելու ազատորեն վազում է դեպի ուր վոր քաշում և նորան բնության որենքը, հովություն, զովություն և պտղաբերություն տարածելու համար։

Սոս և Վարդիթերը դրած է մեր առջև նախ և առաջ վորպես բանաստեղծություն, վորպես* վիպասանություն. բայց, վոչ ձևի մտածությունը և վոչ դեպքերի դասակարգությունը կարող են, գոնե՛ մասնավորապես, համեմատվիլ նորա պարզ, անզարդ և բոլորովին անխարդախ և բնական նկարագրությանը։ Խոսք չկա, վոր այդ գործը բանաստեղծություն է. բայց բանաստեղծը վորտեղ ուղղակի խոսում է բնության լեզվով, ուր միայն լոկ թարգման և լինում բնության և ստորագրում է այն, ինչ վոր այժմ ամեն մարդ կարող եր տեսնել և ստուգել, հոյակապ արժանավորություն ունի. իսկ ուր մեկ վայրկյան անգամ, արդո հեղինակը բնությունը թողնելով, ոգնություն է խնդրում յերևակայությունից և հնարաստեղծում և անբնական բաներ, այնտեղ գործի ոգին թուլանում է և անհամեմա՛տ թուլանում է։

Ընդհանրապես, նկարագրված բնավորությունքը ապշելի հարազատություն ունին. բայց յերբեմն ավելի զորություն կամենալով դնել գլխավոր (համարված) ներգործողների մեջ և անդադար նոցա մոտ ուզելով պատահական, հեղինակը վոչ միայն շատ տեղ հարևանցի և յերկու խոսքով է անցնում յերկրորդական ներգործողների մոտից, ինչպես են Անուշը, Արշամը, վոր Գեղամ ել է ասվում, Գարեգինի մայրը և այլն և այլն, այլ շատ զգալի կերպով կեղծ վիճակի մեջ է դնում իր գլխավոր ներգործողներին, ինչպես են, Սոսի թագավոր-ոձ (Շահ-մար) բռնելը, Սոսի քարափի գլխին աղոթելը և այլն։ Հայտնի չե, թե գլխավոր ներգործողների վերաբերությամբ, մի առնված միջոցում, բնականի նկարագրության պաշարը գործ դրվելուց հետո, յեթե հեղինակը չպարապի յերկրորդական բնավորությանց կերպարանագործությամբ և նոցանից նոր ուժ և նոր զորություն չառնու իր գլխավոր հերոսի համար, նախ վոր այդ հերոսը տկարանում է, վրա յերկու, վոր յերկրորդական ներգործողքը շատ շփկանում են. թեև հեղինակի նպատակը է ընդհանուրի վարքն ու բարքը ցույց տալ, բայց յերբ այդ վարք ու բարքի այս

* Ընդված՝ վեպ... ԽՄԲ.։

կամ այն մոմենտի համար թանձրանցնում և այս կամ այն գլխավոր բնավորությունը, հայտնի չի թե պարտք կա նորա վրա՝ բնության սահմանից դուրս չբերել նորան։

Նկարագրությունը կյանքի այնպիսի յերևույթների և անցքերի, վորին մասնակից և բազմությունը, վորպիսի յեն Մողնու կամ Վարդավառի ուխտերը, վիճակը կամ «Հավկիթի շուռ տալը», հարսանիքը, (թեև այս վերջինի մեջ, Սոսի և Թուրքի մենամարտության նկարագրությունում, Սոսը դարձյալ դուրս և գալիս իր բնական շրջապատից և բնությունը դառնում և առասպել) շատ ընտիր են և վսեմ. իսկ այնտեղ, ուր բնավորությունքը ներգործում են առանձին առանձին և ուր, նոցա ներգործություններից ավելի, ընթերցողը պիտի իր հայացքը ուղղե դեպի հեղինակի խոսքերը, վոր առանց ուրիշի բերան տալու, ինքը հեղինակն և խոսում, այդ տեղերում բնությունը տկարանում և և հեղինակի յերևակայությունը և հնարագիտությունը ոգնություն չեն տալիս նորան։

Պ. Գ. Տեր Հովհաննիսյանցի «Տեր Սարգիս» գործում, մի հոյակապ արժանավորությունն էլ այն է, վոր նա բացի մի քանի անհրաժեշտ պատմական ծանոթություններից և արտաքին նկարագրություններից իր ներգործողների հոգեբանական կամ բարոյական վորպիսության մասին բնավ* իր բերնից խոսելով հանդես չե գալիս. ներգործողքը իրենց խոսքերով կամ գործերով ցույց են տալիս մեզ իրենց ո՛վ և ի՛նչ լինելը։ Մեծ տարբերություն կա տեսնելու և լսելու մեջ։ Այն հեղինակը, վոր ինքը** բան չե ասում մեզ, այլ մարդիկ և հանում մեր առջև, ներգործել տալով նոցա,— նա ցույց և տալիս. եվ տեսնելուց հետո լսելու կարոտություն չկա։ Իսկ այն հեղինակը, վոր վոչ ամեն բան ցույց և տալիս ներգործողների*** ձեռքով, այլ յերբեմն իր բերնից և պատմում նոցա մասին****, նա լսեցնում և, վորի տպավորությունը ավելի թույլ է, քան թե***** տեսնելու և շոշափելու տպավորությունը։

Սոս և Վարդիթերը, յեթե ուղիղն ասենք, պիտի նայվի վորպես ամբողջ մի ընկերության, վորպես ամբողջ մի գեղի նկարագիր. իրեն իսկ արդ հեղինակի խորհուրդն էլ այս է, ինչպես ծանոթաբանում և հառաջաբանի մեջ։ Յեվ յեթե լավ ուշադրությամբ նայենք այս գործին, կտեսնենք, վոր նորա մեջ դյուցազուն և դյուցազնուհի ասվածները իսկի մյուս ներգործողներից ավելի պաշտոն չունին, բացի նորանից, վոր փոթորիկը նոցա գլխին և գալիս։ Սոս և Վարդիթերի մեջ կյանքը հասարակաց է. ավելի խմբերը հանդես ունին, քան թե նորանց կազմող անհատքը։ Պաշտոն ունին սովորությունքը և ծեսերը, վորպես բազմության հասկացողության արդյունք ավելի, քան թե այդ սովորությանց և ծեսերը կատարելում ներգործող այս կամ այն

---

* Ջնջված՝ իր խոսքերով... ԽՄԲ.։
** Ջնջված՝ վոչինչ... ԽՄԲ.։
*** Ջնջված՝ անմիջական... ԽՄԲ.։
**** Ջնջված՝ այդ պատմությունը... ԽՄԲ.։
***** Ջնջված՝ ցույց տալու... ԽՄԲ.։

անձը։ Սոս և Վարդիթերը կարդալու ժամանակ, կարդացողի միտքը չի կապվիլ լոկ Սոսի կամ Վարդիթերի հետ, այլ և շատ տեսակ բնավորությանց և անցքերի հետ, ուր, յերբեմն, հազիվհազ մի աննշան պաշտոն են ատանում Սոսը կամ Վարդիթերը։ Այս գործի մեջ բանի ընթացքը առաջ և գնում առանց Սոսից և Վարդիթերից կախում ունենալու. այնտեղ հավասարապես հասարակաց և ներգործության պաշտոնը։ Յեթե պ. Պռոշյանցի գործը համեմատենք նկարչության հետ, պիտի պեյզաժ ասենք նորան։ Հեղինակի գլխավոր դադափարը Սոսը և Վարդիթերը չե, այլ ընդհանուրի կյանքը, ծեսերը, սովորույթքը*, ավանդությունքը և հասկացողությունը. իսկ Սոս և Վարդիթեր անձնավորությունքը առնված են վորպես ոգնական։ Սոս և Վարդիթերը մենք չենք կարող ընդունել վորպես մի սիրապատում վիպասանության։

Այս խոսքերը չեն տկարացնում Սոս և Վարդիթերի արժանավորությունը, այլ միայն ցույց են տալիս, և վոր մենք նկատում ենք մեծ ուրախությամբ, թե պ. Պռոշյանցի քանքարը ավելի զորություն և ավելի ուժ ունի ընդհանուրի կյանքի և բնականի ատորագրելում. մինչդեռ շատ ուրիշ բանաստեղծք բնականի պահասությունը** աշխատում են յերևակայության ոգնությամբ, և վոչ միշտ աջողությամբ, ծածկել։ Պ. Պռոշյանցը յերբեք կարոտ չե այդ ոգնության, յեթե հավատարիմ մնա իր քանքարի բնավորության. նորա ատորագրությունքը այն ատեճանի ուղիղ, կենդանի և հարազատ են, վոր թե մանր մունր յերևակայության անաջող արդյունքները անհետանալու լինին Սոս և Վարդիթերը կարելի յե ընդունել վորպես լոկ և պարզ նկարագիր բնության, ուր բնականաբար և անբռնադատ փայլում են նկարագրված ընկերության կյանքը, հոգեբանական ունակությունքը, բարոյական և ընկերական հասկացողությունքը։

Անշուշտ, հեղինակի անփորձությունը և նորաբողբոջ յերիտասարդությունը պիտի թողնին իրենց հետքը այդ գործի վրա, առանց դորան չեր լինիլ՝ բայց, աջողակի, ինչպես արդե՛ն ասացինք, այդ թերությունքը և խորդուբորդքը հարթվում են, յերբ արժանավորության բլուրները բարձրացնում են իրենց գլուխը։ Այսպիսի թերությանց և հակասությանց կարդ ենք դնում մենք, որինակի համար, հետևյալ մի քանիքը։

Այն միջոցին, յերբ Վարդիթերը վարում և մի երված սիրուհու պաշտոն, և վորի սերը արդեն յերկու տարի չե, վոր մաշում և նորա սիրտը և հոգին, դեռ նոր և փոխել ատամները, դեռ նոր և մտել տանումի տարեկանության մեջ։ Սորանից, յեթե յերկու տարին ել հանենք, այն ժամանակ կտեսնենք, վոր Վարդիթերը ուրը լման իննի մեջ զգացել և սիրու կրակը։ Վարդիթերին վերագրված բոլոր ներգործությունքը, հոգեբանական ախտերը, ցանկականի և սիրու, դիտակցաբար մինչև անձնազոհության ատիճան

---

* Ջնջված՝ և ծեսերը... ԽՄԲ.։

** Ջնջված՝ աշխատում.... ԽՄԲ.։

բարձրանալը, շատ խելացի դատողություն, տեղ-տեղ էլ կանացի սեռին սեփական անձնապահ խորագիտություն, այս ամենը,— ասում ենք,— զարմանալի ներհակություն ունին այն հասակին, որ նա ունի։ Գիտե՞նք, որ կան աշխարհներ, ուր տասը տարեկան աղջիկը արդեն մայր է, բայց այդ աշխարհների սահմանքը փակված են Եհեզկանի և Այծեղջյուրի մեջ. Արարատյան գավառը, որի յուրաքանչյուր առակ և յեղած հին աշխարհում, չունի հիշված աշխարհների ազդեցությունը. այնտեղ տասնումի տարեկան աղջիկը դեռ տղա չե. ո՛ւր մնա ութը կամ իննը տարեկանը։ Յեվ այդ հասակում վո՛չ կազմվածքի բնական աճելությունը, վո՛չ իմացականի և զգայականի ախտերը կարող եյին զուգապատշաճ լինել այն պաշտոններին, որ Վարդիթերը ունի այդ դործում։ Բացի սորանից, ուրիշ կողմից նայելով, դարձյալ հարկավոր եր, որ այն միջոցին ավելի հասակավոր յեղած լիներ Վարդիթերը, նորա հայրը—Հեթումը անատամ ծերունի չե, իսկ նորա մայրը պառավ։ Յեվ վորպես թե հերիք չեր, որ այս ծերունիքը տասնումի տարեկան աղջիկ ունեյին, դեռ նորանից հետո էլ ծնել են Փափակը, որ Գարեգնի մոտ է սորվում։ Յեվ զարմանալի չե, որ ինչպես մեզ է թվում, պ. Պոռշյանցը առանց հարկի և ստիպողության ընկել է այս հակասության մեջ։ Յեթե մոռածենք, թե նորա դիտավորությունը յեղել է պախարակել այդ կողմերի վաղ ամուսնությունը իգական սեռի, այդ բանում էլ անաջող է. պատճառ, յեթե ութը, իննը տարեկան աղջիկը սիրահարվում է և տասը կամ տասնումի տարեկանը պատրաստ է սիրու համար իր անձը զոհել, ուրեմն, վաղ ամուսնությունը բնականաբար զգալի կարողություն է, յերբ հիմնվում է նա իմացական և զգայական պահանջողության վրա։ Բայց մենք չենք տեսնում մի պախարակության նշմարք և հաճախում ենք այս մի ակամա սխալանք, յեթե միայն մենք չենք սխալվում։ Գիտենք, հեղինակը կամ շատ ուրիշներ էլ, իրրև իրողություն կարող են իմ առջևը դնել այն բանը, թե Արարատյան աշխարհում շատ անգամ պսակել են 11—12 տարեկան աղջիկ. ուստի, վորպես թե անբնական չե Վարդիթերի հասակը։ Պսակե՞լ։ Ինչի՞ չե, կարելի յե. մենք լսած ենք մեր պառավներից, վոր սորանից 60—70 տարի առաջ, Նոր Նախիջևանի մեջ էլ յեղել են այդպիսի անճոռնի պսակներ, բնության տարաժամ բռնաբարություն. բայց, այն ժամանակ, թող ներեն մեզ, Վարդիթերը չե կարող ունենալ այն բնական և հոգեբանական հատկությունքը, վոր վերագրվում է նորան և վոր անշուշտ հարկավոր եր տալ նորան, ամուլների մեջ սիրո գործի զուգակիշիռը պահելու համար։ Հասակի այս անաջող սոքը* խիստ անախորժ տպավորություն է անում կարդացողի վրա։ Ասես թե Հայաստանի աղջիկները հին կամ նոր Բաբելոնների** աղջիկներն են, ասես թե բորբորիտոն Շամիրամի թոռներն են։

---

* Առնում բայի արմատը առ, յողն. առ ք, վորպես առուամն. մենք այս ուամն մտան հոլովումից վախենալու համար այս դիպվածում, առքը պիտի դործ դնենք վորպես առուամն. ազդը շատ տեղ նույն նշանակությամբ դործ է ածում առքը։

** Նոր Բաբելոններ ասելով իմանում ենք յեվրոպական մեծ քաղաքները։

Մարդու դեղչն և գալիս, յերբ տեսնում է, թե տասնումի տարեկան աղջիկը ընկնելով իր սիրականի գիրկը և համբուրվելով նորանից զգում է, թե «ոխտը թիզ յեղ և կանդնում նորա սրտին» (յեր. 26)։ Պետք չե նույնպես մոռնալ, վոր յեվրոպական մայրաքաղաքների մեջ անչափահաս աղջիկների ավերանքը* բնավ յերբեք ցանկականի կամ սիրու բնական հետևանք չեն**, այլ մեծ մասով արտասովելի աղքատության արդյունք։ Շատ, աղքատ կամ որևիցե հացի կարոտ ծնողք վաճառել են իրենց աղջիկները, յեթե թողունք վոմանց մոտ շռայլության կամ ունայն պճնասիրության համար արծաթ ճարելու բարբարոս խորհուրդը***, յեթե թողունք դժոխային պառավների դավաճանության զոհվածները։ Ո՛հ, այդ պառավները ամեն որ յեկեղեցի չեն գնում, և ի՜նչպես չերմեռանդ աղոթում։

Այո՛, սարսափելի հանցանք և ծնողքի կողմից, յերբ նոքա անառակության են ծախում իրենց զավակը. բայց ավելի թեթև և այն դաշնական գործը, յերբ ծնողքը յեփում են և ուտում են իրենց զավակները։ Հայտնի յե թե այս ել պատահում է սովի կամ պաշարման ժամանակ։ Յեվ մե՛ր աղգի պատմական հիշատակարանների մեջ տեսնում ենք այսպիսի զարհուրելի ո-

---

* Այս ավերանքի սարսափելի՛ օրինակները կարելի յե տեսնել Լևոն Շուշ ֆրանսերեցու «Ուրվագիծք Անգլիոյ» անունով գործի մեջ, ուր քառասնելի տներ հանդես են հանած։ Այնտեղ կան քաղաքներ, ուր ամեն 100 ափրղեայան ցամով վարակված անառակ կանանց, 6 հատը մինչև տասը տարեկան անչափահաս աղջիկներ են։ Նույն գրքի մեջ տեսնում ենք հետևյալ վկայությունը։ «Մեր հիվանդանոցներից մեկի մեջ յես տեսա հինգ անչափահաս և մանուկ աղջիկներ, վորոնք հիվանդ էին ամոթալի ցամով։ Առաջինը 13 տարեկան էր, յերկրորդը 12, յերրորդը 11, չորրորդը 9 և հինգերորդը 8 տարեկան։ Ցերեքը այս աղջիկներից կորուցել էին իրենց անմեղությունը իրենց մոր տանը և կորուցել էին չափահաս մարդոց ներգործությամբ։ An Exposure of female prostitution, by W. Lagan, City missionary։ [Հետևյալ էջի լուսանցքում գրված է և ջնջված՝ Սոքա Ցեղկիելի առակավոր յերկու քույրերից (Վիոլա և Վոզիլբա), վոր իրենց մանկության ժամանակ պատնիել էին Ցեղիսլասուամ— անց կացան։ Ահավասիկ, արդարև, «համբակը անլուսյա և անաղարի խակակութ պատառն խակութենան»։ Ցեթե յերանելի Նարեկացին այս յեվրոպացի վոզոմանները տեսներ, Ցեղկիելի պատմածները կդմռռանար, վոր առակով, խոթայելի և հուզական թափավորություններն ևր գտատպարտում, կդմռռանար, պատճառ այս առակ չե, այլ լուսո ցերեկով գործված իրողություն։ Թ՛ւհ։ ԽՄՐ.]։ Ահավասիկ արդարև, «համբակը անլուսյա և անաղարի խակակութ պրպատյան խակության», յեթե յերանելի Նարեկացին Ցեվրոպայի վոզոմանները տեսներ, Ցեղկիելի առակավոր յերկու քույրերը կդմռռանար Ցեղիսլասուամ մեջ. պատճառ, սոքա առակ չեն, այլ լուսո ցերեկով գործված իրողություն։ Թ՛ւհ։

** Մենք խոսում ենք ընդհանրապես, ապա թե վոչ, կան բացառություններ, մանավանդ այն տեղերում, ուր անչափահաս տղայք յերկու տեսակն ել միասին, ախտած 5—6 և յերեսուն տարեկան ամուսնացած տղամարդկանց հետ

րինակներ. «Ձեռք կանանց ողորմածաց եվեցին զմանկունս իւրեանց և եղեւ նոցա ի կերակուր», ասում է պատմիչը. (Յովհ. կաթ. Պատմ. Հայ. Մոսկվա, էջ. 143)։ Անճար աղքատությունը սովից ու պաշարումից պակաս չէ։ Արտասվել պիտի քան թե սրտնեղել այն դժբախտ ծնողների և ավելի դժբախտ աղջիկների վրա։

Մենք հերիք համարում ենք վորքան խոսեցանք Հասակի մասին. վորովհետև ձանձրալի կարող եր լինել ընթերցողին, եթե մենք անդամազննաբար, ֆիզիոլոգիկաբար և հոգեբանաբար քննեինք այստեղ իգական սեռի անհատների աճելությունը և սորա որենքը, քայլ առ քայլ յերթալով նորա յուրաքանչյուր գլխավոր մոմենտների քամակից մինչև այն կետը, ուր անհատի կազմվածքը ստանում եր իր տեսակի հարատևությունը պահպանելու բնական ունակությունը։

Իբրև թերություն կարելի չե տեսնել և Արշավիր բնավորությունը, կամ մանավանդ նորա պաշտոնը։ Գործի կատաստրոֆը, եթե ուզիղն ասենք, գլխավորաբար հիմնված է Արշավիր դրժողության վրա։ (Արշավիրը եթե չդրժեր, կարող եր Տիրանի մեքենայքը խայտառակել)։ Յեվ այդ մարդը, վոր առաջ այնպես սիրով ընդունում եր Սոսի առաջարկությունը, սրտանց յերդնում եր, վոր նորան տա իր քույրը, հանկարծ փոխվում է և դառնում է Սոսին մահաբեր թշնամի։ Թե ստուգապես Արշավիր միտքը իր քույրը Սոսին տալ եր և վոչ խաբել, այդ պարզ յերևում է Հեթոմի և իր կնոջ խոսակցությունից (յեր. 203), ուր Համասփյուռը մեղադրանքով խոսում է Արշավիր մասին, թե առաջ շատ հորդորել է, վոր վարդիքները Սոսին տան, իսկ այժմ հետ է կանգնել իր խոսքից և ել չե՛ ուզում։ Արշավիր խոսքը փոխելը և նորա դրժողությունը մեծ պաշտոն են վարում գործի մեջ և յեղկելի վերջի թելերը մի մասնով լարվում են և կատավարվում են նորա ձեռքով, կամ, նորա աղդեցությամբ. բայց, չնայելով այս բոլոր բաների վրա, մենք բան չդիտենք Արշավիր նենգության կամ դրժողության պատճառի մասին։ Գործի բովանդակության մեջ չկա տեղ, ուր հանդես ունենար այս դավաճանությունը և կապված լիներ վիպասանության ընթացքի հետ վորևե կապով։ Փափակի հայտարարությունն է բոլորը, ինչ վոր կա (յեր. 125). «Գիտե՞ս, ինչ կա։— ասում է նա Գարեգնին,— բանը փոխվեց, ճար ունիս տես. Արշավիր միտքը ընկանք հիմի թե ծուռն ա ելել, թե դուզ ա ելել ձեր հետ, չեմ իմանում, համա հիմի իմացվեց. երեկվանից դեսը հարիր հետ կռիվ ա քցել, թե կամ թուրը վեր կունիմ ինձ կսպանեմ, կամ թե չե Սոսին աղջիկ չեմ տալ. յես պտի տամ Ջալրմայրի եջմիածնեցի քավորին»։ Համաձայն ենք, վոր կոպիտ, կամ, նախնական և անքաղաքակիրթ կյանքի մեջ բոպեական չնչին տհաճությունքն անդամ կարող են շատ ավերությանց պատճառ դառնալ և Արշավիրը ընդու-

---

մեջ, ուր յերեխայը, կիրակի որերը վազցնում խաղալու համար, բանտարկվում են, ուր քաղաքներ կան, վորոնց մեջ կիրակի որերը չե կարելի անպատիժ ուրախ լինել (Լևոն Շոչև)։ Ջնջված՝ 1861—62, յես բնակվում եյի Լոնդոնում...ԽՄԲ.]։ Հիանալի պարզ և անժխտելի որինակներ են առաջ, թե կրոնը յերբեք չե կարող, միայնակ, բարոյականություն արմատացնել մի ազգի մեջ։

նակ և, վոր չնչին պատճառով կամենա վնասել Սոսին, կամ վրեժ առնուլ նորանից. բայց, բանը այս և, վոր ընթերցողը նաև այն չնչին պատճառը, նաև տհաճության մի լոկ նշմարք անգամ չի տեսնում բանի ընթացքում: Հանկարծ լսվում և Փափակի հայտարարությունը, վոր ավելի հիշեցնում և մեզ ֆրանսիական «le roi le veut»* խոսքը, քան թե մի բնական յերևույթի պատճառ կյանքի կամ նորա նկարագրության մեջ:

Մենք չենք ուզում իբրև թերության նայել Վարդիթերի մոր անխնայ հողդհողդությանց վրա: Փարպի գնալու ժամանակ, Համասիլսուր հրապարակով հայտնում և իր տհաճությունը Սոսի հետամտության վրա. «սրտիս տախտա՜կն են դաղել». ասում և նա (յեր. 92) իր հետի ուխտավոր կին մարդուը և սպառնում և, վոր ել Սոսին չտա աղջիկը: Վարդավառին, ինքնամոռույց կերպով, հրավիրում և Սոսին և ուխտի հրապարակում (Հանո-վանքում) համբուրել տալով Վարդիթերին, նշան և դնում: Աշնան Մողնու ուխտին, իր մոտ հյուր յեկած կին մարդուն պատմում և ինչ վոր Սոսի գլխովն անց եր կացել, ավելցնելով, թե «ել չենք տալի իմ աղջիկը»: Թեև այս փոփոխամտությանց պատճառները դրած են անցքի բովանդակության մեջ, բայց դոքա թույլ են այս տեսակ կարուկ և վորոշ հետևանքներ ունենալու համար. կամ պատճառը պիտի ավելի սաստիկ և ազդու լինելին, կամ հետևանքը մի փոքր մեղմ: Բայց մենք ասացինք, վոր չենք ուզում այս բաներին իբրև թերության վրա նայել, վորովհետև այս բոլորը կարելի յե վերագրել Համասիլսուրի անկրթության, վորից սովոր և ամեն բան առաջանալ, ուստի և այնքան անբնական չեն հակասությունքը, վորքան այն, վոր Համասիլսուրը վերևում հիշած Փարպու ճանապարհին հրապարակով նախատում և իր դուստրը. խայտառակելով և ամենի առաջ հայտնելով, թե յերիտասարդ տղոց ձի խաղացնելը, տաղ ասելը և Վարդիթերենց խմբից չհեռանալը բոլոր Վարդիթերի արածն և: «...Չեք խմանում,— ասում և նա իր ուխտակից կին մարդուը,— ես մեր փշացածի (Վարդիթերի) արածն ա քոմմա... խաչն իմն ա, քյարամաթը (զրուպչյունը) յես պիտամ»: Սորանից մի վայրկյան առաջ ել, դարձյալ նույն տեղում Վարդիթերի վրա յե թափում իր ժանդը: «Ա՜խ, ծակծակոտված, սև սրտի աղջիկ. ի՜նչ անեմ, խանգարեր են որը, վոր դու լիս ընկար. են քշերը հերդ ջաղացն եր գնացել ի՜նչ կլներ (?!) մեզ աշխարհքի մեջին թուք ու բեղնամ ապիր» (յեր. 92): Նայելով Աշտարակի կյանքի ընդհանուր վորպիսության (վորպես նաև բովանդակ հայոց աշխարհի կյանքի վորպիսության և հայ կանանց ընտանեկան և վորդիական պատվասիրության), մենք չենք կարող թույլ տալ, վոր մի մայր այդպես հրապարակով խայտառակի իր դուստրը, ուր ավելի չնչին բաներով համարվում են խայտառակություն և թուք ու բեղնամ լինում: Մի մայր, հրապարակով այդպիսի խոսքեր իր աղջկա մասին ասելուց հետո, այնուհետև ի՜նչ աղջիկների կարող և գնում նորան. սորա վրա հարկավոր եր մի փոքր մտածել: Այն ել

---

* Թագավորն և այդպես ուզում (Ֆր.) ԽՄԲ.:

Համաձայնուրը, վոր սովորաբար նկարագրվում է վորպես մի խորագետ կին, «Սատանի հետ վոտն էր պատավը» ասում է հեղինակը (յեր. 116)։

Հայի պատիվը, վորևե կերպով, յերե վոչ բոլորովին փրկելու, գեթ մի մասնով պաշտպանելու համար ստիպվում ենք կատարելություն չդտնել Սոսի փեսայի կամ քրոջ դավաճանության նկարագրության մեջ։ Ասենք, թե Տիրանը վորպես մի անարդ մարդ կարող էր ընդունակ լինել այդպիսի դաժանության. բայց Սոսի քույրը, վոր վոչինչ իշնամություն չունի իր յեղբոր հետ, ի՞նչպես, միայն իր երկա սադրելով, այն խաղը կխաղար յեղբոր գլխին։ Ավելի հավանական է, վոր քույրը* իմանալով** երկա դավաճան խորհուրդը իր յեղբոր ընդդեմ, յերե չկարողանար հայտնի դեմ դնել նորան, գեթ ծածուկ տեղեկություն կտար իր յեղբորը, առանց ամենևին հոգով սրտով իր երկա դավադրության հաղորդ լինելու։ Ազգակցական և քույր-յեղբայրական բնական կապերը այնքան ամուր, իսկ ատանալու կաշառքը մի իշվառ 15 մանեթ. մինչդեռ աղտը և դավաճանության ամոթը դրեթե յեգիպտական բուրգերին հավասար։ Չգիտենք թե ի՛նչ մտածենք, մի՞թե հավատանք։ Բացի սորանից, ինչ խորհուրդ ունի դուռը կպղել և բանալիքն էլ հանել։ Սոսին իրենց տանը փակելով ի՛նչ ոգուտ կարող էին քաղել. մանավանդ, յերբ նա բարկացած դռռում է թե «դուռը բաց արեք», Տիրանը, ահից, ծակերն է մտնում։ Մնում է տակավին Սոսի մոր, այդ բանում, պիտակարար հանդես գալը։ Յեվ զարմանալի չե, վոր Վարդիթերի մայրը Արշավիր ձեռքում գարեգնի մատանու շատ թույլ և անխելք խաղի մեջ, հաշվե թե նույն պաշտոնն է վարում, ինչ վոր Սոսի մայրը Տիրանի ձեռքում. յերկուքն էլ ակամա դավաճանակից են լինում, մեկը իր վորդուն, մյուսը իր փեսային։ Ասենք, կյանքի պարզությունը կարող է ոգնել, վոր հեղինակը մեկ մասնով արդարացնա. բայց այս բաները ավելի չեն քան թե պարզություն։

Այն մատանու խաղը, վոր հիշեցինք, շատ անաչող գյուտերից մինն է, շատ անտեղի անցք և բոլորովին խելքի հակառակ, յերե աչքի տակ ենք առնում բոլոր հանգամանքը։ Ի՞նչ յերևակայություն է. «դու այսպես ասա կամ այնպես ասա» և այն խրատատուից թելադրված մորը կամ իրեն իսկ խրատողին, վորպես թե աղջիկը տալը կամ չտալը կախված է լոկ Գարեգնի խոսքից։

Առաջ էլ ասացինք, վոր հեղինակը անդադար պարապելով իր առաջնակարգ ներգործողների հետ մեզ զրկում է շատ հարցասիրության արժանի տեղեկություններից։ Շատ բան անց է կենում Գարեգնենց տանը. բայց Գարեգնի տան մասին դրեթե մենք վոչինչ գիտենք։ Յերկու-յերեք տեղ, իրրև մի անհագագ բան յերևում է նորա մայրը. յեղբոր անունն ենք միայն լսում, հարսի անունն անգամ չգիտենք։ Հազիվ յերկու-յերեք անգամ տեսնում ենք Անուշին և լսում ենք նորա խոսքերը ծաղկազարդի որը յեկեղեցում և տերև ատած ժամանակը— վարդիթերի հետ, վորպես նաև Սոսի հետ ծաղկա-

* Ջնջված՝ յերե տեղյակ լիներ...ԽՄԲ.։

** Ջնջված՝ իր ամուսնու...ԽՄԲ.։

զարդի մանուշակների կամ գաթայի պատճառով։ Ծավում ենք, վոր ավելի ծանոթություն չունինք։ Նույնպես Սոսի մեծ յեղբայրը— Պարետը հազիվ մի յերկու անգամ հանդես և գալիս, նորա կինը բնավ չի յերևում. իսկ փոքր յեղբայրը— Արշամը կամ Գեղամը մի յերկու անգամ սիմտակարար յերևելուց հետո, իր պաշտոնը ավարտում և այդտա, արագ քաշած յերեկոյին։ Մենք մանավանդ ցավում ենք սորա մասին, վոր այսպես փոքր հանդես ունի սա. պատճառ, հեղինակը նորանով ցույց և տալիս մեզ նոր սերունդի սկեպտիկյան ուղղությունը։ Մեզ շատ ցանկալի յեր իմանալ, թե այդ յերկնային և փրկարար ուղղության շրջանը արդյոք վո՞րքան տարածություն ունի այն տեղերի հայ ընկերության մեջ։ Մենք, ինչպես առաջ էլ ասացինք, թերությանց կարդ չենք դնում այն չնչին անուշադրությունը, վոր Սոսի յեղբայրը՝ յերբեմն անվանվում և Գեղամ (յեր. 48), իսկ յերբեմն Արշամ (յեր. 35,166)։ Նույնպես, Հեթումը խոսելով Սոսենց վրա մի անգամ ասում է թե սորա յերեք յեղբայր են (յեր. 98), իսկ ուրիշ անգամ թե չորս (յեր. 172)։ Թերություն չենք համարում այս հակասությունքը (թեև չլինելին լա՛վ եր), վորովհետև բանի ընթացքը վնաս չի կրում. Գեղամ և յեղել Սոսի յեղբայրը թե Արշամ, յերեք յեղբայր են թե չորս, դորանով այլ ընթացք չի ստանում կյանքը. բայց մենք տխրում ենք նայելով հեղինակի ժլատության վրա, յերբ բանը գալիս և մեզ յերկրորդական ներգործողների հետ ծանոթացնելու։ Վարդիթերի յեղբարքը, բացի Արշավիրից և Փափակից, մնում են բոլորովին մութի մեջ. իսկ նոցա կնանիքը հայտնի յե, թե «չխոսքան» են։

Կուզեյինք, վոր մի քանի թերություն յեղած չլինելին, վորոնց կարդն ենք դնում ա) Գարեգնի ձու նկարելը։ Մենք ասելիք ունենալու չեյինք, յերե, դուխը քարը, լոկ մի խոսք կամ մի նշան գրեր նա ձվի վրա. կամ շատ-շատ վորևիցե անցքի միայն մի մոմենտը նկարեր. բայց, դու կրա՛կը տես, վոր պատկերների բովանդակությունը այնպիսի բազմապարունակություն* և այնպիսի փոփոխական և շարժուն տեսարանները և ստանում, վոր տասը պատկերի նյութ կլինի, վորոնց խոսքերով միայն ստորագրությունը ամբողջ յերեսից ավելի յե։ Թողունք դեռ այն, վոր նկարի միջնորդությամբ և այդ ստորագրության համեմատ խոսել բնավ իսկ մի վորպիսի և ե խեղճուկ տիրացվի գործ չե։ բ) Այն անտեր յերազները մենք առնում ենք վոչ միայն վորպես ավելորդ ներմուծություն, այլ վորպես շատ անաջող փոխանակություն բնական դեպքերի։ Ասես թե հեղինակի ուժը կտրվում և և դործ և դնում այդ հնարը մնացած պարապությունը լցնելու համար, վոր իսպառ զանց առնելի յեր, վորպես նաև Սոսի, իր յեղբոր Պարետին, իր սիրահարվիլը պատմելը. ուր ասում է Սոսը, թե յերազում և սիրահարվել Վարդիթերի վրա և այնտեղ մեջ և բերում նա ծերունու անտեղի և պաղտնախորհուրդ միջնորդությունը և այլն և այլն։ Այս էլ դարձավ անգլուտ Աբովյանի վերք Հայաստանի գործի մեջ Մուսայի մի Հովիսիմեյի վրա յերազում սիրահարվիլը, վորին վոչ տեսել և, վոչ ճանաչում և և վոչ պիտե։ Մենք չգիտենք, թե ինչ

* Ջնջված՝ և ստանում... ԽՄԲ.։

մտածենք այս յերևույթների վրա. բայց և այնպես դրական թերություններ և հնարների աղքատություն ենք համարում: Բացի սորանից, դժար թե կարելի յե թույլ տալ այն աստիճանի պարզմտություն լսողի կողմից (գուցե մենք սխալվում ենք այսպես կարծելով), վոր հալած յեղի տեղ ընդունի այս յերազում ակսված, բայց լրջության մեջ իրագործված սերը: Ինչևիցե. «աստուած թողութիւն շնորհեսցէ»:

Գարեգինը շատ և գովված. նորա գործերը գովեստի չափով չեն: Հեղինակը իր կողմից խոսելով հակամետ և զարդարել նորա գլուխը. բայց ինքը Գարեգինը իր ներգործությամբ դավաճանում և հեղինակին և շատ տեղ յերևում և վոչ ավելի քան թե մի խեղճ տիրացու:

Մենք, վերևը, յերկու խոսքով մեղադրեցինք Սոսի քարափի գլխին աղոթելը և այն հերիք ենք համարում, վոր վերստին չհիշենք ապառաժի անմատչելի լինելը, աղոթիների նարեկը, Եփրեմ Խորինը, Սաղմոսը, Սոսի ծնրադրությունից քարերի փոս ընկնիլը, Գարեգնի արտի զեղմունքը, Յուղաբերի մոմերը և այլն և այլն. բայց այսքան ստիպված ենք ասել, վոր Սոսը, վորքան մենք այժմ նորան ճանաչում ենք, շատ հեռու յե այդ տեսակ բաներից: Յեվ զարմանում ենք. ի՛նչ հարկ կա Սոսի սիրող, յերգող ,ուրախ և աշխատավոր բնավորությունը, վոր ամեն տեղ յերեվում և, այդ մի դիպվածում բռնաբարելով կեղծ հատկություններ դնել նորա վրա:

Սոս և Վարդիթերի մեջ կան տեղեր, ուր ֆատալիզմը (ճակատագրականություն) ազատ հանդես և տանում: Սոսին և Վարդիթերին, վոր չպիտի հասնեին իրենց ցանկության միևնույն վիճակախոսքն են դուրս գալիս, վոր գուշակում և նոցա գլխի գալիքը: Ի հարկե, կարելի յե ասել, վոր պատահմունք և այս. կհամաձայնեինք, յեթե հեղինակը այդ վիճակները հանելով առաջուց չտեսներ Սոսի և Վարդիթերի գլխին պատրաստվող փորձիկը: Յեվ այս դեռ բոլորը չե. «...համա, խե՛ղճ տղա, զուր ես քեզ տրորում. ինչ կարծես կարծի եղ մի կարծիլ. աստված դրան քեզ համար չի ստեղծել... ինչ պրվել ա են պտի ըլնիլ. ճակատի պրվածը ջնջվիլ չի. հարյուր տարեն մեռած մարդի գլուխն ել հողի տակիցը դուրս ա գալի, ամեն բանը խարաբ եղած ա ըլնում, համա, են գիրը մնում ա. ապա՛ ինչ կուզես. լա՛վ, հետո կտեսնենք» (յեր. 25): Հետո— «...համա, դարդակ ամբար, դարդակ ջվալ. ենքան ենենք» (յեր. 25): Հետո— «...համա, դարդակ ամբար, դարդակ ջվալ. ենքան ենենք» (յեր. 66):— «... ըսենց խորհուրդ արին իրենց միջին, համա, դուս գա» (յեր. 204): աստված իր բանը գիտի...» (յեր. 204):

Այս խոսքերը վիպասանության մեջ ներգործող մարդոց բերանը չե դրված, վոր ներելի յեր, վորովհետև ժողովրդի մեջ յեթե կա այս վարդապետությունը, հեղինակը մեղավոր կամ պատասխանատու չե. նա իր վիզը առել և ժողովրդի մեջ յեղածը նկարագրել. բայց ցավն այս ե, վոր հեղինակը ինքը ժամամ և այն իր բերնից խոսելով մերկացնել ապագայի վարագույրը: Իբրև

գրագետ, իրրև հեղինակ առավել ևս իրավունք չունի այսպիսի խոսքերի հանդես տալով դարավոր և խավար ժամանակներից սերմանված և տգիտության հողի վրա բուսած փուշերին ջուր ցողել։ Մենք հավատում ենք, վոր վոչ միայն աշտարակցիք, այլ և ուրիշ շատ հազարավորք կարդալով պ. Ոռոշյանցի խոսքերը վոչ միայն չեն յերկրայիլ այդ վարդապետության վրա, այլ սովորական, արարատյան վոճով կասեն, թե այդ ճավետարանի կողքին և գրած»։

Ի՛նչպես հասկանանք Տիրանի տված թըլիսմը, նորա բովանդակությունը և գործի վերջը հա՛ր ու նման այդ բովանդակության։ Ասես թե մի իշխան պատվեր և տվել իր ծառային և ծառան, առանց տիրոջ մի խոսքը ևս մոռնալու, կատարում է պատվերը։ Մենք դիտենք, վոր մեր ազգը ինչպես նաև ամեն ազգ, յերեն հանենք նորա միջից լուսավորյալ բաժինը, հավատում է կախարդության. խնդիրը այդ չե, և մենք դորա վրա վեճ չունինք. այլ այն մանավանդ, թե հարկավո՞ր է պահպանել ժողովրդի վնասակար և մոլորական նախապաշարմունքները և նանրահավատությունքը. թե՞ դորա հակառակ, բնության որենքներով հրաշալին մեկնելով, ցրվել միշնադարյան մառախուղը, բանալ ազգի աչքը և ավելի հավատ դնել նորա մեջ իր վրա, իր մարդկային արժանավորության և իր գործունեության վրա։ Եյապես, Տիրանի վո՛չ թըլիսմը, այլ դավաճանությունքը քանդում են բանը. Արշավիր նենգությունը ձեռնատու չի լինում նորան. բայց հասարակ ժողովուրդը, վոր առանց նորան ել տրամադրված է կախարդության և շար վոգիների հավատալու, ի՞նչպես բանի վերջը— կատաստրոֆը— չվերագրե թըլիսմի զորության, յերբ Վարդիթերի մահից հետո, դուրս և գալիս նորա ծոցից այն ծակ մարգարեությունը, և յերբ նորա բովանդակությունը ուրիշ բան չե, յերեն վոչ ներկա անցքի ներկա տեսարանի առաջուց արած ճիշդ տոորագրությունը, վոր առանց և մեկ մազի չափ վրիպելու կատարվել է։ Ինչպես առաջ ել ասացինք, մենք բան չեյինք ունենալ արդո հեղինակին ատելու, յերեն նա այս կամ այն անձը նկարագրեր կախարդության հավատացող, այդ բնական է, վոչ միայն մեզ հայերիս այլև յեվրոպացոց և մինչև այն աստիճան բնական, վոր վոչ միայն ինկվիզիցիոնը այլև յեվրոպական կառավարությունքը*, վորպես նաև բողոքական տերությանց մեջ**, ստուգապես հավատացած լինելով կախարդության և կախարդների գործակցության շար վոգիների հետ, այնքան վախենում եյին այդ կախարդ անվանված խաբեբաներից, կամ շատ անգամ կախարդ անունով ամբաստանված և զրպարտված խեղճերից, վոր անողորմաբար դատապարտում եյին նորանց դեպի մահ***։ Բայց պ. Ոռո-

---

* Ջնջված՝ մինչև անդամ... ԽՄԲ.։

** Այստեղ գրված է յեղել ծանոթության նիշ, իսկ լուսանցքում գրված է և ջնջված՝ Տե՛ս, այս տետրակում, այս մասին «Հետո գրվածը»։ ԽՄԲ.։

*** «Կախարդ գնդջ վերջին անգամ դատապարտվել մահապարտվիլը Գերմանիո մեջ, 1783-ին յեղավ. բայց 1793-ին Լեհաստանի, հարավային-արևելսկական, սահմանադրվում եր վերացան դարձյալ յերկու կախարդ։ Իսկ թե վո՞րքան կախարդներ երվել ու տապվիլել են

չյանցը իր բերնից և խոսում այս բանների վրա և նորա նկարագրությունը, վոր վերաբերվում ևր մեր հիշած անցքին, այնպիսի կերպարանք ունի, վոր կարծես թե բոլոր վիպասանության խորհուրդը ուրիշ բան չե, յեթե վոչ կախարդության եյությունը և ներգործականությունը ապացուցանել։ Մեզ թվում և թե այս ուղղությունը դատապարտելու մեծ իրավունք ունինք, մանավանդ յեթե հիշենք թե պարզ և հասարակ ժողովուրդի համար վո՞րքան վնասակար են այդպիսի բաները։ Լուսավորության, դպրության, բանաստեղծի և հեղինակի պարտականությունն և ժողովրդի հասկացողությունը մաքրել, նա-*

առաջին ժամանակներում, այդ մասին կարող են վկայել հետևյալ մի քանի իրողությունները։ Բրաունշվեյգի մեջ 1590 և 1600 թվականներում այնքան կախարդ կին երում (յերբեմն որը 10—12 հատ), վոր գլխապարտության հրապարակը նմանում ևր կրակ ընկած անտառի։ Ռենյան գքսության մեջ 1640 ից մինչև 1652 (12 տարում) հազար կախարդ կին դատապարտված են դեպի մահ։ Ցուցա մեջ կային նաև յերեխայի մեկից մինչև վեց տարեկան!!! Ոսնաբրյուհում, 1610ին, մինչև 80 կախարդ կին խարույկի վրա մսխրացան։ Վևրդենֆելյան կոմսության մեջ, միայն մի շաբաթում կրակին դրվեցան հարյուր յերեսուն յերեք կախարդ կին։ 1832–ին Դանցիգի մեջ, խաժամուժ ամբոխը ծովը նետեց մի վաղորդի կին, վորի անունը կախարդ ևր հռչակված և անողորմաբար խեղդեց նորան ծովում։ 1854ին Շլեզվիգյան գեղերից մեկի մեջ ամենքը հրաժարվեցան դեպի դերեզման հուղարկավորելուց մի պառավի մարմին, վորովհետև նորան կախարդ եյին համարում»։ (Ռուսաց ազգաբնակության և վարդապետ բժշկության Բոք. տե՛ս նորա գործի ռուս թարգմանության— Будьте здоровы! in 8° 1862· СПБ· 13 և 14 յերեսները։ Պետի ցավել միայն, վոր ուսումնական գերմանացին չե ցույց տալիս աղբյուրները, վոր տեղից հանել ևր այս հարցասիրության արժանի տեղեկությունը)։ Թե առաջին ժամանակներում մանավանդ, առասպելս հավատում եյին կախարդության նաև հոյակապ մարդիկ, կամ գոնե հարկադրված եյին հավատացող ձևանալ, դրան վկայում և այն իրողությունը, վոր Մեծ Կալլեր անմահ աստեղաբաշխը, յերբ 1584 ին չտապից դեպի Տյուբինգեն իր մայրը խարույկից ազատելու համար, նա կարողացավ հասանել իր ցանկության միայն նորանով, վոր ապացուցց, թե իր մայրը բնավ կախարդության արվեստը չգիտե և թե կախարդական վողին յերբեք նորան հլացած չե։ Կեպլերը բնավ չաշխատեցավ մերժել կախարդության դյությունը և պաշտպանելով իր մայրը լոկ վորպես տգետ կախարդական արվեստին, լռեցրեց խոստովանեցավ այդ սքանչելի արվեստի դյությունը։ Ծանր է մեզ ընդունել, թե Կեպլերի պես մարդը կարող ևր հավատալ այդպիսի բանի· բայց այսքանը ճշմարիտ է, վոր թե նա սկսեր լուն կախարդության դյությունը մերժել մայրը կերվեր։ Կեպլերի մոր մորաքույրը, տրդեն քանի տարով դրանից առաջ վորպես կախարդ մոխրացել ևր խարույկի վրա։ (Այս տեղեկությունները առնում ենք Լիբրեից և Արագոյից)։

Անգլիա մեջ, կախարդի վերջին անգամ դատաստանով մահապարտվիլը 1712 ին յեղավ, ուր Նորդհեմպտըն քաղաքում հինգ կին կախվեցան վորպես կախարդ։ Տե՛ս Parr's Works, vol. IV. p. 182.

Սպանիա մեջ, վերջին անգամ, 1781 ին, դատաստանով երվեցավ մեկ կախարդ։ Տե՛ս Ticknor's Hist. of. sp.lit. vol. III. p. 238· (Այս յերկու վկայությունները փոխ ենք առնում հռչակավոր Բոքլի անմահ գործից Buclès His. of Civilisation in England)։

Այս վկայություններ մենք ցույց տվինք կախարդի Սպանիա մեջ վերջին անգամ դատաստանով մահապարտվիլը· բայց չկրնան հետևեցնել սրանից թե 1781 ից հետո իսպառ ատելով մահապարտվիլը· բայց չկրնան հետևեցնել սրանից թե 1781 ից հետո իսպառ ատելով մահապարտվիլը։ Սպանիան այն ազգարհը չեր, վոր շուտով տեղի տար մարդասիրական մտացին կախարդները

խապաշարմանց և նաներահավատության մառախուղները ցրվել։ Ճեվ ասես թե լուսավորության բռնաբարված իրավունքը, իր վրեժը հեղինակից հանելու համար, ձգել և նորան մի տրամաբանական հակասության մեջ։ Սուրբ Ծաչի պատին եր, վոր Սոսը հայտնի տեսավ իր փեսայի և մինչև անդամ իր քրոջ դավաճանությունը։ Ի՞նչպես կարելի չե թույլ տալ, վոր Սոսը այդքան բանից հետո հավատար Տիրանին և մինչև այն աստիճան, վոր կապոց առնուր նորանից վորպես Քըլսիմ և Գարեգնից ծածուկ ուղարկեր Վարդիթերին[16]։

Արդեն ասած ենք, վոր Սոս և Վարդիթերի տկար կողմերը այն տեղե-

մաբանների, ապա պիտի առնենք, վոր սպանիացին, նույնիսկ ինկվիզիցիոնի կատաղության ժամանակ, չատ անդամ տաղտկանում եր, յերբ սրբազան ատենի ջրիստոնեական առաջադրիչքը մի փոքր ուշանում եյին։ Նորա քոքերը սովորել եյին ներա չնչել մարդկային մարմնի ծուխը և չոգին։ Նորա աչքերը չեյին կսկծում այն քանձր ծուխերից, վոր տարածվում եյին անբախտ նահատակների բորբոքված խարույկներից։ և այս եր պատճառը, վոր կրոնական բարբարոսության տեղատվությունը չատ ծանրաքայլ եր։ Ճեվ արդ՛ըև, 1781ից հետո եվ կախաղանները չազատվեցան կատարելապես։ Նորա դարձյալ դատապարտվում եյին, բեև վոչ դեպի խարույկ, բեև լոկ դեպի մի հրապարակական խայտառակություն։ Հոյակոսյալ Ֆրանսուա Արագոն, Փարիզի դիտությանց ճեմարանի անմոռանալի և հռչակավոր անդամ և անփոխանակելի աստեղագիտը իր սեփական վարքագրության մեջ (գլ։ XV) իր սովորական և զարմանալի ճարտար լեզվով պատմում և մեզ հետևյալը։ «1807 ին, Վալենցիա մեջ, դեռ կար ինկվիզիցիոնական դատարանը և ժամանակ-ժամանակ ներգործում եր։ Ստո՛ւյդ և, պատվելի հայրերը մարդ չեյին երում, բայց հանում եյին ծաղրալի և պժգալի վճիռներ։ Իմ այդ քաղաքի մեջ յեղած ժամանակ, սրբազան դատարանը պարապում եր մի կախարդ կնոջ գործով։ Նորա ման ածելին նորան բոլոր քաղքերում եչի վրա և յերեսը դեպի պոչը նստեցուցած։ Կնոջ մարմնի վերին [Ջնջված՝ մասը... ԽՄԲ.] բաժինը—մինչև դոմին—մերկացուցած եր։ պատշաճից սուիսվելով մի մածուցիկ նյութ եյին քսել մերկ մարմնի վրա, ասում ևն թե մեղր եր քսածները և ծածկել եյին թեթև և մանր փետուրներով, այնպես, վոր խեղճ կինը, մարդու դլխով հավի յերը նմանում։ Հանդիսավոր թափորը, վորի քամակից գնում եր մի բաղմաթիվ ամբոխ, մի քանի ժամանակ կանգնեցավ մայր յեկեղեցու հրապարակի վրա, ուր իմ ինկնան եր։ Ինձ ասացին, թե կնոջը ծնեցին, քիվ դարիկելով մեջքին։ բայց յես չեմ կարող հաստատել այս պատմությունը, պատճառ, յես ասանը չեյի, յերբ պժգալի թափորը անցնում եր իմ պատուհանների առաջից։ Ահա, այսպիսի տեսարաններով XIX դարու սկզբում զվարճացնում եյին բնակիչներին Սպանիո գլխավոր քաղաքներից մեկի մեջ, ուր հռչակավոր համալսարան կա»[8] և այլն։

Գերմանացի, հռչակավոր քիմիկոս, Հաւսոոս Լիբիգը, իր քիմիական նամակների մեջ (Հարբորդ տպագրություն, 1858, Մյունխեն) այսպես և խոսում։ «... Դժար չե հասկանալ, թե այդ կերպով (տանջանքով) շատերը բռնադատվեցան խոստովանել թե կախարդ եյին. Այժմ, կախարդների համար խարույկներ չկան, վո՛չ այն պատճառով, վոր այժմ չեն հավատում կախարդների գոյության, այլ այն պատճառով, վոր մենք, բնությունը ավելի լավ ճանաչելով, գիտենք, թե այն բոլորը, ինչ բանում հանցավոր եյին համարվում այն անբախտները, պիտի վերադրել սատանային, վո՛չ, այլ միայն բնական պատճառների։ Հազարավոր այսպիսի անբախտներ եչափոնների վրա. դլխապարավեցան այն տեսակ մարդոց ճնշված, վոր պաշտպանում եյին կախարդության գոյության վարդապետությունը, իսկ ժամանակ, վոր պաշտպանում եյին կախարդության գոյության վարդապետությունը, իսկ ժամանակ նահինների հետո, յերբ սկսվեցին պատճառները և [Ջնջված՝ ֆակտերը... ԽՄԲ.] իրողությունքը քննել, վորոնց վրա հիմնվում եյին դատավորքը, յերբ ճշտությամբ ստուգեցին, այն ժամանակ դուռն, վոր այն բոլոր, դրսևանց, կախարդության գոյությունը հաստատող կարծիքները հիմնված եյին սուտ նկատողությանց, սուտ մեկնությանց և սուտ վկայությանց վրա»։ (Տե՛ս նամակ 24)[9]։ Գ. Զամուռճյանի աչքը լո՛ւյս։

բոմն են, ուր հեղինակը, դուրս գալով բնականի սահմանից, ոգնություն և խնդրում յերևակայությունից։ Սորա մի քանի որինակը ցույց տվինք. բայց համեմատաբար ավելի թեթև հանդամանաց մեջ։ Անցքի կատաստրոֆը, վոր ամեն իրավունքով պահանջում և հեղինակից ավելի հմտություն ու ճարտարություն, ուր պիտի վոր գործի ամբողջ ընթացքի մեջ լարված թելերը ավելի ճարտարությամբ, ավելի հնարագիտությամբ և վոր պլխավորն և ավելի բնականությամբ միանան, հավաքվին և կենդրոնանան, ինչպես արևի ճառագայթքը անցնելով մի վոսպնաձև ապակուց, վոր իսկույն կրակեն,— այդ կատաստրոֆը, յեթե համեմատում ենք գործի ընդհանուր արժանավորության հետ, շատ թույլ և կերպարանագործված. և վոչ միայն այլաւսի, այլ և

Այն բոլոր աչխարհներում, ուր քրիստոնեությունը նստած եր թագավորական աթոռի վրա, կախարդ ասված խաբեբաները, կամ կախարդ անունով դրսպարտված խեղճերը, մինչև ատան և ութերորդ դարու վերջը, անողոքմարար և առանց բացառության, հալածվեցան, ղնդանների մեջ փքեցան, կախվեցան, դլխատվեցան և խարույկների վրա դոտացան։ Արդյո՞ք, մարդ սարսափում է, յերբ հիշում է, թե վո՛րքան անմեղ զոհեր և տվել մարդկությունը տգիտության և խավարի կուռքերին, յերբ մյուս կողմից հիշում է, թե մարդկությունը տգիտության և խավարի կուռքերին չատերն էլ տգիտությամբ վո՛չ, այլ փարիսեական կրոնամոլությամբ քրիստոնեությա՛ն ատաեր, զի ոչ դիտեն դինչ գործենն, մի մասով վերաբերվո՞ւմ եր այս դահիճներին։ Մենք ցա, զի ոչ դիտեն դինչ գործենն, մի մասով վերաբերվո՞ւմ եր այս դահիճներին։ Մենք սարսափում ենք։ Բայց այս սարսափանքը փոխվում է դեպի մի այլ, նոր, և տարօրինակ դղացողություն, յերբ մտածում է մարդ, թե ճիշտ այդ օրից, յերբ թեթևաբարո կիներ, ղեպ

անբնական։ Այո՛, հեղինակի բուն խորհուրդը Սոսի կամ Վարդիթերի պատմությունը չէ, ինչպես առաջ էլ ասած ենք, այլ, Աշտարակի կյանքը. բայց և այնպես, յերբ, թեև վորպես ոդնական, առել է Սոսը, Վարդիթերը և սիրու կրակը, ցանկալի յեր մեզ, վոր ավելի բնական շրջանակի մեջ տեսնեյինք ցավալի հատաստրոֆի պատկերը։

Անբնակա՛ն է, յերբ Վարդիթերը վորպես տասն և մեկ տարեկան աղջիկ մի չլերը սասանեցնող տխուր անցքից կաթվածահար է լինում։ Անբնակա՛ն է, յերբ կաթվածից հոգևարք մարդը ցույց է տալիս ուղեղի և չլերի անխոտոր և առողջ պաշտոնակատարություն։ Յերե նորա ուղեղը և չլերը այն վիճակում են, վոր նա հանդիստ խոսում է, ուղիղ մտածում է, հիշողությունը չի կորցնում, աչքը տեսնում է, և ականջը լսում, ել ի՞նչ պատճառից է մեռնում։ Վոտքե՞րն են կաթվածահարվել թե՞ ձեռքերը. այդպիսի դիպվածում նա կարող է շատ տարիներ ապրել։ Թոքե՞րը կամ սի՞րտն է կաթվածահար յեղել, այն ժամանակ պիտի վոր խիույն մեռներ, առանց շաբաթներով ապրելու։ Իսկ մյուս ներքին գործարանների կաթվածահարությունը, յերե վոչ պիտի սպանելին իսկույն, պիտի անշուշտ պատճառ դառնային ուղեղի և չլերի ուղիղ պաշտոնատարության խանգարվելու։

Թե Սոսն ասես, շատ կեղծ վիճակում է։ Ցրտում, դիտաբաց, վոտքը բոբիկ ման է գալիս յերեք կազ ձնի մեջում և այն ցուրտ ձմեռ ու Արագածի գառիվայրում։ Զորը մտնում է, չլում լողանում, աղվեսների և գայլերի հետ կռիվ տալիս. և այս որերով։ Յեվ չնայելով, վոր նա մահ և փնտրում քան թե կյանք, այնուամենայնիվ չի մոռանում իր կյանքի պահպանության հոգսը. «խոտի քոքերը ձնի տակից հանելիս ու ծամելիս», տեսնում են նորան ապարանցիք։ Մի շաբաթ է, վոր նորա քամակից ման են գալիս աշտարակցի աղաքը. տեսնում են, բայց սիրտ չեն անում մոտենալ։ Վերջապես, յերկու շաբաթ անցնելուց հետո Գարեգինն է նորան տեսնում և Սոսը գալիս է նորա մոտ։ Գարեգինը խրատում է, համոզում է տուն դառնալ և Սոսը դառնում է։ Բայց այս յերկու շաբաթում, այն ցրտի և ձնի մեջ սաոր չլում լո-

---

վանքնաք համբուրել նորա ձեմքը, ոուբք է, մարդկային արյունով պղծված չե, ինչպես ձեր քարոզած ինկվիզիցիոնի ձեմքը։ Նեբս մո՛ր, այնտեղ մարդ երելու խարույկ չկա, ուստի և վոչ ձեզ յերկյուղ։ Թերևս Մեչուխնչյան[13] քաղաքավարություն անելով խափվի մրնա; տա... ինքընքնիկ գոնաք։ Բայց... Մնյա աստուծու... բուն նորա արյունով պղծված չեղածն է պատճառը, բուն այնտեղ մարդ չերևելն է պատճառը, բուն մարդկային, քրիստոնեական և վո՛չ դաղանական սկզբունքներ կամ կրքեր պաշտվելն է պատճառը, վոր պ. Զամուռճյանը Մինչնադունյան հերետիկոսարան տանելով գառեր անցել է»։ [Ընդմիջած՝ տո՛մ՛թ և անլսնանալի [...] տո՛մ՛թ, տո՛մ՛թ և հազար տո՛մ՛թ։ Ինչ ասենք, յեթե վոչ աղդային դժբախտություն։ ԽՄԲ.]։

NB Սուրբ Ցեղիշե վարդապետի վերաբերությամբ «մեր» խոսքը նորը գրով տպեցինք, վորպեսզի Համար պ. Զամուռճյանի պարեզոտավորներից վորը են, Վանցի Գողտոսը[14], Տիրացու Հռիփսիմեյի Տեր Գասպան[15] և նոցա նմանները, վորոնց անունները քաղցր չե մեզ հիշել և վորոնց հետ գործ ու բարի չունինք։ Մինչնադունյան հերետիկոսարանը նորանց չե ճանաչում. նշանակում է, նոքա ուղղափառ են, յեթե հերետիկոս չեն, ապա ուրեմն, և պ. Զամուռճյանի ուղածը... «քոյդ գքեզ»։

դանալով, սառույցի վրա թեք ընկնելով, սոված և ծարավ, բայց և այնպես նորա յերեսի գույնը բնավ չէ թուլում, նորա առողջությունը չէ սասանում. իսկ յերբ տանը նստած լսում է Վարդիթերի մահը, խո՛ր հոգոց է քաշում, մեջքի վրա հետ գնում, գլուխը Գարեգնի ձեռքի վրա դնելով խնդրում է, վոր աշխատի յերկուսին (իրեն և Վարդիթերին) իրար կշտի թաղել տա, իր մորը մխիթարե, յեղբարցը մնաս բարով ասե, ինքն էլ ուրա՛խ կենա (!), հետո, աչքերը վերև բարձրացնում աղոթք անում ու հոգին ավանդում: Իրար մոտ թաղելու խնդիրը անում է նաև Վարդիթերը, յերբ դեռ Սոսը մեռած չէ: Արդո հեղինակը այստեղ մի վայրկյան ընծայում է Վարդիթերին Փանվելի աղջկա շնորհքը[17]:

Մենք չենք ուզում այս բոլոր անբնական և շատ թույլ նկարագրված անցքերը քննության դանակի տակ ձգել, այդ շատ յերկար կլինի. առանց նորան էլ յերկարում է մեր հատվածը: Դուցե ավելորդ էլ լիներ այս աշքի հայտնի թուլության վրա շատ խոսել. մանավանդ վոր ինքը արդո հեղինակը կամ մեր ընթերցողը, յեթե ուշադրությամբ կարդան այս անցքերի նկարագրությունը, վոր մենք հարազատությամբ, վորպես քաղված, հանեցինք բնագրից (յեր. 218—222) իրենք էլ կտեսնեն մեր տեսած անբնականությունը և հակասությունը: Այսչափ միայն ասում ենք, վոր վիպասանության շինվածքին մեծ հարված է ավել կատաստրոֆի այս անբնականությունը:

Յեվ վորպես թե հերիք չեր ինչ յեղել եր. այն պատվական տապանադրից հետո.—

«Ահա սիրո պատուհներ,
Մի ապահ մարդի զոհեր.
Ով ըստեղից անց կենա
Հիշի Սոսն ու Վարդիթեր»,

վոր շատ ընտիր և կարճ և աղոտ, դնում է այն Գարեգնի անտեր վողբը: Ամբողջ գործի մեջ, վոր բոլոր վոտանավորը տակ ու վերև ես անում, մեկ հատ չկա այսպիսի անխորհուրդ անաջող և ցուրտ վոտանավոր: Պատճառը շատ բնական է: Գործը հեղինակի մտքում և սրտում արդեն վերջացած է. նորա վոգին էլ բան չունի այս գործի հետ. բայց յերբ բռնադատում ես գրիչը ինչ վոր լինի մի բան գրել, հայտնի բան է, վոր Գարեգնի վողբի պես կլինի, վոր վոչ բարով պիտի ասեր:

Ազգային ավանդությունքը վորքան կարելի յե, անշուշտ, արժա՛ն է փրքրել և դուրս բերել դարավոր փոշիների տակից. բայց ավանդությունք ենք ասում, վոր իբրև մի պատմական սերմ, միշտ կարող են ազգի կյանքի մեջ ծլել, ծաղկիլ և պտուղ բերել: Ազգային ավանդություն է դարտինեաի սալը ծեծելը, վոր Արտավազդը դուրս չգա ու աշխարհը չքանդե. և մենք մեծ ուրախություն ղգացինք, յերբ տեսանք (յեր. 42), վոր տակավին պահվում է այդ անտիկյան ավանդությունը. թեև այդ էլ կրոնական դույն է ստացել դարձյալ, վորովհետև ավագ ուրբաթ գիշերն է միայն կատարվում: Բայց, ինչպես և է, այնուամենայնիվ ավանդությունը կենդանի յե և այն պատմա-

կան ավանդություն, որի լոկ հիշելը բերում է մարդու յերևակայության առջև ամբողջ հայ աշխարհը, որի վրայից արդե՛ն պլորվել են շատ դարեր։

Բայց խոստովանում ենք, որ Ականատեսի ավանդությունը (յեր. 108) չունի մի դորա նման արժեք։ Անշուշտ, հեղինակը չե շարադրել նորան, նա առնում է ազգի հավակացողությունից. բայց մենք մի փոքր առաջ ասածներս վերստին կրկնում ենք, թե դպրության և լուսավորության խորհուրդը այն չե, որ ամեն անցած խավար լույս քարոզե, ամեն դարերի ծանրության տակ ճնշվածին անխտիր ծունր դնե, այլ որպեսզի փարատե այդ խավարը։ Այդ տեսակ բաները, մեր կարծիքով, զգուշության պետք ունին. և հեղինակը հանդես հանելով մի նմանորինակ բան, պարտական է այնպիսի ընթացք տալ բանին, որ տասն և ինն դարու մեջ ուղերորդ ամենախավար դարին արձագանք չեղած չլինի։ Միջին դարերում, ջուրը կարող եր ուր ասես յերթալ մի գավազանի զարկելով, թերևս, ձորից դեպի վեր, սարի գլուխը բարձրանալ, բայց այն որից, յերբ Գալիլեյը իր գնդակները ձգեց Պիզայի թեք զանգատնից դեպի վայր, այն որից, յերբ ծանրությունը վորպես ընդհանուր հատկություն տրվեցավ մարմիններին, այն որից, յերբ գտան հեղուկ և ոդանման մարմինների որենքը— թե նոցա ճնշողությունը ամեն կողմ հավասար է, յերբ ոդի ճնշողության աստիճանը չափվեցավ և «բնությունը դատարկությունից վախում է»* առածը մերժվեցավ, այն որից, յերբ Նյուտոնը գտավ կենդրոնական** առաձգության որենքը, այդ որերից բռնած էլ ջուրը չե հնազանդվում գավազանների կամ Ականատեսների։ Յեվ այս է պատճառը, որ Յերևանի Դալմի ջուրը, որի ճանապարհը բավական տարածությամբ յերբեմն փորած ու բացած եր դեպի Եջմիածին***, այսոր մի այդպիսի սքանչելի կերպով չե կարող Յուչ-Քեիլեների բարձավանդակից անցնել, որ հետո վազեր դեպի Եջմիածին, ու խե՛ղճ միաբանին ազատեր այն անմաքուր ջրից Սարդ-Քանքանի, որի մեջ ոճ ասես, գորտ ասես կամ ուրիշ մանր կենդանիք լիքն են։

Այսոր, յերե տակավին դիտությունը վոտք չե կոխել ազգի մեջ, գոնե լսվում է մի խուլ աղաղակ այսքան դարերով անպտրի և կաթվածահար թոքերի կիսակենդան ներգործությունից, որոնք զգում են առողջ ոդի կարոտություն, որքան կարող եյին զգալ։ Խորհրդավոր ժամանակում ենք ապրում մենք. և մեծ պարտականություն կա մեր վրա, զրգռել այդ թոքերի գործունեյությունը առողջ ոդ ներս շնչելով. հերիք է, որքան թմրեցուցիչ թույն մտել է նորա մեջ, մեզ մնում է այժմ դեղթափներ գործ դնել։

Մենք միջնադարյան ազգ չենք. միջին դարերում մենք ընկանք. միջին դարերում մեր հարստությունը կորուցինք։ Չե կարող լինել մի այնպիսի բան, միջին դարերի պատկանավոր, որ ոգուտակար և փրկարար խորհուրդ ունենա մեր համար։ Միջին դարերի ժանգը, որ նստել է մեր վրա, մենք

---

* «Natura horor vacui».

** Ընդվզած՝ քարշողության... ԽՄԲ.։

*** Ընդվզած՝ չե կարող անցանկ... ԽՄԲ.։

պարտական չենք պահել։ Կան ազգեր, որ միջին դարերում ծնեցան, նոքա ամուր կապված են այդ դարերի հետ և ոտքա ժանգը, յերթե յերևում է նոցա վրա, նոքա դեռ կարող են պատմական իրավունքով արդարացնել. ժանգոտ որորոցի մեջ բացին նոքա իրենց աչքերը։ Մեր հարաբերությունը միջին դարերի հետ այնպես չէ։ Իբրև ազգ անտիկյան ենք. իբրև քրիստոնյա, յերթե վոչ նույնպես անտիկյան, ըստ վորում առաջին յերեք դարերում քրիստոնեությունը քաղաքացու իրավունք չուներ Հայաստանում, դեռ անտիկյան դարերի վերջի և միջին դարերի սկզբին պատկանավոր։ Ի՞նչ կարող են մեզ հիշեցնել միջին դարերը. կոթծանում, գերություն, կոտորած, արյուն, կրակ, սով, խավար և մահ։ Սոքա են մեզ համար միջին դարերի բերածը և նոցա բեռի տակ ճնշված և այսոր հայ մարդը։ Թափել այդ բեռը մեր վրայից,— ահա՛ մեր գործը։ Մեր ազգությունը, մեր կրոնը, վոչ թե վնաս կրելու չեն միջնադարյան ուղղությունքը մերժելուց, այլ դորա հակառակ այդ մերժողությունը միակ պայման և նոցա առաջադիմության*։ Քաջ Համբրոնացին մի ոտիշ դիպվածով աղաղակում է. «Ջմանկունս ծնեալ մեզ ի քաղդէացւոց սերմանէն զվիմի հարցուք»։ Մենք, մի փոքր փոփոխությամբ ձայնակից ենք լինում մեր յերանաշնորհ վարդապետի բացատանչության՝ «զմանկունս ծնեալ մեզ ի միջին դարուց սերմանէն զվիմի՛ հարցուք»։ Թողունք արևմտյան նոր ազգերին, տեսնելով իրենց հին ասպետական ամրոցների մնացորդքը, առասպելավոր պարիսպները և դոթական տաճարները քաղցրությամբ հիշել միջին դարերը**, յերթե միայն կարող էին, վորովհետև նոքա էլ, թեև Հռոմից ազատված, այնուամենայնիվ, վոչ միշտ վարդեր են քաղել իրենց այդիներից. իսկ մենք, վոր դեռ գնացինք միջին դարերի խավարին, չենք կարող քաղցր հիշատակ ունենալ նոցա մասին նայելով մեր ամրոցների, քաղաքների և տաճառների ավերակներին։

Գիտենք զուր չեն անցնում դարերը. այսինքն նոքա իրենց ազդեցությունը անում են ազգերի վրա. ընդունում ենք. բայց ինչ է մեր պաշտոնը։ Ի՞նչ է քաղաքակրթությունը. status quo?*** ամեն այդ ազդեցությունքը, վորոնց հետևանքը և ճշմարտը յերեվում է մինչև այսոր ազգի մեջ, այդ Դանիելի ասած «աւերածի պղծութիւնը» անխոտոր սրբացնե՞լ, անխոտոր նոցա առ-

---

* Առհասարակ փորձական կամ բնական գիտությանց քննամիքը իրենց անուսումնասիրությունը և նեղ հայացքը հիմնում են այն սուտ վարդապետության վրա, թե այդ գիտությունքը վնասակար են կրոնին։ Այս աննկարելի սխալ է, քանի վոր առաջյալը քարոզում է «աստուծու անբեւուքիքը նորա արարածներովն են իմացվում» [18]։ Ինչի՞ ուրեմն վախենում են այդ արարածը քննելուց։ Բնական գիտությունը առաջ է գնում մինչև բաների սկիզբը։ «Եթէ մենք ուղենք ավելի հեռու յերթալ, այն ժամանակ մի հատ միայն կտեսնենք պատճառ պատճառի, արարիչ աստվածը»։ (Կաթիֆած. Կերպարանափոխությունը կենդանական աշխարհում. տե՛ս այդ պատվական աշխատության վերջին մասը)[19]։

** Ջնջված՝ վորովհետև... ԽՄԲ.։

*** Status quo (ante)—սկզբնական, նախկին դրությունը, անփոփոխ վիճակը (լատ.) ԽՄԲ.։

չե՞ ծունկ չոքել ու խո՞ւնկ ծխել, վորովհետև մինը հազարամյա չե, իսկ մյուսը հինդհարյուրամյա, թե՞ չնչել այդ ազդեցությանց հետեվանքն անդամ։ Ցավ չեթե պիտի կապենք մեզ այդ խավար անցածի հետ, չեթե խոստովանելով մեր հիվանդությունը, այնուամենայնիվ պիտի ուզենք միջնադարյան թարախը պատվաստել մեր վրա վորպես նախապահպանողական հնար (ինչի՞ց), չեթե նույն իսկ մեր ցավի և հիվանդության պատճառը պիտի առնունք վորպես ճար ու դեղ, ե՛լ ո՞ւր ենք խոստում կրթության և լուսավորության վրա, ո՛ւր ենք առաջադիմություն և քաղաքակրթություն բառերը բերան առնում։

Գեղեցիկ և խոստում հոյակապ Լիբիդը իր նամակների մեջ. «Յերևակայությունը, հարյուր հազար դիպվածներում ստեղծում և հարյուր հազար մոլորություններ. և չկա վոչի՛նչ բան այնպես վնասակար դիտության առաջադիմությանը, վոչի՛նչ բան, այնպես, հասկացողությունքը խավարեցնող, քան թե մի հին մոլորություն. վորովհետև շատ դժվար է հերքել սուտ վարդապետությունը. պատճառ, նա հիմնված է այն հասկացողության վրա, թե սուտը ճըշմարիտ է»[20]։ Միջնադարյան բոլոր համակարգությունքը հիմնված են այդ նոտր դրերով տված վարդապետության վրա։

Մենք փորձերով, և շատ տարբեր տեղերում, ստուգած ենք, վոր մեր հասարակ ժողովուրդը շատ անգամ ավելի ազատ է միջնադարյան լուծից, քան թե մեր պատվելի դրագետքը։ Միջին դարերից հետո մինչև այսոր մի քանի նոր դարեր ել անցան. չեթե դարերը զուր չեն անցնում, ապա ուրեմն այս նոր դարերը բնականաբար, քիչ շատ թուլացուցին միջին դարերի մեր ժողովուրդի վրա արած ազդեցությունը. այո՛, շատ բան ել խապաո մոռացուցին։ Բայց մեր պարոնները անդադար այդ միջին դարերի կարեկարատում լողալով ազգության և լուսավորության անունով, աշխատում են նորոգել և հաստատել ազգի վրա այդ խավար ուղղության տիրապետությունը։ Ի՞նչ և դորա խորհուրդը. ի՞նչ հույս ունին դորանից։

Խորհուրդ չկա. հույսն ել թեթևության արդյունք է։ Թող այդպիսի պարոնները լավ սորվին ընդհանուր պատմությունը և նորա հետ կապակից մեր ազգի պատմությունը, Մխիթարյանց տված դրքերովը վո՛չ, այլ բուն աղբյուրներից և վերլուծական վոճով։ Թող քրքրեն ընդհանուր դպրության, նոր և լուսավոր ազգերի քաղաքակրթության պատմությունը. այդ քաղաքակրթության որենքները և նոցա կերպարանագործության հարաբերից յեղած հանգամանքները, այն ժամանակ իրենք ել կտեսնեն միջնադարյան ուղղության ամլությունը և տապալման չքավորությունը։ Բայց այս ուսումնասիրությունը կարող է միայն նոր կամ ապագա սերունդին աջողիլ. ինչ վոր վերաբերվում է մեր իմաստունների, նոքա ինչպես ներկայի լուսին, այնպես և ապագայի հետ մաան ու բաժին չունին, և նոցա հետ չե մեր խոսքը։ Մենք և վոչ իսկ ուզում ենք վրդովել նոցա քունը. «ննջեցեք և հանգերուք», ասում ենք նոցա։

Միջնադարյան անշահ ուղղությունը իր ամլությամբ մաշում և կենդանի

ազգի ուժը առանց ամենևին արդյունք տալու։ Նա նմանում է այն քարե ձվին, վոր իբրև բռնկալ մնում է հավի ձու ածած տեղում, բոլորովին պիտակաբար. և յերե թուխս յեկած խեղճ հավը, իր անխոհեմ տիրոջ վորկրամոլությամբ, զրկված լինելով իր ածած բոլոր ձվերից, և բնական ազդեցությամբ նստի իր ձու ածած տեղում (այն քարե ձուն էլ չլինի կնստի) խելքդ ի՛նչ է կտրում, այն քարից ձագ դուրս կգա՞։ Ջի՛ վոր զուր տեղը կվատանա վողորմելին իր ջերմությունը և շատ անգամ գործը կվերջանա հավի մահով։ Հարկ չկա, կարծում ենք, ասել, վոր այս բոլոր խոսք ու զրույցքը վոչ թե լոկ մեր հեղինակին չեն վերաբերվում, այլ մանավանդ ավելի փոքր բաժինը կարող և հասնել նորան, քանի վոր նա ուրիշների պես իմաստական դոնկիխոտությանց չե նվիրել իր անձը (և ուրա՛խ ենք, և փա՛ռք աստուծու) քանի վոր կան մարդիկ, մեր արդարացի մեղադրության լիամասն կերպով արժանավոր, վորոնց, այո՛, մենք մինչև այսոր պարտական ենք մնացել։

Յերաշտության ընդդեմ Նուրինի ավանդությունը, թեև իսպառ չդիտենք թե ինչ բան և այդ և ի՛նչ արարողության մնացորդ, բայց և այնպես, կարծում ենք թե հին բան լինի։ Սաստիկ զրպռում է այդ բանը մեր հարցասիրությունը. մանավանդ յերբ տեսնում ենք, վոր շատ խոր արմատացած է* նա ազգի հասկացողության մեջ և մեծ վարկ ունի ազգը նորա մասին։ «Նա մեր կոտորված յերեխեքն էլ»— յերաշտությունից դանգատելով ասում են աշտարակցիք իրենց մեջ (յեր. 66)— «Նուրին (Լազարե)** էլ չեն ման ածում, բալքի աստուծո սիրտը քաղցրանա վրընէրս, մի լիս ու ճար անի»։ Սորանից այնչափ միայն դուշակում ենք, թե այդ բանը ընդունվում է վորպես մի հաշտեցուցիչ արարողություն և թե յերեխայք միայն (վորպես անմեղության յերևեցուցի՛չք) պիտի կատարեն։

«Յերեխեքն էլ»— պատմում է հեղինակը (յեր. 69)— «Նուրին շինեցին ու ման ածեցին. յերկուսը կռնից բռնեցին***, մինն էլ առաջրակ ա վեր կալել, մեկելն էլ մի պատի բըժուռ ու ման են գալի տները, վոր դրան առաջին կաննում են, ասում են.

«Նուրին Նուրին եկել ա
Աչքա հուրին**** եկել ա
Շելա չասլիկ հագել ա
կարմիր դոտիկ կապել ա

Ցնդ բերեք պորտը քաշենք,
Ջուր բերեք դլխին ածենք
Մեր Նուրինի փայը ավնք,
Ուտենք խմենք քեֆ անենք»։

---

* Ջնջված՝ այդ ավանդությունը... ԽՄՐ.։

** Թե ի՛նչ ասել է Լազարե, մենք նույնպես չդիտենք, ինչպես Նուրինը։

*** Սորանից յենթադրում ենք, թե տղոց չինած Նուրինը մի մարդածև պատուճապատանք է և համ այդպես մի բան, յերբ ասում է հեղինակը «կռնիցը բռնեցին»։

**** Աչքա հուրի խոսքը բնավ չենք հասկանում թե ինչ է ուզում ասել։

ժկնանիքը,— շարունակում է հեղինակը,— մի ամառ շուր քերում են լցնում եղ Նուրինի գլխին, ու յերևևեքանցը բրինձ, կամ յեղ, կամ ձու տալի, վոր տանեն քեֆ անենա։

Վերևը ասացինք, վոր այս բանը հին է յերևում մեզ. անշուշտ այս լոկ յենթադրություն է, բայց մանավանդ յենթադրում ենք այն պատճառով, վոր այդ վոտանավորի հետքը կա Նոր Նախիջևանում. գո՛նե շատ տարի առաջ, յես լսել եմ պառավներից։ Վորքան միտքս գալիս է, այնտեղ մի փոքր այլ այլած է այդ վոտանավորը և ասվում է բոլորովին պիտակաբար, առանց վորևե արարողության կամ խորհրդի։ Ջորս տող միայն հիշում եմ. ահա վասիկ.

«Նորին Նորին Նազաբեթ*
Նորինը բաղջան եկիլ է
Շալե չապիկ հագիլ է
Կաբմիր գոտի կապիլ է»...

Այլ քե սորանից հետո ել ի՛նչ է արել, այդ միտքս չե, միայն լավ գիտեմ, վոր մի քանի տող ել կար։ Նախիջևանի մեջ բնավ ավանդություն չկա այս Նուրինի մասին. լավ գիտեմ, վոր տղայությանս ժամանակ, շատ եմ զզվեցուցել պառավներին, վոր պատմեն ինձ, քե ո՛վ է այս Նորինը կամ Նազարեթը. բայց վոչինչ չեմ լսել նոցանից, վորովհետև իրենք ել չգիտեին։ Դեռ զարմանալի չե, վոր այսքան ել մնացել է, մանավանդ յերե հիշենք, վոր Նախիջևանցին անեցի չե և տասն և չորրորդ դարում Հայաստանից դուրս յեկած. հայտնի չե, քե շատ ավանդությունքը կամ վոտանավորք և այլ այսպիսիք, վոր վերաբերություն չունեին կրոնի հետ, պիտի կորչեին։ Թեև խեղճ բաներ, բայց և այնպես կարելի չե տակավին հավաքել բավական վիճակախաղեր և մի քանի վոտանավորք աստվածածնի և ուրիշ սրբերի վրա։ Դեղացիք, վոր առաջ ավելի ավանդապահ եյին քան քե այժմ, ունին զանազան յերգեր, մանավանդ հարսանիքի վերաբերյալ, վոր հայտնի յեն անունովս «պար»։

Արդյոք, Աշտարակը, վոր պահել է մինչև այժմ Նուրինի արարողությունը, պահե՞լ է նույնպես մի ավանդություն կամ հասկացողություն նույնիսկ Նուրինի անձնավորության կամ այդ ոտարոտի արարողության մասին և քե պահե՛լ է, ի՞նչ ավանդություն է այդ. աշտարակցոց կարծիքով ո՛վ է կամ ի՛նչ է այդ Նուրինը. ցավում ենք, վոր հեղինակը վոչինչ չե ասում մեզ։ Անշուշտ, յերե ավանդությունը կորել է, հեղինակը պատասխանատու չե. բայց այդպիսի դիպվածում ել բնավ ավելորդ չեր գո՛նե մի բացասական ծանոթություն։ Մենք հույս ունինք, վոր արդ Պռոշյանցը ուրիշ անգամ ավելի շատ հանդես կանե այդպիսի տեղեկություններ և ավելի կատարելությամբ առաջ տանի սկսածը։ Մենք քաջ գիտենք, վոր Սոս և Վարդիթերը չե

* Արդյոք հարակցություն կա՞ այս Նազարեթ և մեր չհասկացած Լազարեյի մեջ, քե՞ լոկ նմանություն է։

ծատրել նորա պաշարը. մանավանդ վոր դեռ շատ բան մնում է, վորին քնավ չե դիպել հեղինակի գրիչը։

Ապարան բառի ստուգաբանությունը, այսինքն պ. Պռոշյանցի կարծելը (յեր. 7) թե դուցե ա ն պ ա ր ա ն բառի կրճատվածը լինի, կապելով նորան այն սքանչելի կանթեղի հետ, մենք խոպան մերժում ենք. նախ, վոր ա ն պ ա ր ա ն խոսքը, այսինքն պ ա ր ա ն միացած բացասական ան մասնիկի հետ մենք հին հեղինակությանց մեջ վոչ մի տեղ չենք տեսնում գործածած և այդ բոլորովին նոր բարդություն է. հայտնի չե թե ապարանը անպարանից դուրս գալու համար հարկավոր եր վոր այս վերջինը յեղած լիներ դպրության մեջ, մինչդեռ Ապարան խոսքը (հայտնի առթով) յերևում է գործածված։ Յերկրորդ, Ապարանը, վորպես այժմ նույնպես և առաջ ապահովության տեղ յեղած լինելով, շատ հավանական է թե ապարան հասարակ անունից լինի հատկացած։ Այլ թե ինչի՞ կարող եր մի իշխանի կամ բագավորի ա պ ա ր ա ն ը այստեղ յեղած լինիլ։ Բայց մենք այստեղ բառերի ծագումը քննելու համար չդադարեցանք. յեթե այդ մասին խոսելու լինինք, այսինքն ընդհանրապես այն անունների մասին, վոր այսոր խորհրդավոր նշանակություն են ստացել Հայաստանի հողում, կարելի յեղածի չափ հարմարվելով աստվածաշընչի պատմությանցը, ապա մեր ասելիքը պիտի հիմնենք մեր հին հեղինակների գործերի և անողոքելի յերկրաբանության վրա։ Բռնելով այս ճանապարհը, շատերը այդ անուններից կկորցնեն իրենց ներկա խորհուրդը. բայց մենք բնավ վերաբերություն չունինք այդ բաների հետ. մեզ մանավանդ քաշում է այն սքանչելի կանթեղը Արագածի և նորա մասին ուզում ենք մի յերկու խոսք ասել։

Մեզ մինչև այժմ հանդիպած չե* խոսք կամ պրույց մեր կլասիկական դպրության մեջ. խոստովանում ենք, վոր նաև վորպիսի և իցե հիշատակարան անգամ չենք տեսել, վոր խոսեր մեզ այդ կանթեղի մասին։ Մի մութը ավանդություն միայն, այս կամ այն տիրացվի, այս կամ այն քահանայի բերանացի պատմությունից մեզ հասած, և բոլորը, ինչ վոր գիտենք այդ մասին։ Օջմիածնի պատկերները, վոր հայոց աղգի մեջ շատ տեղ կան, պահում են իրենց վրա նաև Մասիսի և Արագածի յերևակայալ պատկերները։ Այս խոսքը գործ դրինք այն պատճառով, վոր վոչ Մասիսը նման է իր պատկերին և վոչ Արագածը։ Հայտնի չե թե այդ պատկերների վրա Մասիսի գլխին միշտ նկարված է լինում մի անհեթեթ շինվածք, առանց դորան չեր լինիլ,— այդ Նոյյան տապանն է։ Արագածի գլխին նկարված է լինում ոդի մեջ կախված մի կանթեղ։ Յերբ վորպես 7—8 տարեկան յերեխա հարցնում եյի «վարպետիցս»[21] այդ բանի նշանակությունը, նա դրատղա հարցնում եյի «վարպետիցս» այդ բանի նշանակությունը, նա դրատղա կանապես և ինքնաբավական կերպով պատասխանում եր ինձ, թե «յերբ սուրբ Գրիգոր Լուսավորիչը գնում եր այդ սարի գլուխը, գիշերային աղանձության մեջ Նարեկ բաղելու, այն ժամանակ հրամայում եր և իսկույն

* Ընդված՝ կարդալ... ԽՄԲ.։

ոդի մեջ յերևում եր այդ կանթեղը և լույս տալիս, վորով նա կարողանում եր դրերը ջոկել և կարդալ։ Զգիտեմ ինչ եր հանցանքս, միայն յերբ հարցուցի, «Խալֆա՛, ո՞ւմ եր հրամայում». ճիպոտն յեղավ պատասխանը, այնպես վոր ցավիցը մղկտալով, վարպետիս ել կանթեղն ել մոքումս միասին շուլալեցի։— Գուցե թե այլ տեղերում մի փորը այլապես պահված լինի այս ավանդությունը, վեճ չունինք. մանավանդ մենք չենք կարդացել այդ մասին մի դրավոր հիշատակարան։ Ինչ վոր վարպետից լսել եյի, այն, վերևը դրեցի, ինչպես աստծու առջև, ամենայն հարազատությամբ։

Վոր աղդի մեջ կամենա թող լինի, բայց և այնպես չկա աշխարհիս յերեսին մի ավանդություն, վոր առանց ամենայն պատճառի առաջանար։ Այո՛, այդ ավանդությունքը, վորքան հեռանում են իրենց ծագման ժամանակից, այնքան շատ կերպարանափոխ են լինում, ընկնելով ժամանակների և հասկացողության աղդեցության տակ, մինչև այն աստիճան, վոր շատ անգամ դժար է լինում հասկանալ կամ մեկնել. բայց և այնպես անհնար է թե նոցա հիմքը յեղած չլինի կամ մի ստույգ պատահած իրողություն (թեև այլապես) կամ մի դաղափար, վորի այլաբանությունը* վերջի սերունդը ընդունում է պատկերաբար, առանց նոցա մեջ թաքնված ճշմարտության կամ փիլիսոփայության վերահասու լինելու։ Սոցա** որինակները խիստ շատ կան Ասիայում, ուր այլաբանական խոսվածքը և ձևը տիրապես սովորական եր, մանավանդ հին ժամանակներում. բայց ասիական այլաբանությունքը մի աննշան բաներ են համեմատելով հունական դյուցաբանության հետ։ «Բայց ի՞նչ ստղեօք տարփանք քեզ, և Բիւրասպի Աժդահակայ փցոմն և անճոռնի առասպելքն իցեն. և կամ է՞ր սակս ղմեզ պարսից անյարմար և անոճ բանից, մանաւանդ թէ առաւել վասն ամբաստանութեան առնես աշխատ... ի՞նչ քեզ առ այսոքիկ կարօտութիւն, առասպելք սուտք... Մի արդեօք յունական պերճ և ողո՛րկ առասպե՛լքն իցեն, հանդերձ պատճառաւ, որք զճշմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեանս ունին թագուցեալ...» այսպես եր*** գրում մեր անդուգական Քերթողահայրը, Սահակ Բագրատունուն****։

Ավանդությանց մեջ, ամենից ավելի անհատատարը, փոփոխության և աղճատանքի յենթարկվողը և նոցա ժամանակը։ Շատ անգամ ավանդությունը***** գրեթե անարատ մնալով յեպատես, փոխվում է նորա ժամանակը. այսինքն մի անցք, կամ մի իրողություն, վոր աստուգապես պատահած եր, դնենք, Թորոսի ժամանակ, այդ բանը համարվում է յեղած կամ Մինասի ժամանակ, վոր շատ առաջ եր ապրել Թորոսից կամ Նիկողոսի, վոր Թորո-

* Ընդված՝ հետո ժամանակ... ԽՄԲ.։
** Ընդված՝ չատ... ԽՄԲ.։
*** Ընդված՝ ասում... ԽՄԲ.։
**** Մովս. Խորեն. Պատմ. հայ.22 ե
***** Ընդված՝ պահվում է... ԽՄԲ.։

սեց շատ դարեր հետո եր ծնել: Այդ ժամանակի առաջ ու հետ խաղալը կախվում է Թորոսի, Մինասի և Նիկողոսի ազգի մեջ ունեցած խորհրդից, արժանավորությունից ու հատկությունից: Հայտնի չէ թե մի պատերազմ, մի քաջագործություն, մի հաղթություն չի վերագրվիլ մի սուրբի, վորպես նաև մի հրաշագործություն մի յերևելի զորավարի: Յեթե ազգը Թորոսի որով տեսել է մի խորհրդավոր* անցք, բայց Թորոսի վրա չնայվ համարում չունի**, ազգի հետագա զավակները այդ անցքը անպատճառ կվերեն Թորոսից և կվերագրեն մի մարդու, վոր կամ առաջ և ապրել Թորոսից կամ վերջը***, վորի վրա ազգը մեծ համարում ունի քաղաքականապես կամ կրոնապես, նայելով անցքի բնավորության: Ավանդությունքը, զրկվելով այսպես ժամանակագրական ճշտությունից, շատ անգամ այնքան շատ հավաքվում են մի մարդու վրա, վոր այդ մարդը շատ դարերից հետո դառնում է մի պահարան, մի շտեմարան աքանչելի անցքերի և գործերի. իսկ մյուս բոլոր մարդիկը, այն մեկ նշանավոր մարդու օգտի համար, զրկվում են իրենց ստուգապես ունեցածից: «Զի ամենայնի որ ունիցի տացի և յավելցի, և որ ոչն ունիցի, և զոր ունիցին բարձցի ի նմանէ»**. ճիշտ այսպիսի դիպվածներում է կատարվում:

Հայոց ազգը, Արագածի վրա կրակ կամ լույս չեթե չտեսներ. անհնար և, թե նա չեղած տեղից կանթեղ հնարեր և Լուսավորչին ուղարկեր այնտեղ Նարեկ քաղելու: Մենք այդ լույսը կամ կրակը Արագածի վրա ընդունում ենք վորպես իրողություն: Բայց ստիպյն, դժար է այժմ դատել թե այդ լույսը կամ կրակը Լուսավորչից առա՞ջ եր տեսել ազգը, թե՞ հետո: Լուսավորչի անունը այդ ավանդության հետ խառը տեսնելով չե կարելի պնդել, թե ստուգապես չորրորդ դարումն է յերևել այդ կրակը: Այո՛, կարո՛ղ եր և այն ժամանակ յերևիլ. մեր խոսքը այդ չե այլ այն, թե լոկ անունը չի կարող ընդունվիլ վորպես ապացուցություն ժամանակի, ա վ ա ն դ ու թ յ ա ն ց մ ե ջ:

Այդ լույսը կամ կրակը ընդունելով վորպես իրողություն, բնականաբար խնդիր է առաջ գալիս, թե ի՞նչ լույս կամ ի՞նչ կրակ յեղած պիտի լինի****: Հարկ չկա ասել, վոր բնական յերևույթը առասպելով մեկնաբանել մեր***** դործը չե. դրա փոխանակ առասպելյալ բնական յերևույթը իր մութական քողերից ազատել և բնության լուսով հասկանալ և հասկացնել «ի մեծ շինություն ազգին», մենք****** սիրում ենք վորպես ճշմարտություն:

Մարդը, վոչ միայն ֆիզիկապես, այլ և բարոյապես յեննթակա յե բնության ազդեցության. բնության տրած դարկը ցոլանում է ամեմիջապես մարդու

* Ջնջված՝ բան... ԽՄԲ.:
** Ջնջված՝ այդ... ԽՄԲ.:
*** Ջնջված՝ մեյն... ԽՄԲ.:
**** Ջնջված՝ այդ: ԽՄԲ.:
***** Ջնջված՝ դործը չէ՛ինելով... ԽՄԲ.:
****** Ջնջված՝ պիտի դեմեյինք դեպի բնության դերկը: ԽՄԲ.:

սրտում։ Մարդը իր գաղափարքը առնում է բնությունից։ Ինչ չափով ճանաչել և ուսել է նա բնությունը, համեմատ այդ չափին կլինի նորա գաղափարների և հասկացողությանց ազնվությունը։ Ահա մի օրենք, վոր բնավ բացառություն չունի։ Մարդի վոստայնից բարակ մետաֆիզիկական համակարգությանց բովանդակ գաղափարքը կան բնության մեջ. իսկ ինչ վոր չկա, այն ամենևին ան՛ւտ ե։ Բնությունը մի գիրք է, վոր պիտո չե կարդալ և ուղիղ հասկանալ. սխալ ըմբռնողությունքը մեծ վնասներ են տալիս։ Բնական չերևույթքը իրենց վսեմափառ կերպարանքով շատ անգամ սարսափեցնում են մարդուն. սա միանգամայն վոչնչանում է չերբ աչքի առջև տեսնում է մի այնպիսի ուժ, մի այնպիսի զորություն, այնպիսի տեսարան, վորի առջև տկարանում է վոչ լոկ մի մարդու, այլ և բովանդակ մարդկության ուժը։ Բնական չերևույթքը թեև վոչ այնպես ասասանեցուցիչ, ինչպես մի վուլկանի կատաղի արտահոսություն, կամ ինչպես մի թաթառ կամ փոթորիկ ովկիանի վրա, կամ Սահարի անապատում, թեև վոչ այնպես ապշեցուցիչ, ինչպես մի Ամազոն, Միսսիսիպի կամ Որինոկո, կամ մի ամերիկյան կուսական անտառ. թեև վոչ այնպես կործանաբեր և մահաւորիթ, ինչպես մի կայծակ, մի սամում, մի հեղեղ կամ հարյուրամյա ծառերը արմատից և տան ծածքը պատերից խլող մրրիկ, վո՛չ. այլ այնպիսի խաղաղ չերևույթք, վոր չեն պատճառում մի չերկյուղ, մի վնաս, մի մահ կամ մի կործանում, այլ մանավանդ զարմանք և հոգեզմայլություն և վորքան մարդու կարծելովը չունեչին մի հիմնական բնավորություն, ինչպես մյուս վերևում հիշվածները,—չեթե հասկանալի չլինին ժողովրդին և ըստ ատորվին նորան, կարող են, այո՛, չարաչար մոլորության պատճառ լինել։ Յեվ այդ մոլորությունքը, չերանի՛ թե, վորպես մի տեսական գաղափար, մնային մարդու գլխում. վո՛չ. նորա շատ անգամ մարմին են առնում Շիվայի, Դուրգայի և Վիշնուի[24] անհեթեթ կերպարանքներով և այնուհետև խարազան են դառնում մարդկության։

Վորքան մոլորությունք վոր կան աշխարհի չերեսին, այդ բոլորը ակզբնաբար ծագել են կամ բնությունը թյուր հասկանալուց, կամ խափան չհասկանալուց։ Յեվ այդ մոլորությունքը վոչինչ ուրիշ բանով չեն փարատվիլ, մերժվիլ, չեթե վոչ բնությունը ուղիղ հասկանալով։ Ահա այս է պատճառը, վոր ամեն բանական մարդ պիտի աշխատի վոչ միայն ինքը ուսանել բնության օրենքները, այլ և ուրիշին տրնել, չեթե ինքը ավելի փորձառած եր, քան թե այդ ուրիշը, վոր կամենում եր բանալ բնության դիրքը։

Ուզելով հասկանալ այն կրակը, կամ լույսը, վոր չերբեմն չերևել է Արարատի վրա և կամենալով փորը ի շատե տեղեկություն տալ ազգին նորա մասին, պետք եր, վոր մենք աչքի տակ առնվինք բնության մեջ (բացի չերկնքի լուսավորներից) չեղած բոլոր կրակները կամ լուսերը. քննեչինք նորանց, համեմատեչինք կանխեզի ավանդության և դորա պարադաների հետ և վորը անհամաձայն կլիներ առողջ դատողության մեր-

ժեղինք, իսկ վորի կողմում վոր լիներ ավելի հավանականություն, ընդունեյինք վորպես բնական պատճառ կանխիզի ավանդության։ Մենք, թեև այդ վերլուծությունը մեր մտքում արդեն արել ենք, բայց այստեղ ամբողջությամբ համառեցինք մեր ընթերցողների առջև էլ նույնը անել, պատճառ, խորհուրդ չտանք զուր տեղը խնդիրներ առաջարկելու մեջ, միմիայն մերժելու և չե՛ ասելու համար։ Որինակ, կրակ ի և լույս ունի Պրոմոնդի ասած կրակը (ջրածինը վառված թթվածնի ներկայությամբ), բայց դա ինքն իրեն չե առաջանում բնության մեջ. վրա յերկու, վոր այն ժամանակ բնավ հայտնի չեր։ Նույնպես և դալվանական լույսը, վոր դրեթե մեր որերի գյուտ և և այլ այսպիսիք։ Շատ ուրիշ կրակներ և լուսեր, վորպես Ճախնային գազը կամ դերեզմանական շրջմոլիկ կրակը, դնդաձև կամ կծկաձև* կայծակը, վուլկանական կրակը** և այլն և այլն իրենց գաղափարներով հա-

---

* Կծիկ բառից ենք առնում։ Այդ տեսակ, վորպես նաև առհասարակ կայծակի, վորոտմունքի, մեկ խոսքով բոլոր ողային էլեկտրահանության մասին, մանրամասն տեղեկություն ցանկացողը կարող է գտնել Արագո ֆրանսիացու ուսումնական աշխատության մեջ— կայծակի մասին։ Ցնորքի՛ պես թարգմանչին հայերեն, վորպես և նորա Ատեղաբաշխությունը, հասարակ ժողովրդի համար գրված։ Բայց այսպիսի դիտությանց վերաբերյալ գրքերը չե պետք և չե կարըդ թարգմանել ամեն մարդ, վոր գիտե լոկ ֆրանսիարեն։ Հարկավոր է, վոր թարգմանիչը լավ ուսած լինի իր թարգմանած գրքի առարկան, ապա թե վոչ թարգմանությունը կդառնա մածմաբրդուշ և գրականության անոգուտ, հանդիսարան լինելով սխալ ըմբռնողության, մթության, այո՛, շատ անգամ և հիմարության. թեև բնագրում իմաստության եր այն։

** Ահ այժմ, թողնելով Արագածի վուլկանականության խնդիրը, մինչև մի ավելի հարմար և ապող ժամանակ, գարձնում եմ հայ բնագետների ուշադրությունը և ուսումնասիրությանը հետևյալ խնդրի վրա։ Ամենին հայտնի չե, թե Արագածում ծծումբ կա՝ այս բանը վոչ միայն մենք հայերս դիտենք, այլ փիմիայի մասին գրված մի քանի ռուս գրքերում էլ խոսված և։ ավելցնելով, թե տակավին քննված չե այդ հանքը և թե պիտի է կարծել վոր էլ ծծումբ լինի։ բայց այս չե իմ ասելիքը։ Շատ սրժանահավատ մարդիկ, այո՛, և բուն աշտարակեցիք, վորոնց հետ տարիներով բնակակից եմ յեղած, չատ աշտարակեցիք նույնիսկ Աշտարակում, ուշադրեցիք և տաղաչափացիք և այլն և այլն միաբերան վկայած են ինձ, թե Արագածի վրա (չհիշեմ հատկապես վո՛ր տեղում) ծծումբը տան ծածկով վազած և տաք ջրի պես ծուլ ծուլ կալս և ընկնում քարերից։ Նարիճներըը դնում են և հրայանի ընդակով տալով վայր են ձգում, հավաքում և տանը ջրի մեջ ածում։ Այս բանը ինձ դյուժակդության քար և գործած և վաղուց դրավել և իմ պետք ածում։ Այս բանը ինձ դյուժակդության քար և գործած և վաղուց դրավել և իմ հարցասիրությունը։ Ջանասիրի, յերբ 1896ին եկել հասել էի, զրադված լինելով ապրելի դործերով, չհարդացա ժամանակ գտնել, վոր յերթայի իմ աչքով տեսնելու այս ծուլ ծուլ կալս ընկնող ծծումբի էությունը։ Մինչև այստեղ խոսածիցս իմարկե ընթերցողը հասկացավ, վոր իմ դյուժակդությունը ծծումբի լինելությունից չե, այլ նորա ծուլ ծուլ կալս ընկնելուց։ Հայտնի չե բնագետներին, վոր ծծումբը հալվում և միայն մոտ +80° Ռեոմյուր կամ ավելի ճիշտ խոսելով +101° Ցելսիուս (սանտիգրատ), իսկ այն ժամանակ է միայն վոր սառած ջրի պես սկսել ծուլ ծուլ կալս ընկնել, պետք է վոր առաջ հալվի։ Ցերեկ ատենը թե ծծումբը անմիջապես այդ քարերի մոտն է, այն ժամանակ նորան հավեցնելու համար պետք կլիտոնք վերոդրյալ [Ընդհան՝ Ջերմություն... ՆՄՐ.] ասպիճանի ջերմություն, ե՞նչ տեղից է Արագածի վրա այդ ջերմությունը։ Այս մեկ քար։ Ցերկրորդ, յերբ ծծումբը անմիջապես այդ քարերի մոտ չե, այլ նոցանից հեռու, այսինքն խորը, տարի մեջ. իսկ քարերի վրա նորա ճեղքվածքներից կախվում են միայն ծուլերը, այդ ավելի

կատարյալ ունկնդիր կանթեղի դարպասարին։ Նույնպես և լուսատու միջոցներից առաջացած կամ վերջապես մի մարդու ձեռքով վառված սովորական կրակի գազափարքը նույնպես համաձայն չեին կանթեղի ավանդության։

Հետո ի՛նչ դուս կեկավ. եկ վերինչ մնաց, այս չե, այն չե։

Վա՛յ, մնաց և մեր կարծիրով ամենի հավանականը, վոր կարող եր շատ անգամ յերևցած լինիլ և այսոր եկ յերևիլ վորպես Արագածի պլխին այնպես և ուրիշ տեղերում։ Մեր բոլոր հետաքննությունքը համոզեցին մեզ, թե այդ սքանչելի կանթեղը ուրիշ բան չե, յեթե վոչ սուրբ Հեղմոսի կրակը, վոր մի դիպվածում եկ անվանվում և Կաստոր և Պոլլուկս։

---

*Ծանրացնում և բանը· պատճառ այդպիսի դիպվածում ծծումբը պիտի վորպես չոգի բարձրանա սարի խորքից մինչև այդ քարերը· ծծումբը չոգիանալու համար կարող և +320°—Ռեամյուր (+400° ասանդիգրատ)· Ինչ տնդից և այս ջերմաստիճանը։ Գիտք չե մոռանալ, վոր այդ աստիճանը ջերմության հավասար և վոչ միայն նորան չոգիացնելու [Ջնջված՝ համար... ԽՄԲ·], այլև այդ վիճակի մեջ պահելու համար, [Ջնջված՝ վորովհետև մեծ... ԽՄԲ·] վորովհետև ջերմության աստիճանը իջածին պես, չոգին կփոխե իր վիճակը և վոքսին կարծր մարմին կնստի, այն համեմատաբար, սառը տեղում։ Եվ վորովհետև հեղուկ կամ կարծր մարմինը չի կարող ինքն իրեն ցածից դեպի վեր բարձրանալ, այլ պիտի վոր այդ փոխանցումը լինի շոգու կերպարանքով, ուրեմն պիտի յեղնթադրել, թե ծծումբի հանքից մինչև [Ջնջված՝ նորա... ԽՄԲ·] Արագածի այն տեղը, ուր յերևում են այդ ծուխերը, կա մի անցք, մի ճանապարհ, վոր ունի վերը դրած ջերմության։ Ծծումբի չոգին յերբ ճնշվում և, փոխվում և դնդի կարծր մարմին, դեպի վոչի, վոր հայտնի յե քիմիայի մեջ անունովս ծծմբածաղիկ· flor· sulphuris· վոր ծուլ ծուլ ծորելով ստանը, կարող և վերը հիշված +101°—։ Բացի սոցանից կան և ուրիշ մանրամասնություններ, վոր ավելորդ ենք համարում հիշել, հուսալով վոր ընթերցողը կհամանա մեր իրավունքը գյեղնելու։ Իրավ վոր մինչև այս բոլոր չեմ հանդիպում այս բանը։ Այս բանի մեջ կամ սուտ կա, ինչպես այն սքանչելի «ծննդեկի պես դեղնից լուսնող վոսկին և արծաթը». կամ դո՛ւն մի չհամակցողություն, վոր այսպես մթագնում և բանը։ Եվ թե ասվին, «հին ժամանակներից կամ և ընկած և գնալով վատրում ես», այդ դեռ կարելի յեր հավանալ· բայց ներկա ժամանակով են խոսում։ Ուրիշ բան չի մնում, յեթե վոչ ճիշտ քննության տակ ձգել, պատճառ, յեթե ստուգական կատարվում և Արագածի մեջ ծծմբի այդ չոգիացումը, կամ թե կախվածքը ցած են, քան թե հանքը, (յես չգիտեմ) ապա, նորա հալվելը, ուրեմն Արագածի մեջ տակավին կա ջերմություն։ Ցերեկի թե մեկ որ մեր քնադես յեղբայրակիցներից մեկը ուրախացներ մեզ մի ուռուցական չրջանկատ քննության Արագածի վարչության, թե վուլկանականության, թե յերկրաբանության, թե յերկրագիտության և թե հանքարանության վերաբերությամբ։ Իսկ թե չճանճքանա, բայց սոցանից, դորձ դնել և ջերմաչափ և ծանրաչափ և մագնիսյան ասլաք և մանքացույց, յեթե ուշադիր լինի Արագածի բույսերին, տունկերին և նորա վրա ապրող կենդանիներին, այն ժամանակ մեզ կմնա վոչ միայն ընդհակառակ լինել նորանից, այլև պարծենալ նորանով Եվրոպայի առջև, թե համենք տակերպատ չենք· ահավասիկ տալիս ենք քեզ տակոսիքը քանքարի, վոր դու մեզ տվիր, թեպետ կորած համարելով Ասիոնական չրջանակներուն։ Արագածի վրա յելնելը Ջամբռատոյի վրա յելնելը չե, ուր մնաց վոր, հոյակապ Հումբոլդի թեթև վոտքից հետո արդեն յերկու անգամ կոխեցին Ջամբռատոյի գագաթը (մի քանի վոտնաչափ եկ ավելի բարձր, Հումբոլդը չեր հասել ճիշտ գագաթին) Ալբիոնի հարցասեր զավակները[23]։ Այս մարդիկը գերազ ուսումնական ճանապարհորդք եյին և վոչ թե կատակերգությունից հանճնաբարության կամ քաղաքերության տոգած ասպետանավորք։

Այդ կրակի վրա եվ սուրբի անունը վոր կպել ե մանավանդ ստիպում ե մեզ մի փոքր տեղեկություն տալ նորա մասին, վորպեսզի ընթերցողը մի գերբնական բան չհամարեն սորան և չասեն, վոր յեթե սուրբի միջնորդությամբ դարձյալ պիտի մեկնվի այդ կրակը, եվ ո՛ր լուսավորիչը Թողած գնանք մի սուրբ Հելմոսի քամակից, վորին բնավ մեր յեկեղեցին չե ճանաչում։ Սուրբ Հելմոս խոսքը, ինչպես կարծում են Հելենեյի ավերանքից ե առաջացել, վորովհետև այդ կրակը քրիստոնեությունից առաջ եվ նշմարած են. և ինչպես առաջ. այնպես և քրիստոնեության ժամանակ, նույն այդ կրակը, ինչպես ասացինք, անվանվում ե մի դիպվածում Կաստոր և Պոլլուկս, վորի մասին կասենք մի յերկու խոսք։ Իսկ թե ի՛նչ ե այդ կրակը, ահա մեր ծանոթաբանության բուն խորհուրդը։

Յենթադրում ենք, թե ընթերցողը փոքր ի շատե գաղափար ունի ելեքտրականության վրա, ապա յեթե այս չենթադրելով խոսելու լինինք, այն ժամանակ պիտի ստիպվինք ամբողջ ելեքտրականության Համակարգությունը* ավանդել, վոր կամ ֆիզիկայի գործ ե (այսինքն ֆիզիկայի մասին գրված գրքի) կամ մի առանձին հատվածի ելեքտրականության մասին և վոչ բնավ կարելի յե թույլ տալ այս տեղում։ Ուստի**, յենթադրում ենք, ինչպես ասացինք, մի փոքր գիտություն, մի գաղափար ելեքտրականության մասին։

Յերկրագունդի և ամպի մեջ առաջանում են ելեքտրական լարողություններ, վոր առանձնանում են ամպի և յերկրագունդի մեջ յեղած ոդով, վորովհետև ոդը վատ առաջնորդ ե ելեքտրականության։ Յերկրագունդի և ամպի մեջ առաջացած ելեքտրականությունքը զանազան են, նոցանից մինը անվանվում ե դրական, իսկ մյուսը բացասական։ Յեվ վորովհետև այս ելեքտրականությունքը այլասեռ են, ուստի բնական որենքով նոքա քաշվում են, վոր միանան*** իրար հետ։ Յեթե ամպի ելեքտրականությունը հանկարծապես միանա յերկրագունդի ելեքտրականության հետ, այն ժամանակ այդ միավորությունը զգալի յե լինում մեզ վորպես կայծակ։ Յերկու**** զանազան ամպերի մեջ եվ գոյանում են շատ անգամ այն վերը հիշված յերկու այլասեռ ելեքտրականությունքը և յերբ նոքա իրենց այդ ոդեղեն բարձրության մեջ միանում են իրար հետ, մենք տեսնում ենք նոցա լույսը— փայլակ, և լսում ենք նոցա միավորությունից առաջացած ձայնը— վորոտ։ Բայց այժմ այս վերջինը մեզ պետք չե. մեզ հարկավոր ե և միավորությունը ամպի և յերկրագունդի ելեքտրականությանց. բայց վոչ մի կործանաբեր կայծակի կերպարանքով։ Յերբ, ինչպես ասացինք, յերկրագունդի և ամպի մեջ առաջացել են այն այլասեռ ելեքտրականությունքը և յերբ յուրաքանչյուրը նոցանից***** ոդի միջնորդությամբ ա-

---

* Ջնջված՝ ուսումնասիրությունը ԽՄԲ.։
** Ջնջված՝ յենթադրելով... ԽՄԲ.։
*** Ջնջված՝ միմյանց... ԽՄԲ.։
**** Ջնջված՝ ամպեր... ԽՄԲ.։
***** Ջնջված՝ զատանվում են... ԽՄԲ.։

առանձնացած լինելով գտնվում և լռված վիճակում, այն ժամանակ (նույնպես ասել ենք) ձգտում են չեզոքանալ— չեմ կարելի չև այսպես ասել— այսինքն միավորվիլ: Ներկու այլասեռ էլեքտրականությունքն էլ առանձին առանձին կարող են իրենց ներկայությունը հայտնել ընդոդին և այն ժամանակ նոքա հայտնի չեն. իսկ երբ միացան, էլ չեն ընկնում զգացողության տակ և անհայտանում են: Սոցա հանկարծական միավորության մասին խոսելանք— հայտնի չև թե վորպես ծովից մի կաթիլ ջուր առնելով— և ասացինք, վոր այդ միավորությունը զգալի չի լինում կամ վորպես կայծակ, կամ վորպես փայլակ ու վորոտ: Սորա հակառակ, այդ էլեքտրականությանց մեղմաբար, այսինքն աստիճան աստիճան միավորությունը, շատ անգամ իսպառ անզգալի չև լինում մեզ. իսկ երբեմն, մենք տեսնում ենք այն լույսը, վոր սուրբ Հելմոսի կրակի անունով հայտնի չև դիտության մեջ:

Հուլիոս Կեսարի, Տիտոս Լիվիոսի, Պլուտարքոսի, Պրոկոպիոսի, Սենեքայի և Պլինիոսի գրքերում շատ անգամ հիշվում և մի լույս, վոր յերևել և, կամ առանձին առանձին զինվորնևրի, կամ նոցա ամբողջ լեգեոնի նիզակների սլաքներից. նույնպես խոսվում և և նավերի կայմերի լուսավորության մասին: Այս բանի, այսինքն ասված գրքերում, շատ անգամ այս լուսերի* հիշատակվելու վրա հիմնված և կարծիքը, թե հին ժամանակներում ավելի տեսել և պատահել այդ յերևույթը, քան թե նոր ժամանակներում: Բայց նույնպես, յենթադրվում և, վոր հին ժամանակներում հմայողները և հավաղեաները (aygur) ոգուտ քաղելով ամեն կարգից դուրս յերևույթից, նոցա վրա իրենց դուշակությունը հիմնելով և ժողովրդին խաբելով, ավելի խնամք են ունեցել այդպիսի բաները գրով մինչև մեզ հասցնելու:

Բայց, այժմ, կայծակից առաջ կամ շուտով կայծակից հետո, յերե մի նկատող մարդ ուշադրություն դարձնե բարձր աշտարակի կամ շանթարգելի սուր ծայրին, միշտ կարող և տեսնել սուրբ Հելմոսի կրակը: Նույնպես և բարձր ատերի վրա կարող և յերևել այս կրակը, վորպես շատ ճառագայթների խուրձ, յերբեմն բոլորշի և յերբեմն լեզվաձև իր սուր ծայրով դեպի վեր, ինչպես ճրագի կամ կանթեղի լուսյա. բայց մի վոտնաչափ կամ կես կազ յերկայնությամբ: Նավերի կայմերի վրա, նույնպես հաճախ և պատահում այս. և յերե միայն մի լեզվաձև լույս և յերևում, անապաշտ նավաստիքը շատ բարկանում են, վորովհետև նոքա հավատում են թե մրրիկ կլինի այնուհետև. իսկ թե յերկու հատ***, այդ դիպվածում նոքան ասում են Կաստոր և Պոլլուկս,— նավաստիքը ուրախանում են, վորովհետև աջող նավարկություն են բերում Կաստորը և Պոլլուկսը, հունական անտիկյան առասպելի հերոսքը:

---

* Ընդված՝ կամ վորպես... ԽՄԲ.:

** Ընդված՝ հիշատակությունը... ԽՄԲ.:

*** Ընդված՝ լեզվաձև լույս և յերևում... ԽՄԲ.:

Շատ անգամ պատահում է, որ յեկեղեցիների գլխի խաչերը լուսավորվում են այսպիսի ելեքտրական լուսով. շատ անգամ ագռավները թռչելով այն ամպի մոտից, որի ելեքտրականությունը մեղմաբար միանում էր յերկրագունդի ելեքտրականության հետ, յերևել են զարմացած և ապշած ամբոխին լուսեղեն կատուցով։ Նույն այս բնական յերևույթը նկատված է շատ անգամ և ցած տեղերում. շատ անգամ ծառերի ճյուղերը լուսավորված են. շատ անգամ մարդիկ կարծել են, թե երվում են կրակում, և սարսափել են իրենք իրենց տեսնելով «ի հանդերձս լուսաւորս»։

«Կայծակի ժամանակ, հունվարի 8-ին, 1839ին,— ասում է հռչակավոր Արագոն, իր ուսումնական քննության մեջ՝ կայծակի մասին. (Notice Scientifique sur le Tonnérc, h. XXX)— յերբ կայծակը զարկեց Հասսելայան յեկեղեցու աշտարակին, Ցվոլլեյի և Հասսելաի միջոցում (Հոլլանդիո մեջ, առաջինն ամրոց է, այժմ դրեթե ավերակ, իսկ յերկրորդը քաղաք) դանված գեղացիք նկատեցին մի ուտարոտի յերևույթ։ Վերը հիշված կայծակի զարկելուց մի քանի ակնթարթ առաջ, նոքա տեսան, որ բոլոր նոցա հալավները (շորերը) կրակված են։ Այդ կրակը անցնելու (մարելու, հանգցնելու) համար գուր տեղը աշխատելու ժամանակ սարսափանքով նկատեցին, որ ծառերը և նավի կայմերը նույն բոցով էին փայլում։ Կայծակի զարկելն ու այդ սքանչելի կրակների անհայտանալը մի ակընթարթում կատարվեցավ»[26]։

Վո՞րքան ուրիշ այսպիսի դիպվածներ առաջ և քերում Արագոն, վերը հիշված հոյակապ աշխատությյան մեջ. վո՞րքան այսպիսիք հիշված են Ցիմմերմանի Ֆիզիկայի մեջ[27], մենք չենք ուղում ամենը այստեղ դնել։ Այլ այնչափ միայն հիշեցինք, որ տեսնեն և հավատան, թե այդ կրակները և լուսերը վոչ բարձր են ամպերից և վոչ առանց յերկրի գործակցության [են] առաջանում։ Բնությունը, ինքը, վոչ թե մի լոկ հրաշք է, այլ բարձր քան թե հրաշքը և այս պիտի ստիպվի ընդունել ամեն մարդ, վոր ուսումնասիրում է նորան։ Բնությունը միայն կարող է հասկացնել մեզ արարչի մեծությունը և փառքը. «Երկինք պատմեն զփառս աստուծոյ և զարարածս ձեռաց նորա պատմէ տեսանում, տիեզերքի անչափելի տարածության մեջ։ «Դնէ զծիւն որպէս հաստատութիւն»[28]։ Արարիչը, մեկ անգամ ստեղծելով բնությունը տվել է նորան անխախտելի և սուրբ օրենքներ, վոր բնավ և մեկ մազի չափ խոտորումնք չունին. «Սահման եդ և ոչ անցանեն»*։ Այդ օրենքներով կատարվում է ամեն ինչ, վոր մենք տեսնում ենք, կամ ինչ վոր բնավ չենք տեսնում, տիեզերքի անչափելի տարածության մեջ։ «Դնէ զծիւն որպէս պատառս զգեստ և զմէգ որպէս փոշի ցանեաց։ Արկանէ զսառն որպէս պատառս

---

* «Եւ ամենայն արարածք անբասութեամբ կատարեն զհրամանս պատուիրանի Նորա, ոչ երբէք անցանեն ըստ եդեալ սահմանն Իւրեանց»։ Եղիշէ վրդ. Վասն վարդանայ և Հայոց պատերազմին, Մոսկվա. 1861, յեր. 66։ բոլոր այն նամակից, վոր Արտաշատի սուրբ Հոգովը վրկց Հազկերտին։

առաջի ցրտով նորա ո՞ կարէ կալ։ Ի՛նչ վսեմ նկարագրութիւն։ Բայց այս բոլորը լինում են այն մեկ անգամ դրված որենքով. ինչպես մարդը ապրում է և բազմանում է, թեև առաջին մարդը միայն դուրս եր յեկած բոլ աստուծու ձեռքից։ Ամեն հրաշք, վոր ո՛վ և իցե կարող եր մտածել, շատ ուռո՛ր, շատ տկա՛ր և շատ չնչի՛ն է, քան թե այն հրաշքը, վոր արարիչը, բնութեան միջնորդութեամբ ցույց է տալիս մեզ ամեն որ, ամեն րոպե, և ամեն վայրկեան։ Նա չե հերետիկոսը, վոր քննելով և ուսումնասիրելով բնութիւնը ամեն վայրկեան ստիպվում է ասել բնութեան Ճարտարապետին, իր սրտի աղոթարանից. «Ո՜րպէս զի մեծ են գործք քո տէր». այլ նա, վոր վոչ միայն ինքը չե ուզում և չկամի խմասատասիրել բնութիւնը, «զերկինս և զերկիր զգործս մատանց նորա, զլուսին և զաստեղս զորս նա հաստատեաց», վո՛չ. հերիք չե այս, այլև արգելում է վոր ուրիշն էլ նորա կամավոր կուրութեան հետևելով չտեսնե և չուսանի. «ինքն ոչ մտանէ և որոց մտանեն արգելու»[30]։ Նա, վոր այս բոլորի մեղքը ծածկելու համար, ինքը իր ըշվառ գլխից տեսութիւնք և համակարգութիւնք է հնարում բնդդեմ բնութեան աստվածադիր սահմաններին, քաշքշելով այն որենքները, վոր մարդու* կամքին բնավ չեն** յենթարկվում, այո՛, այդպիսին աստուծու արտոնութիւնն է հափշտակում յերկրի յերեսից։

Դո՛ւ, վոր Նեապոլսի մեջ ցույց ես տալիս ինձ[31] մի շիշ, ուր կա մի քանի կաթիլ արյուն և պատմելով, թե այդ արյունը այս կամ այն ժամանակ յես և գալիս, ուզում ես դրանով քարոզել ինձ այլև աստվածը, վորի դրած որենքները, մի ակնթարթում, ինչպես Յերեմիայի «Կաթսայ յեռանդեան» յեռացնում են ահագին ովկիանը, յես խելագա՞ր եմ, վոր ովկիանի մեծափառ հրաշքը թողած, քո յերկու կաթիլ չորցած արյունին նայիմ. և այն ժամանակ, յերբ բյուրավոր այդպիսի կաթիլներ, բայց կենդանի արյունի, ամեն վայրկյան չեռում են և շրջան են կատարում իմ յերակներում։

Մեծ Ճարտարապետը, վոր քե՛զ ստեղծել և առանց քո ոգնության կամ խորհրդին կարուտելու, մի՞թե կարող և այսօր քո աուտին։

«Զի՞նչ հաղորդութիւն լուսոյ ընդ խաւարի»... «Սատան ի հօրէն սատանայէ է»... «Հանէ՛ք զդա ի խաւարն արտաքին»[31]։

Թե ո՛ւր և հասած այժմ բնական դիտութիւնը և ի՛նչ անհասկանալի քրմական գազանիքներ քակում և նա, ի՛նչ համարձակ քայլափոխներ և անում, այդ մասին հարկաւորավոր են ապացույցը։ Նույնիսկ մեր հիշած Յեմմերմանի ֆիզիկան,— ուր եղեքարական մասին մեջ, առաջ բերելով Բեն Դավիթի, Միխայելիսի և Լիհտենբերգի ուսումնական քննութիւնքը (այս բաները հիշված են մասնավորապես և Արագոյի կայծակի մասին աշխա-

---

* Ընդված՝ դատաստանին... ԽՄԲ.։

** Ընդված՝ յենթարկվել... ԽՄԲ.։

տության մեջ) զարմանալի պարզությամբ բացում և տապանակի և վկայության խորանի գաղտնիքը,— թեև ապացույց չեն։

Հոգով չափ ցանկալի չեր, որ մեր բնագետ յեղբայրակիցքը աշխատություն հանձն առնուին այդ ֆիզիկան թարգմանելու։ Այդ գործը գրված է հասարակ ժողովրդի համար և կարող ենք հաստատապես վկայել, որ ամեն կարդի (անշուշտ, ուշադրությամբ կարդացող) ժողովրդին հասկանալի կլինի, յեթե արժանապես թարգմանվի։ Բնական գիտությանց բոլոր ճյուղերը կապված են ֆիզիկայի հետ. այնպես, որ դժվա՛ր և ձեռք զարկել բնագիտության մյուս ճյուղերը մշակելու կամ թարգմանելու մեր ազգի համար, մինչև որ չենթադրվի թե ֆիզիկան ծանոթ և նորան փոքր ի շատե։

Բայց, ինչպես մի անգամ արդեն ասացինք, այսպիսի գրքերը պիտի թարգմանվին լավ բնագետների ձեռքով. պատճառ, լոկ թարգմանությունը շատ անգամ բերի չե լինում, թեև թարգմանիչը քաջ գիտեր լեզուն։ Գիտությունը յերբեք չե կանգնում մի կետի վրա, այլ միշտ առաջ է գնում. ամեն որ լինում են նորանոր հայտագործություններ և նորանոր պարզաբանություններ գիտության մասին և շատ անգամ անհատականալի տեղերի։ Թարգմանիչը, մի այդպիսի գիրք թարգմանելու ժամանակ, պարտակա՛ն է նորա բոլոր դրությունքը համեմատել գիտության այն վիճակի հետ, ինչ վիճակում որ գտնվում է սա նորա թարգմանության միջոցին։ Մեր հիշած ֆիզիկայի բնագիրը կարո՛ղ է փոփոխությանց, ավելվածքների և ծանոթաբանությանց։ Նորա ուսս թարգմանիչը բավական մշակել և այդ գիրքը, բայց ե՛լ մի քանի տեղ կան, որ պետք ունեին ավելի պարզաբանության և ծանոթաբանության։ Լոկ, խոսքով հանդես յեկած չհամարվելու համար, մենք հրավիրում ենք մեր բնագետ յեղբայրակիցների ուշադրությունը մեսմերականության վրա, որ Գերմանացի նատուր-ֆիլոսոֆների (բնափիլիսոփա) մեջ, մինչև այսոր ել տեղիք ունի և գիտությունը բնա՛վ չե կարող ընդունել։ Վորպես թե արբեցությունից պատճառված «ինքնակիզության» խնդրի մեջ, Մունքեյի և Քուիփի սքանչելի կարծիքները ճշմարտանմանի կերպով առաջ են բերված, բավական քիմիական մանրամասնությամբ, մինչդեռ նոցա ընդդեմ մերժողությունքը առանց բացատրության, լոկ Լավուազիե, Դեվի և Լիբիգ հեղինակների անուններով, առանց ասում ենք, գոնե՛ մասնավորապես հիշելու թե ի՛նչ ճանապարհով հասել եյին այս հեղինակները իրենց մերժողական դրության։ Այնտեղ հիշվում է Լիբիգի 1844 ի կատարած քննողությունը միայն անունով, մինչդեռ Լիբիգը իր նամակների չորրորդ տպագրության մեջ, վոչ միայն մանրամասն և հիմնավոր կերպով խոսում է ընդդեմ սքանչելի ինքնակիզության, 1850 թ. հետո կատարած քննողությամբ, այլև ավելվածի մեջ հանդես և հանել մի քանի հարցասիրության արժանի բղխակցություններ[32]։ Ցիմմերմանը, այո՛, չե ընդունում մեսմերականությունը, կամ «ինքնակիզությունը» և չե բնավ պաշտպանում. բայց նոցա

ընդդեմ կային քաներ, վոր ուսումնական գերմանացին զանց և արել մեջ բերել և մի քանի բանի ել զուր հանդես տվել։

Ահա այս տեսակ բաներ ամեն դիտությանց վերաբերյալ առաջնորդական գրքերի մեջ կարող են պատահիլ, վորպես և մեր հիշած գրքի մեջ ել կան, վորոնց հեղինակքը, չեթե այսոր գրելու լինելին այդ բաները, անշուշտ, այնպես գրելու չեյին. այս պատճառով, այդպիսի գրքերի թարգմանիչը պիտի լավ դիտենա իր առարկան և դիտության ներկա վիճակը, վորպեսզի հնացած և արդեն մերժված մի դրություն չդնե ուսանել կամեցողի առջևը վորպես դիտության ներկա խոսքը։

Մեղ թվում է, թե մեծ ծառայություն ցույց տված կլիներ ազգին, չեթե պ. Խատիսյանցը, Թիֆլիզի մագնիսյան դիտանոցի պրոֆ վարավարիչը, աշխատություն հանձն առնուր մեր հիշած ֆիզիկան հայերեն մշակելու։ Անշուշտ, չեթե միայն դպրոցներում, համակարգաբար դաս տալու կամ ուսանելու համար լիներ այդ մշակությունը, այն ժամանակ, Յապեն և ժամեն ֆրանսիացի բնագետների հոչակավ ֆիզիկանքը իրենց կքաշելին մեր ուշադրությունը։ Բայց մեր խոսքը հասարակ ժողովրդի ոգտին վրա չե, բնև, այո՛, Յիմնարկանի ֆիզիկան վո՛չ բնավ անոգուտ է և ուսանողներին։

Հակամետ եմ կարծել, վոր մեր պրոֆեսորը կարդալով, իմ մինչև այստեղ առաջ տարած խոսքերը, կասեն թե «այդ բոլորը մեզ մի անծանոթ կամ նոր բաներ չեն, մենք այդ ամենը գիտենք»։ Յես լավ գիտեմ, վոր այն դուրը, վորտեղից յես ես մտնում, բայց և ամեն մարդու համար և վկայում եմ, վոր ինձանից լավ իմացողներ ել կան. բայց այդ ավելի վատ և նոցա համար, վոր* ինձ պիտի ասեն, թե իրենք վաղուց գիտեն իմ ասածները։ «Եթէ կույրք էիք ոչ էր ձեր մեղ. բայց արդ տեսանէք և մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են»[33]։

Լույսը և խավարը միմյանց այն աստիճանի ներհակ բաներ են, վոր յերկուքը միասին չեն կարող լինել մի տեղում. և չեթե մեր պրոֆեսորը, վորպես սիրելի յե մեզ կարծել, ուզում են փարատել և մեկ որ առաջ տեսնել ազգի աղատությունը խավարից, ապա ուրեմն պիտի լույս գործ դնեն։ Խավարը, վո՛չ ինքն իրեն կփարատվի և վոչ խավարով կամ առասպելներով։

Մեղադրելի չե ժողովուրդը**, չեթե վազում և դեպի գերբնականը, մինչդեռ Արագածի վրա յերևացած լույսը իրողություն և իսկ նորա բնական պատճառը նորան անհայտ։ Սուտակալի վնասներ և ավերածություններ բերում են այս կանխամուտ կարծիքները, վոր առաջացած եյին տգիտությունից։

---

* Ջնջված՝ մեզ... ԽՄՐ.

** «Խալխի մեղքը չի՛, վոր ճամփից դուս են եկել, իրար մոռացել. մեղ նման կարդացողի վոսկերը պետք է ծառիցը կապած. ամսով սոված պահած։ Ախր թե չատ առնողները չատ կպահանջեն, բան դատաստանի օրը ի՞նչ ջուղաբ կտան ինձ նման գրի սևն ու

Անի քաղաքի բնական յերկրաշարժից* կործանումը միթե չե՞ վերագրվել մի վարդապետի նզովքի և այդ ավանդությունը մինչև այսօր նստած չե՞ ազգի մեջ[35]: Հայաստանից այնքան բազմության դուրս գնալն նորա թափառական պանդխտությունը Արևմտյան Յեվրոպայի մեջ, նորա քաշածները և այդ պատճառով Շիրակի դավառի ամայանալը, վորպես նաև Անի քաղաքի ավերակ մնալը, այդ նզովքի պատճառով չե՞: «Անի քաղաքը անիծված ե. ո՛վ վոր այնտեղ բնակվի, նույնպես կանիծվի», այս չե՞ մինչև այսօր ազգի ամենամեծ մասի գաղափարը: Ահա միջնադարյան սքանչելի ուղղության մեկ արդյունքն ել. այսպիսիներ վո՞րքան կան: Մենք գրագետներ գիտենք (իրենք ասում են թե գրագետ են), վոր ժողովրդի աչքը բանալը, հերետիկոսություն են համարում, հանդգնաբար հրատարակելով: Կցանկանայինք իմանալ, թե ժողովրդի մոլորության պատճառ լինելը, յերկրից յերկիր տարագրելը և բազդի անգութ հարվածներին մատնելը, յոթ սարոք ի՛նչ ուղղափառություն ե: Թո՛ղ գժոխքի գամփռ մատենի մեջ գրե մեր անունը պարոն Բհհեղզեբուղը, միայն թե մենք բյուրավոր ժողովրդի մահին, տառապանքին պատճառ յեղած չլինինք: «Ովսաիւք խնդրեի ես իսկ ի՛նքն նզո՛վ լինիլ ի Քրիստոսէ, վասն եղբարց և ազգականաց իմոց ըստ մարմնոյ, որ են իսրայէլացիք»: (Թուղթ Պօղոսի առ Հռովմայեցիս, Գլ. Թ. համար 3):

Թո՛ղ չկարծվի, թե մենք ազիտաբար զարմանում ենք այս նեղսիրտ և հալածասեր ուղղության վրա. քա՛վ լիցի՛: Բոլոր Յեվրոպան անցավ այդ կամուրջից. հայտնի չե, թե կարգը, մեկ որ մեզ ել պիտի հասներ. և ու-

---

սիպտակը իմացողները, վոր ել ուրիշ բան չենք ֆիքր անում, հենց ուզում ենք՝ լավ ուտենք, լավ խմենք, քյահլան ձիու վրա նստինք, չալ չալ մանեքները ջրմներուսա չխկչխկացնելով, ձեռներիս դողդոջալով, խաղացնելով ման պանք, քեֆ ու մարաքյա աննենք. Շինած արագ կոնծիլը, կախեիու գինին անուչանուչ խմիլը, կառեիով (կառք), դրոշկով, վառավոր, ուռած ուռած ման գալը, գառ, դումաչ հագնիլը, մաչիլը, նոքար բեքարի, ձեռին ջուր ածելը, յերեսին հով տալը, տաք յորդանի տակին, վարսուկ դոշակի մեջում ընթռչին ու թավալ տալը, վոտ ու գլուխ գարգարիլը՝ մեզ թե գժոզքը չասնին, դրախտը ըսկի չեն տանիլ՝ հարկիզ»: Արծրունց, վիբե Հայաստանի, յեր. 86:

* Մի քանի յերես առաջ ասացինք, թե մեջին դարերից հետո յեկած նոր դարերը չունցան առանց ազդեցության. կարծում ենք, թե կարո՛ղ և ոդնել մեզ այդ բանը վորոշ կերպով ցույց տալու համար, յեթե [Ջնջված՝ ցույց տանք... ՄՄԲ.] ասենք, վոր [Ջնջված՝ տասնը և յոթը... ՄՄԲ.] տասն և ութ դարու սկզբում հայ վարդապետը, խոսելով յերկրաշարժության վրա, հաստատողապես վկայարերում և նորան բնական պատճառի: Ջենար Գլակի գերքը, վոր առաջին անգամ տպված և կոստանդնուպոլիս 1719 թ. (Տուռմորի Ռ.ճԿԸ) ունի իր մեջ այդ գերքը ասել տվող Հովհաննես վարդապետի պատմագրական հիշատակարանը, ուր այս վարդապետը, 1709 թ. (Ռ.ճԾԸ) Տարոնում պատահած յերկրաշարժը այսպես և մեկնում. «Հողմ ոչ ներհակաց պատահեալ ի ներքոյ երկրի, մեծ յերկրաշարժը այսպես և մեկնում. «Հողմ ոչ ներհակաց պատահեալ ի ներքոյ երկրի, յանկարծ եկն թնդմամբ շարժեցաւ երկիր ի հիմանէ անտե, ակսանելով յեկեղեցւոյ գավառէն և հասանելով առ մեզ»[34]: Ավելորդ ե ասել, վոր մենք այս կարծիքի տերը չենք, բայց առաջ բերինք վորպես վկայություն մեր խոսքին, վոր թե հասկացողությունը նզովքից դեպի սարքերկրյա հողմերն ե անցե, արդեն առաջադիմություն ե cet, déja qelquc chosel

բա՛խ ենք, վոր հասել ե. պատճառ, դա ցույց ե տալիս մեզ ազգի առաջադիմության։ Մանավանդ սրտաշարժ ե անմահ Գալիլեյի գլխի անցքը, վոր իր աստեղաբաշխական և բնագիտական հավիտենակա՛ն գյուտերի պատճառով, այլև Կոպերնիկի տիեզերական համակարգությունը պաշտպանելով, իր յոթանասուն տարեկան հասակում հալածվեցավ տմարդի ինկվիզիցիոնից և շարշարվեցավ նորա խավար բանտերում։ Այնտեղ ստիպեցին նորան գլխաբաց և ծնկաչոք կարդալ մի արհամարհելի և պժգալի յերդմանագիր,— բոլորովի՛ն արժանի նորա շարադրողներին,—*

* 1637 ի հունիսի 20 ի հրովարտակով դատապարտվեցավ Գալիլեյը, Ուրբանոս ութերորդի (Հռովմի պապի) ժամանակ։ Ահա նորա հրաժարական յերդմնագրի պատճենը։ «Ես Գալիլեո Գալիլեյի, 70 տարեկան, հանդուցյալ Վինչենտո Գալիլեո Ֆլորենտացու վորդի, անձամբ, անձին ներկա լինելով էաոտրանի առաջը և ծունկ չոքած ձեր առջևը, ո՛վ, համաչխարհական քրիստոնեական հասարակապետության սրբազնազուն կարդինալք, հերետիկոսական չարության ընդդեմ ընդհանրական ինկվիզիտորք. և աչքիս առաջը ունենալով սուրբ ավետարանը, վորին հպավորվում եմ իմ սեփական ձեռքերով, յերդնում եմ, թե միշտ հավատացել եմ, այժմ հավատում եմ և, աստուծու ողնությամբ, միշտ պիտի հավատամ այն ամեն բանին, ինչ վոր պահում և, քարոզում և և վարդապետում և սուրբը, հռովմականքրիստական, առաքելական յեկեղեցին։ Բայց վորովհետև սրբազան դատարանը իր դատակնքով հրամայեց ինձ բոլորովին թողուլ այն սուտ ուսումը, վոր հաստատում ևր, թե Արեգակը անշարժ կոսած և տիեզերքի կենտրոնում, իսկ Յերկիրը չի գտնվում այդ կենտրոնում և շարժում և, և վորովհետև յես պետք չեր, վոր այլ ևս վարդապետության հետևելի, նորան պաշտպանելի, վորևիցե կերպով ուսուցանելի, խոսքով թե գրով և նորանից հետո, յերբ հայտնել եյին ինձ, թե այդ վարդապետությունը ընդդեմ ե սուրբ գրքին, յես գրեցի և տպեցի մի գիրք, ուր խոսվում և հիշված դատապարտված վարդապետության մասին, ուր սուրա պաշտպանության համար առաջ են բերված սաստկագոտ համոզիչ փաստեր և առանց վճռա կան վերջաբանության. այս պատճառով սաստիկ կասկածանքի տակ ձգեցի իմ անձը վորպես հետևող այն հերետիկոսական վարդապետությանը,— թե [Ջնջված՝ Արեգակը··· ԽՄԲ.] անշարժ կանգնած և տիեզերքի կենտրոնում Արեգակը և վոչ Յերկիրը, վոր շարժում ե։ Այս պատճառով, ուզելով անհետացնել ձեր սրբազանության և ամեն կաթոլիկի մտքերից իմ ընդդեմ, այդպիսի սաստիկ, բայց արդարացի կասկածանքը, մտքուր սրտով, և ընդհանուր հավատով, յես հրաժարվում եմ, նզովում եմ և ատում եմ վերը հիշված սղանդները և մոլորությունքը, և առհասարակ ամեն ուրիշ մոլորություն, վոր ընդդեմ ե սուրբ հռովմականքրիստական յեկեղեցուն. յես յերդնում եմ, վոր այսուհետև չպիտի ասեմ, չպիտի հաստատեմ վոչ բերանացի և վոչ դրավոր վոչ մի բան, վոր կարող ևր վերստին իմ ընդդեմ հանել այսպիսի կասկածանք, և թե իմանամ վորևիցե հերետիկոսի կամ հերետիկոսության կասկած ավողի մասին, այն ժամանակ պիտի [Ջնջված՝ տեղևլություն տամ··· ԽՄԲ.] իմաց տամ և մատնեմ նորան ինկվիզիցիոնի սրբազան դատարանին, կամ [Ջնջված՝ այն տեղի··· ԽՄԲ.] ինկվիզիտորին այն տեղի, ուր յես գտնվիմ։ Բայց սորանից, յես յերդնում եմ և խոստանում եմ, վոր հատարելապես կկյանեմ և կքաշեմ բոլոր ապաչխարանքը, վոր դրված են այժմ իմ վրա, կամ վոր այսուհետև կդրվին սրբազան ինկվիզիցիոնի ձեռքով. և յեթե յես հակառակ վարվիմ իմ այժմ ասած խոսքերից, վորին և իջե, հավատացնելուս, խոստանալուս և յերդումիս, վորից ատված ազատեր այն ժամանակ յենթարկվում եմ պատիժներին, մահապարտության և տանջանքին, վոր այս տեսակ հանցանքների համար դրված են սրբազան կանոններով և ուրիշ տիեզերական և տեղական ժողովների վճռագատությամբ։ Թո՛ղ ողնե ինձ ատված և նորա սուրբ ավետարանը, վորին հպավորվում եմ սեփական ձեռքերով···»—։

և հրաժարվիլ իր սրտի վկայութիւնից և աչքի հայտնի ճշմարտութիւնից։ Բայց յերբ դեռ բանը չեր հասել այդտեղ նա ունի գրած մի պատուական նամակ առ Madama Christina Granduchessa madre, վորից դնում ենք հետևյալ քաղվածը։ «Մենք մեր հայտնագործութիւններով չենք ուզում խառնափնդորել բնութիւնը և մտքերը. չենք ուզում կործանել դիտութիւնքը, այլ ուզում ենք լուսավորել նորանց և աուելյգ հիմք տալ նոցա։ Մեր հակառակորդքը սուտ և անաստվածական են համարում այն բանը, վոր ժրենք չեն կարող հերքել։ Նոքա պաշտպանվում են կրոնի կեղծավոր նախանձավորութիւնքով, բայց նվաստացնում են սուրբ դիրքը, հնար շինելով նորան իրենց անձնական շահասիրութեան։ Բայց, առանց լսելու պետք չե դատապարտել մի հեղինակ, վոր չե* դիպչում յեկեղեցական կանոնադրութեանց, այլ, բնութեան որենքներին և վոր մեկնում է այդ որենքները աստեղաբաշխութեան և յերկրաչափութեան կանոններով։ Ով վոր միշտ աստեղաբաշխութեան և յերկրաչափութեան կանոններով։ Ով վոր միշտ պատկերաբար հասկանում է ամեն բան, այնպիսին պիտի վոր և Աստվածաշունչի մեջ հակասութիւնք և մինչև անգամ աստվածընդդեմ հայհոյութիւնք գտնե, յերբ խոսք է լինում աստուծու աչքի, ձեռքի, կամ բարկու-

---

«1737 ին, գրեթե մի դար հետո Գալիլեյի վրա հանած այս պժգալի դատավճռից, վոր ինչպես մի անջնջելի սրատ մնում է ինկվիզիցիոնական դատարանի և դատակնիքը առ. բազմաթիվ դատավորների վրա, Սանտա-Կրոչե յեկեղեցու մեջ, տոնականական հանճարեղ մարդկերից ամենամեծի հիշատակի համար կանգնեցուցին մի հոյակապ մարմարոնյան արձան։ Բենեդիկտոս տասնուչորրորդը վոչնչացուց ինկվիզիցիոնի դատավճիռը Գալիլեյի շարադրուԹյան ընդդեմ։ Ցերկրի շարժողութիւնը,— աստղաբաշխութեան հիմնական որենքը,— ընդունված է ամեն տեղ և ամեն մարդուց, վորպես [Ջնջված՝ ճշմարտություն... ԽՄԲ.] յերկրագործության տակ չընկնող ճշմարտություն. և մինչև անգամ դաս է տրվում Հռոմի դպրոցում»։ (Ֆրանսուա Արագո, Աստեղաբ. հատ. III, դիրք քսաներորդ, գլ. 3)։ Արդյոք սորան ի՞նչ կասե պ. Ջամուռճյանը. Նորա [Ջնջված՝ քարոզությամբ... ԽՄԲ.] ուղղափառութեամբ, Ուրբանոս VIII ն ել և Բենեդիկտոս XIV ն ել համա[հավասար սուրբ, և համա[հավասար անմեղա[նիշ]ականք են, բայց իրար ընդդեմ վճիռ հանած. սոցանից վոբլե՞ անունը արդյոք պիտի գրե Միքնադնյան հերետիկոսարանի մատյանում։ Եթե Ցերկաթղի կը դանդաղի, Թող նորա ճառը պատասխանե— աքանչելի ժամանակը[36]։ Ցերկմնադրի պատճենը Արագոն առել և Դելամբերի Աստղաբաշխության պատմությունից. այս գիրքը մենք չենք տեսած, ուստի և չգիտենք թե այն հռչակավոր յերկրաչափը ի՞նչ աղբյուրից է հանել։ Այն պատճառով այս յերկու խոսքը ասացինք, վոր այդ յերկմնադիրը մի վոչ այլայլությամբ (թեև վոչ եյական բանում) տեսնում ենք Լապլասի «Տիեզերական համակարգության» մեջ. բացի սորանից, յեթե չե խարում մեզ մեր հիշողությունը, նույնպես այլայլված տեսել ենք և Ֆոն-Հոյուդերի Փիզիկայի մեջ։

Թեպետ վոմանք ավելորդ համարին, թե ինչի՛ համար հանդես հանեցինք այս յերկմնադիրը, մինչդեռ կարող եյինք միայն անունը հիշելով հերիքանալ. պատասխանում ենք,— պատմության արդարության գործիք լինելու համար. Թո՛ղ մի լեզվով ավելի քարոզվի այս նախատինքը հալածասեր մարդերի և անընդհեն հաղթանակը դիտության։ Արդարությունը պահանջում է այս. «Եւ քանքն լսելով զայլոցն զղրծան, յառաջագոյն քանացելոցն, անուանձինս, և լսելով զայլոց զպարսաւանս, ի բարի նախանձն կրթեալք, ջանասցին լաւագոյնս»։ Ղազար Փարպեցի. Պատմ. Հայ. վենետ. 1793, յեր. 14։

* Ջնջված՝ կղզուա... ԽՄԲ.

թյան մասին։ Ցերեկ ազգի խամության պատճառով հնարավոր և այս, ապա ուրեմն* ե՛լ ավելի հարկավոր եր աչքի տակ ունենալ այս խամութիւնը այն դատողութեանց մեջ, այնպիսի առարկաների մասին, վոր բնավ չեն յենթարկվում ամբոխի նկատողութեանց և չեն** դիպչում հոգու բարորութեան,— ինչպես են բնական գիտութիւնքը։ Այս պատճառով խոսելով այդ գիտութեանց վրա, չե կարելի յեզրակացութիւնք հանել բիբլիական սացվածներից. այլ, նկատողութիւններից և հարկավոր փաստերից, վորովհետև և՛ բնութիւնը և՛ Աստվածաշունչը միևորինակ դոյացած են աստվածային խոսքով» (Հուստոս Լիբիզ, նամակ 4. տե՛ս և նորա*** ավելվածը[37])։

Դառը բողոք. բայց վորքան տող, այնքան ճշմարտութիւն։ Ո՛ղ, մի՞շտ որհնվի գիտութեյան նահատակների անմահ և նախանձելի հիշատակը։

Միայն Արագածը չե, վոր տվել է իր հարկը միջին դարերին. մեր վեհափառ Ազատ Մասիսը նույնպես ձգել [է] այդ խավար դարերի գանձանակը իր լուսան։ Ո՛վ չգիտե Եջմիածնի «Վռազավորչու» ասված քամին, վոր ամառները ամեն իրիկուն արևը մտնելու ժամանակ բարձրանում է Մասիսի կողմից և զովացնում է երված փոթոթված Արարատյան դաշտը։ Արդա՛րև, նայելով ցերեկվա ջերմութեյան աստիճանին, աստւգապես կարելի չե ընդունել այդ քամին վորպես յերկնային պարգև։ Յես ինքս, Եջմիածնի մեջ սեպտեմբերի սկզբում, սառած ձուկի պես քերան բաց մնացած, անհամբեր սպասում եյի, թե յե՞րբ արևը պիտի թեքվի, վոր իմ ալևոր Մասիսի կենարար շունչը ինձ հասնի ու մի քիչ զովացնե։ Անշուշտ, մի վտանգ, մի մոլորութիւն չկա և չե կարող լինել, յերե ժողովուրդը չգիտե այս բանի զորութիւնը, բայց և այնպես գիտենալը ավելի ոգտակար համարելով, գրում ենք մի քանի տող. ներողութիւն խնդրելով ընթերցողից, վոր մեր գրվածքը շատ ճյուղավորվում և այս անգամ****։

Արևը սառուկ տաքացնում և վորպես Արարատյան դաշտը, վոր ամեն կողմից գրեթե շրջապատված և ապառաժ և մերկ սարերով նույնպես և Արագածի վիթխարի քարակառույց մարմինը։ Թողում եմ բոլոր դաշտի մեջ ցիր ու ցան ընկած, թե ավերակներից մնացած և թե սարերից յեկած անհամար քարերը։ Թեև, այո՛, վոչ փոքր բան են սոքա, վորովհետև բովանդակ դաշտը լիքն և այսպիսի քարերով։ Այս սարերը, դաշտը և քարերը արևի ճառագայթներից սաստիկ տաքանալով, ջերմութեյան բնական որենքով, վոր լայնացնում և ամենայն մարմին, լայնացնում և անոսրացնում են Արարատյան դաշտի ողը։ Հյուլեքը այս ողի, վոր անմիջաբար շոշափում եյին տաքացած մարմիններին, լայնանալով և մի վորոշյալ տարածութեյան մեջ ավելի տեղ բռնելով, քան թե սեղմ ողը սկսում են կամաց

---

* Ընդված՝ հարկավոր եր... ԽՄԲ.։

** Ընդված՝ կպչում... ԽՄԲ.։

*** Ընդված՝ ծանոթու[թյունը]։ԽՄԲ.։

**** Ընդված՝ Բնական և, վորովհետև յերկար ժամանակ չեմ խոսել... ԽՄԲ.։

կամաց բարձրանալ դեպի վեր և այս է պատճառը, որ ջերմության ժամանակ անոսրանում է այդտեղի ոդը և մի վաստակեցուցիչ և վհատեցուցիչ ազդեցություն է գործում կազմվածքի վրա։ Այս է պատճառը, որ Արարատի ձյունական գոտին, չնայելով նորա աշխարհագրական դրության, այսինքն հյուսիսային լայնության, ավելի բարձր է, քան թե նույն լայնության տակ յեղած ուրիշ սարերի ձյունական գոտին։ Հաշվելով ծովի մակերևույթից, Արարատի ձյունական գոտու բարձրությունը հասնում է մինչև 13300 վոտնաչափ։ Նույն այս որենքներով և պատճառներով Հիմալայան սարի ձյունական գոտին բարձր է, քան թե կարող եր կամ թե պիտի լիներ, յեթե նորա շրջապատը ընդարձակ և արևակեզ դաշտ յեղած չլիներ։ Ձյունական գոտին Մեքսիկայի Անդովական սարերի, որ 20° ավելի հարավային դրություն ունին (Արարատը մոտավորապես գտնվում է հյուս. լայն. 40° տակ, իսկ Անդովական մոտավորապես 20°) միմիայն 800 վոտնաչափ ավելի ցած է, քան թե Արարատինը, լինելով 14100 վոտնաչափ։

Մարմինները ինչպես ջերմությունից լայնանում են, դորա հակառակ, ցրտից սեղմվում են։ Արարատի հավիտենական ձյունները և սառցանոցները շոշափող մթնոլորտը միշտ սեղմված և ճնշված վիճակի մեջ է։ Ասել է, թե յերբ արևի ջերմությունից Արարատյան դաշտի ոդը լայնանալով անոսրանում է և բարձրանում է դեպի վեր, յերբ մյուս կողմից Մասիսի ոդը ցրտից ճնշված սեղմ է և ավելի խիտ, ուրեմն ոդի բնական դուգակշիռը խանգարված է այդտեղ. պատճառ, բնական որենքով, հեղուկ և ոդանման մարմինները ամեն կողմ հավասարապես ճնշելով պիտի մի մակերևույթ և մի հավասարություն ունենան։ Ի՛նչ է սորա բնական հետևանքը. այն, որ Մասիսի ճնշված ոդը պիտի վազե լցնել Արարատյան դաշտի ոդի պակասությունը։ Բայց վորովհետև ջերմության ժամերը այնքան յերկար չեն, վորովհետև ոդը անոսրանալով սառնում է նույնպես ավելի ձգականություն, վոր ինչպես վեր է բարձրանում, այնպես և ամեն կողմ, ուստի և ցերեկը չէ կատարվում ոդերի դուգակշռությունը, այլ այն ժամանակ, յերբ արևի ճառագայթքը ել այնպես չեչին տաքացնում դաշտը, յերբ նորա ոդը կամաց կամաց կորցնելով իր ձգականությունը սկսում եր սեղմվիլ, այն ժամանակ, Մասիսի ոդը, ել դիմադրություն չդտնելով լայնացած ոդից, սկսում է վազել դեպի դաշտը, պատճառելով այն ախորժ քամին։ Այդ քամու ուժը միշտ համեմատ է ջերմության աստիճանին։ Վորքան սաստիկ լինի ջերմությունը ցերեկը, այնքան ուժով կլինի քամին իրիկնապահին։ Շատ ծովահայաց քաղաքներ ունին իրենց իրիկնաքամին, վոր ծովից է փչում. այն դիպվածներում ծովը կատարում է Մասիսի պաշտոնը, վորովհետև ջուրը ավելի վատ առաջնորդ լինելով ջերմության, նորա ոդը ավելի խիտ է, քան թե նավահանգստի կամ քաղաքի ոդը, վոր անմիջական հարակցություն ունի ջերմության լավ առաջնորդ մարմինների հետ։ Յերկու անգամ կանգնելով հնդկական Մադրասի նավահանգստում և, մի քանի

որ մնալով Սեյլան կղզու Գալլ քաղաքում (point de Galle), չես նույնպես վայելած եմ այս բնության զվարթարար պարգևը, եղ նահատակ չեղած լինելով ցերեկվա դժոխային ջերմությունից։ Պե՞տք եր ավելացնել, թե տրոպիկական աշխարհների մշտական պաստառը առաջանում եյին հիմնված լինելով եապես այն պայմանների վրա, վորոնց մասին խոսեցանք. բայց մենք չենք ուզում ավելի ձգացնել բանը։ Մեր դիտավորությունը եր մի համառոտ տեղեկություն տալ միայն «ղուսավորչու քամուն»։ Մենք հասած ենք մեր նպատակին։

Առաջ ենք գնում։

Առհասարակ պ. Ռոշյանցի ծանոթաբանությունքը աջողակ չեն։ Խոսելով հարսանիքի վորսի և մենամարտության մասին (չեր. 198) արդո հեղինակը այսպես և ծանոթաբանում. «Ես վորսի սովորությունը և մենամարտությունը կարծեմ մնացած պետք և լինի մեր նախնի բագավորների ժամանակից, վոր առհասարակ չերբեմն չերբեմն զվարճության համար անում եյին»։

Ի՛նչ խոսք և այս։ Նախ, վոր մենամարտությունը և վորսորդությունը բագի սեփական մի բան չե, վոր ուր ել տեսնվի, բագավորներից մնացած կարծվի։ Յերկրորդ, դնենք թե մեր պատմության հիշատակարանքը տեղ տեղ պահել են մեր բագավորների վորսորդության հիշատակը. շատ անգամ դատապարտելով նոցա դրոսասիրությունը և ազգային կառավարությունը չերեսի վրա ձգելը. բայց թե չերբեմն չերբեմն մենամարտո՞ւմ եյին նոքա զվարճության համար, այդ, առաջին անգամ լսում ենք պ. Ռոշյանցից։ Գո՛նե խոստովանում ենք մեր տգիտությունը, վոր մենք չգիտենք, թե հայոց բագավորները Ներոնի որը ընկնելով զվարճության համար հրապարակ եյին իջնում մենամարտելու*։ Ջենք ել տեսնում պատմության մեջ, վոր մեր բագավորական պալատներում կամ քաղաքներում չեղած լիներ այնպիսի սովորություն, ինչպես տեսնում ենք Հռովմի կրկեսում,— գլադիատորներին (ըմբիշ), վոր առաջ միայն ստրուկների գործ լինելով, հետո հռովմեական բարքի ընդհանուր ապականության ժամանակ դարձավ ազնիվ չերիտասարդների, պատրիկիոնների, ծերակուտ մարդերի, այո՛, և նույնիսկ Ներոնի սիրական գործը**։

---

* Ջնջված՝ համար։ ԽՄԲ.։

** Ջնջված՝ Վո՛հ, ասեմած ինչ եր Դայկոս Կալիկուլային, Կլավդիոսի և Ներոնի Հռովմը։ Ի՛նչ վարք ու բարք եր այն. Մեսսալինեն, Ագրիպպինեն (կրտսեր), Պոպպեա Սաբինա։ Եվ ի՛նչ Սոդոմ։ Ա՜հ, ղուշե դու չես, այդ խումբից, ավելի չերջանիկը, վոր Թեև զոհված Ներոնին Թշվառ Լոկուստային [Ջնջված՝ դեղատու կնոջ] ձեռքով(1), Քեև զրկված մի կայսերական պերճ Թաղումից(2), այնուամենայնիվ չարատավորեցիր Ավգուստոսյան տան պատիվը և միայն դո՛ւ և քեղանից ավելի՛ խեղճ քո քույր Հոկտավիենն։ Բայց ի՛նչ կոդներ այս. արդեն Տիբերիոսը պղծել եր այդ պատիվը հալածելով և վերջապես դեղամահ անել տալով Գերմանիկոսին (3)։ [Ջնջված՝ Ո՛վ բարքեր] Ո՛վ ժամանակներ, ի՛վ բարքեր։

(1) Այս Թշվառ Ֆուրիայի ձեռքով դեղեց կրտսեր Ագրիպպինեն Կլավդիոս կայսեր և Ներոնին Թագավորեցուց Նորա փոխանակ։ Ներոնը, դարձյալ այդ Լոկուստային ճարտարու-

* Բայց, ասենք թե թագավորները վորսորդության եյին գնում, ասենք թե մենամարտում եյին յերբեմն-յերբեմն զվարճության համար, ինչպես հավատացնում է մեզ մեր հեղինակը. բայց ի՞նչ հարաբերություն կա հարսանիքի սիմբոլական արարողությանց և թագավորական զբոսասիրության մեջ: Փեսայի թե թուր կապելը, թե վորսի գնալը, թե մենամարտությունը, այս բոլորը իրենց սիմբոլական բնավորությամբ հարկադրում են մեզ կարծել, թե դրա շատ հին ժամանակներից, և թագավորներից առաջ ժամանակներից, մնացած արարողություններ են վաղ այդ արարողությանց** փշրանքը: Մի յերիտասարդ ամուսնանալով մի աղջիկ հետ, բարոյական պարտականություններ է առնում իր վրա մարդկային ընկերության առջև պաշտպանել իր ընտանիքը, կերակրել նորան և առհասարակ դեպ դնել մի կոպիտ ուժի, յեթե սա վորևիցե կերպով վամենար վերդովիլ նորա ընտանեկան խաղաղությունը: Յեվ մեզ թվում է, թե թուր կապելը, վորսի գնալը և մենամարտությունը ունին իրենց մեջ այս պայմանների սիմբոլական խորհուրդը, վոր փեսան հրապարակով ցույց է տալիս և ապացուցանելով ընկերության իր այրությունը և արժանավորությունը իրավամբ առանում է իր կինը:

Թե ի՞նչ բանի նշան է թուրը, այդ մասին խոսիլն էլ ավելորդ ենք

Թյամբ դեղեց Բրիտաննիկոսին և իրրև վարձ, իրրև նշան կայսերական չնորհակալության, հրամայեց այն կնոջը հրապարակում խոնարհ բանալ և ազատորեն մատակարարել այդ «մահու բաժակը» ամեն նոցա, վոր դան ուղել: Յեվ այս մարդակերպ ճիվաղը [ջնջված՝ «Ներոնը»] իր անձնասպան լինելու րոպեին ցավում եր աշխարհի վրա, վոր ղրկվում եր նորա ընտանեկան խաղաղությունը: Յեվ մեզ թվում է, թե թուր կապելը, վորսի գնալը և մենամարտությունը ունին իրենց մեջ այս պայմանների սիմբոլական խորհուրդը, վոր փեսան հրապարակով ցույց է տալիս և ապացուցանելով ընկերության իր այրությունը և արժանավորությունը իրավամբ առանում է իր կինը:

Թե ի՞նչ բանի նշան է թուրը, այդ մասին խոսիլն էլ ավելորդ ենք

---

(2) Հռովմին հայտնի յեր Բրիտաննիկոսիզոհ լինելը և յերբ Ներոնը հրամայեց թաղել նորա մարմինը առանց սովորական ծեսերին և դրեթե դաղիեդոդի, պատահեցավ մի հորդ անձրև: Ցասկացել ժողովուրդը ասում եր թե յերկինքը լաց է լինում անմեղի մահը և պատվում է նորա թաղումը:

(3) Մեր բոլոր հին դպրության մեջ միայն Յորենացին և այն լոկ մի անգամ հիշում է այս աղամարդի անունը: Առհասարակ պատմության վկայությանը նայելով Գերմանիկոսը յեղած է լավ մարդ և սիրելի վոչ միայն հռովմեական լեգիոններին այլև ժողովրդին իսկ. այս եր դլխավոր պատճառը, վոր Տիբերիոսը նախանձելով նորա քաջությանց, հաղթությանց և լավ անունին, վո՛չ միայն պատերազմի դործը կիսակատար հետ կանչեց նորան Գերմանիայից, այլև լրտեսներ դնելով հետը ուղարկեց միջերկրականի մյուս ափը, վորտեղ դարձյալ մեծ անուն ստացավ Գերմանիկոսը և [ջնջված՝ վերադարձին դեղվեցավ նավի մեջ] դեղվեցավ ինչպես ասում են Տիբերիոսի դործակատարի ձեռքով: Ցավելի յե՛ վոր մեր պատմությունը լոկ մի տեղում պահել և նորա անունը և այն մի անխոհեմ դիպվածի պատճառով: «...Թաքաւորէ Հռովմայեցւոց Տիբեր. և Գերմանիկոս կեսար եղեալ ձաղեաց զաւազաքեալն ի Հռովմ, զիշխանսն Արշաւրի և Աբգարու» և այլն: Խորեն. Պատմ. Հայ., կերջ Բ. գլ. 26: ԽՄԲ.:

* Ջնջված՝ բայց թողունք այս բանները ու յերթանք եւլի մեր հարսանիքը: ԽՄԲ.:

** Ջնջված՝ փշրանքը: ԽՄԲ.:

համարում*, իսկ վորսի համար ասում ենք այսքան, վոր ամեն ազգ իր մանկության ժամանակ ապրել է և այժմ էլ վայրենիքը ապրում են վորսորդությամբ: Տարակույս չկա, վոր և մեր ազգը անցել է մի անգամ զարգացման այդ աստիճանը, և մեր համար չեղած և չերբեմն ժամանակ, չերբ ամեն հարստության հայտարարը եյին զանազան կենդանիների մորթեր և վոսկորներ (զենք շինելու համար): Արդեն քաղաքակրթության մեջ մեծ առաջադիմություն է, չերբ մի վայրենի, թափառական վորսորդությամբ պարապող, ազգ, սկսում է չերկրագործության ձեռք զարկել, բայց այդ բանը կարճ ժամանակում չի լինում, դարեր են անցնում, և ժողովուրդը արդեն** ստացած է լինում շատ կանխամուտ կարծիքներ, բնական չերևույթների թյուր ըմբռնողություն և այլ հազար ու մի բան, վոր գալոց ավելի լուսավոր ժամանակը պիտի աշխատեր քերել այդ բոլորը: Թե մինչև վո՞ր ժամանակ պարապել են հայք վորսորդությամբ. կամ, ավելի լավ, ե՞րբ և մեկ նոցա մեջ չերկրագործությունը, վորպես ընդհանուր ժողովրդի պարապմունք, այդ մասին պատմության եջերը դատարկ են մնացել: Այսքանը հայտնի չե, վոր Հայաստանը չերբեք դարավոր խաղաղության չերես տեսած չլինելով, անդադար պատերազմների, հարձակողության կամ պաշտպանողության հանդիսարան չեղած լինելով, չե կարելի չենթադրել, մանավանդ հին ժամանակների վերաբերությամբ, թե չերկրագործությունը չեղած լինի ընդհանուր ժողովրդի ապրուստի լծակը: Այն մարդը, վոր կարող եր մաճ բռնել, նա սահմանված եր հետևել հայրենիքի դրոշակին: Թողնելով այս բոլորը վորպես լոկ չենթադրություն, ավելցնում ենք, թե Արտաշես Բ-ի որով լսում ենք Խորենացու բերնից չերկրագործության տարածումը Հայաստանում, մինչև վոր*** այդ թագավորի որով անդորձ չերկիրը չկա չեղած Հայաստան****: Բայց չե կարելի սորանից չեզրա-

---

* Այստեղ մեր մտածքը ընկավ չարականի այն տեղը, վոր ասում է «...զկնի արքայական, ապաստան գործի կենաց արքային՝ ի կենաց գործս նուիրեալ...»[38] Ցեմ մենք հետևցնենք այս տողերը, կարդալով պ. Գառնչյանի ծանոթարանությունը (չեր. 189) Թուրի դեհահալած դրության մասին: Համեմատիր այս բոլորը չնաչխարհիկ Արտվանի հոգեհատ խոսքերի հետ (Վերք Հայաստանի, չեր. 118—121), ուր ընդարձակած և կերպարանափոխած է այս սքանչելի վարդապետության և ուր երևան հեղինակը չե դեմտացել, վոր մի քանի տող ծանոթություն չդնել:

** Ընդվաճ՝ ասանում է... ԽՄԲ.:

*** Ընդվաճ՝ պարսից Արտաչիր Թագավորն էլ նորան նախանձելով ծաղկեցնում և նորոգում էր աշխարհում: ԽՄԲ.:

**** «Բայց ասի, չի ժամանակս Արտաչիսի՝ չպատանել երկիր անպտուղ յաչխարհիս Հայոց, ոչ լճանալին և ոչ պաշտայինն»: Խորեն. Պատմ. Հայ., տիրք Բ., Գլ. 45. NB Խորենացու պատմության վկայության բերելով, ենչպես ասվեցավ և ընթերցողը, թերևս համարը մոռացության չենք հիշում. պատճառը այն է, վոր մեր ձեռքում չեղած օրինակը, թեև խիստ ուղիղ, բայց և այնպես, հազվադյուտ լինելով նորաբերձհամարքը ցույց տալը խորհուրդ չուներ: Շատ հարց ու խնդիր արինք, վոր մի օրինակ տպագրության օրինակ դտնեն Պետերբուրգում. բայց և այնպես չդտան: Ուստի և դրժ եմ դնում այս ուղիղ օրինակը: Սա տպած է Ամստերդամ 1695 ին Վանանդեցի Թոմսոն յեպիսկոպոսի տպարանում:

կացնել, թե այդ որից իսպառ ընկավ վորսորդությունը։ Գրեթե յերկու դար հետո ապրած Արշակ Գ ի ժամանակի վերաբերությամբ, լսում ենք մեր յերանելի Ղազար Փարպեցու բերանից այնպիսի պատմություն, ուր վորսորդությունը վոչ վերջին տեղն ունի*։ Մենք, հատուկ այն դիտավորությամբ, թե յի՞նչ և սկսվել հայոց յերկրագործությունն, խուղարկություն արած չենք. այլ այս մի յերկու բանը, վոր վաղուց հայտնի յեր մեզ, հիշեցինք Ղազարի մանրամասն քննությունը ազգային պատմության, մեղանից առավել հմուտ և ավելի ժամանակ ունեցող մարդերի։

Այս արարողությանց մասին մեր արած յենթադրությունքը ավելի չեն, քան թե մեր անձնական կարծիք և հիմնված են միմիայն անալոգիայի վրա։ Պ. Պռոշյանցը պատմելով, թե փեսան չե կարող կերակուր ուտել մինչև վորսի չգնա և վորս չբերե, կարծում ենք, թե ավելի ուժ և տալիս մեր յենթադրության, պատճառ, ինչպես ասացինք, փեսան ապացուցանում և դրանով թե կարո՛ղ և հոգալ իր ընտանիքի ապրուստը։ Մենք կարծում ենք, թե իրավունք չկա, առանց դրական ապացույցներ ունենալու, ամեն մի հին ավանդության մնացորդ տեսնելու ժամանակ վազել թագավորների քամակից. ազգը մինչև թագավորության հասնելը, ստանում է և ստեղծում է իր ավանդությունքը, ծեսերը և արարողությունը, վորոնք, այո՛, թե թագավորների ժամանակ և թե նոցանից հետո ընկնում են դարերի ազդեցության տակ։ Հարկ չկա ասել, վոր ամեն բան հնացնող և մաշող ժամանակը հնացնում է և մաշում և, այո՛, շատ անգամ և իսպառ չքացնում է այս կամ այն ավանդությունը, այս կամ այն ծեսը և սովորությունը։ Շատ անգամ թևրևս այդ բոլորը** մնալով գործադրության մեջ***, այնուամենայնիվ տալիս են դարերի ազդեցության իրենց հարկը. նոքա**** մ

ողջ շան խածած, կամ Սոսի նման ջրվախ եյին, վոր իր Փարպի գնալը Գարեգնի առջև արդարացնելու համար սուտ ու մուտ բաներ եր հնարում. յերկրորդ, յեթե, ստուգապես, կատաղած շան խածած եյին և ջրվախություն ունենալով արդարև Փարպի գնալով բժշկվում եյին, ապա ուրեմն նոցա բժշկության բնական պատճառը, վոր անհնար և թե չինի, յեթե ջրվախը բժշկվում է*: Ինչ վոր մեզ և վերաբերվում, մենք խոստովանում ենք, վոր թեև շատ ենք լսած այդ սքանչելի բժշկության պատմությունը, այնուամենայնիվ սաստիկ յերկբայության ունինք հիվանդ ուխտավորների ջրվախության մասին և կարծում ենք, թե դոքա Սոսի նման ջրվախներ են:

Իտալիո մեջ ավանդություն կար, վոր թե մորմը (սարդաձև կենդանի Tarantula lycosa—тарантул, мизгир) մի մարդ կամ մանավանդ մի աղջիկ խայթե, դորա միակ ճարը պար դալն է. և պար դալ բազմությամբ, խրմբովին, վոչ այնպես համրաշարժ, ինչպես մեր «կուռ բռնուկը» կամ ռուսաց хоровод-ը (մոլդովականների մեջ ել կա մի այդպիսի կուռ բռնուկ) այլ շատ արագությամբ, այնպես վոր ել ուժ չմնա պարը շարունակելու: Յերկրագործական աշխատությանց ժամանակ, յերբ աղջիկը չեր ուզում բանիլ կամ թե ուզում եր իր սիրականին տեսնել, հերիք եր վոր մի աղաղակ բարձրացներ, թե մորմը խայթեց: Իսկույն, բոլոր բանվորները թե պատանիքը և թե աղջիկները թողում եյին իրենց աշխատությունը: Հարկավոր եր հոգի փրկել. ո՛վ կարող եր մեղադրել: Ակնթարթի մեջ ըլվում եր Տարանտելլան (tarantella պարի անուն է): Ծույլը զբոսնում եր, սիրահարքը հանդիպում եյին միմյանց, պար դալիս իրար հետ, տեսություն եյին նշանակում կամ մի նշանաբան դնում: Յեվ յերբ ամենքն ել իրենց ցանկության հասած եյին, մորմից խայթված աղջիկը առողջանում եր. արևն ել մտնելու վրա. ուստի ամենքն ել գոհանալով ուրախ-ուրախ գնում են իրենց տունը: Ո՛վ կարող եր ասել թե Տարանտելլան (մորմապար ?) պատվական հնար չե, կամ զորություն չունի մորմի խայթոցի ընդդեմ, յերբ աշխարհ, արարած իր աչքով տեսնում է, վոր երեկ մորմից չարաշար խայթված (?) աղջիկը, մյուս որ վողջ առողջ բանում է իր բանը:

Հիվանդների լուռ ու անխոս դնալու մասին (Փարպի) կամ նոցա գլխին ձիու սանձ փաթաթելու** վերաբերությամբ (արդյոք եշի մանձը ի՞նչպես է. բնա՞վ զորություն չունի), չնայելով մեր հեղինակի արած ծանոթաբանությանը, մենք վոչինչ դրական բան չենք կարող ասել, վորովհետև այդ յերկու

---

* Ինձ կարող են ասել, թե վորովհետև պիտությունը չե կարող թույլ տալ այդպիսի սքանչելի բժշկություն, ուստի և նոքա առանց վկրստին քննելու մերժելով, չեն ընդունում: Բոլորովին համաձայն եմ, ուրեմն, թո՛ղ փատատեն մատախուղը, թո՛ղ հրապարակով հասկացնեն ժողովրդին ճշմարտությունը: Բայց ապացուցելու համար ժողովրդին պիտության ճշմարտությունը հարկավոր ևնթրդությունք և վոչ լոկ խոսք. լոկ իրողությունքը պիտի նկատվին, ուրեմն և լուն տեղում և վոչ հեռվից. լոկ քարոզով վոչինչ չես չինել:

** Ջնջված՝ մասին... ԽՄԲ.

արարողության կամ պայմանների մեջ մի ազդվության չենք տեսնում, վոր բնության մեջ տեղ ունենար և հակամետ ենք կարծել, թե դրքա ուխտագնացության ավելորդությունքը լինին։ Ասիացին, վորի չերևակայությունը միշտ բորբոքված է (Ասիան առնում ենք միայն բարեխառն և ջերմ աշխարհների վերաբերությամբ) զաղտնախորհուրդ և սիմբոլական բաներով, շատ հասարակ արարողությունքն էլ դիտե խճողել զանազան նշանական ձևերով և պայմաններով,— զարդ խարեբայության,— որոնք թեև ըստ եյության վոչինչ խորհուրդ կամ զորություն չունին, բայց և այնպես ամբոխի աչքին յերևցող լինելով, ստիպում են բերանաբաց ժողովրդին խորհուրդ յենթադրել այդ բաների մեջ։ Հայտնի չե թե հնարողը, կամ նորա քարոզը հոչակվում է խոր փիլիսոփա. պատճառ, նա միայն գիտե այդ բոլորի զաղտնիքը և նորա ձեռքին և խորհրդավոր և դերբնական դիտությանց բանալիքը։ Մի՞թե ավելի մեղավոր են Բուդդայի բոնզերը և Բրահմայի բրամիննները։

Սոս և Վարդիթերի մեջ կարելի յեր ե՛լ մի քանի այսպիսի ցնդի ավանդություններ գտնել. բայց իրավն ասենք, ձանձրացանք այս* հիմար բաներից. վերջին անգամ ասում ենք, թե այսպիսի բանները ներդործում են խեղճ և պարզամիտ ժողովրդի վրա այնպես, ինչպես հաշիշը կազմվածքի վրա, ուստի** պարտական ենք ամենայն խնամով արմատախիլ անել այդպիսիքը և մաքրել հայկական անդաստանը։ Ահա մեր վերջին խոսքը։

Պ. Պռոշյանցը, փոխանակ բերաբար առնված վոճերի և ձևերի բուն նշանակությունը չե բացատրում, թողնելով «հետախույզ բանագիտաց», ինչպես ասում է հառաջաբանի վերջին տողերում։ Այս շատ անդործադրելի գաղտնիք է։ Մարդը մեղավո՞ր յեղավ, վոր հետախույզ բանասեր դարձավ, վոր փար է։ Մարդը մեղավո՞ր յեղավ, վոր հետախույզ բանասեր դարձավ, վոր Նատի ծանր ու բարակ վոճերի բառարան շինե։ Ասենք, թե գլուխը քարը Նատի ծանր ու բարակ վոճերի բառարան շինե։ Ասենք, թե գլուխը քարը տվեց ու շինեց. հետո այդ բառարանը պիտի տալե հրատարակե, վոր Սոս և Վարդիթերի «հետախույզ բանասեր» չեղող կարդացողքը,— պարզ մահկանացուքը հասկանան այն փոխաբերական ձևերը և վոճերը, վոր առաջ չեյին հասկացել և վորոնք, այո՛, շատ տեղ աղ ու համ եյին տալիս դործին։ Մի՞թե ավելի լավ և ավելի հարմար չեր, վոր հեղինակը ինքը բացատրեր, քան թե թողում է «հետախույզ բանասիրաց»։

Ցերեկ ստույգը ասենք, մեր քննության այն մասը, վոր նվիրված եր թերություններին Սոս և Վարդիթեր դործի, վորպես վիպասանության, պրծավ։

Մենք չենք ուզում քննության տակ ձգել հեղինակի լեզուն*** և նորա շատ ձախ հառաջաբանությունը. վերջինս յեթե չլիներ, առավել**** դեռ պիտի լինեյինք։

---

* Ընդված՝ անճոռնի... ԽՄԲ.։

** Ընդված՝ ամենայն խնամով... ԽՄԲ.։

*** Ընդված՝ վորով գրված է հառաջա[բանությունը]... ԽՄԲ.։

**** Ընդված՝ պիտի... ԽՄԲ.։

Հեղինակի լեզու ասելով չենք իմանում Աշտարակի բարբառը, վորով գրված է գործի բնագիրը, ուր կամ խիստ քիչ հատնել է հեղինակը Աշտարակի բարբառի մեջ ոտար ձև, ոտար վոճ, կամ, բնավ վոչ, այլ նորա հաոաջաբանի լեզուն: Յեվ հեղինակը, ուղելով իր գործը այդ բարբառով գրել, վոր վարդացողը վոչ միայն Աշտարակի վարքի բարքի, այլ նորա լեզվի վրա էլ տեղեկություն ստանա, վոչ միայն մնդադրելի չե, վոչ միայն ազատ և այդ լեզվի մասին պատասխանատվությունից, այլև մեծ շնորհակալության արժանի: Մենք կարող ենք վորևիցե գավառական բարբառ քննել, ստրվիլ, տեսնել նորա արժանավորությունքը և թերությունքը, բայց, այսչափ միայն: Ինչպես մի հեղինակի՝ կարող ենք ասել «թե ինչի այս ձևը այսպես ևս գործ դրնում կամ այնպես». այդպես չենք կարող խոսել հաղարների և բյուրերի հետ: Հեղինակը շատ անգամ ազատ և այս ու այն ձևը գործ դնել կամ չդնել. բայց մի գավառի բնակիչ (մեր խոսքը բուն հասարակ ժողովրդի վրա չե) չունի այդ ազատությունը: Նա այնպես միայն կարող և խոսել, ինչպես խոսում է ամբողջ ընկերությունը, վորին անդամ է և ինքը խոսողը: Իսկ այդ ընկերության բարբառը կերպարանափոխվել և աշխարհագրական և բնության ազդեցությանց տակ. պատմական դեպքերը չեն անցել նորա վրայից, առանց իրենց հետքը խոր դրոշմելու, և բարբառները նույա անցուցած կյանքի բնական արդյունքն են: Հայտնի չե, թե վոչ մեկ մարդ պատասխանատու չե, թե ինչի՞ մի վորոշյալ տեղում այնպես և ոչդել բնությունը և վոչ այսպես. թե ինչի՞ պատահել են այս կամ այն պատմական դեպքերը և ինչի՞ համար այնպիսի ուղղություն և ստացել հասարակաց կյանքը, վորի արդյունքը, բնականաբար, լեզվի և այս կամ այն* գավառական բարբառը: Յեվ վորովհետև բնության և պատմության ազդեցությանց մասին պատասխանատու չե մարդը, ուրեմն և պատասխանատու չե և վոչ իսկ պախարակելի կամ ծաղրելի, յեթե մի նորասովելի ավերանքի տակ է ընկել այդ լեզուն: Սովորական վոճով խոսելով գործ դրինք ավերանք բառը, ապա թե վոչ փիլիսոփայաբար ուղիղ մրածությամբ վոչ դրական կատարելություն կա և վոչ դրական ավերանք մի լեզվի, վոր ժամանակների պիտույքին հարմար լցնում եր իր պաշտոնը: Նեղարտություն և կատարելություն տանել, կատարելություն խոսատվանիլ հին լեզուն սիրապես և աղճատանք համարիլ նորը դրականապես: Ի՞նչ պիտի պատասխանեն մեզ, յեթե հարցնենք, թե ինչ բանում է կատարելությունը «տուր ինձ գհաց» կամ ո՛ւր է աղճատանքը՝ յեթե ասում ենք «հաց տուր ինձ».— յերթալ ի տուն,—տուն յերթալ. և այլն և այլն: Սոքա բոլորը տղայական չնչին և խելացնոր բաներ են, ձգտողություն, բնության և անցած գնացած ժամանակի վրա բռնանալու: Լեզվի խորհուրդը ձևի մեջ չե, այլ իրի մեջ. յեթե կես «հաց տուր ինձ» ասելով հասկանում եմ այն, ինչ վոր 4000 տարի առաջ հասկանում եյին «տո՛ւր ինձ գհաց» ասելով, լեզուն կատարում է իր պաշտոնը լիքը չափով: Ել այստեղ իրավունք

---

* Ջնջված՝ բարբառը... ԽՄԲ.:

չկա, բազդատական գեղեցկություն կամ կատարելություն հանդես հանելու. ինչ իրավունք վոր ուներ 4000 տարի առաջ ապրած հայը այնպես խոսել, նույն իրավունքին համազոր իրավունք ունի այժմյան հայը այսպես խոսել. ո՛վ հավան չե, գնա՛ պերեզմաններդը փնտռե 4000 տարի առաջ մեռածներին և այդ մեռելների հետ խոսի: Իսկ մենք, կենդանիքս, վոր գիտենք խոսատովանիլ ժամանակի և պատմության իրավունքը, չենք կարող կենդանիքը թողած մեռելների հետ խոսել: Այս դրության պարզ երևում է, թե վոր աստիճանի թերևամտություն և այս կամ այն գավառական բարբառը ծաղրելը, և նորանով խոսողի վրա, վորպես մի ստոր և խեղճ էակի վրա նայելը, վորպես թե այն մարդը հանցանք և գործել: Ո՛չ, յեղբերավոր հիմարություն: Ներկա և կենդանի սերունդը անցածի և մեռածի գերին չե. իսկ ո՛վ վոր ուզում է կամայաբար իր կենդանությունը ուրանալով և իրավունքից հրաժարվելով, իր վիզը դնել անցածի լուծի տակ, այնպիսուն ասելիք չունինք:

Յեթե ցանկալի և հնարավ չափ ցանկալի է նոր լեզվի համազգային միությունը, ապա ուրեմն պիտի ուրախությամբ վողջունել մի ամբողջ գործ, վոր թյունը, ապա ուրեմն պիտի ուրախությամբ վողջունել մի ամբողջ գործ, վոր կատարված եր վորևիցե գավառական բարբառով. պատճառ, նոր լեզվի հիմնավոր գիտությունը, նորա մշակությունը և առաջադրությունը վորպես նաև ապագա միության գաղափարը առանց այդ գավառական բարբառների ոգնության անեղակայելի յե անդամ: Մեր այստեղ քարոզած դրությունքը ոգնության անեղակայելի յե անդամ: Մեր այստեղ քարոզած դրությունքը պաշտպանելու համար հավաքած ենք շատ փաստեր. բայց այստեղ, մեր հատվածի նեղ շրջանակը չե ներում ազատ ընթացք տալ նոցա: Բայց այսչափ անհրաժեշտ ենք համարում ասել, վոր ստրկանալով հին լեզվին, առանց ժողովրդին ականջ դնելու, լեզվի նոր ձյած ձևերը, վոր դեռ թարմ են և կերպարանագործվելու վրա կապելով և ճնշելով անցածի և մեռածի պատանքի մեջ, նոր լեզվի մշակության գաղափարը ապին համար դառնում է նույնպես ամուլ և անպտուղ, ինչպես հին և մեռած լեզվի գործածության գաղափարը: Անշուշտ, այս խոսքերը չեն նշանակում, թե հին լեզվի լծից ազատելով նոր լեզվի մշակությունը պիտի դնել այս կամ այն գավառական բարբառի լծի տակ: Տեղական կամ գավառական բարբառը ազգի ընդհանուրի հատմաբ գործնական արժեք չունի և նոր լեզուն այս կամ այն գավառական բարբառի տակ, դրականապես, մշակելու գաղափարը նո՛ւյնպես ամուլ և անգործադրելի յե, ինչպես հին լեզվի գաղափարը. ինչպես սորա ստրկության տակ աճած նոր լեզվի գաղափարը: Այս տեսակ մշակությունքը ազգեն իրենց սկզբունքով* հակասական են նոր լեզվի մշակության սկզբունքին, վոր է վորքան կարելի յե առավել շատ և առավել մեծ բազմության հասկանալի կերպով խոսել: Այս պատճառով, նոր լեզվի մշակությունը պիտի դնել այս կամ այն գավառական բարբառի տակ, առանց ամենևին պիտի նայվի և մշակվի ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խլնելու, առանց գավառական բարբառների կամ ուսար լեզուների ազդեցությանց ստրկանալու: Բոլոր գավառական բարբառների հյական տարրերը, վոր իրենց ձևով և կազմությամբ ավելի ընդունակ են, կենդանի—ընդհան-

* Ջնջված՝ նեղսիտ... ԽՄԲ.:

թության լեզվի վրա պատվաստելու, պիտի ընկնին ճարտար հեղինակների քուրայի մեջ և այնտեղ քիմիապար միանալով պիտի դուրս դան «ոչ որպէս Բլպատուրիուն կամ անբլպատուրիուն, այլ որպէս նոր արարած»[39]: Ծանր խընդիր է այս և իր բնությամբ շատ ժամանակի կարոտ, բայց գո՛նե, այս է մեր ճանապարհը, այս է մեր պարտականությունը, վոր ինչքան մեր ուժը կտանի ձգտինք այս խնդիրը լուծելու: Հարկ չկա ասել, վոր այս բանի համար հարկավոր է շրջանկատ ուսումնասիրություն մշակող հեղինակների կողմից: Այն նորելուկ պատանին, վոր տակավին նոր իջած մի վորպիսի և իցե խեղճ դպրոցի նստարանից գրիչ և առնում ձեռքը և ազդի դժբախտությունից լցնում է մի քանի վայրիվերո թերթեր հոդվածի և որպէսի անուններով, այդպիսիքը ասում ենք այնքան կարող են ոգնել լեզվի մշակության, վորքան մի վորևիցե մարդ առնված վորևիցե անկիրթ հասարակությունից: Այս խոսքերը թող չվհատեցնեն նորանց. մենք վոչ թե չենք ուզում, վոր շատանան մեր հեղինակքը*, այլ, դորա հակառակ Մովսիսի հետ ենք ասում. «Ո՜ տայր ինձ զամենայն Իսրայէլ ի մարգարէս». բայց մարգարե լինելն մարգարեի նման:

Ուզելով մշակել, կոկել և միության տալ մեր նոր լեզվին, չպիտի փոքրոգությամբ սրտնեղինք թե ինչի՛ մեկ կամ հինգ տարում չե շինվում ինչ վոր մենք ուզում ենք: Այլ վոր հազար տարիներով տարբեր աշխարհների և տարբեր դեպքերի տակ գոյացել ե, և ամեն տեղ էլ այդ տարբեր ազդեցությանց կնիքը կրում է իր վրա. բացի սորանից, այդ հազար տարիների միջոցում ամեն մեր լեզվի մոտից անցնող թուրք, թաթար, պարսիկ, արաբացի, ռուս, Սարդիս Բուխարացու դյոռի[40] պես մի քար և ձգել, բնականաբար անհնար և, վոր մի ակնթարթում շինվի, կոկվի և պայծառանա: Այստեղ հարկավոր է համբերություն և հարատև արիաջան աշխատություն:

Մի փոքր առաջ պ. Պռոշյանցի հառաջաբանի անունը տալով ձախ ածականով մկրտեցինք նորան. բայց այդ 8 յերես հառաջաբանի մեջ կա մի առողջ կտոր, և այս է նորա միտքը, թե ցանկալի չե, վոր ամեն գրագետ, իր յերկրում յեղած, մեր ազգի վարքը, բարքը, սովորույթքը, ձեսերը, հասկացողությունքը, նոցա բարոյական և այլն և այլն վիճակը լույս հանե ու ազգի առջև դնե: Այս խոսքերը և այս գաղափարը ամենայն ընդունելության արժանի բաներ են և ոտքա ընդդեմ վոչ մեր և վոչ ուրիշի կողմից ասելիք կա:

Հեղինակը վերջացնելով իր հառաջաբանը, այսպես է ասում. «Մեծ հույս ունիմք, թե ազգը կընդունի Սոս և Վարդիթերը, վորպես մի տիար պատանու նվաստ յերկասիրություն»:

Վո՛հ, յերանի՜ թե մեր ամեն պատանիքը այդպես լիներին. այն ժամանակ, Կոմս Եմմանուելի և Մելուխեշայի արտասուքը վաղո՜ւց և վաղուց սրբված կլինեյին:

---

* Ընդված՝ դորա... ԽՄԲ.:

Սխալվում է պ. Պռոշյանցը. ազգը ընդունեց այդ գործը (և իրավունք չուներ չընդունելու) վորպես ապագայում ավելի մեծ հույսեր տվող յերիտասարդ բանաստեղծի մի աշխատություն, «Յեվ հայրաբար ներողամիտ կլինի նա»— շարունակում է հեղինակը— «սորա միջի բազմապատիկ թերություններին»:

Պ. Պռոշյանցը շնորհակալության և հարգության և արժանի և վոչ ներողության. նա հանցանք չէ գործել, վոր ներողության կարոտի. նորա աշխատության ելական արժանավորությունքը* շատ և շոշափելի** յեն, մինչդեռ թերությունքը չնչին և աննշան: Այո՛, կան մարդիկ, և մենք իսկ մի քանիսը նորանցից տեսել ենք, վոր ուրիշի արժանավորությունը խոստովանելուց այնպես են փախչում, ինչպես «սատանան խունկից». այդ մարդիկ իրենք չունենալով մի արժանավորություն համարում են ձեռք բերել նորան ուրիշների արժանավորությունքը ուրանալով, այո՛, շատ անգամ արատավորելով վոչ միայն հեղինակի գործը, այլ և նորա անձը: Պ. Պռոշյանցը չէ կարող բացառություն լինելով չհանդիպած լինել այնպիսի դատողության, կարող բացառություն լինելով չհանդիպած լինել այնպիսի դատողության, վոր ավազակաբար կամենում եյին կողոպտել հեղինակից այն, ինչ վոր ավազակաբար կամենում եյին կողոպտել հեղինակից այն, ինչ վոր անկողոպտելի յե: Մենք ասում ենք այս խոսքը, վորովհետև մի քանի այդանկողոպտելի յե: Մենք ասում ենք այս խոսքը, վորովհետև մի քանի այդպիսի ինքնահավան և անգործ մարդկերից լսել ենք զանազան խոսքեր Սոսպիսի ինքնահավան և անգործ մարդկերից լսել ենք զանազան խոսքեր Սոսի և Վարդիթերի վրա: Տակտին ներելով նորանց չենք ուզում վերագրել նոցա անհավանությունը մի կամավոր*** կուրության, վատ խորհրդով, այլ անգիտության և թյուր հասկացողության բանաստեղծության մասին:

Մեր հետևյալ խոսքերի մեջ վերստին կլսեն այդպիսի անձինքը այն, ինչ վոր բերանացի արդեն ասել եյինք. գուցե այս կրկնությամբ բժշկվի նոցա միտքը:

Յեթե այն պատճառով պիտի մեղադրվի հեղինակը, վոր նորա գործի մեջ անկատարություն կան, հարցնում ենք. «վորի՞ գործն է կատարյալ»: Այսոր Միլտոնը և Շեկսպիրը, Հոմերոսը և Դանթեն ազատ չեն անկատարություններից. մեր պատվելի փիլիսոփայքը**** մի՞թե այս էլ դեռ չգիտեն: Պետք չէ մոռնալ, վոր այս մարդիկը, վորոնց անունը տվինք են ամենամեծ բանաստեղծքը, վոր յերբևիցե ծնել են լուսնի տակ: Բնությունը յերբեք չէ իրագործում կատարելության գաղափարը մեկ անհատի մեջ, հետևաբար և նորա գործի մեջ. բնության զուգակշռող հիմնական որենքին դեմ է այդ: Կատարելության գաղափարը այնպիսի մեծ բան է, վոր մեկ առանձին առնված հոգի, թող լիներ նա ամենամեծը մահկանացուներից, այնուամենայնիվ բավական չէ տանել***** նորա մեծությունը******. կատարելության բնակարանը է բովանդակ մարդկության հոգին:

---

* Ընդված՝ այնքան... ԽՄԲ.:
** Ընդված՝ լինելով... ԽՄԲ.:
*** Ընդված՝ և վոչ գովելի... ԽՄԲ.:
**** Ընդված՝ այդ... ԽՄԲ.:
***** Ընդված՝ կատարելության... ԽՄԲ.:
****** Ընդված՝ սորա... ԽՄԲ.:

Յեթե ս. Պողոսյանցը չէ ստեղծել կամ չէ նկարագրում մեզ բնավորությունը այնպես, որ աստիճան-աստիճան աճելին ու հասակ առնուին կարգացողի առջև, դրա փոխանակ հասարակաց կյանքի նկարագիրը շատ վառուն և կենդանի գույներ ունի. և այդ հասարակության մեջ ապրող բնավորությանց այս կամ այն մոմենտները հիանալու արժանի հարազատություն: Բացի սորանից, ս. Պողոսյանցը արդյոք չպիտի՞ դուրս գեկած լիներ բնականությունից, յեթե հայկական կյանքի մեջ (ընդհանուր առքով) յերևեցներ մեզ այնպիսի բնավորություններ, որ սկզբից մինչև վերջը աճում եկին լոգիկաբար: Յեվ հայոց կյանքը ա՞յն վիճակում և ներկայումս, ուր այդպիսի բնավորությունքը (ընդհանուր առքով) մատացածին չհամարվեցին: Ամեն բանից առաջ քննելիքը և ազգի կյանքը. վորովհետև այդ կյանքն և բանաստեղծի հիմքը, վորի վրա կառուցանում է նա իր շինվածքը: Հայոնի չէ թե ազգն էլ մեղավոր չէ, յեթե նորա կյանքը չէ յերևեցնում այսոր այնպիսի բնավորություններ և յերևույթներ, որ չկան Սոս և Վարդիթերի մեջ: Նոցա աճելության համար հարկավոր և հող, հարկավոր են պայմաններ և հնարներ, վորոնցից զուրկ ենք այսոր և վորոնց ներկությունը գուցե թե լցնե լուսավորությունը մի մասով, յեթե պիտություն ասած կոխան Հայաստան:

Բայց ինչ վոր ներկայումս կա Աշտարակում, ինչ վիճակում վոր և այդ գեղի կյանքը, այդ բոլորը մեզ հասկացնելու համար իր բոլոր ջանքը գործ և դրել հեղինակը. վո՛չ միայն մաքուր խոճմտանքով, այլ և շատ լավ հասկացած լինելով և ըմբռնելով իր խնդիրը: Այնպիսի բարակ, հոգեբանական և շատերի աչքից անզգալի կերպով Ոչող անցնող յերևույթներ և բռնել և ամրացրել թղթի վրա, և այն, պարզ, բնական և անզարդ խոսքերի միջ- նորդությամբ. այնպիսի հարազատություն ունին այդ տեղերը, վոր մենք, չնայելով վոր մեր հասկացածը վաղուց անցել և սովորական չափից, չենք կարող մի քանիսը ցույց չտալ: Այո՛, պարտական ենք ցույց տալ, վորովհետև մինչև այժմ թերությունքն ենք միայն ցույց տվել, վորովհետև արժանավորության մասին ընդհանրապես ենք միայն խոսել: Բայց կատարել այս պարտականությունը, և այն քիչ թերթերի մեջ, հեշտ չե. վորովհետև բովանդակ գործը, բացի մեր հիշած թեթև անկատարություններից վոգեվորված և մի բնական արժանավորությամբ, այնպես, վոր մարդ չե իմանում, թե վորի՛ քամակից գնա և վո՛րը ցույց տա: Մենք պաշխատենք մի քանի բան հանդես հանել. խորհուրդ տալով ամեն հայի, վոր առնու այդ գիրքը և ինքը կարդա, վորովհետև անհնար և նորա բովանդակ արժանավորությունը մի քանի յերեսի մեջ տեղակել:

Արժանավորության կարգ ենք դնում, գործի սկզբից մինչև վերջը բնության նկարագրությունը: Այդ պարզ, միևնույն ժամանակ հոյակապ նկարագրության մեջ չկա և վոչ մի կեղծ գիծ: Սարերը, դաշտերը, այգիքը, տարու յեղանակները, նոցա ազդեցությունքը լեզու յեն առել հեղինակի գրչի տակ:

---

* Ջնջված՝ բանաստեղծի հիմքը... ԽՄԲ.:

Արժանավորության կարգ ենք դնում Անուշի նկարագրությունը (տես. 15) ուր ղարմանալի հարազատությամբ յերևում է Անուշի մեջ մի հայ աղջիկ։ Սոսը խնդրում է նորանից ծաղկազարդ կիրակի որը իր քաղած մանուշակները Վարդիթերին տալ յեկեղեցում։ Անուշը սրտով ուզում է կատարել իր ազգականի խնդիրը. բայց իր սեռի սեփական ամաթխածությունը ստիպում է նորան հողդհողդվել։ «Վաի, տո՛ւր տեսնեմ,—ասում է նա Սոսին,—վա՛յ թուք ու բեղնամ ընկիմ յես, տեսնեմ յերեսս կբռնի՛, վոր ասեմ Սոսն ա ղրկել, համա թե վոր խոսվի, չի առնի, հետո ասի՝ ձշը ցեխից դու հանա՛, փալանը դու դզի՛, նոխտեն դու պլովը տուր, ել ինձանում մեղք չկա»։

Յեկեղեցու մեջ, յերկար բարակ Վարդիթերի հետ մտերմաբար խոսելուց հետո, յերբ Անուշը հայտնում է նորան մանուշակների մասին և ասում է, թե ինքը չեր հոժարում վիզ առնուլ այդ հանձնարարությունը, վախենալով, թե մի՛ գուցե Վարդիթերի սիրտը ցավեցնեն, բայց հարկադրվելով իր յեղբոր թե մի՛ գուցե Վարդիթերի սիրտը ցավեցնեն, բայց հարկադրվելով իր յեղբոր Գարեգնի խոսքերից կատարում է, Վարդիթերը, թեև սաստիկ ուրախացել է և Գարեգնի խոսքերից կատարում է, Վարդիթերը, թեև սաստիկ ուրախացել է և չե իմանում թե ինչպես ձեռք ձգե մանուշակները, այնուամենայնիվ կանացի չե իմանում թե ինչպես ձեռք ձգե մանուշակները, այնուամենայնիվ կանացի խորամանկությամբ նույն վայրկենին չե բացում իր սիրտը Անուշի առջև. խորամանկությամբ նույն վայրկենին չե բացում իր սիրտը Անուշի առջև. «Քա՛, ինձ տուր, յես քու աղպոր զարավաշն եմ (աղախին),—ասում է նա,— «Քա՛, ինձ տուր, յես քու աղպոր զարավաշն եմ (աղախին),—ասում է նա,— Տեղն է, վոր մեկը ասե նորան, «քո հոգն վողորմի, թե դու Գարեգնի հրամանը կատարելու համար միայն ընդունում ես այդ մանուշակները»։

Բայց մի քանի վայրկենից հետո, իր սիրտը կատարելապես բանալով Անուշի առջև և ապսպրելով Սոսին հասցնել իր գաթան, ասում է, վոր ինքը Անուշի առջև և ապսպրելով Սոսին հասցնել իր գաթան, ասում է, վոր ինքը Հաստատ է իր սիրտ մեջ և խնդրում է, վոր Սոսն ել խոսքին Հաստատ մնա. Հաստատ է իր սիրտ մեջ և խնդրում է, վոր Սոսն ել խոսքին Հաստատ մնա. «Համա, իմ աղլուխը քու պլովը, չես տղա դու աղջիկ, թե վոր ինձանից հետ կաննես»,— ուսում է նա Սոսին, Անուշի բերնով։

Շատ քաղցր է գալիս մեր ականջին, յերբ լսում ենք հայկական անբռնաբազդ խոսքը, յերբ այդ ձայնը դուրս է գալիս ուղղակի ազգի սրտից, ազգի հուսկացողությունից, յերբ նա թունավորված չե արվեստական բարոյականությունից, վոր յերևում է չինական պատշաճների մեջ և վորի տակ տնքում նուիրյունից, վոր յերևում է չինական պատշաճների մեջ և վորի տակ տնքում և այսօր նույնիսկ լուսավորյալ Յեվրոպան։

Ծաղկազարդ կիրակին* առհասարակ մեծ աջողություն է բերել հեղինակի գրչին։ Յեկեղեցու մեջ ժողովրդի նկարագրությունը, Փառք ի բարձունսը, տղոց ճեռ** ու ճոճանակները***, պատավների բարձրախոս աղաղակը,

---

* Ջնջված՝ մեծ աջողություն է բերել... ԽՄԲ.։

** Այսպիսի մի խաղալիք նոր Նախիջևանն ել կա. այնտեղ ճըռ ճըռ է նորա անունը։ Ապրելի 23-ին առավոտ Գևորգի յեկեղեցու կարգից դուրս ելանն է լինում և այդ տոնը տևում է յերեք որ։ Այդ որերում բոլոր Նախիջևանի կնանիք, աղջիկ և յերեխաները ճոճում են ճոճանակները, ուր փոքրիկ վանդակ կամ յեկեղեցու պարսպի մեջ են, կամ պարսպից դուրսը, ուր փոքրիկ վանդակ կամ յեկեղեցու պարսպի մեջ են, կամ պարսպից դուրսը, ուր փոքրիկ վանդակ կամ ոտանոց է լինում։ Լոկ այդ որերում ածում են յերեխայք իրենց ճըռճըռները, բայց վոչ յեկեղեցու մեջ։ Եվրը այդ տոնը անցավ ել ճըռճըռ չե յերևում, մինչև առաջիկա տարին։

*** Ծաղկազարդի ճոճանակի, ասյոր, դո՛նե հազար տարեկանից ավելի լինելը յերկ-

յերիտասարդ տղոց աղջիկ տեսնելու համար ժամի դռանը հավաքվիլը, այս բոլորը շատ պատվական են։ Իսկ ինչ վոր վերաբերվում է քահանայի բարկության, տղոց ճեռերի և ճոճանակների հանած աղաղակի համար, քահանայի բնավորության հարազատությանը մենք ուզում ենք լռել, վոր հեղինակը խոսի։ «Յերեխեքը... ճոճանակներն ու ճեռերը ածեցին (յեր. 19). ըստոնց ձենը տերտերի ձենին կոխեց, վոչով բան չեր կարում իմանալ Փառք ի բարձումից. տերտերը շատ էլ բարկացավ, վո՛ր մինին ասես... մինը չի տասը չի... չարեն կտրեց խեղճ յերիցի, քո՛ւ փոշիման յեկավ տեղը կաննեց, ու քո՛ւ, քո՛ւ, ասեց, կոտորվիք դուք, ջըհդի ժամ շինեցին ելի, ե՞ս ինչ սովրությունն ա տո՛»։

Մեզ շատ շարժել է Աշտարակի կանանց ջերմ կրոնասիրությունը, ուր տեսնում ենք մանկական պարզամտություն, ներողամտություն, և ուր բարեպաշտ ու առաքինի հայ կինը իսկույն ճանաչվում է։ Փարպու ճանապարհի բանն եմ ասում։ Յերբ Համասփյուռը բարկացած Սոսենց խաղ ասելու վրա, անիծախառն խոսքեր է հանում բերնից և նախատում է Վարդիթերին, այն խեղճ կնանիքը մեղադրում են նորա բարկությունը և անպատշաճ են համարում. «Քա՜, ընչի՞ յես ես բարի լսի առաջին, սուրբ ըխտի ճամփին բերանդ փիս բաց անում...»։ Այս տողերը արտագրված ժամանակս, ասես թե՝ կենդանի ձայնով լսում եյի այս խոսքերը հայ կնոջ բերնից. այնչափ բնական և այնչափ հարազատ են նոքա նորա հասկացողության, մտքերին և տրամաբանության։

97, 98, 99 և 100 րդ յերեսներում, Վարդիթերի հոր և մոր խոսակցությունքը և սոցանից յերևացած կյանքի պատկերը այն աստիճանի գեղեցկություն ունին, վոր մենք չենք կարող մեր խոսքերով բացատրել։ Իսկ մեջ բերել հեղինակի գրվածը նույնպես չենք կարող, վորովհետև ամբողջ այդ յերեսները պիտի արտագրեյինք, դուրս ձգելու վոչ թե բան, այլև բառ չկա։ Մենք հերիքանում ենք այդ յերեսների թվանշանքը ցույց տալով։

Սոս և Վարդիթերի ընթերցողներին հայտնի յե Վարդավառի անցքը, ուր Վարդիթերի մայրը նշանում է իր դուստրը Սոսի հետ և համբուրել տալիս։ Մենք ուզում ենք մեջ բերել պառավի այն խոսքերը միայն, վոր նա Հանա-

---

բայության տակ չե ընկնում։ Հովհաննես Իմաստասեր կաթողիկոսը (Հովհաննես պատմական կաթողիկոսը չե, նորանից առաջ և ապրել Իմաստասերը) իր առենարանությամբ վկայում է այս բանին։ Ահավասիկ նորա խոսքերը. «Որպէս և ի գալստեանն աւուր ոստան ամբառնալ և ճօճանակս չարժել»[41]։ Մեզ հայտնի չե, յեզա՞ծ է արդյոք այս բանը հունական յեկեղեցու մեջ, կամ կա՞ արդյոք այժմ։ Ցնծի այդ բանը հույներից չե մըտել մեր մեջ, դուցե ներվի յենթադրել, վոր մեհենից լինի յեկած։ Հայկազ. բառար. վենետ. 1836—37 ճոճանակ բառին ջրոցի նման մի բանի նշանակություն է արված. կարելի չե հասկանալ, վոր Աշտարակի ճոճանակը հասկացնե թե ծաղկազարդի ճոճանակը ջրոցից տարբեր է։ [Ջնջված՝ Այդ բառարանը չա՛տ և մե՛ծ սրբագրության կարոտ է ընդհանրապես։ Մեկ որ առանձին հատվածով կխոսենք այդ մասին։ ԽՄԲ.]։

վանքից տոմն դառնալուց* և Հեթումի առջև բոլոր անցքը ուրանալուց հետո, չե հերիքանում իր անձը միայն արդարացնելով, այլ և դատապարտում է դրսե-դուրս խոսողներին։ «Ը՛հ, հողս դրանց ասասւսա գլխին,— ասում է նա,— թող ենքան հաչան, հոգիները դուրս գա. քա՛, հե՛չան, ես ի՛նչ կրակ ա, ամոթ չունի՞ն ըստոնք. ինչ բերաններից դուրս ա գալի քցում են, փառք աստըծու, վոչ ով չի մեռել, յերես յերեսի կլնինք, են վախտն ինչ կասեն»։

Բանն այն է, վոր դրսի խոսքերը բոլորը ճշմարիտ են և յեթե բանը յերես յերեսի գալու ընկնի, տարակույս չկա, վոր իր ստությունը պիտի բռնվի. բայց և այնպես խորամանկ պատավը ոգուտ է քաղում այն ազդեցությունից, վոր այս, դրամականապես խոսելու ձևը անում է իր երկա վրան։ Հեղինակը քաջ հասկացել է այդ տեսակ պատավների և ընդհանրապես կանացի բնության ձգականությունը։

Հայտնի յե թե այս մի քանի բանը մեջ բերելով, մենք վոչ միայն ինչ վոր այս տեսակ ընտիր տեղեր կար չհատցրինք, այլ մեջ բերածն էլ տկար կերպով ստորագրեցինք։ Այս տեսակ հոգեբանական յերևույթը պետք է, վոր ամեն մարդ իր մտքով ու սրտով հասկանա. ուրիշի խոսքով արված նկարագրությունը թույլ և լինում, մանավանդ յերբ ամբողջ բանի ընթացքից մի կտոր և դուրս բերվում։ Ո՛նց մենք ավելի աջողակություն չունինք այս բանում։

Նկարագրելով Աշտարակի, վորով գրեթե և բյուրավոր ուրիշ հայերի բարոյական անմեղությունքը, հեղինակը չե մոռանում տեղ-տեղ նոցա բարոյական խոցերն էլ բանաք, չե մոռանում խարազանել անբարոյականությունը։

Հեթումը, այնքան հասած վորդոց տեր, այնքան այգինների տեր, ծերացած և մի վոտքը գերեզմանի մեջ, այնուամենայնիվ (յերես 86) կապում է ուրիշի այգու ջուրը և առու բացում դեպի իր այգին, «իմ վողորմածիկ հորիցը ես եմ տեսել ասելով», մինչդեռ ջրի հերթը իրենը չե, այլ իր խեղճ հարևանին։ Հարևանը տեսնում է բանը և բողոքում է։ Հեթումը պատասխանում է. «վորդի՛, քու արևը, յես խաբար չեմ, կըլնի վոր ջուրն ինքն ա ծակել» և այլն։ Խեղճ հարևանը գիտե, վոր Հեթումը սուտ է խոսում. աղաչում է նորան, «Հե՛թում ափեր,—ասում է վողորմելին,— քեզ արքայություն ըլնի, կտրե՛ս վոչ. ինչ ունինք չունինք չորացել ա»։ Բայց չնայելով այս բոլորի վրա, այն խեղճի հեռանալուց հետո, Հեթումը նորից քանդում է ջրի ճանապարհը և հարևանի ջուրը կտրում։ Պե՛տք եր վոր Հեթումի պես մարդիկը խրատ առնվուն այս բանից. մանավանդ հեղինակը, Հեթումի այս անիրավ գործի միջոցին, փափակին ուղարկում է, վոր իմաց տա Հեթումին Վաղարշակենց Արշակի մեռնիլը։ Պարզ է, թե արգո հեղինակը կրոնաբար ուզում է ազդել այդպիսիների քարացած խղճմտանքի վրա, կամ գո՛նե բարոյապես, յերբ հիշեցնում է նորան աշխարհի յերեսին մահ լինիլը։

---

* Ջնջված՝ հետո... ԽՄԲ.։

Վո՛հ, ցեղն կրոնը ազդեր բարոյականության վրա, չերկիրը դրախտ չեղած կլիներ. բայց ո՞ւր է:

Նույնպես Բագրատ ազան (չեր. 139—140), Սոսի անունով չերեք վոչխար և առնում Թուրքից և Սոսին վոչ միայն մեկ հատ ցույց տալիս, այլ պահանջում է, վոր նա այն մեկն էլ մենակ չուտե, այլ իրեն և տանուտերին (գյոմիվա) էլ հրամիրե: Աղնիվ չերիտասարդը հասկանում է բանի զորությունը և շատ քաջուշ կերպով խայտառակում է Բագրատ ազայի խարեբայությունը և ենթադրությունը: Նա այն մեկիցն էլ հրաժարվելով ասում է. «չնորհակալ եմ, ազա՛... են մի վոչխարն էլ քեզ բաշխեցի. թող ասեն վոչ, Սոսը իր ոտքամբ վաշառք ա կերել»:

Պ. Աբովյանցը (Վերք Հայաստանի. չեր. 37) մեկ քանաքեռցու այսպես է ասել տալիս իր խնամի Հարությունին. «ասածս սարին, քարին դիպչի, քամին տանի... քո գլուխը վոր կա, սար ա. անձրև, ձին, կարկուտ, կայծակ թող դիպչի՛ էլ, դա՛ էլ, ի՞նչ վեճդ ա»:

Բագրատ ազայի գլուխը խնամի Հարությունի գլխից շատ պինդ է. Սոսի խոսքերը նորա ականջին ի՞նչ կազդե: Յեվ իրա՛վ, վոր տեսնեք, թե ի՞նչ անամոթ լրբությամբ պատասխան է տալիս: «Ապրի՛ս, վորդի, խելոք ես խոսում. ոձի փուշը լակլակը (արագիլ) կմարսի...»:

Քեզ որ տեսնում եմ, դու վոչ միայն ոձի փուշ, մասիսոդոնի* վոլորն էլ կմարսես....

Մենք մեր կողմից շնորհակալություն ենք հայտնում արդի հեղինակին, վոր բացում է ազգի այս տեսակ բարոյական խոցերը, վոր ծածկված մնալով վոչ միայն կարող են փթիլ, այլև իրենց վարակիչ վորակությամբ շատ կորստաբեր լինել: Սորա ընդհանուր մարդկության խոցեր են և վոչ լոկ մեր ազգին սեփական. թերևս շատ, ընդհանուրի, խոցերից ազատ և մեր ազգը: Չկարծենք, թե այս խոսքերը ասելով խոսնկ ենք ծխում ազգին, վո՛չ. միայն ճշմարտությունն ենք խոստովանում: Կուզե՞ն ավելի ասենք. ահավասիկ. ուրիշ, նաև լուսավոր ասված, ազգերի բարոյականությունը (ազգ ասելով հասկանում ենք հասարակ ժողովուրդը) շա՛տ ցած և հայոց ազգի բարոյականությունից: Մենք կարդում ենք լուսավոր աշխարհներում գործված հանցանքների և վոճիրների վիճակագրությունքը և տարեգիրքը. այս տողերը գրելու միջոցին, մի քանի այդպիսի գրքեր ընկած են պատուհանիս վրա. մեզ սարսափեցնելու համար: Թեպետ մեր ազգի մասին չունինք այսպիսի գրքեր, բայց կենդանի ազգը, վորի հետ միշտ և շատ ծանոթ ենք, առնում ենք վորպես մի անխարդախ գիրք, և համեմատելով ու-

---

* Ջրհեղեղից առաջ ապրած մի ահագին [Ջնջված՝ կենդանի է... ՄՄԲ.] խոտաճարակ և. պատկանում է հատամոլրի կամ բազմակզակ [Ջնջված՝ կենդանիներին... ՄՄԲ.] կենդանիներին: Այժմյան փիղը, վոր իր մեծությամբ [մեզ զարմացնում է, կարող է միայն մասիսոդոնի ձագը լինել: Այս կենդանու մնացեղ այժմ հայտնված նշխարներից, ամենալավ կմախքը պահվում է Լոնդոնի Բրիտանական մուզեոնի մեջ: Ո՛չ ոք կենդանի չունի ոչ մի գաղափար նորա ականջը խոսի:

րիշների վիճակագրությանց հետ ասում ենք այն խոսքը, թե մեր ազգը շատ խոցերից ազատ է։

Բայց, չնայելով սորա վրա, յերևեցած խոցերն էլ պիտի բանալ և բժշկել։ Թեև մի փոքր հիվանդ լինելը մերձիմահ հիվանդությունից անհամեմատ լավ է*, սակայն, կատարյալ առողջությունը կամ առողջանալու համար աշխատելը ավելի լավ։

Աշտարակ գեղի հասարակաց տեսչության և հասարակաց տնտեսության մասին մենք լսում ենք մի շատ պարզ և սրտաշարժ խոսակցություն, յերբ Սոսենք, գիշերով, արաղ են քաշում իրենց այգում։

Դարը փողոք լավում է Վայկունի բերնից. «մեր գեղի ամեն բանն էլ լա՛վ ա, ափսո՛ս վոր քեֆխուդեքն ու տանուտերը մի քիչ շահաձեր են. ես ի՞նչ ա, հիմի խարջ են կիտում, յես մի խեղճ մարդ եմ, նրանք ինչ վոր ինձ կհասնեն խարջը տալու, երկու հնքան են առել. սաքի ասում են, վոր գեղի միջին տարեկան մասրաֆ ա ելել, փչացել ա, պտի լրացնենք. համա վո՞րտեղ, քանմա փրանք են ուտում, քյասիբ քյուսիբի տունը քանդում, իրանցը շինում. յես գրողամնա մի հիբի ունիմ, ինձ տարել են զորով կապել իրեք հիբատիրանջ հետ, թե արի՛ խարջ տո՛ւր, էլ չեն ասում թե աշտարը գոմշի հետ կարա՞ լուծ անիլ» (յեր. 169)։

Տխրությունն և դալիս մեր վրա, յերբ հիշում ենք, թե հարստահարված յերկրագործը կամ շինականը բռնագաւված և լուռ մնալ իր հարստահարողների ընդդեմ և միայն գիշերով, ծածուկ, խորհրդական առանձնության մեջ բողոքել, յերբ վոչ վոք չեր լսում նորա բողոքը...

Սոսի կարծիքը այս տեսակ բամբասված ազգային կառավարիչների մասին, թեև մենք պատրաստ ենք ընդունել վորպես մի շար յերևույթություն, բայց խոստովանում ենք ցավելով, վոր շատ մարդ առուգապես այդ կարծիքի տեր է։ «Ա՛յ տղա, ի՞նչ ես խալխի վոտքը քաշում, Վայկո՛ւն,— ասում է Սոսը,— եդ վո՞ր գեղումը չի մասրաֆ ըլնիլ. մի մոլորով (կառավարության աստիճանավոր) կամ յեսավուլ, վոր գալիս ա բա նրան հաց չի՞ պետքը, պաուիվ չի՞ պետքը, հավի միս չի՞ պետքը, գառը, գինի, արաղ չի՞ պետքը. դու քու յերեխին, վոր մի կապա ես կարում, թե եքսի որը խոսքիցդ դուս ա գալի, ասում ես, թե ա՛յ վորդի, քեզ շար կարեցի, վոր ինձ անկաչ անես, դու ջլիս (փսպաս) քառանկաչ (խուլ) դառար։ Հիմի նա մեր վրա ինչքան ա միտք անում. մեր աղեն ա, վոր տեսություն գնանք, բա մի կարաս գինի, մի հինդ լիտր արաղ չպիտի տանի՞նք. հավորդի ժամանակ ա գալի, թագա հավոր, լավ դեղձր, չի՞ հարկավոր տանինք. ես հո մենակ մեզ համար չի՞, սաղ աշխարքի որենքն բռենց ա. դու քու բարությունիցն ես տանում, աբարանցին էլ տանում ա նրա ձիանոնց տարեկան գարին, քուրդը՝ նրա գառն ու վոշխարը, ֆուրքը նրա յեղն ու պանիրը, գաշտցին՝ յոնջեն, ցորենը. ամեն մարդ էլ իրան գեղի գոնեմածից տանում ա նրան»։

---

* Ջնջված՝ բայց... ԽՄԲ.։

— Սո՛ս ջան,— պատասխանում է Վայկունը,— եդ դրուստ ես ասում, համա ինչքան էլ վոր ըլնի, եղբան շատ մասրաֆ խարջ չի՛ ըլնիլ. սրա միջին մեր իշխաններն էլ են շահվում»:

— Յես արմանում եմ քեզ վրա,— խոսքի մեջ է մտնում Սոսի մեծ յեղբայրը Պարետը,— ա՛յ տղա, բաս իշխանները քու հոր մշա՞կն են, վոր ամեն մովրով, վարդապետ, մենծ մարդ գալուս, տանում են իրանց տունը վեր բերում, իրանց յերեխի բերնինը կտրում, նրանց ուտացնում. հալբաթ վոր մի շահմունք չունենա, ընչի՞ կանի, նա էլ քեզ պես մի մարդ»:

Բայց Վայկունը էլ առաջ է տանում իր բողոքը,— ի՞նչ են խարջում, յեղն էլ, հացն էլ, միսն էլ, ամեն բանն էլ գեղիցը գդիրը մինի տեղ ակ հնգապատիկ հավաքում ա ու բերում. ո՞վ դիտի թե ընչանք կրում ա, վոր մովրովը գնալուց հետո տասն որ ուտում են չի հատնում. մի տուննա նրանն ըլնում. յես էլ, վոր ընենց տուն ունենայի, են աղբանց վոտը կպաչկի, իմ տանըս վեր կբերեյի, խոսքս կշտին կտրած կըլներ, ո՛ամ տունն ուզեյի կքանդեյի, ոսն ուզեյի կշինեյի. ձիս որ դհովն ուզեյի, դենը կքշեյի. հիմի մովրովը գալուս, թեզով իշխանն ա գնում գլուխ տալի, բարովում, աղավար խոսում, հետը նստում վեր կենում. համա յես, վոր տեսնում եմ եկավ, գլուխս առնում եմ կորչում, թե հիմի գդիրը կգցի ճիպոտի տակը (!) թե արի ձին բռնի՛, տա՛ր գոմոմդ պահի՛, խոտ, գարի տո՛ւր, մովրովի համար ճոտ տա՛ր. իշխանների տանն ա վեր գալի, աղքատների տունն ա քանդվում, հո սուտ չի՞: Հիմի ասենք թե դու ինձանից համբա յես, քու տանն էլ վոչով չի վեր գալի, համա յես իմ աղքատ տեղովս քեզանից շատ եմ խարջ տալի, կոռ քաշում, ձի տալի. թե յես ու դուն էլ մի կռիվ անենք, թե երկու մարդ իմ բարեկամներից իմ դիհը քաշի, տասը մարդ դեղիցը քու դիհը կպահեն, ընդուր վոր գիտեն, թե դու ինձանից լավ ես. քեզնից խնդ կհանեն. համա ինձնից, ուր տարի չարչարվին, չոր վոսկորից սավահի վոչինչ չեն կարող գտնիլ. շատ էլ ասենք են կռվումը յես արդար ըլնիմ. վա՛յն եկել ա ինձ տարել. թե կերթամ մովրովին կգանգատեմ, յերբ վոր քեզ կուզի նա, հետդ գեղիցը մի թուղթ կբերես, թե գանգատողն ինքն ա մեղավոր (!!), են վախտը մովրովը քեզ բաց կթողա ինձ կծեծի (!!!) հետո, հալբա՛թ, դու էլ մի կարաս գինի կխոստանաս, կբարձես ձիուդ ու կտանիս»:

— Վայկուն ափոր խոսքերն ավետարանի կողքին գրված են,— ասում է Արշամը, Սոսի փոքր յեղբայրը, Սոսին ու Պարետին,— սաքի ընչի՞ եք յերկու յերեսանություն անում, կոմմնապահ ըլնում. հիմի, ես հո մեր պապական հիքին ա, ուզենան կխլեն կտան ուրիշի (!!!). քանի՞, քանի՞ որինավներ կան, վոր ընչանք քեզնից մի ոգուտ չեն ունեցել, բանըդ չեն շինել...»:

Արշամի բերնով խոսում է նոր ժամանակների վորդին: Պարետը և Սոսը գուցե իրենց սրտում ընդունում են Վայկունի խոսքերի ճշմարտությունը, բայց վախենում են, հայտնի դավանել ճշմարտությունը: Արշամը իր սերունդի յերևեցուցիչն է. նա վոչ միայն ընդունում է այդ դառը խոսքերի ճշմարտությունը, այլև դատապարտում է իր յեղբարց յերկու յերեսանությունը: Ինչպես

առաջ էլ ասացինք, ափսո՛ս, որ շատ քիչ հանդես ունի [Սոս և] Վարդիթերի մեջ այն ուղղությունը, որ յերևում է[*] Արշամում, թեև այս չափիցն էլ տեսնում ենք կենարար սկեպտիցիզմի արած ազդեցությունը: Մենք աջողությո՛ւն և ընթա՛յք ենք մաղթում այդ յերկնային դեսպանին:

Պ. Պռոշյանցը, Աշտարակի տնտեսական վիճակը և հասկացողությունքը յերևան հանելով, այնպիսի փափուկ և անզգալի կերպով մեղադրում է այդ հասկացողությանց սխալականությունը, որ ամեն կարդացողի համար, թվի մեղադրանքի կարգում էլ չեն: Սոս և Վարդիթերից դո՛ւն, յեթե վոչ ուրիշ աղբյուրից, շատերին հայտնի չի, թե բոլոր աշտարակցիք այգեգործությամբ են պարապում. այդ և նոցա տպրուստի միակ ճանապարհը: Տեսե՛ք այժմ, թե ինչ աջողականությամբ մեղադրում է հեղինակը:

* Սոս և Վարդիթերը կարդացողի մտքին կվինին յերևանցի ուսմատավոր յերիտասարդը, որ Հանա-վանք յերթալու ժամանակ, ճանապարհի վրա, ընկան իրենց բարեկամ Գարեգնի ձեռքը, որ մի փոքր հանգստացնելու համար տարավ իր տունը (յեր. 107—109): Նա, խաղող դնելով նոցա առջևը, ներողություն է խնդրում, որ մի ուրիշ բան չի կարողանում մեծարել, վորովհետև տունը մարդ չկա, ամենքն էլ հիքման են, աշտարակցոնն էլ եդ մի հիքին ա,— ասում է նա:—Գարոնք ծափում ա աչքերը տնկում են նրա վրեն: Ընչակ մասիլը վեր են տնում՝ իրանցն իրանց ա հանում. աղսրե՛ր, դուք, քաղքեցիք եք, վորդ առուտուրի չեք, վորդ փեշակի**, մենջներիդ

* Ջնջված՝ կարդացողի... ԽՄԲ.:

** Հայոց արհեստագիտությունը շատ վաղրալի վիճակում է այսօր, դորա վրա հարկավոր եր մի փոքր մտածել ու աշխատել որևոր արհեստագիտությունը ծաղկեցնել: Մեր կարծիքով, կասուի թե ուշ, այս բանը ուրիշ հիրդ չի լինիլ, յեթե վոչ աշակերտանը ուղարկելով Մոսկվա և Պետերբուրգ, վոչ թե զղրոցներում, այլ գործատներում, վարպետների կամ գործարաններից մեջ այս կամ այն արհեստը սորվելու համար: Եվրոպ հայը, չնայելով արհեստագիտության թշվառ վիճակին մեր յերկրում, այնուամենայնիվ տալիս է իր զավակը, վոր այս կամ այն արհեստը սորվի, մեղ թվում է, թե նա պատճառ չունի այդ արհեստների ավելի կատարյալը ձեռք բերելու համար իր վարդին չուղարկել այս կամ այն մայրաքաղաքը: Ամեն տեղ աշակերտը ճրի ծառայում է իր վարպետին 4—5 տարի. այս է և մայրաքաղաքների սովորությունը, ուրեմն այս կողմից էլ խափանարար պատճառ չկար, վոր հայը նորանից տախտվելով նախընտիր համարվեր իր յերկրի արհեստը, վորով պարապողները միշտ աղքատ են:

Ստուդ է, այդ քաղաքներում պետք է բարեպաշտ հայեր ճանաչել, վոր հայրաբար խնամք ունենային այն աշակերտաց վրա, հոդրդրելով, իրատելով, բարի որինակ տալով, ժրաջանության, առաքինության, աշխատասիրության և չարիավորության, վարպետի աշակերտը արհեստից առաջ, ընդհանրապես արհեստավորների մոլորության մեջ չթեղդվեր: Ստուդ է, հետու տեղերից Մոսկվա կամ Պետերբուրգ աշակերտ ուղարկելը, այսինքն ճանապարհի ծախքը, մի աղբատ հոր համար շատ ծանր խնդիր է, բայց մենք կարծում ենք, թե հայերը անդադար յերթևեկությունունենալով մայրաքաղաքները, անհնար է թե չգտնեին նոցա մեջ բարեպաշտ և առաքինի անձինք, վոր ազգի առաջադիմության անուղղով իրենք վրե առնուին տեղ հասցնել սպասանչակը և հայրական խնամակալությամբ տալ նորան մի ընտիր վարպետ, այս կամ այն արհեստ, նայելով տղայի ընդունակության և հարմարության: Մենք կարծում ենք, թե այս շատ մեծախորհուրդ խնդիրը և մեր

պարապ մարդ չկա. ռանչպարն էլ (ֆերմերապետ) իրա ցանքն ու վարքին ա, աշխատում տարեկան հացը տուն լցնում. տավար, վոչխար, դոմեշ, ձի, դռվթան, շուք պահում. հացը, յեղը, պանիրը, բուրդը, ամեն բանն էլ իրան իրան գալիս ա. մենք, յերկուսիցն էլ զուրկ ենք, ես մի հիքու յերեսին ենք մտիկ տալի. աստված մի՛ արասցե կամ կարկուտը տա, կամ Ըրթուր փշացնի, կամ տարին չբեր ըլնի սոված կոտորվիլ պատենք. մեր մասիլն եր վոր կա, ամեն բան նրան յաղի ա. յեփած կերակուր ա, մարդ, շուն, կատու, ղոպդ ու ղուշ, ինչքան աշխարքումս ժժմունք կան քոմմա էլ ուտում են, կեսը անփող հենց ճամփորդներին ենք տալի կամ աղքատներին. ես լավ ա հլա խեր ա ըլնում. քաղքումն ամին բանն էլ փողով ա, գեղըցուն էլ ունի վո՛չ. մերն ա վոր մեջ տեղը փշանում ա: Մարդս մի յերկու կով ենք պահում, թե յերեխեքանց մածուն էլ ա ըլնի, են էլ չենք կարում յոլա տանիլ, ամեն բան փողով ենք առնում»:

Ինչի՞ պիտի այսպես լինի Աշտարակի վիճակը: Ցեվ մեյան Աշտարակը չե. Աշտարակը յերջանիկ գեղերից մինն է տակավին. նորանից անհամեմա՛տ աղքատները և խեղճերը կան: Ահա, թե ինչ է պատճառը մեզ արդո հեղինակը. «վոր ըխտավորը Մողնու գեղումն ա վեր յեկած, իրանց բարեկամի կամ ճանաչի տներումը, նրանց մատաղների երին էլ, մորթին էլ, դմակի կես փայը, մատաղի կես փայը, վոտ ու գլուխն էլ տան տիրոջն ա: Բոլորը գեղը տասնութ տուն ա. ամեն մի տան տասը տասնուհինգ տրնվոր կըլնին վեր յեկած. ընենց տուն չի ըլնիլ սրանցում վոր ես իրեք որը իրան տարեկան զավուրմեն անի վոչ, բրդին հո, էլ հեսաբ չկա. ըտով էլ չեն կշտանում մողնեցիք, իրանց յերեխեքն էլ քշերն ընչաք լիս, ցերեկն ընչաք իրիկուն մի մին քերեզաններ ձեռներին մատաղ են կիտում, իրանց աղբատ ու խեղճ ասելով. սրտաբաց ըխտավորն էլ սուրբ Գեորգի դուռն յեկած աղքատին հո չի՞ կարող հետ դարձնիլ... Մողնեցիք անբան են.. թե վոր նրանք վոնց վոր ես մատաղ հավաքելու համար են աշխատում իրանց բան ու գործին կենային, հի-

---

աղքի վերաբերությամբ: Ցեթե հոգով չափ ցանկալի չե, վոր կարելի չեղածին չափ շատ աշակերտք ուղարկվին զանազան զբաղմունքը սորվելու կամ ընդհանուր լուսավորությունից բաժին առանալու, մյուս կողմից վոչ նվազ ցանկալի չե, վոր նաչին չափով աշակերտք ուղարկվելին արհեստ սորվելու: Տնտեսական դիտությունքը առանց արհեստի ոգնության չեն կարող գործադրություն ունենալ աղքի մեջ: Ցեվ յեթե ամենքն էլ փիլիսոփա դառնան, [Ջնջված՝ ուրեմն աղքին... ԽՄԲ.] այնուամենայնիվ աղքի ավերակը չի չինվիլ: Փիլիսոփայի ձեռքից չի գալիս այս կամ այն գործիքը չինել, վորին մեծատես կարող է աղքի յերկրագործությունը և վաստակաբերությունը, փիլիսոփան չի կարող հոգալ և չինել և վո՛չ մինը այն բաներից, վորոնց չինելը պատճառ է այսոր աղքի կյանքի ապրուստական խեղճության: Ցերանի՛ր թե մեր ձայնը արձագանք դաներ բարեսաչա սրտերում և մի քանի աշակերտք բերելով մայրաքաղաքները, ուրիշներին էլ խրախուսյա և բարի որինակ դառնային: Տասը տարի, լոկ, չարունակ հոգաբարձությունը այս մասին կարո՛ղ է բոլորովին կերպարանափոխ անել աղքի տնտեսական կյանքը և յերջանկացնել նորան: Ցերանի՛ր թե մեր ձայնը չանցներ վորպես «Ձայն բարբառոյ յանապատի»:

մի ամեն մինը մի խան կըլներ. աստված տվել ա, ամեն բանները լավ, հանդ-ները շատ, իրանք անբան» (տես. 157):

Ճշմարիտն ասելով, մեզ անհասկանալի չե այս տերևույթը, վորովհետև հեղինակը վկայում է թե մողնեցոց ամեն բաները լավ են և հանդն-երը շատ: Թեև արդի հեղինակը ցույց է տալիս մեզ նոցա ծուլության վրա, բայց մինչև այդ ատտիճանի ծուլությունը մեզ նույնպես անհասկանալի չե: Արդյոք մի ներքին վերք չկա՞ այդտեղ, վոր խանգարում է անտեսական կյանքի բնական ընթացքը: Թե այսպես և թե այնպես վողբալի բան:

Յերևի թե մողնեցոց վիճակից լավ չե և կարբեցոց և հանա-վանքցոց վիճակը, յերբ նոքա այդքան ժամանակ 5—6 հարյուր հոգի գալիս են Աշ-տարակ այդի քաղելու, յերբ Վարդիթերի հայրը տասն այդպիսի մշակ ա-ռաջն արած տանում է իր այգին ամեն մինին իր քաղլակովը մին հավոր խոստանալով:

Մենք խոստովանում ենք, վոր բնավ տեղեկություն չունինք, թե ի՛նչպես եյին այն կողմերի մեր գեղացիների հարաբերությունը հողի հետ: Այս պատ-ճառով տանձում ենք մեր դրիչը, վոր անգիտությամբ դատողություն չանենք, այս շատ ցավելի բաների մասին:

Սակայն ինչպես ամենայն ճանապարհորդի ներելի չե, առանց թերևս զանազան պատճառների խոր քննության, միմիայն իր վրա յեղված տպավո-րությանը նայելով այս կամ այն տեղի մասին այսպես կամ այնպես կար-ծել, այնպես ել մենք, վորպես ճանապարհորդ, մի քանի շաբաթ մնալով Եջմիածին և ընդունած լինելով մի քանի տպավորություններ, չենք կարող չա-սել այն, ինչ վոր, այդ տպավորությանց հիմքի վրա, մեզ թվում է: Աշնան Մողնու ուխտից Եջմիածին թափվող ահագին բազմությունը մեր սիրելի ազ-գակցաց, շատ ցավելի տպավորություն և գործել մեր վրա: Դոցանից մեծա-գույն մասի, Տաճկաստանից* կամ Պարսկաստանից գաղթած հայերի, այլա-կերպ և վերջին աստիճանի պատառոտուն հանդերձները, մի գրաստի վրա այր և կին իրենց մի քանի յերեխաներով միասին նստելը, իրենց կեցու-թյունը յերկու յերեք որ Ղազարապատի դրսումը մեզ** տեղիք և տալիս*** յենթադրել մի վողբալի աղքատություն, վորից չե փրկել գաղթականությունը: Մենք այդ մարդոց ներքին կացությունը չգիտենք, այսինքն այն ընկերական պայմանները, վորոնց մեջ եյին նոքա իրենց գեղում. ուստի, և, ինչպես ա-ռաջ ասացինք, այդ աղքատության պատճառը չենք կարող հաստատապես պնդնալ: Հավանական է միայն, վոր անկրթությունը և իմացական խեղճու-թյունը բնականաբար վնասակար հետևանքներ պիտի ունենային մանավանդ յերբ դպրոց-մպրոց չլինելուց հետո բերանացի խրատներ ել կամ չեն լսում խսպառ, կամ թե լսում են լոկ խավարի խոսքը: Վերջին աստիճանի բարբա-րոս ազգերի մեջ յեղած կանացի ստրկության նշանակը,— արջի նման, կա-

---

* Ջնջված՝ գաղթա[ծ]... ԽՄԲ.:

** Ջնջված՝ կարծեցնում է... ԽՄԲ.:

*** Ջնջված՝ կարծել այդ մարդոց վող[ոքալի]... ԽՄԲ.:

նանց և աղջիկների թիւից ահագին ոդ անցնելը,—* ազեկատուր լինելով տեսած ենք այն ուխտավորների մեջ։ Բողում ենք յեգիպտական ծարիրը (սյուրմե) և պարսկական խինան, վորոնցից առաջնովը արտևանունքն են ներկում, իսկ յերկրորդովը մատները։ Ո՞վ քարոզեց ժողովրդին թողուլ այդ վնասակար բանները, ո՞վ փուլթ տարավ վոչխարի առողջության և ապահովության**։

«Աղաչեցէ՛ք զտէր հնձոցդ հանել զմշակս ի հունձս իւր»[44]։

Յեթե մեր սրբասնունդ և հրեշտակակրոն, յերկնաքաղաքացի և ամպաչուս, յեթերաճեմ և ոդաչաջ կլերը հոգ տաներ գո՛նե այսպիսի բաների, մի՞թե մինչև այսոր էլ պիտի յերևեյին դոքա։ Բայց, այս է բանը, վոր դոցա վերանալը կամ մնալը, վորևիցե կապով կապված չե նոցա եյական խորհրդի հետ...

«Մեր տերտերներին էլ ասված բարի տա,—ասում է Գարեգինի բերնով անիրավ Պռոշյանցը (յեր. 2),— բոլազներին հոգ տաս յերկու այր չի վեր ընկնիլ, անջախ մաշտոցին են ջան տալի, էլ չեն ասում թե քարոզեն բալքի ես սովորությքը վերցվի»***։

Բայց մենք յերթանք դարձյալ Աշտարակ։

Ասենք թե Աշտարակը այգեգործ է. բարի յե. բայց այդին, տարին տաներկու ամիս չե կապում յերկրագործի ձեռքը, մնաց վոր այգեգործության մեծ և ծանր պաշտոնները յերիտասարդների վրա պիտի լինի բնականապես, բայց, մի՞թե չկան այնպիսի թեթև աշխատություններ, վոր առանց ծանր ուժ գործ դնելու առաջանում են, յեթե միայն աչքաբաց խնամատարություն լինի շինականի կողմից։ Յեթե միայն շերամաբուծությունը առնելու լինինք, վոր գրեթե լոկ մայիս ամսի գործ է, յեթե չասենք էլ, վոր**** յերիտասարդը մայիսին գրեթե ազատ են, վորովհետև վոչ թաղելու, վոչ հեռու և վոչ այգեքաղի ժամանակ է, յեթե չասենք, վոր նաև վար ու ցանքով պարապած յերիտասարդը ազատ են մայիսին, վորովհետև ցանը վերջացած է, իսկ խոտհնձի ժամանակը հունիսի սկզբում, յերբ շերամի բանը պրծած է, այլ թե ասենք, վոր լոկ ծերերը, աղջիկները և պառավները պարապեն այս բանով, վորքա՞ն ոգուտ կարող և ստանալ Աշտարակը կամ ուրիշ գեղեր։

Բայց Սոս և Վարդիթերից մենք տեսնում ենք, թե ի՛նչ վողորմելի վիճակում է շերամաբուծությունը Աշտարակում։

Վարդիթերը թոթի տերևը այգուց առած գնում է տուն (յեր. 71—72). Հայրը հանդիպում է նորան ճանապարհի վրա և այսպես է խոսում. «Եդ տերևը վո՞ր ծառիցն ա, են կարմիր կորզավոր բրենուցը հո չի՞։

---

* Ջնջված՝ պժգալով և զզվելով... ԽՄԲ.։

** Ջնջված՝ «Ո՛հ հովիւք, որք զանձինս արածէք և ոչ զխաչինս...»[45] ԽՄԲ.։

*** Ա՛դ Պռոշյանց էլիսե տակավին, վոր պ. Զամուռճյանը կարո՛ղ է նորան էլ անհավատ անունով մկրտելով Մինչդուռնյան հերետիկոսարանի անդամ հրատարակել։ Մոռնալ առյուծի ավարը՝... անպատիժ։ Սպանիական վոդին չունի այդպիսի չար թուլություններ։

**** Ջնջված՝ մայիսին... ԽՄԲ.

— Չե՛,— ասում է աղջիկը,— սիպտակ բեղանա թթենուցն ա։

— Դե՛, տա՛ր, դե՛, տա՛ր,— շարունակում է Հեթումը,— ճիճուները սուված կոտորվեցին, վորդի. շաղ գնալու (բոժոժ դառնալու) վախտն ա, բալքի ուտեն ուզ ըլնին կորչին. ծառերս վերջ արին ելի. բարով եկող տարի հասնենք, թե մերըդ մին ել բռնի՝ պարծենա»։

Այս խոսքերից պարզ յերևում է, թե ի՞նչ սիրով սիահվում է այնտեղ շերամը։ Ծառի տերը խնայում է իր լավ թթենու տերևը. (թեև նորա լավ կարծած կարմիր թթենին յերկրորդական է շերամաբուծության մեջ, վորովհետև ճերմակ թթենին համարվում է նախընտիր. գիտությունը ասում է, թե նորանով կերակրված միջատները ավելի բարակ մետաքս են տալիս, բայց բանը նորա խնամելն է), և ուխտ է անում, վոր հետևյալ տարին ել չպահե։

Պահվածի ել մետաքսը, միայն տան մեջ գործածելու համար է. «վատերը կեփենք կաղ կը շինենք, լավն ել խիաթի կը քաշենք, ե՛հ, մի բանի պետք կը գա ելի»,— ասում է վարդիթերը Անուշին։

Իսկ ինչ վոր վերաբերվում է շերամի խնամարկության, ասելա՞ծ ազատե, թե ի՛նչ վիճակում է։ Շերամի դեղնացավը պատճառվում է Մարինոսի չար աչքից. դորա ճարն ել Պետքականենց Համազին յերթալ «ոխտը ձիու մոննաթ» անելն է, վոր դա աղոթե ու բժշկվին։

Ուզարլուկ (յուզերլիք) ծխելու ընդդեմ մենք չենք ուզում դրական բան ասել, վորովհետև յեվրոպական շերամաբուծության մեջ այդպիսի բան չկա և վորովհետև գիտությունը մերժած է այժմ այն կանխամուտ կարծիքը, թե ծուխը ընդհանրապես, (վորպես թաբակի ծուխը և այլն) վնասակար եր։ Այդ դառը խոտը ծխելը գուցե մի տեղական պատճառ ունի, մի բնական հիմք, մենք չգիտենք։ Յեվ վորովհետև չգիտենք, ուստի և իրավունք չունինք նորա ոգտի կամ նորա ընդդեմ բան խոսել։ Իսկ ինչ վոր վերաբերվում է Մարինոսի աչքին և ոխտը ձիու մոննաթ անելուն, վո՛հ, դորա ընդդեմ շատ բան կա ասելիք, վոր թողում ենք մի ուրիշ ժամանակի[45]։

Հայտնի յե, թե մարդը ինչ բանից վոր ուզում է ոգուտ քաղել պետք է, վոր այդ բանը լավ սորվի. այլապես, շատ ոգտակար բանն ել կմնա անոգուտ։

Գիտենք, վոր ասիացին դեռ յերկա՛ր ժամանակ չգիտի կարողանա յեվրոպացու պես թել քաշել շերամի բոժոժից. նույնիսկ հյուսիսային Յեվրոպայի մեջ քաշված թելը պակաս արժեք ունի, քան թե հարավային Ֆրանսիայի կամ Իտալիո (Պիյեմոնտ) մեջ քաշված թելը, բայց այդպիսի դիպվածում կարելի յե բոժոժը ծախել։ Իսկ մեծ գեղերում, ինչպես Աշտարակն է, յեթե շատ շերամ պահողք լինին, հեշտ կարելի յե ընկերովի բանալ մի փոքրիկ թելքաշի գործարան, ուր ամենի թելերն ել քաշվելին։ Թել քաշելը թեև մեծ աջողակություն և մեծ զգուշություն է պահանջում քաշողի կողմից, մանավանդ անդադար ուշադրություն, հանգույցներ շինելու թելերի մեջ, այնուամենայնիվ մենք վստահ ենք, հայ կանանց ձեռքի շնորհքի վրա, վոր թե

Նորա ձեռքին որինավոր գործիք լինի և մի քանի անգամ այդ բանը որինավոր կերպով ցույց տվող, նա հետ չի մնալ յեվրոպացի կնոջից։

Մենք միայն շերամաբուծության մասին խոսեցանք. բայց միայն այդ չե, վորից կարող են ոգուտ քաղել հայերը։ Կան այնտեղ շատ ուրիշ բաներ և շատ ոգտակար բաներ, բայց այսոր ամենքն էլ յերեսի վրա ընկած։ Սուտյգ ե, վոր այդ բանների համար խոսող ասող էլ չկա, գիտությունը վոտք չե կոխել Հայաստան, մեր գրագետքն էլ ջրհեղեղից առաջ մնացած գազափարների քարոզ։ Վո՛չ գիրք, վո՛չ կարդացող. գրերդ էլ հարկավոր չե։ Ո՛ր կտրծանվի, բողոքականության և անհամաստության որորոցը։ Ո՛վ գիտե, թե ի՞նչպես անուշ և գալիս այս բացատրությունը պ. Զամուռճյանի ականջին...

Հասարակ ժողովուրդն էլ տեսած լսած չլինելով, հայտնի չե թե յերկրից չե կարող ուսանիլ. մարդը պետք և տեսնի լսի, և դոցա ոգուտը ճանաչե, վոր հետո համոզվի և գնա՝ նոցա քամակից։ Առանց սոցա վոչ միայն չեղած ոգտակարը չե կարող ներս բերել ազգի մեջ, այլ և յեղածից էլ ոգուտ չե քաղում։

Ամենին հայտնի չե եջմիածնի պատսպի հարավային կողմում այն մեծ լիճը, վոր հանգուցյալ Ներսես կաթողիկոսը շինեց։ Տոթահար միաբանը կես որից հետո դուրս և գալիս յերբեմն այդ լճի լայն շուրթի վրա ման գալու։ Բայց վո՞րշափ ավելի կդեղեցկանա այդ լիճը, վո՞րշափ ավելի զվարճալի կլինի նորա շրջանում ման գալը, վո՞րշափ կկենդանանա ոդը, յերե մի քանի կարգ ծառ տնկվի այդ շուրթի վրա։ Բայց վոչ ծառ կա և վոչ տնկելու դիտավորություն։ Ի՞նչ և պատճառը. ինձ պատասխանեցին, թե առանց ծառի յել մոծակի ձեռքից որ ու սրև չունին. ծառն էլ վոր տնկեն, էլ մոտ գնալ չի լինի։ Այսպես ահա, յերկյուղը մոծակից զրկում և խեղճ միաբանին մի պատվական ծառաստանից, նորա զովարար շուրջից և տերևների քաղցր խշխշոցից։

Բայց այդ ունա՛յն յերկյուղ ե. մոծակը ուրիշ շատ միջատների նման ծառերի վրա չե ածում իր ձուն. նորա ձու ածելու տեղը ջուրն ե և ջրոտ ցեխերը, սոքա յեն նորա որորոցը, վոր* այնտեղ կա։ Ծառը բնավ վերաբերություն չունի մոծակի բազմանալուն. թերևս կարելի յե յենթադրել, թե ծառը մի մասով պաշտպանում ե մեզ մոծակից։ Այժմ այն շուրթի վրա հարձակվող մոծակներից անհնար ե թե մի բաժինը չնստի ծառերի վրա, յերե սոքա լինին, վորով ճեմելիքի վրա ման յեկողների համար ավելի քիչ կլինին քան թե այժմ։

Տարապայման բթամտություն պիտի լիներ մեր կողմից, յերե մեղադրել ուզենայինք մեր միաբանին, թե ինչի՞ չգիտե նա մոծակի կյանքը, նորա վորպիսությունը, նորա որենքները։ Մոծակն ի՞նչ ե, վոր մարդ նորա կյանքը ասրվի։ Ընդունում ենք, մոծակը մի զզվեցուցիչ և խայթող միջատ ե և

---

* Ջնջված՝ առանց ծառի... ԽՄԲ.։

մեր մասնավոր սիրո անարժան. բայց ի՞նչ անես, երբ այդ չնչին միջատի վորպիսությունը չհամանալը հարյուրավոր հոդվածների պատճառ է լինում, վոր ղրկվեն մի պատվական ճեմելիքից։

Բնությունը այսպես է խոսում. «կամ ուսի՛ր իմ որենքները, սիրե՛ ինձ, ոգո՛ւտ քաղե ինձանից. կամ թե չե՛ս ինձ կատրկացնեմ և վոչինչ ոգուտ չտալուց հետո դեռ ղրկանքներ ել կպատճառեմ քեզ»։ Դպրոց պե՞տք է, բնական գիտությունքը անհրաժե՞շտ են, վերացական գիտությունքը, միայն, չե՞ն կարող յերջանկացնել մարդկային ազգը, դորա վրա թող խորհի ընթերցողը և առողջ դատաստան կատարե։

Աշտարակի* տնտեսական կյանքի մեջ յերեք կան տխուր բաներ, դո՛նե կա մի շատ մխիթարական բան. ի ո խ ա տ ր ա գ ն ա լը։ Այս անունով հասկացնում է հեղինակը փոխադարձ ոգնությունը, վոր գեղացիք անում են միմյանց։ Որինակ Հեթոամն ուզում է այդին բանալ (թաղը վեր տալ) նորան գնում են ոգնելու տասը-քսան յերիտասարդք և մի որում ավարտում են գործը։ Դոցա փոխանակ Հեթոամի վորդիքն ել գնում են մյուս որ աշխատող յերիտասարդներից մինի այդին գանալու, յերբորդ որ մի ուրիշ և այլն։ Այս սկզբունքը մեծ խորհուրդ ունի ընկերական կյանքում. բայց մեր հատվածը Մաթեւոսաղայի կյանքից** անց կացավ[16]։ Մենք թողում ենք այդ բանի վրա խոսելը մի ուրիշ ավելի հարմար ժամանակի։

Բայց մեզ մնում է տակավին մի քանի խոսք Սոս և Վարդիթեր գործի վերաբերությամբ, վոր դեռ չենք**** ասել։

Արդո հեղինակը հետևելով պ. Աբովյանի ուղղության, իր բավանդակ գործի մեջ միշտ աչքի առջև ունեցել է գործ դնել ազգային առածներ, ասացվածներ։ Մենք լիասիրտ շնորհակալություն ենք հայտնում մեր հեղինակին։ Բացի սորանից, Սոս և Վարդիթերի մեջ շատ կան միրուն ձևեր և վոճեր, վորոնք դրեթե ամեն տեղ գործ են ածվում ազգի մեջ, թեև նոցանից մի քանիսը վոմանք թուրքից առնված համարելու միշտ հակամետ են։ Մենք այս թուրքից փոխառության պատճառով չենք կարող մեր կարծիքը չհայտնել։

Մենք գիտությամբ առնում ենք Սոս և Վարդիթերից մի այնպիսի վոճ, վոր իրա՛վ, կարելի չե թուրքից առնված համարել, ինչպես. «Հլա են գնալն ա, ինչ գնացել ա»,— ոշականցի Կնոջ համար է ասում հեղինակը (յեր. 120)։ Թուրքը ունի սորա նման մի բան. «Ո գիդիլ գիդամ», կամ, «Ո գիդիշ գիդեյոր» (ո կիտիշ կիտին, ո կիտիշ կիդեյոր)։

Թուրքը և հայը գանվում են այսոր դրեթե միևնույն աշխարհում. այդ

---

* Ջնջված՝ կյանքի... ԽՄԲ.։

** Ջնջված՝ ավելի յերկարեցավ... ԽՄԲ.։

*** Ջնջված՝ Մեր հեղինակը... ԽՄԲ.։

**** Ջնջված՝ վորի մասին... ԽՄԲ.։

***** Ջնջված՝ խոսել։ ԽՄԲ.։

ազգերը, միևնույն հողի, միևնույն կերակրի, միևնույն բնության ազդեցության են ենթակա։ Մինչև շատ մոտ ժամանակներս գրեթե և միևնույն կառավարության տակ եյին քաղաքականապես։ Ցերկուքն էլ ասիացիք, ցերկուքն էլ արևելքցի և խորհելու, խոսելու ձևերով բնականապես մոտ. պատճառ, ինչպես ասացինք, անխտիր միևնույն պայմանների տակ են ապրում։ Ոչ վոր միայն ազգ ազգից բաժնում և անունով և կրոնով, այնպիսին չի կարող պատահականել կամ մեկնել թե ինչ և այն յերևույթի բնական և հոգեբանական պատճառը, վոր Թուրքը համ և առնում հայի վճառ և աղիողորմ խաղերից տաղերից, ինչպես և հայը* Թուրքի խաղերից. բայց յերկուքն էլ անզգա Բեդհովենի սիմֆոնիներին, յերկուքի համար էլ Մոցարտի Դոն Ժուանը «ձայն բարբառոյ յանապատի»։ Ցերկուքն էլ հազար փառքով նախընտիր են համարում յերգել. «Ախտոս քեզ հայոց խեղճիկ ժողովուրդ», կամ «Կռունկ ուստի կուգասը» և Քյոռօղլուի «Այվաղըն գյումիշ բչաղը», Քյարամի և Աշըղ-Կարիբի խաղերը։ Վո՞րն և լավ, վո՞րն և վատ՝ դրա վրա չե խնդիրը**. յերևույթը հարկավոր և առնուլ վորպես իրողություն։

Բայց այնպիսին, յերբ աչքի տակ առնու բնությունը, յերկու ազգի կյանքերի միորինակ և միաձև աճելությունը, յերկուքի էլ ընկճված և հարատահարված վիճակը, այն ժամանակ բանը աշկարա կլինի, վոր հայը և Թուրքը այս տեսակ կապերով միմյանց հետ կապված լինելով, անշուշտ, հոգեբանական յերևույթներով իրարից չեյին կարող հեռու լինել։ Թող ինչ կամին խոսին, բայց մարդկային հոգին ցոլացնում և ազատքին բնությունը։

Այսօրվա որս, մեր նոր լեզվի բաղդատությունը մեծ մասով Թուրքի բաղդատության պես ե. Թուրքի՞ցն և մտել, թե՞ ինչ բնական կամ*** ընկերական պայմանների տակ Թուրքինը, վոր կերպարանագործվել և նույն պայմաններին տակ ինքնուրույնաբար վերպարանվել և և հայինը՝ այդ մասին Թող վորշափ կամին լինին շատ կամ քիչ հավանական կարծիքներ. բայց մենք այս յերևույթը առնելով վորպես իրողություն, տեսնում ենք, վոր չնայելով մեր նոր լեզվի բարբառների տարբերության, նորա տրամաբանության, և բաղդատությունը ամեն տեղ մեկ և։ Խաչակիր արշավանք քարոզել այդ բաղդատության ընդդեմ, հին լեզվի բաղդատության իրավունքը պաշտպանելով, համապող և նոր լեզուն սպանելու և ժամանակի և պատմության արդեն արած պրծած ազդեցությունքը ուրանալու։ Մենք կարող ենք շատ բան ցույց տալ և հին լեզվից, վոր նույն և այսօրվա աշխարհաբառի կամ տաճիկ ասված բաղդատության կամ ձևի հետ. հերիք չե այս. կան վոճեր և ձևեր, վոր սեփական են գրեթե համորեն մարդկության։

Մեկ մարդ տասը տարի մնալով մի ուտար ընկերության մեջ, քիչ շատ ընկնում և այդ ուտար լեզվի, ուտար վոգու ազդեցության տակ. հայը հազար տարի ընկած լինելով Թուրքի, Թաթարի և ուրիշների ազդեցության տակ,

---

* Ջնջված՝ նորա... ԽՄԲ.։

** Ջնջված՝ բայց... ԽՄԲ.։

*** Ջնջված՝ քաղաքա[կան]... ԽՄԲ.։

ի՞նչպես կարելի չէ պահանջել, վոր պատմական իրողությունքը իրենց կնիքը խոր չդրոշմեին ազգի սրտի և հոգու վրա։ Ի՞նչպես կարելի չէ, վոր այդ դրոշմը չցոլանար նորա լեզվի և մտածելու ձևերի վրա։ Հայոց ազգը գեղեցկության բո՞ւրդն ևր, վոր ցողի տակ մնալով չթրջվեր, թե՞ մովսիսյան մորեհին, վոր կրակից չերվեր. հայտնի չէ թե այս սքանչելի հատկությունքը չևր կարող ազգը ունենալ, հայտնի չէ թե պիտի թրջվեր ել, երվեր ել։ Բայց այդքան բան անցնելուց հետո չերբ պատվաստը (լավ և թե վատ, այն չէ խընդիրը) բնիկ և դարձել, հնար կա՞ այդ բոլորը քերել հանել հինգ միլիոն ժողովրդի վրայից և նորա տեղ բուն հայկական տրամաբանությունքը կամ բաղդատությունքը դնել, վոր այսոր անսովոր և ազգին։ Ի՞նչ էյական խորհուրդ ունի կենդանի ժողովրդի իրավունքը վոտքի տակ կոխելը, քանի հազար տարի առաջ մեռած հայերի իրավունքի անունով։

Շատ ազգերի գաղթականք ուրիշ մեծ ազգերի մեջ մտնելով անհայտանում են կամաց կամաց։ Հայոց ազգի մեջ մտած են հրեայք, ինչպես Բագրատունիք և ուրիշ շատ հասարակ ցեղեր։ Հայոց ազգի մեջ մտած են հընդիկներ, վոր Լուսավորչի ժամանակ ել դեռ իրենց նախահարցը վորպես ասված պաշտում էյին Տարոնում։ Հայոց ազգի մեջ մտած են չինացիք, ինչպես Մամիկոնյանց ցեղը։ Գուցե այդ ցեղի նախահայրը, չերբ փախչում եր Չինաստանից, իբրև չերևելի մարդ, ունենար իր ծառայքը կամ բարեկամքը, վոր նույնպես մտան հայոց ազգի մեջ. Թողում ենք պատմության անհայտ խառնուրդները քիչ կամ շատ։ Այսոր, այս տողերի գրողը, կամ նորա ամեն մի կարդացողը*, չե՞ վոր հայ է։ Լավ վոր հնար չկա** իմանալու թե ո՛վ մեզանից ինչ ազգից է ծագում, ապա թե վոչ, բուն տոհմական հայերը, չնայելով վոր այդ խառնված ոտար սերունդքը հազարավոր տարիներով մասնակից էյին չեղել նորա ճակատագրին, նորա ցավին և ուրախության, և վորոնք բացի հայից ուրիշ անուն չունեյին այսոր, այդ տոհմական հայերը, ասում ենք նորանց ել պիտի մերժեյին վորպես վոչ բնիկ հայեր։ Հազար տարի ազգի վրա չեղված բնական և պատմական ազդեցությունը ուրանալով, նորա հազար տարի վորպես սեփական գործ դրած բաղդատությունը մերժելը և նորա տեղ հինը դնելու փորձը ինչ զանազանություն ունի վերը գրված մաքրասիրությունից։

Ճշմարի՛տ է, չերբ դպրությունը միայն գիտական առարկաների վրա խոսի այնտեղ այն աստիճանի կարոտ չէ այն դատապարտված ձևերին, թեև կարոտ միշտ բաղդատության. բայց չերբ ուզե նա ազգի կյանքի մեջը մտնել, ապա ուրեմն այդ դատապատված ձևերը են նորա ապահով անցադերը և առանց նորա ազգի կյանքի դուռերը փակ են հեղինակի առջև։ Հայտնի չէ թե ամեն գիտական առարկա իր լեզուն և իր վոճերը ունի, ազգի ամենորվա և ընտանեկան կյանքը կարո՞ղ է իր լեզուն չունենալ։ Այսպես

* Ջնջված՝ կարո՞ղ է արդյոք (դուցե չէթե հնար լինելը [)] գտնել [թե] իրավ եր, պատկանում ենք ասցանիից այս կամ այն ցեղին, բայց չնայելով դորա վրա, չե՞ վոր ամենքս ել հայ ենք։ ԽՄԲ.։

** Ջնջված՝ այս բանը... ԽՄԲ.։

լինելով բանը, կարելի՞ չի խոր ներս մտնել ազգի կյանքի մեջ առանց այդ կյանքի սեփական ձև ու վոճը գործ դնելու: Մենք չենք ուզում յերկար խոսել այս մասին, վորովհետև մեր համար աչքի հայտնի ճշմարտություն է այս:

Սակայն, չենք ասում, այլ մանավանդ ընդդեմ ենք, վոր ազգի լեզուն էլ ավելի սարկանա և ընկճվի թուրքի ազդեցության տակ: Այս մասին շատ ցավալի յերևույթ ենք տեսնում Տաճկաստանի հայոց մեջ, վորոնք տաճիկ լեզվին սարկանալու համը հոտը տարել են: Ավելցուր սորա վրա և ֆրանսիական լեզվի բաղդատության և ձևերի ազդեցությունը, վորոնցից ժողովուրդը խաթառ ազատ է, բայց պ. գրադետքը քաղաքակրթության անունով ներս են բերում ազգի մեջ և խանգարում են լեզուն: Մենք, վոր նոր լեզվի ինքնուրույն ազատությունն ենք քարոզում և հին լեզվի ձևերից անկախությունը, վորպեսզի ազատորեն և ինքը իրեն աճի, վո՞ր ուշադրությամբ կարող եյինք քարոզել, վոր այդ լեզուն թուրքի կամ սատանայի ձևերին սարկանա: Բայց յերբ այս կամ այն բանում այսոր միևնույն ձևն ենք տեսնում և հայի և թուրքի մեջ, դրանից իրանելով, թե վայ, թուրքը վորովհետև այսպես է ասում, յես նորան չնմանելու համար պետք է, վոր գործ չդնեմ այդ ձևը, ասել մենք չենք կարող: Այո, մի հեղինակ իր սենեկի մեջ նստած, կամեցածի պես կարող է գրել և խոսել, ինչ ձև ուզե գործ դնել. բայց բոլոր ազգը չունի այդ ազատությունը. նա չե կարող ներկան ուրանալով անցածի անունով ապրիլ: Այն ուղղությունը, վոր առանց մի եյական խորհրդի բռնաբարում և ներկայի իրավունքը կամ գեթ աշխատում է բռնաբարել, մենք հրատարակում ենք* մաքուր և զուտ ֆանատիկոսություն: Նոր լեզվի մեջ գրեթե բոլոր հին լեզվի նախադրությունքը դարձել են վերջադրություն, ածականը անհոլով և թվով անհամաձայն, միշտ նախադաս դոյականից, հատկացուցիչը միշտ նախադաս և այլն և այլն, վոր նույնն է և տաճկերենի մեջ, և վորովհետև այդպես է, ուրեմն և պետք է հին ձևի տակ շարել և կապակցել, թեև նոր հոլովներով, այժմյան հայի խոսքը: Բայց ժողովուրդի անկաջին ծանր է և անբնական.— ի՛նձ ինչ փույթ,— յես բուն հայերեն եմ խոսում. ժողովուրդը խանգարել է իր բաղդատությունը, նորա լեզուն սորրկացել է թուրքի բաղդատության... միայն լեզուն չե՛, ինքը, ազգն էլ սորրկացել է թուրքին. և լեզվից առա՛ջ և սորկացել: Բայց ի՛նչ խոսիս:

Մարդ խոցելու կամ վիրավորելու համար չե մեր այս խոսք ու զրույցը. այս մեր հայացքն է, մեր կարծիքը: Յեվ ինչպես մենք ազատ ենք այսպես կարծել, նույնպես ուրիշը ազատ է այլապես կարծել: Յեվ թե կարող է գտնել մի ճանապարհ, վոր և բուն հայկաբանությամբ խոսեր և ազգի մեծագույն մասին հասկանալի, խոսք ենք տալիս, վոր մենք առաջինը վազենք նորա դրոշի տակ:

Բայց ցավելին այս է և մանավանդ ցավելի, վոր անմերժելի ճշմարտություն է, թե մենք իջնելով հասարակ ժողովրդի կյանքի մեջ պիտի սոխ-

---

* Ջնջված՝ նորան... ԽՄԲ.:

վինք բուն թուրքի բառեր եւ ներս առնուլ, ամենօրվա կյանքի, պետքերի և հասկացողության վրայիս հայտարար, ինչպես գիտական առարկաներում ստիպված ենք յեվրոպական բառեր առնուլ։ Մենք մի որ ցույց կտանք այնպիսի թուրքի բառեր, վոր ընդհանուր ազգին դարձել են միորինակ գործածական և վորոնց գաղափարը մեկ բառով տվող խոսքեր վոչ միայն նոր լեզվի մեջ, միայն մի վորևիցե գավառական բարբառում, այլ նույնիսկ հին լեզվում եվ չկան։ Բացի սոցանից կան թուրքի բառեր, ընդհանուր ազգին գործածական դարձած, վորոնց հայերենը թեև կան հին լեզվի մեջ, բայց և այնպես այնքան խոր ներս են մտած նոքա ազգի մեջ, վոր հայ դպրությունը յերե 200 տարի եվ ներգործե որինավոր կերպով, այնուամենայնիվ չպիտի կարողանա այդ բառերը առնուլ ժողովրդի շրթունքից ու նոցա տեղը դնել թեև սեփական, բայց ազգի համար մեռած բառեր։

*Կարող ենք մխիթարվիլ միայն նորանով, վոր շատ սահմանափակ են այդ տեսակ բառերի թիվը։ Չկա աշխարհիս յերեսին լեզու, վոր ոտար խառնուրդ չունենա. մեր նոր լեզուն չե կարող բացառություն լինել բնական կանոնից։

Մենք, հերիք համարելով առժամս այսքան խոսքը, կտրում ենք մեր ճառի ընթացքը, ձեռք զարկած լինելով մի տեսության նոր լեզվի մշակության մասին ընդհանրապես, ուր մանրամասնաբար պիտի քննվին այն բոլոր խնդիրները, վոր վերաբերություն ունեցին նոր լեզվի մշակության։ Այդ աշխատության շուտով հրատարակելը մենք չենք կարող խոստանալ արդո ընթերցողներին, թեև այդ գործի վրա անձանձիր աշխատել ենք և աշխատում ենք, այս րոպեիս եվ**։

Վերջացնենք մեր հատվածը։

Պ. Պռոշյանցի վոտանավորքը մեծ հարազատություն ունին Արարատյան աշխարհի և տեղ տեղ եվ ամբողջ ազգի վոգու և ձևի հետ։ Որինակի համար գնում ենք այստեղ նորա «Ջան դյուլումը» (յեր. 74).

Վինձոր ունիմ կծած ա, Ջան, դյուլում, Ջան, Ջան,
Զորեք կողմն երծաքած ա, Ջան ծաղիկ, Ջան, Ջան,
Աղպերս ուզեց չի տվի, Ջան, դյուլում, Ջան, Ջան,
Ասի յարի ղրկած ա, Ջան, ծաղիկ, Ջան, Ջան։

Ա՛յ տղա հիլ անիլ տուր,—մատնաչափ դիր անիլ տուր,
Ինձնից եվ քեզ ճար չի կա—քաքուղդ վեր անիլ տուր։
Ցես աղջիկ եմ ալ կուզեմ,—բարակ մեջքիս շալ կուզեմ,
Ցերբ յես յկնա ձեր տունը—վոսկին սաթեսար կուզեմ։

Կիրակի եվ պտո կըլնի,—երծաքից լավ թաո կըլնի,
Վորդից մեռնի վարդապետ,—սիրածը չհաո կըլնի։
Աչտարակ բարձր տեղա,—ջուրը հիվանդին դեղ ա,
Սիրածը սիրածին չեն տալ—ես ի՛նչ անիրավ դեղ ա։

* Ընդհատ՝ Այսքան միայն... ԽՄԲ.։
** Ընդհատ՝ այդ գործի վրա։ ԽՄԲ.։

Ին սարը բարձր ա,—տակը գընջարկ ծաո պրաի:
Ցես քեզ Թաքուն սիրեցի,—բան ո՞վիծանար պլտաի,
Իմ յարըն ինձ յար պլտաի,—ձնուռմը տրամ աչկաքա:
Իմ յարի կանչած տեղըն,—մնի հինլած քար ա,

Ա՛յ տղա, դու հաղար ըլնիս,—իմ սիսպոր սատար ըլնիս,
Թե ինձնից ջոկ յար բռնես,—դու սրտաւզատատ ըլնիս:
Քաքուլիդ կրլին մեռնիմ,—յերեսիդ խալին մեռնիմ,
Լաել եմ, կարդացող ես,—սաղմոսիդ ծալին մեռնիմ:

Սիրել ես ամպի նման,—չաքար ու զանդի նման,
Իմ նանն ինձ վո՛նց ա պահել,—ծալած դյուլբանդի նման,
Կանչել եմ սիսա բասա,—չավաղուս տուրը կախ ա,
Շեկ տղա, կարմիր աղջիկ,—քո՛ղ բռնենք իրար յախա:

Սիրել ա ձուն չի գալիս,—մինել ա տուն չի գալիս,
Ես անտեր բարձի վրա,—առանց յար քուն չի գալիս:
Վոչխարն արել եմ բակը,—դեմ ավել տեղի տակը,
Ով իմ սիրածը ասնի,—չի վիլի (վայելի) դիմի Թագը:

Կաքավը կանչել ա քարին,—կատուցը լիքը արին,
Մի տղուն վարդ եմ քաղել,—դրկել եմ ատպոր յարինց:

Շատերը կան նույնպես ազնիվ, նույնպես գեղեցիկ, բայց մենք ուզում ենք միայն Նանիկը մեջ բերել (յեր. 100), ուր հայ պատանի վոգին և սիրտը ամեն հարազատությամբ թափել է հեղինակը.

«Նանիկ արա մեծանաս,
Հալվորիս ծերանաս,
Ցերվոր խելքիդ տեր ըլնիս,
Պատակ տատիդ չմոռնաս:

Տատը գլխովդ պտիտ գա,
Ինչ խաթեր ունիս տատին գա,
Ցերեսիս մի բուռ հող ջցիս,
Իմ տեր ու տիրական բալաս:

Շնորհքով զռռով տղա գա՛ս,
Սաղ աշխարհքը ձեռդ առ.
Ես մեր դուշման ազգերին,
Նեղացրու հոգին առ:

Ջենդ լսողը սատանի,
Ծակը մտնի, տազ ասնի,
Ասի, հրես, Գրիգորը,
Կը տա ինձ ու կքսպանի,

Գերի ա մեր հայ ազգը,
Դուշմանների Թայ ազգը,

Ես անիրավ թուրքի ձեռքին,
Փշացավ մեր կես վայ ապրը:

Իմ Գրիգորը մենծանա,
Դուշմանին աչքը հանա·
Հայի ազգին օգնելով,
Փառք ու պատվի տիրանա»:

Մենք ավարտեցինք մեր հատվածը, Սոս և Վարդիթեր ազնիվ և պատվական աշխատության մասին, վոր մեզ շատ մտքերի պատճառ դարձավ, վորպես և շատ եջեր լցնելու. մենք, հրապարակով, հանդիսաբար և կացըրդաբար հայտնում ենք արդո հեղինակին մեր սրտա՜նց շնորհակալությունը, ավելի ընդարձակության և ավելի կերպարանագործության մաղթելով նորա պայծառ ընդունակությանը:

Մեզ էլ շնորհավորում ենք, խանումի խոսքերով (յեր. 76), թե «Աչքդ լիս. փառք աստուծու, անշառ, անխաթա ես հավկիթն էլ շուռ տվինք»:

$^1/_{15}$ փետրվարի· 1864·
Մ. Պետերբուրգ

ԿՐԻՏԻԿԱ

ՍՈՍ ՅԵՎ ՎԱՐԴԻԹԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅԱՆ

[ՀԱՏՎԱԾ]

... Դինի խմելու ժամանակ ամեն տեղ գործ են ածում և շատ անգամ եղ վորպես յախշի յոլ*, վոր միամտաբար թարգմանելով «բարի ճանապարհ», կարծում են թե գինուն են մաղթում այդ բարի ճամբան դեպի փորը։ Բայց մենք դառնանք դեպի պ. Պռոշյանցի գործը։

Ֆաթալիզմի վրա խոսելով, ազգային ավանդությանց մեջ մտանք, այնտեղից եղ ծանոթության մեջ, այնպես վոր բուն վիպասանության վերաբերյալ նկատողությունքը ընդհատվեցան։ Կը ներեն մեզ մեր ընթերցողքը և մենք այս անկարգությունքը վկա չենք դնում այն բանին, թե մտել ենք քննության մեջ առանց ծածուկ մտքերի, այլ պարզությամբ, և խոսում ենք ուղղակի մեր սրտից, վոր շատ անգամ չեն չենթարկվում սաոը կանոններին։ Բայց կարգից դուրս գալը դուրս գալ է, դոնե ծանոթության հետ մեր հաշիվը վերջացնենք ու այնպես դառնանք դեպի վիպասանության բովանդակությունը։

Ծանոթության մեջ պոլ բառը բացահայտված է կոտ, կամ կոպի, կամ կոլոտ։ Խոստովանում ենք, վոր այս բացահայտիչներն նույնպես անհասկանալի չեն, ինչպես բացահայտյալ պոլը. և այս վոչ միայն ընդհանուրին անհասկանալի, այլ և մեզ իսկ, մինչ փորը ի շատե հայերեն սորված ենք, վոչ միայն հին լեզուն այլ և նորը, վորքան մեզ կարելի չե չեղել և մի քանի եղ զավառական բարբառներ։ Այսպիսի բառերը ավելի լավ է մի քանի խոսքով բացահայտել, քան թե տեղական մի այլ բառով, ինչպես շուշտակ, բաշորթիկ, ճլպինդ և չալ-ոխամ կամ չալ-շխամ բառերը բացատրված են։ Այս բառերից բաշորթիկը թուրքի բառ է չերևում, բաղկացած բաշ— գլուխ և եորթմեք— ծածկել, հովանացնել բայից. բայց չալոխամը կամ չալ-շխամը** չգիտենք թե ինչի բառ է, թեև թուրքի հոտ է գալիս. որինակ՝ չալ. ճլպինդը անշուշտ հայի բառ է, բայց թե ճլ-ը ինչ բառի կտոր է վոր կպել է պինդ բառին, չգիտենք։ Շուշտակ բառը մինչև այժմ ուրիշ նշանակությամբ գիտեյինք, այսինքն աբեղա, վոր առաջ ամուսնավոր քահանա չեր և այրիանալուվ վանական դարձած։ Առհասարակ, տեղ-տեղ խրթին զավառական բառեր, վոր թեև մեզ հասկանալի այլ ընդհա-

---

* Գ. Աբովյանցը ասում է. (Վերք Հայաստ. չեր. 92) «Ազգին անհավատ են կանչում, լեզուն սիրում, զարմանալի չի՞»։ Բայց դու կրակը տես, վոր Թուրքը իսկի դինի էլ չի խմում ընդհանրապես, և յաքըմ յոլ էլ հայտնի չե թե չունի. բայց և այնպես հայերը վոչ միայն թուրքերից փոխ են առնում, այլ և ծաղկեցնում են նոցա լեզուն։

** Սոցանից մինը սխալ է վոր տպագրության սխալ լինի։

նուրին վո՛չ, մնացել են առանց բացատրության, թեև շատերն էլ բացատրված են: Բացի սրանից ցավում ենք, որ պ. Պռոշյանցը փոխաբերաբար առնված վոճերի և ձևերի բուն նշանակությունը չե բացատրում, թողնելով «հետախույզ բանագիտաց», ինչպես ասում է հառաջաբանի վերջին տողերում: Այս շատ անգործածելի գաղափար է: Մարդը մեղավո՞ր չեղավ որ հետախույզ բանասեր դարձավ, որ նատի ծանր ու բարակ վոճերի բառարան շինե: Ասենք թե գլուխը քարը ավեց, շինեց, հետո պիտի այդ բառարանը տպե ու հրատարակե, որ Սոս և Վարդիթեր կարդացողները հասկանան այն փոխաբերական ձևերը և վոճերը, որ առաջ չեյին հասկացել, և վորոնք շատ տեղ, այո՛, աղ ու համ են տալիս գործին: Մի՞թե ավելի լավ և ավելի հարմար չեր, որ ինքը հեղինակը բացատրեր, քան թե թողնում է «հետախույզ բանագիտաց»: Ինչ որ մեզ և վերաբերվում, խոստովանում ենք, որ անհրաժեշտ չունենք մի այդպիսի բառարան շինելու, թեև բոլոր այլաբանությունքը շատ լավ հասկանում ենք: A propos, Հորթաթողի բարեկենդան կամ Հորթաթողի սյաս խոսքերը, որ այլաբանություն չե, այլ պարզ անուն, չգիտենք թե, Վարադա՞ Եաչինն է, Հիսնակա՞ց թե սուրբ Հակոբի: Մեզ թվում է թե այս բառը ավելի կարոտ եր ծանոթաբանության, քան թե յամըշի ոլը, որ ձախողակի ամեն հայի հայտնի է թե ուղիղ, թե սխալ հասկացողությամբ:

Այժմ դառնում ենք դեպի Սոս և Վարդիթերի բովանդակությունը:

Մենք արդեն ասած ենք, որ թե Սոս և Վարդիթերը առնունք վորպես բանաստեղծություն, նորա ակար և թույլ կողմերը այն տեղերումն են, ուր հեղինակը, դուրս գալով բնականի սահմանից, ոգնություն է խնդրում յերևակայությունից:

Այս դրությունը մենք արդեն որինակներով արդարացուցինք, բայց համեմատաբար ավելի թեթև հանգամանաց մեջ: Անցքի կատաստրոֆը, որ ամեն իրավունքով պահանջում է հեղինակից ավելի հմտություն և ճարտարություն, ուր պիտի որ գործի ամբողջ ընթացքի մեջ շարված թելերը ավելի ճարտարությամբ, ավելի հնարագիտությամբ և ավելի բնականաբար միանան, հավաքվին և կենդրոնանան, ինչպես արևի ճառագայթքը անցնելով մի վոսպնաձև ապակուց, վոր խակուն կրակեն այդ կատաստրոֆը, յերբ համեմատում ենք գործի ընդհանուր արժանավորության հետ, շատ թույլ է և վոչ միայն այսչափ, այլ և անբնական: Այո՛, հեղինակի բուն խորհուրդը Սոսի կամ Վարդիթերի պատմությունը չե, ինչպես առաջ էլ ասած ենք, այլ Աշտարակի կյանքը, բայց և այնպես, իբր թե և վորպես ոգնական առել է Սոսը, Վարդիթերը և սիրու կրակը, ցանկալի յեր վոր կատաստրոֆը ունենար ավելի բնականություն:

Անբնական է, յերբ Վարդիթերը վորպես տասն և մեկ տարեկան աղջիկ մի ջլերը սասանեցնող տխուր անցքից կաթվածահար է լինում: անբնական է, յերբ կաթվածից հոգեվարք մարդը ցույց է տալիս ուղեղի և ջլերի անխոտոր և առողջ պաշտոնակատարություն: Յերբ նորա ուղեղը և

ջերը այն վիճակում են, որ նա հանգիստ խոսում է, ուղիղ մտածում է, հիշողությունը չէ կորցնում, աչքը տեսնում է և ականջը լսում, ել ի՞նչ պատճառից է մեռնում։ Վոտքե՞րն են կաթվածահարվել, այնպիսի դիպվածում նա կարող է շատ տարիներ ապրել։ Թոքերը կամ սի՞րտն է կաթվածահար յեղել, այն ժամանակ պիտի որ մեռներ առանց վոչ թե շաբաթներով, որերով, այլև ժամերով ապրելու։

Թե Սոսն ասես, շատ կեղծ վիճակում է։ Ցրտում, պլխաբաց, վոտքը բոբիկ ման է գալիս յերեք գազ ձնի միջում և այն ցուրտ ձմեռ և Արագածի զառիվայրում։ Ջորը մանում է, ջրում լողանում, աղվեսների և գայլերի հետ կռիվ տալիս և այն որերով։ Յեվ չնայելով, վոր նա մահ է փնտռում քան թե կյանք, այնուամենայնիվ չէ մոռանում իր կյանքի պահպանության հոգսը. «խոտի փոքերը ձնի տակից հանելիս ու ծամելիս» տեսնում են նորան ապարանցիք։ Մի շաբաթ է, վոր նորա քամակից ման են գալիս Աշտարակի տղաքը, տեսնում են, բայց սիրտ չեն անում մոտենալ. վերջապես յերկու շաբաթ անցնելուց հետո Գարեգինն է նորան տեսնում և Սոսը գալիս է նորա մոտ։ Գարեգինը խրատում է, համոզում է տուն դառնալ և Սոսը դառնում է։ Բայց այս յերկու շաբաթում, այն ցրտի և ձնի մեջ, սառը ջրում լողանալով, սառուցի վրա թեք ընկնելով, սոված և ծարավ, բնավ նորա յերեսի գույնը չէ թռչում, նորա առողջությունը չէ սասանում. իսկ յերբ տանը նստած լսում է Վարդիթերի մահը խոր հոգոց է քաշում, մեջքի վրա հետ գնում, գլուխը Գարեգինի ձեռքի վրա դնելով խնդրում է, վոր աշխատի յերկուսին (իրեն և Վարդիթերին) իրար կշտի թաղել տա, իր մորը մխիթարե, յերբարցը մնաս բարով ասե, ինքն ել ուրախ կենա (!), հետո աչքերը վերև բարձրացնում, աղոթք անում ու հոգին ավանդում։ Իրար մոտ թաղելու խնդիրը անում է նաև Վարդիթերը յերբ դեռ Սոսը մեռած չե, վորին արդո հեղինակը մի վայրկյան Փանվելի աղջկա շնորքն է ընծայում։

Մենք չենք ուզում այս բոլոր անբնական և շատ թույլ նկարված անցքերը քննության դանակի տակ ձգել. այդ շատ յերկար կլինի. առանց նորան ել յերկարում է մեր հատվածը։ Գուցե ավելորդ լիներ այս աշքի հայտնի թուլության վրա շատ խոսել, մանավանդ վոր ինքը արդո հեղինակը կամ մեր ընթերցողքը, յեթե ուշադրությամբ կարդան այս անցքերի նկարագրությունը, վոր մենք առանց մեր կողմից մեկ խոսք ևս ավելցնելու քաղեցինք բնագրից (յեր. 218—222), իրենք կը տեսնեն մեր տեսած անբնականությունը և հակասությունը։ Այսչափ միայն ասում ենք, վոր վիպասանության շինվածքին մեծ հարված է տվել կատաստրոֆի այս անբնականությունը։ Յեվ վորպես թե հերիք չեր ինչ յեղել եր, այն պատվական տապանագրից հետո.

«Ահա սիրո պտուղներ,
Մի ազահ մարդու գոհեր,
Ով ըստեղից անց կենա,
Հիշի Սոսն ու վալդիքներ»։

վոր շատ ընտիր և կարճ և ազդու, դնում է Գարեգինի անտեղ վողբը։ Ամբողջ գործի մեջ բոլոր վոտանավորքը, վոր տակ ու վեր և են անում, մեկ հատ չկա այսպիսի անխորհուրդ, անաջող և սառը վոտանավոր։ Պատճառը շատ բնական է։ Գործը հեղինակի մտքում և սրտում արդեն վերջացած է, նորա վողին էլ բան չունի այս գործի հետ. բայց յերբ բռնադատում ես գրիչը ինչ վոր էլ լինի բան գրել, հայտնի բան է, վոր Գարեգնի վողբի պես կը լինի, վոր վո՛չ բարով պիտի ասեր։

Յերե ստույգը ասենք, մեր քննության այն մասը, վոր նվիրված եր թերություններին Սոս և Վարդիթեր գործի, վորպես վիպասանության, պրծավ։ Մեր այսուհետև նկատելի թերությունքը էլ վերաբերություն չունին բնագրին, այլ հեղինակի լեզվին և հատաջաբանին։ Հեղինակի լեզու ասելով չենք իմանում Աշտարակի բարբառը*, վորով գրված է գործի բնագիրը, ուր կամ խիստ քիչ խառնել է հեղինակը Աշտարակի բարբառի մեջ ոտար ձև, ոտար վոճ, կամ, կարելի յե ասել, ամենևին վոչինչ։ Յեվ հեղինակը, ուզելով իր գործը այդ բարբառով գրել, վոր կարդացողը վոչ միայն Աշտարակի վարքի, բարքի, այլ նորա լեզվի վրա էլ տեղեկություն ստանա, վոչ միայն ազատ է այդ լեզվի մասին պատասխանատվությունից, այլև մեծ շնորհակալության արժանի։ Մենք կարող ենք վորևիցե դավառական բարբառ քննել, սորվել, տեսնել նորա արժանավորությունքը և թերությունքը. բայց այնչափ միայն և վոչ ավելի։ Ինչպես մի հեղինակի կարող ենք ասել, թե «ինչի՞ այս ձևը այսպես ես գործ դնում կամ այնպես», այդպես չենք կարող խոսել հազարների և բյուրերի հետ։ Հեղինակը ազատ է այս ու այն ձևը գործ դնել կամ չդնել, բայց մի գավառի բնակիչ (մեր խոսքը քսան հազարակ ժողովրդի վրա յե), չունի այդ ազատությունը, նա այնպես միայն կարող է խոսել, ինչպես խոսում է ամբողջ ընկերությունը, վորին անդամ է և ինքն խոսողը։ Իսկ այդ ընկերության բարբառը կերպարանադրծվել և աշխարհագրական և բնության ազդեցության տակ, պատմական դեպքերը չեն անցել նորա վրայից առանց իրենց հետքը խոր դրոշմելու. և բարբառները նոցա խոսողի անցուցած կյանքի արդյունքն են։ Հայտնի յե

---

* Այդ բարբառի քննությունը տեղիս վերաբերություն չունի, բայց և այնպես այսքան պետք է ծանոթացնել, վոր նա իր մի քանի՛ վերջավորություններով տարբերվում է Ցեղեանի բարբառից։ Զարմանալի մի բան է. Քանաքեռ, Ցեղեան, Վաղարշապատ և Աշտարակ, իրարուց յերեք չորս ժամ հեռավորություն ունին, բայց այդ տեղերում խոսված լեզվին ուշադրությամբ անկաճ դնողը կարող է տարբերություն դտնել։ Գ. Աբովյանի Վերք Հայաստանին և պ. Գուրյանցի Սոս և Վարդիթերը այս տարբերության ծայրումն են. Քանաքեռ և Աշտարակ, ուսում և տարբերությունը ավելի չուշափելի յե։ Բայց աստիճան աստիճան յերթալով, տարբերությունը թուլանում է։ Քանաքեռի և Ցեղեանի մեջ փչ տարբերություն կա, վորպես նաև Ցեղեանի և Վաղարշապատի մեջ, ինչպես այս վերջինի և Աշտարակի մեջ. բայց յերե այս չղթայի մեկ կամ յերկու ողը հանում ես, այն ժամանակ տարբերությունը ավելի վորոշ և լինում, ինչպես Վերք Հայաստանի և Սոս և Վարդիթեր վիպասանության ձևի և վոճի մեջ։ Մինչդայս խոսքերը ասում ենք վոչ միայն հիմնվելով այդ յերկու գործի վրա, այլ և անկաճ դնելով այդ բարբառներին։

թե վոչ մեկ մարդ պատասխանատու չէ, թե մի վորոշյալ տեղում այնպես և ազդել բնությունը և վոչ այսպես, թե ինչի պատահել են այս կամ այն պատմական դեպքերը և ինչի համար այնպիսի ընթացք և ուղղություն և ստացել հասարակաց կյանքը, վորի արդյունքը բնականաբար յեղել և այս կամ այն բարբառը։ Ցեվ վորովհետև բնության և պատմության ազդեցությանց մասին պատասխանատու չե մարդը, ուրեմն պատասխանատու չէ և վոչ իսկ պախարակելի կամ ծաղրելի, յեթե մի սարսափելի ավերանքի տակ [և] ընկել նորա լեզուն։ Այս դրությունից պարզ յերևում է թե վոր աստիճանի բեթևամտություն և այս կամ այն գավառական բարբառը ծաղրելը և նորանով խոսողի վրա վորպես մի ստոր և խեղճ եյակի վրա նայելը, վորպես թե այն մարդը հանցանք է գործել։

Յեթե ցանկալի և հոգով չափ ցանկալի յե նոր լեզվի համազգային միությունը, ապա ուրեմն պիտի ուրախությամբ վողջունել մի ամբողջ գործ, վոր կատարված եր վորևիցե գավառական բարբառով, վոր տակավին, տպագրության միջնորդությամբ, հեռավորների և ընդհանուր ուսումնասիրության նյութ չեր յեղած. պատճառ, նոր լեզվի հիմնավոր գիտությունը, նորա մշակությունը և ապագա միության գաղափարը առանց այդ գավառական բարբառների ոգնության անհրևակայելի յե անգամ։ Մենք շատ փաստեր հավաքած ենք այս դրությունը պաշտպանելու համար, բայց այստեղ անհարմար է ասպարեզ բանալ. ուրիշ ժամանակ, մի առանձին գործով կը հրատարակենք մեր տեսությունը նոր լեզվի մշակության մասին, յեթե միայն աջողի մեզ կատարելագործել այդ ձեռնկապ աշխատությունը։ Բայց այս չափ միայն, դեռև հարկանցի, անհրաժեշտ ենք համարում ասել, վոր ստրկանալով հին լեզվին, առանց ժողովրդին ականջ դնելու, լեզվի նոր ծլած ձևերը, վոր դեռ թարմ են և աճելու վրա, կապելով և ճնշելով անցյալի և մեռածի պատանքի մեջ, նոր լեզվի մշակության գաղափարը ազգին համար դառնում է նույնպես ամուլ և անպտուղ, ինչպես հին լեզվի գործադրության գաղափարը։ Անշուշտ, այս խոսքերը չեն նշանակում թե հին լեզվի լծից ազատելով նոր լեզվի մշակությունը դնել այս կամ այն գավառական բարբառի լծի տակ։ Տեղական բարբառը ազգի ընդհանուրի համար գործական արժեք չունի և նոր լեզուն այս կամ գավառական բարբառի տակ, դրականապես, մշակելու գաղափարը նույնպես ամուլ և անգործադրելի յե, ինչպես հին լեզվի գաղափարը, ինչպես սորա ստրկության տակ աճած նոր լեզվի գաղափարը։ Այս տեսակ մշակությունը ինքն իրեն հակասում է նոր լեզվի մշակության գաղափարին, վոր է վորհան կարելի յե առավել շատ և առավել մեծ բազմության հասկանալի կերպով խոսել։ Այս պատճառներով, նոր լեզուն պիտի նայվի և մշակվի՝ ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խլնելու* և առանց այս կամ այն գավառական բարբառին ստրկանալու։ Բոլոր գավառական բարբառների եյական տարերքը, վոր իրենց ձևով և կազմությամբ ավելի ընդունակ են կենդանի—

* Հին լեզ. խուլանիլ։

ընդհանրության լեզվի վրա պատվաստվելու, պիտի ընկնեն Ճարտարապետ հեղինակների քուրայի մեջ և այնտեղ հալվելով և քիմիաբար (ֆիզիկաբար վո՛չ) միանալով պիտի դուրս գան վոչ վորպես ըլպատություն կամ անթլպատություն, այլ վորպես նոր արարած։ Այո՛, ծանր խնդիր է այս և իր բնությամբ շատ ժամանակի կարոտ. բայց գոնե այս է մեր Ճամբան, այս է մեր պարտականությունը, վոր ինչքան մեր ուժը կը տանի, ձգտենք այս խնդիրը լուծելու։

Ուզելով շինել հազարամյա ավերանքը, չպիտի փոքրոգությամբ սըրտնեղենք, թե ինչի՛ մեկ տարում կամ հինգ տարում չե շինվում։ Այն վոր հազար տարիներով, տարբեր աշխարհների և տարբեր պատմական դեպքերի տակ ավերվել է և այդ հազար տարիների միջոցում ամեն մեր լեզվի մոտից անց կացող թուրք, թաթար, արաբացի, պարսիկ, ռուս Սարգիս Բուխարացու գյոռի պես մի քար է ձգել, բնականաբար անհնարին է, վոր մի ակնթարթում շինվի, կոկվի, փայլի և պայծառանա. այստեղ հարկավոր է համբերություն և հարատև արիաջան աշխատություն։

Ավելորդ է ասել, վոր մենք բնավ պահանջողություն չունինք, թե մեր գործադրած ձև ու վոճը ավելի մոտ է կատարելության գաղափարին. քա՛վ լիցի։ Մենք ամեն որ ուսանում ենք նոր լեզուն, ամեն որ մշակում ենք, վորքան մեր խելքը զորում է. սորան վորպես անմերժելի վկայություն դնում ենք մեր գրվածքը 1857 ից սկսած, վորոնց ժամանակագրական հաջորդության մեջ պարզ յերևում է թե մենք կանգնած չենք, այլ գնվում ենք անդադար ընթացքի մեջ— մեր կարծիքով դեպի առաջ։ Հայտնի յե թե այն մարդը, վոր դիշեր ցերեկ աշխատում է մի բան ավելի առաջ տանել, դորանով վկայում է թե այդ բանի ներկա վիճակը չե կարող նորան գոհացնել ավելի փոքր, կատարելության համարվիլ։ Սոխակվեցանք ծանոթացանել, վոր չլինի թե կարդացողը, տեսնելով, վոր մենք ուրիշի ձև ու վոճ ենք դատում, կարծե թե մենք մեր վրա դրական կամ բռնավորական գաղափար ունինք։ Բռնություն վո՛ր դիմակի կամ ինչ շպարի տակ ևս ծածկվի, այնուամենայնիվ մինչև դերեզմանը մեզ միշտ ատելի կը մնա։

Մեզ կարող են ասել, թե պ. Պռոշյանցը հագիվ մի քանի տող և գրած սեփական ձև ու վոճով, կարժե՞ այդ քանի մի տողերի համար ատյան կանչել նորան։ Իրա՛վ, պ. Պռոշյանց միայն հառաջաբանը և ծանոթությունը գրել է յուր ձևով. բայց այդ մի քանի տողից ել պարզ տեսնում ենք նորա ուղղությունը նրա լեզվի մշակության մեջ, յերբե միայն նախատեսաբար և սկզբունքի վրա հիմնված ուղղություն է և այդ և վոչ պատահականության արդյունք. վորովհետև շատ նորելուկ գրողներ, առանց սկզբունքի, առանց ուղղության հանդիպածը գրում են, ել աջ ու ձախ նայել չկա։ Լեզվի մասին ատյան ենք կանչում պ. Պռոշյանցին վոչ ծաղրելու և վոչ պախարակելու մտքով, այլ կատարյալ բարեմտությամբ, հուսալով, թե մեր մի քանի նկատողությունքը կարող են նորան ոգտակար լինել նորա ապագա ասպարիզում, մանավանդ յերբե ուխտ չե արել միշտ Աշտարակի լեզվով գրե-

լու, թեև ճշմարտության անունով ասում ենք վոր նորա բնագրի (Աշտարակի) լեզուն համեմատաբար ավելի կատարելություն և ավելի բնականություն ունի քան թե այն լեզուն, վորով գրել է յուր ծանոթությունը և շատ անաջող հառաջաբանը։ Անաջող ածականը նորա հառաջաբանին տրված, նորա բովանդակությանն և վերաբերվում, վոր լեզվի մասին մի քանի բան նկատելուց հետո կը քննենք։ Նույնպես, հանդես հանելով այստեղ այն թերությունները, վոր տեսնում ենք պ. Պռոշյանցի սեփական ձև ու վոճի մեջ, ստիպում ենք ասել, թե գրողների մեծագույն մասը ազատ չե այդ տեսակ թերություններից, ուստի մեր նկատողությունքը հաշվե՛ ուղղված են ընդհանուրի թերություններին քան թե մասնավորապես պ. Պռոշյանցի։ Յեվ յեթե այդ ուրիշները նույնպես ոգուտ քաղեն մեր նկատողություններից, գո՛նե մի ծեղի չափ թող շնորհակալ լինին, ինձնից վո՛չ, այլ պ. Պռոշյանցից, վորի գործը պատճառ և յեղել մեզ այս տողերը գրելու։

Դարձյալ, մի քանի տեղ լոկ մի հատ ֆառը կամ մի հատ ձևը վոր գործ եր ածում պ. Պռոշյանցը, վոր թերևս կարող եր տպագրության սխալ լինել։ Մենք հանդես ենք հանում, սորանից չե պիտո յեզրակացնել թե բծախնդրություն և մեր արածը, վո՛չ այլ մենք այդ բոլորի վրա թե խոսում ենք, այն և պատճառը, վոր պ. Պռոշյանցի գործի մեջ մի անգամ յերևցածը ուրիշների մոտ շատ կան, ուստի և մեր բոլորի նկատողությունքը պիտի ընդհանուրին ընծայվի, թեև պ. Պռոշյանցի պատճառով եյինք խոսք բացում։

Պ. Պռոշյանցի ձև ու վոճի մեջ, մենք տեսնում ենք հին լեզվին սորկություն. բայց արդո հեղինակը սորկանում և վոչ թե հին լեզվի վոգուն և տրամաբանության, վորի տակ հինգ տարի ընկճված եյինք մենք ել Հյուսիսափայլն ել, վո՛չ. այդ տակավին խորհուրդ ուներ և սկզբունքից առաջ եր գալիս, թեև վոչ դրականապես գործադրելի յեր այդ սկզբունքը, այլ սորկանում և հին լեզվի արտաքին ձևին,— կեղևին, վոր բնավ խորհուրդ չունի։ Բայց այս ել ճշմարիտ և, վոր պ. Պռոշյանցի գերության վոգին բուն հայկական և և կատարելապես ազատ այն յեկամուտ ձևերից, վոր Ռուսիայում, շատ ռուսագետ հեղինակների և մանավանդ— Տաճկաստանի ֆրանսագետ հայ հեղինակների գրվածքի մեջ վխտում են*։

Հին լեզվի կեղևին սորկանալ համարում ենք, յերբ մի հեղինակ փոխանակ ժողովրդի հանրական ձևին հետևելով, կենդանացնելու, գրելու, կանգնելու, նստելու և այլն ասելու տեղ, գրում է կենդանացնելոյ, գրելոյ, կանգնելոյ, նստելոյ և այլն։ Ինչ է այս ոյասիրության խորհուրդը. գրածին ավելի վսեմություն՞ տալ, թե՞ ավելի հատկանալի անել նորան ժողովրդյան։ Նախ վոր ոյ-ը ու-ից վոչ գեղեցիկ է և վոչ վսեմ. ու վերջավորություն սեռական անեղևույթ յեղանակի, վորպես համորեն ազգի գործածած, նոր լեզվի մեջ միշտ ավելի գեղեցիկ և ավելի պատշաճավոր է քան թե ոյ-ը, վոր նոր լեզվի մեջ բնավ հանդես չունի։ Յերկրորդ, ոյ-ը ու-ից վո՛չ միայն ավելի

* Վխտալ.— кишеть.

հասկանալի չե, այլ շուտով ավելի անհասկանալի, ասել ե թե այս յերկու պատճառով ել ոյասիրությունը չե կարող արդարանալ, մնում ե մեջ տեղ հին լեզվի ստրկությունը, վոր ստիպում ե հեղինակին կենդանի ժողովրդի կենդանի լեզվի արտոնությունը հափշտակելու։ Նույնպես ի գործ դնել, ի մեջ բերել, ի լույս հանել, վորպես թե յերեք գործ դնեն, մեջ բերել և լույս հանել ասե կամ ավելի անարդ և լինում կամ անհասկանալի. սորանից լավերը կան «ջանի գործ ենք լինում», «յօրէ անտի իւր հաստատութեան մինչև ցայսօր»։ Չպիտի մոռանալ, վոր այդ նախդիրները կորուցել են իրենց իրավունքը ազգի շրթունքի վրա, և տնաքանդները ոսոխնի նման մի մածուցիկ բան ել չունին, վոր մի հեղինակ թե կամենա դնել ազգի շրթունքի վրա, կպչեն մնան ու վայր չընկնեն։

Հին լեզվի մեջ, հատկացուցիչը կարող ե դրվել և նախադաս և վերջադաս, բայց նոր լեզվի ընդհանուր կանոնն ե, վոր հատկացուցիչը լինի միշտ նախադաս։ Այն ժամանակ միայն կարելի չե վերջադաս դնել, յերե հատկացուցիչը հարաբերյալ ե, այսինքն մի որ, իսկույն հետևելով, այդ հատկացուցչին ե հարաբերում. պատճառ նոր լեզվի մեջ հարաբերյալի և հարաբերականի մեջ չկարողանալով ուրիշ բան մտնել, յերե հարաբերական ունեցող հատկացուցիչը սովորական կանոնին հետևելով դրվի հատկացուցյալին նախադաս, այն ժամանակ կորցնում ե յուր հարաբերականը, վորովհետև սորա ուժը հարաբերում ե հատկացուցյալին, վոր անմիջապես հարաբերականից առաջ ե։ Պ. Պռոշյանցը հին լեզվի համաձայն, բայց նոր լեզվին հակառակ հատկացուցիչը դրել ե մի տեղում վերջադաս. «այս է կարդը կանգնելոյ» (յեր. 181)։

Մենք նորա համար այս մեկ հատ բանը մեջ բերինք, վոր իրեն իսկ հեղինակին վորոշ կերպով յերևի այդ անբնականությունը, վոր թե ուրիշ ամենը թողած իր առաջաբանի մեջ գործ դրված հատկացուցիչներին նայի, կտեսնե վոր ժողովրդի խոսած լեզվի հոսանքին հետ յերթալով հատկացուցիչը միշտ նախադաս ե գործածված։

Նոր լեզվի մեջ կան բայեր, որինակ տամ, գամ յերբեմն և լամ, վոր իրենց լծորդությամբ դուրս են ընդհանուր կանոնից։ Ընդհանուր և միակ լծորդությունը ե ում եմ, որինակ գրում եմ, տեսնում եմ և այլն. իսկ տալը, գալը յերբեմն և լալը խոնարհվում են տալիս եմ, գալիս եմ և լալիս եմ*։ Բայց

---

* Լալիս եմ ինչ ենք լսել, սովորաբար լինիմ բայով ե վարվում, «լաց եմ լինում» և այլն։ Տալը, գալը, աստրախանցիք խոնարհում են «տամ եմ», «գամ եմ», բայց այս շատ անգործածդրելի չե և տգեղ, հայտնի չե թե և դպրությամբ մե՛ջ անընդունելի։ Նույն այս բայերը նոր Ջուղայի և Հնդկաստանի հայերի բերանում մի ուրիշ ձև են ստացել։ Նոքա ասում են գալմամ եմ, գալման եմ։ (Գալը գոլ ե յեղել։ Յերբ առաջին անգամ լսեցի այդ ե կամ է փոխվելը—նոքա չեն ասում լավ.այլ լավ,— անգլիական այբի ազդեցությունը կարծեցի, բայց վերջը ստուգեցի, վոր այս նմանությունը պատահական եր)։ Թեև հին լեզվի մեջ գրում, տալումն չկա, բայց լալումն կա և հնդկաստանցին ասում ե լալմամ եմ. արդյոք այս դարձյալ նախդրիվ տրականի ո՞ւժով չե՞, այսինքն, լալու վրա յեմ. մենք գոնե կարծում ենք։

ИВ. Լինիմ բայով վարվում ե տեղ-տեղ *բաց-բաց լինել*. բայց նոր լեզուն ունի

ընայելով այս բոլոր Արարատյան աշխարհին ընդհանրացած սովորության վրա, կան մարդիկ, ինչպես նաև բոլոր Աշտարակը (ինչպես յերևում է Սոս և Վարդիթերից) վոր Թե բայի վերջավորությունը, այսինքն եմ, ես, էն նախընթաց և դրվում բայարմատից, ինչպես չեմ տալիս և այլն, չեն ասում չեմ տալիս կամ չե տալիս, այլ չեմ տալի կամ չե տալի: Պ. Պռոշյանցը իր դրության մեջ գործ է ածում այս ձևը— մոռացնել տալի, ճառաջ գալի, ճոգի յե տալի և այլն, փոխանակ մոռացնել կամ մոռցնել տալիս, հառաջ կամ առաջ գալիս, հոգի յե տալիս ասելու տեղ: Ինչպես յերևում է պ. Պռոշյանցը ուրիշ շատերի նման կարծում է, Թե տալիս եմ-ը շինվում է տալի ընդունելությունից, վորի ծայրն Թարմատարաբար կպել է ս տառը, ուրեմն և ավելի ուղիղ է տալի ասել քան Թե տալիս, մանավանդ վոր տալին էլ գործ է ածում ժողովուրդը: Շտապում ենք ծանոթացանել, վոր ներկայություն, մոտավորություն ցույց տվող է այն Թարմատար համարված Ս տառը, և առանց նորան տալի եմ ասելով չենք կարող ցույց տալ այն գործողությունը վոր կատարվում է ներկայում: Յեվ մեզ Թվում է Թե տալիս եմ-ի արմատը բնավ տալի ընդունելությունը չե, այլ տալ անեղևույթ յեղանակը և տալիս-ը հոլովյալ անեղևույթ է, նախադրիվ տրական, վոր միանալով եմ, ես, է-ի հետ դիմավոր բայի գոյություն է առանում. վորպես Թե ասեր, ի գալս իմ, այսինքն գալու գործողությունը կատարելու վրա: Նոր լեզվի մեջ հոլովակերտ և հոլովառու նախադրությունքը, շատ տեղ և դրեթե մեծ մասով, դարձել են վերջավորություն, յեթե ծիծաղելու համար կարելի յե այսպես ասել, և շատ տեղ էլ հոլովակերտը իսպառ դուրս ընկել, ուստի չպիտի զարմանալ յեթե տալիս-ը անեղևույթ յեղանակի նախադրիվ տրական և դիմորոշ հոդի հետ միացած: Որինակներով այդ ամենը ցույց տալը քերականության գործն է, բայց մենք կամեցանք վոր այս յերկու խոսքով պատճառ տանք մեր դրագետներին, վոր Թե մենք սխալվում ենք այսպես կարծելով, մեր սխալը մեզ ցույց տան, վոր մենք էլ ուղիղ կանոնը սորվելով լեզվին ընդդեմ չմեղանչենք: Բայց Թող առաջուց հայտնի լինի, վոր հեշտությամբ չենք Թողուլ պատերազմի ասպարեզը: Մենք բացի գալ, տալ բայերից ցույց ենք տալիս բոլոր մյուս բայերի նախադրիվ տրական հոլովված անեղևույթ յեղանակները— տեսնելիս, նայելիս, որինակ, «նորան տեսնելիս ասա». «նորա վրա նայելիս զարմացան». ինչ են այս նայելիսը, տեսնելիսը, յեթե վոչ ի տեսանել, ի նայել: Ս տառը չպետք է ընդունել այս տեղ վորպես առաջին դեմք ցույց տվող, այլ վորպես բանի մոտավորությունը, ներկայությունը. հին լեզվի մեջ, «տեղիս անապատ է և որս տարաժամյալ». նոր լեզվի մեջ— «Գիշերս շատ քնեցի» չեն նշանակում ես տեղ,ես որ, ես գիշեր, այլ այս տեղը ուր վոր այժմ կանգնած ենք անապատ է, այս որը վոր անցնում է ուշացել է, այս գիշերը վոր անցավ և այլն: Շատ անգամ, ինչպես նաև Աշտարակում, նախդրիվ

Թըչվել բայը, վոր ամեն տեղ հասկանալի յե, ուստի և ավելորդ է գործ դնել Թաց աբի, Թաց յեղա, փոխանակ Թըչվեցի Թըչվեցա, վորի կազմվածքը ավելի պարզ է և կարճ:

տրականի տեղ, որինակ գալիս, գործ են ածում սեռականը, բայց դարձյալ ս տառը ավելցնելով. ինչպես գալուս տեղը տեսա: Բայց վոչ միշտ գործ են ածում այս, վորովհետև մենք տեսնում ենք վոր արդո Պռոշյանցը գրում է «...շնորհակալություն անելիս, ու խոտերի փոքերը ձնի տակից հանելիս ու ծամելիս»: Բայց այս մասին այսքան առ այժմ հերիք է:

Նոր լեզվի մեջ կրավորական բայը վ տառը պիտի ունենա խոնարհվող վերջավորության նախընթաց և այս այնպիսի ընդհանուր կանոն է, վոր հին լեզվի հասարակ ասած բայերն էլ ինչպես ծնանեմ, դառեմ և այլն, նոր լեզվում դարձուցել և ներգործական, վորովհետև կրավորականը ծնանվել, դառվել և այլն: Հին լեզվում ներգործականից կրավորական և դառնում բայը միայն ներգործականի եչը ինի փոխվելով, որինակ. գործեմ,— գործիմ, բայց նոր լեզվի մեջ այդ ինիի նախընթաց պիտի և մեկ վեվ ավելացնել. գործել,— գործվիլ. վորովհետև շատ անգամ հին կրավորականը կամ ինչպես ասացինք հասարակ բայը դարձել է ներգործական, ուստի և կրավորականի բուն կազմությունը հենվում է վեվի վրա*: Կան բայեր, վոր յերբեմն դուրս են գալիս այդ ընդհանուր կանոնից, որինակ կորուցանել կամ կորցնել, հայտնի չե թե ներգործական է, բայց դորա կրավորականը լինում է շատ անգամ կորչել: Ասացինք շատ անգամ, վորովհետև կրավորականը գործ են դնում վորպես կորցվիլ. մեկ խոսքով, կրավորականը վեվով գործ դնելը համարեն ազգի հանրական կանոն է և վոչ մի տեղ չենք լսում նորան առանց վեվի: Պ. Պռոշյանցը նույնպես ընդունում է այս, թեև վեվի տեղ ու գործ ածելով, ինչպես, բարձվում է, վերահաստատվիլը, պառակտվիլը, պատարվիլը և այլն. բայց մի տեղ էլ գործ է դրել ամբապնդիլ, փոխանակ ասելու ամբապնդվիլ, հայտնի չե թե դարձյալ հին լեզվի ազդեցությամբ: Բոլ ներեն մեզ, վոր մենք այսպիսի մեկ-մեկ հատ յերևցած արտուղությանց վրա խոսք ենք բանում. բանը շատի կամ քչի վրա չե, այլ կանոնի վրա, ուստի հարկավոր է, վոր լեզվի վրա աշխատողքը իրենց մշակության արդյունքը և իրենց նկատողությունքը հայտնեն միմյանց, վոր այս հասարակաց փոխադարձ գործակցությամբ լեզվի գործը առաջ յերթա:

Բացի սորանից, վեվի տեղ ու գործ դնել այնտեղ, ուր իսկույն հաջորդում է ումը, շատ ծանր է և հասարակ ժողովրդին դայթակղեցուցիչ, վորոնց շատը ումն է տեսնելով չե կարդում՝ վում է այլ ումն է: Պետք չե

---

* Ցերթե բայը դիմավոր է, ներգործականից կրավորական դառնալու համար (հայտնի չե թե նոր լեզվում) միայն մի վեվ է առնում. իսկ թե անդեմ, որինակ. աներևույթ յեղանակ, այն ժամանակ և վեվ է ավելանում և եչը վոխվում է ինի. ինչպես գրում եմ,— գրվում եմ, գրել,— գրվիլ: Պ. Պռոշյանցը վորպե՞ս կրավորական աներևույթ յեղանակ գործ է ածել մի տեղ *կատարելագործվիլ*, վոխանակ *կատարելագործվիլ* ասելու: Վերը մեջ բերած որինակում, նա ներիմ է համարում, ներգործականի եչը ինի անելով կրավորականացնել, ինչպես *ամբապնդիլը*. իսկ այս որինակում կրավորականացուցել է միայն ու (վեվի տեղ իհարկե) ավելացնելով ներգործականի վրա, ինչպես *կատարելագործվիլ*: Վոչ առաջինը և վոչ յերկրորդը տալիս են նոր լեզվում կրավորականի գաղափար:

գործ դնել այս ձևը յերեք հարկ չկա։ Այսպես ասում ենք այն պատճառով, վոր յերբեմն հարկը ստիպում է վեվի տեղ ուն պահել չնայելով վոր իսկույն հետևում է կամ ում կամ ուիյուն։ Այս այնպիսի դիպվածներում, յերբ բառը իր ուղղական վիճակում ու է վերջանում, ինչպես լեզու, կատու, առու և այլն և այլն, կամ պատասխանատու, հարկատու, վոր ստեպ ուիյուն վերջավորություն են ստանում վերացական նշանակություն առնելու համար։ Մնացած մյուս դիպվածներում մենք հոժար ենք ժողովրդի ընթերցանությունը հեշտացնելու համար ու կամ ույունը վեվով փոխանակել, ինչպես գրում ենք թիւ, թվի, թվական։ Ավետիքյան Հ. Գաբրիել ականավոր Քերականը սորանից հիսուն տարի առաջ խոստովանել է իր ընտիր քերականության մեջ, նոր լեզվի սեփական ուղղության իրավունքը[1]։

«Անորոշ արտաբերութենէն մտեր է որ ու–ով կամ իւ–ով բառերջ երբեմն «վեվով կը գրեն. զոր օրինակ բուրուառ և բուրվառ, երիվար և երիւար, «նուագ և նրվագ. թուական և թվական։ Ասոնցմով կիմանանա պատճառը՝ որ ին«չո՞ւ աս Քերականութեան աշխարհաբարին* մեջ վեվով դրինք, անվան, պիտվա«կան, հիմակվան, առվօտանց և այլն. անոր համար որ աշխարհաբար վեվ «կրսենք նէ, վեվ ալ գրելու է՝ և ո՛չ ու կամ ւ, որ ծուռ հնչումը հաստատել չերևնայ»։ (Տե՛ս նորա Քերակ. 179 յեր.)։

Ծուռ հնչում ասում է այն պատճառով, վոր ինքը հիմնավորապես ապացուցանում է ույունի ձայնավոր լինելը, ինչպես այժմյան ֆրանսիական u կամ Հունական υ իպսիլոնը։ Յեվ իրավունք ունի։ Նոր լեզվի մեջ, յերեք ու վերջավորությունը հոլովվում է, իսկույն վեվի ձայն է ստանում, վոչ վոք չի լսում՝ лезун, lezoui, այլ лезви, lezvi։ Պ. Աբուլյանցը ավելի հավատարիմ մնալով նոր լեզվի իրավունքին և արտոնության, իր «Վերք Հայաստանի» գործում ու–ի տեղ միշտ վեվ է գործ ածում, մինչև անգամ այնպիսի տեղերում, ուր միմիայն Յերևանի գավառում ոն վեվ է, իսկ այլ տեղեր ու։

---

* Շատ մարդիկ, վոր ամեն բան չափում են հին լեզվի չափով, Ավետիքյան ի. Գաբրիելի պես նոր լեզվին ասում են «աշխարհաբար»։ Զգուշեցեք պարոններ, բայց այնպես արեք, վոր նույնիսկ հին լեզվին չհակառակիք։ Հին լեզվի *բար* մասնիկը մակբայացուցիչ է և *աշխարհաբարը* մակբայ և վոչ լոկ ածական անուն։ Բացի սորանից, յերբ նոր լեզուն «աշխարհաբար» է, ուրեմն հին «գրաբար» և վոչ «գրաբառ»։ Հայտնի չէ թե ուղիղ խոսելով չէ կարելի ասել գրաբար. այլ գրաբառ. ուրեմն և՛ աշխարհամառ և վոչ աշխարհաբար։ Շտապում ենք այդ պարոններին իմացնել, վոր գրաբառ կամ աշխարհաբառ խոսքերը չեն բաղկացած գիր և բառ կամ աշխարհի և բառ բառերից, այլ գիր և բարբառ, աշխարհ և բարբառ։ վոչ մի տեղում չենք տեսնում ի գրոց բառ, ի բառ աշխարհիկ. այլ ի գրոց բարբառ կամ ի բարբառ գրոց, ի բարբառ աշխարհիկ կամ յաշխարհիկ բարբառ, վոր միանալով (կրճատվել է բարբառ խոսքը և մնացել է միայն բառը, վորով և) դարձել է մեկ բառ (ածական) *գրաբառ, աշխարհաբառ*։ Ածական անունը յերբեմն վարվում է վորպես մակբայ, ինչպես նաև գրաբառ և աշխարհաբառ խոսքերը—գրաբառ խոսել, աշխարհաբառ գրել. բայց, բուն մակբայը կամ մակբայի սեփական վերջավորու. Թյամբ բաղադրված մակբայը չէ վարվում վորպես ածական։ Նույն այս հին լեզվի կանոնով էլ սխալ է «աշխարհաբար» ասելը, աշխարհաբառ ասելու տեղ։

Նա գրում է «Նազլվի սուգը, Նազլվի նամակը». Հայտնի չէ թե բացի Ցերեվանի գավառից ուրիշ տեղերում այդ բառը արտաբերվում է վորպես Նազլուխ. նույնպես կասվի, փոխանակ կասուխ: Մենք չենք գնում տակավին մինչև այսչափ. վորովհետև շատ բառ ժողովրդին հասկանալի չէ լինում, յեթե հոլովված ժամանակ իր ուղղական վիճակը պահում է. մանավանդ լեզվի վերածնության ժամանակ, յերբ այս ու այն գավառական բարբառներից բառեր ենք առնում: Այս է դարձյալ պատճառը, վոր մենք շատ անգամ սեռական կամ ուրիշ հոլովում պահում ենք բառերի ամբողջ ուղղականը, մինչդեռ նոքա, ընդհանուր կանոնով, տառ պիտի կորցնեին իրենց միջից հոլովելու ժամանակ:

Սակայն ու վերջացած բառեր հոլովելու ժամանակ և բացի ուած վերջավորությունից վեվի տեղ ու պահելը ավելորդ շռայլություն է և քանի վոր այդ ուն վեվ պիտի հնչվի, ու պահելու խորհուրդն ի՞նչ է. ընթերցանությունը դժարցնել: Ինչ վոր մեզ է վերաբերում, մենք ընդդեմ ենք այս տեսակ պահպանողությանց, վորովհետև ծանր են գալիս հասարակ ժողովրդին այդ ձևերը, վոր հազիվ հազ է կարդում: Բացի այս ծանրությունը ավելորդ ներմուծություն և շատ անգամ հին լեզվով էլ չեն կարող արդարանալ: Որինակ հին լեզվում հաշտ եմ բայը նոր լեզվի մեջ չեղել է հաշտվում եմ. էլ հաշտուում եմ գրելու ժամանակ, այդ ուն ինչ իրավունքով և վորտեղից է մտնում: Պ. Պռոշյանցը սովորաբար գրում է՝ յերգում— է, փայլում— է, կարողանում— է և այլն, այսինքն, բայ արմատի վրա ումը*

---

* Շատ ընթերուկ գրողներ այնքան սիրահարված են *վեվի* տեղ *ու* գործածելու վրա, վոր կրավորականի անցյալ ընդունելությունն էլ շատ անգամ գրում են *ու* մասնիկով. ինչպես, գրված ասելու տեղ ասում են գրուած այս յերկուսը տարբեր բաներ են և առանց ուղղախոսությունը շփոթելու չեն կարող իրար տեղ գործ դրվել: Ներգործականի անցյալ ընդունելությունն է *գրած*, իսկ կրավորականինը *գրված*. էլ ասցանից դուրս անցյալ ընդունելություն չկա: Մնաց վոր շատ անգամ կրավորականի տեղ էլ ներգործականն է բանում. չենք ասում հալված յեղ, այլ հալած յեղ. հայտնի չէ թե հալածը կրավորականի գրությունով է գործ դրվում այստեղ: Հիշելիքանալ նույնպես, վոր անցյալ ընդունելությունը գործ է դրվում ածական առումով, իսկ *ուած* կամ *ուածքը* յերբ միանում են մի բառի հետ, ինչպես *գրուած* կամ *գրուածք*, գոյական են և վերացական նշանակություն են առանում ինչպես գրություն: Մի և նույն ուժն ունի, յերբ ասենք «իմ գրությանց մեջ կամ իմ գրվածքի մեջ»: Պարզ է թե այս ընդունելություն չէ, այլ գոյական անուն: Բացի սոքանից *ուած* կամ *ուածքը* միանալով մի բայարմատի հետ, ինչպես ծեծվածք ունի **ость** կամ **ность** իսկ, ֆրանսերեն* վերջավորությանց ուժն ունի. ինչպես յերկաթի ծեծվածքը, յերկաթի ծայվածքը **ковкость железа, тягучесть железа**: Զգիտենք թե ինչպես բացատրենք մեր գաղափարը, վոր ավելի վորոշ կերպով հայտնվի: Պ. Պռոշյանցի գործի մեջ (յեր. 108) կարդում ենք «Անքերքրը գոված չուր ա, հանա սրա *խումբ* չունի»: Այս խոսքում խոսքը ցիշտ այն է նշանակում, ինչ վոր մենք ուրիշ բառերում ուզեցանք ասել. այսինքն յերբ *ջրին խումբ*, ապա և *յերկաթին ծեծուածքը*: Հույս ունենք, վոր այժմ հասկացուցինք թե ինչ նշանակություն ունի *ուածը* կամ *ուածքը* և թե վորքան հեռու չէ նա կրավորականի անցյալ ընդունելությունից *ված* վերջավորությունից: Յերբ այսպես է (վորպես և է), ապա ուրեմն կրավորական ընդունելությանն *ված*

* *Հեղինակը, հավանորեն, բայց է թողել ֆրանսերեն բառի տեղը, բայց մոռացել է դրել այն: ԽՄԲ.*

թողնելով, իսկ բայական վերջավորությունը եմ, ես, ե առանձին դրելով։ Բայց, արդարության անունով խոստովանում ենք, վոր այս ձևը բնավ պ. Պռոշյանցին միայն սեփական չե, այլ դրեթե բոլոր դրողներին, բացի մեզանից և պ. Նազարյանցից, վորքան հիշում ենք։ Հարկ չկա ասել, վոր այս մի աննեբելի սխալ ե, վորի մասին ավելորդ չե մի քանի բառ խոսել։ Բայը մեկ մասն բանի չե, վոր ցույց և տալիս անել կամ կրել դեմքով, ժամանակով և այլն։ Գործ բայ չե, այլ անուն, իսկ գործեմը բայ ե և ցույց և տալիս անելու գործողությունը առաջին դեմքում, վորոշյալ չեղանակով, ժամանակով և թվով։ Անելը կամ ցույց տալը այսինքն բուն բայի պաշտոնակատարությունը չերևում ե այս եմ վերջավորության մեջ, վոր միանալով գործի՛ն հետ, դոյական գործ անունին տալիս և բայի զորություն։ Հին լեզվի մեջ միայն եմ վերջավորությունը չե վոր ունի այս ույժը, այլ կան չորեք ուրիշներ ել, ինչպես ում, իմ, ամ. սոքա ել ճիշտ նույն պաշտոնակատարությունն ունի, ինչպես վերը դրված եմը։ Այս վերջավորությունքը առանձին առնված բայ չեն, բայացուցիչ մասնիկներ, այնպես վոր թե նոքա չմիանան մեկ բայարմատի հետ, իրենք իրենց վոչինչ նշանակություն և խորհուրդ չունին։ Թեև առաջին լծորդության վերջավորությունը նման ե եյական եմ բային, բայց այդ պատահական նմանություն ե միայն սահմանական չեղանակի ներկայի և անցյալ անկատարի մեջ, վորովհետև եմ բայի կատարյալը եղէ, ապառնին եղից ե, մինչդեռ եմ լծորդության տակ դնացող բայերի կատարյալի և ապառնու վերջավորությունքը եցի և եցից ե։ Կարող են մեզ վրա ծիծաղել, թե այդ ինչ ասելու բան ե վոր ասում ես, ո՛վ չգիտե։ Թե ամենքը պարտակա՛ն են գիտենալ, այդ գիտեմ չես, բայց թե գիտե՞ն ստուգապես, դորան դրական ապացույց չկա, մանավանդ թե ամեն քայլափոխ հակառակ վկայություններ եմ տեսնում։ Ձեթե գիտենային, չեթե գրելու ժամանակ իրենք իրենց հաշիվ տային, թե ի՞նչ բանի վրա չեն, այն ժամանակ բայական վերջավորությունը պետք չեր վոր իբրև առանձին առնված եյական բայ բայարմատից բաժանեյին. ի՞նչ են կարծում այդ պարոնները, խոնարհածները աննկուլբ չեղանա՛կ ե, թե ընդունելություն վոր եմ, ես, էն իբրև եյական բայ գրում են առանձին։ Թերևս մեր պահանջողությունը չերիտասարդ գրողներից այնքան խիստ չե, վորովհետև նոցա մեծագույն մասը հին լեզուն չգիտե, բայց ի՛նչ ասենք այն պարոն-

---

վերջավորության տեղ *ուած* կամ *ուածք* գրելը աննեբելի սխալ ե ուղղախոսության ընդդեմ։

NB. *Ու* վերջացած բառերը, ինչպես *պատիւ*, չեթե գործ են դրվում վորպես պատված և այլն, վերացական նշանակություն չունին և կարող են կրավորական անցյալ ընդունելության տեղ մտնել մանավանդ վոր *պատվածը* պատել բայի կրավոր անցյալ ընդունելության տեղ կարող ե հասկացվել, թեև պատած կարելի չե և կրավորականապես գործ դնել ինչպես *հալածը*, վորի մասին խոսեցանք։

Առհասարակ մենք խոսում ենք ընդհանուր կանոնների վրա, վորոց մանրամասն և բացառական կանոնների ավանդությունքը պիտի հերականությունից և բառարանից պահանջել։

ներին, որոնք վոչ միայն պարծենում են իրենց հին լեզվի գիտությամբ, որպես միակ արժանավորությամբ, այլ քան յերեսուն տարիներով, վոչ բարով, քերականությունն են դաս տվել։ Պետք չե՞ վոր մտածեն, թե չե կարելի գրել գործ եմ, մեղանչ եմ, և այլն և այլն, այլ թե գործեմ, մեղանչեմ, և այլն։ Բայց այն պարոնները մեզ կարող են ասել, թե այդ հին լեզվի կանոն է, դորանից նոր լեզվին ի՞նչ*։ Ինչպես թե ինչ. հին լեզվի բայը բայ է, նոր լեզվինը բայ չե՞։ Յերթե հին լեզվի, առաջին լծորդության բայերի, եմ վերջավորությունը եյական բա՞յ չե դարձել և միայն այն պատճառով, վոր յերկու յերեք ժամանակի մեջ յերևում է և մնացած ժամանակների մեջ բոլորովին կորչում, վորովհետև այդ եմը ունի իր սեփական վերջավորությունը։ Յերթե եմը եյական բայ է, ինչպես կարծում են բաժանողքը, հարկավորապես պիտի խոստովանեն նույնպես, վոր նոր լեզվի մեջ բացի եյական բայից ուրիշ բայ չկա. բայց կարելի՞ չե թույլ տալ մեկ լեզու, վոր միայն եյական բայ ունենա, առանց ուրիշ բայեր էլ ունենալու. հետո, կարելի՞ չե մի այդպիսի լեզվով խոսել։ Կարելի չե ասում են, վորովհետև եյական բայը ինչ բայի վոր կպչի, նորան բայացնում է և այլն։ Չպիտի մոռանալ վոր նոր լեզվի մեջ, թեև դրեթե միակ լծորդությունը եմ է, այնուամենայնիվ միայն ինքը եմը չե կարող բայական զորություն տալ բառին, սահմանական յեղանակում, պետք է վոր նա կպչի նույնպես ում մասնիկի հետ։ Յերթե ասենք կամ գրենք «նորա ձեռքերը ներկում են» և այս եևը ընդունենք վորպես եյական բայ, ուրեմն ներկումը դառնում է նորան խնդիր և ուրիշ բան չե հասկացնում, յեթե վոչ այս թե «նորա ձեռքերը ներկի մեջ են»։ Իսկ յեթե գրենք «նորա ձեռքերը ներկումեն», այս տեղ եևը ընդունելով վորպես բայական վերջավորություն, ումի հետ միացած, իսկույն հասկանում ենք, թե նորա ձեռքերը վոչ թե ներկի մեջ են, այլ ներկելու գործողության վրա։ Յերթե եմ, ես, է բայական վերջավորությունը եյական բայ է, և նոր լեզվի բոլոր բայերի ծնող կամ կազմող, ուրեմն անհնար է, վոր յուրաքանչյուր բայի յուրաքանչյուր ժամանակը, դեմքը և թիվը գրվին առանց եյական բայի։ Բայց մենք տեսնում ենք, վոր ինչպես մեր լեզվի նույնպես և ուսար լեզուների մեջ մի բայ իր մի վորոշյալ յեղանակում, ժամանակում, դեմքում, թվում, պահում է իր կազմվածքը անխախտելի, անթերի և անփոփոխ, այնպես չե մեր նոր լեզվի բայերի կազմությունը։ Նախ, հերիք է, շատ անգամ, յեթե յեղանակ, ժամանակ, դեմք և թիվ ցույց տվող վերջավորությունը մեկ անգամ յերևի, նորան հետևող բայերը կարելի չե դնել առանց այդ վերջավորության. այսպիսի դիպվածում էլ այս հետևյալ բայերը ցույց են տալիս գործողություն, բայց յեղանակ, ժամանակ, դեմք և թիվ նախընթաց բայի վերջավորության ուժով. ինչպես «գնումեմ կարդում, հետո բերում վառում»։ Յերթե եմ, ես, են եյական բայ է և նոր լեզվի բայերի կազմող, ուրեմն ա-

* Մենք շատ հին լեզվով գրողներ գիտենք, վոր և հին լեզվի մեջ յերբեմն գործ են ածում իրենց սեռանչելի տրամաբանությունը. փոխանակ գրելու ցավե ինձ, ցավ է ինձ գրելով։

ռանց նորան, բայը չպիտի բայ լինի, բայց մենք վերի որինակից տեսնում ենք, որ կարդում, բերում, վառում բայեր են և ամբողջ բայական զորությամբ, վորի դեմքը, թիվը և ժամանակը յերևում և միայն նախընթաց գնումե բայում: Յերկրորդ, շատ անգամ հերիք է, յեթե հարցնողը իր խոսքի բայով ցույց տա ժամանակը, դեմքը և թիվը, պատասխանի մեջ կարելի չե բայերը դնել առանց եմ ես է ք. որինակ «Ի՞նչ են անում ծույլերը»— «ուտում, խմում, պառկում», այսինքն, ուտումեն, խմումեն, պառկումեն: Հայտնի չի, վոր թե եմ, ես, են եյական բայ լիներ և մյուս բայերի կազմող, ուտում, խմում, պառկում չեին կարող բայի զորություն ունենալ առանց, անպատճառ, իրենց վերջում ունենալու եմ, ես, է: Յեվ այս եմ, ես, է բայական վերջավորությունք բուն եյական բայի հետ չշփվելու համար չե կարելի բաժան դրել, յերբ բայը գրում ենք ամբողջապես, ինչպես «ներկումե», վորպեսզի ներկում խոսքը, եյական է բային խնդիր չդառնա և գաղափարի շփոթություն չծագի: Բայց մեզ կարող են ասել, թե ինչի՞ ուրեմն բաժանում ենք, յերբ այդ վերջավորությունքը դնում ենք նախադաս, ինչպես «տուն եմ գնում». ի՞նչպես է վոր այս դիպվածում չե հասկացվում այս եմը վորպես եյական բայ: Յեվ յեթե նախադաս դրվելով բաժան է դրվում, ինչի՞ չե կարող բաժան դրվել և վերջադաս լինելով: Սառույգ է, վոր շատ անգամ լեզվի վոգին պահանջում է այդ վերջավորությունքը գրել նախադաս և մենք գրում ենք. բայց, այսպիսի դիպվածում եմ, ես են չեն կարող բուն եյական բայ կարծվել, վորովհետև եյական բայի խնդիրը միշտ նախադաս է լինում բայից. չենք ասում «ձեռքերը են ներկում», յեթե անորոշ է ներվը, իսկ թե վորոշյալ, այն ժամանակ նորա ծայրին կպչում է ը տառը, վորով փարատվում է ամեն մթություն: Ուզելով ասել ձեռքերը ներկի մեջ են, այլ ասում ենք «ձեռքերը ներկում են», ուր ներկումը, վորպես նախադաս, խնդիր է լինում, ներկումից չե ընդունվում վորպես առանձին առնված բայ և ներկումը նորան խնդիր, այլ յերկուքը միասին մեկ բայ, թեև բայական վերջավորությունը նախադաս: Կան քանի մի պատճառներ, վոր պահանջում են շատ անգամ բայական վերջավորությանը նախադասություն, վորոնց մանրամասն քննությունը քերականությունից պիտի պահանջել, բայց մենք ավելի աչքի յերևցող և ամեն մարդու հասկանալի մեկ պատճառը միայն դնենք: Նոր լեզվի բաղաձայն բառով վերջացած հայցականը կամ վորոշյալ ուղղականը իրենց վերջում ըր ունեն, ինչպես ձեռքերը: Այս ըրը, վոր բառի վրա մեկ վանկ է ավելցուցել, նու է փոխվում, յեթե հետևյալ բառը ձայնավոր տառով է սկսվում. և այդ նույն հնչվում է այդ հետևյալ ձայնավորով սկսած բառի առաջին վանկի հաշվով, այնպես, վոր մեկ ամբողջ վանկ պակասում է, վորով խոսքը թեթևանում է: Յեթե գրենք «ներկումեն», այն ժամանակ ձեռքերը խոսքը չե կարող իր ըրը նու փոխել և յեթե այդպես խոսող ել լինի, ինչպես կան մի քանի նուազեր մարդիկ, դարձյալ բառի կազմության մեջ վանկի տնտեսություն չի լինիլ, վորովհետև ինչպես ձեռ-քե-րը, այնպես ել ձեռ-քե-րն յերեք վանկից են բաղկանում. իսկ թե

բայական վերջավորությունը նախադաս դնենք, այն ժամանակ ենը իր հաշվով և հնչում ձեռքերի նուն, ձեռ-քեր-ն են— ներ-կում, վորով ձեռքերը խոսքը առանց իր նշանակությունը փոխելու կամ կորցնելու ձգում և մեկ վանկ և բեթևանում են: Նոր լեզվի բովանդակ կազմության մեջ մեծ պաշտոն ունի այս անտեսությունը, վորպես նաև բառերի վանկերը և տառերը հավասարաչափ մեմյանցից բաժանելու ձգտողությունը: Յեվ առողջ աչքերով նայողը կտեսնի, վոր նոր լեզվի մեջ, ժամանակի խնայողությունը, առոգանության ներդաշնակությունը՝ և արտաբերության հեշտությունը մեծ քայլափոխ են արել: Մենք բավական նյութ պատրաստել ենք, վոր վերաբերվում են նոր լեզվի անդամազննության և ֆիզիոլոգիային, բայց բոլորը պիտի մանեն նոր լեզվի մշակության տեսությանը մեջ, վոր մի ներածություն և... Յերե, ինչպես մի անգամ ասացինք, աշողի մեզ գլուխ բերել այդ կտիտ գործը:

Այս բոլոր խոսքի զորությունը այս է, ա) Թե բայերը չպիտի բաժան գրվին իրենց բայական վերջավորությունից, ինչպես փայլում— է, այլ անանբաժան, ինչպես փայլումե: բ) Կարելի չե բաժնել, յերե. այս վերջավորությունը նախադաս է գրվում, ինչպես, և փայլում: գ) Յերե մի վորպիսի և ինչ բայ ամբողջ գրվում է, ինչպես գնումե, կամ են գնում, հետևյալ բայերը, ինչպես, կոտրում, բերում, վառում և այլն կարող են առանց վերջավորության գրվիլ: Յեվ դ), նույն այս կանոնի զորությամբ, յերե Մարկոսը իր հարցմունքի մեջ գործ է դնում բայը յեղանակով, ժամանակով, դեմքով և թվով, ինչպես, «ինչ են անում», Կիրակոսը կարող է պատասխանել բուն հարցմունքին առանց բայական վերջավորության, ինչպես, «ուտում, խմում, պառկում»:

Վորևիցե հեղինակ, մի բան գրելու ժամանակ, պետք է նայի, վոր իր ձև ու վոճը հարթություն ունենա և մի կանոնով առաջնորդվի, իսկ առանց կանոն, առանց համակարգության, յերբեմն արևելք նայելով և յերբեմն արևմուտք, լեզուն դառնում է մի մածնաբրդոշ, ել դժվար է այնուհետև հավատալ, Թե այդ լեզվով գիրք կամ որագիր հրատարակելը կարող է ժողովրդի խոսած լեզուն մաքրել, մշակել, կամ նորա վրա ազդեցություն ունենալ: Յեվ ինչպես կարնա ժողովուրդը իր կարդացած գրքից մի ձև առնուլ մի վորոշյալ բառի վերաբերությամբ, յերբ այդ բառը տարբեր ձևերով և գործ ածվում այնտեղ, վո՞րը նոցանից ընդունե վորպես հետևելի որինակ:

Նոր լեզվի մեջ, Թեև կան վեց հոլովմունք*, բայց նոցանից առաջինը իր տակ քաշել է բառերի ամենամեծ մասը, այնպես, վոր մնացած հինգ հոլովմունքը, միասին առնելով, առաջին հոլովման տակ գնացող բառերի և մի քառորդը չունին. բացի սորանից այս հինգ հոլովմունքը իրենց սեփական հատկությունը միայն յեղանակում ունին, իսկ հոգնականի մեջ բո-

* Այս բոլոր հոլովմունքը մանրամասն և իրենց խոտորմունքներով և բացառություններով ավանդելը էերակաություն գործն է և մեր ներկա քննության մեջ տեղ չունի. ապա թե վոչ մեր հատվածը քնավ չի վերջանալ:

լորն ել գնում են առաջին հոլովման տակ, չեթե միայն դուրս հանենք մի քանի բառ, որ յերբեմն գործ են դրվում հին ձևով, ինչպես դպրությունք— դպրութեանց և այլն, կամ Հայաստանյայք— Հայաստանյայց։ Բայց վորպես այս խոտորումները, նույնպես և ուրիշ շատեր, մեզ պես, վոչ բարով, դրոշների պահպանություն կամ թույլտվություն են, այս կամ այն պատճառով և վոչ թե ժողովրդի վրդու կամ հանճարի ստեղծած։ Մեր առաջին հոլովումը և քաղաք, քաղաքի, քաղաքից. քաղաքներ, քաղաքների, քաղաքներից։ Յերկրորդը մարդ, մարդու, մարդուց։ Մեր յերկրորդ հոլովումը Տաճկաստանի Հայոց առաջին հոլովումն է և մեր առաջինից ավելի բռնակալ, այնպես, վոր գրեթե լեզվի բոլոր բառերը գնում են այդ հոլովումի տակ խիստ քիչ բացառությամբ։

Պ. Պռոշյանցը գիտե այս, վորովհետև Աբարատյան աշխարհի ծնունդ է և իր գրվածքի մեջ գլխավորապես հետևում է բուն Աբարատյան առաջին հոլովման, չեթե այդ հոլովման տակ է հոլովվում բառը, ինչպես ճյուղեր, ճյուղերի, ճյուղերից. բայց և այնպես յերբեմն խոտորվում է և անխտիր գործ է դնում ճյուղեր, ճյուղերու։ Խոսքը այն չե, թե առաջինն է գեղեցիկը, թե յերկրորդը, այլ այն թե, վո՞րը սոցանից հանրական է Աբարատյան լեզվին և թե կարդացողը վո՞րը պիտի ընդունի.— ճյուղեր, ճյուղերի՞, թե՞ ճյուղերու։ Վոչ լոկ այս բառի վրա չի մեր խոսքը, և վոչ իսկ պ. Պռոշյանցի գրվածքի վրա. այսպիսիք հազարներով կան մեր ամենից գրվածքի մեջ. բայց, այս և մեր ասածը, թե խնամով և ուշադրությամբ վարվելով նոր լեզվի հետ հարկավոր է այս ցիր ու ցան ճապաղ ընկած ձևերը կարելի սկզբունքների վրա ամրացնել, վորպեսզի նոցա միջնորդությամբ կարելի լինի մի համակարգություն, մի ուղղախոսության արվեստ կազմել և նոր լեզվի ուսումնասիրությունը հեշտացնել։ Բացի սորանից, հին լեզվի հոդնակի սեռականները շատ խնամով (վորովհետև ոտար է ժողովրդին), պիտի թույլ տալ յերբեմն, չեթե նոր հոդնականը բազմավանկ է, մանավանդ չեթե յերկու կամ յերեք այդպիսի սեռականք (վերջահոլովն տրականն ել պակաս չե) իրար քամակից են գալիս։ Իսկ միավանկ կամ քիչ վանկով բառերում իսպառ պետք է հեռանալ հին սեռականներից, վորովհետև ժողովուրդը ունի իր բուն ձևը։ Շատ ուրիշների հետ, պ. Պռոշյանցը անխտիր գործ է ածում յերգոց, զորաց և այլն, յերգների, զորքերի ասելու տեղ։

Ըստ նախադրությունը, վոր հին լեզվում սովորաբար վերջահոլով տրական խնդիր է առնում, նոր լեզվում բոլորովին անգործածական է։ Ժողովուրդը շատ անգամ «ըստ քաջության» կամ «ըստ քաղցրության» ասելու տեղ, ասում է կամ լոկ «քաջությունով», «քաղցրությունով» կամ «իր քաղցրությունով», «իր քաջությունով» և այլն. իսկ թե գործիականի մտքով չե կարելի հասկանալ ըստ իր խնդրով, որինակ «վկայքն պսակին ըստ ճգնութեանցն», այն ժամանակ ըստ-ի խնդիր դարձած բառը առնում է սեռական հոլովով և նորա մոտ գնում է կամ չափ խոսքը գործիական— չափով կամ համեմատ խոսքը և կամ մի ուրիշ խոսք, վոր ավելի հարմարություն ունի

քանին. ինչպես «վկաները պսակվում են իրենց ճգնության չափով» և այլն։ Մեկ խոսքով ըստ-ը վերջահոլով տրականի խնդրով կենդանի լեզվի մեջ չի գործածվում։ Համաձայն ենք վոր գիտնական առարկաների մեջ, ուզենք չուզենք, պիտի ստիպվենք ըստ-ը ներս առնուլ. բայց և այնտեղ պարտք կա մեր վրա խնամով գործ դնել, և աշխատել վոր բուն իր խնդրի մոտ մի հին հոգնակի սեռական հատկացուցիչ ել չունենա։ Պ. Պռոշյանցը շատ և քշում այս ըստ-ը, «ըստ ժամանակին ներգործության» պրում է նա, վոր պարզ դրաբառի կանոնից ել դուրս և ավելի միջակ և խրթին վոճերի համաձայն, հատկացուցիչը հատկացելուց նախընթաց։ Բայց սորանից ել լավերը կան. «ըստ այլ և այլ ժամանակին հանդամանաց». «թե ըստ դիպաց, թե ըստ հանդամանաց և թե ըստ այլ և այլ իրողության». «ըստ պահանջման հանդամանաց վիպասանության»։ Ասես թե լուսահոգի Խապառաճին Կրկռիկյանի հետ է խոսում. «կը քննեն, կը քաշքշեն, կը կրկտեն ըստ զանազան խելաց և իդեայից»*։ Միշտ ներելի չե հին լեզվից փոխ առնուլ, յեթե նորում չկա այդ ձևը, կամ այդ բառը, բայց միշտ խնայելով և պետք չեղածից ավելի չառնելով։ Մենք ասացինք վոր ըստ-ը պիտի ստիպվենք ներս առնուլ, բայց գիտական առարկաների մեջ և այն ավելի կարճության և ճշտության համար. ապա թե վոչ ըստ-ը ինքն իրեն այն նախադրության կարգումն ե, վոր ժողովուրդը կորուցել ե։

Մենք ամեն քայլափոխի մեջ տեսնում ենք հին ձևերի ազդեցությունը պ. Պռոշյանցի լեզվի վրա։ «...խորհնացին... ախորժանք** նվագ ևն հնչեցնում հասարակ ժողովրդյան հետ նրա բամբիռը»։ Պարոններ, աստծու սիրուն, խնայեցեք ժողովրդին, իրավունք տրեք նորան։ Նախ վոր վոչ մի տեղ այդպիսի խոսակցություն չե լսվում ժողովրդի մեջ, յերկրորդ, պ. Պռոշյանցը դեղեցիկ և վսեմ ձևերի հետևելով (?) բուն իրը փախուցել ե, կենդանի չե ասուված, վոր մենք չենք հասկանում այստեղ մեջ բերված խոսքերը։ Խորհնացու հնչեցուցածը նվա՞գն ե, թե բամբիռը. յեթե հնչեցուցածը նվագն ե (ինչ ասել ե նվագ հնչեցնել), ուրեմն հնչեցնել բայը հասել ե իր դադարման կետին նվագի մեջ, այսինքն խորհնացու առարկան նվագն ե կամ Չամչյանի խոսքերով «նվագն ե խնդիր սեռի բայիս հնչեցուցանեն», ուրեմն

---

* Թուղթ կաթուղիկեայց Խապառաճեան հօր՝ ընդդէմ Թոռնանչայ Կրկոռիկեան. տպեալ ի փարիզ. յերեսներորդ հօրներորդ ամի բնակութեան հեղինակին ի նմին քաղաքի։

** Օք վերջավորությամբ գործիականը միմիայն «ձեռք» բառը հոլովելի ժամանակ նոր-նախիջևանի հին պառավները պռում էյին «ձեռոք դրի», բայց այժմ իսպառ չե լսվում։ Առհասարակ այդ բազմի լեզուն մեծ փոփոխության ե յենթարկվել, վորոնց մի քանիսը մեր աչքի առջև կատարված։ Սորանից 20—30 տարի առաջ շատ պառավներ կան ծերությիմ գործ էյին ածում այնպիսի բառեր, վոր բավական ուշադրություն ունեյին հին լեզվին, որինակ բերեմ բույի կատարյալն յերրորդ դեմքում ասում էյին ի բեր փոխանակ *եբեր*, նույնպես *դնեմ*-ի կատարյալը եղեր, փոխանակ եդ։ Այսորա այս բոլորը ան. հետացել են։ և Ղրիմից բերած քաքար բառերի պաշարի վրա վոչ միայն «որ ըստ որի», այլ «ժամ ըստ ժամէ», յեթե կարելի ե այսպես ասել, ավելացուում են ռուսի բառեր, այնպես վոր սորանից հիսուն տարի յետքը, յեթե այս աղճատումին առաջը չառնվի, հարյուր բառի մեջ հազիվ բառ հայի չպիտի մնա։ Ցավալի յերևույթ։

խեղճ բամբիռը մնում է անգործ, թեև տեսքի համար մեջ տեղ է բերվում։ Բայց անտիկյան բամբիռը չէ ուզում յերկբայության տակ մնալ. նա դրա-կանապես բողոքում է և ասում է թե յերբ թափեցիր իմ վրայից յերկու յերեք հազար տարեկան փոշին և էլ հանեցիր կյանքի աշխարհը, ուրեմն պատշաճապես ներկործել տուր ինձ, ապա թե վոչ ծո՛ղ ճնշվիմ դարերի ծանրության տակ։

Ախ պարոններ, մաքուր սրտով և սուրբ խղճմտանքով ասում եմ ձեզ, քանի վոր դուք այդ վսեմ վոճերի քամակից դնաք, միշտ անպակաս պիտի լինին ձեր գլխից այս տեսակ փորձանքներ. ձեռք վեր առեք դոցանից և այն բարեբաստիճան պատվանդաններից իջե՛ք հասարակ ժողովրդի մեջ։ Հին լեզվի կարկատանները այնքան հարմարություն ունին նոր լեզվին, վորքան խաչը Աթենասին, վոր Սիքստոս հինգերորդը տվեց Աթենասի արձանի ձեռքը, խելով նորա նիզակը։ Բայց նա իր խելքով ասում եր, յերբեմն, Հռոմի մեջ Աթենասի պաշտողքը խաչ պաշտողների արյունը թափեցին, թող այժմ խաչը հաղթական կանգնի Աթենասի ձեռքում և թո՛ղ փշրվի նորա մահաբեր նիզակը։ Մենք չենք կարող այս դրության հետևել. նոր լեզուն հնի առջև այնպես հանցավոր չէ, ինչպես Սիքստոսը հանցանք եր համարում Աթենասին քրիստոնյաների մարտիրոսությունքը։ Մնաց վոր նույն իսկ Սիքստոսի գործը անխորհուրդ [է] և հիմարական, վրեժ հանել անշունչ արձանից, յերբ նա քրիստոնյաների կոտորվելու ժամանակ էլ այնքան անմեղ եր իր նիզակով, վորքան այժմ Սիքստոսի տված խաչով։

Համաձայն ենք, վոր մեկ մարդ կարդալով մեր այս տողերը և տեսնելով, վոր մենք մի կողմից վսեմ վոճերի հետևողություն, հին լեզվից արտաքին ձևեր փոխառնուլը դատապարտելով, ինքներս շատ անգամ ավելի խրթին բառեր ենք առնում հին լեզվից, վոր ժողովուրդը չէ գործածում, տեղ-տեղ էլ գավառական բառեր կամ ձևեր գործ ածում, վոր ամբողջ ազգի մեջ սովորական չեն, կարող է վոչ միայն զարմանալ մեզ վրա, վորպես մի ինքնահավանի վրա, վոր ինքն էլ չգիտե թե ինչ է ասում, այլ մինչև անգամ արհամարհել մեզ, կարծելով, թե մեր խոսքերը ուրիշ բանի համար չեն, յերե վոչ ուրիշի գրածը դատել և պակասությունքը յերևան հանել, մինչդեռ մենք ինքներս մինչև մեր վիզը թաղված ենք այդ տեսակ պակասության մեջ։ Ավելորդ չէ յերկու խոսք ասել այս պատճառով, վոր յերևցած հակառակությունը բացատրվի։

Նոր լեզվի հնից գլխավոր և հիմնական տարբերությունը եյապես հիմնված է բանի կազմության վրա, բաղդատության և ձևերի վրա։ Ստույգ է, վոր հին լեզվի բառերի շատ մասը մոռցել է ժողովուրդը, ստույգ է վոր շատ բառ չի հասկանում, բայց, ինչպես մի չգիտցած լեզու սովորելու ժամանակ, յերե առանձին առանձին առնված բառեր միայն սորվենք, հերիք չէ մեզ այդ բառերով խոսող ազգի լեզուն հասկանալ և դորա հակառակ, յերե այդ լեզվի կազմության որենքը և բաղդատությունը սորվենք, այլ բառ վոչ այնքան շատ, այնուամենայնիվ այդ լեզուն մենք կը հասկանանք, այնպես

եւ մեր ժողովուրդը չնայելով, որ յերբեմն հարկից ստիպված նորան անծանոթ բառեր ենք գործ դնում, կը հասկանա մեր գրածը, յեթե համաձայնի մենանք նոր լեզվի վոգուն բաղդատութեան և որենքներին: Առանձին առանձին առնված բառեր սորվելը շատ հեշտ է, մենք մեր փորձերից կարող ենք ստուգել, յերբ սկսում ենք ոտար լեզուներ սովորել, բայց թե ինչ որենքներով միմյանց հետ են կապվում այդ բառերը, մեկ խոսքով լեզվի բաղդատութիւնը այնպես հեշտ չէ և յերկար տարիներով կյանք ենք մաշում, մինչև սորվում ենք: Մարի զորութիւնը բաղդատութեան որենքի մեջ է, յեթե այդ որենքը մեզ հայտնի չէ, մեզ անծանոթ բառ հանդիպելու ել լինի շատ անգամ առանց բառարանի ոգնութեան հասկանում ենք նորա նշանակութիւնը, վորովհետև ամբողջ բանի զորութիւնը մեզ հասկանալի է, վորովհետև բաղդատութիւնը և ձևերը ծանոթ են: Ապա յեթե մի այնպիսի բառի պատահենք, վոր չկարողանանք հասկանալ, ում հարցնենք վոր մեզ ասե, կամ վո՛ր բառարանը չէ կարող լուծել մեր տարակուսը: Սորա հակառակ, ինչպես վերը ասինք, յեթե լեզվի բաղդատութեան որենքը անհասկանալի չէն մեզ, բանի զորութիւնը կմնա անհայտ, ել վոչ Մարկոսը կարող է ոգնել, վոչ բառարանը: Այս պատճառով հին լեզվի արտաքին ձևերը, նորա բաղդատութեան կճեպը (կեղև) նոր ժողովուրդը չի մարսիլ, այս պատճառով ել մենք ընդդեմ ենք, յերբ ամբողջ նախադասութիւնք գործ են դրվում այդ ձևով: Բայց նոր լեզուն գոյանալով ա՛յլ պատմական դեպքերի, ա՛յլ աշխարհների և ա՛յլ ժամանակների ազդեցութեան տակ շատ բառ չունի, վորովհետև ժողովուրդը կամ չունի այդ բառերի դաղափարը կամ ոտար բառ է գործ ածում: Հայտնի չէ թե այդպիսի դիպվածում պիտի բառ վոխ առնենք հին լեզվից. և այնպես դաղափարների համար, վոր նոր քաղաքակրթութեան արդյունք են և բնավ նոցա բուն բառը հին լեզվում ել չունինք, պիտի նաև ոտար լեզուներից առնունք, ինչպես մեր նախնիք առել են, վոր մենք կարող ենք հարյուրներով ցույց տալ: Տարակուսս չկա, վոր ժողովուրդը, խակուն, կարդացած րոպեին, չե կարող հասկանալ վոչ հին լեզվի և վոչ ոտարից առնված բառերը. այստեղ վոչ ժողովուրդն և մեղավոր, վոչ հեղինակը: Ինչ անե ժողովուրդը վոր չգիտե այդ բառը, կամ ինչ անե հեղինակը, յերբ ուրիշ բառ չկա և հարկից բռնադատված ընդունել է կամ հինը կամ ոտարը: Հեղինակը բնավ հնար չունի այս դավին ճար անելու .բայց ժողովուրդը այդ առանձին առանձին առնված բառերը կարող է կամաց կամաց սորվել և հասկանալ, մանավանդ յեթե մի փոքր ուշադրութեամբ կարդա, կամ թե մի մարդու հարցնի կամ բառարանին ակը տա: Հեղինակի պարտականութիւնն է ժողովրդի լեզվի բաղդատութեան հավատարիմ մնալ, և հին կամ ոտար լեզուներից առնված բառերը ժողովրդին հայտնի որենքով կապակցել. ժողովրդի պարտականութիւնն և հեղինակի գրածը ուշադրութեամբ կարդալ և չհասկացած բառի նշանակութիւնը սորվել կամ մի գիտեցողի կամ բառարանի միջնորդութեամբ: Գո՛նե այսպես է մեր հայացքը և այն է պատճառը վոր տեղն յեկած ժամանակ, յերբ ու-

ըիշ հնար չկա, չենք փախչում հին լեզվի կամ ոտարազգի լեզուների բառերից։

Գավառական բառերը, յերեք քուն հայերեն են և այդ բառի գաղափարը հասկացնելու համար մեր նոր գրական լեզուն բառ չունի կամ յերկու յերեք բառ և գործ դնում այն գավառական մեկ բառի տեղ, այն ժամանակ նախընտիր և այդ գավառական բառը, վոր գործ ածվելով կը դառնա հանրական։ Գրուիյան շնորհքն ե, վոր այսոր ռուսիացի և տաճկաստանցի հայերը միմյանց գրած ավելի շատ են հասկանում, քան թե տասը տարի առաջ. հարկ չկա ասել, վոր քսան տարի յետքը ավելի լավ պիտի հասկական իրար խոսածը։

Կան գավառական բառեր, վոր գրեթե նույնանշան են, բայց և այնպես բարակ քննուիյունը բացում ե նոցա տարբերուիյունը. այդ բառերը պիտի գործ ածել իրենց քուն, ճիշտ նշանակուիյամբ և դորա նման մի բառ ունենք ասելով այն բառը շռայլուիյուն չհամարել։ Մարդկային միտքը շատ նազիկ գույներ ունի և վորքան շատ հայելի ունենանք յուրաքանչյուր այդ գույները մեզ ցոլացնող, այնքան պարզ կերեսնվի մտքի ամբողջ նկարը, բայց յերե կոպտուիյամբ միայն դլխավոր և խոշոր գույների քամակից գնալով կես գույները կամ կես տպավերները աչքից փախցնենք, նկարի տպավորուիյունը կը կորցնե իր ներդաշնակուիյունը։ Մտքի գույները ցոլացնողքը բառերն են. և աշխարհիս յերեսին վոչ մի լեզվում յերկու բառ չկա մաթեմաթիկաբար ճիշտ մի և նույն նշանակուիյունը տվող, ամենքն ել տարբերվում են իրարից թե շատ և թե քիչ։ Լեզվի հարստուիյունը բառերով և, նոքա յեն այն ամանները, վորոնց միջնորդուիյամբ մեր միտքը հասնում և ուրիշին։ Այստեղ տղայական նեղսրտուիյունք կամ ցնդի հեգնուիյունք, արհամարհանք այս կամ այն (գավառական բառի վրա, յերե վոչ կորստաբեր ազդեցուիյուն կունենա նոր լեզվի մշակուիյան և առաջադիմուիյան վրա, դոնե կը դանդաղեցնե նորա ընթացքը։ Կան բառեր կամ ձևեր վոր արարատյան հայն ե մշակել և կերպարանել, կան բառեր, վոր վանեցին ե մշակել կամ մշեցին. բայց ինչ հարկավոր ե այսպիսի ուժով կենդրոնների վրա խոսել, շատ հոյակապ և հեշտ պատվաստող բառեր և ձևեր կան այս ու այն տեղ, նաև շատ փոքր հասարակուիյանց մեջ, պետք ե այդ բոլորից ել ոգուտ քաղել խնամով և շրջանկատ ընտրուիյամբ։ Յերե այժմյան գրագետը մի վորոշյալ գաղափարի համար բառի կամ ձևի չե կարող, ավելի լավ չե՞ վոր մի հայ ընկերուիյան միջից առնու իր չունեցածը, վոր հայ ազգի պետքերից և հայ ազգի վոգուց առաջացած լինելով, ավելի հեշտ կարող և մարդական լինել ազգի ընդհանրուիյան, վորովհետև և այն տեղի հայերը միմյանց հետ ունին վոգու բնական ազգակցուիյուն, քան թե նատի բառ արվեստական, ձև շինե, կամ այս ու այն ազգից մուրա, վոր իր անսովորուիյամբ կամ ոտարուիյամբ դուցե բնավ չի պատվաստվի ել ազգի լեզվի վրա։ Վերջապես կրկնում ենք, մինչև բոլոր գավառական բարբառներից ճանապարհներ չբացվին դեպի գրական լեզվի կենտրոնը, սա վոչ միայն չե կարող ծաղկել և ուժ առնելով հանրական խորհուրդ ունենալ

ազգի համար, այլ կամ մի գավառի կը սորկանա, կամ չորցած, սառչած, ամուլ և անպտուղ կը մնա. յերկու դիպվածումն էլ լեզուն հաղորդակցության խորհուրդը կորցնելով ազգին համար կը լինի չեղածի պես, իսկ ինքը ազգը կենդանի-գրական լեզվի կարոտ: Բեև այս խնդիրների ընդհանուր մշակութիյունը տեղիս վերաբերութիյուն չունի, բայց և այնպես չհամբերեցինք, վոր մի քանի խոսք չասենք: Այս խնդիրը խիստ մոտ է իմ սրտիս, ուստի թող ներեն մեզ մեր ընթերցողքը մեր տկարութիյունը, յերբ չենք կարողանում մեր խոսքի ընթացքը կորել, յերբ բանը գալիս և լեզվի մշակութիյան:

Հին լեզվի ումն վերջացած բայանունները, վորպես անկումն, հերքումն և այլն, ընկած է ժողովրդի բերնից. այդ բառերը փոխանակել է նա նոցա բայերի անեղևույթ յեղանակով, ինչպես ընկնել, հերքել և այլն և վոր նույն բանն ասել է, մինչև վոր Սալլանթյանց Միքայել յեպիսկոպոսը, բացի անեղևույթ յեղանակը ուրանալով ընկնելը և հերքելը անկման և հերքման հավասար գոյական անուն է, ասաց: Հայտնի չէ թե Սալլանթյանցի սխալը տրամաբանութիյան մեջ չեր, այլ սկզբունքի մեջ. քերականութիյունը միայն նշանակութիյամբ չէ վորոշում մասունք բանին, վորով շատ խառնափնտրութիյունք կը լինեյին, այլ և բառի կազմութիյամբ: Ստույգ է անեղևույթ յեղանակը անունի պարագաները ունի և բայի պարագայք չունի, բայց հասարակ բայանուններից տարբերվում է նորանով, վոր բայի լծորդութիյան արմատը ունի իր մեջ. գործել, դառնալ, թողուլ, հաշտիլ, վորոնք իրենց ծայրի տառերը միմիայն դեմք ցույց տվող տառերով փոխանակելով, ինչպես մ, ս, է արդեն ստանում են բայի կատարյալ ուժը և զորութիյունը, մինչդեռ բայանունները, վոր ճիշտ անեղևույթ յեղանակի նշանակութիյուն ունին, չեն կարող այս կերպով բայի պարագայք ստանալ անունի պարագայքը իրենց վրայից ձգելով: Սորանից յերևում է, վոր այս բայանունները կամ նույն բայերի անեղևույթ յեղանակները կարող են միմյանց փոխանակ դործ դրվել, վորովհետև նշանակութիյուններն միևնույնն է և անեղևույթ յեղանակը տարբերվում է այդ անուններից նորանով, վոր միայն դեմք ցույց տվող տառեր առնելով իր վերջը կատարելապես բայի վորակութիյուն և ստանում, ուրեմն ժողովուրդը դատապարտելի չէ, յերբ այդ ումն վերացական առքական անունները փոխանակել է նույն բայերի անեղևույթ յեղանակով, վոր հեշտ հոլովվում է յերկրորդ հոլովումի տակ, ինչպես մարդ, մարդու. հավատարիմ մնալով ժողովրդին, մենք պարտական ենք ընդունել այս կանոնը, բայց վոչ դրականապես: Տաճկաստանի նորահույս հայ հեղինակները շատ տեղ դործ են դնում այս առքական անունները առանց նոսի, ինչպես՝ հերքում, մերժում, հոլովելով հերքումի և մերժումի: Պիտի թույլ տալ այս ձևը, վորովհետև շատ անգամ յերկու անեղևույթ յեղանակներ միմյանց քամակից են գալիս, յերբ բնական անեղևույթ յեղանակից հետո ումն էլ դարձնում ենք էլ, ինչպես մերժումն-մերժել: Հայտնի չէ թե այս բոլոր բացա-

ազատությունքը, մոր անում ենք ժողովրդի ձևի ընդդեմ, պիտի խնամով, դգուշությամբ և միայն անհրաժեշտ եղած տեղը գործ դնել և վոչ բեռ քան գործ շինել: Իսկ բուն հին ձևի գործադրությունը— հեղումն-հեղմանն և այլն, չպիտի թույլ տված, բեռ մինչև այժմ ազատ չենք նորանից և կարճության համար ստիպվում ենք յերբեմն գործ դնել:*

---

* Արդարությունը պահանջում է խոստովանել, վոր այս կարճության համար պահելն էլ իրավունք չէ: Նոր լեզվի բառը կարն է թե յերկայն, վոր այդպես է ձևավորվել, մենք ի՞նչ իրավունք ունինք մերժել այդ բառը: Հին լեզվում չկա՞ն բազմավանկ բառեր: Բայց այս կա վոր, անհնար է մեկ որվա մեջ կամ մեկ տարու մեջ միայն տեսական կանոնների վրա հիմնվելով հազար տարու ավերածքը շինել, հերիք է յեթե միայն այդ ուղղությունով առաջ յերթանք:

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Նոր հասավ մեր ձեռքը 1862 ին Վենետիկ, Մխիթարյանց ձեռքով, տպված Վարդան վարդապետի ժամանակագրությունը «Հաւատումն պատմութեան» մակագրով։

Հրատարակելով այդ միջնադարյան գործը Մխիթարյանք գրել են հառաջաբանը և թե՛ ծանոթությունքը, վոր չեռում են աստվածաբանական, աստեղաբաշխական, հնագիտական, դրամագիտական և այլ տեսակ տեսակ տեղեկություններով։ Հավելացուր աոցա վերա և յեվրոպական բացագանչական նշանը (!) վոր ամեն տեղ տնկած է, ուր վոր բնագրում խոսք է լինում հայոց յեկեղեցու ուղղափառության, կամ քաղկեդոնյան ժողովի չուղղափառության մասին։ Առհասարակ, անանուն Մխիթարյանը թե՛ հառաջաբանի և թե՛ ծանոթությանց մեջ յուր բոլոր ուժը և զորությունը կեդրոնացնում է քաղկեդոնյան ժողովի վրա[1]. վազուց արդեն մոռացված աբեղյական խոսքեր վերստին նորոգելով փորձ է փորձում այդ ժողովը մեզ քարոզելու։

Թե՛ հառաջաբանի և թե՛ ծանոթությանց մանրամասն պատասխանը մենք թողում ենք վոր տա մեր արգո հայրենակից Բոռնակ Կրկռիկյանը, վորովհետև նա լա՛վ գիտե, թե ինչ արժեք ունին այդ բանները և թե ի՛նչպես պետք եր պատասխան տալ, յերբ Մխիթարյանը չե ամաչում ասել թե մեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը ևս քաղկեդոնական եր։ Ո՛վ վոր «Ընծայի ընդունելությունը»[2] կարդաց և, մի քանի ժամանակ զվարճանալով նորա սրամիտ և ծիծաղաշարժ տողերից, կարծեց, թե այդ եր լոկ այդ փոքրիկ գրքի նորհուրդը, ապա ուրեմն այնպիսին շատ սխալվեցավ։ Այդ փոքրիկ, բայց աջողակ աշխատությունը խթեց մի վոքր անզգաստ մարդերի կողքը և ստիպեց լռել։ Յեվ արդարև այն որից սկսած մինչև շատ մոտ ժամանակներս այդ տեսակ մարդիկը փակել եյին չուրյանց բերանը. բայց յերևի թե «անցյուկը մոռցուկ» և յեղել, ըստ վորում վերստին բացում են Մխիթարյանք յուրյանց յերախը։ Արդարև, գիտե աստված վոր առ ի սրտե ասում ենք այս խոսքը, շատ պիտի ցավինք, յեթե իմանալու լինենք, թե մի նոր խարազան շրխկացել է Վատիկանից[3] խեղճերի մեջքին, ստիպելով արբանեկել հոգևարք նեղարտությանը Վատիկանի, վոր, ինչպես ամենին հայտնի յե, հազիվ հաղ պահպանվում է ֆրանսիական սվիններով։

1 Դժբա՛խտ հայոց ազգ, վորի վորդիքը ամեն ուրիշ հզոր բռնակալներից չարչարվելով, չարչարվում են նաև որհասական Պապի ձեռքում։ Յե՛րբ արդյոք պիտի չքանա Վենետիկից Ալմատրիալի անարգ դրոշը, յերբ արդյոք վե-

րակենցաղյալ Իտալիայի յեռադունյան պրոշակը պիտի անկվի Ս. Գազարու վանքին դեմ հանդիման[4], վոր ատրկուբյան վերա հիմնած, վոր ատրկուբյան ձեռքով և ատրկուբյան մեջ հարատևող հավիտենական քաղաքը, Ս. Հրեշտակի բերդից հրատարակեն խղճի ազատուբյունը, և մեր խեղճ յեղբայրակիցքը ազատվին վերջապես նոր Հափկերտյան կապարանից[5]:

Թո՛ղ Մխիթարյանք չհավատան, բայց մեր պիշեր ցերեկ աղոթքը այս է:

Բայց մինչև այդ բաների լինելը, մինչև ատում ենք Վենետկի սահմաններում իտալական ընդանոթի վորոտալը, մինչև տրգո Վրկոխկյանի պատասխան դրելը, մենք մի քանի խոսք ասենք:

Նախ, քաղկենդոնյան ժողովի բարեխոսուբյունը մայթում ենք ամեն նորան ընդունողների հոգու վերա և այդ ընդունողներին տալիս ենք այդ ժողովը, վոտքով պխով. Հավիտյան. Հայոց ազգի կողմից պահանջողուբյուն չհայտնելու պայմանով: Սորա հետ միասին հայտնելով քրիստոնեության և կրոնի իսկուբյան անտեղյակ ֆանատիկոսներին թե հայոց ազգը բնա՛վ վորևիցե ժողովի անունով մկրտված չե. իսկ Հիսուսի Քրիստոսի անունով մկըրտվածներին յերբեք փրկուբյան թեուբյուն չե վորևիցե ժողով, (վոչ միայն վոր ընդունելու արժանի չեր, այլ և գոբանից առավել լավերը). ուստի բարով վայելեն քաղկենդոնականք յուրյանց փրկուբյան միակ միջնորդը— քաղկեդոնյան ժողովը: Յերկրորդ, հայոց յեկեղեցին պահել և մինչև այսոր յուր ինքնուրույնուբյունը և անկախուբյունը անհրաժեշտ համարվոր և վոր մանավանդ այսուհետև ևս պահե, հետի մնալով հունական, հռոմեական և բողոքական յեկեղեցիներից: Մենք տակավին աբեղաների որը չենք ընկած, վոր այս ասելով արքայուբյան դռները փակենք ընդդեմ այդ յեկեղեցիների զավակներին, հետի՝ մեզանից այդպիսի ծաղրելի և պատուավական գաղափարք, մենք ո՛վ ենք վոր ուրիշի ծառան դատինք, թող դատողը դատի, այլ այս ենք ասում թե թող այդ յեկեղեցիքը կենան յուրյանց համար, իսկ հայոց ազգի յեկեղեցին մեր համար[6]:

Խորտակված ազգուբյան տեղը բռնում է կրոնը. ատո՛ւդ է լեզուն ևս կա, բայց շատ տեղ մոռացված. մինչդեռ կրոնը ամեն տեղ անմոռաց: Յեվ վորովհետև ազգուբյան հայատարրը դարձել է յեկեղեցին, ապա ուրեմն նորա վերա ձեռք բարձրացնողը ձեռք է բարձրացնում ազգի վերա: Այս վոչ մի դիպվածում ներելի չլինելով, ամեն կողմից ևս դատապարտելի չե և մանավանդ յերբ յուրյանց անձը լուսավորյալ մարդերի շարքում կարծող Մխիթարյանք մի հովվածաղիկ ժողովի պատճառով դանակ են սրում, վոր ազգի վերջին շնչի պահապան անոթը ևս փուղոտեն: Այս ասելով վոչ թե յերկյուղ ունենք, թե նոքա պիտի կարողանային պլոխ բերել այդ բանը, այլ վորպեսզի հանցանքի ծանրուբյունը հասկացնենք: Յեվ ծա՛նր թող չլինի Մխիթարյանց լսել, յերե ասենք աշխարհի առաջև, թե այդ ատրկուբյան վորդեգիրների սիրտը նաև մի կոբեկի չափով չե ցավում ազգի վերա. և ինչ վոր դրսևանց ցույց են տալիս, այդ բոլորը Վենետիկյան կարնավալից և սուրբ Մարկոսյան դիմակախաղից սովորած դիմայլակուբյունք են: Յերե այսպես

չե, ուրեմն Մխիթարյանք առիթ ունին տակավին ուսանելու յեվրոպական տարրական դպրոցներում, թե ինչ ասել է ազգ, կամ ազգություն և թե ինչպես կամ ինչ պայմաններով մեռանում է ազգը, կամ ինչպես դարձյալ կանգնում է մեռածը։ Կրոնական ուսումը թողնում ենք, վորովհետև ուր աղատ չե փիլիսոփայությունը այնտեղ վոչ միայն կրոնական ուսում չկա այլ և բուն ուղղահավատ քարոզված կրոնը ևս լոկ սովեր է և վնասակար սովեր, ըստ վորում կապում և կաշկանդում է մարդկային բանականությունը։ Աղատ և վերահամբարձ ըմբռնողությունը կրոնի խակության, կրոնի փիլիսոփայության, անհնար է, առանց տիեզերական ճշդիւ կրթության և դաստիարակության։ Իսկ այն մարդը վոր կարող և տակավին տարրական դպրոցների նստարանին հայտնի չե թե նորա համար չե համալսարանի ամբիոնը։

Այս յերկու տարբերություններից վորը կամին թող առնուն Մխիթարյանք, բայց սոցանից մինը (յերեք վոչ յերկուքը ևս, վոր շատ վնղբալի մի բան եր) հարկավորապես պիտի ընդունին, քանի վոր 19 դարում քարոզում են այնպիսի ծղրած դաղափարք։

Աշխարհի լուսավորությունը, ճշդիւ պիտությունը ամեն որ աշխատում և ապիտության և խաւարի ձեռքով ինչնամաշած մարդիկը միմյանց հետ հաշտեցնելու. խելացի և շրջանակատ մարդիկ առանց յեկեղեցու խորության վերջին ճիգն են թափում սե՛ր, միաբանությո՛ւն, ներքին և ընտանեկան վերքերի բժշկություն և փրկարար և կենարար հնարների գործադրություն քարոզել, վորով և արդեն հատաջացած պատառվածքների դայրույթը դո՛նե ամոքել, յերեք անհնար եր իսպառ ապաքինել. իսկ անխորհուրդ մարդիկ, միջնադարյան դատապարտյալ ուղղությանց ձեռքում խաղալիկ դարձած, դեռ ևս կացին և ուրագ են սրում վոր վո՛չ միայն յեղած ճեղքերը պահպանեն այլ և սատակացնեն այդ պատառվածքների մարմաջը։ Մենք դատապարտում ենք այդպիսիներին։

Յեվ դատապարտում ենք այն պատճառով, վոր ամեն վողջամիտ հայ կը համաձայնի մեզ հետ, թե այդ ուղղությունը չե կարող արդարանալ վո՛չ կրոնաբար, վո՛չ քարոյապես և վո՛չ լուսավորության կամ քաղաքակրթության անունով։ Թողում ենք հայոց յեկեղեցու արդարացի փաստերը և պատճառները մերժելու այդ... Ժողովը վոր, այո՛, մեծ վնասներ տվել է հայոց ազգին առիթ և դործիք լինելով խաւար հույների ձեռքում։

Կրոնաբար չե արդարանում, վորովհետև Քրիստոս աղաղակում է. «որ հաւատայն յիս՝ կեցցէ. սիրեցէ՛ք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ. յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ դուք իմ աշակերտ էք։ Տո՛ւք հաց քաղցելոց, արբուցէք զծարաւիս, զգեցուցէք զմերկս, ժողովեցէք զօտարս, տեսէ՛ք զհիւանդս, այց արարէք բանտարկելոց. և զոր ինչ կամիք թէ արասցէն ձեզ մարդիկ՝ ապարէք դուք նոցա»։ Ահա այն եսկան առանցքը, վորի վերա շրջան է կատարում քրիստոսյան յեկեղեցին։ Ահա այս սատվածային պատվիրանքների մեջ դրած է փրկության թեությունը։ Դու, յերե, սոցա ընդդեմ, խռովություններ հանելով անսիրության և բացարձակ թշնամության պատճառ

ես լինում, այնուհետև կամենաս քառասուն ժողով ընդունել, քո քրիստոնեությունը լոկ խոսք է և գործով ըշնամի ես Քրիստոսի աստվածային վարդապետության։ Քրիստոնեությունը, եական ուղղափառությունը, խոսք չե, այլ գործ. և յերանի՛ այն մարդուն, որի խղճմտանքը մաքուր է և հանդիման, Քրիստոսի վարդապետության մեջ կռիվ չկա, հայհոյություն չկա և Քրիստոսի վարդապետության աշակերտների մեջ խտիր չկա. «ի Քրիստոս Յիսուս ո՛չ թլպատութիւն ինչ կարող է՝ և ո՛չ անթլպատութիւն»[9]։ Յերուսաղեմի յեկեղեցին թլպատյալ եր, հեթանոսաց յեկեղեցին անթլպատ։ Յերուսաղեմի յեկեղեցին հրեական որենքի գործերն եր պահում, մինչև անգամ Պավղոսը յուր քարոզություններից վերադառնալով ստիպվեցավ հրեական որենքով տաճարում սրբվիլ, իսկ հեթանոսաց յեկեղեցին չեր պահում այդ գործերը և վոչ իսկ մովսիսական որենքը. բայց ամենները ևս քրիստոնյա եյին, վորովհետև չեյին մկրտված ավետարանիչ առաքյալների անունով, այլ Հիսուսի Քրիստոսի։ Արդարև, այն տարբերությունը հասկացողության, կամ ծեսերի, ինչ վոր կային առաջին դարու քրիստոնյաների մեջ, յեթե այսոր լինեյին, տարակույս չկա վոր մինը մյուսին դարձյալ ջիւթ հերետիկոս և հերձվածող կանչեր ինչպես այսոր. բայց առաջին դարում չկար այդ բանը։ Հայտնի է թե քրիստոնեական վարդապետությունը չփոխվեցավ, ինչից և ուրեմն, վոր հասկացողությունքն են փոխվել։ Վորովհետև եական ուսումը մի կողմ դրած, և յուրյանց ախտերին ծառայելով, Քրիստոսի սիրու ուխտը շինում են ատելության կապակ։ «Վայ, որ գայթակղեցուցանէ զմի ոք ի փոքրկանցս յայսցանէ»[9]։ Բարոյապես չե արդարանում, վորովհետև հայոց յեկեղեցու քաղկեդոնական ժողովը մերժելը չե շինել հայերին անբարոյական. վորովհետև անհնար է ապացուցանել թե ոտար յեկեղեցիների զավակները ավելի բարոյական են և հայերը յուրյանց յեկեղեցու պատճառով անբարոյական։ Դորա փոխանակ հարյուրավոր ապացույցք կան, վոր հայոց ազգի մեջ հանցանքների և յեղեռնագործության թիվը համեմատելով ուրիշ ազգերի այդ տեսակ գործողության հետ այնքան չնչին են և աննշան, վոր քաց ճակատով և ամեն իրավունքով կարո՛ղ ենք պարծենալ բովանդակ մարդկության առաջև, և այս այն ժամանակ, խնդրում եմ չմոռանալ, յերբ ազգը, անպոչ և անգլուխ, բացարձակ սորկության մեջ եր ապրում, վոր, ինչպես ամեն իրավաբան և մորալիստ կարող է վկայել, միշտ մայր է յեղել և լինում է ամեն հանցանքների և վոճրագործության։ Մեզ սիրելի չե հիշել, վոր դրեթե կես դար սորանից հառաջ հոյակապ լորդ Բայրընի բերանով խոստովանվել է հայոց ազգի բարոյականության բարձրությունը։ Հարկ է, վոր Մխիթարյանք իմացած լինեյին այս բանը, վորովհետև Բայրընը թողնելով յուր հայրենիքը, մինչև հունական փառավոր ապստամբությունը, ապրեցավ Վենետկի մեջ։ Հավանական է յենթադրել թե մինչև այսոր պահվում են Մխիթարյանց գրատան մեջ Բայրընի նաև «The Liberal» որագրի անմոռանալի թերթերը[10]։

Բայց սակայն մեր այս խոսքերից չե պիտո հետևեցնել, թե ուրիշ ազ-

գերի վոճրագործությանց պատճառը և նոցա յեկեղեցին. քա՛վ լիցի. վորովհետև կրոնը անմահան և այդ բաներից և բարոյականության վերա նորա կարծված ազդեցությունը լոկ յերազ և և վո՛չ ավելի։

Վո՛չ կրոնը և վո՛չ նաև որենսդրությունը կարող են փրկել մի ազգի բարոյականություն. սորա աղբյուրը և շարժարանը դրած է մի այլ բանի մեջ։ Հավիտյան պիտի անմերժելի մնան այն հաստարմատ վկայությունը և ապացուցությունքը, վոր անմահ Բոքլը հանդես և հանել յուր մինչև այժմ անորինակ մեծ գործի մեջ, այս բաների վերաբերությամբ։ Յեթե այդ գիրքը— Քաղաքակրթության պատմությունը Անգլիայում— արգելված չե Ավստրիայի մեջ, մեծապես ընծայեցնում ենք Մխիթարյանց վոր կարդան և ուսանեն։ Լուսավորության և քաղաքակրթության անունով չե արդարանում դարձյալ, վորովհետև այդ բաները վոչ միայն կախում չունեն յեկեղեցիների տարբերությունից այլ և բուն կրոնի խակութենից, վոր անհամեմատ դերապանց է քան թե կրոնականների քաշկռտուք վայրախոսությունը։ Թողնելով ուրիշ ամեն վկայությունք, հերիք համարում ենք ասել, վոր կռապաշտ Աթենքը ավելի լուսավոր եր, ավելի առաքինի և ավելի բաղաքակրթված այն ժամանակ, յերբ Աթենասի արձանը զրկված չեր յուր նիզակից, քան թե այժմ, մինչ նիզակի տեղ Սիքստոս հինգերորդի տված խաչն է բռնում յուր ձեռքում իմաստության աստվածուհին։ Անտարակույս հին հասարակապետական Հռոմը, վորովհետև հասարակապետության վերջերում ընկավ Հրոռվմը։ Կայսերական Հռոմի խոսքը բնավ չկա. վորովհետև տարբերություն չուներ պապական Հռոմից։ Յեթե թողունք դեռ Յուվենալը և Սավանարոլլան, Տակիտոսի և Ռանքեյի պատմածների մեջ կան շատ նմանորինակ բաներ։ Յեթե Մխիթարյանք հասկանային ռուսերեն և ձեռք ձգեյին Վեգենբաուկի պրոֆեսորի «Հռովմէական պապերը ԺԴ և ԺԵ դարերում»[11] և այս բոլորը մասնավորապես ուսումնասիրեյին, այն ժամանակ, թողած ուրիշ վկայությունքը, պիտի համաձայնեյին վոր կաթոլիկ Հռոմը վո՛չ ավելի յեր և վո՛չ պակաս կայսերական կռապաշտ Հռոմից, թե՛ լուսավորության, թե՛ քաղաքակրթության և թե՛ բարոյականության կողմից։

Տեսանում ենք ահա, վոր կրոնը չեր հին Հռոմի լուսավորության և քաղաքակրթության շարժարանը, վորպես նաև նոր Հռոմի խավարի և տգիտության պատճառը։ Յեթե կռապաշտությունը և քրիստոնեությունը այսպես, ո՞ր կը մնա Քաղկեդոնի ժողովի ազդեցությունը։

Այս բոլոր պատճառներով, վորպես առհասարակ կրոնական վեճերը և խռովությունքը նույն և մասնավորապես քաղկեդոնյան ժողովի անագանյալ բարոզությունը, մեր այս պողպատյա դարում, մենք հրատարակում ենք այլանդակապուչն, խավար դարերի, բոլոր այլանդակ դաղափարներից։

Տակավին յերկու տող։

Մխիթարյանց պապական նախանձաՀուզությունը և անդադաստան յեռանդը մինչև այն աստիճան պղտորել է նոցա տեսությունը և պաշարել

մտքերը, որ հիշված ժամանակագրության ձեռագիր որինակների մեջ չեն կարողացել, կամ թե չեն կամեցել ընդունություն առնել։ Բացի սորանից անանուն Մխիթարյանը[12] (թեպետ և դիտենք մենք այդ Մխիթարյանի անունը, բայց վորովհետև ստորագրություն չկա, ուստի և իրավացի չենք համարում անունը հրատարակել. մենք Մեղուն չենք, վոր ուրիշի գոյածը բանանք) մինչև այն աստիճան տաքացել և, վոր քաղկեդոնյան ժողովի պլուխը լաց լինելով միևնույն ժամանակ դարձել և հույների փառաբանը։ Չենք նախանձում հույներին— պատճառ, այդ փառաբանը արժեք չունի մեր աչքում, վորովհետև նորա փաստաբանությունը չի հիմնվում ճշմարտության վերա, այլ, կոմնակի, աղբերանում և դարձյալ բյուզանդական ճախինից, քաղկեդոնյան ժողովից։

Ձեռագրների տպագրությունը պետք է վոր լինի, քանի մի որինակների համեմատությամբ. և բնավ նեղելի չէ ընտրել կամ ուղիղ կարծել այն որինակը, վոր մանավանդ ձեռնատու չեր տպողի բանին։ Յեվ նույն գործի դանազան որինակների ճշմարտությունը պետք է ստուգել համեմատելով ուրիշ գրքերի հետ և մանավանդ այնպիսիների, վոր կարող եյին աղբյուր յեղած լինել տպվելու գործի հեղինակին։

Վենետիկ տպված և վերը հիշված Վարդանի ժամանակագրության 86 երրորդ յերեսում կարդում ենք հետևյալը. «կամակցութեամբ Լևոնի որդւոյ Վասլի, որ թագավորեաց յետ հօր իւրոյ ամս քսան և վեց, այր առատ ի տուրս և ոչ նման Հոռոմի, զի նա որդի Հայի էր և յոյժ սիրէր զՀայս»։

Հոռոմ բառի տակ վերապատվելին ծանոթաբանում է։ «Հինն և նորը (այսինքն հին և նոր որինակները այդ գրքի) յաւելումն, յայտ է որո՛վ ոգւով, որ ոչ կա ի լեզու նոցա առատ, և չիմին ինքեանք որպէս ասենն»։

Սորանից պարզ յերևում է, թե Մխիթարյանը, հին և նոր որինակների տասը, ընդունում է վորպես Վարդանից հետո մի փոփոխության վրդվով վարակված մարդու խարդավանություն։ Բայց ի՛նչ կը պատասխանե արդյոք Մխիթարյանը յեթե ասենք, վոր տակավին 250 տարի Վարդանից հառաջ, յերբ այդ Լևոնի խոսքն է լինում, պատմությունը ասում է մեզ նույն այդ խոսքերը, վոր սրատես Մխիթարյանը թշնամական համվելված է քարոզում։

Ամեն մարդ գիտե վոր Վարդան վարդապետը ապրեցավ 13 երորդ դարու կեսում. իսկ Ստեփաննոս Ասողիկը 11երորդ դարու սկզբում։ Աղաչում ենք, վոր ընթերցողը աշխատություն հանձն առնու և բանալով Փարիզ տպած Ստեփաննոս Ասողիկի 146 երորդ յերեսը, կարդա հետևյալը. «Վասիլ թագաւորեալ ամս 19՝ վախճանեցաւ. և թողու փոխանակ զորդի իւր զԼևոն որ թագաւորեաց ամս 26. այր խաղաղարար և բարեխորհ ամենայն հրկրի, առատաձեռն ի տուրս և ի բաշխելն ոչ որպէս զՀոռոմ ռիշտ զի չէ սովորութիւն Հոռոմոց առատ լինիլ. և ոչ յիւրեանց լեզուն ասի առատ. այլ նա որդի Հայու էր, և աւելի քան զՀայ առատաձեռն»[23]։

Մխիթարյանք վոչ միայն Փարիզ տպած այլ ձեռագիր որինակներ ևս ունին Ասողիկի գրքից. և վոչ միայն այսչափ այլ և նո՛ւյն իսկ Վարդանի

դրվածքի հին և նոր որինակները պահում են, վերը չակերտներով մեջ բերված խոսքերը. բայց այս բոլոր սկզբյունքնց հակառակ Մխիթարյանք ընտրում են և տպում են այն որինակը, որ չուներ այդ բանը։ Ցնծ. որպես թե հերիք չեր այս, թերևս հայտնի վոգվով հավելված քարոզելով։ Մեր ընթերցողը տեսանելով որ Վարդանից 250 տարի հետաջ Ասողիկն և ասել այդ բանը, և Վարդանի պատմությունը այդ ժամանակների վերաբերությամբ, գրեթե արտագրություն և Ասողիկից, արդյոք ի՛նչ կարծիք պիտի ունենա բո՛ւն այդ ծանոթությունը գրող Մխիթարյանի վոգու մասին, արդարև շատ զվարճալի խնդիր է այս։ Ճշմարիտ ասելով, յերթ մենք լինեյինք ընթերցողի տեղը, ապա իսկույն կասեյինք «Մխիթարեանն յապաւէ, քաջայայտ իսկ է թէ որով ոգւով, որ ոչ կայ ի լեզու նոցա առաւտ, և չլինեն ինքեանք որպէս ասեն»։

Ահա թե պատմության վորքան վնասակար և պղտոր նախապաշարմունքը և կուսակցական նախանձահոգությունը։ Յերթե փոքր և գրեթե չնչին բաների մեջ այսպե՞ս, վոր բնավ Մխիթարյանց դավանության չե դիպչում, վո՞րչափ ևս առավել այն բաներում, վոր հակառակ և պապականության «Որ ի փոքուն անիրաւ է՝ ի բազմին հաւատարի՞մ լինի»[14]։ Միթե փոխո՞ւմ և ինձը յուր խայտուցները։ Իրավ վոր, «որդի մարդոյ եկեալ զտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի»[15]։

Ինչ վոր Մխիթարյանք մինչև այս որս տարել են, ամեն տեղ այս խարդավանակ հոգին և յեղել նոցա առաջնորդը. մինչև անգամ բառարանին մեջ[16]։ Անցյալները մի բարեկամի մոտ տեսա Ջամչյան յերեք հատոր պատմությունը, վորի առաջին հատորի առաջին յերեսում մեր լուսահոգի Յեփրեմ կաթողիկոսը յուր ձեռքով (ըստ վորում ստորագրությունը և կնիքը կա) գրել և, Սաղմոսի հետևյալ խոսքերը. «Պատմեցին ինձ անօրէն զխորհուրդս, այլ ո՛չ որպէս զօրէնս քո»[17]։ Կատարյալ իրավունք է ունեցել Սրբազնագույն Հայրապետը։

Յեթե անհրաժեշտ չե Մխիթարյանց այսպիսի բաներ լսել, թող խարդախությունը յուրյանց բան ու գործ չշինեյին և թող ուսանին պատկառել ճշմարտության յերեսից։

Մխիթարյանք, վորոշյալ դիտավորությամբ ընտրելով տպել այն որինակը, թերի յեն գտանվել այդ պատմության նաև այլ տեղերում, վոր թեև մեր համառոտության սահմանը բնավ չե ներում մեզ, բայց մի որինակ ևս ցույց տանք այն բանին, վոր Մխիթարյանց տպագրությունը և լուսաբանությունը անշրջանկատ է։

Վարդանի պատմության յեր. 72 կարդում ենք. «Եւ լուեալ զայս Աբդլմէլիք, հրամայէ Մահմէտի ելանել ի Հայս, որ էր զօրավար նորա. զոր լուեալ «Սահակայ ի կապանսն՝ գրէ աղաչանս, զի հրամայեսցէ նմա Մահմէտ առ «ինքն գնալ. որ և հասեալ ի Խառան և հիւանդացեալ, գրէ առ նա աղաչա«նօք թողուլ զոր արարեն ընդ նոսա Հայք. զոր ընթերցեալ Մահմէտ «զգիրն Սահակայ, շիջոյց զբարկութիւնն իւր, և ոչ եկն չարութեամբ յաշխարհս»։

Վերապատվելի կրոնավորը ծանոթաբանում է. «Հին օրինակն յաւելու. Ո մանք զՈկբայոմն ամիրապետ ասեն, որ չոգաւ առաքեաց Սահակա և գրեաց նմա կաշտ հաշտութեան և հանդերձ սուրբ մարմնով Նորա առաքեցյերմիւս»:

Մխիթարյանը, վոր բոլորովին տարաձեպ խնդիր է հանում հայոց տված հարկի մասին, միմիայն այն պատճառով, վոր հատկացնում հայերին, թե ինքը տեղեկություն ունի արաբական վոսկիների մասին*, մեզ թվում է թե առավել խելացի կլեներ, յեթե փոխանակ դրա յուր տպագրած ձեռագիրը ընտրեր և այդ կերպով, ամեն ժամանակ, ուղիղը վերպես ծանոթություն ուրիշ որինակներից բերել չստիպվեր:

Ամենին հայտնի յե թե վերը հիշված անցքը անցել է Սահակ յերրորդ կաթողիկոսի և Մոհամմեդ Ողբայի մեջ: Մոհամմեդը և Ողբան չե պիտո

---

* Վորչափ ցավում ենք, վոր այս ծանոթությունը գրելու ժամանակ Վարդանի գիրքը չկար այլ ևս մեզ ձեռքում: Ցերկու որ սորանից հատաջ, բաշխաթիվ բարեկամք, խառնագուշյուն աղաղակներով իմ վերա գալով, բանի հասկացնին այդ գիրքը վոր տանին կարդան: Արդյոք գրքի բրդդված կտորները պիտի հետ տանա՞մ, այդ մասին ևս տատակույս ունեմ. վորովհետև նոցա տանելը սովորական տանելու նման չեր և մինչև սենյակիցս դուրս դնալը արդեն քանի մի անդամ խլեցին լրարու ձեռքից: Բայց ծանոթության խորհուրդը կարող ենք լցնել: Վարդանը մի տեղ խոսում է հայոց վճարած հարկի մասին, Մխիթարյանը յուր դրամագլխական ծանոթությունը դնելով և հազար տարի հատաջ վճարված դահեկանը այսորվա ֆրանկի հաշվով դնահատելով ասում է, թե մի մեծ բան չե յեղել հայոց տված հարկը:

Ապրի՛ իմ ֆինանսիստ: Արդարև, եկնոմիստները շատ կուրախանան յեթե տեսնեն և հասկանան այս հաշվարարությունը: Ինչ հարկավոր է մտածել այն պայմանների վերա, յերբ վճարվում եր այդ հարկը, յերբ ավելի ծանր եր վճատակել մի վոսկի քան թե այսոր հարյուր վոսկի, յերբ այդպիսի հարկը վճարելու համար ստիպվում էին գրնդ բոլոր աշխարհս (Հայոց) հինգերորդել հրամայել զամենայն երամախս ձիոց և զանդեսս արջառոց և գՀօտս ոչխարաց» (Հովհ. կաթ. յերես 112—13)[18]: Ե՛հ. Ինչ խոսես այդպիսիների հետ: Մենք յեթե կանոնավոր կերպով և համակարգարար քննելու լինենք Մխիթարյանի դրածները պիտի ստիպվենք յերկու յեռնք անգամ ավելի շատ դրել քան թե նորա դրածը. կարծեր այդպիսի աշխատություն, մի միայն պիտության արտաքին հճեղին քսված մարդերին պատասխան տալը:

Մենք վոտքով դլխով կրկրեիկյանին հանձնեցնենք Մխիթարյանին դրածները: Ե ր ը տ ե ս ն ե:

Բայց վորպես շատ զվարճալի նորություն հայտնում ենք մեր ընթերցողին, թե վերատատվելի ֆինանսիստը քաջ ատեղարաչխ և սքանչելի յերկրաչափ է նույնպես: Աֆրիկեի մեջ կղզի յե գտել, ուր տարին ցամաք յերկու ամիս ար ու գիշեր միշտ հավասար են: Վարդանը մի տեղ ասում է, թե Հնդկաստանում յերկիրը կա ուր տիվ և գիշեր հավասար են. քաջագործ Մխիթարյանը սրբագրում է յուր ծանոթությամբ Վարդանի սխալը թե ասիական Հնդկաստանում այդպիսի տեղ չկա, այլ պիտք է իմանալ ամերիկյան կղզիները: Կեցցե՛ իմ յերկրաչափը, տպրի՛ ատղարաչխը: Բայց չե՞ կարելի արդյոք խնդրել, թե վո՞ր կղզին է այդ: Ընծայում ենք Նորան և Բոռնհոն, յեթե մեկայն այդ տեղում դեթ մի շատ այդպես է: Ինչ հարկավոր է հաշվել Աթենքյուրի և Նեգրեանի արևադարձը: Արևը այդ կետերում յեղած ժամանակ ևս գարձյալ Բոռնհոի վերա ար ու գիշեր հավասար են. վատավորվի՛ վերապատվելին:

ըստ Յեվտիքեսի չփոթել և վոչ ըստ Նեստորի բաժանել. այդ յերկու անունը ևս անշփոթ և անբաժանելի միավորված են մի անձի մեջ։

«Այս է դիր ձեռին իմոյ Սահակայ հայրապետիս Հայոց առ զօրավարդ Մոհմատ», այսպես սկսելով հառաջ է տանում Սահակ կաթողիկոսը յուր նամակը. նշանակում է թե այդ մարդու թլփատության անունը Մոհմետ է, և այս մասին տարակույս չկա[19]։

Բա՛ց և Մոսկվա տպած Հովհաննես կաթողիկոսի Պատմության 54—55 յերեսները և կարդա՛. «Իսկ սուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ դեռ ևս կայր «կենդանի ի Դամասկոս իբրև լուաւ զանհնարին սպառնալիսն Ոգբայի՝ իշնա«դրեր հրաժեշտ ի նմանէ երթալ առ նա.... իբրև չոգաւ ի Խառան, իսկ և «իսկ հիւանդացաւ սուրբ կաթողիկոսն հիւանդութեան մեծ։ Եւ ապա գրէ «նամակ աղաչանաց առ Ոգբայ իւրով իսկ ձեռամբ... Եւ ապա զայն հրովար«տակն հրամայէ յետ վախճանի իւրոյ դնել յաջոյ ձեռին իւրում, զի ինքնին «Ոգբայ եկեալ առցէ ի ձեռաց նորա... Իսկ ոստիկանն Ոգբայ.... իբրև չո«գաւ վաղվաղակի առ դիապատիկ մարմին առնն Աստուծոյ մտեալ.. և ա«ռեալ զնամակն ի ձեռաց նորա և ընթերցեալ՝ ասէ. «Այո՛՝ խնդիր քո կա«տարեալ է՝ պատուական այրդ Աստուծոյ»։ Եւ նամակ ի նախարարս Հայոց «գրեալ և հանդերձ սուրբ մարմնով հայրապետին ի Հայս առաքեալ բազում «պատուով» և այլն։

Պարզ է սորանից, վոր Վոստիկանի մականունը Ոգբայ է, ինչ վոր Մխիթարյանը դնում է ծանոթության մեջ կարող եր բուն Վարդանի գրածը լինել և վոչ անվավեր հավելված. վորովհետև Հովհաննես կաթողիկոսը, վոր գրեթե դար ու կես հետո ապրեցավ, այդ անցքից պարզապես Ոգբա չէ կոչում վոստիկանին։ Հայտնի չե թե Վարդանը ոգուստ քաղած կը լիներ Հովհաննես կաթողիկոսի Պատմութիւնից։

Մեր փոքրիկ հատվածը վերջացնելու գալով չենք կարող առանց ուշադրության թողուլ— ի մեծ գայթակղություն պ. Զամուռճյանին և Ընկ.— վոր Մխիթարյանք մերժում են այժմ յուրյանց Միաբարների (unitor) ձեռքով արվեստական Դաշաձց թուղթը[20], այն վոր հիններորդ թվականներում Արժ. Կարապետ Շահնազարյանց վարդապետի մերժելուն համար քիչ եր մնացել վոր Միջնադարյանք Վոսփորոնում խեղդեյին խեղճ վարդապետին։

Մխիթարյանը յուր ծանոթության մեջ պարզապես մերժում է այդ Թղթի ցնդաբանություններ. բայց արժա՛ն եր հարցանել, ո՛վ եր այդ Թղթի վավերականությունը պնդողը յերթե վոչ Մխիթարյանք, յերթե վոչ պապականք, յերթե վոչ նոցանից թունավորված մի քանի միջնադարյան լուսավորչականք, վորոնց թագը և պսակը է պ. Զամուռճյան միջնադարյան փիլիսոփան։ Ո՛վ եր մինչև այն ատենն կուրացողը, վոր Հայկազյան բառարանի մեջ անցուցաններ վորպես կլասիկական բառեր ֆրանսիական խոսքերը, յերթե վոչ փիլիսոփա Մխիթարյանք։ Զարմանալի չե վոր այժմ չեն ընդունում և հույս կա, թե նոցա արբանյակ Միջնադարյանք ևս հրաժարվին այժմ այդ Թղթի մասին ճամարտակելուց։

Հույս կա, թե մի որ բառարանի միջից ևս դուրս հանեն այն ֆրանսիական բառերը։

Թո՛ղ այս խրատ լինի Միջնադարյանց, վոր կուրորեն չհետևին պապական ընդօծիններին, ապա թե վոչ շատ անդամ պիտի ստիպվեն յուրյանց քրածը լիզել ինչպես այժմ Դաշանց թղրի պատճառով, վորի ստութիյունը արևի պես հայտնի յե ամեն բանասերի։

Հիշո՞ւմ ե արդյոք պ. Զամուռճյանը, յերբ յուր աղաները և ամիրաները Պատրիարքարան հավաքված վիճաբանում եյին Արժ. Կ. Վարդապետի հետ և պատվելին ևս վորպես վերջապահակ հրավիրված եր ոգնել յուր ամիրաներին, յերբ ասում ենք Պատրիարքարանի սանդուխներից վեր չկանելով լսեց սենյակից ներսի խոսակցութիյունը, վատ զինվորի պես թողնց յուր դաշնակիցքը և կծիկը դրեց։ Յերե մոռացել ե, մենք հիշեցնում ենք նորան։ Յեվ ահա ա՛յն թուղթը, վոր վավերական ցույց տալու համար այնքան քրտինք եյին թափում և Շահնազարյանցի նոցա գլխին թափած լափը վառավորապես մարսում, ա՛յդ թուղթն, ասում ենք, մերժվում և ամսոր բուն պապականների ձեռքով։ Հացկատակութիյունը ըստ ինքյան անարդ բան ե, բայց հացկատակը լինել յերկդիմի մարդերի անարգագույն։ Ով ականջ ունի թո՛ղ լսե։

Մեր բարեկամներից մինը ասում եր, թե մեզ հարկավո՛ր ե շնորհակալ լինել այն մարդերից, վոր պարզապես հայտնում եյին յուրյանց միտքը։ Մեր բարեկամը հիշեցնում եր մեզ ֆերնեյյան իմաստուն ծերունու խոսքերը.

«Que j'aime les gens qui disent ce qu'ils pensent»[21].

Այո՛, շնորհակալ կը լինեյինք, յեթե այդպես լիներ։ Բայց դոքա յերեկը ազգասեր քարոզելով յուրյանց, գիշերը փորում են նորա հիմքը։ Թող նոքա՛ շնորհակալ լինեն մեզանից, յեթե տակավին, քրիստոնեական ներողամտութիյամբ, անգիտութիյան ընծայելով նոցա գործը աղոթենք նոցա վերա. «Հա՛յր, թո՛ղ դոցա՝ զի ոչ գիտեն զինչ գործեն»[22]։

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԹՈՒՂԹԸ

ՀԱՑՈՑ ՍՊԱՐԱՊԵՏ ՅԵՎ. ՄԱՐԶՊԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ՏԻՐՈՋ ՊԱՀԱՆԻՆ

Ղ Ա Զ Ա Ր Փ Ա Ր Պ Ե Տ Ց Ո Ւ Ֆ Ր Ա Ն Ց

Թ Ո Ւ Ղ Թ Ը[1]

ԱՄԻՔ ՔԱՂԱՔԻՑ

ՄԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱԽՈՍ ԱԲԵՂԱՆԵՐԻՆ

ԹՂԹԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ[2]

Աստվածային շնորհը միշտ լուսավորում է արդարությունն սիրողներին և մանավանդ նորանց, վոր սորվելով Քրիստոսից, վոր ասում է «քննեցեք գրքերը»[3], աստվածային բանի քննությանը պարապեցան: Մեծ շահ համարելով իրենց անձերին յերկնավոր խոսքը, միշտ պատրաստ ունեցան, վոր թե իրենց և թե լսողների հոգիները թևավորեն այն տեսակ առաքինության մասների հասնելու համար. վորովհետև, զորության և իմաստության վորպես պատճառ ընդունեցին այդ խոսքը, սորվելով մարգարեից, վոր ասում է, թե «Ով վոր պատվականը անարգից հանե իմ բերանը կը լինի»[4]: Պատճառ, ճշմարիտ, արդար և որինավոր խոսքը, ժողովրդին խրատելու համար ասված, յերկնավոր լուսով ծաղկեցնելով, պղաբեր է անում լսողների հոգիները: Այս մարդիկը, վաճառականների նման, ծով ու ցամաք մանն են գալիս, իրենց մտքի խորհուրդը յերկնավոր և չապականվող գանձով հարըստացնելու համար, վոր իրենցից խնդրողներին տալ կարողանան աստվածային խոսքը, հոգու փրկության համար:

Այս տեսակ մարդերից մեկը, յերանելի Ղազարը, սիրող և պարապող այսպիսի յերկնավոր արվեստի, դեռ յերեխայական հասակից սկիզբն անելով բանական գիտության պարապելու, Հունաց աշխարհը գնաց, և այնտեղ լավ և առաքինի մարդերի ձեռքի տակ ուսանելով և աստվածային խոսքի մարգարիտը վատարելապես իր մեջ ընդունելով, վերադարձավ իր աշխարհը:

Յեվ վորովհետև մարդկության մեջ սովորական մի բան է, վոր իմաստունները և մեծամեծները գնում են վաճառականներից մարգարիտը և պատվական հանդերձները, վոր ամեն յերևելի մարդոց մեջ յերևելի և պայծառ յերևին, այսպես էլ իմաստուն և Աստուծու պատվերներին տեղյակ մարդիկը, Ղազարի գիտության մասին լսելով, գովեցին. յեկեղեցիները, նահատակների մատուռները և ուսումնարանները ամեն ժամանակ խնդացին և ուրախացան

նորանով. նորան լսողների հոգիները ծաղկում էին այն շնորհից, որ նորա բերնից էին դուրս գալիս[5]. և, բանական գիտությամբ, հայրապետների և եպիսկոպոսների մեջ արուսյակ աստղի պես պայծառացած եր փայլում:

Մեծիմաստ վահան մարզպանը— Հայոց զորավար և Մամիկոնեից Տեր— կամենալով նորան առավել մերձավոր և սիրելի անել իրեն, նորան հանձնեց Նոր քաղաքի յերևելի և հոյակապ տեղը, որի անունը Սուրբ Կաթուղիկե յեկեղեցի յեր, վանքովը հանդերձ[6]. Ղազարն էլ մարզպանի հրամանը ընդունելով կառավարում եր այդ վանքը:

Յեկեղեցու պայտեղեն շինվածքի կրակից վնասվելու պատճառով, շատ նեղություն քաշեց Ղազարը, չնչին և անպիտան մարդերից. ուստի մեռքը բերելով և հիշելով Պաւղոսի խոսքը, թե «Ո՛չ սատվածասերքը ամեն ժամանակ այնպես ապրին, որ նոցա խիղճը չտանջե նորանց»[7], աղոթք եր անում ասելով, թե աստուծուց խնդրում ենք, որ ձեզ մի չար բան չպատահի, և միտքը դրեց այն տեղից Հունաց կողմերը գնալ. հասավ Ամիթ քաղաքը և այնտեղ մի քանի ժամանակ մնաց: Այս տեսնելով, շար նախանձով լցված մարդիկը սուտ խոսքեր հանեցին նորա վանքի և նորա ուսումի մասին, որ նորա բարձր անունը կարողանան ցածցնել:

Լսելով այս բոլորը Ղազարը քաջ պատերազմողի պես գինեց իրեն, որ զորավոր խոսքերով իր վոգու և անվախության և կերպարանքի պատկերը այս Թղթի ձեռքով հայտնե նոցա, որով և լուսափայլե վարտակը իր քարոզության, որ առաջ արել եր նոցա մեջ, որպեսզի չարախոս մարդոց լեզուն կարճանա, որովհետև այս կերպով (ասում եր) տե՛ս և ճի՛ք մարդիկը Հայոց աշխարհից հալածեցին լավ և պիտանի մարդոցը: Յեվ մանավանդ վտա՛հ լինելով ամենիմաստ մարզպանի վրա, թե նա գիտե լսել խոսքերի և իրավունքը ճանաչել, որպեսզի նորա առջևը արդարացնե իր անձը այս Թղթի ձեռքով: Յեվ հաղթող յերևելու համար, գիտության զենքը առնելով իր ձեռքը, ուղարկեց այս Թուղթը բալեաներ, մեծ և պատվական նախարար Մամիկոնյան Համազասպի[8] ձեռքով, որ Ղազարի այս տեղից վերադառնալուն բուն պատճառը դարձավ, որ մարդիկ մյուս անգամ իմեն նորա գիտության աղբյուրից և արդարության պղտաբերեն Աստուծու:

Հայոց յերկորդ պատմությունը[9] իմ յերանելի Ղազարը գրեց. այս պատճառով, այդ գրքի մեջ մենք նորա այս Թուղթն էլ գրեցինք, որ ընթերցաւերքը Պատմությունը կարդալով այս Թուղթն էլ կարդան և նորա խոսքի արժանավորությունը փորձով հասկանան:

ԲՈՒՆ ԹՈՒՂԹԸ

Մեր Փրկիչը և Տերը Հիսուս Քրիստոսը, սաստի՛կ զգուշացնելով Առաքյալներին, պատվիրում էր, թե յերբ ամեն ինչ վոր հարկն է կատարեք, ասացե՛ք, թե անպիտան ծառաներ ենք[10]։ Բայց ինչի՞ Աստուծու հոգևոր մշակը— Սուրբ Պավղոսը— նեղանալով յերբեմն այն մարդոց վրա, վոր նախանձել էին նորանում յեղած մեծ շնորհին, այլև այդ մարդոց նոր դարձված աշակերտների հետ դայթակղեցուցիչ և անհանճար բաներ խոսելու համար, ու՛ստ մշակներ անվանեց նորանց[11], և, չկարողանալով դիմանալ յեղած դայթակղությանը, Քրիստոսի կանոնին ընդդեմ վարվեցավ, և ինքը իր լավությունքը և աշխատությունքը մեծ մեծ պարծանքով գրեց[12]. և վո՛չ քնավ վորպես մի սխալված մարդ մերժվեցավ, ա՛յլ, պայծառապես կացավ ու մնաց նո՛ւյն առաքելության մեջ։ Յեվ թե ինչի՞ այս այսպես էր լինում, թո՛ղ քննողը հասկանա, յեթե կարող է. ապա թե վո՛չ, թող լսե՛։

Արդ, դո՛ւ, Տե՛ր, քա՛ղցր, խոնարհամի՛տ, արդարասե՛ր և ճշմարտասե՛ր մի մարդ ես, և Աստուծու հավատքին առավե՛լ մոտ ծանոթ[13], ինչպես և քո ամեն նախնիքը։ Իսկ յե՛ս, անպիտա՛նս, թեպետև Տիրոջդ առջևը ամենաների կզկզա՛նք[14] յերևիմ, տղամարդի վորդի լինելով[15], իրրև մի անզգամ, ինչպես Պավղոս մեծ առաքյալը, բայց դո՛ւ, Քրիստոսին նմանելով, տանելով և ներելով իմ անզգամությանը, ընդունե՛ ինձ վորպես մի անզգամ[16]։

Տղայությանս ժամանակ իմ վարած կյանքի վորպիսությունը, դո՛ւ, Տե՛ր, ի՛նքդ լավ գիտես[17]։

Իմ ուսուցիչների[18] հրամանով գնացի Հունաստան և մի ժամանակ մնացի. այն տեղից վերադարձած կեցա Կամարականների[19] մոտ, այն բոլոր պատերազմների և խռովությանց ժամանակները մինչև ձեր հնազանդվիլը[20]։ Նորանից հետո, ձանձրացած լինելով այդ շփոթների նեղությունից, կամեցա աղոթքի պարապել և հանգստանալ։ Այս պատճառով գնացի Սյունյաց աշխարհը և յերկու տարի կեցա, ձմեռները մի քարանձավում, գավառի բոլոր բնակիչներից, բոլոր կրոնավորության մեջ հռչակված մի մարդու մոտ, վորի անունը Մովսե՛ս էր և տեղի անունը Անձուկ. իսկ ամառնե՛րը, այն տեղի շատ տաք լինելու պատճառով, Սյունյաց յեպիսկոպոսը— տեր Մուշեղն[21]— տանում էր ինձ իր մոտ, ի՛նչ տեղ վոր լիներ ինքը ապահովության դուրս յեկած։

Յեվ ա՛յսպես, իմ առաջվա վարք ու բարքս գիտեն տեր Ներսե՛հ և Հրա-

հա՛տ[22] կամաքարականները. իսկ Սյոնյաց յերկրում ունեցած կյանքիս վորպիսութիյունը գիտե վերը հիշված Սյոնյաց աշխարհի յեպիսկոպոսը: Յեվ դու ինտռելով ինձ և դռնելով Սյոնյաց աշխարհում տարիր քո տունը վո՛չ վորպես մի տան պատկանավորներից, կամ սպասավորներից մի աղքատ մարդ, և վո՛չ վորպես քեզանից ոտար, կամ մի ուրիշի ծառա[23], վորովհետև պարեգոտ հագնողները ազատված են Քրիստոսով: Իսկ ինձ աշխարհի ծառայութիյունից պարեգոտով վորոշող և ազատութիյան պատճառ յեղողը Տեր Աղաննը, Տիրոջդ մորեղբայրը[24]: Այդ պատճառով, Հայերի մեջ, քե՛զ, Տիրո՛ջդ արժանի եյի:

Բացի սորանից, քո յերանելի մայրը յերբ բղեշխի[25] մո՛տ բերեց ձեզ, վորի տանը և մե՛զ ուսում եյին տալիս, թեպետև տարիքով ավելի հասակավո՛ր եյինք ձեզանից, այլ աննզակի՛ց եյինք ձեզ և խաղակի՛ց, խաղալու ժամանակ ձեր արկանելին[26] ձեր քամակից տանելով. և ձեր որհնյալ մայրը և Անուշը— վռա՛մը, իրենց հոգեսիրութիյամբ, մե՛զ ել ձե՛զ հետ, ձե՛րպես անուցին: Այս բոլո՛ր պատճառներով քե՛զ, Տիրո՛ջդ արժանի եյի:

Իսկ, իմ ունեցած շատ շնորհին նայելով, վոր Քրիստոսը տվեց ինձ— վորպես արժանավորի, թե անարժանի, այն, տվողը լավ գիտցավ— ապա արդա՛րև քե՛զ միայն արժանի եյի:

Վորովհետև, Վերին Նախախնամութիյունը, այս դարում, քո քաջութիյունդ զորացնելով պայծառացուց ամեննների՛ց առավել, քան վոր կային և կամ վոր ա՛յժմ կան Հայերի մեջ, և իմ շնորհը առավե՛լ քան շատ պարեգոտավորների շնորհից,— ահա անզգամեցա և խոստում եմ, աղաչում եմ մի փոքր նեղե՛ իմ անզգամութիյան,— այս պատճառով ել, ճիշդ և առավե՛լ, քե՛զ միայն արժանի եյի:

Յեվ յես եմ ա՛յն Դազարը, վորին, քո և շա՛տ ուրիշների ասածին պես, փոխանակը մարդ չկա. իսկ ա՛յժմ, նախանձի չարութիյան պատճառով, շատե՛րն աշխատում եյին լինել իմ փոխանակ. բայց թե կարողանայի՛ն լինել:

Դեռ արարածների սկզբի՛ց շատ վոճիրներ գործեց նախանձը աշխարհում: Սատանա՛ն, դեռ սկզբում, նախանձելով կործանեց նախասահմանյալ հո՛ղ դարձուց նորան. Իմաստութիյան[27] մեջն ել վկայում է Աստվածաշունչը, թե «Սատանայի նախանձե՛լով մահը աշխարհ մտավ»: Դեռ յերկո՛ւ մարդ միայն ծնվել եյին Ադամից, աշխարհի յերեսին, Կայե՛ն և Աբել, նախանձ ձգող դևը տիեզերքի անչափելի տարածութիյան վրա վորպես մի փոքրիկ և նեղ բանի վրա նայել տվեց Կայենին, յեղբայրասպա՛ն անելով: Յեսա՛վը, նախանձի՛ց դրդվելով Հակոբի վրա, սորա մահն եր մտածում[28]: Նախանձի՛ ձեռքով անմեղ Հովսեփին դեպի սարկութիյուն վաճառեցին նորա խելացնոր յեղբայրքը[29]: Նախանձի՛ ձեռքով Ահարոնին և Մարիամին— այդ յերկու հոգեշնորհ անձանց— սատանան, անարժան խորհուրդ հղանալ հանդգնեցնելով, մարգարե կնոջը* բորոտեցուց[30]: Նախանձի՛ ձեռքով Սավուղը, այն թշնա-

* Ջնջված՝ բորոտութիյան... ԽՄԲ.:

մին կործանող և ժողովուրդը ապրեցնող մարդուն— Դավիթին— անդադար ականատներ եր դնում և աշխատում եր կորցնել[31]:

Բայց, ել ո՞ւր եմ խոսում արարածների միմյանց ունեցած նախանձի մասին, յերբ և ամենե՛րի արարչին և Տիրոջը Հիսուս Քրիստոսին, նախանձի պատճառով, Հրեից ժողովուրդը և քահանայապետքը առաջ ժամանակներում ծաղր անելով թշնամանում եյին, յերբեմն, կախա՛րդ կոչելով, ինչպես, «Դևերի իշխան Բեեղզեբուղի ձեռքո՛վ դևեր և հանում դա՛»[32]: Յերբեմն, գինեմո՛լ և ուտող խմող* եյին անվանում, Նորա աշակերտներին ասելով. «Ինչի՞ ձեր վարդապետը մեղավորների հետ միասին ուտում և խմում»[33]: Բայի սորա-նից «պահք չպահո՛ղ և ամեն ժամանակ կերակուր ուտող» անվանելով նա-խատո՛ւմ եյին, «ի՞նչի Հովհաննեսի աշակերտները և փարիսեցիները պահում են և քո աշակերտքը չեն պահում և խաղն ուտում են»[34] ասելով: Նորան «դիվահա՛ր» ել կոչեցին. «չի՞ վոր ճշմարիտ ենք ասում, թե Սամարացի՛ ես դու և դև կա քո մեջ»[35]: Հետո, սուտ վկանե՛ր ժողովելով, իրենց նախանձի և վրեժխնդրության պատճառով, վոչինչ բաներ եյին խոսել տալիս նո-րանց[36], և իրենք ուրախացած բացագանչում եյին դատողների առջևը, ուր, ինչպես Ավետարանիչը վկայո՛ւմ է, Պիղատոսը ճանաչելով, թե նախանձի պատճառով մատնեցին Նորան, ձեռքերը լվանալով ասաց. «Յես ան-պա՛րտ եմ այդ մարդու արյունից, վորովհետև մահի արժանի հանցանք բնա՛վ չգտա դորանում, դո՛ւք տեսք և ձեր որենքով դատեցեք»[37]: Յեվ ձգից Նորան որենքի և ժողովրդի ձեռքը, վոր յերկո՛ւքն ել մահապարտ եյին, և՛ Հրեից ժողովուրդը և՛ որենքը: Սոքա՛, չդիմանալով դիմամոլ նախանձին, մահի մատնեցին Նորան, և վո՛չ արդարների այլ անիծվա՛ծ[38] մահի, վորպես մի չարագո՛րծ և մարդասպա՛ն, այսինքն, խաչի՛. Նորա՛ն, վոր արարի՛չ եր և նորոգիչ, կյա՛նք տվող և մահ սպանող, ամենի՛ յերախտավոր, քա՛ղցր և շա՛տ վողորմած:

Յեվ այս բոլորը մեր համար իր անձով քաշելով Փրկիչը շուտ շուտ ղգուշացնում եր այս մասին և իր աշակերտներին, թե ձե՛ղ ել պիտի պա-տահի այս ամենը, և չլինի՛ թե, անպատրա՛ստ դտնվելով, ձե՛ղ հասած վըշ-տերից վախենաք: Յերթե ի՛նձ սիրեցին, ապա և ձե՛ղ կը սիրեն, յերթե ի՛նձ ընդունեցին, ապա և ձե՛ղ կընդունին. իսկ յերթե ինձ հալածեցի՛ն, ձե՛ղ ել կհալածեն, յերթե ինձ ատեցի՛ն, ձեզ ել կատեն[39]. և յերթե ի՛նձ, վոր տանը տե՛րն եյի, Բեեղզեբո՛ւղ անվանեցին, վո՞րչափ ևս առավել ձե՛ղ և իմ մոտ մարդոցը պիտի ասեն[40]:

Ա՛յսպես ել, նախանձի պատճառով, ի՛մ մասին հանել եյին շատ բամ-բասանքներ, ասելով, «թե Ղազարն ասո՛ւմ է, վոր պռոնկությունը մեղք չի՛. այս բանը մարդպանին ել դրել է նա»: Թե ճշմարի՞տ եր այդ, դո՛ւ, Տե՛ր, խիստ լավ գիտես, քան թե այն ասո՛ւտ կարծողքը: Յեվ ուտող խմող և պի՛ղծ մարդիկ քա՛ղցր ախորժանքով ընդունում եյին այդպիսի բաների լուրը, իրենց մեջ բուն դրած չար գործերին վորպես մի ոգնություն:

---

* Ջնջված՝ անվանում եյին... ԽՄԲ.:

Բայց ո՞վ արդյոք անհավատներից, չասե՛նք քրիստոնյաներից, իր մտքի մեջ կարող է այդպիսի բան խորհել, թող թե և մի ուրիշի մոտ բերնից հանել. վո՛ր անմիտը, վո՛ր տգետը, վո՛ր Հրեան, վո՛ր այլադանդը: Յեվ Ղաղա՞րն եր այդ քարոզում. ո՞ւմ, կամ ո՞ւր և կամ յե՞րբ. Ղաղա՞րը, վոր տգե՞տ և դրոց, վոր անկի՞րթ և և անուսումն, վոր Մոմխեական որենքին ոտա՞ր է և Քրիստոսի տված շնորհին անտեղյա՞կ: Արդյո՞ք, այս մեր Հայոց աբեղայքը արտասուքի, վողբալու և շատ տուքի արժանի չե՞ն, յերբ հանում են անպիտան համբավներ և նախանձի պատճառով խոսում են անարժան բաներ:

Պա՛տճառ, ո՞վ արդյոք յերկայնամիտ և բարկություն չունեցող Աստվածը դրդելով դեպի այնպիսի ահավոր բարկություն շարժեց, վոր ջրհեղեղ աներ բովանդակ յերկրի յերեսը, մինչև վոր բոլոր սարերը ծածկվեցան, չե՞ վոր նա, վոր պոռնկությամբ եր բորբոքված: «Տեսա՛ն, ասում է, Աստուծու վորդիքը մարդոց աղջկերքին և խառնակվեցան նոցա հետ»[41]:

Ի՞նչ բանի համար, վորդոց վորդի, մինչև հավիտյան այնպես մե՛ծ համարվեցավ Ահարոնյան Փենեհեսի ալրպարություն, յերեն վոչ Զամբրո՛ն, իր Մադիանացի բոզի հետ միասին, գեղարդով զարկելո՛ւ, գետնին ցցելո՛ւ և Աստուծու բարկությունը իջեցնելու համար[42]: Վո՛ր բանի պատուհասի համար, Տիրոջ ժողովրդից քսան և չորս հազար հոգի մե՛կ պատերազմում կանգ[43]: Ամոնը չե՞ր, վոր, անխե՛լք խոսքերի համար, յերկար ժամանակ ատելի դարձած լինելով իր յեղբորը, տպանվեցավ նորա ձեռքով[44]: Ուզո՞ւմ են դեռ Մովսեսի գրած պատմությունից և ուրիշ մարգարեներից լսել այդ բանների հակառակը. թող նայի՛ն և տեսնե՛ն առաջին հարց ապաշխարության ճանապարհը: Աստուծու մա՛րդը — Յենո՛վքը — վոր որինավորապես ամուսնացա՛ծ եր, հաճո՛ դտնվեցավ Աստուծու և դեպի անմահական վիճակը փոխվեցավ[45]: Նո՛յը, շատ ժամանակ, մինչև հի՛նգ հարյուր տարի կուսությունն պահելով և սորանից հետո վորդեծնության համար սրբությամբ ամուսնանալով, այս աշխարհի յերկրորդ հայրը դարձավ[46]: Ա՛յսպես և մարգարեների մեջ մեծը — Մովսե՛սը, ա՛յսպես եվ նորա պաշտոնյա և կուսությամբ պատված Հեսո՛ւն: Իսկ այն զարմանալի մարդու — Յեղիայի — փոխությունը ո՛վ արդյոք քերնով կարող և պատմել, վոր մարմնի՛ մեջ յեղած ժամանակ անմարմինների պես ապրելով, հրեղե՛ն կառքով դեպի հոգեղեն կյանքը վերացավ[47]: Իսկ յեթե Քրիստոսի պարգևած Ավետարանից կամենան այսպիսի որինակներ, ավելի խի՛ստ և ավելի զարհուրելի՛ բաներ կը գտնեն: Փրկի՛չը, գործվածի մեղք լինելը բոլորովին մի կո՛ղմ թողած, լո՛կ ցանկության պատճառով նայե՛լը կատարված շնության հետ հավասարեց, ասելով, թե վոր մեկը ցանկության պատճառով նայի կին մարդու վրա, արդե՛ն իր սրտի մեջ շնացավ նորա հետ[48]:

Այլև հեթանոսաց վարդապետի քարոզությունն եվ սոցա վրա ավելցնելով թող լսե՛ն ու լսե՛ն լի՛րբ և անամո՛թ մարդիկը, վոր ուրիշների բերնից իրենց կամքի ուզա՛ծն են խոսում և չե՛ն ամաչում Տարսոնացի Սերովբե Պավ-

ղոսից, ա՛յն մարդուց, որով Քրիստոսը խոսում եր[49] աշխարհի հետ, որ Փրկչի չարչարանքների մնացո՛րդը իր նեղությամբ լցված մարմնի վրա՛ չեր կրում[50]: Ինչ որ սա՛, իր բոլոր թղթերում, պառնիկների արքայության չժառանգելու մասին գրեց խի՛ստ շատ են, և այդ բոլորը մանրամասն գրել այստեղ շա՛տ աշխատություն եմ համարում և ավելո՛րդ. պա՛տճառ, Հավատքի տեղյա՛կ[51] մարդու հետ է խոսքս: Այլ այն քի՛չ խոսքերից, որ Կորնթացոց առաջին[52] թղթումն և գրած— թե ինչի՞ բնավ պառնկության անունը կա ձեր մեջ— մնացած ամենն էլ հանկացվում է: Ձեվ Ձեփեսացո՛ց, թե «պառնիկության և ամենայն պղծության, կամ ագահության անո՛ւնն էլ թող չլինի՛ ձեր մեջ»[53]: Ձեվ իսկո՛ւն, սորա քամակից, թե «ո՛վ որ պառնի՛կ է, կամ պի՛ղծ, կամ ագա՛հ, որ է կռապաշտ, ժառանգություն չունի՛ Քրիստոսի թագավորության մեջ»[54]:

Բո՛ղ ասե՛ն այժմ այդ չնչի՛ն և թշվառակա՛ն մարդիկը, թե ինչի՞ նախանձի պատճառով ձգում են իրենց անձը չապաշխարվելու մեղքի տակ, որոնց մասին և Հովհաննես առաքյալը[55] հիշում է ասելով, թե «կա՛ն մեղքեր, որ մահի՛ հավասար են», որ և Ավետարանչաց պրվածոց մե՛ջ անգամ կարդում են, թե «ո՛վ որ Հոգին Սո՛ւրբը հայհոյե նորա մեղքը չթողվի՛, վո՛չ այս և վո՛չ գալու աշխարհում»[56], բայց, արհամարհողների պես, բանի տեղ չեն դնում: Բայց մարդ մարմնի թուլության պատճառով մեղք և գործում, ինչպես և յես, որ ամեն մարդերից էլ մեղավո՛ր եմ. բայց մեղքը մե՛ղք չե ասել, վո՛ր արհամարհոտ և ամբարիշտ հոգին կարող է մտքից անցնել: Իսկ ով որ ճանաչե իր հանցանքը և զարհուրած սրտով կարող լինի պղջալ շատ պղջալ իակուզն թողության կատանա: Բայց ո՛վ որ հիմար կույսերի[57] ձևո՛վ կամենա ազատվիլ թողություն չի ստանալ:

Դարձյալ ասում եյին. «աղանդավո՛ր է»: Ձեվ այս բանը աշխատում եյին շուտ շուտ ամենին հայտնել և ակարամիտ մարդերին հավատացնելով, իմ մեջ չեղած շնորհի վարդապետությանը, վորպես մի թերի բանի վրա նայել եյին տալիս: Աղանդի անո՛ւնն անգամ, վորով այդ հանդուգն մարդիկը բամբասում եյին ինձ, գրով գրելու համար յես շա՛տ աղտեղի յեմ համարում: Բայց նոցա հայհոյանքի խորհուրդը, մի փոքր առաջ հիշված, դարձյալ նոցա ասած բաներին նման եր, ինչպես պառնիկների մեղքը թեթև՛ և չնչի՛ն համարելը:

Բայց յե՛ս, իմ կարողության չափով, Հունական գիտությա՛նց պարապելով, իմ տկար մտքի զորելու համեմատ, կարդացա՛ծ եմ գրվածքը սուրբ մարդոց, վոր, Սուրբ Հոգու ներնչով պինդված, աղանդավոր վարդապետությանց հոգեսպան սուրերը այդ վարդապետությունքը հնարողների սրտերին դեմ դարձնելով, նոցա աղեղները փշրեցին[58], և իրենց փրկարար վարդապետությունը գրո՛վ մեզ ավանդեցին, ինչպես արդա՛ր և հոգեսե՛ր հայրեր ամե՛ն հիմար մարդոց ոգուն մասին հոգալով: Վորոնց գրվածքը յերե մի մարդ յերկա՛ր և ջե՛րմ սիրով կարդա, անվնա՛ս կարող է լինել և հեշտ ազատվիլ շար աղեղնավորների կրակ թափող նետերից: Սուրբ Աթանաս Աղեքսանդրացու, և յերկու միանուն մարդոց Կյուրեղ Աղեքսանդրացու և Կյուրեղ Յերուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու և Նազիանզացի Գրիգորի, վոր իր շատ շնորհի պատճառով

աստվածաբան ասվեցավ, և մեր առաքելանմա՛ն նահատակ Հայոց վարդապետ Գրիգորի մասի՛ն և խոսքս, և նոցա՛ նմաններին, վոր նո՛ւյն առողջամտության ճանապարհին հետևելով վարդապետեցին։ Այս պատճառով և մյո՛ս բոլորը և ի՛նչ վոր նոցա մոտ յեղած մարդո՛ց վերաբերյալ, նորա ծառաները[59], Աղեքսանդրացի Արիոսի, Գաթիկեցի Ապողինարոսի, Անտիոքացի Նեստորի, Կոստանդնուպոլսեցի Յեվտիքևսի և Կումբրի տարկի— վոր հետո Մանի անվանեց իրեն, և այս պատճառով էլ նորա հետևողը Մանիքեցիք կոչվեցան— բոլո՛ր գրվածքները ունին և ուրիշ շատերի, սոցա նման կորստի ճանապարհը գնացողների գրվածքը, վորոնց Սուրբ, Կաթուղիկե և առաքելական Յեկեղեցին նզովել և դո՛ւրս է ձգել, վորոնք հեռացած Աստուծու ուղղափառ յեկեղեցուց, մինչև այսոր վարվում են, ամե՛նքը իր չարությամբ ներկված, վոր անհայտ չեն միմյանց և ամե՛ն ուղղափառ ժողովրդոց էլ հայտնի։

Յեվ թեպետ այս մարդիկը մոլորվա՛ծ են և չթշկվե՛լու կերպով կաղում են հավատքի մեջ, բայց, այս խոսքո՛վ և միայն և վո՛չ գործով. պա՛տճառ, մարմնի՛ պարկեշտությամբ, ամե՛ն եղնությանց մեջ, մի՛նը մյուսից գերազանցոմ են, և մա՛նավանդ կերակրի, խմիչքի և ցանկականի համբերության մեջ։ Իսկ Հայոց աշխարհի աղանդը, վոր ասո՛ւմ են, մի հիմնադրի անուն չունի իր վրա, և գրված մի բան չի՛։ Հավատքից և ուսումից զո՛ւրկ են, գործի մեջ ծո՛ւյլ և անհամբե՛ր, վորոնցից, նայելով այն տգիտությանը և անկարգ վարքին, վոր կա նոցա մեջ, արդա՛րև այժմ՛ն եր, վոր ա՛յդպիսի մի աղանդ բուսաներ, առասպելի ասածին համեմատ, թե «խոզի՛ պես հարսին կպրե-կարասը բաղնիք»[60]։ Իրա՛վ վոր «թող չպատմվի՛ այս Գևթի մեջ և չամի՛ Ասկալոնվնի դռներում»[61]. կարդացողը կը հասկանա։

Բայց յես թե՛և այդ տեսակ աղանդավորներից մի մարդ պիտեյի, սա՛կայն լոկ համբավի վրա հիմնվելով դատե՛լ կամ դատապարտե՛լ բնա՛վ կամք չունեյի, ուստի, այն չարաթույն մարդիկը, կարծո՛ւմ եյին, թե յե՛ս էլ նոցա նման եմ։ Բայց յես չեյի դատապարտում ա՛յն պատճառով, վոր ուսել եյի Քրիստոսից. վոր չե հրամայում ամեններին, մինչև հնձի ժամանակը* հանդուրժությամբ վորոմը ցորենից քաղել, այլ խոստանում և հնձի ժամանակ ուղարկել իր հրեշտակները[62], վորոնց կամ հրեշտակ և ասում և կամ ճշմարիտ վարդապետ. ինչպես Սուրբ Գիրքը սովո՛ր է վարդապետներին հրեշտակ անվանել[63], վորպես և իշխաններին Աստված աստղին մարգարեքը[64]։ Իսկ յես, վոր ՚վո՛չ հրեշտակ եմ և վո՛չ վարդապետ, յերբեք էլ սորա կամ նորա կամքը հարցնողներից չեմ յեղած, վոր մի իշխանության գործ գտնեմ, վո՛չ յերբեք[65]. պատճառ ինձ տալու համար— կարելի յե իմ անարժանության պատճառով— տո՛ւրը, անարա՛տ և ամեն մեղքից ազատ Հայոց այդ ուսուցիչքը, թող թե մեծ մեծ պաշտոնների հասցնել, ինչպես յեպիսկոպոսության, կամ նոցա մեջ առաջին պաշտոնի և կամ յեկեղեցու դա-

* Ջնջված՝ համարձակությամբ և խիստ... ԽՄԲ.։

տավորության, այլ քորեպիսկոպոս եւ չարաչ ինձ նոցանից մինը, վոր Պարսիկները և անարժան մարդիկ այսոր եւ անում են[66]։

Իսկ ինքս ինձ հանդգնությամբ առաջ քշել դեպի վարդապետություն, ինչպես անպիտաններից շատերին տեսնում եմի վոր անում եյին, սարսափում եյի Հակոբոսի պես ահագին մարդուց, վոր աղաղակում է. «Թե շատ վարդապետներ մի՛ լինիք, յե՛ղբայրներ, գիտցա՛ծ յեղիք, որ մեծ դատաստան պիտի ընդունինք[67]. դարձյալ չեյի հանդգնեցնում ինձ վարդապետելու, պի՛ղծ և վատթա՛ր գործերով լցված մարդոց պես, վոր իրենց գերանին չնայելով, ուրիշների աչքին մուռենալով նայում են վոր շյուղը հանեն։ Յեվ այսպիսի խաբեբայությամբ աշխատում են իրենց անձը արդա՛ր ցույց տալ աշխարհի, բայց այդ խաբեբայությունը ընա՛վ չի ծածկվիլ, և նոքա ե՛լ ավելի շատ հավելվածներով բարկություն են հավաքում իրենց գլխին դատաստանի օրում և չե՛ն լսում Պաղլոսի բողոքը. «Թե վոր մեր անձը դատեյինք»[68] (ապա չպիտի դատապարտվեյինք)։ Ուրիշներն ել, ագահությա՛ն ցավով հիվանդացած, պարտավորության տա՛կ են ձգում արդարի՛ն ել ա՛նարդարին ել և արծա՛թը միայն, վորի համար հարստահարում են, ձեռք բերածի պես, այնուհետև ամենին ել արդա՛ր և անմե՛ղ են անվանում և չլսո՛ղ լինելով արհամարհում են Ամբակում մարգարեյի աղաղակը*, մանավանդ Թե աղաղակով[69]։

Յեվ հոժարությամբ գուցե միտքդ բերես, Գյուտ կաթողիկոսի յեղբորորդու յերանելի Հովհաննի, Սևոնի[70] պարտեզում, մի քանի մարդերի կողմից քեզ Տիրոջդ ատած խոսքերը, վոր այն մարդիկը քեզ արծաթ խոստանալով խնդրում եին այդ տեղը։ Յեվ դու, Տե՛ր, կանչելով քո յեղբոր** տեր Վարդին, Հայդիկին[11] և իմ անարժանությունս, Տեր Հովհաննին հրամայեցիր, վոր մյուս անգամ կրկնե այն մարդոց ուղարկած խոսքը, վորի ընդդեմ դու, Տեր, ուրիշ ել շատ բաներ ասելով, տված պատասխանիդ գլխավոր բանը[72] այս արիր, Թե «պե՛տք եր վոր նորա մտածեյին և մի այդպիսի խոսք ինձ չուղարկեյին. անզգամություն և նոցա արածը. բայց յես այսպիսի քրտինքով առաջ բերած մեծ վաստակս և շատ աշխատությամբ ստացած ծախքս, վատ վաճառականությամբ, Թեթև բանի հետ չեմ կարող փոխել, և վո՛չ մի հոգևոր և հավիտենական դանձ անպետ և անցավոր ընծաների հետ»։ Յեվ Տեր Հովհաննին ել նեղացար, Թե «քնամ քեզ պես մի մարդու արժան չեր լսել, Թո՛ղ Թե ինձ ել բերել»։

Յեվ վորովհետև յես, յերկրավոր մտքով տկարամիտ և անզգույշ մարդ եմ, ուստի չկարողացա դավաճանությունը այն միջոցին հասկանալ. բայց ինձ պետք եր խոսքն վոտքդ ընկնել, ապաստանդ աղաչել և այդ վանքի հոգաբարձությունից հեռու փախչել։ Այն ժամանակ ազատված կը լինեյի չարաբույն ժանիքից գազանների, վոր այն որից սկսած ծածուկ դարան մտնելով, և իրենց անհամար հարստության համեմատ շատ և շատ արծա-

---

*Ջնջված՝ չլսող լինելով արհամարհում... ԽՄԲ.։

** Ջնջված՝ Տեր... ԽՄԲ.։

Քոլ հեսան (սրող քար) գնելով թուրի պես սրեցին իրենց լեզուները և իժերի թույն կար նոցա շրթունքի տակ[73]։ Յեվ յես[74] չկարողանալով Սաղմոսերդողին պես ասրթել, թե «պահե՛, Տե՛ր, մեղավորի ձեռքից և չա՛ր մարդուց փրկե՛ ինձ»[75], նոքա ընկան այնուհետև քամակիցս, իմ գնացքը խափանեցին և վրա հասնելով դեպի մահ խոցոտեցին։

Բայց խնդում եմ ցնծալով, վոր այն վերքերով, իմ հոգիս, վոր առաջուց խոցոտված եր մեղքերով, առողջանալով զորացավ։

Յեվ այսպես կատարելով իրենց կամքի բոլոր ուզածը իմ վրա, այնուհետև զվարճանալով ուրախացան, ինչպես մի տոն կատարելու ժամանակ։ Վորոնց պարտքն եր, սենեկում չորս կողմս նստած, լալ իմ վրա, վորպես մի վիրավորի վրա և ճա՛ր անել, այս բոլորի հակառակն արին. ուրա՛խ սրտով ծաղր անելով շրջապատեցին ինձ, բայի՛ն իմ վրա իրենց բերանները և ասացին. վա՛շ վա՛շ, մեր աչքը տեսավ[76]։ Յեվ լոկ վայրախոսություն չե այս իմ կողմից, այլ ստո՛ւյգ իրողություն և, վոր Տիրոջդ առջև դնում եմ։

Մի յերևելի ազնվական մարդ, ականատեր տոհմից, ուղարկեցի այդ Հայոց գլխավոր քահանային[77], այդ հոգիների հիվանդատեսին, ասելով. «վիրավորներին բժշկություն տալու շուտո՛վ հասիր. թշնամին անթիվ նետերով խոցոտեց ինձ. վերքերից մահի դուռն եմ հասած. քո պարտքն և այսուհետև դեղ դնել և բժշկել, իսկ ին մեռնիմ, տանել գերեզման և թաղել»։ Յեվ նա պատասխան տալով ասաց պատգամաբերին. «Քրիստոսի՛ շնորհելով վո՛ղջ յեղիր, և այրն ոչինչ բերև երե ես* չեմ համարձակվում յերկյուղից նաև տեսնել քեզ, բայց դու դեռ ասում ես, թե գամ բժշկեմ և կամ թաղե՛. չլինի թե մի մարդ իմանալով, Սուրբ Հոգու խոսքը իմ վրա բերի, թե «վա՛յ նորան, վոր չար ագահություն և պահում իր տանը»։

Դարձյալ ասում եյին, «թե մեկ խոսքով պի՛ղծ և չարագործ մարդ ե. վանք ունի այնտեղ Ղազարը և սիրում և նորանց»։ Այս բաները ասողների գործերի մասին չես ասա լուռ եմ կենում, վորովհետև ինձ բնա՛վ հարկ չկա ասել. բայց Քրիստոսի ահագին և անաչառ որը չի լռիլ, այլ անշեջ կրակին կը մատնե։ Յեվ ինձ բարեկամ եյին անվանում քո յեղբարքը, Տիրոջդ, սուրբ գրվանի գին, յեղբորորդու հետ միասին։ Այդ յերեքն էլ հոգեպես և մարմնապես կրթված և դաստիարակված մարդիկ են, և ուղղափառ հավատի ուսումը ստացած են քո որհնյալ մորից և նո՛ւյն իսկ Տիրոջից։ Յեվ հասակով թերակատար կամ պակասավոր մարդիկ չեն, այլ թե՛ խելքով և թե՛ քաջությամբ լցված և կատարյալ։ Նոցա հետ միասին և Աբեղենից սիրոջը (ինձ բարեկամ եյին՝ անվանում), վոր, քո, Տիրոջդ, սիրուն և ամենին ընդունող բարերարությունից, հարգելի մարդ և և հրապարակում յերևելու պատճառ ունի և Տիրոջից և Քրիստոսի շնորհից ամենքն էլ վո՛ղջ են և մեջ տեղում, թո՛ղ հարցանվին նոքա, իմ ըստ աշխարհի վորպես հայր տված խրատներիս և ըստ հոգու իմ վարդապետության խոսքերի մասին. և ինչ վոր

---

* Ջնջված՝ վախեցածից... ԽՄԲ.-Յ

ամեն միրը լսել են, առանց իրենց հոգին պարտավորելու Քող ճշմարիտը ասեն։

Բայց յերեք յեղբարքն ել սիրում եյին Սուրբ Կաթուղիկեյի վանքը ընծաներ և ամեն հարկավոր բաներ նվիրելով, վորոնցից ամեն մեկի տվածը հայտնի եր և պրով մնաց վանքում. և ճշմարի՛տ վոր Տիրոջդ կամքի կատարողքը դոքա յեղան։ Վորովհետև այն որից, յերբ դու, Տե՛ր, քո անարդ մարդ մեծարող խնամքովդ ինձ քո ընտանիքին հանձնեցիր, դոքա՛ յեղան իմ վրա քո խոսքի հրամանը կատարողքը, առանձին առանձին, իրենց կամեցողությամբ, վանքի պաշտաբերությունը հատուցանելով։

Մեռնելու չափ անմխիթար տրտում եմ, վոր գայլերի նման վազեցին իմ ունեցած չունեցածի վրա և առանց խնայելու կտրատեցին, յերբ տեսան քե քո աչքից ընկա։ Յեվ այժմ իմ ունեցածներով զարդարված, ման են գալիս ինձ ծաղր անելով. իսկ ինչ վոր իմ բաներիցս վանքումը մնաց, այդ մասին, ուրա՛խ եմ և ցնծում, վորովհետև մի տե՛ղը և հոգևոր տեղում մնաց։

Բայց սորանից ուրիշ չար խոսքերով քեզ, Տե՛ր, իմ վրա նեղացնել եյին աշխատում, քե մի մանուկ չե կարող վանքին հոդաբարձություն անել։ Յեվ իմ համար մի հրեշտակ մարմին չառավ, վոր գո՛նե իր հոգեղեն բնությամբ տեսնելով Քշնամիների ծածուկ լարած վորոգայթը կարողանար զգուշացնել ինձ և հանձն առնուր լինել իմ համար յերկրորդ Յես, վոր անշուշտ կանեյի։

Իսկույն դավաճանությամբ նենդողների մոտ վազելով և միտք պղտորող խաբեբայական չար խոսքերով ասում եյին. «Ա՛յ հիմար մարդիկ, ինչի՞ եք ունայն տեղը աշխատում, ո՞ւր եք այդ շոգ կրակում կենում և հիմարաբար անձնամահ լինում. Մամիկոնյանց տան մի քանի ավագ ծառաները յերդումով խոսք են տված մեզ և այդ տան Ավագ անունով քահանան ասել և, քե յերբ ել վոր լինի, յես իրեն իսկ Ղազարին չափիտ Քողում հանգչել այդ տեղում, քո՛ղ քե նորա մարդոցը»։ Յեվ լսողքը, այսպիսի խոսքերից քուլանալով, ել այնուհետև աշխատում եյին ժողովել առավել իրենց* պարկերի, քան քե վանքի ամբարի մեջ։ Բայց յես, մեղուի նման ամեն կողմից բերելով, կարողանում եյի հոգալ և՛ վատողների պետքերը և՛ վանքի պաշարը։

Բայց դո՛ւ, Տե՛ր, լավ հիշողություն ունիս և բան չես մոռանում, մանավանդ քո հոգաստիրությամբ. վորովհետև շատ եր կատավարել նա այդ վանքը, քե ուր և իցե գտնվում և, քո՛ղ հարցանվի և քո՛ղ ասե։ Իսկ ինչ վոր կարգել եյին ինձ տարեկան տեր Ներսեհը և Հրահատը,— կերակրի, հանդերձի և ձիու համար,— հայտնի՛ յե. նույնպես և Տիրոջդ յեղբորորդիներից նշանակվածը. այն ել դեռ հերիք եր լինում ինձ, և յերբեմն իմ ավելորդներից վանքի պետքերի համար եր գործ դրվում։ Իսկ Աղվանստանից, Վրաստանից, Սյունյաց և Արշարունյաց եպիսկոպոսներից իմ բերած բաներս և ինչ վոր բո՛ւն Տիրոջդ յեղբորորդիներից առացել եյի այդ բոլորը— յուրաքանչյուրի տվածը առանձին առանձին դրի անցուցած,— մնաց վանքում. և ինձ մե՛րկ և խայ-

* Ջնջված՝ առավել իրենց չալակի վրա ժողովել... ԽՄԲ.։

տառակութ յա՛մբ դուրս հանեցին իմ բոլո՛ր ունեցած չունեցածի միջից, ինչ վոր տղայութ յանս ժամանակից սկսած ժողովել եյի։ Մինչև անգամ և Հունարեն գրքե՛րս ինձ չավին, վոր ընկած են այժմ վանքում ցեցերի կերակուր լինելու համար. բայց արդյոք այդ գրքերը կարդալով պիտի լուսավորվի՞ն այդ տեղում բնակվողքը, կամ ուրիշներին պիտի լուսավորե՞ն։

Յեվ դու, Տե՛ր, և այս մի բանը չես իմացած, բայց արժա՛ն եր վոր իմանայիր. յես լսեցի, վոր իմ քամակից ասում եյին, թե «յես վանքում բան չունեյի»։ Յերթե բոլոր կահ կարասիքի կողմից և ամեն հարկավոր յեղած բաներով, յերկու հարյուր տարուց շինված վանքերից փոքր պակաս, կամ հետ մնացած լինեյի, ապա բնա՛վ արժանի չեյի համարիլ ինձ այնտեղ մնալ։ Թեպետ վանքի սարք ու կարգը, շինվածքի անհատատուբյունից, մի յերկու անգամ չարդվեցավ, բայց այս վերջին անգամինը, յերթե Տերդ դիտնար և ինձանից համար պահանջած լիներ, վոր ամեն բան մանրամասն քեզ հայտնվեր, այն ժամանակ կիմացվեր, գովութ յա՞ն յերթե մեղադրանքի եյի արժանի։ Բայց յես միայն իմ դուրս ձգվելուցս հետո ընկա այս ու այն տեղ իմ պետքս և կարոտութ յունս առանձնապես հոգալով. սակայն իմ քարոզութ յունքս շատ ախորժելով և պատվականութ յամբ ընդունում եյին, ինչպես մի առողջ վարդապետի քարոզութ յուն, և հոր պես էլ պատվում եյին, և մանավանդ ե՛լ ավելի տեր Համազասպը, վորին վողորմութ յուն անե Տերը ինչպես Վոնիսիփորի տանը, այս խոսքերը ասողի բարեխոսութ յամբ. պատճառ, շատ անգամ ինձ հանգստացուց և իմ հալածվելու ժամանակ իմ կերակրիչը յեղավ։

Վոմանք էլ ասում եյին, «թե յես Տիրոջդ տանը վորպես մի ավելորդ անոթ եյի», վորովհետև մտածում եյին, «թե իմ վո՞ր արվեստի համար դո՛ւ, Տե՛ր, պահպանելով պիտի մեծարեյիր ինձ»։ Սորանում ի՞նչ բանի չեյին ցանկանում դոքա. արծաթ և վոսկի, վոր թե յես մի ունևոր մարդուց գտնում եյի, վոր թե ուզում եր մեկը ձեռք բերել, այն յես վանքի պետքերի վրա եյի ծախում։ Կերակուրներ յեփել սորված չեյի, վոր ձկան աղիքնեբով և հավի փորոտիներով այդ ուտողների համար լավ լավ կերակուրք պատրաստեյի, և թեև այդպիսի բաներով կարողանայի մարդու հաճելի լինել։

Բայց յես մի ուրիշ նո՛ր բան էլ ասեմ Տիրոջդ, վոր թե քո արդարութ յուն փնտռող մտքիդ ընդունելի յերևի, խնդրում եմ Տիրոջիդդ, ամեն բանից առաջ այդ բանը քննել, և Ճիշդ տեղեկանալով, կամ, ղարմացի՛ր և կամ, յերթե ճշմարիտ չե ասածս,անարգե՛։ Այն որից, յերբ դո՛ւ, Տե՛ր, ինձ վանքը տարիր, մինչև իմ այն տեղից հալածվելու որը, վանքի յեկամուտից կամ բերված ընծաներից մինչև անգամ և մեկ դրամ վրաս անցուցած չեմ, և վո՛չ իմ պետքերի համար ում և իցե տված, և այս բանը գիտեն իմ հետ այնտեղ բնակվողքը։ Բայց ուրիշներից ավելի Սկիթ անունով մի մարդ, վոր Գարդմանի վանքից յեկած եր մեր վանքը, այն որից յերբ սորա հիմքը ձգել եյին, և մինչև իմ վանքից գնալը նա այնտեղ եր, իսկ այժմ լսեցի թե

Անդր մոտ է գանվում, ահա այդ մարդը շատ լավ տեղյակ է ասած բաներիս և ինձ քեզ հետ կը թաղե, վոր քա՛չ հովվի աներկյուղություն ես։

Ո՞ւր է արդար ուսուցչի հոգողությունը, ո՞ւր է արդար հայրապետի Քրիստոսին նմանելը։ Արարածների արարիչը մեղավորների փրկության համար մա՛րդ յեղավ, շատ անարգության, գլխին զարկելու, և յերեսին թուք ընդունելու և փշեղեն պսակի և ուրիշ ել ավելի մեծ-մեծ բաների համբերեց. իսկ դա՛ վերքերից թուլացած մարդու յերեսին և չո՛ւր անգամ ցանել չհամարձակվեցավ մարդերից վախելով։ Դահեկանները լիքը բռնով Սամարացի դթածիցը առնելով այդ արծաթը— հիվանդները նայելու դինը— սապատների մեջ է ժողովում, իսկ հիվանդներին պանդոկից հանելով դուրս է ձգդում, մե՛ծ անփութությամբ։ Քրիստոս Փրկիչը բարձր ձայնով ամեն որ մեղավորներ է կանչում. «Ինձ մոտ յեկե՛ք ամեն հոգնածներ և ո՛վ վոր ծանր բեռներ ունի և յես կը հանգստացնեմ ձեզ». և Պավղոսը աշխարհի անհայտ դեպքերից անկանգնելի ընկնելու մասին, դեռ չընկնողներին, զգուշացնում է— Գաղատացիներին գրելով. «Յեղբա՛րք, ասում է, յեթե հանկարծ ձեզանից մեկը վոր և իցե հանցանքի մեջ բռնվի, դուք վոր հոգևորներ եք հեղության հոգով կանգնեցրե՛ք այնպիսուն. զգո՛ւշ յեղիք ձեր անձին, վոր չլինի թե դուք ել հանցանքի մեջ ընկնիք. միմյանց բեռը* վերուցե՛ք և այնպես կատարեցեք Քրիստոսի որենքը»։ Իսկ դա նորա հակառակն է աղաղակում. «Ո՞ւր ես դալիս, չե՛մ ուզում, համարձակություն չունի՛մ քեզ տեսնել»։ Արդյոք, մեկ կամ յերկու անգամ, տարա՞վ ինձ իր սենյակը, և խոսեցա՞վ իմ հետ, ինչպես Փրկիչը հրամայում է, յես ու ինքը առանձին, կամ մեկ և կամ յերկու ընկերով, վոր չհավնելով և իբրև մեղավոր և մաքսավոր համարելով ինձ հալածեր։

Հիշելով, ասում Ես, մի անգամ մի մարդ իմ անունը ավազի մոտ, մի քանի պարեզոտավորների առջև, տրտում հառաչանքով ասաց, թե «իրավացի չեղավ Ղազարի մեր աշխարհից հեռանալը, պատճառ, նա յեկեղեցու զարդ եր»։ Յեվ լսողները ուրիշ բան չկարողանալով ասել, միայն այս պատասխանը տվին, թե «նորա հալածվելու պատճառը քնա՛վ մենք չենք, բայց ինչ վոր նորա պիտության մասին եք խոսում, տո՛ւյդ է, առաջ շատ համեղ և զորավոր կերպով եր քարոզում, իսկ այս վերջի ժամանակները իսպառ վատ եր նորա քարոզը»։ Յեվ այսքանը չկարողացան հասկանալ թե իրենց դատապարտության և ամոթի համար խոսում եյին այդպիսի բաներ։

Թո՛ղ ասեն ուրեմն, վորի՞ համար շնորհվելով պարգևվում է վարդապետության խոսքը. ասողի՞ համար. չե՞ վոր ախորժանքով անկաջ դնողների, լսողների և նոցա խնդրվածքի համար։ Նայեցե՛ք հունաց ժողովրդի վրան, յերբ իմա՛ց է տրվում, և քարող ասողը նշանակված տեղն է անց կենում, ամենքը իրենց սիրտը զարթեցնելով բարձրացնում են դեպի Աստված. թևերը բանալով խաչի նման են լինում, և միաձայն խնդրվածքներով

---

* Ջնջված՝ բարձեք... ԽՄԲ.։

և արտասվալից աղաղակով խնդրում են Փրկչից*. «խո՛ւր տուր, ասում են, շնո՛րհք ուղարկե. բո՛ւն դու ի՛նքդ խոսե մեզ հետ դորա բերնով, ինչպես յերբեմն խոսում եյիր սուրբ Պավղոսի ձեռքով. նորա՛ն իմացուր քո հաշտ լինելը քո ծառաների հետ: Մեր մեղքի պատճառով, ամուլ ամպերի վրող չնմանի՛ դա, այլ առա՛ տանձրև բաժիելով քող ջրե՛ մեր հոգիների անդաստանքը, վորով ծաղկելով քո Վտմբիդ հաճելու արժանի պտուղներ բերենք և քե՛զ մատուցանենք»:

Արդյոք վո՞ր տգետի, թո՛ղ թե փոքր ինչ ուսումնականի, միտքը չի զարթիլ, նորա մատածության գործարանը չի վառվիլ և Սուրբ Հոգու գանձերից հին և նոր դուրս չի հանիլ, մանավանդ, յեթե այդ մարդը քարոզելու յելնե խոնարհության և վոչ հպարտական դիտության, լսողների աղոթքով և վոչ իր անձի դիտությամբ պարծենալով: Յեթե Աստուծու ընտի՛ր անոթը— Պավղոսը— Յեփեսոսի մեջ հավատացյալներին գրում եր աղաչելով, թե «Աղո՛թք արեք և իմ համար, վոր ինձ խո՛սք տրվի բերանս բանալու ժամանակ». արդ, յեթե նա, վոր Աստուծու** խորհուրդների հաղարապե՛տն եր աղոթքի եր կարոտում և աղաչում եր, վո՞րշափ ևս առավել մենք,— շատ տկարություններով պատած,— այժմյան մարդիկս:

Իսկ այդ Հայոց աքեղայքը, իրենց*** սրտերի հետ միացած դառնաշունչ նախանձի պատճառով, այդ բանների հակառակն են անում. և, իրա՛վ վոր, մարգարեյի ասածին պես, «ցավե՛ր են հղանում և անօրենությո՛ւն ծնում». աղո՛թք էլ չեն անում իսկի քարոզողի համար. բացի սորանից, յեթե հանկարծ մարդասեր Աստուծուց խոսք շնորհվի, խե՛ղդվում են նախանձից: Յեթե տեսան ժողովրդից մի մարդ, վոր գալում եր, ծա՛ղր անելով ամաչեցնում են նորան. «միանգամ թե խոսեց, էլ լռել չգիտե», ասում են, «և զուր տեղը կանչում է և հառաչում»: Իսկ հունաց ժողովուրդը և յերեխայքն անգամ, իրենց ծնողաց ուսերի վրա, գոռվելու համար ձեռնները շարժելով և ակկտուր ձայներ հանելով թռչոտում են: Բայց դոքա՛ գլուխները ծածկա՛ծ**** և յերեսները փաթաթա՛ծ նստում են, ինչպես մի հոտած տատ-

---

* Ջնջված՝ թե... ԽՄԲ.:

** Ջնջված՝ խորհրդ... ԽՄԲ.:

*** Ջնջված՝ սրտի հետ... ԽՄԲ.:

**** Այստեղ հարկավոր ենք համարում ծանոթանալ, վոր բնագրում ասած է, «Գլխարկևալք, պատառեալ երեսօք» և այլն: Հայկազնյան բառարանը գլխարկիել բառը հասկանում է վո՛չ գլուխը ծածկած այլ գլուխը կախած. և այդ բառարանի բերած վկայությունքը արդարև այդ միտքն են տալիս:

Բայց սակայն այն վկայությունքը, վոր սերտում գլուխը կախած են հասկանում, բնավ արդելք չեն և գլուխը ծածկած հասկանալու, վորովհետև ամենահին վկայությունը Աստվածաշնչից է. «Եվ Համան դնաց ՚ի տուն իւր դլխարկևալ». (Եսթ. գլ. Զ, հմ. 12) վոր չե ցույց տալիս վորոշակի կամ գլուխը ծածկած կամ կախած: Միտքը այս է թե Համանը դնաց տրտմած և ամաչած:

Այս ծանոթությունը գրելու րոպեիս հուշարեն Աստվածաշունչը ձեռքիս չեր, վոր նայեի թե ինչ բառ և գրե՛ գրած այնտեղ: Հրեական բնագիրը գլուխը ծածկած է ասում:

Մեր թարգմանությունը վոչ թե հրեական բնագրին հետևելով է յեղած, այլ թե այն

կոցի մոտ, մո՛ւնջ դևի պես պապանձված։ Յեվ յերբ Մարդասերը գթալով, ժողովրդոց փրկութեյան համար, խրատի խոսք կամենա տալ քարոզչին, նայելով նոցա դառն խորհուրդներ վորոճալուն, իր մեջ քաշելով արգելում է շնորհը. անընդդիմանալի՛ են, արդա՛րև, ինչպես Որհնութեյանց Որհնութեյունների մեջ գրված է, այս յերկուքը— Սեր և Նախանձ— նորա վայծերը, կրակի բոցի կայծեր են, վորոնցից ամեն մեկը դեպի բարին գործ դնողներին մոցնում է արքայութեյուն, իսկ դեպի չարը վարողներին դժոխքն է ժառանգեցնում։

Արդյոք, այս ժամանակումս կա՞ Յերեմիա մարգարեին նմանող մի մարդ, վոր վողբալով ասեր. «Յերանի՛ թե գլուխս ջուր լիներ և աչքերս արտասուքի աղբյուր» և նստեյի լայի մեր աշխարհի թշվառութեյունը։

Նույնպես ասում եյին. «առաջ գիտնաբար եր խոսում Ղազարը իսկ այժմ անգիտաբար»։ Քանի վոր դոցա մեջ տակավին լուռ եր նախանձը իմ մեջ զորացած եր շնորհը. իսկ յերբ տեսան վոր ժողովրդի բազմութեյունը հոժարութեյամբ եր լսում, յերբ տեսան, վոր մարդիկ միմյանց պատմելով շնորհի առատ թափվիլը հակամետ եյին գովելու, հարգելով և անմոռաց զարմանալով լուսավոր և վողջամիտ խոսքերի բղխելու վրա, հրապարակներում և փողոցներում միայն այս բանը միմյանց հոչակելով և ուրախանալով վեր եյին ցաթկում, այն ժամանակ փրենք, այդ աբեղայքը գետինն անցան. եվ այնուհետև սկսեցին վոխակալութեյուն հղանալ և նախանձ ծնանել։ Իսկ յերբ դոցանում առատացավ այդպիսի չարակամութեյունը, խոսքը դադարեցավ և արգելվեցավ, և վո՛չ թե ասողից, քա՛վ լիցի, «վորովհետև շնորհը հետ չե դառնում և պարգևքը չեն պակասում», այլ դոցանից, վոր իրենց փրկութեյան խոսքը չլսեն. վորոնց վրա կատարվում է Հոգու խոսքը վոր ասում է, թե «Տիրոջ խոսքերը լսելու սո՛վ կո՛ւղարկեմ ձեզ»։

Իրենց մտածութեյունքը ուրիշ շատ տեղեր տանել բերելով, մյուս սև՛ բամբասանքների վրա այս եվ ավելցնելով ասում եյին. «Այդ մարդը գիրք չե կարդում, բայց ընթերցվածը այնպես անսխալ ասում է ինչպես գրքին մեջ գրված է»։ Այս եվ չկարողացան վոր իմանային, թե վորոնք վոր լավ գիտեն, Դավթի Սաղմոսը պետք է միայն ժամի միջոցին անսխալ իմանալ և վոչ թե Աստվածաշունչը միշտ ձեռքը բռնած, հիմարացած մարդոց պես այս ու այն խոսել։ Իսկ մեր յերանելի ուսուցիչքը յեկեղեցու բոլոր կատարանքը, յերեք չորս անգամ, ծայր ի ծայր մեզ ուսուցանելով համար եյին պահանջում մեզանից, և այն բոլորը Դավթի Սաղմոսի պես գիտնալ եյին հրամայում։ Իսկ այժմ, լի՛րբ և նախանձոտ մարդերից շատերը յեկեղեցական գրքերի անունները անգամ վամ կանոնների կարգադրութեյունը հազի՛վ կարանում են* գիտել, բայց, նախանձ ձգող դևի գրգռելով մի-

---

տեղում մենք այնպես ենք հասկացել այդ բառը, թեև ընդդեմ չենք, վոր կարելի յե նաև Քուչլ տալ գլուխը կախած հասկանալ

* Ջնջված՝ գիտնալ... ԽՄԲ.։

մյանց մոտ նստած, ուրիշներին լսելի կերպով հիմար հիմար խոսում են բարձրաձայն։

Ել ի՞նչ ասեմ. իմ ժամանակս բավական չէ, թշնամու իմ վրա թաշած նետերից ստացած անթիվ վերքերս համարելու, վոր որ և որ և ժամն ժամ վտանգով ընդունելով համքերում եյի ամեն բանի հարկից չինելով ստիպված։ Պատճառ, վորպես ամուր և պիրկ վագով կապված լինելով Տիրոջդ քաղցր և ախորժելի սիրով,— վորի անուշությանն համը հերիք և չեթե մարդ միանգամ առնու,— ուզում եյի առավել մեռանել, քան թե այդ սիրուց զրկվիլ։

Բայց այժմ, խոսքս վերջացնելու գալով, հարմա՛ր և արժա՛ն եմ համարում հիշել զարմանալի և չերեք անգամ չերանելի ավազակի խոսքը, վոր խաչին վրա իր թշվառ ընկերին եր ասում. թե «մենք, մեր գործած հանցանքի համեմատ, արժանապես ընդունում ենք այս փոխարենը», և փրկչի վրա ցույց տալով, թե «բայց Սա ինչի՞»։

Այսպես ել, չես, իմ գործերի համեմատ արժանի պատուհաս ընդունեցի ահա, և խոստովանում եմ հրեշտակների և մարդերի առջև. բայց, ուրիշ առաքելանման մարդիկը ինչի՞ այսպիսի և սորանից ե՛լ ավելիներին հանդիպելով այս աշխարհում, շատ խիստ վշտերով վախճանեցան։

Յերանելի Մովսես Փիլիսիրոսը (Խորենացին), վոր արդա՛րև, մինչդեռ մարմնով եր ապրում, գրեթե յերկնքի զորքերին եր քաղաքակից. չե՞ վոր այդ Հայոց աբեղայքը այս տեղից այն տեղ հալածական արին նորան։ Չե՞ վոր նորա լուսավորող և տգիտությունն հալածող գրքերը տգիտությամբ Փաթաղիկես եյին փչում. և ուրիշ այլ շատ բաներով նախատելով, հետո, ուրիշներից ամաչելով, խաբեյական չեպիսկոպոսությունքը մահադեղի պես խմցնելով սուրբին, խեղդեցին. վոր թե իր վախճանելու ժամանակ ի՛նչ ահավոր նզովք, գրով, գրել և գլխավոր քահանաների վրա, այդ, դուք ինքներդ շա՛տ լավ տեղեկացած լինելով, պիտեք.... տիրոջ մասին. նորան անչափ անհանգիստ աշխատությանց և գիշեր ցերեկ Հայոց աշխարհի լուսավորությանը վաստակելու վրա դրեց։ Վոսկորները հանել եյին տալիս գերեզմանից և գետը թափել, այն հրեշտակի նման մարդուն,— տիրո՛ջը,— անհանգի՛ստ հալածանքով վախճանեցուցին և այժմ ել դեռ անհագության գինով հարբած մեռածին հետ կռվում են։

Անարատ և ամենքներից հարգվելու արժանի հույսը,— տեր Խոսրովիկը,— տակավին մեր յերկրի սահմանը չհասած, մինչ դեռ գալիս եր և առջև լսեցին, ինչպես մի թշնամու վրա նորա ընդդեմ զինվեցան. «ել ո՞ւր ե գալիս մյուս թարգմանն ել» ասելով։ Յեվ այն որհնվածը հեռվից լսելով նոցա մահաձայն աղեղների աղմուկը աղոթեց Աստուծուն և շուտով փր խնդրածը ստացավ, վորի փափաքելի վոսկերքը մենք վո՛չ այլ ուրիշները արժանի յեղան ընդունելու։

Նույնպես հարմար եմ դատում նոցա հետ հիշել և տեր Աբրահամ յեպիսկոպոսը, որում ըստ ձաթի խորհրդոյն և չհանգուցաձեր ՚ի ծերութիւնս, և

կարող լինէի առ նմա գո՛նեայ սուղ ինչ ժամանակ մնալ, թէպէտ և ոչ թերակատար զոլով սուրբ և ստույգ հաւատ, զոր ուսեալ ՚ի տղայութեանն յերառնելոյ Ալանայ, կեամ նովիմբ ՚ի նմին աննփոխութեամբ մինչև ՚ի վախճան կենցաղոյս իմոյ: Այլ յաղագս իմաստասէր բանի ըստ նորա տեառն մեծ հրահանգին, շահեալ ՚ի նմանէն հանգոյն մեծի գանձու ամփոփելոյ հաչուէի զպարարումն զայն: Յորոյ վերայ տեսեալ պարեգօտատուաց, զայրագնեալ իմն զօրհնելոյ տիկնոջ Աւագի զմիտսն ոչ ծանուցին առ ժամայն. նա աղաչելով զերանելի մայրն հոգացեալ իբրև զեղբարս ՚ի վերայ եղբօր, այլ առաւելս զայրացուցեալ, գրգռելով զկամացն իւրեանց նովաւ կատարեցին զհանոյս:

Յեվ սոցա այսպես նախատվիլը և հայհոյվելով հալածվիլը, վոչ թե անցած ժամանակների պատմությամբ, կամ վորպես մի լուր մի մարդուց լսելով մեզ հայտնվեցավ, այլ բո՛ւն մե՛ր որերում և մե՛ր ժամանակում այս ամենը կատարված տեսանք:

Իսկ զյառաջագոյն գրելոցս սուրբ արանցն, զորս ՚ի պատմութեանն հաւատակին Գրիգորի դրոշմեալ յիշատակէ: *Ել ի՛նչ ասեմ արդա՛ր և արժանավոր բարեպաշտ և սուրբ Ներսես կաթողիկոսի մասին, և կրոնավոր, առաքինի և Հայոց մե՛ծ լուսաւորիչ տեր Սահակի և ուրիշ շատերի մասին, վորոնք վախճանեցան, վո՛չ որհնելու համար բանալով իրենց բերանը:*

Այս պատճառով զարհուրած վախենում եմ, չլինի թե և դոցա կպչի Ավետարանի սպառնալիքը, վոր ասում է. «Ահավասիկ յես կո՛ղարկեմ ձեզ մարգարեներ, իմաստուններ և կարդացողներ և դուք նոցանից կպանեք, կը խաչեք և ձեր ժողովարանների մեջ կը տանջեք և քաղաքից քաղաք կը հալածեք, վոր ձեր վրա գա յերկրի յերեսը թափված ամեն արդար արյուն, արդար Աբելի արյունից սկսած մինչև Բարեքի վորդի Զաքարիայի արյունը, վոր տաճարի և սեղանի մեջ տեղը սպանեցիք, ճշմարի՛տն ասում եմ ձեզ, վոր այդ ազգից պիտի պահանջեմ»: Այլ ոգետները պիտի մխիթարեն մեզ Հրեից ազգին ասված կարծելով այդ խոսքերը: Այնպիսին, թո՛ղ լավ ուշադրությամբ մտածե. արդար Աբելի արյունից ասաց. վոր նորա սպանվելու ժամանակին նայելով, յերկյուղով հասկանա, թե այդ խոսքը վերաբերվում է այն ամեն մարդոց, վորոնք նույնատեսակ գործեր կը գործեն: Համարձակվում եմ հանդգնությամբ այս էլ ասել, յերթե ստույգ չեն իմ կարծածները, դո՛ւ, Տե՛ր, քաղցրությամբ, բանի տեղ չդնելով, ներե՛ ինձ, վորպես մի տկարամի՛տ մարդու: Յեվ քո՛ իսկ ամենասքանչ անձինդ, վորից ամեն մեծ կամ փոքր մարդու, վոր կան Հայոց մեջ, հասել է մեծապես ոգտակարությունն և պատի՛վ և փա՛ռք, իսկ մի քանիսին էլ մահից դեպի կյանք և կորստից դեպի գտնվիլ և մեջ տեղում լինել դո՛ւ, Տե՛ր, պատճա՛ռ ես յեղած. այժմ տեսնելով Տիրոջդ որե որ Աստուծու փառավորությամբ լցված հմտությունը, վոր պարգևել է և բերել է նոցա շքեղություն և պարծանք, յեթե կարելի լիներ, նախանձի պատճառով, շատերը կը կամենային հնարք գտնել, վոր Տիրոջդ արած լավության տեղը բարի չհատուցանեին, այլ նորա

հակառակը: Իսկ վերին արդարատես Աչքը չե նայում չա՛ր կամքերի ուզածներին, այլ իր խնամակալության աջողությամբ, համապատ և անփոփոխ բարի՛ն և կատարում, իր սո՛ւրբ անունը ա՛յժմ և մի՛շտ և հավիտյանս հավիտենից փառավորվելու համար. ամեն:

Թարգ. Միք. Նալբանդյանց:

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Այս բուղրը, ինչպես ամենին հայտնի չէ, առաջին անգամ հրատարակվեցավ տպագրությամբ Մոսկվայի մեջ, 1853 թվականին, պ. Եմինի ձեռքով: Այդ տպագրված որինակից է արած մեր թարգմանությունը: Ինչպես, պ. Եմինի հառաջաբանից յերևում է, Բուղրը դուրս է յեկած ս. Եջմիածնի դրատունից, և ինքը պ. հրատարակողը ստացել է իր որինակը հանգուցյալ տեր Հովհաննես Շահխաթունյան արժանավոր յեպիսկոպոսից: Մեզ, նույնպես, պատահեցավ տեսնել այս Բղրի մի ձեռագիր որինակը ս. Եջմիածնի մեջ, արժ. Դանիել վարդապետի մոտ. բայց ավա՜ղ, այն ուրիշ որինակ չեր, այլ բո՛ւն գրշագրիցը արտագրված, վորով չեյին պարզվում աղճատված վայր մութ տեղերը. չե՛ր լցվում նույնպես թերթերի պակասությունը:

Բղրի հարազատությունը յերկբայության յենթակա խնդիր չէ: Մեծ վահանի որով, Դաշտի Փարպեցու կրոնավորների վրա տեսուչ կարգվիլը այդ Բղրի հրատարակվելուց առա՛ջ եր Հայոց Ստեփանոս Տարոնեցու պատմությունից, ուր 82-րդ յերեսում, այսպե՛ս է խոսում յերջանիկ ծերունին. «Իսկ Վահան զնկեղեցիս Աստուծո լուսազարդեալ նորոգէր, զպաշտօնեայս ուխտին մեծարելով, բարեշէն զաշխարհս առնելով: Նոյնն և՝ ի ժամանակս իշխանութեան իւրոյ զմեծ Կաթուղիկէ եկեղեցին որ ի Հայս վերատին մեծապէս նորոգեաց, զդասս կրօնաւորացն բազմացուցանելով, որ Սուրբնայ անապատն ասի, վերակացու նոցա կարգեալ զՂազար Փարպեցին՝ ճարտասան և պատմագիր»:

Յեթե այս վկայությունն էլ չունենայինք, այնուամենայնիվ կարելի յեր հաստատողապես ապացուցանել, թե Փարպեցու գրչից է դուրս յեկած այդ Բուղրը. պա՛տճառ, սորա վոճը, նո՛ւյն է Փարպեցու Պատմության վոճի հետ. Սուրբ Գրքի նո՛ւյն վկայությունքը, նո՛ւյն ակնարկությունքը միորինակ տեսնում ենք և՛ Պատմության և՛ Բղրին մեջ: Մենք հավաքել ենք, ինչ վոր այս Բղրի և Պատմության մեջ միորինակ բաներ կան. վկայություն, ակնարկություն, Ս. Գրքից փոխառություն, ձև, վոճ և այլն. բայց յերկարությունից փախչելով հետ դրինք այս անգամ, պահելով հրատարակել Փարպեցու Պատմության թարգմանությանը հետ:

Ինչպես Բղրի ապած բնագիրը կարդացողներին հայտնի չե, պ. Եմինը հրատարակելով այս Բուղրը արել է, նախ, մի բանի սրբագրություններ, յերկրորդ, գրել է մի բանի ծանոթություններ և յերրորդ, մի հառաջաբանություն:

Պ. Եմինի այս յերեք տեսակ գործողությանց մեջ էլ կան բաներ, վորոնց բնա՛վ չենք կարող համաձայնիլ. այս պատճառով, յերբ թարգմանեցինք այս Բուղրը, հարկ յեղավ հրապարակել թե՛ մեր անհամաձայնությու-

նը և թե սորա պատճառները։ Յեվ ինչ վոր սոցանից զատ հարկավոր համարեցինք գրել, այդ բոլորը կարդացողի ձեռքին և այժմ։

Թղթի թարգմանության ժամանակ, թարգմանեցինք նաև Ս. Գրքից բերված վկայությունքը. բայց սակայն, բացատրության մեջ պահեցինք վոչ միայն բուն Ս. Գրքի խոսքերը, ուղղակի արտագրելով Աստվածաշնչից և տեղերը ցույց տալով յուրաքանչյուրի, այլ յերբեմն մեջ բերինք Թղթի բնագրի խոսքերն էլ, յեթե վորևիցե պատճառով հարկավոր թվեցավ։

Սուրբ Գիրքը բացի վորպես վկայություն բերելուց, Փարպեցին անում է զանազան ակնարկություններ Ս. Գրքում յեղած բանների վրա. բացատրության մեջ մենք հանդես հանեցինք այդ բոլորը, շատ անգամ արտագրելով Ս. Գրքի այն տեղերը և յերբեմն, յեթե յերկար եյին, լո՛կ տեղերը ցույց տալով։

Շատ տեղ էլ Ս. Գրքից ձևեր և վոճեր և փոխ առնում Փարպեցին. մենք այդ տեղերն էլ ցույց տվինք, արտագրելով վորպես Թղթի բնաբանը նույնպես և Ս. Գրքի խոսքերը. և սորա պատճառը մեր բացատրության մեջ հայտնած ենք մի տեղում, (§[38])։

Կարդացողը, յերբեմն վկայություններ պիտի տեսնե մեր բացատրության մեջ, վոր մենք ուրիշ գրքերից ենք առած. չհամենալով ամեն անգամ վկրկնել թե մեր գործ դրած այս կամ այն գիրքը տպված և այս կամ այն տեղում և կամ այս ինչ թվականին, մենք միանգամ այստեղ ենք դնում այդ բոլորը, վոր կարդացողը, յերբ բացատրության մեջ տեսնե այդ գրքի անունը, իմանա թե ինչ որինակ և յեղել մեր ձեռքում, և թե վո՛ր տպագրության յերեսներն ենք ցույց տալիս։

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Կ. Պոլիս տպած 1709. հրատարակության Մարսուանցի Գրիգոր դպրի Աղեքսանդր կաթողիկոսի հանձնարարությամբ։

ՅԵՂԻՇԵ վարդապետ, Մոսկվա, 1861. հրատ. պ. Հ. Քաթանյանց։

ԹՈՎՄԱ ԱՐՏՐՈՒՆԻ, Պատմ. տաճն Աւծրուեաց, Կ. Պոլիս, 1852. հրատ. Թանդարանին վերածնության յՕրթա-գյուղ։

ԽՈՐԵՆԱՑԻ ՔԵՐԹՈՂԱՀԱՅՐ, Պատմ. Հայոց, Ամստերդամ 1695 ին, հրատ. Վանանդեցի Թոմմա յեպիսկոպոսի։

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՋԱԿԵՑԻ, Մոսկվա, 1858, հրատ. պ. Վ. Հովհաննիսյանց։

ԿՈՐՅՈՒՆ վարդապետ, Վենետ. 1833, հրատ. Մխիթարյանց։

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, Պատմ. Հայ. Վենետ. 1793, հրատ. Մխիթարյանց։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, Պատմ. Հայ. Մոսկվա, 1853, հրատ. պ. Մ. Եմին։

ՋԱՄՋՅԱՆ Հ. Միքայելի «Հայոց Պատմություն» անունով ամենին հայտնի յերեք հատոր խմբագիրքը, վոր մեկ անգամ և տպվել և էլ չպիտի տպվի։

ՍԵԲԵՈՍ յեպիսկոպոս, (Պատմ.) Ի Հերակլն, Կ. Պոլիս, 1851, հրատ. պ. Թ. Մ. Միհրդատյանց։

ՍՈՒՐԲ ԳԻՐՔ (Աստվածաշունչ), Վենետ. 1805, 4 հատոր, հրատ. Հ. Հովհ. Զոհրապյան վարդապետի։

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ, (Ասողիկ), Փարիզ, 1859, հրատ. Արժ. Շահնազարյանց Կ. վարդապետի։

ՎԱՐԴԱՆ վարդապետ, Հավաքումն Պատմության, Վենետ. 1862, հրատ. Մխիթարյանց։

Մեզ մնում է այստեղ հանդիսաբար հայտնել մեր անկեղծ շնորհակալությունը այն պարոններին, որ կամակար հոժարությամբ ուղարկեցին մեզ վերը գրված գրքերը, ո՛վ ի՛նչ ուներ։ Մի քանիսը այդ գրքերից, ինչպես ամենին հայտնի է, աղճատված ձեռագիրներից են տպված. այս բոպեիս ավելի լավ գրինակ չունենալով մեր ձեռքում, գո՛հ լեզանք գտնվածով. հայտնի է թե «առ ի չգոյէ Աստուծո ի մեջ Իսրայէլի առ ճանճիկ աստուածն Ակկարոնի դիմեցին»։ Դեռ լա՛վ է, որ այս հեռավոր հյուսիսում այսքանն էլ գտնվում է։ Կրկի՞ն շնորհակալություն մեր բարեկամներին։

§ 2. Այս անանուն հառաջաբանը, ինչպես նորա բովանդակությունը տեղիք է տալիս յենթադրել, դրել է մի արժանավո՛ր մարդ, որ քա՛ջ էր ճանաչում Ղազար Փարպեցու արժանավորությունը։ Անտարակո՛յս, նորան ենք պարտական, որ այս հրաշալի Թուղթը կարդում ենք այսօր մենք, մեր նախահարց որերից հեռացած, նոցա սրտերից ոտարացած, կորած և շվարած վորդիքս։ Այդ պատվական մարդը միտք է արել, որ Փարպեցու Պատմության քամակում դնե և նորա այս Թուղթը, որ, մորմոքվելով ենք ասում, մի քանի տեղերում աղճատված է այսօր, և որ ավելի ցավելի՛ն է յերկու թերթ էլ իսպառ պակաս։

Շահխաթունյան Հովհաննես սրբազան յեպիսկոպոսը, գտել է այս Թուղթը Փարպեցու Պատմության քամակում։

Հառաջաբանը տալիս է մեզ մի քանի տեղեկություններ, առանց վորոնց ավելի պիտի մթներ մեր համար Թղթի բովանդակությունը։ Հառաջաբանը կարդացողը պետք չե՛ վոր հակասություն համարեն նորա մեջ հարևանցի հիշված բայց Թղթում իսպառ չեղած բանները։ Առհասարակ, այս հիշատակարաններից յենթադրելով միայն պիտի գուշակել այն դարը հանգամանքը, վորոնց մեջ փակված եր Փարպեցին։ Նորա Թուղթը և հառաջաբանը, պարզ յերևում է, վոր պահել են իրենց մեջ յեղած բաների հազիվ մի հարյուրերորդ մասը. և այս է պատճառը, վոր տեղ տեղ անհամականալի յե մնում մեզ Թուղթը, վորովհետև մենք չգիտենք այն բաները, վորոնց վրա ակնարկում է Թղթի հեղինակը։ Խաղաղությո՛ւն և այդ հառաջաբանը գրողի տասնևհինգ դարվա վոսկորներին, հանգի՞ստ հավիտենական։

§ 3. «Քննեցէ՛ք զգիրս. զի դուք համարիք նոքօ՛ք ունել զկեանսն յաւիտենական»։ Աւետ. Յովհ. գլ. Ե, համար 39։

§ 4. Բնագրում այսպես է այդ վկայությունը. «որ հանէ զպատուականն յանարգէ, բերան իմ եղիցի». (յեր. 35), Ս. Գրքում այսպես «Եւ եթէ հանցես զպատուականն յանարգէ, իբրև զբերան իմ եղիցես»։ Մարգ. Երեմ. գլ. ԺԵ, համար 19։ Մեր Աստվածաշնչի վկայությունը, վոր բերինք այստեղ, բա՛ռ առ բառ ուղի՛ղ է բո՛ւն հրեական բնագրի հետ։ Թումա Արծրունին այս-

պես և գործածում այս վկայությունը. «որ հանէ զպատուականն յանարժանէն իբրև զբերան իմ եղիցի». (յեր. 334) վոր բավական մոտ և երեմիայի մարգարեության նախադրության խոսքերին ժե. «եթէ հանցես զպատուականն յանարժանէ՝ իբրև զբերան իմ լիցիս»:

§ 5. Բնագրի խոսքը. «Ի շնորհացն որ ելանէին Ի բերանոյ նորա». (յեր. 36) հիշեցնում և մեզ «ընդ բանս շնորհացն, որ ելանէին Ի բերանոյ նորա». Աւետ. Դուկ. գլ. Դ, համար 22:

§ 6. Պ. Եմինը, վոր «Ղազարի կյանքի մանրամասնությունքը» ասելով, դրեթե Փարպեցու բոլոր Թուղթը ներս և առել իր հառաջաբանի մեջ, վորպես նաև Թղթի անանուն հառաջաբանը, գալով այս Նոր բաղաիին այսպես և ծանոթաբանում. «կամ զվաղարշապատ խմանալ պարտ և (տես Պատմ. Ղազարայ յեր. 307) և կամ զմեծագային Նորէ»: Մեզ թվում և թե պ. Եմինը հիմք չունի Նորէի խոսքը հանել յերբ քանը Նոր քաղաքի վրա յե, և յերբ Նոր քաղաքի էլ վաղարշապատը լինելու վկայությունը ինքն և բերում Փարպեցու ատույգ Պատմությունից: Բանին չվերաբերված, և մանավանդ անհիմն, յենթադրությունքը սար ու ձոր են ձգում կարդացողի միտքը. մեզ ցավելի՛ յե, վոր պ. Եմինի այս վոճը սիրելը շատ անգամ պիտի ստիպե մեզ յերկար խոսել հիմնավոր փաստարանությամբ:

Յեթե պ. Եմինը տարակույս ունի Փարպեցուն հանձնված սուրբ Կաթուղիկե յեկեղեցու Վաղարշապատում կամ Նորքում լինելու վրա, ասել և թե պարզ ըմբռնողություն չունի այն մասին, թե ի՛նչ յեկեղեցի յեր Փարպեցուն հանձնվածը, վորովհետև թույլ և տալիս յերկու տեղ Վաղարշապատ և «մերձակայն Նորք»:

Թե Փարպեցու Թղթի բնագիրը և թե մեր թարգմանության կարդացողների միտքը հանգստացնելու համար, շտապում ենք հայտնել, թե այն սուրբ Կաթողիկե յեկեղեցին, վոր Մամիկոնյան Մեծ Վահանը հանձնել եր յերանելի Փարպեցուն, վո՛չ ավելի և վո՛չ պակաս և նույն այն ս. Կաթողիկե յեկեղեցին, վոր այսոր հայտնի յե մեզ ս. Կաթողիկե Եջմիածին անունով:

Ամենին հայտնի յե, վոր հին դարերում Եջմիածին անունը չկար, կամ գո՛նե դպրության մեջ չե գործածվել: Ագաթանգեղոսը և Ղազար Փարպեցին ստեպ հիշելով Վաղարշապատի յեկեղեցին, անվանում են նորան Կաթողիկե: Սեբեոս յեպիսկոպոսը, յոթներորդ դարում, անվանում և նորան Կաթողիկե: Հովհաննես Կաթողիկոսը, իններորդ դարում, անվանում և նորան Կաթողիկե: Ասողիկը, տասն և մեկերորդ դարում, անվանում և նորան Կաթողիկե. նույնպես և ուրիշ հեղինակներ, Կաթողիկե, բայց Եջմիածին և վո՛չ մեկը: Մեր խնդրից դուրս և ցույց տալ թե յե՛րբ և յերևում մեր գրքերում առաջին անգամ Եջմիածին անունը:

Թե Նոր քաղաքը նո՛ւյն Վաղարշապատն և, այդ մասին մենք չենք ուզում ուրիշ վկայություններ բերել,— թեև այո՛, կարո՛ղ եյինք,— բացի այն վկայությունից, վոր ինքը պ. Եմինը բերել և, ցույց տալով Փարպեցու Պատմության 307 րդ յերեսը: Ահավասիկ Փարպեցու խոսքերը. «Եւ օրհնեալ զա-

մենեսեան, նախ գային Ի քաղաքն Վաղարշապատ, որ այժմ անուանի Նոր Նախամ»: Այս խոսքերից հետո, ամեն ուրիշ վկայություններ ավելորդ են Նոր քաղաքի և Վաղարշապատի նույնության ապացուցանելու համար. վորովհետև ճշմարտությունը աչքի հայտնի չե:

Թե ի՛նչ ժամանակից և սկսվել Վաղարշապատի Նոր քաղաք կոչվիլը այդ մասին պատմությունը վոչինչ չե ասում մեզ. բայց հավանականաբար կարելի չե չենթադրել թե այդ չեղել և մեր քրիստոնեությունից հետո և շատ կարելի չե թե ս.Գրիգոր Լուսավորչի և Տրդատի որով Վաղարշապատը չեղած լինելով կենտրոն քրիստոնեության ամենայն հայոց, վորպես նաև առաջին որորոց հայկական ընդհանուր քրիստոնեության, փոխել են նորա անունը, վոր կռապաշտության ժամանակից եր մնացած և դրել են Նոր, թերևս խորհրդով փոխ առնելով այդ անունը Ս. Գրքից: «Եւ գրեցից Ի վերայ նորա զանուն Աստուծոյ իմոյ, և զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ՝ զնո՛ր Երուսաղեմի, որ իջանելոց է յերկնից Աստուծոյն իմոյ. և անուն նորա Նոր»: Յայտն. գլ. Գ, համ. 12: Թե մեր բազմերախտ և առաքելանման Լուսավորիչը ամենայն նախանձահուղությամբ հետամուտ եր յերբեմն քարոզությամբ հեզության հոգով և յերբեմն թագավորական հրամանով զորքով և զենքով ջնջել և անհետացնել հավիտյանս հավիտենից ամեն բան, վոր կարող եր հիշեցնել կռապաշտությունը, այդ ապացույցի կարուտ խնդիր չե. վորովհետև պատմության ձեռքով արդե՛ն ապացուցյալ ճշմարտություն է: Բայց սակայն չենք կարող ասել թե բո՛ւն ս. Լուսավորչի որով և չեղել այդ անվանափոխությունը. ըստ վորում նորա սկսածը կատարելագործեցին նորա առաքելանման վորդիքը և թոռները:

Վաղարշապատ քաղաքը ունի այսօր իր սեփական չեկեղեցին. և ս. Կաթողիկե Եջմիածինը էլ չե կոչվում այդ քաղաքի անունով: Այսօրվա մեր ամենայն հայոց չեկեղեցյայց մայրը բնա՛վ Վաղարշապատի մեջն էլ չե, այլ նորա հարավային կողմում, առանձին և շենից մեկուսի: Բայց սակայն այդ չեկեղեցին շինվել է Վաղարշապատի կենտրոնում. և այս մասին կան ստույգ վկայություններ. թեև Վաղարշապատից մնացած գեղը հեռացել է այժմ նորանից: Եջմիածինը հիմնված է ս. Լուսավորչի ձեռքով բո՛ւն Վաղարշապատի մե՛ջ տեղը, մոտ թագավորական պալատին, վոր գուցե ընկնում եր չեկեղեցու հարավային արևելյան կողմը, ըստ վորում այդ կողմից փակված մի դուռ, մինչև այսօր էլ ավանդությամբ, կոչվում է «Տրդատա դուռ»:

Ս. Եջմիածնի արևմտյան կողմից, տակավին չերևում է այսօր, Վաղարշապատի հողե պարսպի մնացորդը, քաղաքից ավելի հեռու քան թե Վանքը, հյուսիսից դեպի հարավ ուղղված: Ղազարապատից դուրս գալով, չեթե իսկույն դեմդ շրջես արևմուտք և աջ կողմդ սրբազանագույն սյունհոդոսի շինվածքը, իսկ ձախ կողմդ Ներսեսյան լիճը բռնած առաջ գնաս բավական տեղ դեպի արևմուտք, այն ժամանակ հին պարսպի մնացորդը կը հանդիպի քեզ դե՛մ հանդիման, Քասաղի ափի վրա: Թե վո՛րքան չերկայնվում եր տակավին այդ պարիսպը դեպի հարավ չե կարելի այլ ևս հաստատ

ասել. բայց յերեվի թե տակավին շատ առաջ եր գնում, վորովհետև ս. Գայիանյանց վանքը բավակա՛ն հեռու չի պատպի մնացորդից, վոր գրեթե վերշանում է լճի մոտ: Այդքան ել հերիք է ապացուցանելու համար թե ս. Կաթողիկե եջմիածինը Վաղարշապատ քաղաքից դուրս չեր այլ նորա մեջ:

Բայց ի՛նչ հարկավոր են մեզ հողեղեն վկայություններ, յերբ դրավոր, պարզ և բացահայտ հիշատակարան կա այդ մասին:

«Եւ տեսիլ մի ահաւոր մարդոյ... և ՚ի ձեռին իւրում ունի մի մեծ ոսկի.... և ելին եհաս մինչև մոտ ՚ի յատակս երկրիս, ՚ի շինամէջ հաղարիս.... և տեսանեմ ՚ի մէջ հաղարիս մուտ յապարանսն աւրուն խարխափաձև ճախարակաձև խարիսխ ոսկի, մեծութեամբ իբրև զմեծ մի բլուր և բարձր մինչև յոյժ. և ՚ի վերայ նորա սիւն մի հրեղէն և ՚ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ և խաչ լուսոյ ՚ի վերայ նորա»: (Ագաթանգեղ. յեր. 329):

Սորանից մենք պարզ տեսնում ենք, որ վոսկի խարիսխ ունեցող հրեղեն սյունը յերևել է Վաղարշապատի կենտրոնում: Մյուս մնացած յերեք սյունքը, վոր վոսկի խարիսխ չունեին և մենք մեջ չբերինք, վորովհետև մեր նպատակին հարմար չեր, Վաղարշապատից դուրս եյին. մինը Գայիանյանց, մյուսը Հռիփսիմյանց նահատակված տեղերում, և յերրորդը նոցա բնակարանի տեղում, հնձանի մոտ, ուր նահատակվեցավ Հռիփսիմյանց մի ընկերը և ուր այժմ տեսնում ենք Շողակաթի յեկեղեցին:

«Որոյ սեան խարիսխն ոսկի էր և նորին սիւնն հրեղէն և թակաղաղն ամպեայ և խաչ լուսեղէն ՚ի վերայ նորա: Ոսկի խարիսխն վէմն հաստատութեան անշարժութիւն է և սիւնն հրեղէն Կաթողիկէ եկեղեցի է»: (Նույն. յեր. 332):

«Եւ տեղին այն տաճար լիցի Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց և արոտ բանաւոր ոչխարաց». (Յեր. 333):

«Շինեսջի՛ր տաճար անուանն Աստուծոյ. ՚ի տեղւոն որ ինձ ցուցաւ, որ սիւնն հրեղէն ունէր ոսկի խարիսխ». (յեր. 337):

«Եկա՛յք զնկատեալ տեղին տէրունական տանն և մեզ հրամայեալ, ՚ի մէջ առեալ ՚ի պատիւ վակեսցուք. թագաւորն և ամենայն ժողովրդովքն հանդերձ երթալ հասանէր ՚ի ցուցեալ տեղի հրեղէն սեանն ոսկիական խարսխին»: (Յեր. 344):

«Հասանէր յառաջին դասատակերտան իւր յղոտատակն այրարատեան գաւառին ՚ի Վաղարշապատ բաղարի.... և զնկատեալ տեղի տանն Աստուծոյ ղցուցեալն նման յԱստուծոյ ՚ի տեսլեանն, զյառաջագոյն դրոշմեալն իւր և կանգնեաց անդ զեկեղեցին Աստուծոյ»: (Յեր. 375):

Այս պարզ և բնա՛վ յերկբայության տակ չընկնող վկայությունքը ապացուցանելով ապացուցանում են, վոր ս. Գրիգոր Լուսավորչի հիմնած և շինած Կաթողիկե յեկեղեցին եր Վաղարշապատի մեջը և վոչ նորանից դուրս, ինչպես այսոր նույն տուրը յեկեղեցին:

Մեր պատմության մեջ անդադար տեսնում ենք, վոր Վաղարշապատի Կաթողիկե յեկեղեցին, վորպես նախամեծար մայր յեկեղեցի, հանդիսարան

և լինում յերևելի դեպքերի։ Հայոց կաթողիկոսքը, մարզպանքը, նախարարքը, զորքը և այլն և այլն մի ուրախական տոնի պատճառով, նախ և առաջ իրենց ուխտերը և աղոթքը կատարում են Վաղարշապատի սուրբ Կաթողիկե յեկեղեցում, և հետո կույսերի վկայարաններում։ Ինքը Մեծ Վահանը, յերբ Պարսից Վաղարշ թագավորից Հայոց ապարանքտուբյունը գտած Պարսկաստանից Հայաստան վերադարձավ, նախ և առաջ գնաց Վաղարշապատ քաղաքը, ուր իր սովորության համեմատ, ինքը և իր հետ յեղած ուխտապահ և քաջարանց նախարարքը մի քանի որ մնացին այնտեղ և իրենց ուխտերը և նվերները կատարեցին նախ Կաթողիկե յեկեղեցու մեջ և ապա կույսերի նահատակված տեղերում։ (Տե՛ս Փարպ. Պատմ. Հայ. յեր. 307—8)։

Կարելի՞ բան է ասել, թե այդ Վաղարշապատի Կաթողիկեն չեր նույն իսկ այսորվա Կաթողիկե Եջմիածինը ս. Լուսավորչի հիմնած և շինած հայկական նախամեծար յեկեղեցին։ Ի՞նչ ուրիշ յեկեղեցի առավել հարմարությամբ կարո՞ղ եր հանդիսարան լինել այն փառավորությանց, վորով փառավորված քաջարանց նախարարքը իրենց գլխավորի և սուրբ Հոգիհանն Մանդակունու հետ այնտեղ վաղելին իրենց աղոթքը, դոհությունը և ուրախական արտասուքը, վորպես անուշ հոտ, Աստուծուն վեր ուղղելու, վոր Գրիգոր մեծ նահատակի բարեխոսությամբ պարգացրել եր թե՛ քրիստոնեական խաչի և թե՛ Կարմիր Վարդանի դրոշի պարծանքը, վոր այն միջոցին գտնվում եր նորա սիրելի յեղբոր վորդու ձեռքում։

Վաղարշապատի մեջ հավաքված բոլոր յեկեղեցական ժողովները լինում են սուրբ Կաթողիկեյի յեկեղեցում։ Մեր մե՛ծ հայրապետ Բաբգեն Կաթողիկոսը, Քաղկեդոնի ժողովը դատելու համար, Վաղարշապատի նո՛ւյն սուրբ Կաթողիկե յեկեղեցու մեջ հավաքեց այն սուրբ ժողովը, վորի վերջին խոսքը եր անա՛թեմա Լևոնի առումարին։

Կարելի՞ բան է թույլ տալ, թե, այսորվա Կաթողիկե Եջմիածինը թողած, կարող եր այդ ժողովը դումարվիլ մի այլ յեկեղեցում։ Ամենին հայտնի յե թե ի՞նչ ծա՛նր և մեծակշիռ խորհուրդ ունի Վաղարշապատի վերը հիշված սուրբ ժողովը մեր ազգի կյանքի մեջ։ Այդ ժողովին եր ապաստան ս. Լուսավորչի շինած նավը. և այդ ժողովը դարձյալ հեռատես իմաստությամբ նավապետելով նորան և փրկելով Բյուզանդյան ճախինններից և Լևոնյան խարդավանական առումարի ծանծաղներից, ուղեց նորա ընթացքը նո՛ւյն գծի վրա, ուր կանգնեցրել եր նորան մեր բազմերախտ Հայրը, վոր մնա՛ց հնչպես վոր կար սկզբից, նո՛ւյն անսասակ ջրերում, վորոնց աղբյուրը եր ինքը մեր Փրկիչը, և վորոնք սկզբնաբար խառնվելով Բադդեոս և Բարթողիմեոս առաքյալների և նոցա հարազատ հաջորդների արյունով վոռոգել եյին Հայաստանի կռապաշտությամբ կոշտացած հողը։

Մենք չենք կարող թույլ տալ, վոր այդ ժողովը յեղած լիներ մի այլ յեկեղեցում, մանավանդ, վոր Բաբգեն կաթողիկոսը ինքը Դվինն նստելով, ժողովը չեր կարող ուրիշ մտքով գումարել Վաղարշապատ, յեթե վոչ ս. Լուսավորչու ձեռքով հիմնված կաթողիկե յեկեղեցու մեջ կատարելու համար

այն մեծախորհուրդ իրողությունը, ըստ վորում Վաղարշապատի ս. Կաթողիկե եկեղեցին մայր եր ամենայն Հայոց և աթոռ քահանայապետության, թեև այն միջոցին քաղաքական պատճառներից ստիպված Վաղարշապատ չեյին նստում մեր կաթողիկոսքը։

Հովհաննես կաթողիկոսը այսպես և վկայում մեր խոսքին. «Մեծ հայրապետան Հայոց Բաբգէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, վրաց և Աղվանից՝ ի Նոր Բաղարի՝ ի Սուրբ Կարապետի՝ ի մայրն եկեղեցեաց Հայոց»։ (Յովհ. կաթ. Պատմ. Հայ. յեր. 36)։ Տեսնո՞ւմ եք Նոր քաղաքի սուրբ Կարապետի անունը տալով, իսկույն հարում է՝ ի մայրն եկեղեցեաց Հայոց։

Սառույթ և Փավստոս Բյուզանդացին (դպր. Գ. դլ. ԺԴ) Տարոնի սուրբ Կարապետի— Գլակա վանքի— վրա խոսելով կոչում է նորան ևս «Մայր եկեղեցեացն ամենայն Հայաստանեայց». բայց այս այն պատճառով միայն, ինչպես ինքը Փավստոսն էլ հայտնում է, վոր առաջին և ժամանակով բոլոր հայոց եկեղեցիներից։

Արդ, բացի այսորվա ս. Կաթողիկե եջմիածինը, ի՞նչ ուրիշ եկեղեցի կարող եր լինել Վաղարշապատում, վորի համար Հովհաննես կաթողիկոսը ասեր «Հայոց եկեղեցիների մայրը»։

«Նոյնն (Վահան) և՝ ի ժամանակս իշխանութեան իւրոյ զմեծ Կաթողիկէ եկեղեցին որ՝ ի Հայս վերստին մեծապէս նորոգեաց»։ (Ասողիկ. յեր. 82)։

Ի՞նչ ուրիշ եկեղեցու համար կարելի յեր այսպես խոսել բացի ս. Կաթողիկե եջմիածնից։

Ամենին հայտնի յե, վոր յերանելի Կումիտաս կաթողիկոսը, Հոիփսիմյանց հրաշալի «Անճինքի» այն անմահ յերգիչը, յոթներորդ դարու սկզբում սրբատաշ քարերով շինեց, վորպես Հոիփսիմյանց հոյակապ վկայարանը, նույնպես և Վաղարշապատի Կաթողիկե եկեղեցու գմբեթը, վոր առաջ փայտից եր շինված*։ Թողնելով ուրիշների վկայությունքը, յեթե միայն մեջ բերենք արժանահիշատակ Սեբեոս յեպիսկոպոսի ասածը, վոր գրեթե ժամանակակից եր Կումիտասին, յեթե միայն հիշենք Հովհաննես կաթողիկոսի խոսքերը, հերիք և վոր անդարձ փարատվի ամենայն տարակուսյո։

«Վերացոյց (Կումիտաս) և զփայտակերտս սրբոյ Կաթողիկէին. նորոգեաց և զվախտան որմոյն. շինեաց զքարայարկան»։ (Սեբեոս, յեր. 140)։

«Յետ որոյ ապա քակեալ ասրա (Կումիտասայ) զփայտակերտ գմբէթ Սրբոյ Կաթողիկէիին, որ՝ ի Վաղարշապատ խաղարի շինէ զնա գեղեցկայարմար և շքեղատեսս կրփագոյ քարամբք». (Յովհ. կաթ. Պատմ. յեր. 43)։

Յերանելի Կումիտաս կաթողիկոսի սրբատաշ քարերով շինած փառավոր

---

*Թղթի հատաջարանի մեջ հիշված եկեղեցու վայտակերտը, վոր վնասվել եր կրակից, մենք համարում ենք ս. եջմիածնի գմբեթը, վոր ինչպես յերևում է, երկրաշարժից հետո, վերստին փայտից է շինվել, որ վայտե մնացել է մինչև յոթներորդ դարու սկիզբը, վոր Կումիտաս կաթողիկոսը խափա վերցնելով փոխանակը շինել և այն հոյակապ քարակառույց գմբեթը։

դմբեթը, մեր այսօրվա ս. Էջմիածնի գմբեթը լինելը, ամեն հարցնողի կարող է պատմել Էջմիածնի նաև վերջին մոնթը։

Ավելորդ է ասել, որ Վաղարշապատի մեջ յերկու հատ չեր այլ մեկ հատ սուրբ Կաթողիկե անունով յեկեղեցի, և այն մեր մայր յեկեղեցին, որի համար Փարպեցու Բուզանդի հատաջաբանն էլ ասում է. «Շնորհէր (Վահան) նման (Դազարու) զհոյակապ և զականատուր տեղին ի նոր քաղաքի, որում անուն էր Սուրբ Կաթողիկէ եկեղեցի»։ (Յեր. 36—7)։

Մենք կարող եյինք և ուրիշ վկայությունք բերել մեր ասածները ապացուցանելու համար, բայց այսչափն էլ գուցե ավելորդ յերևի վոմանց. խոստովանում ենք. բայց ի՛նչ անես, յերբ Փարպեցու Բուզանդը կարդացողին սար ու ձոր են ձգել «կամ զվաղարշապատ և կամ զմիրձակայն նորոք» ասելով։

Մեզ գուցե ասեն,— իհարկե վոչ պ. Եմինը,— թե ս. Էջմիածինը կաթողիկոսական աթոռ լինելով, ի՞նչպես կարելի յե վոր Հանձնվեր մի մասնավոր վարդապետի տեսչության։

Պատասխանենք կարճառոտ. Փարպեցու ժամանակ, վոլորես և նորանից հետո, մեր կաթողիկոսքը նստում եյին Դվին քաղաքում, ուստի բնականաբար, վանահոր ձեռքով պիտի վարտավարվեր սուրբ Կաթողիկեն, ուստի և մեծ Վահանը ամենայն իրավունքով հանձնել եր Փարպեցու պես մի մարդու, վոր այն ժամանակ, ինչպես վկայում է Բուզի հատաջաբանը «արուեսակ աստղի պես էր փայլում»։ «Եւ զիմ շնորհս քան զբազումս պարեգոտաւորաց» (զօրացուցեալ պայծառացոյց Վերին Խնամակալութիւնն) ասում է ինքը Փարպեցին, իր Բուզում, պավղոսյան գեղեցիկ անզգամությամբ։ (Յեր. 42)։

Պատճառ ունինք յենթադրելու, թե Փարպեցին առաջինը չեր վոր կառավարում եր ս. Կաթողիկե յեկեղեցին, վորովհետև, Վարդանանց Ավարայրի պատերազմից և սուրբ Ղևոնդյանց նահատակությունից հետո, կաթողիկոսական աթոռը փոխադրվել եր Դվին. իսկ այդ թվականներից մինչև մեծ Վահանի մարդպանությունը ավելի քան թե յերեսուն տարի կա, հայտնի յե թե այդ միջոցում մասնավոր մարդոց, այսինքն յեպիսկոպոսների կամ արժանավոր վարդապետների ձեռքով եր կառավարվում ս. Կաթողիկեն։ Բացի սորանից, Փարպեցու Բուզի մի անհասկանալի տեղում կա ակնարկություն մի մարդու վրա, վոր շատ անգամ կամ շատ ժամանակ կառավարել եր այդ յեկեղեցին. ըստ վորում այսպես է ասում. «քանզի յոլով նորա արբանեկեալ էր զպէտս տեղւոյդ, հարցցի թէ կայ ուրէք և ասացի» (յեր. 55)։ Մենք չենք հասկանում միայն, թե ո՞ւմ է վերաբերում նորա դերանունը։

Իսկ թե Փարպեցին վերջին վարտավարիչը չեր, այդ մասին ըրական ապացույց ունինք։ Փարպեցու հալածվելուց առավել քան թե հարյուր քսան տարի հետո, Կումիտաս կաթողիկոսի որով կառավարվում եր այդ յեկեղեցին մի Հովհաննիկ անունով վարդապետ։ Սեբեոս Յեպիսկոպոսը պատմելով Կումիտաս կաթողիկոսի վերը հիշված նորոգությունքը ասում է. «Այս եղև յամս Յովհաննկան վանաց երիցու Սրբոյ Կաթուղիկէին» (Սեբեոս, յեր. 141)։

Մեզ կարող են ասել, թե Փարպեցու Թղթում կան տեղեր, որոնք Փարպեցուն հանձնված տեղը չեն թողարկել են տալիս մի նոր հիմնարկության։

Ահավասիկ այդ տեղերը. «զի ամենայն կահիւ և կազմածով եթէ սակաւ մի երևէի նուազեալ քան զայնոսիկ որ յերկերիւր ամէ շինեալ վանորայքն չհամարէի զանձնս արժանի կալոյ.... Այլ առաւելապոյն այր մի Ակիթ անուն որ եկեալ ի տեղիդ ի Գարդմանայ վանաց ի նմին աւուր յորում հիմն արկաւ տեղւոյդ». (յեր. 56, 57)։

Նախ, ինքը Փարպեցին, ս. Կաթողիկե յեկեղեցու վերաբերությամբ այսպես է փարատում ամենայն տարակույս. «կատարէր զսովորական ուխտս և զպատարագս ի սուրբ եկեղեցւոյն Կաթողիկէի զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ, զնացեալ զործ նախնեացն իւրոց քաջ զորավարն Հայոց Մամիկոնեան Վահան». (Փարպ. Պատմ. յեր. 273)։ Սորանից մենք տեսնում ենք, որ մեծ Վահանը, մոչ թե չեզած տեղում նո՛ր և շինել Վաղարշապատի Կաթողիկե յեկեղեցին, այլ թե նորոգել և հիմն ի վեր։ Յերկրորդ, Թղթի հատաջաբանը մեզ ասում է, թե մեծ Վահանը Փարպեցու տեսչության հանձնել է «զյոհակապ և զսքանչար տեղին ի նոր քաղաքի որում անուն էր սուրբ Կաթողիկե յեկեղեցի վանօրէն». (յեր. 37)։ Ինքը Փարպեցին հիշելով իր կահ կարասիքը և կազմածը, ո՛չ սուրբ Կաթողիկե յեկեղեցուն այլ վանքին վերաբերելով ավելցնում է. «եթէ սակաւ մի երևէի նուազեալ քան զայնոսիկ, որք յերկերիւր ամէ շինեալ վանորայքն». և թե «գիտեն զայս բնակեալքն ընդ իս»։

Վաղարշապատի ս. Կաթողիկե յեկեղեցին ս. Լուսավորչի ձեռքով հիմնըվեցավ, ո՛չ վորպես այժմյան հասկացողությամբ վանք կամ վանքի յեկեղեցի կամ կրոնավորների բնակարան, այլ վորպես մայր յեկեղեցի Թագավորանիստ Վաղարշապատի, որով և ամենայն Հայաստանյայց։ Ագաթանգեղոսը, վոր մանրամասն և շատ տեղ էլ անունով պատմում է այսպիսի բաները, բնա՛վ չե խոսում ս. Կաթողիկեի մոտ կրոնավորների բնակարան լինելու մասին։ Մեզ թվում է, թե Փարպեցու «ի նմին աւուր յորում հիմն արկաւ տեղւոյդ» խոսքը վերաբերվում է ս. Կաթողիկե յեկեղեցուն վո՛չ, այլ վանքին, այսինքն կրոնավորների բնակարանին, վոր Ակիթն էլ Գարդմանի վանքից գալիս և այնտեղ է բնակվում. ինքը Փարպեցին «և բնակեալքն ընդ նմա»։ Հայտնի չե թե սոցանից վոչ մինը չե բնակվել բո՛ւն յեկեղեցու մեջ, այլ այն շինվածքում, վորի անհատատուրյունից «միանգամ և երկիցս ջարդեցաւ բոլոր վահն»։ Այս ջարդված բաներն էլ չենք իմանում յեկեղեցական անոթք, այլ կրոնավորների բնակության սարք ու կապրք։ Ատողիկը ոգնություն է գալիս մեզ, երբ մեծ Վահանի Կաթողիկե յեկեղեցին մեծապես նորոգելը պատմելով հարում է. «զդրաստս կրօնաւորացն բազմացուցանելով, որ Սուրբէնայ անապատն ասի»։ Հայտնի չե, թե երբ բազմացնում եր կրոնավորների թիվը, պիտի այդ բազմության չափով տեղ էլ պատրաստեր, ուստի և անհասկանալի չե Փարպեցու այն խոսքերը, վոր մի նոր հիմնարկության կարող եյին համարել տալ նորան հանձնված վանքը։

Ավելորդ է ասել, որ մենք չգիտենք, թե ինչի՛ համար, յոթներորդ դարում, Սուրենաս անապատը է կոչվում ս. Կաթողիկեի մոտի կրոնավորաց բնակարանը. բայց մեր այս անգիտությունը անվնաս է. կրոնավորների բնակարանը կարո՛ղ էր նաև հինգերորդ դարում Սուրենա անապատ կոչված լինել: Այսպէս էլ կան ս. Էջմիածնի մէջ տեղեր, որ ունին իրենց հատուկ անունը:

Համառոտանենք մեր խոսքը: Փարպեցուն հանձնվել է Նոր քաղաքի ս. Կաթողիկե յեկեղեցին. իսկ Նոր քաղաքը Վաղարշապատն է, և Վաղարշապատի ս. Կաթողիկե յեկեղեցին, մեր այսօրվա ս. Էջմիածինը. ուրեմն Ղազար Փարպեցուն հանձնվածը յեղել է ամենայն Հայոց նախամեծար մայր յեկեղեցին, նույն ինքը սուրբ Կաթողիկե Էջմիածինը:

Այսպես բացահայտ լինելով այս բանը մեր պատմության մեջ, որ անտարակո՛ւս անհայտ չե՛ր և պ. Եմինից, մենք զարմանում ենք այն ծանոթաբանության վրա, որ պատճառ դարձավ մեզ ակամա այսքան խոսելու— «կամ գ'Վաղարշապատ իմանալ սարսո է և կամ զմերձակայն Նորք»:

§ 7. Բնագրում այսպես է ասած. «յիշելով զբանն Պօղոսի, զի յամենայն ժամ աստուածասէրն առանց խղճի մատց կեցցեն». (յեր. 37): Վո՛չ միայն Պավղոսի Բղթերում, այլ բովանդակ Նոր կտակարանում չկան այս խոսքերը. միայն, Պավղոսը Փելիքս դատավորին այսպես է ասում. «յորում և ե՛ս իսկ ճգնիմ անխիղճ միտս ունել առ Աստուած և առ ամենայն մարդիկ յամենայն ժամ»: Գործք առաք. գլ. ԻԴ. համ. 16: Մեզ թվում է թե Ղազի հառաջաբանը գրողը այս խոսքերն է, որ ուրիշ ձևով առաջ է բերում. պատճառ, բացի սոցանից և վոչ մի նման բան կա, հառաջաբանի հիշած վկայությանը:

§ 8. Այս Համազասպ Մամիկոնյանի ո՛վ լինելը մեզ չե ասում պատմությունը, ուստի մենք չգիտենք և ընթերցողին էլ ասել չենք կարող:

§ 9. Փարպեցին ինքն է յեղել առաջինը, որ յերբոդ է կոչել իր Պատմությունը. առաջին համարելով Ագաթանգեղոսի և յերկրորդ Փավստոս Բյուզանդացու գրածները: Այս դասակարգությունը ուղի՛ղ է յեթե միայն վերաբերեք այդ աշխատությանց ժամանակին կամ նոցա բովանդակած անցքերի ժամանակին: Իսկ թե կամենանք գործի արժանավորությամբ դասակարգել, նայելով նոցա վրա վորպես պատմական աշխատությանց վրա, ապա ուրեմն, այս յերեքի մեջ առաջինն է Ղազար Փարպեցին, վորի պատմությունը ստո՛ւգ, անցքերի դասակարգությունքը պարզ, և ժամանակագրական հաջորդությունքը անշփոթ: Արդարև, Փարպեցու պատմությունը շատ տեղ և մեծ մասով նմանություն ունի Տակիդոսի հոյակապ տարեգրությանց, թե իր ա-նախատակիր վոգու, և թե ճարտարության մասին: Յեվ մեզ թվում է թե այս համեմատությունը էր ամենամեծ դովասանությունը, վոր կարող եյինք տալ Փարպեցու Պատմության, առանց վախենալու յեվրոպական գիտության դատաստանից:

Հայոց մեջ յեղել են հեղինակներ, վոր Փարպեցուն դասել են Յեղիշեյից հետո. յեթե վորպես պատմագիր, Յեղիշեյից, յերկրորդ պիտի համարվի Փարպեցին, այդ մենք չենք ընդունում. պատճառ մի՛ միայն մարդ կա,

վոր կարող և Փարպեկոյց առնուլ նորա առաջնութիւնը, և այդ մարդը է անդուքական Մուվսես Խորենացին։ Բայց մենք մանրամասն կխոսինք այս բաների մասին, յերբ աստուծու աջողելով հրատարակենք Փարպեցու Հայոց պատմության թարգմանությունը։

§ 10. Բնագիրը. «Յորժամ զամենայն արդարութիւնս կատարիցէք՝ ասասչիք, եթէ ծառայք անպիտանք եմք». (յեր. 39)։ Բո՛ւն Ավետարանի խոսքերը. «Յորժամ առնիցեք զամենայն հրամայեալսն, ձեզ ասասջիք, թէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտեա՛ք առնել արարաք»։ Դոմ. Գլ. ԺԻ, համ. 10։

§ 11. «Զի այնպիսիքն սո՛ւտ առաքեալք, մշա՛կք նենգաւորք կերպարանին ի կերպարանս առաքելոց Քրիստոսի. և չեն ինչ զարմանք. քանզի և ինքն սատանայ կերպարանի՝ ի հրեշտակ լուսոյ, և ոչինչ է մեծ, թե և պաշտօնեայք նորա կերպարանին իբրև զպաշտօնեայք արդարութեան, որոց կատարածն եղիցի ըստ գործոց իւրեանց»։ Թուղթ. Պաւղ. առ Կորնթ. երկր. Գլ. ԺԱ։ համ. 13—15։

§ 12. «Քանզի ոչ եմք իբրև զայլսն, որ վաճառական լինին բանին Աստուծոյ, այլ իբրև՝ ի հաստատութենէ, այլ իբրև յԱստուծոյ, առաջի Աստուծոյ, ՝ի Քրիստոս խոսիմք». Թուղթ Պավղ. առ Կորնթ. յերկր. Գլ. Բ. համ. 17։

«Յոր ինչ ոք համարձակիցեն, անզգամութեամբ ասեմ, և ես. Եբրայեցի՞ք իցէն, և ես. Իսրայելացի՞ք իցէն, և ես զաւակ Աբրահամո՞ւ իցէն, և ես պաշտօնեայք Քրիստոսի՞ իցէն, յանդգնագոյնս ասացից, թէ առաւել ևս ես։ Եթէ վաստակօք, առաւել. եթէ գանիւք, և՛ս առաւել, եթէ բանտիւ, աւելի քան զնոսա, եթէ մահուամբ, բազում անգամ։ Ի Հրէից, հնգից, քառասուն միով պակաս արբի. երիցս ձաղկեցայ. միանգամ քարկոծ եղէ. երիցս նաւակո՛ծ եղէ. զտի՛ւ և զգիշեր յանդունդս տառապեցայ. ՝ի ճանապարհս բազում անգամ։ Վի՛շտս ի գետոց, վի՛շտս յաւազակաց, վի՛շտս յազգէ, վի՛շտս ՝ի հեթանոսաց, վի՛շտս ՝ի քաղաքի, վի՛շտս յանապատի, վի՛շտս ՝ի ծովու, վի՛շտս ՝ի սո՛ւտ եղբարց։ ՝Ի ջա՛նս և ՝ի վաստակս. ՝ի տքնութիւնս բազում անգամ. ՝ի ցուրտ և ՝ի մերկութեան։ Թո՛ղ զայլ նեղութիւնսն և զի հանապազ խուժանն ՝ի վերայ իմ կուտէր, և հոգք ամենայն եկեղեցեաց։ Ո՞ հիւանդանայ, և ո՛չ ես հիվանդանամ. ո՞ գայթակղի, և ո՛չ ես տապանամ։ Եթէ պարծել ինչ պա՛րտ իցէ, զտկարութե՛նն պարծեցայց։ Աստուած և հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտէ՝ որ է օրհնեալ յաւիտեանս, զի ո՛չ ստեմ։ ՝Ի Դամասկոս ազգապետն Արետա՛յ արքայի պահէր զքաղաքն Դամասկացւոց ունել զիս. և ընդ պատուհա՛նն վանդակաւ կախեցայ ընդ պարիսպն, և փախեայ ՝ի ձեռաց նորա»։ Թուղթ Պաւղ. առ Կորնթ. երկր. Գլ. ԺԱ, համ. 21—33։

Բացի սոցանից և ուրի՛շ տեղերում առաջ է բերում Պավղոսը*, իր պարծանքները. բայց մենք հերիք համարենք այսքանը։

§ 13. Բնագիրը. «Եւ հաւատոց Աստուծոյ առաւել ընդանի». (յեր. 39)։

---

* Ջնջված՝ և իրավունքով... ԽՄԲ.։

Պավղոսից I, վրա առնում այս ձևը. «Մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ». Բ. Պավղ. առ Գաղատ. Գլ. Զ, համ. 10։

Իններորդ դարում ծաղկած Հրաշալի Մաշտոցը իր հոյակապ և սքանչելի նամակի մեջ, վոր գրեց Աբասին, մեղ թվում է թե դարձյալ Պավղոսի այս գաղափարն է հնչեղում, յերբ ասում է. «քստ սննդակից գոլոյ ինձ՝ ի մանկութենէ օրինաց Աստուծոյ»*։

Փարպեցին, այս Թղրի մեջ, առհասարակ շա՛տ է հետևում Պավղոսի ձևերին, ինչպես պիտի տեսնեն կարդացողը։

§ 14. Բնագիրը. «Եւ ամենեցուն կղկղանմ թէպէտև երևիցիմ». (յեր. 39)։ Դարձյալ Պավղոսի խոսքն է այս. «Եւ համարիմ կղկղանս». (Բ. Պաւղ. առ Փիլիպ. Գլ. Գ, համ. 8)։

§ 15. Բնագիրը. «Առն եղեալ որդի». (եր. 40)։

Մենք թեև թարգմանեցինք բառ առ բառ, բայց հայտնում ենք այստեղ, վոր միտքը չենք հասկանում պարզապես. ուստի և բնագիրը պահեցինք, գուցե կարդացողը մեզանից ավելի հասկանա։

§ 16. Կորնթացոց հետ եր Պավղոսի բանը, վորի վրա ակնարկում է Փարպեցին։ «Վա՛ւ էր եթէ ներէիք փոքր մի և իմում անզգամութեանս... մի՛ ոք համարեսցի զիս անզգամ. ապա թէ ոչ, գո՛նէ իբրև զանզգամ ընկալարուք զիս»։ Բ. Պաւղ. առ Կորնթ. երկր. Գլ. ԺԱ, համ. 1 և 16։

§ 17. Բնագիրը. «Զկեալ զիմ՝ ի տղայութեանն՝ զայն Տէր իսկ ինքնին քաջ գիտէ». (յեր. 40). և մի փոքր սորանից հետո. «Արդ զառաջին կելոյն

---

* Այն պարոնները, վորոնք ամեն առուքյան երկրպագում են մխայն թե ճշմարտության յերեսից փախչին, ինչպես սատանան խունկից, չեն ամաչում մինչև այսոր էլ այս սուրբ եպիսկոպոսը քաղկեդոնական հռչակել, առնելով նորա բուլեյական ակամա սխալը։ Ահավասիկ բուն ճշմարտությունը։ Հիրա՛վ է, վոր այս ականավոր անձը, Գեորգ կաթողիկոսի որով, մինչդեռ Սևանա վանքումն եր լինում, կարծելով թե կարելի յե ընդունել քաղկեդոնյան ժողովը առանց ուղղափառ լինելուց դադարելու. հրատարակել եր այս մասին մի գրվածք։ Ճերմանելի Գեորգ կաթողիկոսը տեսնելով այս, նզովքով դատապարտեց թե գրվածքը և թե նորա հեղինակը, ցույց տալով, յեթե վո՛րքան սխալական է մեղանչական է այդ խառնակուլը ժողովի սահմանադրությունը, դու ասա, Լևոնի տումարը։

Ճերմանելի Մաշտոցը անսխալական վոգվով քննելով այս բանները դրջացավ իր գործի վերա և իր կարծիքով գրվածքը խափանելով ապաշխարեց և մեղա դրչեց։ Մարտու թագավորի յեղբայր Աբասը, իր յեղբոր թագավորության մասին թշնամացած լինելով յերջանիկ Գեորգ կաթողիկոսի հետ և զավաճանություն հնարելով նորա ընդդեմ, յերբ նամակ եր գրել Մաշտոցին, վոր նա ևս մխանա իր հետ ընդդեմ կաթողիկոսին, իր ծանծաղամտությամբ կամենալով գրգռել Մաշտոցի վրեժխնդրությունը, հիշեցնում եր նորան կաթողիկոսի նզովքը։ Ահա Մաշտոցի խոսքերը. «բայց իմ նզովք դատապարտութեան յաւէտ յիրաւի և արժանի էր. և զի վրիպեցայ և ըստ արտուղի անկեալ՝ ինքնահրաման բարձի զնգրոց սուրբ Հարցն, որ՝ ի մէջ մեր և՝ ի հաղկեդոնականացն, վասն որոյ աղօթս հայց ապաշխարութեամբ և առաջի անկմամբ պատուհասի նովին սուրբ ձեռօք զձեռնադրեալսն յինէն կաթծեօք» (Ճուկ., կաթ. յեր. 88)։ Այս խոսքերից հետո Մաշտոցը քաղկեդոնիտ յեր ասողը, պարզապես հայհոյում է ամենաուշ ճշմարտության սրբությունը։ Այոշտի։

իմոյ զվարս՝ Տէր Ներսէհ և Հրատ Կամսարական դիտեն»: Այս խոսքերը հիշեցնում են մեզ Պատրոսի Ադդրիպատին ուղած պատասխանը. «Կենաց իմոց որ ի մանկութենէ ի սկզբանէ լեալ յաղգի անդ իմում յերուսաղէմ, տեղեակ են» և այլն. Գործք Առաք. Գլ. ԻԶ, համ. 4:

§ 18. Այստեղ բնագրում այսպես է ասած. «Տարեալ զի՛ս ըստ վարդապետաց իմոց հրամանի՛ ի Հռոմս»... (յեր. 40): Վաթսուն յերկրորդ յերեսում, Փարպեցին, խոսելով իր սուրբ Գրոց տեղեկութեան մասին, ասում է դարձյալ. «իսկ մեր յերանելի վարդապետին, զամենայն զկտակարանս ճեղեցոյց երիցս և չորիցս ուսուցեալ մեզ», և այլն: Վո՞րոնց վրա չեն այս ակնարկությունքը և վարդապետներ ասելով վո՞րոնց և ուզում մեզ հասկացնել. մենք հանձնառու չենք դրական պատասխան տալ այս բանին:

Առհասարակ, տարածված կարծիք է, թե Փարպեցին, թե՛և համաձայնում է, կամ իր Պատմության մեջ ինքն էլ ասում է իր համար. «աշակերտ Ադանայ Արծրունւոյ», բայց և այնպես, վորպես թե աշակերտված է նաև մեր Մեծ Թարգմանչաց— սուրբ Սահակին և սուրբ Մեսրոպին:

Թա՛փ տանք մի փոքր այս կարծիքը, վոր, գո՛նե հինգ հարյուր տարի է, ամեն հեղինակ իր նախորդներից փոխ առնելով կրկնում է:

Կիրակոս Գանձակեցին խոսելով մեծ Թարգմանչաց վրա ա՛յսպես է շարունակում. «Որոց վարդապետք և ուսուցիչք սուրբն Սահակ և Մեսրոպ, և գլխաւորք յաշակերտացն սուրբն Յովսէփ և Յովհան և Ղևոնդ և Սահակ և Մովսէս քերթողահայր և Մամբրէ վերծանող նորուն եղբայր, Եզնակ և Կորիւն, սուրբն Եղիշէ, Դաւիթ փիլիսոփայ և Յովհաննէս, տէր Աբրահամ, Սրբան, Մուշէ, Խոսրով, Ղազար և յետոյ Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս», և այլն. (յեր. 17):

Այստեղ տեսնում ենք մի Ղազարի անուն, բայց չենք կարող ասել թե Կիրակոսը Փարպեցուն է հասկանում Ղազար ասելով: Սա՛սկ և, Կիրակոսը իր հառաջաբանի մեջ (յեր. 4), խոսելով հակ պատմիչների վրա, տալիս է Ղազար Փարպեցու անունը, ճարտասան կոչելով նորան. բայց այնտեղ, Փարպեցին յերևում է վոչ վորպես աշակերտ Մեծ Թարգմանչաց, այլ վորպես պատմիչ, և սորանով չե փարատվում մութը աշակերտների կարգում հիշված Ղազարի վրայից, վորովհետև նա կարող եր մի ա՛յլ Ղազար յեղած լինել քան թե Փարպեցին, ինչպես և կա՛ր էլ մի ուրիշ մարդ Ղազարիվ կոչված, վոր ամեն իրավունքով զգուշացնում է Հ. Մ. Չամչյանը չշփոթել Փարպեցու հետ:

Մեզ թվում է թե Փարպեցին մեծ Թարգմանչաց աշակերտ կարծողքը ոգնություն չեն ստանում Կիրակոսից:

Փոխանակ դորա, Վարդան պատմիչը, վոր ժամանակակից և աշակերտակից է Կիրակոսին, վորովհետև յերկուքն էլ Վանական վարդապետի աշակերտքն են, իր գրքի 51-րդ յերեսում, վոչ միայն մեծ Թարգմանչաց աշակերտ և ասում Փարպեցուն, այլ ուրիշների հետ նորա անունն էլ տալով և պատմագիր անվանելով շարունակում է. «Սոքօք հանդերձ (այսինքն ա-

շակերտներով, վոր մենք չենք հիշում այստեղ) Թարգմանչին (Մեծ Թարգմանիչը) զամենայն մատեանս ի ստույգ օրինակաց»:

Աստվածաշնչի Թարգմանության մասին և խոսում, և վորովհետև ասում և ի ստույգ օրինակաց, ուրեմն, յերկրորդ Թարգմանության մասին: Այս խոսքերին նայելով Փարպեցին 433 թվականներին գործակից և Ս. Գրքի Թարգմանության. ուրեմն, այդ թվականներում վոչ միայն աշակերտված պրծած և նա Մեծ Թարգմանչաց այլև Հունաստանից էլ վերադարձած, վորովհետև Թարգմանության գործակից լինելու համար պետք եր վոր նա հունարեն իմանար, և գիտենք, վոր նա այդ լեզուն ուսավ Հունաստան:

Հայտնի չե թե այս շատ աջողակ վկայության և և մե՛ծ ոգնության այն մարդուն, վոր անպատճառ ուզում և, վոր Փարպեցին Մեծ Թարգմանչաց աշակերտ լիներ: Բայց պետք չե մոռնալ, վոր Խորենացին, Կորյունը և ինքը Փարպեցին, խոսելով Աստվածաշնչի Թարգմանության մասին և յերբեմն էլ գործակից աշակերտաց անունը տալով, չեն հիշում Փարպեցու անունը:

NB Հ. Միք. Ջամչյանը Փարպեցու ժամանակի վերաբերությամբ շատ շփոթ հասկացողություն ունի: Յերբեմն ասում և թե Փարպեցին ականատես և Վռամշապուհ թագավորին (Հատ. Ա. յեր. 754), վոր ինչպես հայտնի չե և ինքը Ջամչյանն էլ վկայում և վախճանեցավ 421 թ[վականի]*. ուրեմն Փարպեցին ծնած եր այդ թ[վական]ից առաջ յերթե Վռամշապուհին ականատես եր: Յերբեմն ասում և թե Փարպեցին ականատես և Մեծ Թարգմանչաց և հետո թե**. «Սա թէպէտ և չէր յատուկ աշակերտ Սրբոյն Սահակայ և Մեսրոպայ, բայց տեսանել էր զնոսա և ի տղայութեան ուսեալ էր ինձ ինձ ի դպրատան նոցա. և յետ մահու նոցին աշակերտեալ եղև երանելւոյն Ա-ղանայ»: (Հատ. Ա. յեր. 540): Մեկը հարցնեն, թե ո՛վ վարդապետ, ո՛վ և վիզդ չաթու ձգել, վոր առաջ *** Վռամշապուհին ականատես ասես, հետո Մեծ Թարգմանչաց աշակերտ և վերջը այսպիսի բացատրությամբ խոսքդ հետ առնուս: Բայց մենք չենք մեղադրում Ջամչյանին. նա էլ իր նախորդների նման մի վարդապետ. Հայոց պատմությունն էլ շատերի աչքում մի առասպել, և վոչ դիտությունն յեվրոպական հասկացողությամբ, ուստի ինչ վոր մարդու միտքը գալիս և կարելի չե ասել, էլ վո՛չ քննություն և վո՛չ ապացույց: Մենք վոչ միայն չենք մեղադրում Ջամչյանին, այլ ուրա՛խ ենք, վոր նա, շատ անգամ կարդացած լինելով Վարդան վարդապետի գիրքը, չե կամացել կրկնել նորա ասածները:

---

* Բնագրում սխալմամբ 41· ԽՄԲ·:

** «Հ· Միք· Ջամչյանը» բառերից հետո մինչ այստեղ նախապես յեղել և հետևյալ կերպ· «Վարպանի շատ խոսք չէ մանում· Նա վոչ միայն չե ասում այն բանները ինչ վոր Վարդանից ենք լսում, այլ գրեթե նախապաշարմունքից ազատված և ակամա հաշվում և փարպեցուն Մեծ Թարգմանչաց աշակերտների կարգում· վորովհետև խոսքն բացատրում և իր խոսքը, թեև մի փոքր ծիծաղելի մեկնաբանությամբ»: Լատանցքում հեղինակը փոխոխել և այն, մատանալով ջնջել սկզբնականը: ԽՄԲ·:

*** Ջնջված՝ աշակերտ ասես և հետո··· ԽՄԲ·:

Սոքա յեն այս բոպեիս մեր ձեռքում յեղած գրքերը, վորոնց մեջ խոսք կար Փարպեցու աշակերտության մասին։ Կը հավատանք, յեթե ասեն մեզ, թե մի քանի ուրիշ հեղինակներ նույնպես խոսում են այդ բանը. մանավանդ, վոր մեր ժամանակագիրքը ինքնուրույնաբար գրում է միայն այն բանը, վոր յեղել է իրենց որով, կամ մոտ է իրենց ժամանակին. իսկ հին բաները, թեև շատերը նոցանից Ադամից են սկսում, այնուամենայնիվ առանց քննության, առանց դատաստանի փոխ են առնում իրենց նախորդներից, թեև այո՛, յերբեմն այլայլելով իրենցից առաջ գրողների ասածը։

Բայց այն բոլոր կարծիքները, վոր վերևը մեջ բերինք, և վոր ընդհանրապես վարդաց, կամ, յեթե նոցանից շատ առաջ ապրած հեղինակների գործերում էլ լինին նոցա նմանները, մենք միահամուռ մերժում ենք։

Ղազար Փարպեցին վո՛չ գործակից է յեղել Ս. Գրքի Թարգմանության, վո՛չ աշակերտ է յեղել Մեծ Թարգմանչաց, վո՛չ ունել է նոցա դպրոցում «ինչ ինչ ի տղայութեան» և կարո՛ղ ենք ավելացնել, թեև վոչ իսկ տեսել է նորանց։

Մինչև Փարպեցու Գրքի հայտնվիլը ներելի յեր տակավին կրկնել թեև անհիմն բայց հնացած կարծիքը. իսկ Փարպեցու Գրքի հայտնված որից այդ կարծիքների գինը կոտրեցավ։ Յեվ այսուհետև վոչ միայն արժեք չունին այլ բնա՛վ ներելի չեն կրկնել։

Բայց սակայն պ. Եմինը, իր հատաջաբանի մեջ այսպես է խոսում. «Գնացեալ աշակերտեցաւ Ղազար առ ոտս Աղանայ, որ և քեռի գոլով Վահանայ Մամիկոնենի ընկալաւ զպատանին և զխաղաղիցն ազգակցին իւրոյ սիրով և ո՛չ զլացաւ ի նմանէ զլուսաքեր զիւր վարդապետութիւն, զատուցանելով զնա ի ծառայութենէ աշխարհիս պարեգտիւք։ Զկնի յերկար մի դեգերելոյ յուսամն Սրբազան տառից առ ոտս սրբակրօն առնս՝ ըստ հրամանի նորին և վարդապետացն իւրոց Սահակայ և Մեսրովպայ գնաց ի Հոռոմս» և այլն (յեր. 20)։

Ավելի քան թե զարմանում ենք, վոր պ. Եմինը Փարպեցու Թուղթը իր ձեռքում ունենալով, և մանավանդ այդ Գրքի հետ միասին, տպում է այս խոսքերը։ Մենք զարմանում ենք, վոչ թե պ. Եմինի առհասարակ ձևի վրա վորով խոսում է և պատմում է մեզ, վոր Աղանը Վահանին քեռի լինելով ընդունել է սիրով նորա խաղակիցը և այլն և այլն, վոր մեզ պարապ ժամերի արդյունք է յերևում, վորովհետև հիմք չկա, այլ զարմանում ենք վոր պարոնը ասում է թե Փարպեցին (Աշուշայի տանից դուրս յեկած) աշակերտվեցավ Աղանին և «զկնի յերկար մի դեգերելոյ յուսամն Սրբազան տառից առ ոտս սրբակրօն առնս՝ ըստ հրամանի նորին և վարդապետացն իւրոց Սահակայ և Մեսրովպայ գնաց ի Հոռոմս»։

Սուրբ Վարդանանց Ավարայրի պատերազմը յեղավ 451 թվականի գարնան։ Չի՛ք վասակը 450-ի աշնանը բռնուեց, վորպես Համայակ Մամիկոնյանի

յերեք վորդիքը* նույնպես և մյուս նախարարաց զավակները, վոր հետո ուղարկեց Պարսկաստան։

«Իսկ յամին եօթն և տասներորդի Յազկերտի արքայի (455 թիվ), իշխանն Վրաց Աշուշայ աղաչէր զաւագս դրանն արքունի, բազում և անհամար կարասի ծախեալ իւրաքանչիւր ումէք. և մանաւանդ անօրէն հազարապետին Միհր-Ներսէհի, զոր մեծաւ ջանիւ և սաստիկ աշխատութեամբ հավանեցուցեալ տայր ասել ցթագաւորն Յազկերտ զի շնորհեսցեն նմա զորդիս երանելւոյ նահատակին Համազասպայ ի տոհմէն Մամիկոնէից, զորս առեալ էր նենգաւոր իշխանին Սիւնեաց Վասակայ ի դաւեկաց, որպէս զորդիս մահապարտաց և տարեալ ի Դուռն զի մեռցին, որ էին յոյժ տղայք», (Փարպ. Պատմ. յեր. 185)։

Դնենք թե նույն 455 թվականին, յերբ Վահանը հետ յեկավ Պարսկաստանից իր յերկու յեղբարց հետ, նորա մայրը Զվիկը տարավ նորան Աշուշայի տունը, ուր ուսում եյին տալիս Փարպեցուն, դնենք թե այդ թվականից սննդակից և խաղակից դարձավ Փարպեցին Վահանին, դնենք թե Փարպեցին «ըստ տիոց աւագադոյն էր քան զՎահան», բայց և այնպես պիտի ընդունենք, վոր Փարպեցին, 455 թվականին խաղացող պատանի չի։

Մենք չգիտենք, թե վո՛րքան ժամանակ տևեց Փարպեցու և Վահանի սննդակցությունը և խաղակցությունը, բայց և այնպես պ. Եմինը ընդունում է վոր Փարպեցին աշակերտվել է Աղանին այս բանից հետո, վորովհետև ասում է թե Աղանը ընդունեց նորան վորպես իր ազգակցի խաղակիցը։

---

* Այլ առակ լուսարուք. «իսկ զկնի վճարման տուրք նահատակացն մերը, չարն Վասակ՝ զկին և զերեսին որդիս Համազասպ 'ի Դուռն առնէր»։ Վարդան, Պատմ. յեր. 58։ Մենք չենք ընդունում Համազեի կնոջ Զվիկի գերությունը. այս մասին Վարդանի վկայությունը բնավ արժեք չունի մեր աչքում։ Դուցե, յերեք Փարպեցու Պատմությունը չլիներ և Թուղթն էլ չհայտնվեր, ընդունեյինք Վարդանի խոսքը. բայց քանի վոր Համազեի կնոջ—Զվիկի—անուցած հոյակապ Փարպեցին ասում է թե չէ՛ք Վասակը ուրիշ նախարարաց վորդոց հետ—վորդոց, բնա՛վ և վոչ մի կնոջ անուն չկա—բռնեց և Համազեի յերեք վորդոցը և Դուռը տարավ։ Յերբ Աշուշան Պարսկաստանից հետո բերելով նորանց հանձնում և նոցա մորը Զվիկին, մենք չենք ընդունում Վարդանի խոսքը։ Փարպեցու Թղթից իմանում ենք նորա հարաբերությունը Զվիկի հետ. այնտեղից մենք տեսնում ենք, վոր այս յերանելի տիկինը մայր և յեղել մեր հոյակապ վարդապետին, Փարպեցու. Պատմության մեջ կարդում ենք այդ որհնյալ տիկնոջ գործառնությունը և այնտեղ, ուր խոսում է Դռնում կապված նախարարների Հայաստան մնացած կանանց վրա, Փարպեցին առիթ չէ* բայց թողնում, վոր կարելի յեղածի չափ մանրամասն չըպատմե Մամիկոնյայ գերդաստանին վերաբերյալ մի նշանավոր անցք, ինչպես կարելի յի, վոր Փարպեցին լռեր Զվիկի գերությունը։ Մենք չենք կարող այս թույլ տալ, յերբ դա չէ ծածկում մեղանից Ներսեհ և Հրատ Կամսարականների կանանց գերությունը, Մեծ Վահանի պատերազմների ժամանակ Պերոզի որով։ Չենք կարող թույլ տալ, վորովհետև, յեթե՛ Զվիկը տարված լիներ պարսից Դուռը անհնար է թե նորա պես ժրաջան կինը հանդես չունենար այն անցքերի մեջ, վոր կատարված նախարարների և ս. Ղևոնդյանց մասին խոսելով պատմում են մեզ և՛ Փարպեցին և՛ Ցեղիշեն, առանց Զվիկի կամ վոր և իցե կնոջ անուն հիշելուն։ Չենք կարող թույլ տալ, վորովհետև Փարպեցու Պատմության և Թղթի մեջ մի փոքր ուշադիր պիտի խոսվեյին, յեթե Զվիկը լիներ յերբ և իցե գերված։

* Ընկված՝ բայց թողնում... ԽՄԲ.։

Մենք չգիտենք, թե վո՛րքան ժամանակ մնաց Փարպեցին Աղանին աշակերտ և յե՞րբ գնաց Հունաստան, բայց պ. Եմինը ընդունում է, վոր յեղել այս ազգնի մի դեգերելոյ յուստմն Սրբազան տաճից»։ Աղանի մոտ։ Մենք այսքանը գիտենք, վոր Փարպեցին «անդատին ի մանկական տիոցն սկիզբն արարեալ բանական դիտութեան՝ Յունաց յաշխարհն ճանապարհորդէր» (Բղբի յառաջաբ. յեր. 36)։ Մենք այսքանը գիտենք, վոր Փարպեցին տղայութեա՛ն ժամանակ* բնակակից և յեղել Վահանին, վորովհետև վկա յե բռնում սորան իր տղայութեան ժամանակ վարած կյանքին. «Ձկեալ զիմ ի տղայութեանն՝ զայն Տէր իսկ ինքնին քաջ գիտէ» (Բուղր. յեր. 40)։ Մենք այսքանը գիտենք, վոր Փարպեցին սուրբգ և սուրբ հավատը ուսել և Աղանից տղայութե՛ն ժամանակ. «սուրբ և սուրբգ հաւատ, զոր ուսեալ ի տղայութենէն յերանելոյ Ալանայ՝ կեամ նովիմբ ի նմին, անփոփոխութեամբ մինչև ի վախճան կենցաղոյս իմոյ» (Բուղր. յեր 65)։

Մենք այսքանը գիտենք, վոր Աղանը կրոնավորվելուց և Գողթն գավառում ս. Մեսրոպի կացած վանքում մնալուց հետո գնացել և Հունաստան (նորա հայրն ել և հորեղբարքն էլ գնացին Վարդանանց պատերազմից անմիջապես հետո գուցե Աղանն ել նոցա հետ) և Հունաստանից վերադարձել է 457 ից հետո, վորովհետև Բուլմա Արծրունին (յեր. 91) խոսելով նորա հոր և հորեղբարց մասին ասում է. «կացեալ անդ մինչ ի ժամանակս Առաջին Լևոնի կայսեր, մեռանի անդ Վասակ և Տաճատ.... իսկ երանելոյն Աղանայ Արծրունւոյ որդւոյ Վասակայ դարձեալ ի Յունաց աշխարհէն եկն յերկիրս Հայոց, նովին կրօնավորական խստամբերութեամբ և հրեշտակակրօն առաքինութեամբ կեցեալ» և այլն։ Լևոն առաջին կայսրը թագավորեց 457-ին։ Աղանի հայրը մեռավ Լևոնի որով։ Աղանը Հայաստան վերադարձավ հոր մահից հետո, ուրեմն անտարակույս 457 թվականից հետո (բարձրացուցեքի նախադրութիւնը նայել)։

Մենք այսքանը գիտենք, վոր Հայոց մեծ լուսավորիչ ս. Սահակը կնքեց իր մահկանացու կյանքը 439-ի սեպտեմբերի 9-ին**. Ս. Մեսրոպը, նորանից վեց ամիս հետո, այսինքն 440-ի փետրվարի 19-ին։ Ուստի 455-ին, յերբ մեծ Վահանը վերադարձավ Պարսկաստանից և Աշուշայի տանը ննջնդակից և խաղակից յեղավ Փարպեցու հետ***, յերեք այդ թվականին նաև քսան տարեկան պատանի ճանաչենք Փարպեցուն, վոր չի կարելի թույլ տալ բնավ, այնուամենայնիվ Մեծ Բարգմանչաց վախճանելու թվականներում Փարպեցին ավելի չե լինում քան թե հինգ վեց տարեկան տղա։ Բայց այդ թվականներում չկար նա անգամ և այդքան քսան տարեկան տղա չեր կարող յեղած լինել նա յերբ խաղակից եր լինում Վահանին Աշուշայի տա-

---

* Ընդվաճ՝ ապրել է։ ԽՄԲ.։

** Այստեղ հեղինակը դրել է Տանտեառն նիշ, բայց մոռացել և դրել Տանտեառն։ ԽՄԲ.։

*** Ընդվաճ՝ ապա ուրեմն... ԽՄԲ.։

նը։ 440 թվականներում Փարպեցին կամ նա՛ր եր ծնած կամ շա՛տ շա՛տ յերկու յերեք տարեկան և այս կերպով 455 ին, 17—18 տարեկան։

Այսպես լինելով բանը, ո՛ւր կը մնա Վարդանի ասելը թե Փարպեցին դրծակից և յեղել Մեծ Թարգմանչաց Աստվածաշունչը յերկրորդ անգամ Թարգմանելիս, վոր ինչպես հայտնի յե Յեփեսոսի ս. ժողովից հետո յեղավ* 433 թվականին, ո՛ւր կմնա Փարպեցուն նոցա աշակերտ յեղած լինելը, կամ Ջամչյանի՝** «թե Վռամշապուհին ականատես եր, Մեծ Թարգմանչաց տեսել եր և տղայության ժամանակ մի քանի բան նոցա դպրոցում ուսել եր» ասելը. ո՛ւր կը մնա պ. Եմինի կարծիքը թե Փարպեցին սուրբ Սահակի և սուրբ Մեսրոպի— իր վարդապետների հրամանով— գնաց Հունաստան։ Փարպեցին 455-ին խաղացող պատանի յե Աշուշայի տանը, Մեծ Թարգմանիչը այդ միջոցին արդեն 15—16 տարի և վոր վախճանել են, բայց պ. Եմինը այս չափով էլ գոհ չլինելով և Փարպեցուն 457 թվականից հետո մի քանի տարի էլ Աղանին աշակերտություն արած ընդունելով, հետո Հունաստան և ուղարկում նորան Մեծ Թարգմանչաց հրամանով։

Մեզ թվում է, թե Մեծ Թարգմանչաց անդրաշիրմյան հրամանը լոկ յերևակայության արդյունք և նոր ժամանակների, վոր, հինգերորդ դարում, յերևակայության մեջ էլ տեղ չուներ։

Բայց յեթե այս ամենը մոռնալով, միայն այս առնունք, վոր ինքը Փարպեցին ամեն ուրիշից լավ կարող եր իմանալ, թե ո՞ւմ աշակերտ և ինքը, ապա ուրեմն առանց այլ և այլի պիտի ասենք, վոր այդ առաքինի մարդը աշակերտ և յեղել*** Աղանին և վոչ Մեծ Թարգմանչաց։ Փարպեցին թե Պատմության և թե Թղթին մեջ պարզապես ասում է, թե ինքը աշակերտ և յերանելի Աղանին, թե սա յե յեղել Ղազարի ազատության պատճառը, թե իր տղայության ժամանակ Աղանից և ուսել սուրբ հավատը, թե Աղանն և նորան պարեգոտ հագցրել։ Փարպեցին յեթե նաև մի ամիս լիներ աշակերտված Մեծ Թարգմանչաց, ապա անշուշտ և պարծանքով կը հիշեր այն սուրբերի և մի ամսվա յերախտիքը, մանավանդ մենք տեսնում ենք թե ի՛նչ վորդիական և արժանի հարգությամբ և խոսում նա Մեծ Թարգմանչաց մասին։

Մեզ թվում է թե Փարպեցու Թղթում հիշված վարդապետքը են Մեծ Թարգմանչաց աշակերտներից, վոր այն միջոցին բնավ պակաս չեյին և «զմի միով եւևելս առնէին» ինչպես ասում է Փարպեցին իր Պատմության մեջ։ Մեզ թվում է թե Աղանը թեև յեղել է Փարպեցու դաստիարակության գլխավոր ուղղիչը այնուամենայնիվ Փարպեցին ունեցել է նորա ձեռքի տակ թերևս և ուրիշ ուսուցիչք, յերբ հոքնականապես վարում է վարդապետ խոսքը, և յեթե մենք էլ հոքնականապես պիտի հասկանանք։ Այս վերջին խոսքերը ասում ենք այն պատճառով, վոր Փարպեցու ասած «առ ի բժշկու-

---

* Ջնջված՝ և վոչ առաջ քան... ԽՄԲ.։

** Ջնջված՝ նորանց տեսել եր... ԽՄԲ.։

*** Ջնջված՝ միայն... ԽՄԲ.։

Թիւն վիրատրաց վուխա՛ հա՛ս յօգնել» բանի մնչ (յեր. 53) վիրավորացը վիրավորիս պիտի կարդանք, վորովհետև միայն Փարպեցու գլխին եր յեկել փոթորիկը և նա եր վիրավորը։

Բացի սոցանից, մենք չգիտենք, թե ո՛վքեր եյին նորան ուսում տալիս Աշուշայի տանը. և հարկե թե կային ուսուցիչք, յերբ ասում է «յորում դրան և զմեզ ուսուցանէին» (յեր. 41)։

Զիարդ և իցե այս է ճշմարիտը, վոր Փարպեցին Մեծ Թարգմանչաց վոչ աշակերտ և յեղել և վոչ նոցա հրամանով Հունաստան գնացել. թո՛ղ այսուհետև ո՛վ ինչ կամի խոսի։

§ 19. Այս Կամսարականները Վահանի հորեղբորորդիքն, այսինքն, մեծ Վարդանի թոռներն եյին։ Հայտնի յե թե մեծ Վահանը մեծ Վարդանի յեղբոր յերանելի Համայեկի վորդին եր, իսկ մեծ Վարդանը իր կրտսեր դուստրը, վորի անունը Վարդ-Անուշ եր, ամուսնացուցած եր Արշարունյաց տիրոջ Արշավիր Կամսարականի հետ, վորոնցից ծնեցան Ներսեհ, Հրահատ և Վահան Կամսարականները։ Յեվ ինչպես ասցա հայրը— յերանելի Արշավիրը— մինչև իր մահը հավատարիմ մնաց թե ս. Վարդանին, վոր ինչպես ասացինք իր աներն եր, թե ազգին և թե սուրբ ուխտին, այնպես էլ նորա վորդիքը մինչև վերջը հավատարիմ մնացին մեծ Վահանին և յեղան նորա թևը և թիկունքը։ Փարպեցին սոցա մոտ և կեցել այն բոլոր խռովությանց և պատերազմի ժամանակները, վոր Պերոզի ընդդեմ մղում եր Վահանը և վորին մեծապես գործակից եյին Կամսարականքը։*

§ 20. Վահանի նվաճումը, այսինքն նորա հաշտությունը Պարսից տերության հետ, յեղավ 484 թվ[ականի]ին, յերբ Պերոզի տեղը նստավ Վաղարշ թագավորը։ Բայց պետք չե մոռնալ, մեծ Վահանը ցած չդրեց զենքը, մինչև վոր հարգել տվեց Պարսից տերության, թե՛ Հայոց ազգի և՛ թե նորա յեկեղեցու իրավունքները։ Այս հաշտության մանրամասն նկարագրությունը կարելի յե տեսնել Փարպեցու ստո՛ւյգ Պատմության մեջ 279-դ յերեսից սկսած մինչև 306-դ յերեսը։

§ 21. Բնագրում այսպես և ասած. «Եւ երթեալ ՚ի Սիւնիս՝ կեցի անդ ամս երկուս, զձմեռն ՚ի քարայրի առ առն միում հռչակելոյ ՚ի բնակչաց գաւառին յամենայն կրոնաւորութիւնս, որում անուն էր Մովսէս, և տեղին՝ Անճուխ. և զամառն յաղագս սօթոյ տեղւոյն՝ քահանայապետ աշխարհին՝ տէր Մուշէ, տանէր զիս առ ինքն, ուր և լինէր ՚ի հովուս Արդ՝ զառաջինն կելոյն իմոյ զվարս՝ տէր Ներսէհ և Հրատ Կամսարական գիտեն զՍիւնեացն յառաջագրեալ եպիսկոպոսն աշխարհին» (յեր. 40)։

Պ. Եմինը, տեր Մուշեյի վերաբերությամբ, այսպես և ծանոթաբանում. «Մուշէ եկաց կաթողիկոս զկնի Սամուէլի ՚ի 502 ամի»։

Զենք ամաչում այստեղ ասել, վոր պարզապես չենք հասկանում այս ծանոթաբանության միտքը։ Արդյոք, Հայոց կաթողիկոս և հասկանում պ.

---

* *Ընդհան՝ յանկացողքը կարող են տեսնել այս մասին Փարպեցու ստուգ Պատմության մեջ, 279/դ յերեսից սկսած մինչև 306/դ յերեսը։ ԽՄԲ։*

Եմինը քահանայապետ աշխարհին խոսքը, և ուզում է ասել, թե Փարպեցու Սյունյաց աշխարհում մնալը Մուշե կաթողիկոսի որով եր, ուրեմն 502 թվականից հետո. թե՛ ուզում է ասել. այս այն Մուշեն է, վոր Սամվելից հետո կաթողիկոս նստավ 502 թվականին։

Թեպետև չգիտենք, թե այս յերկուքից վո՛րը կամենում է հասկացնել պ. Եմինը, բայց այդ բնավ արգելք չե մեզ, վոր յերկուքն էլ միասին մերժենք, վորպես իսպառ անհիմն բաներ։

Նախ, Փարպեցու հիշած Մուշե քահանայապետը Հայոց կաթողիկոս չե, այլ Սյունյաց յեպիսկոպոս, Սյունյաց հուչակավոր Ստեփանոս յեպիսկոպոսի հաջորդը, և նույնչափ յերևելի և առավել ևս, Պետրոս յեպիսկոպոսի նախորդը, վոր ɛերթող է կոչվում։ Փարպեցին պարզապես անվանում է Մուշեին Սյունյաց յեպիսկոպոս, յերբ «երթեալ ՚ի Սիւնիս կեցի» ասելուց հետո, նույն յերկրի վերաբերությամբ ավելցնում է «քահանայապետ աշխարհին» խոսքը, վորով, հատկացնելով նորան Սյունյաց յերկրին, պարզացնում է բանը և էլ պատճառ չե թողում, վոր ո՛վ և իցե համարե նորան Հայոց կաթողիկոս։ Բացի սորանից, Փարպեցին վկա չե բռնում Մուշեին, Սյունյաց յերկրում իր ունեցած վարքին ու բարքին. «զառաջինն կելոյն իմոյ զվարս՝ տէր Ներսէհ և Հրատ Կամսարական գիտեն. զՍիւնեացն՝ յառաջագրեալ եպիսկոպոսն աշխարհին». որ ասել է Հոնաստանից վերադառնալուց հետո, յերբ բոլոր խռովությանց և պատերազմների ժամանակները Կամսարականների մոտ եյի, այդ միջոցին վարած կյանքիս վորպիսությունը նոքա գիտեն. կարո՛ղ եք նոցանից տեղեկանալ։ Իսկ յերբ պատերազմները վերջացան և յես, հանգչելու և աղոթքի պարապելու համար, գնացի Սյունյաց աշխարհը և յերկու տարի կեցա, ձմեռները Մովսեսի մոտ Անձոյ ասացյալ տեղում, իսկ ամառները Մուշեյի մոտ, վոր տանում եր ինձ, ուր և ինքը դուրս յեկած եր լինում ապահովության, այդ միջոցի կյանքիս վորպեսությունն էլ այս հիշված Սյունյաց յեպիսկոպոսը գիտե։

Յերկրորդ, ինչպես առաջ էլ ասացինք (§ 20), մեծ վահանը հաշտվեցավ Պարսից տերության հետ 484 թվականին։ Մինչև այս իրողությունը, Փարպեցին, ինչպես ինքը վկայում է, կեցել է Կամսարականների մոտ, և հաշտությունից հետո գնացել է Սյունյաց աշխարհը, ուր մնացել է միայն յերկու տարի։ Փարպեցին գնացել է այնտեղ նույն 484 ին, և հետ է յեկել 486 ին, վորովհետև վերադառնալով Սյունյաց յերկրից, նա տակավին կենդանի գտավ սուրբ Հովհան Մանդակունուն, վոր վախճանեցավ կամ նույն 486 ի վերջերում կամ 487 ի սկզբում. և վորովհետև 484 ին էլ 486 էլ ս. Հովհան Մանդակունին եր կաթողիկոս, ուրեմն Փարպեցուն ամառները իր մոտ ընդունող տեր Մուշեն չեր կաթողիկոս։ Յեվ վորպեսզի Աղվանից կաթողիկոս չհասկանան Մուշեյի քահանայապետությունը հայտնում ենք, վոր 491 թ[վական]ի Վաղարշապատի սուրբ ժողովում, վորի մասին խոսել ենք (§ 6), մենք տեսնում ենք Մուշեյին վորպես Սյունյաց յեպիսկոպոս, մյուս գավառների յեպիսկոպոսների կարգում։

Յերրորդ, Սամվել կաթողիկոսից հետո, 502 թվականին կաթողիկոս նստող Մուշեն, Յերևանի մոտ Կոտայք նահանգից եր, գեղի անունը զանազան ձևով են գնում ժամանակագիրք, վոմանք, Աղբերից, վոմանք, Այլաբերից և վոմանք, Այլաբերդից ասելով. իսկ Սյունյաց աշխարհի Մուշն եպիսկոպոսի ինչ տեղից լինելը մեզ չեն ասում պատմությունը, ինչպես և չեն ասում, թե Սամվելին հաջորդողը Սյունյաց եպիսկոպոս Մուշեն եր: Փարպեցու բարեկամ Մուշե եպիսկոպոսը միայն եղած չե, վոր Մուշե անուն եր կրում, նորանից առաջ ել հետո ել եղած են Մուշեններ. պատճառ չունինք չընդունելու վոր նորա որով ել կային:

Պ. Եմինը, թեև առանց հիմքի դրել եր այս ծանոթությունը, գո՛նե պիտի չմոռնար այս և 53 դ յերեսում, յերբ հարկավոր եր գտնել այն կաթողիկոսի անունը, յեթե անպատճառ պիտի կաթողիկոս իմանանք այն մարդը, վորից բողոքում եր Փարպեցին, չպիտի դներ դարձյալ Մուշեյի անունը. վորովհետև անհաշտելի հակասություն և դուրս գալիս: Փարպեցին, իր Թղթում իր Սյունյաց աշխարհում ունեցած վարք ու բարքին վկա չե բռնում Մուշեյին, ուրեմն նա այն ժամանակ դարձյալ Սյունյաց առաջնորդ եր և վոչ կաթողիկոս, և առավե՛լ ևս վոչ այն մարդը, վորից բողոքում եր Փարպեցին. պատճառ, այն ժամանակ պիտի այլապես խոսեր Թղթում և պիտի ասեր թե այդ մարդը, վոր այժմ ինձ անտես արավ, ինքը գիտե իմ վարքս ու բարքս, քանի վորում Սյունյաց աշխարհում եղած ժամանակս ինձ իր մոտ եր պահում ամառները: Թե ի՛նչ և այդ տեսակ ծանոթաբանությանց ոգուտը, վոր պ. Եմինը անում և, մենք բնա՛վ չենք հասկանում:

§ 22. Բնագրում դրած և Հրատ. պ. Եմինը ծանոթաբանում է. «Հրահատ կամ Հրատ, որպես գրէ կրճատելով Ղազար» (յեր. 40):

Ինչպես յերևում է, պ. Եմինը բնա՛վ հաշվի մեջ չե դնում այդ Թուղթը որինակող գրագիրների սխալանքը և դարերի ծանրությունը, վորոնց տակ ճնշվել և այդ Թուղթը. պա՛տճառ, իբրև իրողություն ուզում է մեզ հավատացնել, թե այդ կրճատությունը յեղած է բո՛ւն Ղազար Փարպեցու ձեռքով: Մեզ թվում է թե պ. Եմինը բնա՛վ ապացույց չունի. Թղթի որինակը, վոր տպել է, ապացույց չե, վորովհետև այնտեղ կան և ուրիշ սխալներ և ուրիշ աղճատանք, վոր չեր կարող Փարպեցին անել: Յեվ յեթե այդ աղճատանքը յեղել է կամ անհմուտ գրիչների և կամ ժամանակի ձեռքով, վոր անմարժելի չե, ինչի չե կարելի ասել վոր այդ կերպով և Հրահատը դարձել է Հրատ:

Ինչ վոր մեզ և վերաբերվում մենք այս վերջին կարծիքն ունինք այդ կրճատության մասին և չենք կարողանում ասել թե ինքը Փարպեցին է կրճատել. և սոքա յեն մեր պատճառները:

Նախ, Ղազար Փարպեցին, իր Պատմության մեջ, միշտ Հրահատ է անվանում Արշավիր Կամսարականի յերկրորդ վորդուն և վո՛չ մեկ անգամ Հրատ:

Յերկրորդ, Փարպեցին թա՛ջ ճանաչելով Կամսարականների հարդը, շա՛տ

անգամ վայելած լինելով նոցա մարդասիրությունը*, չեր կարող այն ասիճանի ծո՛ւլ լինել, չասենք անքաղաքավարի, վոր մարզպանին դրած Թղթում, նորա ազգականի և իր բարեկամի և յերևելի մարդու անունը վրըճատեր։ Այդ բանը** իսպառ ընդդեմ է Փարպեցու բնավորության, վոր Խուժիկին ծանրանում է Խուժիկ կոչել, վորովհետև այդ մարդը հոգաբարձու եր յեղել ս. Ղևոնդյանց մարմինները ձեռք բերելու. Փարպեցին նեղանում է, վոր վոչ վոք հոգ չե տարել Խուժիկի անունը իմանալու, վոր ինքը նորա անո՛ւնը գրեր և վոչ Խուժիկ, վոր անարդական անուն եր այն մարդու ազգի վերաբերությամբ։ (Տե՛ս Փարպ. Պատմ. յեր. 180)։ Թե առհասարակ վո՞ր աստիճանի հարգությամբ և քաղաքավարությամբ է խոսում Փարպեցին մարզպանին հետ և կամաբարականների մասին, այդ ինքը կարդացողը կարող է տեսնել առանց մեր ասելու։

Յերրորդ, մեր բոլոր պատմության մեջ վորքան մեզ հայտնի յե չե յեղել յերբեք մի մարդ վոր Հրատ անուն ունենար. և մենք մանավանդ կարծում ենք, թե Փարպեցին չեր կարող իր բարեկամի անունը այնպես կրճատել և մի այնպիսի անուն շինել, վոր քնա՛վ չեր յեղած հայերի մեջ։

Բայց պ. Եմինը պնդում է, թե Փարպեցին է կրճատել այդ անունը, վորովհետև չե հերիքացել այս ծանոթությամբ, այլ իր հառաջաբանի մեջ (յեր. 21) կրկի՛ն անգամ ծանոթաբանում է այս մասին. «Զանուն յեոնոյս Ղազար `ի Թղթի իւրում կրճատելով՝ Հրատ կոչէ»։

Թող ներե մեզ պ. Եմինը ասել, թե վորպես մի՛շտ և հանապազ, նո՛ւյնպես, և մա՛նավանդ 1500 տարի առաջ պատահած պատմական անցքերի նաև մի ամենաչնչին հանգամանքի վրա վոչ վո՛ք իրավունք ունի առանց ապացույցի բերան բանալ։ Մեր դատապարտածը Հրատ անունը չե, այլ այն ուղղությունը, վոր ապացույց չունեցող յենթադրությունը դնում է աշխարհի առջև, վորպես աներկբայելի իրողություն։ Աղճատված ձեռագրի մեջ Հրատ տեսնելը քնա՛վ իրավունք չե տալիս մեզ հաստատապես ասել, թե ինքը Փարպեցին է կրճատել։ Մեզ թվում է թե այս տեսակ յեզրակացությունքն են մանավանդ պատճառ յեղել մեր պատմական հիշատակարանների մթությանց, շփոթությանց և յերբեմն բարելոնյան խառնակության այնպես, վոր մարդ մոլորվում է և չե իմանում թե ինչ լա իր գլուխը։ Մեզ թվում է թե այն մարդը, վոր հանդես է գալիս այսոր պատմության այս կամ այն մթությունը բացատրելու, հիշատակարանների այս կամ այն խոսքը մեկնելու կամ լուսաբանելու, պարտակա՛ն է հերքել և մերժել խնամով այն բոլորը ինչ վոր հիմք չունի, և մաքուր խղճմտանքով ներդործելով, վոչ քնավ ներել իրեն դրա վրա ավելացնել։

§ 23. Հնար չկա իմանալու, թե*** ովի՛ վորդի եր Ղազար Փարպեցին։

---

* Ջնջված՝ ինչպես վանահայրությունից առաջ նույնպես... ՀՄԲ.։

** Ջնջված՝ քնավ... ՀՄԲ.։

*** Ջնջված՝ ո՞վ. ՀՄԲ.։

Պ. Եմինը իր հատաջաբանի մէջ (յեր. 18) այսպես է խոսում. «Բէվ անչայտ է մեզ անուն ծնողաց նորա. սակայն՝ որպէս երեի, ականաւորք ոմանք էին և հարուստք»։ Պ. Եմինը յերկու բանի վրա չէ հիմնում այս կարծիքը. նախ, իբրև ծանոթութիւն կամ վկայութիւն, հատուած բառի տակ, բերել է Փարպեցու ասածը իր Բղջում։ «Ու դու (Վահան) չայց ելեալ խնդրել զիս և գտեալ չաշխարհին չայնմ՝ ածէր 'ի տուն ո՛չ իբրև զաղքատ զոք 'ի կաղմածէն և 'ի մանկատուն, և ոչ իբրև օտար զոք 'ի քէն և կամ ծառայ ուրուք»։ Յերկրորդ, վերը մեջ բերած հատաջաբանի խոսքերից հետո պարոնը շարունակում է. «քանզի վաղ տեսանեմք զնորահաս Ղազար 'ի տան Բդեշխին Վրաց Աշուշայի, չորոյ 'ի դրան կրթէին զնա չուսումն դպրութեան»։

Մեզ թվում է թե այս վկայութիւնքը իրաւունք չեն տալիս մեզ չենթադրել թե Փարպեցու ծնողքը ականաւորք ոմանք էին և հարուստք։ Յեվ սոքա են մեր պատճառները։

Նախ, Փարպեցու Աշուշայի* դռնում չերևելը կարող եր առնենալ խիստ շատ պատճառ, բացի նորա ծնողների ականաւոր և հարուստ լինելուց։ Պատմութիւնը մեզ չե ասում, թե ի՛նչ պատճառով տեսնում ենք Փարպեցուն Աշուշայի դռնում. ուստի և իրաւունք չունինք չեղրակացնել այս բանից, թե չերևելի և հարուստ մարդի պիտի չեղած լինելին Փարպեցու ծնողքը։

Յերկրորդ, Փարպեցին, խոսելով իր մարդու ծառա չլինելու մասին խոկույն հարում է. «քանզի պարեգօտաւորք ազատեալ են 'ի Քրիստոս»։ Մեզ թվում թե վո՛չ անխորհրդաբար ասում է Փարպեցին այս խոսքը, չերբ իր ազատութիւնը հիմնում է պարեգոտի վրա. ավելացնելով տակավին, «իսկ որ զատույցն զիս պարեգօտիւք 'ի ծառայութեան աշխարհիս և ազատութեան եղև մեզ առիք Տէր Աղան քո Տեառն քեռի էր» (յեր. 41)։

Յերրորդ, վոր ասում է Փարպեցին, թե ինձ քո տունը տարիր վոչ վորպես մի աղքատ մարդ և այլն, հայտնի չե թե այս խոսքերը չե կարելի առնուլ բացառոցաբար նորա ծագման վերաբերութիւնով, այլ մանավանդ նորա այն ժամանակի վիճակին վերաբերութիւնով, չերբ մեծ Վահանը Սյունյաց չերկրից հրավիրեց նորան վերադառնալ։ Իսկ թե Սյունյաց չերկրում նա աղքատ մի մարդ չեր, դորան վկայում է ինքը Փարպեցին չերբ վանքից հալածվելու դիպվածով ասում է. «Բայց բերեալքն իմ չԱղուանից և 'ի Վրաց և 'ի Սիւնեաց և չԱրշարունեաց... մնաց 'ի տեղւոջն գրավ. և զիս հանին մերկ և բշնամանօք չամենայն արարելոց իմոց, զոր 'ի մանկութենէ արարեալ էի», (Թուղթ. յեր. 56)։ Այսպես լինելով բանը, անտարակուսա, Փարպեցին վորպես մի աղքատ և վոդորմութեան կարոտ մարդ չեկավ վանքը, ուստի և կարո՛ղ եր իր Բղջում ասել, թե «ածէր 'ի տուն ոչ իբրև զաղքատ զոք 'ի կաղմածէն և 'ի մանկատուն»։

Չորրորդ, Փարպեցու այս խոսքը «և ոչ իբրև օտար զոք 'ի քէն», հայտնի չե թե աղգակից չե կարող նշանակել, վորովհետև, այն ժամանակ, Մամիկոնյանց տան ծառայքը կամ Ավաքը չպիտի համարձակեյին նորա վրա

---

* Չնչված՝ դրան ե[րեվելը]... ԽՄԲ.։

բանասարկությունք անել Վահանին և աչքից հանել։ Վոչ ոտար ասելով մեզ թվում է թե ուզում է հիշեցնել իր սննդակցությունը և խաղակցությունը Վահանին և մանավանդ, չերբ մեջ է բերում այն պատճառները, վորոնցով ասում է, թե ինքը արժանի չեր Վահանին չե հիշում իր ազգակցությունը։ Յեթե ազգակից լիներ վո՞րչափ ևս առավել պիտի ասեր «ըստ այդմ մասին քեզ Տեառնդ անկ էի»։

Հինգերորդ, թե Փարպեցու աղբատ չլինելը վերաբերվում է լոկ նորա անձին*, և վոչ նորա ծնողաց, չերևում է նաև նորանից, վոր չերբ վանքից հալածելին նորան հատուցանելով բոլոր նորա ունեցածը, այն ժամանակ Դաղարը սուիպվեցավ բարեպաշտ մարդոց ողնությունը ընդունել։ Մամիկոնյան Համազասպի համար ասում է. «բազում անգամ հանգոյց պիս և ի հալածման կերակրիչ իմ եղև». (Թուղր. չեր. 57)։

Վեցերորդ, մեր պատմության մեջ, ակամավոր սոհմի մարդիկը ունին իրենց սոհմային անունը և չեն կոչվում իրենց բնակված գեղի կամ քաղաքի անունով, ինչպես Հովհան Մանդակունի, Աղան Արծրունի և այլն, իսկ չերբ չունին մի այդպիսի սոհմային անուն, այն ժամանակ, Խորենացի, Տարոնեցի, Փարպեցի և այլն։

Բայց սակայն, մենք չերբե՛ք չենք ուզում ասել, թե Փարպեցին ծառա մարդու, կամ աղբատի զավակ եր. մեզ հայտնի չե այդ, վորովհետև պատմությունը լուռ է այդ մասին. միայն, ա՛յս և մեր ասածը, թե պ. Եմինի մեջ բերած պատճառաբանությունքը չեն կարող և թույլ են Փարպեցին ակամավոր և հարուստ մարդերի զավակ չեղած չենթադրելու։ Մենք այսքանը պիտենք, ինչպես առաջ էլ ասացինք, պատմության մեջ, վորպես գիտության մեջ, անպատշաճ են թեթև եզրակացությունք. այնպես։

§ 24. Բնագրում ասած է. «Տէր Ապան քո Տեառն քեռի էր» (չեր. 41)։ Յեթե քեռի խոսքը պարզապես մորեղբայր հասկանանք, և պիտի այնպես հասկանալ, վորովհետև ուրիշ նշանակություն չունի այդ խոսքը, վորքան մեզ և հայտնի, ապա ուրեմն Վահանի մայրը— Զվիկը, և Աշուշայի կինը— Ա-նույշ-Վռամը քույրեր են Ապան և Մերհուժան** Արծրունիներին. պատճառ,

---

* Ջնջված՝ և թե ծնողաց... ՀՄԲ.։

** Այս պատվական Մերհուժանի կամ Մեհրուժանի անունը պետք չե չվոխել Արծրունյաց սահից զուրս չեկած ուրացող Մեհրուժաննեըի հետ։ Այս պատվական Մերհուժան Արծրունին, չերանելի Ապանի եղբայրը, ինչպես պատմում է Փարպեցին (Պատմ. չեր. 108) ուխտապահ նախարար եր, և Վահանի հետ չերանելի Հմայեկի և Ամատունի Վահանի հետ միասին, հայոց նախարարաց թղթով, 450 թվականին Հունաստան գնաց Թեոդոս կայսրից Պարսից ընդդեմ ոգնություն խնդրելու։ (Ի՛նչ ապրանք եր այդ կայսրը, Ցեղիշեն ասում է թե «բանդի խաղաղասէր էր ի Քրիստոս, ոչ կամեցաւ ելանել ընդ առաջ պատերազմողացն այլ մի Աստուած անուն, որ էր նորա ապարանեալ սրեակից, առաքեաց առ նա բազում պանծիլս։ Եւ արէ պարսիկք, որ փախուցեալ էին վասն Քրիստոնեութեան և էին ի բաղարին կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա։ (Հալէկեցին)։ Եւ զամենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նորա... եղիշ. եր. 13—14։ Թեև այս բանը հայոց ոգնություն խնդրելուց առաջեր։)

Իսկ այն չի՛ք Մեհրուժաննեըից առաջինը, վոր և մե՛ծ ուրացող, ս. Նեբսես մեծի

Աղանի հայրը Վասակ Արծրունին լինելը, որպես նաև Մերհուժանի Աղանին յեղբայր լինելը տարակույսի յենթակա խնդիր չե։ Նախ, ինքը Փարպեցին իր Պատմության մեջ (յեր. 14) վկայում է թե Աղանը Վասակ Արծրունու որդի յե, և թե Մերհուժանը Աղանի յեղբայրը (յեր. 108)։ Յերկրորդ, Արծրունյաց տոհմի պատմաբան Ծովմա Արծրունին իր պատմության 75, 76, 80 և 91 յերեսներում, Աղանի մասին մի քանի տեղեկություններ ավելի տալով մեզ, կրկնում է այս բանը դրականապես։ Ուստի, յեթե հիմնվինք քեռի խոսքի վրա, և պետք է հիմնվել, ուրեմն Զմիկն ել Անույշ-Վռամն ել Վասակ Արծրունու դստերքն են։

Հ. Մ. Չամչյանը, իր խմբագրի մեջ, որ Հայոց Պատմության մակագիր ունի, Հատ. Ա, յեր. 508, ասում է. «Էառ և եղբայրն Վարդանայ Համազեակ իւր կին զդուստր Վռամայ ուրումն մեծի իշխանի և էր անուն աղջկանն Զուիկ և գիւղ Զուկայ որ կոչիւր Անոյշվռամ, էառ իւր կին բդեշխն Վրաց Աշուշայ, որ և էր իշխան Գուգարացւոց»։ Հանգուցյալ վերապատվելին պատմում է այս բանը իր գրքի 57 րդ գլխում, որի լուսանցում կարդում ենք հետևյալ հեղինակների անունները, որոնց գործերից վորպես թե քաղել է ամբողջ այդ գլխի բովանդակությունը։ Յեվ ահա յեն այդ անունները. Խորենացի, Փարպեցի, Հովհաննես Կաթողիկոս, և Ասողիկ։ Բացի սոցանից ցույց է տալիս և Հայսմավուրք սեպտեմ. 9. սուրբ քամակից հետևում է և մեկ և այլն։ Մեզ թվում է թե իրավունք չունինք բանի տեղ չդնել այս և այլե խոսքը, որովհետև շատ անգամ Չամչյանի աղբյուրը այդ խոսքն է լի-

---

ժամանակ, այն է 376 թվականին ուրացավ և քրիստոնյա հայերի արյունը խմելով հինդ տարի անդադար թուր քաշեց աղգի և յեկեղեցու ընդդեմ, մինչև վերջին պատերազմում հայոց սպարապետ հոյակապ Մամբռ ասպետը լռնեց նորան և կրակի նման տաքացրած կարմիր չամփուրը սրակ չինելով և ուրացողի գլխին դնելով տեղն ի տեղը չեն սառուկ արավ. (381 թվականին)։

Յերկրորդ չե՛ք, նույնպես Մեհրուժան Արծրունի, ութերորդ դարում այն է 786 թվականին Յեղիա վոստիկանի ժամանակ ուրացավ*, վորով բոլոր Վասպուրականի իշխանությունը առացավ և այս այն ժամանակ, յերբ նորա յերկու յերանելի յեղբայրքը— Սահակը և Համազասպը— դահճի ձեռքով մորթվեցան նույն 786 թվականի** սպրելի 8ին, հաստատ և հավատարիմ մնալով աղգին և յեկեղեցուն։ Բայց այս Մեհրուժանն ել համ չառավ իր ուրացությունից։ Յերբ Վասպուրականի իշխանությունը առած վերադառնում եր իր յերկիրը, Վան քաղաքում նստող, Մամիկոնյան Դավիթ իշխանը նորա առաջը դուրս դալով, Վասպուրականի տեղ դժոխք ուղարկեց, նույն իսկ հանդիպած տեղում*** նորա պատանը ձևելով։

Յավելի՛ յե, վոր մի քանի չքերի պատճառով վորպես Մեհրուժան նույնպես և Վասակ անունը ել վոչ վոք չե տալիս իր զավակներին։ Պետք չե մոռնալ, վոր այդ անուններով շատ ընտիր և պատվական մարդիկ են յեղել, և աղգի և յեկեղեցու համար արյուն թափել։ ուստի մի քանի չքերի պատճառով այդ մարդոց անունն ել կորցնելը լավ բան չե։ Մենք արտաքնս չնորհակալ ենք մեր հին բարեկամից, վոր այս նախապաշարմունքի ընդդեմ, իր պատվական վորդու անունը դրել է Մեհրուժան։ Բա՛ղ նմանի՛ նա Աղանի յեղբոր Մեհրուժանին։

* Ջնջված՝ և այդ ուրա... ԽՄԲ.։

** Ձեռագրում սխալմամբ 876։ ԽՄԲ.։

*** Ջնջված՝ սատկեցնելով. ԽՄԲ.։

նում, վորին վո՛չ տաննավոր, այլ հարյուրավոր ապացույցներ պատրա՛ստ ենք դնել պահանջողի առջևը։

Բանը այն է, վոր Խորենացին, Փարպեցին, Հովհ. կաթողիկոսը և Ասողիկը բնավ չեն հիշում Զվիկի հոր անունը և, բացի Փարպեցուց, նաև Զվիկի անունը։ Իսկ թե ի՛նչ աղբյուրից է հանել Ջամչյանը թե Զվիկը Վռամ անունով մի մեծ իշխանի դուստր եր այդ մեզ հայտնի չե։ Ստո՛ւյգ է Հայսմավուրք և այլն չունինք մեր մոտ, բայց հազիվ թե դրցա հեղինակությունը բան արժե պատմական խնդիրների մեջ։ Յեթե Հ. Ջամչյանը Վռամ չասեր այլ մի ուրիշ անուն, ապա, հիմնվելով Փարպեցու քեռի խոսքի վրա առանց յերկարաբանության կա՛նգնեյինք և բնա՛վ իսկ ուշ չդնելով այդ անունին, սակայն Վռամ անունը ստիպում է մեզ մի փոքր մտածել, վորովհետև Աշուշայի կնոջ անունը Անույշ-Վռամ է. և հայտնի չե թե աղբիկները յերբեմն կոչվում եյին իրենց հոր անունով, Անույշ բառը ավելացնելով այդ անունի սկզբում կամ վերջում։

Իսկ յեթե Զվիկի հոր անունը Անույշ-Վռամից յեղրակացնելով շինված և Վռամ կամ Հ. Ջամչյանի՛ և կամ այլն մարդու ձեռքով, վորից փոխ և առել վերապատվելին այդ անունը, ապա ուրեմն մեզ մնում է ասել վոր բավական աջո՛ղ և յեղել այդ առասպելի արվեստակությունը։ Խնդրի վախճանական լուծումը թողում ենք ժամանակին. բայց, մինչև այդ ժամանակ, Զվիկին ճանաչում ենք Վասակ Արծրունու դուստր։

§ 25. Այս բղեշխը, մեր շատ անգամ հիշած, Աշուշա, Վրաց բդեշխն է։

§ 26. Առկաձելի բառը, մեր լեզվի մեջ, պլխարկից սկսած մինչև ոթոցը (փռվածք, խալիչա) ամեն բան նշանակելով, մեր թարգմանության մեջ բնագրի խոսքը պահեցինք, վորովհետև չգիտենք ստուգապես թե ի՛նչ բան եր, վոր Փարպեցին տանում եր Վահանի քամակից, խաղալու ժամանակ։

§ 27. Բնագիրը. «Եւ վկայէ Գիր ՚ի Կաթուղիկէն» (յեր. 42). Մենք ՚ի Կաթուղիկէն խոսքը Իմաստութիւն (Սողոմոնի) կարդալով թարգմանեցինք, վորովհետև այն Փարպեցու խոսքը չեր։ Կաթուղիկեայց անունով հիշված վկայությունը վո՛չ միայն Կաթուղիկեայց Թղթերում այլ և բովանդա՛կ Նոր Կտակարանի մեջ չկա. Հին Կտակարանումն ել միա՛յն մի տեղ. «Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ». (Իմաստություն, Գլ. Բ, համ. 24), ուստի մենք համարձակվեցանք պրչի աղճատանքը սրբագրել։

Յեվ վորպեսզի չկարծեն վոմանք թե հին ժամանակներում Սողոմոնի Իմաստությունը Կաթուղիկեայք եր անվանվում (ըստ վորում անհիմն կարծիքներ առա՛ծ են մեր ժամանակներում), ուստի վկա յենք կանչում Ագաթանգեղոսը, ուր ս. Լուսավորիչը ասում է. «Քանզի և ասէր իսկ Իմաստունն, թէ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ». (Ագաթ. յեր. 119)։

§ 28. «Եւ պահէր Եսաւ ո՛խս Յակովբայ վասն օրհնութեանցն զոր օրհնեաց զնա հայր իւր, և ասէր Եսաւ ՚ի մտի իւրում, մերձեսցին աւուրք կսրեաց հօր իմոյ զի սպանից զՅակովբ զեղբայր իմ». Ծննդոց, Գլ. Իէ, համ. 41։ Նոտր գրով տպված խոսքերը հրեական բնագրին մեջ այսպես են. «և

ասաց Եսաւ ՚ի սրտի իւրում. աւրուք սգոյ հօր իմոյ (այսինքն հորս մեռնելու որերը) մերձեալ են. սպանից յակոբ զեղբայր իմ զՅակովբ»:

§ 29. «Եւ վաճառեցին զՅովսէփ Իսրայելացւոցն քան ՚զհաճկանի». Մտունդք, Գլ. Լէ, համ. 28:

§ 30. «Եւ բամբասեցին Մարիամ և Ահարոն զՄովսէս վասն կնոջն եթովպացւոյ՝ զոր առ Մովսէս. զի կին եթովպացի առ: Եւ ասեն՝ թէ ընդ Մովսիսի միա՞յն խօսեցաւ Տէր. ոչ ապաքէն և ընդ մե՛զ խօսեցաւ և լուաւ Տէր.... Եւ եղև բարկութիւն սրտմտութեան Տեառն ՚ի վերայ նոցա՝ և գնացին.... Եւ ահա Մարիամ բորոտեալ էր իբրև ղձիւն. և հայեցաւ Ահարոն ընդ Մարիամ և ահա բորոտեալ էր»: Թիւք, Գլ. ԺԲ, համ. 1—10:

§ 31. Տե՛ս Առաջին թագաւորութեանց ԺԸ, ԺՔ, Ի, ԻԲ, ԻԳ, ԻԴ, և ԻՋ գլուխները:

§ 32. «Եւ գպիրքն որք յերուսաղեմէ իջեալ էին ասէին թէ Բէեղզեբուղ գոյ ՚ի դմա, և իշխանաւ դիւացն հանէ դա զդևս». Աւետ. Մարկ. Գլ. Գ. հ. 22: «Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւ դիւաց հանէ դա զդևս». Աւ. Մատթ. Գլ. Թ. համ. 34*: «Ոչ ևիք հանէ դա զդևս եթէ ոչ Բէեղզբուղա՛ւ իշխանաւն դիւաց». Նոյն, Գլ. ԺԲ. համ. 24: «Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս», Աւ. Ղուկ. Գլ. ԺԱ. համ. 15:

§ 33. «Ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր». Մատթ. Գլ. Թ, համ. 11: «Զի՞ է պի ընդ մեղաւորս և ընդ մաքսաւորս ուտէք և ըմպէք». Մարկ. Գլ. Բ, համ. 16: «Ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէք և ըմպէք»: Ղուկ. Գլ. Ե, համ. 10: «Ընդէ՞ր ուտ զմեղաւորս ընդոմի և ուտ ընդ նոսա». Նոյն, Գլ. ԺԵ, համ. 2:

§ 34. «Յայնժամ մատեան առ Նա աշակերտքն Յովհաննու և ասեն. ընդէ՞ր մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ և քո աշակերտքդ ոչ պահեն». Մատթ. Գլ. Թ, համ. 14: «Ահա այր կերող և արբեցող, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց». Մատթ. Գլ. ԺԱ, համ. 19. Ղուկ. Գլ. է, հ. 34: «Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու և փարիսեցիքն պահեն և քո աշակերտքդ ոչ պահեն». Մարկ. Գլ. Բ, հ. 18: «Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու պահեն ամէն և խնդրուածս առնեն, նոյնպէս և փարիսեցւոցն. և քոյդ ուտեն և ըմպեն». Ղուկ. Գլ. Ե, համ. 33:

§ 35. «Ո՞չ բարւոք ասեմք, եթէ Սամարացի ես դու, և դև գոյ ՚ի քեզ». Յովհ. Գլ. Ը, համ. 48: Տե՛ս նոյնպես Յովհ. Գլ. է, հ. 20, Ը, 52. Ժ. 20. Մարկ. Գ. 30:

§ 36. «Խնդրէին հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպանանիցին զնա. և ոչ գտանէին: Զի բազո՛ւմ սուտ վկայութիւն վկայէին զնմանէ. և նման միմեանց՝ ոչ էին վկայութիւնքն: Այլք յարուցեալ վկայէին ասո՛ւտ զնմանէ, և ասէին, թէ մեք լուաք ՚ի դմանէ զի ասէր. Ես քակեցից զտաճա՛ր զայդ ձեռագործ, և զերիս աւուրս շինեցից ա՛յլ առանց ձեռագործի: Սակայն և այնպէս չէր նման վկայութիւնն նոցա»: Մարկ. Գլ. ԺԴ. հ. 55—58: «Խոռվէ

* Ջնջված՝ «Իսկ փարիսեցիքն ասէին... եմբ.»:

զմոդովիտրա, ուսուցանէ ընդ ամենայն Հրէաստան, սկսեալ ՚ի Գալիլեէ մինչև ցայսր». Ղուկ, Գլ. ԻԴ. համ. 5։ «Գտաք զսա ի Թիւրէր զազգս մեր, և արդեւ՛ր ՚ի տալոյ հարկս կայսեր, և ասէր զանձնէ, թէ Քրիստոս իցէ թագաւոր»։ Նույն Գլ. նույն, հ. 2։

§ 37. «Քանզի դիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա.... առեալ ջուր լուացս զձեռս առաջի ժողովրդեանն և ասէ քաւեալ եմ ես յարենէ արդարոյ այդորիկ. դուք դիտասջիք». Մատթ. Գլ. Իէ, հ. 18 և 24։ Տե՛ս և Մարկ. Գլ. ԺԵ, հ. 10, Ղուկ. ԻԴ, համ. 4, 14, 15 և 22։ «Առէ՛ք զնա դուք, և ըստ ձերոց օրինացն դատեցարուք». Յովհ. Գլ. ԺՐ, համ. 31։

§ 38. Բնագրում ասած է. «Վիճակեցին մահու, և ոչ ուղղոյ այլ անիծից» և* իսկույն սորանից հետո բացահայտում է. «այսինքն՝ խաչի». (յեր. 43)։ Բանի դրուբյունը այս է. յեբրայական որենքով անիծված եր այն մարդը, վոր փայտից կախվելով եր մեռնում։ «Զի անիծեալ յԱստուծոյ է ամենայն, որ կախիցի զփայտէ»։ Երկր. Օրէնք, Գլ. ԻԱ, համ. 23։ Իսկ խաչվիլը համարվում եր փայտից կախվիլ. «Աստուած հարցն մերոց յարո՛յց զՅիսուս՝ զոր դուքն սպանէք կախեալ զփայտէ». Գործք Առաք. Գլ. Ե, համ. 30։ «զՅիսուս որ ՚ի Նազարեթէ զոր օ՛ծն Աստուած Հոգւով Սրբով և զօրութեամբ... սպանին կախեալ զփայտէ». Նույն, Գլ Ժ. համ 38—39։ Այս պատճառով Պավղոսը ասում է. «Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք**. զի գրեալ է, թէ անիծեալ ամենայն, որ կախեալ կայցէ զփայտէ»։ Թուղթ Պավղ. առ Գաղատ. Գլ. Գ, համ. 13։ Մեր ուսումնական յեղբարքը չնեղանան մեզ, վոր այսպիսի մանրամասն ծանոթություններ են դնում ամեն քայլափոխ. նորա ազա՛տ են չվարդալ. մենք հասարակ ժողովրդի համար ենք գրում։

§ 39. «Եթէ զիս հալածեցին ասպա և զձե՛զ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեսցեն». Յովհ. Գլ. ԺԵ, հ. 20։

§ 40. «Եթէ զտանուտէրն Բէեղզեբուղ կոչեցին, ո՛րչափ ևս առավել զընտանիս նորա». Մատթ. Գլ. Ժ, համ. 15։

§ 41. «Տեսանել որդւոցն Աստուծոյ զդստերսն մարդկան զի գեղեցիկ էին առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին»։ Ծննդոց. Գլ. Զ, համ. 2։

§ 42. «Եւ ահա այր Իսրայէլացի, գայր ածէր զեղբայր իւր առ սիրն Մադիանացի յանդիման Մովսիսի, և յանդիման ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի. և նորա լային առ դրան խորանին վկայութեանն Եւ տեսեալ Փենէէսի որդւոյ Եղիազարու, որդւոյ Ահարոնի քահանայի, յարեաւ ՚ի միջոյ ժողովրդեանն, և առեալ գեղարդն ՚ի ձեռն իւր և համատ գնաց առն Իսրայէլացւոյ ՚ի հնոցն*** և խոցեաց զերկուսին զայրն Իսրայէլացի, և զկինն

---

* Ջնջված՝ մի փոքր... ԽՄԲ.։

** Մեզ թվում է թե այս վոճը անեծք լինել, վորպես նաև նզով լինել, (փաստերին իր պատմության մեջ բերելով այս վկայությունը գրում է նզովեալ լինել), (յեր. 89) բնիկ հայկական վոճ չե, այլ հունական լեզվի ուղղակի տպագրություն, ըստ վորում կարդում ենք. «Ըստ այսոսիկ պակասում է չարունակությունը։ ԽՄԲ.»։

*** Բառական թարգմանություն է հունականից, ուր կարդում ենք καμινος մինչ-

ընդ արգանդ իւր և զադարեաց Հարուածն յորդւոցն Իսրայէլի*.... Եւ խոսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. Փենէէս որդի Եղիազարու, որդւոյ Ահարոնի քահանայի ցածոյց զսրտմտութիւն իմ յորդւոցն Իսրայէլի... ահա ես տայց նմա ուխտ խաղաղութեան. և եղիցի նմա և զաւակի նորա յետ նորա ուխտ քահանայութեան յաւիտենական. փոխանակ զի ջնախանդիր եղև Աստուծոյ իւրում և քաւեաց վասն որդւոցն Իսրայէլի: Եւ անուն առն Իսրայէլացւոյ հարեալոյ, որ հարաւ ընդ կնոջն Մադիանացւոյ, Զամբրի... և անուն կնոջն Մադիանացւոյ հարեալոյ Քազբի»: Թիւք, Գլ. Իե, հ. 6—8, և 10—15: «Ապա եկաց 'ի մէջ Փենէէս, քաւեաց և արգելաւ մահ. համարեցաւ նմա յարդարութիւն ազգի յազգ մինչև յաւիտեան». Սաղմ. ճե, համ. 30:

§ 43. «Եւ բանակեցաւ Իսրայէլ 'ի Սատտիմ և պղծեցաւ պոռնկել ընդ դստերան Մովաբու: Եւ կոչեցին զնոսա 'ի զոհս կռոց իւրեանց, և եկե'ր ժողովուրդն 'ի զոհից նոցա: Եւ նուիրեցաւ Իսրայէլ Բէլփեղովրայ. և բարկացաւ սրմտութեամբ Տէր 'ի վերայ Իսրայէլի.... Եւ ասէ Մովսէս ցգեղոն Իսրայէլի. կոտորեցէ'ք իւրաքանչիւր զընտանի իւր զնուիրեալ Բէլփեգովրայ.... Եւ եղեն մեռեալքն 'ի հարուածոյն յայնցանէ քսան և չորք հազար». Թիւք, Գլ. Իե, համ. 1—3, 5 և 9: «Եւ մի' պոռնկիցուք որպէս ոմանք պոռնկեցան 'ի նոցանէ և անկան 'ի միում աւուր քսան և չորք հազարք». Թուղթ Պաւղ. առ Կորնթ. Առաջ. Գլ. ժ, համ. 8: «Պղծեցան նոքա 'ի Բէլփեգովր... բարկացուցին զնա 'ի գործս իւրեանց, յաճախեաց 'ի վերայ նոցա բեկումն». Սաղմ. ճե, համ. 28—29:

§ 44. Դաւթի վորդու Ամոնի անդգամութեան վրա և ակնարկում իր քրոջ Թամարի հետ: Բայց վոր ասում և «վասն անհանճար խօսիցն», մենք հասկանում ենք այդ Հովնադաբի տված խորհուրդը: Մենք չենք արտագրում այդ անցքի պատմութիւնը, նախ վոր յերկար և, յերկրորդ, վոր շատ պիղծ բան: Կամեցողը թող կարդա, Երկր. Բագ. Գլ. ԺԹ, համ. 1—22, 27—29 և 32:

§ 45. «Եւ հաճոյ եղև ենովք Աստուծոյ. և ոչ ոսկէք գտանէր, զի փոխեաց զնա Աստուած». Ծնունդք, Գլ. ե, համ. 24:

դեռ Հրեական բնագրում קבה պարզապես սենյակ է նշանակում և վոչ հնոց. և Զամբրին ֆազրու հետ ո՞ւր եր մտնում հնոցը հայտնի չե թե իր սենյակը կ'երթար, ինչպես և ասում է Ցերբայական բնագիրը: Հայկազ. բառարանն էլ, հնոց բառի տակը, ճարը կոչված հիշում և «ըստ այլոց պոռնկանոց»· ցանկալի չեր իմանալ ո՞յք են այդ այլքը. վոր հնոցը պոռնկանոց են հասկանում. և քանի' արժանը ունի այդ տեսակ քաշկռտուք մեկնութիւնը:

Մենք վեճ չունինք, դուցե** յեղել են մարդիկ վոր հնոց բառը այդ տեղում արդարացնելու համար ստիպվել են այդպես կարկանել աննրբելի ուշաբարձութեամբ. վորովհետև յեթե խարայելյան բանակում մի պոռնիկ մարդ կամ մի բոզ հայտնվեր, խակուն քարկոծում եին նորան առանց խնայելու, էլ ինչպես ուրեմն կարող եր հատուկ բոզ նոց լինել բանակի մեջ յեթե բոզ և պոռնիկ չկար: Բայց, աբեղայից ի՛նչ հարցնես լուկա: Սակայն Հայկազյան բառարանը պարտական եր անունով հիշել հնոցը պոռնկանոց հասկացողքը· վորովհետև այժմ առանց վկայութեան էլ հավատ չկա!:

* Հետևյալ § 43 ի հոդվածում հիշված հարվածի վրա յե ակնարկում:

** Ջնջված՝ վոմանք... ԽՄԲ.:

§ 46. «Եւ օրհնեաց Աստուած զնոյ և զորդիս նորա. և ասէ ցնոսա, աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր և տիրեցէք դմա». Մնունդք, Գլ. Թ, համ. 1։

§ 47. «Եւ ահա կառք հրեղէնք և երիվարք հրեղէնք.... և վերացաւ Եղիա շարժմամբ յերկինս». Չորրորդ Թագ. Գլ. Բ, համ. 11։ Այստեղ հայտնում ենք ընթերցողին, վոր Թղրի բնագրում ասած եր. «իսկ զարմանալին զառնէն զնղիսայէ» և այլն. մենք եղիաս կարդալով թարգմանեցինք, վորովհետև նղիսէն, եղիայի սքանչելի ճանապարհորդությունից հետո, յերկար ժամանակ պետնի յերեսին ապրելով, այստեղ էլ վախճանեցավ։ Տե՛ս Չորր. թագ. Գլ. ԺԹ, համ. 20։

§ 48. «Ամենայն որ հայի ՚ի կի՛ն մարդ առ ՚ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ՚ի սրտի իւրում». Մատթ. Գլ. Ե, համ. 28։

§ 49. Պավղոսը ինքն և վկայում. «Եթէ զիտէք ինչ խնդրէք զՔրիստոսի; որ ինձս ընդ ձեզ խօսի». Թ. Պաւղ. առ Կորնթ. Երկր. Գլ. ԺԳ, համ. 3։

§ 50. «Այսուհետև աշխատ որ ոչի մի արասցէ. զի ես զշարշարանս Քրիստոսի ՚ի մարմնի իմում կրեմ». Թ. Պաւղ. առ Գաղատ. Գլ. Զ, համ. 17։ «Վնասս ընդակառակութիւն նեղութեանցն ՚ի մարմնի իմում». Թ. Պաւղ. առ Կողոս. Գլ. Ա, համ. 24։ Ամենայն Հայոց յեկեղեցին մեր բազմերախիտ Հորն և յերգում. «Խոստովանօղ Քրիստոսի ճշմարիտ վկայ, բազմաշարշար նահատակ Տէր Գրիգորիոս. զպակասութիւն շարշարանաց Տեառն ի մարմնի իւում կրեցեր» (Շարական)։

§ 51. Բնագրում ասած է. «Քանզի ընդ գիտնոյ Օրինաց են խօսքս». (յեր. 46)։ Պավղոսիցն և վոխ առնում այս ձևը. «Զի ընդ գիտունս օրինաց խօսիմ». Թ. Պավղ. առ Հռոմ. Գլ. Է, համ. 1։

§ 52. Բնագրում ասած եր. «Այլ սակաւ բանիւք զոր յերկրորդումն Թղթին գրէ ՚ի Կորնթացւոցն», և այլն։ Ինչպես ընթերցողը արդեն տեսավ, մենք գրել ենք «առաջին Թղթում», վորովհետև յերկրորդումն խոսքը Փարպեցու խոսքը չեր այլ որինակող գրիչների աղճատանք. պատճառ մնջ բերված վկայությունը Կորնթացոց յերկրորդ Թղթում չե, այլ առաջնում, և ահավասիկ. «Բնաւ և անուանի՞ իսկ ՚ի ձեզ ընդէ՛ր պոռնկութիւն». Թ. Պաւղ. առ Կորնթ. Առաջ. Գլ. Ե, հ. 1։ Վոր միևնույն է, գրեթե բառ առ բառ, Փարպեցու Թղթի բնագրում մեջ բերվածի հետ. «Ընդէ՞ր իսկ բնաւ և անուանի ՚ի միջի ձերում պոռնկութիւն». (յեր. 46)։

§ 53. «Այլ պոռնկութիւն և ամենայն պղծութիւն, կամ ագահութիւն և անուանեսցի մի՛ ՚ի միջի ձերում». Թ. Պաւղ. առ Եփես. Գլ Ե, համ. 3։

§ 54. «Ամենայն պոռնիկ, կամ պիղծ, կամ ագահ, որ է կռապարիշտ ոչ ունի ժառանգութիւն յարքայութեանն Քրիստոսին և Աստուծոյ»։ Նույն. Գլ. նույն. հ. նույն։

§ 55. Բնագրում անուն չկա, այլ մի քանի կետ. բայց պ. Եմինը ծանոթաբանում է. «Աստէն բառ ինչ պակասի. գուցէ անուն իցէ Յովհաննու, որոյ և յառաջ բերեալ տեսանի բան»։ Լիակատար իրաստնք ունի պ. Եմինը. գուցե էլ հարկավոր չեր, վորովհետև բոլանդակ Աստվածաշնչի մեջ, բացի

Հովհաննես ավետարանչից վոչ վոք և ասել այդ խոսքերը: Մենք դրական ընդունեցինք պ. Եմինի առաջարկությունը. բայց հայտնում ենք, վոր մենք չերաշխավոր չենք, թե Փարպեցին անպատճառ Հովհաննես և դրել: Հովհաննես ավետարանիչը մի քանի անուն ունի, գուցե նոցանից մինը դրած եր. բայց չերաշխավոր ենք, վոր թե ինչ ել դրած և չեղել Փարպեցին, այնուամենայնիվ Հովհաննես ավետարանչին և հասկացել: Բայց վորովհետև այդ խոսքերը Ավետարանի մեջ չեյին այլ Առաքեալի Բղթում, ուստի մենք դրեցինք «Հովհաննես Առաքյալ»: Ահավասիկ բուն խոսքերն ել. «են մեղք, որ մահու չափ են. ոչ վասն այնորիկ ասեմ եթէ խնդրեսցես. ամենայն անիրաւութիւն մեղք են. և են մեղք, որ մահու չափ են». Ցոովն. Առաք. Գլ. ե, համ. 16—17:

§ 56. «Վասն այդորիկ ասեմ ձեզ. ամենայն մեղք և հայհոյութիւնք թողին մարդկան, բայց զՀոգւոյն հայհոյութիւն մի՛ թողի: Եւ որ ոք ասիցէ բան զորդւոյ մարդոյ՝ թողի նմա. բայց որ զՀոգւոյն սրբոյ ասիցէ՝ մի՛ թողի նմա, մի յայսմ աշխարհի, և մի՛ ՚ի հանդերձեալումն». Մատթ. Գլ. ԺԲ, համ. 31—32: «Ամէն ասեմ ձեզ, զի ամենայն թողի մարդկան մեղք և հայհոյութիւնք որչափ և հայհոյեսցեն, բայց որ հայհոյեսցէ զՀոգին Սուրբ, ոչ ունիցի թողութիւն յաւիտեան, այլ պարտապան լիցի յաւիտենից մեղաց». Մարկ. Գլ. Գ, համ. 28 և 29: «Եւ ամենայն որ ասէ բան զորդւոյ մարդոյ, թողի նմա. բայց որ զՀոգին Սուրբ հայհոյիցէ, մի թողի նմա». Ղուկ. Գլ. ԺԲ, համ. 10: Պավղոսը Հոգվույն Սրբոյ հայհոյությունն և համարում, յերբ մարդ, ճանաչելով ճշմարտությունը, մեղանչում և նորա ընդդեմ, վորովհետև ասում է. «Զի կամակար մտօք եթէ յանցանիցեմք յետ ընդունելութեան գիտութեան ճշմարտութեանն՝ այնուհետև ոչ ևս պիտոյ է վասն մեղաց պատարագ. այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին, և նախանձ հրոյն որ ուտիցէ զհակառակորդան». Թուղթ Պաւղ. առ Եբր. Գլ. Ժ, համ. 26—27: Անթողելի չե համարում այս մեղքը, ապա ուրեմն Հոգվույն Սրբո հայհոյությունն և ճանաչում, վորովհետև մնացած մյուս բոլոր մեղքերը անթողելի չեն: Յեվ այս հայտնի չե, վորովհետև ինքը Քրիստոսն ել ասում է:

§ 57. Քրիստոսի ասած հիմար և խմաստուն կույսերի առակի վրա չե ակնարկում: Կարդացողը կարո՛ղ է տեսնել այդ առակը Մատթ. Գլ. ԻԵ, համ. 1—12:

§ 58. Սաղմոսիցն է վոխ առնում այս ձևը. «Սուրբ նոցա մոցէն ՚ի սիրտս նոցա և աղեղունք նոցա փշրեսցին». Սաղմ. ԼԶ, համ. 15:

§ 59. Այստեղ բնագրում այսպես եր ասած. «Յաղագս որոյ և զայլսս ամենայն և զորս առ նոսա արանցն ծառայք նորա», և այլն. (յեր. 48): Մենք, ինչպես կարո՛ղ է տեսնել ընթերցողը թեև թարգմանել ենք դրեթե քառ առ բառ, բայց խոստովանում ենք, վոր մի փոքր մութ է յերևում մեզ այս ասացվածքը. պատճառ, չե հասկացվում, թե վոր ասում է, «ծառայք նորա», ո՛վ է այս նման, կամ վորի՞ ծառայքն են վոր ունին: Վերը շատ սրբերի անուն տալով հետո հիշում է և մեր ս. Լուսավորչին, արդյոք նորա՝

ծառայքը պիտի հասկանալ, իրամ թե նորա տեղ պետք է նոցա՞ կարդալ և բոլոր հիշված արբերին վերաբերել, մենք հանձնառու չենք ասել, մանավանդ վոր պարզապես չենք հասկանում և չդիտենք։ Այս պատճառով էլ բնագիրը պահեցինք այստեղ, վոր ընթերցողը տեսնե։

§ 60. Պարտականություն ենք համարում պահել այստեղ այդ հոյակապ առածի բնագիրը. «Ըստ խոզի հարսնացելոյ կոյաջուր բաղանիք»։ (յեր. 49)։ Թեպետ և սովորաբար չեն թարգմանում այսպիսի առածները, մանավանդ վոր շատ անգամ և չի թարգմանվում, կամ համը կորցնում է, բայց մենք մեր ընթերցողներին մոտավորապես գաղափար տալու համար թարգմանեցինք, այնպես, ինչպես տեսնում է ընթերցողը։

§ 61. Բնագիրը այսպես է տպած. «Մի արդարև պատմեսցի այս գէթ ըստ բանի ողբոյն և մի՛ լռիցէ՛ ի դրունսս Ասիապովնի». (յեր. 49)։ Գեր բառի տակ պ. Եմինը այսպես է ծանոթաբանում. «Յերկոսին յօրինական գրեալ տեսանի՛ ի գէր»։ Ինչպես ընթերցողը տեսնում է, մենք ոգուտ չենք գտել պ. Եմինի սրբագրությունից. և պատճառը այս է, թե վո՛րքան պ. Եմինը իրավունք ունի գեր շաղկապի վրայից նախդիրը հալածելու, վորպես դրչի սխալ նո՛ւյնքան իրավունք ունի ամեն մարդ հատուկ անուն Գեթ։* հալածյալ նախդիրը պաշտպանելու, վորպես բո՛ւն Փարպեցու ձեռքով գրված նախդիր։

«Եւ ողբաց Դաւիթ զողբս զայս ՛ի վերայ Սաուղայ և ՛ի վերայ Յովնաթանու որդւոյ նորա.... Մի պատմէք ՛ի Գէր, և մի տայիք զայդ աւետիս ՚ելս Ասկաղովնի. զի մի՛ երբէք ուրախ լիցին դստերք այլազգեացն, և մի՛ ցնծասցեն դստերք անթլփատիցն»։ Երկր. Թագ. Գլ. Ա, համ. 17 և 20։

Այս Գեթը և Ասկաղովնը այլազգյաց հինգ նախաթաղությանց յերկուքն են. Գողիաթը Գեթացի եր նույնպես։ Յերբ Սաւղոսը իր վերջին պատերազմում մեռավ և նորա մահի լուրը Դավիթին հասավ, այն ժամանակ, սա պատռեց իր շորերը և վողբաց նորա մահը։ Փարպեցին իր Թղթում բերելով այս ասացվածը, ավելցնում է. «Ըստ բանի ողբոյն»։ Նախնյաց գրվածքը սրբագրելը շատ զգուշալի բան է առհասարակ. բայց մանավանդ, յերբ չենք հասկանում մեր սրբագրությամբ բռնաբարած բանը։ Այսքան։

§ 62. «Մի՛ գոցէ՛ քաղիցէք զորոմնն և զդորեանն ընդ նմին ՛ի բաց խլիցէք. թո՛ղ տուք երկոցունց աճել ՛ի միասին մինչև ՛ի հունձս, և ՛ի ժամանակի հնձոց ասացից ցհնձողսն քաղեցէք նախ զորոմնդ, և կապեցէք զայդ խրձունս առ ՛ի յայրել և զդորեանն ժողովեցէք ՛ի շտեմարանս իմ». Մատթ. Գլ. ԺԳ, համ. 29—30։

§ 63. «Եւ հնձողքն հրեշտակք են». Մատ. Գլ. ԺԳ, հ. 39։ «Եւ առաքեաց Տէր Աստուած հարցն նոցա ՛ի ձեռն մարգարէիցն, կանխեալ առաքեաց զհրեշտակս իւր.... արհամարհէին զհրեշտակս նորա և անգոսանէին զբանս նոցա». Երկր. Մնացորդ. Գլ. ԼԶ, համ. 15—16։ «Եւ առաքեաց Աստուած հարցն նոցա զհրեշտակս և զմարգարէս իւր.... և արհամարհեցին զհրեշ-

* Ջնջված՝ նախդիրը... ԽՄԲ.։

տակս նորա». Առաջ. Եզր. Գլ. Ա, հ. 50—51։ «Եւ ասէ Անգէոս հրեշտակին Տեառն՝ ի հրեշտակս Տեառն ցժողովուրդն». Մարգ. Անդ. Գլ. Ա, համ. 13։ «Զի շրթունք քահանային զգուշացին գիտութեան.... զի հրեշտակ Տեառն ամենակալի է». Մարգ. Մաղաք. Գլ. Բ, համ. 7։

§ 64. «Ես ասացի թէ աստուածք իցէք, կամ որպիք բարձրելոյ ամենեքեան։ Դուք աւադիկ որպէս մարդիկ մեռանիք, և որպէս զմի ի իշխանացն անկանիք». Սաղմ. ՁԱ, համ. 6—7։ «Եւ ասէ Տէր ցՄովսէս ահա եառ զքեզ աստուած Փարաւնի». Ելք, Գլ. Է, համ. 1։ «Ո՞չ յօրէնս ձեր գրեալ է. Ես ասացի թէ աստուածք իցէք». Յովհ. Գլ. Ժ, համ. 34։

§ 65. Բնագիրը այսպես և ասում. «Իսկ ես ոչ հրեշտակս՝ և վարդապետս և ոչ երբէք իսկ չեմ եղեալ քանիս այս ըստ երբէք ՝ի հարցողաց ուղուք կամաց գործոյ իշխանութեան, և ոչ երբեք». (յեր. 49)։ Մենք այնպես ենք հասկանում ինչպես թարգմանել ենք։

§ 66. Հայոց ազգի մեղքից, այս բանը ասես թե նորա յեկեղեցու ճակատումն է գրված։ Այսոր ել Կիլիկիա մեջ Կոզանողլուն, ազգի և կաթողիկոսի կամքին ընդդեմ, առաջնորդներ է կարգում. շատ անգամ, այո՛, բռնադատում է և յեպիսկոպոս ձեռնադրել իր արբանյակները, վորի որինակները և սոցա վողբալի հետևանքը միշտ անպակաս է ազգի աչքից։

§ 67. «Մի՛ բազում վարդապետս լինել եղբա՛րք իմ, գիտասջիք, զի մեծ դատաստան ընդունելոց եմք». Ր. Կաթ. Յակ. Առաք. Գլ. Գ, համ. 1։

§ 68. Բնագրում ասած է. «Լսեն զՊողոսի բողոքն, թէ զանձինս դատէաք». (յեր. 50)։ Մեզ թվում է թե ձեռագիրը կրճատված է այստեղ. պատճառ, Պավղոսը այսպես է ասում. «Զի եթէ զանձինս քննէաք ապա ոչ դատապարտէաք». Թուղթ Պաւղ. առ Կորնթ. Առաջ. Գլ. ԺԱ, համ. 31։ (Դատապարտէաք խոսքը պիտի կրավորականապես հասկանալ, հունական բնագրին համաձայն)։

§ 69. «Առաջի իմ եղև դատաստան, և առնոյր դատաւորն կաշառս. վասն այնորիկ ցրուեցան օրէնք և իրաւունք ՝ի գլուխ ոչ ելանեն. զի ամբարիշտն չաղթահարէ զարդարն. վասն այնորիկ ելանէր դատաստանն թիւր». Մարգ. Ամբակ. Գլ. Ա, համ. 3—5։ Հարազատ թարգմանություն է հունականից. բայց մի փոքր անհամաձայն է յեբրայականի հետ։ Բայց թողունք այդ. մենք այստեղ ուրիշ բան ունինք ասելու։

Բնագրում ասած եր. «Եւ զմարգարէին Ամբակումայ ստումկանեն զաղաղակ՝ մանաւանդ թէ նովաւ». (յեր. 50)։ Մենք այս դերանունը աղաղակի տեղ դրված հասկանալով թարգմանեցինք. և վորովհետև չեթե կամենայինք դերանունի տեղ դերանուն դնել դարձյալ, ինչպես. նորանով. բանը պիտի շփոթվեր և ընթերցողը պիտի դժվարանար հասկանալ թե ում և վերաբերում, մարգարեի՞ն, թե աղաղակին, ուստի մենք աղաղակը վերատին կրկնեցինք։

Բո՛ւն հին լեզվի մեջ ել սովորական չե այն ձևը— նախան դերանուն,

ինչպես նա, դա նա, գործ դնել անշունչ առարկաների* կամ վերացյալ ըմբռնողության տեղ— բայց յերբեմն յերբեմն կա գործ ածված և մեզ թվում է թե հունական լեզվի ազդեցություն է այս, վորովհետև այդ լեզուն, ինչպես մեր լեզուն նա և նույն, առանձին դերանուն չունի այլ յերկուքի դաղափարն էլ տալիս է միևնույն խոսքով միևնույն դերանունով, վոր նախնիք թեև սովորաբար թարգմանում են մեր լեզվի պահանջողության համեմատ յերբեմն նա և յերբեմն նույն, բայց տեղ տեղ ներս է մտած նա փոխանակ նույնի։

Հին լեզվի մեջ այս նա, նույն և այն դերանունների տարբեր գործածությունը, վոր շատ դյուրություն է տալիս բանի պարզ հասկացողությանը, ձախողակի, շփոթվել և նոր լեզվի մեջ։ Առանց նորան էլ մեր մեջ դերանունները սեռ չունենալով ծանրացնում են բանը. բայց յերբ այդ դերանուններից էլ լոկ մի հատը միայն գործ են դնում, այն ժամանակ ստիպվում ենք շատ տեղ բուն անունը կրկնել, վորպեսզի դաղափարը չփոթվեն։

Արարատյան բարբառում, վորի** կատարյալ և գեղեցիկ դաղափարը, մոտավորապես, տալիս է մեր Հյուսիսափայլը***, նույն և այն դերանունները չեն գործածվում հոլովված։ Մնացել են միայն ուղղականքը, իսկ մյուս հոլովները առնվում են նախից։ Ստրա հակառակ Կոնստանդնուպոլսի բարբառում, նա և նույն դերանունները ուղղականում միայն և անխտիր ամեն բանի տեղ գործ ածվելով չունին մյուս հոլովները։ Սոցա պակասը լցնում են այն ի հոլովները։ Մեզ թվում է թե այս բանի մասին պետք եր հոգ տանել. պատճառ, մե՛րն էլ նոցա՛նն էլ գովելի բան չե։ Այս բանների մանրամասն քննությունը պետք է պահանջել գալոց քերականությունից նոր լեզվի։

§ 70. Բնագրում, Սևուկ անունի տակ, պ. Եմինը ծանոթաբանում է այսպես. «Արդեօք անուն տեղւո՞յ է Սևուկս այս, եթէ մարդոյ. ինձ կարծի եթէ յատուկ անուն մարդոյ պիտի լինել, և գուցէ նոյն իսկ իշխանին Անձևացեաց, զորի ի Պատմութեանն իւրում յիշատակէ Ղազար յերկուս դէպս՝ կոչելով զնա իշխան Անձևացեաց Սևուկ (Պատմ. Ղազարայ, յեր. 221—22)։ Գուցէ ի դրախտին Սևկոյ իշխանիս այսորիկ էր, որ յանձնեաց Վահան Ղազարայ զվերակացութիւն Կաթուղիկէ եկեղեցւոյ ի Նոր քաղաքի» (յեր. 51)։

Մեզ թվում է, վոր թե ուշադրությամբ կարդար պ. Եմինը Փարպեցու Պատմության 221—22 յերեսները, վոր ինքն է հիշում, ապա հազիվ թե թույլ կը տար այս յենթադրությունը։ Փարպեցու Պատմության մեջ հիշված Սևուկը մի ուրացյալ և չի՛ք մարդ եր, վոր զորքով և զենքով 482 թվականի գարնան հարձակվեցավ յերկու ուրիշ ուխտապահ և հավատարիմ նախարարների վրա, յերբ սոքա Վահանի այն նեղ ժամանակը գնում եյին նորան Պարսից ընդդեմ ոգնելու։ Բո՛ղ խոսի ինքը Փարպեցին. «Եւ լուեալ զայս Պարսից ընդդեմ ոգնելու։ Բո՛ղ խոսի ինքը Փարպեցին. «Եւ լուեալ զայս պատգամ չորեցունց գաւառաց նախարարացն (Վահանն եր ուղարկել այս

---

* Ջնջված՝ կամ վերացական ըմբռնողությանց... ԽՄԲ.։

** Ջնջված՝ մոտավորապես... ԽՄԲ.։

*** Ջնջված՝ վոչ մեկն... ԽՄԲ.։

պատգամը Արծրունյաց, Անձևացյաց, Մոկաց և Ոշտունյաց իշխաններին) կէսքն փափաքեալք աջոյ կողմանն գալ տուեալ բնթանալին ի հօտ ոչխարանց ժամանել. և այլք ընդ դասակս այծեաց ձախակողմեան հաղորդեալք գնային անդարձութեամբ ի խաւարն արտաքին: Ոմն յԱնձաւացւոյ նախարարացն սեպուհ մի, որում անուն էր Յովհան. և միւս ևս երուանդունի Ներսէհ անուն, միաբանեալ ի խնդիր բարի ցանկութեան, ընդ որս և հաւանեալ և այլ արք ճշմարտութեան նուիրիչք գնացին խաւսիլ ի դունդն գօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենին: Եւ մինչդեռ ժողովեալ գնային ի ճանապարհի, մերձեալք ի քաղաքատեղն որ կոչի Առեաս. ի ժամանակի քառասնորդացն պահոց ի մեծի շաբաթու զատկին, յանկարծակի յանգգաստից եկեալ հասանէին ի վերայ նոցա իշխանն Անձևացեաց Սևուկ անուն և իշխանն Մոկաց Յովհան անուն, բազում զրուժիով ընդ առաւօտն ծագել: Եւ սոցա զդացեալք կէսքն պինեալք և կէսքն թէպէտ անպատրաստք էին այլ օգնութեամբ Բարձրելոյն քաջալերեալք հարկանէին ի դիմի աներկիւղապէս». և այլն (յեր. 221—22):

Ո՛ւր եյին գնում Վահանը, Ս. Հովհան Մանդակունին, Փարպեցին և մյուսները 486 թվականին այս չի՛քի պատեզը:

Բայց այս, վորպես յենթադրություն, հիմնավոր թե անհիմն, տակավին կարող եր անել պ. Եմինը. բայց ի՛նչ ասենք այս խոսքերին վոր պ. Եմինը խոսում է իր հառաջաբանի մեջ. «Յանդիման եղև (Փարպեցին) մեծի մարզպանին՝ այն ինչ զօրավարն Հայոց ի Սևկոյ դրախտին էր». (յեր. 22): Ի՛նչ տեղից է առնում պ. Եմինը այս հարցասիրության արժանի տեղեկությունը: Ո՛վ է արդյոք նորան պատմում թե Փարպեցին Սյունյաց յերկրից վերադառնալով առաջին անգամ «յանդիման եղև մեծի մարզպանին ի Սևկոյ դրախտին»:

Մեզ թվում է, թե այս մի այնպիսի խոսք չէ վոր բնավ հիմք չունի, վորպես և այս խոսքերին հաջորդող, մյուս, սոցանից վոչ պակաս, զարմանալի խոսքերը այդ 'հառաջաբանության*, վոր, ճշմարիտն ենք ասում, հիացնում է մեզ:

**Յեվրոպան, իբրև արծաթ, կրակով է փորձում այսոր գիտությունը և ինչ վորի չե դիմանում այդ հրափորձության իբրև վոշխ ցնդեցնում է ոդի մեջ, մաքրելով գիտությունը յեկամոտ և կամամտած ածականներից:

Վա՛յ մեզ, մենք տասնևիններորդ դարու մեջ, հերիք չհամարելով այն բոլոր խոչիվը, վոր դիզված է մեր պատմության վրա, տակավին աշխատում ենք մի քանի խուրձ ավելցնել. «Դի՛ր զմեզս ի վերայ մեղաց»: Բայց բարձրացնում ենք այստեղ մեր բողոքը ընդդեմ այն բոլոր մարդկերին, վոր իրենց մտքի կամ յերևակայության արդյունքը կամենում են դնել մեր առջև

---

* Ջնջված՝ վորոնց հարևանցի վողջույն պետք տանք հետևյալ պարբերության մեջ. ԽՄԲ.:

** Ջնջված՝ Այսոր... ԽՄԲ.:

վորպես դիտութեան խոսքը։ Դիտութեան խոսքերը չեն դոքա և* դիտութիւնը նուիրեալս** հրաժարվում է այսոր այդ դիտութեան կարծեցեալ քուրմերից, ինչպես յերբեմն Յեհովան Իսրայելի կարծեցեալ մարգարեներից. «որք ասէին, այսպէս ասէ Տէր, և ես Տէր ոչ առաքեցի զնոսա և ես Տէր ոչ խօսեցայ և սկսան յարուցանել բանս». (Մարգ. Եզեկ. Գլ. ԺԳ)։ '

*** Պ. Եմինը մի կողմից կարծում է թե Թղթում հիշված Սևուկը և Անձևացյաց իշխանը, և մյուս կողմից էլ հաստատապես ասում է թե Փարպեցին Սյունյաց յերկրից վերադառնալով «յանդիման եղև մեծի մարզպանին ի դրախտին Սևկոյ»։ Եթէ այս Սևուկը Անձևացյաց իշխանն եր, ուրեմն իր յերկիրը և դրուղամնա պարտեզը Անձևացյաց դավառում։ Անշուշտ պ. Եմինին հայտնի չէ, թե ո՛ւր եյին Սյունիք և ո՛ւր Անձևացիք. ուրիշ ամենը բոլոր, նոցա մոտակա Գեղամա ծովակը և Վարդատաղը, շատ անգամ հիշվում է մեր պատմութեան մեջ. Փարպեցին Սյունյաց աշխարհից վերադառնալով ճանապարհի վրա՞ արդյոք պատահում է մարզպանին Սևուկի պարտեզում, թե՞, Դվինն վերադառնալուց հետո, հատկապես գնում է Անձևացյաց յերկիրը վոր մարզպանին ներկայանա։

Արդա՛րև մեզ շատ զվարճալի չե թվում այս փոքրիկ խնդրի լուծումը։

Այն ժամանակ միայն Անձևացյաց իշխան կարելի չեր յենթադրել Փարպեցու Թղթում հիշված Սևուկը, յեթե այդ մարդը միա՛յն լիներ մեր պատմութեան մեջ այդ անունով։ Գրեթե 400 տարի հետո ժամանակների վերաբերութեամբ, Հովհաննես կաթողիկոսը պատմելով Բուխայի հասուցած հարվածները, այսպես է խոսում. «եւ անտի ևս չուեալ (Բուխայ) յՈստի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփանոս, որում և Կոն անուանէին զնա. որ ի ձախմոյ իւրմէ Սեկոյ՝ Սևորդիք ազգն անուանէին». (յեր. 71)։ Յեվ հետո Սևորդյաց Գևորգ նահապետի անունը տալով բացատրում է. «որ սակս Սև կոչեցելոյ հատուց իւրեանց ազգն յայն անուն Սևորդիք անուանէին». (յեր. 103)։ Աստուծու սիրուն աղաչում ենք, հինգերորդ դարում, չեյի՞ն կարող ուրիշ Սևուկներ լինել բացի Անձևացյաց իշխանից։

Յեվ ի՞նչ պատճառով Սևուկը անպատճառ պիտի մարդու անուն կարծենք. մի՛թե չե՞ր կարող տեղի անուն յեղած լինել. մի՛թե չկա՞ մեր աշխարհագրութեան մեջ տեղ, վոր Սևուկ կոչվեր։ «Եւ զՍևուկ բերդակ, որ է մարդաւղի». Ասողիկ, (յեր. 179)։ Ստո՛ւյգ և այս անունը մենք լսում ենք տասներորդ դարու վերաբերութեամբ. բայց կարելի՞ չե ասել թե այդ տեղը շկար հինգերորդ դարում, կամ, յեթե կար, դեղնուկ եր կոչվում և վոչ Սևուկ։

---

* Ջնջված՝ յեթե... ԽՄԲ։

** Ջնջված խոսում է այսոր ինչպես յերբեմն Յեհովան Իսրայելի մարգարեներին. «Այսչա ասէ Ադոնայի Տէր... վա՛յ զոցա որ մարգարէ անունդ ի սրտից իւրեանց, որ երթան դէտս ոգւոց իւրեանց և ամենևին ոչ տեսանեն... որք ասէին այսպես ասէ Տէր. և ես Տէր ոչ առաքեցի զնոսա և սկսան յարուցանել բանս։ Ո՞չ տեսլեա՞ն տեսանէք սուտ տեսիլ, և գուշակութիւնս անառակս պատմեցի՞ք. և ասէք, այսպէս ասէ Տէր և ես Տէր ոչ խօսեցայ»... (Եզեկ. Գլ. ԺԳ, [համ. 2—7])։ ԽՄԲ։

*** Ջնջված՝ Յեթե... ԽՄԲ։

Մենք այս բերդի անունը հիշեցինք այստեղ վոչ այն պատճառով, վոր ասենք թե նորա պարտիզումն և անցել հիշված անցքը, հետի՛ մեզանից այդպիսի ծակ մարգարեությունք, այլ վորպեսզի ցույց տանք, վոր Սևուկը կարող եր և տեղի անուն չեղած լինել, ինչպես ցույց տվինք վոր Անձևացյաց իշխանից զատ չեղած են և ուրիշ Սևուկներ։

Բայց մենք ուզում ենք տակավին մի քայլափոխ առաջ տանել մեր սկեպտիցիզմը. ի՛նչ է մեր հիմքը, վոր մենք պիտի ասենք թե Սևուկի դրախտի մեջ է անցել հիշված անցքը։ Ի՛նչ իրավունք ունինք «ի Սևկոյ դրախտին» խոսքը բացարձակապես ներգոյական հոլով ճանաչել. «Սևկոյ» խոսքն էլ դրախտին հատկացուցիչ*։ Մեզ թվում է թե Փարպեցին իրավունք չե տալիս մեզ մի այդպիսի վերլուծության։ Ահա բնագրի խոսքերը. «Եւ կամաւ ևս խորհեցիս զիշեալ զառաւել պատգամն երանելւոյն Յովհաննու Գիւտայ կաթողիկոսի եղբօրորդւոյն, թեզ Տեառն ի Սևկոյ դրախտին յարթանց ոմանց, որք խոստանալով թեզ Տեառն կարասի խնդրէին զտեղիդ»։

Մի՞թե իրավունք պիտի ունենա բարկանալ մեր վերա հայկաբանության ուսուցչապետը, եթե այսպես հասկանանք. «Թեզ Տեառն յարթանց ոմանց դրախտին Սևկոյ»** մի՛թե չե կարելի մտածել թե Սևկոյ ի նախդիրը լիներ արանցի նախդրի կրկնություն. և մի՛թե ընդդե՞մ*** է քերականական ուղիղ կանոններին հասկանալ, եթե արք Սևկոյ դրախտին խոստանալով կարասի խնդրեին զտեղին։

Այս այն աստիճանի պարզ կանոն է վոր բնավ որևնակ ևս չենք ուզում բերել****։

Բայց ի՛նչ ասել է Սևուկի պարտեզի մարդիկ։ Յեթե Սևկոյ դրախտը պիտի Սևկոյ պարտեզ իմանանք, ուրեմն և Հացյաց դրախտն էլ Հացյաց պարտե՛զ։ Բայց շնորհակալ ենք յերանելի Մովսես Խորենացուց վոր Հացյաց դրախտը վանքի անուն չեղածը մեզ իմացնում է. (Խոր. Գիրք Գ. Գլ. 14)։ Չե՞ր կարող Սևկոյ դրախտն էլ մի վանքի անուն չեղած լինել, վորի միաբաններից վոմանք «կարասի խոստանալով խնդրեին զտեղին», զոր Ղազարու տայր Վահան։

Յերբ սրտապնդած թարգմանում եյինք այդ տեղը ի «Սևուկի պարտէզում» մեր մեծ հույսը այս եր վոր այստեղ իմաց տանք ընթերցողին բանի զորությունը. մանավանդ վոր կամ այսպես պիտի թարգմանեինք կամ այնպես ճար չկար։

Բայց ընթերցողը թող չսպասե մեզանից լսել, թե ի՛նչ է մեր կարծիքը Փարպեցու Թղթում հիշված Սևուկի մասին. մենք վոչի՛նչ ունինք նորան ասելու, վորովհետև պատմությունը մեզ չե ասում և չգիտենք թե մարդո՞ւ անունը է թե տեղի, և թե ո՛վ եր այդ մարդը, կամ ո՛ւր տեղը։ Մենք այսքանը

---

* Ընդված՝ համարելով։ ԽՄԲ.։

** Ընդված՝ ուրիշ խոսքերով, որանց հասկանալով... ԽՄԲ.։

*** Ընդված՝ ուղիղ... ԽՄԲ.։

**** Ընդված՝ մանավանդ պ. Եմինին ծանոթ է այդ ձևը, ըստ վորում... ԽՄԲ.։

գիտենք, որ Փարպեցու Պատմության մեջ հիշված Սևուկ Անձևացյաց իշխանը ուրացյալ չքերից մինն եր։ Սորանից այսքան կարողանում ենք հավանականաբար յենթադրել, որ Վահանը և Մանդակունին չեյին գնալ մի այդպիսի Հոսդայի պարտեզը։ Այսքանը գիտենք որ պ. Եմինը վո՛չ մի կերպով չե կարող ապացուցանել և հավանականություն եյ բնավ չկա, թե Փարպեցին Սյունյաց աշխարհից վերադառնալով առաջին անգամ ներկայացավ Վահանին Անձևացյաց աշխարհում ըստ վորում Սևուկի դրախտում, ըստ վորում Սևուկը Անձևացյաց իշխան։

Մենք ավելի լավ ենք համարում ճշմարտությամբ խոստովանել ընթերցողի առջև մեր տգիտությունը, Սևուկի մասին, ազատ թողնելով ուրիշներին, յեթե այդպիսիքը մասնավոր զվարճության են զգում առասպելաբանության մեջ

§ 71. Մեր պատմության մեջ, առաջին անգամ լսվում է այս անունը։

§ 72. Բնագրում ասած եր. «Գլուխ պատգամի պատասխանուցն սրաբեալ». (յեր. 51), վոր նշանակում է պատասխանի գլխավոր բանը, պատասխանի բովանդակությունը։ Այս ձևը շատ գործածական չե հին լեզվի մեջ՝ և մեզ թվում է թե յեղածն եյ հունարեն լեզվից է մտել, ինչպես երբ. Գլ. Ը. համ. 1, կարդում ենք. «եւ բանից գլուխ խօսիցս», վոր բառ առ բառ է հունարենի հետ. «κεφάλαιον δὲ ἐπὶ τοῖς λεγομένοις»։ Յերանելի Մաշտոց կաթողիկոսը Սմբատ Բագրատունի յեղբոր Աբասին գրած հիանալի Թղթում*, դարձյալ վորպես բովանդակություն գործ է ածում «գլուխ» խոսքը. «գլուխք պատգամաց Թղթիս ամբաստանութիւն էր» և այլն (Տե՛ս Յովհ. կաթ. Պատմ. Հայ. յեր. 83)։ Բայց սակայն հունարեն τέλος բառը, վոր Ժողովողի Գլ. ԺԲ, համ. 13 թարգմանված է «վախճան բանիս»— ἔλος λόγου և Յովհ. Գլ. ԺԳ, համ. 1 «իսպառ սիրեաց զնոսա» — εἰς τέλος ἠγάπησεν αὐτούς, Տիմոթեոսին գրված Պաղվոսի Առաջ. Թղթում Գլ. Ա, համ. 5 թարգմանված և գլուխ «Քանզի գլուխ պատուիրանին»,— τὸ δὲ τέλος τῆς παραγγελίας։ Նոր լեզվի մեջ տեղ գործ ածված այս ձևը, որինակ «գլուխ բանը առողջութիւնն է» փոխանակ գլխավոր բանի, լոկ պատահական նմանություն է կարծում ենք հունարենին, վորովհետև այդ բուրբերենի թարգմանություն է «քաշ շեյ սաղլըք դըր»։ Նոր լեզվի մեջ ընդհանրապես տանելի չե այս ձևը, այսինքն գլուխ փոխանակ գլխավորի կամ բովանդակության։ 1862 ի վենետիկ տպած Վարդան վարդապետի Պատմութեան, Մխիթարյանց գրած, հատաջարանության մեջ (հին լեզվով) կարդացինք «գլուխ գործոց» վորպես բառական թարգմանություն ֆրանսիական chèf d'oevres-ի. ասուված ընդունելի անուն։

§ 73. «Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի և թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա». Սաղմ. ՃԼԹ, համ. 4։

§ 74. Բնագիրը. «եւ իմոյ դմարթացեալ աղօթել». (յեր. 52). ստացական դերանուն փոխանակ եականնի։ Սատ՛ւգ է, վորպես ս. Գրքում, նույնպես

* Ջնջված՝ նույնպես... ՄՄԲ.։

և նախնյաց աշխատութեանց մեջ հանդիպում ե յերբեմն այս ձևը, բայց զգուշալի յե և վո՛չ բնաւ հետևելի։

§ 75. «Պահեա՛ զիս ոչխր, ի ձեռաց մեղաւորի և ի մարդոյ չարէ փրկեա՛ զիս». Սաղմ. ՃԼԹ, համ. 3։

§ 76. Սաղմոսիկն և փոխ առնում. «Բացին ի վերայ իմ զբերանս իւրեանց, և ասացին այո՛, այո՛, տեսին աչք մեր... վա՛շ վա՛շ անձանց մերոց, զի ընկղուզաք զնա»։ Սաղմ. ԼԴ, համ. 21 և 25։

§ 77. Այստեղ պ. Եմինը ծանոթաբանում և այսպես. «Ոչ յանձն առնումք համարձակապէս ասել, եթէ յո՛ր ի քահանայապետից մերոց ակնարկէ Ղազար. արդեօք ի Յովհան Մանդակունին (եկաց ի 480) ի Սամուէլ (492) ի Մուշէ (502) եթէ ի Սահակ (510)։

Տրտո՛մ ենք, վոր պ. Եմինի ծանոթութիւնքը տխրեցնում են մեզ յերկար բարակ խոսել։

Նախ, գլխավոր խաւանայության խոսքը, վորպես նաև քահանայապետ բառը միմիայն Հայոց կաթողիկոս և հաւկանում պ. Եմինը, ինչպես Մխիթարյանք քահանայապետ խոսքով Հռոմի պապը։ Թյուր ըմբռնողություն և, յեթե վերը հիշված բառերը բացառապաշտ տրվում են կաթողիկոսների, վորովհետև գլխավոր խաւանայության, (վոր նո՛ւյն և և գլխավոր քահանա և քահանաների պետավոր, ըստ վորում մեր լեզվի մեջ վերացյալ անուններդ շատ անգամ գործ են ածվում փոխանակ թանձրացյալի) և խաւանայապետ խոսքերը բո՛ւն հունական ἀρχιερεύς բառի ճիշդ թարգմանությունը լինելով, վորպես արհի յերեց, յերիցապետ, ավագ յերեց (ինչպես և Փարպեցին եև ասում և ավագ խաւանայություն. Պատմ. յեր. 106), վորպես տեսուչ քահանաների անխտիր գործ և դրվում յեպիսկոպոսների վերաբերությամբ։ Յեվ վոչ միայն այս բառերը, այլ նաև հայրապետ բառը յեպիսկոպոսներին տրված տեսնում ենք շատ տեղ, վորպես նաև Ասողիկի Պատմության 79 յերեսում. «Եւ յետ մահուանն Սուրմակայ ժողովեալ հայրապետացն Հայոց խնդրեալ գտին քահանայ ոմն Յովհեի անուն.... և հրամանաւ Վարդանայ նստուցին յաթոռ կաթողիկոսութեան»։ Հայտնի յե թե հայրապետ խոսքը կաթողիկոս չե նշանակում այստեղ, այլ, յեպիսկոպոս, առաջնորդ, վանահայր և այլն*։ Յեկեղեցական ժողովների վերաբերությամբ սովորաբար ասվում և այսքան կամ այնքան հայրապետ, մինչդեռ վոչ միայն այդ բոլորը կաթողիկոսք չեյին, այլև վոչ յեպիսկոպոս, վորովհետև հասարակ քահանայք միշտ շատ կային այդ ժողովների մեջ։ «Շնորհազարդ սուրբ հայրապետ» ասում և Մաշտոցը ամեն յեպիսկոպոսի, և այս տողերը գրել. և սուրբ Հովհան Մանդակունին։

Յեվ վո՛չ միայն այս, այլ մեզ թվում և, թե նաև լոկ քահանայք, վոր ձեռնադրությամբ չունեյին յեպիսկոպոսական աստիճան, բայց և այնպես անվանվում են քահանայապետ թե յուրյանց արժանավորության և թե վարած պաշտոնի պատճառով։ «Հրամայեն տալին սուրբ քահանայապետքն Աս-

---

* Ջնջված՝ Սուրբ ժողովների... ԽՄԲ.։

տուծոյ կապելոցն նախարարաց, աղօթից և տքնութեանց պարապելոյ» և այլն. (Փարպ. Պատմ. Հայ. երես 154)։ Ավելորդ է ասել, վոր բացի Ռշտունյաց Սահակ յեպիսկոպոսը, Ղևոնդյանց մեջ ուրիշ յեպիսկոպոս չկար։ Այո՛, կար Հովսեփը— տեղապահ կաթողիկոսը, բայց նա նույն Փարպեցու կրկին և կրկին ասելով լոկ քահանա յեր*, թեև կարգված «գլուխ ամենայն Հայոց քահանայութեան» (յեր. 136)։ Ն՛ույնպես արժանավորության պատճառով և սարկավագը անվանվում է քահանա. սուրբ Ղևոնդը, Պարսից հրապարակում, հայտնելով սուրբ Հովսեփի և սուրբ Սահակ Ռշտունյաց յեպիսկոպոսի ո՛վ և ինչ լինելը, հարում է. «Իսկ այլքս և ես միապէս եմք ըստ կարգի քահանայութեան» (Փարպ. Պատմ. յեր. 136). մինչդեռ անժխտելի չէ, վոր սարկավագ էլ կար նոցա մեջ, ինչպես միաբերան վկայում են և Ցեղիշեն և Փարպեցին։ Վերի որինակը թերևս այս էլ կարող է ցույց տալ, վոր Փարպեցին, բուն կաթողիկոսական իշխանությունն հատկացնելու համար, ասես թե հերիք չէ համարում լոկ գլուխ բահանայության խոսքը և ս. Ղևոնդի բերնով ս. Հովսեփին անվանում է գլուխ ամենայն Հայոց քահանայութեան»։ Վերևում, յերբ ասացինք, թե Փարպեցին լոկ քահանային էլ քահանայապետ է կոչում, հարկավոր եր ավելցնել, վոր մենք մոռացանք, վոր թե կապված սուրբերի մեջ հրաման տվող կար, այդ, տիրապես, ս. Ղևոնդն եր։ Ինքը ս. Հովսեփը, վոր կաթողիկոսական պաշտոն եր վարում, առանց ս. Ղևոնդի հրամանին վոչ մի բան չեր անում. յեթե ասենք թե և չեր խոսում, կարծում ենք թե չենք սխալվում։ Յեվ այս հայտնի չե Փարպեցու ստույգ պատմությունից. «Եւ սուրբն Յովսեփ հարցանէր ցայրն Աստուծոյ Ղևոնդ, թէ գիտեմ, թէ հասեալ գայ ի մեզ Վասակ, լրբի անամօթութեամբ սրտիւ գալ առ մեզ յողջոյն, և քո զմտաւ ածեալ, որպէս պարտ է առնել մեզ, ևրամայեա՛ և այնպէս առնեմք մեք»։ (յեր. 130)։ Մեզ թվում է թե այս բանը, վորպես նաև բովանդակ յեղելությանց մեջ, ս. Ղևոնդի գլխավորապես պաշտոն վարելը, վորի անունով և բոլոր նահատակը Ղևոնդյանք անվանվեցան, իրավունք և տալիս հավանականաբար յենթադրել, թե Փարպեցու քահանայապետ խոսքը վերաբերվում է նաև գո՛նե սուրբ Ղևոնդին, յեթե վոչ նորա ընկեր մյուս բոլոր քահանաներին։

Անտարակույս պ. Եմինը քահանայապետ խոսքը միակողմանի հասկանալն եր պատճառը, վոր ինչպես § 21 ցույց տվինք, Սյունյաց Մուշե յեպիսկոպոսին կաթողիկոս եր կոչում, յեթե չենք սխալվում։ Մենք ընդդեմ չենք և չենք մերժում թե գլխավոր բահանայության կամ բահանայապետ խոսքերը չե կարելի և կաթողիկոս հասկանալ. ըստ վորում շատ տեղ մեր կաթողիկոսքը յեպիսկոպոս են կոչում իրենց, վորպես նաև բոլոր ուրիշ ազգերի պատրիարքները, վորպես և Հռոմի պապը, ո՛ւր մնաց վոր Հովհաննես Ավետա-

* Թող ինչ կամի ասե Զամչյանը, հիմնվելով Ցեղիշեյի յեպիսկոպոս բառի վրա, վոր տեսանչ է նշանակում, մենք, փարպեցու կրկին և կրկին բացատրությունը ընդունում ենք վորպես անհերքելի վկայություն այն բանին, թե ս. Հովսեփը բնավ յեպիսկոպոս չե ձեռնադրված։

բանիչը լոկ յերեց և ստորագրում։ Բայց ընդդեմ ենք և չենք կարող թույլ տալ, թե հայոց լեզվի մեջ գլխավոր քահանայության, կամ գլխավոր քահանա, կամ վոր նույն և քահանայապետ բառերը, միմիայն կաթողիկոս, են նշանակում։ Նույնիսկ Խորենացու նզովքը «ի վերայ գլխատրաց քահանայութեանն» չե կարելի բացառապարար կաթողիկոսների վրա հասկանալ. կարո՛ղ եր, վոր այդ բանը յեղած լիներ և յեպիսկոպոսների վրա. թեև այո՛, մենք ել յերբեմն, առանց քննության, պ, Եմինին հետևելով, այդ նզովքը վերադրած ենք կաթողիկոսներին. բայց այս սխա՛լ և, քանի վոր վերը շատ անգամ հիշված խոսքերը լոկ կաթողիկոս չեն նշանակում։

Յերկրորդ, դնենք թե կարելի յե այս տեղում գլխավոր քահանայության խոսքը կաթողիկոս հասկանալ, բայց և այնպես, մեզ թվում ե թե պ. Եմինը հիմք չունի, յերբ Մանդակունու անունն և տալիս։

ա) Սուրբ Հովհան Մանդակունին կաթողիկոս նստավ, ինչպես ինքը պ. Եմինն ել խոստովանում ե, 480 ին։

բ) Մինչև 484 թիվը, Վահանի անհնազանդության և պատերազմը տևում եր Պարսից ընդդեմ. Փարպեցին, ինչպես ինքը իր Պղոում վկայում ե, Կամսարականների մոտ եր այդ միջոցին, և բնավ վորևիցե յեկեղեցական պաշտոնի մեջ չեր։

գ) 484 ին Վահանը հաշտվեցավ. և Փարպեցին գնաց Սյունյաց աշխարհը։ Յերկու տարի այդտեղ մնալուց հետո վերադարձավ Այրարատ, ուրեմն 486 ին։

դ) Ս. Հովհան Մանդակունին վախճանեցավ 487 ին...։

Դնենք թե Փարպեցին 486 ին կարգվեցավ վանահայր, այնուամենայնիվ Մանդակունու* մինչև վախճանը ավելի չե մնում քան**...

---

* Ջնջված՝ որով... ԽՄԲ.։

** Այստեղ ձեռագիրն ընդհատվում ե. ԽՄԲ.։

ՀԵԳԵԼԸ ԱՆՈՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ

Բեռլինի համալսարանի մեջ կարդացած Հայմի դասերը:
Թարգմ. Սոլյանիկովի— Ս. Պ. Բ. 1861[1].

ՔԱՂՎԱԾՔ ՅԵՎ ՄՏԱԾՈՒԹՅՈՒՆՔ

«Ամեն փիլիսոփայություն ուրիշ բան չե, յեթե վոչ նորա ժամանակը, փոխադրված դեպի միտք (переведенное в мысли) և հիմարություն և կարծել, թե վորևիցե փիլիսոփայություն անցնում ե իր ժամանակակից աշխարհից դեպի դուրս».[2] Հեգել. Իրավանց փիլիսոփայության հառաջաբանության մեջ[3]:

Այս դրությունից պարզ յերևում ե, վոր փիլիսոփայությունը իջնելով իր լոկ տեսական աթոռից, մուտք ե կոխում իրական պատմականության վրա: Հայտնի չե թե ինքը ժամանակը ուրիշ բան չե, յեթե վոչ հասկացողության և կարծիքի դումար, վորևիցե առնված հասարակության, առնված միջոցում: Բոկլի մետոդը և աշխատությունը— համակցել մասնավոր յերևույթքը և մի ամբողջության տալով նոցա, հաջորդ յերևույթքը ընդունել վորպես կրավորական արդյունք— շատ մոտ ե ըստ սեռին Հեգելի այս դրության: Յեվ իրավ վոր, չե կարելի կարգավորապես ուսանել պատմության վոգին, մինչև նորա մասնավոր յերևույթքը չհավաքվին դեպի մի վորոշյալ աղբյուր, վորտեղից դուրս ելին յեկել: Հայտնի չե թե այս դրությունը խոպան սասանեցնում և կամքի դրական ազատությունը, վորի՝ հետև չենթարկվում և շրջապատող աշխարհի և ժամանակի ազդեցության և զուգակշռվում ե:

Գրանովսկին, թեև խոստովանում և այս դրությունը բայց վոչ դրականապես: Նա ասում ե, թե վորովհետև պատմության, թեև անժխտելի, որենքի կատարումը չափված չե ժամանակով, ուստի գլխավոր ներգործող անձին վորակությունքը կարող են ազդել այդ կատարման ժամանակի վրա. և ցավում ե, վոր Մեկենտոշից ջոկ ուրիշ հեղինակները* շատ քիչ ուշադրություն են դարձնում պատմության հոգեբանական տարրի վրա: Այստեղ պարձյալ ասում և թե ներգործող անձը հանդես չե գալիս վորպես լոկ գործիք, այլ** ինքնակատարապես կամ վորպես պաշտպան կամ վորպես հակասակորդ պատմության որենքի և այլն: (Собран. соч. Грановского, т. 2. եր.

* Ջնջված՝ ուշադրություն չեն դարձնում կամ չառա... ԽՄԲ.:
** Ջնջված՝ վորպես ինքնակա... ԽՄԲ.:

319—320։ Այն հատվածի մեջ վոր գրել եր Ռդենի գրքի վրա Histoire de Henri VIII et du schisme d' Angleterre, par M. Audin, 1847. 2 vol.)

Հեգելը անդրդվելի հետևելով իր դրության, մի ուրիշ տեղ (Փիլիսոփայության պատմության հառաջաբանի մեջ, յերես 9) ասում է թե «պատմության փորձերը անպտուղ են անց կենում, խրատական հետք չթողնելով մարդկային հիշողության մեջ»[4]։ Ինձ թվում է թե այս անպտղությունը բնական է, վորովհետև ապագա մարդը յենթարկվելով իր ժամանակի ազդեցության կրավորականապես պիտի ներգործե ժամանակի վոգուն համեմատ, այստեղ անցածի խրատը հազիվ թե կարող է արժեք ունենալ. Գրանովս[կին] խոստովանում է այս, բայց թույլ տալով պատմական խորհրդի ազդեցությունը, վոր աճել եր* անցածի, մնացած ավանդության հիման վրա։ (Տես Գրան[ովսկու] ճառը, կարդացած Մոսկվայի համալսարանում 1852. հունվար 12, տարեգլխի հանդեսի պատճառով. Грановский, I, յեր. 27)։

«Որենքը պատմաբանաբար հասկանալը, ասում է Հեգելը իր աշխատությունների մեկի մեջ, վոր (այսինքն հասկանալը) աշխատում է ցույց տալ նորա (այսինքն որենքի) հիմքը մոռացված սովորության և արդեն մարած կյանքի մեջ, դորանով իսկ պարզապես վկայում է, վոր այդպիսի որենքը կենդանի ներկա ժամանակի մեջ վոչ խորհուրդ ունի վոչ արժեք»[5]։ Այս դրությունը ավելի պարզ կերպով հասկացնում է և արդարացնում է իր (այս յերեսի սկզբում) փիլիսոփայության մասին դրությունը։ Ի՛նչպես հրճվանք է գալիս մարդու վրա, վոր կես դար առաջ միմիայն հռչակավոր փիլիսոփային հասկանալի և ըմբռնելի դրությունը այսոր կարոտություն չունի ապացուցանելու նաև շատ միջակ հասկացողությամբ մարդոց։

Բայց դու տե՛ս, վոր Հեգելի դրությունը ներգործում է և իր փիլիսոփայության վրա, վորի ժամանակը անցած լինելով կարող է նայվել վորպես անցած կյանքի առաջացուցած արդյունք, վորպես հիշատակարան գերմանական վոգու կերպարանագործության պատմության մեջ, և վոչ ավելի։ Փիլիսոփայական համակարգությանց ժամանակները անցան, այժմ կրիտիկի ժամանակ է. համակարգությանց կործանումը արդեն մի մեծ և հոյակապ համակարգություն է, թեև կործանվածների պես գլուխներ, պրակներ ու կատեգորիներ չունի։ Բարվոքել մարդկային կյանքը— ահա՛ փիլիսոփայությունը. ինչ ճամփով կուզես գնա, միայն թե խորհուրդը և նպատակը այն լինի։ Հայտնի չե թե ավելի կարճ, ավելի բնական և ավելի հաջող ճամփան ընտրելի չե, քան թե այն բարակ և միդամայատ ճամփանները, վոր ցույց եյին տալիս այս ու այն փիլիսոփայական համակարգությունքը։

Հայմը Գ դասի մեջ ասում է. «Հրեական (մովսիսական) որենսդրության վոգու մեջ, Հեգելի կարծիքով, ցոլանում է Քանթի փիլիսոփայության «վերացական մորալիզմը». սերը և կյանքը, ահա այն հասկացողությունքը, վոր ոգնում են Հեգելին ներս մտնել քրիստոնեական կրոնի և նորա արդողության խորունկ խորհրդի մեջ։ Հրեական վոգու մեջ— սորանով մտա-

* Ընդվան՝ անցածից մնացած... ՆՄԲ.։

ծում և նա (Հեգելը) հասկանալ վերը հիշած հակադրությունը, այս պատճառով աշխատում է համեմատություն դնել քրիստոնեության գլխավոր հիմքերի և սիրու և կյանքի հասկացողության մեջ— հրեական հասկացողությամբ ներողության և հանցանքի մեջ անանցանելի վիհ կար. բայց որենքով տրված պատիժը համարվում էր «մաքուր արդարադատություն. հանցանքի և պատիժի շաղկապը և լոկ հավասարությունը և վոչ կյանքը»: Աչքի առակ առնելով միմիայն այս հավասարությունը, անհնարին և խոսք ևս մեջ բերել հաշտության և ապրեցնելու մասին: Բոլորովին ուրիշ բան և, երբ սերը կը լինի կրոնի կենդրոնը, բարոյականության գլխավոր նշանաբանը: Միմիայն նույն իսկ մարդուց, նորա ամբողջ գոյությունից և բղխում և հանցանքը, և որենքը և ճակատագրի իրավունքը:

Այսպես էին այն ժամանակ— ասում է Հայմը— Հեգելի հասկացողությունքը սիրու իսկության մասին*, վորպես մարդու բոլոր բարոյական ձգտողությունքը կառավարող գործիքի մասին:

Հայտնի չէ թե քրիստոնեության եակաև տարրը որն է. հայտնի չէ թե մեծ հիմնադիրը իր վարդապետությամբ վեր ի վայր կործանեց «ակն ընդ ական և ատամն ընդ ատաման» վարդապետությունը. հայտնի չէ թե քրիստոնեության նպատակն և ընկերական կյանքի բարվոքումը մինչդեռ մովսիսական կրոնից յեսական վոդին բղխում է ամեն մի քայլափոխում:

Ուրեմն, քրիստոնեությունը հիմնված լինելով սիրու վրա, ուրեմն և ներող և զիջանող** տարրի վրա, վոր լինելով միևնույն ժամանակ այդ վարդապետության միրապետող վոդին, ընկերությունը բարվոքեմ ասած տեղը անարդարություն և տնկում և միտում և կշռի թաթը դեպի անհավասարություն, ուրեմն քրիստոնեական կրոնը թշնամի չէ հավասարության: Բոլոր այն «ուրեմ»-ները դուրս են գալիս դարձյալ այն մովսիսական յեսական վոգու ազդելուց. վորպես թե այն ժամանակ և յերևում ճիշտ հավասարությունը, յեթե Մարկոսը Կիրակոսի վորդին սպանե Կիրակոսը սպան քաշելով Մարկոսին մահի մատնե: Յեթե արյուն ընդ արյան, ակն ընդ ական սկզբունքը չլինի, ուրիշ աղբյուր չկա՞ հավասարության. մի՞թե վրեժխնդրությունն և հավասարության միակ աղբյուրը, սերը չունի՞ հավասարությունը: Յեթե Մարկոսն էլ իր կարգով յելնե Կիրակոսի վորդին սպանե և Կիրակոսի այրին սառնի ձեռքով Մարկոսին մահի մատնե. ի՛նչ յեղավ այս սքանչելի հավասարության եակաև և շոշափելի արդյունքը: Հանցանքը յերկու մարդ սպանեց, Մարկոսի և Կիրակոսի վորդիքը, հավասարության վոգին արդարադատության ձեռքով յերկու մարդ էլ ջոկ սպանեց, այսինքն Մարկոսին և Կիրակոսին. մեջ տեղում մնացին յերկու այրի կնիկներ յուրյանց մնացած վորբերով: Կիրակոսի մահը կենդանության չբերեց Մարկոսի սպանված վորդուն, նույնպես Մարկոսի մահը Կիրակոսի սպանված վորդուն: Յեթե մարդու ձեռքում հնար չկա մեռածը ապրեցնել, արդարության և հավասա-

---

* Ջնջված՝ ընդունելով սորան վորպես դործիք, վոր կառավարում է... ԽՄԲ.:

** Ջնջված՝ վոգու... ԽՄԲ.:

թության անունով յերկու նոր մարդ՝ ել սպանել ինչ խորհրդով ոմի ընկերական կյանքի մեջ. չե՞ վոր յերկուքի տունն ել կործանվեցավ։ Ասենք թե հանցանքը գործվել եր, բայց տակավին յերկու տունն ել հնար ոմեյին կենալու. բայց, հավասարության վոգին ունքը շինեմ ասելով աչքն ել հանեց— յերկու տունից ել մի մի մարդ առավ սպանեց և մի նոր թևև սրբացուցած հանցանք ել սա գործեց։ Ի՞նչ և այս հավասարության խորհուրդը։

Քրիստոնեությունը կործանեց և փշրեց այս վարդապետությունը, սերը դնելով ընկերական կյանքի հիմքը և բարոյականության նշանաբանը։ Մարկոսը թող ներե Կիրակոսին, յեթե նա սպանել և նորա վորդին. վորպես ղի Կիրակոսն ել նորան ներե, յեթե նա սպանե սորա վորդին։ Բայց կարգ ու կանոն կը մնա՞ մի ընկերության մեջ, յեթե հանցանքը մնա անպատիժ. յեթե բաց աչքով ներողության տրվի սպանությունը։ Զարմանք. հանցանքի ընդդեմ պատիժ դնելով մի՞թե կարելի չե հանցանքը սանձել։

Սպանության աղբյուրն ինչ և— ատելություն կամ հափշտակություն. յես-ին վոգի, վոր ամեն ուրիշ զոհում և իր գոյության։ Մուվսեսը թողնում և վոր մարդը ախտանա այս վոգով. հղանա հափշտակության, ատելության և սպանության— բայց յերբ կատարված եր վերջին գործողությունը մահի չե տալիս գործակատարին։ Հայտնի չե թե մարդը պիտի չատե, հափշտակություն չհղանա, յես-ին վոգին սանձե միմիայն արտաքին աշխարհից— հասնելու պատիժից վախենալով. ուրեմն ընկերության ապահովությունը եականապես հիմնված և յերկյուղի վրա. ամեն մի անգամ իրար վրա իրավունք ոմի[ն] նայելու վորպես սպանողի, ատեցողի, հափշտակողի վրա և իրար յերեսից պիտի պաշտպանվին միմիայն յերկյուղի միջնորդությամբ։ Յերկյուղն և վոր հույս և տալիս մարդուն ապրել ուրիշ մարդու հետ. յենթադրելով, վոր այդ ուրիշը պատժից վախենալով չպիտի հանցանք գործե։ Հայտնի չե թե այս վարդապետությունը յեթե հատուցամի յերկյուղը չինի ուրիշ բան չկա նորան բռնող։ Հիմի տեսնենք, թե յերկյուղը* բավակա՞ն և, կարո՞ղ և սանձ դնել մարդու կրքերին, մեղմել նորա յեսականությունը։ Մարդը հղացել և հանցանքը. նա թևև պիտե վոր հատուցամ կա, բայց նույնպես զգուշությունք և ասնում, վոր այդ հատուցամը իրեն չհասնի. այո, շատ անգամ զուր են դնում նորա հոգաբարձությունքը և մատնվում և, բայց շատ անգամ ել փախչում և հատուցմանն յերեսից։ Բացի սորանից թշնամությամբ զրպարտված, սուտ վկաներով այդ զրպարտությունը հաստատված, արդյոք անմեղն ել մահու պատիժ չե՞ կրում. և այս հավասարության վոգուց բղխած ըստ յերևույթին արդարությունը հրապարակային և որինական սպանություն չե՞։

Քրիստոնեությունը սեր և քարոզում. այո՛, ըստ յերևույթին հավասարության վոգին բռնաբարվում և յերբ հանցանքը ներվում և. բայց յեթե այդ ներողությունը ընդհանուրի համար և, յեթե սերը ամոքելով յեսականությունը արդեն մարդու անձին մեջ սանձում և և բարեխառնում և նորա կիր-

* Ջնջված՝ հերի՞ք է... ԽՄԲ.։

քիրը, վոր նա չի կարող այլևս առնել, հավիտականության հղանալ, և այդ խորհրդով սպանել յերբ արդարադատության առիթ չունի այլ ևս դրսպարտողների և սուտ վկաների թակարդի մեջ բռնվելով որինական սպանությունը գործել, միթե այս ավելի հավատարիմ դրամական չե՞ ընկերության բարեկեցության: Յեթե սիրով վոգեվորված* այդ ընկերության յուրաքանչյուր անդամը չի նայում այլ ևս իր ընկերի վրա վորպես թշնամու կամ կատաղի գազանի վրա, յեթե փոխանակ յերկյուղի վոր ամենի սրտի մեջ ամրացած դադար չեր տալիս նոցա, տիրապետե** խաղաղությունը հիմնվելով փոխադարձ հավատի վրա, վորի դրամականը և աղբյուրը եր սերը, միթե ընկերությունը ավելի յերջանիկ չի լինիլ***, վրեժխնդրության սկզբունքը ներողության սկզբունքին զոհելով կամ հավասարությունը (պատժի և մահի մեջ!) սիրու զոհելով:

Միթե ներողության մեջ հավասարությունը հավասարություն չե՞. միթե վրեժխնդրության հավասարությունը ավելի հզոր ներգործող և ընկերությունը ապահովելու համար:

Յեսական վոգով վարակված ընկերության մեջ նույն վոգին հանցանք և գործում, նույն վոգին դարձյալ պատժում և հանցանքը: Սորա արդյունքը վորչափ վոր ըստ յերևութին արդարության և հավասարության է, այնուամենայնիվ եակոնապես և դրականապես ընկերությանը վնասակար:

Սիրով վոգեվորված ընկերությունը, սիրուց տեղծվելով հնար չունի հանցանք հղանալ, հանցանք գործել, և նույն սերը դարձյալ ընդհանրական փոխազդեցությամբ յեղած հանցանքն էլ ներում է, վորով զարմանալի կերպով փոքրացնում է հանցանքների թիվը և կյանք է տարածում:

Ի՛նչ է այս քննության արդյունքը:

Մովսիսի կրոնից աղբերանում է մահ, իսկ քրիստոնեությունից կյանք:

Առաջինից փոխադարձ վրեժխնդրություն, իսկ յերկրորդից փոխադարձ ներողություն. առաջինից ժառանգական և հավիտենական թշնամություն, իսկ յերկրորդից մշտնջենական սեր և հաշտություն. առաջինից յեսական նություն և վայրենություն, իսկ յերկրորդից անձնազոհություն և քաղաքակրթություն:

Յեթե թերևս հավասարության անունով պիտի պաշտպանեն «ակն ընդ ական» վարդապետությունը, մենք թքում ենք այն հավասարության վրա, վոր յերևում է միայն թշվառության և մահի մեջ և հոժար ենք անհավասար լինել չարագործության մեջ, յերջանկությամբ եակոնապես և դրականապես հավասար լինելով: Այս մտածումը ազդեցին ինձ վերը գրված փիլիսոփայության վրա մտածությունը: Ոգոստ. 12, 1863

---

*Ընդված՝ ամեն մի անդամ... ԽՄԲ.:

** Ընդված՝ հավասը... ԽՄԲ.:

*** Ընդված՝ ներողության սկզբունք... ԽՄԲ.:

Վորևիցե փիլիսոփայի փիլիսոփայական համակարգությունը ուղղակի աղբերանում է այն ազգի կյանքից և պատմությունից, ինչ ազգի ինքը պատկանում է. այսպիսի դիպվածում փիլիսոփան կանգնած է յուր սեփական հողի վրա։ Ապա չեթե նորա համակարգությունը բացի իր ազգի կյանքից ունի իր մեջ և ոտար ազգի կյանքի վոգին, վոր ընդունելով վորպես նախագաղափար, հետևում է նորա ազդեցության տակ տրամադրել յուր ազգային կյանքից բղխած փիլիսոփայությունը, ինչպես Հեգելը անում է միշտ, աչքի առջև ունենալով հունական իդեալը, այն ժամանակ նորա փիլիսոփայական համակարգությունը իր ամբողջության մեջ չերևեցնում է ոտար տարրի խառնուրդ։ Յեվ վորշափ իրական լինի նորա համակարգությունը, այնուամենայնիվ մի մասնով պատկանում է վերացականության, վորովհետև մի վոտքը դրած է լոկ գաղափարի վրա, վոր չե ապրում այլ ևս վորպես կենդանի, այլ տեսնվում է և բռնվում է մտքով։

Վորշափ սարսափելի սխալ է, յերբ մարդիկ ընդհանրապես վազում են այս սիստեմից դեպի այն սիստեմը, «փիլիսոփա» դառնալու համար իր ազգի մեջ, վորշափ կռիվ, խռովություն։ Մինը Քանթին ևս հետևում, մյուսը Ֆիխտեյին, մյուսը Հեգելին ևն ևն։ Խե՜ղճ. այդ բոլորը գերմանական փիլիսոփայություն են. և քու ազգի կյանքից բղխած չլինելով քու ազգի մեջ անգործադրելի, չեթե գործադրությունը հասկանում ենք դրականապես, և իրավունք ունինք այսպես հասկանալու, վորովհետև այդ համակարգության պաշտողքը, ընդունում են նորանց վորպես դրական կետ. վորպես α և ω Բացի սորանից, Քանթի փիլիսոփայությունը բղխած եր Քանթի ժամանակակից կյանքից, այսպես և ուրիշներինը իրենց ժամանակակից կյանքից։ Միևնույն ազգի փիլիսոփայությունը, նույն իսկ իր համար չե կարող ամեն ժամանակ ուղիղ լինել, վորովհետև ժամանակն առաջ է վազում, հասկացողության գոմարը կերպարանափոխ է լինում։ Ե՛յ, դու, վոր և վոչ բնավ գերմանացի ես, դու վոր ապրում ես հարյուր տարի Քանթից հետո, քեզ ինչ կարո՛ղ են ոգնել Քանթը կամ Հեգելը, չեթե քո խուզարկողության խորհուրդը քո ազգի վրա գործ դնել և նորա համակարգությունը։

Մենաց վոր չե կարելի ճշմարտությունը քննել և ճանաչել ինքնակատարես, քանի վոր մարդու խուզարկունակությունքը հպատակված են այս կամ այն հեղինակության։ Իրավունք ուներ Դեկարտը մինչ գրում եր, թե «յես սկսելով քննել, առաջին գործս այն արի, վոր թափեցի վրայիցս ինչ վոր մինչև այժմ գիտեյի»։ Այս շատ խոր ճշմարտություն է և գրեթե հավիտենական։ Վորովհետև չեթե թափածը դրական ճշմարտություն ե, նա ինքնակա քննությամբ դարձյալ կը գա դեպի նա և անհնարին է վոր չգա. իսկ թե համեմատական եր, այն ժամանակ հայտնի չե թե թափելով նորան ավելի շահվեցավ քան թե համեմատականը ընդունելով վորպես դրական։

Ինչ վոր ինձ է վերաբերվում, յես վոչ մի համակարգություն չեմ ընդունում և ամեն համակարգությանց ստրկաբար հետևողքը ծաղրից ավելի ուրիշ բան թող չսպասեն ինձանից։ Փիլիսոփայությունը պիտի բղխի յուրա-

քանչյուր ազգի կյանքից. և այդ կյանքը յուր ամեն մի քայլափոխում, ամեն մի* կերպարանքում (phasis) պիտի աղբերացնե նոր հայացք։ Առաջուց դրված համակարգությունքը կանգնում են, նա մեռած է այն րոպեյից, յերբ նորա վերջին միտքը ընկել եր թղթի վրա. կյանքը գնում է առաջ, գնում է և նորա փիլիսոփայությունը։ Բայց փիլիսոփայությունը միայն այդ անունով գրքերի մեջ տեսնող մարդոց համար, վորևիցե մի հասարակ ազգի մեջ ի՛նչ բան ունի փիլիսոփայությունը։ Կո՛ւյր զքեզ. նորա փիլիսոփայությունն ել նորա կյանքիցն է բղխում, ինչպես կյանքն է, այնպես է և նորա փիլիսոփայությունը. և քո սքանչելի փիլիսոփայությունքը յերբե կամենաս նորա վրա պատվաստել կը դառնա նույն բանը, յերբ մտածես մի տունի վրա այլ տան հիմք դնել։ Ուզո՞ւմ ես փիլիսոփա դառնալ քո ազգի համար (վորովհետև կաթողիկե փիլիսոփա չկա և չե կարող լինել, քանի վոր ազգությունքը կան, քանի վոր բնությունը այլ և այլ աշխարհներում ունի այլ և այլ կերպարանքներ և աղդեցություն), ապա ուրեմն ուսիր քո ազգի կյանքը, նորա հասկացողության աղբյուրքը, նորա պետքերը։ Այդ կյանքի բարվոքելը է ամենամեծ և ճշգրիտ փիլիսոփայությունը։

Ստույգ է, կան ճշմարտություններ, վոր համեմատաբար դրականք են, քննիր նոցա վորակությունքը և յերբ ոգտակար և հարմար են քո ազգի կյանքին և պետքերին, ապա ուրեմն աշխատիր, վոր այդ ճշմարտությունքը մտնեն նորա հասկացողության գումարի մեջ։ Աշխատիր իրականապես բարվոքել քո ազգի կյանքը և թող քո բոլոր իմաստությունը ուղղվի դեպի նորա կյանքը։ Սուիեստությունը, մեջ և մեջ վերացական միգապատ և քաշկռտուք վարդապետությունք ընդունելը յերբե քեզ համար փիլիսոփայություն է, բարով յերթաս։ Մարդը իր կյանքը չե տանում առաջուց նշանակված մի ճամբով. կյանքը հոսանուտ բան է և հազար տեսակ հարաբերությանց, դիմադրությանց,— ավելցուր սրա վերա անհատական ձգտողությունքը (հայտնի չե թե միջին թիվը),— հանդիպելով կես մի կորցնում է իր նախաշավիղը, կես մի այլ ընթացք է բռնում, կես մի կանգ է առնում, կես մի վազում է անհնարին արագությամբ։ Յեղան ժամանակներ, վոր մարդը հարյուր տարի ապրեցավ, բայց մի որվա ճամփա չգնաց, բայց յեղան** ժամանակներ, յերբ մի որում մեկ դար քայլեց։ Պարո՛ն, դու դիմդդ ամուր բռնե ձեռքդ, տեսնեմ քու փիլիսոփայական կատեգորիներից ինչ կառնուս։ Փիլիսոփայությունը նաև ազատության քարոզած ժամանակ, յերբե դրականապես դնում է իր վարդապետության վոճը և համակարգությունը վորպես անմերժելի և անբողոքելի, արդեն թշնամի յե ազատության, արդեն խորտակում է իր փիլիսոփայությունը։ Մարդկության կյանքի այս անչափելի հեղեղի մեջ դու վորի՞ տունն ես հարցնում քո ծանր ու բարակ ահմանումներով, սահմերով և չգիտեմ դեռ ինչ զարի ու մարով։

Մարդը տուն չունի, մարդը հաց չունի, մարդը հանդերձ չունի, բնությունը իր

---

* Ջնջված՝ փազիսում... ԽՄԲ.։

** Ջնջված՝ և որեր, երբ... ԽՄԲ.։

առանելիքնելը իր պահանջն, խոհեմ և բնական համփան, մարդասեր հնարներ, թե կարող ես դնել, վոր մարդը տուն դնես, հաց ունենա, մեղկությունը ծածկե, բնության պարտքերը հատուցանե, ահա այդ համփան և հնարներն են փիլիսոփայության իսկությունը. այն մյուս մնացած փիլիսոփայությունքը, վոր բնության հետ գործ չունին և բնության մեջ դրծադրելի չեն, այս կամ այն կերպարանքով ծաղր ծոցդ դիր, կամ գնա համալսարաններին պատշգամբներում քարոզե, դուցե այնտեղ քո արհեստակիցքը հիանան քու խոր գիտության վրա. բնական աշխարհի մեջ, բնության վորդոց մեջ դու տեղ չունի՛ս, կարցա՛նք հասկացնել:

P. S. Վորպես թե մարդը կավ է, իսկ փիլիսոփայությունը բրուտ. ինչ ձև կամենա կտա այդ կավին. ցնծա՛:

Փիլիսոփայությունը ըստ ինքյան գրեթե յերեք ճյուղ և բաժանվում, տրամաբանություն, բնական փիլիսոփայություն, բարոյականություն: Գերբնական մասը մարդուն մեջ և դարձյալ, ուստի յեթե բնական փիլիսոփայությունից դուրս գա, կորցնում և իր ամրությունը և դառնում և ապնիվ և բարակ զեխզեկություն:

Այս բոլորը յեթե իբրև մի առանձին գիտություն, համակարգություն, ավանդվում են մի մարդու գրքի մեջ, և ուրիշները պատրաստ գտնում են նորան և առանց վերստին իրենց անձը աշխատության տալու ընդունում են նորան վորպես ծայր գիտության, դառնում են այն հեղինակի արծաթագին ստրուկը թեև առանց գիտնալու և զգալու: Կորցված ազատությունը յերևում և նորանց վորպես գտնված ազատություն. հեղինակության հպատակությունը մինչև այն աստիճան շփոթում և հասկացողությունքը: Ապա յեթե փիլիսոփայությունը, այսինքն վորևիցե պատրաստ վարդապետության համակարգությունը մերժենք, մարդը վո՛րտեղից ուսանի ուղիղ խորհել, ուղիղ հասկանալ և ամեն բան նորա բնական դնդով տեսանել և գնահատել:

Այդ փիլիսոփա պարոնը ի՛նչ տեղից առավ իր դրությունքը. հայտնի չե թե կա աղբյուր, կամ քննության նյութեր, վոր պատվանդան յեղան նորա համակարգության: Իսկ թե նորա փիլիսոփայությունը չունի այդպիսի պատվանդան ուրեմն, վորպես բռնաբարված խելքի արդյունք, առավել ևս պիտի մերժվին և արժանի չեն ընդունելության: Բայց ստույգ և վոր ընդհանուր պատմությունը, բնագիտությունը են փիլիսոփայության ճշգրիտ աղբյուրը և հաստատ պատվանդանը: Ուսիր պատմությունը, ուսիր բնությունը, ուսիր մարդը, իմաստասիրե ընկերությունը, որենքները, մարդկության կյանքի յերևույթքը, գտիր պետքերը, ճանչցիր պետքերը լցնելու հնարները և կը դառնաս փիլիսոփա, առանց սորա կամ նորա պատրաստած համակարգությունքը ընդունելու: Գիտությունքը առաջ են գնում և նոցա ընթացքը զարմանալի կերպով լծորդված և իրար հետ: Տեսաբանության մեջ մի ապակի յե մտնում, քիմիայի մեջ մի թուղթ և ավելանում և ահա բովանդակ գիտությունքը միահղույն վազում են առաջ: Այս վիճակում լինելով բանի գործությունը հայտնի չե թե Արիստոտելի փիլիսոփայությունը շինականում և մինչ

նա ուղեղը նմանեցնում է սպունգի։ Վոչ միայն մեղադրելի չէ նա այդ մասին, վոչ միայն պախարակելի չէ, այլ դարձյալ զարմանալու արժանի մարդ է. վորովհետև նորանից առաջ ուղեղի համար քար էլ է ասող չի եղած, պատրաստ գիտությունքը ժառանգել և նոցա լուսով անցածը, վոր գործված է խավարում դատապարտել վոչ միայն իրավունք չէ այլ և անբարոյականություն։ Մեր խոսքը այն է թե գիտությունքը, մարդու կյանքը, ժամանակը, այսինքն հասկացողությանց դռամարը շարժում և հոսանուտ բան լինելով, չէ վարելի փիլիսոփայությունը ավանդել մի անշարժ տոմարի մեջ։

Կարդա՛ այդ փիլիսոփայությունքը, վորպեսզի սորվիս փիլիսոփայության պատմությունը և կարողանաս զուգահեռագիծ քաշել անցածի և ներկայի մեջ, տեսնել և քննել թե ինչպես մարդկային գիտության շրջանը ավելի տարածություն և առանում առաջիճան առ առաջիճան։

Մանավոր դրություններ, վոր շատ մոտ են դրական ճշմարտության գաղափարին, արժեն, վոր մարդը սորվի և տեսնե, նոքա սրտամ են և զվարթացնում են նորա հասկացող ունակությունը և կան այնպիսի առածներ, վոր ուղղակի բնության արտահայտություն լինելով բյուրապատիկ ավելի ամրություն և հաստատություն ունին քան թե ամբողջ շինծու համակարգություններ, վոր ոդի մեջ են ման դալիս, կամ ավելի վատ՝ վշնչության մեջ վորովհետև ոդը շոշափելի չէ զգայարանների համար։

Բայց պատրաստ վարդապետություններ սորվել և այնուհետև թիթը մինչև ի Կակիսոն հայոց բարձրացնել թե չես Քանթի, Ֆիխթեյի, Դեկարտի, Բեկոնի, Հեգելի և այլն և այլն փիլիսոփայություններ եմ սորվել, և պահանջել վոր հանդիպողը ծունր դնե իր առջև, պարզ ցույց և տալիս, վոր այդ փիլիսոփա պարոնը ինքը ծնրադրությունից աչք չէ բանում այս կամ այն վարդապետության առջև։

Անձնաճանաչություն, գիտակցություն, հաշվատու քննություն մարդկային թե անցած և թե ներկա կյանքին, այլև բնության յերևույթներին և նույն իսկ բնության, ահա՛ փիլիսոփայության աղբյուրը, վոր բաց և ամեն մարդու առջև, միայն թե մարդը չծուլանա ոգուտ քաղել։ Յեվ յեթե մարդը ըմդունակ չէ այդ բոլորի թելերը իր մտքի մեջ վորպես մի կենդրոնի մեջ ամփոփել, նորան միտրինակ անոգուտ են պատրաստ համակարգությունքը։

Մարդու եական արժանավորությունը և նորա մտքի անսահման ազատությունը. յեթե այն էլ բռնաբարվեցավ այս կամ այն հեղինակությունից կամ համակարգությունից, էլ ի՞նչ համ կմնա մարդկային արժանավորության մեջ։ Հազար փիլիսոփայություն— մեկ տոմար։

Կարող են ասել, թե փիլիսոփաների ճիգը և նպատակն էլ այն է ինչ վոր դու ասում ես ուրիշ խոսքերով, էլ ինչ յերկար բարակ դիմացավություն։

Բանն էլ այն է, վոր ուրիշ խոսքերով և յեթե մարդկային խոսքը կշիռ ու խորհուրդ ունի, ապա ուրեմն ամեն խոսք իրարից տարբեր է և չի շփոթվում։ Փիլիսոփա պարոնները իրենց համակարգությունքը հենց դրել են մեջ

տեղ վորպես մի հավատալիք, վորպես դոգմա*. մենք վոչ թե ձեռնոց ենք նետում իմաստության, այլ այն ձևին և դատապարտում ենք նույն վարդապետությունը, վոր յերևում է վորպես դոգմա։ Չե պետք մոռնալ, վոր մինչև այժմ մարդու արած հառաջադիմությունը, թեև ըստ յերևութին կարծվի նորմուծություն, այնուամենայնիվ ըստ ինքյան և եականապես ուրիշ բան չեն, յեթե վոչ հին շինվածքների կործանում։ Այնքան շատ և այնքան խիտ են այդ անտեր շինվածքը, վոր մարդը ճամփա չունի, և քանի խելքի յե ընկնում կամաց կամաց կործանելով նորանց բացում է իր ճամփան։ Յեթե վորևիցե ստրուկ ազատվում է ստրկությունից, այդ չե նշանակում թե նա նոր բան ստացավ, այլ թե ինչ վոր կորցրել եր գտավ. նորը տակավին առջևումն է։ Բայց ինչպես և և ինչ պիտի լինի այդ նորը։ Յեթե մենք քեզ հետ ապրենք մինչև այն ժամանակ, յեթե ուսանենք այն ժամանակի պետքերը և շրջապատող աշխարհի հասկացողությանց գոմարը, այն ժամանակ միայն կարող եմ քեզ ասել, թե ինչպես բան է այդ նորը. բայց մինչև այն ժամանակ ինձնից պատասխանի մի սպասես, յես փիլիսոփա չեմ։

Առ այժմ, յես այսչափ միայն գիտեմ, վոր կորցվածը պետք է փնտռել, յերբ վոր այդ բոլորը ձեռք գա, այն ժամանակի մարդը թող հոգա և ստեղծե ինչ վոր իրեն պետք է. յես ինչ իմանամ, թե ինչպես կը լինի մարդու հասկացողությունը հարյուր տարի յետքը, վոր հիմիկվա դատողություն անեմ այն մասին։ Նախնիք վոր կորցնում եյին, մի՞թե այդ կորուստը միշտ զգալի յեր. քավ լիցի, շատ կորուստներ, վոր այժմ մեր հասկացողությամբ կորուստ են, նոցա աչքում յեղած են վորպես վնասակար բանների մերժողություն։ Յեվ գիտեյի՛ն նոքա, վոր նոցանից հարյուր տարի յետքը նոցա ժառանգները արյուն-քրտինքով պիտի աշխատեն վերստին վորպես մի կորած բան փնտռել ինչ վոր նոքա կամքով, թուլությամբ կամ անխոհեմությամբ մերժել ու ջնջել եյին։

Վերջը՞։

Վերջը, խելքդ գլուխդ հավաքիր, աչքդ բաց և տումդ քամիին բացած լոկ գաղափարների յետևից մանմի գար։ Ոգոստ. 13

Գրանովսկին իր քննության մեջ Geschichte der Denk und Glaubensfreiheit im ersten Jahrhundert der Kaiserherrschaft und des Christenthums von Ad. Schmidt. Berlin, *1847 (Դավանության և մտքի ազատության պատմությունը կայսերության և քրիստոնեության առաջին դարում. Ադ. Շմիդտ։ Собрание сочинений Грановского] Т. 2, стр. 276)* [գլուխ 6].

«Այսպես է սովորական և ըստ մեծի մասին արժանի (այդ սովորության, այսինքն չկարդացվելու և անտես լինելու) ճակատագիրը գերմանական գրքերի։ Զնայելով** վոր անդադար ուսումնասիրում են հին որինակները (այսինքն հին հեղինակները), գերմանական ուսումնականք չեն ուսել առ-

---

* Ջնջված՝ մեր ընդհմտությունքը... ԽՄԲ.։

** Ջնջված՝ հին որինակներ (հեղինակներ)... ԽՄԲ.։

նուլ նոցանից գեղեցիկ և կենդանի ձևով ավանդելու գաղտնիքը: Այս պատճառով, շատ անգամ պատահում է նոցա խոսել հոմնական արվեստի հավիտենական գեղեցկության մասին այնպիսի լեզվով (այսինքն ձևով), վոր կարո՛ղ է հարկադրել յերկբայել, թե այդ արվեստը կարող եր ազդեցություն ունենալ իր պաշտողների ճաշակի վրա: Միծաղելին այն է, վոր շատերը այս ձևի հետ վարվելու կատարյալ տգիտությունը վերագրում են գերմանիկ ցեղի ավելի հիմնավորության (Grundlichkeit)[7].

Սենեկան խոստովանում է յուրաքանչյուր մարդկային անձին սրբությունը. homo res sacra*.... «Ամեն մարդ ազնիվ է, վորովհետև առաջանում է աստուծուց. յեթե քու ազգաբանության մեջ կա մի մութ աստիճան, անցիր նորա վրայից, կանգնիր բարձր: Վերացիր դեպի ազնվության աղբյուրը, դեպի այն, վորից մենք ամենքս առաջացել ենք— մենք ամենքս աստուծո վորդիք ենք»: Այս խոսքերի մեջ հնչում է քրիստոնեության նախազգացությունը: Հռոմեական ցիրկի արյունոտ տեսարանները զարթնեցնում են նորա մեջ նույն զգացմունքը, վոր հետացնում եր այդ տեսարաններից առաջին քրիստոնեաներին: Նա դառնում է դեպի թամաշավորը դառն խոսքերով. «Առանց բարկության, առանց յերկյուղի, զբոսանքի համար, դուք մահի տալիս եք մարդը և հրճվում եք նորա հոգևարական տխրությամբ: Դուք կասեք ինձ, թե նոքա հանցավորք են և մահի արժանի դատվածք. համաձայն եմ. բայց ինչ հանցանք եք գործել դուք ինքներդ, վորի համար դատապարտվել եք ականատես լինել մահապարտության» (յերես 284):

Ասես թե իրավունք ունին, մինչ կարծում են թե Հեգելը իր փիլիսոփայությամբ կամենում եր Գերմանիո Մաքիավելին լինել և իրավ վոր, ինչպես նորա վարդապետությունը համեմատվելով դեպքերին՝ կերպարանափոխ և լինում, ինչպես վերջինը ջնջում է առաջինը: Բայց Ֆլորենտացի պոպուլիցիստը, մեզ թվում է թե ավելի խոր մտած և իր առջևը դրած գաղափարի մեջ, ավելի համարձակ հաստատությամբ բռնել և ամեն կողմից իր առջևի խընդիրը: Հեգելը իր քաղաքական ասպարեզը «Գերմանիան տերություն չե այլ ևս» յերեմիականով, ավարտեց իր ընթացքը անգլիական կառավարության ընդդեմ անհիմն զվզվեկության: Զարմանալի չե այս կողմից նմանությունը Հեգելի և անգլիացի Բուրքի միմյանց հետ: Բուրքը իր ծերության ժամանակ, մանավանդ ընկճված իր վորդու մահի կսկծի տակ չկարողացավ կլլել Ֆրանսիո մեծ ռեվոլյուցիոն: Բուրքը վոր իր բոլոր կյանքը և ուժը մինչև այն ժամանակ թափել եր ազատության պաշտպանելու համար, չվախենալով նորա կերպարանքներից, Բուրքը, վոր յուր հայրենիքի անձնական ոգուտը յերկու ձեռքով զոհում եր ամերկյան անկախության, վորի մեջ ազատության նախապաշարափարը ուներ մի հզոր փաստաբան յերեափոխանական պալատի մեջ, իր հոգու վերջին կարողությունքը ամենայն ուժգնությամբ գործ դնելով Ֆրանսիո հեղափոխական շարժողության, խաչակիր արշավանք քարոզեց Ֆրանսիական ազգի ընդդեմ: Նա հիվանդ եր այն ժամանակ հոգեպես. վոր-

---

* Մարդը նվիրական բան է (լատ.) ՄՄԲ.:

դու կորուստը դղրդել եր նորա ուղեղը, ուստի և նորա աչքի առջև ցերևում էին միայն Լուդովիկոս XVI-ի և Մարիա Անտուանետտի արյունոտ գլուխները, այդ դարձել եր նորա համար անշարժ գաղափար (idea fix). Նա էլ չեր հիշում Լուդովիկոս XIV-ի բռնակալությունքը, վոր շարունակ 50 տարի վոչ միայն քամեցին Ֆրանսիո արյունը և հոգին, վոչ միայն իրը փոխանակեցին անառակ և փտածին կեղևի հետ, այլ և հանգիստ չտվին բոլոր Եվրոպային: Նա մոռացել եր թե ինչպես այդ փառամոլ և բորբոքիտոն ճակատնուքյամբ վարակված Բուրբոնը ամեն կողմից վնասում եր Անգլիային չերբ Կարլոս II և Հակոբ II Ստյուարտները Լուդովիկոսի արծաթագին վասալներ դառնալով, մանավանդ այս վերջինս, նենգում և դավում եյին Անգլիո ազատության: Նա մոռացել եր բուրբոնների (Լուդ[ովիկոս]XIV և XV) հետամտությունքը և ձգտողությունքը Վիլհելմ Որանժյանի ընդդեմ, և պաշտպանությունքը նախ ապարքա Հակոբ II-ին և վերջը նորա վորդուն, վոր 70 տարի թագ խնդրելով թափառեցավ մուրացկանությամբ: Բոլքը էլ չեր հիշում, թե ինչ վոր Լուդովիկոս XIV-ը սկսել եր, XV-ը շարունակել եր, ավելցնելով իրեն անառակությունքը, շռայլությունքը և ֆրանսիական ազգի հարատահարելը. նա մոռացել եր, վոր XVI նոցանից վոչ միայն պակաս, այլ և ավելի եր անցել ամեն չափ ու կշիռ և ֆրանսզների համբերությունը չեթե ապառաժ լիներ, չեր կարող դիմանալ վոր չպատռեր: Նա էլ չեր հիշում Անդղլիո քաշածները Կարլոս I ձեռքից, չեր հիշում յերկայն-պառլամենտը, քաղաքական պատերազմները և այսպես անվանված պ[ուրիտ]անների մնացորդքը) լրբությունքը: Բոլքի ժամանակ անգլիացիք* ազատ շունչ եյին քաշում, ազգի ազատությունը վաղուց արձան գրած եր Ալբիոնի ապառաժների վրա: Նա միայն մեկ խոսք ուներ— մա՜հ ֆրանսիական անասնավածներին, մա՜հ թագավորասպաններին, մա՜հ ապստամբներին:

Գերմանական ազգը մեծ ազգ չե և նորա փոքրությունը և մեծության անընդունակությունը արդեն իրողապես յերևում է նորա քաղաքական կյանքում պարզ և շոշափելի կերպով: Յերեսունից ավելի կտորներից բաղկացած նեղսիրտ և միմյանց ֆրանսիական մեծ հեղափոխության շնորհքով մի փոքր մարդ դարձած կառավարություններով, մթնացնում է այն լուսակամարը, վոր կապել եյին նորա վրա Գյոթեն, Շիլլերը, Լութերը: Զնչին և ափի չափ տերություններ իրենց մեջ կենտրոնացած, իրենց կնիքը խոր տպավորում են իրենց հպատակների վրա, վորոնց, թող կրոնական այլ և ընկերական կյանքի ընդհանրությունքը, մանր և կեղտոտ դիպվածներում միշտ վտանգավոր են յեղել և պիտի միշտ լինին գերմանականության:

Ընկած լինելով այսպիսի խեղճ վիճակի մեջ իրողապես, գերմանիկ վոգին իր յելքը աշխատեցավ գտնել անպտուղ իդեալների մեջ և մինչև այսոր չգտավ ելքը, բերանաբաց փիլիսոփաներ, վոր քամի կուլ տալով իդեալ բարոզեցին, առանց այդ սքանչելի իդեան յերբ և իցե իրենց համար մարմնավորել կարողանալու: Իրավունք ունի հռչակավոր Բոկլը դատապարտել

* Ընդհակ՝ ազատվել եյին... ՄՄԲ.:

նոցա այս նեղսիրտ ըստ եութեան, բայց գերմանական հասկացողությամբ լայն և հոյակապ ուղղություն։ Յեվ միայն Բոկլը չե, վոր դատապարտեց այս սուտ ուղղությունը։ Ամեն խելքը գլխին մարդ, վոր գարեջրի շոգիներով չի բթացրել իր ուղեղը, ասել և ուրեմն և պիտի է յերբ յերես առ յերես քսվում է իրական աշխարհի հետ, նա դատապարտել է և պիտի դատապարտե։ Ջնայելով այս բոլորի վերա, յերբ Հեգելը քաղաքից քաղաք և կայսրությունից կայսրություն իր սքանչելի մտահայաց գիտությունքը կարդալով ման գալուց հետո վերջապես Բեռլինի մեջ 1830—1831 թվերի վերջին անգամ կարդում եր պատմության փիլիսոփայության մասին, Ֆրանսիա revolutionի ոսմբը վերսաին տրաքեց։ Ֆրանսիական վուլկանական բնության ցնցյունը մեկ գիշերվա մեջ կործանեց Բուրբոնի գահը, վոր դաշնակիցների քաղաքականությամբ և պաշտպանությամբ վերանորոգվել եր մեծ հեղափոխությունից հետո։ Ահաբեկությունն տարածեց ամեն տեղ այս ցնցյունը և Հեգելը ընկճվեցավ այս յերկյուղի ծանրության տակ, ինչպես Բոռքը ընկճվել եր իր վորդու մահի ծանրության տակ։

Շատ գեղեցիկ նկատում է Հայմը Հեգելի թույլ լարը. նա ասում է. «կարելի է նորան չարչարում եր մի նախապատվություն թե այդ տիեզերական նոր շարժողությունը տարածվելով առավել և առավել կարող է ճամփից հանել վոչ միայն տերությունը, այլև համակարգությունը — իդեալիզմի համակարգությունը»[8]։

Յեվ արդարև յերկյուղը, թե համաշխարհական հանգստությունը դարձյալ կը խանգարվի, հանգիստ չե տալիս Հեգելին։ Շարժողության վոգին մտավ նաև Անգլիա, վոր անհողդողդ պահպանել եր իր կառավարչական ձևերը և առաջին ֆրանսիական հեղափոխության մրրիկը ցամաքահողի մեջ այնքան դեպքեր պատճառելով անվնաս անցել եր նորա գլխից։

— Վերանորոգեցեք— ասում են Բուսսելի բարեկամքը— վոր կարողանաք պահպանել. տենդային ամբոխմունքով խռնվում և ազգը պառլամենտի դռներում, վոր կարողանար առանձնակ թերևս ուժի գործադրությամբ կամակոր տորիների համաձայնությունը ազգային յերեսփոխանական համակարգությունը վերանորոգելու համար։ Տեսնելով այս, Հեգելը նորից պոպլիցիստա և դառնում։ Նա հրատարակում է Պրուսիա տերությունական լրագրում իր վերջին հոդվածը «Անգլիական վերանորոգության խնդրի վրա քննություն» անունով, «Bill of reform»[9]. 14 nգnu.

Ահա այս հոդվածի մեջ Հեգելը նմանում է հալյուցինացու մեջ ընկած Բոռքին։ Հայմը այսպես է խոսում այս հատվածի վրա. «Այս հատվածի մա-«կարդը և յերկյուղը, թե տերության վերականգնյալ վիճակը կարող է խան-«գարվել, իակ այդ կարծիքը ավանդելու յեղանակի մեջ տեսական ծայրահեղ «իմաստասիրությունը (умничанье) խառնվում է պրուսական աստիճանավորի «անուրջների (мечта) հետ։ Հեգելը չե պախարակում ձգտողությունը և վե-«րանորոգության խնդրի (bill) բովանդակությունը, այլ դատապարտում է

«նույն իսկ վերանորոգության հակամիտությունը, վորովհետև վտանգ և «տեսնում այդ բանի մեջ։ Անգլիական տերությունը դնումում է— չեթե հա«վատանք գերմանական փիլիսոփայի խոսքերին— այնպիսի դրության մեջ, «վոր նա ամեն ուրիշից ավելի բարվոքում և պահանջում, բայց միևնույն «ժամանակ ամեն ուրիշից պակաս է ընդունում նորան։ Մանրամասնությանց՝ «խոր հարգության արժանի փիտությամբ, Հեգելը ցույց է տալիս անգլիական «կառավարչության առույգ թերությունքը։ Առանց պայմանի պիտի համա«ձայնել կրիտիկոսի (Հեգելի) հետ ամեն բանի մասին, ինչ վոր նա ասում «է. որինակի համար անճոռնի անդրանկական (майоратный) կառավարու«թյան, հոգևոր ծուխերի անկարգությանց և ուրիշ տեսակ արատությանց, «անգլիական չեկեղեցու դրությանց, անճոռնի կառավարության Իրլանդիո «և նորա տնտեսական և ընկերական հարաբերությանց մասին։ Ինչպես Հե«գելը, նույնպես վոչ վոք չի պաշտպանել— թողնելով այդ իրավունքը ընչին «հնապաշտների— դարերի ժանգը, վոր այլանդակում է անգլիական կառա«վարչությունքը։ Տակավին կարելի չե համաձայնել և այս բանում, թե «անգլիական կառավարչությունքը (учреждения) չերևցնում են մի «անհող «հավաքույթ ստորաստական սահմանադրությանց» վորի հակառակ, նոր տե«րությենական կառավարչությանց ներքին աճելության հայտնի սկզբանց «վրա հիմնված ավելի պարզ ձևերը, գոնե տեսական հարաբերությամբ կա«րող են համարվել վորպես առաջադիմություն»[10]։

Այս խոսքերում, պ. Հայմը մեծապես սխալվում է. և դորա պատճառն է դարձյալ գերմանական փիլիսոփայությունը։ Նորա վորպես առաջադիմություն ընդունած «պարզ ձևերը», վոր հիմնված եյին նոր տերությենական կառավարչության ներքին աճելության վրա, ի՛նչ արդյունք ցույց տվեցին, յերբ գործ դրվեցան։ Ստույգ է, վոր պ. Հայմը ինքն էլ զգում է այդ բանի գործնական ամլությունը, ուստի և սահմանափակում է առաջադիմության ասպարեզը «գոնե տեսական հարաբերությամբ» խոսքով։ Զարմանալի չե վոր չկամին հասկանալ, թե մի վոքր թերի բայց գործադրելի ձևը ավելի նախընտիր է, քան թե գաղափարական կատարյալը, վոր* բոլորովին անգործադրելի չե։ Հա, շատ ընտիր գաղափար. բայց վոր չես կարող նորան մարմնացնել, չես կարող գործ դնել, ոգուտը ինչ է։ Բայց պետք չե մոռնալ, վոր գերմանական շոր գաղափարի գերի փիլիսոփայության իջնելու կետն է այս։ Յես անհամ կերակուր եմ ուտում, փիլիսոփան չե հավնում և իր մտքի մեջ ավելի համեղ կերակրի գաղափար ունի և ասում է թե գոնե տեսական հարաբերությամբ ինքը ուղի՛ղ է, վոր հավան չե իմ հացին։ Դե սատկեցեք։ Անգլիան իր կառավարության ստրանված ձևերով, այնոր առաջինն է Յեվրոպիո մեջ ազատության մասին, և անգլիական մարդը իրավամբ կրող է պարծենալ իր ազատությամբ, մինչդեռ ուրիշները և մանավանդ խեղճ վոզորմելի գերմանացիք ցեխում խրված, նախանձու տրաքում են և տակավին հավան էլ չեն Անգլիային։ Տո՛, մի նորա չափ ազատու-

* Ջնջված՝ բնավ չե գործ... ԽՄԲ.։

բյուն ձեռք բեր, հետո խոսիր ե. վարաքաղյու ասածը չլինի «ըռխին յաշիր»։ Բայց մենք շուտով կը հասնենք այն ըրվուտին, վորի տեսությունը միայն պրծացնում է գերմանացու շապիկը։ Նա չէ կարող տանել կամ տեսնել յերբևիցե կամ ուրևիցե «հանրապետական տարր» սահմանադրության մեջ, տրա-նից վախում է գերմանացին, ինչպես ագռավը խրտվիլակից, առանց քննելու թե այդ յերևույթը ամենևին անվնաս է, յեթե գործ է դրվում միայն վորպես զուգակշիռ պահող տարր ընդդեմ նեղսիրտ դրականության։

«Բայց», շարունակում է Հայմը, վորպես թե սթափելով և հետևյալ դր-րությամբ իր առաջվա կարծիքները հիմն ի վեր կործանելով, «բայց»— ա-սում է նա, «չէ կարելի յերևակայել ավելի միակողմանի դատողություն, «քան թե այն, վոր բացառապես հիմնված է անգլիական տերությենական «կյանքի այս մութ կողմերի վրա, և դրա պատճառով չէ ուզում տեսնել նո-«րա մեջ շրջան առնող ազատ ուժերի հարաբերությունը։ Այստեղ վերստին «կատարվում է մեր խոսքը, թե ազատության կենդանի գործողությունը «(процесс) մեր փիլիսոփայի համար, ըստ ինքյան վոչինչ արժեք չունի և «թե նա (Հեգելը) դրա հակառակ տեսնում է ազատության բոլոր արժանա-«վորությունը հասկացողության համակարգությենում և առարկայապես (объ-ективно) կազմակերպված, հայտնի կարգի մեջ բերված թեև անազատ, դի-վանապետական (buroqratque) պոլիցիակազմ ազատության մեջ»[11]։

Հայտնի չե թե*, ազատությունը իսպառ կործանել նախադասությունը, համադոր վերը մեջ բերված յերկար բարակ ճառին, թե ի՛նչպես և Հեգելի կարծիքը ազատության մասին։ Ինչ վոր Հայմին և վերաբերվում, նա ասես թե մի սառնություն և զգում իր մարմնի մակերևույթի վրա, վոր տարածվում է, յերբ հիշում է այս տեսակ փիլիսոփայական այլաբանակությունքը և ան-միջապես մերժելով նորանց, աշխատում է թուլացնել անտիորժ տպավորու-թյունը այդ ժանգոտ դաղափարների թե իր և թե լսողի վրա։

«Հասկանալի չե»,— շարունակում է Հայմը,— «թե ինչ խորհուրդ պիտի «վերագրել Հեգելի սահմանադրական շինվածին և նորա պատահաբար ինք-«նավարությունը (самоуправление) հարգելուն։ Վոչ մի տեղ ինքնավարու-«թյան սկզբունքը չէ հասել մինչև այդ աստիճան պարունակության (объем) «այդպիսի մեծության և դրա հետ միասին վոչ մի տեղ, այդ չափով և «այդպիսի ուժով չեն յերևել նորա որհնած հետևանքը, ինչպես անգլիական «պառլամենտականության մեջ»[12]։ Ի վերջո՛. խոստովանեցավ գոնե Հայմը, թեև մի փոքր առաջ համաձայնում եր թե անգլիական սահմանադրությունը «անհոգ հավաքույթ և ստորաստական սահմանադրություն»։

Հեգելի կարծիքով, այդ պառլամենտականությունը շահեմարան և պոլի-տեկական ապականության և անխելքության։ «Ձևավոր ազատության աղա-«ղակը և փայլը», ասում է սքանչելի փիլիսոփան— «թույլ չե տալիս վոչ «ստույգ ազատությանը աճել և վոչ իսկ հիշել նորան։ Ազատության դիմակի «տակ գոյացել և շահասեր և ագահ ոլիգարխիա, վոր գործակից եր յեղել

---

* Ջնջված՝ ուրիշ խոսքերով... ԽՄԲ.։

«(ոգնել եր, содействовавшая) ամենևին գարշելի հանրապետականության. «(15 որստ.) Ստորաբաժան արտոնությունը ժամանակի բանձրությամբ «արմատացած յեսականությունը և ամենից ավելի ազգի բազմության ան- «հասկացողությունը, նույնպես և խաժամուժ ամբոխի ախտերը, ահա այն «տարերքը, վորոնցից բաղկացել է անգլիական սահմանադրության կյանքը»:

«Անգլիական պառլամենտի մասին Հեգելի դատողության մեջ, լիքը «չափով կարելի յե նկատել նույն* սահմանափակությունը, նորա նախա- «պաշարմունքներով, և նույն հոգևկան ախտավոր ամբոխմունքը, վոր հա- «տուկ բնավորության և տալիս պոլիտիկական կուսակցության դատողու- «թյանցը, յերբ նորա խոսում եյին իրենց հակառակ կուսակցության մա- «սին: Պրուսական դիվանապետականությունը միավորված գերմանական «գաղափարականության (idealism) հետ, կուսակցություն և կազմում անգլի- «ական տերության կարգադրության և Բեկոնի հայրենակցաց դոր- «ծնական-եմպիրիկական խորհրդի ընդդեմ: Ինչպես կուսմանկյան կիսասպան «(юнкер) դատողությունք և անում ամեն վոչինչ բանի վրա, նույնպես և Հե- «գելի դատողությունքը անգլիական ազատության հիմնական սկզբանց մա- «սին: Հերիք չհամարելով ընտրողության և կաշառելու պատճառով առաջա- «ցած ամբոխմունքի և անկարգության ամենասաստիկ կորուստ գծերով նկա- «րագրությունը, նա միևչ անգամ խոսակցությունքը (առաջարկությունքը և «դիմադրությունքը) և պառլամենտական ճառերը համարում է վորպես «չնչին փոխանակիչք (замен) իմաստության, վոր նատած եր կանաչ մահու- «ղի առջև և վոր յերևեցնում եր իր յենթակայությունը հրովարտակների (акт) «ահագին բազմության պատրաստությամբ, ինչպես մի հրովարտակների «գործարան: Այդ ժողովների մեջ ժամանակի մեծ մասը անցնում է, ան- «դամների իրենց անձնական դրության բացատրությամբ և նորա առաջար- «կում են իրենց կարծիքները վոչ վորպես գործին պատկանավոր ամեհինք, «այլ վորպես արտոնական (привилегированный) դոյությունք և վորպես ա- «ռեհախոսք: Այդ ատենաբանների գերեզկախոսությունը «անձնագովությամբ «լիքը դատարկաբանություն է»— միայն խելացի հայտարարությունքը այն- «պիսի մարդերի, ինչպես և Դուբա Վեյլինգտոնը, վոտրմություն են գտնում «Հեգելից»[13]:

Մեզ շատ հասկանալի յե, թե ինչի՞ համար Դուբա Վեյլինգտոնի հայ- տարարությունքը հանդիպում են Հեգելի հարգության: Վեյլինգտոնը իբրև զորապետ և ռազմագետ (стратегик) այո՛, ունի հոյակապ արժանավորու- թյուն. բայց պատերազմի դաշտից դուրս, մարդկային և ընկերական հա- րաբերությանց վերաբերությամբ, նորա տեսությունքը, հասկացողությունքը և հայացքը փոխադարձ չափով (пропорция) փոքրանում են և մոտենում

* Ջնջված՝ նեղսրտությունը... ԽՄԲ.:

այն աստիճան վոչնչության, վոր նաև մի շատ հասարակ քաղաքագետ* և շատ հասարակ պուպլիցիստ չեյին կարող** թառնց ամաչելու արտաբերել իրենց բերնից այն խոսքերը, ինչ վոր դրված եյին Դուքս Վելլինգտոնի հայտարարությանց մեջ: Նա դրականապես ընդդեմ եր ամենայն վերանորոգության և պատերազմական դրական կարգերը (дисциплина) շատ խոր տպավորության արած լինելով մեծ դրապետի ուղեղի վերա, դարձել եյին նորա համար sine qua non***. Նա կարծում եր թե ինչպես պատերազմի հաջող յելքը շատ դիպվածում կախված է գնդի անձայն հնազանդությունից, այնպես էլ մարդկային կյանքը ավելի հաջող ընթացք կունենա, յեթե այն ռազմական միլիտարիությունը ընկերական և բարերար սկզբունքների տակ կերպարանվելով հիմք դառնան**** տերությենական***** սահմանադրությանց կազմվածքին:

Ի հարկե ինչպես ուրիշ շատերը և մանավանդ Դուքս Վելլինգտոնը առատորեն քաղած լինելով իր****** սկզբունքների արդյունքը պատերազմի դաշտում, մոռանում են, թե պատերազմը մարդկային կյանքի մեջ, բնական, առվորական յերևույթ չե, այլ******* ցավագարական և պատահական, վորի որենքը յերբեք չե կարող դրվել մարդկային******** առվորական և ընկերական կյանքի վրա, առանց վնաս տալու այդ կյանքի բնական առողջության և առանց պատվատելու այն ցավագարական ախտերը նորա կազմվածքի մեջ: Պատերազմում մի ժամ, մի րոպե հերիք են շատ անգամ դարավոր հույսեր վոչնչացնելու, աշխարհի զուգակշիռը խանգարելու համար և այդ մի ժամը կամ րոպեն կարո՛ղ է և հարմարություն ունի ջերմի այն ղված վիճակում դրական հնազանդության գնվիլ: Զինվորը դուրս է յեկած իր********* ընկերական կյանքի շրջանից; նա ընկերական և քաղաքային կյանքի մեջ պաշտոն չունի. նա այն միջոցին ճնշված և նեղ շրջանակի մեջ և վորոշված նպատակով— մեռցնել կամ մեռնել:

Բայց այնպես նեղ, վորոշյալ և սահմանափակ չե մարդկային կյանքի առողջ վիճակը: Զինվորը միայն թշնամու հետ կարող է զբաղվիլ. ուրիշ վոչինչ պետք, վոչինչ հարաբերություններ, վոչինչ վիճակ չե կարող նորան պատահել: Իսկ մարդկային առողջ կյանքը իր լայն ճանապարհի վրա ամեն վայրկյան զարկվում է անթիվ պետքերի, անհամար հարաբերությանց և վիճակների հետ: Հայտնի չե, թե այս յերկու մոմենտքը, պատերազմը իբրև ցավագարական (патологический) և առողջ կյանքը իբրև բնիկ նախագաղա-

---

* Զնջված՝ ընկերության արժեքը հաս[կացող]... ԽՄԲ.:
** Զնջված՝ իրենց բերնից արտաբերել այն խոսք... ԽՄԲ.:
*** Անխուսափելի: ԽՄԲ.:
**** Զնջված՝ բոլոր... ԽՄԲ.:
***** Զնջված՝ կազմվածքի... ԽՄԲ.:
****** Զնջված՝ փիլիսոփայության... ԽՄԲ:
******* Զնջված՝ յեռանդ... ԽՄԲ.:
******** Զնջված՝ կյանքի վրա... ԽՄԲ.:
********* Զնջված՝ բնական... ԽՄԲ.:

վարական (нормальный), յերբեք չեն կարող միևնույն չարով չափվել, միևնույն ուղղությամբ քայլել, առանց անոգուտ և վնասակար դառնալու: Բայց ի՛նչ անես, վոր Հեգելի պես մարդը փրկություն և տեսնում բռնական ֆրիդրիխոսների ձեռքով դարբնված շղթայի մեջ, քան թե այն սահմանադրության, վոր միմիայն անգլիական մարդը կարողացավ իրագործել և վորին հաջորդեց ուրիշ կերպարանքով նորա գաղթական յեղբայրը՝ Հյուսիսային ամերիկյան դաշնակցությունը:

Ո՛վ չե տեսնում, վոր անգլիական սահմանադրությունը տակավին չե հասած իր վերջին կատարելության. բայց խնդիրը այստեղ է, թե այդ կատարելության ասվածը արդյոք անշա՞րժ նպատակ է, դեպի վորը մոտեցներ ամեն մի հաջող քայլափոխ, ամեն մի վորոշյալ ժամանակամիջոց. չե՞ վոր մարդկային հասկացողության լայնանալու չափով և կատարելության գաղափարը շարժում է դեպի առաջ: Հայտնի յե թե փրկությունը դրած է դեպի կատարելությունը անդադար ձգտողության մեջ, վորովհետև այդ յերևույթի մեջ յերևում է առողջ կյանքը: Յեվ մարդը կամ իր քաղաքակրթության աստիճանից պիտի հետ դառնա, կամ բարոյապես պիտի մեռնի և նորա հասկացողության շրջանը անբացվելի պիտի փակվին, վոր նորա կատարելության գաղափարը մնա անշարժ. բայց և այն ժամանակ տակավին չե կարող հասած լինել նորան, վորովհետև գաղափարի և նորա մարմնանալու մեջ, կա ժամանակ և ուժ, վոր պիտի գործ դրվի մինչև այն կետը. բայց և կետը կը վազե առաջ ձգտողության ուժգնության չափով: Սորանից հետևում է, վոր մարդը դադարելով կատարելագործվելու ձգտողությունից, չե կարող այն վիճակում մնալ, ինչ վիճակի հասել եր, քանի վոր ձգտողության զսպանակը գտնվում եր լարված վիճակի մեջ: Նա պիտի հետ դառնա այն րոպեից սկսած յերբ կանգնել եր իր ճամբի վրա: Հայտնի յե, թե այս բոլորը կարելի յե մտածել մի մարդկային ընկերության վերա, վոր աճում եր ինքնակատարյալ: Իսկ այն ընկերությունքը, վորի հասակը չափվում է հոգեբարձության ազատ կամքից առաջացած չափով, այնտեղ հանդեսը պատկանում է ֆրիդրիխոսներին և մարդկային ընկերությունը իջնում է անչափահաս վորբերի աստիճանը:

Մյուս կողմից քննադատելով անգլիական սահմանադրությունքը, ինչպես կարելի յե՝ դադարել միմիայն նոցա թերությանց վրա, նեետելով միանգամայն բոլոր հատատարմատը* և փրկարար դրությունքը, վորոնց հիմքերի վրա աճում է անգլիական մարդու իրավամբ պարծեցած ազատությունը: Բացի սորանից, թո՛ղ նորան դատապարտե մի ավելի ազատ և ավելի վսեմ սահմանադրության յենթարկված մարդ: Բանը մինչև կոմիզմ է բարձրանում, յերբ քաղաքականապես ճղակտոր յեղած և մարդկային իրական կյանքին բոլորովին անտեղյակ և թափառական գաղափարների սորուկ** գերմանացին է բերան բանում անգլիական սահմանադրության վրա, վորի

---

* Ջնջված՝ և դրականի մոտ... ԽՄԲ.:

** Ջնջված՝ միանգամայն սորուկ... ԽՄԲ.:

լոկ Habeas Corpus ակտը[11]. Թողում եմ մնացածը, ամբողջ Գերմանիա հավասար դին ունի։ Յուվ յերբ անգլիական սահմանադրությունը միջին դարերից սկսած բնական ճամփով աճելով աճում էր, բոլոր ցամաքահողը մինչև վիզը թաղվել էր սերկուլյան մեջ։ Բռնակալությունը, բարքի ապականությունը, անանկությունը և մարդկային արժանավորության ուրացողությունը եյին նորա վոգին։

Ի՛նչ տեղ էր Գերմանիան, յերբ մարդկային արժանավորությունը իր ձեռքը անցուց Անգլիո գայիտոնը, թագը միայն թողնելով իր թագավորին։ Հայտնի չե թե Գերմանիան մարդ դարձավ Ֆրանսիո XVIII դարուց փիլիսոփայությամբ, վորի վերջին խոսքը եր 1789 և 93 թվականները։ Բայց վո՛րտեղից հանկարծ բղխեց XVIII դարու այդ փիլիսոփայական հորձանքը, վոր հեղեղեց Յեվրոպա և չարաչար գործ դրվեցավ։ Յերբ անգլիացին ազատության անունով պատերազմում եր իր դավաճան թագավորի՝ Կարլոս առաջինի հետ, յերբ զիջողություն զիջողության քամակից վորպես մի ագցանով քաշում հանում եր թագի իրավասությունից, յերբ ի վերջո անճար մնալով ազգի ազատության, թեև սխալ գործերով, զոհ եր բերում դրուժան թագավորը, ի՛նչ բանի մեջ եր նույն ինքը Ֆրանսիան, Գերմանիո և բոլոր ցամաքահողի, իրավմամբ համարված լուսատու ճրագը։

Այո՛, մի րոպե փայլատակեց Հենրիկոս IV-ի ազդեցությունը քաղաքակրթության վրա. նորա հաջորդը, Րիշելիոն, չեմ հիշում անունով, միայն թագավոր Լուդ[ովիկոս] XIII, ունեցավ նույնպես փրկարար ազդեցություն քաղաքակրթության ընդհանուր գումարի վրա իր 18 ամյա վարչության։ սորա աշակերտ Մազարինին, Լուդ[ովիկոս] XIV-ի տղայության և մանկության ժամանակ կառավարելով, նույնպես առաջ նայեցավ. բայց այն հիսո՛ւն յերկաթե տարիները, վոր անցան Լուդ[ովիկոս] XIV-ի ձեռքից. այն վերասայլները, այն շռայլությունը, այն կեղծավորությունը, մարդկային անհատական*, վորպես նաև ընդհանուրի արժանավորության կամ խորհրդի ուրախությունը, հիմնեցին, կազմեցին, պատրաստեցին և մեջ տեղ դրին մի այնպիսի սոսկալի բռնություն, վորի դևը այնպիսի մեծ և զարհուրելի ցնցյուններ գործեց, յերբ 79 և 93 դուրս եր գալիս ֆրանսիական կազմըվածքից։ Վաղուց սովորության և յեղած դպրոցի բնավորական ազդեցությունը իսպառ ուրանալու համար, մանավանդ յեթե կամենում եյին բամբասված դպրոցը պաշտպանել, ասել, թե Ալեքսանդր Մակեդոնացին Արիստոտելի աշակերտ եր, Ներոնը Սենեկայի, իսկ Վոլթեռը Ճիզվիթների։ Իհարկե, ով վոր չե ուսել թե ի՛նչ է և ո՛վ է Վոլթեռը և միայն անունն է լսել և ճանաչում է նորան վորպես արդյունք Ճիզվիթական դպրոցին, այնպիսին պիտի մտածե, թե XVIII դարու փիլիսոփայությունը աղբերանում եր Ճիզվիթներից։ Բայց ով վոր ճանաչում է XVIII դարում ներգործող փիլիսոփաներին ավելի մոտից, նա տեսնում է վոր նոցա բոլորի փիլիսոփայությունը փոխառնված է Անգլիուց, վորովհետև յերեք քառորդը այնտեղ մնացին տարիներով

* Ջնջված՝ [անհատական]ության ուրացավ... Խմբ.։

և մտից սորվեցան ազատությունը և համեմատելով նորան իրենց հայրենիքի սորկության հետ, հղացան այն մեծ կրակի կայծը, որի բոցը պիտի այրեր և լափեր ինչ բանի որ պատահեր, թե լավ և թե վատ։

Ֆրանսիական ռեվոլյուցիան անգլիական փիլիսոփայության արդյունք է. ճիրգվիճները կամ յամաքահողի քնակիչները ընդունակ չեյին այդ բանին։ Սառույգ և, մինչև այն մեծ հեղափոխությունը իսկապես Ֆրանսիո աչքը մնկված եր Անգլիո վրա, բայց հեղափոխությունից հետո այդ յերկու աշխարհների պաշտոնքը փոխվեցան և ռեվոլյուցիոնը իր կարգով ազդեցություն ունեցավ Անգլիո ավելի առաջադիմության վրա։ Բայց թե ազատությունը մի վսեմական ավանդ է, ապա այդ ավանդը պահեց տորերի հորձանքի յերեսից Անգլիան։ Մի փոքր ժամանակ անցավ այդ ավանդը Ֆրանսիո ձեռք, բայց նա չկարողացավ* պաշտել նորան նպատակի համեմատ ձևով։ Վերստին կործանվեցավ այնտեղ ազատության աթոռը և նորա ավերակների վրա Բոնապարտը մերկեց իր յերկաթը։ Ազատությունը դարձյալ ապաստանեցավ դեպի այն կղզին, որ միայն մի նեղ ջրանցքով բաժանվում եր Ֆրանսիուց և այն որից մինչև այսոր, մինչդեռ յամաքահողը ազատությունը գտնելով և կորցնելով հոգին բերանը չեկավ, Անգլիան, իր այն թերի համարված, և իրավմամբ մի քանի պակասություններ ունեցող սահմանադրությամբ, ավելի և ավելի հաստուց ազատության ծառի բունը և այն՝ բոլորովին բնական, խաղաղ և հանդարտ աճելությամբ, որին հազիվ թե տրամադրություն ունի ուրիշ ամեն մարդ, որ ծնած չեր Բրիտանական կղզիների վրա։

Մի քանի թերություններ, և վնասակար դրություններ, ինչպես և անդրանկական համակարգությունը, այո՛, մեր աչքում շատ ատելի յե. բայց հարցնենք անգլիացուց, և տեսնենք թե այդ համակարգությունը այսքան դարերով տևում և սահմանադրության մեռա՞ծ տառի ուժով, թե՞ թագի հարստահարելով։ Վոչ առաջինը և վոչ յերկրորդը, այդ բղխում է բուն անգլիական կյանքից, և նորա համար բնական յերկը այդ և միայն։ Ի՛նչ ամեն այտեղ վիգը կամ տորին, ինչ ամեն յերեսփոխանական ժողովը կամ թագը։ Հայտնի յե թե քանի որ այդ որենքը բղխում է ազգի հոգուց և հասկացողությունից, ամեն նորամուծություն նորա ընդեմ պիտի ծանրանա ազգի վրա վորպես հարստահարություն և ազատ իրավունքի բռնաբարություն։ Յեվ ո՛վ կարող է գործ դնել այդ հնարը։ Յեվ այն վոր անգլիացու աչքում քնական է և բանների կարգում, ի՛նչպես կարող է յենթարկվել սրբագրության։ Սորանից յերևում է դարձյալ, վոր անգլիական սահմանադրությունքը բղխում են ազգի հոգուց, և դուրսից դրված չլինելով, կարողանում են այնպիսի անխախտելի շարունակությամբ և հետևականությամբ ներգործել և արդյունավորել մարդկային վարքի և հնարավոր բարեկեցությունը, վորշյալ հասկացողության շրջանի մեջ։

---

* Ջնջված՝ գործ դնել... ԽՄԲ.։

Տարակույս չկա որ, յերբ այդ անպրանկական համակարգությունը կընկնի և դորանով հողը դուրս կը գա կապանքի տակից. բայց և այն ժամանակ արդյոք բոլորովին կատարյա՞լ կլինի նոր կարգը։ Ֆրանսիան, որի հողը կտրտված և մինչև մանրացուցական բաժիններ, ուրիշ կերպով նույնպես չե՞ զգում այդ համակարգության ծանրությունը։ Մնում է մեջ տեղը վորպես միակ բարերար յելք հասարակական սկզբունքը (общинное начало) վոր կա Ռուսիո մեջ[15]։ Բայց ո՛վ գիտե թե յերբ կարող են դարթել Անգլիո և Ֆրանսիո դրակիսոնները։ Իսկ մինչև այն ժամանակ, ստույգ է վոր անդրանկական համակարգությունը պիտի ծանրանա հասարակ ժողովրդի վրա մանավանդ, քան թե միջակ դասակարգին։

Միջակ դասակարգը պարապելով ձեռագործությամբ և վաճառականությամբ, անմիջական հարաբերություն չունի հողի հետ։ Նորա ոգուտը և վնասը, նորա՝ հույսերը և ահը,— այդ բոլորը կապված է վաճառանոցի (bourse) հետ. և քանի վոր Անգլիո կառավարությունը ներգործելով արդեն ընդունված սկզբունքների վրա առաջ վարե իր ընթացքը թե ներքին և թե արտաքին գործերի մեջ, վաճառականությունը և ձեռագործությունը ապահո՛վ են, ուստի և միջին դասակարգը ժողովրդի միշտ պաշտպան այդ սկզբունքներին։ Սորանից պարզ է թե անդրանկական համակարգությունը լոկ* ազնվական և ստորին դասակարգերի վրա չե ներգործում։ Առաջինը չի կարնալ իր անշարժ սեփականությունը բաժին բաժին անել, այլ պարտական է թողուլ անդրանիկ ժառանգին. իսկ յերկրորդը յերբեք չի տեսնիլ հողի յերես, վորովհետև հողը չմասնատվելով նաև ժառանգությամբ, միշտ մնում է ազնվական տների ուղղակի հաջորդության մեջ։ Յեվ այս է այն սոսկալի աղքատության աղբյուրը, վոր միմիայն Անգլիո մեջ կարող է տանջանալ այնպիսի ահարկու կերպարանքը։

Հարկավոր է ուրեմն ավելի քաջ բացատրել մեր այն խոսքը թե «Անդրանկական համակարգությունը անգլիական ազգի հոգուց է բղխում», վորովհետև անհնար է թույլ տալ անգամ թե ստորին դասակարգը կարող եր յերբեմնի գոհ լինել այդ համակարգությունից։

Ազգ ասելով հասկացանք և հասկանում ենք անգլիական հասարակության այն բաժինը, վոր ուղղակի կամ անուղղակի մասնակից է կառավարության և վորի պոլիտիկական իրավունքը խոստովանում է անգլիական կոնստիտուցիոնը, վորովհետև այդ կոնստիտուցիոնը հասարակապետական և վոչ հանրապետական լինելով, ինչպես Ամերիկայի միացյալ նահանգներում, համորեն ազգի անձն յուր անդամներին չե տալիս պոլիտիկական իրավունք։ Յեվ կառավարության մեքենան շարժվում է միմիայն առաջին և միջին դասակարգերի ուժով։ Այդ յերկու դասակարգի շահին ել ընդդեմ է միջին դասակարգերի ուժով։ Այդ յերկու դասակարգի շահին ել ընդդեմ է Անգլիո մեջ ամեն փոփոխություն, վոր կարող եր շատ թե քիչ սասանեցնել կամ ավելի փոքր, կանգնեցնել բանների ամենօրյա ընթացքը։ Յեվ այդ յերկու դասակարգն բուռն ու ղրական իշխանություն ունի իր ձեռքին, վոչ ոքնքը, վոչ ղրված կոնստիտուցիոնը և վոչ իսկ թագի արտոնությունքը

* Ջնջված՝ յերկու դասակարգի վրա չե ներգործում... ԽՄԲ.։

ազդեցության ունին նորա վրա. նա փոխում է սրենքը, սրբագրում է սահմանադրությունը, փոխում է և* գահակալության հաջորդությունը, ինչպես Հենրիկոս VIII ի և Վիլհելմ III Որանժյանի ժամանակ, փոխում է կրոնը, ի վերջո ինքը պառլամենտը և «իշխող և իշխեցյալ» ինքը դնում է սրենք և ինքը դարձյալ հնազանդում է նորան. վերստին փոխում է սրենքը և այդ նոր սրենադրությունը նույն զորությունն ունի, ինչ որ ուներ առաջվանը. մեկ խոսքով, կենդանի սահմանադրություն և կենդանի սրենք անսահման և լրացյալ իշխանությամբ:

Հեգելը տեսնելով այս բոլորը ասրասափում է և նորա նեղսիրտ դիվանապետական ստամոքսը չէ կարող մարսել, ուստի և չէ հերիքանում միայն մի քանի թերություններ շոշափելով անգլիական կառավարության սահմանադրության վրա, նա չէ գոհանում նորանց պախարակելով, այլ վորպես թե ավելի ծանրացնելու համար իր պատասխանատվությունը, նորանց պախարակելու չափով դրվատներ և տաղեր է յերգում գերմանական և պրուսական տերության, և այս՝ 1830—31 ին: Թուրքի տասծի պես. մատպարալըք փարա իլեն փուլ իլեն դեվիլ սըլը**:

Տես թե ինչ է պատմում Հայմը Հեգելի բերնով, լսիր վոր անկաճդ չար չլսե:

«Այստեղ»— ասում է Հեգելը, այսինքն Պրուսիո մեջ— «կատարված «է այն աշխատությունը, ինչ վոր դեռ Անգլիան պիտի կատարե. պրուսա«կան թագավորների իսորին խելքը և ճշմարտության սերը, նույնպես և «գիտական լուսավորության բազմադարյան աշխատությունը, արդեն իրա«գործել են այն, ինչ վոր չկարողացան անգլիական ազգին տալ նորա «յերևեցույիչքը: Նախանձը թագավորական իշխանության կարողության վրա «է անգլիացների իսպառ անխորտակելի նախապա«շարմունքը: Մինչև անգամ մտաղրյալ վերանորոգությունը, ինչ«պես առաջուց կարելի չէ դուշակել, կառաջնորդե մի մի պես կորստա«բեր հետևանքներ: Այս պատճառով, յեթե նաև հաջողություն գտնե խնդիրը «(Bill), վորի մասին և այժմ վեճը, և ճանապարհ բանա դեպի պառլամենտը «տիրապետող համակարգության հակադիր մարդոց— պատերազմը կարող «եր լինել միայն ավելի վտանգավոր պատճառ, արտոնությանց շահի և ա«վելի հիմնավոր ազատության պահանջողությանց մեջ չեր լինել վոչինչ «միջին ծայրագույն իշխանություն, վոր կարողանար բռնել նորանց և հաշ«տեցնել: Միմիայն կառավարությունական իշխա«նությամբ կարող են հաջողակի իրագործվել հիմնավոր «իրավանց և ազատության խելացի և հիմնավոր «սկզբունքը: Անգլիո մեջ, իշխանությունը արտոնությունք դասակարգի «ձեռքին է: Այս պատճառով, ավելի կանոնավոր և հիմնավոր սկզբունքների

---

* Ջնջված՝ թագավորող տների ցեղը··· ԽՄԲ.:

** «Մասխարությունը վողով-փարով չէ» (Բրբ. առած): ԽՄԲ.:

«գերևույթները, սկիսի գերհզոնեն իրենց մեջ, կառավարության և ներկա «բանների կարգի ընդդեմ՝ միմիայն դիմադրություն։ Իսկ այդ սկզբունքները «չեն վարող ցույց տալ իրենց խորհուրդը և նշանակությունը իրենց բոլոր «Թանձրացյալ (կոնկրետի), գործական ճշմարտության և գործադրության մեջ, ինչպես Գերմանիայում. այլ միայն ցույց են տալիս նորան ֆրանսիական «վերացականության, անուրջի վտանգավոր կերպարանքով։ Վերանորոգու«թյանց իրացուցումը հակասում է անգլիական տերություններին. «այս պատճառով, հավիտ թե կարողանան նորա իրագործվել առանց տերու«թյան և հասարակության շաղկապը սաստկապես սասանեցնելու»։

«Ավելորդ ենք համարում— ասում է Հայմը— մերժել ինքնաբավական «և գերիշխ դիվանապետականության շաղակրատությունքը։ Շուտով այդ «բանները գրվելուց հետո, ինքը պատմությունը ապացուցեց, թե ինչպես ան«հիմն եյին այս մռայլոտ դուշակությունքը Անգլիո մասին, նույնպես և «հայրենիքի վերականգնյալ դրության վրա գաղափարական հակացողու«թյունքը։ Բայց Հեգելին տրված չեր տեսնել վոչ այն և վոչ ել մյուսը. Հե«գելը մեռավ խոլերից նոյեմբեր. 14-ին 1831 ին»[16]։

Պարտական ենք այստեղ մի գերկու խոսք ավելացնել այն պատճառով, մանավանդ, վոր Հեգելի այս տեսակ կարծիքների մասին նմանեցուցինք Բուքին։ Բայց վերստին կդիմում ենք, Բուքը* հիվանդ և սասանյալ ուղեղով, և մինչդեռ Հեգելի ամբողջ համակարգության մեջ կան իր վերջին փիլիսոփայականի հետքերը, Բուքի անցած կյանքի վրա, մինչև նորա հիվանդանալը, չկան այնպիսի մութ գուներ, վոր կարողանային խավարեցնել նորա անպայման և անշահախնդիր ազատասիրությունը։

Ձեռնհյալ խոսքերով վերջացնում է Հայմը իր գաղերը։

«Նա մեռավ իր գործունեության միջակետում, իր փառքի բարձրության «մեջ, իրեն հետևող բազմաթիվ ամբոխի խոր հարգությունը կատարելապես «վայելելով։ Նորանից հետո մնաց վոչ միայն մի հզոր համակարգություն «ավյալ մի հզոր և մի լայնատարած դպրոց, (ուղղություն) և այդ դպրոցը ըստ «եության եր նորա ստեղծվածը և մինչև անգամ նորա փիլիսոփայության մի մա«սը։ Այդպիսի մի համակարգության անհնար է գերևակայել առանց ձևավոր, «հուսալի և գործարանավորված ընկերության։ Այս համակարգությունը, իր «բովանդակությամբ լինելով ենցիկլոպեդիական, իր արտաքին գերևույթով «բնականապես տարածողական եր։ Նա ուրիշ սահմանագլուխ չգիտեր բացի «պիտության սահմանագլխից. նա կարող եր իրագործել իր համարակաց «հասկանալի լինելու ձգտողությունքը միմիայն աշխատության մասնատու«թյամբ (разделение труда) նա կարող եր շարժվել և լայնանալ մինչև ան«վախճանը, նորա բանախոսության (диалектика) և նորա գերկմտու«թյան (двусмысленность) ոգնությամբ, նորա հետ կարող եյին բարեկամա«նալ բոլորովին միմյանց ներհակ հասկացողությանց մարդիկ և նորա նշա«նակերպերի (формула) տակ կարող եյին թագնվել վորշափ անկեղծ նույն-

* Ջնջված՝ միմիայն... ԽՄԲ.։

«չափ և նորա կեղծից վոչ ազատ պաշտպանը։ Իր սկզբամբ միապետական, «փակված և բացառողական եր այդ համակարգությունը. ինքն ըստ ինքյան «շրջափակում եր նա իր հետևողը մի մշտական կենդրոնացությամբ (сре-«доточием) խաբի մեջ և կախողության զգացողությունը վարձատրում եր «անպայմանության հպարտ գիտակցությամբ։ Համակարգության այս հատ-«կությանց հետ միավորվեցավ և նորա արարչի (Հեգելի) տրամադրությունը «(настроение) և դրությունը։

«Զարմանալով Բրիեննի և Նապոլեոնի սեփական պատմին հատկու-«թյունքը ճնշելու արվեստի վրա, նա ինքը մի և նույն ժամանակ իշնամի «եր ամեն տեսակ փիլիսոփայության և կարծիքների մեջ եղած առանձին «հատկությանց։ Նա ձգտում եր հպատակեցնել միտքը նույն խիստ կարգին «և նույն հնազանդության, որին հպատակված եր մարդոց կամքը»[17]։

Հայմը շարունակելով իր ստորագրությունը և նկարագրելով Հեգելին ավելի դիվանագիտական քան թե նույն իսկ Պրուսիո այն ժամանակվա տերությունը նույնպես և նորա որպիր հրատարակելը, նորա նկրտմունքը են են, ի վերջո վերստին հնչեցնում է առողջ բանականության ձայնը։

«Բայց, ասում է նա (Հայմը), կենդանի պատմության և նորա մեջ «շրջան առնող վոգու ուժը, ամեն ուսումնական կոստակցություններից զորեղ «է և համակարգության բոլոր շրջաններից ամուր։ Հեգելի համակարգու-«թյան մեջ, նույն այն բանը, վոր շինում է նորան համակարգության և «հնար է տալիս նորան դպրոց կազմելու, պատկանում է կրթության արդեն «անցած ձևին. ինչ բան վոր ուզում եր կյանքը շարունակել, պետք «եր վոր ավելի չերկար ապրեր[18]։ Ոգոստոս. 16. կես գիշեր։

Վոչ Հեգելի աշակերտ ենք և վոչ Շելլինգի, բայց արդարությունը ստի-պում է խոստովանել, վոր չերկուսի* համակարգությունքն էլ մեծ ոգուտ են բերել ժամանակակից գիտության ընդհանուր ձևերը հայտնագործելով, վորոնց միջնորդությամբ առաջ է գնում** զարգացման գործողությունը։ Այս հայտնագործությանց հիմնական արդյունքը չերևում է հետևյալ առածի մեջ***. «զարգացման վերին աստիճանը իր ձևով նման է սկզբին, վորտեղից առաջ է գնում այդ զարգացումը»։

Այս վարդապետությունը բովանդակում է իր մեջ շելլինգյան համակարգության արմատական իսկությունը, վոր Հեգելը ավելի ճիշտ և ավելի մանրամասն քրքրել և քննել է, և ընդունելով վորպես հիմնական սկզբունք կազմել է իր համակարգությունը, ուր տիեզերական կյանքի բոլոր չերևույթների մեջ, սկսելով նոցա**** շատ ընդհանուր միճակից մինչև***** եության յուրաքանչյուր առանձին կարգի ամենաճիշտ մանրամասնությունքը չերևում է այս վարդապետությունը[19]։

---

* Ձնջված՝ վար[դապետությունքն էլ] ... ՄՄԲ.։
** Ձնջված՝ աճելության կամ կերպարանազործության... ՄՄԲ.։
*** Ձնջված՝ կերպարանազործության կամ... ՄՄԲ.։
**** Ձնջված՝ նախնա[կան]... ՄՄԲ.։
***** Ձնջված՝ դոյու[թյան]... ՄՄԲ.։

Հեգելը* պրակտապես ասում է թե «միջին տրամաբանական մոմենտները, ավելի քան թե ուրիշները չեն հասնում առարկայական ճշմարտության, մնալով միայն վորպես տրամաբանական մոմենտ։ Հերիք է չեթե վորոշյալ միջին մոմենտը հասել է ճշմարտության ուրևիցե կամ յերբևիցե, սորանով, ուրիշ տեղերում և ուրիշ ժամանակներում, զարգացմամբ գործողությունը ազատվում է այդ մոմենտները առարկայական ճշմարտության հասցնելուց»[20]։

«Որ գիտե առեալ է, կարող է փորձանաւտրաց օգնական լինել»[21]. այս վարդապետության սկզբունքն էլ նույն կետիցն է իջնում։ Արդարև, չեթե միջին մոմենտները, յուրաքանչյուր դիպվածում անշուշտ հասնելու լինեին առարկայական ճշմարտության, զարգացումը վոչ միայն դանդաղ այլև անհնարին եր։ Սուտյդ է, բնության մեջ վոտանյունք չկան, այլ հետևական շղթայաշարժություն, բայց չեթե մի դիպվածում չի իրագործվում միջին մոմենտը, այդ շղթան չի կտրվում, վորովհետև մի անգամ հասել է այն մոմենտը առարկայական ճշմարտության և հերիք է։

Մինչև, մրգիից կոտրվելով կամ ամառուից պոկ գալով ծառը չընկներ ծովի մեջ և մարդը չտեսներ, վոր փայտը ջրի տակ չի գնում, անհնար եր վոր մարդը կարողանար լաստ շինել, մինչև լաստ չշիներ, չեր կարող նավակ շինել, մինչև նավակ չշիներ նավ շինել և վերջապես մինչև նավը չշիներ շոգենավ չեր կարող շինել։ Թե ուր է յեղել այս փորձը, այսինքն վորտեղ և յերբ հասել են այս միջին մոմենտները, իրենց առարկայական ճշմարտության, այսինքն փայտը ջուրը ընկնելուց մինչև շոգենավի ատոմճանին հասնելը, այդ փույթ չե, հերիք վոր մի անգամ կատարվել է և այսոր մի վայրենի մարդ**, քաղաքակրթվելով պետք չունի շոգենավին հասնելու համար կոտրած ծառից սկսել, այլ կարող է ուղղակի շոգենավին ձեռք զարկել***։ Մարդը վոր առաջ կրակը տեսավ մի կայծակից զարկված ծառի արմատում, յետքը յերկու փայտ իրար հետ քսելով ավելի յետքը հրացանը գտավ, յետքը ֆոսֆորյան լուցկիք ևն, այսոր այս վերջինը կարող է ուղղակի ժառանգություն լինել այն վայրենուն, վոր տակավին կրակը ստանում է յերկու փայտ իրար հետ քսելով։

Առաջին առած. Զարգացման վերին ատոմճանը իր ձևով նման է նորա սկզբին։

Յերկրորդ առած****. Յեթե մի վորևիցե ազգ հասել է իր զարգացման վերին ատոմճանին, մի ուրիշ ազգ վոր խեղճ վիճակում է, կարող է հասնել այդ ատոմճանին, առանց այնքան ժամանակ և այնքան ուժ գործ դնելու այդ ատոմճանին, առանց այնքան ժամանակ և այնքան ուժ գործ դնելու վորքան առաջին ազգը*****, և բնավ չհանդիպելով միջին մոմենտներին, վորոնցից անցել եր առաջին ազգը[22]։

---

* Ջնջված՝ հատատատոպա[պես]... ԽՄԲ։

** Ջնջված՝ չեթե կամենա... ԽՄԲ։

*** Ջնջված՝ վայրենին... ԽՄԲ։

**** Ջնջված՝ վերին զարգացման... ԽՄԲ։

***** Ջնջված՝ բոլորովին... ԽՄԲ։

ՖՐԱԳՄԵՆՏ*

4 հատոր, Կիև, 1860, հատ. Ա.[23]։

Թոմփիլլ. Հաճրապետությունը Ամերիկայի մեջ.

Յերես 25—26 պատմում է թե անգլիացիների սկզբնական և առաջին գաղթականությունը յեղավ Վիրգինիա (Միացյալ Նահանգների հարավային բաժնում). թե նախ և առաջ այդտեղ վոտք կոխողները արկածախնդիր և վոսկեխնդիր անբարոյական և անպիտան մարդիկ եյին։ Վորքան խռովասեր չարամտությամբ անանկացած, վատ ընտանիքի ծնունդ և այլն և այլն մարդիկ։ Գաղթականությունը առաջին անգամ վոտք կոխեց Վիրգինիա XVII դարու սկզբում, այսինքն 1607 թվին։ «Դեռ նոր հաստատվել եյին այն տեղ,— ասում է Թոքվ[իլլը],— և ահա ներս բերին ստրկությունը, վոր մինչև այսոր տևում է և վորի մասին է այնքան ասվեր և արյունահեղությունը։ 1620-ին,— ասում է Թոքվ[իլլը],— մի հոլլանդական նավի նավապետ քսան ափրիկեցի դուրս հանեց նավից այնտեղ, ուր Ռեքիյամի ֆեոը[24] թափվում է ծովը» և այս յեղավ ստրկության և մարդավաճառության սկիզբը Ամերիկայի մեջ։

NB պարաքա— ստրիբուտ

Հանգամանք— սիրկոնստանս

Ինչպես սխալվում են Թյուրքիո հայերը, յերբ սիրկոստանսը թարգմանում են պարաքա

Ֆեդերատիվ— դաշնակցակա՞ն, թե՞ միաձնական, պետք է լավ քննել այս բառը։

Եկզիստանս— կեցություն.

---

* Տպագրվում է առաջին անգամ։ ԽՄԲ.։

ՀԱՏՎԱԾՆԵՐ «ԱՇԽԱՐՀԱԲԱՐՒ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա.

Արդեն քանի մի տարի յե, վոր թե ուրիշները և թե մենք առիթ ունեցած ենք հայկական ժողովրդական լեզվի իրավունքը պաշտպանելու և այս որվա որս, գրեթե ամելորդ եր վերստին հանդես հանել այս խնդիրը, յերթե մեր աշխատությունը հարակցություն չունենար նորա հետ։ Առաջին անգամ մեր ժողովրդական լեզուն մամուլի տակ ընկավ Թյուրքիո մեջ, բայց պետք չե մոռանալ, վոր այն լեզվով գրվածների հեղինակքը կատարել յեին այդ գործը վոչ թե իրավունք տալով ժողովրդական լեզվին, վոչ թե խոստովանելով հնի մահը, այլ ակամա ու հարկից բռնադատված, վորովհետև ժողովուրդը հինը չեր հասկանում։ Թեև այս, նաև ակամա գործողությունը, արդեն անբարբառ, բայց և այնպես հզոր բողոք եր հին լեզվի ընդդեմ, վորի մեռելությունը պաշտելի լինելով քանի մը հայագետների՝ սպանիական ֆանատիզմով քարոզվում եր տակավին վորպես կամուրջ լուսավորության։ Ներկա ներածության մեջ մենք առիթ կունենանք քննել և քրքրել այս.... եական պատճառները։ Ստույգ է, ժողովրդական լեզուն դպրու.....

Բ.

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Նոր լեզվի մշակությունը չե կարելի առաջ տանել, ստրկանալով հին լեզվի վոգուն կամ ազդեցության, վորովհետև նոր լեզվով խոսող հայերը ընկած են ուրիշ պատմական և բնական ազդեցությանց տակ, քան թե այն հայերը, վոր յերբեմն խոսել են հին լեզվով։ Ավելորդ ե ասել, վոր այն պատմական և բնական ազդեցությունքը պիտի ցոլանային և* լեզվի վրա. և այդ ազդեցությունքը արդեն վրենց պաշտոնը կատարելուց հետո անհնար ե քերել հանել ազգի վրայից։ Ուրիշ խոսքերով ասելով, ինչ պատմական և բնական պատճառներ ուներ հին լեզվի այնպես և վոչ ուրիշ տեսակ կազմությունը կամ ձևակերպությունը, նոր լեզվի կազմությունը և ձևակերպությունը ունի նույնպիսի պատմական և բնական պատճառ։ Յեվ իսպառ

* Ջնջված՝ նոր ժողովրդի... ՆՄԲ։

տգետը չի կարող մերժել այս դրույթյունը. վորովհետև չեթե այդպիսի պատճառներ չլինեյին, լեզուն չեր ընկնիլ հեղափոխության տակ: Հայտնի չե թե լեզուն չե կարող կազմվել կամ փոխվիլ մի անհատի կամ խմբի ցանկությամբ և կամքով, լեզուն վորպես ամբողջ ազգի սեփականություն կազմըվում և կամ փոխվում և նույնիսկ այդ ազգի միջնորդությամբ, վոր առանց պատճառի, առանց հարկի, առանց վորևիցե ազդեցության վոչ մի խոսք ավելցնում և և վոչ մի խոսք պակսեցնում կամ այլայլում. այլ լեզվի ամեն շարժողությունը, դեպի վոր կողմը և լինի, լինում և վորպես հետևանք ներգործող պատճառի. վորովհետև և տեսանելի առարկաների մեջ, վոր ամեն որ մեր աչքի առջևն են, շարժողությունը ինքը պատճառ չե, այլ պատճառի հետևանք:

Այս հիման վրա, ինչ իրավունք վոր ուներ անտիկյան հայը խոսել հին լեզվով, հին վոճով, հին քերականությամբ, նույն իրավունքը, իր կարգով ունի և այժմյան հայը խոսել նոր լեզվով, նոր վոճով և նոր քերականությամբ: Մերժել այս իրավունքը համազոր է պատմության և ժամանակի ազդեցությանը տգիտանալու. բնաբարել նոր լեզուն, վոր նա աճե հին ձևի ազդեցության տակ, համազոր է պատմության և ժամանակի ազդեցությունքը և իրավունքը մերժելու: Մեռածը, մեռած է. անցածը, անցած. կենդանին և ներկան, կենդանի և ներկա ժողովրդի սեփականությունն է, և անխուսափելի սեփականություն: Մինչև այսոր վոչ մի մեռած մարդ թեև շատ էլ ազահ յեղած լիներ իր կյանքում, դերեզմանից դուրս չի յեկել, վոր իր ժառանգների իրավունքը բռնաբարե և ժառանգությունը իր ձեռքը անցնե: Յեվ մեկ անգամ մեռածը, չեթե դուրս էլ գալու լինի դերեզմանից՝ ժառանգը նորան իբրև ոտարոտի մի յերևույթ, իբրև մի ճիվաղ կը հալածե, և վոչ միայն ժառանգության այլև լոկ ընդունելության չի ցույց տալ, վորովհետև մեռածը ապստամբում է բնության ընդդեմ, իր դերեզմանից դուրս գալով:

Հին լեզուն անդա՞ռձ գնաց, վորովհետև հին ժամանակները գնացին, և յեթե գնացած չլինեյին վաղուց, հին չեր լինելիր. ինչ վոր մնացել է, նորա պահպանությունը, նորա մշակությունը և նորան ծաղկեցնելը պիտի լինի ամեն խելքը գլխին մարդու գործը: Մեռնողին սիրտը պիտի նորա ժառանգին խնամ տանի, սորանից ավելի հզոր ապացույց չունի նա իր սերը դեպի մեռածը վկայելու: Իսկ սորա հակառակ ժառանգը թողուլ անխնամ, թերևս և նախատել և հալածել, և ամուր փաթթվելով մեռած դիակի հետ յերեմիականներ կարդալ, պարզ և հայտնի թշնամություն է մեռածին և վոչ սեր, վորովհետև քո լաց ու* սգով նորան չկենդանացնելուց հետո, բառոյապես մեռցնում ես և նորա գավակը:

Ավերակների քարերը կարող են պիտոյանալ նոր շինվածքի, ինչպես պահանջում է ժամանակի ճարտարապետության ճաշակը: Յեվ յեթե այդ քարերից վոմանք փշրվել են, վոմանք մի անկյունն են կորցրել, վոմանք

* Ջնջված՝ սուգը... ՀՄԲ.:

խոռոչ են ստացել, դու վորքան էլ կամենաս չես կարող, վոր վերաստեղծես այդ քարերը դեպի իրենց սկզբնական ձևը, քո բոլոր աշխատությունը պիտի լինի մնացածը տաշել, կոկել և շինվածքին պիտոյացնել: Հազար անգամ էլ վոր աշխատես կամ անկյունը վերակազնել կամ խոռոչը լցնել, զուր պիտի աշխատես, վորովհետև կարկտանը միշտ կարկտան կմնա: Ապրող ծառի ճյուղը կարելի չե միայն ապրող ծառի վրա պատվաստել. չորացած ծառի ճյուղը վոր կտրես և բերես ապրող ծառն էլ կտրելով նորա տեղը պատվաստես, կամ ապրող ծառը կտրես ու տանես չորացած ծառի արմատի վրա պատվաստես, յերկու դեպվածումն էլ զուր տեղը կտրեցիր քո ապրող ծառը, վորովհետև վոչ չոր ծառի ճյուղը պիտի կենդանանա և զարթի ապրող ծառի վրա պատվաստվելով, և վոչ թարմ ու զարթուն ծառը պիտի աճե մեքենաբար խրվելով չորցած և անհյութ արմատի վրա:

Յեվ ավերակի քարերը, յեթե քո դիտավորությունը այն և վոր շինվածքը ծառայե քո իրական պետքերին, ապա ուրեմն պիտի հարմարվին միմյանց հետ և ամբողջ շինվածքը պիտի կազմեն, իրական պետքերի համար, նոր ճարտարապետության կանոններին համաձայն: Իսկ յեթե նույն քարերով աշխատիս դարձյալ յերդիկով, առանց պատուհանների և հողե հատակով տուն շինել, ինչպես նախնիք շինում էին հնումը, տունդ կը մնա դարտակ և վոչ վոք չի գնալ վոր բնակվի նորա մեջ, վորովհետև այժմյան ժամանակում անպիտան են այդպիսի տները: Այո՛, կարո՛ղ ես շինել նաև նախնյաց շինածի պես, բայց լոկ մարդու ցույց տալու և հին ժամանակի ճարտարապետությունը ուսումնասիրելու համար, ինչպես Պոմպեյի ավերակներում վերականգնեցին բանաստեղծի տված տունը, կամ ինչպես առհասարակ փորում են և բացում են թե Պոմպեյի և թե Հերքուլանումի տները. բայց նոքա միշտ կը մնան անմարդաբնակ, վորովհետև ներկա հայացքով և ներկա պետքերին նայելով, Նեապոլսի և Պորտիչիու տները ավելի գեղեցիկ, ավելի հոյակապ և ավելի հարմար են բնակության, քան թե այն տունը, ուր Քրիստոսի* 79 թվականին[1] վերջին անգամ ճաշ կերավ Երեց Պլինիոսը:

Հնության ավտորիտետը ժամանակի և պետքերի իրավունքը հափշտակելու չափ ուժ չունի: Մեր խոսքը սիրահար մարդու վրա չե. սիրահարը որենք և իրավունք չե նայում, նա ճգնում է միայն իր սիրածին հասնիլ, ասված բարի ճամփա տա: Ամբողջ աշխարհը չե կարող** իր ամեն բանը ուրանալ և նորա սիրականի յետևից վազել, ինչպես սիրահարը վազում է. վորովհետև բազմությունը ավելի առողջ է, քան թե սիրահարը, վոր մաշվում է սերի ախտով:

Հին լեզվի ջատագովյալ գեղեցկությունը, նորա ավելի մշակված լինելը, նույնպես իրավունք չեն տալիս մեզ կենդանի ժողովրդի իրավունքը բռնաբարելու և ուրանալու վոչ միայն բնության տեսական (ethnographique)

---

* Ջնջված՝ 69... ԽՄԲ.

** Ջնջված՝ նույնպես... ԽՄԲ.

ազդեցությունքը, այլև պատմական դեպքերը, վոր անցան մեր ազգի գլխից։ Ուրանալով այս դեպքերը պիտի անշուշտ հավասարեյինք մեր անձը այն չնաշխարհիկ յեպիսկոպոսին, վոր իր սքանչելի տրամաբանությամբ ապացուցանում եր, թե Նապոլեոն առաջինը յեղած չե աշխարհի յերեսին։

Գեղեցկությունը իրավունք չե։ Աշխարհիս յերեսին վոչ դրական գեղեցիկ կա և վոչ դրական գեղեցկություն. ամեն բան կախվում և այն կետից ինչ կետից նայում ես առարկայի վրա։ Ամեն բան կախվում և չափից. չափը միակն ե, վոր չափում և տարածությունը։ Տարածությունը ըստ ինքյան վոչ մեծ ե և վոչ փոքր. մինչև վոր մի ուրիշ նորանից մեծ կամ նորանից փոքր բանի հետ չբաղդատվի և այդ բաղդատությամբ չափողի և չափվողի հարաբերությունքը չնշանակվին։

Գեղեցկության մոտավոր սահմանը, բնության մոտ լինելը կամ բնության նմանելն ե ասացին[2]. այստեղ* բնությունը ուրեմն առացավ դարձյալ չափի պաշտոնը. ուրեմն և լեզվի գեղեցկությունը պիտի չափվի բնության չափով։ Բայց մարդկային խոսքը կամ նորա ձևը անտեսանելի և մտքով միայն հասկանալի բան ե. ի՞նչպես ուրեմն կարելի յե վոր յերևելի բնությունը նորան չափ դառնա։ Մենք արդեն խոսած ենք բնության ազդեցության մասին, բայց և այստեղ վերստին ասում ենք, վոր լեզվի վերաբերությամբ միտքն ե բնությունը. լեզվի ձևի վերաբերությամբ մտքի ձևն ե բնությունը։ Պատճառ, միտքը և նորա ձևը կերպարանագործվում են մարդու մեջ բնության ազդեցությամբ կամ անմիջապես, կամ կյանքի միջնորդությամբ, վոր առաջանում և բնական պայմանների վերա։ Ինչպես բնությունն ե, ինչպես մարդու շրջապատող աշխարհն և, այնպես կը լինի և մարդու կյանքը և ինչպես կյանքը, նորան համեմատ կը կլինի միտքը։ Յեվ լեզուն, վոր ուրիշ բան չե, յեթե վոչ մտքի հայտարարը բնականապես պիտի նմանի մտքին, նորա ձևը ուրիշ բան չե կարող լինել և չպիտի լինի, յեթե վոչ մտքի ձևի յոլացումը։ Սորանից պարզ յերևում ե, վոր գեղեցկություն խոսքը, լոկ անզոր խոսք ե, յեթե գործ և դրվում հին լեզվի իրավունքը ջատագովելու համար։ Անշուշտ, այն գեղեցկությունը, վորի մասին մենք խոսեցանք, այսինքն հարաբերաբար դրական գեղեցկության տեղ առնվածը, այլ ե մի ուրիշ գեղեցկությունից, վոր ամենևին բան չունի բնության հետ, այլ կախվում ե միայն ճաշակից, սովորությունից և հասկացողությունից. ուստի և ամեն որ փոփոխության ե յենթարկվում։ Անցյալ տարվա գեղեցիկը այսոր ե տգեղ լինում իսկ այսորվա գեղեցիկը առաջիկա տարում։ Սորա պարզ և շոշափելի որինակը թերևս շորերի վրա տանք։ Տասը տարի առաջ, թողնում եմ դարերով առաջիններըը, մեր հագած շորերը, վոր շատ գեղեցիկ եյին թվում մեզ, այսոր մարդ չկա վոր հագնի. և յեթե ծակ ու ծուկից մի մարդ դուրս ել և գալիս այն շորերով ի՞նչպես տգեղ և յերևում մեզ։ Տարակույս չկա, շորը նույնն և, ինչ վոր տասը տարի առաջ շատ գեղեցիկ եր յերևում և մենք ել եյինք հագնում. հիմի ի՞նչ յեղավ, վոր նույն շորը շարժում և

---

* Ջնջված՝ դարձյալ... ԽՄԲ.։

մեր ծիծաղը. և վոչ մինչև այսչափ, այլ շատ անգամ և ղվա՞նքը: Յեթե բաց աչքով տեսնում ենք շորի նույնությունը, նորա անփոփոխությունը, ինչպես եր տասը տարի առաջ, ապա ուրեմն այն ժամանակվա գեղեցկության և նեղկա տգեղության պատճառները պիտի փնտռենք մեր մեջ: Պատրվհետև, յեթե յերկու բանի նախնի հարաբերությունը փոխվել է, հարկ է թե այդ բաներն են փոփոխության յենթարկվել, և վորովհետև պատկերները, մեր աչքը և հիշողությունը մեզ վկայում են, վոր շորը չե փոխվել, ապա ուրեմն մենք ենք փոխվողը, այսինքն մեր հայացքը: Հայացքը մի կախարդական դիտակ է, վորի մեջ ճաշակի, սովորության, հասկացողության և ժամանակի ապակիները վարում են ամենամեծ պաշտոնը. միևնույն բանը ցույց են տալիս մեզ առաջ գեղեցիկ, ներկում են նորան պանազան հրապուրիչ գույներով, հետո ասես թե աչքից ձգելով կամ բարկանալով այդ բանի վերա, այսինքն գարշելի կերպարանքով և դժգույն ներկերով նեղկում են, վոր մենք հրաժարվում ենք նորանից: Յեվ այս խաղը խաղում է դիտակը միևնույն բանի հետ յերբեմն և քանի մի անգամ. այսինքն մեզ տգեղ յերևեցնելուց անարգել տալուց յետքը, մի անհասկանալի կամապաշտությամբ, վերստին հաշտվում է այն բանի հետ և սկսում է վերստին կախարդել մեր աչքը:

Հայտնի յե թե, հին լեզվի գեղեցկության իրավունքը* գեղեցության և այս կատեգորիայով չե կարող հաղթել նոր լեզվի իրավունքին: Պատճառ, տգեղ յերևեցածը չե տանում ժամանակը, իսկ նոր լեզուն գնում է ժամանակի հետ զուգահեռաբար, ուրեմն նոր լեզուն տգեղ չե**: Սորան հակառակ գեղեցիկ համարվածը չե թողնում ժամանակը, իսկ հին լեզուն վաղուց թողել է նա, ուրեմն նորա համար հին լեզուն գեղեցիկ չե: Բայց բոլորովին ավելորդ է լեզվի վրա նայել այնպես, ինչպես մի այլ բանի վրա, վոր մեր ճաշակը փնտռում եր, առանց ուրիշ խորհրդի, միմիայն գեղեցկության համար: Գեղեցիկ պատկերի, գեղեցիկ արձանի վրա նայելով կշտանում է մեր հոգու գեղասիրության քաղցը, բայց վոչ պետքերի քաղցը. և ամեն բանից առաջ յեթե մենք պետքի քաղցը չկշտացնենք, մեր գոյության հավասարակշիռը կը թեքվի և այնուհետև վոչ Ռաֆայելի Մադոննան կարող է փրկել մեր անձը և վոչ Բելվեդերյան Ափրոդիտեն:

Փարիզի տարաղահնարքը, այն շռայլության հեղինակները, վոր գրեթե բովանդակ քաղաքակրթյալ աշխարհին հրովարտակ են տալիս այսպես կամ այնպես հագվիլ, իրենք իսկ կը թողուն իրենց գեղեցիկ համարված հանդերձը և կատիպվին փաթաթվիլ արջի մորթու մեջ, յեթե ընկնին բևեռային սառույցների մեջ. Լուկուլլոսը (վոր այսոր գրեթե հոմանուն է վորկրամոլության)***, մեզ թվում է թե կը մոռանար իր համադամքը և անուշ կերակուրքը և փառավորապես կուտեր մորժերի և ջրշունների յեղը, յեթե ընկներ

---

* Ջնջված՝ և այս տեսակ... ԽՄԲ.:

** Ջնջված՝ գեղեցիկ և... ԽՄԲ.:

*** Ջնջված՝ խոհարարը... ԽՄԲ.:

նոր Գրենլանդիու կամ թերևս Լաբրադորի եսկիմոսների մեջ, վորովհետև վոչ փարիզյան տարազահնարը իր շորերով կարող եր ապրել արջային շրջանակի տակ և վոչ Լուկուլլոսը* իր կերակուրներով նոր Գրենլանդիու կամ Լաբրադորի մեջ։ Պարզ ե թե պետքը նախընտիր ե քան թե գեղեցկությունը, վորովհետև կյանք չկա, յերթե պետքերը չհոգացվին։ Ծրտի տակ ընկած մերկ մարդը ել գեղեցկության չի նայիլ, միայն թե մի բան գտնե, վորի մեջ պատսպարե իր անձը ու չպաղի սատկած ձուկի պես. քաղցածը ել համին չի նայիլ, միայն թե ուտելիք գտնե։ Իսկ յերբ մարդը հոգացել եր բոլոր եական պետքերը, յերբ այդ բոլորն ասում ենք** հոգալով ապահովել եր իր կյանքը, այն ժամանակ միայն զարթում են նորա մեջ մյուս հոգեկան քաղցերը կամ ցանկությունքը, վորոնց շատը դեռ անծանոթ ևս են շատ միլիոնների, բայց այդ միլիոնները նույնպես ապրում են, ինչպես ապրում են շատ նկարիչք, վոր քսան յերեսուն տարիներով Հռոմի են նստում սիրահարվելով անտիկյան գեղեցկության կամ ճարտարության։

Այս դրությունից պարզ տեսնում ենք, թե ի՛նչ աստիճանի տղայական ե լոկ գեղեցկության խնդիրը, լեզվի խնդրի մեջ, վոր ծառայում ե մարդու բովանդակ կյանքին, բոլոր պետքերին միահամուռ, և վոչ մասնավորապես այս կամ այն հոգեկան ցանկության։

Ուստի ամենայն իրավունքով հարցնում ենք. հին լեզվի գեղեցկությունը, թերևս թույլ տալով այս, հերիք պատճա՞ռ ե, վոր նորան գերի լինելով նորա վրա սիրահարվելով, անմշակ թողունք, կամ, վոտքի տակ փոխկոտենք մեր նոր լեզուն, վոր ինչքան ել տգեղ լինի հնից, թերևս այս ել թույլ տալով, այնուամենայնիվ այսորվա որս մեր բոլոր պետքերը նա յե հոգում մեր համար. իսկ հին լեզուն հիմիկվա հայի համար դարձել ե փարիզյան տարազահնարի շորը, արջային շրջանակի տակ, կամ Լուկուլլոսի կերակուրը նոր Գրենլանդիու կամ Լաբրադորի մեջ։ Ասենք թե մեռած մայրը գեղեցիկ եր, բայց այս իրավունք տալի՞ս ե մեզ սպանել նորա թեև տգեղ զավակը։ Ասենք թե մեր նախնիք շատ ազնիվ կերակուրներ են կերել, բայց վոր այսոր մենք չենք կարող ուտել և մարսել այն կերակուրքը, իրավո՞ւնք*** ե, վոր նետենք մեր մի կտոր չոր հացը, վորին սովորել ե մեր ստամոքսը և վոր հազար**** նեղությամբ պահպանել եյինք մեր և մեր զավակների կենդանությունը***** ապահովելու համար։ Վո՞րը ավելի շուտ կարող ե մեզ կշտացնել, մեր առողջությունը պահպանել՝ մեր ունեցած չոր հա՞ցը, վոր ուտվում ե, թե այն շատ ազնիվ համարված բանը, վոր թեև կերել են նախնիք, բայց մենք չենք կարող ուտել։

Ջենք ուզում ասել, թե յերթանք Իտալիա և իտալացոց ստիպենք թո-

---

* Ջնջված՝ խոհարարը... ԽՄԲ.։
** Ջնջված՝ ապահովել ե... ԽՄԲ.։
*** Ջնջված՝ տալի՞ս և մեզ... ԽՄԲ.։
**** Ջնջված՝ ախ ու վախով... ԽՄԲ.։
***** Ջնջված՝ պահպանելու... ԽՄԲ.։

պուլ իրենց լատիներենի հարաբերությամբ ազնատ լեզուն ու խոսել հին հռոմեական գերապանծ լեզվով, կամ ֆլորենտացոն ստիպիլ, վոր Դանթեյի «Աստվածային կատակերգությունը» լատիներեն թարգմանե ու կարդա։ Յեվ չենք ուզում միմիայն այն պատճառով, վոր մեր ցանկությունն է այս գործի մեջ այնպիսի փաստեր և որինակներ հանդես հանել, վոր, ավելի իրական աշխարհին պատկանելով, շոշափելի եյին նաև լոկ գիր կարդալ գիտնալով մեր գրածը կարդացողին։ Այս պատճառով ասում ենք. յերթանք Իտալիա, և այնտեղ* իտալացոց, վոր պիտի պատկվեյին իրենց ընտրած աղջիկների հետ, ասենք.— Ողջ'ք դորանց, տգե'ղ են, չունին այն ազնիվ և վերին դեղեցկությունը, ինչպես եյին ձեր նախնի մայրերը, վորոնց պատկերքը և արձանները դուք ամեն որ տեսնում եք Վատիկանում։ Տեսեք, մինչև անգամ Միքել Անջելոյի ձեռագործքը, ի՞նչպես գեղեցիկ են, ի՞նչպես կատարյալ**. վո՛րքան ներդաշնակություն կա, վո՛րքան զուգապաշտություն, վո՛րքան շնորհք, ի՛նչ ճարտարություն, և այլն և այլն։— Խելքդ ինչ և կտրում, կը դանե՞ս մի հատ իտալացի, վոր Ղողուր իր Հարանացուն, միմիայն այն պատճառով, վոր նմանություն չուներ քո ցույց տված հոյակապ արձաններին։ Չե՞ վոր կասեն քեզ.— Պարո՛ն, մեզ կնիկ և հարկավոր ներկայումս, իսկ մեր դեղեցիկ նախամարքը ապրեցան և մեռան յերկու հազար տարի առաջ, և մեզ այս սերունդը Ղողեցին, վորին այժմ դու չես հավանում։ Յերթ մենք ել քո խելքին ընկնենք, ասել է թե առանց կնիկ պիտի մնանք, վորովհետև ներկա աղջիկները դոքա չեն վոր կան և դոցանից ոտրիշ ել չկան։ Բնությունը և ընկերական կյանքը կնիկ են պահանջում. կենդանի, շարժուն, ջերմություն և յերակներում արյուն ունեցող եակներ։ Այն քարեղեն, մեռած, անշարժ, սառը արձանները, վոր մեզ ցույց ես տալիս, թե և այո՛, գեղեցիկ են, բայց ի՛նչ ոգուտ, վոր ընկերական կյանքում չեն կարող մեր պետքերին ծառայել։ Միմիայն նայելով նոցա սառը և անկենդան դեղեցկության վրա, կամ զարմանալով քանդակագործի հանճարեղ ճարտարապետության վրա, բնության հարկը չե վճարվում, մեր տունը չե կառավարվում, մեր այգիքը չեն մշակվում, մեր կերակուրը չե յեփվում, մեր շորերը չեն կարվում՝ կամ լվացվում։ Կարո՞ղ ես, կրկնում ենք, գտնել գո՛նե մեկ մարդ, վոր լսե քեզ և վերացական դեղեցկության սիրահարվելով իրական աշխարհի պետքերը, այո՛, և իր մարդկային կոչումը ուրանա։

Մենք վերևը ավելորդ համարեցինք լատին լեզվի առաջարկությունը, մանավանդ այն պատճառով, վոր նույն բանը, նույն առաջարկությունը կարելի յե առնել և հայ մարդուն, վոր նա խոսի Խորենացու կամ Ցեղիշեյի վոճով ու լեզվով։ Հայտնի յե թե ներկա հայի համար անհնար է այս, վորովհետև նա չգիտե այն ձև ու վոճը. նույնպես անհնար է և իտալացու համար, վորովհետև լատինախոսությունը վաղուց արդեն թաղված պրծած է հռոմեական Ֆորումի և Կապիտոլիոնի ավերակների տակ։

Ո՛վ չգիտե Բենվենուտտո Ցելլինու հոյակապ նատուրգների արժանավո-

* Ընդվաճ՝ չինականն... ԽՄԲ.։
** Ընդվաճ՝ վորչափ... ԽՄԲ.։

րութիւնը. հայտնի չե թե յեվրոպական մուզեոնների և անտիկատերների համար շատ բարձր գին ունին։ Բայց չնայելով սորա վրա՝ կարո՞ղ ես իբրև դրամ գործ դնել նորա մեդալիոնները։ Բազար վոր տանի՞ս, շինականը քեզ ալլուր ու յեղ կը տա, վոր քերես քո զավակները կերակրես։ Թե վոր մի ընկերութեան մեջ փարայի և գոռշի սիքան ընդունում են և ճանաչում են, ու Չելլինու հրաշալի գործերի համար քեզ հաց չեն տալիս, վո՞րը կարող ե քո պետքերին ծառայել, Բենվենուտտո Չելլինու մեդալիոննե՞րը, թե՞ փարան կամ գոռշը։

Ասենք թե յես պսակված եմ, կնիկս շատ ել տգեղ ե, գիտեմ, բայց յերբ վոր իմ կյանքը նորա կյանքի հետ անքակտելի կապերով կապված ե, յերբ նա իմ զավակների մայրն ե, իմ տան կառավարիչը, ի՞նչպես ես կարծում, յես դուրս կը ձգե՞մ նորան, յերբ գաս ու քարոզես ինձ մեկ կողմից նորա տգեղությունը, մյուս կողմից «Հայոց աշխարհի փափկասուն տիկիններին» գեղեցկությունը[3]։ Ասենք թե խելագարվեցա և դուրս ձգեցի, դորանով ի՛նչ կը շահվիմ, այն փափկասուն տիկիննե՞րը* կը կենդանանա՞ն, վոր գան իմ պետքերին ծառայեն։ Իսկի առաստպելի մեջ, Շամիրամը իր թալիսմաններով և առեզներով չե կարանում Արայի նոր անշնչացած դիակը կենդանացնել[4], յես յերկու հազար կամ յերեք հազար տարվա մեռած գնացած կանա՞չքը պիտի կենդանացնեմ և այն այս իրական աշխարհում, այս** անողոքելի դարում, վորի թագավորը չե մի վորպետի և իցե քնարեր նամիկ, այլ այն արդասավոր սկեպտիցիզմը, վոր վերցնում ե մարդկային մտքի ամլության նախատինքը։

Հեռու յենք մենք մեր այս գործը այս տեսակ որինակների շատությունով բեռնավորելու դիտավորությունից, վորովհետև աշխարհի յերեսին վոչինչ այնքան շատ չկա վորքան մի բնական յերևույթի կամ իրողության որինակ, բացի սորանից այն բանը ինչ վոր անցել ե մեր լեզվի գլխից, վո՞ր ազգի լեզվի գլխից չե անցել։ Հավաքել այդ բոլորը և նոցանով խճողել ու հաստացնել մեր աշխատության փորը՝ ձանձրալի յե թվում մեզ և կարծում ենք, վոր ընթերցողը ևս իրավունք կունենային ձանձրանալու։ Բայց մի քանի որինակ հարկ յեղավ դնել, վորովհետև չկամեցանք չոր դրույթյուններով միայն շատանալ։ Բայց այս որինակները դրինք, վոչ թե խոստովանելով հին լեզվի դրական գեղեցկությունը կամ նորի դրական տգեղությունը, վո՛չ. այլ միայն թույլ տալով և թույլ տալուց յետքը նույնիսկ որինակներով մեր դրույթյունը պաշտպանելու և հակառակ կարծիքները շոշափելի փաստերով մերժելու համար։*** Խելքը գլխին մարդը տեսնում ե պարզ, վոր հին լեզվի իրավունքը, յերբեք ավելի չե նոր լեզվից, հին լեզուն ավելի գեղեցիկ չե քան թե նորը, հին լեզուն ավելի ուժով չե քան թե նորը, թեև սա հին լեզվի և հարյուրում մասի չափ ել մշակված ու գործածված չե։ Խոստովանում ենք,

---

* Ջնջված՝ պիտի... ԽՄԲ.։

** Ջնջված՝ յերկաթե... ԽՄԲ.։

*** Ջնջված՝ վորովհետև... ԽՄԲ.։

վոր նոր լեզվի մեջ կա թերություն կամ ճապաղություն. ավելի իրավունք կար զարմանալու, յերբ չլինեյին դոքա, վորովհետև այդ լեզուն մինչև այժմ գրի տակ ընկած չլինելով և չմշակվելով, բնականապես պիտի ունենար այդ թերությունքը։ Բայց հին լեզուն, նույնպես, չունի՞ իր թերությունքը։ Նորա մեջ կան բառեր, ձևեր, վոր նորի մեջ չկան, վորովհետև շատ այդ պիսինների գաղափարքը պետքերի հետ միասին կորած են և չկան ներկա հայի համար. բայց և նոր լեզուն ունի իր կենդանի և շարժուն ձևերը ու վոճերը, վորպես ներկա գաղափարների և պետքերի հայտարար, վոր հնումը չկան։ Յեվ ինչո՞վ կը տաշվին, կը կոկվին նոր լեզվի պակասությունքը, յերբ վոչ մշակությամբ, և գրի տակ ձգելով, ինչո՞վ կը սահմանափակվեն նորա ճապաղությունքը, ինչո՞վ կաղնվանան նորա ձևերը և վոճերը, յերբ վոչ ուսումնասիրելով այդ լեզուն, գործ դնելով նորան և որե որ աճեցնելով։ Իրավունք ունի Բեկոնը, մինչ ասում է «Կարդալը հարստացնում է մարդու միտքը, խոսելու մեջ վարժվելը հաջողագյուտ է անում նորան, իսկ գրելը սուվեցնում է ճշդություն»[5]։ Իրավ վոր կենդանի խոսքը ավելի ճապաղ է քան թե գրություն, վոր ավելի քիչ խոսքով իմացնում է նույն գաղափարը։ Հայտնի չ՚ե թե նոր լեզուն ապաստան մնալով միմիայն հասարակ ժողովրդի բերնին*, պիտի ճապաղ լիներ ընդհանրապես, վորովհետև գրի մեջ չմտնելով ճշդված և սխմված չեյին նորա ձևերը կամ վոճերը։

Կարող են մեզ ասել, թե մինչև այժմ մեր բերած վկայությունքը և ապացույցքը ավելի վերաբերվում են այն խնդրին, թե վո՛րը պիտի նախընտիր համարենք, հի՞ն, թե՞ նոր լեզուն, քան թե այն պատճառներին, թե ինչո՛ւ համար չե կարելի առաջ տանել նոր լեզվի մշակությունը հին լեզվի ազդեցության տրկանալով։

Բայց սորա ընդդեմ մենք ասում ենք, վոր հին լեզուն նորից նախընտիր, գեղեցիկ և մշակված համարվելը շատ պինդ կապված լինելով նոր լեզուն բունաբարելու և հնի ազդեցության տրկացնելու անխորհուրդ ձգտողության հետ, այո՛, մեր փաստերը յերկու խնդրի ընդդեմ ևս կարող են գործ դրվիլ։ Վորովհետև յերբ հին լեզուն նախընտիր համարելով նորը անարգելը և վոտնակոխ անելը նմանում է կենդանի զավակը սպանելու, այն պատճառով, վոր նորա մեռած մայրը ավելի գեղեցիկ եր, նույն այն հին լեզվի գեղեցկության պատճառով նոր լեզուն ել քաշկռտել և ժողովրդի իրավունքը բունաբարելով, կենդանին մեռելի հետ պատանքելը, նմանում է այն բանին յերբ, տեսնելով վոր նորածին բայց կենդանի մանուկի քիթը ավելի յերկայն է քան թե նորա մեռած մոր քիթը, մտածող լինի կտրել դանակով ավելորդ յերկայնությունը**, կամ յերբ կարճ է, ապցանով քաշելով յերկարացնել, վոր միաչափ լինի մոր քթի հետ, նույնպես և մյուս բոլոր անդամները կամ գույնը։ Պարզ է, թե այսպիսի գործողություն նորածին մանուկի կազմվածքի վրա, անշուշտ մահաբեր են. և յերբ մահ ել

---

* Ջնջված՝ մնալով ապաստան... ԽՄԲ.։

** Ջնջված՝ և հավասարել... ԽՄԲ.։

չպատճառեն, ապա ուրիմն պիտի համաձայնել, վոր ավելի այլանդակում են մանուկի կերպարանքը, քան թե գեղեցկացնում*. պատճառ, բնության անբռնաբարելի իրավունքի վրա չե կարելի անպատիժ ձեռք բարձրացնել։

Հայտնի չե, թե մանուկը, բնականապես, պիտի ածե և զորանա այն կերպարանքի տակ, ինչ կերպարանքով ծնել և իր մորից, կրթությունը և դաստիարակությունը պիտի ոգնեն նորան, վոր նա դառնա ընկերության պիտանի անդամ։ Բայց իր մորը նման չե, կամ այնպես գեղեցիկ չե։ Այս խնդիր չե, այլ ցնո՛րք։ Կարող և նա իր մորը չնմանելով ավելի գեղեցիկ լինել իր տեսակի մեջ, յերբ նորա կազմվածքը պնդանա և ծաղկի. կարող և նաև գեղեցիկ չլինելով, իր ընդունակությամբ և լուսավորությամբ հարյուր անգամ նախընտիր և հարյուր անգամ պիտանի լինել քան թե նորա մեռած մայրը։ Այսպես ևս** նոր լեզուն չպիտի ատրկանա հնին, այլ պիտի մշակվի ինքնուրույնաբար։ Թող նա ներկա մեր պետքերի անհրաժեշտ ընդունակությունը և ձգականությունը ունենա, մենք գեղեցկության ճարտարապետից կամ սիրողից կը խնդրենք, վոր իր չափը ծոցը գնե, վորովհետև նորը ընդունակություն և ձգականություն ստանալով պիտի և նոր չափով չափվի, մեր հնաոճերի չափը նորա համար կամ կարճ է կամ յերկայն***։

Բայց, լսում ենք, այստեղ բարձրանում են ձայները, թե «նոր լեզուն առաջացել և տաճկական տրամաբանության տակ, և յերե նորա մշակությունը առաջ չտարվի հնի աղղեցության**** ատրկացնելով, այն ժամանակ ել հայկաբանություն***** չի մնալ, այլ սոսկ տաճկաբանություն և այլն և այլն»։

Խոստովանենք, թե նոր լեզվի տրամաբանությունը շատ մոտ է տաճկական լեզվի տրամաբանության, նոր լեզվի բաղդատությունը շատ տեղ դրեթե նույն է տաճիկ լեզվի բաղդատության հետ. բայց ի՛նչ կանես, յերբ բոլո՛ր ազգ այդ տրամաբանությամբ և այդ բաղդատությամբ է խոսում։ Մոռցնել նորան այդ բոլորը և քաշել տանել հին լեզվի տրամաբանության տակ, համազոր է հին լեզուն քարոզելու, վոր իր կարգով համազոր է մարդկային կենդանի խոսքը ուրանալու։ Այն մարդը վոր մի անգամ հիմնավորապես հասկացել է լեզվի խորհուրդը, նորա պաշտոնը, այսպիսին, յերբեք չե կարող այսպիսի վոչինչ բաների առջև ընկրկիլ։ Ինձ հարկավոր է, վոր իմ միտքը առջևիս կանդնած մարդը հասկանա, յես գործ դնելով նոր լեզուն, վատարելապես հասնում եմ իմ նպատակին, այն մարդը հասկանում է իմ միտքը։ Բայց ձևերը և տրամաբանությունը մոտ են յեղած տաճկականին, ինձ ի՛նչ փույթ, կամ ինչ ոգուտ իմ բուն հայկական

---

* Ջնջված՝ են նորան... ԽՄԲ.։

** Ջնջված հին լե[զուն]... ԽՄԲ.։

*** Ջնջված՝ sic! ԽՄԲ.։

**** Ջնջված՝ տակ... ԽՄԲ.։

***** Ջնջված՝ չե մնում... ԽՄԲ.։

ձևերով կամ* հայկական տրամաբանությամբ խոսելուց, յերբ լսվում այն ձևերի տակ զրկվում ե իր խորհրդից և չե կարում վարել իր պաշտոնը, յերբ խոսողը չե հասնում իր նպատակին, վորովհետև նորա խոսակիցը չե հասկանում նորա միտքը այն ձևերի տակ։** Տաճկական տրամաբանությունը կամ բաղդասությունը, նոր լեզվի վրա վոչ Մարկոսը պատվաստեց և վոչ Կիրակոսը. բնությունը, պատմական դեպքերը և հազարամյա ժամանակները տվին նորան այն ձև ու կերպարանքը. կարո՞ղ ես անցած գնացած բաների ընդդեմ պատերազմել. կարո՞ղ ես բնության ընդդեմ ճակատ ճակատի պատերազմել։ Այս տեսակ ձգտողության տեր մարդիկը, յեթե ուրիշ բան չգիտեն, գո՛նե պիտի յենթադրել, վոր Աստվածաշունչը կարդում են, մենք ել այս պատճառով դիմում ենք դեպի նորա ոգնությունը։*** Ինչի՞ համար լորը և մանանան թողած, Յեգիպտոսի սոխ ու սխտորն եր հիշում Իսրայելը. հայտնի չե թե մեզ ամեններիս համար, մեր ներկա հասկացողության և ճաշակի համար ավելի աղնիվ և ավելի նախընտիր են լորը և մանանան քան թե սոխը և սխտորը։ Պատճառը շատ պարզ ե, վորովհետև Իսրայելը դարավոր ժամանակներով Յեգիպտոս մնալով ընտանացել եր յեգիպտական բնության, նորա ճաշակը և հասկացողությունը գոյացել և զարգացել եյին այն բնության ազդեցության տակ և այժմ մեզ նախընտիր համարված լորը և մանանան չեյին կարող բռնել նորա համար Յեգիպտոսի սոխի և սխտորի տեղը։ Կարո՞ղ ես քո կամքով կամ սենյակիդ մեջ թուր շողացնելով պատգամ տալ 5 միլիոն ազգիդ, վոր նա թողու իր սովորական ձև ու վոճը ու առնու կամ հպատակի հին լեզվի ձևին****, վոճին, կամ տրամաբանության։ Յեթե յերեկը ամպը և գիշերը կրակե սյունը, յեթե Յեհովայի վորոտները Սինայի գլխից, և Մովսեսի պատվերները այնքան ազդեցություն չունեյին մի խումբ իսրայելի վրա, վոր նա ամեն որ չհիշեր Յեգիպտոսի շոշափելի աստվածները, յեթե այս բոլորը հերիք չեյին նաև Ահարոնի համար, վոր նա վոսկեղեն հորթը չձուլեր, քո հրամանը կամ պատդամը կարծում ե՞ս թե տեղ կը հասնի և 5 միլիոն ազգիդ գլխին հին լեզվի տրամաբանությո՞ւնը կը հանգչի, ինչպես «վերնատան հրեղեն լեզուները»։ Մեղավո՞ր եր Իսրայելը, վոր Յեգիպտոսի մեջ տեսանելի և շոշափելի աստվածների սորված լինելով, չեր կարող հասկանալ մի անտեսանելի և անշոշափելի աստված։ Կարելի՞ չե դատապարտել նորան, յեթե նորա հասկացողությունը գոյացած և ամած լինելով յեգիպտական բնության, յեգիպտական ատմոսֆերի ազդեցության տակ, գաղափար չուներ ազատության եական սկզբունքի մասին։ Հայտնի չե թե Յեհովան շատ վաղ եր մի այդպիսի ժողովրդի համար և այնքան վաղ, վոր նաև հազար տարի յետքը Իսրայելի խումբերը ծխվում եյին բարձրավանդակների վրա և զոհերի ծուխը բարձրանում Բահալին և Աստարտին։ Բայց Հռովմայեցոց Պալեստինին

* Ջնջված՝ տրամա[բանությամբ]... ՀՄԲ.։
** Ջնջված՝ Նոր լեզվի վրա... ՀՄԲ.։
*** Ջնջված՝ Ինչու... ՀՄԲ.։
**** Ջնջված՝ կամ... ՀՄԲ.։

միրելու ժամանակները, Բահալը և Աստարտը ունեցի՞ն դարձյալ իսրայելացի պաշտողներ, հայտնի չե թե չե. թեև այն ժամանակ Իսրայելը ել վոչ ամպն եր տեսնում, վոչ սյունը, վոչ Յեհովայի կրակն ու բոցը, վոչ Մովսես կար և վոչ Յեղիա։ Ի՛նչ և պատճառը, վոր Յեգիպտոսից դուրս յեկած որից այնքան դարավոր ժամանակներում, ինչ վոր չկարողացան արգելել Յեհովայի, Մովսեսի և մյուս մարգարեների ավտորիտետը, Իսրայելը ինքը իրեն դադարեցավ և խափանեց Բահալի և Աստարտի պաշտոնները։ Հայտնի չե թե իսրայելական բնությունը հեղափոխության տակ ընկնելով այն դարավոր ժամանակամիջոցում, Յեգիպտոսի ազդեցությունը նորա վրայից կտրեց և դորա հակառակ Յեհովայի ազդեցության տակ մնալով, ել չեր կարող տեսանելի և շոշափելի աստվածների հնազանդվիլ, վորովհետև նորա իմացական հասակը բարձր եր այժմ քան թե Նաբուգոդոնոսորի վախտն կանգուն արձանը։ Այս հեղափոխությունից ել մինչև այսոր յերկու հազար տարի անցավ և այս յերկու հազար տարվա մեջ ավետարանի ձայնը Իսրայելի անկաջից չկտրվեցավ, բայց նա վոչ միայն չկամեցավ լսել, այլ Մովսեսի քարոզած պարզ Յեհովայի կրոնի վրա պատվաստեց նաև մարդադիր և ժողովրդական կանոններ, վոր հայտնի յեն Թալմուդի անունով, վորով տրամագծական հակադրությամբ մանավանդ հեռացավ, ոտարացավ Ավետարանի վարդապետությունից, և ավելի ևս քան թե մովսիսական կրոնը։ Յերեք դարավոր սովորության, բնության և պատմական դեպքերի ազդեցությանց մեջ չփնտռենք այս բաների բուն պատճառը, ի՛նչպես պիտի հասկանանք և մեկնենք յերևույթը, վոր լոկ բնական հետևանք են այն ազդող պատճառներին։

Հեղեղը, վոր իջնում է սարից, կարգելվի՞, յերթե մտածես պատ քաշել նորա առջև և քո տունը այդ ճամփով փրկել. չե՞ վոր ավելի խելքի մոտ է խանդակներ փորել և հեղեղի հորձանքը այն սահմանի մեջ ուղղելով, նորա ապականող և ավերող ուժից փրկվիլ։ Բնությունը կրա՛կ է, կա՛յրե կը մաշե յերթե անմիջապես և կոպտությամբ վարվիս նորա հետ. բայց չնայելով սորա վրա, բնությունը անհաղթելի չե, յերթե կարգով, ճամփով, դարձյալ բնական հնարներով ընդդեմ դուրս գաս նորան։ Մինչև Ֆրանկլինի շանթարգելը, վոր հազար տարի Մասիսի նման ապառաժ ել դեմ անելիր կայծակին, կարո՞ղ եիր քեզ ապահովել նորա հարվածից. բայց տե՛ս, բնությունը դարձյալ զենք տվեց քո ձեռքը. մի յերկաթե ձող և, բայց բորբոքված կրակի վրա ջուր ածելու պես, նստեցնում է ոդի յելեքտրականության գործունեությունը և ապահովում է քեզ և քո տունը։ Ի՛նչ և պատճառը, վոր Մասիսի նման ապառաժի չկարողացածը կարողանում է մի չնչին յերկաթի կտոր։ Հայտնի չե թե Մասիսը դեմ դնելով կայծակին, միանգամ խելքիդ նստեցրել եիր, վոր պիտի կարողանաս այն ահագին հսկայի ուժով հաղթել բնության, մինչդեռ բնությունը ծաղրում է նաև Հիմալայի, Չոմալարի և Դաուալագիրի հսկայությունքը, ուր և՝ մնում, նոցա հետ համեմատելով մեր մեկ թիզ Մասիսը. բայց յերկաթը, վոր դեմ ես անում նորան,

այնտեղ քո խորհուրդը բռնանալ չե բնության վրա, այլ, ուղղություն տալ նորան և սահմանափակել նորա կարողությունը, վոր* իբրև յելեքտրականության լավ առաջնորդ, կամուրջ և լինում ոդի և յերկրագունդի մեջ, այնպես վոր ատմոսֆերի յելեքտրականությունը այն կամուրջի միջնորդությամբ կպչելով** յերկրագունդի յելեքտրականության հետ, կապվում է և ուղղվում է դեպի յերկրագունդի յելեքտրական կենդրոնը, վոր նույն պիտի լինի և նորա յերկրաչափական կենդրոնի հետ***, վորովհետև ջերմությունը նույնպես աղբյուր է յելեքտրականության, և վորովհետև յերկրագունդի կենդրոնը հալված վիճակի մեջ է իր անչափելի բարձրաստիճան ջերմությունից:

Յերե հայոց ազգը դարերով սարկանալով պարսից, մոգոնների, սելջուկյան թաթարների, արաբացոց, ոսմանցոց, յեգիպտացոց, կամ դեռ չգիտեմ ինչացոց, այն պատմական դառը դեպքերի տակ ընկճված, մեռած ու հոգին բերանը յեկած, չեր կարող բնական որենքի ազդեցությունը քերել իր վրայից, չեր կարող չընդունել այն տիպը և կնիքը, վոր այնքան դարերով, կրակով և բարձրաստիճան ճնշողությամբ դրոշմում եյին նորա փափուկ սրտի վրա, յերե նորա կյանքը յենթարկված եր այն ազգերի անպայման ազդեցության, միտքը, վոր կյանքի հետ լծակից է, լեզուն, վոր մտքի հայտարարն է, ի՛նչպես կարող եյին ազատ մնալ այն ազդեցությունից: Մի դեղ խոտ, մի բուռը հող դնում ես**** մեջ տեղը***** ու յետքը բոլոր աշխարհը ծածկում ես ջրհեղեղով, ել խե՛լք է այնուհետև պահանջել, վոր խոտը չոր մնա, կամ հողը չցրվի: Հայտնի յե, թե հայոց ազգը գևոնդյան բրդի կամ մովսիսյան մորենու սքանչելի վորակությունքը չեր կարող ունենալ, վոր****** ցորը նորան չբջնե կամ կրակը չերնե: Դեռ մեծ տղամարդություն և հայոց ազգի կողմից, վոր այնքան կարողացել և պահել, վոր այսոր մեզ պես, ազգի կորած շվարած վորդիքը կարողանում են նորա կենդանի խոսքով յերկու տող գրել: Այո՛, մենք շատ խոտեր գիտենք, վոր այսպիսի ջրհեղեղներից փրկեցան, շատ հողեր գիտենք, վոր ցիր ու ցան յեղան, վորոնց անունն անդամ մոռացված է այսոր:

Լա՞վ և յեղել, վա՞տ և յեղել, խնդիրը այդ չե: Ամեն մարդ գիտե վոր այդ սոսկալի տարաբաղդություններ եյին, զարհուրելի հարվածներ, սարսափելի փոթորիկներ, վոր անցան մեր ազգի գլխից. բայց վոր յեղել են ու պատահել են և իրենց հետքն ել թողել են ազգի կյանքի, նորա մտքի և նորա լեզվի վրա, կարելի՞ յե այս բոլորը ուրանալ և քերել հանել: Վոչ վոք ուրախ չե, վոչ մեկիս սիրտը չե փառավորվում մեր հիշատակարաններում կեսը արյունոտ, իսկ կեսը դարավոր արտասունքից փքված թերթերը

---

* Ջնջված՝ ոդի... ԽՄԲ.:

** Ջնջված՝ ոդի... ԽՄԲ.:

*** Ջնջված՝ յեթե ջերմությունը... ԽՄԲ.:

**** Ջնջված՝ աշխարհ... ԽՄԲ.:

***** Ջնջված՝ և հետո... ԽՄԲ.:

****** Ջնջված՝ ջուրը նորան... ԽՄԲ.:

դարձնելու ժամանակ, բայց ի՛նչ ոգուտ. անցածը հետ կը գա՞։ Յեթե մենար հայկական անկախությունը, դուցե հայկական լեզվի տրամաբանությունն ել մնար անարատ ու այսօր իր տաճկական տրամաբանությամբ չվշտացներ մեր պարոնների կույս անկաշը, բայց վոր հայոց անկախության շինվածքը կործանվել, ու կտորներն ել նեվայից բռնած մինչև Ցավա հասել, յեթե ազգը հազար տարիներով ծանր ստրկության մեջ շատ անգամ ստիպվել և կամ թաքուն խոսել*, վոր իր շարչարողը** չհասնի նորա*** խոսածը ու պլխին չզարկե, կամ պարապ միջոց գտած ժամանակը այնպես արագ խոսել, վոր շարչարողը վրա չհասնի և այս պատճառով բառերի ձայնավորքը թողնել, կամ ձայնը չլսվելու համար ակռաները և պռոշները սխմած յերկար ձայնավորները դեպի կարճ փոխել, մեկ խոսքով յեթե ազգը ստիպվել և հայախոսությունը վորպես մի մաքսանենդություն հազար արգոսների աչքից ծածկելով, վորպես մի սրբազան ավանդ սիրտը բերանը յեկած այսոր այս կերպարանքով բերել թողել ներկա սերունդին, այդտեղ հայկական տրամաբանությունը կարելի՞ յե պահանջել։ Վո՞ր խիղճն և վոր պիտի ներե, վո՞ր ձեռքն և վոր պիտի բարձրանա մի գավազան ել այստեղ**** նորա դլխին հասցնելու թե «ձայնդ կտրի՛ր, տաճկի տրամաբանությամբ ես խոսում, թե խոսում ես, խոսիր ինչպես խոսել են քու նախնիքը, բուն հայկական տրամաբանությամբ»։ Chapeaux вeaux dégô lent puriste.*****

Գ

Ալեքսանդրյան դպրոցի ծաղկյալ ժամանակը բանի վարդապետությունը վոչ զուտ տեղը մինչև այն աստիճան եր հասուցած, վոր մինչև անգամ և քրիստոնեության մեջ անկյունաքար դարձավ. «Ի սկզբանէ էր բանն և բանն էր առ աստուած, և աստուած էր բանն. նա էր ի սկզբանէ առ աստուած, ամենայն ինչ նովաւ եղև և առանց նորա եղև և ո՛չինչ որ ինչ եղեն. նովաւ կեանք էր»[8]։

«Ախ՝ լեզուն, լեզուն. լեզուն վոր չլսի՝ մարդ ընչի՞ նման կըլի», աղաղակում և նահատակ Աբովյանը[9]։

Յեվ արդարև բանը աստված և, արդարև ամեն բան նորանով և յեղել, նորանով և լինում և պիտի լինի։ Լեզուն և այն սարսափելի ուժը, վորի ընդդեմ տկար են նաև միլիոնավոր բարբարոսների ամիոնները[10]։ Բնության ահարկու ուժերից հետո, վորպեսի յեն յելեքտրականությունը, ջերմությունը և այլն, լեզուն առաջին զորությունն և վոր հայտնվում և բնության մեջ՝ բովանդակված բարոյական աշխարհում։ Լեզուն և ազգության դրոշակը, լե-

---

* Ընդված՝ կամ... ԽՄԲ.։
** Ընդված՝ չլսե... ԽՄԲ.։
*** Ընդված՝ ձայնը... ԽՄԲ.։
**** Ընդված՝ հասցնել... ԽՄԲ.։
***** Դեղեցիկ դլխարկները դղվեցնում են մաքրամոլին (Ֆր.) ԽՄԲ.։

դուն ե նոցա վորպիսության և վիճակի հայտարարը[11]: Չկա աշխարհիս յերեսին ազգ, վոր բարբարոս լինելով լեզուն լիներ վսեմացած, չկա նույնպես ազգ, վոր քաղաքագործվելով բարբարոս լեզու ունենար: Պատճառ, սոքա յերկուքը ևս կապակից են իրար հետ և մինը չե կարող առաջ յերթալ առանց մյուսին: Մինը չե կարող հետ մնալ և ավերվել առանց մյուսին: Լեզուն ըստ ինքյան մի աման ե, վորով մարդը թափում ե իր միտքը իր նմաններուն մտքի մեջ. սա յե այն կամուրջը վորի վրայով կարող են ազատորեն ընթացք ստանալ մտքերի առևտուրքը:* Անլեզու մարդու վիճակը, այսինքն մունջի արտասվելի վիճակը և ամենամեծ պատուհասը, վորին կարող եր յենթարկվիլ մի մարդ: Կույրը, մխիթարվում ե լեզվով, ձեռքից և վոտքից ընկած մարդը մխիթարվում ե լեզվով. պատճառ, լեզվի միջնորդությամբ իր կարիքը հայտնելով մերձավորին գտնում ե իր համար ոտար աչք, ոտար ձեռք ու վոտք: Ստո՛ւյգ ե չեն սոքա, վորպես կարող եյին սպասավորել նորա սեփականքը, բայց և այնպես ի՛նչ համեմատություն կա սոցա և մունջի մեջ: Այն թշվառը աչք ունի, ձեռք ու վոտք ունի և շատ անգամ մի առույգ առողջություն ընդհանուր կազմվածքի. տեսնում ե, շոշափում ե, ճաշակում ե, հոտոտում ե, հետևաբար և ամեն վայրկյան արտաքին աշխարհի տպավորությունքը թափվում են նորա զգացողության վրա. բայց, պիտի մնան նոքա այնտեղ, վորպես մի անելանելի միրապում և պիտի մաշեն և չարչարեն այն գոհը, վոր հնար չուներ դուրս թափելով նորանց, թեթևանալ իր բեռներից: Այս ե գեթ այն ցավը և թշվառությունը, վոր նա զգում ե, բայց սորանից ավելի թշվառություն կա, վորին թեև յենթակա յե նա, բայց չգիտե: Իմացական աշխարհը փակ ե նորա դիմաց: Ահա այն սոսկալի վատաբաղդությունը: Վոչ մի գաղափար, վոր մարդկությունը արյունի գնով մշակել եր, չեն նորա համար: Նա չգիտե մինչև անգամ թե ի՛նչ ե ինքը. ի՛նչ պաշտոն ունի ամենաբարի բնության գործում կատարելու, մինչև ո՞ւր հասնում և իր նմաններին (վո՛չ մունջերի) կարողությունքը և ձգտողությունքը: Նա չգիտե թե** ի՛նչ տեղից յեկավ և ո՛ւր և գնում: (Թեև այս բանը և շատ ուրիշների համար տակավին գաղտնիք ե, բայց գոհություն բնության, որե որ այդ անթափանցելի վարագույրը անուսրանում ե):

Մունջը, մի փոքր ավելի լավ և դրված բնության մեջ, քան թե վերին աստիճանի կերպարանագործված կենդանիքը***. և այս ե նորա ևության գագաթնակետը: Նորա համար չկա բարոյական խնդիր: (Յերե գիտեն սորանից ավելի թշվառ վիճակ, թող ասեն մեզ. մենք, գո՛նե, չգիտենք):

Բարոյական խնդի՞ր.... Ո՞ւր ե դորա աղբյուրը, միթե դո՞ւրս և դա մարդկությունից, վոր մունջը մարդ լինելով անմասն ե նորանից: Բանն ել այս ե, վոր մունջը բարոյապես մարդ չե. վերևն ել ասացինք, մունջը և անբան կենդանիների ամենակատարյալը. յերե որանգությանգի կամ կորիլլի համար կա բարոյական խնդիր, ապա ուրեմն կա և մունջի համար. բարո-

---

* Ջնջված՝ Այո՛, զանազան նշանները կարող են... ԽՄԲ.:

** Ջնջված՝ ուստ[ից]... ԽՄԲ.:

*** Ջնջված՝ վորպիսի... ԽՄԲ.:

յական խնդիրը կարող է լինել միմիայն լուսի մեջ, «և խաւար նմա ոչ եղև հասոյ»*: Կարծեմ ավելորդ եր ասել, վոր այս լույսը լեզուն եր: Բնական աշխարհի լույսը ևս մի միջնորդ է, վոր բնության մեջ, նորա ձեռքով կատարվին այս և այն պաշտոնակատարությունքը, իսկ բարոյական աշխարհում լեզուն է այդ միջնորդը, վորի սպասավորությամբ կատարվում են իմացականության պաշտոնակատարությունքը: Թեև մենք ընդհանրապես կուսակից ենք փորձական և վերածական փիլիսոփայության, վորպես ավելի դրական տեսության, բայց այս խնդրի մեջ բնավ սխալ չեն և չեզրակացականը և մենք առանց հողդհողդվելու կարող ենք մի անհատի մի մունջ մարդու տեղ առնուլ մի ամբողջ ազգ նույնպես զուրկ լուսից, նույնպես անծանոթ քաղաքագործության արդյունքներին, նույնպես անլեզու վերաբերությամբ նաև այնպիսի ըմբռնողության, վոր առաջին աստիճանքն եյին լուսավորության, թո՛ղ վսեմ խնդիրները, և ահա ճշմարիտ եր այն սարսափելի վճիռը և նորա վրա, վորպես մի մունջ անհատի վրա:

Նոքա վոր արդեն գուշակեցին, թե ինչ եր մեր ասելիքը, տեսնում ենք վոր քիթերը կախում են և յերեսները թթվեցնում, բայց մի՛ շտապեք քարկոծել մի մարդ, վոր խոսում է այն ազգի մասին, վորին ինքը ևս անդամ է և ինչպես նորա ընթերցողքը, մի՛ դատապարտեք նորան, յերբ նա այն ծանր վճիռը դնում է իր ազգի վրա, անկողմնապահ ճշմարտության անունով, պակա՞ս եր նորա սերը դեպի իր ազգը քան թե ձեր սերը, դժար թե կարողանաք ապացուցանել: Բուն այն ճշմարիտ սերը, վոր չե հնանում, վոր չե վախենում, բուն այն անխորտակելի շղթան, վորով բնականապես կապված է նա իր ազգի հետ, ստիպում է նորան խոստովանել այս արտասվելի ճշմարտությունը: Կարելի յեր քարկոծել նորան այն ժամանակ, յերբ նա սեր սև և սպիտակը սպիտակ խոստովանելով, հանցանք համարեր սևին իր սևությունը, վորպես նաև սպիտակին իր սպիտակությունը: Բայց վորովհետև նա դիտե թե ի՛նչ բնական որենքների ազդեցությամբ յերևում են այդ գույները**, և վորովհետև այս դիտակցությունը չե կարող թույլ տալ, վոր նա դատապարտե այդ գույները, ուստի քանի վոր նա ներկա յեղած ճշմարտությունն է խոստովանում, իրավունք չունիք և չեք կարող նորան քարկոծել առանց ստության և խավարի պաշտոնյա դառնալու: Սխալ է նորա տեսությունը՝ ապացուցեք. բայց և վո՛չ այդ դիպվածում իրավունք ունիք դատապարտել նորան, յերբ նա այդպես եր ճանաչում իր հոգու կարողությունքը լիամասն կերպով լարելով: Արդեն ըստ ինքյան արժանի չե հարգության ամեն մարդ, վոր առանց վարագուրելու և վեղծավորվելու պարզապես և վորոշակի հրապարակ է հանում իր իմացական կարողության*** արդյունքը: Յեվ ամեն այդպիսի մարդ թեև լիներ սխալված, այնուամենայնիվ այնքան մեղավոր է, վորքան դույնը իր սև լինելում:

---

* Ջնջված՝ ի՛նչ է այս լույսը··· ԽՄԲ.:

** Ջնջված՝ վորովհետև նա··· ԽՄԲ.:

*** Ջնջված՝ ամենաներքին դաղա[նիքը]··· ԽՄԲ.:

վոչ միայն մեր ազգի մեջ, այլ նաև շատ լուսավոր ազգերի մեջ*, սրտի անխարդախ և անկեղծ խոստովանությունը չե գտել տակավին այն դնահատությունը, վոր արժանի յեր նորան միայն նորա անկեղծ և անխարդախ լինելու համար, թո՛ղ նորա ուրիշ արժանավորությունքը։ Վո՛րքան սաստիկ և խավարի բռնակալությունը, վո՛րքան հեռու յե տակավին մարդը, այն աստիճանից, ուր միայն արժանի յեր այս վեհ անունին լիամասն կերպով. խնդիր, վոր գայրացնում և զգայուն սրտի վերքերը։

Ազգը բաղկանում և ընտանիքներից, ընտանիքը անհատներից։ Ազգը ուրիշ բան չե յեթե վոչ ժողով անհատների, վորոնց մեջ կային հասարակաց բաներ, հասարակաց ըմբռնողություն, հասարակաց ձև ու վոճ այդ ըմբռնողության համար, թող հատկությունքը, վոր շատ անգամ սխալ քան թե ուղիղ, վորպես հասարակաց վերագրվում են այս կամ այն ազգին։ Ուրեմն ազգը և մի մեծ ընտանիք, ուրեմն ազգը և մի մեծ և հսկա անձնավորություն։ Այո՛, ազգությունը և մի վերացական անձնավորություն և յերբ չկար այդ անձնավորությունը և ազգությունը չքացած եր։ Այնուհետև ամեն բան ընկնում և բնության վերլուծիչ ազդեցության տակ. քայքայվում և կազմվածքը, ցնդում են նորան կազմող տարերքը։ Հարկ չկա ասել վոր առաջին մահացուցիչ հարվածի հետ դադրում և և բարոյական խնդիրը։ Սա չե նմանում այն նյութական տարերքներին, վորոնք կապված լինելով բնության որենքներով, պիտի աստիճան աստիճան թողվին իրենց կերպարանքը, վո՛չ, բարոյական խնդիրը չքանում և ակաև թոթափել։

Ժամանակի հարվածը վաղուց արդեն հասուցել և մեր ազգին այս բարոյական մահը. այսոր մենք վերլուծվում ենք, քակվում ենք միայն նյութապես ազգային անձնավորության վերաբերությամբ։ Վո՞ր դիակը դաշտումը վեր ընկնի, վոր կենդանիք նորան չմաքրազարդեն, յերբ կարող և նա ազատ մնալ, ջերմության, խոնավության, լուսի և ոդի, մեկ խոսքով նորան շրջապատող արտաքին աշխարհի ազդեցությունից, քանի վոր կորուցել եր այդ ուժերին դեմ դնող անձնապահական զորությունը, կյանքը, վոր անդադար շարժելով առուտուրի մեջ եր այդ նեղպործողների հետ։

Ի՛նչ մնաց մեզ անհատներիս հասարակաց ազգության անունով։ Կրո՞ն. քանիսը հաշվեմ. լուսավորչական, հռոմեական, բողոքական, հունական. լեզո՞ւ, ա՛հ, աչքդ լույս, յես ել դորա քամակիցն եմ. ո՞ւր է։ «Ուրեմն մեր ազգը անլեզո՞ւ յե»։— Դու յես ասում։ «Լեզու չե՞ վորով գրում ես այս տողերը»։— Վո՛հ, յեթե սա լիներ հասարակաց ազգի, վո՛չ սա այլ յերկու աստիճան տակավին սորանից ցած լիներ մի հասարակաց լեզու. գլուխս քարը կը տայի, ել չեյի խոսիլ։ «Ե՛հ, հոգիդ դուրս գա, այնպես գրե վոր ամենքը հասկանան»։— Յեկ դու գրե այդպես, տեսնո՞մ ես, յերբեմն արժանահիշատակ Բաղիշեցյանցի ասածին պես, յես «հափշտիեր» եմ թաթոտնում»։ Վո՛հ, յեթե դու, և ո՛վ դու, վոր դուցե մի պարոն վոք մին ես, այլ և քո ծառան յեթե գտնե այդ փիլիսոփայական քարը, յես վոչ

* Ջնջված՝ տակավին... ԽՄԲ.։

միայն «աշակերտիմ և հետևիմ», այլև ո՛վասնանա, «օրհնեալ եկեալ յանուն տեառն» ասելով ծունկ կը չոքեմ նաև նորա* առջևը։ Պարո՛ն, լեզվի խնդիրը ծանր խնդիր է և վորքան ծանր, այնքան, վերադարձ չափակցությամբ, կարևոր և վորքան կարևոր, անհրաժարելի, նույնքան և ել ավելի յերեսի վրա ձգած։ Ո՛վ է մեղավորը։ Անտարակույս, յես, վոր ասում եմ այս. իսկ նա, վոր գո՛հ է ազգի վիճակից, վոր կարծում է թե նա առաջ է գնում, վոր մտածում է (յեթե կարող եր կատարել այս պաշտոնը) թե ազգը սքանչելի լեզու ունի, բայց հեղինակների վատթարությունից միայն չե հասկացվում ամբողջ ազգին, նա յե՞րբ կը լինի մեղավոր։ Բայց այն պարոնը, ատում ենք բայ ու համարձակ, յերկու տող չե կարող գրել, վոր հասարակաց լիներ հասկանալի, բովանդակելով իր մեջ արդի գիտությանց վերջին խոսքը։ Խոսել հազար ու մին** մուրացած խառնուրդներով, խոսել կցկտուր, ճնճղուկի նման դուրդ վոտքով այս տեղից այն տեղ վոստելով, և, այս ամեն սքանչելի հատկություններով, դեռ խոսել լոկ առանին խոշոր բաների մասին, կամ առևտուրի մասին, առանց համարձակվելու մոտենալ գիտության, թող ներեն մեզ յեթե դորան չեղու չխոստովանենք։

Այսոր յերկու գլխավոր բարբառներ մեր լեզվի— արարատյան և կ. Պոլսի— լավ ու վատ գործ են կատարում, թող նոցա ներքին բազմամասն ճյուղավորությունքը***, բայց արդյոք ուշադրությո՞ւն լինվոած է լեզվի մշակության, աշխատելով որե որ դնել նորան մի կարգի տակ։ Կարգ ասելով չենք իմանում բացարձակապես տորկանալ հին լեզվին նորի**** անժխտելի իրավունքները բռնաբարելով, վոր բնավ չե արդարանում և վոր չենք կարող գովել, այլ մի տանելի ձև վոր կարելի յեղածին չափ մոտ մնալով և որե որ ել ավելի մոտենալով ժողովրդին, դառնար մի բանալիք***** լուսի դուռը բանալու համար։

Ցավ դեռ հերիք չեր, յեթե այդ բարբառները առանձին առանձին առաջ յերթային, լոկ իրենց շրջապատի վերաբերությամբ, վո՛չ. մշակությունը պիտի լիներ ավելի ազատ, ավելի բազմակողմանի, ավելի հեռատես, որե որ այս յերկու բարբառների ներքին կապերը միմյանց հետ աննշմարելի կերպով պնդելով, ամրացնելով, որե որ****** այդ բարբառքը միմյանցից բաժանող պատի այս աղյուսը, այն քարը, մյուս սյունը խլելով։ Պիտի կարողանային այդ յերկու բարբառքը յերբ և իցե վերապատ միանալ, այդ չենք համարձակվում պնդել, բայց այսքանը անմերժելի յե, վոր շատ և շատ կարող եյին մոտենալ, այսքանը անժխտելի յե, վոր առանց ընդհանուր միության լեզվի՝ ունա՞յն յերազ և հասարակաց ամպի առաջ գնալը։ Բայց կրկնում ենք, այս շատ զգուշալի և նազելի խնդիր է, վորովհետև հե-

---

* Ձեռագ՝ առաջը... ԽՄԲ.։
** Ձեռագ՝ ուսար... ԽՄԲ.։
*** Ձեռագ՝ Թող հեղ.... ԽՄԲ.։
**** Ձեռագ՝ իրավուն[քները].... ԽՄԲ.։
***** Ձեռագ՝ բարոյական.... ԽՄԲ.։
****** Ձեռագ՝ այս կամ այն բաժանող... ԽՄԲ.։

ղինակը հերիք չե վոր պիտի որե որ իջներ մինչև իր բարբառի տակը, այլև մոտենար և միավորվեր իր ցեղըոր հետ։ Արդարև պրկին շարժողությունն և ի՛ր առանցքի վրա և դեպի մյուս իր նմանը։ Կա՞ այս շարժողությունը, չես գտակս վեր եմ ձգում և այն ժամանակ կը համարձակվիմ այն աղոտ և գունաթափ լույսը ընդունել վորպես ապագայի հրաշափառ արշալույսի կարապետը. չկա՞ այս. բուռ ցեկեք, ցեկեք, ցերթանք դարձյալ մեր ավերակների խավար անկյուններում մեր գլուխը լալու։

Շատերը կը ծիծաղեն պարզամտությանս վրա, վոր դեռ այդ ցերկու բարբառքն էլ բնավ իրենց մթնոլորտի համար անգամ խպառ հասարակաց դարձած չլինելով, նոցա միավորության խնդիրն ենք բարձրացնում։ Այդ խորհմասա փիլիսոփային էլ խորհուրդ կը տանք, վոր լավ ուշադրություն անե ցերկու խպառ անմերձենալի կարծված բարբառներին։ Բարբառների մի քանի արտաքին ձևերը չեն և չեն այնպես անխորտակելի արգելք նոցա միավորության, ինչպես կարծվում է, առաջին անգամ ակը տալիս. կենդանի լեզուն հոսանուտ մի բան է և ամեն որ փոփոխության* տակ, մենք մեր կարճ կյանքում և մեր արած** փորձերից տեսնում ենք նորա հեղափոխությունքը։ Ինչո՞ւմ են այդ հեղափոխությունքը մինչև արմատը, ազդո՞ւմ են հասարակ ժողովրդի լեզվի վրա. այդ բանը թեև չե նշմարվում մի քանի տարում, կամ*** չե կարելի առանձին առանձին քննելով գտնել մի մեծ տարբերություն, բայց գումարի պատասխանը ստորասական է։ Չկա աշխարհիս յերեսին բան վոր բնության որենքներով չկատարվեր. ինչ վոր այդպես չե, սուտ է։ Բայց վորովհետև լեզուն իրողություն է և սուտ չե, ուրեմն և յենթակա չե բնության որենքներին, իսկ բնության մեջ մենք տեսնում ենք, վոր մի փոքրիկ խմորոցը վորոշյալ պայմանների ազդեցության տակ խմորում է շաղախը, յերե հացի և յերե այլ բաների. անհնար է թե լեզուն հեղափոխվելով ազգի ավելի առաջ գնացած մասին մեջ անփոփոխ մնա մյուս մասին վերաբերությամբ, անհնար է թե այդ հեղափոխությունը ազդեցություն չանե, շատ կամ սակավ, այդ այլ խնդիր է, և կախվում է խմորոցի վորակությունից, հասարակաց լեզվի վրա....

Դ. ****

Գիտնալ հարկավոր է, նախ վոր այս բառերից մեկ քանիսը ժողովրդական լեզվի մեջ գործ են դրվում բոլորովին այլ նշանակությամբ քան թե նշանակում էին հին լեզվի մեջ և վորոնց յուրաքանչյուրի մանրամասն

---

* Ջնջված՝ յենթ[ակա]... ԽՄԲ.։
** Ջնջված՝ փորձերով... ԽՄԲ.։
*** Ջնջված՝ մի քանի... ԽՄԲ.։
**** Տպագրվում է առաջին անգամ։ ԽՄԲ.։

քանի մը բառեր ել կան այս տեղ, վոր սեփական լինելով Յերևանի գավառին, անծանոթ են բոլոր աղգին, և վոր չնայելով նորա վերա, իբրև ժողովրդական լեզվի հարստություն, մենք ուրախությամբ դրինք այս ցանկի մեջ, վորովհետև այն գաղափարները հասկցնելու համար ուրիշ բառ չունենք։ Սոցա յերրորդ լինչ տեղ վոր հին լեզվի բառը իր հին նշանակությամբ անփոխանակելի եր ժողովրդական լեզվի մեջ, և վորոնք մանավանդ վերաբերվելով կենդանաբանության և բուսաբանության անշուշտ հարկավոր եյին, նույնպես պահեցինք այս ցուցակի մեջ, չնայելով, վոր ժողովրդական լեզվով փոխանակված հին բառերը առ հասարակ աշխատեցանք հետ պահել մեր ցուցակից, ինչպես յերևում է թնագրից, այդ բառի համառոտ ցուցակից, թեև տակավին գտնվին քանի մը հին բառեր ել և այն նոր հեղինակներից գործածված լինելու պատճառով իր ժամանակին կթողունք սրբել, մանավանդ, յերթե ազգային կենդանի գանձարանի մեջ կան նոցա գաղափարը տվող ժողովրդական բառեր, վոր մեզ կամ այլ հեղինակների դեռ անծանոթ են։ Զորրորդ, միտավանկ, բայց անհոգնակի, թեև ժողովրդական լեզվին պատկանած, բառերը, կամ մակբայները բնականաբար չդրվեցան այս ցուցակի մեջ։ Հինգերորդ, քանի մը ուսար բառեր ակամա թերևս մտան մեր ցուցակի մեջ, նոցա հայերենը վոչ ժողովրդական լեզվի և վոչ հնի մեջ լինելու պատճառով, որինակ սայ բառը, վոր խորի հակառակն է, ճիշդ սայի գաղափարը դժար և հասկցնել խոր չե կամ վոչ խոր ասելով։ Պեխ բառը, վոր ուսարից է շինել ազգը և սեփականել, անհնար է առնուլ նորա բերնից և տեղը ընչացք դնել, այսպես ել նավ բառը դժար է պայտով փոխանակել։ Հարկ չկա ասել վոր կամեցողք կարող են դարձյալ գործ դնել հին բառերը, յերթե ժողովրդի մեջ հասկցող գտնեն։

Ս *

... ուր այդ տեսակ միավանկերի վերջին տառը մերժելով, բառի գաղափարը փոխվելու կամ բառը իսպառ անհասկանալի մնալու վտանգը վոր նա իրանից նույն բառի մեջ ավելցուցել և մի այլ տառ, վորով 1½ վանկը շինել և ուղիղ յերկու վանկ։

Ժողովրդի համար միտրինակ դժար եր արտաբերել հին պայմանով ծաՌր, մաՌր, ոսկր և այլն բառերը, վորոնց վերջին յերկու տառի մեջ և և ր մտնելով եր մի խուլ ը, ինչպես, մատն, գառն, նուռն և այլ բառերի մեջ։

Հայտնի յե, վոր յերթե այս բառերի վերջին ր տառը դուրս ձգվեր, այն ժամանակ կամ բառը անհասկնալի պիտի մնար, կամ գաղափարը և նշանակությունը պիտի փոխվեր. որինակ ծան, սան, ման։ Այս վտանգից, բայց մի և նույն ժամանակ հին պայմանով 1½ վանկը փոխանակ մեկ վանկի արտաբերելու դժարությենից փախչելու համար, ժամանակը ամենայն խնամքով այս բառերի վերջին և և ր տառերի մեջ դրել է մի տ, վորով այս բառերի առաջին վանկը վերջանալով ծան, սան և ման ձայնեերով տը, րի հետ, կազմում է մի այլ ամբողջ վանկ, ուր, յերթե տ և ր տառերի մեջ չդրվի ևս մի ը այնու ամենայնիվ դրականապես արտաբերվում է վորպես տըր, վո-

* Տպագրվում է առաջին անգամ։ ԽՄԲ.։

Նիչեպերենկոն այդ այցետոմսն ինձ հանձնեց Տուրգենևի մոտ և վոչինչ չասաց, որովհետև յես անմիջապես մի տեղ պետք է գնայի,—ուստի և թողի նրան Տուրգենևի մոտ և հետո չեմ տեսել նրան վոչ արտասահմանում, վոչ էլ Ռուսաստանում։ Ահա բոլորը, ինչ գիտեմ այդ հարցի մասին։

P. S. Այստեղ ավելացնում եմ, ըստ հանձնաժողովի դիտողության, որ վոչ Գերցենը, վոչ Ոգարյովը, վոչ էլ Բակունինը յերբեք ինձ չեն ասել վոչ իրենց պլանների, վոչ իրենց գործողությունների մասին, և յես վոչ մի բանում գործակից չեմ յեղել նրանց հետ։

Հարց։

12

Ձերը, ուսմից և ինչի համար եք դուք ստացել ձեր թղթերի մեջ գտնված և ձեզ ներկայացված՝ Բակունինի 1862 թ. փետրվա-

րի 27-ի նամակը Լոնդոնից, հասցեագրված Մուժի ք., Մարկովի նահանգում, Պիմեն Պետրովիչ Լյալինին՝ Բակունինի լուսանկարով և նրա հոդվածի մի տպագիր օրինակով՝ «Ռուս, լեհ և սլավոնական բոլոր բարեկամներին» վերնագրով[6]։

Պատասխան։

Այդ կնքված նամակը Բակունինի հոդվածի օրինակի հետ ինձ տվեց մարկիզ դե-Տրավերսեն, Մարկով՝ Լյալինի անունով, և բացի դրանից նա ինձ տվեց նրան գրած իր, այսինքն իր կողմից գրած նամակը։ Բանի վոր Բակունինի նամակը և նրա հոդվածը կնքված էին ծրարում, վոր պատահմամբ պատռվեց, և քանի վոր այնտեղ չես տեսա „Колокол“-ի №-ը, ուստի վոչ մեկը և վոչ էլ մյուս նամակը չտվի Լյալինին և չթողի Մարկովի կայարանում, վորտեղ չես պետք է հանձնեիր վերակացվին։ Բակունինի և մարկիզ դե Տրավերսեյի նամակի բովանդակությունն ինձ բնավ հայտնի չեր։

Ձեռ դրանք վոչ վոքի ցույց չտվի և տուն գալով, ուզում էի վոչնչացնել, բայց ժամանակ չունեցա, վորովհետև շուտով ձերբակալվեցի։

Հարց։

13

Ո՞վ է Nicolas-ը, վորի ձեր թղթերում գտնված նամակը պետք է տրվեր Լյալինին. ինչ հարաբերությունների մեջ եք գտնվում այդ նամակը գրողի և նրա բարեկամների հետ, քանի վոր նամակում նա ձեզ «մեր անկեղծ բարեկամ» է անվանում, ովքե՞ր են այդ բարեկամները, նամակի հետ Լյալինին ինչ ծանրոց եր ուղարկվում և վո՞րտեղ է գտնվում այդ ծանրոցը։

Պատասխան։

Հավանորեն մարկիզ դե-Տրավերսեն է, վորովհետև նա ինձ տվեց Լյալինին ուղղված այդ նամակները։ Ծանրոցը, վորի մասին խոսվում է, պետք է լինի Բակունինի նամակը նրա հոդվածի օրինակի հետ, վորոնք, ինչպես ասացի, կնքված էին հատուկ ծրարում և հանձնված ինձ, վոր չես Լյալինին չտվի և չուղարկեցի վոստով, վոչ էլ թողի կայարանում՝ նախորդ կետերում նշված պատճառով։ Ուստի այդ ծանրոցը հիմա գտնվում է հանձնաժողովում։

Մարկիզի հետ իմ ունեցած ծանոթության մասին չես արդեն առիթ ունեցա խոսելու նախորդ [կետերում]։

Հատկապես ե՞րբ եվ ինչպե՞ս.

Երբ հետ չես ծանոթացա Բակունինի կնոջ գործով և բացի դրանից մեր միջև վոչ մի հարաբերություն չի չեղել։

P. S. Թե նա (մարկիզ դե-Տրավերսեն) ինչու չի ինձ մեր բարեկամը անվանում, և ովքեր են նրա բարեկամները, բացարձակապես վոչինչ չգիտեմ այդ մասին, ինչպես և չգիտեմ և անձամբ չեմ տեսել Լյալինին, վորին հասցեագրված եյին նամակները:

Հարցեր.

12

Ներկայացնելով ձեր թղթերի մեջ գտնված, Բակունինի ձեռքով գրած գրությունը, հրահանգ վերնագրով, վորից յերեվում է, վոր դուք պետևա եք եղել Լոնդոնում գտնվող ռուս վտարանդիների, վորոնք չարամտորեն գործում են մեր կառավարության դեմ, հանձնաժողովը պահանջում է, վոր դուք ամբողջ մանրամասնությամբ բացատրեք ձեր բոլոր գործողությունները ըստ այդ հրահանգի և անվանեք այն անձանց, վորոնց հետ այս առթիվ հարաբերություններ մեջ եք յեղել. նմանապես ինչ նպատակի համար է Բակունինը ձեզ նույն այդ հրահանգի մեջ հաղորդել գանազան անձանց և տեղերի անուններ, հնարովի մականուններով: Ովքե՞ր են այս գրության մեջ հիշվող Լիդովը, Կետչերը, Պաևը և Չերնեցկին և ինչ հարաբերություններ պիտի ունենայիք դուք նրանց հետ:

Պատասխան.

Այդ հրահանգի գլխավոր բովանդակությունը, ինչպես կարդող և տեսնել ինքը հանձնաժողովը, վերաբերում եր Գուա կնոջը բերել տալու գործին: Ռուս վտարանդիների ոչնոտ յես չեմ յեղել յերբեք, Գուացից վոչ մի նշանակություն չեմ ունեցել յեվ վոչ մի հանձնարարություն չեմ ունեցել յեվ վոչ մի բանում, բացի Բակունինի կնոջ գործից, Գուաց խոսք կամ խոսում չեմ տվել: Բակունինը, գրելով կնոջ գործի վերաբերյալ հրահանգը, այնտեղ կցել է ինձ հայտարարված անձանց ցուցակը, վորոնց յես չեմ ճանաչում յեվ վորոնց հետ վոչ մի հարաբերության մեջ չեմ յեղել, յերբեք նրանցից վոչ վոքի չեմ փնտրել, նրանց վոչինչ չեմ հաղորդել և նրանցից վոչինչ չեմ ստացել: Ինչ ցանկ

Լիդովին, Կետչերին, Պաևին բնավ չեմ ճանաչում և յերբեք անձամբ չեմ տեսել: Չերնեցկու մասին լսել եմ, վոր ռուսական տպարան ունի Լոնդոնում, յես նրան միայն ազգանունով եմ ճանաչում և կյանքումս նրա հետ վոչ մի հարաբերություն չեմ ունեցել:

Իսկ ինչ վերաբերում է Բակունինի կողմից վերոհիշյալ ցուցակը կազմելու նպատակին, ապա հավանորեն նպատակն այն է յեղել, վոր յես Գուաց տեղեկություններ հաղորդեի Ռուսաստանից, բայց յես վոչինչ չեմ հաղորդել նրան այդ ցուցակով և, ինչպես

արդեն ասացի, այնտեղ հիշատակված անձերից վոչ վոքի չեմ ճանաչում։

P. S. Ինչ վերաբերում է գեներալ-նահանգապետ Կորսակովին ուղղած նամակին, վորի մասին խոսում է Բակունինը, ապա չես այդ նամակը չեմ ստացել և նա ինձ չի տվել այն։

Բացատրություն։ «Բացի Բակունինի կնոջ գործից ներանց խոսք կամ խոսում չեմ տվել» ֆրազը բացատրում եմ, վոր բացի Բակունինի կնոջ գործից ուրիշ վորևիցե գործի համար չես խոսք կամ խոսում չեմ տվել վոչ Բակունինին, վոչ Գերցենին և վոչ էլ Ոգարյովին, և նրանց հանձնարարությամբ (վոր չեմ էլ ունեցել), վոչինչ չեմ ձեռնարկել։

Հ ա ր ց ե ր.

15

Բակունինի 1862 թ. ապրիլի 24-ին ձեզ գրած, ներկայացվող նամակի բովանդակության առթիվ բացատրեցեք. վո՞րտեղ և ո՞ւմ միջոցով եք ստացել այդ նամակը, ինչ խոսում կատարելու համար և Բակունինը շնորհակալություն հայտնում ձեզ, իր կնոջ Իրկուտսկից Լոնդոն տեղափոխվելը գլուխ բերելու համար ինչ հանձնարարություն եր տվել նա ձեզ, և դուք ինչ եք արել այդ ուղղությամբ, մնացած ինչի՞ մասին եր նա մտադիր նամակագրություն ունենալու ձեզ հետ, ինչ լեքսիկոնի մասին է խոսվում այդ նամակում. ինչ և հայտնի ձեզ Գերցենի և նրա ընկերների հետ նամակի մեջ հիշված Մարցիանովի և Ալբերտինիի ունեցած հարաբերությունների մասին, և ինչպես են յեղել ձեր սեփական հարաբերությունները այդ յերկու անձանց և Տուրգենևի հետ, վորի մասին նամակում ասված է, թե դուք նրան դուբ եք յեկել. ո՞վ է Սինգլը, վորի մասին Բակունինը հաղորդում է ձեզ, թե վաղուց է, ինչ չի տեսել նրան, և ինչ հարաբերություն եք ունեցել դուք այն անձնավորության հետ, վորը նամակում Պան է կոչվում, վորը, ինչպես Բակունինն է գրում, ձանձրանում է առանց ձեզ, նամանավանդ՝ ինչու դուք նախորդ պատասխանում ցույց տվիք, թե Պանին բոլորովին չեք ճանաչում և մինչև իսկ նրա յերեսը չեք տեսել։

Պ ա տ ա ս խ ա ն.

Այդ նամակը ստացել եմ վոստով, Փարիզում։ Բակունինը շնորհակալություն է հայտնում ինձ այն բանի համար, վոր յես հայտնեցի Տուրգենևին նրա խնդիրը իր կնոջ վերաբերմամբ, վորի մասին քանիցս առիթ ունեցա խոսելու։ Կնոջ տեղափոխությունը Իրկուտսկից Լոնդոն կամ Տվերի նահանգ գլուխ բերելու մասին նա ինձ ավելի վոչինչ չի ասել և չի գրել, քան այն, վոր բանակցեմ Տուրգենևի հետ, վորը նրան՝ այսինքն Բակունինին

խոստացել եր տալ մոտ 2 հազար ռուբլի արծաթ դրամ (վորի մասին Բակունինն ասել եր ինձ դեռ ևս Լոնդոնում) և բացի դրանից, վորպեսզի չես խոսեմ նրա չեղբոր հետ այդ նույն հարցի առթիվ։

Ցես, ինչպես արդեն քանիցս ասել եմ, նախ, Տուրգենևին հայտնեցի Բակունինի խնդիրքը, չերկրորդ, Տուրգենևին փոխարինաբար տվի 300 ռուբ. արծաթ դրամ, վորպիսի գումարը նա ինձ խնդրեց հանձնել Բակունինի չեղբոր կնոջը, և բացի սրանից այդ գործի վերաբերյալ չես վոչինչ չեմ արել, ավելին չեյի էլ կարող և իմ կողմից անելու բան էլ չկար։

Մնացած բանների մասին, վորոնց շուրջը նա ցանկություն և հայտնում նամակագրություն ունենալու, չես հաստատապես չգիտեմ, սակայն այնպես եմ հասկանում, վոր նա գուցե խոսում և նրա (այսինքն՝ իր կնոջ) հետագա, այսինքն՝ Լոնդոն ճանապարհելու մասին, վորի մասին նա Լոնդոնում ինձ չասաց և առաջին անգամ այդ մասին գրում եր այն նամակում, վորը նախորդ կետերում առաջաղրվեց ինձ և վորի մասին պատասխան դրեցի արդեն։

Բացի դրանից ինձանց վոչ մի գործի մասին ինձ հետ չի խոսել և հավանորեն այն դիտավորությամբ, վոր չես չհրաժարվեմ նրանց կատարումից, ուստի և նա սկզբում սկսեց կնոջից, հետո ավելացրեց զանազան մարդկանց և տեղերի այն ցուցակը, առանց իմ ամենափոքր մասնակցության կամ համաձայնության, հետո արդեն Նիչեպերինկոյի այցեառման հետ ուղարկեց ինձ, սակայն այս բոլորի մեջ չես մեղք չունիմ, վորովհետև վոչինչ չձեռնարկեցի և ցուցակի մեջ հիշված անձերից վոչ վոքի հետ հարաբերությունների մեջ չեմ չեղել, վորի մասին հանձնաժողովը կարող և հարցնել այդ մարդկանց։

Բառարան ասելով նա նկատի ունի այնտեղ թված անձանց արդեն ինձ հայտնված ցուցակը։

Մարտյանովի և Ալբերտինիի՝ Գերցենի և ուրիշ այլ վտանդների հետ ունեցած հարաբերությունների մասին ինձ վոչինչ հայտնի չէ, բացի այն, վոր նրանք լինում են սրանց մոտ, իսկ թե նրանք Լոնդոնում ինչով են պարապում և ինչ մարդիկ են, վճռականապես չգիտեմ։ Ինքս սակայն այդ մարդկանց հետ վոչ մի հարաբերություն չեմ ունեցել և նրանց հետ վոչ մի բանի մասին չեմ խոսել։ Տուրգենևի հետ իմ ունեցած հարաբերության մասին չես շատ անգամ եմ արդեն խոսել, նորից եմ կրկնում, վոր բացի այն, վոր նրա հետ խոսել եմ Բակունինի կնոջ մասին, և բացի այն, վոր նրան 300 ռուբլի չեմ տվել, նրա հետ ուրիշ վոչ մի հարաբերություն չեմ ունեցել և Փարիզում նրա հետ առաջին անգամ ծանոթանալուց առաջ, բոլորովին չեյի ճանաչում նրան։

Սինգլին *յես չեմ մտաբերում բոլորովին, մի գուցե Լոնդոնում վորևե մեկին կատակով անվանել են այդ անունով, սակայն յես նրան չեմ հիշում։*

Պան ազգանունը, ինչպես ասացի նախորդ կետում, յես չգիտեմ, բայց քանի վոր Լոնդոնում լեհերին ընդհանրապես պան են կոչում, ապա Բակունինը յերևի այդ բառի տակ հասկանում է Ստանիսլավին, վորի մասին յես ասացի արդեն և վորը վորպես թարգման հաճախ եր լինում ինձ հետ, վորովհետև յես անգլերեն լեզուն չգիտեմ, կամ թե նկատի ունի Տնորժեվսկուն, վոր ինչ յես բնավ տեսնված եմ, սակայն նրա մասին վոչինչ չգիտեմ բացի այն, վոր նա գրավաճառ է և հաճախ լինում է ռուս տարագիրների մոտ։ Ահա ինչու յես ասացի, թե Պանին չեմ ճանաչում և անձամբ չեմ տեսել, քանի վոր այդպիսի ազգանուն յես չգիտեմ և ծանոթ չեմ այդպիսի ազգանունով մարդու հետ։

NB

P. S. *Ինձ ներկայացված նամակում Բակունինը Պրեյվատ, ջենտլմեն բառերի տակ հասկանում է Գերցենին, Յունոր նրա վորդուն է կոչում, իսկ պոետ՝ Ոգարյովին։*

Հ ա ր ց ե ր.

16

Ո՞վ է Փարիզի ձեր բարեկամը, վորի միջոցով դուք ստացել եք Բակունինի 1862 թ. մայիսի 6-ի նամակը և ո՞վ է Փարիզի ձեր հայրենակիցը, վորի հասցեն ձեզնից պահանջում է Բակունինը։

Պ ա տ ա խ ա ն ե ք ր.

Բակունինի մայիսի 6-ի նամակը վորևե մեկի միջոցով չեմ ստացել, այլ՝ փոստով։ Թեև Բակունինը (ինքը) գրում է, վոր այդ նամակը ուղարկում է Փարիզի իր հայրենակցի միջոցով, հենց նույն այդ նամակում ինքն է ասում, թե չգիտե նրա հասցեն, հետևապես, այդ նամակը յես այլ կերպ չեյի կարող ստանալ, քան յերեե փոստով։

Իսկ ինչ վերաբերում է Փարիզի հայերին, ապա թեև Բակունինը գիտե, վոր այնտեղ հայեր են ապրում, բայց նրանցից վոչ վոքի չի ճանաչում և յես վոչ վոքի չեմ հանձնարարել նրան, այդ հաստատվում է և նրա հետևյալ նամակով, վորտեղ նա ասում է, թե յես չեմ ուղարկել նրան իմ հայրենակցի հասցեն։

?

Փարիզում հայեր շատ կան, և յես, վորպես յեկվոր, վորպես հայ ծանոթացա նրանցից մի քանիսի հետ, այն է մեր վարդապետների՝ Սարգսի, Ամբրոսիոսի և Կարապետի հետ, ինչպես և Ֆյաթիսյ, Ռաֆայելյանի, Փեշտիմալջյանի և Նուբիյանի դոկտորների հետ, վորոնց հետ յես, բացի բարեկամական կամ դրամական հարաբերություններից, ուրիշ հարաբերություններ չեմ ունեցել[1]։

Լոնդոնից գրած այդ նամակում Բակունինն ասում է. «Այստեղ շատ ռուսներ կան։ Նրանց մեջ անպետքներ շատ կան, բայց կան նաև և լավ մարդիկ նրանց մեջ. յես առանձնապես [մտերմացա] միանգամայն լավ և ոգտակար մի մարդու՝ Նիկոլայ Իլյիչ Վորոնովի հետ։ Նա կլինի Պետերբուրգում հունիսին և ինձնից ձեզ մի նամակ կբերի։ Ընդունեցեք նրան վորպես լավ մարդու, վորը արժանի յե լիակատար վստահության։ Նա գիմնազիայի ուսուցիչ է յեղել Սամարղոլում, հետո՝ Յեկատերինոդարում։ Հիմա արտասահմանից վերադառնալուց հետո անհապաղ գնում է Թիֆլիս։ Նախ և առաջ նրան սովորեցրեք ինչպես նամակագրություն ունենա ինձ հետ և՛ Պետերբուրգի, և՛ Մոսկվայի վրայով, ինչպես նաև Ռոստայի և՛ Թիֆլիսի վրայով, այսինքն՝ Կոստանդնուպոլսի վրայով, ուր նրան պետք է հասցե տրվի։

Նա ոգտակար կլինի յեվրոպական և ասիական տեսակետից։ Այդ նպատակով վատ չեր լինի նրան հանձնարարել Թիֆլիսի բարի մարդկանց, վոր ծանոթ լինեյին Կոստանդնուպոլսի բարի մարդկանց հետ»։ Իսկ մի այլ նամակում, 1862 թ. մայիսի 10-ի, Բակունինը, ձեզ տեղեկացնելով, վոր նրանք (այսինքն Գերցենը, Ոգարյովը և Բակունինը) այսուհետև Վորոնովին Ալեքսանդր Պետրովիչ Վանդերմանն պետք է անվանեն և ձեզ խնդրելով նրան ընդունել վորպես բարեկամի, քոլոր յերեքի կողմից ձեզ հանձնարարվածի, այսպես է արտահայտվում. «Նա մի հաստատակամ ու խելացի խոսող է, Նովորոսսիյսկի շրջանում յերկար ապրած և Կովկասը լավ ճանաչող։ Հունիսին կլինի Պետերբուրգում, իսկ սեպտեմբերին Թիֆլիսում։ Նա կխոսի ձեզ հետ մեր ապրանքները նոր յեղանակով Կովկասյան յերկիրը հասցնելու մասին։ Սույնը ստանալուն պես դրեցեք Կ. Պոլիս ձերոնցից գործունյա և առևտրական մի մարդու, վորի պաշտպանության և գործունեության համար դուք կարող եք պատասխանատու լինել մեր առաջ, և համոզեցեք նրան այս գործի վերաբերյալ հարաբերություններ հաստատելու Տրապիզոնի կոնտրաբանդիստների հետ։ Աշխատեցեք, սիրելի բարեկամ, գլուխ բերել այս գործը, միայն յես չե, այլ ինքը Privat-ն և խնդրում ձեզ այդ մասին։ Իսկ յերբ կտեսնվեք պ. Վանդերմանի (Վորոնովի) հետ, սովորեցրեք նրան թե ում պիտի դիմի Թիֆլիսում, վորպեսզի հարաբերությունների մեջ մտնի Կոստանդնուպոլսի կոնտրաբանդայի ղեկավարի հետ։ Համարձակ կերպով նրան հանձնարարեցեք Թիֆլիսի և այլ վայրերի ձեր առևտրական բարեկամներին։ Մեր պարտքն է պատասխանատու լինել ձեզ նրա համար, և նա պատրաստ է ծառայելու ձեր շահերին ճիշտ այնպես, ինչպես մեր շահերին է ծառայում»։ Քանի վոր այս նամակներից պարզ յերևում է ձեր մասնակցությունը Լոնդոնի վտարան-

դինների չարամիտ մտադրություններին, ուստի հանձնաժողովը պահանջում է, որ անկեղծ կերպով բացատրեք ձեր գործողությունները այս առթիվ, ովքեր են ձեր գործակիցները Պետերբուրգում, Մոսկվայում, Ռևելում, Թիֆլիսում, Կոստանդնուպոլսում և հիշյալ նամակների հեղինակների հետ ինչ հարաբերություններ եք ունեցել Վորոնովի հետ:

Պատասխան.

Հիշյալ Վորոնովին ես չեմ ճանաչում և երբեք չեմ տեսել ոչ արտասահմանում, ոչ էլ Ռուսաստանում և այդ մարդու մասին Լոնդոնում Բակունինն ինձ ոչինչ չի ասել, որը նա ինքն է վկայում, հայտնելով, որ նրան գտել է Լոնդոնում այն ժամանակ այնտեղ յեղած ուսանների մեջ, հետևաբար ինձնից հետո: Սովորեցնել նրան (Վորոնովին), թե ինչպես պիտի գրի Բակունինին Պետերբուրգի, Մոսկվայի, Ռևելի և Թիֆլիսի վրայով, այսինքն Կոստանդնուպոլսի վրայով, ես չեմ կարող, քանի որ Բակունինը հակասում է ինքն իրեն, խնդրելով ինձ գրել իրեն (Բակունին) Տրավերսեյի միջոցով, հետևապես ես չունեմ և ոչ մի կապ, որպի միջոցով կարողանայի նրան գրել Տրավերսեյից անկախ, դրանից հետո այլևս ես ինչպես կարող եմ սովորեցնել Վորոնովին. Մոսկվայից նույնպես չեմ կարող, որտեղ ես սոսկ մոտիկ ծանոթ եմ նագարյանցի հետ, որի մասին արդեն ասացի և որը արտասահմանյան ոչ մի թղթակցություն չի պահպանում բացի այն, որ միայն մի անգամ է ինձ գրել իմ՝ Ռուսաստանից արտասահման մեկնելու ամբողջ ընթացքում և մինչև Ռուսաստան գալս: Ճիշտ նույնպես էլ Թիֆլիսում, որտեղ ես ոչ մի հարաբերություն չունեմ բացի այն, որ ասացի նախորդ կետերում: Դրանով պարզ արտահայտվում է Բակունինի անհետևողականությունը: Ես չեմ կարող նրան Կոստանդնուպոլսում հասցե տալ, որովհետև ես ինքս չունեմ մշտական հարաբերություն Կոստանդնուպոլսի հետ, և՛ որտեղ իմ ծանոթները ու նամակագրությունը սոսկ դրամական կամ ընտանեկան հարցերի մասին են յեղել:

Բակունինն ասում է, «վատ չեր լինի» Վորոնովին ծանոթացնել Թիֆլիսի բարի մարդկանց, «որ ծանոթ լինեյին Կոստանդնուպոլսի բարի մարդկանց հետ»: Այստեղ ակներև է, որ վ/չ Թիֆլիսում, ոչ Կոստանդնուպոլսում չեմ ճանաչում այնպիսի մարդկանց, որոնց Բակունինը լավ մարդիկ և անվանում: Ցեթե ես այդպիսի մարդիկ ունենայի և չեթե ճանաչեյի նրանց և բացի դրանից չեթե ես Բակունինի համախոհը լինեյի, ապա նա նրանց բոլորին անուն առ անուն կճանաչեր և այլևս «կլիներ» չեր ասի, այլ ուղղակի կասեր՝ ահա այսինչ և այսինչ մարդու հետ: Բակունինը չեր ճանաչում իմ վարիզեցի ծանոթներին, որի

մասին նա ինքն է վկայում, վորոնք ավելի մոտ են Լոնդոնին, քան թե Թիֆլիսը կամ Կոստանդնուպոլիսը։

Բակունինի իդեաների և դիտավորությունների մասին չես վոչինչ չեմ իմացել Լոնդոնում, քանի վոր նա ինձ վոչ մի նման բան չի ասել, ինչպես առաջարկում եր հետո՝ իր Փարիզ ուղարկած նամակներում։

Ձեմ ժխտում, վոր նա, ինչպես յերևում է նրա նամակներից, կուզենար ինձ իր ագենտը դարձնել, սակայն այդ նրա ցանկությունն է, և չես, բացի նրա կնոջ գործից, բացարձակապես վոչինչ չեմ ձեռնարկել կամ կատարել նրա նամակների կամ ցանկությունների համաձայն։ Մանավանդ վոր հիշյալ Վորոնովին չեմ տեսել և նրանից վոչ մի նամակ չեմ ստացել, նրան վոչինչ չեմ գրել, քանի վոր բնավ չեմ ճանաչում նրան և նրա կարիքը չունեմ, իմ ծանոթներից վոչ վոքի հետ նրան չեմ ծանոթացրել, նրան վոչ մի հասցե և վոչ մի նամակ չեմ տվել։

Իսկ ինչ վերաբերում է կոնտրաբանդային, այդ մասին չես վոչինչ չգիտեմ, բացի այն, ինչ գրված է Բակունինի նամակում, և վորն առաջին անգամ կարդացել եմ Փարիզում։ Այդ գործին չես վոչ հոգով և վոչ էլ մարմնով չեմ մասնակցել, քանի վոր չունեմ և չեմ ունեցել վոչ ցանկություն, վոչ էլ դիտավորություն նրան, կամ ուրիշին, յերբորդին, վորպես ագենտ ծառայելու։ Յես չունեմ և չեմ ունեցել ծանոթ կոնտրաբանդիստներ և յերբեք չեմ հանդիպել նրանց հետ, ուրեմն վոչ մի կերպ չեյի կարող այստեղ ոգտակար լինել նրանց։ Այս ինքնին ցույց է տալիս նույնպես, վոր Բակունինն ինձ չի ճանաչում, բայց այդ նա գրում է ինձ վորպես մի ծանոթ հայի, հուսալով, թե արդյոք չեմ կարող անել այս կամ այն բանը։ Յես նրան խոսք տվի, վոր իր խնդիրը կհաղորդեմ Տուրգենևին, և հաղորդեցի, վերջինը փող եր խնդրում վոխառիննաբար, յես տվեցի. այլևս յես վոչինչ չպիտի անեյի։

Հետևաբար յես վոչ մի մասնակցություն չեմ ունեցել լոնդոնցի տարագիրների չարամիտ դիտավորություններին։ Դրա համար հանձնաժողովի պահանջով, ասում եմ անկեղծորեն և մաքուր խղճով, վոր այդ առարկայի վերաբերմամբ վոչինչ չեմ ձեռնարկել, վոչինչ չեմ արել, չունեմ գործակիցներ վոչ Պետերբուրգում, վոչ Մոսկվայում, Ոդեսայում, Թիֆլիսում կամ Կոստանդնուպոլսում։ Իսկ Վորոնովի հետ յես չեմ ունեցել վոչ մի հարաբերություն վոչ անձամբ, վոչ գրավոր ձևով, կյանքումս չեմ տեսել նրան, յերբեք նրան չեմ գրել և նրանից յերբեք վոչինչ չեմ ստացել։ Ահա դուռ ճշմարտությունը։

P. S. Հանձնաժողովի դիտողությամբ այստեղ ավելացնում եմ, վոր Լոնդոնում լսել եմ, վոր Բակունինը կապ ունի սլավոնների և լեհերի հետ, սակայն, հատկապես ինչպիսի կապ և յես ոչ մի բան չեմ կարող ասել։

չգիտեմ, չգիտեմ նույնպես, թե ով ասաց ինձ այդ մասին, քանի որ Լոնդոնում գտնվող բոլոր ռուսները գիտեն այդ։ «Բոլոր ռուսները» ասելով հասկանում եմ ուրս ճանապարհորդներին, որոնցից շատերի հետ հանդիպել եմ կամ պանդոկներում կամ «Բրիտիշ մուզեյում»-ում, և որոնց ընակ չեմ ճանաչում։

Հարցեր.

18

Ո՞վ է և որտեղ է գտնվում Պոլ Կորիզեն, որի մասին Բակունինը 1862 թ. մայիսի 10-ի նամակում հարցնում է ձեզ. կարող է արդյոք նա գործով դիմել նրան և արդյոք պատասխան կստանա նրանից, ասելով. «գործերը նոր միայն սկսում են ծավալվել»։ Այդ ինչ գործեր են։

Պատասխաններ.

Պոլ Կորիզեն Կոստանդնուպոլսում էր։ Նա իտալացի չէ և ծառայում է ինչ-որ առևտրական տան։ Նրա հետ ծանոթացա Կոստանդնուպոլսում, բորսայում, որից չես առեղինգներով ռուսական վոսկի գնեցի։

Մի անգամ Բակունինն ինձ հարցրեց այդ ազգանունը, որը նրան ծանոթ էր, հավանորեն իտալացիների միջոցով։ Ցես նրան ասացի, որ նրան ճանաչում եմ որպես առևտրական տան ծառայողի։

Հիմա, ինչպես յերևում է, նա ուզեցել է հարաբերություններ ունենալ Կոստանդնուպոլսի հետ և դրա համար էլ հարցնում է ինձնից. կարող է արդյոք դիմել նրան և կստանա արդյոք պատասխաններ, որ յես չեյի կարող պատասխանել և վոչ մի կերպ, որովհետև չգիտեմ, թե հատկապես ինչ գործերի մասին է նա ուզեցել խոսել նրա հետ, որոնք ինչպես նա արտահայտվել է, նոր միայն սկսում են ծավալվել։

Գուցե նա ուզեցել է նրա հետ հարաբերության մեջ մտնել կոնտրաբանդի գործով՝ հույս չունենալով իմ միջոցով այլ ծանոթություն հաստատելու։ Չգիտեմ, և որքան կարող եմ դատել— Պոլ Կորիզեն այնպիսի մարդ չէ, որ կարողանա կոնտրաբանդով պարապել։

Հարցեր.

19

Ցնորը, որտեղ և ձեմ միջոցով եք ստացել Բակունինի 1862 թիվ հունիսի 6-ի ձեզ գրած նամակը, որ ներկայացվում է ձեզ։ Ի՞նչ բրոշյուր և ձեր վերը բարեկամի համար եք խնդրել Բակունինին ուղարկել ձեզ Լոնդոնից. վերտեղից և ինչ ճանապարհով եք Լոնդոն ուղարկել Բակունինին, Գերցենին,

Ոգարյովին և Տխորժևսկուն ձեր լուսանկարները։ Ինչպես նաև, յո՛րը և ո՛ւմ եք նամակներ գրել Բակունինի ձեզ տված բառարանով, վորոնք այս վերջինն անվանում է ֆրանսերեն և վորոնց համար նա ձեզ հաղորդել է մի ուրիշ շատ ավելի ընդարձակ բառարան։

Պատասխան.

Ինձ ներկայացված նամակն ստացել եմ մարկիզ Տրավերսեյի [ջնջված է՝ կամ Տուրգենևի] միջոցով։ Ցես խնդրել եյի Բակունինին ուղարկել ինձ վոմն Զիխաչևի բրոշյուրը Իտալիայի մասին, բայց նա այդ ինձ չուղարկեց։ Իմ նկարները (լուսանկարները) ցես ուղարկեցի Բակունինին Փարիզից։

Ընդարձակ բառարանը, վորի մասին խոսում է Բակունինը, ըստ նրա նամակի իմաստի, յերևում է, վոր տրված է յեղել Տուրգենևին, վորից ցես չեմ արտագրել այդ բառարանը և մինչև իսկ չեմ խնդրել։ Ինձ մոտ կար նախորդ կետերում ներկայացված լեքսիկոնը և բացի դրանից ուրիշ ընդարձակ բառարան նրանից չեմ ստացել և չգիտեմ, թե ինչու յե նա ֆրանսերեն անվանում։ Ինչ վերաբերում է այն բանին, թե արդյոք նամակ գրել եմ վորևե մեկին այդ բառարանով,—ապա, պատասխանում եմ, վոր, վորքան հիշում եմ, բացի Բակունինից չեմ գրել, ասենք չեմ վիճում, գուցե և գրել եմ տոմսակ կամ նման մի բան մարկիզ Տրավերսեյին, կամ՝ գուցե թե Տուրգենևին, վորովհետև հատուկ չեմ հիշում, և այդ պատճառով չեմ պնդում։

Ինչ վերաբերում է բրոշյուրներին, վորոնց մասին հայտնեցին ինձ հանձնաժողովում, թե ցես ստացել եմ Բակունինից 4 որինակ, չեմ կարող ավելին ասել, քան արդեն ասել եմ, այսինքն, վոր չեմ հիշում, քանի վոր նա մի անգամ գրել եր նաև մարկիզ Տրավերսեյին, թե բրոշյուրները ուղարկում, բայց մարկիզ Տրավերսեն ինձ ասում եր, վոր նա դրանք չի ստացել, ահա բոլորը, ինչ հիշում եմ հիմա դրանց մասին։

P. S. Բակունինն ասում է, թե բրոշյուրը ցես խնդրել եյի իմ բարեկամի համար, բայց այդ ճիշտ չե, իսկ նա գրում է ճիշտ այնպես, ինչպես իր բառարանն է ֆրանսերեն անվանում։

Հավելում.

Ինձ ներկայացված նամակը ցես ստացել եմ Պետերբուրգում, հունիսի սկզբին, իմ լուսանկարները Բակունինին ուղարկել եմ Փարիզից, փոստով, Տուրգենևի անունը ցես չնշել եմ, վորովհետև թուլ հիշողության պատճառով տարակուսում եյի, թե ով է ինձ ավել այդ նամակը՝ մարկիզ Տրավերսեն թե Տուրգենևը։ Սակայն հետո, կարդալով նամակը և տեսնելով, վոր այնտեղ Տուրգենևի մասին է խոսվում, ցես ուղղեցի իմ սխալը։

Խոսողությունը.

Մարկիզին, Տուրգենևին կամ Բակունինին գրած նամակի կամ տոմսակի բովանդակությունը չեմ հիշում, բայց յենթադրում եմ, վոր այդ Բակունինի կնոջը բերել տալուն պիտի վերաբերվր։

Ծանոթությունը.

Բակունինի՝ Տուրգենևին տված ընդարձակ բառարանը, վորի մասին ասացի, թե չեմ արտագրել և չեմ խնդրել Տուրգենևից, այստեղ ավելացնում եմ, վոր այդ բառարանը չեմ էլ տեսել։

Հարցեր.

20

Պետերբուրգում ապրող Յաֆաֆովի անունով Բակունինն ուղարկել է դրանից առաջ ձեզ ուղարկած 4 որինակից զատ ևս 10 որինակ հայերեն տպված մի գիրք, վոր նա Յոհաբարական գիրք է անվանում։ Բայց այդ գիրքը, վոր հրատարակված է 1862 թ. Փարիզում, «Յերկրագործության» վերնագրով, պարունակում է զատողություններ վոչ թե Յոհաբարական արվեստի մասին, այլ գոյություն ունեցող կառավարությունների և ի միջի այլոց Ռուսաստանի մասին վրդովեցուցիչ վոգով։ Բացատրեցեք. ինչ նպատակով եք կամեցել ունենալ այդ գիրքը, յերբ և ձեմ միջոցով են ձեզ ուղարկել նրա 4 որինակը և ինչ բանի համար եք գործածել դրանք. նմանապես ինչու՞ յե Բակունինն այդ գրքերը և նամակը հասցեագրել Յաֆաֆովին ձեզ տալու համար։

Պատասխանները.

Այդ գիրքը Բակունինից յես չեմ խնդրել։ Ինչ վերաբերում է այդ գրքի 4 որինակներին, ինչպես արդեն ասացի, չեմ հիշում, քանի վոր այն ժամանակ յես հիվանդ եյի և ամառապրում եյի, ճանապարհին, հետևաբար և դրանք վոչ մի կերպ չեյի կարող կերտաել, յեթե նույնիսկ ուղեներ. բայց, վորքան հիշում եմ, մարկիզ Տրավերսեն մի անգամ ինձ մի նամակ տվեց, վորի մեջ խոսում եր ինչ վոր բրոշյուրների մասին, չգիտեմ անուն կար թե չե, բայց նա ինձ չի տվել, քանի վոր ինքը ևս, ինչպես ասում եր, չեր ստացել։

Իմ հասցեն Յաֆաֆովի անունով, յես տվի Լոնդոնում, արդեն հիշածս Իվան Սավիչին, վորը այնտեղ առևտրով և պարապում, և վորն ինձ խնդրեց իրեն ծանոթացնել Յաֆաֆովի հետ՝ սոսնձի առևտրի գործով,

Այստեղ յես ասացի Յաֆաֆովին և նա, չգիտեմ ինչ առևտրական տան միջոցով, նրան ուղարկեց սոսնձի նմուշը։ Գուցե Բակունինը նրանից և վերցրել այդ հասցեն, քանի վոր Բակունինը գիտեր, վոր յես դրամական հարաբերություններ ունեմ Սավիչի հետ։

Ինձ ներկայացված նամակում Բակունինն ինձ հանձնարարում եր վոճն Պաղել Վասոշնիկովի, վորի հետ «կես կարող եմ առևտրական թղթակցություն ունենալ»։ Այդ մարդուն չեմ ճանաչում և կյորեք չեմ տեսել. կեթե նրան վորևե հանձնարարություն եր արված Բակունինի կողմից, կես չգիտեմ, կես միայն հասկանում եմ, վոր առևտրական թղթակցություն բառի տակ նա հասկանում եր նամակագրություն նրա՝ այսինքն Բակունինի հետ։ Իսկ ինչ վերաբերում է ապրանքների գներին, ապա այդ ինձ անհասկանալի կե, քանի վոր կես անգիր չեմ հիշում նրա բառարանը, վոր նա տվել եր ինձ և վորն ինձ ներկայացվեց հանձնաժողովում։

Պարզաբանություն.

Այս հարցում կես ասացի, վոր «գրքի մասին չեմ հիշում», պարզաբանում եմ, վոր չեմ հիշում՝ ստացել եմ այն արդյոք, թե վոչ։

Հարցեր.

21

Ի՞նչ նպատակով են կազմված ձեզ մոտ գտնված և ձեզ ներկայացված բառարանն ու ծածկագիրը։ Բացատրեցեք բառարանի յուրաքանչյուր ֆրազը, այլև՝ բացի ձեղնից ով ուներ նման բառարան ու ծածկագիր և դրանցով ո՞ւմ հետ եք նամակագրություն ունեցել։

Պատասխաններ.

Հայերեն բառարանը, վոր հանձնաժողովը ներկայացրեց ինձ, կես չեմ կազմել. այն, ինչպես արդեն հանձնաժողովում իսկականի վրա մակագրել եմ, այն կես արտագրել եմ Փարիզում ապրող հայ Միխաքյանի մոտ, վորն իր հերթին արտագրել է վոճն Պետրոս-քեյից, վորն իրեն Հայաստանի իշխան ցույց տվող և իր համախոհների հետ Միլանում ապրող մի շառլատանի ագենտն ու կուսակիցն է։

Հիշյալ շառլատանը, վորին զանազան պետություններում ապրող հայերից չի ճանաչում վոչ վոք, Միլանում կերկու անգամ տպագրել է մի վողորմելի բրոշյուր ֆրանսերեն լեզվով, «Մեմուարներ» վերնագրով[8], վորի մեջ զետեղելով մի ամբողջ շարք անհեթեթ նամակներ՝ ուղղված Ռուսաստանի պետական զանազան բարձրագիր անձանց, և սրանց մի քանի նամակները, ասում է, թե ռուս կառավարությունն իրեն նեղացրել է, զրկել իր հողերից և վերջապես անամոթաբար բամբասում է, վոր իբր թե կառավարությունը խլել է իր նախնիքներին պատկանող թագի թանկարժեք քարերը։ Այդ մարդուն, վորքան փարիզաբնակ հա-

յերը կարողացան իմանալ նրա ազգն ու հիշյալ Պետրոս-բեյից, անգլիական կառավարությունն և պահում. ճիշտ և այդ թե վոչ, դրա համար յերաշխավորել չեմ կարող, քանի վոր վոչ մի վստահություն չեմ տածում վոչ այդ շառլատանին, և վոչ էլ նրա ազգնակին, վորին յես անձամբ չեմ էլ տեսել, բայց ինչ վոր լսել եմ, այն էլ դրում եմ մանրամասն և ճիշտ:

Այդ շառլատանը, իրեն անվանելով Լևոն՝ Լուզինյաններից դինաստիայից, այս տարի մի տպագիր շրջաբերական հրապարակից ֆրանսերեն լեզվով հետևյալ խորագրով—Շրջաբերական, հասցեագրված Ցեվրոպայի բոլոր պետություններին, Հայաստանի դիվտատոր և պրոտեկտոր Լևոնից»: Վորքան հիշում եմ, շրջաբերականը հրապարակված է այս 1862 թվի մարտի սկզբին և տպված է Միլանում, ամենակոպիտ թղթի վրա, թեև նա այնտեղ դրում է, վոր իր բնակավայրը Զեյթունում է, վորը Տավրոսի լեռներում է գտնվում, վորտեղ նա իր որոշումը վոտք էլ չի դրել: Շրջաբերականը, արտատպվեց, յերեք չեմ սխալվում, այս տարվա մայիսի սկզբին իտալական մի թերթում, վոր «Իտալիա» անունով լույս է տեսնում Միլանում կամ Թուրինում, բայց ավելի ճիշտ Միլանում. սակայն, այդ շրջաբերականի մի որինակը, ամենայն հավանականությամբ, պետք է գտնվի և մեր Արտաքին գործոց Մինիստրության մեջ, քանի վոր, ինչպես արդեն ասացի, այն հասցեագրված եր յեվրոպական բոլոր պետություններին:

Հիշյալ շրջաբերականի մեջ, գրված անճաշակ ֆրանսերենով, ինչպես ինձ ասացին ֆրանսագետները, նա դիմում է յեվրոպական պետություններին և խնդրում, վոր Կիլիկիայի մի քանի քաղաքներ, Միջերկրական ծովի արևելյան ափին, հայտարարվեն ազատ քաղաքներ: Վոր իբր թե Անգլիան առաջարկել է թյուրքական սուլթանին ազատել մի ինչ վոր քաղաք կամ տեղ (լավ չեմ հիշում, վորովհետև մի անգամ թեթևակի կարդացել եմ նրա շրջաբերականը, վոր փարիզաբնակ հայերի ձեռքին եր) և վոր սուլթանը քիչ եր մնացել խոստանար կատարել Անգլիայի պահանջը, բայց հետո իր խոսքը չի կատարել: Հետո ասում է, վոր նա (ինքնակոչը) իր մի բուռը լեռնցիներով (պետք է յենթադրել Տավրոսի լեռներում բնակվող հայերին) կռիվներ է մղել թշնամիների դեմ և հաղթել նրանց: Ելի շատ նման անհեթեթություններ, վոր հիմա չեմ հիշում: Կարճ ասած, նրա ամբողջ շրջաբերականից սուտ եր փչում, քանի վոր նա յերբեք չի յեղել Տավրոսի լեռներում, վոչ վոքի դեմ չի կռվել և բնավ չի յեղել Զեյթունում, վորտեղ իբր թե հրատարակված է հիշյալ շրջաբերականը:

Տեսնելով այդ ավանտյուրիստի հանդգնությունն ու անամոթությունը, յես միտք ունեյի գրել նրա դեմ մի ուժեղ բողոք և այն տպագրել բոլոր լեզուներով: Այդ նպատակով յես գրեցի սկզբում հայերեն և, վերջացնելով այն, սկսեցի թարգմանել կամ

Նուչնպիսի մի բողոք գրել ուղարկեն, մտադրվելով տպագրել այն մեր կառավարության նախնական թույլտվությամբ, ուստի հրատարակումն էլ թողի մինչև իմ Ռուսաստան գալը։ Հիշյալ բողոքը գտնվում է իմ թղթերում, հայերենը ավարտված, ուղղագրությունն անավարտ կամ գեթ վերջնականապես չմշակված. հանձնաժողովը կարող է հավատիանալ իմ խոսքերի ճշմարտության մեջ, չեթե բարեհաճի նայել այն։

Մինչդեռ, շաղլատանը, չբավականանալով սոսկ բրոշյուրների և շրջաբերականի հրատարակությամբ, քանի վոր դրանք վոչ մի նյութական ոգուտ չբերին նրան, մի բան, վորին, ինչպես յերևում է, հետամուտ է նա, գրագրությունն սկսեց թյուրքահայերի (իր մի քանի կուսակիցների) հետ, վորպեսզի հայերը փող ուղարկեն նրան Կիլիկիայի ազատագրման նախապատրաստության համար։ Միաժամանակ նա կազմեց այս բառարանը և նուչնպես ուղարկեց իր թղթակիցներին, կամենալով ցույց տալ նրանց, թե կապ ունի իր բառարանի մեջ հիշատակված անձանց հետ։ Վորքան կարողացան իմանալ փարիզաբնակ հայերը Իտալիայում գտնված հայերից, ապա նա հարաբերություններ ունի գարիբալդիականներից վոմանց հետ. սակայն ունի՞ արդյոք նա [կապ] ԷՐ իսկ Գարիբալդու կամ այլոց հետ, ստուգապես վոչ վոք չգիտե այդ, և յես այլևս այս մասին չեմ լսել։

Կամենալով հայերին նախազգուշացնել այդ ավանտյուրիստից, վորպեսզի նա իսկապես փող չկորզի նրանցից, յես և մի քանի փարիզաբնակ հայեր նամակ գրեցինք Կոստանդնուպոլիս մեր ծանոթներին, վորոնք գտնվում էին այնտեղի Պատրիարքարանում և նրանց ուղարկելով ավանտյուրիստի ազնիվ վերցրած լեքսիկոնը, խնդրեցինք չհավատալ նրան և այդ մասին պատմել բոլորին, վորպեսզի վոչ վոք փող չուղարկի նրան։ Այդ նամակը և լեքսիկոնը Կոստանդնուպոլիս տարավ բժիշկ Պյաթիպյանը, վորն այդ ժամանակ ուղում էր Կոստանդնուպոլսի վրայով Աղբիանապոլիս գնալ։

Ահա թե ինչ հանգամանքներում է այդ լեքսիկոնը, իմ պատրաստած բողոքների հետ միասին, մնացել իմ թղթերում։

Ինչ վերաբերում է ինձ, ապա յես այդ լեքսիկոնով յերբեք վոչ վոքի չեմ գրել և այդ շաղլատանի հետ վոչ մի առնչություն չունեմ։

Հանձնաժողովում ինձ նկատեցին, թե արդյոք այդ այն ընդարձակ բառարանը չէ, վորի մասին ասում է Բակունինն իր՝ ինձ գրած նամակում։ Այս առթիվ ելի մի անգամ կրկնում եմ, վոր այն բառարանն ինձ չեր ուղարկված, այլ Տուրգենևին, ինչպես իմքը Բակունինն է ասում իր նամակում, և յես այն չեմ տեսել, չեմ խնդրել Տուրգենևից և չեմ արտագրել, վոր կարող է հաստատել իմքը Տուրգենևը։ Ավելի լավ, յեթե հանձնաժողովում գտնվում է այն բառարանը, վոր Բակունինն ուղարկել եր Տուր-

դեռևին, ապա հանձնաժողովը կարող է համեմատել դրանք և այդ միջոցով հավաստիանալ իմ ցուցմունքների իսկության մեջ։

Այն հարցին, թե բացի ինձնից ով ունի այդ բառարանի օրինակը, չես պատասխանել չեմ կարող, մորովհետև, ինչպես վերևում ըսեցի, այդ բառարանը վերցված է շաղատանի ագենտից, որն ուղարկում էր իրենց համախոհներին, բայց թե հատկապես ո՞ւմ, այդ ինձ հայտնի չէ, մորովհետև, բացի արհամարհանքից, այլ պատճառներ չեմ տեսնում հիշյալ շաղատանի նկատմամբ, որովհետև չեմ լսել ոչ նրա, ոչ էլ նրա ագենտների հետ (որոնք ինձ հայտնի չեն, այլ այս բանը դրում եմ ըստ լուրերի), որևիցե հարաբերության մեջ։

Այն հարցին, թե ինչ և նշանակում յուրաքանչյուր ֆրագ հիշյալ լեքսիկոնում։ Ուրիշ նշանակություն ու այլ բացատրություն տալ չեմ կարող բացի այն, որ յուրաքանչյուր բառի կամ ֆրագի դիմաց գրել է ինքը շաղատանը։ Իսկ ինչ ընդհանրապես այդ բառարանի իսկական նշանակության և վերաբերում, ապա յես, հիմնվելով Փարիզում տարածված ընդհանուր լուրի վրա, յեն-թադրում եմ, որ շաղատանն այդ բառարանը բաց է թողել, որպեսզի ցույց տա, թե ինքն աշխատում է Կիլիկիայի ազատության համար, և այդ ճանապարհով փող կորզի հայերից։ Այդ լուրը կամ կարծիքն ամենահավանականն է և այն պատճառով, որ նա ոչ զորք ունի, ոչ թնդանոթներ, ոչ հրացաններ և ինքը Թափառական է Ցևիրոպայում, մերթ այստեղ, մերթ այնտեղ։ մինչդեռ բառարանում գեանդել է թե զորք, թե թնդանոթ, թե հրացաններ, իսկ ինչ է այդ—յերե ոչ կատարյալ շաղատանություն։

Վերևում մոռացա հիշել, որ շաղատանի հրատարակած մեմուարում տրված են նրան շրջապատող կամ նրան հարգող անձանց անունները, որոնց հիմա յես չեմ հիշում, բայց մոտ տաս հոգուց ավել եյին նրանք, որոնին հանձնաժողովը կարող է հավաստիանալ, յերե այդ մեմուարի մի օրինակը գտնվում է կառավարության մոտ[10]։ Մոռացա նույնպես հիշել այն մասին, որ նա գրել էր Փարիզ իր ագենտ Պետրոս-բեյին, յերբ այս վերջինն այնտեղ էր գտնվում, որ միջոցներ ձեռք առնի դրամ հավաքելու առնվազն կես միլիոն ֆրանկ դումարի չափ և որ նա (ինքնակոչը) այդ դեպքում Իտալիայից դուրս կգա ապառազինված, ինչպես Մինելիան Ցուպիտերի գլխից։ Այս բոլորի մասին ծիծաղելով ասում եյին ինձ փարիզաբնակ հայերը։

Իսկ ինչ վերաբերում է ինձ ներկայացված ծածկագրերին, ապա բացատրում եմ, որ այդ ծածկագրերը ոչ մի առնչություն չունեն բառարանի՝ բազմից հիշված շաղատանի գործի հետ. դրանք ինձ հայտնել էր Արզարը Հնդկաստանից, հնդկաստանցի Մալխաս անունով մի հայի միջոցով, այն նպատակով, որ նրանցով Ռուսաստանից Հնդկաստան գրեմ նրանց՝ Հնդկաստանից ստացվող զանազան ապրանքների գների մասին։ Նրանք դեռ իմ կալկա-

թայում գտնված ժամանակ խնդրեցին իրենց ծանոթացնել Պետերբուրգի և Մոսկվայի ամեն նշանավոր առևտրական տների հետ։ Այդ մասին ինձ խնդրեցին այնտեղի և ուրիշ նեգոցիանտներ, այն է. իտալացի Ռոզետտոն և ֆրանսիացի Առնոն. վերջինս ինձ մի նամակ տվեց այստեղի ֆրանսիական ժուռնալի խմբագրի անունով, վորը չես չկարողացա հանձնել հասցեատիրոջը առողջության շատ թույլ լինելու պատճառով։

Այդ ծածկագրերով և բառարանով, վորոնց մասին վերևում հիշվեց, չես վոչ վոքի վոչ մի բառ չեմ գրել և վոչ վոքից չեմ էլ առացել, և գրանք այնպես էլ առանց գործածության մնացին իմ թղթերում։ Դրանց մի որինակը պետք է գտնվի Արգարի մոտ Կալկաթայում, իսկ թե ուրիշ հնդկահայերի մոտ էլ կա նույնը, չգիտեմ, թեև շատ անգամ եմ լսել, վոր ապրանքների գների մասին նրանք ծածկագրերով են գրում միմյանց, բայց այդ թե ուրիշ ծածկագրերով, չգիտեմ։

Ահա բոլորը, ինչ չես գիտեմ այս կետի վերաբերմամբ։

Հարցեր.

22

Ներկայացնելով ձեր թղթերի մեջ գտնված Կոստանդնուպոլսից ձեզ ուղարկած 1862 թ. մայիսի $^{14}/_{26}$-ի նամակը, հանձնաժողովը պահանջում է, վոր դուք ամենայն մանրամասնությամբ բացատրեք նրա բովանդակությունը, այլև՝ ում և այն գրել և ինչ առիթով եք հարաբերություններ մեջ գտնվում այդ անձի հետ։

Պատասխան.

Այդ նամակն ինձ գրել է թյուրքահայ Սերոբե Թագվորյանը, վորի հետ ծանոթացա Կոստանդնուպոլսում, վորպես լավ մարդու հետ և բացի անձնական բարեկամական հարաբերություններից ուրիշ հարաբերություն մեջ չեմ յեղել նրա հետ։ Ինչ վերաբերում է ինձ ներկայացված նրա նամակի բովանդակությանը, պատիվ ունեմ բացատրելու, վոր յերբ անցյալ տարվա վերջին դուրս եյի գալիս Կոստանդնուպոլսից, մի քանի հայեր, վորոնց թվում նաև նամակի հեղինակը, խնդրեցին ինձ հաղորդել փարիզաբնակ հայերին, թե արդյոք չի՞ կարելի ծանոթների միջոցով հնարավորություն ունենալ անցնելու Ֆրանսիայի կամ Իտալիայի հպատակության, վորպեսզի այդ ճանապարհով ապահովեն իրենց Կոստանդնուպոլսում։ Փարիզ գալով, նրանց խնդիրը հաղորդեցի այնտեղի հայերին, վորոնք ասում եյին, վոր այդ ճանապարհով վոչ մի կերպ չի կարելի Ֆրանսիայի հպատակության անցնել, վորովհետև այդ դեպքում անհրաժեշտ է վոր ինքը՝ հպատակությունն ընդունողը, չգիտեմ քանի տարի, անձամբ ապրի Ֆրանսիայում, և վոր կա-

ընկի յե դեռ մի բան անել Իտալիայում։ Այս նպատակով նրանք ճարեցին մի իտալահպատակ հայ՝ Մաչատրյան, որն այդ ժամանակ գտնվում եր Փարիզում։ Այդ Մաչատրյանին մենք հայտնեցինք հիշյալ անձանց խնդիրքը և խնդրեցինք, որ յեթե նա կարող և վորևե բան անել, թող անի։ Նա ասաց մեզ, որ ճանաչում և շատ իտալացիների, վորոնց թվում և Մաձձինիին, որ նա կաշխատի մի կերպ այդ անել, յերբ Լոնդոն գնա։

Այդ ժամանակ դուբս յեկավ Դուան հրամանը, թե այլ պետությունների հպատակությունն ընդունած քրիստոնյաները պետք և մեկնեն իրենց պետությունների հողը կամ թողնեն նրանց հպատակությունը։ Այս կանոնից կարող և բացառություն լինել միայն այն դեպքում, յեթե յեվրոպական պետությունների դեսպանությունները մի քանի անձանց ընդունեն իրենց մասնավոր հովանավորության տակ, վորպես թե նրանք իրենց պետք են կոստանդնուպոլսում, իբրև ծառայողներ։ Այդ հրամանից հետո, արդեն պետք եր, բացի հպատակությունից կամ անցագրերից, ձեռք բերել նաև կոստանդնուպոլսի իտալական դեսպանատան հատուկ հովանավորությունը։

Յերբ այդ մասին ասացինք Մաչատրյանին, ապա նա ասաց, վոր հիմա ինքը չգիտե, թե վերսաին ինչպես խնդրի այդ մասին Մաձձինիին, վորն իր հերթին Մաչատրյանի առաջին դիմումի ժամանակ խնդրել եր, վորքան հնարավոր և, փող հավաքել կոստանդնուպոլսում իտալական գործի ոգուին։ Մենք մտածեցինք, մտածեցինք այդ մասին և, կամենալով դուբս բերել Մաչատրյանին դժվարին կացությունից, ասացինք, վոր յերկրորդ խնդրի ժամանակ հայտնի Մաձձինիին, վոր այդ մասին արդեն առաջարկություն և արված կոստանդնուպոլսի ծանոթներին և վոր նրանք կաշխատեն հնարավոր չափով փող հավաքել։

Մաչատրյանը, արդեն յերկրորդ անգամ Լոնդոնի և Մանչեսթրի վրայով անցնելով Փարիզից, յեկել եր Մաձձինիի մոտ և, նրանից նամակ վերցնելով նրա կոստանդնուպոլսի ծանոթի անունով, ուղարկել եր Փարիզ՝ հասցնելու կոստանդնուպոլիս, Սերոբե Թագվորյանին, վորպեսզի նա ներկայացնա այն անձին, վորին հասցեագրված եր նամակը, խնդրի, վոր միջնորդեն իտալական հյուպատոսարանում նրանց Իտալիայի հպատակության և հովանավորության տակ առնելու համար, միաժամանակ հայտնելով նրան, վոր նրանք հպատակություն խնդրողներից կազմել են յերեք անձից բաղկացած մի կոմիտե՝ փող հավաքելու համար։ Մաձձինիի վերոհիշյալ նամակը, ինչպես և Թագվորյանին ուղղված նամակն իմ միջոցով չուղարկվեցին, այլ հայազգի Նուբիջանի միջոցով, վորովհետև այն ժամանակ վատառողջ եյի և դուբս չեյի գալիս սենյակից։

Իսկ յերբ, ինչպես ասացի նախորդ կետում, մենք (այսինքն՝ յես ու վարիզաբնակ մյուս հայերը) մայիսի 9-ին Գյաթիպյանի հետ նամակ գրեցինք կոստանդնուպոլիս՝ շուլաստանի մասին և ուղարկեցինք նրա լեքսիկոնը և խնդրեցինք նախազգուշացնել բոլորին՝ չհավատալ և փող չուղարկել նրան, ես այդ նամակում մի փոքրիկ նամակ գետեղեցի Թազվորյանի անունով այն մասին, թե ինչ եր արված նրանց միջնորդության վերաբերմամբ, հպատակության և հովանավորության համար, և այն մասին, թե ինչ եր ասվել Մաձինիին՝ հնարավոր քանակությամբ փող հավաքելու վերաբերմամբ։

Դրա հետևանքով նրանից ստացա ինձ ներկայացված՝ 1862 թվի $^{14}/_{26}$ մայիսի նամակը, վորի մեջ նա ասում է, վոր ստացել է իմ մայիսի 9-ի նամակը, բայց Մարտիրոսի, այսինքն Մաձինիի, նամակը դեռ չի հասցված այնտեղ, ուր պետք է, վորովհետև նրանք դեռևս ձեռնամուխ չեն յեղել վոչ կոմիտե կազմելուն, վոչ էլ փող հավաքելուն։ Նա ասում է, վոր չի կարող ասել նրան, ուր հասցեագրված է յեղել նամակը, թե կոմիտե կա և թե փող են հավաքում, յերբ իրոք վոչինչ չկա։ Իսկ յերբ նրանք կարողանան մի բան անել, այն ժամանակ նշանակում է կարելի յե նամակը տալ։ Նա այդ նամակում գանգատվում է, վոր իր ընկերները (անցագրի մասին միջնորդելու գործում) չեն աջակցում իրեն և վոր մենակ դժվար է իր գործը։ Այս արտահայտություններից հետո նա նորից միևնույն բանի մասին է խոսում, վոր չի կարող ասել, թե կոստանդնուպոլսում կոմիտե ունեն, վորը նրանք չունեն, վոր այդ կրիտիկական դրության մեջ կդնի նրան, և իր ընկերներն էլ չեն թույլ տա այդ տեսակ բան հաղորդել այն մարդուն, վորը, ինչպես ամբողջ հասարակությունն (հայերը) է կարծում, կարող է վճռաս հասցնել իրենց։ Թեպետ, ասում է նա,—նորից մտածեցեք, այսինքն յեթե չկա ուրիշ միջոց, ապա գրեցեք ինձ, թե պետք է արդյոք հանձնել նրան, այսինքն՝ ում հասցեագրված է յեղել Մաձինիի նամակը։

Դրան ավելացնում է, վոր ինքը (նամակի հեղինակը) միանգամայն հանդիսատ է իմ այն կարգադրություններին նկատմամբ, վորոնք վերաբերում եյին իրեն, այսինքն՝ հպատակության մասին, վորի մասին յես խնդրել եյի Աչյաթրյանին և Փարիզի ուրիշ հայերի, վորովհետև յես այս առթիվ նրանց միջոցով առաջին անգամ ծանոթացա նրա հետ և բացի այս գործից ուրիշ հարաբերություն չեմ ունեցել։

Այդ բոլորից հետո Թազվորյանը հաղորդում է ինձ այնտեղի նորությունները, այն, վոր աշխատել և ունենալ կոստանդնուպոլսում յեղբայրության ժողովարան և այն բանալու թույլտվությունն ստանալ, վոր այդ ընկերությունը պետք է կոչվի «Հայկ» կամ «Որիոն» (Որիոնի համաստեղությունը հայերեն կոչվում է

Հայկ) և վոր նա գտնվելու չե Անգլիայի հովանավորության տակ, վորից նույնպես թուլտվություն և ստացել, վոր ընկերությունը մասսոնական ժողովարանի պես իրավունք կունենա գաղտնի ժողովներ գումարելու, մասսոնականից ավելի պարզ սիստեմով։ Ապա շարադրում և այդ ընկերության նպատակը—հոգ տանել չունևոր և հիվանդ յեղբայրների մասին և վող հայթայթել նրանց, և վոր գլխավորն և՝ Լոնդոնում գոյություն ունեցող այդպիսի ժողովարանն ոգնության և հասցնելու նրանց։

Այդ բոլորի մասին յես առաջին անգամ եյի կարդում մեջ բերված նամակում և վճռականապես ավելի վոչինչ չգիտեմ, քանի վոր յերբ այդ նամակն ստացա, արդեն Փարիզից ճանապարհվելու վրա եյի, ի պատասխան վոչ մի խոսք չեմ գրել նրան այդ առարկանների շուրջը և այլևս նամակ չեմ ստացել նրանից։ Արդյոք նրանք բաց արին այդ ընկերությունը թե վոչ—հաստատապես վոչինչ չգիտեմ։

Հետո նա ինձ տեղեկացնում և Բարեգործական ընկերության և վոչ թե բարեգործական ընկերություն հիմնելու մասին, քանի վոր արդեն յերեք տարի յե, ինչ գոյություն ունի այն։ Այդ ընկերությունը, վորը վոչ գաղտնի ժողովներ ունի, վոչ խորհրդակցություններ, հիմնված և այն նպատակով, վոր դպրոցներ և չքավոր աշակերտներ պահի առավելապես վորբերից։ Նա ասում և, թե բավականաչափ վող են հավաքել։ Այդ հոդուտ հիշյալ ընկերության։ Ասում և. «Արտաքին գործակալներին դեռևս նամակներ չեն ուղարկված»։ Բացատրում եմ. յերբ դուրս յեկա Կոստանդնուպոլսից դեպի Հնդկաստան (Լոնդոնի վրայով, վորի մասին ասված և իր տեղում), այդ ընկերության անդամներից վոմանք խնդրեցին ինձ հայտնել Յեգիպտոսի և Հնդկաստանի հայերին ընկերության գոյության մասին և խնդրել նրանց ոգնություն։ Այդ մասին խոսեցի յես Յեգիպտոսում և Հնդկաստանում, վորտեղ շատերը հաճությամբ կամեցան մասնակցել և ինձ առաջարկեցին, նրանցից վող վերցնել, վոր նրանք ուղում եյին նվիրել, բայց վորովհետև յես այդ բանի համար լիազորված չեյի ընկերության կողմից, ուստի չվերցրի և վոչ մի կոպեկ և ասացի, վոր նրանց ցանկությունները կհայտնեմ Կոստանդնուպոլսում, վող նրանք իրենք նշանակեն այդ տեղերում իրենց ագենտներին։ Իսկ յերբ յեկա Կոստանդնուպոլիս, ապա իրաք, հայտնեցի ընկերության, այսինքն, նրա՝ ինձ ծանոթ անդամներից վոմանց, Յեգիպտոսի և Հնդկաստանի քաղաքներում ապրող և Բարեգործական ընկերությանը ծառայելու պատրաստություն ստանձնել ցանկացող հայերի հասցեները։ Ընդամին յես ասացի ընկերության անդամներին, վոր այդ նպատակով հրավիրական նամակներ գրեն այն մարդկանց, վորոնց հասցեն յես ավի նրանց։

Ահա հենց այդ մարդկանց և նամակի հեղինակը «արտաքին

ագենտները» անվանում, ապա նա խոսում է Ֆյաթխյանի մասին, որի հետ նա հաճախ է տեսնվում, Ֆյաթխյանի մասին արդեն մի քանի անգամ խոսել եմ այս և նախորդ կետերում, նա դոկտոր է և, ավարտելով Փարիզում ուսումը և ընդունելով Ֆրանսիայի հպատակություն, կոստանդնուպոլսի վրայով մեկնեց իր ծննդավայրն Ադրիանապոլիս:

Հետո նամակի հեղինակը խոսում է Տավրոսի կողմերից, այսինքն Կիլիկիայից յեկած մի ինչ որ Մակարի մասին, որին յես չեմ ճանաչում և որի մասին ուրիշ ոչինչ չեմ լսել:

Ահա ուչժերս ներած բացատրությունն այս կետի վերաբերմամբ, ավելի ոչինչ չդիտեմ:

Հիմա, որպեսզի ավելի պարզ ցույց տամ, որ նամակը Մաձինինը չեր, այլ Մաձինիից, ուստի ավելացնում եմ, որ այդ նամակի խնդրանում ասված է. պ-ն Մարտիրոսի, այսինքն Մաձինիի նամակը, հետո ասում է՝ տեղ չի հասցված: Բացի դրանից, ինչու պետք եր նամակն ուղարկել Մաձինիի անունով Կոստանդնուպոլիս, յերբ նա ամենևին էլ այնտեղ չի լինում, այլ մշտապես ապրում է Լոնդոնում: Յեվ դարձյալ՝ ինչպես կարող եյի յես նամակ գրել նրան, յերբ յես չեմ ճանաչում նրան և ոչ մի հարաբերության մեջ չեմ յեղել նրա հետ:

Ինչ վերաբերում է այն բանին, թե ինչու յես նամակի հեղինակը յերկու տեղ բառեր գործածել շառլատանի լեքսիկոնից, հենց Մաձինիի և կոմիտեյի մասին հիշելիս, ապա այդ բացատրվում է նրանով, որ նա, վախենալով թյուրքական կառավարությունից, որպեսզի նրա նամակը չվնասի իրեն, գործ է ածել այդ բառերը լեքսիկոնից, որը նրանք ստացել եյին, ինչպես յես արդեն ասացի այդ մասին նախորդ կետում:

Բացի դրանից ուրիշ ոչ մի այլ բովանդակություն կամ միտք չեր կարող ունենալ նրա նամակը:

Նա ինքն է ասում, որ իրենք չունեն նույնիսկ այդ կոմիտեն և որ այդ պատճառով էլ նա չի կարող նամակը հանձնել հասցեատիրոջը:

Ինչպես յես հիշեցի վերը, ինքս այդ նամակին չեմ պատասխանել, բայց որովհետև այն ուղարկված եր ոչ թե անմիջապես ինձ, այլ մի հայի միջոցով, ուստի նամակը կարդալուց հետո նրան ասացի, որ գրի նրանց, որպեսզի նրանք իրենք այնպես անեն, ինչպես կուզեն, յես այլևս չեմ խառնվում, քանի որ Խաչատրյանն էլ Փարիզում չեր, ուրիշ անելիք էլ չկար:

Դրանով էլ վերջացավ այս բոլորը:

Հարգեր.

23

Նմանապես ձեզ ներկայացնելով Նախիջևանից Հայրապետյանի 1861 թ. դեկտեմբերի 12-ի նամակը, հանձնաժողովն առաջար-

կում է ձեղ պարզաբանել այդ նամակի բովանդակությունը և ձեր՝ Հայրապետյանի հետ ունեցած հարաբերությունները[11]։

Պատասխան։

Նախիջևանում, չինովնիկ Ալիբովի մոտ գտնվող յեկեղեցապատկան կապիտալների գործի վերաբերյալ մի մեծ գործ կար, որ սկսված եր ներքին գործոց պարոն մինիստրի կարգադրությամբ։ Այդ գործն ինքնակամ կերպով կարճել եր Ա.յվազովսկի վարդապետը, որը թեմակալ առաջնորդի պաշտոն եր վարում։ Սրա հետևանքով մարդիկ, Ալիբովի համախոհներից, նրանց հետ և Ա.յվազովսկին հալածանքներ հարուցեցին Հայրապետյանի դեմ։ Ա.յվազովսկին քանիցս գանգատվեց պ. մինիստրին և Յեկատերինոսլավի պ. նահանգապետ կոմս Սիվերսը բռնելով Ա.յվազովսկու կողմը, ճնշում եր Հայրապետյանին և վերջապես անձամբ գալով Նախիջևան, ստիպեց Հայրապետյանին հաշտվել Ալիբովի հետ։ Այդ հալածանքների մասին յես լսել եյի Կոստանդնուպոլսում, գրեցի նրան ու խնդրեցի տեղեկություն, ահա ինձ ներկայացված նամակով նա հայտնում է, որ յես իր մասին հանգիստ լինեմ, որ գործերը լավ են գնում, այսինքն՝ այլևս հալածանքներ չկան։ Հետո ասում է, որ Թիֆլիսից յեկել է ուսուցիչ Նավասարդյանը, որ իմ գալուց հետո այնտեղ դպրոց ենք բանալու (Հնդկաստանում թողած ժառանգությունները մեծ մասամբ այդ նպատակի համար եյին)։ Շարունակության մեջ ասում է. «կաշխատենք Նախիջևանում տպարան ունենալ, որպեսզի Նախիջևանն ուրիշ քաղաքների կարիքը չունենա»։ Դրանով նա հասկանում եր իշխանության թուլությունը։

Հետո ասում է, որ իր վրա է ինձ վրա նայում են, այսինքն՝ Ա.յվազովսկին, Ալիբովը և նրանց կուսակիցները, քանի որ մի քանիսը, դրանց մեջ է Ա.յվազովսկին, չեն ուզեցել, որ յես Հնդկաստան գնամ ժառանգությունների համար։ Դրա հետևանքով նա ինձ զգուշացնում է, որ գործն այնպես վարեմ, որ հետո չլինի թե ինքը և յես ու ամբողջ հասարակությունը կարմրենք։

Այնուհետև հայտնում է, որ մեր բոլոր բարեկամները լավ են և անփոփոխ նույն հաստատ դրության մեջ։ Այդ բոլորը վերաբերում է Ալիբովի հակառակ կուսակցությանը։ Հետո ասում է, որ արտաքուստ պետք է փոքր ինչ բարեպաշտություն (благочестие) (հայերեն բնագրում՝ «պարկեշտություն»—համեստություն), խոնարհություն և լռություն։ Այդ նրա համար, որ, ինչպես արդեն ասացի, կոմս Սիվերսը նրան ստիպեց հաշտվել Ալիբովի հետ, առանց Ալիբովի կողմից վրեժ բավարարության հոգուտ յեկեղեցու։

Կարճ ասած, այս նամակի մեջ բոլոր ակնարկները վերաբերում են տեղական՝ Նախիջևանի գործին և ուրիշ ոչ մի միտք չունեն։

Հայրապետյանի հետ ունեցած իմ հարաբերությունների մասին խոսել եմ նախորդ կետերում։

Հարց։

34

Հայերեն լեզվով ոմն և կազմել և ինչի համար եր ձեզ մոտ գտնվում այն նյութերի նկարագրությունը, որոնցից Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում և Ավստրիայում վառոդ և պատրաստվում, ինչպես և ինչ և նշանակում այդ նկարագրության վրա արված դիտողությունը. «Կոստանդնուպոլսից միայն մի մարդուց և ստացվել տեղեկություն այն գործի մասին, իսկ մնացած բոլոր նամակները բնավ չեն հիշատակում»[12]։

Պատասխան։

Այդ հոդվածն ամբողջ տեխնիկական քիմիայի մի մասն և, վոր Փարիզում թարգմանել և գրի չի առել իր ձեռքով հայազգի Նուբիջանը։ Նա հաճախ ինձ մոտ եր բերում այդ յերկի նաև մյուս մասերը և այդ ժամամ—յերբ ինձ մոտ եր անցել, ինձ տանը չգտնելով, հոդվածը թողել եր և վրան մակագրել. «Վոր Կոստանդնուպոլսից միայն մի մարդուց և ստացվել տեղեկություն», այսինքն անցագրերի գործի մասին, վորոնց մասին (վերևում) նամակում յես խոսեցի, վորովհետև Մաձինիի նամակն իր ծանոթին ինքը՝ Նուբիջանն եր ուղարկել Կոստանդնուպոլիս։ Նա ասում է. «մի մարդուց», նկատի ունենալով Թագվորյանին, և վոր մյուս բոլոր նամակների մասին, այսինքն ուրիշ հայերից, վորոնք Նուբիջանից Իտալիայի հպատակության ու հովանավորության եյին խնդրում, տեղեկություններ չկան։

Այդ հոդվածը պատահմամբ և մնացել ինձ մոտ և շտապելու պատճառով մոռացել եմ վերադարձնել նրան։

II

1862 թվի դեկտեմբերի 13-ին Ս. Պետերբուրգում Ռուսական հասատված ընկերության հանձնաժողովում Ս. Պետերբուրգի համալսարանի կանդիդատ Միխայիլ Գալբացկովը, բանաձևական հոդվածից հետո, իրեն առաջարկված հարցերին հետևյալ ցուցմունքները տվեց.—

Հարց։

1

Պնդում եք արդյոք դուք հանձնաժողովին տված բացատրությունները և չունե՞ք վորևե բան ավելացնելու։

Պատասխան։

Ինչ ցույց եմ տվել առաջ, նույնը հիմա էլ պնդում եմ, և բնական վոչինչ չունեմ ավելացնելու, բացի նրանից, վոր պետք է ավելացնել հայերեն նամակի մանրամասնությունների մա-

սին[18], վորի մասին յես բացատրություն պրեցի հանձնաժողովում արված թարգմանության վերաբերմամբ, թեև նույնը և ասում։

Հարցեր.

Ձ

Ձեր նախկին պատասխաններուի մեջ դուք ցույց եք տվել, վոր Լոնդոնում գտնվող ռուս վաճառականների հետ վոչ մի հանցավոր հարաբերության և նամակագրության մեջ չեք եղել և վոչնչով չեք աջակցել նրանց պրոպագանդի տարածմանը, բացի այն, վոր համաձայնություն եք հայտնել Բակունինին նրա կնոջ վիճակը բարվոքելու համար։ Ընդհակառակը, գործի հանգամանքները հերքում ծառայելով ձեր այդպիսի պատասխանների համար, ցույց են տալիս, վոր դուք հանցավոր հարաբերություններ եք ունեցել Լոնդոնի պրոպագանդիստների հետ, գրագրություն եք ունեցել նրանց հետ, վորի համար Բակունինը հայտնել և ձեզ դանազան անձանց մատցածին ազգանուններ և վոր գլխավորն և, Բակունինը ձեզ մոտ մարդիկ և ուղարկել, վորոնք համաձայնություն են հայտնել աջակցելու նրա պլաններին, ինչպես որ. Նիչիպորենկոյին և Վորոնովին, այն պատճառով, վոր դուք դեկավարեք նրանց։ Ուստի հանձնաժողովը վերստին պահանջում է ձեզանից անկեղծ բացատրություն Լոնդոնի պրոպագանդիստների հետ ձեր ունեցած հարաբերությունների և այն մասին, թե դուք ինչ մասնակցություն եք ունեցել նրանց գործունեության մեջ։

Պատասխան.

Ինչ վոր առաջ ցույց եմ տվել Լոնդոնի ռուս վաճառականների հետ իմ ունեցած հարաբերությունների բնույթի մասին, այդ նույնը պնդում եմ այժմ, վոր յես նրանց ապենաը չեմ եղել, վոր յես չեմ ծառայել նրանց պրոպագանդան տարածելու համար։ Թե ինչ նպատակով եր Բակունինն ինձ մոտ ուղարկել Վորոնովին և Նիչիպորենկոյին բացարձակապես չգիտեմ, վորովհետև կյանքումս բոլորովին չեմ տեսել Վորոնովին, իսկ Նիչիպորենկոյին տեսել եմ մի անգամ Տուրգենևի մոտ, վորի մասին քանիցս արդեն խոսելի առաջ ինձ առաջարկված զանազան կետերում։

Վորովհետև Բակունինն ինձ խնդրում եր իր կնոջ համար, ուստի և այդ կապակցությամբ հենց իմ մեկնելուց առաջ նա ավելց ինձ մի նամակ, վորը ներկայացված և ինձ, վորի մեջ նա մանրամասն խոսելով իր կնոջ մասին, ի միջի այլոց ավելացնում է զանազան անձանց անունների և ազգանունների բառարանը։ Բայց գլխավորը և հականը—այդ նրա կնոջ գործն և, վորի մասին և նա խոսում ինձ գրած բոլոր նամակներում, վորպես գլխա-

վոր հարցի մասին, վորին հանձնաժողովը կարող և հավաստիանալ, յոթե բարեհաճի ուշադրություն դարձնել նրանց վրա։

Առաջ յես արդեն ասել եմ, վոր մի գուցե Բակունինը կկամենար ինձ ապենտ դարձնել, սակայն յես յերբեք այդպիսին չեմ յեղել և վոչ մի աշխատանք չեմ կատարել։

Սրա հետևանքով, հանձնաժողովի ներկա պահանջի առիթով՝ նորից կրկնում եմ, վոր յես վոչ մի մասնակցություն չեմ ունեցել նրանց գործունեության մեջ։

Հարցեր.

3

Բացի դրանից հանձնաժողովը տեղեկություն ունի, վոր դուք թյուրքական անցագիր եք ձեռք բերել Լոնդոնի պրոլետարդիտանների ապենտ ու գործակից Վասիլի Կելսիևի համար, վորն այս տարվա գարնանը Ռուսաստան եր յեկել թյուրքահպատակ Վասիլի Յանկի անվան տակ[14]։ Բացատրեցեք, Կելսիևի համար անցագիրն ձեռնից եք ձեռք բերել և ինչու դուք վստահացաք թյուրքական անցագիր տալ նրան, իմանալով, վոր նա ռուսահպատակ է. այլև լիակատար անկեղծությամբ ցույց տվեք այն դիտավորությունների մասին, վորոնց իրականացման համար Կելսիևը Ռուսաստան եր գալիս և վորոնք պետք և ձեզ հայտնի լինեն Լոնդոնի պրոլետարդիտանների հետ ունեցած ձեր մոտիկ հարաբերության պատճառով, ինչպես նաև ցույց տվեք հիշյալ դործում Կելսիևի՝ Ռուսաստանում ունեցած հանդիպումների մասին։

Պատասխան.

Վոչ մի անցագիր յես չեմ ձեռք բերել հարցի մեջ հիշված Վասիլի Կելսիևի համար, և ինձ բոլորովին հայտնի չե, թե նա Ռուսաստան յեկել է արդյոք և ինչ նպատակով։ Հետևաբար, ուրիշ վոչինչ չգիտեմ այդ գործի մասին, վորովհետև այդ գործը բնավ ինձ հայտնի չե և չգիտեմ, նա ինչու յե յեկել (յեթե յեկել է) և ովքեր են նրա հանդիպումները Ռուսաստանում, վորի մասին ինձ հարց է արված։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԲԱԿՈՒՆԻՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

I.

24 ապրիլի, 1862, Լոնդոն
10. Paddington Green. W.

Իմ սիրելի Նալբանդով, դուք հավատարիմ բարեկամ եք և փառավոր կերպով կատարեցիք ձեր խոստումը։ Շնորհակալությունն ձեզ։ Այժմ միայն յերկու խնդիր ունիմ. աշխատեք, վոր փողը շուտ ուղարկվի կնոջս, յեթե կարելի յե մայիսին, և արդեն վոչ մի կերպ հունիսից ուշ՝ ըստ ռուսական տոմարի։ Իսկ յերկրորդը, թե նա Լոնդոն պետք է գնա կամ վոչ, ապա այդ մասին վոչ վոքի, նույնիսկ իմ ընտանիքին էլ մի ասեք,—դա միայն կխանգարեր իմ կնոջ Ռուսաստան վերադառնալուն, վորովհետև չճանաչելով իմ ընտանիքը և մի քիչ էլ ոտար լինելով նրան՝ ավելի շուտ նա կգերադասի սպասել լավ որերի՝ իր հարազատների մոտ՝ Իրկուտսկում, քան թե անորոշ ժամանակով գնալ մերոնց մոտ։ Ցավ ինչպես ինքներդ եք ասում, դա արդեն իմ գործն է, միայն յես կշռելով բոլոր, սոսկ ինձ ծանոթ, թե արտաքին, թե ներքին հանգամանքները՝ կարող եմ ճիշտ կշռադատել այն։—Իսկ ուրիշ, ամենալավ, ամենախելացի, ամենահամակրելի ու մտերիկ մարդիկ կարող են միայն դատողությունն անել նրա մասին։—Իսկ իմ անփոփոխ կամքն այն է, վոր ինչքան հնար է՝ նա շուտ հասնի Լոնդոն։—Թե ինչ միջոցներով ենք մենք ապրելու... կմտածենք—միջոցներ կգտնվին։ Ուրեմն, սիրելի բարեկամ, ձեր ամբողջ յեռանդը նախ կենտրոնացրեք այն բանի վրա, վոր իմ կինը շուտափույթ կերպով Իրկուտսկից փոխադրվի Տվերյան նահանգ՝ մորս մոտ՝ դյուղ։ Մնացածի մասին հետո կթղթակցենք, չե՞ վոր ինձ մոտ ձեր հասցեն կա։ Դուք դիտեք, թե ուր պետք է հասցնագրեք ձեր նամակները, բառաբան էլ մենք ունենք։ Ամեն բան կարգին է։*

Իսկ այժմ ձեռնամուխ եմ լինում Լոնդոնի զեկուցագրին։ A tout siegneur, tout honnour**—*սկսում եմ ամենամեծից։* Private gentlemen[1] *այսոր* Junior-*ի*[2] *հետ գնում է ամառանոց փոխադրվելու։ Սքանչելի յերգանակ է, յերկուսն էլ բարձր տրամադրության մեջ են։ Նրանց համար ուրախ կլինի։ Բանաստեղծը*[3] *նստել է տանը, և այնպես հաստատակամ—տառապյալ սիրելի ու խաղաղ, ինչպես միշտ։ Ցերեկ մենք ճաշեցինք նրանց մոտ Մարցիանովի*

---

* Ծածկագիրը բառարանը կորվի ստորև։ ԽՄԲ.։

** Ըստ աբժանավույն (ֆր.) ԽՄԲ.։

ու Ալբերտինիի հետ,—վերջինս հարբեց։ Private-ն յերկու շիշ շամպայն բերեց, հետո ել կոնյակ—Ալբերտինին չդիմացավ և ամբողջ յերեկոն քնեց—բանը հասավ նույնիսկ փսխելուն։ Սինգլի[1] մասին վոչ մի խոսք, նրան վաղուց և չեմ տեսել,—իսկ Pan-ը[2] առանց ձեզ տխրում է, թեև առողջությամբ փթթում է։ Վերջերս, ի հաճույս նրա, մենք մի խասին ճաշեցինք Bibero-յի, ինչ-վոր զերմանացու ու հունգարացու մոտ—նույնիսկ հետո—ինչ եք կարծում—գնացինք ելդորադո կենդանի պատկերներ դիտելու։—Իսկ հետո, զեկավարվելով Պանից՝ յես պատվիրեցի մի լրիվ ամառային հագուստ $4^1/_2$ ֆունտ ստեռլինգով։ Այնա ձեզ, կարծեմ, լրիվ հաշվետվություն, ձեղնից ել սպասում եմ նույնը։—Յես, մենք բոլորս շատ ուրախ ենք, վոր դուք այդքան դուր եք յեկել Ծերունի Տուրգենևին, և քանի վոր զգացումները միշտ ել փոխադարձ են լինում, ապա նա ել անկասկած ձեզ վոչ պակաս դուր յեկած կլինի։—Յես նրա նամակն ստացա և այս յերեկո կպատասխանեմ։—Ինչքան կարող եք շուտով դուրս հանեցեք նրան Փարիզից, մենք խիստ ցանկանում ենք նրան տեսնել և յես հույս ունեմ, վոր նա մեզ մոտ կլինա մի շաբաթից վոչ պակաս։

Մնաք բարով, գրկում եմ ձեզ՝
Մ. Բակունին

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Գերցենը։
2 Գերցենի վորդին՝ Ալեքսանդրը։
3 Ոգարյովը։
4 Անհայտ։
5 Չերնեցկին.

2.

6 մայիսի, 1862 թ., Լոնդոն
10. Paddington Green. W.

Սիրելի բարեկամ, հույս ունեմ, վոր այս նամակը ձեզ կգտնի դեռ Փարիզում։—Տուրգենևն իսկապես դառնում է վոչ տրամաբանական որենքներին, և վոչ ել մաթեմատիկական հավանականության յենթարկվող հեքիաթային եակ։ Յե՞րբ կմեկնի Փարիզից, յե՞րբ կլինի Լոնդոնում, յե՞րբ կվերադառնա Ռուսաստան,—դա յերևի վոչ վոք, նույնիսկ ինքն ել չի կարող ասել։ Այնինչ ինչքան հնարավոր և շուտ պետք է վողն ուղարկվի կնոջս, և յեթե հնար լինի, վոչ ուշ մայիսի վերջից՝ ըստ ռուսական տոմարի, իսկ յեթե հնարավոր լինի, ապա ավելի շուտ։ Ուստի խնդրում եմ ձեզ լրջորեն խոսեք նրա հետ, կամ թե ավելի լավ և այս նամակը ցույց տվեք նրան։ Նա չի բարկանա։ Ջանացեք ըստ հնարավորին ճիշտ ու վորոշակի իմանալ նրանից, թե յերբ կարող եք ստանալ նրանից, իմարկե վորպես փոխատվություն, յեղբայրներիս անունով՝ նրա խոստացած 2000 ռուբլին։—Այդ ժամանակ, յեղբայրներիս հետ բանակցելուց հետո՝ ձեզ հեշտ կլինի այդ գումարը ճարել փոխարինաբար։ Պետք է յեռանդագին ու հաստակությամբ գործել,—այլապես խեղճ կինս ևս մի տարի կմնա Սիբիրում։ Իսկ դա կտրականապես անկարելի յե։ Բանակցեցեք ուրեմն Տուրգենևի հետ, թող նա ձեզ վորոշ, կարգին ու գործնական պատասխան տա։—Կարող է, թե՞ չի կարող և յե՞րբ,

վորպեսզի դուք էլ կարողանաք հույս դնել դրա վրա։—Ցեթե չի կարող, և յեթե նույնիսկ անճշտություն, անորոշություն, հնարավորության յերկմտանք կա՝ թող պարզ ասի։ Այդ դեպքում յես ստիպված կլինեմ՝ յենթարկվելով անհրաժեշտության՝ այլ միջոցների դիմել, վորովհետև, նորից եմ կրկնում՝ կինս այլևս վոչ մի րոպե չպետք է Սիբիրում մնա։—Իսկ ինչու չպետք է և չի կարող, դա արդեն իմ գործն է և վորևե մեկի դատողության յենթակա չե։ Տուրգենևի նկատմամբ յես անվերապահ հավատաք կունենայի, յեթե նրա մեջ չլիներ ինչ-վոր լուացիոնալ, չնախատեսված, և գլխավորը, նրան մագնիսականորեն Փարիզում պահող և Լոնդոնից վանող մի բան, վոր բոլոր հաշիվներն ի դերև է հանում։ Իսկ ձեզ վրա յես լիուլի հույս ունեմ։—Խոստովանում եմ, վոր անհամբերությամբ եմ սպասում ձեր վերջին նամակին՝ Փարիզից։

Այստեղ բավական թվով ռուսներ կան—նրանց մեջ անշնորհքներ շատ կան, բայց լավ մարդիկ էլ կան։—Մտերմացել եմ դրանցից մեկի՝ դրակատնապես լավ ու ոգտակար մի մարդու՝ Նիկոլայ Իլիչ Վորոնովի հետ։ Նա Պետերբուրգում կլինի հունիսին և ինձնից նամակ կբերի ձեզ։ Ընդունեցեք նրան վորպես մի լավ և կատարյալ վստահության արժանի մարդու։ Նա դիմնազիայի ուսուցիչ է և յեղել Սամարոպոլում, ապա Յեկատերինոդարում։ Այժմ, արտասահմանից վերադառնալուն պես, անմիջապես կգնա Թիֆլիս։—Նախ սովորեցրեք նրան ինձ հետ թղթակցելու ձևը, թե Պետերբուրգի, թե Մոսկվայի միջոցով, ինչպես նաև Ոդեսայի և Թիֆլիսի միջոցով, այսինքն Կոստանդնուպոլսի վրայով, վորտեղ նրան հասցեն տրվելու յե։ Նա ոգտակար կլինի թե Յեվրոպական և թե Ասիական տեսակետից։—Ուստի վատ չեր լինի նրան հանձնարարել Թիֆլիսի այն բարի մարդկանց, վորոնք ծանոթ լինեյին Կոստանդնուպոլսի բարի մարդկանց։—Յես ձեզ գրում եմ Փարիզի ձեր ընկերոջ միջոցով, վորովհետև վստահ չեմ, վոր դուք դեռ Փարիզում կլինեք։ Ձեր նամակներն ամենից լավ է, վոր ուղարկեն ինձ՝ Լոնդոն, հետևյալ հասցեյով London. 10. Paddington Green. W. Mis. F. Wesche. For remitting so Miss Eliza Jones.

Այս հասցեն ավելք նաև Փարիզի ձեր բարեկամին։

Մի շաբաթ հետո յես՝ Ալբերտինիի ու Մարցիանովի հետ տեղափոխվում եմ քաղաքից դուրս։ Յերկաթուղով ինը պենս արժի այդ հեռավորությունը Orsett-House-ից և ավելի ևժան ու թարմ կլինի։

Մնաք բարով, սիրելի բարեկամ։
Ամուր գրկում եմ ձեզ։

Նոր գլխի ընկա, վոր յես դեռ չունեմ Փարիզի ձեր հայրենակցի հասցեն։ Խնդրեմ, գրեցեք այն,

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

1. Պետերբուրգ հասնելուն պես անհապաղ իմ նամակը հասցնել Նատալիա Սեմյոնովնա Բակունինային՝ ծնյալ Կորսակովային, կամ նրա ամուսնուն՝ իմ յեղբայր Պավել Ալեքսանդրովիչին։—Նրանց կարող եք գտնել

a) կամ Իվան Սերգեյեվիչի[1] ոգնութեամբ կամ ձեր հնարամտութեամբ՝ Պետերբուրգում, ուր մշտապես ապրում է Կորսակովների ողջ ընտանիքը.

b) կամ Տվերյան նահանգի, Նովոտորժոկի գավառի Պրյամուխինո գյուղում։ Յարկաթուղով Վիշնի Վոլոչոկից դեպի Տվեր՝ առաջինից 90 վերստի վրա, իսկ յարկրորդից 60 վերստի վրա կա Ոստաշկովո գյուղ ու կայարան։ Այդտեղ պետք է իջնել վագոնից, վերցնել վորևէ կառապան, ամենքն էլ ճանաչում են Բակունինիններին և մի հինգ ժամվա մեջ նա Տորժոկի (Ոստաշկովոյից 30 վերստի վրա) վրայով կհասցնի Պրյամուխինո (Տորժոկից 30 վերստի վրա)։

2. Տեսակցութեան կամ ուղևորութեան նպատակն է՝ խոսել ընտանիքիս հետ՝ իմ կնոջն Իրկուտսկից անմիջապես գյուղ՝ մորս մոտ գալու համար անհրաժեշտ միջոցառումների մասին։—Ամենից առաջ—մայրս, քույրերս և ազատ ճնացած յեղբայրս պետք է անպատճառ, առանց մի րոպե կորցնելու՝ մի հավաքական նամակ գրեն նրան և անկեղծ, ըստ հնարավորին ջերմ արտահայտութիւններով, պետք է նրան կանչեն իրենց մոտ։ Յեթե նրանք չեն իմանում, թե նամակն ինչպես ուղարկեն նրան, ապա ստիպեցեք նրանց գրել վերցրեք այն և Պետերբուրգից ուղարկեցեք Իրկուտսկ։

3. Ի. Ս. Տուրգենևի և յեղբորս ոգնութեամբ ու խորհրդով զբաղվել 2000 արծաթ ռուբլու գումարը կազմելով՝ կնոջս ուղարկելու համար, ինչքան կարելի յե շուտ, այնպես վոր նա կարողանա այդ փողն ստանալ, յեթե հնարավոր և, դեռ մայիսին։ Իսկ յեթե անհնար և այդքան շուտ կատարել դա, ապա անհապաղ գրել նրան և նախազգուշացնել, վոր այսինչ ժամանակ նա կստանա այսչափ գումար։

4. Պետերբուրգ հասնելուս պես անմիջապես նամակ ուղարկել նրան և դրագրութիւն սկսել նրա հետ—յես նրան նախազգուշացրել եմ, վոր Պյոտր Ալեքսանդրովիչ Յուրիկովը[2] գրելու յե նրան իմ անունից և իմ հանձնարարութեամբ։—Ձեր նամակով խնդրեցեք նրան իսկույն պատասխանել, և տվեք ձեր հասցեն, վորպեսզի նա կարողանա պատասխանել։

5. Նրան յերկու ձևով կարելի յե գրել.

a) սուբհանդակի միջոցով, յեթե այդպիսին շուտ գտնվի.

b) կամ փոստով՝ նրա մոր անունով. նորին բարեծնութիւն Յուլիա Միխայլովնա Կվյատկովսկայային, Իրկուտսկ քաղաք՝ Արևելյան Սիբիր—ուրիշ վոչինչ,—միայն թե նամակն ապահովագրել։—Յուլիա Միխայլովնայի անվամբ կարելի յե ուղարկել և փողը, իսկ կարիքի դեպքում և կնոջս գրած նամակը։

c) Իսկ յեթե Նատալիա Սեմյոնովնային գտնեք Պետերբուրգում, կամ շատ չանցած կտեսնեք նրան Պրյամուխինոյում, ապա նա գուցե խիզախի վճռի իմ նամակն ուղարկել իր յեղբոր՝ Միխայիլ Սեմյոնովիչ Կորսակովին, վորը թեև սիրալիր չի դեպի ինձ և այժմ առավել ևս բարկացած և ինձ վրա, բայց բարի ու ազնիվ մարդ և և սուորութիւն չի անի։

d) Մ. Ս. Կորսակովին հասցեագրված առընթեր նամակը ծրարել մի ուրիշ ծրարի մեջ և հասցեն գրելով՝ ուղարկել ուղիղ նրան փոստով. նորին գերազանցութիւն Միխայիլ Սեմյոնովիչ Կորսակովին՝ Արևելյան Սիբիրի գեներալ-նահանգապետին։—Ուղարկել խնդրեմ։

6. Տեղեկացնել ինձ ամբողջ արվածի մասին—և դրել՝

Նալբանդով—Պյոտր Ալեքսանդրովիչ Ցուրիկով։
Յես—Բրիկալով։
Կինս—Մարիա Ոսիպովնա։
Natalie—Ոլիմպիա Սերգեյեվնա Վինոգրադկա։
Բակունինները—Բաբարիկինները։

Ցեղբայրներս՝
Նիկոլայ—Պյոտր Սավելյեվիչ։
Պավել—Իլիա Միխայլովիչ։
Ալեքսեյ—Սերգեյ Ֆյոդորովիչ։
Ի. Ս. Տուրգենև—Լարիոն Անդրեյեվիչ։
Լիդով—Անդրեյ Իվանովիչ։
Կորսակովները—Պաֆնուտյեվները։
Միխայիլ Սեմյոնովիչ Կորսակով—Ալեքսանդր Պետրովիչ։
Կեաչեր—Կուլման։
Կվյատկովսկիները—Պանտելեյեվները։
Յուլիա Միխայլովնա Կվյատկովսկայա—Աննա Անդրեյեվնա։
Գերցեն—Բարոն Տիզենհաուզեն։
Նրա վորդին—Դիմիտրիյ Սերգեյեվիչ։
Ոգարյով—Կոտաերով։
Pan—Owander։
Czenceny—Reinolds։
Կեյսեև—Ռուդակով։
Թյագավոր—Գավրիլով։
Կոնստանտին Նիկոլաևիչ—Ռյումին։
Կառավարություն—Դուբնով։
Գաղտնի վոստիկանություն—Սլեպնյով։
Պոտապով—Pedrotti։
Շուվալով—Լամբերտ։
Իշխան Լոբանով—Մարտինով։
Գորչակով կամ մի ուրիշ արտաքին գործերի մինիստր—Սաֆոնով։
Հայերը—Ջհուդները։
Հույները—Թաթարները։
Թյուրքերը—Կոշկակարները։
Սլավոնները—Գերմանացիները։
Վրաստան, Կովկաս—Տուլա։
Հայաստան—Մոսկվա։
Թյուրքիա—Ղրիմ։
Աքսորված ես—Գործով և գնացել։
Պետերբուրգ—Աբո։
Ամրոց—Հրուշակարան։
Բանտ—արճճարան։

Ճերբակալութիւն—Table d'hote
Կրոնշտատ—Կռնչա։
Շլիսելբուրգ—Տադանրոգ։
Արևելյան Սիբիր—Ղրիմ։
Արևմտյան Սիբիր—Լիտվա։
Իրկուտսկ—Կալուգա։
Տոմսկ—Ոդեսա։
Ոմսկ—Պալտավա։
Մոսկվա—Մցենսկ։
Յեկատերինոսլավ—Ռյազան։
Տվեր—Ռյոլ։
Տորժոկ—Մորշանսկ։
Ոստաշկով կայարան—Կրասնոյե։
Պրյամուխինո—Դիբունոյե։

ԾԱՆՈԹԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Տուրգենեւ։
2 Նալբանդյանը։

3.

10 մայիսի, 1862 թ. Լոնդոն
10. Paddington Green. W.

Սիրելի բարեկամ, այդպէս եք դուք Փարիզից մեկնում։ Նստեցիք այդտեղ Տուրգենևի պես և այլևս վոչ մի ծպտուն։—Դե պարզ և, գործեր կան—յես էլ մի գործ ունեմ ձեզ հետ։—Պիտերում ինձնից նամակով ձեզ մոտ կղա Նիկոլայ Իլիչ Վլորոնովը, վորին անվանելու չենք Ալեքսանդր Պետրովիչ Վանդերման։ Ընդունեցեք նրան վորպես մեր բարեկամ և յերեքի[1] կողմից ձեզ հանձնարարված։ Նա մի ամուր ու խելացի խախոյ է, յերկար ժամանակ ապրել է Նովոռոսիյսկի յերկրում և լավ ճանաչում է կովկասը. հունիսին կլինի Պիտերում, իսկ սեպտեմբերին՝ Թիֆլիսում։ Նա կբանակցի ձեզ հետ մեր ապրանքները[2] Կովկասյան յերկիր հասցնելու նոր յեղանակի մասին։—Նրա կարծիքը հետևյալն է. Տրապիզոնից դեպի Կովկասյան ափերն են գնում թյուրքական մանր նավեր և մեծ քանակությամբ մաքսանենգ ապրանքներ են փոխադրում։ Իսկ լեռնցիները, ոգտվելով լեռներից դեպի ռուսական բոլոր պոստերը, այսինքն Սև ծովին մերձեցող վողջ գծի վրա, վայր փոխադրելու իրավունքից՝ վայրերի հետ հաճախ փոխադրել են նաև Լոնդոնի մեր արդելված ապրանքները։ Իսկ ռուսական գծի վրա դրանք մեծ հաճույքով են գնում և պատրաստ են մեծ գումար վճարել։ Ծուղումը պարզ է, պետք է ոգտվել դրանից և կարգավորել այն։

Սույնն ստանալուն պես, դրեցեք ձերոնցից մեկին, կոստանդնուպոլսի մի գործարար, առևտրական մարդու, վորի ազնվության ու գործարարության համար դուք կարող եք պատասխանատու լինել մեր առջև, և համոզեցեք նրան, վոր այս գործի մասին հարաբերությունները հաստատի տրապիզոնցի մաքսանենգների հետ—այնպես վոր նրանք մեզ վերադարձնեն ուղարկված ապրանքների Լոնդոնի գինը՝ գումարած նրանց փոխադրության

ծախսը Լոնդոնից Կոստանդնուպոլիս։ Համենայն դեպս ճնացած շահը թողնվում է նրան։ Յեթե Կոստանդնուպոլսում այդպիսի մարդ գտնվի, ապա խնդրեցեք նրան գրել ուղղակի ինձ հետևյալ հասցեյով, վորը դուք էլ գործածեցեք առիթ լինելիս. London. Mis. W. F. Wesche. 10. Paddington Green. W. For. remitting so Miss Eliza Jones.

Թող ձեզ անվանելով Monsieur Leonardi (հետագայումն էլ այս անունը գործածեցեք), ասի, վոր ձեր հրավերի հետևան վրա արել է այս կամ այն բանը, ցանկանում է այս կամ այն, առաջարկում է այս կամ այն, վորոշակի նշանակելով բոլոր ցանկությունները, պայմանները, պահանջները, ժամանակն ու հասցեն, վորով պետք է ուղարկվեն մեր ապրանքներն ու նամակները։ Ջանացեք գլուխ բերել այս գործը, սիրելի բարեկամ, վոչ միայն յես, այլ Privat-ն ինքն էլ նույնն է խնդրում ձեզնից։—Իսկ յերբ տեսնվեք պարոն Վանդերմանի հետ՝ տվորեցրեք նրան, թե Թիֆլիսում ում հանդիպի, վորպեսզի կարողանա հարաբերության մեջ մտել Կոստանդնուպոլսի մաքսանենգության գլխավորի հետ։ Համարձակորեն հանձնարարեցեք նրան ձեր առևտրական բարեկամները Թիֆլիսում կամ այլ տեղերում։ Մեր պարտքն է պատասխանատու լինել ձեզ նրա համար և նա պատրաստ է ծառայել ձեր շահերին ճիշտ այնպես, ինչպես ծառայում է մեր շահերին։

Կարդացեք ու այրեցեք։

Իսկ դուք ինձ չավիք մշտապես Փարիզում բնակվող ձեր բարեկամի հասցեն։ Այսպիսի մոռացկոտություն դովելի չէ։—Սպասում եմ շուտափույթ պատասխանի։

Ձեր Լեոնտի Ֆեոդորով Բրիկալով

Հավելում բառարանի

Յես—Լեոնտի Ֆեոդորով Բրիկալով։
Վորոնով—Վանդերման։
Մարկիզ դե-Տրավերսե—Կոմս։
Թյուրքիա—Ավստրիա։
Կոստանդնուպոլիս—Վիեննա։
Տրապիզոն—Տրիեստ։
Թիֆլիս—Բերլին։
Հովհաննյան յերկիրը—Պրուսիա։

Ահա ձեզ Պետերբուրգից ինձ հետ թղթակցելու ապահով ու միանգամայն անվտանգ միջոցը. ինձ գրած ձեր բոլոր նամակները—առանց վորևե հասցեյի—հանձնեցեք մարկիզ դե-Տրավերսեյին, Դուճարնայա փողոց, Պրակոպովիչի տունը։—Իսկ յեթե ուղարկելու լինեք՝ գրեցեք վրան՝ Պյոտր Ալեքսանդրովիչ Կուրդյումովին[3]։

Իսկ վորպեսզի կարողանաք նրա հետ ծանոթանալ՝ ներփակ ուղարկում եմ մի յերկտող՝ M-lle Serpouchowska (նա ինքն է) անվամբ. դուք միայն այդ յերկտողը տվեք նրան։

Ձեր Լ. Բ.

Մի լուրջ հարց, կարող եմ յես խնդասիրաբար դիմել պ. Paul Corisse-ին[1] և պատասխան կստանամ նրանից։

Այժմ գործերը նոր են ծավալվում։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն՝ Դերցենի, Ոգարյովի և Բակունինի։
2 Լոնդոնի ռուսական ազատ տպարանի հրատարակությունները։
3 Բակունինի կեղծանուններից մեկը։
4 Անհայտ։

4.

16—4 մայիսի, 1862 թ., Լոնդոն.
10. Peddington Green. W.

Սիրելի բարեկամ, յես բանակցեցի Ի. Ս-ի[1] հետ և ամեն բանի մասին պայմանավորվեցի։ Ամեն ինչ լավ է։ Այժմ գործում գործ կա։ Նորից կբռնկնում եմ՝ նրա վրա հաստատուն հույս ունենամ,—իսկ ձեզ վրա էլ ավելի։ Նա հայեցող, զվարճացնող բան և. դուք՝ գործունյա։ Վորպեսզի որևէ բան չմոռանա նա՝ յես նամակի ձևով մի հրահանգ գրեցի նրան։ Կարդացեք և սաքավիթի ոգնությամբ գործեցեք։ Անպայման ծանոթացեք մարկիզ դե-Տրավերսեյի հետ՝ Գոնչարնայա փողոց, Պրակոպովիչի տուն, նա ձեզ կոգնի իմ գործում։ Դուք կտեսնեք, վոր այն նամակը, որ ես գրել եմ Ի. Ս.-ի միջոցով յեղբայրներիս՝ ձեզ հետ ուղարկածիցս ավելի վատ է—վատ է նրա համար, վոր բոլորովին սառն է, բայց հակառակ դրան՝ քաղաքավարի յե։—Այո, յես վերջնականապես հավատս կորցրի նրանց հանդեպ։—Բայց և այնպես դուք պետք է վոր գործողությունն սկսեք նրանցից՝ թեկուզ խիղճը հանգստացնելու համար։—Հետո արեք այնպես, ինչպես գիտեք,—միայն թե ի սեր աստուծո, վերադարձրեք ինձ իմ սիրելի կնոջը, բերեք նրան ինձ մոտ՝ Լոնդոն։ Ցեթե կուզեք գրել ինձ—ձեր գրած ու ստորագրած նամակը տվեք, ինչպես գիտեք, մարկիզին։

Յես ձեզ կպատասխանեմ նույնպես նրա միջոցով։* ...մասին ձեզ կպատմի Ի. Ս.-ն և դրա համար էլ չեմ գրում, այլ միայն գրկում եմ ձեզ։

Ձեր Մ.

Յերբ դուք ինձ Պետերբուրգից գրելու լինեք՝ ապա վրան գրեցեք մարկիզ դե-Տրավերսեյին տված հասցեն։ Իսկ յերբ ինձ հասցեագրված նամակներ կուղարկեք նրան փոստով՝ ապա այսպես հասցեագրեք. Ս. Պետերբուրգ, մարկիզուհի Մարիա Նիկոլայեվնա դե-Տրավերսեյին։ Գոնչարնայա փողոց, Պրակոպովիչի տուն։ Պյոտր Ալեքսանդրովիչ Կուրդյումովին հանձնելու համար։

Այս ձևով գրվելու դեպքում նրանք առանց բաց արվելու ապահով կհասնեն ինձ։

---

* Ջնջծանված անուն։ Խմբ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1 Տուրգենևը։

5.

6 հունիսի—25 մայիսի, 1862 թ., Լոնդոն.*
10. Paddington Green, W.

Բարև ձեզ, իմ մեծահարգ Գյոտը Ալեքսանդրովիչ։ Արդյոք կարողացա՞ք բարեհաջող ուղևորություն կատարել մինչև Պիտեր։ Ի. Ս.-ն յեկավ ձեզ հետ, թե՞ մնաց Փարիզում։ Վերջապես տեսա՞ք Կոմսին[1] կամ Բաբարիկինների[2] մեկն ու մեկին և ի՞նչ արիք Բրիկալովի գործի վերաբերյալ։—Մարիա Ոսիպովնայի մասին վորևե լուր կա՞ արդյոք, գրեցի՞ք դուք նրան։ Կարող եք պատկերացնել, թե ինչպիսի անհամբերությամբ եմ սպասում ձեր նամակներին։—Ուղարկում եմ ձեզ այն բրոշյուրը, որ խնդրել եյիք ձեր բարեկամի համար՝ ֆոտոգրաֆական լուսվով—այսինքն կուղարկեմ, յեթե Պանն այն ստացել և և տա ինձ այսորը։—Այս մասին յերեք որ առաջ եմ գրել նրան, բայց դեռ վոչ մի պատասխան չեմ ստացել—այժմ ինքս կգնամ նրա մոտ։—Ինչքա՞ն տա, այնքա՞ն էլ կուղարկեմ—չի՞ վոր նա հանդուգն է։—Շնորհակալություն լուսանկարի համար։ Յերկուսը վերցրի ինձ՝ մեկը նատած, մյուսը կանգնած—ահա թե ձեզ ինչքա՞ն եմ սիրում, վոր նույնիսկ Յունիոբին նվղացրի։—Դուք կուրախանայիք, յեթե տեսնեյիք, թե ինչպիսի ուրախությամբ և Բարոն Տիզենհաուզենը[3], և նրա բարեկամ Կոստերովը[4] ձեր նկարներն ընդունեցին ինձնից։—Ել չեմ խոսում Պանի մասին—նա այժմ թունդ զբաղված է տևևորով։—Բարոնն իր բարեկամի հետ մի քանի որով գնաց isll of witr, բայց ես նատած եմ տանը, աշխատում և կարլսբադի ջրեր խմում՝ ծովափին սպասելով բարեննպաստ յեղանակի։—Գրեք բոլոր ծանոթների մասին—ի՞նչ և անում Դուբնովը[5]։

Ձիշտ և արդյոք, վոր Ռյումինը նշանակվում է Լեհաստանում աշխատելու։—Ի՞նչ նորություն կա ձեզ մոտ, գրեցե՞ք—իսկ գլխավորը, ի սեր աստուծո, խթանեք Լարիոն Անդրեյեվիչին[6] գործ անելու։ Դուք էլ, ասում են, լավ գործ եք ձեռնարկել, ֆրանսերեն եք սովորում—իսկ ձեզ խրախուսելու համար Լարիոն Անդրեյեվիչին մի հիանալի, ընդարձակ բառարան տվի, ավելի լավը, քան այն, վոր առաջ տվել եմ ձեզ։ Նատեք և ամբողջովին արտագրեք և այն ժամանակ իրոք որ ի վիճակի կլինեք ինձ մի ճիշտ ֆրանսերեն նամակ[7] գրելու։

Բավական է ինչքան փչեցի, Ձեզ բարով։

Ձեր անձնվեր
Մ. Բրիկալով

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Մարկիզ դե-Տրավերսեյին։
2 Բակունինների։
3 Գերցենը։
4 Ոգարյովը։
5 Ռուսական կառավարությունը։
6 Տուրգենևին։
7 Այսինքն՝ պայմանական բանալիով նամակ գրել Ի. Ս. Տուրգենևն անդուլա Բակունինից ստացել և այդ բառարանը, սակայն հետագայում կարականապես հերքեց այդ։

* *Լեմկեյի մոտ «18 մայիսի»։*

Հունիսի 16—4, 1862, London.
10. Paddington Green. W.

Սիրելի բարեկամ, դուք բարի և հավատարիմ բարեկամ եք։ Ձեր վրա տարածությունը չի ազդում և ձեր զգացմունքները հավիտյան նույնքան ջերմ են, վորքան և մտիկ։ Ձեր վրա չե նաև մեր ամբողջ հույսը։ Ժամանակն անցնում է, իսկ կինս անպատճառ պետք է Փարիզում լինի, ուր սեպտեմբերին կամ հոկտեմբերից վոչ ուշ ուղևորվելու համար, վերջապես, իրավունք ստացա։ Դատեցեք. փողը նա կստանա Պետերբուրգից ուղարկելուց ուղիղ մեկ ամիս հետո, յերկու շաբաթ էլ պետք կլինի պատրաստվելու և ուղեկիցներ գտնելու համար, մեկ ամիս կտևի Իրկուտսկից—գյուղ, մոր մոտ գնալը, իսկ հետո՝ արտասահման։ Այսպիսով ժամանակը չպետք է կորցնել։ Յես հուսով եմ, վոր Ի. Ս.-ն և դուք արդեն փողը, այսինքն 1500 ռուբլին, ուղարկել եք նրան։ Այժմ պետք է մտածել նրան Ռուսաստանից արտասահման ճանապարհ գցելու մասին։ Ամբողջ հույսը ձեր և Ի. Ս.-ի վրա յե։ Դուք, անկասկած, արդեն տեսնվել եք կամ նրբորս՝ Պավլի կամ նրա կնոջ Նատալիա Սեմյոնովնայի հետ, որն այժմ ապրում և Պետերբուրգում (կարծեմ Սերգեևսկայա փողոցի վրա, Բանտիշ-Կամենսկու տանը), հանձնել եք նրանց իմ նամակները և խոսակցել նրանց հետ ինչ վոր անհրաժեշտ եր։

Յեղեք ինձ հետ լիովին անկեղծ, յես այդ խնդրում եմ, յես այդ պահանջում եմ ձեզանից հանուն մեր ընկերության։ Ասացեք. արդարացի յե իմ գանգատները նրանց մասին, վոր կողմից վոր լինի, թե վոչ։ Ինչու նրանք չեյին գրում կնոջս, ինչու նրանք ինձ չեյին գրում։ Ինչու ընդհանրապես այս գործում թե նրա նկատմամբ և թե իմ նկատմամբ իրենց ցուցաբերեցին այդքան անտրամադիր և անհոգատար։ Սառնությունն եր արդյոք դրա պատճառը, անկարողությունը, թե յերկուսը միասին։ Ասացեք ճշմարտությունը, և յես ինչպես կցանկանայի, վոր այդ ճշմարտությունը նրանց կողմը լիներ։ Վողջ կյանքումս յես հավատացել եմ նրանց, գժվար և ծերության օրերին հրաժարվել սիրած սովորություններից. համենայն դեպս, հանուն բարեկամության յես ձեզանից ճշմարտությունն եմ պահանջում։

Կրկնում եմ, վոզջ հույսը ձեր և Ի. Ս.-ի վրա յե։ Տվեք ինձ կնոջս։ Առայժմ յես նրան առանձին չեմ գրում, վերջերս եմ գրել, բայց սպասում եմ նրա նամակին, և ձեր նամակներին, շատ և հաճախակի նամակներին, վորպեսզի, իմ սիրելի բարեկամ, իրազեկ լինեմ ինձ համար այդքան թանգագին գործի ամեն մի գործողության, ամեն մի առաջ անցած քայլի մասին։ Դժվար թե այս նամակը ձեզ Պետերբուրգում գտնի։ Ձեր բրոշյուրները այս քանի որս ստացա և մի չորս օրից կուղարկեմ ձեզ յերկուսը։ Կոստերովը[1] նույնպես հանձն առավ մի քանի օրինակ ուղարկել ձեզ։

Ջե, ավելի լավ և գրեմ ըստ Ի. Ս.-ի բառարանի, արտադրեցեք և կոզտապրծենք այն, նա ավելի լրիվ և և հարմար։ Այսպես ուրեմն, հենց վոր Յելիզավետա Սեմյոնովնան[2] կժամանի, Սերգեյ Պավլովիչ Կրասոտկինը[3] կուղևորվի Վալենտինայի[4] մոտ, վորի հետ այժմ մեծ գործեր են բացվել

Ռոստիսլավ Ռոստիսլավիչի[3] հետ միասին, նրանց մոտ նույնիսկ փող է բևեռացել։ Singli Gentleman-ը խիստ հոդում է նրանց և նույնիսկ մեր Ագաֆոկլեայի[2] մասին։ Իսկ դուք ինչ կասեք Ռյումինի[3] դեպի Ալեքսանդրովակ[4] ճանապարհորդության և Վառվառա Տրաֆիմովնայի[3] և M-lle Julie Boret-ի[2] նոր, կարծես թե մտերմական բարեկամության մասին։ Հազիվ թե Իվան Իվանովիչի[2] գործերը հաջող գնան, թեև Ռոստիսլավի[3] վիճակն ավելի լավ է, բայց էլի անվտանգ չէ։ Նա պետք է զգաստ լինի, նույնիսկ Լև Լվովիչը[2] կարծես թե խելոքացել է, Ռոստիսլավի ընկերությունն է փնտռում և ի լուր բոլորի հրաժարվեց իր բացառիկ անտեղի պահանջներից։ Ագաֆոկլեյան շատ հիվանդ է, նրան չի ոգնի նույնիսկ miss Fenny Eygerton-ի[2] ընկերությունը, իսկ Լեոնտինա Վասիլևնան[2] սարսափելի տատնատանների մեջ է։ Ցեվգենիա Մակարովնան[2] արդյոք մի բան անում է։ Նրա մասին վոչ մի լուր չկա։

Այս նամակը ձեզ կհասնի ձեռքից ձեռք անցնելով, բայց դուք այրեք այն։ Ձեռ Ի. Ս.-ի տված բառարանը դիտմամբ ոգտագործեցի, վորպեսզի դուք արտագրեք այն. նա մեզ ոգտակար կլինի։ Ավելացնում եմ նաև, վոր մենք վերջապես հանդիպեցինք մի քանի հոգու հենց Ալեքսանդրովսկից, վորոնց հետ կարող ենք շատ կապվել. բարեկամացանք նույնպես այնտեղ ապրող Վերա Նիկոլայեվնայի հետ, վորը վոչ միայն մեզ հետ համաձայն է, այլև հերոսական ինքնազոհությամբ վճռականորեն գործ է պահանջում[5]։ Աչքի լույսի պես պահպանեցեք Պյոտր Ալեքսանդրովիչ Ցուբրիկովին[6], նա վոսկի մարդ է։

Դե, սիրելի բարեկամ, բավական դուրս ավեցի, կարդացեք և հասկացեք։

Վերադառնում եմ իմ գործին։ Նախորոք վորոշեցեք պլանը, այսինքն կհնօրհ Ռուսաստանից արտասահման ճանապարհ գցելու ժամանակը, ուղին և ուղեկիցը։ Շատ լավ կլիներ, եթե կարողանայիք դուք լինել ուղեկիցը։ Ամեն ինչի մասին խոսակցեք Ի. Ս.-ի հետ և [անընթեռնելի մի բառ] աշխատեցեք մոտենալ Նատալիա Սեմյոնովնային, նա կարծես վոսկի հոգի չէ։

Մնաք բարև, Ջեր Մ.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ոգբյովը
2 Այս անձնավորությունները անհայտ են։
3 Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլայեվիչը։
4 Վարշավա։
5 Խոսքն այստեղ Վարշավայի լեհերի մասին է։
6 Նալբանդյանին։

7.

5 հուլիսի / 23 հունիսի 1862 թ.

Սիրելի բարեկամ—ուղարկում եմ ձեզ ևս 10 որինակ խոհարարական գիրք[1]։ Սրանով ընդամենը ուղարկված կլինի 14։ Ցեթե ցանկանաք՝ ելի կուղարկեմ։ Շնորհակալ եմ ձեղնից այն ամենի համար, որ արիք ի ոգուտ Մարիա Ոսիպովնայի[2]։ Բրիկալոժի[3] այժմ հույս ունի շուտով հանդիպել

նրան—նա հավատացած է, որ դուք չեք քնի և չեք միամտի՝ մինչև որ չավարտեք գործը։—Հույս ունի անդամ, որ դուք անձամբ կբերեք նրան Ռիբնոյեյից[4]։—Միայն թե վախենում է, որ անհրաժեշտ դումարը հավաքելու համար ավելի ժամանակ պետք կլինի, քան թե նշանակված է և դրա համար էլ Պրեյվատից 80 ֆունտ [ստեռլինգ] է վերցրել, որը և նա կուղարկի Ոլիմպիա Սերգեյեվնային[5] սույն նամակը հանձնողի՝ Պավել Ալեքսանդրովիչ Վետոշնիկովի (հարցնել Froom Gregory et Comp.-ին՝ Պետերբուրգում) հետ, որին յես հանձնարարում եմ ձեզ, որպես հավատարիմ մարդ և որի միջոցով կարող եք վարել ձեր առևտրական թղթակցությունը[6]։—Ավելի մոտ ծանոթացեք նրա հետ։

Գործերը մի կերպ առաջ են գնում. ճարպը ընկել է—ցորենը մի քիչ բարձրացել[7]։ Այստեղ չգիտեն, ինչ մտածեն ձեր հրդեհների մասին։—Մի քանի ուսանողներն իսկապես մասնակցել են դրանց։ Մի տեսակ անհավատալի յե։ Գրեցեք ձեր մասին, ինչպես եք ապրում և յուրը՝ ո՞ւր կլինեք։ Ձե՞րը կվերադառնաք Պիտեր։—Ցեթե ուղարկվող 80 ֆունտը պետք չե, յեթե առանց դրան կարելի յե յոլա գնալ՝ թող Ոլիմպիա Սերգեյեվնան հետ ուղարկի։ Բայց դրա մասին ինքս կգրեմ նրան, իսկ դուք խոսեցեք։

Մնաք բարով, ձեզ նվիրված

Լեոնտի Բրիկալով

ՏԱՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Իրապես ուղարկվում էր Նալբանդյանի Սիմեոն Մանիկյան կեղծանունով տտորատրած «Ցերկրագործության, որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը։
2 Բակունինի կնոջ՝ Ա. Բակունինայի ծածկագրով պայմանավորված անունը։
3 Բակունինը։
4 Պրյամուխինոյից։
5 Բակունինի կնոջը։
6 Ինչպես տեսանք, փող չէր ուղարկվում Բակունինի կնոջը։
7 Պարզապես նամակին առևտրական բնույթ տալու նպատակով և մտցված։

8.

6 հուլիսի / 25 հունիսի Լոնդոն. 1862.

Սիրելի բարեկամ—շնորհակալ եմ Ձեզնից իմ գործում ցուցաբերած Ձեր մասնակցության համար։—Բայց ինչո՞ւ չեք գրում։ Ցեթե չգիտեք ինչպես, ապա ձեր նամակները հանձնեք Նատալիա Սեմյոնովնային, որի հետ Դուք անկասկած ծանոթացել եք, և որը ձեզ կտա այս նամակը։—Գրեք վերջապես, և՛ մանրամասն, և՛ շուտ։ Գալու յեք Դուք մեզ մոտ, թե՞ ոչ։ Ինչպես են Ձեր գործերը—թե՛ ընդհանուր, թե՛ մասնավոր։ Միամտե՞լ եք Դուք մի քիչ—ինչպես և M.-lle Albrecht-ը։ Մի քանի շարունակում և մանավարժական յերազներով տարվել։ Ինքներդ մի մոլորվեք վշտում, բայց միակ հշմարիտ ուղուց—սիրեցեք և մի մոռանաք Ձեր անձնվեր

Պ. Կուրդյումովին։

Բարեկամ Նալբանդովին Գերցենից, Ոգարյովից և ինձնից ընդհանուր և սրտանց վողջույն։ Մենք խնդրում ենք ձեզ ընդունել սույնը հանձնող Ա. Ն. Նիչիպորենկոյին վորպես մեր բարեկամին, վորին դուք անպայման կարող եք նույնպես վստահել, ինչպես մեզ։

Hôtel de Louvre, 128.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բակունինի այս յերկտողը Նալբանդյանին գրված է այցետոմսի վրա։

ՈԳԱՐՅՈՎԸ ՅԵՎ ԳԵՐՑԵՆԸ
Ն. Ա. ՍԵՐՆՈ-ՍՈԼՈՎԵՎԻՉԻՆ

Վաղուց չեր հաջողվում գրուցել ձեզ հետ, սիրելի բարեկամ։ Կյանքի դժվարին րոպեին մենք մի տեսակ անջատված ենք և կարճ լուրերը բավականաչափ կերակուր չեն տալիս մանրամասնություններին ծարավի մարդկանց։ Բայց կյանքի դժվարին րոպեն՝ տատանվելով մի կողմից մյուսը՝ աշնանամուտին անց կկենա։ Նույնիսկ այնքան ճշմարտապես անց կկենա, վոր բոլորովին անհետ կկորչի։ Ցավ ի՞նչ կլինի։ Կլինի մի ընդհանուր ֆոնդ—վոչ թե դժվարին րոպեյի, այլ ծանր ժամանակի։ Ինձ թվում է, վոր զեմսկի սոբորի անհրաժեշտությունը պարզելը դառնում է պարտադիր գործ։ Նահանգական զեմսկի գումարները, վորոնց մասին մարգարեյանում են հաղարամյակի առթիվ՝ կես տարով մոքերը հանդարտեցնելով՝ ընտրություններում կտան հարմարության մի նոր տարր և նորից կհանդեցնեն զեմսկի սոբորի անհրաժեշտության։ Կգումարվի՞ նա արդյոք։ Կլինի արդյոք նա ինչ-վոր անցողիկ բան, թե՞ իրապես կկազմակերպի—չգիտենք։ Բայց յես կարծում եմ, վոր վերջին բոլոր դեպքերից դուք կհամոզվեք, վոր գրական հերյուրանքների առթիվ իմ չարանալը բոլորովին դատարկ չեր. իմ չարանալը նրանից եր, վոր յես ընդհանրապես Պետերբուրգի իրարանցման յելքը չեմ տեսնում։ Այդտեղ կենդանի կյանք չկա, ապագայի կառուցում չկա և արմատական շարժման ու բարեփոխման համար տեղ չկա։ Դարձյալ վերադառնում եմ իմ թեմային, շշնջում ու գոռում եմ այն ձեր ականջին, վորպեսզի շարունակ հետապնդի ձեզ—կենդանի կյանք գավառներում. յեթե գավառներում արմատ չունեք՝ ձեր գործը բողբոջ չի տա։ Ցես նույնիսկ ուրախ եմ, վոր Պետերբուրգը վորևե բան անելու ուժ չունի, վորովհետև ինչ ել վոր անի՝ միշտ մխիթարությունը կունենա—գավառների վրիժառության։ Դե, պարզաբանեցեք...* գավառներին և բարեկամներ վինտռեմ։ Դուք միայն գավառներում կգտնեք ժողովուրդ, և վոչ ցեք գավառներում։ Դուք միայն գավառներում կգտնեք ժողովուրդ, և վոչ թե քաղքենի—կառապանների, վորոնց ամենից ավելի քիչ հասկանալի յե արմատական նպատակը՝ զեմսկի հողը։

Ցավում եմ յես յերիտասարդությանը, վորին չեմ մեղադրում, վորովհետև յերիտասարդության համար մեղադրել չի կարելի. դա ֆիզիոլոգա-պա-

* Մի բառ անընթեռնելի։ Խ մ բ։

Թոլոդիական յերևույթ է և շուտ ել անց և կենում։ Ցավում եմ և ձեր քաղքենի—կառապաններին—նրանք մեղավոր չեն։ Վերնախավերի երկպառակությունը արդեն այնքան մեծ է, վոր իրար չեն կարող հասկանալ և նրանց մերձեցումն ամենից քիչ հնարավոր է Նեվսկի գետափի վրա կամ Մարսյան դաշտում.—այն հնարավոր է միայն Սև ու Կասպից ծովերի գետերի ափերի վրա։

Թողեք, վոր մեռելները թաղեն մեռելներին։ Աշխատեցեք գավառներում։

Պինդ գրկում եմ ձեր յերկուսիդ։ Ի սեր աստուծո, ավելի շատ լուրեր հաղորդեցեք։ N-ը[3] վոսկի հոգի ունի, նվիրված և անշահախնդիր, նվիրված և միամտորեն՝ սրբության հասնող չափով*։

Կարծեմ թե խոսքը մեր հեռացած արևելյան բարեկամի մասին եւ։ Բարեւեցեք նրան—նա դերազնվագույն մարդ է. ասեք նրան, վոր մենք հիշում ու սիրում ենք իրեն։

Ներփակ ուղարկում եմ պաշտոնական նամակը և յեթե նա այնպես չի գրված՝ ապա յես պատրաստ եմ մի ուրիշը գրել։ 10% յես ղուբ տեղ նշանակեցի,—պակասեցրեք և ավելացրեք, արեք ինչպես գիտեք։

Ամոռտանալու համար մի փոքր խնդրանք ևս ավելացնեմ։ Յեթե ղուբ, սիրելի բարեկամ, չեք կարող նամակներով գալ՝ ապա գրեցեք այնպես, վոր հնարավոր լինի գոնե կեսը վերծանել։ Մենք վողջ որը չարչարվեցինք՝ ելի ամբողջը չհասկացանք։ Կիրակնորյա դպրոցների վոխարեն՝ յես կգառնամ...**

Իսկ ղուբ մի՛ բարկանաք։

Ի՞նչպես է "Совр[еменный] Летоп[ись]"-ը[4]։ Մ՛յ թե յես գլխեցի ձեր քրիզեիսներին (Ապոլլոնի քրմուհիները)—կատ[կովին] և Լևոնտ[ևիին]։

Յեթե շուտով առիթ ներկայանա՝ գրեք։ Ճանաչո՞ւմ եք ղուբ պ. Պեբեցինին[5]։ Թվում է, վոր նա շատ լավ ու կրթված մարդ է։

Տվեք ձեր ձեռքը։ Այսոր գլուխս ցավում է—հենց դրա համար ել ցնդաբանությունն եմ միայն գրել։

Մենք պատրաստ ենք հրատարակել Совр[еменник]-ն[6] Ձերնիշ[խկու] հետ այստեղ կամ թե Ժնեվում։ Այս առթիվ առաջարկությունդ տալագրե՞լ։ Ի՞նչ եք կարծում։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 1862 թ. սեպտեմբերի 8-ին յենթադրվում եր տոնել Ռուսաստանի 1000-ամյակը։ Այդ որը սպասվում եր պրոգրեսիվ հասարակության համար այս կամ այն չափով ցանկալի ամեն տեսակի մանիֆեստներ։ Սակայն շուտով այդ հույսերը վերացան։

2 Ակնարկում է մայրաքաղաքային ռեֆորմատորներին, վորոնք ժողովրդին ուսումնասիրում են ըստ Պետերբուրգի կառապանների։

3 Այս տառով, իսկ հետագայում Հարևելյան բարեկամ անվան տակ թաքնված եր Մ. Նալբանդյանը։

4 Ամենորյա լրագիր, վոր հրատարակվում եր Մոսկվայում 1861—62 թ.թ., վորպես հավելված „Русский Вестник"-ի։

---

* Մինչ այստեղ նամակը գրել է Ոգարյովը, հետո՝ Գերցենը։ Խ մ.։

** Հաջորդ բառը անընթեռնելի յե։

5 Պերևոցը այն առևտրներից էր, որոնք հաճախում էին Գերցենին 1862 թ. ամռանը։ Հետագայում նա ծառայում էր III բաժանմունքում։

6 „Современник“, գիտական, քաղաքական և գրական ժուռնալ։ Հրատարակվում էր Պետերբուրգում 1836—1866 թ. թ.։ „Современник“-ի հիմնադիրը յեղել է Ա. Ս. Պուշկինը, 1847 թվից „Современник“-ի խմբագիր-հրատարակիչներն են դառնում Ն. Ա. Նեկրասովը և Ի. Ի. Պանայեվը։ Նեկրասովի ջանքերի շնորհիվ „Современник“-ը դարձավ իր ժամանակի ամենաառաջավոր որգանը, նա կարողացավ գրական լավագույն ուժերը համախմբել իր շուրջը. Վ. Գ. Բելինսկին նրա քննադատական ուղղության առաջատարն էր։ 1856 թ. փայլուն շրջան է սկսվում „Современник“-ի համար, յերբ նրա գլուխն է անցնում Ն. Գ. Չերնիշևսկին և վորոշ ժամանակ անց՝ Ն. Ա. Դոբրոլյուբովը։ Ժուռնալը դարձավ իր եպոխայի ամենաառաջավոր և մարտական որգանը։ Դոբրոլյուբովի մահով (1861) և Չերնիշևսկու ձերբակալումով (1862) ժուռնալը մեծ կորուստ կրեց։ 1862 թ. ժուռնալի հրատարակումը դադարեց վեց ամսով, իսկ 1866 թ. № 4-ից հետո՝ վերջնականապես փակվեց։

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՏՈՒՐԳԵՆԵՎԻՑ

1.

ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Պ. Նալբանդովի բոլոր ցուցմունքները միանգամայն ճշմարիտ են, և յես կարող եմ ավելացնել նրանց մի քանի մանրամասնություններ և բացատրություններ։ Բակունինը իր՝ Սիբիրում եղած ժամանակ ամուսնացավ Իրկուտսկի մի չինովնիկի աղջկա հետ, Լեհուհի։ 1861 թ. ամռանը իր փախուստի ժամանակ Սիբիրից նա ստիպված եր թողնել կնոջը Իրկուտսկում, և հասնելով Լոնդոն, սկսեց հոգալ այն մասին, ինչպես նրան բերել տալ յեթե վոչ արտասահման, գոնե Տվերի նահանգի, Նովոտորժոկի գավառի Պրյամուխինո գյուղը, վորտեղ ապրում է Բակունինի ընտանիքը՝ կազմված մի քանի յեղբայրներից և քույրերից։ Բայց այս մտադրության կատարման առջև ծառանում էին մի շարք կարևոր դժվարություններ։

Հյոսելով արդեն Իրկուտսկից Լոնդոն հեռավորության և անմիջական հաղորդակցության անհնարինության մասին, Բակունինի կինը փող չուներ այդքան յերկարատև ճանապարհորդություն կատարելու համար և պարտքեր ուներ. սրա հետ մեկտեղ ինքը՝ Բակունինը համոզված չեր այն բանում, կցանկանան իր յեղբայրները և քույրերն ընդունել նրան իրենց տունը, քանի վոր, ինչպես ինքն եր յենթադրում, իր հարաբանիքը նրանց հաճելի չեր։ Բակունինի յեղբայրներից յերկուսը՝ Նիկոլայն ու Ալեքսեյը պահվում էին Պետրոպավլովսկի բերդում, Տվերյան ազնվականների ադրեսի գործով։

Տեսակցելով ինձ հետ Լոնդոնում անցյալ տարվա մայիս ամսին, Բակունինը դիմեց ինձ՝ համառորեն խնդրելով ոգնել իրեն այդ գործում, և յես նրան չմերժեցի։ Յես նրան չմերժեցի, ի միջի այլոց, և նրա համար, վորովհետև վերջնականապես հեռացել էի նրանից իմ բոլոր համոզմունքներով։ Յես իմ դիմաց տեսնում էի վոչ թե քաղաքական ագիտատորականի, վորի հետ վաղուց ի վեր վոչինչ ընդհանուր չուներ, այլ մի մարդու, վորը վշտի մեջ եր, յերիտասարդական շրջանի հին ընկերոջ, վորին ոգնելը հրահանգում եր կարեկցությունը և չեր արգելում խիղճը։

Հենց նույն մայիս ամսում և հենց նույն առիթով յես Փարիզում ծանոթացա պ. Նալբանդովին, տեսնվեցի նրա հետ 3—4 անգամ, իսկ խոսել եմ նրա հետ բացառապես Բակունինի կնոջը Սիբիրից Տվերի նահանգը տեղափոխելու միջոցների մասին։ Պետերբուրգ գալով, յես ամենից առաջ ցանկացա տեղեկանալ, համոզվել, իրոք Բակունինի ընտանիքը չի ուզում նրա կնոջն իր տուն ընդունել։ Դրա համար ինձ պետք եր տեսնվել Բակունինի՝ բերդում գտնվող յեղբայրների հետ։

Ա.ռանց Ս. Պետերբուրգի գեներալ-գուբեռնատոր իշխան Սուվորովի թույլտվության այդ անհնարին եր։ Յես ուղղակի իշխանին դիմեցի, անկեղծորեն բացատրվեցի նրա հետ և իշխանը, ինձանից խոսք վերցնելով, վոր իմ խոսակցությունը Բակունինի յեղբայրների հետ կշրջափակի միայն մասնավոր գործեր, ինձ հնարավորություն տվեց տեսնվել նրանց հետ բերդում։ Նրանք անմիջապես հայտնեցին ինձ իրենց պատրաստակամությունը՝ ընդունել իրենց յեղբոր կնոջը։ Իրկուտսկից Տվերի նահանգը փոխադրելու համար մեռում եր դրամական միջոցներ հասցնել նրան։ Այդ ժամանակ Բակունինը միջոցներ չուներ, յես առաջարկեցի իմը և պ. Նալբանդովից արծաթով ստացած 300 ռուբլու հետ միասին իմ 200 ռուբլին հասցրի Բակունինի յերբորդ յեղբոր՝ Պավլի կնոջը, վորն այդ միջոցին գտնվում եր Ս. Պետերբուրգում։ Այդ փողերը վորքան հայտնի յե ինձ, հասցվեցին Բակունինի կնոջը, Իրկուտսկ, և ինքը՝ կինը, կարծեմ վերջերում փոխադրվել եր Տվերի նահանգը։ Յես հենց այդ ժամանակ նամակ ուղարկեցի Բակունինին, վորի մեջ տեղեկացրի ամեն ինչի մասին, ինչ վոր արված եր նրա կնոջ համար։ Սրանով ինձ համար գործն ավարտված եր։ Իրենն՝ Բակունինի կնոջը յես յերբեք չեմ տեսել և չեմ ունեցել վորևե հարաբերություն նրա հետ։

* * *

Պ. Նիչիպորենկոն ինձ մոտ յեղավ Փարիզում, անցյալ գարնանը մեկ թե յերկու անգամ, յերբեք վոչ ավելի, և կարողացավ տեսնվել ինձ մոտ պ. Նալբանդովի հետ, վորը մոտավորապես այդ ժամանակ այցելում եր ինձ։ Այցետոմսի հանձնման մասին յես վոչինչ չգիտեի, բայց այդ բանում անհավանական վոչինչ չկա։ Պ. Նալբանդովը ինձ հայտնի յեր իբրև Բակունինի ծանոթը, վորը սրտին մոտ եր ընդունել նրա կնոջ գործը։ Կարող եմ հավատացնել (և պ. Նալբանդովը կհաստատի իմ խոսքերը), վոր մեր շատ սակավաթիվ տեսակցությունների ժամանակ խոսքը բացառապես ընթանում եր Բակունինի ընտանեկան գործերի շուրջը և քաղաքականության չեր վերաբերում։ Պ. Նիչիպորենկոյին յես ավելի քիչ եմ ճանաչում։ Յես նրան թեթևակի հանդիպել եմ Ռուսաստանում, մոտ յերեք տարի առաջ։ Անցյալ աշնանը յես, ի զարմանս իմ, մի ինչ վոր գերմանական ժուռնալում կարդացի, վոր պ. Նիչիպորենկոն ձերբակալված և Իտալիայում, իբրև Բակունինի ագենտ։ Չեմ կարող դատել, թե այդ վորքան արդարացի յե, բայց կարող եմ հաստատապես ասել, վոր յես միայն այն ժամանակ իմացա, վոր պ. Նիչիպորենկոն զբաղվում և պրոպագանդայով։ Ընդհանրապես

յես պետք է նշեմ, որ լոնդոնյան աքսորականներին, որոնք ինձ հետ չեն խզել անձնական կապերը, քաջ հայտնի չի իմ մտածելակերպը, և դրա համար, յերբ նրանց պատահում եր իրենց հայրենակիցներին ուղարկել ինձ մոտ, գերազանցապես իրրև գրականագետի մոտ, նրանք մի կողմ եյին թողնում քաղաքական խնդիրները։

* * *

Իմ նախընթաց պատասխաններից և Բակունինի սեփական ձեռքով գրված նամակների պատճեններից յերևում է, հուսով եմ, բավականաչափ հստակությամբ, որ միակ կապը մեր միջև հանդիսացել է իմ խոստումնքը՝ ստեղծել հնարավորություն նրա կնոջը վերադառնալ Սիբիրից Տվերյան նահանգ և հետո անձնական ոժանդակությունը նրան։ Անհավանական չե, որ Բակունինը չափազանց մտահոգված իր կնոջ վիճակով և վշտացած իր բարեկամների լուռությամբ—մտադրվել է տալ ինձ բառարանի նման մի բան կամ պայմանական բանալի, հեշտացնելու իմ հնարավորությունները նրա անունով նամակ գրելու. յես նույնիսկ հիշում եմ, որ ինձ հետ տեսակցության ժամանակ, անցյալ տարի մայիսին Լոնդոնում նա ինձ ասում եր, որ հարկ յեղած դեպքում կարելի չի կնոջը տղամարդու մի անունով կոչել, իսկ Իրկուտսկ քաղաքը, ուր նա այն ժամանակ գտնվում եր, մի այլ տղամարդու անունով։ Յես համաձայնեցի նրա հետ, չնայած դրանում առանձին անհրաժեշտություն չեյի տեսնում, բայց համենայն դեպս Բակունինը չկատարեց իր դիտավորությունը և ինձ վոչ մի ընդարձակ բառարան չտվեց. նա, ըստ յերևույթին, այդ մասին գրել է պ. Նալբանդովին։ Ցավ նրա ինչին եր պետք տալ այդպիսի բառարան մի մարդու, որի մասին ինքը գրում եր, թե նա պատկանում է «հակառակ բանակին», որի հետ նա վորոշեց վերջացնել բոլոր քաղաքական վեճերը՝ իրրև անարդյունք մի բան։ Կրկնում եմ, նա կարող եր դիտավորություն ունենալ հայտնել ինձ բանալին կամ բառարանը, հեշտացնելու թղթակցությունը կնոջ մասին, բայց այդ մտադրությունը նա չիրագործեց։ Իսկ յես, ինչպես վերը ասված է, յոլա գնացի առանց վորևե բանալու և նրան նամակ գրեցի, որի մեջ ուղղակի պատմեցի ամեն ինչ, ինչ վոր արված եր նրա կնոջ համար։

* * *

Պ. Նալբանդովի ցուցմունքներում ինձ համար նորությունը մարկիզ դե-Տրավերսեյի հետ ունեցած իմ տեսակցության մասին յեղած հիշատակությունն եր։ Յես, իրոք, տեսնվել եմ մարկիզ դե-Տրավերսեյի հետ, յերկու անգամ նույն, այն է՝ Բակունինի կնոջը փող գտնելու գործով և ուրիշ վոչ մի բանի մասին նրա հետ չեմ խոսել։ Նա, վորքան հիշում եմ, տվեց 100 ռուբլի և հանձնարարեց ինձ տիկին Բակունինային, Պավել Ալեքսանդրովիչ Բակունինի կնոջ հասցեն, որի միջոցով դրամն ուղարկվել եր Իրկուտսկ։ Պ. Նալբանդովը հիշատակել եր իր ցուցմունքներից մեկում իմ միջոցով ստացված Բակունինի ինչ-վոր նամակի մասին, բայց հետո ինքը չնչել եր

իմ անունը, հիշելով վոր այդ նամակը հանձնարարված եր իրեն մարկիզ դե-Տրավերսեյի կողմից։ Ինձ մնում և հաստատել այդ ցուցմունքը այն իմաստով, վոր չես իրոք վոչինչ չեմ իմացել այդ նամակի մասին։ Բացի այդ, չես պետք և կրկնեմ արդեն իմ պատասխաններում բացատրածը— Բակունինը իրոք ինձ իր ցանկությունն եր հայտնել տալ բառարան, հեշտացնելու համար գրագրությունը նրա կնոջ մասին, նրա՝ Սիբիրից Տվերի նահանգ ճանապարհորդելու մասին և այլն։ Բայց այդ բառարանը նա ինձ չի տվել և չեթե դրել և այդ մասին ապա կամ հիշողությունը նրան դավաճանել և կամ նա գործել և ինձ անհայտ նպատակներով։

2.

ՏՈՒՐԳԵՆԵՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Սիրելի Նալբանդով,

Ցես գնում եմ վաղը, միայն վոչ թե առավոտյան ժամը 7-ին, այլ յերեկոյան ժամը 5-ին։ Ցեթե դուք կգնաք առավոտյան, այն ժամանակ գիտցած յեղեք, վոր յես Պետերբուրգում կկենամ Клея հյուրանոցում, իսկ Բեռլինում Hotel de S.-Petersburg հյուրանոցում։ Գալուն պես անպատճառ ինձ իմաց տվեք։

Ձեր անձնվեր
Իվ. Տուրգենև

Յերկուշաբթի

3.

ՏՈՒՐԳԵՆԵՎԻ ՏՎԱԾ ՍՏԱՑԱԿԱՆԸ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ցես, ներքո ստորագրյալս, սրանով հաստատում եմ, վոր յես պարտք եմ վերցրել Միխայիլ Լազարևիչ Նալբանդովից 300 ռ. արծաթ, վորը պարտավորվում եմ վերադարձնել նրան վարը հիշվող ժամկետից յերեք ամիս հետո։

Իվան Տուրգենև

Ս. Պետերբուրգ,
1-ն հունիսի, 1862 թ.

ՍԵՐՈԲԵ ԹԱԳՎՈՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

մայիս 14/26, 1862, Ն. Պոլիս.

Ամենայազնիվ բարեկամ իմ,

Մայիսի 9-ի Փարիզե գրեալ նամակդ ընկալա. հին նշանագիրներու ցուցակը, վոր ինձ խավրեր եյիք, չեմ գիտեր վոր նամակի մեջ պարունակյալ, զայն ընկալա. չեմ գիտեր վոր նամակի մեջ կըսեմ, վասն զի ձեր նամակները այժմ չեն ի մէջի։ Թողություն ըրեք, վոր կարգավորյալ չեմ պատասխաններ նամակներուդ. յես խելացնոր մարդ մը եղեր եմ. հոս մեր ազգին մեջ ամենավոքրիկ գործ մը կատարելն ալ մարդ կապաննե։ Դու

կտրտնջաս մեր թուղթերեն և իրավամբ, բայց քանի վոր մեր քաղքեն չելեր ես, մոռցեր ես բոլորովին մեր ազգին ընավորութիւնը. ճշմարիտ է թե չերը չգիին մեկը կաղա, դժվար է լուծը ձգելը. նուչնը չես ալ կըսեմ:

Պարոն Մարտիրոսին[1] նամակը մինչև հիմա չի տալուս կնեղանաս, բայց կաղաչիմ միտ դիր ըսելիքներուս պաղ արյունով:

Քանի վոր դու մեկներ ես մեր քաղքեն, կաշխատիմ վոր իրոք ստանանք ինչ վոր պարոն Մարտիրոսին ըսեր ես թե ունիմք, վորպեսզի խրկած նամակը իր մարդու կարենանք համարձակ տալ. բայց իղուր, ազգին մեջ չեղած անվերջանալի խնդիրները և այն մարդիկներուն գործքերը, վորոնց վրա քանի մի ամիս առաջ վստահութիւն ունեյինք և այժմ չունիմք, այսպիսի կրճիմները կըսեմ, անհնարին կվհատեցնեն զմեզ: Հիմա խորհըրդածե. չունենալով այս քաղքիս մեջ սեղանավոր մը[2], ունիմք ըսելը թող վոր գիս քրիստիկ կացութեյան մեջ կդնես, այլև մեր ընկերները չեն ներեր, վոր այսպիսի բան մը հաղորդիմ այն մարդուն, վոր բոլոր ընկերութեյան վարկումին կրնա վնասել. չես, ինձի համար, քու ըրած անօրինութեյանդ վրա բոլորովին ապահով եմ, և չեթե լավ մտածելեն հետո վորոշես, վոր նամակը պիտի տալ իր տեղը, չես անկասկածաբար կուտամ. մտածե և իմացուր ինձի: պիտի տալ իր տեղը, չես անկասկածաբար կուտամ. մտածե և իմացուր ինձի:

Աշխատեցա վոր (Հոթֆելը) չեղբարց լոժ ունենամք հոս և հրամանը առինք, քանի մը առենեն լոժը պիտի բանամք: Այս լոժին անունն է Հայկ կամ Որիոն: Ասի չեղբայրութեյուն մըն է Անգլիո պաշտպանութեյան տակ, և Դուքեն ալ հրաման առնված է, վոր այս չեղբայրութեյունը իշխանութեյուն ունենա իրեն գաղտնի ժողովները ընելու: Այս ալ ֆրեր մասոններուն չեղբայրներուն պես է, բայց կարծեմ ավելի պարզ. և նպատակն է անկաբայրութեյան պես է, բայց կարծեմ ավելի պարզ. և նպատակն է անկախ չեղբայրները իրենց հիվանդութեյանը առեն զիրենք հոգալ և ստակով նպաստել: Թե վոր մեր լոժը բավական կարողութեյուն չունենա աղքատ և հիվանդ[3] չեղբարց ոժանդակելու՝ այն առեն Լոնդոնի մայր լոժը պարտական է մեզի նպաստելու դրամով: Տարին իբրև տուրք կես անգլիական լիրա պիտի տա չեղբայր ընդունվողը և շաբաթը վեց բենս: Հույս ունիմ, վոր այս չեղբայրութեյունեն ոգուտ քաղինք, վասն զի ասոր ծայրը հեռուն է:

Անցագիրներու համար ինչ վոր ըրիր շատ լավ է: Ենժենյուրին համար ինչ վոր ըսիք ի միտ առի: Բարեգործական ընկերութեյան համար խոչընդոտներ կան, բայց չեն անհաղթելի, կարծեմ վոր քանի մը որեն ի կարգի կմտնա: Բավական գումար մը ժողովեցինք: Դրսի գործակալներու յերթալիք թուղթերը դեռ ձամբա չելան: Ասիկա քեզ պիտի բարկացնե, չես ալ կբարկանամ, բայց հարկ է, վոր այսպես ըլլա. այսուամենայնիվ այս որերս դանոնք ալ պիտի ճամբա հանիմք:

Բյաթիպյանի հետ տեսութեյուն կընենք. շատ պատվական մարդ է, բայց հանդարտ մարդ. պետք է վոր քու tremp-դ քանի մի մարդ ըլլար հոս, վոր քիչ մը շուտով քայլեյինք, վորուն հետ վոր գործ մը ունիմ շատ մեծ դժվարութեյուններ կկրիմ: Տավրոսեն վարդապետ մը յեկավ հոս, քանի որ է, վոր կաշխատիմ, վոր առուտուր մը ընեմ այս մարդուս հետ[4]. հազիվ կրցան քանի յերսուն հոգիով ժողով մը կազմել և այն ալ մեծ դժվարու-

թյամբ. քիչ մը ստակ յես, քիչ մ՛ալ բարեկամին մեկը տվինք անոր, վոր հարկավոր եղած դասագիրքները առնե և ճամբու ծախք ընե։ Մնացածին համար խոսք տվինք, վոր պիտի աշխատինք իրենց համար։ Կըսեք թե apathie ինծի մահ ե—յես ալ ձեզի պես կմտածեմ։ Սակայն կրնամս ճար մը գտնալ. մեր ազգը քիչ կաշխատի, կամ այնպիսի բանի համար կաշխատի զոր դու կարհամարհես և կամ ի ցույցս կգործե։ Ցերը ազգասիրութեան խնդիրը և ամենը խոսքներնին բարձր ձայնով կընեն. ատոնցմե վոմանցը կեղծավորութիւն ե, վոմանցը գաղջ սեր մը. բայց գործադրութեան մասին ամենևին չի կա մարդ գրեթե։ Ատոնք զրուցելովս, պետք չե, վոր հուսահատիմ. յես միտք ունիմ միշտ աշխատելու, թեպետ այս աշխատանքը զես շուտով կծերացնե։ Թե վոր վերոդրյալ ըսածներես արդյունք մը տեսնվի, քեզի կիմացնեմ։

Մնամ սիրելութեանդ՝ Ս. Թ.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Այսինքն՝ Մաձէինեին ուղղված նամակը

2 Այսինքն՝ այնտեղ կոմիտաս ունենար

3 Հիվանդը, ըստ ծածկագրի, Հայաստանն է

4 Ըստ ծածկագրի առևտուր անել կամ ապրանք, տվյալ դեպքում դասագիրքը, գնելը նշանակում էր ապատամբութիւն բարձրացնելու նպատակով վորևե բան անել

ԱՆԱՆԻԱ ՍՈՒԼԹԱՆՇԱՀԻ ՆԱՄԱԿԸ ԳՐԻԳՈՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Սիրելի Գրիգոր Լազարիչ,

Նախիջևան Ցերեցփոխյանին տուևը, յերբ Այվազը ճաշի յե յեղած Խալիբի և մյուս ղենպիններու հետ, մեծ մարդ կարծելով նոցա, կամ Ալաջալովենց կարծիքին, խելքին հավատալով, խնդրվիլ իս, վոր Խալիբը և Այվազը տերութիւն ունին Միքայելին, Ղազարոսին ալ կը գրես, վոր նա ևս Պետերբուրգ խնդրվի Այվազին այդ մասին։ Կը ճանչնաս արդյոք արած հիմարութիւնիդ չափը և արժեքը. ասա, խնդրեմ, ինչ քեզ խնդրիլ ե, ինչ հրամայիլ ե այդ տեսակ քու աղևկութիւնդ, վոր ամեն դեղութենեն դեղ ե։ Ամոթ չե՞ քեզ, վոր դու այն զևզեկներուն դիմաց քո յեղբոր պատվական անունը վոտքի տակ առիր և նորա թշնամիներուն խնդալու տեղիք տվիր, քո խելոք յեղբորդ որը հիմարներու ձգեցիր։ Ցեթե արած բանիդ խելքդ չեր հասներ, մի խելոքի հետ խորհուրդ թող անեյիր առաջ, վոր չանեյիր այդ տղայութիւնը, չենե Ալաջալովենք յեղած խելքդ ալ առին, վորովհետև յես գիտեմ, տեսեր եմ նոցա տեսարանը. նոցա ծառա, ստրուկ, գերի կլլան իսկույն։ Հայտնի բան ե, յեթե Ալաջալովենց կույր աչքին Այվազն ու Խալիբը թագավոր յերևցիլ ին, քո աչքիդ անշուշտ աստված ամենակարող պիտի յերևնային, անոր համար ալ յեղբորդ պատիվը ցեխի մեջ ձգիլը իսկի ամաչած չիս։

Գիտես դուն, վոր յեթե որենքը յեղբորդ տասը կտոր անելու ըլլար,

գենե նա Այվազին ու Ծալիբին ձեռքեն ազատվելու ամենևին չեր կամենար, չեր խոնարհեր, չեր ցածանար քեզ պես նոցա նման աշխարհին հայտնի ավազակներուն գլուխ ճկելու։ Ավելի լավ կանեյիր, երթայիր աղաչեյիր Ֆարմազոնին կամ բոյաջի Գաբրիելին, քանց թե Այվազենց Գաբրիելին, նոցա սրտով ասած ցանկությունը շուտ կը կատարվեր Այվազին կամ Ծալիբին խալպ ու սուտ խոստումնքներեն։ Քեզի հայտնի չե, վոր Գաբրիել վարդապետը չեթե կարենար, իրեն գլուխը շուտ կազատեր, նորա խոսքին վրան թքնող չի կա, վոչ թե կատարող, բայց քեզի կամ քու ալաճա խուռամա տերերուդ համար չեթե մեծ մարդ ե Այվազը, դուն ինքդ քեզի համար խնդրվե, վոտքերուն փաթթվե, թուքերը լզե ու մեր պատվական յեղբոր սուրբը, պատվական անունը և պատիվը խաղալիք անելը մի համարձակիր և ոտստ եկող հանած, վարած փեղեվենկներուն վոտքին տակը մի ձգեր։

Այս ալ ասինք և իմանանք—պատիվ, պատիվ կասիճը անղատար, դիտի՞ս արդյոք այդ խոսքին սուրբ նշանակությունը, այդ զեթուն և կապարա չե, բազարը չեն ծախել ոխայով. նորա ունեցողը կը ճանչնա արժեքը և կը հասկնա։

Պատիվը տարիներով կը վաստկվի և վերայի ամեն մեկ աղտը արյունով կը լվացվի. այս բաներեն դուն խաբեր չունիս, յեթե ըլլայիր, անտարակուս չեր անեյիր այդ ամենամեծ հիմարությունը և չեր ձգեյիր յեղբորդ ու մեզ այդ մեծ բարկության մեջ. տեղն եկավ այստեղ ասելու ռուսաց առակը. „Услужливый друг опаснее врага“.

Ցերը Միքայելը ազատ լիներ, որինավոր ու վոչ այսպես քո վարձդ կուտար, յես վորքան կարողացա, հայտնեցի քո արած բանիդ ինչ ըլլալը, յեթե չի կարողացա լավ հասկացունել, խնդրեմ ներիր։ Ալաջալովենց մոտ կամ մեջը յերկու ամիս կեցողը մարդից անասուն կը դառնա և բացի անասնականեն՝ ուտել, խմել, պառկել, վոչինչ մարդկային պիտույքներից—պատիվ, խելք, բանականություն և այլն, ամենևին զուրկ կը մնա։

Այժմ մեր վրան պարտք կը դնինք Ծալիբին ալ իմացնել, վոր ամենևին չի համարձակի վորին ասիս խնդիրքը լսելով Միքայելին գործին մեջ մտնելու և նորա անպատիվ անելու. նորա համար տասը անգամ կործանվելը, մեյմը Ծալիբին կամ Այվազին ձեռքով ազատվելեն աղեկ ե։ Հույս ունիմ, վոր ասածներս հասկանալով մյուս անգամ հեռու պահես յեղբորդ այդ տեսակ անճոռնի աղեկութենեն։ Կը ցանկամ առողջ ըլլալդ և ծուռ ճամբեն յելլելդ։

Քո միշտ բարի կամեցող՝
Անանիա Սուլթանշահ

«ՄԵՂՈՒ»-Ն ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պ. ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆՑ

Անունն իսկ արդեն շատերու մտաղրութիւնն արթնցուց.—այսպես կը հավատանք և հավատքնիս ճշմարիտ է.—վասն զի պ. Նալբանդեանց հայ յեղինակամարին վրա փայլելու սկսած որեն ամենուն ուշադրութիւնը գրաւեց և ամենայն վոք վողջունեց զանի անձնվեր բարեկամ՝ ազգային հառաջադիմութեան, անխոնջ աշխատող՝ անոր ի նպաստ, թշնամի՝ ազգասեց չըհայերու, վեհանձն՝ սխալմամբ ազգին թշնամութեան ընողներուն դեմ, մեծահոգի և բարմահմուտ. ազատամիտ, ազատութեան բարեկամ փափաքող և ջանացող վոչ միայն իր ազգին, այլ ընդհանուր մարդկութեան ազատութեանը: Առաքինութիւնը, բարեգործութիւնը վոչ այս և վոչ հանդերձեալ աշխարհին մեջ վարձուց ակնկալութեամբ և կամ պատժոց յերկիւղով կը կատարեր. չ'ուներ այդ մտքի պակասութիւնն ու հոգու տկարութիւնը, այլ ատոնք կը կատարեր՝ իբրև մարդկութեան պարտք և մարդ կենդանին այլ տեսակ կենդանիներեն զանազանող նշան:

Այս ամենը կարճ միջոցի մեջ հայտնեց պ. Նալբանդեանց. և վորոնք վոր զինքը և իր գործերն ու վարքը լավ ճանչեցին, կը դողային իր վրա իբրև իրենց աչքին լուսին վրա. կը դողային այո և իրավունք ունեին դողալու. վասն զի այսչափ կատարելութիւններով փայլող սակավադիւտ անձերեն կարի քիչ գըտված են, վոչ միայն Արամեան, այլև ընդհանուր մարդկային ազգի մեջ՝ վորոնք իրենց ժամանակակիցներուն առելութեանը, թշնամութեանն ու վորոգայթներուն զոհ եղած չ'ըլլան: Գրեթե ընդհանուր որենք մը յեղած է այս աշխարհիս՝ վոր մարդկային ազգին բարորութեանը սրտի մտոք աշխատող անձինք անոր խորթ զավկըներուն ընդդիմահար դորութեան ներքև իյնան՝ ցորենի հատին նման իրենց անկումեն յետքը բազմարդիւն ըլլալու համար:

Հայ ազգին ճշմարիտ բարեկամները կը դողային պ. Նալբանդեանցի վրա, տեսնելով անոր ժրաջան աշխատութիւնը ազգին համար, և հիշելով հետևաբար այդ ընդհանուր որենքը, վորմե ասոր ազատ ինալը շատ դժվար եր:

Ցավելով կ'ըսենք, այսոր այդ անձերուն յերկիւղը իրականացյալ կը տեսնենք և պ. Նալբանդեանց այո այսոր բանտի մեջ է... Պ. Նալբանդեանց ազգին համար ինքնահոդդոր աշխատած ատեն, իր հիվանդոտ տկարութեամբը և' հյուսիսային բևեռին սառնամանեաց ցրտութեանը, և' անհուն ովկիանոսներուն կլանող կատաղութեանցը և' հասարակածի անապատներուն դժոխային ջերմութեանցը ասպարեզ կարդալով կոխեց անցավ, ընութեան հաղթեց, բայց հայ ազգին անհարազատ զավկըներուն գաղտնի գավազրութեանց չը կրցավ հաղթել տակավին:

Պ. Նալբանդեանց ազգին ապագա բարորութեանը համար նվիրած իր բազմատեսակ աշխատութեանց վրա Նոր-Նախիջևանի արդի և գալիք հա-

սարակութեան կրթութեան միջոցներն ալ ապահովցընելու աշխատութիւնն ալ հանձն առնելով ուխտուն տարին ի վեր ի կորուստ մատնըված կտակ մը կենդանացընելու համար մինչև Հնդկաստան ճանապարհորդելով և անտա-նելի նեղութիւն ու տառապանք կրելով իր նպատակին հասնելեն յետքը, հակառակ մեկ քանի անձանց ընդդեմ ջանացողութեանցը[1], Լոնտրա դարձած եր ստակները առնելու և այն գործն ալ լմնցընելով Բեռլերպուրգ, անկե Մոսկ-վա, անտի Նախիջևան հասած եր հուլիսի 10 ին։ Իր հոն հասնելուն հետևյալ որը Յեկատարինոսլավին (Նախիջևանի մոտ քաղաք մը) յերկու գնդապետ, չորս ժանտարմ (տեսչութեան զինվոր) կուգան պ. Նալբանդյանցի տունը կըկոխեն կես որի ժամանակ մինչդեռ ինքն ալ տունն եր. գինքը կը բռնեն, սենեկին մեջ վորչափ թուղթեր ունի, մինչև անգամ պատերն ի վար կախ-ված քառդանները կը ժողվեն ծրար մը կ'ընեն, կը կնքեն և պ. Նալբանդյանցն ալ առնելով Բեռլերպուրգ ղըրկել կուզեն։

Ասկե յերկաթ տարի առաջ Այվազովսքիի կողմեն Ռուսիո ներքին գործոց պաշտոնեյի առջև վորպես անկրոն, վորպես անբարոյական, վորպես ապըս-տամբ և խռովեցուցիչ ժողովրդյան (տես Յերկու Տող. յեր. 35 Բ. ծանոթ.,) ամբաստանված առեն պ. Նալբանդյանց լինչ վեհ հոգով և անյերկյուղ սրտով վոր կ'երգեր Հյուսիսափայլի մեջ.

Ազատութիւն, գոչեցի, թող վորոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, յերկաթ, թող դավ դնե թշնամին.
Ցես մինչ ի մահ, կախաղան, մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ' կրկնեմ անդադար ազատութիւն։

նույն վսեմ հոգով և նույն անխռով սրտով ընդունեց գնդապետներուն հրա-մանը, գեմ կեցավ անոնց աճապարանացը, շամբանյայի գինի բերել տվավ. նստավ ուրախ զվարթ ըմպեց անոնց հետ։ Վոտք յելավ և արիք յերթանք ըսավ գինքը տանելու յեկողներուն. տանը դուռը իջավ, և տեսնելով հոն բանտարկվելու համար գնացողներուն հատկացած կառքը, իր մեծ հոգին չ'ուզեց այն անարգ տեղը նստիլ. գինքը բռնելու յեկողները սաստած եյին այս մեծ մարդուն առջև և կարծես թե իրենց հրամանատարն եր ասի. հնա-զանդեցան իրեն քաղաքապետին կառքը գալով անոր մեջ հրամցուցին գինքը. Յեկատարինոսլավ տարին և անտի Բեռլերպուրգ։

---

1 Պ. Նալբանդյանց Նախիջևանի ժողովրդին կողմեն որինավոր յերեսփոխան կարգը-ված եր նույն քաղաքին մեջ ժողովրդական դպրոց մը պահելու համար Հնդկաստանի մեջ ապագաներ յերկու հայոց կտակով թողած դումարը ձեռք բերելու համար. հոն հասած առենը կը տեսնե վոր Այվազովսքի գաբբրիել վարդապետը, զանխուռ Նախիջևանի ժողովրդեն՝ ինք-զինք յերեսփոխան հավաստցընելով այն կտակին տիրանալու ձեռնարկութիւն մը ըրեր և, քիչ դժվարութիւն չը կրեր պ. Նալբանդյանց այդ կտակը ատոր ճանկերեն ազատելով բուն անոր տերերուն դարձնելու համար։ Գաբբրիել վարդապետը այն առեն ինքնակոչը արդարաց-նելու յելավ քանի մը տկար փաստերով Մ ա տ յ ա ղ ա վ ն ե ի ն մեջ, ինչպես կը հիշեն ընթերցողք։ Պ. Նալբանդյանց ատոր վրա մեզի կը գրեր թե այս կտակին գործը ի գլուխ հանելեն յետքը Այվազովսքիի այդ տկար փաստերն ալ վոչընչացնելով գործին բուն յեղե-լութիւնը մասնավոր հայտարարութիւնով պիտի հրատարակեր։

Մեր թղթակիցը Նախիջևանեն պ. Նալբանդյանցի բռնըված որբերը Սիմֆերոբոլ գըտավելով՝ կը գրեր թե հոն և բոլոր Ղրիմի մեջ այս լուրը տարածված և նախ պ. Խալիպյանցին առ Այվազովսքին գրած նամակին, առաջին լուր ալողը պ. Խալիպյանց յեղած և Այվազովսքիին՝ թերևս անոր սիրտը պաղչկերցնելու համար։

Իսկ այս լուրը հոս Պոլիս տարածողն և յեղած նախ Այվազովսքիին մեկ նամակը առ Խորեն վարդապետ, վոր ուրախ սրտով և զվարթ դեմքով կը կարդա յեղեր հոս զանի իր սըրտակից բարեկամներուն։

Ղրիմի մեջ առաջին որբերը այնպես հուչակվեր և թե պ. Նալբանդյանց Ռուսի կեղծ թղթադրամ շինող գաղտնի ընկերության մը գլխավոր անդամներեն մեկն ըլլալու հանցանքով բռնըված եր. մեր սիրտը պ. Նալբանդյանցի ամեն բարեկամներուն սիրտը, նույն իսկ թշնամիներուն կը վկայեն անկասկած թե այդ չնաշխարհիկ անձը չե ծնած այդպիսի վատթար գործողության մը մասնակից ըլլալու. անոր ձեռքերը չ'են ստեղծված այդպիսի անարգ հանցանք մը գործելու և ասոր համար մենք իր տեղը յերդում ընելու պատրաստ ենք և պիտի ընեյինք հրապարակավ, յեթե այս լուրը տարածվելեն անմիջապես յետքը ասոր սուտ ըլլալուն լուրն ալ չը տարածվեր։

Բայց ինչ եր հանցանքը.—ահա այդ և վոր վոչ վոք գիտե տակավին և վոչ վոք պիտի գիտնա մինչև վոր արդարությունը իր տայանը չը բանա և հոն չը հրավիրե ամբաստանյալն ու ամբաստանողը։ Առ այժմ մեր գիտցածը սա յե վոր պ. Նալբանդյանց Բեզերլուրդի մեջ բանտարկված է։

Թշվառ մայր մը և հայր մը, յերկու չորս յեղբայրներ, յերկու քույր, բազմաթիվ բարեկամներ, լման ազգ մը, շատ մը ոտարազգիք խռոված և անհանգիստ սրտով ամեն որ անոր ազատության լուրը կ'սպասեն.—մեկ քանի գիշերադեմ մարդիկ, մեկ քանի վատ հոգիներ անհամբեր սրտով և անարգ վրեժխընդրության համբ անոր առանց արդար դատաստանի դատապարտության լուրը կսպասեն։

Վոչ վոք գիտե պ. Նալբանդյանցին հանցանքը. բայց մենք կը կարծենք թե գիտենք անոր հանցանքը չափազանց և յուռանդագին ազգասիրության ու ճշմարտասիրության. և ասոր համար չենք կարծեր վոր արդարությունը զանի պատժապարտ վճռե. բայց յեթե արդարության բացակայությանը պ. Նալբանդյանց դատվի ու դատապարտվի, անոր անմեղ արյունը ի վրեժ պիտի կոչե ամեն ճշմարիտ և ազգասեր հայերը. և այն ատեն, բացարձակ ըսենք, Ռուսիո կառավարությունը անոր կորստյամբը մեծամեծ կորուստներ ալ պիտի ընե։

Պ. Նալբանդյանց հանցավոր է, այո, մարդկությունը գերության, թշվառության և տգիտության մեջ հավիտյան կաշկանդյալ պահելու ջանացող առանձնաշնորհյալ համարված մարդոց առջև. բայց վոչ մարդկության առջև, վոչ արդարության և իրավանց առջև. ուստի մենք այնպես կը հավատանք վոր արդարությունը վոչ միայն չը պիտի պատժե մարդկության բարեկամը, այլ և չը պիտի պահանջե վոր այդ անձը մեղա գոչե ու հրաժարի ճշմարտության և մարդկության սերեն. չը պիտի հաճի վոր այն վեհ հոգին վոր

ավելի կը սիրե կախաղանին առջև խոնարհիլ քան թե վատաբար ծունը դնել անիրավութեյան մարդատյաց կուռքերուն առջև, այն վսեմ հոգին սուգ պատճառե բոլոր իր վրա իբրև թիթեռնիկ թրթռացողներուն։ Հույս ունինք վոր արդարութեյունը քիչ որեն անոր ազատութեյան բերկրաւիթ վճիռը սիւտի կարդա. ուստի մենք ալ այս հուսով մեր սիրտը հանդարտեցընելու կը ջանանք։

«Մեղու», հանդես տաեռնորյա, 1862, № 172,
եջ 197—199, Կոստանդնուպոլիս

ԿՈՄԵՆՏԱՐՆԵՐ
ԵՎ
ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՅԵՐԿՈՒ ՏՈՂ

Նալբանդյանը «Ե ր կ ու տ ո ղ» պամֆլետը գրել է Փարիզում, արտասահմանում կատարած իր յերկրորդ ճանապարհորդության ժամանակ, 1861 թ. մարտ-ապրիլ ամիսներին։ Ցերկը տպվել է Ճանիկ Արամյանի տպարանում։ Իր ճանապարհորդական նոթերի մեջ Նալբանդյանը հիշատակում է «Ե ր կ ու տ ո ղ»-ի մասին և դրանից պարզվում է, որ 1861 թ. ապրիլի 12-ին գործն արդեն տպագրված պատրաստ է յեղել և, նույն որը հեղինակը 300 որինակ ուղարկել է Սրվանձյանի «Մ ե ղ ու»-ին՝ Պոլսում տարածելու նպատակով։ Դա յերևում է մանավանդ նրանից, որ Սրվանձյանը նույն թվի ապրիլի 20-ին «Մ ե ղ ու»-ի № 131 իր մի հոդվածի մեջ, պաշտպանելով Նալբանդյանի մի շարք մտքերն ընդդեմ Զամուռճյանի, հայտնում է, որ «պարոն Նալբանդյան «Ցերկու տող» անունով տետրակ մը հրատարակած է բարիղ և հոս դրկած։ Այս տետրակը կծախվի հոս ընթերցասիրաց թանգագնահատությամբ...»։ Ապա նա ցավ հայտնելով, որ չի կարող իր բոլոր բաժանորդներին այդ տետրակից ուղարկել, «Մ ե ղ ու»-ի հաջորդ №№ 132, 133, 135, 136-ում տպագրում է հոդվածի հատկապես այն մասերը, որոնք վերաբերում են կրոնական ժողովին, Զամուռճյանին ու հոգևորականությանը։ Այնուհետև «Ե ր կ ու տ ո ղ»-ը ամբողջությամբ լույս է տեսել 1903 թ. Նալբանդյանի «Ե ր կ ե ր» յերկրորդ հատորում։ Ներկա հրատարակությունը կատարվում է 1861 թ. փարիզյան հրատարակության հիման վրա։

«Ե ր կ ու տ ո ղ»-ը ուղղված է նախ և առաջ արևմտահայ ռեակցիոն գործիչ, «Ե ր ե վ ա կ»-ի խմբագիր Զամուռճյանի դեմ, բայց Նալբանդյանը չի ձգտում հարցն այդ շրջանակներում, և իր քննադատությունը տարածելով հայ իշխող դասերի, ցարիզմի ու սուլթանիզմի վրա՝ հեղափոխական յեղրակացություններ յե հանգում՝ առաջադրելով գինված ապստամբության միջոցով ցարիզմին և սուլթանիզմի տապալման գաղափարը։ Դրանով «Ե ր կ ու տ ո ղ»-ը նախորդում է և սերտ կապվում «Ե ր կ ր ագ ործ ու թ յ ան» հետ, հանդիսանալով 60-ական թվականների հեղափոխական դեմոկրատական գրականության կոթողներից մեկը։

Դեպի Ցեվրոպա և Հնդկաստան կատարած ուղևորության ժամանակ Նալբանդյանը 1860 թ. նոյեմբերի 20-ին, առաջին անգամ մտնելով Պոլիս և մոտ մեկ ամիս (մինչև 1860 թվի դեկտեմբերի 21) ծանոթ այնտեղ յեռանդուն մասնակցություն եր ունեցել պոլսահայ հասարակական կյանքին։

Նալբանդյանի Պոլիս գալուն նախորդել եր 1860 թ. ոգոստոսի 25-ին Ազգային ծողովի կողմից Սահմանադրության ընդունումը։ Հասարակական կյանքում տիրում եր աշխուժություն։ Մամուլը քննարկում եր Սահմանադրության հետ կապված խնդիրները։ Նալբանդյանն անմիջապես նետվում է հասարակական պայքարի մեջ ու դառնում ռադիկալ հոդվածագիր։ Պոլսում նա ձեռք է բերում հակայական ժողովրդականություն, որին նպաստում է «Մ ե ղ ու»-ի և «Ա ր և մ ու տ ք»-ի շուրջ համախմբված առաջադեմ տարրերի հետ ունեցած սերտ կապը։ Նալբանդյանի ազատասիրական հայացքների ձևավորման վրա մեծ ազդեցություն եր գործել իտալական ազգային ազատագրական շարժումը։ Նա ուշադրությամբ հետևում է Գարիբալդիի արշավանքին Սիցիլիա և Նեապոլ 1860 թ. և Վիկտոր Էմանուելի գլխավորած 1848 թ. ֆրանսիական հեղափոխությանը։ Այդ իտալական ազգային ազատագրական շարժման գաղափարները, որոնք ներշնչված եյին Մազզինիի ազգային ազատագրական ծրագրով, ինչպես նաև 1859 թ. Իտալիայի ազգային ազատագրական պատերազմի հերոսական դրվագները, որոնց ականատես եր յեղել Նալբանդյանը, ոգևորում եյին նրան, ինչպես և ամբողջ հայ ժողովրդին, ազատագրական ընդհանուր պայքարի գալ և կանգնել մի մարտնչող հեղափոխական։

Տաճկահայ կյանքին մոտիկից ծանոթանալը նոր հեռանկարներ էր բացում Նալբանդյանի առաջ՝ հայ ժողովրդի ազատագրական շարժման կազմակերպման տեսակետից։ Ինչպես յերևում է, հետագայում՝ 1862 թ. Ս. Թագվորյանի գրած հայտնի նամակից, Նալբանդյանը՝ հենվելով «Մեղու»-ի շուրջ համախմբած դեմոկրատական ինտելիգենցիայի վրա՝ տեղում լեգալ սկզբունքներով հիմնել է զանազան ընկերություններ, վորոնք հետագայում, ըստ յերևույթին, վեր են ածվել հեղափոխական կազմակերպություններին։ Նամակի բովանդակությունից յերևում է, վոր Թագվորյանն այլևս Բաբեդոթյան ընկերության խազաղ անդամներից մեկը չեր, մի ընկերություն, վորի գլխավոր նպատակն եր՝ «Վորբ և անտեր տղոց յերկրագործության ձրի դպրոցներ բանալով, աղքատությունը բարեկեցիկ կյանքի դարձնելու, մուրացկանությունը բառնալու, տգիտությունը հալածելու...»*։

Տերոյենցի (Զամուռձյան) մի յուշմունքից յերևում է, վոր Պոլսում յեղած ժամանակ Նալբանդյանին է հարել Մեծ նոր Յանի «Վերին դրան սենյակում» յեղած ընկերությունը, Ցերը 1864 թ. մայիսի 17-ին Տերոյենցին Կրոնական ժողովում հարցաքննելիս պատրիարքը դիմում է նրան, թե՝ ինչ է «Հանամիջյան հերետիկոսությունը», վերջինս պատասխանում է. «Ժամանակով Մեծ նոր Յանին վերին դրանը մեծ սենյակ մը՝ մեկ ընկերություն իրեն ժողովատեղի չե ըրեր։ Ասկեց քանի մը տարի առաջ Ռուսիայեն Նալբանդյան Միքայել անունով մեկը յեկավ, վոր հայտնի համարձակ դիվանց գոյությունը կուրանար գրով, ընկերությունը անոր հարեցավ և անոր մոլար կարծյացը պաշտպան կեցավ։ Ահա ասոնք են հանամիջյան ըսածները»։ Այնուհետև հետագա հարցից իմանում ենք, վոր այդ ընկերության մեջ ի թիվս այլոց յեղել է «և՛ տաճկերենին գրագիր, և՛ պախալ, և՛ սափրիչ, և՛ դերձակ և ուրիշ անձինք»**։

Նալբանդյանի հասարակական-քաղաքական գործունեությունն ու լայն ժողովրդականությունը չեյին կարող չգրգռել «խավարյալներին», վորոնք արդեն նախապատրաստում եյին հակաահմանադրական նոր ռեակցիան։ Այդ հոսանքի պարագլուխներից մեկն եր թերահավատ Զամուռձյանը։ Վերջինս 1860 թ. «Ցերեվակ»-ում տպագրած իր մի շարք հոդվածներում հանդես եր յեկել դևերի գոյության պաշտպանությամբ։ Այդ հողի վրա եղ տեղի ունեցավ Նալբանդյանի ու Զամուռձյանի առաջին բաղխումը։ «Մեղու»-ում տպագրված իր «Հերաշափատ խայտառակության» հոդվածում («Մեղու», 1860 թ. 10 դեկտ.) Նալբանդյանը ծաղրեց վերջինիս մի շարք միջնադարյան սուխաստություններ։ Զամուռձյանը պատասխանեց նրան «Խայտառակության քննություն» (Մեղու, 61 թ., եջ 20) հոդվածով, ուր շարունակում եր փաստաբանել դևերի գոյությունը։ Այդ ժամանակ վանի առաջնորդ Պողոս վարդապետն իր մի շարք քրեական արարքներով գրգռել եր դավառի ազգաբնակության վարդապետ Պոլսի առաջադեմ շրջաբերին։ Կրոնական ժողովը, յենթարկվելով դավառից յեկող ապողոսյանների (Մկրտիչ Երիմյան, Գ. վ. Սրվանձտյան, Թադեոս վարդապետ և այլն), վանահայրների ու դյուղացիների անընդհատ բողոքների ու Պոլսի հասարակական կարծիքի ճնշմանը, Պողոսի նկատմամբ կայացրեց իր կիսատ-պռատ վորոշումը, նրան «քահանայագործելուց իրավունքից զրկելու մասին»։

Վանցի Պողոսի այս խնդիրը, վորը յերկար վեճերի տեղիք տվեց, սահմանադրության համար մի փորձաքար եր։ Այս վեճերի ընթացքում միևնոյնայն պարզվեց «սահմանադրության» խիստ չափավոր բնույթը և ռեակցիայի կողմը հակվող լուրժուազիայի անհետևողականությունը յերերուն դիրքը։

«Մեղու»-ի խմբագրության ուղղված իր նամակի մեջ Նալբանդյանը հարձակվելով Պողոսի վրա և պահանջելով քաղաքացիական դատարանին հանձնել նրան, միաժամանակ քննադատում եր լիբերալների այդ դիրքը և աշխատում սահմանադրության լիբերալ սկզբունքներն ոգտագործել հոգուտ դեմոկրատիայի։

«Վոչ յերբեք պիտի առաջանա ազգը,—գրում է նա,—հետևելով մի տեսակ մարդերի

---

* «Հառնունկ հայոց աշխարհին», 1862, եջ 617։

** Հ. Գ. Մրմրյան. «XIX դար և Տերոյենց», եջ 211—212։

վարդապետությանն, որ թեև զգում էին անցածի և հնի ամլությունը, բայց, սրտի և հոգու քաջության պակասությունից, վախենում են միանգամայն կտրել բաժանել յուրյանց անձը սխալ անցածից և վոտք կոխել վճռաբար նոր սահմանագլխի վերա, ուր մանուկ առուգությամբ ծածանում է առաջընթացների դրոշակը»։

Նույն նամակում Նալբանդյանը գրում է.– «Որենքը պատժում է հանցավորը, ասիացին տեսնում է այստեղ մի լուկ վրեժառություն, բայց մենք այդ արդարացի հատուցումի մեջ տեսնում ենք հասարակաց իրավունքի պաշտպանություն։ Վոչ վոք չէ կարող հանցանք գործել առանց ուրիշի իրավունքը հափշտակելու և վոչ վոք չէ կարող հանցանք պաշտպանել առանց զրկվածի իրավունքը խեղդելու»։

Նալբանդյանը խոսում էր զրկվածների բնական ու հավասար իրավունքների մասին, «Բնական որենքը. վսեմական որենք. դերագույն բոլոր մարդկային որենքներից, վաղուց արդեն հասկացուցել է աշխարհին թե մարդիկ հավասար իրավունքներով դուրս յեկան աբարբչագործ աստուածո ձեռքից, մարդկային որենքը գրվեցավ թեպետև շատ անգամ և շատ դիպվածում շեղվելով բնական որենքից, ի վերա այսը ամենայնի ընտանեական կամ ընկերական կյանքի պայմանները սուրբ պահելու համար այդ որենքից սկսած դատապարտության տակ ընկավ նա՝ վոր հանդգնեցավ մտանել ուրիշի իրավունքին կամ դրժել ընկերական կամ ընտանեական նվիրական պայմաններին։ Դա արդեն բավական եր, վորպեսզի Ջամուռճյանը նրան համարեր սոցիալիստ, ժ. ժ. Ռուսսոյի դրության ընդունող։ «Բուն դրությունը,– գրում է նա,– Ռուսսո հռչակավոր անհավատ հեղինակին պատճառ անհավասարության վիճակից ի մարդիկ խորագրով շինած ճառն է և անցյալ դարուն վերջը և ներկա դարուն կեսին (1848 թ.) Գաղիան և յեթը բոլոր Ցեվրոպա տակն ի վրա ընող սոսիալիստներուն կամ կարմիր հասարակապետականներուն դրությունն եր»։

Ջամուռճյանը, այդպիսով, զբաղվում եր քսու մատնության և աշխատում եր Նալբանդյանի վրա հրավիրել ռուսական դեսպանության ուշադրությունը։ Մեծ մասամբ դրանով է բացատրվում այն, վոր նրա հոդվածը Գոլոսում «ամեն տեսակի մարդերի վրա ցուրտ տպավորություն եր գործել»։

Ռուսական դեսպանությունը, յերբ հետագայում Ջամուռճյանին թոշակավորեց 2500 փարայով, անշուշտ հաշվի չէ առել նրա վոչ միայն ապագա, այլև այս անցյալ «վարկորը» ծառայությունները։ Դրանով Ջամուռճյանը մատնում եր նաև իր հանցավոր կապերը Այվազովսկու և Ընկ. հետ, վորոնք նույն ժամանակամիջոցում, ինչպես տպացուցում են ցեներվազովսկու և Ընկ. հետ, վորոնք նույն ժամանակամիջոցում, ինչպես տպացուցում են ցեներվազովսկու և Ընկ. հետ, վորոնք նույն ժամանակամիջոցում, ինչպես տպացուցում են ցեներ-
արխիվում գտնված փաստերը, շարունակում էին գաղտնի դանոսներ ուղարկել ներքին գործոց մինիստրին և Նալբանդյանի հասցեին վարկաբեկիչ նամակներ տարածել։

Առաջին անգամ չեր, վոր Նալբանդյանը գործ եր ունենում այդպիսի «անամոթ վատության» հետ։ 1858 թվից սկսած, ինչպես ինքն եր գրում, նա մի քանի անգամ ամբաստանվել եր Այվազովսկու կողմից ռուսաց ներքին գործոց մինիստրության առջև։ Այդ ամենի հիման վրա Ներքին Գործոց Մինիստրությունը գործ կազմեց «Հյուսիսային աստղ»-ի դեմ՝ հարցաքննելով և կասկածի տակ առնելով նաև Նալբանդյանին։ Այնպես վոր

հայը, վոչ միայն ճնշված ոտարներից և բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորներից և, վերադարձած, ուսումնական կամ փիլիսոփա ասվածներից, ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով դրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և վայրկենական յերկմտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը»։

Այսպիսով, Նալբանդյանը մերկացնելով պանսլավոնականությունը, միաժամանակ և ամմանագծվում եր իր ժամանակի լիբերալ բուրժուական բոլոր հոսանքներից։

«Ճերկուզ տոզ»-ի մեջ Նալբանդյանը պատմականորեն ցույց և տալիս թե ազատագործների—Ֆրանսիայի, Անգլիայի և հատկապես «քրիստոնեական» ցարիզմի նկատմամբ հայ շահագործող դասակարգերի կողմից ցուցաբերված այդ սորկական վերաբերմունքը ինչ աղետների յե յենթարկել հայ ժողովրդին և ինչ աղետներ կարող և դեռ բերել։

Այդազովկու, Ս. Զալալյանի, Զամուռճյանի և ուրիշների որինակի վրա հենվելով, Նալբանդյանն արտահայտում է այն միտքը, թե՝ հոգևորականությունը հակաժողովրդական, ժողովրդի շահերին դավաճանող ռեակցիոն մի ուժ է, ցարական կառավարության վարձու սպասավորը։ Այս տեսակետից հասկանալի յե դառնում նաև այն, վոր Նալբանդյանը թեև հեռացել եր «Հյուսիսափայլ»-ից, բայց պաշտպանում եր վերջինիս, վորովհետև՝ իր չափավոր ուղղությամբ հանդերձ՝ տվյալ ետապում «Հյուսիսափայլը» միակ որգանն եր, վոր քննադատում եր ներքաղաքական դասերին և ծառայում հայ ժողովրդի ընդհանուր պրոգրեսին։

Նկատի առնելով, վոր 1861 թ. ռեֆորմի շրջանում ցարիզմին պաշարած ագրարային ճգնաժամը դուռ եր բացել անում ազգային ազատագրական շարժումների առաջ, Նալբանդյանը գրում եր՝ «Ցարինները վազում են փայլակի շուտությամբ, որերը թռչում են վորպես մի վայրկյան, վախենում ենք և իրավունք ունենք վախենալու, թե մի դուքս, մինչև հայը կշտանա յուր մահանման քնից, լուսինը անդնդասույզ դնա հորիզոնի ներքև»։ Այսպիսով Նալբանդյանը Փարիզից արձագանքում եր Զերնիշևսկուն, վորն իր հերթին նույն ժամանակամիջոցում հեղափոխական պայքարի խրախուսա եր կարդում և դնում կացնի վճռանատության խնդիրը։ «Ճերկրագործության» պարզվում և, վոր, դա անշուշտ պատահական զուգադիպություն չեր, այլ քաղաքական մի միտումնական շարժման տակտիկայից բղխող պահանջ։

Ինչքա ու միտքա արյունաշաղախ
Որևը կսպասեն, վոր գան անհապաղ,
Այս որերն ե, վոր աշխարհ կքանդեն,
Այս որերն ե, վոր աշխարհ կփրկեն--

գրում և Նալբանդյանի բարեկամներից մեկը, Բուդաղյանը, «Հյուսիսափայլ»-ում («Հյուսիսափայլ», 1861 թ. № 11, էջ 403)։

Նալբանդյանի գործունեության այդ շրջանի խոր ուսումնասիրությունը ցույց և տալիս, վոր 1860—1861 և ապա 1862 թվերին նա արդեն գործել եր այն կենսարոնական անձնավորությունը, վորի շուրջն էլին համախմբվում Արևմուտքում և Ռուսաստանում բանվոր հայ դեմոկրատական հեղափոխական ուժերը։ Ըստ վորում՝ արտասահմանում ուրացող Պոլսում կատարած նրա ճանապարհորդությունները առաջին հերթին հետապնդում էլին տիրող քաղաքական-հասարակական կացությանը ծանոթանալու, հեղափոխական դեմոկրատական ուժերը համախմբելու, և գործունեության ընդհանուր հենակետեր ստեղծելու նպատակին։ Ժամանակակիցներից Կ. Ծեղյանը, Սմբատ Շահազիզի «Լևոն և վիշտը» պոեմի մասին գրած իր յեզրակացության մեջ, ասում է՝ «Հայերն իսկապես բաժանված են յերկու կուսակցությունների։ Պաշտոնյաները, որինակ, խորհրդական Բուդաղովը և մյուս ուլտրա-լիբերալները (իմա դեմոկրատները. խ մ բ.), չեն ցանկանում մտանեալ ռուսներին, նրանք համախմբված են Նալբանդյանի շուրջը։ Մյուս կուսակցությունը հայ ազգությունը համարում է նեխվող մի դիակ, վորը արդեն զուրկ լինելով վորևե կենսունակությունից միանգամայն ձուլվելու յե այն տարրերի հետ, վորոնց մեջ ապրում են նրա վերապրող մասերը։ Ծեղյանի այդ դիտողության մեջ առանձնապես կարևորն այն է, վոր Նալբանդյանն այստեղ հանդես և գալիս իբրև քաղաքական առաջնորդ։ Նոր հայտնաբերվող

փաստերը վոչ միայն հաստատում են այդ պնդումը, այլև ցույց են տալիս, վոր Նալբանդյանն իրրև այդպիսին ամենուրեք վայելում եր հայ ժողովրդի առաջավոր շերտերի ջերմ սերն ու համակրանքը և արժանանում նրա աջակցության։ Բավական է նշել, թե ինչպիսի արձագանք եյին առաջացրել նրա յելույթները Պոլսում, 1860 թվին*։ Ազատության նրա վորոտաձայն կանչը («Ձերկ ազատություն») և «Ձ ե ր կ ու տ ո ղ»-ի մարտական դաղափարները, յերկար ժամանակ վոգևորել են հայության առաջավոր շերտերին ու հեղափոխականներն տրամադրված մասսաներին։ «Ձ ե ր կ ու տ ո ղ»-ի մեջ արծարծված գաղափարների արձագանքներին մենք հանդիպում ենք Հալեպում, Կեսարիայում, Կալկաթայում, Փարիզում, Վանում և այլն։ Շատ բնորոշ է, թե ինչպես 1863 թվին, յերբ Նալբանդյանն իրրև քաղաքական մեղադրյալ, նստած եր Պետրոպավլովսկի բերդում, Կեսարիայից անանուն մի թղթակից, պաշտպանելով «Ձ ե ր կ ու տ ո ղ»-ի հիմնական դրույթները, և այդ տեսակետից քննադատելով տեղական իշխանություններին ու տիրապետող դասերին, նրանց մարտակոչ և հեռատես ասելով. «մեր բնաբանը «Ձ ե ր կ ու տ ո ղ»—տեսրակին բնաբանն է՝ «Թող վորոտա մեր գլխոյն» և այլն»**։

Այդ վոգով հոդվածներ եյին լույս տեսնում «Մ ի լ ն Ա վ ա ր ա յ ր ի»-ում և այլն։

«Հայոց ժողովրդյան չորսեն յերեք մասը վերջին աղքատության մեջ են,—գրում է Մ. Աղաբեկյանը,—թե հարկաց ծանրության կողմանե, թե գավառապետաց և դատավորաց անիրավության... Ցավելով ասում ենք, վոր շատ ճշմարտություններ կան, վոր Ռուսաստանի մեջ վոչ իսկ խոսիլ կարելի յե և վոչ գրել և Սիբիրիայի սառնամանիքեն ստիպված մարդոց մեծ մասը ճշմարտությունը սրտումը գերեզման է իջնում»։

Նալբանդյանը խորապես գիտակցում եր, վոր ինքը վորոշ հասարակական շարժման պարագլուխ է, դրանով է պայմանավորվում նրա ամբողջ վճռողականությունն ու ինքնավստահությունը։ Այս տեսակետից հետաքրքիր փաստ է այն, վոր նա պաշտոնական մարմնին չլինելով, այնուամենայնիվ սպառնում է կրոնական ժողովին, նրան հակառակ մի շրջաբերական հրատարակել... և խորին արհամարհանքով ու հեգնանքով է վերաբերվում ցարիզմի վարձակալների կոմմից իր համար նախապատրաստվող «Սիբիրիայի սառնամանիքներին»։

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Մեզ անհայտ է այս եպիգրաֆի աղբյուրը։

2. Այս հատվածը Նալբանդյանը վերցրել է իր «Ձ ե ր պ ա տ ա ո ւ թ յ ա ն» բանաստեղծությունից։

3. «Ձ ե ր և ա կ»—նախ կիսամսյա, ապա՝ ութերյա հանդես։ Լույս է տեսել Կոստանդնուպոլսում 1857 թվից Ջամուռճյանի խմբագրությամբ։ 1865 թ. բաժանորդների չունենալու պատճառով ընդհատվել է և վերսկսվել 1865 թ. վերջերից, ռուսական դեսպանության ֆինանսական ոժանդակության շնորհիվ, իսկ 1866 թ. ընդմիշտ դադարել է։ «Ձ ե ր և ա կ»-ը կրոնական ուղղություն ուներ և ծառայում եր տաճկահայ ծայրահեղ ռեակցիոն շերտերին։ Նրա հիմնական նշանաբանն եր՝ «յամենայնի աստուածային տեսչության», վորից յելնելով՝ կատաղի պայքար եր մղում «Մ ե ղ ո ւ»-ի և «Մ յ ո ւ ս ի ս ի ա թ ե ր»-ի շրջանը համախմբված դեմոկրատական ինտելիգենցիայի կամ, ինչպես Սըվաճյանն եր ասում, նոր ուսումնական դեմ։ «Ձ ե ր և ա կ» ռեակցիոն դերն առանձնապես զգալի դարձավ 60-ական թվականներից հետո, յերբ նա հանդես յեկավ իրրև հակասահմանադրական ռեակցիայի հենարան և պաշտպանեց Պոլսոյանններին ու Ծերուսադեմի միաբաններին՝ ընդդեմ «Մ ե ղ ո ւ»-ի ու «Մ յ ո ւ ս ի ս ի ա թ ե ր»-ի։ 1860 թ. «Ձ ե ր և ա կ»-ը տարբեր պայքար սկսեց Նալբանդյանի դեմ։ «Ձ ե ր և ա կ»-ի 60—61 թ.թ. № 87-ում Ջամուռճյանը տպեց իր հոդվածն ընդդեմ Նալբանդյանի, իսկ նրա մահվան առթիվ «Ձ ե ր և ա կ»-ը գրեց, թե՝ «մոլորյալ մը իր պատիժը գտավ»։

---

* Տես „Кавказ" 1863 թ., № 68։

** «Փ ա ր ի զ» 1863 թ., հունվար։

4. «Մեղու»—պատկերազարդ յերկշաբաթաթերթ, լույս ե տեսնում 1856 թ. մինչև 1865 թ., վորից հետո ընդհատվում է և վերահրատարակվում 1872 թվից՝ խմբագիրն ե նշանավոր դեմոկրատ հրապարակախոս Հարություն Սըվաճյանը, վորը Նալբանդյանի մերձավոր գինակիցներից ու բարեկամներից մեկն ե։ «Մեղու»-ն 1860 թվից սկսած տպում և «Հյուսիսափայլ»-ից արտատպում ե Նալբանդյանի հոդվածներն ու բանաստեղծությունները («Ապրոնինն», «Ցերդ ազատության», «Ոշական», «Մանկության որեր»)։ Նալբանդյանը բանտում յեղած ժամանակ Սըվաճյանին նվիրել է մի բանաստեղծություն։ Սըվաճյանը սուր, խայթող գրիչ ուներ և յերգիծաբանի տաղանդ։ Նրա այս հատկությունների շնորհիվ «Մեղու»-ն դարձավ իր ժամանակի ամենաժողովրդական թերթը և տաճկահայերի համար գրեթե նույն դերը խաղաց, ինչ մեզ մոտ՝ «Հյուսիսափայլ»-ը։ «Մեղու»-ն խոշոր չափով նախապատրաստեց Պարոնյանի դեմոկրատական յերգիծանքը և պատահական չեր, վոր 1872 թվից այն սկսեց լույս տեսնել Պարոնյանի խմբագրությամբ։

5. Նալբանդյանն առաջին անգամ մտնում է Պոլիս 1860 թ. նոյեմբերի 20-ին։ «Հյուսիսափայլ»-ի աշխատակիցը մինչև այդ արդեն հայտնի յեր պոլսահայ հասարակության։ Պոլսում ձեռք բերած նրա ժողովրդականությանն առանձնապես նպաստեց «Մեղու»-ի և «Արևմուտք»-ի շուրջ համախմբված առաջավոր ինտելիգենցիան։ Նա Պոլսում հենց սկզբից ուներ և՛ բարեկամներ, և՛ թշնամիների պատրաստ բանակներ։ Այդ յերևում է մանավանդ մամուլի վերաբերմունքից։ Առաջավոր մամուլը Նալբանդյանի այցը նշեց ջերմ ու սրտագին հոդվածներով։ «Մեղու»-ն գրում ե. «Շատուց ի վեր կճանաչեյինք պ. Նալբանդյանն իր հրատարակություններովը «Հյուսիսափայլ» որագրին մեջ և իր վոգվույն ու սկզբանցը լավ ծանոթ ըլլալով, հեռվեն հեռու կորհնեյինք նաև իր և իր արժանապատիվ աշխատակիցներուն ջանքերը ի լուսավորություն ազգին և մասնավորապես ուսանողաբնակ ազգայնոց»։ Ցերկրորդ անգամ, յերբ 1861 թվի նոյեմբերին Պոլիս մտավ Նալբանդյանը, այդ առթիվ հոդվածները տպվեցին նաև Կ. Յուսքյուճյանի «Մասիս»-ում ու «Մանզումեյում» իսկ պահպանողական մամուլը՝ հանձինս Զամուռճյանի «Ծերկան»-ի, Տիգրիսենճյանի «Արևելյան դարձ»-ի և Վարդան վարչալի հայատառ թուրքերեն «Մեհմիրմ

հետո ընդունվեց և Ռ. Դուան կողմից հանձնարարվեց գործադրել 1860 թ. մայիսի 24-ից։ Այս կերպ ստեղծվեց այսպես կոչված տաճկահայ «Սահմանադրությունը», որով գործադիր իշխանությունը մնում էր զարձյալ կրոնական ու ֆաղաքական ժողովների ձեռքին, այն տարբերությամբ միայն, որ վերջիններս այժմ կազմվում էին ընտրական սիստեմով։

8. Մովսեսի տախտակներն ըստ Աստվածաշնչի այն քարե տախտակներն էին, որոնք, իբր թե, Մովսես մարգարեն Սինա լեռան գլխին ստացավ աստծուց։ Տախտակների վրա գրված էին տասը պատվիրանները։

9. Կրոնական կարգ միջնադարում։ Հիմնադիրն էր Դոմինիկոսը (1170—1221)։

10. Տես Անվանական բառարանը—Վանցի Պողոս։

11. Ակնարկը վերաբերվում է յեզվիտներին։

12. Գոլսի նշանավոր արվարձանը (փոքր-ասիական ափում), ուր ապրում էր Զամուռճյանը։

13. Տես Շեքսպիր, «Համլետ», ար. II, տես. 2-րդ։

14. Հրեաստանի թագավոր Հերովդես Անտիպասի (37—40 ն. մ. թ.) կինը։ Նա պահանջեց Հովհաննես Մկրտչի գլուխը իր աղջկա՝ Սալոմեյի ձեռքով։ Անզիջում ու դաժան կնոջ որինակ, որը կարող է բավարարվել միայն իր զոհին հոշոտելով։

15. Նկատի ունի Այվազովսկուն, Սարգիս Ջալալյանին և մյուսներին։

16. Ցերուսաղեմի միաբանությունը (հիմնվել է 1311 թ. Սարգիս յեպիսկոպոսի կողմից) այն դլխավոր ազդակներից մեկն էր, որի վրա հենվելով, 1860 թ. ոգոստոսի 25-ից հետո պոլսահայության ռեակցիոն շերտերը պայքարում էին Սահմանադրության կենսագործման դեմ։ «Մեղուն», «Մյուսաթի»-ն և «Մասիսը»-ը Սահմանադրության համաձայն պահանջում էին Ցերուսաղեմի նոր պատրիարքը ընտրել դրսից, միաբանները դրան դեմ լինելով, հրաժարվում էին Սահմանադրությանը յենթարկվել։ Այդ վեճերը հանդրան դեմ լինելով, հրաժարվում էին Սահմանադրությանը յենթարկվել։ Այդ վեճերը հանդեցին նրան, որ կառավարությունը և մանավանդ լիբերալ բուրժուազիան, որը վախենում էր ոչ միայն հասունացող դեմոկրատիայի ակտիվությունից, տեղի տվեց պահպանողականներին՝ 1863 թ. վերախմբագրելով 60 թ. ընդունված համեմատաբար լիբերալ Սահմանադրությունը։

16 ա. Նալբանդյանի խոսքը վերաբերվում է հատկապես «Հյուսիսափայլ»-ի 1860 թ. № 10-ում տպված Ստ. Նազարյանի «Մենդելսոն, Լեսսինգ, Լավատեր» հոդվածի հավելվածին, որի մեջ նա, կանգ առնելով նույն ժամանակամիջոցում Պոլսում տեղի ունեցող կրոնական ընդհարումների վրա, «Հայ յեկեղեցու վոտքից ցլուխ ռեֆորմ» էր պահանջում։

17. Ակնարկած տետրակը լույս է տեսել 1861 թ. Կ. Պոլսում, «Հայտարարութիւն առդային պատասխի» վերտառությամբ։ Հեղինակը (անհայտ) վիճում է «Մեղու»-ի, «Մյուսաթի»-ի և «Մասիս»-ի հետ։ Վիճաբանության առարկան և Ցերուսաղեմի պատրիարքը «ներսեն-դուրսեն» ընտրելու խնդիրը։ Տետրակի հեղինակը մի շարք հայհոյանքներ տեղալով «Մեղու»-ի ու «Մյուսաթի»-ի գլխին, հայտարարում է, որ «պատրիարքը դուրսեն չըլլար»։

18. «Փարիզ»—շաբաթաթերթ (1860—63), լույս է տեսել Ճանիկ Արամյանի, ապա՝ Կ. Վ. Շահնազարյանի տպարանում՝ Աբգահամ Մուրատյանի խմբագրությամբ։ Թերթն ընդհանուր առմամբ ուներ լիբերալ ուղղություն։ 1860—62 թվերին, յերբ Նալբանդյանը գտնվում էր Փարիզում, Մուրատյանը բավականաչափ մոտեցավ նրան և մորոշ չափով յենթարկվեց նրա գաղափարական ազդեցությանը։ Այդ թվականներից սկսած, ինչպես և Նալբանդյանի բանտարկության շրջանում, թերթը հակացարական տրամադրություններ և դրսևորում։ Նալբանդյանի հիշած ազատ հայկական մամուլի մասին «Փարիզ»-ը վոչ մի տեղեկություն չի տվել։ Պիտի յենթադրել, որ այդ մամուլը հիմնվելու յեր Թեքեյանի տպարանին կից և հրատարակվելու յեր Նալբանդյանի գեկավարությամբ։

19. Տես Աստվածաշունչ, Երեմիա, գլ. ԻԹ, 1։

20. 1860 թ. փետրվարի 11-ին կաթողիկոսին ուղղած նամակը վերաբերում է Այվազովսկու Վարդապետարանին, որտեղից և կատարում է մեջբերումը։

21. Հռոմի պապերից Սիմեոնը, վորի անունից և վերցված է տերմինը, յեպիսկոպոսական և վարդապետական պաշտոններն ատուրդով են բաժանում։ Դանթեն սիմոնականներին, իբրև ամենածանր հանցագործների, տեղավորում է դժոխքի ամենամռայլ բաժիններից մեկում։

22. Ղրիմի և Լեհաստանի հայերը գաղթել են Անիից XI դարի յերկրորդ կեսին՝ սելջուկների արշավանքների հետևանքով։ Ըստ Ղազար Ջահկեցի պատմիչի, Լեհաստան գաղթեցին մոտ հարյուր հազար հոգի։ Հայերը դարերի ընթացքում ապրելով Լեհաստանում և յենթարկվելով իշխող ժողովրդի տնտեսական-քաղաքական և կրոնական ազդեցության, աստիճանաբար ձուլվեցին լեհերի հետ։

23. Նալբանդյանը նկատի ունի 1778 թվի հայերի գաղթը դեպի Դոնի ափերը, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի գլխավորությամբ։

24. Նկատի ունի V դարի խոշոր գործիչներ Մեսրոպ Մաշտոցին, Սահակ կաթողիկոսին ու նրանց աշակերտներին։

25. Նալբանդյանն ընկճիածնում յեղել է 1860 թ. սեպտեմբերի 6-ից մինչև հոկտեմբերի 15-ը։

26. Ըստ հունական դիցաբանության, ճակատագրի վոզիներ, վորոնք մտնում և կտրում են մարդկային կյանքի թելը։

27. «Մասեաց աղավնի» հետադիմական, կղերական ամսագիրը, վորի խմբագիրն եր Գ. վ. Այվազովսկին։ Հրատարակվել է նախ Փարիզում՝ 1855 թվից, ապա Թեոդոսիայում, Ջալիլյան տպարանում։ Այվազովսկին «Մասեաց աղավնի»-ի 1860 թ. դեկտեմբերի № 11-ում արտատպելով նույն թվի «Մեղու Հայաստանի»-ի № 43-ում «Հյուսիսափայլ»-ի դեմ դրված Հախ-վերդի Նախ-Նազարյանցի պասկվիլը և Սկայորդու քննադատականը «Հյուսիսափայլ»-ի լեզվաշինարարության մասին,—գրում է. «Հյուսիսափայլի դիմումները, ընթացքը և աշխատությունը, ուղղակի այս մեր ազգային դավանության և ամենայն ազգային գեղեցիկ հատկությանց դեմ պատերազմել և ասոնք ջնջել վշացնել է» և խոստանում է «առաջիկա հունվարին», «Հյուսիսափայլի առաջին համառոտ բակեն մինչև վերջինը» քննության յենթարկել։ Նալբանդյանը նկատի ունի ահա այս սպառնալիքը։

28. Աքսորավայրեր ցարական Ռուսաստանում։

29. Համաձայն 1858 թ. հուլիսի 19-ին ներքին գործոց մինիստր կոմս Լանսկոյի կողմից հաստատված Ջալիլյան ուսումնարանի կանոնադրության, Այվազովսկին վոչ միայն «Մասեաց աղավնի»-ի խմբագիրն եր, այլև ցենզորը։

30. 1848 թ. Գ. Այվազովսկին, իբրև Մխիթարյան միաբանության անդամ, նշանակվում է Փարիզի Մուրատյան վարժարանի տեսչի ոգնական։ Վարժարանի տեսուչն եր Սարգիս Թեոդորյան վարդապետը։ Զգուշով տիրանալ Թեոդորյանի պաշտոնին, Այվազովսկին սկսում է Սբքային դրել այս զրպարտիչ ու վարկաբեկիչ նամակները։ Միաբանությունը Այվազովսկու այս նամակների ազդեցությամբ է վերջո Թեոդորյանին հեռացնում և պաշտոնից և Այվազովսկուն նշանակում վարժարանի ընդհանուր տեսուչ։

Նալբանդյանից առաջ այս նամակները հայտնի չեն յեղել Սաեփան Վոսկանին, վորի «Արևելք» թերթը 1856 թ. վակվել եր նույն Այվազովսկու շնորհիվ։ «Արմուտք»-ի 1859 թ. № 4-ում Ստ. Վոսկանը, հիշելով Այվազովսկու «Հավերժածք»-ի մեջ իբրև ուղղած ոպառնալիքը, գրում է. «Գ. Գ. Այվազյանը ավելի լավ կանե Սարգիս վարդապետին դեմ գրած սոսկալի զրպարտությունները հիշել և լռել»։ Պարզվում է, վոր այդ նամակները նախապես գտնվելիս են յեղել Բամբարջյան կաթողիկե վարդապետի մոտ։ Անկասկած է, վոր Մխիթարյանները, իրենց ուխտը դրժող վարդապետին (Այվազովսկի) վարկաբեկելու համար, Բամբարջյանի միջոցով մասսայականացնում են իրենց նամակները։ Այդ ճանապարհով էլ ահա նրանք ընկել են Նալբանդյանի ձեռքը, յերբ սա գտնվում եր Փարիզում։

31. Ս. Թեոդորյանի, Գ. Այվազովսկու և Ա. Գալֆայանի հրատարակած հայտարարությունը Մխիթարյանների դեմ 1856 թ.։

32. Տես Անվանական բառարանը—Ս. վ. Թեոդորյան։

33. Խոսքը վերաբերում է Այվազովսկու «Մի ջակ վարդապետարան ուղղափառ հավատոյ» գրքին, որը լույս տեսավ 1858 թվին՝ Փարիզում, Ղ. Գոլթ Հակոբոս պատրիարքի թույլտվությամբ։ Վերջինս այդ կերպ ուզում էր հարմարեցնել իր հակառակորդ Մատթեոս Զուխաճյանին (այդ ժամանակ կաթողիկոս) և զրկածությունից հանել նրա վարդապետարանը՝ «Հանդիսարան ուղղափառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ» վերնագրով։ Այվազովսկու այդ «Վարդապետարանը» չեզոքարկվեց կաթողիկոսի համախոհների բուռն քննադատության և չերկար վեճերի տեղիք տվեց։ Ռուսական իշխանությունը Այվազովսկու հեղինակությունը պաշտպանելու համար արգելում էր «Վարդապետարան»-ի մասին չեզած քննադատությունները հրատարակել։ Այդ պատճառով էլ դրանք տարածվում էին ձեռագիր վիճակում։ Այվազովսկին հետագայում գրում էր, որ ինքը «Վարդապետարան»-ի դեմ տեսել է չերկու ձեռագիր դրվածք՝ «մեկը անանուն խմաստակի մը գրվածքը, ռուսերեն, իսկ մյուսը՝ հայանի հակառակորդե մը, այսինքն Նալբանդյան Միքայելին շարադրված և կաթողիկոսին հուղարկված» («Պատմութիւն Յալիբեան վարժարանի», գլ. II)։ Այվազովսկու ակնարկած անանուն խմաստակը Մկրտիչ Եմինն էր, որի մասին հիշում է և Նալբանդյանը։ Բացի դրանցից կար նաև Ստ. Նազարյանի քննադատականը, որը նույնպես մնացել էր անտիպ՝ ցենզորի արգելքի պատճառով։ Հավանական է, որ Նալբանդյանը Պետերբուրգում չեղած ժամանակ կարդացել է այդ քննադատությունները։ Նալբանդյանի խոսքերն ահա վերաբերվում են այս իրադրություններին։

34. Այվազովսկու գիրքը, «Պատմութիւն Օսմանեան պետութեան», 2 հատ., լույս է տեսել 1841 թ., Վենետիկ։

35 Տես «Մասեաց աղավնի», 1856 թ., № 9, «Արևելյան վարժարանի բարեկարգման հիմունքը», էջ՝ 257, § ԽԹ։

36. Ակնարկում է Այվազովսկու չեզվիտական վարքագիծը. «Հոգևոր վարժություն»—„Exercita spritualia“ — Իգնատիոս Լոյոլայի առաջին գիրքն է, որը չեզվիտների գաղափարական հենարանը դարձավ։

ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

«Ճերկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը Նալբանդյանը գրել է Հնդկաստան կատարած ճանապարհորդությունից անմիջապես հետո, այսինքն 1862 թ. առաջին չեռամսյակում, Լոնդոնում և Փարիզում։ Տպագրվել է Փարիզում, Ճանիկ Սրամյանի տպարանում։ Աշխատության ձեռագիրն անհայտ է։ Տեքստը պատրաստված է այդ առաջին, հավանորեն հեղինակի հսկողությամբ լույս տեսած հրատարակության հիման վրա։

«Ճերկրագործությունն» իրավամբ համարվում է Միքայել Նալբանդյանի աշխատությունների գլուխ-գործոցը։ Դրա արժեքը մեծ է ոչ միայն հայ հասարակական մտքի, այլ և ռուսական վաճառականական խավականների դեմոկրատական շարժման պատմության մեջ։ Հիշյալ գործի մեջ Նալբանդյանը հասնում է ցարական ճնշող քաղաքականության ժողովրդական հեղափոխություն հակադրելու աստիճանին, նա բարձրանում է մինչև ցարիզմի գաղութային-նվաճողական քաղաքականության հակադրելուն։ «Ճերկրագործության» մեջ իրենց ամենացայտուն արտահայտությունն են գտել այդ շրջանի ռուսական հեղափոխական-դեմոկրատական իդեաները։

Դա այն շրջանն էր, երբ գյուղացիական ռեֆորմի հրապարակումից անմիջապես հետո չերկրում ծավալված գյուղացիական հուզումների և ապստամբությունների ազդեցությամբ տակ վերջնականապես ձևավորվեցին Նալբանդյանի հեղափոխական հայացքները։ Նույնպիսի վճռական շրջան էր դա Նալբանդյանի գաղափարական ավագ զինակիցներից մեկի՝ Ա. Ի. Գերցենի համար։ Վորքան պարզ էր դառնում Գերցենի համար կառավարության

Թյան կապը կալվածատերերի հետ, մորքան մեր եր բարձրանում գյուղացիական շարժումը, մորքան ավելի բացահայտ եր դառնում լիբերալների վախը գյուղացիական հեղափոխությունից, այնքան ավելի վճռականորեն եր կանգնում Գերցենը ժողովրդի կողմը՝ ընդդեմ կառավարության, կալվածատերերի և լիբերալների բլոկի, այնքան ավելի յեր մոտենում Չերնիշևսկու գլխավորած յերիտասարդ հեղափոխականների այն նոր սերնդին, որին պատկանում եր նաև Մ. Նալբանդյանը։

«Ճերկրագործություն» տեքստաբանական ուսումնասիրությունը, ի մի այլոց, վերջնականապես հաստատում է, որ Նալբանդյանի և Գերցենի անձնական ծանոթությունն սկսվել է ոչ թե 1862 թ., ինչպես մինչև այժմ յենթադրվել է, այլ ավելի վաղ, 1861 թ., այսինքն մինչև Հնդկաստան մեկնելը։ Ապացույցների առաջին խումբը վերաբերում է Ստանիսլավ Տլոորժևսկու հետ ունեցած նամակագրությանը, հետևաբար և ծանոթությանը։ Չի կարելի կասկածել, որ «Ծոցաստերի նկատողություններ»-ում հիշատակված Ստանիսլավը հենց Տլոորժևսկին է։ «Սենատական ցուցմունքներ»-ում Նալբանդյանը նրա մասին գրում է. «Նա ինտերպրետի (թարգմանի) պաշտոն է կատարում Լոնդոնում, «Պրովանս Ոթել» կոչված այն հյուրանոցում, որտեղ իջևանել էի առաջին անգամ» և այլն։ Այս պատմությունը, ինչպես յերևում է, չի համոզել սենատին, որի համար միանգամայն պարզ է յեղել, որ դա ոչ այլ ոք է, յեթե ոչ հայտնի լեհ էմիգրանտ Ստանիսլավ Տլոորժևսկին, որ Գերցենի մտերիմ բարեկամներից մեկն եր և նրա մերձավորագույն ոգեշնչողներից մեկը։ Նալբանդյանի հարաբերությունները Տլոորժևսկու հետ հաստատվում են նաև Տուչկովա-Ոգարյովայի «Հիշողություններ»-ից։ Վերջինս պատմում է, որ իրենք, այսինքն Գերցեն ընտանիքը, Ոգարյովը, նախքան Նալբանդյանին տեսնելը՝ լսել էին նրա մասին նրա ընկեր Ս.-ից։ Սենատի գործից յերևում է, որ Նալբանդյանը Լոնդոնից Փարիզ վերադառնալով ուղարկել եր իր լուսանկարները Գերցենին, Բակունինին, Ոգարյովին և Տլոորժևսկուն։ Այս հանգամանքը աներկբա չի դարձնում նրանց անձնական մտերմությունը, իսկ կուն։ Այս հանգամանքը աներկբա չի դարձնում նրանց անձնական մտերմությունը, իսկ սրանից հետևում է, որ կապվելով Տլոորժևսկու հետ, Նալբանդյանն անմիջականորեն կապվում եր և Գերցենի մերձավորների հետ։

Ստորև ընթերցողը կծանոթանա այս միտքը հաստատող նոր կարգի փաստերի։ Իսկ այս հանգամանքը վճռական նշանակություն ունի «Ճերկրագործություն» աղբյուրները ուշ գրելու շարժառիթները պարզելու տեսակետից։ Նալբանդյանի ծանոթությունը Լոնդոնի պրոպագանդիստների հետ չսահմանափակվեց միայն իդեական հաղորդակցությամբ, նա մտերիմ մասնակցություն ունեցավ նաև նրանց պրոպագանդիստական-կազմակերպչական գործունեությանը։ Առանձնապես ուշագրավ է նրա դերը „Земля и Воля“ հեղափոխական կազմակերպության հիմնադրման գործում։ Հայտնի չէ, որ այդ կազմակերպության համար դաղափարական հիմք հանդիսացավ Ն. Գ. Ոգարյովի „Что нужно народу?“ նշանավոր հոդվածը, որն ըստ Լեմկեյի, գրված է Ն. Ա. Սերնո-Սոլովյեվիչի, Ն. Ն. Ոբրուչևի, Ա. Ա. Սլեպցովի, Մ. Լ. Նալբանդյանի և այլոց մասնակցությամբ ու խորհուրդներով*։ Այժմ կասկած չկա, որ Նալբանդյանը մասնակցել է այդ հոդվածին։ Նոչն այն հիմնական միտքը, թե՝ «Հողը պատկանում է ժողովրդին», կազմում է «Ճերկրագործության» հիմքը, նրա idée fixe-ը։ Նկարագրելով ժողովրդի կրած անլուր տառապանքները ու զրկանքները, նրա հեղինակը մատնանշում է այն հանգամանքները, որոնց հետևանքով ժողովրդի մեծ մասը զրկվել է հողից։ Հողի պատկանելությունը մասնավոր անձերի, կալվածատերերի, պետության, եկեղեցու և այլոց, հանդիսանում է ժողովրդի ստրկության հիմնական պատճառը։ «Ազգ, դու ինչո՞ւ ես աղքատ, ազգ, դու ինչո՞ւ ես ստրուկ, ազգ, կյանքդ ո՞ւր ես քերով. «ազգ, դու ինչո՞ւ ես աղքատ, ազգ, դրա՞մ ես ուզում, ազգ, կյանքդ ո՞ւր ես քերով. «ազգ, դու ինչո՞ւ ես աղքատ, ազգ, դրա՞մ ես ուզում, ազգ, կյանքդ ո՞ւր ես հայրենիքը պաշտպանելու և նորա պատիվը տեղը բերելու համար»։ Մեր ընդգծած այս տողերը, որ չակերտների մեջ են առնված նաև կոնտեքստում, վերցված են „Что нужно народу?“ հոդվածից։ Սակայն ոչ միայն այս հատվածն, այլև ամբողջ գործի վրա զգացվում և Ոգարյովի հոդվածի ազդեցությունը. «Ճերկրագործության» հեղինակի հիմնական պահանջներից մեկը՝

---

* Տես՝ А. И. Герцен,—„Полн. соб. соч. и писем“, под. ред. М. К. Лемке, т. XI, 1919, եջ 136.

«հող, ազատություն և լուսավորություն», իրականում „Земля и Воля" հեղափոխական ծրագրային պահանջն էր։

„Что нужно народу?" կոչը լույս տեսավ „Колокол"-ում 1861 թ. հուլիսին, այսինքն այն ժամանակ, երբ Նալբանդյանը գտնվում էր արդեն կալվածքում։ Հետևաբար նրա մասնակցությունն այդ հոդվածին կարող էր կատարված լինել միայն նույն թվի հունվար ամսին, երբ նա իրոք Լոնդոնում էր։

Դերցենի հիշատակին նվիրված իր հոդվածում Լենինը գրում է. «Դերցենն առեղծեց ռուսական ազատ մամուլն արտասահմանում—սա է նրա մեծագույն ծառայությունը։ „Полярная Звезда"-ն բարձրացրեց դեկաբրիստների արձիգիցան։ „Колокол"-ը (1857—1867) սարի պես բարձրացավ հանուն գյուղացիների ազատագրության։ Սարկական լուսությունը խզվեց»*։ Ռուսական մամուլն առաջին անգամ սկսում է սիստեմատիկորեն մերկացնել ցարական բյուրոկրատիայի ու ճորտատեր ազնվականների չարագործությունները, վոստիկանական կամայականությունները, անպատիժ սպանությունները ու բռնությունները։ Նալբանդյանը կարողանում է կարճ ժամանակում ծանոթանալ „Колокол"-ի խմբագրության արամադրության տակ եղած կարևորագույն նյութերին և ոգտագործել դրանք իր աշխատության համար։ Այսպես, Տվերի նահանգի ազնվականների ուղերձը թագավորին և այդ առիթով արված արժեքավոր դիտողությունները Նալբանդյանը վերցնում է „Колокол"-իցը։ Նույն պարբերականի շնորհիվ է անշուշտ, վոր նա իմանում է գյուղացիական ապստամբությունների և խլրտումների մասին։ Վոր Նալբանդյանը 1861 թ. արդեն տեղյակ է եղել Լոնդոնի ռուսական էմիգրացիայի հրատարակություններին և ոգտագործել է, չնչելով աղբյուրները—այս մասին ընթերցողը ուշագրավ փաստեր կգտնի երկի մեր ծանոթագրությունների մեջ։ Վատարանդիների հեղափոխական գործունեությունն այս շրջանում արտահայտվում էր գլխավորապես գրական պրոպագանդայով։ Նալբանդյանը, վոր միշտ էլ բարձր է գնահատել այդ, նոր ուժով շարունակում է «ռուսական ազատ մամուլի» գործը։ Դերցենի ծավալած այն ագիտացիան, վորի մասին խոսում էր Լենինը, Չերնիշևսկու հետ միասին ընդլայնում, խորացնում և կովում է նաև Միքայել Նալբանդյանը։ Այս հողի վրա է ստեղծվում անա «Ձերկրագործությունը վորպես ուղիղ ճանապարհ» երկը։

«Ձերկրագործությունը» լույս տեսավ Սիմեոն Մանիկյան կեղծ անունով. չնայած դրան, պարզ էր, որ լեզվալ ճանապարհով այդ գիրքը չէր կարող Ռուսաստան հասնել։ Այդ պատճառով էլ նրա վոխադրությունն ստանձնում են Նալբանդյանի Լոնդոնի մտնելը։ Այդ պատճառով էլ նրա վոխադրությունն ստանձնում են Նալբանդյանի Լոնդոնի մտնելը։ Ռուսաստան մեկնելիս Նալբանդյանն արդյոք իրեն հետ վերցրե՞լ է գրքույկի բարեկամները

և III բաժանմունքը և կցում Սենատական դործին Դատավարության նյութերից յերեում է, վոր քննիչ հանձնաժողովը վոչ միայն պարզել եր, վոր «Ժոհաբարական գիրք»-ը պայմանական վերնագիրը և, այլև Ակաբինովի քաղվածաբար կատարած թարգմանությունից հիմնավորապես ծանոթ եր «Ցերկրագործության» մեջ արտահայտված գաղափարներին, բայց այդ հանձնաժողովը մինչև վերջ էլ չիմացավ ամենակարևորը, այսինքն այն, վոր գրքի վրա նշված Սիմեոն Մանիկյանը հենց մեզադրյալ Նալբանդովն և։ Նա մեղադրվում է միայն այդ գործը Ռուսաստանում տարածելու մեջ։ Ուշադրավ է, վոր «Ցերկրագործությունը» Նալբանդյանին պատկանելու փաստը վորոշ ժամանակ հաստատապես հայտնի չի յեղել նաև Մխիթար Ալմիկյանին, վոր առաջինն զբաղվեց 32-ի դատավարության վերաբերյալ նյութերի հրապարակումով*։ Այսպիսով, «Ցերկրագործության» մուտքն արգելված եր Ռուսաստան, իսկ նրա սակավաթիվ որինակները հավաքված էլին։ Գիրքն արգելված է յեղել նաև Թյուրքիայում։ Այս աշխատությունը տարածվել է միայն ձեռագիր և վիմագիր արտատպություններով։ Հայտնի չե ի միջի այլոց, վոր Նալբանդյանի այս գործն արտագրել են նաև Նար-Դոսն ու Ալեքսանդր Ծատուրյանը և տարածել յերիտասարդության շրջաններում։

«Ցերկրագործությունը վորպես ուղիղ ճանապարհ» աշխատությունն առաջին անգամ լեզալ հրատարակությամբ լույս է տեսնում «Ցերկիր»-ի ոսոտովյան հրատարակության յերկրորդ հատորում (1906 թ.), սակայն զրաքննական մեծ կրճատումներով։ Հանվել է յերկու կարևորագույն հատված. գրանք այն տողերն էլին հենց, վորոնք Ակաբինովի թարգմանությամբ ներկայացվել էլին քննիչ հանձնաժողովին, վորպես ապացույց «Ցերկրագործության» հեղինակի հակացարական, հեղափոխական գործունեության։ Ցերրորդ հրատարակությամբ յերկին առանձին գրքով լույս տեսավ Ռոստովում։ Այս անգամ անճանաչելիորեն ազավաղվում են հողի համայնական սեփականության գաղափարին վերաբերող տողերը, այսինքն յեղծվում է Նալբանդյանի հիմնական միտքը։ Ցերկին ամբողջական կերպով հրատարակվեց միայն վերջերս, Խորհրդային Հայաստանի Պետհրատի կողմից, հեղինակի ծննդյան հարյուրամյակի կապակցությամբ։

Հայտնի չե Նալբանդյանի գործունեությունը Պոլսում և նրա կապերը պոլսահայ ռադիկալ-դեմոկրատական խավի աչքի ընկնող ներկայացուցիչների հետ։ Այն հանգամանքը, վոր դրանցից շատերը (Սըզլաճյան, Թազվորյան և ուրիշները) մտնում էլին «Հայոց Բարեգործական Ընկերության» մեջ, առիթ է տվել վոմանց Նալբանդյանին վոչ միայն կապելու այդ ընկերության հետ, այլև ընդհանուր կեսեր վերաբերելու ընկերության «Հայատարարության» և Նալբանդյանի «Ցերկրագործության» մեջ։ Իրականում, սակայն, վորևե ընդհանուր բան չկա այդտեղ։ «Հայատարարությունը» պոլսահայ ազգային բուրժուազիայի գաղափարախոսության արտահայտություններից մեկն է, բուրժուազիա, վոր ղեպի գաղութարարական կարգերի մուտքը, միաժամանակ կոչ է անում զարկ տալ տեղական արդյունաբերության ու արհեստներին, այսինքն՝ առնչելու ինքնուրույն ազգային կապիտալիստական արտադրության։ «Հայատարարության» հեղինակները պատրանում են ոսմանյան պետության, վորն իր իշխանության ներքո գտնված ազգերին «անանկ արտոնություններ շնորհած է վորոնցմե զուրկ են ուրիշ շատ նվաճյալ ազգեր նույնիսկ Ցեվրոպայի մեջ»**։ «...Հայ ազգը գիտե թե իր ճակատագիրը Ոսմանյան պետության ճակատագրեն կախյալ է, իր միակ ապավենը, իր ամբողջությունը պահպանողը, իր կարողության աղբյուրը, իր լեզվին ու կրոնքին պաշտպանը, նույն ինքն Ոսմանյան կառավարությունն է»...*** «Քանի վոր Ոսմանյան կառավարությունը,—ասված է այնուհետև «Հայատարարության» մեջ,—սկսած է Ցեվրոպայի պետությանց քաղաքականության հետևիլ և անոնց պիտույքներն ու ընթացքը իրեն սեղմականել կառավարական ձևն ու դրության, մասնավորաց վիճակը, յերկրագործությունը, առևտուրը և արվեստները մեծամեծ չափոխության յենթակա յեղան և մինչև անգամ հեղափոխության մեջ ընկան։ Այս բնական օրենք մըն է վոր չհետևիլ անկարելի յե. բայց նախատես և խոհեմ ազգ մը՝ գուշական օրենք մըն է վոր չհետևիլ անկարելի յե. բայց նախատես և խոհեմ ազգ մը՝ գուշա-

---

* Տես՝ журнал „Былое“, 1906, № 7 և շար.։
** «Գաւուն Հայոց աշխարհին», 1862, էջ 610։
*** Ն. տ., էջ 611։

կելով իր հետևած քաղաքականությանը ապագային վրա ունենալիք ազդեցությունը, պետք է վոր պատրաստվի, իր ընթացքը դարին պահանջած արագությանը համեմատել գիտենա, նոր ի նորս ծնած կամ յերևան յեկած պիտույքները հագեցնելուն միջոցներ տովրի, մեկդի նետե նախապաշարմանց ցնցոտիքը և գնոր մարդն զգենու, ըսել կուզենք թե վորովհետև ազգը տերության պես Ցեվրոպիո քաղաքականությունը իրեն առաջնորդ ընտելու պարտավորեցավ, ալ պետք է վոր այն քաղաքականությունը պահանջած բոլոր փոփոխությունները ըստ պարագային ի գործ դնե»*։ Այն հանգամանքը, վոր յեվրոպական կապիտալն սկսում է արդեն զգալի ջնաս հասցնել տեղական առևտրին, հալածելով ու խափանելով «մեր հինավուրց յերկրագործությունը», պարտադրում է Ընկերությանը լրջորեն խորհել այդ մասին։ Վերն է արդյոք «դարմանը»։ «Շատ դյուրությամբ լուծվելու խնդիր մըն է ասիկա։ Ի բնե արհեստավոր ու յերկրագործ ազգ մը՝ իր ձեռքի արվեստն ու յերկրագործությունը անպատանալուն համար թշվառության մատնված՝ ուրիշ կերպով չկրնար կանգնիլ, բայց միայն նոր քաղաքականության պահանջած արվեստներն ու յերկրագործությունը ձեռք բերելով։ Այն ատեն ան՝ կրնանք հավատալ պրուժությամբ մրցիլ մեր հողին վրա ոտարոտի ճարտարությանց՝ արվեստներու և յերկրագործության հետ և մեր ընդկ յերկրացի ըլլալուն շնորհիվն իրաց վանել զանոնք...»**

Ինչպես տեսնում ենք, ընդհանուր վոչինչ չկա «Հայտարարության» հեղինակների և Նալբանդյանի քարոզած հիմնական դաղափարների միջև։ «Հայտարարությունը», ինչպես վերն ասվեց, վերջին հաշվով հող էր նախապատրաստում կապիտալիստական արտադրության համար, իսկ «Ցեվրկրագործությունը», ընդհակառակը, միջոցներ էր նշում կապիտալիզմին դիմադրելու։

Խոսելով Ջերնիշևսկու հայացքների պատմական դերի մասին, Լենինը գրում է. «Ջերնիշևսկին սոցիալիստ-ուտոպիստ էր, վոր յերազում էր անցնել սոցիալիզմին հին, կիսաֆեոդալական, գյուղացիական համայնքի միջոցով, նա չէր տեսնում ու անցյալ դարի 60-ական թվականներին չէր էլ կարող տեսնել, վոր միայն կապիտալիզմի ու պրոլետարիատի զարգացումն ընդունակ է ստեղծել նյութական պայմաններ և հասարակական ուժ սոցիալիզմին իրականացնելու համար»***։ Լենինի այս խոսքերն ամբողջությամբ կարող են վերաբերվել նաև Նալբանդյանին։ Չհասկանալով կապիտալիզմի պատմական դերը և անծանոթ լինելով պրոլետարիատի հեղափոխական միտքին, Նալբանդյանը մերժում է կապիտալիզմը, դիմադրել լինելով դեմ համայնական տնտեսությունը։

Սակայն չնայած այդ հանգամանքին, Ջերնիշևսկու նման նա ևս չէր մորթում կոշիկ եր տեխնիկական առաջադիմությանը և կուլտուրային, այդ բառի ընդարձակ իմաստով։ «Նույն այն գործարանքը,—գրում է նա այս գործում,—նույն այն մեքենանները, վոր կարող են ներգործել Ցեվրոպայի մեջ, ծանր պայմանների տակ, կարող են ներգործել Աիա մեջ, ուր կյանքի պիտույքը, պարզությունը և այլ բնական հանգամանքները ավելի դյուրություն կարող են տալ այսպիսի ձեռնարկությանց»։ Նա ձգտում էր ոգտագործել կապիտալիզմի ստեղծած տեխնիկայի և կուլտուրայի նվաճումները, այն պայմանով, վոր այն, վոր աշխատավոր մասսաներն ազատ լինեն կապիտալիստական շահագործումից և ճնշումից։ Ուտոպիստ Նալբանդյանը դառնում է զգոն ռեալիստ, յերբ խոսքը վերաբերում է աշխատավորության գոյավիճակին. նա փայլուն կերպով յերևան է հանում արդյունաբերության զարգացման ընկերակցող այնպիսի յերևույթները, ինչպիսիք են մասսայական գործազրկությունը, ժողովրդական ամենալայն խավերի աղքատությունն ու թշվառությունը, դրա հետ նաև բուրժուական ազատության ու հավասարության իսկական էությունը։ Ահա թե ինչ է գրում այս մասին նա. «Աահ խնդրեմ, ազատ եմ յես, միմիայն որչնքով, քաղաքականապես ազատ կոչվելով, ազատ եմ յես, քանի վոր նյութական կարոտությունը ստիպում է ինձ, կամա ակամա, մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ծառայությունը

---

* Ն. տ., եջ 612։

** Ն. տ., եջ 614—15, ընդգծումը մերն է։

*** Ленин, „Сочинения" т. XV, стр. 144։

Թյամբ հաց հարել իմ ընտանիքի համար։ Ազատ եմ յես, յեթե ուր ունիմ, վորին յեթե իմ ազատությունը հայտնեմ բացարձակապես, պիտի զրկեմ ապրուստից և ինձ և իմ ընտանիքս, ծառա լինելուց դադարելով, և այս բոլորից հետո ազատ եմ յես... յերևակայության մեջ, թե ոդի մեջ։ Ճշմարիտ ազատությունը տնտեսական ապահովության մեջ և միայն «...քանի վոր տնտեսական խնդիրը—այն բազմակնճիռ Գորդիասի կապը լուծված չե, հասարակության յուր ընկերական և ընտանեական հարաբերության մեջ ազատ չե, թող քաոսուն անգամ, յեթե կամենան, փոփոխեն կառավարության ձևը, բայց քանի վոր հասարակության մի մասը տիրապետել և հողին, իսկ մյուս մասը ենում և մուրացիկ, այնտեղ թագավորում և բռնությունը։ «Ցեվրոպան ուշ ծնեցավ, բայց շատ արագ ծերանում է,—յեզրափակում և նա հակառակ «Հայոտարարության» հեղինակներին։ Մի քանի դարու մեջ նա անցավ պատմության շատ կերպարանքներ—phase, փոփոխեց և փոխոխում և դեռ ևս կառավարության ձևերը, բայց ցարդ չհասավ յուր նպատակին, վորովհետև միշտ աշխատեցավ ճանապարհը լայնացնել, ուղղել, հարթել, մոռանալով, վոր յուր նեղությունը ճանապարհից չե այնքան, վորքան վոտքի կոշկից, վոր սեղմում և և չի թողնում մարդ։ Այսպիսի դժբախտության մեջ լինչ կոդնի ճանապարհի լայնությունը, քանի վոր կոշիկը նեղ և։ Այո, Ցեվրոպան կանգնած և այսոր մի դժվար լուծանելի խնդրի առջև, այդ տնտեսական խնդիրն և, մարդը և հացը։ Ցեվ այդ խնդիրը, կանուխ թե ուշ, թեև սոսկալի փոթորիկներով, պիտի լուծվի։ Վոչինչ բռնություն, վոչինչ պահպանողական համակարգություն, վոչինչ ընդիմադրություն, վորևիցե կողմից, չե պիտո կարողանա փակել նորա առաջքը, թեև այսոր հալածական և աքսորական են այդ ապագայի մարգարեքը և առաքյալքը»։

«Նույն այդ տնտեսական խնդրի առջև կանգնած և այսոր ռուսական կառավարությունը և ազնվականը։ Այս խնդիրը մահու և կյանքի խնդիր և. „to be, or, not to be!“։ Սակայն 1861 թ. փետրվարի 19-ի ուկազով ցարական կառավարությունը վճռեց դյուղացիության։ առանց հողի տրված ազատությունն ևր։ Ռեֆորմից հետո առաջացած մասսայական խռովությունները դրա լավագույն ապացույցն են։ «Զանազան գավառներում դուրս յերևեցան զանազան ընդդիմություններ և ապստամբություններ, յեթե իրավունք պահանջելը, վ ս ե մ վ ճ ռ վ, կարելի յե ապստամբություն անվանել։ Կառավարությունը զենք գործ դրեց նորա վերա, բայց սպանվածների արյունը վոռոգեց և աճեցուց ընդդիմության սունկը»։ Կարծես վորպես պատասխան Չերնիշևսկու վոռոգեց և աճեցուց ընդդիմության սունկը»։ Կարծես վորպես պատասխան Չերնիշևսկու այն հռչակավոր նամակին, վոր Русский человек առորագրությամբ տպվեց „Колокол“-ում և որը վերջանում է այս խոսքերով. «Վ,ոչ, մեր դրությունը սարսափելի յե, անտանելի և միայն կացինը կարող է մեզ ազատել և, կացնից բացի, վոչինչ մեզ չի ոգնի»,—Նալբանդյանը դրում է. «բայց այս ջերմախտական և լարյալ վիճակը անհնար է վոր լինի յերկար ատա։ Ցեթե վաղորոք խելք գործ չդրվի, սարսուռը յուր հոդով հանդերձ կատարելապես ազատ չքարոզվի և այս կերպով այն կնճիռը չլուծվի, ս ա ր ս ո ւ ռ ը կ ա ց ի ն ո վ կ վ ճ ռ ե գ ո ր ծ ը»։ Նալբանդյանը լավ եր ըմբռնում, վոր ռուս ճորտատեր բյուրոկրատական պետությունը չի կարող ազատագրել դյուղացիներին, այլևնքն տապալել ճորտատերերին, նա անկարող եր «կատարելապես», առանց վրկադնի, ազատել ճորտ դյուղացիությանը, հետևաբար Ցեում եր, վոր սարսուռը «կացինով վճռե իր գործը»։ Ա.յսպիսով, Նալբանդյանը հետևելով Չերնիշևսկուն, կանգնած եր ռուսական միապետությունը դյուղացիական հեղափոխության միջոցով տապալելու տեսակետի վրա։

Միայն դրանից հետո կարելի յեր անցնել տնտեսական հեղափոխությանը, վոր ծրագրում եր նա ցարիզմի և սուլթանիզմի կրունկների տակ հեծող ժողովուրդներին, այդ թվում նաև հայերի համար։ Առանց տնտեսական հեղափոխության հայ ժողովուրդն ապրել չի կարող։ Հայ աշխատավոր ժողովուրդն ազգասա և, որվա հացի կարոտ, վորովհետև հող չունի։ Անկարելի յե այդ ազգի «հինքը նորոգել», ուժ և զորություն դնել նրա մեջ, քանի դեռ նրա «տնտեսական խնդիրը» կարգի չի դրված։ Նալբանդյանն այդ խնդիրը լուծելու «ուղիղ ճանապարհը» համարում է յերկրագործությունը։ Սակայն դա բնավ եր այն յերկրագործությունը չե, վորը քարոզիլով, ինչպես վերը տեսանք, հանդես յեկավ «Հայոց Բարեգործական Ընկերություն»-ը։ Պատասխանելով այդ հարցին, «Ցերկրագործության» հեղինակն ամբիջապես ավելացնում է, թե «առանց ազատ հողի չկա յերկրագործություն»։ Իսկ հողն

ազատ և միայն այն ժամանակ, երբ համայնական սեփականություն է դառնում։ «Հողը պատկանում է հասարակության, որի ամեն մի անդամ հավասար իրավունք ունի հավասար քանակության վերա, հավիտյանս ժամանակների, և մի կողմից վաճառելու իրավունք չունենալով իսկ, մյուս կողմից, առանց արգելքի հողը գործելու և արդյունավորելու իրավունքը անկողոպտելի պահելով։ Այդ հասարակության անդամը և նորա սերունդը հաստատում է յուր կյանքը մի ամուր և ապահով հիմքի վերա և անհնար է, որ նա կամ ազգությունի հանդիպի կամ խավար կարող ըլնա։ Վորպես գյուղացիական սոցիալիզմի ներկայացուցիչ, Նալբանդյանը յերքը տեսնում է գյուղացիական համայնքի մեջ։ «Հեգելը և նորա ժամանակը» աշխատության մեջ նա ուղղակի այսպես էլ գրում է. «Մ ն ո ւ մ ե մ ե ջ նորա ժամանակը» աշխատության մեջ նա ուղղակի այսպես էլ գրում է. «Մ ն ո ւ մ ե մ ե ջ յե ր ք ը վ ո ր պ ե ս մ ի բ ա ր ե ր ա ր յ ե լ ք հ ա ս ա ր ա կ ա կ ա ն ս կ զ բ ո ւ ն ք ը (общинное начало), որ կա Ռուսիո մեջ»։

Քարոզելով համայնական հողատիրության սկզբունքը, Նալբանդյանը, բարեբախտաբար, չի սահմանափակվում դրանով։ «Մ ո ս և Վ ա ր դ ի թ ե ր ի» կրթուիկայի մեջ նա առաջ է մղում այս խնդիրը, նշելով հ ա մ ա յ ն ա կ ա ն աշխատանքի դերը։ Ջատագովելով Պուշկինին այն բանի համար, որ սա իր յերկում պատկերում է հին գյուղի ուշագրավ յերևույթներից մեկը—փոխադարձ գնալը, այսինքն՝ կոլեկտիվ, համայնական աշխատանքը, Նալբանդյանը գրում է. «Ա յ ս ս կ զ բ ո ւ ն ք ը մ ե ծ խ ո ր հ ո ւ ր դ ո ւ ն ի ը ն կ ե ր ա կ ա ն կ յ ա ն ք ո ւ մ»։ Նրա համար արդեն պարզ ել, որ համայնական հողատիրության մեջ, յերբ արտադրությունը համայնական չե և համայնական հսկայական և։ Առաջինը միայն թույլ չի տալիս, որ գյուղը քայքայվի, յերկրորդը, դրանից զատ, նաև նպաստում է արտադրության բարձրացմանը։

Տնտեսական ազատության առաջին նախապայմանը, ինչպես տեսանք, Նալբանդյանը համարում է քաղաքական ազատությունը, որը կարելի յե ձեռք բերել միայն ցարիզմը տապալելով։ Ազատագրական այդ պայքարի նպատակը պետք է լինի՝ հասարակ ժողովրդի համար հող և ազատություն նվաճելը։ Ազգային ազատագրական շարժումը, այսպիսով, միջոց պետք է լինի տնտեսական խնդիրը լուծելու և բոլոր ազգերի միջև ճշմարիտ հավասարություն հաստատելու համար, որովհետև ազգությունը լուի պատմական իրողություն է և վորպես այդպիսին՝ յենթակա յե փոփոխության և չքացման։ Ազգությունն ընդունելի յե այնքան, որքան այն պատմական ռեալ իրականություն է, բայց այն միաժամանակ մերժելի յե, քանի որ «բանակականությունը յերբեք չի կարող արդարացնել նորան»։ Նալբանդյանը կատաղի հակառակորդ է ռուսական տեսության, նրա համար չկան «արտոնյալ» և «սուրբ» ազգեր։ «Ազգությունը անմեղադրելի» յե և ամենայն ընդունելության արժանի, յեթե նա խաղաղական մյուս ուրիշ ազգությունը անխուիր նույնպիսի իրավանց ժառանգ, վորպիսին ստացել է ինքը»։ Ջին ժողովրդի պայքարն Անգլիայի դաղութային քաղաքականության դեմ նույնքան արդարացի յե, որքան վրացի և հայ ժողովուրդների պայքարը ռուսական ցարիզմի դեմ։ Նալբանդյանը ապանիչ ծաղրով և խոսում դաղութային այն քաղաքականության մասին, որ յեվրոպական առաջավոր պետությունները, այդ թվում նաև ցարական Ռուսաստանը, վարում են քաղաքակրթության տարածելու կեղծ փրաղների տակ։ Բազմաթիվ փաստերով նա դիմակազերծ և անում այդ պետություններին, ճնշված ազգությունները կռվի կոչելով հայրենի և ոտար բռնակալության դեմ։ Մերկացնելով յեվրոպական պետությունների դաղութային քաղաքականության իսկական իմաստը, Նալբանդյանը դրանով էլ հայ ժողովրդի ազատագրումը ցարիզմի լծից, և նրա ճակատագիրը կապում է ռուս մեծ ժողովրդի և մյուս ճնշված ժողովուրդների ազատագրության հետ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նպիգրաֆը վերցված է Ֆոյերբախի «Քրիստոնեության էության» աշխատության յերկրորդ, 1843 թ. հրատարակության առիթով գրված առաջաբանից. տես Л. Фейербах, „Сущность христианства“, пер. Филадельфа Феомахова, Лондон, 1861 որ և հավանորեն ձեռքի տակ է ունեցել Նալբանդյանը։

2. Քաղաքացիական պատերազմն Ամերիկայի հյուսիսային նահանգների, ուր գործադրում եկին ազատ վարձու աշխատանքը, և հարավային նահանգների միջև, ուր պահպանվում էր ստրկական աշխատանքը, սկսվեց 1861 թ.։ Հյուսիսային արդյունաբերական բուրժուազիան ձգտում էր իրեն չենթարկել հարավային նահանգներն իրենց բամբակի պլանտացիաներով, որոնց տերերն աշխատում եկին ընդլայնել ստրկական աշխատանքի գործադրության ասպարեզը։ Պատերազմը վերջացավ 1865 թ. ապրիլին՝ հյուսիսային նահանգների զորքերի հաղթությամբ։ Եվրոպայում Հարավի կողմն անցավ անգլիական բուրժուազիան։ «Մենք ստրկություն չենք սիրում,—հայտարարեց լեվրոպացի մի քաղաքագետ,—բայց մենք բամբակի կարիք ունենք»։ Բանվորները հյուսիսի կողմն եկին։

Այս խնդրին նվիրած իր հոդվածներից մեկում Մարքսը գրում է. «Հարավի և հյուսիսի միջև տեղի ունեցող ժամանակակից պատերազմը, հետևաբար վոչ այլ ինչ է, եթե վոչ յերկու սոցիալական սիստեմների—ստրկության սիստեմի և ազատ աշխատանքի սիստեմի—պայքար։ Այնքան վորքան այս յերկու սիստեմները չեն՝ կարող այլևս հյուսիս-ամերիկյան ցամաքամասում կողք-կողքի խաղաղ գոյություն ունենալ, ուստի և բռնկվեց պայքարը։ Այն կարող է վերջանալ այս սիստեմներից մեկնումեկի հաղթանակով միայն» (К. Маркс и Ф. Энгельс, „Сочинения", т. XII, ч. 2, եջ 251)։

3. Չակերտների մեջ առնված խոսքերը վերցված են Ն. Գ. Ոգարյովի „Что нужно народу?" հոդվածից։ Տես А. И. Герцен, „Полн. соб. соч. и писем", под ред. М. К. Лемке, т. XI, 1919, եջ 138։

4. Այստեղ է ինչպես է աղավաղվել այս կարևորագույն հատվածը Բոստոնի հրատարակության մեջ. «Հողը պատկանում է հասարակության, վորի ամեն մի անդամ հավասար քանակության վերա, հավիտյանս ժամանակների, և մի կողմից վաճառելու իրավունք չունենալով, հողը գործելու և արդյունաբերելու իրավունքը անկոդոպտելի պահելով, այդ հասարակության անդամը և նրա սերունդը հաստատում է յուր կյանքը մի ամուր և ապահով հիմքի վրա,/և անհնար է, վոր նա կամ աղքատության հանդիպի կամ խպատ կարող լինա»։

5. Դիալոգով գրված այս ամբողջ հատվածը վերաբերում է 1848 թ. փետրվարյան հեղափոխության ծրանսիայում։ Դա այն շրջանն էր, վոր Մարքսը բնորոշեց իբրև հեղափոխության նախաբան։ Հեղափոխությունն սկսվեց փետրվարի 23—24-ի արյունահեղ ընդհարումով, վորից հետո հայտարարվեց ժամանակավոր կառավարություն։ Զինված մարտերի արդյունքն այն յեղավ, վոր, Մարքսի խոսքերով ասած, յեթե առաջ թագավորի անունով իշխում էր բուրժուազիայի մի սահմանափակ մասը, այժմ ժողովրդի անունից իշխելու յե ամբողջ բուրժուազիան։ Ժողովուրդը, վորի հաշվին կատարվեց այդ հեղափոխությունը, իրապես վոչինչ չստացավ դրանից։

6. «Սեփականությունը գողություն է» խոսքը պատկանում է Պրուդոնին։ Տես նրա «Ինչ է սեփականությունը» հոդվածը։

7. Ալենարկում է Նապոլեոն Բոնապարտին։

8. Համմ. Ա. Ի. Գերցենի „Былое и думы" մեմուարների II հատորի VI մասի հետ („Джон-Стюарт Милл и его книга „On Liberty"")։ Նալբանդյանը, հետևելով Գերցենին, ոգտագործում է Միլլի աշխատության քննադատական մասը, բնութագրելու համար այն փակուղին, վորին բաղխվում է բուրժուազիայի քաղաքական սիստեմը։

9. Խոսքը վերաբերում է այսպես կոչված Արևելյան պատերազմի (1853—56) ղրիմի կամպանիային։ Պատերազմը տեղի էր ունենում մի կողմից Ռուսաստանի և մյուս կողմից Անգլիայի, Թյուրքիայի, Ֆրանսիայի և Սարդինիայի կոալիցիայի միջև։ Պատերազմի հիմնական պատճառը զարգացող արդյունաբերական կապիտալիզմն էր, վոր քայքայում էր ռուսական ճորտատիրական կարգը, դեմ առնելով նեղ շուկային։ Այդ արգելքը հաղթահարելու յերկու ուղի կար. ճորտատիրական իրավունքի վերացումը կամ նոր շուկաներ ձեռք բերելու ուղին։ Պատերազմի համար քաջալերող ուղին։ Նիկոլայ I-ի կառավարությունն ընտրեց յերկրորդ ուղին։ Պատերազմի առիթ հանդիսացավ Վալախիայի գրավումը ռուսական զորքերի կողմից (1853), իսկ նրա վճռական շրջանը՝ դաշնակիցների կողմից Սևաստոպոլի պաշարումը, վոր վերջացավ քաղաքի

հանձնումով։ Անհաջող այդ կամպանիան սախլեց ռուսական կառավարությանը ձեռնարկել 1861 թ. ռեֆորմին։

10. Փետրվարի 19-ի «Պոլժինիա»-ի հրապարակումից անմիջապես հետո սկսեցին գյուղացիական հուզումները։ Թվում, որ կառավարությունն ապատության և խոստանում առանց հողի, և փոխարենը պահանջում ծանր հատուցում հողատեր կալվածատերերի՝ գյուղացիությունը տարերայնորեն դուրս է գալիս այդ որոնքի դեմ։ 1861-ից մինչև 1863 թ. տեղի ունեցան 1100 խռովություններ, որոնք տեղ-տեղ ստացան իսկական ապստամբության բնույթ և ճնշվեցին զորամասերին, ոտնությանը կանչված զինված ուժերի կողմից։

11. Տվերի նահանգի տասներեք ձերբակալված հաշտարար միջնորդներն էին. Նիկոլայ Բախտինն, Կուդրյավցև, Նևիդոմսկի, Պալինովի, Պոլտորացկի, Ալեքսեյ Բախտինն, Լազարև, Լիխաչով, Դեմյանով, Դյագենսև, Շերբովով, Բարկաշին և Խարլամով։ Անհասը նրանց դատապարտել էին բռնաբարությունը, զրկելով որոշ իրավունքներից, որը հետո փոխարինվեց հասարակական պաշտոններ վարելու արգելքով (տես „Великая реформа„, т. V, եջ 248 և շար.)։

12. Տվերի նահանգի ազնվականության այս ուղերձը լույս տեսավ „Колокол“-ում (№ 126) 1862 թ. մարտի 22-ին, որը և ձեռք տակ է ունենալ Նալբանդյանը։ Վերհիշելով այս ուղերձի նախաձեռնողներից մեկին, Նիկոլայ Ալեքսանդրովիչ Բախտինին, Լենինը գրում է. «Ն. Ա.-ն իր կրտսեր եղբոր՝ Ալեքսեյի և այլ միջնորդների հետ միասին ստորագրել է 1862 թ. ուղերձը։ Այդ ուղերձը, ինչպես հաղորդում է մեր լրագրերից մեկում՝ Ն. Ա. Բախտինի մասին գեներալ նահապետության հեղինակը, պատճառ դարձավ պատժելու ստորագրողներին։ Մի տարի Պետրոպավլովսկի բերդում ձերբակալված ճնշուց հետո բռնաբարյալները ազատվել են, բայց վորում Ն. Ա.-ն և նրա եղբայր Ալեքսեյը ներում չստացան (նրանք չէին ստորագրել ներման մասին տրված խնդրագիրը), որի հետևանքով նրանց այլևս թույլ չտրվեց վարել հասարակական պաշտոններ։ Դրանից հետո Ն. Ա.-ն չորբեք այլևս հանդես չեկավ հասարակական ասպարեզներում և չեր էլ կարող դալ... Ահա թե ինչպես եր վարվում մեր կառավարությունը հենց «մեծ ռեֆորմների» որերին լծալ կեղծով դործող ազնվական կալվածատերերի հետ։ Ցեղ սա 1862 թվականին եր, մինչ լեհական ապստամբությունը, երբ նույնիսկ կատկովը առաջարկում եր համառուսական զեմսկի սոբորի գումարում»։ (В. И. Ленин, „Сочинения“, т. IV, եջ 125)։ Ուղերձին հետևող հատվածը վերցված է „Колокол“-ի համարներից։

13. „Колокол“-ի 1860 թ. մարտի 1-ի համարում „Русский человек“ ստորագրությամբ տպվեց Չերնիշևսկու հռչակավոր նամակը՝ ուղղված Գերցենին և նրա համախոհներին։ Նամակը վերջանում եր հետևյալ տողերով. «Վերջ, մեր գրությունը սարսափելի չի, անառնական և միայն կպչերը կարող է մեզ ազատել և, կպչելից բացի, ոչինչ մեզ չի ոգնի։ Այս մտքը, կարծեմ հայտնել են ձեզ, և այն զարմանալիորեն ճիշտ է. այլ փրկություն չկա։ Դուք ամեն բան արիք, ինչ կարող եյիք, գործը խաղաղ կերպով լուծելու համար. այժմ փոխեք տոնը և թող ձեր „Колокол“-ը վոչ թե մադիանքի շեփոր հնչի, այլ աշտանգ տա։ Կպչնի կոչեցեք Ռուսաստանը»։ Անկասկած է, որ այս նամակը ծանոթ է եղել Նալբանդյանին և վճռական ազդեցություն է գործել նրա քաղաքական հայացքների վրա ընդհանրապես, ճորտերի ազատագրության խնդրի վրա՝ մասնավորապես։ Այս վճռական հարցում Նալբանդյանը լիովին համակարծիք է Չերնիշևսկուն՝ այսինքն կանդնած է ռուսական միապետության գյուղացիական հեղափոխության միջոցով տապալելու տեսակետի վրա։

14. Ցարական ռեֆորմի ներքին էությունը մերկացնող այս ամբողջ հատվածը՝ «Բայց կառավարությունը և ազնվականությունը...» բառերով սկսվող պարբերությունից դրաքննական նկատառումներով հանված է «Զ ե ր կ ե ց»-ի առաջին հրատարակության մեջից. II, եջ 329։

15. Անգլիայի 1860—61 ֆինանսական տարվա բյուջեի ճիշտ պատկերը տեսնում ենք Մարքսի մոտ։ Տարեկան բյուջեի ընդհանուր եկերը եղել է 70,100,000, մուտքը՝ 60,700,000։ «Համեմատելով ծախքերը եկամտի հետ, տեսնում ենք, որ եկեսան է գալիս համարյա 10,000,000 ֆ. ստ. դեֆիցիտ»... (К. Маркс и Ф. Энгельс, „Сочинения“, т. XII, ч. 2, եջ 33)։

16. Նկատի ունի հունական առասպելը Դանաիդների մասին։ Ըստ այդ առասպելի, Դանայ թագավորի 50 աղջիկները հոր դրդումով սպանեցին իրենց ամուսիններին, որի համար և պատժվեցին՝ դատապարտվելով հավիտենապես լցնելու մի անհատակ տակառ։ Այստեղից էլ ծագում է հանրահայտ «Դանաիդի տակառ» փոխաբերությունը, որով ապատահայտվում է ապարդյուն, ըստ էության անիրագործելի մի աշխատանք։

17. Տես Աւետարան ըստ Յովհաննու, Գլ. Գ, 8։

18. Տես Մ. Խորենացի, «Պատմութիւն հայոց», գիրք Ա, Գլ. Ը։

19. Տես Ագաթանգեղոս, Բանք ժողովոցին, Գլ. Ա, 4։

20. Ամատրիական վարչապետ Մետաերնիխի խոսքերը։

21. Հեղինակի այս ծանոթությունը դուրս է մնացել «Ձիրկել»-ի ռուսական հրատարակությունից (տես Մ. Նալբանդյան, «Ձիրկել», II, էջ 366)։

22. Ուշագրավ է, որ Նալբանդյանն անգլիական բուրժուազիայի՝ սեփականների ազատության հարցի նկատմամբ ունեցած վերաբերմունքը բնորոշելու համար վերցնում է Ջ. Ռոսսելին, պետական մի գործիչ, որի վարած քաղաքականության սպառիչ քննադատությունը բազմիցս տվել է Մարքսը իր թղթակցություններում։ Նալբանդյանը մեջբերում է Ռոսսելի հենց այն խոսքերը, որոնց շարադրանքով էլ Մարքսն սկսում է իր «Քաղաքացիական պատերազմը Միացյալ Նահանգներում» հոդվածը (К. Маркс и Ф. Энгельс, „Сочинения“, т. XII, ч. 2, էջ 244)։

23. Ցարական կառավարության նվաճողական քաղաքականությունը մերկացնող այս հատվածը՝ «Ռուսական բանակը լցվեցին լեհացիներով» նախադասությամբ սկսվող պարբերությունից՝ գրաքննական նկատառումներով հանված է «Ձիրկել»-ի ռուսական հրատարակության մեջից (տես Մ. Նալբանդյան, «Ձիրկել», II, էջ 370)։

24. Տես Աւետարան ըստ Մատթէոսի, Գլ. Է, 14։

25. Տես Շարական, Կ. Պոլիս, 1853, էջ 17։

26. Տես Աւետարան ըստ Մատթէոսի, Գլ. Ե, 28։

ԱԶԳԱՅԻՆ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ

«Ազգային թշվառությունը» առաջին անգամ լույս է տեսել «Հյուսիսափայլ»-ի 1864 թ. № 3-ում, Ստ. Նազարյանի առարկությամբ, որը համարը էլ այս յերկը չի մտել Ա. Զամինյանի խմբագրության 1906 թվին լույս տեսած Նալբանդյանի յերկերի 2-րդ հատորի մեջ և, ընդհակառակը, Ստ. Նազարյանի հրատարակիչներն այն գետեղել են նրա յերկերի 1-ին հատորում, այնինչ Դ. Սպասյանն իր մեմուարներում, դեռ 1894 թվին, միանգամայն հավաստի կերպով վկայում է, որ «Ազգային թշվառությունը» Մ. Նալբանդյանի հեղինակությունն է։

Սպասյանը 1863 թվի վերջերից մինչև 1864 թ. վերջերը, երբեմն դադարով, աշխատում էր «Հյուսիսափայլ»-ի խմբագրատանը։ Նա յերբ շարել «Ազգային թշվառությունը»-ը, հեռանալիս նրա վկայությունն իրավունք ունի, և այդ չեր կարելի անտեսել։ «Աշխատակից չունեը,—գրում է Սպասյանը Նազարյանի մասին,—ամեն ինչ ինքն էր գրում, ինքն էր թարգմանում, շատ անգամ վոչինչ բաներ և դնդազան կեղծ անուններով։ Մի հոդված միայն, որ կրում է «Ազգային թշվառություն» վերնագիրը՝ Նալբանդյանցի գրածն էր. թեև Նազարյանցի իսկական անունն և տարբերված» (Դ. Սպասյան—«Իմ կյանքի դէպքերը», էջ 56)։

Լեոն իր «Աստվածաշունչ Նազարյանց» աշխատության 2-րդ հատորում մանրամասն իրավացիորեն նկատում է, որ՝ «ժողովրդական իրավունքի ազատության և առաջադիմության սկզբունքները այդտեղ նկարագրված և պաշտպանված են մի անսովոր յեռանդով ու զեղեցիկ տրամաբանությամբ, նույնիսկ վոճն էլ այստեղ ուրիշ է, և Նազարյանը դրել է գրքի վերջում, երբոր ձևին վարժ մարդը դժվարությամբ և կարոտնում հավատալ թե այդ հոդվածն էլ պատկանում է նրա գրչին»։

Չնայած դրան, Լեոն, այնուամենայնիվ, հրաժարվում է Նալբանդյանին ճանաչել իբրև այդ աշխատության հեղինակ։ Նա ծանոթ էր Դ. Սպասյանի վկայությանը, բայց դրան չեր հավատում։

Այժմ արդեն հայտնաբերված փաստերն այն մասին, որ Նալբանդյանին թույլատրված եր բանտում գրական-գիտական աշխատանքներով զբաղվել և որ նրան, գոնե պաշտոնապես, արգելված չեր «Հյուսիսափայլ»-ին աշխատակցել, դալիս են միանգամայն հավաստելու, որ այդ գործն անվիճելիորեն պատկանում է Նալբանդյանին, և հարցը սպառված համարելով, մենք ավելորդ ենք համարում բանասիրական, վոճական մանրամասնությունների մեջ մտնելը Նալբանդյանի հրապարակախոսությանը, գրական վոճին, կյանքի հանգամանքներին ծանոթ բանասերի համար վոչ մի կասկած չի մնում, որ «Ազգային Թշվառությունը» նրա գրչի արդասիքն է։

Հարց է առաջ գալիս, թե ինչու՞ Նազարյանը Նալբանդյանի հոդվածի տակ իր անունն է տպագրել։ Միանգամայն հասկանալի կերպով կարելի յե պնդել, որ Նազարյանն այդ արել է սոսկ քաղաքական նկատառումներով։

Նա չեր կարող հրատարակել Նալբանդյանի, իբրև քաղաքական մեղադրյալի, խնամքն տպագրությամբ վորևե գործ, առանց «Հյուսիսափայլ»-ի դոյությունը ճակատագրական վտանգի մատնելու և իրեն վտանգական կասկածանքների տակ դնելու։

«Ազգային Թշվառություն»-ը թեև գրված է 1864 թվի փետրվարին, բայց ըստ երևույթյան, նա կազմում է 1860—62 թվերին արևմտահայ կյանքի շուրջն ունեցած Նալբանդյանի մի շարք գրական յելույթների («Մեղու»-ին ուղղած նամակը՝ 1860 թվին, «Ցերկու տողը» 1861 թվին և այլն) շարունակությունը՝ սոցիալական պայքարի նոր պայմաններում։

Սկսած անցյալ դարի 60-ական թվականներից, յերբ կապիտալիստական զարգացման դուռը բացվեց, աշխատավորական լայն մասսաների դրությունը թյուրքահայաստանում ավելի ու ավելի անտանելի յեր դառնում, ֆեոդալական շահագործմանն ավելանում եր նաև կապիտալիստական արտասովոր շահագործումը։

Հայ աշխատավորությունը բռնել եր մասսայական պատվերիզացիայի ու գաղթի ուղին։ Նրանք լցվում եյին Թյուրքիայի կենտրոնական քաղաքները՝ Պոլիս, Երզրում, Տրապիզոն և այլն։ Կ. Պոլսում 1860 թ. կային տասնհինգ հազար պանդուխտներ։ «Մենք տարտափում ենք,—գրում է Նալբանդյանը,—յերբ աչք ենք ձգում այն անշքացած, անտպատացած աշխարհի վրա, ուր յերբեմն փողփողում եր Արշակունյաց հաղթակիր դրոշակը, ուր այժմ մեր խեղճ, անտեր և անոգնական ժողովուրդը միլիոնավոր բազմությամբ, Թշվառության, հարստահարության և հուսահատության մինչև հնարավոր ծայրը հասած, վոխանակ արտասուք, արյուն և քամում աչքերից, յերբ լաց և լինում, և ուր, դժբախտ, հայհոյել և դիշերագեմ վամպիրները տակավին չեն կշտանում անմեղ զոհի—խեղճ ժողովրդի—արյունը ծծելուց»։

Դավառական աշխատավորությունը հենց այն «խեղճ, մերկ ու քաղցած հայն եր», վորի վրա առաջին անգամ Նալբանդյանը հրավիրեց հասարակության ուշադրությունը և հայտնեց իր պատրաստակամությունը «վոչ միայն բանիվ և գրչով, այլև գենքով և արյունով» կռվելու նրա իրավունքների համար։

Նալբանդյանի անմիջական գեկավարությամբ ու ազդեցությամբ պրպտհայ առաջավոր դեմոկրատիայի ներկայացուցիչները, «Մեղու»-ի շուրջը համախմբված «նոր յերիտասարդությունը», սկսեց կենդանի, աշխույժ հետաքրքրություն հանդես բերել դեպի դավառական աշխատավորությունը, բուն ժողովուրդը։ «Մեղու»-ի գործունեության այդ կողմը շատ բարձր եր գնահատում Նալբանդյանը, յերբ 1864 թվին «Ազգային Թշվառության» մեջ գրում եր. «Դավառների դրությունը նկարագրեց «Մեղուն», վասպուրականի անայցել Թշվառությունքը տպագրեց «Մեղու»-ն, Իշխանախոսի դիմակը վերացից հանեց «Մեղուն»... դավառ չթողեց, քաղաք չթողեց, դեղ չթողեց, թաղ չթողեց, ամեն ծակ ու ծուկ մտավ յեվ «Մեղու»-ն։ Այն, Նալբանդյանին հենց այդպիսի մամուլ եր պետք, վորպեսզի կարողանար իր սկսած դեմոկրատական շարժումը դլխավորել և, հարկ յեղած դեպքում, մասսաներին նախապատրաստել համաժողովրդական ապստամբության համար։

1860 թ. ապրիլի 25-ից հետո գործադրության մեջ մտած սահմանադրությունը լուրջ խոչընդոտների հանդիպեց։ Կղերա-ֆեոդալական դասերը, ամիրայությունը, Պոլսի ու Ցերուսաղեմի պատրիարքությունները և, մինչև անգամ, եջմիածինը, այն համարում եյին

Հպհատությունն պետության մեջ, որը լուծ չկրկնե նպատակով և հատկացած, նախ՝ ազգը ամբողջ անհատներ ընդհանուր, — կրկրորդ, տերության դեմ ապստամբելը հանցանք»։ Այս հոդվածի վրա բորբոքված պայքարում, որը տևեց մինչև 1863—64 թվերը, լիբերալները լքեցին դեմոկրատներին և անցան ամիրայության ու կղերա-ֆեոդալական վերնախավերի կողմը, որոնց դեմ, դեմոկրատների հետ միասին, պայքարում էին մինչև 1860 թվի օգոստոսի 25-ը։ Բուքրեշտի այս անհետևողական դիրքը նկատի ունեն Նալբանդյանը, երբ գրում է. «Սահմանադրության բարեկամների մեկ դևնդն էր Հմարատությունը, որը լուսամփոփ էին կոչում հայկական խոսքի միջնորդությամբ, գրկեր ձեռքին անձանձիր հղնելով, և որովհետև հմարատությունը չունի մատ, չունի վարձ, ուստի և ոստորոտ չեր, երբ *ամանք ճանապարհի կիսից հետ դարձան, երբ մյուսները լավոկիկի դարձան, երբ մի քանի ուրիշներ անգլիական տերմենության որինակը ցոչյ տվեցին»* (ընդգծ. մերն է. Ա. Մ.)։

Նալբանդյանը քննադատում է լիբերալներին՝ սահմանադրական բուրժուազիայի պարագլուխ Սեբաստիանին, որը «չկամեր զոհ դնել յուր բոլոր ազդեցությունը լիամասն կերպով»։

Թյուրք կառավարությունն ազատվելով հայերի ներքին դժուրյուններից, 1861 թ. օգոստոսի 16-ին դադարեցրեց Սահմանադրության գործադրումը մինչև 1862 թ.։ Բայց ընթարկվելով ժողովրդի ճնշմանը, նույն թվի փետրվարի 14-ին, առանձին հրամանագրով, նա պահանջում է յոթ հոգուց կազմված մի հանձնաժողով սահմանել, որը պետական հանձնաժողովի (11 հոգի) հետ միասին քննության էն առնում Սահմանադրությունը և այն ներկայացնում կառավարության ի հաստատություն։ Սակայն կառավարությունը գործը ներկայացնում կառավարության ի հաստատություն։ Սակայն կառավարությունը գործը նորից սկսում է ձգձգել, մի բան, որը հենց կղերականության ու ամիրայության միակ նպատակն էր։ Բայց դա չի հուսահատեցնում ժողովրդին։ Նա առաջվանը կրկնասացություններ է անում՝ պահանջելով Սահմանադրության ու ամիրաների վերացումը և «Մեղու»-ի դնհավարության համար անհանգստացնում էր ամիրաներին՝ իր հետևողական պահանջներն առաջադրելով։ Նրա կյանքի ամրող տասերը Սահմանադրության լուծում չտվեցին, դեմոկրատները 1862 թ. օգոստոսի 1-ին ուժով ցույց կազմակերպեց։— Մի ցույց, որը պատմում էր ապստամբության վերածվել, և որը, բնական վախ պատահական դուրգրիտության համար, տևեց մինչև ձկնկունի հաշտավոր ապստամբության հետ միասին, միևնույն որը... ժողովուրդը հարձակվեց պատրիարքական շենքի վրա մի պահանջագրով՝ անհապաղ իրեն հանձնել Սահմանադրությունը։ Պատրիարքի անդրագարձը և դրսեացնել, բայց ժողովուրդը բանի կրկրով ցրեց սահմանադրական վարչության ժողովը, բոլոր պաշտոնյաներին պատրիարքարանից դուրս վանեց, շենքի դուռը փակեց և հետացավ։ Դեպքի մասին հաղորդվում է Սեվիմ փաշային, որը նույն որը վրա հանդիպով՝ շենքի ուժով ցրեց ժողովրդին, վախենալով սակայն պատրիարքարանի դուռը բացել, միայն հայտարարեց, որ փաշան, դարբնի միջոցով, բացեց պատրիարքարանի դուռը և պաշտոնյաներին իրենց տեղերում հաստատեց։

Այս դեպքերի ազդեցության տակ, 1863 թ. մարտի 14-ին, Ցուսկյուտարի մեջ 25 հոգուց կազմված մեծ ժողով գումարվեց, ուր մշակվեց մի դեռարարներից և 70 աշխատանքներից ազդեցության ներքին կարգադրությունը՝ ուղղված կառավարությանը, որով խնդրվում էր Սահմանադրությունը վերահաստատել։ Կառավարությունը ստամպիը էր ընդմիշտ վոչնչացնել Սահմանադրությունը, բայց վախենալով ժողովրդական հուզումներից, սկսեց խոստումներ տալ և գործը նորից ձգձգել։ Ի վերջո նա ստիպված յեղավ 1863 թ. մարտին գործադրության մեջ դնել բարեփոխված կարգադրությունը, որը 1863 թ. մարտի 25-ին հանդիսավոր կերպով ընդունվեց պալատական ընդհանուր ժողովում։ Հենց այդտեղ էլ ընտրվեց 10 հոգուց կազմված մի ժամանակավոր գործադիր և վարչական մարմին, որի մասին խոսում է Նալբանդյանը «Ազգային թշվառության»-ում։

Նոր Սահմանադրությունն այլևս իր մեջ դեմոկրատական վոչինչ չուներ. ընդհակառակը, դա ռեակցիայի հաղթանակն էր ընդդեմ դեմոկրատիայի։ Այդ թե ինչու «Մեղու»-ն

Սահմանադրության հաստատումից հետո էլ կրկին շարունակում էր պայքարել սահմանադրական վարչության դեմ, մերկացնելով նրա հակաժողովրդական էությունը։ Այդ առթիվ Նալբանդյանը գրում է.

«Ազգային վարչության անվերը սկսավ կատարել յուր շրջանը, բայց այդ վարչությունը աչքը ձգից արդյոք, որ տեսաներ, թե ինչ վիճակի մեջ է ազգի կացությունը գավառներում։ Ախանջը բացից արդյոք լսելու համար ազգի աղեխորով բողոքները յուր ներքին հալածողների և հարստահարողների ընդդեմ...»։

Սահմանադրական վարչության հակաժողովրդական արարքներից մեկն էլ «Մեղուի»-ի դեմ սրած հարձակումներն ու այն փակելու համար հանած վրդովմունքն էր։ Նալբանդյանը գրում էր, որ իր ձեռքակալության պատճառը էր դեմոկրատական շարժման համար, իսկ «Մեղուի»-ի փակումը, նրա կարծիքով, ժողովրդական մասսաներից, կարող էր ավելի մեծ հարված լինել։ Այնա թե ինչու նա բանտում նստած ժամանակ անդամ հետևում էր Պոլսում կատարվող անցքերին, և դեռևս մեզ անհայտ ճանապարհներով, ստանում «Մեղուն»-ն (որը, Այվազյանի շնորհիվ, Ռուսաստանում արգելված էր), և վոչ մի առիթ բաց չէր թողնում իր արևմտահայ բարեկամներին խրախուսա կարդալու, ռեակցիայի ներկայացուցիչներին մերկացնելու և նրանց դեմ հետևողական պայքար ծավալելու համար։ Այդ պայքարում առանձնապես հատկանշականն այն է, որ Նալբանդյանը իր հարվածն ուղղում է վոչ միայն պահպանողականության, այլև հայ լիբերալ բուրժուազիայի դեմ, որը ամեն առիթ բաց չէր թողնում իր արևմտահայ բարեկամներին խրախուսա կարդալու, ռեակցիայի ներկայացուցիչներին մերկացնելու և նրանց դեմ հետևողական պայքար ծավալելու համար։ Այդ պայքարում առանձնապես հատկանշականն այն է, որ Նալբանդյանը իր հարվածն ուղղում է վոչ միայն պահպանողականության, այլև հայ լիբերալ բուրժուազիայի դեմ, որը սկսել էր հայ հասարակական կյանքում ակտիվ դեր խաղալ և ձգտում էր իր ձեռքը բռնել և ձգտում էր իր ակտիվ դերը հայ հասարակական կյանքում ակտիվորեն դեմոկրատիային՝ դասակարգային ակտիվությանը չհնարավորել արևմտահայ առաջավոր դեմոկրատիային։— պայքարել բուրժուական ռեակցիայի դեմ—ահա այդ նպատակով է գրված «Ազգային իշխանություն»-ը, «Մեղուխնչային» բանաստեղծությունը։ Այդ պայքարի խորն արձագանքները մենք տեսնում ենք նաև «Սոս և Վարդիթեր»-ի կրիտիկայում։

Նալբանդյանը շատ լավ գդում էր, որ արևմտահայ Սահմանադրությունը ինքնըստինքյան մի վոգորմելի բան էր և նրա պայքարը, ըստ էության, վոչ թե Սահմանադրության, այլ դեմոկրատական շարժման անարգել զարգացման ու ծավալման՝ հանձին «Մեղուի»-ականների, դեմոկրատիայի դրամած հասարակական դիրքերի ամրապնդման համար էր։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այստեղ Նալբանդյանը նկատի ունի պոլսահայ հասարակության վերնախավերին՝ ամիրաներին, խոշոր գրամատերերին, վորոնք տնտեսապես ու քաղաքականապես սերտորեն կապված էին Թուրք պետականության հետ։ Ամիրաներն իրենց ձեռքն էին վերցրել յերկրի համար տնտեսական ու պետական նշանակություն ունեցող կարևորագույն դիրքերը, որնոնակ, յերկրի հարկահավաքման մենաշնորհը։ Ամիրաները պետությանը նախորոք վճարում էին ամբողջ հարկը և ապա աշխատում էին այն ժողովրդից գանձել՝ տարբերությամբ ամեն տեսակ կամայականություններ ու շահատակություններ։

19-րդ դարի 40-ական թվականներից սկսած ամիրաների դերի նվազման դեմ վորոշակի յուրյեր են արվում։ Բուրժուական մի շերտը, դեմոկրատիան՝ հանձին «Ազգային սահմանադրության» և այլն ձգտելով ինքնուրույնության՝ ամեն կերպ աշխատում էին թոթափել ամիրաների լուծը։ Այս հողի վրա սկսած դասակարգային պայքարը հետագայում ձուլվեց սահմանադրական պայքարի հետ և ծավալվեց մինչև 63—64 թվերը։

2. 1857 թվից Սերմյան Միքայելը վարագա վանքում հրատարակում էր «Ազդուվաստպուրական» հանդեսը և դրա ներքում պաշտպանում Սահմանադրությունը։ «Մեղուի»-ն պաշտպանում էր Սերմյանին և արդարացնում նրա պայքարը դավաճան ռեակցիոն հավերի դեմ։

3. Ակնարկում է ամիրաներին։

4. 1860 թվին Սահմանադրության առաջին տարեդարձը, որը լրացավ 1861 թ. մայիսի 24-ին, տոնվեց պոլսահայ յերիտասարդության կողմից Հյուսքյար Իսկելեսի պարտեզում։

Այդ որը տոնվեց ավելի մեծ բազմությամբ (մոտ 3000 հ.) նաև 1862 թ. մայիսի 24-ին, նույն գաշտում։

5. Գոլսի այն թաղամասը, ուր գտնվում էր պատրիարքարանը. վերջինս 60 թվի Սահմանադրության հետո դարձավ նոր ռեակցիայի գլխավոր հենարանը։

6. Սահմանադրական պայքարի ընթացքում ձևավորվեցին մի շարք հասարակական հոսանքներ ու «կուսակցություններ», որոնք իրենց որոշ դաբձնելով այս կամ այն թերթը, յուրաքանչյուր ժամանակ խիստ պայքար էին մղում միմյանց դեմ։ Այդ հոսանքներն էին.

ա) դեմոկրատները, որոնք համախմբված էին Հ. Սրվանձտյանի «Մեղու»-ի ու Փանոսյանի «Մյուսաֆիր»-ի շուրջը և արտահայտում էին արևմտյան դեմոկրատական արժատական շրջանը։ Աշխատելով Նալբանդյանի գլխավորությամբ, սրանք ձգտում էին վոչ միայն Սահմանադրությունն ապահովել բռնապետական ռեակցիոն գլխավորներից, այլև՝ Սահմանադրության լիբերալ սկզբունքներին դեմոկրատական լուծում տալ։

բ) Ժամաբյաններն և հետադիմականները հոսանքը՝ որը համախմբված էր Ջամուռճյանի «Ծերեվակ»-ի, Վարդան փուշալի «Մեհմուա»-ի և Ղ. Պալիտարյանի «Աբշալույս Աբրատյան»-ի շուրջը (վերջինիս հակառակորդները կոչում էին «Վերջալույս Արարատյան»)։ Սրանք ձեռնարկն ընդունում էին Սահմանադրությունը, բայց ինչպես պարզվեց Նալբանդյանի ու Ջամուռճյանի վեճերից, խիստ սրբագրումների ու վերապահումների ենթակա էին համարում այն։ Որովհետև՝ Ջամուռճյանը գտնում էր, որ հայոց յեկեղեցին ի բնե միապետական կառուցվածք ունի, հետևապես չի կարող սահմանադրական ռեֆորմներին ենթարկվել («Ծերեվակ», 1861, №№ 109—114)։ Այդ թերթերն արտահայտում էին կղերա-ֆեոդալական ու բուրժուական ռեակցիոն խավերի շահերը։

գ) Լիբերալ-բուրժուական հոսանք, որի կենտրոնն էր Կ. Յուրյուճյանի «Մասիս»-ը, իր շուրջն ունենալով «Արևելյան դար», «Մաղիկ», «Կիլիկիա», «Մեր», «Արծուի Վասպուրական» պարբերականները։ Լիբերալներն ընդհանում էին զիջումների գծով։

1861 թվից սկսած, ռեակցիայի ընթացում հիշյալ թերթերը խիստ պայքար սկսեցին «Մեղու»-ի ու «Մյուսաֆիր»-ի դեմ, գտնելով, որ Սահմանադրության կործանման բուն պատճառը «լրագրոց անկանոն ազատություն եւ» («Մասիս»)։ «Մասիս»-ն ինարկե չէր ցանկանա իր վայելած ազատությունից զրկվել—խոսքը պարզապես վերաբերում էր «Մեղու»-ին ու «Մյուսաֆիր»-ին, որոնք հետապնդում իրոք զրկվեցին այդ «ազատություններից»։

7. Տես Աբեղյան ըստ Մատթէոսի, Գլ. ԻԴ, 28։

8. 1861 թվին, Ցերուսաղեմի պատրիարքի մահից հետո, նոր պատրիարք ընտրելու կապակցությամբ, տաճկահպատակ մեջ սկսվեց մի պայքար, որը հայտնի է «Ներսեն-դուբանո» անունով։ Հասարակության մի մասը՝ Ցերուսաղեմի միաբանները ու տաճկահպատակ հոգևորականության մի մասը՝ պատրիարքը ներսից ընտրել, իսկ սահմանադրականները՝ կամենալով Ցերուսաղեմի միաբանության անկախ դիրքը վերացնել, ամեն կերպ աշխատում էին պատրիարքը ընտրել դրսից։ Այդ «Ներսեն-դուբանո» պայքարի ժամանակ, 1861 թ. ոգոստոսի 17-ին, Մերճման ամբոխ փորձեց հակառակորդ կուսակցությունները հաշտեցնել։ Հաշտության խնդիրը պիտի քննվեր ընդհանուր ժողովում։ Սարգիս պատրիարքը հաշտության դեմ լինելով, դիտմամբ ընդհանուր ժողովի համար հրավիրում է միանգամայն անտա ու աննշան պատգամավորներ, որպեսզի կարողանա հաշտությունը խափանել։ Ժողովուրդն այդ իմանալով մեծ բազմությամբ ցույց է կազմակերպում և պահանջում պատրիարքի հրաժարականը։ Պատրիարքն սկսում է արդարանալ՝ հայտարարելով թե ինքն ընդհանուր ժողով չի հրավիրել, այլ հրավիրել է միայն «Մեղու»-ի խմբագիր Սրվանձտյանին, «Մյուսաֆիր»-ի խմբագիր Փանոսյանին և Ներսես Վարժապետյանին։ Սակայն ժողովրդի խիստ պահանջներից ստիպված պատրիարքը մի շարք հոգևորականների հետ միասին ստորագրություն է տալիս, որով հանձն է առնում նրանց պահանջները կատարել ցույցի մասին հաղորդվում է վոսմանիանության, որը, կարծելով թե ապստամբություն է սկսվել, վրա է հասնում և ցրում ժողովրդին։ Դրանից հետո պատրիարքը վոչ

միայն չի կասարում իր խոստումը, այլև կարողանում է կառավարության միջոցով դադարեցնել «Մեղուն»-ն և «Մյուսնատի»-ն։

9 Տես Աւետարան ըստ Մատթէոսի, Գլ. ԻԱ, 12։

10 Սուրբ Հակոբի վանքը Յերուսաղեմի միաբանության կենտրոնն էր և վճռական դեր խաղաց 60 թվի Սահմանադրությունը դադարեցնելու գործում։ Նալբանդյանն ավազակ համարում է այն միաբաններին, որոնք չենթարկվելով Սահմանադրության սկզբունքներին կառավարությանը հնարավորություն ավեցին միջամտել պայքարին և Սահմանադրությունը դադարեցնել։

11. 1863 թ. մարտի 25-ին ընդունվեց յերկրորդ՝ վերամշակված Սահմանադրությունը, որի առաջին տարեդարձը լրացավ 1864 թ. մարտի 25-ին։ Նալբանդյանն ասում է՝ «գրեթե», որովհետև ինքը հոդվածը գրել է 1864 թ. փետրվարին։

12. Խոսքը վերաբերում է ուսումնական, տնտեսական, յեկեղեցական և այլ խորհուրդներին, որոնք պիտի կազմվեին պաշտոնական առանձին հիմունքներով։

13. «Մեղու»—Հ. Սըվաճյանի խմբագրած պարբերականը։

14. Մեխուխեչա — Հարություն Սըվաճյանի կեղծանունը։ Տես Անվանական բառարան։

15. 1863 թ. նոյեմբերի 8-ին քաղաքական ժողովի հանձնարարությամբ պատրիարքը մի նամակով «Մեղու»-ի խմբագրին կանչում է պատրիարքարան։ Խմբագիրը չի ներկայանում «տեարության» պատճառով։ Ժողովը խիստ ընդարձակ մի բողոքագիր է ներկայացնում վոստիկանության և պահանջում խմբագրին վարչական միջոցով իրեն ներկայացնել։ Այդ մասին «Մեղու»-ն իր 1863 թվի № 262-ում գրում է. «Նոյեմբերի 12-ին լուր առնելով, որ «Մեղու»-ի խմբագիրը շատ փութով կինտուվի, յելա գնացի անձամբ։ Հոն Մերքեզ Ագասին մեզ փնտռելու թային յեղած զապթիեն գտնել տալով մյուզաքերեն տալով ինձի կարդալու։ Բանը իմանալով ինձ վոստիկանության դուռը և ներկայանալով վ. Մյուսթեշար պեյին հոն տեսա պատրիարքարանն իմ հախս ղրկված մեջադիրը գանգատագիրն ալ։ Նալբանդյանի խոսքը այդ բողոքին և վերաբերում։

16. Տես Աւետարան ըստ Մատթէոսի, Գլ. ԻԴ, 6։

17. Խոսքը վերաբերում է Վանցի Գողոս վարդապետի չարագործություններին, որոնց դեմ «Մեղու»-ի էջերում առաջին անգամ խիստ յելույթ ունեցավ ինքը Նալբանդյանը, պահանջելով վոր Գողոս վարդապետը, որպես քրեական հանցագործ, պատարանին հանձնվի (տես «Ցերկու տող»-ի ծանոթագրությունները)։

18. Նալբանդյանը նկատի ունի 1862 թվի Զեյթունի ապստամբությունը։

19. Արտահայտությունը հավանորեն բերված է Ն. Գոգոլի „Ревизор“-ի եպիգրաֆից. „На зеркало неча пенять, коли рожа крива“։

20. «Արշալույս Արարատյան» (1840—1887), որազիր, լույս եր տեսնում Զմյուռնիա, Ղ. Պալթազարյանի խմբագրությամբ։ Սկզբում լրերթալ բուրժուական ուղղություն ուներ, իսկ 60-ական թվականներին բռնել եր պահպանողական դիրք։ Բանաից գրած իր նամակներից մեկում, Նալբանդյանը վոչնչացնող քննադատության և չենթարկում «Արշալույս Արարատյան»-ի խմբագիր Պալթազարյանին, գտնելով, վոր նա կաշառված և անգլիական կառավարության կողմից։

21. Խոսքը վերաբերում է Վանցի Գողոս վարդապետի քրեական արարքներին (տես Նալբանդյանի «Ցերկու տող»-ը)։

22. Այս հոդվածը գրեթե նույնությամբ, բացառելով մի քանի նկարագրական մանրամասնություններ, Նալբանդյանը վերցնում է 1863 թ. «Մեղու»-ում տպագրված մի անանուն հոդվածից, որի վերնագիրն է՝ «Դիշեբը ի Մշո գաշտ»։ Հոդվածում նկարագրվում է մի խումբ մշեցիների գաղթը Բասենի և Ղարսի կողմերը։ Գաղթողների խմբի մեջ լինում են նաև յերկու այրի կին՝ Շողեր և Գոհար, որոնք իրենց փոքր յերեխաների պատճառով գաղթող խմբից յետ են ընկնում և նստում մի ծառի տակ հանգստանալու։ Ծառի վրայից արագիլը թևերը թափ է տալիս և զարհեցնում մոր ղրկում քնած յերեխային այդ ժամանակ մայրը վերոհիշյալ յերգով հանդիմանում է արագիլին։

24. Նալբանդյանի վարոշ ակնարկներից յերևելով՝ կարելի չե յենթադրել, որ Ազգային Ժողովի դեմ չգրելու համար առորագրություն են ավել «Մասիս», «Արշալույս Արարատյան» և «Փունջ» թերթերը, իսկ «Մեղու»-ն առորագրություն չի ավել:

25. «Մեղու»-ի 1863 թ. № 226-ում տպագրված և խմբագրի բացատրություններ, որ հիշվում և նաև այդ դանդաղության մասին:

26. Տես «Մեղու», 1863 թ., № 222:

27. 1861 թ. սպտեմբի 19-ի ժողովրդական նշանավոր յուբյից հետո, Սարգիս պատրիարքի և ռեակցիոն մի շարք տարրերի մասնակցությամբ Սրմաճյանը և Կ. Փանոսյանը Բարձր Դուռը կանչվելով հանդիմանվեցին, որից հետո արդելվեց «Մեղու»-ի ու «Մյուսնաստր»-ի հրատարակությունը:

28. Այսահակ անունով գործիչ տաճկահայ լրագրության մեջ հայտնի չե:

29. «Մյուսնաստր ևրֆատա» (1859—1861), հայատառ թուրքերեն թերթ Կ. Պոլսում: Խմբագիրն ևր Կարապետ Փանոսյանը: «Մյուսնաստր»-ն «Մեղու»-ի հետ միասին հանդիսանում ևր պոլսահայ դեմոկրատիայի ոգելիալ շերտերի արտահայտիչը: 1861 թվից սկսած ռեակցիայի հետևանքով «Մեղու»-ի հետ միասին «Մյուսնաստր»-ն ևս խիստ հալածանքների յենթարկվեց: 1861 թ. «Մյուսնաստր»-ն փակվեց, բայց մի քանի ամսից հետո վերանրատարակվեց, իսկ 1862 թվին նորից փակվեց և խմբագիրը բանտարկվեց, ինչպես «Փարիզ»-ն ևր գրում՝ «Հայերի մասնության պատճառով»:

30. Ստատուրնական խնջույք—հին Հռոմում Ստատուրն մոլորակին նվիրված պիշերային ցոփ խնջույքներ (դևևտ. 16, 17, 18-ին):

31. Տես Աճեսարան, Դարձք առաքելոց, Գլ. ԻԶ, 22:

32. Տես Ստափածաշունչ, Գիրք խմաստ., Գլ. Բ, 11—20:

33. Տես Մովսես Խորենացու «Վպզբը»:

34. Խոսքը վերաբերում և Կ. Յուսյուճյանի «Մասիս»-ին և Պալթազարյանի «Արշալույս Արարատյան»-ին:

35. «Մասիս» (1852—1884). 1852 թ. Կ. Պոլսի «Հայոստան» լրագիրը վերանվանվեց «Մասիս»: Խմբագիրն ևր Կ. Յուսյուճյանը: Սահմանադրական պայքարի առաջին նետապում «Մասիսը»-ը պայքար սկսեց ամերայության ու կղերականության դեմ: Այս ժամանակ վարոշ խնդիրներում նրա տեսակետները համերաշխ եյին «Մեղու»-ի ու «Մյուսնաստր»-ի տեսակետների հետ, բայց 1861 թվից սկսած նա զարձավ բուրժուազիայի ռեակցիոն դիրքի պաշտպանը, և սկսեց հետապնդել. ասե թե ինչու Նալբանդյանը նրան համարում և «հետադիմյալ»:

ԿՐԻՏԻԿԱ

ՍՈՍ ՅԵՎ ՎԱՐԴԻԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅԱՆ

«Սոս և Վարդիթեր»-ի կրնրիկայի մասին առաջին գրավոր հիշատակությունը գտնում ենք Միքայել Տեր-Գրիգորյանի՝ Փարպեցու «Պիեին» կյանք՝ Նալբանդյանի համատա կենսագրության մեջ: Տեր-Գրիգորյանը հայտնում և, որ Միքայել Նալբանդյանի անտիպ աշխատությունների մեջ և գտնվում «Սոս և Վարդիթեր» վիպատանության քննությունը, որ «բավականին մեծ հոդված և և մեզ հայտնի չե ում մոտ և գտնվում»:

Ամենայն հավանականությամբ «Գրքասիկա»-ի բնագիրը յեղել և հեղինակի այն թղթերի մեջ, որոնք հանձնվել են հանգուցյալի յեղբայր Ղազարոսին: Ձեռագիրը «Հանդես պրակտական» և «Ազատամարտ»-ի խմբագիր Միքայել Բալասանյանին և հանձնել Նալբանդյանի քեռորդի Հովհաննես Աճառյանի միջոցով: Բայց այդ «մեծ կրնրիկա»-ն չեր, այլ նրա մի բեկորը: Տպագրելով «Սոս և Վարդիթեր» «կտրած կրնրիկայի կտոր»-ն չեր, այլ նրա մի բեկորը: Տպագրելով «Սոս և Վարդիթեր» «կտրած կրնրիկայի կտոր»-ն չեր, այլ նրա մի բեկորը: Տպագրելով «Սոս և Վարդիթեր» «կտրած կրնրիկայի մի հատվածը» հանդեսի 1890 թ. 3-րդ գրքում, Բալասանյանը հիշատակում և, որ «

տիկա»-ի ձեռագիրը տեսրակն սկսում է 27-րդ էջից և վերջանում է 42-րդ էջով։ Ամբագիրը միջոցներ ձեռք առավ գտնելու ձեռագրի պակաս էջերը, բայց այդ ուղղությամբ կատարված պրպտումներն ապարդյուն անցան։ Ակնհայտ է, որ Նալբանդյանի անձնական բանակամ և նրա կենսագիր Միքայել Տեր-Գրիգորյանը, ինչպես նաև բանաստեղծ Ռուֆայել Պատկանյանը, որ նույնպես հիշատակում է «Կրիտիկան», որպես առաջին քննադատական լուրջ գործը հայոց մեջ, տեսել են և կարդացել «Կրիտիկա»-ի ամբողջական ձեռագիրը։ Ռ. Պատկանյանի դիտողությունից պարզ կերևում է, որ նա ծանոթ է «Կրիտիկա»-ի բովանդակությանը։ Աբրահամ Զամինյանի հրատարակությամբ լույս տեսած Միքայել Նալբանդյանի կերկերի կերկհատորյակի մեջ դեռևս «Կրիտիկա»-ի հատվածը նույնպես ապագրված և պակասավոր ձեռագրի հիման վրա։ Ամենից հավանականն այն է, որ ձեռագիրն ընկնելով հեղինակի վոչ բովանդաչախ գրագետ ազգականների ձեռքը, անուշադրության հետևանքով կիսով չափ վոչնչացել է։

«Սոս և Վարդիթեր»-ի «Կրիտիկա»-ն ամենից ավելի հետաքրքրում էր վախճան հեղինակ Գևորգ Պռոշյանին, որը տեղեկանալով այդ մասին, 1889 թվի սեպտեմբերի 4-ին Մ. Բարխուդարյանին ուղղած նամակում գրում է. «Սոս և Վարդիթերի» քննադատության առթիվ՝ Նալբանդյանցի գրածի մասին, յես տեղեկություն ունեյի հանգուցյալի Ղազար Փարպեցու Թղթի հատվածաբանից. նորա հրատարակիչ, նույնպես հանգուցյալ Միք. Տեր-Գրիգորյանն ինձ անձամբ ասաց, որ ինքը կարդացել է հոդվածը և չդիտե ում մոտ է այժմ. իսկ ապրած վոչ մի տեղ չկա։ Ափսոս է, իհարկե, որ թերի կա, բայց և այնպես ցանկալի կլի հանգուցյալ Նալբանդյանցի կարծիքն իմանալ իմ անդրանիկ գրվածքիս վրա. տպեցեք ուրեմն, խնդրում եմ, թեկուզ պակաս պռատ»*։ Այդ նույն խնդրով Պռոշյանը դիմել է նաև Ռ. Պատկանյանին։

Կարգալով «Կրիտիկա»-ի կիսատ հատվածը, Պռոշյանը չէր կարող կռահել մեծ գրականագետի քննության բուն խորհուրդն ու նպատակը, նկատած թերություններն ու առավելությունները։ Սակայն կարելի կլի դատմանալ, որ ծանոթ չլինելով «Կրիտիկա»-ի բովանդակությանը և նրա արծարծած հարցերին, ականավոր վիպասանն իր կերկրորդ՝ «Հայկ խնդիր» վեպում արձագանքում էր «Կրիտիկա»-ի առաջ քաշած գրական-քաղաքական հարցադրումներին։ Դա վկայում է, որ 60—70-ական թվականներին հայ գրականությունը խորապես արձագանքում էր քաղաքական-հասարակական այն իղեաներին, որոնց արտահայտիչն էր Միքայել Նալբանդյանը։ Նշանավոր հրապարակախոսի քաղաքական-գրական գործունեությունը հսկայական ազդեցություն ունեցավ ԲՀ հայ հասարակական մտքի և ԲՀ գրականության զարգացման ընթացքի վրա։ Դառնալով «Կրիտիկա»-ի պատմությանը, պիտի հիշատակենք, որ Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպը առաջին անգամ լույս տեսավ 1860 թ. «Դուռն Հայոց աշխարհին» ամսագրի տեսրակներում և նույն թվի հոկտեմբերի վերջերին հրատարակվեց առանձին գրքով։ Ցեթե նկատի ունենանք, որ Նալբանդյանը Թրիլիսում յեղել է հենց 1860 թ., որտեղից և մեկնել Ցեղրապա նոյեմբեր ամսին, ուստի պիտի յենթադրել, որ «Կրիտիկա»-ի հեղինակը վեպը կարդացել է 1860 թվականին Թրիլիսում։ Անկասկած, Նալբանդյանը ծանոթ էր նաև նույն թվականին Մանդինյանի «Մեղու Հայաստանի» լրագրում տպագրված վոմն Բալագար Մամաջանյանի գրախոսականին, որտեղ մեջ ասկյան այս գրչակը բողոքում էր ԲՀ՝ «վեպը սրբապղծության և կատարում յեկեղեցու վերաբերմամբ»։ Հավանորեն այդ գրախոսությունը և վեպի շուրջը յեղած դանդաղ բնբանացի առարկությունները նկատի ուներ Նալբանդյանը, յերբ գրում էր, որ ինքը «ինքնահավան և անգործ մարդկից լսել և այլևայլ աննպատակ կարծիքներ վեպի մասին»։ 1860—62 թ. թ. քաղաքական-հրապարակախոսական զործունեությունը կլանում էր նրա ամբողջ ժամանակը։ Ինչպես հայտնի յե, այդ տարիներին են գրված «Յերիտասարդ» հանդեսի նշանավոր պամֆլետը և «Յերկրագործության» շարքի հոդվածները։ Հեղափոխական գործունեության այդ փայլուն շրջանում, յերբ մեծ հրապարակախոսը շատ ազգականներ էր հասցնում հայ ռեակցիային, հազիվ ԲՀ ժամանակ պահպանել նրա արխիվը։

---

* Գևոր. Գրական թանգարան։ Մ. Բարխուդարյանի արխիվը։

ունենար զբաղվելու Պռուշյանի վեպի քննադատության մասին։ Ուստի այդ աշխատանքին նա ձեռնարկեց ավելի ուշ, թեև «Կրխտիկա»-ի առաջին վարիանտը կատարած և հարուցում՝ վոր զբաղված և բանասիրությունից առաջ Մ.Նալբանդյանով հայտնի չև, վոր «Կրխտիկա»-ի յերկրորդ վարիանտը կամ «մեծ կրխտիկա»-ն սկսված և և վերջացած Պետրոպավլովսկի ղնդանում։ «Կրխտիկա»-ն ամբողջում Նալբանդյանի գրած առաջին աշխատություններից մեկն և, վոր ի վրա անհամեմատ ավելի շատ և աշխատել հեղինակը։ Հենց այն հանգամանքը, վոր «Կրխտիկա»-ն գրված և յերկու վարիանտով, վկայում և, վոր հեղինակին իր այդ աշխատությանը չափազանց կարևոր նշանակություն և տվել և յերկար ժամանակ մշակել և։ Դոհ չմնալով առաջին զուտ գրական-բանասիրական վարիանտից, հեղինակը Պռուշյանի վեպի քննության առիթով ընդհանրացրել և իր քաղաքական-փիլիսոփայական և գրական-եսթետիկական հայացքները։ Այդ տեսակետից «Կրխտիկա»-ի յերկրորդ վարիանտի նշանակությունը դուրս և գալիս «Սոս և Վարդիթեր» վեպի քննադատության սահմաններից։ Պետրոպավլովսկի կալանավորը վերամշակելով «Կրխտիկա»-ն, թեև յեղոտական լեզվով, անդամ զնդանից, հետևողական դեմոկրատական դիրքերից պայքարի դրոշակ պարզեց ցարիզմի և հայկական ռեակցիայի դեմ։ Ահա թե ինչու «Կրխտիկա»-ի առաջին վարիանտի պլանը քաղաքականապես չի բավարարել հեղինակին և նա վոչ թե արտագրել և, այլ յերկար մասերում արմատապես փոխել, վերամշակել և աշխատությունը և տպագրության համար նախապատրաստել և յերկրորդ վարիանտը, վորպես ըստ ամենայնի ավարտված աշխատություն։ «Սոս և Վարդիթեր»-ի «Կրխտիկա»-ն որդանապես կապված և Նալբանդյանի մեկ ուրիշ ուսումնասիրության՝ «Աշխարհարարի քերականության» հետ։ 1863 թ. ապրիլի 12-ին բանտից գրած նամակում Նալբանդյանը խնդրում եր իր յեղբայր Ղազարոսին ուղարկել Սայաթ-Նովայի յերգարանը, Հաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» և Պետ. Պռուշյանի «Սոս և Վարդիթեր» վեպերը։ Աշխարհարարով գրված այս նշանավոր գրքերն յերկերը, հարկավ, պիտի գրավելին Նալբանդյանի ուշադրությունը և այդ յերկերից նա հարուստ նյութ պիտի քաղեր աշխարհարարի քերականության համար։ Նալբանդյանին առավելապես հետաքրքրում եր արարատյան բարբառը, իսկ Պռուշյանի և Աբովյանի յերկերը գրված եյին հենց արարատյան դյուղացիության բարբառով։ Այդ մեկնակետից եր Նալբանդյանը քննադատել և «Սոս և Վարդիթեր» վիպասանությունը։ Սակայն «Կրխտիկա»-ի առաջին վարիանտի մեզ հասած կիսատ հատվածն ակնարկում և, վոր այդ աշխատությունը Նալբանդյանը չի գրել վորպես նյութ «Աշխարհարարի քերականության» համար, այլ սկսել և ավարտել և վորպես ինքնուրույն մի հոդված։ Միևնույնժամանակ այդ աշխատությունը հնարավորություն պիտի տար հրապարակախոսին շարադրելու իր մտքերիս լուսավոր եսթետիկան։ Պռուշյանի ռեալիստական վեպն այդ տեսակետից ամենակարևոր յերկին եր, վոր առատ նյութ կարող եր տալ թե այդպիսի ուսումնասիրության և թե Արարատյան դաշտի դյուղացիության վիճակի մասին խոսելու համար։ Պատահական չև, վոր Նալբանդյանը կիսատ թողնելով իր մի շարք աշխատությունները, նույնիսկ «Աշխարհարարի քերականությունը», վոր պիտի լիներ հեղինակի գրական գործունեության գլուխ գործոցներից մեկը, վոչ միայն ավարտել և «Սոս և Վարդիթեր»-ի «Կրխտիկա»-ն, այլև մշակել «Կրխտիկա»-ի յերկրորդ ծավալուն վարիանտը կամ «մեծ կրխտիկան»։ Իսկ առաջին վարիանտն անբավարար համարելով, հեղինակը թողել և՝ աշխարհարարի քերականության համար մասամբ ոգտագործելու նկատառումով։ Սակայն թե Տեր-Գրիգորյանը, թե Պատկանյանը տեսել և կարդացել են Նալբանդյանի թղթերի մեջ յեղած «Կրխտիկա»-ի առաջին վարիանտը և յերկրորդ վարիանտի կամ «մեծ կրխտիկա»-ի մասին գաղափար չեն ունեցել։ «Բուն կրխտիկան» անհայտ եր գրական աշխարհին։ Յորհրդային իշխանության հաստատումից հետո միայն, Մ.Թաշյել Նալբանդյանի դատավարության նյութերի մեջ հայտաբերվեց «Սոս և Վարդիթեր»-ի «Կրխտիկա»-ի յերկրորդ վարիանտի ամբողջական և մաքուր ձեռագիրը։ Տես „Архив внешней политики и революции", фонд Деп. Полиции, 1862, № 230, ч. 76. «О революционном духе народа в России и распространении по сему случаю возмутительных воззваний. О Михаиле Налбандове».

Նալբանդյանի սենատական դործի մեջ պահպանված և նաև նրա՝ բերդում գրական

աշխատանքով զբաղվելու թույլտվության մասին յուրած ամբողջ գրագրությունը, որ լույս է սփռում «Կրխտիկա»-ի մեծ վարիանտի «կորստյան» հանգամանքների վրա։

Այդ թույլտվությունն ստանալու մասին անմիջապես արձագանքեցին Պոլսի բանկաները։ Պոլսի «Մեղու»-ն, «Հյուսիսափայլ»-ի վերահրատարակության կապակցությամբ, տպագրեց խմբագիր Սըվաճյանի նամակը։

Սըվաճյանը վողջունում էր Նալբանդյանի գրական գործունեությունը «Հյուսիսափայլ»-ի էջերում։ Ցավ խնայած, շատ չանցած, «Հյուսիսափայլ»-ի 1864 թ. № 3-ում Սահեփանոս Նազարյանի առորագրությամբ տպագրվեց Նալբանդյանի «Ազգային թշվառության» նշանավոր հոդվածը, որ հայտնի չէ, թե ինչ ճանապարհով Պետրոպավլովսկի բերդից հասել է խմբագրության ձեռքը։ Սակայն այլ բանի արժանացավ «Սոս և Վարդիթեր»-ի «Կրխտիկա»-ն։ 1864 թ. փետրվարի 20-ին, այսինքն գրական աշխատանքի թույլտվությունն ստանալուց 15 որ հետո, Միքայել Նալբանդյանը «Կրխտիկա»-ի պատրաստ ձեռագիրն ուղարկել է յերրորդ բաժանմունքին տպագրության թույլտվություն ստանալու համար։ «20-ին տվի գրվածքս քննության», գրում է Նալբանդյանը բերդի հիշատակարանում։ Ձեռագրի վրա Նալբանդյանի ձեռքով գրված է ռուսերեն.

„Северное Сияние“

(Арм. журнал)

Издаваемый в Москве г. Назарянц.

М. Налбандов.

Разбор романа „Сос и Вартитер“ г. Прошянц,
изданного в Тифлисе в 1860 г.

Հայերեն ձեռագիրը մակագրված է.

Կրխտիկա. «Սոս և Վարդիթեր», ազգային վիպասանություն, պ. Գերճի Պռոշյանց, 1860, Թիֆլիս։

Սակայն «Կրխտիկա»-ի տպագրությունը չի թույլատրվել և ձեռագիրը կցվել է Նալբանդյանի անհատական գործին ու այնուս չի վերադարձվել հեղինակին։

Դատելով հրապարակած «Կրխտիկա»-ի ամբողջական վարիանտից՝ պիտի յենթադրել, որ «Կրխտիկա»-ի առաջին վարիանտը համեմատաբար քիչ ավելի փոքր ծավալ է ունեցել։ Այժմ արդեն ամբողջական վարիանտի հիման վրա հնարավոր է նաև պարզել, թե առաջին վարիանտի «գտնված բեկորը» «Կրխտիկա»-ի որ հատվածն է և ինչ քնույթի փոփոխություններ է կատարել հեղինակը յերկրորդ վարիանտի մեջ։

«Կրխտիկա»-ի առաջին վարիանտի տպագրված հատվածի սկզբի յերկրորդ պարբերությունն սկսվում է հետևյալ տողերով. «Ծաթալիզմի վրա խոսելով, ազգային ավանդությանց մեջ մտանք, այնտեղից էլ ծանոթությանց մեջ, այնպես որ բուն վիպասանության վերաբերյալ. նկատողությունքը ընդհատվեցան»։ Ձիշտ նույն տողերով է սկսվում «Կրխտիկա»-ի յերկրորդ կամ ամբողջական վարիանտի ձեռագրի 9-րդ էջի վերջին պարբերությունը՝ քիչ տարբեր շարադրությամբ։ Մի քանի էջ հետո Նալբանդյանն առաջին վարիանտի մեջ հետևյալ հատվածով է ավարտում «Սոս և Վարդիթեր» վեպի թերությունների քննությունը։

«Մենք չենք ուզում այս բոլոր անբնական և շատ թույլ նկարված անցքերը քննության դնանակի տակ ձգել. այդ շատ յերկար կլինի. առանց նրան էլ յերկարում է մեր հատվածը։ Գուցե ավելորդ էլ լիներ այս աչքի հայտնի թուլության վրա շատ խոսել, մանավանդ վոր ինքը արդո հեղինակը կամ մեր ընթերցողը, յեթե ուշադրությամբ կարդան այս անցքերի նկարագրությունը, վոր մենք առանց մեր կողմից մեկ խոսք ևս ավելացնելու քաղեցինք բնագրից (յեր. 218—222), իրենք կտեսնեն մեր տեսած անբնականությունները և հակասությունը։ Այսչափ միայն ասում ենք, վոր վիպասանության շինվածքին թյունը և հակասությունը։ Ցավ մեծ հարված է տվել կատարողին այս անբնականությունը։ Ցավ վորպես թե հերիք չէր մեծ հարված է տվել կատարողին այս անբնականությունը։ Ցավ վորպես թե հերիք չէր
ինչ յեղել էր, այն պատվական տպագրչից հետո.

«Ահա սիրտ պատղնեը,
Մի ագահ մարդի գոհը,

Ով բառերից անց կենա,
Հիշի Սոան ու Վարպետներ»,

վոր շատ ընտիր է, կարճ և ազդու, դնում է Գաբրիէլի անտևր վոզբը։ Ամբողջ գործի մեջ բոլոր վառանավորքը վոր տակ ու վերև են անում, մեկ հատ չկա այսպիսի անխորհուրդ, անաջող և սառը վառանավոր։ Գառնատը շատ բնական է։ Գործը հեղինակի մարտում և արտում արդեն վերջացած է, նորա վոզին էլ բան չունի այս գործին հետ. բայց յերբ բռնադատում ես պրիչը ինչ էլ վոր լինի բան գրել, հայտնի բան է, վոր Գաբրիէլի վոզբի պես կլինի, վոր մեչ բարով պիտի ասեր»։

Ամբողջական վարիանտի ձեռագրի 14-րդ երեսում գրեթե առանց փոխոխության կարդում ենք նույն տողերը։ Դառնալով «Կրխոխկա»-ի յերկու վարիանտների նույնանման հատվածների բաղդատությանը, պիտի յենթադրենք, վոր առաջին վարիանտը կատարյալ է և բաղդատության տեսակետից առաջին մասում՝ մինչև վերոհիշյալ հատվածը,—վորի մեջ հեղինակն ամփոփում և վեպի գլխավոր գնոտեթյունը,—ունեցել է նույն բաղդատությունը։

Յերկու վարիանտների մեր հիշատակած նույնանման հատվածներից հետո վեպի գնոտեթյան շարունակությունը ընթանում է միանգամայն տարբեր ուղղություններով։ «Կրխոխկա»-ի առաջին վարիանտի մեջ հեղինակն անմիջապես անցնում է Պառչյանի «լեզվի և հասարակական գնոտեթյան» ու ըստ էության շարադրում է աշխարհարար լեզվի և քերականության հիմունքները։ Պիտի յենթադրել, վոր Նալբանդյանը «Կրխոխկա»-ն գրելիս արդեն ուսումնասիրել էր մի քանի հիմնական բարբառներ և բավականաչափ նյութ հավաքել «Աշխարհարարի քերականության համար։ «Մենք շատ վատաբ հավաքած ենք,—գրում էր Նալբանդյանը,—այս գրութեյունը պաշտպանելու համար, բայց այսուհետ անհարմար և ստպաղեղ բանալ. ուրիշ ժամանակ, մի առանձին գործով կը հրատարակենք մեր տեսությունը նոր լեզվի մշակության մասին, յեթե միայն աջողի մեզ կատարելագործել այդ ձեռքիսով աշխատությունը»։ Ուրեմն աշխարհարարի քերականության նյութն արդեն վորոշ չափով պատրաստ էր և առանձին մասերն արդեն գրված էլին, յերբ Նալբանդյանը գրում էր «Կրխոխկա»-ն, վորի մեջ նա ոգտագործել և քերականության նյութերը աշխարհարար լեզվի էր տեսությունը հիմնավորելու համար։

«Կրխոխկա»-ի առաջին վարիանտի այդ հատվածը հետաքրքրական է լեզվական-բանասիրական տեսակետից։ Խոսնակների աշխարհարարի տեսության ծանոթություն տալ աշխարհարարի քերականության մեջ, «Կրխոխկա»-ի հեղինակն աշխատանքների շարադրում է աշխարհարարի զարգացման հիմնական սկզբունքները։ Նալբանդյանի կարծիքով, նոր լեզվի խորհուրդն էր լինելու «*ոչ քան կարելի է առավել շատ առածքով, նոր լեզվի խորհուրդն էր լինելու «ոչ քան կարելի է առավել շատ առածների բազմության հասկանալի կերպով խոսել*։ Այս պահանջներով, նոր լեզուն պիտի նայվի և մշակվի ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խոնելու լեզուն պիտի նայվի և մշակվի ինքնուրույնաբար, առանց ամենևին հին լեզվից խոնելու և առանց այս կամ այն գավառական բարբառին տարիանալու։ Բոլոր գավառական բարբառների եյական տարբերքը, վոր իրենց ձևով և կազմությամբ ավելի ընդունակ են հինների—ընդհանրության լեզվի վրա պատվաստվելու, պիտի ընկնեն հարատարապես հեղինակների քերթյի մեջ և այնտեղ հալվելով և քիմիապես (ֆիզիկապես վրչ) միանալով պիտի դուրս գան վրչ վորպես թլպատության կամ անթլպատության, այլ վորպես նոր արարած»։

Այդ սկզբունքից քննության առնելով Գևրգ Պառչյանի լեզուն, Նալբանդյանը գրում է. «Գ. Պառչյանի ձև ու վոճի մեջ, մենք տեսնում ենք հին լեզվին տարերքյան. բայց արդ հեղինակը տարբանում է վոչ թե հին լեզվի վոգուն և տրամաբանության, վորի տակ հինդ տարի ընկճված եյինք մենք էլ, Հյուսիսափայլն էլ, վոչ. այդ տակավին խորհուրդ ուներ և սկզբունքից առաջ եր գալիս, թեև վոչ պրակտիկապես գործադրելի յեր այդ սկզբունքը, այլ տարբանում է հին լեզվի արտաքին ձևին,—կիզելին, վոր բնավ խորհուրդ չունի»։

Այսպիսով, «Կրխոխկա»-ի հեղինակը պաշտպանում է ժողովրդի կենդանի պարզ խոսակցական լեզուն, վոր պիտի դառնար հայ նոր գրականության լեզվի խոհական դանձարանը։

Դառնալով «Կրխոխկա»-ի այս հատվածից, պիտի յենթադրել, վոր լեզվի և քերականության գնոտեթյանը նվիրված հատվածը մոտավորապես ամբողջական է։

«Կրխտիկա»-ի յերկրորդ վարիանտի մեջ ավարտելով վեպի սոցիալ-տնտեսական քերությունների քննությունը, Նալբանդյանը շարունակում է վեպի գաղափարական խորը քննադատությունը։ Այդ ամենակարևոր փոփոխումն է, որ կատարել է հեղինակը «Կրխտիկա»-ն վերամշակելիս։ Այդ հատվածի քննության առիթը Պռոշյանի վեպի հետ կապված ժողովրդական ավանդությունների ու նախապաշարումների հարցն է։ Պետք Պռոշյանը, այդ յերկում արտացոլելով գյուղացիության կյանքն ու հոգեբանությունը, իր աշխարհայացքի մեջ է ընդունում մասամբ նաև նահապետական գյուղացիության սովամոլությունը, նախապաշարումներն ու պատրանքները։ Վերջիս հեղափոխական լուսավորիչ Նալբանդյանը վոչ միայն չի լրեալացնում ժողովրդի նախապաշարումները, այլև քննադատելով Պետք Պռոշյանին, առաջ է քաշում ժողովրդի քաղաքական և կուլտուրական զարթոնքի հարցը, վորպես գեղարվեստական գրականության առաջնակարգ խնդիր։

«Բայց խոստովանում ենք, վոր ակնառության ավանդությունը (յեր. 169) չունի մի դրա նման արժեք։ Անշուշտ, հեղինակը չէ շարադրել նորան, նա առնում է ազգի հասկացողությունից. բայց մենք մի փոքր առաջ ասածներս վերաբերմամբ կրկնում ենք, թե գեղեցկության և լուսավորության խորհուրդը այն չէ, վոր ամեն անցած խավար լուր քարոզել, ամեն զարկի ծանրության տակ ճնշվածին անխտիր ծունր դնել, այլ վորպեսզի փարատել այդ խավարը։ Այդ տեսակ բաները, մեր կարծիքով, զգուշության պետք ունեն. և հեղինակը պետք հանդես հանելով մի նմանօրինակ բան, պարտական է այնպիսի ընթացք տալ բանին, վոր տասն և իններորդ դարում ապրողը ամենախավար զարին արձագանք չտված չլինի»։

Զգուշության, ուշիմ և գրականության խորհուրդն են՝ ժամանակակից լուսավորության «գեղեցիկներով» փարատել միջնադարյան խավարը։

Այդ այն պարտականությունն է, վոր Նալբանդյանը համարում էր «մեր», այսինքն իր և իր յեվրոպական ընթացող լուսավորչական գրական-հասարակական գործունեության նպատակն ու «պարտականությունը»։ Ահենակ է, վոր Նալբանդյանը Պռոշյանին դնում էր նոր մարդկանց շարքում։ Ահա թե ինչու վորպես հետևողական դեմոկրատ՝ նա քննադատում է Պռոշյանի հեղուկները, նրա «վսակեզարյան անմեղությունը» և վորոշ լրյուղիանները։ Սակայն Նալբանդյանը սովորական գրական գործիչ չէր, այլ հեղափոխական լուսավորիչ, վոր հետապնդում էր քաղաքական կոնկրետ նպատակ։ Ահա թե ինչու այդ մեծ «պարտականությունը» որդանապես կապում էր «խորհրդավոր ժամանակների» հետ։ Կասկածից վեր է, վոր այս բառերի տակ Նալբանդյանը հասկանում էր հասունացող գյուղացիական հեղափոխությունը և խոսքն ուղղում էր իր քաղաքական բարեկամներին, վորոնք պիտի նախապատրաստեին ժողովուրդը «խորհրդավոր ժամանակների համար»։

Տարաբախտաբար հեղինակը պատռել և «Կրխտիկա»-ի յերկրորդ վարիանտի այդ կարևոր հատվածից 4 էջ՝ 12—17-ը, նորից թվագրել և այդ էջերը և ջնջել և նաև այդ էջերի շարունակությունը կազմող 3 տողերը, վորոնք մոտավորապես գաղափար են տալիս հանված էջերի բովանդակության մասին։ Ջնջված է «...կայց (հավանորեն հատարակաց. Խմբ.) հոսանքի մեջ։ Դեմ դնել այդ հոսանքին,—ահա մի պահի խնդիրը և այդ դիմադրությունը և միջնադարյան մոռուլ համակարգության կործանումը մենք հրատարակում ենք վորպես անվիճահակելի հնարաղաչին քաղաքակրթության» (ընդգծումը մերն է. Խմբ.)։ Իսկ 12-րդ էջի վերջին պարբերության այն տողերը, վորոնք անցել են 13-րդ էջը, հեղինակը գրել է ընագրի 12-րդ էջի լուսանցքում։ Հեղինակի ձեռքով ջնջված վերջին յերկու տողի բովանդակությունը վկայում է, վոր նա հանել և ձեռագրի այդ էջերը, նկատի ունենալով, վոր գրաքննության կարող է արգելել ձեռագիրը։ Մեր վերծանած վերջին տողերն ապացուցում են, վոր հանված էջերը, անշուշտ, քաղաքական լուրջ բովանդակություն պիտի ունենային։

Սակայն Պռոշյանի վեպի կապակցությամբ խորացնելով պայքարը հայկական ռեակցիայի դեմ՝ Նալբանդյանը կասկածում է, վոր ապագա ընթերցողը հաշվի չառնելով գրության հանգամանքները, կարող է այդ ամենն ընդունել Պետք Պռոշյանի հաշվին, ուստի անմիջապես սահմանագծում է վիպասանին աղգային կղերական հոսանքից. «Հարկ չկա կարծում ենք, ասել, վոր այս բոլոր խոսք ու գրույցը վոչ թե լուկ մեր հեղինակին չեն վերաբերվում, այլ մանավանդ ավելի փոքր բաժինը կարող է հասնել նորան...»։

Վորպես պրակտիկ հեղափոխական, Նալբանդյանը չէր բավարարվում հարցի լոկ տեսական-պատմական կողմով, ուստի դիմում է ժամանակակից բնագիտության, քիմիային, ֆիզիկային և պարզաբանում է նաև Պուշկինի վեպում տեղ գտած ավանդությունների բնական պատճառները, վորոնք հայտնի չէին կարող լինել «հասարակ ժողովրդին»:

Այդ բացատրությունների մեջ Նալբանդյանի յելակետը Ֆոյերբախի մատերիալիստական փիլիսոփայությունն է: «Մարդը, ասչ միայն ֆիզիկապես, այլև բարոյապես յենթակա յե բնության ազդեցության. բնության սրտի զարկը ցոլանում է անմիջապես մարդու սրտում: Մարդը իր գաղափարքը առնում է բնությունից: Ինչ չափով ճանաչել և ուսել է նա բնությունը, համեմատ այդ չափին կլինի նորա գաղափարների և հասկացողության ազնվությունը: Սյա մի որենք, վոր բնավ բացառություն չունի: Մարդի վոստայնից բարակ մետաֆիզիկական համակարգության բովանդակ գաղափարքը կան բնության մեջ. իսկ ինչ վոր չկա, այն ամենևին սուտ է: Բնությունը մի գիրք է, վոր պետք յե կարդալ և ուղիղ հասկանալ. սխալ ըմբռնողությունը մեծ վնասներ են տալիս»:

«Վիպասանության թեորիայի քննության» նվիրված նոր հատվածը, վոր ավելացրել է Նալբանդյանը «Կրնտիկա»-ի յերկրորդ վարիանտի մեջ, փոխարինում է առաջին վարիանտի այն հատվածին, վորի մեջ Նալբանդյանը քննում է Պուշկինի վեպի լեզվական հարցերը: Յերկրորդի մեջ նա հրաժարվում է այդ հարցերի քննությունից: «Մենք չենք ուզում քննության տակ ձգել հեղինակի լեզուն և նորա շատ ձախ (ձախողված. Խմբ.) հատվածները, վերջինս յեթե չլիներ, առավել գոհ պետք լինեիր»: Ուրեմն Նալբանդյանը յերկրորդ վարիանտից ամբողջությամբ դուրս է ձգել առաջին վարիանտի լեզվի քննության նվիրված ամբողջ բանասիրական հատվածը: Սակայն այնուամենայնիվ նա լուրության չի անցնում այդ հարցի մասով, թեև հարցը դնում է բոլորովին այլ հողի վրա և քննում է վորպես հրապարակախոս: «Կրնտիկա»-ի հեղինակին դրազեցնում է խնդրի քաղաքական կողմը, այսինքն վեպի հասարակության արծարծված քաղաքական հարցերը, իսկ լեզվի հարցը յերկրորդ վարիանտի մեջ մանավոր խնդիր է: Պաշտպանելով ժողովրդի մեծամասնության հասկանալի լեզվի հարցը, Նալբանդյանը շարունակում և արշավանքը ռեակցիոն տարրերի դեմ, վորոնք պայքար հայտարարելով «նոր հայհոյության», պատճառ էին բռնում նաև նրա կրած ոտար ազդեցությունները: Նալբանդյանն առաջ է քաշում ժողովուրդների համերաշխության հարցը և, վորպես մատերիալիստ, պարզաբանում է հարևան և բախտակից ժողովուրդների փոխազդեցությունների խնդիրը, «...բայց այսպիսին, յերբ աչքի տակ առնու բնությունը, յերկու ազգի կյանքերի մերձինական և միաձև ընթացքները, յերկուքի էլ ընկճված և հարստահարված վիճակը, այն ժամանակ բանը աճելության, յերկուքի էլ ընկճված և հարստահարված վիճակը, այն ժամանակ բանը աշխարհս կլինի, վոր հայը և թուրքը այս տեսակ կապերով միմյանց հետ կապված լինելով, անշուշտ, հոգեբանական յերևույթներով իրարից չէին կարող հեռու լինել: Թող ինչ կամին խոսին, բայց մարդկային հոգին ցոլացնում է արտաքին բնությունը»:

«Կրնտիկա»-ի առաջին և վերջին մասերում հեղինակը շարադրում է նաև իր մատերիալիստական հայեցակերպը: Տարաբաժանաբար առաջին վարիանտի մեջ պակասում են հենց այդ հատվածները: Հենվելով մատերիալիստական փիլիսոփայության հիմնական այն դրույթի վրա, վոր մարդկային միտքը «ցոլացնում է արտաքին բնությունը», «Կրնտիկա»-ի հեղինակի համար գրականությունը հանդիսանում է կյանքի «անխարդախ հայելին»:

Պուշկինի վեպը ռեալիստական այդ «անխարդախ հայելին էր»:

«Համարձակ կարող ենք ասել—գրում է Նալբանդյանը,—վոր արդի հեղինակը իր նկարագրած կյանքի վերաբերությամբ, վոչ ավելի և վոչ պակաս, մի անխարդախ հայելի յե, ուր ցոլանում են բնության ճառագայթքը»:

«Բնության ճառագայթքը» ասելով հեղինակը հասկանում է «բնականության», իրականության ճշմարիտ պատկերը: Ցեղ ռեալիստական գրականության ամենամեծ արժանիքներից մեկը Նալբանդյանը համարում է այն հանգամանքը, վոր «ներգործողը երևնց խոսքով կամ գործերով ցույց են տալիս մեզ իրենց ոչ և ինչ լինելը: Մեծ տարբերություն կա տեսնելու և լսելու մեջ: Այն հեղինակը, վոր ինքը բան չե ասում մեզ, այլ մարդիկ են հանում մեր առջև ներգործել տալով նոցա,—նա ցույց է տալիս. և տեսնելուց հետո լսելու

վարոտություն չկա»։ Այս գնահատականը տալով Գ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» վեպին, Նալբանդյանը Գուշյանի վեպի ամենակարևոր առավելությունն ե համարում նրա ռեալիզմը, դիմակների զերծումը. «Սոս և Վարդիթերը» կարելի չի ընդունել վորպես լոկ և պարզ նկարագիր բնության, ուր բնականաբար և անբռնադատ փայլում են նկարագրված ընկերության կյանքը, հոգեբանական ունակությունը, բարոյական և ընկերական հասկացողությունը»։ Գնահատելով հեղինակի «վոսկեղարյան անմեղությունը», Նալբանդյանը վեպը արժեքավորում է, վորովհետև նա բացում է ազգի բարոյական խոցերը, վորոնք կատակված ծիծաղով վրչ միայն կարող են փտել, այլև իրենց վարակիչ վորակությամբ շատ կորստաբեր լինել»։ Նալբանդյանը պահանջում եր վիպասանից «վճիռ կայացնել կյանքի մասին»։ Ահա թե ինչու նա մեծագույն վոգևորությամբ և արտահայտվում Սոսի փոքր յեղբոր՝ Արշամի մասին, վորը դիմակազերծում և գյուղի ցեցերին. «Արշամի բերնով խոսում և նոր ժամանակների վորդին»։

«Արշամը իր սերունդի յերևեցուցիչն ե. նա վոչ միայն ընդունում և այդ դառն խոսքերի ճշմարտությունը, այլև դատապարտում և իր յեղբոր յերկու յերեսանությունը։ Ինչպես առաջ էլ ասացինք, ափսոս, վոր շատ քիչ հանդես ունի «Սոս և Վարդիթերի» մեջ այն ուղղությունը, վոր յերևում և Արշամում, թեև այս չափիցն էլ տեսնում ենք կենսարար սկեպտիցիզմի արած ազդեցությունը։ Մենք աջողություն և ընթացք ենք մաղթում այդ յերկնային դեսպանին»։

Դժվար չե նկատել Զերնիշևսկու եսթետիկայի քաղաքական-տեսական ազդեցությունը։ Այդ այն պահանջն եր, վոր անում եր նաև Դոբրոլյուբովը Տուրգենևի „Накануне“ յերկի կապակցությամբ՝ „Когда же придет настоящий день?“ հոդվածում, դնելով ռուսական ինտելիգենցիային պատկերելու պահանջը։ Դպրության, ուրեմն և գրականության խորհուրդն եր այդ «սկեպտիկ ուղղության», այսինքն հեղափոխական դաստիարակության պրոպագանդան։

Դժվար չե նկատել նաև «Կրխտիկա»-ի և «Ճերկրապրծությանն» կապը։ Նալբանդյանը Գուշյանի վեպի կապակցությամբ խոսում եր Ալթաբաշյան դաշտի դյուղացիության մասին, վեպում նկատելով դյուղացիության մեջ զոյություն ունեցող փոխոգնության գաղափարի արտահայտությունը, Նալբանդյանը դիտում եր այն որպես համայնական աշխատանքի, կոլեկտիվ ձևի արտահայտություն և քաջալերում է վորպես «ուղիղ ճանապարհ» մի քայլ առաջ անցնելով «Ճերկրապրծությանն» հողի «հասարակական սկզբունքից»։

Ծանոթանալով «Կրխտիկա»-ի առաջին վարիանտի հատվածին ու մեր հիշատակած այն փոփոխություններին, վոր կատարել է հեղինակը յերկրորդ վարիանտում, դժվար չե յեզրակացնել, վոր Նալբանդյանը յերկրորդ վարիանտը գրել և քաղաքական նկատառումներով։ «Կրխտիկա»-ն այն յերկն եր, վորի նյութը հնարավորություն եր տալիս նոր խոսք

4. Տես Ղ. Ալիշան, «Նուագք», Վենետիկ, ս. Ղազար, 1858 թ.: Ամբողջ հատորը կոչվում է «Հայբուն». Նալբանդյանը գլխավորապես նկատի ունի այդ հատորի «Նահապետ» մասը:

5. Նալբանդյանի հիշատակած վեպը լույս է տեսել Կ. Պոլսում 1851 թ. «Ա գ ա թ ի Հ ի ե ա յ ա ս ի» վերնագրով: Հեղինակի անունը գրքի վրա հիշատակված չէ: Պոլսի «Մ ե ղ ու»-ն այդ գիրքը համարում էր «զրպարտական և ազգային վնասից հշգրիտ պատկերի չեզոք գիրք» («Մ ե ղ ու», 1864, № 234):

6. Խոսքը Վռոդա և Վռոդիլա թռչունների մասին պատմված առակի վրա յ. սեռ մարդ. եղկելելի, Գլ. ԻԲ:

7. Բերվի նամակներից երևում է, որ Նալբանդյանը Ջևդի տակ ուներ H. T. Buckle-ի „History of civilisation in England"-ի առաջին հատորի ռուսերեն չերկու թարգմանությունները—Բուչինգիու և Բեռաուժե-Իյամինի: Տեքստում հիշված փաստերն առնված են գրքի 7-րդ գլխից:

8. Նալբանդյանը օգտվում է Արագոյի այն ինքնակենսագրություններից, որ զետեղված էր նրա առաջին թարգմանված „Биография знаменитых астрономов, физиков и геометров" (т. т. I и II, СПБ, 1859 և 1860) աշխատության սկզբում:

9. Տես Юстис Либих, „Письма о химии", пер. П. Алексеева, СПБ, т. I, եջ 319:

10. Տես Ю. Либих, „Письма о химии", Москва, 1855, եջ 25:

11. Տես Ցոլիչ վարդապետ, «Վ ա ս ն Վ ա ր դ ա ն ա յ և Հ ա յ ո ց պ ա տ ե ր ա զ մ ի ն», Մոսկվա, 1861, եջ 15:

12. «Մ ի ք ի թ ա ր յ ա ն հ ե ր ե թ ի ք ա ս ա ր ա ն» կամ ավելի ճիշտ «Դանամիքյան հերետիկասարան» կոչի կոչում Զամուռյանը և իր համախոհները պրոտեստանտ «լուսավորյալների» ժողովատեղին, որ գտնվում էր փոքրիկ Մեծ նոր խանի չերկու գոների մեջ: «Լուսավորյալները», այսինքն ապստամբականները իրենց հերթին «Դալաթա սահա» կոչում՝ «խավարյալների» հակադրատեղին, որ գտնվում էր Գալաթիայի չեկեղեցու բակում: Զամուռյանի աչքում Նալբանդյանը «դանամիքյան հերետիկոս» էր, որչափով հերքում էր... գևերի գոյությունը (տես Հ. Պարոնյան, «Ա ղ պ ա յ ի ն Ջ ո ջ կ ը», Ցերեվան, 1932, եջ 45 և Հ. Ասատուր, «Դ ի մ ա տ ա ղ ե ր ն ե ր», Կ. Պոլիս, 1921, եջ 20 և հետ.):

13. Մինչեվենիա—Հարությունը Սբվոճյանի կեղծանունն է: Տես Ա. Վ ա ն ա կ ա ն բ ա ռ ա ր ա ն:

14. Խոսքը Վանեցի Պողոս վարպետի մասին է:

15. Տերտեր Հռիփսիմեի Տեր Պողոսի մասին տես Նալբանդյանի «Ազգային Բյուրոկրատիայնը» հոդվածը:

16. Լուսանցքում հետագայում գրած այս տողերով վերջանում է ձեռագրի 12-րդ եջի բուն տեքստը. հաջորդն ունի կրկնակի համարակալում՝ «17», որը ջնջված է, և «13», որ ավելացված է ապա: Ինչպես երևում է, աշխատանքն ամբարձրից հետո Նալբանդյանը սխալված է եղել, ամենայն հավանականությամբ գրաքննական նկատառումներով, վերնագրել գրի առնված չորս եջ, որից հետո ամբողջ ձեռագիրը համարակալել և նկատել, վոչնչացն

20. Տես Юстус Либих, „*Письма о химии*“, т. I, եջ 19։

21. Նալբանդյանի հիշատակած այդ «վարպետը» իր առաջին վարժանքներ սիրացու Ոքսենտ-Ցեղիչին է։

22. Տես Մովսես Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Ամստերդամ, 1695 թ., գիրք Ա, գլ. 31։

23. Տես Աւետարան ըստ Մատթէոսի, գլ. Ի՟Ե, 29։

24. Հնդիկական կուռքեր։

25. Չեմբրաստոյի վերելքը Հումբոլդը կատարել է 1802 թ.։ Նրան հաջորդեցին Բուանենգո և Հոլլ (1831 թ.)։ 1856 թ. վերելք կատարեց Ժյուլ Ռեմին։ Վեռան գագաթը հասավ Ուիմպերը, առաջին անգամ 1880 թ.։

26. Տես Франсуа Араго, „*Гром и молния*“, СПБ, 1859, եջ 149։

27. Նալբանդյանը ձեռքի տակ ուներ դ-ր Յիմմերմանի դասագրքի ռուսերեն թարգմանությունը՝ „*Общие физические явления или т. н. общая физика*“, СПБ, 1861։

28. Տես Սաղմոս, գլ. ԺՀ, 1։

29. Տես Աւետարան ըստ Ղուկասու, գլ. ԺԱ, 52։

30. Նալբանդյանը նեապոլսում լեզել է 1860 թ. դեկտեմբերի վերջերին։

31. Տես Աւետարան ըստ Մատթէոսի, գլ. Ի, 13։

32. Համմ. Юстус Либих, „*Письма о химии*“, СПБ, 1861, т. I, եջ 352 և հետ.։

33. Տես Աւետարան ըստ Յովհաննու, գլ. Բ, 41։

34. Տես «Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Զենոբ. Յիշատակարան պատմագրաբար», եջ 56 և հետ. Հիշատակարանը պատմում է Գրիգոր Տղթայակիր և Յովհաննես Կոլոտ վարդապետների անունից։

35. Նալբանդյանը նկատի ունի Յովհաննես Պլուզ վարդապետին վերադրվող նզովքը։

36. «Ժամանակ, յերկշաբաթաթերթ, լույս եր տեսնում Կ. Պոլսում 1863—69 թ.թ., Ստ. Փափազյանի խմբագրությամբ։

37. Տես Юстус Либих, „*Письма о химии*“, т. I, եջ 349։

38. Տես Գրիգոր Լուսավորչի շաբաթ որվա առնչն նվիրված «Այսօր զուարճացեալ...» շարականը, Կ. Պոլիս, 1853, եջ 234։

39. Թուղթ Պօղոսի առ Գալատացիսն, գլ. Բ, 15։

40. Ըստ բանավոր ավանդության, Մուհամմեդը և հայ հոգևորական Սարգիս Բուխարացին, արևելյան ցեղերի յերկրային և հոգևոր գերիշխանությունը ձեռք գցելու նպատակով, վորոշում են արաբերեն թարգմանել Աստվածաշունչը։ Այդ աշխատանքը կատարելուց հետո Սարգիս Բուխարացին մահանում է մի ջրհոր և այնտեղից ձայն տալիս Մուհամմեդին, իսկ վերջինս զարմացած ամբոխի առաջ կախում է պարանը և, իբր թե, դատարկ հորից դուրս հանում պատրաստի Ղուրանը։ Շլացած կատարյալ հաջողությունից, Մուհամմեդը կոչ է անում հանդիսատեսներին, ի նշան երկնց հավատի, մի-մի քար նետել ջրհորը և ինքն էլ նետում է առաջինը. շուտով նախկին ջրհորի տեղ բարձրանում է մի քարափ, կույտ հետագայում, այդ տեղից անցնելիս, բոլոր մահմեդականները սրբազան պարտք են համարում մի-մի քար նետել հին քարակույտի—Սարգիս Բուխարացու գլուխի վրա։

41. Յովհաննու Իմաստասիրի Օձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ՝ 1833, եջ 146։

42. Այս տողերով վերջանում է ձեռագրի 38-րդ եջը, իսկ դրան հաջորդում է 43-րդ։ Ուրեմն կրկնակի համարակալումից հետո հեղինակն ամփոփած է յերել պոկել ևս յերկու՝ դրի առնված թերթ, շարունակությունը մի կերպ ավարտելով վերջին, լրացուցիչ 51-րդ եջում։ Վոչ մի կասկած չկա, վոր հանված թերթերը պարունակել են ամբողջ քննադատությունից

43. Տես Մարգարէութիւն Եզեկիէլի, Գլ. ԼԴ, 2։
44. Տես Աւետարան ըստ Մատթէոսի, Գլ. Թ, 38։
45. Նալբանդեանն այստեղ նկատի ունի շերամաբուծութեանը վերաբերող այն գիրքը, որի մասին հիշատակում է նրա առաջին կենսագիր Միքայել Տեր-Գրիգորեանը։
46. Տես Առաւածաշունչ, Ծնունդք, Գլ. Ե, 27։

ԿՐԻՏԻԿԱ

ՍՈՍ ՅԵՎ ՎԱՐԴԻՔԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅԱՆ

(ՀԱՏՎԱԾ)

«Սոս և Վարդիքեր» կրիտիկայի այս հատվածն առաջին անգամ հրատարակել է Մկրտիչ Բարխուդարյանն իր «Հանդես դպրական և պատմական»-ի 1890 թ., երրորդ գրքում։ Ձեռագիրը կորած լինելու պատճառով մեր տեքստը պատրաստված է այդ հրատարակության հիման վրա։ Հույս ընծայելով այս գործը, խմբագիրն արել է հետևյալ ծանոթությունը. «Սրտի բերկրությամբ զեռեղելով «Հանդիսում» հանդուցյալ Միքայել Նալբանդյանի այս աշխատությունը, որ համարյա կորած էր համարվում, պետք է ավելացնենք, որ սա հոդվածի ամբողջությունը չէ կազմում, այլ միայն մի կտորը։ Մեզ հասած տետրակի մի մասը պակասում է, այն է՝ սկսում է 27-ը էջից և վերջանում 42-ով։ Տպագրելով այս հատվածը, մենք վստահանում ենք հուսալ, որ մեծ հրապարակախոսի և մատենագրի այս տողերն էլ կը վայելեն արժանի ուշադրություն»։

Հատվածի և նրա գրության պատմության մասին հանդամանորեն խոսվում է կրիտիկայի ամբողջական տեքստի կոմենտարում։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես Քերականութիւն հայկական, նորոգ քննութեամբ եւ կարգաւ աշխատասիրեալ Տն. Հ. Գաբրիէլի Ավետիքեան կաստանդնուպոլսեցւոյ... ի վենետիկ, 1815։

2. Նալբանդյանը նկատի ունի «Ընծայ» խորագրով գրքույկի հեղինակ Գրիգոր վարդապետ Ամատունի Կարապետյանի առանձին թերթիկով հրատարակած այն ընդդիմախոսությունը, որ նա գրեց ի պատասխան Թոռնակ Կրկռիկյանի (ճանկիկ Սրամյանի կեղծանունն է) փայլուն յերգիծական գործի—«Ընդունելութիւն ընծայի»։ Թերթիկի լրիվ վերնագիրն է. «Ի. Կրկռիկեան եւ իր մանուկ, ծուռբերան, բացվարտիկ, անօրէնք եւ այլն թղթակիցներուն պատասխանի», Փարիզ, 1857։

3. Տես Միքայել վարդ. Սալլանթեան, Քերականութիւն գրաբառ լեզուիս հայոց, Մոսկվա, 1827։

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Վարդան պատմիչը, կամ ինչպես ընդունված է ասել—Վարդան Մեծը, մինչնադարյան հայ մատենագրերի խոշոր դեմքերից մեկն է։ Իր ժամանակակիցները նրան հիշում են՝ «իմաստախոհ», «մեծիմաստ», «յեռամեծ», «գիտնական», «տրամաբան», «մեծ սոփեստոս» և այլ տիտղոսներով։ Նա գրել է ընդհանուրյուն և մեկնողական մի շարք աշխատություններ, որոնք մեծ արժեք են ներկայացնում մեր մատենագրության համար։

Վարդան Մեծի անձնավորության մասին գիտնականների շատ քիչ տեղեկություններ են հասել մեզ։ Ցեղած կցկտուր տեղեկություններից հայտնի է, որ նա ծնվել է XIII դա-

բի սկզբներում Աղվանից աշխարհի (այժմյան Ադրբեջան) սահմանակից Հայաստանի քաղաքներից մեկում կրթություն ստացել և այդ ժամանակ մեծ հռչակ վայելող Հովհաննես (Վանական կոչվող) վարդապետի մոտ Դարձել և կրոնական և 1238 թ. ձեռնարկել ճանապարհորդության դեպի Ցերուսաղեմ։ Վերադարձին, ինչպես վկայում է նրա աշակերտակից Կիրակոս Գանձակեցին, կանգ է առել Կիլիկիայում և մեծ ընդունելություն գտել Սսում հայոց Հեթում Թագավորի և Հռոմկլայում հայոց Կոստանդին կաթողիկոսի կողմից։ Հինգ տարի մնացել և նրանց մոտ և ակտիվ մասնակցել քաղաքական անցուդարձին։ Մասնակցել և Սսի կրոնական ժողովին և այդ ժողովի վորոշումները (1243 թ.) մասսայականացնելու նպատակով բերել և Անդրկովկաս։ 1264 թվին կանչվել և Հուլաու խանի մոտ, ուր գտել և սիրալիր ընդունելություն։ Իր կյանքի վերջին շրջանում տեղափոխվել և Հաղբատի վանքը և ապրել այնտեղ։ Ըստ Մագաքիա պատմիչի տեղեկության, Վարդանը մահացել և 1271 թ.։

Վարդան Մեծի գրած ու մեզ հասած աշխատությունների թվում արժեք են ներկայացնում նրա «Պատմություն»-ը, «Աշխարհագրություն»-ը և մեկնություններ։ Վարդանին և վերագրվում Միքայել Ասորու պատմության թարգմանությունը, վորը կատարել է Իշավղ անունով ասորի մի քահանայի ոգնությամբ Ի միջի այլոց, Վարդանի գրած Պատմության ձեռագրերը, ինչպես վկայում է ինքը հեղինակն իր Պատմության վերջում, շատ տարածվել և յեղել։ Հուլաու խանի մոտից վերադառնալու ժամանակ նա թալանվում է, և համարյա ավարտված ձեռագիրն ընկնում է ավազակների ձեռքը։ Բարեբախտաբար ավարը Թբիլիսիում վաճառքի հանելիս նրանց հանդիպում և Վարդանի յեղբայրը և դնում ձեռագիրը։

Վարդանի պատմությունն ընդգրկում է շուրջ վեց հազար տարվա դեպքերի նկարագրություն։ Նա տրադիցիոն ձևով սկսում է աշխարհի ստեղծագործությունից, անցնում Արշակունիների և Սասանյանների շրջանը, ծանրանում է Խալիֆաթի գերիշխանության և Բագրատունյաց շրջանի Հայաստանում կատարված պատմական իրադարձությունների վրա ու ավելի ընդարձակ կանգ առնում XI—XII դարերի պատմության վրա։ Վերջացնում է պատմությունը Կոստանդին կաթողիկոսի գործունեությամբ։ Վարդանն իր Պատմության մեջ նպատակ է դրել շարադրել հիմնականում հայ ժողովրդի պատմությունը, սակայն նա մեջ նպատակ է դրել շարադրել հիմնականում հայ ժողովրդի պատմությունը, սակայն նա տալիս է պատմական արժեքավոր տեղեկություններ նաև հարևան ժողովուրդների պատմությունից։ Վարդանի Պատմության մեջ որիդինալ և չափազանց արժեքավոր են հատվածները, վորոնք նա վերցրել է մեզ չհասած հայ մատենագրերի աշխատություններից (Բագրատունի, Մխիթար, Անեցի և այլն)։

Վարդանի Պատմությունից առաջին անգամ ֆրանսերեն թարգմանությամբ հատվածներ և հրատարակվել ակադեմիկոս Բրոսսեի կողմից 1851 թ. նրա „Additions et èclaircissements à l'Histoire de la Gèorgie“ աշխատության մեջ։ 1860 թ. Վարդանի Պատմության հինգերորդ հատվածներ և հրատարակել Եդվարդ Դելմորն „Journal Asiatique“-ի հոկտեմբերի և նոյեմբերի համարներում „Les Mongols d'après les historiens arméniens, extrait de l'Histoire Universelle de Vartan“ վերնագրով։ Վարդանի Պատմությունն ամբողջական ձևով առաջին անգամ հրատարակել և Եմինը 1861 թ. Մոսկվայում, «Մատեն Վարդան Բաբերդացւոյ պատմութիւն ազգիս հայկազեան» վերնագրով։ Նույն տարին Եմինը Վարդանի պատմությունը թարգմանել և հրատարակել և ռուսերեն լեզվով (տես „Всеобщая история Вардана Великого“)։ Ռուսերեն թարգմանությանը նա կցել և մի փոքրիկ առաջաբան և 766 արժեքավոր ծանոթագրություններ։ 1862 թ. Վարդանի Պատմությունն ամբողջական ձևով հրատարակում և նաև Վենետիկի Մխիթարյան միաբանությունը «Հատոր ութ պատմութեան Վարդանայ վարդապետի» վերնագրով։

Մ. Նալբանդյանը Պետրոսյավլովակ բերդում յեղած ժամանակ ստանալով Վենետիկյան միաբանության հրատարակած Պատմությունը, գրում է նրա ուսումնական, որը մնում և չտպագրված մինչև 1878 թ. «Փորձ» ամսագրի խմբագիր Աբգար Հովհաննիսյանին հաջողվում և Նալբանդյանի բարեկամներից մեկի մոտից ձեռք բերել այդ ուսումնական և տեղափոխել իր ամսագրում, տալով հետևյալ ծանոթությունը. «Ծագրելով հանգուցյալ Միքայել Նալբանդյանի այս գործը, որը պատահմամբ գտնվել է նորա մի բարեկամի թղթերում, պարտավորություն ենք համարում հայտնելու, որ մի առանձին պատիվ կհամարեինք մեզ համար յեթե կարողանայինք «Փորձ»-ի եջերը զարդարել այս հեղինակի անտիպ մնացած գրվածքներով» (տես «Փորձ» ազգային և գրական յեռամսյա հանդես, № 4, եջ 247—259)։

Նալբանդյանն ընդհանրապես չծխտելով Մխիթարյան միաբանության գրական-ուսումնագործական աշխատանքը հայ գրականության ու պատմության ուսումնասիրման ասպարեզում, անհրաժեշտ և համարում իր այս ուսումնասիրության մեջ քննադատության յենթարկել մխիթարյանների ջանքերը՝ գրականության միջոցով կրոնական հայացքները քարոզելու խնդրում։ Նա հատկապես ցույց է տալիս, թե ինչպես մխիթարյանները հենց այդ կրոնական պրոպագանդի նպատակով ադավաղում են պատմությունը և պատմական գրականությունը։ Քննադատելով վանականների այդ հակագիտական բանասիրական փորձերը, Նալբանդյանը նշում է ժողովրդի պատմության և պատմական գրականության գիտական մեկնաբանման և ոգտագործման ուղիները։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բաղկեդոնյան ժողով—Տյերոզոլ տիեզերական ժողովը, որը հրավիրվեց կայսր Մարկիանոսի կողմից 451 թվի աշնանը։ Ժողովը հաստատեց Քրիստոսի անխառն ու անբաժանելի յերկու բնության դոգման տեսակետը։ Այդ ժողովում չկային մանավանդ հայ լուսավորչական յեկեղեցու պատվիրակները։ Հայկական յեկեղեցին հրաժարվեց ընդունել Բաղկեդոնյան ժողովի վորոշումը, մնալով Քրիստոսի մի բնության տեսակետի վրա։ 491 թվին Բաբգեն կաթողիկոսի կողմից Վաղարշապատում հրավիրված կրոնական ժողովը պաշտոնապես ձևակերպեց հայ յեկեղեցու՝ Բաղկեդոնյան ժողովի վորոշումներին չենթարկվելու փաստը։ Այդ որվանից հայկական յեկեղեցին բաժանվեց հունական յեկեղեցուց և մնաց ինքնուրույն։

2. Ճանրիկ Ագամյանի աշխատությունն է՝ Ընդունելութիւն ընծայի, առիով կը ծաշուի, ձրի չի բաշխուիր, Թ. Կըկուիկեանի, Փարիզ, տպագր. Ագամյան, 1856, 140 եջ։

3. Վատիկան—պապի ռեզիդենցիան Հռոմում Վատիկան բլրի վրա։ Ավելի ընդհանուր իմաստով նշանակում է պապական իշխանությունը։ Վերջին իմաստով էլ դործ է ածված Նալբանդյանի մոտ։

4. Ս. Ղազարի վանքը դտնվում է ս. Ղազարի կղզում (Իտալիայի Վենետիկ քաղաքին մոտիկ մի կղզի)։ Վանքի կառուցումը Վենետիկյան սենատի կողմից թույլատրվել է 1717 թվին, ուր և հիմնադրվել է Մխիթարյան միաբանությունը։

5. Պատժելու այն յեղանակը, որը դործադրել է պարսկական Հազկերտ II թագավորը (433—457 թ.թ.)։ Ըստ Ցեղիշե պատմիչի վկայության, Հազկերտը մեղադրվող հայ իշխանների խոնջանները կնքել է տալիս («ձեռս յետս կապելով եւ խոնջանուննս կնքելով») և այդ դերությամբ յերկար պահելով՝ չարչարում։

6. Քրիստոնեությունը Հայաստան է մտել սկզբնական քարոզիչների կողմից շատ վաղ—II դարում, բայց այն պաշտոնական կրոն է հայտարարվել Հայաստանում Տրդատ թագավորի կողմից IV դարի սկզբներում։ Բաղկեդոնյան ժողովից հետո հայկական լուսավորչական յեկեղեցին բաժանվեց հունական յեկեղեցուց և մնաց ինքնուրույն։

7. Նալբանդյանն այս անդամ իրեն վորոշ չափով ազատ է զգացել, մեջբերման համար հիմք են ծառայել Ավետարանի դանազան հատվածները, գլխավորապես Մատթեոսի, Գլ. IX, 36, 45 և տարբեր առակներ։

8. Տես Առաուածաշունչ, Թուղթ Պօղոսի առ Գաղ., Գլ. ե, 6։

9. Տես Ագեսարան ըստ Ղուկ. Գլ. ԺԷ, 2։

10. Հավանորեն խոսքը վերաբերում է Բայրոնի հետևյալ գնահատականին. «Դժվար կլիներ գտնել մի ազգ, որի պատմությունը այնքան սակավ արտահայտված լիներ յեղեռնագործությամբ, որքան հայոց ազգինն է, որի ձգտումները խաղաղ ու առաքինական եյին, իսկ պակասությունները—ճնշման հետևանք»։ (Տես Ցուրի Վեսելովսկի,—«Բայրընը Մխիթարյաններին մոտ», «Հանդես պրակտական և պատմական», հինգերորդ գիրք, 1894, էջ 166)։

„The Liberal" քաղաքական ժուռնալը Բայրոնը, Գինաի հետ միասին, հրատարակել է Պիզայում 1821 թվից։

11. Մեզ անհայտ է այս աշխատությունը։

12. Խոսքը մխիթարյանների հրատարակած Վարդանի Պատմության առաջաբանի հեղինակի մասին է։ Այդ առաջաբանը, ինչպես հայտնի է, առանց տեղագրության է, իսկ Նալբանդյանը, որին հայտնի է յեղել հեղինակը, չի ցանկացել տալ նրա անունը։ Գարզվում է, որ Վարդանի Պատմության առաջաբանի հեղինակը հանդիսացել է Ղևոնդ Ալիշանը (տես Н. Я. Марр —„Сборник притч Вардана", էջ 284)։

13. Տես Ստեփաննոս վարդապետի Տարօնեցի,—«Տիեզերական պատմություն», Փարիզ, 1859, էջ 145—146։ Ընդգծումը Նալբանդյանինն է։

14. Նալբանդյանը տառադարձել է Ղուկասու Ագեսարանի (Գլ. ԺԶ, 10) հետևյալ խոսքերը. «Որ ի փոքուն հաւատարիմ է, և ի բազմին հաւատարիմ է, և որ ի փոքուն անիրաւ է, և ի բազմին անիրաւ է»։

15. Տես Ղուկասու Ագեսարան, Գլ. ԺԸ, 8։

16. Խոսքը մխիթարյանների կազմած «Հայկազեան բառարան կամ բառագիրք հայկազեան լեզուի» աշխատության մասին է, որի առաջին հատորը լույս է տեսել 1749 թ., իսկ յերկրորդը՝ 1769 թ.։ Բառարանը կազմել է Մխիթար վարդ. Սեբաստացին իր աշակերտների ոգնությամբ։

Հետագայում մխիթարյաններից Գաբրիել Ավետյանը, Ներսես Սյուրմելյանը և Միքայել Ավգերյանը կազմել են հայկազյան նոր բառարանը՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» վերնագրով։ Լույս է տեսել Վենետիկում 1836 թ.։

17. Տես Սաղմոս, ՃԺԸ, 85։

18. Տես Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցի.—«Պատմութիւն հայոց», Մոսկվա, 1853։

19. Վարդան Բարձրբերդցին ոգտվել է ուղղակի Ղևոնդից՝ Սահակ Գ-ի ուղևորությունը նկարագրելիս, ըստ որում դեմ է այն «կարծիքին», թե Սահակը ընդառաջել է Ոկբային, և վոչ թե Մանմեհին, որ բացի Ղևոնդից և Վարդանից՝ գնում են մյուս բոլոր պատմիչները։ Պետք է նշել սակայն, որ Սահակի նամակը Մանմեհին՝ բերում է միայն Ղևոնդը, այն էլ վոչ թե «Այս է գիր ձեռին իմոյ Սահակայ...» սկսվածքով, այլ՝ «Ես, ասէ, առաքեցայ ընդ առաջ քո յաղթէն իմ...» սկսվածքով (Ղևոնդ, Գլ. Թ)։

Ցերեկ ընդունենք, որ Խառանում Սահակի գերին սատցող և սրանից առաջ Սևանա կղզին պաշարող Մանմեհանները միևնույն մարդիկն են, ապա՝ բոլոր պատմիչներն էլ անվանում են սրան «Մանմեհ» զորավար։ Հարկ է ավելացնել, որ Ասողիկը տարբեր տեղերում կրկնելով Սահակի ուղևորությունը և վախճանը Խառանում՝ մի տեղում Ոկբայի անունն է տալիս, իսկ մյուս տեղում՝ Մանմեհի, որով և հակասում է ինքն իրեն։

20. Դաշանց Թուղթ—պայմանագիր, որըն իբր թե կնքվել է մի կողմից հայկական Թագավոր Տրդատի և Գրիգոր Լուսավորչի, իսկ մյուս կողմից Կոստանդին կայսեր և Սելվեստր պապերքրքի միջև։ Այս փաստաթղթի մեջ հիշատակված փաստերը, ինչպես և գրության լեզուն, ոճը և պատմական փաստերի ազատազատումը պարզ ցույց են տալիս նրա կեղծ լինելը։ Պարզվում է, որ նա ուշ շրջանում, կաթոլիկ քարոզիչների կողմից սարքված մի կեղծիք է։ Դաշանց Թղթի կեղծ լինելը նշվել է մեր բանասիրության կողմից։

21. Վոլտերի խոսքերը. «Ինչքան եմ սիրում այն մարդկանց, որոնք ատում են այն, ինչ մատծում են»։

22. Տես Ղուկ. Ագեսարան, Գլ. ԻԹ, 34։

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԲՈՒՂՔԸ

Ղազարի «Թուղթ»-ն առաջին անգամ տպվեց 1853 թ. Մոսկվայում Մ. Եմինի խմբագրությամբ՝ «Ղազարայ Փարպեցւոյ Թուղթ առ Վահան տէրն Մամիկոնէից» վերնագրով։

Յետկրօրդ անգամ լույս տեսավ Պետերբուրգում Մ. Նալբանդյանի աշխարհաբար թարգմանությամբ և ընդարձակ ծանոթագրություններով։ Թարգմանությունը կատարված է հիշյալ առաջին հրատարակությունից՝ հետևյալ վերնագրով. «Ղազար Փարպեցու գրած Թուղթը, մեղադրություն սահմոս արեղանէրին. թարգմանություն և բացատրություններ Մ. Նալբանդյանց. Մ. Նալբանդյանցի համառոտ կենսագրությունը։ Տպագրություն Մ. Տեր-Գրիգորյանի, Ս. Պետերբուրգ, Բակտի տպարանում, 1868—ՌՃԾԻ»։ 1873 թ. լույս տեսավ 3-րդ անգամ Վենետիկում, որի առաջաբանի հեղինակը, ի միջի այլոց գրում է. «Ծետ նորա (Մ. Եմինի) և այլ ումն եռանդուն բանասէրը, Մխ. Նալբանդեանց յեղեալ զնոյն յաշխարհիկ բարբառ լուրոյ գաւառին՝ երկարագոյն ևս խորհրդածութեամբք բանից՝ եթող առ մտերիմսն, որոց յետ տարաժամ մահու նորին՝ հազացեալ հրատարակեցին ի մայրաքաղաքս Ռուսաց, յամի 1868»։ Դարձյալ 1891 թ. «Պատմություն» հետ միասին Վենետիկում, 1904 թ. Տիֆլիսում Գ. Տ.-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի աշխատասիրությամբ, «Պատմություն» հետ միասին, նույնը 1907 թ. Ղուկասյան Մատենադարանի հրատարակությամբ, Թիֆլիսում։

Բացառությամբ 1904 թ. տպագրության՝ մյուս բոլոր հրատարակությունները վատորեն Մ. Եմինի հրատարակածից արտատպություններ են, որոնք ձեռագրերը ծագում և վաղագոյն № 1688 (հին ցուցակ) ձեռագրից՝ 1829 թ. Մոսկ. վարժատեսը և Հովհ. Շահխաթունյանն Եջմիածնի Մատենադարանը կարգավորելիս գտնում են Ղազարի «Թուղթ»-ի մի ձեռագիրը՝ 1774 թ. գրչության, որից արտագրում են մեկական որինակ և որոնք հետագայում հիմք են ծառայում Եմինի հիշյալ տպագրության։

Նալբանդյանը 1860 թ. վաղարշապատում յեղած ժամանակ հետաքրքրվել է «Թուղթ»-ի ձեռագրով և Դանիել Շահնազարյանի մոտ տեսել է մի որինակ. «Մեզ, նույնպես, պատահեցավ տեսնել Թղթի մի ձեռագիրը որինակը ս. Եջմիածնի մեջ, արժ. Դանիել վարդապետի մոտ. բայց ավազ այն ուրիշ որինակ չեը, այլ բուն գրչագրիցը արտագրված, որով չեյին պարզվում աղճատված կամ մութ տեղերը, չեր լցվում նույնպես թերթերի պակասությունը» (§ 1)։

Կարծում ենք, որ Նալբանդյանը տեսել է 1774 թ. գրչության որինակը, քանի որ «Կարինյան» կոչված (Դ. Շահնազարյանի հեղինակած) ցուցակում, բացի 1688 №-ից, ուրիշ որինակ չունենք։ Հենց այս ձեռագիրն էլ ունի Նալբանդյանի նշած հիշյալ թերությունները։

«Թուղթ»-ի մի այլ որինակ կա Վենետիկի Մխիթարյան մատենադարանում 257 №-ով, որն ըստ Հակ. Տաշյանի՝ 19-րդ դարի գրչություն է։

Մի ուրիշ, 3-րդ որինակ, շատ հետո ձեռք է բերվել Վաղարշապատի Մատենադարանի կողմից, և այժմ պահվում է 2639 №-ով, 17-րդ դարի գրչությամբ, որն ոգտագործված է 1904 թ. տպագրության ժամանակ և դրա ոգնությամբ ուղղված են որոշ սխալներ։ Ձեռագիրը պատռտգրերի մի ժողովածու է, որի մեջ գտնվում է նաև Ղազարի «Թուղթ»-ը։ Սրա ծագումն ըստ յերևույթին շատ հին է։

1672 թ. վարդան Բաղիշեցին ի թիվս բազմաթիվ այլ ձեռագրերի, արտագրել է տվել նաև հիշյալ ժողովածուն։ Արտագրող գրիչ Պողոսը (Թուղթ 485) հայտնում է, որ «որինակս շատ հին էր» և մի քանի թերթեր էլ պակասում էյին, որի համար խնդրում է ընթերցողներից, որ ոգտագործելիս նկատի ունենան և յեթե կարող են՝ լրացնեն։

Այս՝ «շատ հին որինակի» մեջ պահված է նաև հին արտագրողի ընդարձակ, բայց վերջից պակասող մի հիշատակարանը, որի վոճը հիշեցնում է 10-րդ դարի խորենացան լեզուն, և որից կարելի յե յենթադրել ժողովածուի, սրա հետ և «Թուղթ»-ի հին գրչության պատկանելը։

Փարպեցու «Թ ու ղ թ»-ը, ուրեմն, մաշված և աղավաղված ե հենց հիշյալ ձեռագիրը ժողովածուի մեջ, որն ըստ յերևույթին միացած միակ որինակն ե յեղել և որից ծագել են հետագա մյուս ձեռագրերը։

Այսպիսով «Թ ու ղ թ»-ի ամենահին ձեռագիրն առայժմ մնում ե 1672 թ. որինակը։ Մեր ձեռքի տակ չունենալով ոտար մատենադարանների մեջ պահվող հայերեն ձեռագրերի լրիվ ցուցակները՝ ի վիճակի չենք պարզելու «Թ ու ղ թ»-ի ձեռագրերի քանակը։ Սակայն դրա սահմանափակ լինելու փաստը ցույց ե տալիս, որ «Թ ու ղ թ»-ի մեղադրանքները բավականաչափ չեն դիտվել լուսավորչական յեկեղեցու պաշտոնյաների շրջանակներում։

Մ. Եմինից հետո, թե վենետիկի, և թե Թիֆլիսի հրատարակիչները աշխատել են հնարավոր չափով ուղղել «Թ ու ղ թ»-ի մեջ նկատված գրչագրական սխալները ու լրացնել թերի մասերը, սակայն դեռ շատ հարցեր մնում են մութ, հենց նրա այդ թերությունների պատճառով։

Փարպեցու «Թ ու ղ թ»-ի թարգմանությունը Նալբանդյանի կողմից՝ պատահական յերևույթ չեր թարգմանելով և ընդարձակորեն ծանոթագրելով «Թ ու ղ թ»-ը, Նալբանդյանը կամեցել ե զուգահեռ անցկացնել իր և Ղազարի դրության միջև մի կողմից և յերկուսի տարբեր ժամանակյա հալածիչների միջև մյուս կողմից։ Ավելին՝ Նա կամեցել ե միաժամանակ հակադրել մեր պատմագրության գիտական ըմբռնողությանն իր տեսակետը՝ Եմինի կամ Զամչյանի պանդխտողականությանը։ Ցավ իրոք ընթերցողն Եմինի և Նալբանդյանի ծանոթագրությունների մեջ կտեսնի տեսակետորեն իրար հակադիր մոտեցումներ։ Եմինը յերկուսում ե չամչյանականությունից և խճճվում ավանդապահության անելանելի ցանցի մեջ։ Մինչդեռ Նալբանդյանը յուրաքանչյուր խնդրին մոտենալով գիտական հետևողականությամբ՝ հանգում ե դրական արդյունքի։

Եմինը հետևելով Զամչյանին՝ Ղազարին համարում ե Մեծ Թարգմանչաց (Սահակ-Մեսրոպի) աշակերտ, միայն այն հիման վրա, որ աշակերտների առաջին խմբի մեջ հիշվում ե մի վոմն Ղազարիկ։ Իսկ Նալբանդյանը մանրամասն վերլուծելով Փարպեցու «Թ ու ղ թ»-ի ավյալները, 18-րդ ծանոթագրության մեջ գտնում ե, որ Ղազար Փարպեցին նույնիսկ թարգմանիչների կրտսեր խմբին էլ չի պատկանում, ըստ որում ծաղրելով Զամչյանին (ապա և Եմինին) ասում ե. «Մեկը հարցնե, թե ո՞վ վարդապետ, ո՞վ և ի՞րդ չթու ձգել, որ առաջ վեամշապուհին ականատես ասես, հետո Մեծ Թարգմանչաց աշակերտ և վերջը այսպիսի բացատրությամբ խոսքդ հետ առնուս։ Բայց մենք չենք մեղադրում Զամչյանին. նա էլ իր նախորդների նման մի վարդապետ. հայոց պատմությունն էլ շատերի աչքում մի առասպել, և վոչ գիտությունն յեվրոպական հասկացողությամբ. ուստի ինչ վոր մարդու միտքը դալիս ե կարելի յե ասել, էլ վո՛չ քննություն և վո՛չ ապացույց» (ծան. 18)։

Արդարև, Նալբանդյանը կիրառելով գիտական-քննադատական մեթոդը, և խուսափելով «անպատշաճ և թեթև յեզրակացություններից», իր այս ծանոթագրություններում լուծում ե 5-րդ դարին վերաբերող և Ղազարի ու վերջինիս շրջապատի հետ կապված մի շարք դեպքեր և դեմքեր։ Այս տեսակետից էլ Նալբանդյանի լուծած հարցերն ու հայտնած կարծիքները Հայոց պատմության մի քանի հարցերի շուրջը՝ պահում են իրենց այժմեականությունն այսօր էլ, և դրանց վրա չենք կարող ավելացնել վորևե նոր բան, թեև անցյալ դարի 60-ական թվականներից հետո մեր պատմության վերաբերյալ բազմաթիվ նոր ուղղություններ են հրապարակվել։

Նալբանդյանը Փարպեցու «Թ ու ղ թ»-ի համար գրած §§ 1 և 9 ծանոթագրություններում հայտնում ե, որ ինքը թարգմանել և ու ընդարձակորեն ծանոթագրել նաև նույն հեղինակի «Պատմությունը», որը դժբախտաբար չի հասել մեզ։ Նկատի ունենալով Նալբանդյանի «Թ ու ղ թ»-ի ծանոթագրությունների մեջ ցուցաբերած նրա բանասիրական հմտությունը, վստահ կարող ենք ասել, որ Նալբանդյանն իր այդ աշխատության մեջ լուծած կլիներ 5-րդ դարին վերաբերող և մինչև այսօր էլ մութ մնացած մի շարք խնդիրներ։

«Մենք հավաքել ենք, ինչ վոր այս Թ ղ թ է և Պ ա տ մ ու թ յ ա ն մեջ մերինակ բաները կան. վկայությունք, ակնարկություններ, Ս. գրքից փոխառություններ, ձև, վոճ և այլն, բայց յերկարությունից փախչելով հետ դրինք այս անգամ, պահելով հրատարակել Փարպեցու պ ա տ մ ու թ յ ա ն թարգմանությանը հետ» (§ 1)։

Վորպես դիտնական բանասեր, Նալբանդյանը խիստ քծախնդիր է իր ոգտագործած աղբյուրների նկատմամբ։ Դա յերևում է նրանից, վոր նա միտամի սուտգել և ամբողջացրել է Փարպեցու ոգտագործած Ս. գրքի բոլոր հատվածները, և այն էլ այնպիսի ուշադրությամբ, վոր մենք այժմ չենք դտնում վորևե վրիպում։ Այդ վկայությունների մանրազնին համեմատությամբ Նալբանդյանը, ըստ յերևույթին հակված եր հանգելու Ս. գրքի յերբայրենից թարգմանված լինելու համոզմունքին, մի թարգմանություն, վորը սկսք է բավական տարածված լինելը մինչին դարի հայ մատավորական շրջանակներում։ Բայց դրանից նա չի փորձել կամայականորեն թարգմանել այն վոճական դարձվածքները, վորոնք թարգմանվելիս՝ կարող եյին աղավաղվել կամ կորցնել իրենց ազդարարությունները։

Վորպես վորևե «յերկբայության յենթակա չեղող» վաստակություն՝ Ղազարի «Թուղթ»-ը խոշոր արժեք ունի վոչ միայն իբրև ճմռագրության տասնյա աբեղաներին», այլև նախ նրանով, վոր պարունակում է կենսագրական տվյալներ Ղազարի, Վահանի և մի քանի այլ ժամանակակիցների մասին, յերկրորդ՝ վոր «Թուղթ»-ը գաղափար է տալիս 5-րդ դարում հոգևորականության և գրական-գաղափարական շրջաններում յեղած հոսանքների, նրանց փոխադարձ հարաբերությունների, փոխադարձ մեղադրանքների ու մխիթարից գնի գործածված պայքարի դենքերի մասին։ Ի դեմս Ղազարի ու նրա հալածիչների՝ «Թուղթ»-ի մեջ աբառնայված ենք տեսնում գաղափարական յերկու հոսանքների՝ լուսավորիչների և հետադեմ խավարամիտների պայքարը. մեկը, կողմնակից պրոգրեսիվ հայացքների և ազատ մտածողության, գուցե և ազատ կենցաղի, իսկ մյուսը՝ կառչած քարացած ավանդություններին։

Ղազարի «Թուղթ»-ը, թե բովանդակության, թե կառուցվածքի տեսակետից հիշեցնում է Խորենացու նշանավոր «Վողբ»-ը։ Յերկու վաստաթղթերումն էլ գրեթե միևնույն խոսքերով են խարազանվում իրենց ժամանակի խավարամիտները և լուսավորության հալածիչները։

Այս տեսակետից էլ՝ Նալբանդյանի կատարած այս աշխատանքի նշանակությունն ավելի յե մեծանում։ Դա կարելի յե դիտել վորպես հարձակողական քննադատություն եջմիածնական հոգևորականության դեմ։

«Թուղթ»-ը գրելու ժամանակը չենք կարող դնել 502 թվականից ուշ, որովհետև յերեք ընդունենք, վոր Ղազարը Բարգևնի գահակալությունից (490 թ.) հետո էլ որոշ ժամանակ մնացել է Վաղարշապատում և ապա փախել և յերեք նկատի ունենանք, վոր վտարանքից հետո Ամիդ քաղաքում, ինչպես տեսնում է «Թուղթ»-ի Աառաջաբանում, բավական յերկար ժամանակ մնալուց հետո և դիմել Վահանին, ուստի այդ բոլոր կատարված դեպքերի ընթացքը չեր կարող 8—10 տարուց ավելի պակաս տևել, և չեր կարող 500—502 թվերից ավելի ուշ գրվել։ «Ղազար Փարպեցու Թուղթը» հրատարակվում է ըստ ձեռագրի, վորը պահվում է ՀՍՍՀ Գրական Թանգարանում։ Ընդամենը 30 թերթ (35×24), գրված՝ 51 հմ, վորից հեղինակի կողմից համարակալված է 1—25-ը։ Ամբողջ աշխատությունն արտագրված է լարված ուշադրությամբ և մեծ խնամքով, որինակելիորեն մաքուր ձեռագրով։ Վերջին հմերն ունեն լուսանցքային հավելումներ ինչպես թանաքով, նույնպես և մատիտով։ Ձեռագիրն ընդհատվում է համարյա ավարտված։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եջ 232. Նոր քաղաք. Նալբանդյանը Նոր քաղաքի մասին նմինի հետ վիճելիս խնդիրը ճիշտ է լուծում։ Թեև արդի բանասիրությունն այս հարցը համարում է վճռված, այնուամենայնիվ ավելորդ չենք համարում մի յերկու նոր վկաստ ևս ավելացնել Նալբանդյանի թված ապացույցների վրա.

1. «Այս Երուանդ՝ առաջինն է, սակաւակեացն, որ ի Հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս զայս (զՎարդգեսաւան.—Խմբ.), յորում և Տիգրան միշին Աշշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն Հրէից. որ եղև քաղաքագիւղ, վաճառօք։ Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ, և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր Քաղաք» (Խոր. 199—200, 1913. Տիֆլիս)։

2. «Զոր թողեալ խաբեխեաց չեկեղեցւոջն կաթուղիկէ, որ ի Նոր քաղաք»։

ԵՂ 233. Ա ն ե ա լ ո ր դ ի («Տղամարդի վորդի լինելով»)։ Բանասերներից վոմանք այս արտահայտությունն են հիմք ընդունում՝ Փարպեցուն և նրա ծնողներին ազնվական ծագում տալով։ 23-րդ նկատողության մեջ Նալբանդյանն անհաւարկելի վստահությամբ ցույց է տալիս Ղազարի ծագումը (տե՛ս նաև Ա ն ա կ ա ն բ ա ռ ա ր ա ն)։

Հիշյալ նախադասության մեջ, վորը չի կարելի հասկանալ այլ կերպ, քան ինքնանվաստացման առումով, Փարպեցին ինքն իրեն համեմատում է յերբեմնի հեթանոս դատավոր Գողթո Տարոնացու հետ, նպատակ ունենալով շեշտելու իր նախկին վոչնչությունը հետագա բարձրացման նկատմամբ։

ԵՂ 234. Կ ր ե լ ո վ ի խ ա զ ո ւ զ ա բ կ ա ն ե լ ի ս ձ ե ր զ կ ի ն ձ ե ր։ Այս բառի մասին Նալբանդյանի արած նկատողությունը (§ 26) և բացատրությունն անհամոզեցուցիչ են։ Ինձ թվում է, վոր բառը հոդնակի թիվով և դրած ածված, վորը յերեք թիկնոցի, ոթոցի, գլխարկի կամ այլ վերնազգեստի իմաստով գործածված լիներ, ապա խաղի ժամանակ վահանի մեկից ավելի թիկնոց, մեկից ավելի գլխարկ և այլն գործածելը դառնում է տարօրինակ։

Ներկա դեպքում ա բ կ ա ն ե լ բառը պետք է հասկանալ այն մտքով, ինչ մտքով հասկանում ենք ա բ կ ա ն ե լ բառը՝ նետելու, ձգելու իմաստով, «Դովէ զարկանելեացն (ի զանձանակն) յօժարութիւն առաւել քան զմեծացն» (Կորյուն)։ «Ցորժամ բանասարկուն հրամայիցէ արկանել ի հնոց աղքատութեանն, մի յարկանելեաց, այլ յարելոցն լինիջիր» (Ն ո ր հ ա յ կ. բ ա ռ ա ր ա ն Ոսկ. մ.ա. ա.)։

Ուրեմն կասկածից դուրս է, վոր վահանի «արկանելիները» վոչ այլ ինչ են, յերեք վոչ «խաղալիքները», տվյալ դեպքում նետեր, նիզակներ և ա բ կ ա ն ե լ զենքերի այլ տեսակներ, վորոնք դրած են ածվել մանկական ղինախաղերի ժամանակ։

Ինչ խոսք սակայն, վոր ա բ կ ա ն ե լ բառն ունի նաև ոթոցի կամ վերնազգեստի ընդհանուր նշանակություն։

ԵՂ 236. Մ ա դ ի ա ն ա ց ի կ ի ն։

ԵՂ 237. Այլ ասին «ա ղ ա ն դ ա վ ո ր ե ս»։ V դարում Հայաստանում տարածված են յեղել մի քանի աղանդներ, վորոնց գործունեության մասին ունենք միայն կցկտուր տեղեկություններ, և վորոնք տակավին չեն ուսումնասիրվել IV—V դարերի հայոց պատմության առնչությամբ։ Ցեղնիկ Կողբացու «Ե ղ ծ ա ղ ա ն դ ո ց ն» ինքնին վկայում է պանազան աղանդների ծավալուն գործունեությունը մեզ մոտ։

Հիշենք այստեղ այդ աղանդներից մի քանիսը.

ա. Մ ա ր կ ի ո ն ի ա ղ ա ն դ, վորը II դարի կեսերում առաջացավ նախ Գոնտոսի կողմերում ու ապա տարածվեց տարբեր յերկրներում ու իր գոյությունը շարունակեց մինչև VI դարը։ V դարի առաջին կիսում մարկիոնականները մեծ աղմուկ հանեցին Աստրիքում, այնտեղից էլ շարժումն արձագանք գտավ Հայաստանում։

Այս մոմենտը հատատող ղրական վստահ թեև չունենք, սակայն Ցեղնիկի «Հ ե ր քումը» մեզ կտանել և տալիս Հայաստանում ունեցած մարկիոնականների գործունեության մասին։ Մարկիոնականների մի մութ ակնարկ և թողել նաև Խորենացին, վոր նույնպես հատատում է մեր ասածը։

բ. Մ ա ն ի ք ե ա ց վ ո ց ա ղ ա ն դ, վոր սկիզբ առավ Պարսկաստանում III դարում, և վորի հիմնադիրն եր Մանի կամ Մանես։ Մանիքեականությունը հիմնականում ձգտում եր քրիստոնեությունը հաշտեցնել զրադաշտականության հետ։ Մանեսի աղանդն ունեցավ բազմաթիվ ճյուղավորումներ. հավանորեն սրա մի ճյուղն եր «բարբարիտոն» կոչված աղանդը Արևմտյան Հայաստանում, վորը խիստ հալածանքի յենթարկվեց հայոց յեկեղեցու կողմից։ Պիտի յենթադրել, վոր Կորյունի «Մանդաթամեայն» աղանդը Արևելյան Հայաստանում մանիքեության մի ուրիշ ճյուղն եր, վորի դեմ յերկար ժամանակ պայքարել է Մեսրոպ Մաշտոցը։

գ. Մ ծ ղ ն ա ց ի ն ե ր ի ա ղ ա ն դ, վորն ամենից շատ տարածված եր Հայաստանում. Մծղնյա (Մեսոպոտամիա, Մասպոյան), վոր նշանակում է ա ղ ո թ ա բ ա ր, կոչվում եյին այն Մծղնյա (Մեսոպոտամիա, Մասպոյան) վոր նշանակում է ա ղ ո թ ա բ ա ր, կոչվում եյին այն ասորի աղանդավորները, ըստ վորոնց՝ կատարյալ կյանքի հասնելու համար պետք է անա-

դաղար աղոթքն Նրանք ժխտում էին յեկեղեցու խորհուրդները, կարծում էին, թե ամեն մի մարդու մեջ է ծնե մի դև կա, վոր նրան դրդում է մեղանչելու. մերժում էին ամուսնությունն ու աշխատանքը և ապրում մուրալով և բացօթյա։ Այս աղանդի դեմ է Շահապիվանի ժողովի 19-րդ կանոնը, վորով և հաստատում է թե Մծղնեացիք տարածված են յեղել Հայաստանում, վորոնց դեմ խիստ պատիժներ և նախատեսում ժողովը։

Բացի վերոհիշյալ յերեք աղանդներից՝ Հայաստանում հավանորեն հետևորդներ են ունեցել նաև Արիոսի կողմնակիցները, Ապոլինար Լավոդիկեցու աղանդը և այլն։

Սակայն Ղազարն իր «Թուղթ»-ում ակնարկում է մի տեղական, հայկական ծագում ունեցող աղանդի մասին, առանց հիշելու դրա անունն ու գաղափարական ուղղությունը, այդպիսի հիշատակությունն ինքնին համարելով տառծուն ուղղված մի հայհոյանք։

Ղազարի թողած և՛ «Թուղթ»-ից, և՛ «Պատմությունից» բնավ չի յերևում, վոր ինքը պատկանած լինի հիշյալ աղանդներից վորևե մեկին։ Այսպես հունական կրթություն ստացած գիտնական՝ Ղազարը հավանորեն ունեցել է քաղկեդոնական հակումներ, և իր քարոզների մեջ զարգացրել քաղկեդոնական դաղափարներ։

Բայց բազմաթիվ աղանդների գոյությունը Հայաստանում հետաքրքիր է այլ տեսակետից։ Դա ցույց է տալիս V դարում Հայաստանում առաջացած հասարակական և գաղափարական հոսանքների առկայությունը, վորոնք իրենց կրոնական վերնահագուստով և դասակարգային ուրույն շահերով տարբերվում էին տիրապետող պաշտոնական յեկեղեցու սահմանած բարոյական կանոններից և կենցաղից։ Մյուս կողմից՝ այդ բազմաթիվ աղանդների գոյությունը ցույց է տալիս նոր կրոնի (քրիստոնեական մոնոթելիտության) դեպքում նրանց և նրա առաստպետաբար ձևակերպման յերկարատև պրոցեսը։

Եջ 238. Ծառայք Նորա։ 1904 թ. Փարպեցու գիտական հրատարակության մեջ «Թուղթ»-ի այս հատվածը տրված է այսպես. «Որք զնոյն շաւիղ առողջ մատուիեանն հետեւեալ վարդապետեցին... Ցաղագս որոյ և զայլսն ամենայն և զորս առ նոսա արանցն՝ ծառայք Նորա ունին զամենայն գրեալսն, զԱրիոսի Աղեքսանդրացոյ, և այլն (նս. տ., 192), մինչդեռ Նալբանդյանի ձեռքի տակ յեղած որինակը հիշյալ հատվածում ցույց չի տալիս բազմակետերով մատնանշված թերին, վորն աչքի յե ընկնում մարքի անկախությունից էլ։ Թեև հնարավոր չե վերականգնել աղավաղված այս մասը, վորովհետև մեկ կամ յերկու բառի կորուստ չե միայն, սակայն նկատի ունենալով, վոր այստեղ «ծառա» յեղոդները հանդիսանում են Նեստորը, Արիոսը, Ապոլինարը, Յեվդեքիոսը և Մանեսը, վորոնք ամենից ավելի աշխուժ կերպով գործում էին IV—V դարերում, ուստի մեզ թվում է թե այստեղ խոսքը մեզ անհայտ մի վարդապետության կամ աղանդի մասին է, և նորա դերանվան տեղ պետք է հասկանալ անհայտ մի աղանդ։

Եջ 240. Նալբանդյանն իր ձեռքի տակ ունենալով Մ. Եմինի հրատարակած վատ որինակը՝ հիշյալ հատվածը թարգմանելիս ընկել է կասկածանքի մեջ, ըստ վորում... և այլն ոչինչ թեթև է... խոսքը թարգմանելուց խուսափել է։

Իրոք Մ. Եմինի «Թուղթ»-ի հրատարակության բազմաթիվ աղավաղումներից մեկն է նաև սույն հատվածը. Եմինի որինակում տրված է. «Եւ նորա պատասխանի արարեալ ասաց առ պատգամաբերն. «Շնորհելով Քրիստոսի ողջ լեր, և այլն ոչինչ թեթև եթէ ես, և ասաց առ պատգամաբերն. դու ասես, եթէ գամ բժշկեմ և կամ թաղեմ. ի տեսանել իսկ չիշխեմ զքեզ առ երկիւղի՝ դու ասես, եթէ գամ բժշկեմ և կամ թաղեմ. մի գուցէ զգացեալ ուրուք զսուրբ հոգւոյն, թէ վայ որ պահէ զպատուիրանն ի չար բան իւրում» (Մոսկվա, 1853 թ., եջ 53)։

Մինչդեռ Փարպեցու «Պատմությանն» և «Թուղթ»-ի 1904 թ. գիտական հրատարակության մեջ հրատարակիչները այդ հատվածն ընթերցել են այսպես. «Եւ նորա պատասխանի արարեալ ասաց,—և պատգամաբերն շնորհելովն Քրիստոսի ողջ է, և այլն ոչինչ թեթև,—եթէ «ես և տեսանել իսկ չիշխեմ զքեզ առ երկիւղի. դու ասես, եթէ գամ բժշկեմ, և կամ թաղեմ. մի՛ գուցէ զգացեալ ուրուք՝ և գիս ընդ քեզ թաղիցէ»։

Եջ 243. Հիշելով, ասում է, մի անգամ մի մարդ իմ առաջն ավագ ասաց, մոտ, մի քանի պարագաներ որ նրանց առջև, տրտում հառաչանքով ասաց, թե «Երբ ավագ չեղավ Ղազարի մեր աշխարհից հեռանալը, պատճառ,

նա յեկեղեցու զարդ է»,—այս նախադասությունը հաջող չի թարգմանվել ոչ մի համար բուն միտքը ազավաղվել է։

Նախ՝ պետք է հիշել, որ Ղազարն այս նախադասությունն ուրիշի բերնից լսելն է հայտնում. «ասէ» (ասում է) միջանկյալ բառի (բայի) գործողության կատարողն անհայտ է, որը լսել կամ տեսել է, թե ոմն ինչ է ասել պարեգոտավորների առաջ, և որին Ղազարն ակնարկում է անորոշաբար, «ուրումն» դերանվամբ, որը նշանակում է «ոմն» կամ «մի ոմն» և ոչ թե «մի անգամ», ինչպես թարգմանել է Նալբանդյանը։ Բնագրում ասված է. «Յիշեալ, ասէ, ուրումն երբեմն առն աւագի դանուն իմ առաջի ոմանց պարեգոտաւորաց՝ ասաց արամագին հառաչմամբ, եթէ «ոչ եղէ իբրեւ այլ հեռանալ առն յայնմարհէս, քանզի զարդ էր եկեղեցւոյ», թարգմանում ենք՝ «Հիշելով, ասում է, իմ անունը մի քանի պարեգոտավորների առաջ՝ մի ոմն նախկին ասաց, ասաց արամագին հառաչանքով, թե «Երբ ասպել չեղավ այդ մարդու հեռանալը մեր աշխարհից, որովհետև նա յեկեղեցու զարդն էր»։

Ասող, Ղազարի անունը հիշված է յեղել ոչ թե ավազի ներկայությամբ, այլ մի յերբեմն ավազի կողմից՝ պարեգոտավորներից մի քանիսի առաջ։

ԵՂ 246. Շեղատառով տրված այս ամբողջ հատվածը մութ է մնացել ինչպես հրատարակչի, նույնպես և թարգմանչի համար, ուստի և վերջինս թողել է այն անվոփոխ, ձեռագրի վրա, լուսանցքում անելով հետևյալ նկատողությունը. „Наборщику—все подчеркнутое побирать курсивом, как искаженное и непонятное“.

Գիտական հրատարակության մեջ ևս հատվածի միտքը վերջնականապես չի պարզվում, թեև հրատարակիչները փորձել են հասկանալի դարձնել այն. «...Որում ըստ ձայնի [գուցե՝ ըղձայի,—ՄՄԲ.] խորհրդոյն ու չհանգուցանելը ի ծերութեանս, և կարող լինել առ նմա գնալ սուղ ինչ ժամանակ միայ. թէպէտ և ոչ թերակատար գոլով սուրբ և սուտյտ հատատ, զոր ուսեալ ի տղայութեանն յերանելւոյ Աղանայ՝ կեամ նովիմբ ի նմին անփոփոխութեամբ մինչև ի վախճան կենցաղոյս իմոյ. այլ յաղագս իմաստասէր բանի, ըստ նորա խութեամբ մինչև ի վախճան կենցաղոյս իմոյ. այլ յաղագս իմաստասէր բանի, ըստ նորա տեառն մեծ հրահանգին, շահեալ ի նմանէն՝ հանգոյն մեծի գանձու ամփոփելոյ հաշուէքէ զպարապուճն գայն՝—Ցորոյ վերայ տեսեալ պարեգոտաւորաց գայրագնեալ լին զօրհնելոյ տիկնոջ աւագի զիմաստն՝ ոչ ծանուցին առ ժամայն, նա աղաչելով զերանելի մայրն՝ հոգատեալ երբև զեղբայրս ի վիրոյ եղբօր. այլ առաւելս գայրացուցեալ գրգռելով՝ զկամացն իւրեանց նովաւ կատարեցին գնաճայնն» (202—203)։

ԵՂ 247. Անփոփոխ թողնված տողերը գործյալ հետևանք են բնագրի թերության, այսինքն՝ նախադասությունը անպատճառված և վերջակետով։ Գիտական հրատարակության մեջ այսպես է. «Իսկ գյառաջադոյն գրեալոցս սուրբ արանցն, զորս ի պատմութեանն նահատակին Գրիգորի դրոշմեալ յիշատակէ, զինչ ևս...» և այլն, ինչպես կոնտեքստում։

ՀԵԳԵԼԸ ՅԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող աշխատությունը Նալբանդյանի մեզ հայտնի մյակ գործն է, նվիրված ամբողջովին փիլիսոփայական հարցերին։ «Քաղվածք և մտածություն»—այսպես է այս գործի իսկական վերնագիրը։ Չնայած այդ հանգամանքին, մեծանուն մտածողի այդ աշխատությունը չափազանց կարևոր նշանակություն ունի մեզ համար, մեծ մասամբ նրա ունեցած վերաբերմունքն արժեքավորելու, այլև հեղինակի փիլիսոփայական հայացքները պարզաբանելու տեսակետից։

Գերմանական համալսարանական փիլիսոփա, գրականության և փիլիսոփայության հիմնական ուղղություններին նվիրված մի շարք խոշոր մոնոգրաֆիաների հեղինակ Ռուդոլֆ Հայմի առաջին լուրջ աշխատությունը՝ «Հեգելն ու իր ժամանակը» («Hegel und seine Zeit», 1857) ռուսերեն թարգմանությամբ սկսեց տպվել «Журнал министерства народного просвещения»-ում 1858—1859 թ. թ. ընթացքում, իսկ 1861-ին Պետերբուրգում լույս տեսավ նաև առանձին հրատարակությամբ, որը Նալբանդյանի ձեռքն ընկավ այն ժա-

մանակ միայն, յերբ նա նստած էր Պետրոպավլովսկ բերդում, այն է՝ 1868 թ.։ Ինչպես յերևում է ձեռագրի ընդհանուր վիճակից, ավելի իր մտքերը ֆիքսացիայի յենթարկելու, քան հրապարակելու համար մի աշխատանք տալու դիտավորությամբ և, վոր ընդամենը հինգ որվա ընթացքում (12—17 ոդոստոսի), նա գրի յե առնում իր դիտողությունները Ձեռագիրը մնում է փակված ամբողջ քառասուն տարի և լույս է տեսնում միայն 1902 թ. «Լումա» հանդեսում։ Մեր տեքստը պատրաստված է ձեռագրի հիման վրա, վորը պահվում է ՀԵՄՀ Գրական բանդարանում։ Ձեռագիրն ընդամենը 6 թերթ է (35×24). Նախքան սկսելը վերից վար կրկնակի ծալված էջերը (35×12) համարակալված են հնդկնակի կողմից հռոմեական թվանշաններով. յերկրը սևագրություն է և անավարտ։

Այն հատ ու կենտ դիտողությունները, վորոնք գրված են մեր հնդկնակի մասին գրված բազմաթիվ հոդվածներում, ցույց են տալիս ի միջի այլոց, վոր վորպես փիլիսոփա Նալբանդյանը հատուկ ուշադրության չի արժանացրը Լավագույն դեպքում նրա մասին կրկնվել է այն մտքը, թե նա աշակերտել է մատերիալիստ Ֆոյերբախին. նույնության կետեր են փնտրել նրանց միջև և բավականացել են դրանով այն ժամանակ, յերբ նրանց հայացքների նույնությունից վոչ պակաս կարևոր է այդ հայացքների տարբերությունները ցույց տալը, այսինքն, Նալբանդյանին, վորպես ինքնուրույն մտածողի, դեմքը պարզելը։ Մեծ հեղափոխականի թողած գրական վոզջ ժառանգության հանգամանորեն կատարվող ուսումնասիրությունը հաստատում է սակայն, վոր Նալբանդյանը մատերիալիզմին հասել է մինչև Ֆոյերբախին անմիջականորեն ծանոթանալը և վոր դրանից հետո էլ նա դադալի ճանապարհ է կտրել դեպի առաջ։ Նրա փայլուն, ուղղակի զմայլանքի արժանի մտքերն ու դատողությունները խոսում են մի բացառիկ որիգինալ մտածողի մասին,—մտածող վոր, իր իսկ արտահայտությամբ, ոժտված էր մտքի արագշարժ, ստեղծագործական զորությամբ։ Պատկանելով անցյալ դարի վաթսունական թվականների ուս ամենատաղանդավոր մտածողների թվին, Նալբանդյանը հասարյա նույնքան էր առաջ անցել Ֆոյերբախից, վորքան վերջինս հետ էր մնացել ամեն հեգելական և մատերիալիստ Ձերնիշևսկուց։

Բնութագրելով հեգելյան փիլիսոփայության պատմական դերը, Ենգելսը գրում է. «... Հեգելի փիլիսոփայության... ճշմարիտ նշանակությունն ու հեղափոխական բնույթը հենց այն էր, վոր նա միանգամ ընդմիշտ վոչնչացրեց մարդկային մտածողության ու գործողության բոլոր հետևանքներին վերաբերվող հավերժականության ու անփոփոխության գաղափարը»*։

Այդ փիլիսոփայության հեղափոխական բնույթն առաջին անգամ բացահայտեցին և ոգտագործեցին միայն մարքսիզմի կլասիկները։ «Իրենց դիալեկտիկական մեթոդը բնորոշելով, Մարքսն ու Ենգելսը սովորաբար վկայակոչում են Հեգելին, վորպես մի փիլիսոփայի, վոր ձևակերպել է դիալեկտիկայի հիմնական գծերը։ Սակայն այդ չի նշանակում, թե Մարքսի ու Ենգելսի դիալեկտիկան նույնական է Հեգելի դիալեկտիկային։ Իրականում Մարքսն ու Ենգելսը հեգելի դիալեկտիկայից վերցրել են նրա միայն «ռացիոնալ կորիզը», դեն քցելով Հեգելյան իդեալիստական կեղևը և առաջ տարգացնելով այդ դիալեկտիկան՝ նրան արդիական գիտական տեսք տալու համար»**։

Անծանոթ լինելով դիալեկտիկական մատերիալիզմին, վաթսունական թվականների հոչակավոր հեղափոխական մտածողներից անգամ Ձերնիշևսկին չկարողացավ (և ռուսական կյանքի հետամնացության պատճառով չէր կարող) հասնել հեգելյան փիլիսոփայության մատերիալիստական քննադատական յուրացմանը։ Այն, ինչ արվեց նրա կողմից, դա Հեգելի մեթոդի ոգտագործման փորձն էր։ Սակայն դրանով արդեն Ֆոյերբախից մի կողմ նետված Հեգելն առաջ էր քաշվում և արժանանում նոր գնահատականի։ Հեգելի իդեալիզմը, մերժելով հանդերձ, Ձերնիշևսկին անուշադրության չի մատնում նրա դիալեկտիկան, նա ջանում է քննադատորեն հաղթահարել հեգելյան փիլիսոփայության իդեալիստական, մետաֆիզիկական սխեմեն։ Այս իմաստով Ձերնիշևսկու մատերիալիզմը մի քայլով առաջ էր Ֆոյերբախից։

---

* Ֆ. Ենգելս,—«Լյուդվիգ Ֆոյերբախը և դասական փիլիսոփայության վախճանը», Յերևան, 1935, էջ 8։

** И Сталин,—"*Вопросы ленинизма*", изд. одиннадцатое, 1939 թ., էջ 535։

մատերիալիզմից։ «Հեգելը և նորա ժամանակը» աշխատությունն ի միջի այլոց ցույց է տալիս, որ քննադատելով Հեգելին, Նալբանդյանը ընավ էլ ամբողջությամբ չի մերժում նրան, ինչպես այդ արել էր Ֆոյերբախը։

«Ամեն մի փիլիսոփայության, հատկապես նորադարյան փիլիսոփայության, հիմնական մեծ հարցը մտածողության ու գոյի հարաբերության հարցն է... Նայած թե այս հարցին ինչ պատասխան էր տրվում, ըստ այնմ էլ փիլիսոփաները բաժանվում էին երկու մեծ բանակի։ Այն փիլիսոփաները, որոնք պնդում էին ոգու նախնականությունը բնության հանդեպ, ուրեմն վերջին հաշվով ընդունում էին որևէ տեսակ աշխարհստեղծություն— իսկ այս ստեղծագործությունը հաճախ փիլիսոփաների, ինչպես օրինակ՝ Հեգելի մոտ, շատ ավելի խճողված ու անկարելի մի բան է քան քրիստոնեության մեջ—կազմեցին իդեալիզմի բանակը։ Մյուսները, որոնք բնությունն էին համարում նախնայինը, պատկանում են մատերիալիզմի տարբեր դպրոցներին»*։ Նալբանդյանը, անկախ այն հանգամանքից, որ մատերիալիզմի հարցը դպրոցներին»*։ Նալբանդյանը, անկախ այն հանգամանքից, որ վոչ մի գործում չի ասել այդ բացորոշ կերպով, փիլիսոփայության մեջ պատկանում է մատերիալիստների բանակին։ Մատերիալիզմի վճռական քարոզով նա հանդես է եկել ամեն բումն դարձյալ մարդկային կյանքի վերա, քանի որ մարդը ապրում է և ոդ է շնչում, մեք հրապարակում ենք նորան իմաստակություն և խաբեություն։ Մարդն է փիլիսոփայության և հեղինակը, և առարկան։ Անցյան այն ժամանակները, երբ մի տեսակ յերկարաքղանցք խորամանկությամբ տիրելով մարդկային բանականության, յեգիպտական առեղծվածներով պատած էին տալիս նորան, այն ժամանակները, յերբ մտածում էին պարզամիտ մարդիկ, Թե ոդի անչափելի բարձրության մեջ դրած է փիլիսոփայության աթոռը։ Սուտ. փիլիսոփայությունը յերկրագունդի վրա յե, մարդն է նորա աթոռը, մարդն է նորա և՛ քննողը, և՛ քննելին։ Բայց մարդը հառաջ, քան Թե պիտի գոյանա, հառաջ, քան Թե գոյանալուց հետո պիտի աղբի, հառաջ, քան Թե պիտի քննե և իմաստասիրե յուր անձն, յուր կյանքը, յուր անցյածը, յուր ներկան, և հառաջ, քան Թե պիտի մտածե և հոդաբարձու լինի յուր ապագայի մասին, այս բոլորից առաջ մարդը կարոտ է նյութի։ Անցյան այն ժամանակները, յերբ մշուշով պատած մարդկային յերևակայությունը վոչնչից տիեզերքը ստեղծում։ „Ex nihilo nihil fit!„, վերջին մանուկը կրկնում է այսօր մեզ հետ։ Ինչպես տեսանում ենք, Նալբանդյանի համար, ինչպես և ամեն մի մատերիալիստի համար, նախնականը բնությունն է, մատերիան, ֆիզիկականը, արտաքին աշխարհը, իսկ դիտակցությունը, զգայությունը, հոդեկանը՝ յերկրորդական։ Գնոսեոլոգիայի այս հիմնական հարցում ուղղակի կանգնելով մատերիալիզմի դիրքերի վրա ընդդեմ իդեալիզմի, նա Թույլ չի տալիս, որ իրեն շեղի իդեալիստական փիլիսոփայական սիստեմներից որևէ մեկը։

Սակայն ուշադրության արժանի յե և այն, որ այս աշխատության մեջ մի քանի տեղ Նալբանդյանը դեմ է արտահայտվում փիլիսոփայությանն ընդհանրապես։ Առաջին հայացքից կարող է ստացվել այն տպավորությունը, Թե նա ժխտում է փիլիսոփայությունը։ «Ինչ որ ինձ է վերաբերվում,—գրում է նա,—յես վոչ մի համակարգության (սիստեմ— Ծանբ.) չեմ ընդունում և ամեն համակարգությանց սուրկաբար հետևողը ծաղրից ավելի ուրիշ բան Թող չսպասեն ինձանից»։ «Փիլիսոփայական համակարգությանց ժամանակները անցան, այժմ կրիտիկի ժամանակ է»։

Գետք է այստեղ նկատել որ տերմինաբանության մեջ Նալբանդյանը չի կարող բավարարել ժամանակակից ընթերցողին։ Բացահայտ պայքար մղելով իդեալիստական հասանքների, այդ Թվում նաև Հեգելի սիստեմի դեմ, նա վոչ մի անգամ չի գործածում մատերիալիզմ բառը**։ Նրա համար փիլիսոփայության պրոֆեսորները ճիշտ նույնն են,

---

* Ենգելս, Ն. ա., էջ 18–19։

** Ավելորդ չի լինի ասել, որ այդ հատկանշական է ոչ միայն Նալբանդյանին։ Ռուս հեղափոխական մտածողները անկարող եյին որոշակի արտահայտվել հենց գրաքննական նկատառումներով։ Զգետք է մոռանալ նաև, որ «Հեգելը և նրա ժամանակը» գրված

ինչ վոր Դիցգենի համար. «իդեալական բարիքների» մասին ճառող դիալեմավոր լակեյները, վորոնք բթացնում են ժողովուրդը բանազրոսիկ իդեալիզմի ոգնությամբ*։

Նալբանդյանը վոչ թե ժխտում է փիլիսոփայությունը վորպես այդպիսին, այլ ժխտում է «դիալեմավոր լակեյների» դոգմանները։ Ահա թե, որինակ, ինչ է գրում նա իր նամակներից մեկում. «Այժմ դժվարանում եմ կարդալ այնպիսի գրքեր, վորոնք փիլիսոփայական յերկերի դեր խաղալու հավակնություն են ցույց տալիս. այդպիսիներից չես խուսափում եմ, ինչպես Պուշկինը սեմինարիսաններից։ Բոլոր այդ փիլիսոփանները իրանց ամբիոնի բարձրությունից տեսություն են, վոր տեսության յեսակից շարում են. մինչև որս էլ դեռ կարծելով, վոր ինչ կուզի քող լինի, մարդուս կյանքը կազմակերպվում է նախասահմանված տեսության համաձայն, ասես թե մարդկային բնությունը հանք է, վոր արտաքուստ կազմակերպվի զանազան բնագիտական, և այն էլ անխախտ, որենքներով։ Մարդկությունն արդեն շատ և շուժել հանուն զանազան դ ո գ մ ա տ ի կ ա ն սիստեմների**։ Ուրեմն զգազգուշարաններ, այսինքն իդեալիստական և մետաֆիզիկական սիստեմներին և, վոր դեմ է նա։ Այդպես պետք է հասկանալ նաև հետևյալ միտքը. «Մենք վոչ թե ձեռնոց ենք նետում իմաստության, այլ այն ձևին և պատասխանում ենք նույն վարպետությունը, վոր յերևում է վորպես դոգմա»։

Ի՞նչպիսի բովանդակություն է դնում նա այդ դեպքում փիլիսոփայության մեջ կամ վորն է նրա դերը։

«Բարվոքել մարդկային կյանքը—ահա փիլիսոփայությունը, ինչ համփով կուզես գնա, միայն թե խորհուրդը և նպատակը այն լինի։ Հայտնի յե թե ավելի բնական և ավելի միայն թե խորհուրդը և նպատակը այն լինի։ Հայտնի յե թե ավելի բնական և ավելի հաջող ճամփան ընտրելի յե, քան այն բարակ և միգապատ ճամփանները, վոր ցույց եյին տալիս այս ու այն փիլիսոփայական համակարգությունքը»։ Փիլիսոփայությունը պետք է բղխի յուրաքանչյուր ազգի կյանքից։ Քանի վոր կյանքը իր ամեն մի փազում հանդես է բերում ուրույն բովանդակություն, ուրեմն փիլիսոփայությունը պետք է արտահայտի այդ բովանդակությունը, այլապես նրա դերը վոչ միայն ավելորդ, այլև վնասակար է։ Ելնելով այս սկզբունքից, Նալբանդյանը փիլիսոփայության ճշգրիտ աղբյուրը և հատատուն պատվանդանը համարում է ընդհանուր պատմությունը և բնագիտությունը։ «Ուսիր պատմությունը, ուսիր բնությունը, ուսիր մարդը, իմաստասիրեր ընկերությունը, որենքները, մարդկության կյանքի յերևույթքը, գիր պետքերը՝ ճանչցիր պետքերը լցնելու հնարները և կդառնաս փիլիսոփա, առանց սորա կամ նորա պատրաստած համակարգությունքը ընդունելուս։ Ամենամեծ և ճշգրիտ փիլիսոփայությունը կյանքը բարվոքելն է. դրանից դուրս նրա համար իմաստություն գոյություն չունի։ Մերժելով պաշտոնական փիլիսոփայության լայն տարածված հոսանքները, Նալբանդյանը դրանով արդեն, ըստ եյության ձևավերպում է իր դավանած փիլիսոփայությունը— մատերիալիզմը։ Սակայն պատմական ու քաղաքական հասկանալի պատճառներով նա չեր կարող վորոշակիությամբ ու բացարձակ ձևակերպել իր այդ փիլիսոփայական ուղղությունը։ Բայց թեկուզ այլ տերմինաբանությամբ նա քարոզում եր մատերիալիզմը։ Այդ մատերիալիզմը, Մարքսի հանրահայտ արտահայտությամբ, իրականության, առարկան քննության է առնում, վոչ թե հայեցողության ձևով, ինչպես Ֆոյերբախի մոտ է, այլ սուբյեկտիվորեն, իբրև մարդկային զգայական գործունեություն։ Նալբանդյանի մոտ պրակտիկան հանդիսանում է ճանաչողության ամենահզոր, ամենաճիշտ միջոցը։ Պրակտիկայի և տեսության փոխհարաբերության հարցը նա լուծել է պարզ և մեկին. «Գործը մարդ ճշմարտությունն է»,—կարող եր կրկնել նա Զերնիշևսկու հետ միասին։ Վորովհետև հասարակական կյանքը, Մարքսի խոսքերով ասած, եյական գ ո ր ծ ն ա կ ա ն և թեորիական այն բոլոր խորհրդածությունները, վորոնք դեպի

և Պետրոպավլովսկ բերում։ Նալբանդյանը մեջբերումներ և կատարում Չերնիշևսկուց, առանց նրա անունը հիշելու։

* Տես վ. Ի. Լենին, «Ե ր կ ե ր», XIII, էջ 390–391։

** Ես. Շահազիզ,—«Գ ր ի գ ո ր Մ ի ք ա յ ե լ Ն ա լ բ ա ն դ յ ա ն ի», էջ 363–364։ Ընդգծումը հեղինակինն է։

մխսիցիզմ են տանում, այսինքն չեն խորսխվում այդ պրակտիկայի վրա, չեն նպաստում կյանքի առաջ քաշած հարցերի լուծմանը, մի կողմ պետք է նետվեն, որպես այդ կյանքի համար անպետք և վնասակար մի բան։ «Կյանքի, պրակտիկայի տեսակետը պետք է լինի իմացության թեորիայի առաջին և հիմնական տեսակետը»*։ Նալբանդյանը պրակտիկայի չափանիշը մտցնում է իմացության թեորիայի հիմքի մեջ և հենց դրանով էլ կողմորոշվում որպես մատերիալիստ։

Այս բոլորից հետո պարզ է, որ Նալբանդյանը չէր կարող քննադատաբար չվերաբերվել դեպի Հեգելի իդեալիզմը։ Ըմբռնելուն նման նա վորոշակիորեն անջատում է Հեգելի մեթոդը նրա սիստեմից։ Հաստատելով մեծ դիալեկտիկի այն միտքը, թե գիտությունը, մարդու կյանքը, ժամանակը, այսինքն հասկացողությունների գումարը շարժուն և հոսանուտ մի բան է, նա հետևցնում է, որ, ուրեմն, «չէ կարելի փիլիսոփայությունը ավանդել մի անշարժ ուսմարի մեջ»։ Հեգելի փիլիսոփայության այս հիմնական դրույթը, որ բղխում է նրա դիալեկտիկական մեթոդից, հակասության մեջ է մտնում նրա սիստեմի հետ։ «Բայց դու տես,—գրում է նա,—որ Հեգելի դրությունը ներգործում է և իր փիլիսոփայության վրա, որի ժամանակը անցած լինելով կարող է նայվել որպես անցած կյանքի առաջացուցած արդյունք, որպես հիշատակարան գերմանական վոգու կերպարանագործության պատմության մեջ, և ոչ ավելի»։ Պատմափիլիսոփայության բնագավառում Նալբանդյանը յերբեմն հետևում է մեղ իր ճշդրիտ, խորապես մատերիալիստական դիտողություններով։ Այսպես որինակ, նա միանգամայն ճիշտ և բացատրում գերմանական իդեալիզմի ծագման պատմական պատճառները։ Բնութագրելով Հեգելի եղոխայի մանական իդեալիզմի ծագման պատմական պատճառները։ Բնութագրելով Հեգելի եղոխայի Գերմանիան, նա գրում է. «Ընկած լինելով այսպիսի խեղճ վիճակի մեջ իրողապես, գերմանական վոգին իր յելքը աշխատեցավ փնտռել անպատուղ իդեալների մեջ և մինչև այսոր չպանիկ

Վորպես դյուղացիական սոցիալիզմի ներկայացուցիչ, Նալբանդյանը յելքը տեսնում է կուլակով աշխատանքի վրա հիմնված դյուղացիական համայնքի մեջ։ «Ներկրազործության» եջերում նրա տնտեսական թեորիան ավելի հստակ և ձևակերպված. «Հողը պատկանում է հասարակության, վորի ամեն մի անդամ հավասար իրավունք ունի հավասար քանակության վերա, հավիտյանս ժամանակների, և մի կողմից վաճառելու իրավունք չունենալով, իսկ, մյուս կողմից, առանց արգելքի հողը գործելու և արդյունավորելու իրավունքը անկողոպտելի պահելով, այդ հասարակության անդամը և նորա սերունդը հաստատում է յուր կյանքը մի տուր և ապահով հիմքի վերա և անհնար է, վոր նա կամ աղքատության հանդիպի կամ իսպառ կորստ ճնա»։

Այն ժամանակի սոցիալական պայմաններում ուտոպիական այս թեորիան հիմնավորելու համար նա դիմում է իր ավագ դաստիարակչին՝ Չերնիշևսկուն։

Ռուսական համայնքի, վորպես հասարակության սոցիալիստական կառուցման հնարավոր սաղմի, ուտոպիական թեորիան Գերցենից հետո հիստնական թվականների վերջերին նոր ուժով առաջ քաշեց և զարդացրեց Չերնիշևսկին։ «Իր „Критика философских предубеждений" հոդվածում նա փորձեց տալ այդ թեորիայի փիլիսոփայական հիմնավորումը։ Հեգելի այն միտքը, թե զարգացման բարձրագույն աստիճանը քան ձևի նման է սաոլին աստիճանին, եականապես տարբերվելով բովանդակությամբ,—Չերնիշևսկին համարում է միանգամայն ուղիղ և այստեղից էլ հանդում հետևյալ յեզրակացությանն. ռուսական դյուղացիական համայնքը կարող է հանդիսանալ ապագա սոցիալիստական կարգերի սաղմը։ Ծուբացնելով այդ համայնքի բոլոր պատուհանները, Ռուսաստանը, առանց կապիտալիստական հասարակարգն անցնելու, կարող է ուղղակի թևակոխել սոցիալիզմին։ Ռուս մեծ մտածողի հավատը դյուղացիական սոցիալիստական հեղափոխության նկատմամբ բղխում էր այն բանից, վոր հենց ռուսական կյանքի ուրույն կերպվածքի, ռուսական համայնական տնտեսակարգի մեջ էր նա տեսնում միակ յելքը։ Նալբանդյանի կարծիքով, փրկության այդ նույն յելքն էր կանդնած նաև մեր յերկրի առաջ, վորը դեռ հույս կար փրկել կապիտալիզմից։ Այդ հնարավոր է, չնայած նրա հետամնացության, ավելի ճիշտ՝ շնորհիվ այդ հետամնացության։ Պատճառաբանությունը նա տալիս է Չերնիշևսկու խոսքերով. «Ե՛թե մի վորևիցե ազգ հասել է իր զարգացման վերին աստիճանին, մի ուրիշ ազգ, վոր թեզ վիճակում է, կարող է հասնել այդ աստիճանին, առանց այնքան ժամանակ և այնքան ուժ գործ դնելու, վորքան առաջինն այնքան ժամանակ և այնքան ուժ գործ դրեց, վորպեսզի առաջին ազգը, և բնավ չհանդիպելով մի չի մոմենտների, վորոնցից անցել եր առաջինն ազգը»։

Հեգելյան դիալեկտիկայից բղխող այս հիմնական և խիստ արժեքավոր յեզրակացությունն է, վոր առաջին հերթին արժանանում է Չերնիշևսկու, նույնպես և Նալբանդյանի ուշադրությանը։

Ազգությունը Նալբանդյանի համար բացարձակ, վերջնականապես հաստատված մի բան չէ։ Դա պատմական կատեգորիա է և վորպես այդպիսին չունեցած յե վերսկսման և չքացման։ Ազգությունն ընդունելի յե այնքանով, վորքանով այն հավասար յերևույթ է, պատմական ռեալ իրականություն, բայց այն միաժամանակ և մերժելի յե, քանի վոր «բանակատական ռեալ իրականությունը նաև մերժում է և մեռնում, նախանությունը յերբեք չի կարող արդարացնել նորան»։ Ազգությունը ծնում է և մեռնում, անմահ և մնայն մարդկությունը։ «Ազգը մեռնում է, բայց նորա կազմող անհատները կենդանի յեն, նոքա չեն կորչում, չեն չքանում և մարդերի թիվը չի սակավանում, թեև մեռնողներ

վուրդների պայքարը ռուսական ցարիզմի դեմ։ Ազգային պայքարն իր հերթին ինքնաբավ մի բան չէ. դա պետք է լինի տնտեսական խնդրի լուծման և բոլոր ազգերի միջև ճշմարիտ հավասարության հաստատելու մի միջոց։ Բայց դրանից հետո ավելորդ է դառնում և ինքը, այդ առանձին ազգությունը։

Ազգությունը, ինչպես տեսնում ենք, դիտվում է իր շարժման, պրոցեսի մեջ։ Դա մետաֆիզիկական մի հասկացողություն չէ, տրված վերուստ, այլ պատմական մի յերևույթ։ Նրա մահը նույնքան բնական է, որքան և ծնունդը։ Նալբանդյանի մոտ այս դեպքում ևս հարցի դրումը դիալեկտիկական է։ Սակայն, իհարկե, սա նույն հնգելյան դիալեկտիկան է, միրաված պատմության մեջ։ Արտացոլելով մարքսյան դիալեկտիկան, լենինիզմը ազգային հարցը կապակցում է կապիտալի իշխանության, իմպերիալիզմի տապալման, պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր հարցի հետ։ Նալբանդյանը չկարողացավ բարձրանալ մինչև հարցի այսպիսի դրումը, սակայն տվյալ խնդրում նա այնուամենայնիվ զգալիորեն առաջ էր անցած իր ավագ գաղափարակիցներից։ Պատմությունը միապաղաղ, աստիճանական զարգացման մի պրոցես չէ բնավ։ Այն առաջ է գնում թռիչքներով և հենց դրանք են, որ իմաստ են տալիս պատմությանը։ «Ցեղան և գնում թռիչքներով և հենց դրանք են, որ իմաստ են տալիս պատմությանը։ «Ցեղան ժամանակներ, որ մարդը հարյուր տարի ապրեցավ, բայց մի որվա ճամփա չգնաց, բայց յեղան ժամանակներ, յերբ մի որում մեկ դար քայլեց»։

Խիստ ուշագրավ է, որ իր հիմնական վերաբերմունքը դեպի Հեգելը Նալբանդյանը ձևակերպում է դարձյալ Չերնիշևսկու բերանով.

«Վոչ Հեգելի աշակերտ ենք և վոչ Շելլինգի, բայց արդարության յունենք ասելու և խոստովանելու, որ յերկուսի համակարգությունքն ելմեծ ոգուտ ցույց տվին՝ պատության ընդհանուր ձևերը հայտնագործելով, որոնց միջնորդությամբ առաջ է գնում գաղափարի դրծողությունը։ Այս հայտնագործության հիմնական արդյունքը յերևում է հետևյալ առածի մեջ. «Զարգացման վերին աստիճանը իր ձևով նման է սկզբին, վորտեղից առաջ է գնում այդ զարգացումը»։

Այս վարդապետությունը բռվանդակում է իր մեջ շելլինգյան համակարգության արմատական խնդությունը, վոր Հեգելը ավելի ճիշտ և ավելի մանրամասն քքքրել և քննել է, և ընդունելով վորպես հիմնական սկզբունք, կազմել է իր համակարգությունը, ուր տիեզերական կյանքի բոլոր յերևույթների մեջ, սկսելով նոցա շատ ընդհանուր վիճակից մինչև եյության յուրաքանչյուր առանձին կարգի ամենաճիշտ մանրամասնությունքը, յերևում է այս վարդապետությունը*»։

Ամփոփելով՝ մենք տեսնում ենք, վոր քննադատելով Հեգելին, Նալբանդյանը վոչ միայն չի հետևում Հայմին, վորը չանք եր թափում հեգելյան փիլիսոփայության գերեզմանափորը դառնալ, այլև բարձր է գնահատում իդեալիստական սխտեմի «ռացիոնալ հատիկը» հեգելյան դիալեկտիկան։ Վճռաբար մարտնչելով գերմանական հանճարեղ փիլիսոփայի իդեալիստական սխտեմի դեմ, նա, ի տարբերություն Ֆոյերբախի, անուշադրության չի մատնում նրա դիալեկտիկական մեթոդը։ Ճիշտ է, Նալբանդյանը իր այդ հասկացողությունը—«ռացիոնալ հատիկի» ճանաչումը չեր կարող առաջադրել այն չափով, վոր չափով նա չեր հասել դիալեկտիկական մատերիալիզմի աշխարհայեցողությանը, բայց նա կանգնած եր

---

* Նալբանդյանը այս և վերը բերած հատվածների մեջբերումը կատարում է Չերնիշևսկու „Критика философских предубеждений" հոդվածից, վոր լույս եր տեսել „Современник" ժուռնալի 1858 թ. դեկտեմբերյան համարում։ Վոր իր նկատողությունները դրի առնելիս նա անմիջապես ձեռքի տակ է ունեցել հիշյալ հոդվածը, դա կասկածի յենթակա չէ, բայց թե ինչպես և բերդում նրա ձեռքն ընկել Չերնիշևսկու գրչի արդյունքը,—դժվարանում ենք ասել։ Տես նաև Н. Г. Чернышевский—„Избранные сочинения", *1938, էջ 169, 193 և 195։*

հիմնականում ճիշտ ճանապարհի վրա—դա այն բարձրակետն էր, որին հասավ տեսական առաջավոր միտքը ռուսական իրականության մեջ։

Փիլիսոփայությունը պետք է ոչնչի մեզ զոյություն ունեցող իրականությունը բացատրելու և փոխելու, մարդկային կյանքը բարվոքելու,—այս է վերջին հաշվով Նալբանդյանի սեեռուն գաղափարը։ Նա վոչ թե այստեղ և սխալվում, այլ կյանքը վերափոխելու խնդրում դյուրացիական համամտքի վերի մասին ունեցած ուտոպիկ տեսակետի մեջ։ Տվյալ դեպքում գլխավորն այն չէ, վոր Նալբանդյանը չհասկացավ այդ, այլ այն, վոր անգամ այդ դեպքում նա հրահրում էր հեղափոխական պայքար ընդդեմ ցարիզմի, ընդդեմ հողատիրական կարգերի։ Հողատիրության տապալումը դյուրացիական հեղափոխության միջոցով միայն առաջին քայլը պետք է լիներ։ Հետևյալ հարցը, վոր Նալբանդյանը ինքն էլ ուներ իր առջև, այն էր, թե ինչ պետք է լիներ հետևյալ քայլը։ «Ինչպես և ինչ պետք լինի այդ նորը։ Ձեզնից մենք քեզ հետ ապրենք մինչև այն ժամանակ, յերբ ուսանենք այն ժամանակվա պետքերը և շրջապատող աշխարհի հասկացողության դժվարը, այն ժամանակ միայն կարող եմ քեզ ասել, թե ինչ բան է այդ նորը. մինչև այն ժամանակ ինձնից պատասխանի մի ոպասե, յես փիլիսոփա չեմ»։ Ձեռնհասությամբ այն ժամանակվա պատմական սիտուացիայից, նա առաջին, հիմնական, սիտուալ խնդիրը համարում է ցարիզմի տապալումը. յերբ այդ, այսինքն ժողովուրդների ազատագրումը ցարիզմից և հողատիրությունից կդառնա իրականություն, այն ժամանակ թող նոր սերունդը հոգ տանի իր անելիքների մասին։

Վոր Ֆոյերբախն ինչպես անուղղակի, այնինքն Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու միջոցով, նույնպես և ուղղակի կերպով վճռական ազդեցություն է գործել Նալբանդյանի մտածելակերպի հասկացքների կազմակերպման վրա, այդ անկասկած է։ 1861 թ. Լոնդոնում յեղած ժամանակ նա կարդում է վերջապես նրա հռչակավոր «Քրիստոնեության էությունը», վոր հենց նոր էր լույս տեսել ռուսերեն թարգմանությամբ։ Այդ աշխատության առաջաբանից վերցրած մի աֆորիզմը նա զարձնում է մոտոն իր «Ձերկրագործության» համար։ Սակայն այնուամենայնիվ նրանք ունեցին ինչպես նույնության, նույնպես և տարբերության շատ կետեր։ Ինչպես իր աշխատության մեջ («Լյուդվիգ Ֆոյերբախը և դերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը») ցույց է տալիս, վոր սահմանազատվելով վուլգար մատերիալիզմից, Ֆոյերբախը հետու մնաց վարձնական բնագիտության դարակազմիկ այն նվաճումներից, վորոնց շնորհիվ միայն հնարավոր յեղավ հասնասեկ բնության մի այն նվաճումներից, վորոնց շնորհիվ միայն հնարավոր յեղավ հասնասեկ բնության մեջ զոյություն ունեցող դանազան բնագավառների ներքին կապակցությունները։ Այդ նվաճումների շնորհիվ էր, վոր, ենգելսի արտահայտությամբ, բնագիտությունը վերածվեց բնության մասերիալիստական ճանաչության մի սիստեմի։ Բնագիտության ահա այդ առաջադիմությունները Նալբանդյանի կողքով չեն անցել։ Դեռևս համալսարանական միջավայրից նրան լրջորեն զբաղեցնում են զրական գիտությունների համարյա բոլոր դեպքերը։ Նրա հետաքրքրությունն ու հարցասիրությունն այս իմաստով սահման չեր ճանաչում. կենդանաբանություն, բուսաբանություն, զրծնական քիմիա, տոպոգրաֆություն, յերկրաբանություն,—անդ նրան զբաղեցնող բնագավառների թվի ցուցակը։ Ձեվ այս վոչ թե իր սեռական հարցասիրությունը բավարարելու, այլ անմիջական կյանքում զործադրության մեջ դնելու համար։ Գիտությունները իրարից և բոլորը միասին հասարակական կյանքից, ինչպես նաև մարդկային մտածողությունից, մեկուսացած բան չեն նրա համար։ «Գիտությունքը առաջ են գնում և նոցա ընթացքը զարմանալի կերպով լծորված է իրար հետ։ Տնտեսության մեջ մի ապակի չի մնում, քիմիայի մեջ մի տարր է ավելանում և անա բովանդակ գիտությունքը միանգամայն վազում են առաջ»։ Նրա զավանած փիլիսոփայական բովանդակ գիտությունքը միանգամայն վազում են առաջ»։ Նրա զավանած փիլիսոփայական ուսմունքը հասասասեն կերպով հենվում է իր ժամանակի զրական գիտությունների վրա, համաձայնորեն մերժելով այն բոլոր իդեալիստական սիստեմները, վորոնք միայն կաշկանդում և արգելակում են զրանց զարգացումը։

«Ֆոյերբախի իրական իդեալիզմը յերևան է գալիս, հենց վոր մենք անցնում ենք

նրա կրոնափիլիսոփայությանն ու բարոյագիտությանը»,—ասում է Ենգելսը։ Հակառակ Ֆոյերբախի այն պնդումի, թե «մարդկության դարաշրջանները տարբերվում են միմյանցից կրոնական փոփոխություններով միայն», Նալբանդյանը գրում է. «Ուղիղն ասած, չես այդ բանի վրա նայում եմ բոլորովին հակառակ տեսակետից։ Ըստ իս, քաղաքակրթության հառաջադիմությունը կախումն չունի կրոնից, այլ ընդհակառակը, կրոնի վերածնումն ու փոփոխումն անխուսափելի հետևանք են ներկա քաղաքակրթության»*։ Ֆոյերբախը «չի կամենում ամենևին վերացնել կրոնը, նա ուզում է կատարելագործել այն» (Ենգելս), մինչդեռ նրա հայ աշակերտը համարձակորեն վեր է բարձրացնում աթեիզմի դրոշը։

Այսպիսին է, յերկու խոսքով, Նալբանդյանի և Ֆոյերբախի միջև յեղած հարաբերության հարցը։

Ուրիշ ինչ ենք տեսնում իրեն հանրագումար։

Վորպես հեղափոխական մտածող և մասներիալիստ, Միքայել Նալբանդյանը անխնա քննադատության է յենթարկում հեգելյան փիլիսոփայությունը, բայց, չդայթակղվելով յեվրոպական մոդայական քննադատությամբ, նա չի մերժում նրան ամբողջովին։ Նա տեսնում է այդ փիլիսոփայության մեջ սիստեմի և մեթոդի անհարիր, հակասական լինելը, մի բան, վոր չեր նկատել Ֆոյերբախը, և փորձում է ոգտագործել նրա ուսմունքի արժեքավոր կողմը՝ լուծելու համար հայոխայի առաջադրած պրակտիկ հեղափոխական խնդիրները։ Նալբանդյանը Ֆոյերբախի հետ է մինչև մարդը, բայց հասնելով մարդուն, նա առաջ է անցնում իր ուսուցչից, վերացական մարդը ոդից իջեցնելով հասարակական հողի վրա և տալով նրան ռեալ բովանդակություն։ Հայկական և ռուսական հետամնաց կյանքի պատճառով նա անտեղյակ մնաց պրոլետարիատի պատմական մխիայինն, սակայն պատմաշրջաններին հեղափոխական ճանապարհով միմյանց հաջորդելը, ինչպես նաև մարդկության դարաշրջանները կրոնական փոփոխություններով մեկնաբանելուն վճռականապես հակադրվելը,—պարզ եր նրա համար, մի բան, վոր հակայական առաջադիմություն եր ներկայացնում այն ժամանակվա հեղափոխական մտքի բնագավառում։ Այստեղից էլ՝ Նալբանդյանի խոշոր քայլը դեպի առաջ տեսության և պրակտիկայի փոխհարաբերության հարցում։ Ալրելով համառուսական հեղափոխական կրիզիսի շրջանում, նա իր ուշադրությունը կենտրոնացնում է հատկապես պրակտիկայի վրա. ճանաչողության հիմնական մեթոդը նա պրակտիկայի մեջ է տեսնում։ Նա յուրովի մոտեցավ այն ճշմարտությանը, թե փիլիսոփայության խնդիրը աշխարհը փոխելու մեջ է։ Դյուրքյուն ունեցող հասարակական կարգերը փոխելու հիմնական նախապայմանը նա տեսավ թեորիայի և պրակտիկայի մ ի ա ն ո ւ թ յ ա ն մեջ։

Հայ ժողովրդի պատմական զարգացման բախտը կապելով ռուս մեծ ժողովրդի հետ Նալբանդյանը լուվին բաժանում է Զերնիշևսկու սոցիալական ուտոպիան։ Ցնծնելով այն նախադրյալից, թե ազգությունը պ ա տ մ ա կ ա ն կ ա տ ե գ ո ր ի ա է, նա դիալեկտիկորեն է լուծում ճնշված և կախյալ ազգությունների հարցը։ Ընդունած իր ուտոպիզմին, Նալբանդյանը, այնուամենայնիվ, աշխատավոր ժողովուրդների սոցիալական և քաղաքական ազատության անցկացրեց ցարիզմի տապալման վրայով՝ ռուս ժողովրդի հետ սերտորեն կապվելու պայմանով,—և սրանումն է նրա ամենամեծ ծառայությունն ինչպես հայ, նույնպես և ռուսական հասարակական մտքի պատմության մեջ։

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Տես R. Гайм,—„Гегель и его время", пер. Сольянникова, СПБ, 1861։ Հետագա բոլոր վկայակոչումները կատարվում են այդ հրատարակությունից։

2. Ibid, էջ 7։

3. Մեջբերում է ըստ Դրանովսկու։ Հեգելի «Իրավունքի փիլիսոփայության» ներածության մեջ ասված է.

„Das, *was ist,* ist die Aufgabe der Philosophie; denn das, *was*—ist, ist die Ver-

---

* Ցև. Շահազիզ,—«Դիվան Միքայել Նալբանդյանի», էջ 257։

nunft. Was das Individuum betrifft, so ist ohnehin jedes ein *Sohn seiner Zeit.* So ist auch die Philosophie, *ihre* Zeit *in Gedanken erfasst.* Es ist ebenso töricht zu wähnen, irgend eine Philosophie gehe über ihre gegenwärtige Welt hinaus, als, ein Individuum überspringe seine Zeit, springe über Rhodus hinaus. Geht seine Theorie in der Tat drüber hinaus, baut er sich eine Welt, *wie sie sein soll,* so existiert sie wohl, aber nur in seinem Meinen,—einem weichen Elemente, dem sich alles Beliebige einbilden lässt" *(«Ինչ էլ հասկանալը փիլիսոփայության խնդիրն է, վորովհետև այն, ինչ կա, է բանականությունը։ Ինչ վերաբերում է անհատին, ապա ամեն վոք իր ժամանակի զավակն է. այդպես է նաև փիլիսոփայությունը, վոր իր ժամանակն է մտքերի մեջ ըմբռնված. ինչպես հիմարություն կլիներ կարծել, թե վորևե փիլիսոփայություն կարող է իր առաջ աշխարհից դուրս գալ, այնպես էլ՝ թե անհատը կարող է իր ժամանակից վեր թռչել։ Իսկ եթե փիլիսոփայական տեսությունը դրանից վեր է գնում, եթե նա կառուցում է մի աշխարհ՝ ինչպես այն պետք է լինի, ապա այդ աշխարհն անշուշտ գոյություն կունենա, սակայն միայն իր կարծիքի մեջ. իսկ կարծիքը մի այնպիսի փափուկ տարր է, վորի մեջ ամեն ուզածդ կերևակայական բան կարելի է դնել»)։* G. W. F. Hegel; Grundlinien der Philisophie des Rechts„ *Շտուտգարտ, 1928, եջ 35։*

4. Մեջբերում ըստ Դրանովսկու։ Հեգել «Պատմության փիլիսոփայության» (և վոչ թե «Փիլիսոփայության պատմության», ինչպես սխալմամբ գրում է Նալբանդյանը) ներածության մեջ ասած է.

„Man verweist Regenten, Staatsmänner, Völker vornehmlich an die Belehrung durch die Erfahrung der Geschichte. Was die Erfahrung aber und die Geschichte lehren, ist dieses dass Völker und Regierungen niemals etwas aus der Geschichte gelernt und nach Lehren, die aus derselben zu ziehen wären, gehandelt haben. Jede Zeit hat so eigentümliche Umstände, ist ein so individueller Zustand, dass in ihm aus ihm selbst entschieden werden muss und allein entschieden werden kann. Im Gedränge der Weltbegebenheiten hilft nicht ein allgemeiner Grundsatz, nicht das Erinnern an ähnliche Verhältnisse, denn so etwas, wie eine fahle Erinnernng, hat keine Kraft gegen die Lebendigkeit und Freiheit der Gegenwart„: *(«Հանձնարարում են կառավարողներին, պետական գործիչներին, ժողովուրդներին սովորելու դեպավորապես պատմության փորձերի միջոցով։ Սակայն ինչ փորձն ու պատմությունն են սովորեցնում, այն է, վոր ժողովուրդներն ու կառավարությունները երբեք վորևե բան պատմությունից չեն սովորել և չեն գործել ըստ այն ուսմունքի, ինչ կարելի էր նրանից դուրս բերել։ Յուրաքանչյուր ժամանակ այնպիսի յուրահատուկ պայմաններ ունի, այնպիսի անհատական դրություն է ներկայացնում, վոր նրա մեջ, միայն նրանից պետք է և հնարավոր է վճիռ հանել։ Համաշխարհային իրադարձությունների հախուռնության մեջ չի օգնի վորևե ընդհանուր սկզբունք, նման հարաբերությունների վորևե վերհուշ, վորովհետև այնպիսի մի բան, ինչպիսին գոյություն վերհուշն է, անցած է ներկայի կենդանության և ապագայության հանդեպ»)։* G. W. F. Hegel: Vorlesungen über die Philosophie der Geschichte, *Շտուտգարտ, 1928, եջ 31։*

5. Տես Р. Гайм,—„Гегель и его время", *եջ 8։*

6. Նալբանդյանն այս խոսքերի մեջբերումը կատարում է ըստ Բոկլի։ Դեկարտի «Դատողության մեթոդի մասին» աշխատության մեջ ասված է. „Sed ut veterem domum inhabitantes, non eam ante diruunt quam novae in ejus locum extruendae exemplar fueruut premeditati, sie prius qua ratione oerti aliquid possim invenire cogitavi, et satis multum temporis impendi im quaerenda vera methodo et cetera" *(«Բայց այնպես, ինչպես հին տանն ապրողները չեն քանդում այն, մինչև վոր չեն մշակում նրան փոխարինող տան նախագիծը, կես էլ սկզբնապես մտածեցի գտնել ուղիղ մի բան և շատ ժամանակ գործադրեցի ճշմարիտ մեթոդ վորոնելու վրա և այլն»)։ Այս հատվածը, վոր բացակայում է ֆրանսիական մի շարք, ինչպես և մեր ձեռքի տակ գտնված, հրատարակությունից, հեղինակն ավելացրել և առաջին լսարնեերին թարգմանությանը, վոր լույս տեսավ Ամստերդամում 1644 թ.։ Տես* Рене Декарт, „Рассуждение о методе для руководства разу-

ма и отыскания истины в науке", пер. и предисловие Г. Тымянского, 1925, էջ 46:

7. Տես Р. Гайм,—„Гегель и его время", էջ 276—277.

8. Ibid, էջ 374:

9. Խոսքն ընտրական այն նախագծի մասին է, որն զգալի փոփոխություններից հետո ընդունվեց 1832 թ.: 1832 թ. ռեֆորմը պահպանում էր 1688 թ. հաստատված կոմպրոմիսը արիստոկրատական հողատիրության և ֆինանսական արիստոկրատիայի, նաև առևտրական բուրժուազիայի վերնախավի միջև:

10. Տես Р. Гайм,—„Гегель и его время", էջ 375:

11. Ibid, էջ 376:

12. Ibid, էջ 376:

13. Ibid, էջ 377:

14. Habeas corpus—ակտ, որ անցկացրեց ռադիկալ բուրժուազիան 1679 թ.: Ըստ այդ ակտի, ամեն մի ձերբակալություն պետք է կատարվեր պատճառաբանված հրամանով և ձերբակալվածը կամ պետք է ամենակարճ ժամանակում ներկայացվեր դատարանին կամ ազատ արձակվեր: Բառացի նշանակում է՝ մարմին ունենաս (լատ.):

15. Համայնական սկզբունքի (общинное начало) կամ, այլ խոսքով, ռուսական հասմայնքի՝ որպես հասարակության սոցիալիստական կառուցման հնարավոր սաղմի՝ ուտոպիական իդեան Չերնիշևսկին զարգացրեց մի շարք հոդվածներում [„Studien" (Исследование о внутренних отношениях народной жизни и в особенности земских учреждениях Россіи" барона А. Гакстгаузена) („Современник", 1857, сентябрь, октябрь), „Критика философских предубеждений против общинного владения" („Современник", 1858, декабрь), „Экономическая деятельность и законодательство" („Современник", 1859, февраль) և „Суеверия и правила логики" („Современник", 1859, октябрь)]: Դրանցից նշանավոր է մանավանդ „Критика философских предубеждений" հոդվածը, որտեղ հեղինակը ցույց է տալիս իր հակառակորդների տեսակետների փիլիսոփայական հիմունքների անհամապատասխանությունը: Այս գործում Չերնիշևսկին ձգտում էր ապացուցել, որ հասարակության զարգացումը պետք է պահվի ոչ միայն հողի, այլև ընդհանրապես արտադրության միջոցների համայնական սեփականության համար:

Այս հոդվածը, ինչպես երևում է, խոշոր ազդեցություն է գործել Նալբանդյանի վրա: «Հեգելը և նորա ժամանակը» գրի առնելիս նա, ըստ երևույթին, ձեռքի տակ է ունեցել և լայնորեն ոգտագործել է այն:

16. Տես Р. Гайм,—„Гегель и его время", էջ 377—378:

17. Ibid, էջ 378:

18. Ibid, էջ 380:

19. Թարգմանությունն է Չերնիշևսկու „Критика философских предубеждений" հոդվածի հետևյալ հատվածի. „Мы не последователи Гегеля, а тем менее последователи Шеллинга; но не можем не признать, что обе эти системы оказали большие услуги науке раскрытием общих форм, по которым движется процесс развития. Основной результат этих открытий выражается следующей аксиомой: „По форме, высшая степень развития сходна с началом, от которого оно отправляется". Эта мысль заключает в себе коренную сущность шеллинговой системы; еще точнее и подробнее раскрыта она Гегелем, у которого вся система состоит в проведении этого основного принципа через все явления мировой жизни от ее самых общих состоянии до мельчайших подробностей каждой отдельной сферы бытия" (տես Н. Чернышевский,—„Критика философских предубеждений против общинного владения". „Современник", 1858, декабрь).

20. Թարգմանությունն է Չերնիշևսկու նույն հոդվածի հետևյալ հատվածի. „Гегель положительно говорит, что средние логические моменты чаще всего не достигают об'ективного бытия, оставаясь только логическими моментами. Довольно того, что известный средний момент достиг бытия где-нибудь и когда-нибудь, этим избавляется

процесс развития во всех других временах и местах от необходимости доводить его до действительного осуществления,—прямо говорит Гегель".

21. Տես Աստվածաշունչ, Թուղթ առ Եբրայեցս, Գլ. Բ, 18։

22. Թարգմանությունն և Չերնիշևսկու նույն հոդվածի հետևյալ հատվածի.

„1. Высшая степень развития по форме совпадает с его началом.

2. Под влиянием высокого развития, которого известное явление общественной жизни достигло у передовых народов, это явление может у других народов развиваться очень быстро, подниматься с низшей степени прямо на высшую, минуя средние логические моменты".

23. Տես „Демократия в Америке" Ал. Токвилля, пер. А. Якубович, т. I, Киев, 1860.

24. Հեղինակին սխալանքի մեջ է ձգել ռուսերեն թարգմանության վրիպակը։ Այնտեղ ասված է. „Невольничество было введено в 1620 году капитаном одного Голландского корабля, который выгрузил двадцать негров при устье *рекиямы*". *Թրանսերեն բնագրում հիշատակված է James գետը։*

ՀԱՏՎԱԾՆԵՐ

«ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ

Անցյալ դարի 50—60-ական թվականներին լեզուն այն հումաններից մեկն էր, որը շուրջը բաղխվում էին հայ հասարակության նեբսում չեզած առաջադիմական ու հետադիմական ուժերը։ Հետադիմականները դժվարությամբ էին իրենց դիրքերը զիջում վեր չկացնող դեմոկրատիային և հասարակական մյուս առաջադեմ ուժերին։ Որպեսզի գիտակցելով, որ ժողովրդի ընդհանուր պրոգրեսը դրեթե աննշարին և առանց աշխարհաբար լեզվի, Նալբանդյանն իր գործունեության առաջին շրջանից իսկ պայքարել է աշխարհաբարի համար և հանդիսացել աշխարհաբարի վոչ միայն գլխավոր պաշտպանը, այլև նրա հիմնադիրներից և կիսատողներից մեկը։ Ամբողջապես նվիրված լինելով հասարակական-քաղաքական գործունեության, նա մինչև 1862 թ. հնարավորություն չի ունեցել լուրջ կերպով զբաղվելու աշխարհաբարի տեսական հարցերով և մեծ մասամբ բավականացել է աշխարհաբարի հետ կապված գործնական խնդիրներով։ Սակայն 1862 թ. դասապարտված լինելով բանտային տաժանելի կյանքին ու նոտակեցության, Նալբանդյանը, ի թիվս բազմաթիվ այլ խնդիրների, սկսում է զբաղվել նաև աշխարհաբարի տեսությամբ։ Աշխարհաբար լեզուն այդ շրջանում արդեն սկսում էր դառնալ գրականության մեջ տիրապետող լեզու և վորոշ ձև ու կերպարանք էր ստանում։ Սակայն աշխարհաբարի զարգացմանը խոչընդոտում էր այն հանգամանքը, վոր չկային այդ լեզվի մասին գիտական ուսումնասիրություններ, քերականության ձեռնարկներ, վորոնց մեջ լուսաբանվելին լեզվի տեսության հարցերը։ Բանտից գրած 1863 թ. մայիսի 8-ի նամակում առաջին անգամ անդրադառնալով այդ խնդրին, Նալբանդյանն ասում է. «Ձեզ գիտեմ, վոր միլիոնավոր տաճկահայերը կարող են այդ բանին (քերականության դասագրքի. Խմբ.) և ինձ էլ բազմիցս դիմել են մի այդպիսի առաջարկությամբ»։*

Տանտամյա փորձը Նալբանդյանին բերել էր այն յեզրակացության, վոր «մինչև վոր մենք չենք ունենալ աշխարհիկ լեզվի քերականության պես մի բան.... մինչև վոր նա ուսուցիչների և աշակերտների ձեռքին չի գործածվի, նոր լեզվի գրականությունը վոչ մի հաջողություն չի ունենալ»**։*

Մերժելով գրաբարի սխեմայի աղճատությունը նոր լեզվի վրա, Նալբանդյանի առաջ

---

* *Տես Յե. Շահազիզ, «Դիվան Միքայել Նալբանդյանի», եջ 273։*

** *Ն. տ., եջ 275։*

խնդիր էր դրվում պարզել նոր լեզվի սիստեմը, վորովհետև լեզվի գիտական զարգացումը չէր կարելի առաջ մղել տարերային ձևով, առխարխափ։

«Մեզանից վոչ վոք հաշիվ չի տվել իրան,—գրում է Նալբանդյանը,—թե քանի՞ յեղանակ ունի նոր լեզվի բայը, և քանի՞ ժամանակ կա նրանց մեջ. թեև այդ այժմ ծիծաղելի յե թվում, բայց այդ փաստ է։ Ճիշտ է, հնազանդելով լեզվի վոգուն, նրանցից մի քանիսը մենք գործ ելինք ածում անգիտակցաբար, բայց մի քանիսն էլ, ի միասս մեր նոր խոսքի, միայն են առանց կիրառության»*։

Ցնծելով այս հարկադիր պահանջից, Նալբանդյանը բանտում նախագծում է աշխարհաբարի տեսական ու գործնական խնդիրների վերաբերյալ մի քանի գլխավոր թեմաներ մշակել։ «Այժմ իմ մտքումս,—գրում է նա 1863 թ. ապրիլի 8-ի նամակի հավելվածում,—մի ընդարձակ ծրագիր կա,—և յես արդեն մշակել եմ այն, վորքան հնարավոր է (իհարկե, մտքումս միայն), նույնիսկ ամենավերջին մանրամասնություններըը...։ Նալբանդյանն ասում է, վոր նպատակ ունի «պարզաբանել դրաբարի աստիճանական քայքայման և աշխարհաբարի կազմվելու ընթացքը և վորքան հնարավոր է, հաշտեցնել աշխարհաբարի յերկու կարևոր ճյուղերը (ի նկատ ունի ռուսահայ և արևմտահայ բարբառները. ՀՍՄ.), բացարձակապես հրաժարվել ժողովրդական կենդանի խոսակցության մեջ չգործածվող բոլոր ձևերից, դուրս ձգելով ի հարկե ոտարլեզվյա բառերը, յեթե ժողովուրդը գործ է ածում առանց կարիքի ու խորության»։

Նալբանդյանի ձեռնարկած այս գործն անշուշտ աշխարհաբարի պատմության մեջ դարագլուխ պիտի կազմեր, յեթե այն ի կատար ածվեր։ Ամբողջ գործը լինելու յեր 30—35 մամուլի ծավալով։ «Ինչպես տեսնում եմ,—գրում է նա,—յեթե միայն յերբևիցե հաջողվի ինձ գլուխ բերել իմ վորոշած ծրագիրը, այս ամբողջ աշխատությունը 30—35 տպագրական թերթից in 8⁰ պակաս չի լինի, վորովհետև տասնհինգ թերթից ավելի պետք կլինի ներածության համար...»**։ Նալբանդյանի նամակներից յերևում է, վոր չնայած բանտային պայմաններին, 1863 թ. հունիսի 6-ին նա արդեն գրել էր Ներածության մեծ մասը, մոտ 15 մամուլ և քերականության մի քառորդը. «Ինչ վոր մինչև այժմ գրել եմ, գրում է նա,—սուտ չասեմ, կլինի մոտ տասնհինգ տպագրական թերթ in 8⁰, բայց տակավին «Ներածության» հաղիվ կեսն եմ գրել և «քերականության» մի քառորդը. դեռ գրած չեմ ծանոթությունները, վորովհետև ձեռքիս տակ դրքեր չունիմ, իսկ այդ բոլորն էլ բերել տալ և ստուգարար է և տաղտկալի»**։ Իր այդ զբաղմունքների կապակցությամբ Նալբանդյանը ոգտագործում էր հատկապես «Սոս և վարդիթեր»-ը, «Վերք Հայաստանի»-ն, Սայաթ-Նովայի յերգերը և այլն։ Ձեռնարկված գործի հաջողության համար չափազանց կարևոր էր, վոր նա անմիջապես հաղորդակից լիներ ժողովրդական կենդանի խոսակցական լեզվին, մինչդեռ բանտի չորս պատերի մեջ փակված լինելով, միանգամայն զրկված էր այդ հնարավորությունից, չէր լսում վոչ մի հայերեն բառ և յեթե խոսում էր լեզվի մասին, ապա այդ, ինչպես ինքն էր ասում, իր «հիշողության շնորհիվ և ու քան տարվա գործնական վարժանության»***։

Ցնծելով այդ դժվարություններից, Նալբանդյանը ծրագրում էր տալ նախ և առաջ աշխարհաբարի քերականության մի նախնական փորձ, վորը ուրիշների ձեռքին իբրև մի «ճանք կամ հինված կծառայեր» ավելի լավ աշխատություն գրելու համար։ Ինչպես յերևում է բանտից գրած նամակներից, Նալբանդյանը շատ մեծ կարևորություն էր տալիս հատկապես Ներածությանը, վորտեղ պիտի իրենց լուծումն ստանային աշխարհաբարի զարգացման տվյալ ետապի հետ կապված տեսական ու գործնական բազմաթիվ ակտուալ խնդիրներ։ «Ձեռնարկել եմ յեղբայր,—ասում է նա,—գրել մի, ըստ կարելույն, լիակատար քերական, յեթե չասեմ, լիակողմանի Ներածություն»****։ Ներածությունից հետո լիու բազմաթիվ, յեթե չասեմ, լիակողմանի Ներածություն»*****։ Ներածությունից հետո լիու բազմաթիվ, յեթե չասեմ, լիակողմանի

---

* Ն. տ., եջ 276—277։
** Ն. տ., եջ 297։
*** Ն. տ., եջ 296—297։
**** Ն. տ., եջ 275։
***** Ն. տ., էջ 297։

նելու յեր վերլուծական մաս, ապա դրական քերականությունը «... վերլուծական մասը կբռնեն, ինչպես կարծում եմ, 10–15 թերթ, մոտավորապես յես կամենում եմ դուս քերականությունը ջոկել դասագրքերից ամեն տեսակ ավելորդաբանություններից և ուսանողներին [ազատել] անպետք խնդիրներից, որպեսզի տալով նրանց դրական կանոնները, բայց թե ինչու և ինչ հիմունքով—այդ յերեխայի խելքից բարձր եւ բայց յերբ նա կսովորի ու կմեծանա, յերբ նրա հասկացողությունը և քննադատական հայացքը կզարգանա, թող այն ժամանակ կարդա վերլուծական մասը և ներածությունը, որտեղ և կարող և գտնել ամեն տեսակ հարցմունքների պատասխան իմ ուղղության և քերականության կանոնների վերաբերմամբ»*։

Ինչպես տեսնում ենք, Նալբանդյանի այս աշխատությունը տեսական և մանկավարժական նպատակներ ուներ, հենց դրանով էլ պայմանավորում և աշխատության բնույթը։ Ներածության և վերլուծական մասի մեջ նա դուս տեսական հարցեր եր շոշափելու, իսկ մյուս մասերում շարադրելու յեր քերականության սկզբունքներն ու կանոնները։ «Ես բաժանում եմ դրական քերականությունը նաև այն պատճառով,—շարունակում է նույն նամակում,—որ որքան էլ պարզ կլինի, որքան խառնաշփոթությունից ազատ լինի քերականությունը, այնքան էլ հեշտությամբ կյուրացվի։ Չնայած բանասիրական անձուկ պայմաններին, այնուամենայնիվ նա հսկայական աշխատանք եր կատարել ու Ներածությունից դրել եր 15 մամուլ և 1863 թ. ապրիլի 14-ի նամակում նա գրում է. «Թեև յես մինչև այժմ դեռ բայերին չեմ հասել, բայց առաջուց կարող եմ ասել, որ խոնարհությունների թիվը պահաս կլինի, իսկ յեղանակների և ժամանակների թիվը ավելի, ինչ որ չկա հին լեզվի մեջ»**։

60-ական թվականներից ակտուալ եր դառնում այն հարցը, թե ինչ ուղիներով պետք է զարգանա նոր լեզուն, աշխարհաբարը։ Այս առթիվ մի շարք տեսակետներ գոյություն ունեցին։ Վոմանք գտնում էին, որ գրաբարը պետք է պարզեցնել, գերազատություն տալով հատկապես V դարի գրաբարին (մխիթարյաններ)։ Վոմանք մի քայլ առաջ գնալով և չենթարկվելով լեզվի ժողովրդականացման սկզբունքին, գտնում էին, թե գրաբարը պետք է փոխարինել նրան մոտ կանգնած վոևէ բարբառով։ Որինակ, Ախվերդյանը առաջ եր քաշում Տարոնի բարբառը։ Ստ. Նազարյանը գերազատություն տալիս եր Հաշտարխանի բարբառին, միաժամանակ գտնելով, որ նոր լեզուն պետք է զարգանա միշտ մի վոսը գրաբարի վրա ունենալով։ Վոմանք ընդհանում էին բարբառայնության գծով՝ հենվելով հատկապես արարատյան բարբառի, վոմանք Թրխլիսի բարբառի վրա և այլն։ Մինչև 60—62 թվականները շատ հարցերում Նալբանդյանը նույնպես համընթաց եր գնում Նազարյանի հետ, սակայն ինչպես յերևում է բանասում գրած նամակներից ու ներու և հրատարակությունների հետ, սակայն ինչպես յերևում է բանասում գրած նամակներից ու ներ- և հրատարակությունների հետ, նա հետագայում իր տեսակետները վերագնահատման եր յենթարկել և կա ներածությունից, նա հետագայում իր տեսակետները վերագնահատման եր յենթարկել և միանգամայն նոր յեզրահանգումների հասել։

Նա գտնում է, որ յեթե հին լեզուն անպետք է ժողովրդի համար, դրա պատճառը վոչ թե այն է, որ ժողովուրդը այն չի հասկանում, այլ այն, որ հին լեզուն իր սխտեմով, իր վոգով իրըև մտածողության ձև չի համապատասխանում ժողովրդի մտածողությանը, նրա վոգուն։ «... Լեզուն, պատասխանում ժողովրդի մտածողությանը, նրա վոգուն։ «... Լեզուն, որ ուրիշ բան չե յեթե վոչ մարքի հայտաբարը,—գրում է նա,—բնականապես պիտի նմանվոր ուրիշ բան չե յեթե վոչ մարքի հայտաբարը,—գրում է նա,—բնականապես պիտի նմանի մարքին, նորա ձևը ուրիշ բան չե կարող լինել և չպիտի լինի, յեթե վոչ մարքի ձևի ցոլացուի մարքին, նորա ձևը ուրիշ բան չե կարող լինել և չպիտի լինի, յեթե վոչ մարքի ձևի ցոլացումը»։ Նալբանդյանը կանգնած է մատերիալիստական այն տեսակետի վրա, թե մտածողությունը։ Նալբանդյանը կանգնած է մատերիալիստական այն տեսակետի վրա, թե մտածողություն

և քերել, հանել ազգի վրայից»։ Ջարգացնելով նույն միտքը, իր 1863 թ. ապրիլի 12-ի նամակում գրում է. «Լեզու վոր ասում են դա ժամանակի արտադրությունն է, վոր մշակվում է համեմատ ժողովրդի հասկացողության ու կրթական հառաջադիմության։ Լավ է նա, թե վատ, դա այլ խնդիր է, բայց փաստն այն է, վոր նա իրրև ժամանակի լեզու, ունի նույնպիսի կատարյալ և անձեռնմխելի իրավունք, վորպիսին իր ժամանակին ունեցել է նախորդ հին լեզուն»*։

Նալբանդյանի համար նոր լեզուն հին շարունակությունը կամ զարգացումը չէ, այլ մի այնպիսի սիստեմ, վորակ, վորը հիմնովին հակադրվածէ հնին, վորը թեև հին «չատագովյալ» դեղեցկությունը չունեը, բայց միանգամայն հաև հնին, վորը թեև «չատագովյալ» դեղեցկությունը չունեը, բայց միանգամայն հաև հնին, վորը թեև հին

նույն հատկանիշը իմարկե, պիտի ունենա և նրա լեզուն։ Մեր հին լեզվի մեջ կա «ձեռ խմել», իսկ նոր լեզվին նայելով, ծեռը վոչ քե խմում են, այլ ուտում, այն ինչ հին լեզվում ուրիշ վոչ մի տեղ այդպիսի ձև չի կարելի գտնել»*։

Ցեղնելով այդ տեսակետից նա իր խոսքը դավառաբարբառների նշանակության և դերի մասին յեզրափակում է այս կերպ. «Դավառաբարբառներն ընդհանուր լեզվին կարող են ոգնել առանձին ինքնուրույն մշակված բառերով և դարձվածքներով, հատկապես, վորոնք մյուս բարբառների մեջ չկան, կամ յերեն դրանք ավելի գերազանցելի յեն ուրիշներից։ Ընդհանուր պակասությունը, ընդհանուր կյանքը փոխադարձաբար լրացնելը նոր լեզվի մշակման միայն հիմք պիտի ծառայե, իսկ վորևե դավառաբարբառ, վորքան էլ նա լավ լինի, ամբողջապես, առանց վերապահության ընդունած, չի կարող ոտար հողի մեջ արմատներ թողնել, վորովհետև նա վորևե վորոշ դավառի արտադրության ու սեփականության է»**։

Նոր լեզվի մշակումը բոլոր բարբառների հաշվին ինչպես տեսնում ենք, Նալբանդյանի մոտ բարբառների բառական ֆակտուրային մեխանիկական յերեսում չեր նշանակում, որինակ՝ այծի փոխարեն դրել եծ, հոր փոխարեն դրել հեր, մեծավորի փոխարեն դրել մենծավոր և այլն,—այլ՝ ժողովրդական մտածողության համապատասխան ընդհանուր ձևերի ֆիկսացիա։ Այսպիսով նոր լեզուն, վոչ քե իր բառապաշարով պիտի դառնար աշխարհիկ լեզու, այլ իր բնույթով, իր քերականության կազմությամբ, իր շարադասության ու համաձայնության և իր ամբողջ վոգով։

Նալբանդյանին չի շփոթեցնում կռունկականների այն վատաբկումը, թե «նոր լեզուն առաջ և յեկել տաճկական տրամաբանության ազդեցության տակ»։ «Ոտաւանենք,—գրում է նա,—թե նոր լեզվի տրամաբանությունը շատ մոտ և տաճկական լեզվի տրամաբանությանը, նոր լեզվի բաղադրությունը շատ տեղ գրեթե նույնն և տաճիկ լեզվի բաղադրության հետ. բայց ինչ կանես, յերբ բոլոր ազգ այդ տրամաբանությամբ և այդ բաղադրությամբ է խոսում»։

Այս առնչությամբ Նալբանդյանը անում է և մի ծանրակշիռ դիտողություն, վորը կարող է շատ լավ դաս լինել մեր այսօրվա այն լեզվաբաններին, վորոնք գտնում են թե ժամանակակից աշխարհաբարը նույնքան խորթ ու անհասկանալի յե ժողովրդի համար, ինչքան գրաբարը։ «Անտարակույս,—գրում է նա,—ժողովուրդը չպիտի կարողանա ընդհանուր լեզվով խոսել վորովհետև յերբեքանչյուր գավառի ժողովրդի բերանում կինդանի խոսքն ունի յուր քմահաճույքը (բայց վոչ իրավունքը)։ Բայց լեզվի մշակության ամենագլխավոր խնդիրն այն է, վոր նա գառնա ճիշտ հասկանալի բարոյական գործիք, վոր նա մատչելի լինի քիչ թե շատ զարգացած գավառացուն և դրանով հնար լինի ճանապարհ բաց անել գիտության համար, իսկ առանց այդպիսի լեզվի անկարելի յե ակնկալել լուսավորության ու հառաջադիմության»***։

Սակայն ընդհանուր համազգային գրական լեզու ստեղծելու պահանջը դեռ եր առնում արևելահայ և արևմտահայ բարբառների ստեղծած պատնեշին։ Ցեղնելով դրանից Նալբանդյանը առաջադրում է այդ յերկու հիմնական բարբառների հաշտեցման, համաձայնման հարցը։ «Այս շատ զգուշալի և նազելի խնդիրը լուծելու համար» նա պահանջում է առաջ տանել նրանց մշակությունը, վորը սակայն «... պիտի լիներ ավելի ազատ, ավելի բազմակողմանի, ավելի հեռատես, որև որ այս յերկու բարբառների ներքին կապերը մեկմեկու հետ անդադար ավելի կենդանի, ամրացնելով, որև որ այս բարբառքը մեկմեկից բաժանող անդունդները ավելի նեղացնելով, պիտի այս ազգությանը, այն քաղքը, մյուս այնինը խրախուսեր»։

Գիտի կարողանալին այդ յերկու բարբառքը յերբեմեն խառնա միանայ, այդ չենք համարձակվում պնդել, բայց այսքանը անմերժելի յե, վոր շատ և շատ կարող եղին մտածել այսքանը անժխտելի յե, վոր առանց ընդհանուր միության լեզվի ունայն յերազ և նաև այսքանը անժխտելի յե, վոր առանց ընդհանուր միության լեզվի ունայն յերազ և հառաջակաց ազգի առաջ գնալը»։

---

* Ցև. Շահազիզ, «Դ ի վ ա ն Մ ի ք ա յ ե լ Ն ա լ բ ա ն դ յ ա ն ի», եջ 281։

** Ն. ա., եջ 282։

*** Ն. ա., եջ 282—83։

Քերականության ներկա հատվածը նշանակալից է վոչ միայն լեզվաբանության, այլև Նալբանդյանի աշխարհայացքի մատերիալիստական կողմերը ցուցադրելու, նրա քաղաքական հայացքները պարզելու տեսակետից։ Նա Ջերնիշևսկու ուտիլիտարիստական գրքերից քննում է արվեստի, գեղեցկության ու լեզվի հարցերը։ Լեզվի գեղեցկությունը՝ դիտելով հասարակական ոգուի տեսակետից։

Այս հատվածները լինելով Նալբանդյանի լավագույն գործերից մեկը, կարող են ցուցանիշ լինել նաև այն բանի, թե նա իր կյանքի վերջին տարիներում վորքան հաստատուն քայլերով եր առաջ ընթանում դեպի դիալեկտիկական մատերիալիզմը։

* * *

Այս կարևոր աշխատությունից դժբախտաբար մեզ հասել է միայն Ներածության ներկա հատվածները և Քերականության մասից մի քանի անշնան ֆրագմենտներ, իսկ թե պատրաստի ամբողջ գործը ինչ է յեղել, վոչ մի տեղեկություն չունենք։ Նալբանդյանի առաջին կենսագիր Միքայել Տեր-Գրիգորյանը այդ մասին գրում է հետևյալը. «Այս քերականության վիճակը մեզ հայտնի չե. նորա թղթերի մեջ մենք չգտանք այդպիսի բան, թեև բերդից գրած նամակների մեջ կարդում ենք, վոր անխոնջ պարապում եր այդ գործին և արդեն մինչև բայերը հասուցած եր։ Բայց մի նամակի մեջ էլ ասում է. «Ցերեկ չես ինքս չհավանում այս գործին, խմացած յեղեք, վոր վոչ վոք չի տեսնիլ դրան»։ Մի գուցե ինքը հեղինակը չհավանելով իր գրածին վոչնչացուցել է։ Ցերկու նամակի մեջ մասնավորապես խոսում է իր քերականության և աշխարհաբարի վերա, և մեծ բավականությամբ է խոսում»*։

Դժվար է կարծել, թե Նալբանդյանը վոչնչացրել է իր գործը։ Ինչպես տեսանք, Նալբանդյանը գոհ եր իր աշխատությունից և այդ կորուստը տեղի չե ունեցել նրանից անկախ պատճառներով։

Քերականության Ներածության այս հատվածները առաջին անգամ հրատարակել է Ցե. Շահազիզը (տես «Լուսա», 1900 թ., № 1)։ Իսկ 1903 թ., Մ. Նալբանդյանի յերկերի հրատարակիչները այն տեսակել են նրա յերկերի յերկրորդ հատորում, նրան կցելով նաև «Ազատ և լավ կյանք» բոլորովին ինքնուրույն և անկախ հոդվածը։

«Աշխարհաբարի քերականության» այս հատվածները, բացի «Ներածություն» խորագիրը կրող ֆրագմենտից, վորը վերցնում ենք «Ցերկեր»-ի առաջին հատորին կցված ֆաքսիմիլիայից, տպագրության են պատրաստված ձեռագրի հիման վրա, վորը պահպանվում է ՀՍՍՀ Գրական թանգարանում։ Դա 35×24 չափսի մի գրություն է, բաղկացած ընդամենը 7 թերթից։ Առաջին չորս թերթերը՝ 1—8, համարակալված են Նալբանդյանի ձեռքով, հետևյալ յերեքը՝ հրատարակչի։ Առաջին հատվածն սկսում է «Գլուխ վեցերորդ» բառերով, յերկրորդը, վոր կարող է պիտակել վորպես նույն գլխի շարունակություն, վերնագիր չունի. վերջին թերթի վրա գրի առնված իրար հետ անմիջապես չկապվող կտորները գժվար է տեղադրել, թեև անկասկած է, վոր գրանք ևս վերաբերում են Ներածությանը։ Առաջին յերկու հատվածները (մեզ մոտ Բ և Գ ֆրագմենտները) ամենևին հավանականությամբ յերկրորդ գլուխն են. ձեռագիրը մանր է, մաքուր, ջնջումները՝ սակավ։ Լուսանցքներում դիտողություններ չկան։ Հետագայում հրատարակիչ Ցե. Շահազիզը ձեռագրի առաջին չորս թերթը վերնագրել է «Առաջին հատված», շարունակությունը՝ «Ցերկրորդ հատված»։ Ինչ վերաբերում է վերջին թերթին, ապա դա սեպագրություն է։ Մի եջի կեսը գրված է սովորական մանր ձեռագրով, շարունակության վրա կան առանձին ձեռակերպումներ, շեղագիր գրված բառեր և այլն. յերկրորդ եջը գրված է Նալբանդյանի համար խոշոր ձեռագրով և լայն տողերով։ Սրանք մեր Դ և Ե ֆրագմենտներն են և հրապարակվում են առաջին անգամ։

---

* Տես Մ. Նալբանդյան, «Ղազար Փարպեցու Թուղթը», 1868 թ., հր. Մ. Տեր-Գրիգորյանի, եջ XXII։

1. Նալբանդյանը սխալվում է, պետք է լինի 79 թ. մեր թվականությունից առաջ:

2. Նկատի ունի Չերնիշևսկուն (տես նրա „Эстетические отношения искусства к действительности"). Նալբանդյանը չեր կարող հիշատակել անունը, վորովհետև Չերնիշևսկին նույն ժամանակամիջոցում նատած եր բերդում:

3. Արտահայտությունը վերցված է V դարի հայ պատմիչ Ցղիշեյի պատմությունից:

4. Ըստ Մ. Խորենացու հաղորդած առասպելի, Աորևատանի թագուհի Շամիրամը սիրահարվում է իր անօրինակ գեղեցկությամբ ու քաջությամբ հռչակված հայկազն Արայինը, բայց մերժում առանալով՝ պատերազմի է գալիս նրա դեմ: Այդ պատերազմում Արան՝ քաջարար կռվելով սպանվում է: Շամիրամը նրա դիակը դնել է տալիս առիվեների առաջ, վորպեսզի նրանք մեռածի վերքերը լիզելով վերակենդանացնեն նրան. այդ, իհարկե, տեղի չի ունենում, և Շամիրամը ստիպված է լինում թաղել տալ նեխող դին:

5. Բևհոնից կատարած այս մեջբերման աղբյուրը մեզ հայտնի չե:

6. Նալբանդյանը շարադրում է «Կ ո ս ո ւ ն կ»-ի հայտնած մտքերն այդ խնդրի մասին: Այդ ամսագրում կարդում ենք. «Մեր արդյան լեզուն իրավ է, վոր մի խառնիխուռն և այլ և այլ կերպարանք ունի թե խոսելության և թե գրելության, բայց այս կերպարանքն, ըստ մեր կարծյաց, իր հայկեն և վորոշ նշանն է իրա զարգացման ճանապարհությամբ լինելուն այլ և այլ և խառնիխուռն ուղղությամբ և ընթացքով... Ճանկատանու հայոց խոսուն լեզուն զգալի կերպով տարբեր է գրավոր լեզվից, իրանց խոսուն լեզուն ամեն մասամբ ոսմանցվոց լեզվին վրա որինակած է» և այլն («Կ ո ս ո ւ ն կ Հ ա յ ո ց ա շ խ ա ր հ ի ն», 1862, Բ. վեցամսյակ, էջ 661):

7. Այնուհետև, մինչև հատվածի վերջը, գրաքննությունը հանել է «Լ ու մա»-ից (1900, № 1):

8. Տես Առաքելյան ըստ Յովհաննու, Գլ. Ա, 1—4:

9. Տես Ա. Արսվյան, «Վերք Հայաստանի», Թիֆլիս, 1858, էջ 91:

10. Այս նախադասությունը գրաքննական նկատառումներով հանվել է «Լ ու մա»-ից (1900, № 1):

11. Այս նախադասությունը «Լ ու մա»-ում վերախոսված է այսպես. «Վեղուն և ազդության վորպիսության և վիճակի հայտարարը» (1900, № 1):

[ՍԵՆԱՏԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ]

Մի քանի Նալբանդյանի «Սենատական ցուցմունքների» բնագիրը պահպանվում է Центрархив-*ում (1862, № 17 т. IV, fol. 1—44) վոստիկանության գեղարատամենտի ֆոնդում յեղած սենատական գործի մեջ, վոր վերնագրված է „Дело следственной комиссии о лицах обвиняемых в сношении с лондонскими пропагандистами". Մեր տեքստը պատրաստված է բնագրի ֆոտո-պատճենի հիման վրա, վորը պահվում է ՀՍՍՌ Պետական գրական թանգարանում:*

Լոնդոնի պրոպագանդիստների հետ կապ պահպանելու մեղադրանքով Նալբանդյանը հարցաքննության է յենթարկվել 1862 թվի հոկտեմբերի 13, 16, 18, 23, 24 և 25-ին: Բընհարցաքննության ժամանակ Նալբանդյանը պատասխանել նիչ հանձնաժողովի կողմից արված գրավոր հարցերի դիմաց: Նալբանդյանը պատասխանել է գրավոր, ուսերեն և գրեթե առանց ուղղումների, ուստի և քերականական այնպիսի սխալներով, վորոնք խոշորությունն ավելորդ համարեց պահպանել: Ցուցմունքների բնագրի վրա և լուսանցքներում գործը կատարող քննիչները կարմիր կամ կապույտ մատիտով արել են ընդգծումներ և նկատողություններ: Հայերեն թարգմանության լուսանցքներում վերաբերված են թե՛ ընդգծումները և թե՛ հարցական դիտողությունները: Մեկ անգամ ընդգծված տողերը համապատասխանում են կարմիր, յերկու անգամ ընդգծված՝ կապույտ մատիտի ընդգծումներին: Նալբանդյանի սենատական հարցաքննությանը մասնակցում էին սենատական հանձնաժողովի անդամները՝ կ. Ոզարյով, Ա. Դրենյակինը, Պ. Ալեքսով և Պ. Գեդրա:

Միքայել Նալբանդյանը հնդկահայ կտակների հարցով Գոլսի և Ցեվրոպայի վրայով Հնդկաստան ուղևորվեց վորպես Նոր-Նախիջևան քաղաքի պատգամավոր 1860 թ. և յերկու տարի Հնդկաստանում ու Ցեվրոպայում կատարած ճամբորդություններից հետո վերադարձավ Ռուսաստան 1862 թ. մայիսին։

Վերադառնալով Պետերբուրգ, Նալբանդյանը մոտ մեկ ամիս զբաղվում է Հայաստանի քարտեզի հրատարակության հարցով, ապա Մոսկվայի վրայով մեկնում է Նախիջևան, հնդկական ժառանգությունների հաշվեհարդարը ներկայացնելու համար և տեղ է հասնում հուլիսի 10-ին։

Միքայել Նալբանդյանի ձերբակալության հրամանը ստորագրված է 1862 թ. հուլիսի 7-ին, այսինքն Ն. Գ. Չերնիշևսկու և Ն. Ա. Սերնո-Սոլովևիչի ձերբակալման հրամանի հետ միաժամանակ, և վորովհետև Նալբանդյանն արդեն մեկնել եր Պետերբուրգից, ուստի հրամանը անմիջապես հեռագրով հայտնվում է Ցեկատերինոսլավի նահանգապետին։ Հուլիսի 7-ին Ցեկատերինոսլավից գեներալ Ռինդինը Պետերբուրգի ժանդարմական շտաբի պետ գեներալ Պոտապովի անունով ուղարկված № 352 հեռագրով հայտնում է հրամանի ստացման մասին։ Սակայն Նալբանդյանը ձերբակալվում է միայն հուլիսի 14-ին և սեփական կառքով ուղարկվում Պետերբուրգ։ 1862 թ. հուլիսի 27-ին Պետրոպավլովսկ բերդի կոմենդանտ Սորոկինը Թագավորին ուղարկած № 109 զեկուցագրում հայտնում է, վոր «Նախիջևանի բնակիչ Միխայիլ Նալբանդովը այսոր ընդունված է և բանտարկված Ալեքսեևյան ռավելինի 8-րդ կամերայում»։ Զեկուցագրի լուսանցքում գրված է. «Թագավոր կայսրը շնորհ արեց կարգալ», ... 29-ը հուլիսի։

Հուլիսի 7-ին, նույն գործով ձերբակալվել էին նաև ուրիշ նշանավոր դեմոկրատներ՝ Ն. Ա. Սերնո-Սոլովևիչը և Ն. Գ. Չերնիշևսկին (վոր առանձին դատվեց), ապա ձերբակալվեցին գը-Տրավերսեն, Ա. Ի. Նիչիպորենկոն, Ն. Ի. Վորոնովը, Գ. Գ. Լյալինը, Ն. Ա. Պոտեխինը և այլ անձինք, ընդամենը 32 հոգի. «32»-ի անունով էլ կոչվում է քաղաքական այդ հայտնի դատավարությունը։ Սերնո-Սոլովևիչի, Նալբանդյանի և մյուսների ձերբակալության համար հիմք եր ծառայում Լոնդոնից Պետերբուրգ ուղևորված և ռուսական սահմանագլխին ձերբակալված Գ. Ա. Վեսոշնիկովի մոտ խուզարկության ժամանակ հայտաբերված Լոնդոնի պրոպագանդիստների գրությունները, նամակները, հասցեները և այլ նյութերը։ Ակնհայտ է, վոր յերբորդ բաժանմունքը ուշի ուշով հետևում եր «Колоколъ»-ի շուրջը համախմբված «Լոնդոնի պրոպագանդիստների» գործունեությանը և կանոնավոր լինֆորմացիա ուներ նրանց հետ կապված մարդկանց մասին։ Խոսելով Վեսոշնիկովի ձերբակալության հանգամանքների մասին, Մ. Լեմկեն հիշատակում է, վոր յերբորդ բաժանմունքի արտասահմանյան գործակալը հաղորդել է Գերցենի տանը յեղած հավաքույթին մասնակցող անձնավորությունների լրիվ ցուցակը։

«Հունիսի 24-ին (հուլիսի 6-ին), Վեսոշնիկովի Լոնդոնից մեկնելու նախորյակին, Գերցենի մոտ յեղած յերեկույթին ներկա եյին Ոգարյովը, Բակունինը, Վեսոշնիկովը, Կելսիևը, Պերեսցը, Ստասովը, Ալբերտինին, Կովալևսկին, Սուզդալցև յերկու յեղբայրները, Չերնեցկին, Տխորժևսկին, գրաֆ Բաևերի Բրանիցկին, Պլատոնին յերկու յեղբայրները (Ոգարյովի ազգականները), յերկու լեհ և յերեք ռուս»։

Վեսոշնիկովը բավական յերկար խոսակցում եր Բակունինի հետ մյուս սենյակում։ Գերցենը կարդում եր հրդեհների և «Молодая Россия» պրոկլամացիայի մասին հոդվածը»։

Անհնազանդ, ի թիվս բազմաթիվ հյուրերի վերոհիշյալ հավաքույթին ներկա յե յեղել և III բաժանմունքի գործակալը և հեռագրով իմաց տվել վոստիկանական դեպարտամենտին Վեսոշնիկովի վերադարձի մասին։ 1862 թ. հուլիսի 5-ին Վեսոշնիկովը III բաժանմունքին կից բանտի կամերայում յենթարկվեց առաջին հարցաքննության, Սերնո-Սոլովևիչի, Նալբանդյանի և մյուսների հասցեներով ուղարկված նամակները, ինչպես հիշատակում է Գերցենը, հանձնվել եյին Վեսոշնիկովին հավաքույթի ժամանակ։

«Ասում են, վոր հյուրերից մեկն իսկույն հեռագրեց Պետերբուրգ։

Վեսոշնիկովին բռնեցին շոգենավի վրա. Ինացածը հայտնի յե»

---

* А. И. Герцен, „Былое и думы", т. III, стр. 115.

Նալբանդյանի ձերբակալության կապակցությամբ 1863 թվի սեպտեմբերի 1-ի նամակում Գերցենը զատապարտում է Բակունինին, որի անզգուշության պատճառով Նալբանդյանը։ «Կյանքից կտրված,—գրում է Գերցենը,—չբիւրոկրատական տարիքից եկած գերմանական իդեալիզմի գիրկը, որի ժամանակ dem Schema nach* վերածել ռեալիստական հայացքի, չճանաչելով Ռուսաստանը վոչ բանից առաջ, վոչ էլ Սիբիրից հետո, բայց տոգորված լինելով վսեմ գործունեության մեծ ու կրքոտ ձգտումներով՝ մինչև 50 տարեկան ապրելիր ուրվականների, ուսանողական սրատարացության, վեհ ձգտումների ու մանր քերբերությունների մեջ։ Վոչ թե ինքը աշխատելիր պրուսական արքայի համար, այլ սաքսոնական արքան ու Նիկոլայը՝ քեզ համար։ Տասնամյա բանտարկությունից հետո՝ դու չերևան չեկար վորպես նույն քեռերեվիկը, du vague** վոզջ անորոշությամբ, շաղակրատ (Մ.-ն նորից հանդցավոր է, վոր ասել է քեզ,—թեև մարդ չկա, վոր այս չմտնա ու չվախենա), ֆիլոսոփայական հարցերում վոչ բարեխիղճ, սուսիկ-փուսիկ, բայց տոգորված համառ եղկելությունքյան վորոշ տարրերով և հեղափոխական գործունեության քորով, գործունեություն, վորին պակասում է հեղափոխությունը։ Շաղակրատությամբ դու կործանեցիր վոչ միայն Նալբանդյանին, այլև, որինակ, Վորոնովին, նրա մասին արածդ ավելորդ նշումը Նալբանդովին գրած նամակումդ՝ Կովկասից նրան շպրտից բերդ, այնտեղից էլ աքսոր։ Ձվ.-ի մեկնելուց հետո չես մի գաղտնագիր նամակ առացա, վորպես չմտնի ուսական կոնսպիրացիայի քշնամի՝ մի կտոր գրի գա, բայց Տերժ.-ն ասաց, վորն ինքն ունի քո գիրքը՝ բանալիով միասին։ Նա բերեց, իսկ չես ու Ոգ.-ը սարսափեցինք՝ մի գրքի մեջ գրված են Ռուսաստանում ապրող բոլոր կարգին մարդկանց հասցեները՝ նշումներով ու մանրամասնություններով...***։

Բակունինի մասին Գերցենը կամենում էր նախազգուշացնել Նալբանդյանին տակավին վերջնիս արտասահմանում չեզած ժամանակ 1862 թվի ապրիլի 21-ին Տուրգենևին ուղղած նամակում Գերցենը գրում է. «Նալբանդովը շատ ու շատ ազնիվ և լավ մարդ է Մի թուլ տուր, վոր նա բերի այստեղ Բակունինի կնոջը... առիթը նամակը հանձնելը Նալբանդովին, ինքն նա չի մեկնել»։

Ցերբարդ բաժանմունքի ուշադրությունից չէր կարող վրիպել «Պատերբուրգի համալսարանի կանդիդատ Միխայիլ Նալբանդովը»։ Նալբանդյանի գործունեության մասին, տակավին նրա արտասահման մեկնելուց առաջ, Ներքին գործոց մինիստրությունը դանոսատներ ուներ հայ ռեակցիոն շրջաններից։ Գաբրիել Այվազովսկու այդպիսի մի դանոսը նախատի ուներ հրապարակախոսը, յերբ «Ձերկու տղա»-ի ծանոթության մեջ իրեն հատուկ սարկաղմով գրում էր հետևյալ տողերը. «Գ. Այվազովսքին առաջարկում էր քաջախոյլ միևնույնին, Հյուսիսային վնասակար որագիրը դադարեցնել և մեզ ձգել սահմիկ նիսաբին, Հյուսիսային վնասակար որագիրը դադարեցնել և մեզ ձգել սահմիկ պատժի տակ, որևէքի բովանդակ խստությամբ Գուցե Գ. Այվազովսքին հայրական հոգատարության

քաստ եր վոչ միայն հրանիվ և գրչով, այլև զենքով և արյունով» պաշտպանել իր քարոզած ազատությունը։

Քննիչ հանձնաժողովի արամադրության տակ եյին Միքայել Նալբանդյանին հասցեագրված Մ. Ա. Բակունինի նամակները։ Բակունինի մայիս 6 թվակիր նամակին կցված եր մի գաղտնի հրահանգ բառարան՝ Լոնդոնի պրոպագանդիստների հետ գրագրություն պահպանելու համար, Գերցենի, Ոգարյովի և Բակունինի նկարները, „Русским, польским и всем славянским друзьям Бакунина «կոչի առաջին մասը, Զոլսի բարեկամներից՝ Սերովբե Թագվորյանի նամակը, Նալբանդյանի ձեռքով արտագրված մի շիքր և հայերեն ծածկագիրը հրահանգ բառարան, «Ցերկրագործությունը վարպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը, Նալբանդյանի ծոցատետրի նկատողություններով համեմատությամբ և այլն։ Ծանոթանալով այդ նյութերին, քննիչ հանձնաժողովին դժվար չեր կռահել, վոր Նալբանդյանը վոչ միայն յերկրորդական դեր չեր խաղում դեմոկրատական շարժման մեջ, այլև վայելում և Լոնդոնի պրոպագանդիստների կատարյալ վստահությունը։ Բակունինի նամակները, վորոնց մեջ հիշատակված եյին Գերցենի, Ոգարյովի, Տխորժևսկու, Զևրնեցկու և այլոց լինելիք կյանքի մանրամասնությունները, կասկածի տեղիք չեն թողնում, վոր Նալբանդյանը վոչ միայն ծանոթ եր այդ շրջանին, այլև, ինչպես վկայում և իր հիշողությունների մեջ Տուչկովա-Ոգարյովան, Լոնդոնում յեղած ծանոթակ մասնակցում եր Գերցենի տան հավաքույթներին։

Պարզելով Նալբանդյանի կապերը Գերցենի շրջապատի հետ, քննիչ հանձնաժողովը աշխատում և հայտարերել նրա քաղաքական կշիռն ու դերը, կոնկրետ գործունեությունն ու մասնակցությունը դեմոկրատական շարժմանը։ Հանձնաժողովին զբաղեցնող հարցի պարզաբանման կարևոր հիմքերը Նալբանդյանի «Ցերկու տող» և «Ցերկրագործություն» աշխատություններն եյին։ «Ցերկու տող»-ում Նալբանդյանը մեղադրական աճոռնին եր նամեցնում հայկական ռեակցիան, դիտելով այն վորպես ռուսական միապետության գործակալություն և հռչակում եր համարդկային ազատությունն ու իրավունքների հավասարություն»։ Իսկ «Ցերկրագործություն» գրված եր ուղղակի պրոպագանդիստական նպատակներով։ Հայ դեմոկրատական մաքի քաղաքական այդ մանիֆեստը ռուսական դեմոկրատական շարժման քաղաքական-գաղափարական ուղղության պաշտպանություն եր։ Այդ աշխատության մեջ Նալբանդյանը ոգտագործում և «Колоколь»-ում տպագրված՝ Տվերի լիբերալ ազնվականության դիմումն ու այլ նյութեր։ Նա համամիտ եր Զևրնիշևսկու քաղաքական տակտիկային և առաջ եր քաշում կացնի վճռահատության գաղափարը (դյուղացիական հեղափոխության), վորպես ճորտատիրական կարգերը վերացնելու և ագրարային հարցը լուծելու ամենաուղիղակալ միջոցը։

Անկասկած և, վոր Նալբանդյանը համամիտ չեր Բակունինի քաղաքական հայացքներին։ Վերջինս 1862 թվի կեսերին հանդես գալով „Молодая Россия“ կազմակերպության կոչի վերջին մասին իր „Романов, Пугачев или Пестель“ հոդվածում գրում եր. «Արյունոտ հեղափոխությունները, շնորհիվ մարդկային ախմարության, յերբեմն դառնում են անհրաժեշտություն, բայց նրանք չարիք են այնուամենայնիվ, մեծ չարիք և մեծ դժբախտություն, վոչ միայն իրենց զոհերի համար, այլև իրենց նպատակների անապական և լիակատար իրագործման տեսակետից։ Մենք այդ գիտենք ֆրանսիական հեղափոխության որինակից։ Ուստի և մեր վերաբերմունքը դեպի Ռոմանովը պարզ և միանգամայն։ Մենք վոչ նրա քշնամիներն ենք, վոչ էլ նրա բարեկամները։ Մենք ռուս ժողովրդական, սլավոնական գործի բարեկամներն ենք։ Եթե ցարը գլուխ կանգնի սրան, մենք կգնանք նրա հետևից։ Բայց յեթե դեմ գնա դրան, մենք կգնանք նրա դեմ, մենք կգառնանք նրա քշնամիները... Եթե ցարը դավաճանի Ռուսաստանին, Ռուսաստանը կսուզվի արյունոտ քշվառության մեջ։ Ինչ կլինի արդյոք, ինչ ձև կընդունի շարժումը, ով է, վոր գլուխ կկանգնի նրան։ Ինքնակոչ վորևե ցար, Պուգաչո՞ր, թե մի նոր Պեստել-դիկտատո՞ր։ Կանխատեսելը դժվար է հիմա։ Եթե Պուգաչո՞ր չելնե և լինելու այդ, ապա ասված, վոր ունենա նա Պեստելի քաղաքական հանճարը, քանի վոր առանց դրան նա արյունահեղ կանե Ռուսաստանը, և թեև նաև Ռուսաստանի բանվանդակ ապագան։ Եթե Պեստելն է լինելու այդ, թող վոր լինի նա ժողովրդական մի

մարդ, ինչպիսին որ Պուգաչևն եր, քանի որ այլ կերպ նրան չի հանդուրժի ժողովուրդը»*։

«Ներկրագործության» հեղինակի համար միևնույն չեր, թե ում հետևից կգնան հեղափոխականները՝ Ռոմանովի, Պուգաչևի, թե Պետերի։ Նալբանդյանի համար ամենից կարևորն այն և, թե ինչպես կլինի «սկզբնական կառավարությունը», որ վճռական նշանակություն պիտի ունենար հողի «հասարակական սկզբունքը» իրագործելու հարցում։ Այլ կերպ գործն ավելի դժվար կերպարանք պիտի առներ, նույնիսկ ավելի, քան «նոր ի նորո» ձևը բերելը Նալբանդյանը դնում է հեղափոխական կառավարության խնդիրը։ Նրա գլխավորած ազգային ազատագրական շարժումը պիտի արմատապես լուծեր ագրարային հարցը, մի բան, որ նա սպասում եր ռուսական գյուղացիական հեղափոխությունից։ «Այսօր, ինքն մի ժողովուրդ ստրուկ է,—գրում է Նալբանդյանը,—ինքն նա հող չունի և ինքն հաջողի նորան հող ձևք բերել, իրավունքը և ժամանակը պահանջում են անորինել այնպես, ինչպես ցույց է տալիս ներկա հարկը, ինչպես ցույց է տալիս բանակությունը, և ոչ այնպես, ինչպես, հին օրերից մնացած, ավանդական կառավարությունքը անորինել են մինչև այժմ, այսինքն, տերության կամ աղնվականության սեպհականելով հողը և հասարակ ժողովուրդը զրկելով իրավունքից։ Վերջին դիպվածում ազգությունը ազատություն չի ժողովրդին. նա փոխում է միայն նորա լուծը, մենք դրականապես ջնջամի ենք այդպիսի ազգության, ինչպես ջնջամի ենք բռնակալության, ուր կամ ինչ կերպով որ հայտնվի»։

Սենատական հանձնաժողովը ձևքի տակ ուներ «Ներկրագործության» եյական մասերը՝ չինովնիկի Սակարիանովի թարգմանությամբ և իր տված դրական հարցերի մեջ որակում է այն, որպես «վրդովեցուցիչ մտքով գրված դիտողություններ... գոյության ունեցող կառավարությունների և իմիջի այլոց Ռուսաստանի մասին»։

Քննիչ հանձնաժողովին անհայտ մնաց, որ Սիմեոն Մանիկյան անվան տակ թագնված է նույն ինքը՝ Միքայել Նալբանդյանը։ Ահա թե ինչու Նալբանդյանն իր ցուցմունքների մեջ միանգամայն միամիտ ձևանալով գրում եր, որ այդ «գիրքը բակունինից չի խնդրել»։ Այսպիսով «Ներկրագործությունը», որ սենատական հանձնաժողովի ձևքում մեղադրական ամենակարևոր փաստաթուղթը պիտի հանդիսանար, դիտվում եր որպես Նալբանդյանին ուղարկված հեղափոխական մի գրքույկ։

«Ներկրագործության» եջերում արծարծված եյին „Земля и воля“ հեղափոխական կազմակերպության ծրագրային հարցերը։

Խոսելով այդ կազմակերպության մասին, ռուս պատմաբան Մ. Լեմկին անում է չափազանց կարևոր մի յենթադրություն։ Ինչպես հայտնի յե, „Земля и воля“ կազմակերպության ծրագրի նախագիծը հանդիսացավ Ոգարյովի 1861 թվին գրած „Что нужно народу?“ հռչակավոր կոչը, որ տպագրվեց „Колокол“-ի 1861 թ. հուլիսի № 102-ում։ Լեմկեյի կարծիքով այդ կոչը, ավելի շուտ ծրագրի նախագիծը, գրված է Ն. Ա. Սերնո-Սոլովևիչի, Ն. Ն. Ոգրուչևի, Ա. Ա. Սլեպցովի, Մ. Լ. Նալբանդյանի և այլոց մասնակցությամբ ու խորհրդով։ Լեմկեյի այդ յենթադրությունն ապացուցվում է այն հետաքրքրական փաստով, որ «Ներկրագործության» հեղինակը ցիտում է կոչի հետևյալ բնորոշ տողերը՝ «Ազգ, դինվոր տուր, ազգ, դրամ տուր, ազգ, կյանքդ տուր քո հայրենիքը պաշտպանելու և նորա պատիվը տեղը բերելու կամ առավել ևս փառավորելու համար»։ Այնուհետև Նալբանդյանը բերում է նույն հատվածի շարունակությունը՝ ազատ թարգմանությամբ։

Կոչի հիմնական լոզունգը—հող և ազատություն—Նալբանդյանն առաջադրում է որպես գյուղացիական և ազգային ազատագրական շարժման մարտական նշանաբան։

„Земля и воля“ գաղտնի կազմակերպության հիմնադրությունն արդեն մտահղացել եյին Ոգարյովը ու Սերնո-Սոլովևիչը, հիշատակում է Լեմկեն։ Ցեվ խոսպան, շատ չանցած, „Колокол“-ի 1861 թ. համարներում Ոգարյովը առաջ եր քաշում գաղտնի ընկերության անհրաժեշտությունը, որպես ազատագրական պայքարի հիմնական նախապայ-

---

* М. Бакунин, „Избранные сочинения“, 1920, III, եջ 89։

ման։ «Դարավոր սարկույթյան տակ դանվող յերկրի համար այդ լուծը տապալելու այլ միջոցներ չկան, յեթե վոչ գաղտնի մխություններըը», գրում եր „Колоколъ“-ը, պատասխանելով „Великорусс“-ին։

Նալբանդյանի մասնակցությունը „Земля и воля“ կազմակերպության հիմնադրության գործում ապացուցում է նաև 1862 թ. Ոգարյովի և Գերցենի նամակը Սերնո-Սոլովևիչին։

Ոգարյովը նկատի ուներ անշուշտ „Земля и воля“ կազմակերպության գործունեությունը, յերբ առաջարկում եր Սերնո-Սոլովևիչին «բարեկամներ փնտռել գավառներում»։ «Դուք միայն գավառներում ժողովուրդ կգտնեք, և վոչ քաղքենի կառապաններ, վորոնց ամենից ավելի քիչ է հասկանալի արմատական նպատակը—հողի համաժողովրդականացումը»*։

Կազմակերպության գործունեության հետ է կապված այն արտակարգ վստահությունը, վոր տածում եր Ոգարյովը Նալբանդյանի նկատմամբ։ «Գինդ գրկում եմ Ձեզ յերկուսիդ ի սեր աստծո, ավելի շատ լուրեր։

N-ը [Նալբանդյանը] վոսկե հոգի ունի և նվիրված է անշահախնդիր կերպով, նվիրված է միամտորեն, սրբությանն հասնող չափով»,—գրում է Ոգարյովը։ Նույն նամակում Գերցենը «գերազնվագույն մարդ» և անվանում «արհեստյան բաբեկամին»**։

Անկասկած, Ոգարյովը նկատի ուներ „Земля и воля“ կազմակերպության կապակցությամբ Նալբանդյանին արված քաղաքական հանձնարարությունները***։ Այդ հարցը բավականաչափ պարզաբանում է Նալբանդյանի թղթերի մեջ հայտաբերված հայերեն ծածկագիրը բառարանը։ Դա ըստ երևության հեղափոխական գործունեության մի լայն ծրագիրը է, ուր շոշափված են քաղաքական կարևորագույն հարցեր, ինչպես՝ «գործքը կենսագործացնել և շատացնել տեղի մը մեջ», «Գոնտոսի ծովեզերքը տեղ ունենալ», «քոմիթեն ունենալ տեղի մը մեջ», «լեհականաց հետ դաշն դնել և խոսակցել», «Կիլիկիո մեջ գաղթականություն հաստատել», «լրագիր մը հաստատել տեղի մը մեջ», «ազգաբնակությունը զարթեցնել տեղի մեջ», «ապստամբություն» և այլն։

Հայերեն ծածկագրում արձարծված հարցերը վորոշակիորեն կապված են յեվրոպական դեմոկրատական շարժման գործիչների և հատկապես Լոնդոնի պրոլետարականների գործունեության հետ։ Ահա թե ինչու ծածկագրում մատնանշված են «Գերցեն—Լոնդոնի բարեկամ», «Գարիպալդի—Լիվորնոյի բարեկամ»։ Ապա գրելիքի բաժնում հիշատակվում են «Գարոն Մարիերոս—Մատծինի», «պարոն Ալմինքար—Գաբունինո», «ժամացույց—սվինավոր հրացան», «խորհուրդները—Քնդանոթ», «պարանքի գինը բարձրացնել—դրամ հավաքել», «ալյուր—վառոդ», «ցորյան—ռումբ»։

Նալբանդյանի ծածկագիրը հրահանգի վրա լույս է սփռում „Земля и воля“ գաղտնի կազմակերպության ստեղծման կապակցությամբ գրած Ոգարյովի հոդվածը։ «Կազմակերպեցեք գաղտնի ընկերություններ», «առևտրական և արդյունաբերական ընկերություններ», «յեղբայրություններ»,—գրում է Ոգարյովը։

Մեր կարծիքով, հայերեն ծածկագրում հիշատակված «քոմիթեն» և Ս. Թագվորյանի նամակում մատնանշված «Հայկ կամ Որիոն յեղբայրությունը» „Земля и воля“-ի ստիպի կազմակերպություններ եյին և ստիպի կապվելին «Լոնդոնի մայր լոժի» հետ։ Այդ անվան տակ Ս. Թագվորյանը հավանորեն նկատի ուներ Լոնդոնի կազմակերպչական կենտրոնը Նալբանդյանը Գոլսի բարեկամների միջոցով Սև ծովի կովկասյան ափերով ստիպի փոխադրեր Լոնդոնի տպարանի հրատարակություններն ու «Колоколъ»-ը և հավանորեն Լոնդոնի պրոլետարականական կենտրոնի և „Земля и воля“-ի կովկասյան լիազորն եր։ Ծածկագրում հիշատակված «Գոնտոսի ծովեզերքի տեղը» կամ հենակետը ստիպի ծառայեր այդ քաղաքական նպատակներին։

---

* М. Лемке, „Очерки освободительного движения шестидесятых годовъ“, 1908 г., եջ 21։

** Ն. տ., եջ 22։

*** „Земля и воля“-ի կենտրոնական կոմիտեն ստեղծվեց 1862 թ. աշնանը, յերբ Սերնո-Սոլովևիչը և Նալբանդյանը բանտում եյին։

Անկասկած Նալբանդյանի և նրա քաղաքական բարեկամների նախապատրաստությունները առնչվում էին վերահաս ռուսական գյուղացիական ապստամբության հետ, մի բան, որը վորոշակի ակնարկվում է «Ե ր կ ր պ ո ր ծ ո ւ թ յ ա ն» եզերում, «Յեթե վաղորոք թելք դործ չդրվի, սարուկը յուր հողով հանդերձ կատարելապես ազատ չքարոզվի, և այս կերպով այն հնձիւը չլուծվի, սարուկը կացինով կվճռե գործը»։

Ժամանակը շատ մոտեցած է և կարծվածից ավելի մոտեցած...»։

Հավանորեն «Ե ր կ ր պ ո ր ծ ո ւ թ յ ա ն հեղինակին հայտնի էին „Великорусс“-ի գաղտնի թռուցիկները և նա նկատի ուներ այդ թռուցիկներից մեկի հետևյալ տողերը. «Յեթե կրթված դասակարդերը խաղաղ ոպողիցիա չեն կազմի, վոր կհարկադրի կառավարությանն մինչև 1863 թ. վերացնել ապստամբության պատճառները, ժողովուրդն անսպասելիորեն կապստամբի 1863 թ. ամռանը»։

Քննիչ հանձնաժողովի ուշադրությունից վրիպեց այն հանգամանքը, վոր հայերեն քառարանի շուշափած հարցերը կապված էին Բակունինի նամակների բովանդակության հետ և նույնիսկ հայերեն ծածկագրի առանձին բառերը գործածվում էին Բակունինի՝ Նալբանդյանին ուղղած նամակում. Հունիսի 5-ի թվակիր նամակում Բակունինը գրում է. «ցորենը մի քիչ բարձրացել է», իսկ հայերեն բառարանում ցորենը նշանակում է ռումբ։ Միանգամայն հնարավոր է, վոր Լոնդոնի պրոպագանդիստները դիտեին հայերեն դաղտնագիր բառարանի մասին, վորովհետև Բակունինը Նալբանդյանի հետ վարած դրագրության մեջ ոգտագործում է նաև Սերոբե Թագվորյանի նամակի բանալին, այսինքն Նալբանդյանի ձեռքով արտագրված հայերեն ծածկագիրը Սերոբե Թագվորյանի նամակից յերևում է, վոր ծածկագրության հիշատակված քաղաքական կազմակերպչական հարցերի շուրջը լայն աշխատանք էր սկսված Տահկաստանում, և Թագվորյանն ափսոսում է, վոր գործի համար պակասում են Նալբանդյանի տեմպերամենտն ունեցող մարդիկ։ Թագվորյանն ստացել էր Բյաթիբյանի միջոցով ուղարկված ծածկագրերն ու հրահանգները, վորոնք հայտնի էին Լոնդոնի պրոպագանդիստներին, և կարգադրություններ էր արել Տրապիզոնի և Սև ծովի ափերում հետագա հնարավոր է, վոր Լոնդոնի պրոպագանդիստները դիտեին հայերեն դաղտնագիր բառարանի մասին, վորովհետև Բակունինը Նալբանդյանի հետ վարած դրագրության մեջ ոգտագործում է նաև Սերոբե Թագվորյանի նամակի բանալին, այսինքն Նալբանդյանի ձեռքով արտագրված հայերեն ծածկագիրը։ Սերոբե Թագվորյանի նամակից յերևում է, վոր ծածկագրության հիշատակված քաղաքական կազմակերպչական հարցերի շուրջը լայն աշխատանք էր սկսված Տահկաստանում, և Թագվորյանն ափսոսում է, վոր գործի համար պակասում են Նալբանդյանի տեմպերամենտն ունեցող մարդիկ։ Թագվորյանն ստացել էր Բյաթիբյանի միջոցով ուղարկված ծածկագրերն ու հրահանգները, վորոնք հայտնի էին Լոնդոնի պրոպագանդիստներին, և կարգադրություններ էր արել Տրապիզոնի և Սև ծովի ափերում հետագա նկատի ունենալու մասին, կատարելով, այդպիսով, Բակունինի մայիսի 10-ի թվակիր նամակում արծարծված խնդիրը։ Թագվորյանի նամակը վաստատեն տեղեկացնում է ծածկագրի հրահանգի կապակցությամբ ծավալված աշխատանքի անբավարար ընթացքը։ Հայտնի է, վոր Լոնդոնի պրոպագանդիստների հանձնարարությամբ, Նալբանդյանի միջոցով, ձեռք էր բերված նաև կելսիևի համար տաճկական անցագիր։

Կատարյալ մի լեգենդ հյուսեց Նալբանդյանը հայերեն ծածկագրի մասին, վորին չափազանց կարևոր նշանակություն էր տալիս Հանձնաժողովը։ Նա հայերեն ծածկագիրը բառարանը վերագրում էր հայ ինքնակոչ իշխան Լևոն Լուսինյանին, վոր իր գործակալների միջոցով հայտարարություններ էր տպում և ուղարկում Ռուսաստանի և արևմտա-յեվրոպական պետությունների պետմինիստրներին։ Նալբանդյանը հայտնում է, վոր Լուսինյանը պահանջում էր, վոր ավանտյուրիստի մասին նրա կարծիքով Լոնդոնը զդուշացրել է Պոլսի բարեկամներին այդ ավանտյուրիստի մասին։ Նա ասել էր Սեբաստիայի անգլիական կառավարության գործակալն էր։ Նալբանդյանի նախատակն էր Սեբաստիայի Հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել ավանտյուրիստի գործունեության վրա, և որքանով վրա, և շեղել բուն խնդրից։ Լուսինյանը չէր կարող զբաղեցնել Հանձնաժողովին, քանի վոր ռուսական արտաքին գործոց մինիստրության մեջ 222 հոլից բաղկացած մի գործ կար այդ անձնավորության մասին։

Հայերեն ծածկագիրը բառարանը, վորն ոգտագործել էր Թագվորյանը, իրականում կապ չուներ Լուսինյանի հետ, վորովհետև «իշխանը» վոչ մի առնչություն չուներ բառարանում հիշատակվող ռուսական շարժման և Լոնդոնի պրոպագանդիստների հետ Սեբաստիայի հանձնաժողովը չկարողացավ պարզել ծածկագրերի բովանդակությունը, վոր լայա է սփռում Նալբանդյանի քաղաքական կապերի ու գործունեության վրա, և որպեսզի առնչվում է Սիմեոն Մանիկյանի «Ե ր կ ր պ ո ր ծ ո ւ թ յ ա ն» հետ։ Թագվորյանի նամակից յերևում է, վոր Նալբանդյանը հանձնարարել է նրան հանգանակություն կատարել Սեբաստիայի Հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել ավանտյուրիստի գործունեության վրա, և շեղել բուն խնդրից։ Լուսինյանը չէր կարող զբաղեցնել Հանձնաժողովին, քանի վոր ռուսական արտաքին գործոց մինիստրության մեջ 222 հոլից բաղկացած մի գործ կար այդ անձնավորության մասին։

նի պոլսահայերի համար իտալական հպատակություն ձեռք բերելու կապակցությամբ ինքը, Ռաչատրյանի միջոցով, դիմել է Մահձինին։ Հպատակության հարցն ինքնին մտացածին էր։ Թագվորյանն իր նամակում այլ անցագրերի մասին է խոսում։ Այդ ժամանակ Իտալիան մի այնպիսի յեվրոպական պետություն չէր, վորի քաղաքական հովանավորությունը կարող էր շահագրգռել պոլսահայերին։ Ինդիրն անշուշտ վերաբերում էր քաղաքական այն հույսերին, վոր Նալբանդյանը դրել էր իտալական շարժման վրա։

Նալբանդյանը կտրականապես ժխտում էր իրեն վերագրվող քաղաքական կազմակերպական կապերը Լոնդոնի պրոպագանդիստների հետ։ Հենվելով Ցեվրոպայում կատարած ճանապարհորդության մի քանի յերկրորդական շարժառիթների վրա, դատավարության ամբողջ ընթացքում նա մեծագույն վարպետությամբ հյուսել էր Հնդկաստանում ու Ցեվրոպայում ունեցած իր գործունեության մասին մի անմեղ պատմություն և Հանձնաժողովի ուշադրությունը շարունակ գարձնում էր դեպի այդ պատմությունը։ Իր ծանոթությունը Գերցենի հետ նա ներկայացնում էր վորպես պատահական յերևույթ։ Ըստ Նալբանդյանի ցուցմունքների, նա Գերցենին ծանոթացել է 1862 թ., Հնդկաստանից վերադարձած Նալուց հետո, Լոնդոնում, ուր «հարկադրված էր» սպասել հնդկահայ հարուստ վաճառական Աբգարից ստացվելիք գումարների մնացորդին և ապա ուղևորվել է Փարիզ՝ իտալական հինգ տոկոսանի արժեթղթեր գնելու։ Գերցենին, Ոգարյովին ու Բակունինին ծանոթացել է իբրև թե պատահաբար, Գերցենի վորդու միջոցով։

Իրականում Նալբանդյանը Լոնդոն է գնացել հատկապես Գերցենին և նրա շրջապատին ծանոթանալու նպատակով։ Մեր կարծիքով, այդ ծանոթությունն սկսվում է վոչ թե 1862 թ., այլ 1861 թվից։ Քաղաքական կապերի արտահայտությունը, ինչպես մենք ցույց տվինք վերևում, պարզորոշ կերպով յերևում է նաև «Ձերկու տող»-ից։ Սակայն մեր ասածներն ապացուցվում են նաև այլ փաստերով։ Տուչկովա-Ոգարյովան իր «Հիշողությունների»-ի մեջ վկայում է, վոր հայ հեղափոխականի մասին իրենք վաղորոք լսել էին նրա ընկեր Ստանիսլավից։ Նալբանդյանը Լոնդոն էր յեկել հատկապես Գերցենի և Ոգարյովի հետ ծանոթանալու և ծանոթացավ Ստանիսլավի միջոցով։ Ծոցատետրի նոտողությունների մեջ Նալբանդյանի ազբեսատներից մեկն է Ստանիսլավը, վորի հետ նամակագրություններ ուներ նա տակավին 1861 թ., Հնդկաստան կատարած ուղևորության ընթացքում։ Նալբանդյանի վկայությամբ Ստանիսլավը Լոնդոնի (Քարդմանի) պատն ուներ Լոնդոնի «Պրոլանս Ռեյել» կոչված հյուրանոցում, ուր առաջին անգամ 1861 թվին իջևանել էր ինքը։ Գերցենի շրջապատում, բացի լեհ հայտնի եմիգրանտ Տխորժևսկուց, վոր նրա մերձավոր ոգնականներից մեկն էր, ուրիշ Ստանիսլավ գոյություն չուներ, բացառությամբ լեհ դեմոկրատ Ստանիսլավ Վորցելից, վորին անծանոթ էր Նալբանդյանը, վոստիկանական դեպարտամենտին հայտնի յեր, անշուշտ, վոր Ստանիսլավը, այդ նույն Ստանիսլավ Տխորժևսկին էր։ Գնդիչ հանձնաժողովը կարևոր նշանակություն է տալիս Ստանիսլավի անձնավորությունը պարզելու հարցին, վոր ինքնին մեղադրական նյութ կարող էր լինել։ Ահա թե ինչու քննիչներից մեկը Նալբանդյանի ցուցմունքի դիմաց կարմիր մատիտով ընդգծել և կողքին գրել՝ «ճիշտ չէ. Տ խ ո ր ժ ե վ ս կ ի»։

Նալբանդյանը չէր ժխտում իր ծանոթությունը Տխորժևսկու և Զերնեցկու հետ, և նորից շփոթության մեջ էր գցում հանձնաժողովին, հայտնելով վոր Պանը վոչ թե Զերնեցկին, այլ Ստանիսլավն է կամ Տխորժևսկին։

Նալբանդյանի պաշտպանությունը դժվարացնում էին այն մեղադրյալները, վորոնք խոստովանում էին ամեն ինչ։ Այդ տեսակետից Նալբանդյանի դատական պրոցեսի համար խոշոր նշանակություն ունեցան մեղադրյալները Վորոնովի և Նիչիպորենկոյի ցուցմունքները։ Վերջինի մասին Ի. Ս. Տուրգենևը 1863 թ. փետրվարի 13-ին Գերցենին ուղղած նամակում գրում է. «Նիչիպորենկոն մատնում է ամենքին և ամեն ինչ»։

«Հանձնաժողովը ցնծության մեջ էր. նա հասկանում էր Լոնդոնի պրոպագանդիստների հետ ունեցած կապերի գրեթե ամբողջ ընթացքը...»*։

---

* М. Лемке, „Очерки освободительного движения шестидесятых годов“, С. Петербург, 1908 г., էջ 112։

Նալբանդյանին գրած մայիսի 10-ի թվակիր նամակում Բակունինը հանդամանորեն խոսում է Վորոնովի գործունեության մասին. «Պիտերում ինձնից նամակով ձեզ մոտ կգա Նիկոլայ Իլիչ Վորոնովը, որին անվանելու չենք Ալեքսանդր Գեորգիևիչ Վանդերմանու ընդունեցեք նրան որպես մեր բարեկամ և յերեքի [Գերցենի, Ոգարևի և Բակունինի] կողմից ձեզ հանձարարված։ Նա մի ամուր ու խելացի խոսող է, յերկար ժամանակ ապրել է Նովորոսսիյսկի յերկրում և լավ ճանաչում է Կովկասը։ Հունիսին կլինի Պիտերում, իսկ սեպտեմբերին՝ Թիֆլիսում։ Նա կբանակցի ձեզ հետ մեր ապրանքները [այսինքն Լոնդոնի ռուսական ազատ տպարանի հրատարակությունները] Կովկասյան յերկիրը հասցնելու նոր յեղանակի մասին—Նրա կարծիքը հետևյալն է. Տրապիզոնից դեպի Կովկասյան ափերն են փոխադրում Բյուրքական մանր նավեր և մեծ քանակությամբ մաքսանենգ ապրանքներ են փոխադրում։ Իսկ լեռնցիները, ոգտվելով լեռներից դեպի ռուսական բոլոր պոստերը, այսինքն Սև ծովին մերձեցող վողջ գծի վրա, փայտ փոխադրելու իրավունքից՝ փայտերի հետ հաճախ փոխադրել են նաև Լոնդոնի մեր արդելված ապրանքները։ Իսկ ռուսական գծի վրա դրանք մեծ հանուլքով են գնում և պատրաստ են մեծ դումար վճարել ծուցումը պարզ և, պետք է ոգտվել դրանից և կարդավորել այն։

Սույնն առանալուն պես, դրեցեք ձերոնցից մեկին, կոնստանդնուպոլսի մի գործարար, առևտրական մարդու, որի աղնվության և գործարարության համար դուք կարող եք պատասխանատու լինել մեր առջև, և համոզեցեք նրան, որ այս գործի մասին հարաբերությունները հաստատի տրապիզոնցի մաքսանենգների հետ...» Բակունինը վորոշակիորեն բացատրում էր Կովկասյան ափերով Լոնդոնի պրոպագանդիստների հրատարակությունները փոխադրելու ծրագիրը։ Վորոնովը խոստովանեց Բակունինի հետ ունեցած իր ամբողջ խոսակցությունը, այդ հարցի առթիվ հիշատակելով նաև Նալբանդյանին արված հանձնարարությունը, ժխտելով սակայն վերջինիս հետ ունեցած հանդիպումը։ Հանձնաժողովի ուշադրությունից հարկավ չեր կարող վրիպել այն կարևոր հանգամանքը, որ Վորոնովը հանձնաբարվում էր Նալբանդյանին, որպես «Լոնդոնի պրոպագանդիստների» կողմից լիազորված մի անձնավորության, որի դործունեությանը չափազանց մեծ կարևորություն էին տալիս Գերցենն ու նրա մերձավոր ոգնականները։ Բակունինի նամակը ապացուցում է, որ Նալբանդյանը լուրջ քաղաքական կապեր ուներ Կովկասի և առհասարակ իրականության հետ, ինչպես նաև ապացուցում էր Նալբանդյանի գլխավորած հայկական շարժման կապը ռուս հեղափոխական դեմոկրատական շարժման և Լոնդոնի պրոպագանդիստների հետ։ Նամակներից յերևում է, որ Լոնդոնի պրոպագանդիստներին հայտնի էին Պոլսի և Թիֆլիսի հայ բարեկամները։ Զափազանց խոսուն հիմք եր այդ կապերը թագցնելու նպատակով Նալբանդյանի այն հայտարարությունը, որ յեթե Լոնդոնի պրոպագանդիստները և Բակունինը ծանոթ լինեին Պոլսի և Թիֆլիսի բարեկամներին, ապա Բակունինը նրանց բոլորին անուն առ անուն կհանաչեր և ուղղակի կասեր «Ահա այսինչ և այնինչ մարդու հետ»։

Սակայն ուշագրավը այն է, որ Բակունինը շարադրելով «Լոնդոնի պրոպագանդիստների» սպասելիքները, այնուամենայնիվ կարգադրություններն ու հանձնարարությունները անում էր դեռազանցապես Գերցենի անունից։

Նալբանդյանը քաղաքական կապեր ուներ գերազանցապես Գերցենի և Ոգարյովի հետ։ Հարազատներին գրած իր մի նամակում Բակունինը խոստովանում է, որ Նալբանդյանը համամիտ չե իր քաղաքական հայացքներին։

«Նա [Նալբանդյանը], ինչպես և դուք,—գրում է Բակունինը,—քաղաքական վոչ մի համերաշխություն չունի ինձ հետ»*։

Ուշագրավ է Հանձնաժողովի հարցաքննության տակ Հանձնաժողովի հարցերը «Լոնդոնի պրոպագանդիստների» հետ ունեցած կապերից և քննություն են անում Նալբանդյանի հայկական շարժման մեջ ունեցած մասնակցությունը և շարժման ծավալը պարզաբանելու ուղղությամբ։

* „Былое“, 1925, № 3(31), եջ 38 և շար.։

Հանգամանորեն ծանոթանալով Բակունինի 1862 թվի մայիսի 6-ի թիակիը նամակի բովանդակությանը, դժվար չեր վորոշել, վոր Նալբանդյանի կապերը Լոնդոնի պրոպագանդիստների հետ չեն սահմանափակվում լոկ անձնական ծանոթությամբ, այլ մատնանշում են նրա խոշոր քաղաքական գործունեությունը Տաճկաստանում և Կովկասում։ Ճշմարիտ է, Բակունինի նամակները գերազանցապես սկսում էին իր կնոջ տեղափոխության հարցից, որից ամուր կառչել եր Նալբանդյանը, սակայն մայիսի 6-ի նամակին կցված եր նաև Բակունինի հրահանգը, վորի մեջ շոշափված հարցերի լայն շրջանակը իրականում շատ քիչ առնչություն ուներ այդ հարցի հետ։ Հանձնաժողովը հրահանգի բովանդակությունից յեզրակացնում է, վոր Նալբանդյանը «յեղել է Լոնդոնում գտնվող ռուս վտարանդիների դրծակալը» և պահանջում եր պարզաբանել իր գործունեությունը։ Բացի Բակունինի հարցադատներից, ծածկագրում տեղ գտած այլ անուններ վոչ մի առնչություն չունեին Բակունինի կնոջ տեղափոխության հարցի հետ։

Նալբանդյանը և նրա քաղաքական բարեկամները հայ ժողովրդի ազատագրության գաղափար կապում էին առաջական գյուղացիական հեղափոխության հաղթանակի հետ։

Ճորտերի ազատագրումը անկարող յեղավ իշեցնելու գյուղացիական շարժման վերելքը Ռուսաստանում։ Փետրվարի 19-ի „Положение“-ի հրատարակումից անմիջապես հետո սկսվեցին գյուղացիական հուզումները։ 1861—63 թ. տեղի ունեցան 1100 խռովություններ, վորոնք տեղ-տեղ ստացան իսկական ապստամբության բնույթ։ Միայն 1862 թվին 298 խռովություն դաժանորեն ճնշվեցին զինվորական ուժով։

«Դեմոկրատական շարժման աշխուժացումը Յեվրոպայում,—գրում է Լենինը,—լեհական խմորումը, ղժգոհությունը Ֆինլանդիայում, վողջ մամուլի և վողջ ազնվականության պահանջը քաղաքական ռեֆորմներ անելու, „Колокол“-ի տարածումը ամբողջ Ռուսաստանում, Չերնիշևսկու հզոր քարոզը, վորը կարողանում եր գրաքննության յենթակա հոդվածների միջոցով դաստիարակել իսկական հեղափոխականներ, պրոկլամացիաների յերևալը, գյուղացիների հուզումները, վորոնց «շատ հաճախ» պետք եր լինում զինված ուժով և արյունհեղությամբ հարկադրել ընդունելու „Положение“-ն, վոր կլսում եր նրանց լինչպես լսրենի, ազնվական հաշտարար միջնորդների կոլեկտիվ հրաժարումները կերտելու այդպիսի „Положение“-ն, ուսանողական անկարգությունները—այսպիսի պայմաններում ամենագդուշ և զգաստ քաղաքագետը պետք է վոր լիովին հնարավոր համարեր հեղափոխական բռնկումը և գյուղացիական ապստամբությունը—միանգամայն լուրջ մի վտանգ»*։

Նալբանդյանը և Պոլսի բարեկամները նախապատրաստվում էին հեղափոխությանը մասնակցել զենքով ու արյունով։ «Ցեղակրադործությունը» արձագանքում եր քաղաքական այդ տրամադրություններին։

Մերկացնելով յեվրոպական բուրժուական պետությունների հակաշարժողական գաղտնի քաղաքականությունը, հրապարակախոսը պատասխանում եր նաև հայ լիբերալներին,—վորոնց հույսերը կապված եին յեվրոպական պետությունների արևելյան քաղաքականության հետ։ Պատահական չե, վոր «Պոլսի Բարեգործական ընկերության» 1861 թ. հայտարարությունը առաջարկում եր «ազգին» «Յեվրոպայի պետությանց քաղաքականության հետևելու»։ Նալբանդյանը նկատի ուներ նաև «Բարեգործականի» հայտարարությունը, յերբ գրում եր հետևյալ տողերը.

— Այսպես, ուրեմն. Անգլիան Հնդկաստանի մեջ մի վորոշյալ կշիռ ափիոն գնում է ժողովրդից 25 լիբրեն տարեկանին, իսկ ինքը նույն կշիռը վաճառում է 250 լիբրեյի և կառավարությենից ավելի վոչ վոք իրավունք չունի շինականից գնելու, նույնպես և շինականը իրավունք չունի ուրիշի վաճառելու։

«Քաղաքականություն և տարածում»։

— Անգլիան ամիսը յերեք շոգենավ ափիոն բռնությամբ ներս է տանում Չի-

---

* Ленин, Сочинения, т. IV, էջ 126։

նաստան, թունավորում և մարդկությունը և այդ թույնի փոխարեն ամբոխը չորեք շոգենավ արծաթ և ստանում. այս անբարոյականություն է։

«Բաղաքակրթություն և տարածում»։

— Ավաբլան, յուր ութ միլիոն ձկնարյուն ավտրիացիներով բռնացել է Լոմբարդիո վերա և չի կամենում Վենետիկը ձեռքից թողուլ

«Բաղաքակրթություն և տարածում»։

— Սոքա ամենքը, իբրև բոնի վարժապետ, քաղաքակրթություն են տարածում, և վոչ վոք չի հարցնում աշակերտի կամքը, կամի արդյոք ուսանել թե վոչ։ Սակայն չի պիտո աչքից հեռացնել նոցա քաղաքակրթության տարբերությունը մեր հանգացած քաղաքակրթությենից։ Բանաձևը են նոցա դպրոցները, պոլիցականք և ժանդարմը՝ դասախոսականները, շղթան՝ հրահանդիչ գիրքը, աքսորը՝ բարոյականությունը վերին աստիճանի կաղդուրելու մարզարան, կախաղանը և գլխատարության խայտառակ սյունը՝ «դուռն ճշմարիտ, վոր ասնի ի կյանս հավիտենականս...»։

Կեցցե կատուն, վոր յուր փորի համար մուկ է բռնում»։

Նալբանդյանն առաջ եր քաշում ժողովուրդների հեղափոխական դաշինքը—հեղափոխական դեմոկրատիայի քաղաքական սպառազինության կարևորագույն հարցը։

Սենատական Հանձնաժողովի ուշադրությունից չեր կարող վրիպել Նալբանդյանի քաղաքական այդ ուղեգիծը։ Սակայն Հանձնաժողովը չկարողացավ մինչև վերջը պարզել հայկական շարժման կապերն ու մոտակա քաղաքական ծրագրերը և Նալբանդյանի կարևորագույն դերն այդ շարժման մեջ։ Հանձնաժողովը և վոստիկանական դեպարտամենտը Կովկասյան փոխարքայության հետ ունեցած գրագրությունների մեջ աշխատում եյին պարզել հեղափոխական կազմակերպության գոյության խնդիրը Կովկասում և Նալբանդյանի կապերը այդ կազմակերպության հետ։ Այդ կապակցությամբ եր գրվում «Յերիտասարդ Հայաստանի» հարցը, վոր ռուս կառավարական շրջանների կարծիքով նման եր „Молодая Россия“ կազմակերպությանը։ Այդ խնդիրն եր շոշափում նաև ներքին գործոց մինիստր Վալուևին ուղղված՝ բանաստեղծ Սմբատ Շահազիզի «Լևոն և վիշտը» պոեմի մասին գրված տնտեսագիրը դանոսը։

Այդ տեսակետից ուշագրավ և մատնավորապես Կ. Յեզյանի յեղբակացությունը, վորին քննության եր ուղարկված «Լևոն և վիշտը»։

«Հայերն իրոք բաժանվում եյին յերկու կուսակցության,—գրում է Յեզյանը։ Պաշտոնաթող սիրտոսականը խորհրդական Բուդագովը և մյուս ուլտրալիբերալները չեն ցանկանում ռուսներին մերձանալ, համախմբվել են Նալբանդովի շուրջը։ Իսկ մյուս կուսակցությունը հայ ժողովրդին համարում է մի մեռած դիակ, վորն այլևս կենսունակություն չունենալով, պետք է բոլորովին ձուլվի այն տարրերի հետ, վորոնց միջավայրում են դտնվում նրանց հալից ընկած մասերը։

Վերոհիշյալ գրքում իրոք կան կառավարության համար թշնամական տեղեր, ակնարկներ, թե ժողովուրդը չպետք է կուլորներն յենթարկվի կառավարության. շատ է խոսվում և Գարիբալդիի մասին և այլն»։

«Լևոն և վիշտը» պոեմով հայ առաջավոր լենտելիգենցիան համերաշխում եր «վանդակում փակված հայրենասեր»-ի հետ.

Բայց քեզ հանում եմ այս տխուր դասից,
Ո՛վ նոր հայախոս և ազնիվ մըշակ.
Քեզ կարող եյի անմահ փուշերից
Բաջ մարտիրոսի բոլորել պսակ։

Սրտիդ կսկիծը—կսկիծ և ապրիլ,
Յեվ վո՛չ մի պիմակ կեղծավորության.
Գրչիդ վաստակը—մեծություն հայի,—
Թևև հայասերք են քո դավաճան։

Նալբանդյանի ձերբակալության որերին, յերբ ռեակցիան դաժան դատաստան էր տեսնում բոլոր առաջադիմական տարրերի հետ և հայ լիբերալները հպատակության խոնարհ ցույցեր էին տնում ցարին, բանաստեղծը գրվատում էր դարիբալդյան գենքի հաջողությունը և «մոլի իշխանների գահերի կործանումը»։

Նալբանդյանի շուրջը ուժեղ պայքար էր մղվում հայ դեմոկրատական շրջանների և ռեակցիոներների միջև։ Ս. Շահազիզի «Լևոն ի վշտը» պոեմը այդ պայքարի արձագանքն էր։ Գաշտպանելով Նալբանդյանին Սըվաճյանի «Մեղուն» 1862 թ. № 172 գրում է.

«Անուն կամ արդեն շատերու մտաղրությունն արթնեցուց,—այսպես կ'ավատանք և հավատքնիս ճշմարիտ է.—վասն դի պ. Նալբանդյանց հայ յերկնակամարին վրա փայլելու սկսած որեն, ամենուն ուշադրությունը գրավեց և ամենայն վոք վողջունեց գանի անձնվեր բարեկամ՝ ազգային հառաջադիմության, անխոնջ աշխատող՝ անոր ի նպաստ, թշնամի՝ ազգատյաց չընչայրու, վնասանձն՝ սխալմամբ ազգին թշնամության ընդդեմ, մեծահոգի և բազմահմուտ, ազատամիտ, ազատության բարեկամ, փափաքող և ջանացող վոչ միայն իր ազգին, այլ ընդհանուր մարդկության ազատության»։

Հայկական ռեակցիան տնում էր իր հաղթանակը։ Առանձնապես ցնծում էր Խալիբյանը, վոր հեռագրով Այվազովսկուն հայտնում էր Նալբանդյանի ձերբակալության «ուրախառիթ լուրը»։ Այվազովսկին նույնպիսի ցնծությամբ հաղորդում էր «ուրախառիթ լուրը» Գալֆայանին։ Հայկական ռեակցիայի այդ տարրերին նկատի ուներ «Մեղուն», յերբ գրում էր. «Մեկ քանի գիշերազեմ մարդիկ, մի քանի վատ հոգիներ անհամբեր սրտով և անարդ վրեժխնդրությամբ անոր առանց արդար դատաստանի դատապարտության լուրը կսպասեին»։

Թե «Մեղուն» և թե հայ պրոգրեսիվ ինտելիգենցիան չէին յերկմտում, վոր հայկական ռեակցիան Նալբանդյանի քաղաքական ամբաստանության գործում իր բաժինն ուներ։ Այդ նույն Այվազովսկուն նկատի ուներ «Լևոն ի վշտի» հեղինակը հետևյալ տողերի մեջ.

Ընկերը քո գործին—դժոխք սևամած,
Ցեվ բոլոր դևեր քո հետ ընկերված.
Ուր չարագործ և մատնիչ մի տգեղ,
Դու տասնապատիկ Հուդա յես այնտեղ։

Իր ձեռքի տակ ունենալով Նալբանդյանի հեղափոխական քաղաքական գործունեությունը հավաստող կարևոր վավերագրեր, քննիչ Հանձնաժողովը այնուամենայնիվ չկարողացավ լիովին պարզել նրա քաղաքական գործունեությունը։ Ուշագրավ է, վոր դատավարության ընթացքում այդպիսի տակտիկա յի վարում նաև Ն. Սերնո-Սոլովևիչը։ Նալբանդյանը ցույց տվեց հեղափոխական արիության հիանալի որինակ։ Դերցենը, վոր ուշիուշով հետևում էր «32»-ի դատավարությանը և ծանոթ էր գործի եությանը, ապատում էր, վոր ավելի խիստ պատիժ կտրվի Սերնո-Սոլովևիչին, Նալբանդյանին և մյուս մեղադրյալներին։

Ահա թե ինչու դատավարությունից հետո վոլոդուն ուղղած 1865 թ. մայիսի 15 թվակիր նամակում նա գրում է. «Սերնո-Սոլովևիչը, նրա հետ բոլոր և մյուս ձերբակալվածները, հետևաբար և Նալբանդովը, զարմանալի կերպով են պրծել»։

Սենատական Հանձնաժողովը դատապարտեց Նալբանդյանին, ապացուցված համարելով, վոր նրա մոտ գտնված հայերեն նամակները «առանում են այն մաքին, թե Ռուսաստանում և մյուս պետություններում ապրող հայերի շրջանում յեղել են ինչ վոր ընդհանուր ծրագրեր, վորոնք հանդում են նրանց անկախության վերականգնմանը», բայց նա վոչ կունենի նամակներն ու բառարանը «առաջացնում են ներքին այն համոզումը, թե նա վոչ միայն տեղյակ եր պրոպագանդիստների՝ ռուս կառավարության դեմ ուղղված դիտավորություններին, այլև նպաստել է նրանց՝ Լոնդոնի արդելված հրատարակություններին Ռուսաստանում տարածելու», հայերեն նամակներից և բառարաններից յերևում է, վոր «նա ձգտում է ունեցել Ռուսաստանի հարավում ապրող հայերի մեջ տարածելու հակակառավարական գաղափարներ»։

վարական շարժումներ։ Այս հիման վրա, որ ենթի 313 հոդ., գիրք 2, հատոր 15-ի հրահանգով Սենատը վխիստ կասկածանքի տակ է առնում Նալբանդյանին և վորպես անբարեհուսյա անձնավորության՝ ներքին գործոց մինիստրի բարեհայեցողությամբ աքսորում Ռուսաստանի հեռավոր քաղաքներից մեկը՝ յենթարկելով նրան վոստիկանության խիստ հսկողության։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այդ գրության հայերեն բնագիրը տես «Դիվան», էջ 148 և հետ.։

2. Հնդկական ժառանգությունները ստանալու համար նոր-նախիջևանցիների ունած լիազորությունը հաստատվել է 1860 թ. հոկտ. 10-ին Եջմիածնի կաթողիկոսի սորագրությամբ և կնիքով (տես «Դիվան», էջ 147)։

3. Նալբանդյանը Պոլիս հասավ վոչ թե «հոկտեմբերի վերջերին», այլ նոյեմբերի 20-ին։

4. Խոսքը լեհ եմիգրանտ Ստանիսլավ Տիսովսկու մասին է. տես տեքստի կոմենտարը, էջ 515։

5. Քննիչ հանձնաժողովը այդ անձնավորությանը անվանում է Կարլ Ստանիսլավովիչ Ոբերտ, վոր հավանորեն ճիշտ է։

6. Այդ հոդված չկը, այլ „Русским, польским и всем славянским друзьям Бакунина" վերնագրով կոչը, վոր կցված էր „Колокол"-ի 1862 թ. փետրվարի 15 համարին։

7. Փարիզի այդ բարեկամը, վորի միջոցով Նալբանդյանն ստացել է Բակունինի 6-ի նամակը, հավանորեն Ստեփան Վոսկանն է կամ Շանիկ Արամյանը։

8. Լուսինյանը հրատարակել է իր այդ «մեմորանդումը» առաջին անգամ „Appel à César ou Memoradum du Prince d'Arménie a l'empereur Alexandre", Yenise, 1858 վերտառությամբ, յերկրորդ անգամ—„Memorandum du prince d'Arménie A. S. M. I. Alexandre II empereur de toutes les Russie. Nouvelle edition revue et augementée. Partie première, 1861, Milan վերնագրով։

9. Խոսքը Լուսինյանի փրանսերեն շրջաբերականի մասին է։ Շրջաբերականի որինակը գտնված է ռուսական նախկին արտաքին գործոց մինիստրության ֆոնդերում (տես „Архив внешней политики и революции", I, 9,1845, 5, fol. 198). Նալբանդյանի Փարիզում գտնված ժամանակ այդ շրջաբերականի մասին ծանուցվել նաև Մուրատյանի «Փարիզ»-ի 1862 թ. մայիսի 9-ի համարում։

10. „Memorandum"-ի յերկրորդ հրատարակության մեջ լուրս տեսավ Լուսինյանի ձերբակալման առթիվ Պրուսիայի դեմ ուղղած մի բողոքագիր, վորի տակ ըրված էին այսպիսի սորագրություններ. „Prince Petros Bey, Prince de Tell-Bascher, Prince Nouschirvan, Prince de Yan II, Prince de Syne, Prince Ardzrouni—Méroujan, Prince Manavazean, Prince Borhosch, Prince Varazkhourtag, Prince Kenounian, Prince Katischoi, Prince Ortounian, Prince Khorkhorounian, Prince Tchoubin, Prince d'Ezenka II, Prince Siounian Haigazni, Prince Mamigonean, Prince Magistros-Arsacid, Melikh Mirza-Khan, Melikh Hegoz, Melikh Naribeg, Emin-Khan, Amir-Khan, Eldin-Nadir-Khan. Daniel-Bey, Aga-Bey, Tomas-Bey, Paul Rustounian, Colonell Vartanoff" („Memorandum", էջ 30)։ Անկասկած է, վոր այս անունները մտացածին են։

11. Տես Զորրորդ հատորը։

12. Դա պոլսահայ բարբառով գրված «Բազադրություն վաճառից» վերտառած այն տետրակն է, վոր գտնվում է Նալբանդյանի սենատական գործի մեջ։

13. Նալբանդյանը նկատի ունի Ս. Թագվորյանի 1862 թ. մայիսի $^{14}/_{26}$-ին Լրեն ուղղած նամակը։

14. Կիևսկի համար տաճկական անցագիր հայթայթելու այս տեղեկանքը քննիչ հանձնաժողովը ստացել էր Ներչինսկի հից։

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Աբաս (IX դ.)—Աշոտ Ա. Բագրատունյաց թագավորի կրտսեր յեղբայրը և Հայոց գորքի սպարապետը։ Աշոտի մահից հետո ձգտում է գահը խլել Սմբատից, ապստամբում և նրա դեմ, սակայն զենքի ուժով ճնշվում է։

Աբաս թագավոր (X դ.)—Սմբատ Ա. Բագրատունու կրտսեր որդին և Աշոտ Բ թագավորի յեղբայրը։ Վերջինիս մահից հետո ժառանգում է Բագրատունյաց գահը (928—953 թթ.), մայրաքաղաքը տեղափոխում և կարս, խաղաղ հարաբերություններ է տեղծում խալիֆատի, Վրաց և Աղվանից յերկրների հետ։ Նրա որով զարգանում է առևտուրը և տնտեսությունը։

Աբդլ-Մելիք (?—705)—արաբ ամիրապետ։

Աբովյան Խաչատուր (1805—1848)—հայ նոր գրականության հիմնադիրը, մեծ գրող, լուսավորիչ։

Նալբանդյանն իր «Կրիտիկա»-ի մեջ Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն հռչակեց մեր գրականության մեջ զարագլուխ կազմող գործ։

Աբրահամ Խոռոզվաճոզ (V դ.)—Ձերբակալվել է 451 թ. Ավարայրի հակառամարտից հետո իբրև Արտաշատի ատրուշանն ավերող։ Բանտարկվել է Գարսկաստանում և ապա աքսորվել Բաբելոն, ուր սարկական աշխատանք և կատարել արքունական կալվածներում։ Վերադարձել է Հայաստան 463 թ.։ Գարսկերներից թարգմանել և «Արևելեան վկայից պատմութիւնք» և գրել է «Ի վկայն Արևելից»։

Ագաթանգեղոս—յենթադրվում է, վոր ապրել է V դարում, գրել է պարսից Սասանյան հարստության և հայոց Արշակունյան թագավորության պայքարի սկզբնական շրջանի մասին։ Նրա պատմության ամենագլխավոր մասն է կազմում քրիստոնեության հաստատումը Հայաստանում։

Ագգրիպպա (I դ.)—հրեաների թագավոր, Հռոմի վասսալ։ Մասնակցում է Պողոս Առաքյալի գործի քննության կեսարիայում, վորին հրեաները մեղադրում էին մովսեսականն կրոնի դեմ սլրոպագանդա մղելու մեջ։

Ագրիպպին (16—59)—հռոմեական կայսեր քույրը և կլավդիոսի ամուսինը, վորին թունավորել տվեց 54 թ.։ Սպանվեց իր վորդու՝ Ներոնի հրամանով։

Ալբերթին, Նիկոլայ Պիկենեավիչ (1826—1890)—ժուռնալիստ, մեղադրվեց Լոնդոնի սլրոպագանդիստների հետ կապ ունենալու մեջ, բայց հետո արդարացավ, թեև աքսորվեց ուրիշ գործով։ Նալբանդյանը ծանոթացել էր սրա հետ Գերցենի միջոցով։ Ռուսաստան ուղարկած իր նամակներից մեկում, վորն իր հետ վերցրել էր Նալբանդյանը, Ա. վերջինս վորակում և վորպես իր «լավ ծանոթի»։

Ալեքսանդր Մակեդոնացի (356—323 մ. թ. ա.)—Մակեդոնիայի թագավոր, հին աշխարհի հռչակավոր զորավար և աշխարհակալ։

Ալիծան (Ալիշանյան), Ղեվոնդ (1820—1901)—բանաստեղծ, բանասեր, պատմաբան, Մխիթարյան միաբանության վարդապետ։ Նալբանդյանը բարձր կարծիք է հայտնում Ա.-ի մասին, նկատի ունենալով նրա միջին հայերենով գրած «Հայրունի» խոշոգրով բանաստեղծությունների շարքը։ Անձնապես ծանոթացել և նրա հետ Փարիզում։

Սղնեսաեցոր Ջուղայեցի—կաթողիկոս (1706—1714)—կողմնակից Իսրայել Որիի ձեռնարկումներին՝ Հայաստանը ազատագրելու ոսոր լծից։

Սյվազյան Աբրահամ—արևմտահայ հասարակական գործիչ. յնկել է «Արևելքի» աշխատակիցներից մեկը։ Իր «Շաբ հայ կենսագրութեանց» գրքի մեջ (1893) խոսում է նաև Նալբանդյանի մասին։

Սյվազովսկի, Գաբրիել (1812—1880)—Նալբանդյանի զաղափարական հակառակորդներից մեկը։ Ծնվել է Թեոդոսիայում, ուսանել է մխիթարյանների մոտ, ապա ձեռնադրվել կաթոլիկ վարդապետ։ Նշանակվում է Փարիզի Մուրադյան վարժարանի տեսչի ոգնական և ապա տնուեչ։ 1855 թ. Ս. Թեոդորյանի և Ա. Գալֆայանի հետ զավանափոխ է լինում՝ դառնալով լուսավորչական և հիմնում Հայկազյան վարժարանը։ Նույն թվից Գալֆայանի հետ հրատարակում է «Մասյաց աղավնի» լրագիրը։

1857 թ. Ս. անցնում է Ռուսաստան և յարի կողմից նշանակվում Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական կառավարիչ։ Նա հաստատվում է Թեոդոսիայում և շարունակում «Մասյաց աղավնու» վերահրատարակությունը, որի խմբագիրն էր և ցենզորը միաժամանակ։

Ազգային-կղերական խավերի ճանաչված այս պարագլխի դեմ Նալբանդյանն ամենից առաջ պայքար սկսեց «Հյուսիսափայլի» էջերից։ Ինչպես իր «Հիշատակարան»-ում, նույնպես և դանազան հոդվածներում, բանասաեղծություններում նա նորից ու նորից հարձակվում է Ա. վրա, համարելով նրան ռեակցիայի և խավարամտության ամենավտանգավոր ներկայացուցիչը։ 1859 թ. Ս. դանոս և ուղարկում նեբքին գործող մինևխարին, որով առաջարկում է փակել «Հյուսիսափայլ»-ը, իսկ Նալբանդյանին «պատժել որևէքի ամենայն խստությամբ»։ Նալբանդյանը «Ճերկու տող» հռչակավոր պամֆլետում մինչև վերջ մերկացնում և վեղարավոր այդ լրտեսին, արտահայտելով հեղափոխական խոր քշնամության դեպի հոգևորականությունն ընդհանրապես։

Սարգո, Դոմինիկ Ֆրանսուա (1786—1853)—ֆրանսիացի նշանավոր ֆիզիկոս և աստղաբաշխ։ «Սոս և վարդիքների կրքոտիկա»-ի մեջ Նալբանդյանը հիշատակել է նրա հայտնի „Биографии знаменитых астрономов, физиков и геометров" յերկերը հատորանոց աշխատությունը, որը պահպանված է նաև նրա անձնական դրադարանում։

Սրամյան, Ճանիկ (1820—1870)—արևմտահայ հայտնի հասարակական գործիչ։ Թյուրքիայից 1846 թ. անցնելով Փարիզ, ձեռք է գարկում տպարանական գործին, բաց անելով հայ տպարան և ձուլարան, որ հետագայում մեծ համբավ ստացավ։ Այստեղ եյին տպվում Ստ. Վոսկանի «Արևելք»-ն ու «Արևմուտք»-ը, այստեղ տպվեցին նաև Նալբանդյանի «Ճերկու տող»-ն ու «Ճերկրագործության»։ «Հյուսիսափայլ»-ի եջերից Նալբանդյանը մեծ դոլաստանքով և խոսում Ա. կիբրատած գաղատ տպագրության սկզբունքի մասին։

Հայտնի յե նաև վորպես հրապարակախոս. նրա գրչին է պատկանում «Ընդունելություն Ընծայի» խորագրով այն փոքրիկ պամֆլետը, որին արժանացավ Կոմս Եմանուելի անկեղծ հետմունքին «Հիշատակարան»-ում և Վարդան Մեծի «Գաղմուխաեան» ռեցենզի մեջ։

Արիստոտել (384—322 մ. թ. ա.)—«հին աշխարհի ամենամեծ մտածողը» (Մարքս), հանճարեղ փիլիսոփա, բնագետ, արվեստի տեսաբան։

Արմաս Արծրունի (V դ.)—Սահակի և Մ. Մաշտոցի ավագ աշակերտներից մեկը և Կորյունի ընկերակիցը։ Կրթվել և Կեսարիայում, ուր և պարապել է թարգմանությունների։

Արնո—ֆրանսիացի վաճառական, որի հետ Նալբանդյանը ծանոթացել և հնդկաստանում։

Արշակ Գ.—Արշակունի հայ թագավոր (378—389)։

Արշավիր Նամսարական—Արշարունյաց կամ Ցերասխաձոր գավառի իշխան (V դարի առաջին կեսերին), Վարդան (մեծ) Մամիկոնյանի փեսան։ 451 թ. Ավարայրի ճակատամարտում նա նշանակվում է գլխավոր հրամանատար Վարդան Մամիկոնյանի ոգնականը։ Սպանվում է նույն ճակատամարտում։

Արտաշես Բ *(իշխ. 85—131 թ.թ.)*—հայոց թագավոր, ըստ ավանդության Սանատրուկ թագավորի որդին։ Նա սահմանում է յերկրում ֆեոդալական կարգեր բազմաթիվ գաղթականներ է բերում իր յերկիրը, զարկ է տալիս յերկրագործության և յերկրի ներքին բարեկարգության։ Հաջող կռիվ է մղում Ալանաց թագավորի դեմ և ապահովում է Հայաստանի խաղաղությունը։ Նրա ամուսնությունը Ալանաց թագավորի աղջիկ Սաթենիկի հետ, նոր տարվա թագավորական հանդեսը, ինչպես և իր մահը ժողովրդական յերգերի նյութ և դարձել ծեննադրում են, որ Արտաշես Բ վերագրված այս ավանդական տեղեկությունները պատմականորեն վերաբերում են Հայոց Տրդատ Ա թագավորին։

Բարգեն կաթողիկոս (V—VI դ. դ.)—վանանդ դավառի Վոքմոս գյուղից։ Կաթողիկոսական իշխանություն և վարում 490—516 թ.թ. (Ղ. Փարպեցու ժամանակակից)։ 506 թ. Դվինի ժողովում նրա նախագահությամբ քննվում և Բաղկեդոնի տիեզերական ժողովի վորոշումը Բրևստոսի բնության վերաբերյալ և մերժվում։ Այդ ժամանակվանից հայոց յեկեղեցին բաժանվում է հուն-հռոմեական յեկեղեցուց։

Բակունին, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ (1823—1882)—ազնվական, լիբերալ գործիչ։ 1852 թ. իր յեղբոր՝ Ն. Ա.-ի հետ միասին սոորագրել է Տվերի ազնվականության աղրեսը, վորի համար ձերբակալվել և, այնուհետև զրկվել պետական ծառայություն ունենալու և ընտրական պաշտոններ վարելու իրավունքից։

Բակունին, Միխայիլ Ալեքսանդրովիչ (1814—1876)—հայտնի ռուս անարխիստ։ 1857 թ. աքսորվում է Սիբիր, վորտեղից 1861 թ. ճապոնիայի և Ամերիկայի վրայով փախչում է Լոնդոն։ Այստեղ միաժամանակ հարում է Գերցենի և Ոգարյովի խմբակին, մասնակցելով „Колокол"-ին։ Հենվելով անարխիստական «Սոցիալիստական դեմոկրատիայի միջազգային ալյանս» միության վրա, նա առաջին Ինտերնացիոնալի ներսում պայքար է սկսում Մարքսի դեմ, արժանանալով վերջինիս վոչնչացնող քննադատությանը։ Կազմալուծող այդ աշխատանքի համար 1872 թ. արտաքսվում է Ինտերնացիոնալից։

Նալբանդյանը Բ. հետ ծանոթացավ Գերցենի միջոցով Լոնդոնում, 1862 թվականին, այնինքն Բ. գործունեության հենց այն շրջանում, յերբ նա դեռ որորվում էր այն հուսով, թե Ռուսաստանի ազատությունը կախված է զարձյալ Ալեքսանդր II-ից, այն թագավորից, վոր ազատեց գյուղացիներին ազնվականների կամքի հակառակ, չինովնիկների միացյալ «վոր ազատեց գյուղացիներին ազնվականների կամքի հակառակ, չինովնիկների միացյալ ցանկության հակառակ։ «Ծ ե ր կ ր ա դ ր ծ ո ւ թ յ ո ւ ն ը» ցույց է տալիս, վոր Նալբանդյանը բոլոր հիմնական հարցերում (ինչպես, որինակ, ռևֆորմի գնահատման, Ռուսաստանի մտավոր ազագային, ազգության վերաբերյալ հարցերում) համամիտ չէր Բ. հայացքներին։ Նալբանդյանին գրած նրա նամակները վերաբերում են կնոջը Սիբիրից Տվերի նահանգը վերադարձնելուն և Լոնդոնի պրոպագանդիստների անլուրջ հրատարակությունները կովկասում տարածելուն։ Բ. շաղակրատության շնորհիվ եր, ինչպես հիշատակում է Գերցենը, վոր ձերբակալվեց Նալբանդյանը։

Բակունին, Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1818—1901)—Տվերի նահանգի ազնվական, լիբերալ գործիչ։ 1862 թ. մասնակցել է ազնվական այն ժողովին, վորը պահանջել է բոլոր դասերի հավասարություն և արտահայտվել առանց դասերի խորհրդության ընտրված ժողովրդական ներկայացուցիչների հրավիրման օգտին։ Տվերի ազնվականների ազրեսի նախաձեռնողը։ Այդ ուղերձի համար դատվել է, բանտարկվել Պետրոպավլովսկ բերդում և զրկվել հասարակական պաշտոններ վարելու իրավունքից։

Բակունինա-Նորանկովա, Նատալիա Սեմյոնովնա—Բակունինի յեղբոր՝ Գ. Ա. Բակունինի կինը։

Բայրոն, Ջորջ Գորդոն (1788—1824)—անգլիացի աշխարհահռչակ բանաստեղծ։ Նալբանդյանի սիրած պոետներից և պատմական անձնավորություններից մեկը։ Նա բարձր եր գնահատում հատկապես Բ-ի մասնակցությունը ճնշված ազգերի՝ մասնավորապես հույների ազգային-ազատագրական պատերազմին։ Այս առիթով է ասա, վոր մի քանի տեղ Նալբանդյանը վկայակոչում է Բայրոնին։

Բեհովեն, Լյուդվիգ (1770—1827)—գերմանացի հանճարեղ կոմպոզիտոր։

Բեկոն, Ֆրենսիս (1551—1626)—անգլիական փիլիսոփա, նոր ժամանակի մատերիալիզմի նախահայրը։

Բեն Դավիր, Լազար (1762—1832)—գերմանական հրեա, պրիվատ դոցենտ, մաթեմատիկոս։

Բենեդիկտոս XIV (իշխ. 1740—1758 թ. թ.)—Հռոմի պապ, հմուտ յեկեղեցական գրվածքներին, յեկեղ. կանոններին և քաղաքացիական իրավունքին. Հռոմում հիմնում է ակադեմիա. մեղմ քաղաքականություն է վարում բողոքականների նկատմամբ. նա բացասաբար է վերաբերվում յեզվիտների գործունեության և խիստ հալածում է նրանց։

Բերոյեվ (Բերոյան), Միքեիչ—Պետերբուրգի համալսարանի հայ լեզվի ու գրականության դասատու և ցենզուրական կոմիտեում հայկական գրքերի ուղեկցողնա։ Այվազովբսկու՝ «Հյուսիսափայլի» մասին ներկայացրած դատում, ինչպես նաև ամսագրի 10-րդ համարի շուրջը յեղած պայքարի ժամանակ իր դեկուցագրում պաշտպանում էր Նազարյաններին և Նալբանդյաններին։

Բիլուարդ—աստվածաբան։

Բոկլ, Հենրի Թոմաս (1821—1862)—անգլիական նշանավոր սոցիոլոգ, հեղինակ «Անգլիայի քաղաքակրթության պատմության» հռչակավոր աշխատության։ Գիտությունների բնագավառով բանասիրությունը, արվեստը և ազգամոլությունը, նա մեծ ժողովրդականություն ձեռք բերեց 60—70-ական թվականներին ռուս առաջավոր ինտելիգենցիայի շրջանում։

Ամբողջ ազդեցություն գործեց Բ-ը նաև Նալբանդյանի վրա։ Բ-ի գիրքը նա փորձեց թարգմանել Գետրոպավլովսկի բերդում. այդ աշխատանքից մեզ հասել է միայն մի փոքրիկ հատված (տես «Լուսա», 1904, № 5, էջ 64). սակայն հավանականությամբ դա ամբողջական գործի կորած թարգմանության մի եզն է միայն։ Նրա գրքի ազդեցության տակ էլ մտադրվեց գրել իր «Ֆիզիկա-փիլիսոփայական-պատմական-աշխատությունը» կոչվող աշխատությունը։ «Ոսա և վարդերի հատկական ներածություն» կոչվող աշխատությունը՝ «Ոսա և վարդերի կրիտիկա»-ի մեջ նա ասմունում է Բ-ի Նույն այդ ժամանակ էլ համանաքար նա գրեց «Հենրիկոս Թոմսոս Բոկլի հիշատակին» ներբողը։

Բորֆ, Եդմունդ (1730—1797)—անգլիական պարլամենտական գործիչ և հրապարակախոս։ Նա վախով էր դիտում հեղափոխական ուժերի աճը։ Ինացումը Ֆրանսիայում։ Հեղափոխությունից հետո դարձավ Ֆրանսիայի կատաղի թշնամին, «խաչակրաց արշավանք» քարոզելով Ֆրանսիական ազգին ընդդեմ,—ինչպես գրում է Նալբանդյանը՝ «հեղելը և նորա ժամանակը» գործում։

Նալբանդյանը, խոսելով Ֆրանսիական հեղափոխության գնահատման խնդրում հեղելի կատարած քաղաքական շրջադարձի մասին՝ հեգելին նմանեցնում է Բ-ին։

Բոհ, Կարլ Էռնեստ (1809—1874)—գերմանացի նշանավոր անատոմ, հեղինակ բազմաթիվ բժշկական աշխատությունների։ Նալբանդյանի գրադարանում պահվում է նրա „Havds-Atlas der Anatomia-des menschen“, 1850, Leipzig, ինչպես նաև „Руководство к патологической анатомии и диагностике“, 1855, Москва, գործը։

Բրիտանիկոս (42—55)—հռոմեական կայսր Կլավդիոսի և Մեսսալինայի վորդին։ Թունավորվեց Ներոնի հրամանով։

Բուլվեր, Հենրի (1805—1872)—անգլիական դիվանագետ և գրող։ 1857—1866 թ. թ. դեսպան էր Կոստանդնուպոլսում։

Գալիլեյ, Գալիլեո (1564—1642)—իտալացի հռչակավոր ֆիզիկոս և աստղաբաշխ։ Վերածնության եղոխայի գիտական մտքի կոլոսներից։

Գալճայան, Ամբրոսիոս—նախ կաթոլիկ, ապա՝ 1856 թվից լուսավորչական վարդապետ։ Դ. Այվազովսկու հետ միասին խմբագրում էր «Մասյաց աղավնի» ամսաթերթը։ Զբաղվում էր նաև թարգմանությամբ և հրատարակչական աշխատանքով։

Գարիբալդի Ջ. (1807—1882)—իտալական ազգային ազատագրական շարժման դեկավարը։

Գեորգ Ք. Գառնեցի (IX դ.)—կաթողիկոս (887—897 թ. թ.)։ Հանդես եր գալիս իբրև խաղաղարար միջնորդ հայ ֆեոդալների ներքին պայքարի ժամանակ, բայց մեծ հաջողության չեր ունենում։

Գերմանիկոս—գերմաններին հաղթող Տիբերիոս կայսեր յեղբոր՝ Դրուզոսի որդին։ Կոնսուլ և զորավար։ Զոհ դարձավ Տիբերիոսի կասկածամտության։

Գերցեն, Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1839—1896)—Ա. Ի. Գերցենի որդին, ֆիզիոլոգ։ Նալբանդյանի մտերիմ բարեկամներից մեկը։

Գերցեն, Ալեքսանդր Իվանովիչ (1812—1870)—ռուս մեծ լուսավորիչ, դեմոկրատ, հրապարակախոս, գրող, Լենինի խոսքերով՝ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի նախահայրերից մեկը։ 1847 թ. անցնելով արտասահման, Ոգարյովի հետ միասին Լոնդոնում հրատարակում է „Полярная звезда“ և „Колокол“ պարբերականները, որոնք հսկայական դեր խաղացին ռուս ժողովրդի ազատագրական կռվում։

Նալբանդյանը Գ.-ի հեղափոխական գործունեությանը ծանոթ եր մինչև արտասահման մեկնելը, այսինքն համալսարանական միջավայրից, ուր յերբեմն կարդացվում եյին „Колокол“-ի ձեռքից ձեռք անցնող համարները։ Դեռևս 1859 թ. առաջին ճանապարհորդության ժամանակ Նալբանդյանը մտք և հղանում „Колокол“-ի որինակով հայկական ազատ մամուլ ստեղծել արտասահմանում։

Տուչկովա-Ոգարյովան վկայում է այն մասին, որ Լոնդոնի պրոպագանդիստները Նալբանդյանի անունը գիտեյին նրա հետ ծանոթանալուց առաջ, և որ վերջինս Լոնդոն է գնացել հատկապես Գ.-ի հետ հանդիպելու համար։ Տխորժևսկու հետ ունեցած անձնական ծանոթությունից և նամակագրությունից պետք է հետևեցնել, որ Նալբանդյանը Գ.-ի հետ պետք է ծանոթացած լիներ 1861 թ., մինչև Հնդկաստան մեկնելը։ Այդ ծանոթությունը վճռական դեր խաղաց Նալբանդյանի կյանքում. Գ. մեծ ազդեցություն գործեց նրա վրա։

Գլուխով, Ալեքսանդր Գրիգորևիչ—անհայտ։

Գյոթե, Յոհան Վոլֆգանգ (1749—1832)—գերմանացի հանճարեղ բանաստեղծ և մտածող։

Գոգոլ, Նիկոլայ Վասիլևիչ (1809—52)—ռուս մեծագույն գրող և դրամատուրգ։ Ռեալիստական ուղղության հիմնադիրներից մեկը։ Նալբանդյանը Գոգոլի անունը հիշատակում է Պերճ Դուշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի «Կրթիկաց»-ի մեջ Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի «Տեր-Սարգիս» վեպի կապակցությամբ, վեպի հեղինակին Ն.-ը համարում է «հայկական Գոգոլ»։

Գրանովսկի, Տիմոֆեյ Նիկոլայևիչ (1813—1855)—պատմաբան, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, ականավոր լուսավորիչ։ Պաշտպանում եր Ռուսաստանի զարգացման «արևմտա-յեվրոպական» ուղին և ապացուցում յեվրոպական կուլտուրայի խոշորագույն նշանակությունը։

Նալբանդյանը Գ. հայացքներին ծանոթ և յուրահատուկ չեր համալսարանական միջավայրից։ «Հեգելը և նորա ժամանակը» գրի առնելիս նա ձեռքի տակ եր ունեցել Գ. յերկերի հետմահյա առաջին հրատարակության յերկու հատորները և լայնորեն ոգտագործել այն։ Սակայն Նալբանդյանը վորոշ քննադատական մոտեցում է հանդես բերում դեպի Գ. պատմափիլիսոփայական հայացքները։

Գրիգոր Լուսավորիչ—քան հնագույն ավանդության, վորի գլխավոր աղբյուրն է Ագաթանգեղոս պատմիչը, քրիստոնեության տարածողը Հայաստանում և հայկական յեկեղեցու հիմնադիրը (III—IV դ. դ.)։

Դանթե, Ալիգիերի (1265—1321)—վերածնության վաղ շրջանի խոշորագույն հանճարեղ բանաստեղծ։

Դանոսակայա—քննիչ հանձնաժողովը սխալմամբ այսպես է կոչում Պանովային (տես Պանովա)։

Դավիթ Անհաղթ (V դ.)—նշանավոր հայ փիլիսոփա Սահակի և Մ. Մաշտոցի կրտսեր աշակերտներից։ Կրթվել և բավական տարիներ ապրել է Աթենքում, ուր հիմնա-

ժող կերպով ուսումնասիրել և հունական կլասիկ փիլիսոփայությունը։ Հետևող և նոր պլատոնական փիլիսոփայական դպրոցի։ Նրա նշանավոր գրվածքն է «Դիրք Սահմանաց» աշխատությունը։ Մեկնաբանել և թարգմանել է Պորֆյուրի, Արիստոտելի և Պլատոնի գրվածքները։

Դավիթ Մամիկոնյան (VIII դ.)—Մամիկոնյան տոհմի իշխաններից։ Սրա ժամանակ ուժեղ պայքար է սկսվում Արծրունյանց և Մամիկոնյան տոհմերի միջև։ Մեհրուժան Արծրունին հավատուրացությամբ փրկելով իր կյանքը և վասպուրականի իշխանությունն ստանալով՝ արաբների աջակցությամբ հալածանք է սկսում Մամիկոնյանների դեմ և սպանում է Դավիթ Մամիկոնյանին յերկու յեղբորը, վորի հետևանքով Մեհրուժանն էլ սպանվում է Դավիթ Մամիկոնյանի ձեռքով։

Դելամբեր, Ժան (1717—1783)—Ֆրանսիացի նշանավոր ենցիկլոպեդիստ, աստղաբաշխ և մաթեմատիկոս։

Դեկարտ, Ռենե (1596—1650)—Ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա, մաթեմատիկոս և ֆիզիկոս։

Դեվի, Հ. (1778—1829)—անգլիական հայտնի քիմիկոս, էլեկտրոքիմիական թեորիայի հիմնադիրը։

Դը-Տրավերսե—մարկիզուհի, վորի միջոցով Նալբանդյանը պետք է նամակները փոխադրեր Բակունինին։

Դը-Տրավերսե, Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1829—1864)—մարկիզ, Բակունինի Սիբիրի ծանոթներից։ 1862 թ. Լոնդոնում ծանոթացավ նաև Գերցենի հետ։ Վերադարձին ձերբակալվեց և բանտարկվեց Պետրոպավլովսկ բերդում, վորպես Լոնդոնի պրոպագանդիստների հետ կապված անձնավորություն։ Ազատվեց և մեռավ նախքան դատավճիռ կայանալը։ Նալբանդյանի հետ հանդիպումներ ել ունեցել է Լոնդոնում և Պետերբուրգում 1862 թ.։

Դյումա, Ալեքսանդր (1802—70)—Ֆրանսիական նշանավոր գրող Դ.-ի անունը Նալբանդյանը հիշատակում է Պերճ Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի «Ընկերներ»-ի մեջ։

Զենոբ, Գլակ—IV դարի հայ պատմիչ։ Հեղինակ «Պատմութիւն Տարօնոյ» խորագրով աշխատության, վորը, ինչպես պարզվում է, խմբագրված է ուշ շրջանում։

Զոհրապյան, Հովհաննես վ. (XVIII—XIX դ. դ.)—վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ. հրատարակել և բավական թվով հայկական հին ձեռագրեր։ Աչքի յեն ընկնում Ասոլածաշնչի նրա հրատարակությունը 4 հատորով (1805 թ.) և Մեսրոպյան տառերի գաղափարագրերը (1816 թ.)։ Ունի նաև ինքնուրույն գրվածքներ։

Ծմին, Մկրտիչ (1815—1890)—նշանավոր հայագետ, 1843 թվից Լազարյան ճեմարանի պրոֆեսոր և գաղտնի խորհրդական։ Հրատարակել է մի շարք հայ պատմիչների գործերը։ Ունի բազմաթիվ ուսումնասիրություններ (մեծ մասամբ ռուսերեն) հայ հին գրականության և ժողովրդական բանահյուսության վերաբերյալ։ Նալբանդյանն ե. հեռագրմական տեսակետները քննադատում է գլխավորապես Դպրոց Փարպեցու «Թղթի» հրատարակության կապակցությամբ։

Թագվորյան, Սերոբե—գրող, հասարակական գործիչ, Նալբանդյանի ամենամերձավոր ընկերը, վորի հետ նա ծանոթանում է Բյուրքիայում, վոր գնահատել գեր և խաղացել նրա գլխավորած դեմոկրատական շարժման մեջ։ Թ.-ի գրած պատասխան նամակը, վորտեղ շոշափվում է հեղափոխական կոմիտեների կազմակերպման խնդիրը և հիշատակվում Մաձձինիի անունը, խոշոր դեր խաղաց Նալբանդյանի պատասխանության գործում։

Թադիադյան, Մկռտոմ (1803—1858)—բանաստեղծ, վիպասան, մանկավարժ։ Ընկել և Ցերևանում. սկզբնական կրթությունն ստացել և եջմիածնի վանքում։ 1824 թ. դնում է Հնդկաստան (Կալկաթա) և այնտեղ ապրում և աշխատում է անգլիական հոգևոր ճեմարանում։ 1831 թ. վերադառնում է եջմիածին, սակայն տեսնելով, վոր անկարող է խավարամիտ հոգևորակա-

նուբյան միջավայրում իրագործել իր լուսավորական ծրագրերը, 1834 թ. կրկին գնում է Գալիկիա և այնտեղ էլ մնում մինչև վերջը։

Թ-ը համարվում է մեր նոր գրականության հիմնադրման շրջանի նշանավոր հեղինակներից մեկը։ Նալբանդյանը բարձր էր գնահատում նրա առաջադիմական լուսավորական գործունեությունը։

Թեոդոս Ռ. Փոքր *(408—450 թ. թ.)*—կայսր արևելյան հռոմեական պետության։ Զուրկ լինելով ինքնուրույնությունից պետական դեկը թողել էր կոնսուլ Անթիմիոսին, կայսեր քույր Պուլխերիային և կնոջը՝ Եվդոկիային։ 450 թվին հայատառերից ուղարկված պատգամավորությունը Թեոդոսից ոգնություն և խնդրում պարսիկների դեմ, սակայն Թեոդոսը նույն թվին մեռնում է, իսկ նրա հաջորդ Մարկիանոս կայսրը մերժում է հայերի դիմումը։

Թեոդորյան, Սարգիս *(1783—1877)*—վարդապետ, Փարիզի Մուրադյան վարժարանի հիմնադիրներից մեկը և տեսուչը։ Այվազովսկի և Ամբրոսիոս Դալիքյան վարդապետների հետ միասին 1836 թվին դիմադարձ յեղավ մխիթարյաններից և մասնակցեց Հայկազյան դպրոցի հիմնադրմանը, որի փակվելուց հետո յեկավ Եջմիածին։ Իր պաշտոնակից կղերականությունից հիասթափված՝ վերադարձավ Փարիզ, շարունակելով «Մուրպտյան դպրոցի պատմությանը» յերկրորդ հատորը, ուր ինչպես յենթադրում էր Նալբանդյանը, բացասաբար և արտահայտվում Այվազովսկու մասին։

Թոմա Արծրունի *(IX—X դ. դ.)*—պատմագիր։ Դավիկ Արծրունի թագավորի առաջարկությամբ գրել է Արծրունյանց իշխանական տան պատմությունը՝ սկսած առասպելական շրջանից մինչև X դարի սկիզբը։ Պատմական տեսակետից առանձին նշանակություն ունի նրա գրվածքի վերջին մասը, ուր նա նկարագրում է վասպուրականի, Սասունի և Տարոնի դեպքերը և Դավիկ Բագավորի շինարարությունը։

Թոմա Վանանդեցի *(—1711)*—իսկական անունը Թոմա վարդապետ Նուրիջանյան Վանանդեցի. հայ տպագրական գործի անձնվեր տարածողներից մեկը։ Դողթան գավառի Վանանդ գյուղից էր. 1670 թ. նա անցնում է Ցեվրոպա և Ամստերդամում գտնված հայկական տպարանը գործի դնում. 1695 թվին նաև հրատարակում է «Համատարած աշխարհացույց» անունով քարտեզը, իսկ մյուս տարին այդ քարտեզի բացատրությունը («բանալին»). դրա հետ մեկտեղ տպագրեց Մ. Խորենացու Պատմությունը, լինչպես և չափերի, կշիռների ու այլ հարցերի վերաբերյալ մի քանի գրքեր։ Հրատարակությունները նյութական տեսակետից չեն ապահովում տպարանական գործը և նա պարտքերի տակ է ընկնում։ Նրա մահից հետո, 1717 թվին, Ամստերդամի տպարանը փակվում է։

Թոմինի, Ալեքսիս *(1805—1859)*—ֆրանսիական լիբերալ պատմաբան և քաղաքական գործիչ, ակադեմիկ։ Նրա գործերից հայտնի յեն՝ «Հին ռեժիմը և հեղափոխությունը» և «Դեմոկրատիան Ամերիկայում», որը հիշատակում է Նալբանդյանը «Հեգելը և նորա ժամանակը» աշխատության մեջ։

Ժամեն, Ժյուլ Յեղեոսին *(1818—1886)*—ֆրանսիացի ֆիզիկոս։

Լապլաս, Պ. Ա. *(1749—1827)*—ֆրանսիացի մաթեմատիկոս, աստղաբաշխ և ֆիզիկոս։ Նալբանդյանը հիշատակում է նրա «Ցերկնքի մեխանիկա»-ն։

Լավուազիե, Անտուան *(1743—1794)*—ժամանակակից քիմիայի հիմնադիրը։

Լևոն VI—բյուզանդական կայսր *(886—912)*։

Լևոն, Հռոմի պապ *(իշխել է 442—450 թ.թ.)*. 451 թ. Քաղկեդոն քաղաքում գումարվում է կրոնական չորրորդ տիեզերական ժողովը, ուր, այլ հնդիրների թվում, Լևոն պապի դավանաբանական բովանդակությամբ մի գրություն է քննության առնվում. այդ գրությունը պատմության մեջ հայտնի յե «Լևոնի տումար» անունով. այդտեղ Լևոն պապը բացատրում է հռոմեական յեկեղեցու տեսակետը Քրիստոսի բնության նկատմամբ, որ Քրիստոսը կատարյալ մարդ և կատարյալ աստված էր (յերկու բնություն ուներ) և այդ յերկու բնությունները միմյանց հետ միացած չեյին, այլ գործում

եյին անկախ. մինչդեռ Ալեքսանդրիայի և արևելյան այլ յեկեղեցիների ներկայացուցիչները Քրիստոսի մեջ ընդունում եյին մի բնություն՝ կազմված միմյանց հետ անխառն և անշփոթ միացած յերկու բնություններից, վորոնցից աստվածային բնությունը գերակշռող եր։ Պալատական պաշտոնյաների ճնշման տակ Բազիլեոսնի ժողովում ընդունվում և Լևոնի տեսակետը, վորը արևելյան յեկեղեցիներում առեղծում և մնծամնծ խռովություններ հայոց յեկեղեցին չի մասնակցում այդ ժողովին, հայ ժողովուրդը այդ միջոցին զբաղված եր պարսիկների դեմ պայքար մղելով, սակայն հետագայում, Բաբգեն կաթողիկոսի ժամանակ, 506 թ. Դվինում ժողով է գումարվում, ուր հայ յեկեղեցին մերժում է Բազիլեոսնի ժողովի վորոշումը։

Լիբին, Յուստուս (1803—1873)—գերմանական հռչակավոր քիմիկոս, դյուղատնտեսական քիմիայի առեղծողը։

Լիդով—անհայտ, հավանորեն Բակունինի բարեկամներից մեկի մտացածին անունն է։

Լիսեմբերգ, Գեորգ-Բերնսոճ (1742—1799)—գերմանական նշանավոր գիտնական և հրապարակախոս, ֆիզիկայի և աստղաբաշխության պրոֆեսոր։

Լյալին, Պիմենե Պետրովիչ (1802—?)—կալվածատեր Եարկովի նահանգից, կոլեժսկի ռեգիստրատոր։ Ձերբակալվեց Լոնդոնի պրոպագանդիստների հետ հարաբերություն ունենալու համար. այդ բանի համար հիմք ծառայեց Բակունինի՝ նրան գրած նամակները, վոր պետք է տեղ հասցներ Նալբանդյանը։

Լոկուստա—հայտնի թունադործուհի հին Հռոմում, վորի ձեռքով սպանվեցին Կլավդիոսը և Բրիտանիկոսը։

Լոյոլա, Իգնատիոս (1491—1556)—կաթոլիկական յեզվիտական կարգի հիմնադիրը և առաջին գեներալը։

Լուդովիկոս XIII (1601—1643)—Ֆրանսիայի թագավոր սկսած 1610 թվից։

Լուդովիկոս XIV (1638—1715)—Ֆրանսիայի թագավոր սկսած 1643 թվից։

Լուդովիկոս XV (1710—1774)—Ֆրանսիայի թագավոր սկսած 1715 թվից։

Լուդովիկոս XVI (1754—1793)—Ֆրանսիայի թագավոր սկսած 1774 թվից։

Լութեր, Մարտին (1483—1546)—գերմանական կրոնական ռեֆորմատոր։

Լուկուլլոս *(74—67 թ.թ. մ. թ. ա.)* դորավար, Հռոմի հասարակապետական բանակի հրամանատար Արևելքում։ Կռվել է Միհրդատ Պոնտացու և Հայոց թագավոր Տիգրան Բ-ի դեմ, նրանց յերկրները գրավելու համար, բայց հաջողություն չի ունեցել։ Նա հայտնի է իբրև կողոպտող, ընչաքաղց և վարթամ կյանքի անձնատուր մի դորավար։

Խալիբյան, Հարություն (1790—1871)—վաճառական և կալվածատեր, մի քանի անդամ Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ։ Ներսես Աշտարակեցու կարգադրությամբ նշանակվեց նաև յեկեղեցական գործերի լիազոր։ Նալբանդյանն իր հասարակական գործունեությունն սկսեց Յալթա-Ներսեսյան աղայական ռևակցիոն բլոկի դեմ մղած բուռն հետևողական պայքարով։

Խաչատրյան—համաձայն Նալբանդյանի ցուցմունքի՝ խալանդպատակ հայ, վորն, իբր թե, Մաձինիի միջնորդությամբ պետք է ուղեր վորոշ պղտահայերի խալական հպատակություն ընդունելու։

Խաչիկյան, Գաբրիել (1831—1898)—բնագետ և մանկավարժ. Աբովյանի աշակերտներից։ Բարձրագույն կրթությունն ստացել է Դորպատում, պաշտոնավարում եր Ներսիսյան դպրոցում։ Նալբանդյանը, հավանորեն, նրա հետ ծանոթացել է Թիֆլիսում, 1860 թ.։

Խաճաճյան, Պազարոս *(նույնը՝ Մաքիթով Լազար)*—նոր Նախիջևանցի, ապրում եր Պետերբուրգում և կատարում Կ. Հայբուլեսյանի հանձնարարությունները։ Նրան եյին հասցեագրված «Ճանապարհորդությանը» այն որինակները, վոր ուղարկել եր Բակունինը Նալբանդյանին հանձնելու համար և վոստիկանության ձեռքն եյին ընկել վիատիչնիկովի ձերբակալության ժամանակ։

Խորենացի (V—VI դ. դ.)—հայտնի՝ Թարգմանիչ մականունով։ Սրա անունով մեզ է հասել «Պատմութիւն սրբոյն Սահակայ և Աբրահամեանութիւն Մեսրովբայ Թարգմանչի և մենամարտութիւն Դաւթի և Գողիաթայ։

Խրիմյան, Մկրտիչ (Հայրիկ) (1820—1907)—կաթողիկոս (1892—1907)։ Վարագա վանքում վարդապետ յեղած ժամանակ հրատարակում էր (1858 թվից) «Արծուի վանքի» պարբերականը։ Գործունեության այս շրջանում նա դեկավարում էր այսպես կոչված «ազգողոյան» կուսակցությունը։ Վայելում էր «Մելիք» պաշտպանությունը։ «Ազգային Բշվառություն» հոդվածում նրա մասին դրականորեն է արտահայտվում և Նալբանդյանը։

Խուժիկ (V դ.)—Ղ. Փարպեցու վկայությամբ պարսիկ վաճառական Խուժաստանի շրջանից։ Դիտեր հայերեն լեզուն և մոտ էր քրիստոնյաներին։ Նա մեծ ոգնություն է ցույց տալիս 452 թ. Դարսկաստան աքսորված հայ նախարարներին և կարողանում է գաղտնի ձևով Գարսկաստանում ապրված հայ հոգևորականների վոսկորները փոխադրել քրիստոնյաների մոտ։

Նալիգուլա, Նայոս (12—41) հռոմեական կայսր։

Նաևս, Եմմանուել (1724—1804)—գերմանական կլասիկ իդեալիզմի նախահայրը։

Նավուր, Նամիլլո Բենզո (1810—1861)—իտալական քաղաքական գործիչ, չափավոր լիբերալ, միապետական կուսակցության պարագլուխ, վորը ձգտում էր սարդինական դինաստիայի դրոշի տակ միավորել Իտալիան։

Նատրիած, դը-Ֆրեն (1809—1891)—ֆրանսիացի նշանավոր բնագետ և մարդաբան։ Նալբանդյանի անձնական գրադարանում պահվում է նրա „Превращение в мире животных и человека" թարգմանական գործը։

Նարլոս I (1600—1649)—Անգլիայի թագավոր՝ սկսած 1625 թվից։ Գլխատվեց անգլիական հեղափոխության ժամանակ։

Նարլոս II (1630—1685)—Անգլիայի թագավոր՝ սկսած 1649 թվից։

Նեպլեր, Յոհան (1571—1630)—գերմանացի հռչակավոր աստղաբաշխ. գտավ մոլորակների շարժման որենքները։

Նեցկեր, Նիկոլայ Խրիստոֆորովիչ (1809—1886)—բժիշկ և բանաստեղծ, Շեքսպիրի թարգմանիչ։ Ցեղել է Բելինսկու, Դերցենի և Գրանովսկու մոտիկ բարեկամը։

Նիրակոս Գանձակեցի (XIII դ.)—պատմագիր։ Իր ժամանակի կրթված անձնավորություններից մեկն էր։ Մոնղոլների արշավանքի միջոցին գերի է ընկնում և մնում է մի առ ժամանակ նրանց մոտ իբրև թարգման և գրագիր։ Գրել է պատմական մի աշխատություն, վորի կարևոր մասը կազմում են ժամանակակից դեպքերը։

Նյուվիոս—հռոմեական կայսր (41—54)։

Նորյուն (V դ.)—հայտնի է «քաջնչելի» մականունով. Սահակի և Մ. Մաշտոցի ամուր աշակերտներից։ Բյուզանդիայում կրթություն ստանալուց հետո, 432 թ. վերադառնում է Հայաստան և գործակցում Մ. Մաշտոցին։ Նա թողել է մի նշանավոր աշխատություն, վորը վերաբերում է իր ուսուցիչ Մ. Մաշտոցի գործունեության և հայկական տառերը հնարելուն («Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի»)։

Նորատկով, Միխայիլ Սեմյոնովիչ—1861 թվից Արևելյան Սիբիրի գեներալ-գուբերնատոր, Պ. Ա. Բակունինի հինոջ յեղբայրը։

Նովայակի—բժիշկ, Նալբանդյանի ուսանողական շրջանի ընկերներից մեկը։

Նրեսոս (VI դ. մ. թ. ա.)—Լիդիայի թագավոր, վոր հռչակվեց իր հարստությամբ։

Նրյուգեր—գերմանացի ֆիզիկոս. Նալբանդյանի գրադարանում պահպանվում է նրա գրքի ռուսերեն թարգմանությունը,—„Школа физики", 1861, СПБ.

Նուրդյումով, Պ. Ա.—Բակունինի ծածկանուններից մեկը։

Ձազկեռ Բ. (թագավորել է 439—457 թ.թ.)—պարսից Սասանյան տոհմի թագավորներից. մոլեռանդ զրադաշտական։ Արտահայտելով պարսից ռազմատենչ աղնվականության և բարձր հոգևորականության ծրագիրը, նա ուժեղ հալածանք է սկսում հայաստանի, վրաստանի և Աղվանքի դեմ, ձգտելով բռնությամբ նրանց ձուլել պարսիկների հետ։ Այս գործողություններն առիթ են տալիս ժողովրդական մեծ ապստամբության, վորը վերջ-

նում է 451 թվի Ավարայրի ճակատամարտով, ուր հայերը թեև պարտություն են մատնվում, սակայն պարսիկներին չի հաջողվում իրենց ծրագիրն իրագործել Հայաստանում։

Հակոբ II (1633—1701)—Մեծ Բրիտանիայի և Իրլանդիայի թագավոր (1685—1688 թ.)։ Դահազուրկ լինելով այսպես կոչված «Փառավոր հեղափոխության» ժամանակ։

Համազասպ Անծրուճի (VIII դ.) (Անծրուճյաց Դավիթ իշխանի որդին)—774—775 թ.թ. ապստամբության ժամանակ իր Սահակ և Մեհրուժան հորեղբայրների հետ կռիվներ է մղում արաբացիների դեմ. 786 թ. ձերբակալվում է Թալմ կամ Թուղմա վոսակնան ձեռքով և սպանվում։

Համազասպ Մամիկոնյան (V—VI դ.)—Վահան Մամիկոնյան սպարապետի զորական. Ղ. Փարպեցու հայածանքի շրջանում նրան պատսպարել և պաշտպանություն ու ցույց տվել. սրա միջոցով է Ղ. Փարպեցին իր Թուղթն Ամիդ քաղաքից ուղարկել Վահան Մամիկոնյանին։

Հայմ, Ռուդոլֆ (1821—1901)—գրականության նշանավոր պատմաբան. հիշատակության արժանի չեն Համբոլդտին, Հեգելին, Շոպենհաուերին, մանավանդ Հերդերին նվիրած նրա գործերն ու մոնոգրաֆիակաները։ Հ. „Hegel und seine Zeit“ խորագրով աշխատությունը առաջին թարգմանությամբ լույս տեսավ 1861 թ., բայց Նալբանդյանի ձեռքն ընկավ Պետրոպավլովսկ բերդում 1863 թ.։ Այդտեղ էլ նա գրի առավ իր դիտողությունները, որոնք հետագայում տպագրվեցին նույն «Հեգելը և նորա ժամանակը» վերնագրով։ Ցույց տալով Հայմի և Զերնիշևսկու հետևյալ Նալբանդյանն իր այդ գործում քննադատության չենթարկից վոչ միայն Հեգելին՝ նրա ուսմունքի իդեալիստական բնույթի համար, այլև Հ., որը չգնաց նր թափում հեգելյան փիլիսոփայության գերեզմանափորը դառնալ։

Հայրապետյան, Կարապ Մակարիչ (1825—1872)—նոր-նախիջևանցի վաճառական, հետագայում քաղաքագլուխ։ Զգալի դեր խաղաց Նալբյանի և ընդհանրապես պահպանողական հոսանքի դեմ մղած պայքարում, որի համար վորոշ ժողովրդականություն ձեռք բերեց և արժանացավ Նալբանդյանի համակրանքին։ Վորպես քաղաքագլուխ լուրջ աշակցություն ցույց տվեց Նալբանդյանի յերևափոխան ընտրվելու և Հնդկաստան ուղևորվելու գործում։ 1863 թ. հուլիսին Պետերբուրգ յեղած ժամանակ տեսակցություն ունեցավ Պետրոպավլովսկի կալանավորի հետ, ցանկանալով օգնել նրան։ Հրաժարականոսի մասին հետո նրա հանդիսավոր թաղման կազմակերպիչներից մեկը, որի համար քննության չենթարկվեց վոսակնանական որգանների կողմից։

Հեգել, Գեորգ-Վիլհելմ-Ֆրիդրիխ (1770—1831)—նոր ժամանակի գերմանական մեծագույն իդեալիստ փիլիսոփա։

Նալբանդյանը Հ. ուսմունքի հետևորդներին ծանոթացել է հավանորեն դեռևս հայմալաբանական տարիներում՝ գլխավորապես Բելլինսկու, Դերցենի, Զերնիշևսկու և մյուսների յերկերի միջոցով։ Սակայն անկասկած է, որ 50-ական թվականների վերջերից նա հնարավորություն է ունեցել կարդալ հենց Հ. ուսուներեն թարգմանությամբ (այդ տարիներին լույս եյին տեսնում նրա յերկու գլխավոր աշխատությունները՝ „Энциклопедия философских наук в кратком очерке“, 1861—1864 և „Курс эстетики“, 1859—1860)։ Իր հիմնական վերաբերմունքը դեպի գերմանական մեծ փիլիսոփան նա ձևակերպել է «Հեգելը և նորա ժամանակը» աշխատության մեջ, որը գրել է Պետրոպավլովսկի բերդում, Հայմի նույնանուն աշխատության ռուսերեն թարգմանության կապակցությամբ։

Հենրիկոս IV (1553—1610)—Ֆրանսիայի թագավոր սկսած 1594 թվից։

Հենրիկոս VIII (1491—1547)—անգլիական թագավոր սկսած 1509 թվից։

Հերակլ, կայսր Բյուզանդիայի (610—641)—Հերակլյան դինաստիայի հիմնադիրը, քաղաքագետ և վորձված զորավար. 624 թ. մեծ արշավանք է սկսում պարսից Խոսրով թագավորի դեմ, որը գրավել եր Բյուզանդիայի արևելյան յերկրների մեծ մասը։ Հերակլը դավորի դեմ, որը գրավել եր Բյուզանդիայի արևելյան յերկրների մեծ մասը։ Հերակլը Հայաստանի վրայով անցնում է Ատրպատականն և Ուրմիա լճի մոտ պարտության մատնում պարսիկներին։ Հերակլի արշավանքների ժամանակ կողոպուտի և ավերածության են յենթարկվում Հայաստանի և Աղվանքի մի քանի շրջանները։

Համայակ Մամիկոնյան (V դ.)—հայոց զորքի սպարապետ Համազասպ Մամիկոնյանի որդին և Վարդան (մեծ) Մամիկոնյանի յեղբայրը։ Ավարայրի ճակատամարտից հետո ամրանալով Տայքի բերդերում և իր շուրջը հավաքելով մի քանի իշխաններ՝ կռիվ է մղում պարսիկների դեմ, որի ժամանակ և սպանվում է։ Սրա որդին էր Վահան Մամիկոնյանը, որին Ղ. Փարպեցին իր թուղթն է գրում։

Հոկտավիան կամ Ոկտավիա Կրտսեր (?—11 մ. թ. ա.)—Ոգոստոս կայսեր քույրը, Կայոս Մարցելլոսի, հետագայում Մարկոս Անտոնիոսի կինը։

Հոմերոս—անտիկ կուլտուրայի ավանդական ներկայացուցիչներից մեկը, որին վերագրվում է «Իլիական» և «Ոդիսական»։

Հովհաս (V դ.)—Սահակի և Մ. Մաշտոցի ավագ աշակերտներից մեկը։ Իյուզանդիայում կրթություն ստանալուց հետո 432 թ. վերադառնում է Հայաստան և մասնակցում Աստվածաշնչի և այլ գրվածքների հունարենից հայերեն թարգմանությանը։

Հովհաս Մանդակունի—Մանդակունի նախարարական տոհմից, ստանում է հունական կրթություն, կաթողիկոսական իշխանություն է վարում 478—490 թ.թ., գործնական աշակցություն է ցույց տալիս 481—484 թ.թ. հայերի բարձրացրած ապստամբությանը պարսիկների դեմ։ Գրել է մի շարք ճառեր, որոնք բացի կրոնական-եկեղեցական խնդիրներից, բովանդակում են նաև V դարի հայերի կյանքի վերաբերյալ խիստ հետաքրքրական և պատմական տեսակետից կարևոր տեղեկություններ։

Հովհաննես—հայտնի չէ, թե յիրը է ապրել և ինչ է գրել։

Հովհաննես Պատմաբան (Դրասխանակերտցի)—X դարի կաթողիկոս և պատմիչ։ Գրել է պատմական մի կարևոր աշխատություն «Պատմութիւն հայոց» վերնագրով։

Հովհաննիկ վ. (VII դ.)—Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ (615—628 թ.թ.). յիշվել է Վաղարշապատի ս. Կաթողիկեի (Ընջմիածնի) վանահայր. նրա մասին ուրիշ տեղեկություններ չկան։

Հովսեփ Ծերից (V դ.)—Վայոց ձորից։ Սահակի և Մ. Մաշտոցի ավագ աշակերտներից մեկը։ Մ. Մաշտոցի մահից հետո ընտրվում է Հայոց կաթողիկոսական աթոռի կառավարիչ. ձերբակալվում և պարսիկների կողմից խրճև 450—451 թ.թ. հայերի ապստամբության գլխավոր ղեկավարներից մեկը և 454 թ. մահվան է դատապարտվում Նյուշապուհ քաղաքի մոտ։

Հովսեփ Պաղնացի (V դ.)—Սահակի և Մ. Մաշտոցի ավագ աշակերտներից և գլխավոր աշակիցներից մեկը։ Հայերեն տառերի գյուտից անմիջապես հետո Սամոսատում Մ. Մաշտոցի և իր ընկեր Հովհանի հետ ձեռնարկում է Սողոմոնի առակների թարգմանության։ Այնուհետև մեծ թվով թարգմանություններ է կատարում Յեղեսիայում, Իյուզանդիայում և Հայաստանում՝ ասորերեն և հունարեն գրվածքներից։

Հուլիոս Նեպոտ (100—44)—Հռոմեական նշանավոր զորավար, որի հումվիր և դիկտատուրը կայսերական առաջին պետական հիմնադիրը։

Հումբոլդտ, Ալեքսանդր (1769—1859)—Նշանավոր բնագետ և ճանապարհորդ, ֆիզիկական աշխարհագրության հիմնադիրը։ Հ.-ի մահվան առթիվ Նալբանդյանը մի թղթակցություն ուղարկեց «Հյուսիսային աստղ»-ին, որ տպվեց Մարսիլիոս Սաուաֆյան ստորագրությամբ։

Զվիկ (V դ.)—Աղթամունյաց Վասակ իշխանի աղջիկը և Համայակ Մամիկոնյանի կինը։ Ուներ չորս արու զավակ՝ Վահան, որին Ղ. Փարպեցին իր թուղթն է գրում, Վասակ, Աբաասիա և Վարդ։ Զվիկի քույրն է Անուշ-Վռամը, որին ամուսնացել էր Վրաց Աշուշա բդեշխի հետ։ Զվիկի խնամքի տակ վրաց Աշուշա բդեշխի տանն է կրթվում և անվում Ղ. Փարպեցին։

Զազար Փարպեցի (V դ.)—Նշանավոր պատմագիր, Աբարաայան գավառի Փարպի գյուղից էր։ Կրթվել է Վահան Մամիկոնյանի հետ Աղան Աղթամունու մոտ։ Բարձրագույն կրթությունն ստացել է Իյուզանդիայում։ Վերադառնում է Հայաստան պարսիկների բռնությունների շրջանում։ Հալածանքի է ենթարկվում ասորական կրթությամբ հայ հոգևորա-

կանների կողմից և հեռանում է Ամիդ քաղաքը, վորտեղից նա գրում է իր հայտնի թուղթը Վահան Մամիկոնյանին, յերբ վերջինս մարզպան է նշանակվում Հայաստանում։ Վերադառնում է Արարատյան յերկիրը և Վ. Մամիկոնյանի առաջարկությամբ գրում է Հայոց պատմությունը սկսած 387 թ. մինչև Վահանի մարզպանական պաշտոն ստանալը։ Փարպեցու Պատմությունը, իրրև ականատեսի գրված, մեծ արժեք է ներկայացնում պատմական դեպքերի ուսումնասիրության տեսակետից։

Պետրոս Գետեց (V դ.)—Սահակի և Մ. Մաշտոցի ավագ աշակերտներից և գործակիցներից մեկը։ Ծնվել է Վանանդի (Կաբսի) Իշավանք գյուղում, կրթվել է Բյուզանդիայում և պաշտոնավարել է Բագրևանդում։ Ավարայրի ճակատամարտից հետո ձերբակալվում է իր ընկերակիցների հետ պարսիկների կողմից և մահվան դատապարտվում։ Նյուշապուհ քաղաքի մոտ։

Մազարինի, Ջուլիո (1602—1661)—իտալացի կարդինալ. վարչապետ Ֆրանսիայում։

Մալխաս—հնդկահայ։

Մակինճոշ (1765—1832)—անգլիացի հրապարակախոս, պատմաբան և փիլիսոփա։

Մածձինի, Ջուզեպպե (1805—1872)—XIX դարի յերկրորդ և յերրորդ քառորդների իտալական ազգային-ազատագրական շարժման խոշորագույն գործիչներից մեկը։ Բարձր դնահատելով Մ. վարած ազգային-ազատագրական պայքարը, Նալբանդյանը «Յերկրագործության» մեջ մեծ համակրանքով և արտահայտվում նրա մասին. «Սուրբ Մածձինի և Սուրբ Գաուբալդիի բարեխոսությունը անպակաս լինի հարբուրդյան տունը գլխից...»։ Ինչպես յերևում է Թագվորյանի նամակից, Նալբանդյանը հանդիպել ու նամակագրություն է ունեցել Մ.-ի (ծածկագրում՝ Մարսիրոս) հետ, նպատակ ունենալով քաղաքական կապեր ստեղծել նրա և Թյուրքահայ գործիչների միջև։ Նալբանդյանի մոտ հայտաբերված իրերի մեջ գտնվել և նաև Մ. նկարը։

Մամբրե (V դ.)—հայտնի և վերծանող (ընթերցող, մեկնաբանող) մականվամբ Սահակի և Մ. Մաշտոցի կրտսեր աշակերտներից։ Հայ մատենագիրները նրան փիլիսոփա են անվանում. նրա անունով կրոնական բովանդակությամբ յերկու ճառեր են հասել մեզ։

Մատեոս կաթողիկոս (IX դ.)—եղել է Սևանի վանքի վանահայր։ Գրել է յերկու նամակ, մեկը Դվինի 893 թ. մեծ յերկրաշարժի առթիվ բնակչությանը մխիթարելու, իսկ մյուսը Աշոտ Ա. Բագրատունու յեղբայր Սմբատ սպարապետին, վորով մերժում է նրա կողմից յեղած առաջարկությունը՝ հանդես գալ Գեորգ կաթողիկոսի դեմ, նրան տապալել և կաթողիկոսական աթոռը ժառանգել։

Մատթեոս կաթողիկոս (Ջուխաձյան) (?—1865)—կաթողիկոս (1859—1865), հեղինակ մի շարք կրոնական-աստվածաբանական աշխատությունների։ Տակտիկական նկատառումներով Նալբանդյանը նրա հետ վորոշ չափով մերձեցավ 1860—62 թ.թ., սակայն վերջում բացասական վերաբերմունք հանդես բերեց։

Մարիա Ակեռուանցիսս (1755—1793)—Ֆրանսիայի թագուհի, դլխատվեց իր ամուսնու՝ Լուդովիկոս XVI-ի հետ միասին։

Մարտյանով, Պյոտր Ալեքսեյեվիչ (1834—1865)—քաղաքական գործիչ, Լոնդոնում մտերիկ հարաբերություններ մեջ մտավ Դերցենի խմբակի հետ։ 1863 թ. Ռուսաստան վերադառնալով, ձերբակալվեց և նետվեց Ալեքսեևսկի ռավելինը։ Դատապարտվեց 5 տարվա ժամանակիր աշխատանքի։ Մեռավ Իրկուտսկում։ Նալբանդյանը Մ.-ին հանդիպել է Լոնդոնում։

Մարգյանով—տես Մարտյանով։

Մաֆիավելի, Նիկոլո (1469—1527)—իտալական քաղաքական գործիչ և գրող։

Մեհրուժան Արծրունի (IV դ.)—Արծրունյաց նախարարական տոհմի իշխան, սպարապետ Վասակ Մամիկոնյանի քրոջ վորդին. նա հակառակորդ եր Արշակունյաց տոհմի իշխանությանը և պարսկասեր հայ ֆեոդալների պարագլուխն եր։ Նպատակ ունենալով տապալել հայ Արշակունի թագավորությունը՝ ընդունում է զրադաշտական կրոնը։ Նա պատճառ է լինում հայ պետականության կործանման և Արշակ Բ.-ի բանտարկության ու

սպանության. սակայն 371 թ. Ջիրավի ճակատամարտում նա բռնվում և սպանվում է Սմբատ Բագրատունու ձեռքով։

Մեհրուժան Արծրունի (V դ.)—Արծրունյաց նախարարական տոհմի իշխան, Վասակ Արծրունու որդին և Ղ. Փարպեցու ուսուցիչ Ադան Արծրունու հայրը։ 450 թ. պարսիկների դեմ հայերի ապստամբության առաջնորդներից մեկը։ Ավարայրի ճակատամարտից հետո ձերբակալվում է պարսիկների կողմից և աքսորվում Վրկան։ Վերադառնում է Հայաստան 461 թ.։

Մեհրուժան Արծրունի (VIII դ.) *(Արծրունյաց իշխան Դաւիթի որդին)*—իր Սահակ և Համազասպ յեղբայրների հետ 774—775 թ.թ. մասնակցում է արաբացիների դեմ բարձրացրած ապստամբությանը։ Ձերբակալվում է Խալիֆ կամ Խուզիմա վոստիկանի ձեռքով 786 թ., հավատուրացությամբ փրկում է իր կյանքը և արաբական իշխանության կողմից ստանում Վասպուրականի իշխանությունը, սակայն շուտով սպանվում է Դավիթ Մամիկոնյանի ձեռքով, իբրև հայրենիքի և Մամիկոնյան տոհմի թշնամի։

Մեյսներ, Ալեքսանդր Ֆառլովիչ—անհայտ։

Մեչուխեչա—Հարությունը Սբվաճյանի կեղծանունը *(տես)*։

Մեսապիենա Վալերիա (15—48)—Կլավդիոս կայսեր կինը, վոր հռչակվեց իր դաժան բնավորությամբ և անառակ կենցաղով։

Մեսրոպ Մաշտոց (361—440)—V դարի առաջին կեսի հանճարեղ քաղաքական և գրական-կուլտուրական գործիչ և հայկական տառերի հնարողը։ Ծնվել է Տարոնի Հացեկաց գյուղում։ Ստացել է հիմնավոր կրթություն և լավ գիտեր հունարեն ու սորերեն լեզուները։ Սկզբում քարտուղարի պաշտոն էր կատարում Արշակունիների արքունիքում վաղարշապատ քաղաքում, հետո ընդունում և հոգևոր կոչում և մեծ գործունեություն ծավալում։ Նա հնարում է հայկական տառերը *(409—412 թ.թ.)*, մեծ թվով աշակերտներ և պատրաստում, վորոնց մի մասն ուղարկում և արտասահման կրթվելու, Հայաստանի դանազան վայրերում դպրոցներ է բանում և Սահակ կաթողիկոսի հետ մեծ գարկ և տալիս կուլտուրական և կրթական գործին։ Հայկական տառերի գյուտը մի նոր դարաշրջան է կազմում հայ ժողովրդի համար։ 440 թ. մեռնում և թաղվում է Ոշականում։

Մեսսերմիխ, Կլեմենս (1773—1859)—*ավստրիական պետական կանցլեր (1821—1848)*—ծայրահեղ ռեակցիոներ։

Միաճասյան, Միխայել (1829—1880)—հեծելազորի շտաբս-կապիտան։ Գրական գործունեությունն սկսել է «Մեղու Հայաստանի»-ի եջերում 1860—61 թվականներին աշխատակցում եր «Հյուսիսափայլ»-ին։ 1868 թ. Պետերբուրգում հրատարակեց հայոնի «Հնաբ հայկական» ժողովածուն, վորի մեջ լույս տեսան Նալբանդյանի մի շարք բանաստեղծությունները, կենսագրականի հետ միասին։ Նալբանդյանը նրա հետ ծանոթացել և թիֆլիսում։

Միլլ, Ջոն-Սեյուարս (1806—1873)—անգլիական տնտեսագետ, կլասիկ դպրոցի եկիդոն, սոցիոլիբերալ փիլիսոփա, հեղինակ «Քաղաքատնտեսության հիմունքների» աշխատության, վոր կրում է եկլեկտիզմի և գռեհկացման խոր կնիք։ Մ. «Հիմունքների»-ի ռուսերեն թարգմանությունը կատարեց Ն. Դ. Ձերնիշևսկին, վորն ուտոպիական սոցիալիզմի վոգով ոժտեց այն մեկնաբանություններով ու ծանոթագրություններով։ Այդ ծանոթագրությունների համար Ձերնիշևսկին արժանացավ Մարքսի բարձր գնահատականին. Նալբանդյանը «Ցերկրադրծության» մեջ հիշատակում է Մ. „On liberty“ («Ազատության մասին») աշխատությունը։

Միլտոն, Ջոն (1608—1676)—անգլիական բանաստեղծ, հրապարակախոս, «Դրախտ կորուսյալ» հռչակավոր եպիկ պոեմի հեղինակ։

Միխայելիս, Յոհան Դոսլիբ (1704—1740)—գերմանացի փիլիսոփա։

Միսաքյան, Խաչատուր (1815—1891)—արևմտահայ բանաստեղծ և հրապարակախոս։

քաղաքական հայացքներով հարում էր պահպանողականությանը. աչքի ընկավ Սա. Վոսկանի դեմ «Մասյաց»-ի էջերում զեկուցած իր հոդվածներով։ 1848—1872 թթ. ապրում էր Փարիզում, վորտեղ և հանդիպումներ է ունեցել Նալբանդյանի հետ։

Միխել-Անջելո Բուոնարոտի (1475—1564)—վերածնության շրջանի խոշոր հանճարավոր քանդակագործ, նկարիչ և ճարտարապետ։

Մյասնիկով, Մարտին Մակարիչ—վաճառական, Նալբանդյանի քույր Վառվառեյի ամուսինը։

Մոհամեդ—խալիֆաթի կողմից Հայաստան ուղարկված վոստիկաններից մեկը։

Մովսես Խորենացի (V—VI դ. դ.)—մեծ պատմագիր և մատենագիր, իր վկայությամբ Սահակի և Մ. Մաշտոցի կրտսեր աշակերտներից մեկը, կրթվել է Ճեղեսիայում, Բյուզանդիայում և Աթենքում. ճանապարհորդել է Ասորիք, Պաղեստին և Ալեքսանդրիա. վերադառնում է Հայաստան պարսից հալածանքների շրջանում. Սահակ Բագրատունու առաջարկությամբ գրում է հայոց պատմությունը. առաջին հեղինակն է, վոր ձեռնարկում է գրելու հայ ազգի պատմությունը սկզբից մինչև հինգերորդ դարի 40-ական թվականները. նրանից հետո յեկող բոլոր հայ պատմագիրները ընդօրինակում են նրա գրվածքը և նրան անվանում «պատմահայր, քերթող, փիլիսոփա և այլն»։ Նրա պատմությունը մեծ նշանակություն ունի Անդրկովկասի ժողովուրդների հնագույն շրջանի պատմության ուսումնասիրության համար։

Մոցարտ, Վոլֆգանգ Ամադեուս (1756—1791)—գերմանացի հոչակավոր կոմպոզիտոր։

Յագնե—ֆրանսիացի, փիլիսի պատգրքի հեղինակ։

Յեզիս (VIII դ.)—արաբական վոստիկան Հայաստանում 752 թ., վորի ժամանակ խալիֆաթը ծանր հարկեր և սահմանում Հայաստանում և անտեսապես քայքայում յերկիրը։

Յեզնիկ կամ Յեզնակ (V դ.)—Կողբ գյուղից. Սահակի և Մ. Մաշտոցի ավագ աշակերտներից, մեծ փիլիսոփա։ Կրթվել է Ասորիքի Ճեղեսիա քաղաքում և Բյուզանդիայում։ Ուսումնասիրել է հունական կլասիկ փիլիսոփայությունը։ Հայաստան է վերադարձել 432 թ. և սերտ մասնակցություն ունեցել Աստվածաշնչի թարգմանության։ Թողել է մի նշանավոր գրվածք «Եղծ աղանդոց» վերնագրով։

Յեղիազար Անբատցի (? – 1691)—Յերուսաղեմի պատրիարքի վոխանորդ, այնուհետև պատրիարք և Եջմիածնի կաթողիկոս։

Յեղիշե—V դարի հայ մեծ պատմիչ և գրող, հեղինակ «Վարդանանց պատերազմը» հոչակավոր յերկի։

Յեվդիքիոս—հույն հոգևորական, վոր մեծ ազմուկով դուրս յեկավ Նեստորի ուսմունքի դեմ՝ հերքելով Քրիստոսի մարդեղության դաղափարը։ Բանադրվեց 451 թվին։

Յուվենալ, Դեցիմ (55—140) — հռոմեական յերգիծաբան. իր սատիրական գրվածքներում նա խարազանում է ժամանակակից բարքերի անկումը։

Ներուգոդոնոսր (–561 մ. թ. ա.)—հին Ասորեստանի հզոր թագավորներից մեկը։

Նազարյան, Սեխպանոս (1814—1879)—հոչակավոր գիտնական, հրապարակախոս, «Հյուսիսափայլ» ամսագրի խմբագիր։ Ծնվել և Թիֆլիսում, քահանայի ընտանիքում, ավարտել և Ներսիսյան դպրոցը, ապա Դորպատի համալսարանի պատմա-լեզվագիտական ֆակուլտետը։ Վորպես պրոֆեսոր պաշտոնավարել և Ղազանի համալսարանում և Լազարյան ճեմարանում։ 1869—71 թթ. տեսչի պաշտոն և ստանձնել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Մինչհյուսիսափայլյան շրջանի նրա գրական աշխատությունների մեջ հայտնի յեն «Ճաղատ ի որձակաց հոգեբանության ճառ» (1851), վոր գրաբար լինելով հանդերձ պարզությամբ էր աշխարհաբարի դասը և «Ճանապարհ նոր հայախոսության» (1857) յերկհատորյա մեծածավալ ընթերցարանը։ Ն.-ի հրապարակախոսական բուն գործունեությունն սկսվում է 1858 թ., յերբ Նալբանդյանի աշխատակցությամբ սկսում է հրա-

տարակել «Հյուսիսափայլ»-ը։ Շնորհիվ այդ հանգամանքի, ամսագիրը խոշոր դեր կատարեց հայ հասարակական մտքի պատմության մեջ։ Մերժելով Նալբանդյանի առաջարկը «Հյուսիսափայլ»-ը փարիզ փոխադրելու մասին, Ն.-ը դրանով էլ ստիպեց Նալբանդյանին հեռանալ «Հյուսիսափայլ»-ից, վորից, սակայն, նա ամբողջովին չկտրեց իր կապերը։ Նալբանդյանի անձնական բարեկամներից մեկը։

